ԵՂԻՇԷ ԻՇԽԱՆԵԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ

1917–1920

ԴՏՀ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52
Ի 684

ՍՈՅՆ ՀԱՏՈՐԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ
ՀՈԳՈՂՈՒԹԵԱՄԲ
ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ Տ.ՄԵՍՐՈՊ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇՃԵԱՆԻ
ԵՒ ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ
ԳՆԴԱՊԵՏ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԼԻՍ
ՍԱՀԱԿԼԵԱՆԻ
Ի ՅԻՇԱՏԱԿ
ՁՈՐԱՎԱՐ ԴՐՕ-Ի

Խմբագիրներ՝ Հրաչ Աբրահամյան,
Կիմ Ղահրամանյան

Եղիշե Իշխանյան

Ի 684 ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ (1917–1920): Եր.: «Հայաստան», 1999:

Եղիշե Իշխանյանի գիրքը գրված է օրագրության հիմքի վրա: Այն անմիջական անդրադարձ է 1917–1920թթ. Արցախում ծավալված դեպքերի: Այն ունի պատմագիտական մեծ արժեք եւ միաժամանակ հայրենասիրական վարակիչ պաթոս՝ հայրենի եզերքի անմնացորդ սիրո, հայոց հողի ապագայի հանդեպ լուսավոր հավատի դրսեւորումներով:

Գիրքը հասցեագրված է ընթերցող լայն շրջանների համար:

Ի $\frac{0503020913}{701\,(01)-99}$ արտ. ԳՄԴ 63.3 (2Հ)

ԱՐԺԷՔԱՒՈՐ ՈՒ ԵՐԿԱՐ ՍՊԱՍԻԱՑ ԳԻՐՔ

1917-1920 թուականները հայ ժողովուրդի պատմութեան թերեւս ամենադրամատիկ շրջանն են կազմում: Ռուսաստանում միապետական կարգերի տապալումը և իշխանութեան ժամանակաւոր մարմինների ստեղծումը՝ չարունակուղ համաշխարհային պատերազմի պայմաններում, առաջ բերեցին ներքին ու արտաքին անկայունութիւն: Քաղաքական անկայունութիւնն Անդրկովկասում աւելի խորացաւ՝ կապուած անջատողական ձգտումների բորբոքման, երեք հանրապետութիւնների ձեւաւորման, խոշոր տէրութիւնների նաճողական քաղաքականութեան հետ: Օգտուելով Ռուսաստանի թուլացումից և խոշոր տէրութիւնների հակառուսական դիրքորոշումից, պատերազմում պարտուած Թուրքիան չարունակում էր իր հայաջինջ քաղաքականութիւնը և ջանքեր էր թափում՝ հաստատուելու Անդրկովկասում:

Անդրկովկասեան հանրապետութիւնների (Հայաստան, Վրաստան և յետագայում Ադրբէջան կոչուած մուսուլմանական մասը) սահմանները դեռեւս ճչտուած չէին: Ադրբէջանը հաւակնում էր իր իրաւասութեան տակ առնել երբեմնի Ելիզաւետպոլի ամբողջ նահանգը, որի հիմնական մասը կազմում էին հին հայկական Ուտիքն ու Արցախ-Ղարաբաղը՝ համախմբուած ապրող գերակչիռ հայ բնակչութեամբ՝ յատկապէս լեռնային շրջաններում: Վերջիններս փաստական ձեւով դտնուում էին Հայաստանի հանրապետութեան կազմի մէջ, սակայն խոշոր տէրութիւնները ճնշում էին գործադրում հայերի վրա, որպէսզի այդ շրջանները, թէկուզ թէ ժամանակաւորապէս, հպատակուեն Թուրքամէտ (թէ՞ Թուրքական) Ադրբէջանին: Հայաստանը տնտեսական ծանր պայմանների մէջ,հեղեղած գաղթականներով, պատերազմական վիճակի մէջ էր գտնուում Թուրքիայի, Վրաստանի ու Ադրբէջանի հետ: Դեռ աւելին, երկրի ներսում էլ քաղաքացիական անհնազանդութիւն էր դրսեւորում մուսուլման բնակչութիւնը, և դա յաճախ վերածուում էր ղինուած ընդհարման:

Հաշուի առնելով ստեղծուած վիճակը և կանխատեսելով դէպքերի անբարենպաստ ընթացքը, Ղարաբաղի քաղաքական ուժերը դեռեւս 1917 թ. վերջերից գործնական քայլերի դիմեցին՝ ապահովելու երկրամասի բնականոն զարգացումը (ո՛չ միայն հայերի): Խոշոր չահերի բախման կիզակէտում յայտնուած փոքրիկ լեռնաշխարհն ուժ գտաւ իր մէջ թէ՛ ինքնապաշտպանութեան, թէ՛ ինքնակառավարման համար, որոնց չնորհիւ յետագայում, նոյնիսկ Ադրբէջանին բռնակցելուց յետոյ, հնարաւոր եղաւ պահպանել ինքնավարութիւն՝ թէկուզ և աղճատուած ու անջրպետուած մայր երկրից: Առանց այդ ինքնավարութեան անհնարին կը լինէր

պատկերացնել Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան ներկայ իրողութիւնը, նախկինում Աղրբէջանի կողմից ղաւթուած արցախեան տարածքների մի մասի ազատագրումը, որոնք յոյս էին ներշնչում որ դերեալ մնացած տարածքները նոյնպէս կ'ազատագրուեն:

1917–1920 թթ. բարդ իրողութիւնները խորհրդային կարգերի օրօք խեղաթիւրուեցին պատմագրութեան մէջ՝ յարմարեցնելով տիրապետող գաղափարախօսութեանը: Տասնամեակների ընթացքում ձեւաւորուեց խեղաթիւրուած հասարակական գիտակցութիւն, արմատաւորուեցին քարացած հակագիտական ըմբռնումներ: Հայաստանի անկախութեան վերականգնումից յետոյ հրապարակ եկան արժէքաւոր աշխատութիւններ, մշակւում են պատմագիտական նոր մօտեցումներ: Սակայն կատարուածը բաւարար լինելուց հեռու է: Մի կողմից պակասում են պատմագիտական անհրաժեշտ նիւթերը, որոնց մեծ մասն անցեալում խեղաթիւրել, ոչնչացրել կամ անհետացրել են, միւս կողմից՝ կարիք կայ յարմ հայեացքի ու անաչառ մօտեցումների որոնց դեռեւս խանգարում է հին մտածելակերպը: Այդ երկու առումով էլ մեծ արժէք է ներկայացնում սոյն գիրքը:

Արդար չի լինի Եղիշէ Իշխաննեանի գիրքը յուշագրութիւն համարել: Հեղինակը 1917–1919 թթ. ակտիւ դեր է կատարել Ղարաբաղում, եղել է ժողովրդական կառավարութեան նախագահ: Հարկադրաբար Երեւան տեղափոխուելուց յետոյ էլ նա անբաժան է մնացել Ղարաբաղի ճակատագրից, կատարել է Հայաստանի կառավարութեան պատասխանատու յանձնարարութիւնները, կապերի մէջ է եղել ժամանակի նշանաւոր հասարակական-քաղաքական գործիչների հետ, ուստի նօթագրութեան ձեւով չարադրուած նրա գիրքն իրականում հարուստ կենսափորձի հիման վրա սուր դիտողութեամբ ու ճկուն մտքով անցեալի իրողութիւնների խոր վերլուծութիւն է:

Գիրքը յստակ ցոյց է տալիս, թէ ինչպիսի հանգամանքներում և ինչպէս է ձեւաւորուել ինքնավարութիւնը Ղարաբաղում, ինչպէս է կազմուել կառավարութիւնը, ինչ ուղղութիւններով է գործել, ինչպիսի ներքին և արտաքին դժուարութիւններ են յաղթահարել: Այդ ամէնն ըստ էութեան իրենից ներկայացնում է հայկական պետականութեան վերականգնում, հանրապետական կարգերի ձեւաւորում՝ Հայաստանի Հանրապետութեան հռչակումից էլ վաղ, որը համապատասխան ձեւով չի գնահատել մինչեւ հիմա: Մինչդեռ դա էական հետաքրքրութիւն է ներկայացնում ոչ միայն անցեալի ճիշտ գնահատման, այլև ԼՂՀՀ ներկայ կարգավիճակի առումով:

Խորհրդային իշխող ապաղգային գաղափարախօսութեան և նրան յարմարեցուած պատմագիտութեան հետեւանքով այդ կարգերի փլուզումից յետոյ անգամ չատ-չատերի մօտ Լեռնային Ղարաբաղ

արաայայտութիւնը նոյնացւում է ինքնավար մարզի հետ (ԼՂՄ): Եղիշէ Իշխանեանը Ղարաբաղը ներկայացնում է իրական սահմանների մէջ, որպէս մէկ միասնութիւն Ելիզաւետպոլի լեռնային չրջանների հետ:Արժէքաւոր են գրքի տւեալներն այն մասին, որ դաչնակից զօրքերի հրամանատարութեան՝ Շուշիում գտնուող ներկայացուցչութեան ղեկավարի քարտէղի վրա արտացոլել է այդ իրողութիւնը՝ պատմական աղբիւրների հիման վրա: Ի գէպ, ուշագրաւ փաստեր են բերւած, թէ ինչպէս այդ տարածքների հայկական գիւղերը՝ Գիւլիստանի չրջան, Գետաչէնի գիւղերի խումբ, Գարդման և այլն, 1918–1920 թթ. ներգրաւուած էին Ղարաբաղի հայութեան համագումարներին: Այդ չրջանակների մէջ միասնական ձեւով իրականացւում էր ինքնապաչտպանութիւնը, և այդ ամէնը փաստական ձեւով գտնւում էին Հայաստանի Հանրապետութեան կազմի մէջ: Այդ տեսակէտից բացառիկ արժէք են ներկայացնում հեղինակի բերած տեղեկութիւնները այն մասին, որ Շուշին եւ Գանձակը (Ելիզաւետպոլ քաղաքի հայկական մասը, որը միւս մասից անջրպետւած էր Գանձակ գետակով), չնայած չատ սուղ կերպով, այնուամենայնիւ, ֆինանսաւորւել են Հայաստանից, Շուշիին՝ ամսական 400 հազար ռուբլի, Գանձակի չրջանին՝ ամսական 120 հազար ռուբլի: Ընդ որում, նկարագրւած փաստական վիճակը լիովին համապատասխանում է արևելեայեան նիւթերի բովանդակութեանը, համալրում ու յստակեցնում չատ էական հարցերի մասին գիտական հիմնաւոր պատկերացումը, հիմք է ծառայում նոր ըմբռնումների համար:

Պատմագիտական գրականութեան մէջ բազմիցս չօչափւել է այն հարցը, թէ ինչո՞ւ զօրավար Անդրանիկը չգնաց Շուշին ազատագրելու: Եղել են թիւրըմբռնումներ ու տարակարծութիւններ: Գրքի մէջ այդ կապակցութեամբ քննութեան են առնւած բազմաթիւ իրողութիւններ, որոնք մինչեւ հիմա դուրս են մնացել հետազօտողների ուշադրութիւնից: Հեղինակը հանդամանօրէն նկարագրում է, թէ զօրավարի կողմից ինչպէս է մշակւել դէպի Շուշի կատարելիք ռազմական գործողութիւնը, ու՛մ ինչպիսի՛ յանձնարարութիւն է տրւել, որոնք չեն կատարել՝ անհնարին դարձնելով այդ ռազմերթը: Հասկանալի է՝ որոշակի դեր է կատարել նաև անգլիացիների կողմից զաղթականների համար Անդրանիկին տրւած օգնութիւնը: Քննութեան առնելով այդ իրադարձութիւնները, հեղինակը կատարում է ուշագրաւ եզրահանգումներ, որոնք կարեւոր են ոչ միայն անցեալի, այլեւ ներկայիս իրողութիւնները ճիչտ գնահատելու համար: Արժէքաւոր է գրքում հիմնաւորւած այն միտքը, թէ Ղարաբաղի քաղաքական ճակատագրի հարցում ռազմավարական ինչպիսի դեր ունեն Զարուղի բարձունքը Գորիս–Շուշի ճանապարհին և այդ տարածքում ստեղծւած թշնամական յենակէտ–ընակավայրեր:

Հեղինակը միանգամայն նոր տեսանկիւնից է ներկայացնում հայերի փոխյարաբերութիւնները տեղացի թուրքերի, ինչպէս նաեւ. ռուսների հետ, որոնք ծրագրած ձեւով բորբոքում, հակահայ ուղղութիւն էին տանում Թուրքիայի կողմից: Նոյեմբերի 1920 թ. ողբերգական իրադարձութիւնների կապակցութեամբ հեղինակը բերում է ուշագրաւ փաստեր, կատարում վերլուծութիւններ, որոնք օգնում են՝ կատարածն ամբողջութեամբ ու ճիշտ պատկերացնելու, անհրաժեշտ դասեր առնելու անցեալի դառը փորձից:

Եղիշէ Իշխանեանի անհատական դիտարկումներն ու բերած փաստերն արժէքաւոր են Ղարաբաղի հարցի լուծման գործում Հայաստանի հնարաւորութիւնները ճիշտ գնահատելու, երկրի ղեկավարների ղիրքորոշումը հասկանալու, Նախիջեւանի հետ կապւած, ինչպէս և ժամանակի այլեւայլ էական հարցեր յստակ պատկերացնելու համար: Բերւած են հետաքրքիր տեղեկութիւններ, որոնց միջոցով կարող է աւելի ամբողջական դառնալ այդ տարիների հայ աղգային նշանաւոր գործիչների քաղաքական նկարագիրն ու մարդկային կերպարը՝ Յովհաննէս Քաջազնունի, Ալեքսանդր Խատիսեան, Դրօ, Գարեգին Նժդեհ, Նիկոլ Աղբալեան ... Գրքի էջերից յառնում է Ղարաբաղի, ամբողջ Հայաստանի աղատութեանն ինքնամոռաց նւիրւած յայտնի ու անյայտ գործիչների մի պայծառ համաստեղութիւն՝ մարդկային վսեմ գծերով: Դժւար է առանց յուզմունքի կարդալ Հայրապետ Մուսայէլեանի, Ալեքսան Բալասանեանի (Ալէքսան դայի), Դաւիթ Տէր-Դանիէլեանի՝ Դ.Անանուն, զօրապետ Մելիք-Մուրադեանի, Խաչատուր Միրզաբէկեանի (Մածուն Խեչօ), Միշա Արղումանեանի, դինւորական Պօղոս Տէր Դաւթեանի, տասը որդու հայր Ստեփանի, չատ-չատերի անսահման ազնւութեան ու քաջութեան մասին պատմող նիւթերը:

Խօսուն փաստեր են բերւած Ղարաբաղում և ամբողջ Հայաստանում քաղաքական առանձին կազմակերպութիւնների ու գործիչների, ինքնապաշտպանութեան առանձին դեկավարների մոյլ տւած սխալների մասին, որոնք ծանր կորուստների պատճառ են դարձել, ունեցել անուղղելի հետեւանքներ: Պատմական դասեր են պարունակում կադրերի սխալ ընտրութեան, քաղաքական առումով միատարը կառավարութեան պատճառած վնասները: Ոչ պակաս վնասակար եղան բնակչութեան դանգւածային տեղահանութեան մասին մտքերը, որ կային Հայաստանի առանձին դեկավար գործիչների մօտ եւ խանգարում էին ինքնապաշտպանութեան ու երկրի կառավարման արդիւնաւէտ կազմակերպմանը: Խոր մտորումների եւ յետագայ ուսումնասիրութիւնների առիթ են տալիս հեղինակի բերած փաստերը այն մասին, որ 1920 թ. յուլիսին Նախիջեւանն ամբողջովին մաքրւած էր թուրքերից, սակայն գործնական քայլեր չկատարւեցին պաշտպանելու համար: Բերւած են քարոզչութեան բնագաւառում թոյլ տրւած աղաղակող սխալներն և այլն, և այլն, որոնք ոչ միայն զիտական, այլև քաղաքական հրատապութիւն ունեն այսօր:

Գրւած լինելով օրագրութեան հիմքի վրա՝ կազմւած 1917-1920 թթ., դէպքերի անմիջական տպաւորութեան տակ, Հայրենի հողի նկատմամբ ջերմ սիրով ու նւիրւածութեամբ, գիրքն առաջին իսկ էջերից զրաւում է ընթերցողին, վարակում հայ հողի նկատմամբ սիրով ու նրա ճակատագրի հանդէպ անհանգստութեամբ: Մնւած ու մեծացած լինելով Ղարաբաղում, ուսանած Ռուսաստանի մայրաքաղաքում, հասարակական-քաղաքական ակտիւ գործունէութիւն ծաւալած Ղարաբաղում, Երեւանում, Զանգեզուրում, Լոռիում, այնուհետև տարագրւած Իրան, հեղինակի լեզուն որոշ չափով կրում է լեզւա-մտածողական այդ բոլոր շրջանների հետքը: Խմբագրելու ընթացքում այդ բոլորից ի սպառ խուսափելը գործնականում անհնարին է եղել ու նաև դիտւել է աննպատակայարմար: Գրքի էջերում տրոփում է հայրենանւէր մի հայ սիրտ, որն ապրել է մեր ժողովրդի կեանքի թերեւս բոլոր զարձզարձումները, և գիրքն էլ հաւասարապէս ուղղւած է Հայրենքի ու Սփիւռքի ընթերցողին, ուստի յարմար է գտնւել լեզվաոճական սոյն մակարդակը, որն աւելի հարազատ է հեղինակին ու նրա հետապնդած նպատակին:

Վերջում կ'ուզենայինք անպայման նշել պրոֆէսոր Հրաչ Աբրահամեանի կատարած դժւարին, բայց աղգօգուտ աշխատանքը սոյն գրքի լոյս ընծայման համար՝ սկսած բարդ ձեռագրի վերծանումից մինչև ընթերցողի սեղանին հասցնելը: Յոյս ունենք, որ նրա օրինակը վարակիչ կը լինի ուրիչների համար՝ մոռացութեան փոշու տակից վեր հանելու արժէքաւոր ձեռագիր նիւթեր և հրապարակելու, որոնց չնորհիւ հնարաւոր կը դառնայ հայոց պատմութեան աւելի ամբողջական ու ճշմարիտ չարադրանքը:

Բագրատ Ուլուբաբեան

Կիմ Ղահրամանեան

Երեւան, Մարտ 1, 1999

ԵՂԻՇԷ ԻՇԽԱՆԵԱՆ

(Կենսագրական գծեր)

Եղիշէ Իշխանեանը ծնուել էր Շուշիում, 1886-ի Յունուար մէկին: Իր տարրական ու միջնակարգ ուսումը ստացել էր իր ծննդավայրում, դասընկերներ ունենալով Կոստի Համբարձումեանին, Վահան Նաւասարդեանին ու մի շարք այլ ղարաբաղցիների, որոնք բոլորն էլ հետագային դարձան յեղափոխական անուանի դէմքեր ու գործիչներ, իրենց կեանքը նուիրելով հայ ժողովրդին և ծառայելով նրա երազների իրագործման վեհ նպատակին:

Եղիշէն դեռ դպրոցական տարիքում բախտն էր ունեցել իր գաղափարական դաստիարակութիւնն ստանալու ղարաբաղցի ականաւոր յեղափոխականների չունչով, ինչպիսիք էին Նիկոլ Դումանը, Թորգոմը, Արամը և ուրիշներ:

Նա դեռ պատանի տարիքում մասնակցել էր զէնքի փոխադրութեան եւ զինապահեստների կազմակերպման գործին: Ապա անցել էր կազմակերպական եւ քարոզչական աշխատանքի ու վարել կուսակցական պատասխանատու յանձնառութիւններ:

Տակաւին աշակերտ ձերբակալուել էր ցարական ոստիկանութեան կողմից եւ աքսորուել Երեւան, ուր չարունակել էր իր ուսումը այնտեղի թեմական դպրոցում:

Արդէն զինւորագրուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերում մեկնել էր Պետերբուրգ, ցարական Ռուսաստանի մայրաքաղաքի գիւղատնտեսական բարձրագոյն վարժարանում ստանալու համար իր համալսարարական ուսումը: Եղիշէն գործօն դէր ունեցաւ նաև Ռուսաստանի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ուսանողական շարժումների մէջ: Մէկ անգամ եւս ձերբակալուել էր ուսանողական տարիներին: Այնուհետև ձերբակալումը, կալանաւորումը իշխանութիւնների կողմից դարձան պարբերական յաճախակի երեւոյթներ նրա կեանքում:

1917- ի Յունիսին, Ռուսական Փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ , վերադառնալով Շուշի, Եղիշէն լծւում է կուսակցական - հանրային եռուն աշխատանքի: Ստանձնում է շատ մեծ պատասխանատուութիւններ: Ընտրւում է Ազգային Խորհրդի նախագահ: Այդ խորհուրդը Ղարաբաղում անկախ կառավարութեան դեր էր խաղում:

Մեծ է եղել նրա ներդրումը Ղարաբաղում, մանաւանդ այնտեղ գործող թուրք եւ անգլիացի դինուորականների հետ տարուած բանակցութիւններում, դէմ կանգնելով վերջիններիս դաւերին:

Այդ օրերին ղարաբաղցիք ձգտում էին պատմականօրէն հայապատկան իրենց հայրենի հողը միացնել Հայաստանի Հանրապետութեան. իսկ Թուրքիոյ նպատակն էր վերջ դնել հայութեան գոյութեանը նաև Ղարաբաղում, դէպի Բաքու և այնտեղից էլ դէպի կենտրոնական Ասիա երկարող տարածքը անխոցելի դարձնելու համար իր պանթուրանական նպատակների իրագործման երազանքում: Այդ օրերին արդէն ակնայայտ կերպով աղրբէջանցիների օգտին էին ծառայում նաև անգլիացիները՝ տարուած լինելով Բաքւի քարիւղահանքերը ռուսական ազդեցութեան գօտուց դուրս բերելու, ինչպէս նաև ցամաքով դէպի Հնդկաստան տարածուող ուղիները իրենց հակակշռի տակ պահելու մոլուցքով:

1919-ի Յունիսին անգլիացիները զաւադրաբար, Եղիշէին, հակառակ տեղական ժողովրդի կամքի, աքսորում են Ղարաբաղից: Նա ստիպուած անցնում է Հայաստան, ուր լծւում է ղարաբաղանպաստ աշխոյժ աշխատանքի: Այնուհետեւ Հ.Յ.Դ.-ի Բիւրոյի կարգադրութեամբ կուսակցական պատասխանատու պաշտօնով գնում է Ղարաքիլիսա (Վանաձոր), չատ չանցած անցնում է Դարալագեաղ (Վայոց Ձոր) նշանակւելով տեղւոյն գործադիր մարմնի քարտուղար: Այդ պաշտօնի վրայ եղած ժամանակ տեղի է ունենում Հայաստանի խորհրդայնացումը (Դեկտեմբեր 2, 1919թ.):

Կուսակցութեան վերին մարմնի հրահանգով Եղիշէն չարունակեց իր պաշտօնը, այս անգամ որպէս Յեղկոմի քարտուղար և իր դիրքը օգտագործելով , կապի կարեւոր դեր խաղաց Նժդեհի եւ Երեւանի կառավարութեան միջեւ, մեծապէս վտանգելով իր կեանքը:

Նա չարունակեց մնալ այդ պաշտօնում, մինչև 1920-ի Փետրւար 18-ի ապստամբութիւնը՝ երբ տապալւեցին խորհրդային կարգերը Հայաստանում:

1920-ի ապրիլի սկիզբում երբ արդէն իշխանութիւնը Հայաստանում վերջնականապէս անցնել էր Բոլշեւիկների ձեռքը, Եղիշէն ևս նրանց հետապնդումից խոյս տալու համար միանալով Փետրւարեան ապստամբութեան մասնակիցների կարաւանին, նահանջում է դէպի Լեռնահայաստան իսկ Յուլիսին՝ Արաքս գետը անցնելով տարագրւում Պարսկաստան:

Տարագրելուց յետոյ, Եղիչէի համար Պարսկաստանում սկսւում է բոլորովին կուսակցական նոր պարտականութիւնների շարք: Կազմակերպում եւ ղեկավարում է արտերկրի ու Հայաստանի Հ.Յ.Դ. ընդյատակեայ մարմինների կապը աւելի քան տասնեակ տարիներ: Այդ պաշտօնի բերումով 1929-ին մասնակցում է Հ.Յ.Դ.-ի 11-րդ Ընդհանուր ժողովին: Այնուհետև երկար տարիներ ձեռնահասօրէն վարում է Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչի պարտականութիւը Պարսկաստանում:

Եղիչէի կեանքը այլեւայլ ելեւէջներ ունեցաւ: Անարդար ձեւով ղրպարտելով ենթարկւեց կուսակցական պատժի, որը նրան ծանր ապրումներ պատճառեց: Սակայն ի վերջոյ արդարութիւնը յաղթանակեց եւ Հ.Յ.Դ.-ի 1972-ի 20-րդ Ընդհանուր Ժողովը վերանայելով նրա հարցը չեղեալ նկատեց նախորդ որոշումը ու վերականգնեց նրա դիրքը եւ կուսակցական վարկը:

Եղիչէի կեանքի վերջին տարիները անցան ԱՄՆ-ի Նիւ Եորք քաղաքում, ուր և նա իր մահկանացուն կնքեց 1975-ի Ապրիլ 28-ին:

Վաչինգտոն, Մարտ 1, 1999
Գուրգէն Ասատուրեան

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Իմ ծանօթութիւնը Հանգուցեալ Եղիչէ Իշխանեանի հետ աւելի քան կէս դարի անցեալ ունի: Վաղ պատանեկական տարիքում, ընտանեկան յարաբերութեան բերումով 1930-ական թուականների սկզբում ճանաչել եմ նրան, երբ իր հեղինակութեան չնորհիւ վայելում էր չրջապատի անվերապահ յարգանքն ու ակնածանքը:

Երիտասարդական չրջանում, ու աւելի հասուն տարիքում երբ կուսակցական միջավայրում առիթ ունեցայ աւելի մօտից ճանաչելու Եղիչէ Իշխանեանին, նա մեծապէս տպաւորեց ինձ որպէս կուսակցական ղեկավար՝ օժտուած զօրեղ անհատականութեամբ, և իրական ղեկավարին անհրաժեչտ տեսլականով:

Հանգուցեալ Եղիչէ Իշխանեանի գործունէութեան առաջին հանգրւանը որպէս կազմակերպիչ, ղեկավար, եղել է Ղարաբաղում և Հայաստանում մինչև տարագրութիւնը, և ապա Պարսկաստանում, Հայաստանի Հանրապետութեան Խորհրդայնացումից յետոյ:

Ինչ վերաբերում է իր սոյն աչխատութեան հրատարակմանը պէտք է ասեմ, որ դա տարիներից ի վեր ինձ մտահոգող, իմ ուսերի վրայ դրւած մի ծանր պարտականութիւն է եղել, որն ի վերջոյ այսպիսով իրականացւում է, ինձ պատճառելով հոգեկան մեծ բաւարարութիւն:

Կեանքի դասաւորումների բերումով երբ Պարսկաստանից հեռանալով հաստատւեցի Ամերիկայում և տարիներ յետոյ նա եւս ընտանիքով տեղափոխւեց Ամերիկա, մեր առաջին հանտիպումը կայացաւ հետևեալ պայմաններում:

1972 թուականի, սեպտեմբերի առաջին օրերին էր, Հայ Յեղափոխական Դաչնակցութեան 20-րդ Ընդհանուր Ժողովի անմիջապէս նախօրեակին, և ես ընտրւած լինելով ժողովի պատգամաւոր պատրաստւում էի մեկնել ժողովավայր, երբ մեր ընկերներից հանգուցեալ Նորայր Ստեփանեանը յայտնեց ինձ, որ ընկեր Եղիչէ Իշխանեանը ցանկութիւն ունի հանդիպելու ինձ հետ: Այդ հանդիպումը կայացաւ, և նա հանգամանօրէն լուսաբանութիւններ տւեց իր նկատմամբ գործադրւած պատժական տնօրինութեան մասին: Ինքը տեղեակ էր, որ իր հարցը ժողովի օրակարգի վրայ էր:

20-րդ Ընդհանուր Ժողովը արդարացրեց նրան, չեղեալ նկատեց նախկինում առնւած որոչումը և վերականգնեց նրա կուսակցական իրաւասութիւնները:

1973-ի Յունուարին, ժողովի աւարտից յետոյ, երբ ես ընտրած էի Բիւրոյի անդամ, վերադարձին Հանտիպեցի իրեն, պաչտօնապէս հաղորդելու համար 20-րդ Ընդհանուր Ժողովի վճիռը՝ իր արդարացման և կուսակցական իրաւունքների վերականգնման վերաբերեալ, ինչ խօսք, որ իր ուրախութեան չափ չկար:

Նոյն այդ թւականին մի քանի ամիս յետոյ ինձ նամակով յայտնեց, որ իր անձնական կուսակցական բոլոր թղթերը- զրուխիւնները, նամակները և այլն, զասաւորւած են Հ.Յ.Դ. կենտրոնական արխիւին փոխանցելու համար, որից մի կարճ ժամանակ անց այդ արխիւը փոխանցեց ինձ յանձնելու համար առ որ անկ է, և որը կատարւեց նոյնութեամբ:

1974-ին նորից ցանկութիւն յայտնեց ինձ հետ հանդիպելու և անձամբ փոխանցեց 1917-ից 1920 թւերի ղարաբաղեան անց ու դարձերի իր օրագրային յուշագրութիւնը և խնդրեց անձամբ ստանձնել այդ գործի հրատարակութեան պատասխանատուութիւնը, իմ յարմար դատած ժամանակ երբ առիթը ստեղծւի:

Արդ ժամանակը հասաւ, և անհրաժեչտ ճիգերն ու աչխատանքը գործադրելով այսօր հրատարակւում է այս յոյժ կարևոր և արժէքաւոր աչխատութիւնը:

Այս վաւերագրական յուշագրութիւնը հրատարակւում է ամբողջապէս և հարազատօրէն, առանց որևէ կրճատումի, պահելով անգամ հեղինակի լեզւական կամ ոճային իւրայատկութիւնները: Սրանով իրականացրած եմ լինում, լրիւ կերպով, իմ վրայ դրւած պարտականութիւնը:

Այս հրատարակութեան առթիւ պարտականութիւն եմ զգում յատուկ չնորհակալութեան խօսք ասելու հետևեալ անձանց, առանց որոնց օժանդակութեան այս հատորի հրատարակումը հնարաւոր չպիտի լինէր:

Մարգրիտ Ասատուրեանին, որը յօժարութեամբ յանձն առաւ թափանցիկ թղթի զոյգ երեսների վրայ գրւած ու տասնամեակների ընթացքում մեծապէս անընթեռնելի դարձած ձեռագիր բնագրի վերծանման, ինչպէս եւ համակարգչի մէջ անց կացնելու տաժանելի աչխատանքը:

Գուրգէն Ասատուրեանին իր բազմաթիւ անգամներ ամբողջ հատորի կրկին ու կրկին սրբագրման անխոնջ աչխատանքի համար:

Շաքէ Եսայեանին և Հայկ Կաքաւեանին իրենց անվերապահ աչակցութեան համար:

Կիմ Ղահրամանեանին իր բծախնդիր խմբագրական աչխատանքի համար:

Բաղրատ Ուլուբաբեանին իր արժէքաւոր խորհուրդների համար:

Բաղրատ Ուլուբաբեանին եւ Կիմ Ղահրամանեանին միասնաբար, իրենց գրած վերլուծական յառաջաբանի համար:

Բարձրաչնորհ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աչճեանին՝ իր խորհուրդների, քաջալերանքի եւ օժանդակութեան համար:

Գնդապետ Յարութիւն եւ տիկին Ալիս Սաչաքլեաններին, որոնք սիրայօժար կերպով յաձն առան այս հատորի հրատարակման մեկենասութիւնը:

Հրաչ Աբրահամեան

Վաչինգտոն, Մարտ 1, 1999

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ես նպատակ չեմ ունեցել յուշեր գրել Հրատարակելու համար, որովհետև նախ՝ ես գրչի մարդ չեմ և, երկրորդ, որ շատ կարևոր էր, 1917-19 թուականներին, Ղարաբաղում աշխատած և պատասխանատու դեր խաղացած բոլոր գործիչները, բացառությամբ տարագրուած երկու-երեք հոգու, դեռևս են երկրում, և հնարաւորութիւն չկար նրանց օժանդակութեամբ անհրաժեշտ ստուգումներ կատարելու:

Զափազանց դժուար է յիշողութեամբ գրի առնել յիսուն տարի առաջ տեղի ունեցած դէպքերն ու երևոյթները, որքան էլ մարդս օժտուած լինի սուր յիշողութեամբ, թէկուզ ականատես եղած կամ գործօուն կերպով մասնակցած ժամանակի ազգային-հասարակական գործունէութեան: Եւ. ճիշտը խոստովանեմ, առանց պատշաճ քննութեան ու պաշտպանելու հնարաւորութիւն տալու, առանց երեսս տեսնելու, 1947 թ. դեկտեմբերի Հ.Յ.Դ. ԺԴ-րդ Ընդհ. Ժողովի որոշմամբ, անարդարօրէն կուսակցութիւնից արտաքսելու հետևանքով, այլևս տրամադրութիւն չէր մնացել, ինչպէս կասեն՝ "հին դարմանը քամուն տալ": Պէտք է նկատի ունենալ, որ Դաշնակցութեան պատմութեան ամբողջ ընթացքում չչմեցուցիչ և աննախընթաց դէպք էր, առանց պատշաճ քննութեան և պաշտպանելու հնարաւորութիւն տալու, կուսակցական տասնեակ տարիների գործիչների՝ հանգուցեալ Յովսէփ Թադէոսեանի և իմ արտաքսելը կուսակցութիւնից, այն էլ դաշնակցականի կոչման բարձրութեան վրայ չդտնուած մի քանի անհատների և առաւելապէս մէկ հոգու սարքած խնդրով, որին գլխովին ենթարկւել էին Բիւրօն և Ընդհ. Ժողովը: Ինձ համար կասկածից դուրս է, որ Բիւրօն և Ընդհանուր Ժողովը ենթարկւել են ինտրիգի, որի հետևանքով Ընդհ. Ժողովը, հակականոնադրական ընթացք ընդունելով, անարդար որոշում է կայացրել, մի բան, որ քնաւ չի աղդել իմ ունեցած դաշնակցական ըմբռնումների վրայ և ես մնացել եմ անկախ դաշնակցական, արդի Դաշնակցութիւնից դուրս, քանի որ խիղճս միանգամայն հանգիստ է: Այո, տրամադրութիւն չէր մնացել մխրճւելու հին, ցաւոտ խնդիրների մէջ, սակայն, տարիներ անցնելուց յետոյ, կամաց-կամաց ցանկութիւն ու տրամադրութիւն առաջացաւ գրի առնելու յիշեալ թուականների անց ու դարձը: Ձեռքի տակ ունեմ ժամանակին երկրում կատարած նշումներնս ու նօթագրութիւնսը: Առանց այդ նօթագրութեան երբէք չպիտի կարողանայի լոկ յիշողութեամբ բան գրել:

Ի դէպ, Հանդուցեալ Նիկոլ Աղբալեանը[1] մի անգամ, ինձ ասել էր, թէ "Դեռ չի պատահել, որ մի յօդուած, առանց երկու և երբեմն երեք անգամ արտագրելու, յանձնած լինեմ տպագրութեան, որովհետև խմբագրութիւնը լաւագոյնս կատարւում է արտագրութեան ժամանակ": Եւ դրանով պիտի բացատրել, թէ նա որքան խստապահանջ է եղել հէնց իր հանդէպ, որի հետևանքով գիտական մեծ պաշարով այդ մարդու լեզուն թէ բանաւոր և թէ գրաւոր, խտացած ակադեմիական ոճ ուննալով, միանգամայն զերծ էր ամեն տեսակ աւելորդութիւնից կամ խճողումներից: Արդ, եթէ Նիկոլ Աղբալեանի պէս բաղմակողմանի զարգացած, մտաւոր մեծ պաշար ունեցող մարդը երկու-երեք անգամ արտագրելով էր խմբագրում իր գրածը, մեզ նման հասարակ մահկանացուները թերևս տասն անգամ պիտի արտագրեն ու խմբագրեն, որպէսզի մի բան դուրս գայ իրենց գրածից:

Նիկոլ Աղբալեանի հետ ես աշխատել եմ Լիժինեան հալածանքների ժամանակ և բաւական մօտ եմ եղել հետը մինչև մահը: Ինձ չատ զարմանք էր պատճառում, որ իր դասախօսութիւնների ընթացքում, երբեմն մէկից աւելի տարբեր հեղինակներից բառացիօրէն մէջբերումներ կանէր, սակայն կասէր՝ թէ ոչ մի յուշ չունի անցեալից: Իսկ երբ առիթ էր լինում, որ զանազան ընկերներ և ինքս պատմէինք անցեալում իր կատարած որոչ գործերի մասին, ինքը յատուկ պաղարիւնութեամբ և հիւմորով կասէր՝ "Էդպէս բան եղե՞լ է, ե՞րբ, ես ոչինչ չեմ յիշում":

1920 թուականին նախքան Ղարաբաղի անփառունակ ապստամբութիւնը, Շուշու քաղաքագլուխ Գերասիմ Մելիք Շահնազարեանը կազմակերպական "Ժողովուրդի Ձայն" թերթում մի յօդուած էր լոյս ընծայել՝ ինձ և Աչոտ Մելիք Յովսէփեանին մեղադրելով անհատական քաղաքականութիւն վարելու մէջ, որով պարզապէս իր մեղքն էր ուրիշների վրին փաթաթում, իսկ նախկին դաշնակցական, էսէռ Արսօ Յովհաննիսեանը Բագւի "Զնամիա Տրուդա" էսէռական թերթում գրած յօդուածում աշխատել էր ցոյց տալ, որ էսէռները վճռական դեր են կատարել Ղարաբաղում՝ ջանալով, որ սխալ հունով չընթանայ Ղարաբաղի հայութեան պայքարը: Ղարաբաղում ընդամէնը մօտ երկու տասնեակ էսէռներ կային, որոնցից ինքը և ուրիշ երկուսը, որոնք ակտիւ կերպով մասնակցում էին աշխատանքներին և առանձնապէս

[1] Աղբալեան Նիկոլ Պօղոսի (1873–1947), ականաւոր հասարակական-քաղաքական գործիչ, գրականագէտ, մանկավարժ: Սովորել է Թիֆլիսում, Մոսկւայում, Լոնդոնում, Սորբոնի համալսարանում: Ուսուցչութիւն է արել Կարլուանում, Ագուլիսում, Շուշիում. Եղել է Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի անդամ, 1919–ից՝ լուսաւորութեան և արուեստի նախարար: Առաջին հանրապետութեան տապալումից յետոյ անցավոխել է Իրան, Եգիպտոս, Լիբանան: Վախճանել է Բէյրութում: Արժէքաւոր ուսումնասիրութիւններ ունի՝ նուիրած հայոց լեզուի և մշակոյթի բազմապիսի հարցերին: Մեծ արժէք է ներկայացնում հայ պրոկոնսութեան պատմութեանը նուիրած ծաւալուն հետազոտութիւնը: (Խմբ.)

հեղինակութիւն չունէին, ինչպէս կարող էին նման դեր կատարած լինել: Ինքը, որ լիդերն էր համարւում, իր զրոյցների ու ճառերի ընթացքում շատ յաճախ իր դերի մասին խօսելիս չէչտում էր՝ "Ես այսպէս ասացի, այնպէս արեցի, և այլն", ինչ որ շատ անհաճոյ տպաւորութիւն էր թողնում, այդ պատճառով էլ անունը դրել էին "Պարոն Ես":

Թէ Սահմանադիր ժողովի և թէ Շուշու քաղաքային ինքնավարութեան ընտրութիւններին քւէների 85%-ից աւելին ստացել էր Դաշնակցութիւնը: Մասնաւորապէս Շուշում հայ կազէտները թուրք մուսաւաթականների հետ միացեալ ցուցակով հանդէս եկան, ձայների մեծամասնութիւն չհաւաքեցին, հաւասար թւով աթոռներ գրաւելով. էսէռներն ու մենշևիկները միացեալ ուժերով՝ երկու աթոռ, իսկ Դաշնակցութիւնը՝ տասներկու աթոռ: Հայ կազէտները պարղապէս թուրքերի ձայնով ընտրեցին:

Միջկուսակցական Բիւրօի գործունէութեան ընթացքում մենշևիկների կողմից առաջարկ եղաւ, որ Դաշնակցութիւնը մէնմենակ ստանձնի Ղարաբաղի հայութեան ղեկավարութիւնը, և իրենք ևնթակայ լինեն կուսակցութեան կարգադրութիւններին, ինչպէս չարքային դաշնակցականները: Մենշևիկները վերը յիշւած ընտրութիւնների արդիւնքը նկատի ունենալով, անկեղծօրէն նման առաջարկ էին արել. սակայն մենք հաստատ մնալով միջկուսակցական խորհրդակցական ժողովում կայացած համաձայնութեան, այն է՝ կօալիցիոն սկզբունքով կազմւած օրգանի միջոցով ղեկավարելու Ղարաբաղի հայութեանը, անկեղծ համագործակցութեամբ բոլոր հոսանքների, կտրականօրէն մերժեցինք եղած առաջարկը և գիտակցաբար չուղեցինք մենատիրութիւն անել:

Արդ, աւելի քան պարզ է, որ քննադատութեան չի դիմանում Գերասիմ Մելիք Շահնազարեանի մեղադրանքը, թէ իբր ես և Աչոտ Մելիք Յովսէփեանը անհատական քաղաքականութիւն ենք վարել: Իրականութեանը չի համապատասխանում նաև Ա. Յովհաննիսեանի գրածը, թէ իբր էսէռները Շուշիում վճռական դեր են խաղացել: Դա մի պարզ ինքնագովութիւն էր, քանի որ Շուշու էսէռների պարագլուխն էր ինքը:

Ի դէպ, տարիներ անցնելուց յետոյ, երբ տարագրւեցինք Պարսկաստան, Թաւրիզ, մի անգամ հանդուցեալ Արշամ Խոնդկարեանը հետաքրքրւեց Ղարաբաղի անցուդարձով, և ես պատմեցի մեր ունեցած կօալիցիոն ղեկավարութեան գործունէութեան մասին. յայտնեցի, որ էսէռների կողմից ղեկավար կենտրոնական օրգանի մէջ էր աշխատում Արսօ Յովհաննիսեանը: Հանդուցեալն ինձ ընդհատելով ասաց. "Արսօյին ճանաչում եմ. ինչպէ՞ս էր աշխատում, գո՞հ էիք, թէ ոչ": Դժգոհելու առիթ չունէինք, նա մեզ հետ աշխատում էր որպէս հաւասար մէկ անդամը

կօալիցիայի, միայն թէ մէկ սխալ է գործել. "Զնամիա Տրուդա" թերթում մեծ տեղ է տւել Շուչու էսէռներին, որոնցից ակտիւ դեր կատարողը չարունակ ինքն է եղել, սակայն ինքը ոչ ոքից աւելին չի արել: Ապա Խոնգկարեանն ասաց. "Ինչպէս ասացի, ճանաչում եմ Արսօյին և նրա գրած յօդւածը "Զնամիա Տրուդա" թերթում ժամանակին կարդացել եմ և այժմ լսելով քո բացատրութիւնները չեմ ղարմանում, յեղափոխութեան առաջին ամիսներին ծանօթացել էի հետը, և միասին ելոյթներ ունեցանք հասարակական ժողովներում ու միտինգներում: Ճառելիս այնպէս էր խօսում, կարծես ռուսական յեղափոխութիւնը ամբողջովին ծանրացած է եղել իր ուսերին: Զեմլեակը[2] էր, քէֆիդ չղիպչի. ճիշտն ասած, այդ գիծն էր, որ հաճելի չէր, թէև պիտի խոստովանել, որ չատ եռանդուն, գործին նւիրւած մարդ էր, վտանգ սպառնացող պահերին իրեն չէր կորցնում, պատրաստ էր միչտ ընդհանուրի հետ լինելու, չլքելու: Եթէ իր անձի չուրջ կենտրոնանալը չլինէր, չատ մեծ կչիռ կունենար: Հանդուցեալ Լեւոն Աթաբէկեանը, ինչպէս իր, նոյնպէս իմ ու չատ ընկերների կուսակցական ուսուցիչներից մէկն էր եղել: Նրա յիչատակին յուչ-երեկոյ տրւեց Շուչիում 1919-ի մարտ ամսին. բոլոր հոսանքների ընտրեալ մարդիկ ներկայ էին, մեծամասնութեամբ դաչնակցականներ. գլխաւոր բանախօսը Արսօն էր. ամբ ժամանակն իր անձի չուրջ կենտրոնացնելով, դժգոհ թողնց բոլորին, որովհետև չկարողացաւ ցուցադրել հանդուցեալի մեծութիւնը:

Նիւ Եորք, 1966 թ. Դեկտեմբեր: Եղիչէ Իչխանեան

[2] Հայրենակից (ռուսերէն). (Խմբ.)

ՊԵՏՐՈԳՐԱԴ – ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ[1] ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՑ ՆԱԽԱՔԱՅԼԵՐ Հ.Յ.Դ.–Ի ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

(Թուականները նչուած են Հին տոմարով[2])

Պետրոգրադի Գիւղատնտեսական ճեմարանի ուսանող էի, երբ պայթեց ռուսական երկրորդ և մեծ յեղափոխութիւնը, որը Ռուսաստանի Դաշնակցական Ուսանողական Միութեան համար անակնկալ էր: Մեր Միութիւնն ուրիշ աղգերի ուսանողութեան պէս ոգևորուած չէր տեղի ունեցած յեղաշրջումով. բոլորիս մտահոգութիւն էր պատճառում հայութեան վիճակը, որ բացառիկ էր: Եւ բոլորիս համար միանգամայն անցանկալի էր տեղի ունեցած յեղափոխութիւնը պատերազմի ժամանակ, մի պատերազմ, որի բարեյաջող ելքից էր սպասում հայութիւնը իր արդար դատի, արևմտահայութեան ազատագրելը տաճկական լծից:

Բանտերը բացել, ազատ էին արձակել բոլոր քաղաքական յանցագործները: Ամէն օր բոլոր քաղաքամասերում տեղի էին ունենում միտինգներ, որտեղ ելոյթ էին ունենում դանազան կուսակցութեանց պատկանող մարդիկ՝ դատապարտութեան խօսք ուղղելով միապետութեան դէմ, որ դարեր շարունակ ժողովրդին պահել էր կապանքների մէջ, յառաջադիմելու և դարգանալու հնարաւորութիւնից դուրկ: Կաչկանդած է եղել մարդու ստեղծագործ միտքը, որը յեղափոխութեան չնորհիւ պէտք է աղատ յառաջադիմէր և հասնէր եւրոպական աղատ երկրներին: Եւ իւրաքանչիւր ելոյթ ունեցող պարզում էր իր կուսակցութեան գործունէութեան ծրագիրը յառաջիկայ ամիսների համար մինչև Սահմանադիր Ժողովի գումարելը, որը պիտի որոշէր պետութեան վարչաձևը և երկրի բարիքները լաւագոյնս ժողովրդին բաշխելու կերպը, որպէսզի ժողովուրդը աղատ ու բարօր վիճակ ունենար: Եւ ելոյթ ունեցողներից նրանք, որ ճարտար լեզու ունէին, մեծ տպաւորութիւն էին թողնում, մարդկանց դրաւում իրենց կողմը:

---

[1] Պետրոգրադի Ռուսական Յեղափոխութիւնը (Փետրուարեան). Յեղափոխութիւն Ռուսաստանում 1917թ. Փետրուարի 23-27ը: Տապալուեց միապետութիւնը, ստեղծուեց ժամանակաւոր կառավարութիւն՝ Կերենսկու պրեսիդենտութեամբ: (Խմբ.)

[2] Հին տոմար. Արդի քաղաքակիրթ աշխարհի հիմնական մասում ընդունած է Գրիգորեան օրացոյցը, որը մտցել է Գրիգոր 13-րդ Պապի կողմից 1582թ: Ռուսաստանում մտցել է 1918թ. Փետրուարի 14-ին: Նախորդ՝ Յուլեան (հին) տոմարի համեմատութեամբ տարբերութիւնը կազմում է 13 օր (Փետրուարի 1-ը համարուել է 14, 2-ը՝ 15 և այլպէս մինչև հիմա): (Խմբ.)

Քանի որ մեր աւանդական կապը էսէռների[3] հետ էր եղած տարիներ ի վեր, բնականաբար, չարունակւում էր և յեղափոխութիւնից յետոյ, աւելի յաճախ հանդիպումներ ունենալով: Մեր ընկերները ինչով և ինչպէս կարող էին, օգտակար էին լինում, էսէռական կոմիտէի ցուցմունքներով աշխատում էին զանազան յանձնախմբերում, կամ էլ որպէս չրջանային կոմիսարներ:

Պատերազմի սկզբից ռուսական ինտելիգենցիան երկու մասի էր բաժանւած՝ պատերազմը մինչև պատուաւոր վախճան վարելու կողմնակիցներ և պատերազմը դատապարտողներ: Յեղափոխութեան հետևանքով լեզուները կապանքներից ազատւելով, երկու կողմերը աւելի յախուռն էին դարձել: Մեզ համար աւելի քան պարզ էր, որ եթէ պատերազմի հակառակորդները գործի գլուխ գային, Հայութեան համար պիտի ծանր կացութիւն ստեղծւէր: Մարդիկ ոգի ի բուն աշխատում էին գիչեր ու ցերեկ՝ վերջ տալու պատերազմին և անջատ հաչտութիւն կնքելու: Երեք տարւայ պատերազմի ընթացքում տառապած զինւորի համար ամենացանկալի բանը տուն դառնալն էր: Եւ երբ Լենինը[4] կոչ արաւ զինւորներին տուն դառնալու, տեսանք, թէ ինչ ահաւոր հետևանք ունեցաւ ռուս զինւորի տուն դառնալը Հայութեան համար:

Հ.Յ.Դ. Բիւրօն խիստ մտահոգւած լինելով ճակատի խնդրով և չատ պարզ գիտակցելով այն ահաւոր վտանգը, որ կարող էր ստեղծւել զինւորների ճակատը լքելու հետևանքով, որոչում է դիմել ստեղծւած ժամանակաւոր կառավարութեան և համոզել, որ Արևմտեան ճակատից հայ զինւորները փոխադրւեն Կովկասեան ճակատ, համոզւած, որ հայ զինւորները կը կարողանան կուրծք տալ դարաւոր թշնամուն:

Շուտով Բժ. Յ. Զաւրեանը (Զաւրիև)[5], որպէս ներկայացուցիչ Հ.Յ.Դ. Բիւրօի, ժամանակաւոր կառավարութեան հետ բանակցելու համար եկաւ Պետրոգրադ: Բժիչկը նիստ ունեցաւ մեր Կ.Կ.-ի անդամների հետ, յայտնեց իր յանձնառութեան մասին՝ մեծ ուրախութիւն պատճառելով: Բժիչկը ցանկութիւն յայտնեց, որ յաճախ նիստ ունենանք, որպէսզի իրեն օգնենք տեխնիկական աշխատանքների մէջ՝ ամենատարբեր գրութիւններ արտագրելու,

---

[3] Սոցիալիստ-յեղափոխական (ռուս.) կուսակցութիւն Ռուսաստանում: (Խմբ.)

[4] Լենին (Վլադիմիր Իլյիչ Ուլեանով). 1870-1924, ռուս հասարակական-քաղաքական գործիչ, բոլշևիկեան կազմակերպութեան ղեկավարը, 1917թ. Հոկտեմբերի 25ին (Նոյեմբեր 7ին) ստեղծւած խորհրդային պետութեան հիմնադիրը և ղեկավարը: (Խմբ.)

[5] Զաւրեան (Զաւրիև). Յակոբ Զաւարեան, հայ հասարակական-քաղաքական գործիչ, պիւանապետ, մասնագիտութեամբ՝ բժիչկ, 1912-17թթ. Հանդէս է եկել հայկական հարցը Ռուսաստանի միջոցով լուծելու օգտին, 1917թ աչնանը նչանակւել է Թիֆլիսհայաստանի ընդհանուր նահանգապետի օգնական, վախճանւել է 1920թ. Մարտին: (Խմբ.)

զանազան հիմնարկութիւնների և գործիչների հետ կապ պահելու համար:

Կ.Կ-ի անդամները ընտրած երեք հոգի էինք՝ Տ. Աւետիսեան, Հ. Զոլաևեան և Նաստս. մասնակցում էր և Պ. Լևոնեանը: Բժ. Զաւրեանի Պետրոգրադ գալուց յետոյ եկաւ Լիպարիտ Նազարեանը: Կ.Կ-ի անդամները, բժշկի հետ խորհրդակցելով, հրաւիրեցին միասին աշխատելու ընկերները Լիպ. Նազարեանին և Աչխարհբեկ Քալանթարին: Այս մասին տեղեկացրինք Մոսկւայում և Կիևում գտնուող Կ.Կ.-ի ընկերներին: Բժշկի համաձայնութեամբ ունեցանք ընկերական ընդհանուր ժողով և մտքերի փոխանակութիւն մեղ հետաքրքրող խնդիրների շուրջ: Ընկերների մէջ տարակարծութիւն չկար. բոլորն ղգում, հասկանում էին կացութեան լրջութիւնը. ու թէև Բժիշկը դեռ ոչինչ չէր ասել իր առաքելութեան մասին, բայց նկատի ունենալով նրա մտերիմ ծանօթութիւնը ռուսական բարձր խաւերի հետ, նրանք արդէն կռահել էին բժշկի գալու նպատակը:

Բժիշկն ապրում էր իր եղբօր՝ զնդապետ Յ. Զաւրեանի մօտ, և մենք յաճախ իր մօտ էինք նիստ ունենում: Միջկուսակցական մի յանձնախումբ էր կազմւել՝ աղգային խնդիրը աղատ Ռուսաստանում լաւագոյն ձևով կարգադրելու նպատակով նախնական աշխատանք կատարելու և Սահմանադիր Ժողովին ներկայացնելու համար: Էսէռական Կ.Կ-ի կողմից առաջարկ ստացանք, որ մենք մեր ներկայացուցիչն ունենանք յիշեալ յանձնախմբում և .որոչւեց, որ Դաշնակցութեան կողմից որպէս ներկայացուցիչ յանձնախմբի աշխատանքներին մասնակցի ընկ. Լիպարիտ Նազարեանը: Յատկապէս աղգային հարցի շուրջ, յանձնախմբի որոշմամբ, բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները հրապարակային դասախօսութիւններ էին տալիս: Յանձնախմբի որոշման հիման վրայ դասախօսեց Լ. Նազարեանը:

Ինձ վիճակւել էր շատ համեստ աշխատանք, որն իմ սրտին շատ մօտ էր: Բժիշկն իր գրաւոր աշխատանքը սևագրում էր, ապա տալիս ինձ՝ մաքուր արտագրելու: Բացի այն, որ տեսակցութիւններ էր ունենում ժամանակաւոր կառավարութեան անդամների հետ՝ հայ զինուորներին Կովկասեան ճակատ փոխադրելու վերաբերեալ, յաճախ գրաւոր պարզաբանութիւններ էր ներկայացնում: Արդէն ժամանակաւոր Կառավարութիւնն ընդառաջել էր Դաշնակցութեան դիմումին և որոշել փոխադրութիւնը կատարել այնպէս, որ աչքի չընկնի ու պրովոկացիայի նիւթ չդառնայ:

Անչափ ուրախ էի, որ հայ զինուորներին Կովկասեան ճակատ փոխադրելու անհրաժեշտութիւնն ղգում էին նաև ոչ-դաշնակցական մտաւորականներ և ուսանողներ: Բացի դաշնակցական Ուսանողական Միութիւնից, գոյութիւն ունէր և ընդհանուր Հայ Ուսանողական Միութիւն, որն ունէր իր վարչութիւնը, որի

պարտականութիւնն էր՝ ճչտել, թէ ովքեր են կարիքաւոր ուսանողները, և պիտում ուղղէր Պետրոզրադի եկեղեցական վարչութեանը՝ նպաստ տալու, պայմանով, որ հետագային նպաստընկալ ուսանողը գործի անցնելուց յետոյ պարբերաբար վերադարձնէր իր պարտքը: Պետրոզրադի եկեղեցին Ռուսաստանի հայ եկեղեցիների մէջ ամենահարուստն էր: Եկեղեցին գտնւում է Նևսկիյ կոչւած պողոտայի վրայ, քովը բազմայարկ տներ ու խանութներ:

Զէղոք ուսանողութիւնը մեզ պէս մտահոգւած էր այդ հարցով, որը և մեր ուսանողական ժողովներում ղրոյցի նիւթ էր դառնում: Բացի այդ, Արևմտեան ճակատում գտնւած մեր զինուորականներին էլ այդ խնդիրը նոյն ձևով մտահոգութիւն էր պատճառում: Պարզ էր, բոլորի մէջ խօսում էր առողջ բնազդը: Մի օր տանտիրուհիս ինձ կանչեց դուրս և ասաց, որ մի զինուորական ուղում է տեսնել ինձ հետ, կանգնած է փողոցում, մուտքի մօտ: Արագ իջայ ցած, տեսայ, որ իմ հայրենակից, Վարանդայի Գիլի գիւղացի, գնդապետ Մովսէս Մահտեսի Բաբայեանն է: Վայրկենապէս ընկանք իրար գիրկ ու ողջագուրւելով ներս գնացինք:

Հայրենակիցս տարիքով մեծ էր ինձնից և զեղեցիկ տղամարդ էր, բարձրահասակ, թիկնեղ ու քաջառողջ, իսկական զինուորականի տեսքով ու կեցւածքով, ընութիւնից չոայլօրէն ամէն բարեմասնութեամբ օժտւած մէկը: Շուչու ռէալական դպրոցի շրջանաւարտ, Պետրոզրադի տեխնոլոգիական ինստիտուտն աւարտած ճարտարագէտ: Երբ պայթում է առաջին աշխարհամարտը, ենթարկւում է զօրակոչի, ուղարկւում զինուորական դպրոց, չորս ամսւայ դասընթացն աւարտելով, որպէս սպայ ուղարկւում է ճակատ: Ռուս նշանաւոր զօրավար Բրուսիլովի[6] զօրարանակում աչքի է ընկնում իր քաջութեամբ, արժանանում Գէորգեան[7] երկրորդ և ապա առաջին աստիճանի չքանչանի և ոսկէ թրի, հասնելով գնդապետի աստիճանի:

– Մովսէս, արձակուրդ ես վերցրել տուն գնալու՞, հարցնում եմ:

–Ոչ, ի՞նչ արձակուրդի ժամանակ է: Մեր բանակում ներկայիս մօտաւորապէս եօթ հազար հինգ հարիւր զինուորներ ու բաւական թիւով սպաներ կան: Այս անժամանակ յեղափոխութիւնից լաւ բան չենք սպասում. ճակատի զօրքի մէջ խառնչտուք են զգել և զինուորները ենթակայ են կազմալուծման: Հայ սպաներս հաւաքւեցինք, քննութեան առանք մեր վիճակը, յանդեցինք այն եզրակացութեան, որ լաւագոյնն է դիմենք կառավարութեան, որպէսզի թոյլ տայ մեզ փոխադրւելու Կովկասեան ճակատ:

Մովսէսն աչակերտական նստարանից դաշնակցական էր և Շուչիում ակտիւ աշխատողներից մէկն էր եղել որպէս դաշնակցական աչակերտական միութեան վարչութեան անդամ: Մովսէսի անբաժան ընկերն էր Տիգրան Նազարեանը, նոյնպէս ճարտարագէտ: Երկուսն էլ լաւ ձայն ունէին և թեմական ղպրոցի մեր քառաձայն խմբում թէ՛ պատարագի ժամանակ և թէ՛ հանդէսներում կերգէին: Թեմականցիներս հպարտանում էինք, որ մեզ հետ միասին խմբում ռէալական ղպրոցի աչակերտներ էին երգում:

Մովսէսին յայտնեցի Բժշկի մասին, որը հէնց նոյն խնդիրը կարգադրելու համար է եկել Թիֆլիզից Բիւրոյի կողմից: Այս տեղեկութիւնը լսելով՝ անչափ ուրախացաւ և ոգևորւեց:

– Դէ, եղիչէ, վեր կաց՝ գնանք ուղիղ Բժշկի մօտ:

– Հիմա Բժիշկը տանը չի լինի, սովորաբար ճաշից յետոյ, ժամը 4-ին ենք լինում մօտը. հէնց այսօր պէտք է մօտը գնամ, մի քանի թղթեր է տւել արտագրելու, պիտի տանեմ, յանձնեմ. միասին կերթանք:

Ճաշից յետոյ, ճիշտ 4-ին հասանք Բժշկի տունը, ներս մտանք, և Մովսէսին ներկայացրի Բժշկին: Մովսէսը պատմեց ճակատի դրութեան և հայ բանակայինների մտահոգութիւնների մասին:

Բժիշկը մեծ բաւարարութեամբ լսում էր Մովսէսին, ապա ծանօթանալով զրաւոր դիմումի բովանդակութեանը՝ հաւանութիւն տւեց, որ Մովսէսը վաշտով միասին ներկայանայ զինուորական նախարարութիւն, խոստանալով, որ ինքն էլ անձամբ կը խօսի՝ ըստ հնարաւորին չուտ կարգադրութիւն անելու վերաբերեալ:

Յաջորդ օրը, Մովսէսը 250 զինուորների գլուխն անցած ներկայացաւ զինուորական նախարարին: Վերջինս յայտնում է, թէ Բժիշկը հանդիպել է իրեն, խօսել է այդ մասին՝ և չուտով կարգադրութիւն կը լինի: Մովսէսը վերադարձաւ իր զինուորների հետ բանակ, սակայն հայ զինուորներին Կովկասեան ճակատ փոխադրելը դանդաղեց երկրում ծայր տւած անիշխանութեան պատճառով, որ բնական հետևանքն էր այն քայքայիչ աշխատանքի, որ տեղի էր ունենում ամէն օր, ամէն ժամ: Յուվենան արշաւանքին Մովսէսն ընկաւ Արևմտեան ճակատում: Իր մեծ եղբայրը՝ Զաքարը գնաց ճակատ, բերեց ղին իրենց գիւղը և ամփոփեց գիւղի գերեզմանատանը:

[6] Ալեքսանդր Բրուսիլով (1853-1926), ռուս գնդապետ, Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 8րդ բանակի հրամանատար, 1916 թուականից՝ Հարաւ-արևմտեան ճակատի գլխաւոր հրամանատար, կազմակերպել է յաջող յարձակում որը յայտնի է «բրուսիլովեան ճեղքում» անունով: (Խմբ.)

[7] Գէորգեան խաչ, Սուրբ Գէորգի անունով չքանչան, որ Ռուսաստանում սահմանւել է 1769թ., աչքի ընկած սպաներին, գնդապետներին, իսկ 1807թւից նաև գնդապետներին պարգևատրելու համար: Ունի չորս աստիճան:(Խմբ.)

Երբ արտասահմանից յաջորդաբար եկան տարագիր յեղափոխականները, որոշուեց, որ Դաշնակցութեան կողմից ողջոյնի խօսք ասւի յեղափոխական պարագլուխներին՝ Զերնովին[8], Պլեխանովին[9], Կրապօտկինին[10], և Լէնինին: Բժիշկը, որպէս Բիւրօի ներկայացուցիչ և Լ.Նաղարեանը Կ.Կ.-ի կողմից, ներկայացան յիշեալ պարագլուխներին և Հայ ժողովրդի ու Դաշնակցութեան կողմից ողջունեցին նրանց: Մեր ներկայացուցիչները չատ սիրալիր ընդունելութեան են արժանանում բոլորի կողմից: Վ.Զերնովը, իբրև հին բարեկամների հետ ղրուցելով, վերյիշում է իր ունեցած մտերմութիւնը Քրիստափորի[11] հետ և նրա անձնուիրութիւնը Հարադատ ժողովրդի ազատագրման գործին, որի համրին և տեղի ունեցաւ նրա կեանքի եղերական վախճանը:

Դրւատական խօսք է ասում Գ.Պլեխանովը. "Իմ խորին չնորհակալութիւնն եմ յայտնում բաղմաչարչար հայ ժողովրդին, որ ներկայիս պետական աւելի լաւ կեցուածք ունի՝ համեմատած Ռուսաստանի միւս ժողովուրդների հետ, քան նոյնիսկ ռուս ժողովուրդը, երբ բոլորը կենտրոնախոյս դիրք են ընդունել, և իւրաքանչիւրը ուզում է մինչև Սահմանադիր Ժողովի գումարուելը իր հարցը որոշել, վճռահատել: Ես իմ խորին չնորհակալութիւնն եմ յայտնում Դաշնակցութեան, որը կարողացել է դաստիարակել և ուղղութիւն տալ իր ժողովրդին": Հարկաւ, Պլեխանովի դրւատական խօսքերը ընկերների սնփականութիւն դառնալով, բոլորի վրայ մեծ տպաւորութիւն թողեց:

Մարտի վերջերին մի նամակ ստացայ Արամից, թէ պատերազմի նախորդ տարին Վռամեանը եղել է Պետրոգրադ, Հայոց Եկեղեցու Հոգաբարձութիւնից Վասպուրականի և Տարօնի չրջանի դպրոցների համար նպաստ ստանալու, որ նա իր հետ երկու մանրամասն տեղեկագիր է բերել, ներկայացրել Հոգաբարձութեան, ուստի յանձնարարում է դիմեմ Հոգաբարձութեան, ստանամ

---

[8] Վ. Զերնով (1873-1952). Ռուսաստանի Էսէռական կուսակցութեան հիմնադիրներից մէկը, նրա տեսաբանը, տարագրել է Ռուսաստանից: (Խմբ.)

[9] Գ. Պլեխանով (1856-1918). Ռուս յեղափոխական գործիչ, փիլիսոփա, մարքսիստ, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանուորական կուսակցութեան հիմնադիրներից մէկը: (Խմբ.)

[10] Կրապոտկին Պետր (1842-1921). Ռուս իշխան, աշխարհագրագէտ, երկրաբան, յեղափոխական, անարխիզմի տեսաբան: (Խմբ.)

[11] Քրիստափոր Միքայէլեան (1859, Վերին Ագուլիս – 1905, Սոֆիա). Ականաւոր հասարակական-քաղաքական գործիչ, դաշնակցական կուսակցութեան հիմնադիրներից մէկը: Աւարտել է Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտը, աշխատել է Վերին Ագուլիսում: 1880ական թուականներին ակտիւօրէն ներգրաւել է ազգային-ազատագրական չարժումների մէջ: 1890թ. Սիմոն Զաւարեանի և Ստեփան Զօրեանի հետ հիմնադրել է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: 1891-ին հիմնադրել է կուսակցութեան «Դրօշակ» թերթը: Զոհւել է ինքնասէն ռումբի փորձարկման ժամանակ: (Խմբ.)

տեղեկագրերը, արտագրեմ և ուղարկեմ իրեն, քանի որ դրանք պէտք են իրեն և յիշեալ շրջանների ընկերներին:

Արամի հետ ծանօթ էի ու ճանաչում էի որպէս մեր Թաղեցիի, մանուկ տարիքից: Անունը Սարգիս էր, տնեցիք և Թաղեցիները Սերգէյ անունով էին կոչում: Եղբայրը արհեստաւոր էր Թէհ, բայց միաժամանակ, վարձու տալու նպատակով, Ղարաբաղի աղնաւտոհմ երկու-երեք ձիեր էր պահում: Ամբողջ Սիւնիքը մէկ խճուղի ունէր Ասկերանից մինչև Ղափանի հանքերը: Լեռնոտ երկիր լինելով, ճանապարհներից միանգամայն դուրկ, հաղորդակցութիւնը ձիերով, ջորիներով և նոյնիսկ էշերով էր կատարւում: Սերգէյը այն ժամանակ Թեմական դպրոցի Բ դասարանի աշակերտ էր, իսկ ես Բ նախակրթարանի: Սերգէյը անմիջապէս մէկ ձի դուրս կը բերէր, կը Թամբէր ու ինձ էլ իր գաւակին առնելով կը գայինք մեր տուն: Հետագային, երբ աշակերտական դաղտնի խմբակներից մէկում ես էլ ուրիշ դասընկերների հետ տեղաւորւել էինք, մեր խմբակի հետ յաջորդաբար պարապել են Առաստամեան Գէորգը (Եղոր) և Հետագային Սերգէյը:

Սա ի միջի այլոց: Յեղափոխութեան հետևանքով, երբ դահընկէց էր եղել Նիկոլայ Բ կայսրը, ընկերներից ոմանք Թողեցին Համալսարանը և չտապեցին Կովկաս: Պ. Լեոնեանը արդէն աւարտել էր ուսումը որպէս իրաւաբան և ծառայում էր Պետրոգրադի քաղաքային վարչութեան մօտ: Նա էլ գնաց Կովկաս Արամի մօտ, և Արամը Պարոյրի խորհրդով էր գրել իր նամակը: Վատ ժամանակ էր. մի կողմից խաղաղութիւնը խախտած, խառնաչփոթ վիճակ, միւս կողմից տարեվերջին երեք-չորս առարկաներից քննութիւն տալու համար պատրաստական աշխատանքի էի լծած, ինչպէս իմ դասընկերները: Երբ Արամի նամակը ստացայ, վարանման մէջ ընկայ, ինչպէ՞ս վարուել. միաժամանակ երկու աշխատանք դժւար էր կատարել: Ձիչտն ասած, սիրող դրութիւնը տեսնելով, չատ յոռետես էի դարձած և բնաւ յոյս չունէի, Թէ կարող էր վերականգնուել խաղաղութիւնը, նորմալ պայմաններ ստեղծուէր և ուսանողութիւնը չարունակէր իր ուսումը և աւարտէր:

Հոգաբարձութիւնից ստացայ երկու տեղեկագրերը: Երկուսն էլ վատ ձեռագրով գրած: Մէկը գրած էր Վռամեանի ձեռքով, ինչպէս ասաց Հոգաբարձութեան քարտուղարը, իսկ երկրորդը յայտնի չէր: Վռամեանը, ինչպէս պատմում էին ընկերները, արագ-արագ խօսող մարդ էր և ինչպէս խօսում էր, այնպէս էլ գրում էր: Վռամեանի ձեռագիրը հնարաւոր էր կարդալ, իսկ երկրորդինը չատ դժւար էր կարդալը և չատ բառեր կռահել պէտք էր, իսկ որոշ յատուկ անուններ (տեղերի և շրջանների) միանգամայն անընթեռնելի էին: Վռամեանի գրածը մի կերպ վերջացրի, իսկ երկրորդը, հաշիւ մէկ երրորդը գրած, խնդրեցի մեր ճեմարանի աւարտական քննութիւնը վերջացրած ընկեր Պետրոս

Աղախաննանին, որ նա չարունակէ, որովհետև ես հարկադրուած էի մէկ ուրիշ աշխատանք կատարել:

Պապաչայից (Լևոն Թաղէոսեանից) նամակ էի ստացել, թէ հնարաւո՞ր է տաճոցի փամփուշտ ձեռք բերել ղրամով, թէ՞ ոչ: Երբ տեղի ունեցաւ յեղափոխութիւնը, ամբոխը յարձակւել էր Պետրոպաւլովսկ ամրոցի վրայ, այնտեղ ամբարուած զէնքերն ու ռազմամթերքը թալանի տալ: Արդէն մասնաւոր ձեռքի վրայ զէնքի առևտուր էր տեղի ունենում: Յամենայն դէպս, ռուսական զէնքեր ղրամով և մասամբ առանց ղրամի հնարաւոր էր ձեռք բերել, իսկ տաճոցը գերմանական լինելով, կարելի էր ձեռք բերել Ֆինլանդիայում, Ֆիննո մաքսանենգներից:

Մեր ընկերներից Յակոբ Բաղրամեանը համալսարանի աւարտական քննութիւնները տւել էր յեղափոխութիւնից երեք-չորս ամիս առաջ, որպէս իրաւաբան, բայց ենթակայ լինելով զինակոչի, մտել էր սպայական դպրոց: Բացի Յակոբից, կային նաև ուրիշ Հայեր նոյն դպրոցում. կուսակցականներ չէին, բայց ազգային ոգով մարդիկ, ուխ, թէ տաբ Հոգի, կապած Յակոբի հետ: Յակոբն ու ընկերները բաւական զէնք և ռազմամթերք էին ձեռք բերել և պահում էին ցրիւ վիճակում, ընկերների բնակարաններում: Յակոբը համալսարանից ծանօթ մէկ Ֆիննի ուսանողի հետ խօսեց այդ մասին, և նա ասաց, որ ինքը ճանաչում է մի քանի մաքսանենգների: Ֆիննի ուսանողը մի չարաթ անց Յակոբին յայտնում է, որ մեր ուղած քանակութեամբ փամփուշտ կարող ենք ձեռք բերել, արկղների մէջ լաւ տեղաւորուած: Այդ մասին անմիջապէս զրեցի Պապաչային, որը պիտի ուղարկէր յատուկ մէկին, որ առնէր և հասցնէր Բագու: Որոշուեց, որ ընկերների մօտ կուտակուած զէնքն ու մթերքը իրենց հետ տանէին Կովկաս դնալու ժամանակ:

Ապրիլի սկզբին Բիւրոյից հրաւէր ստացանք ուղարկելու մեր ներկայացուցիչներին առաջին ազատ Ռայոնական Ժողովին մասնակցելու: Միևնոյն ժամանակ, Մոսկւայի և Կիևի ընկերների հետ համախորհուրդ, որոշել էր Բաքւում ունենալ ուսանողական երկրորդ համագումարը, հաչւետուութեան և նոր Կ.Կ.-ի ընտրութեան համար: Ժողովին ես առաջարկեցի, որ Տիգրան Աւետիսեանը գնար Թիֆլիս, Ռայոնական Ժողովին մասնակցելու, իսկ ես յանձն առնէի գրաւոր տեղեկագիր պատրաստել ու գնալ Բագու, ուսանողական համագումարին մասնակցելու: Իմ առաջարկս չանցաւ. Բժիշկն առաջարկեց և որոշուեց, որ ես գնամ Թիֆլիս, իսկ Տիգրանը՝ Բագու:

ԹԻՖԼԻՍ. ԱԶԱՏ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ազատ Ռայոնական Ա. Ժողովը տեղի ունեցաւ ապրիլի 7-էց մինչև 13-ը: Ժողովը բացեց Ռոստոմը[12] և առաջարկեց դիւանի ընտրութիւն կատարել: Ռոստոմը ընտրուեց որպէս պատուաւոր նախագահ, իսկ Ա. Շալախմունին և Սահակ Թորոսեանը ատենապետներ ժողովը վարելու: Քարտուղարներ՝ Գառնիկ Քալոյեան, Գառնիկ Շահինեան և Ա. Վանցեան:

Ռոստոմը անդրադառնալով Դաշնակցութեան անցած ճանապարհին, մատնանշեց, որ ճանապարհը խիստ փշոտ էր, պատած տատասկով և թէ ինչպիսի դժուարութեամբ է ընթացել Դաշնակցութիւնը նման ճանապարհով, շանկապին կորուստներ տալով, որոնց տեղերը մնացել են բաց: Ապա չեչոտում է և ընդգծում սիղիֆեան այն աշխատանքը, որ վիճակուել էր կուսակցութեանը, և թէ ինչպիսի հիացմունք էր պատճառել մեր աշխատանքը օտար յեղափոխական անւանի ղեմքերին: Մի անգամ ռուս ականաւոր սոցիալիստ-յեղափոխական Օսիպ Մինորը ասում է՝ "Ընկեր Ռոստոմ, ինձ խիստ զարմանք ու հիացմունք է պատճառել ձեր կուսակցութիւնը իւր կատարած սիղիֆեան աշխատանքով: Դուք Բելջիքայում[13] զէնք էք ձեռք բերում, փոխադրում Ֆինլանդիա և այնտեղից հաղարաւոր ժանդարմների ու ոստիկանների կորդոնների միջով անցկացնում Կովկաս, Թրքական սահման, այնտեղից էլ հաղարաւոր զապտիէների և քրդերի միջով հասցնում Սասուն, Վան, յեղափոխական ակտեր կատարում: Դա ուղղակի հրաշք է": Ռոստոմը իրեն յատուկ ժպիտով պատասխանում է՝ "Ընկեր Մինոր, ոչ մի հրաշք չկայ, դա մի սովորական աշխատանք է մեզ համար":

Ռայոնական Ժողովին պարզուեց, որ մեր շարքերում կան ուլտրասոցիալիստական և ուլտրայեղափոխական անհատներ: Յօսեց Արտաշէս Վանցեանը, որ եկել էր Բազէից իր ճառի մէջ չեչտեց, թէ Դաշնակցութիւնը տասնեակ տարիներ խաբել է աշխատաւորութեանը որպէս սոցիալիստական կուսակցութիւն: Դաշնակցութիւնն իրը միայն անունով սոցիալիստական, աշխատաւորական է եղել, իսկ իրականութեան մէջ աշխատաւորութեան համար ոչինչ չի արել: Վանցեանին

---

[12] Ռոստոմ (Սաենյան Զօրեան), (1867թ, Յղնա գիւղ - 1919թ, Թիֆլիս). Դաշնակցական կուսակցութեան հիմնադիրներից և ղեկավարներից մէկը: Սովորել է Մոսկայի Պետրովսկի երկրագիտական ակադեմիայում, որտեղից վտարել է ուսանողական ցոյցերին մասնակցելու պատճառով: Մասնել է հասարակական-քաղաքական ակտիվ գործունեութեան: Կազմել է Դաշնակցութեան Մրցպրի տեսական մասը: 1892-95թթ խմբագրել է «Դրօշակ» թերթը: Մեծ նշանակութիւն ունի Հայոց պետականութեան վերականգնման և պաշտպանման գործում: (Խմբ.)

[13] Բելգիա. (Խմբ.)

բացականչութիւններով ձայնակցում էր Պարոյր Ստամբոլցեանը[14]: Տեսանք, թէ ինչպէս այլայլեց Ռոստոմը, դոյն տուեց, գոյն առաւ յուղմունքից և պոռթկաց՝ "Սա ի՞նչ խայտառակութիւն է այսպիսի հանդիսաւոր, պատասխանատու ժողովում": Քանի անգամ անցեալները Շուչուց Թիֆլիս գալով հանդիպումներ էի ունեցել Ռոստոմի հետ հրահանգներ ու ցուցմունքներ ստանալու համար, ժողովներում էի տեսել նրան խօսելիս, միչտ ժպիտը դէմքին, որն այնքան գրաւիչ էր: Պարզ նկատելի էր, թէ որքան վրդովմունք պատճառեց նրան Վանցեանի չմտածուած և իրականութեան չհամապատասխանող յայտարարութիւնը: Այդ րոպէին նոյնպիսի վրդովմունքով և ցասումով բիւրեղի պէս մաքուր Բժ. Յովսէփ Տէր Դաւթեանը, որ սակաւախօս մարդ էր, ցնցուեց տեղում և արագօրէն մօտեցաւ Վանցեանին ու ասաց՝ "Սուտ է յայտարարութիւնդ, յետ վերցրու խօսքերդ:" Վանցեանը սմքեց, յետ վերցրեց իւր խօսքերը: Նա ևնթադրել էր, թէ պիտի մեծ տպաւորութիւն թողնէր նման յայտարարութիւն անելով, բայց սխալւել էր իր հաչիւների մէջ: Բացի մէկ-երկու հոգուց, համակիր չունէր:

Ստամբոլցեան Պարոյրը Բագւում գործակատարի պաչտօնով, թէ թերթի ցրիչի, լաւ չեմ յիչում, սակայն 1908 թուականին նրան Մածոն խնչօն ուղարկել էր Շուչի և մի նամակով յանձնարարել ինձ, որ նրա համար բարեխօսեմ ընկեր ուսուցիչների մօտ, պատրաստւի և էքստերն քննութիւն տայ, թեմական դպրոցի վկայական ստանայ, թերևս հետագային մի բարեգործ գտնւի, որ նրա բարձրագոյն ուսման ծախսը հոգայ: Ինչ որ հնարաւոր էր, արւեց Շուչում, ընկերները ընդառաջեցին և նոյնիսկ դարձրին ազատ ունկնդիր, որ դպրոցում հետևի դասերին: Բագւում աչքի էր ընկած իր աչխուժութեամբ ու եռանդով: Այնպէս որ, հին ծանօթ լինելով, ժողովի դադարին դարմանք ու ցաւ յայտնեցի Պարոյրին իր աքլորացման համար:

Ռայոնական ժողովին ինքնապաչտպանութեան հարցը դրւեց մի խումբ ընկերների կողմից, սակայն այսուայն կողմից սկսեցին բացականչութիւններ անել, թէ դա ի՞նչ հարց է, որ դրւում է քննութեան, երբ բռնակալութիւնը տապալւած, ազատութիւն է տիրում, որևէ տեղից վտանգ չի սպառնում, ամէն մի դաչնակցական պատրաստ է ղէնք ունենալ, պէտք չկայ քննութեան դնել հարցը և այլն:

---

[14] Պարոյր Աւետիսի Ստամբոլցեան (1887, Սարիղամիչ - 1942, Ռուսաստան, աքսորավայր): Հայ բոլչեւիկեան գործիչ, Խորհրդային Հայաստանում կոմպերատիայի կազմակերպիչներից մէկը: Ղեկավար պաչտօնների է վարել Հայկօոպի և առևտրի նախարարութեան համակարգում: Ժամանակի ճանաչուած տնտեսագէտներից, ունի հրատարակուած աչխատութիւններ: Աքսորւել է 1937թ. իբրև ժողովրդի թչնամի: (Խմբ.)

Ինքնապաշտպանութեան հարցը նախապէս փոքրաթիւ ընկերներ քննութեան էինք առել և անհրաժեշտ գտել ժողովի ուշադրութեանը ներկայացնել՝ համապատասխան որոշում կայացնելու միտումով, բայց երբ մերժուեց խնդիրը, մի պահ զարմանք պատճառեց հարցը դնողներիս: Յետոյ երբ անդրադարձանք նոյն հարցին, այն կարծիքը կազմուեց, որ նման բազմամարդ ժողովում անյարմար էր ինքնապաշտպանութեան հարց դնել ու քննութեան առնել, քանի որ կարող է տարածուել հասարակութեան մէջ, պրովոկացիայի նիւթ դառնալ և, վերջապէս, որ Բիւրօն ինքն այդ մասին միջոցներ խորհելու պարտականութիւն ունի:

Մի խումբ երիտասարդներ դիմեցինք Ռոստոմին, որ պատմէ մեզ, թէ ինչպէս է կազմուել Դաշնակցութիւնը: Երկու անգամ, 10-12 հոգի, Յովնանեան դպրոցի դասարաններից մէկում լսեցինք Ռոստոմի զրոյցը: Պերճախօս չէր Ռոստոմը, բայց որ խօսում էր, անյագ ցանկութիւն էր առաջանում անվերջ լսելու նրան: Զրոյցին ներկայ էր հին ընկերներից Նիկոլ Մատինեանը, որ միշտ գործի մարդ է եղած և մասնակից անցեալի մեր գաղտնի գործնական աշխատանքներին:

Ռոստոմը դարձաւ Մատինեանին, որ մի կողմ լուռ նստած էր, և ասաց՝ "Նիկօլ, դու ուշադրութեամբ լսիր ասածներս, որտեղ սխալուելու լինեմ, կուղղես անմիջապէս, որովհետև դու աւելի յիշողութիւն ունես:" Ապա յիշողութեամբ պատմեց, թէ ինչպէս է կազմուել Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը և ոչ մի դիտողութիւն չեղաւ Նիկոլ Մատինեանի կողմից: Գառնիկ Քալաչեանն ու ես նոթագրում էինք և նոյն օրը աղատ ժամին արձանագրում մեր լսածը: Քալաչեանը Պարտաւորուեց, որ թերթում լոյս ընծայէ Ռոստոմի պատմածները: Հետագային Քալաչեանը միայն մէկ մասը թերթում լոյս ընծայեց, բայց չաւարտեց: Պէտք է ասեմ, որ Դաշնակցութեան կազմուելու աշխատանքը ինչ ձևով Ռոստոմից եմ լսել, գրեթէ նոյնութեամբ լսել էի Խաժակից՝ Երևանում ունեցած իր դասախօսութեան ընթացքին: Ռոստոմից յետոյ էլ մեր ղեկավարներից որ մէկի խօսքը լսելու պատեհութիւնն ունեցել եմ նոյն առթիւ, միշտ նոյն րովանդակութիւն ունեցող պատմութիւն եմ լսել՝ առանց չափազանցութիւնների: Դա ինքնին ապացոյց է, որ պատմութիւնը ճշտիւ է տրուել միշտ:

Ռայոնական ժողովից յետոյ վերադարձայ Պետրոգրադ, ընկերական ընդհանուր ժողով ունեցանք, և ես ղեկուցեցի ժողովի կատարած աշխատանքի մասին: Վերադարձիս Ռոստոմը յանձնարարեց Աչխարհբեկի հետ փնտրտուք կատարել Պահնորդական (գաղտնի ոստիկանութեան) բաժնի արխիւում և գտնել Դաշնակցութեան առաջին թռուցիկը, որը ծրնևի մեր արխիւում չունենք, և որը անպայման այնտեղ կը լինի, որպէսզի

ուղարկենք Տիար Անտօնին՝ դնելու մեր արխիւը: Դա առիթ եղաւ, որ Պահնորդական բաժնի հայկական մասը Աչխարհրէկի գլխաւորութեամբ, մեր կուսակցական ընկերները՝ Ռաֆ. Խոյլեան, Շէկ Յովսէփ և Մ. Ղազարեան, փոխադրեն ամբողջովին Համալսարանի արևելագիտական ֆակուլտէտի հայկական հատուածը: Հետագային Ռոստոմը Աչխարհրէկից ստանալով, երբ գնում է Ստոկհոլմ Միջ.Սոց. ժողովին մասնակցելու, այնտեղից ուղարկում է Ժընև:

Մայիսի սկզբներին էր, թերթերում կարդացինք, որ Կովկասում եռուզեռի մէջ են հայ, վրացի և թաթար ժողովուրդները, գինւում են, և հրացանների արժէքները բարձրացել, առասպելական չափեր են ընդունել: Պատերազմի ժամանակ զերի վերցւած ղօրքերից առնւած հրացանները դիբիլի պէս թափւած, հատը հինգ ռուբլով տաճկական, աւստրիական ու գերմանական հրացաններ էին ծախւում, իսկ այժմ արժէքները բարձրացել են մինչև 1000–1200 ռուբլի: Մեր ոչ միայն դաչնակցական, այլ և միւս հոսանքների հայ ուսանողները խիստ յուզւած էին թերթերի մէջ լոյս տեսած տեղեկութիւններից, ուստի մեր Կ.Կ.-ի որոչմամբ հրաւիրւեց ընդհանուր ուսանողական ժողով հայոց եկեղեցու չրջափակում, ուր ելոյթ ունեցան բոլոր հոսանքների ուսանողները և զտան կորստարեր Կովկասում ստեղծւած եռուզեռը: Ուստի որոչւեց ընդհանուր ուսանողութեան անունից մի բողոք ուղղել և զգաստութեան խօսք ասել բոլորին՝ ինչու՞ են դինւում, ու՞մ դէմ, չէ՞ որ բոնակալութիւնը խորտակւած, ազատութիւն է տիրում, և անհրաժեչտ է, որ համայն Ռուսաստանի ժողովուրդները լծւեն խաղաղ, ստեղծագործական աչխատանքի ընդհանուր եղբայրական միացեալ ուժերով: Ընդհանուր ժողովում, հէնց տեղի վրայ, համապատասխան հեռագիր խմբագրւեց ու որոչւեց Միքայել Մելիք Շահնազարեանի (չէզոք հոսանքից), և իմ ստորագրութեամբ ուղարկել կովկասեան բոլոր լեզուներով լոյս տեսնող թերթերին: Ասկա որոչւեց, որ մէկ յանձնախումբ, ընտրւած ընդհանուր ուսանողութեան կողմից, ներկայանայ զանազան հոսանքների ազդեցիկ թերթերի խմբագրութեանց՝ նրանց ուչադրութիւնը հրաւիրելու և խնդրելու, որ իրենց հեղինակաւոր ձայնը բարձրացնեն, կոչ ուղղեն կովկասեան ժողովուրդներին՝ հանդիստ մնալու և խաղաղ աչխատանքի լծւելու: Որոչւեց, որ Լ. Նազարեանը, Անուչ. Բալասուրը և Միք. Մելիք Շահնազարեանը, իրրև յանձնախմբի անդամներ, գործի անցնեն:

Յանձնախումբը այցելեց նչւած բոլոր թերթերի խմբագրութիւնները և յայտնեց մեր ցանկութիւնները: Խմբագրութիւնները սիրալիր ընդունելութիւն ցոյց տւին և խոստացան կարզադրել անհրաժեչտը: Առաձնապէս յիչատակելի է

Ա. Ամֆիտհեատրովի[15] սրտառուչ վերաբերմունքը: Նա ասում է, որ մօտիկից ծանօթ է հայ ժողովրդի անցեալին, գիտէ, թէ ինչպէս մեր ժողովուրդը դարեր չարունակ տառապել, հաղար ու մի զրկանքներ է կրել թրքական բարբարոս ռէժիմի ներքոյ, որ հայ ժողովրդի տառապանքների վինալը եղաւ աչխարհասասան եղեռնը՝ կազմակերպւած թրքական կառավարութեան կողմից, որին զոհ ղնացին հարիւր հաղարաւոր հայեր:

Դեռ ապրիլի սկզբներին նամակներ էի ստացել Շուչու ընկերներից, որ թողնեմ Պետրոգրադը և վերադառնամ Հայրենիք՝ օգնելու իրենց: Ճիչտն ասած, յեղափոխութիւնը տեղի ունենալուց յետոյ, ինձ այնպէս էր թւում, թէ կուսակցական սեւ աչխատանք կատարած գործիչների, ի չարս որոնց և ինձ համար, աննկիք չկայ, թէ հրապարակում պէտք է երևան գային խօսելու չնորհք ունեցող մարդիկ, ուստի ընկերներին պատասխանել էի, թէ քննութիւններ ունեմ, չպիտի կարողանամ կատարել իրենց ցանկութիւնը: Սակայն երբ տեղեկացան, որ Պետրոգրադից իբրև պատգամաւոր մասնակցել եմ Ռայոնական ժողովին, որին իրենք ներկայացուցիչ ուղարկել չէին կարողացել, բայց օգտւելով Վ. Նաւասարդեանի Թիֆլիզ գտնւելու հանգամանքից, նրան Ապառաժի Կ.Կ.- ի կողմից ներկայացուցիչ էին նչանակել, ուստի Ռայոնականից յետոյ կրկնեցին իրենց հրաւէրը պարտադրական ձևով:

Մայիսի երկրորդ կէսին Թիֆլիզից Պետրոգրադ եկաւ մեր հին ընկերներից[16] Ստեփան Տէր Աւետիքեանը[17], Պետական Երկրորդ Դումայի պաչնակցական պատգամաւորը: Պետական 2-րդ Դումայում պաչնակցական երկու պատգամաւոր ունէինք, մեսը Սիրական Տիգրանեանն էր: Երկուսն էլ պատկառազդու մարդիկ էին: Ստեփանը ուսուցչական ինստիտուտ էր աւարտել, երկար տարիներ մանկավարժական գործունէութիւն էր ծաւալել: Եղել էր Քրիստափորի մօտ ընկերներից մէկը: Ստեփան Տէր Աւետիքեանը Գանձակի լեռնային (Հայկական) մասի Բանանց գիւղի զաւակ էր,

---

[15] Ալեքսանդր Ամֆիթհեատրով (1862-1938). Ռուս գրող, հրապարակախօս, լրագրող. 1920թ. տարագրւել է Ռուսաստանից: (Խմբ.)

[16] Հին ընկեր. 1905-1907թթ. ռուսական յեղափոխութեան նախօրեակին Հ.Յ.Դ. անդամների մի նչանաւելի մասը մերժում է «սոցիալիստական ծրագիրը», անջատւում մևանցից, իրեն համարում «Հին Դաչնակցութիւն», պանելով, որ իրենց հետևական նպատակը պէտք է լինի Թուրքահայաստանի ազատագրումը: «Հին ընկեր» համարում էին «Հին Դաչնակցութեան» անդամները: Յիչեալ յեղափոխութեան արտաքսւելից յետոյ կուսակցութեան անդամների մեծ մասը թնձակ պէտք «Հին Դաչնակցութիւն», նպիրելով նախայեղափոխական ազատագրական ծրագրին: (Խմբ.)

[17] Ստեփան Տէր Աւետիքեան. Հ.Յ.Դ. Գանձակի կոմիտէի կազմակերպութեան ակնառու գործիչ, Ռուսաստանի Պետական Դումայի պատգամաւոր, բազմաթիվ գեղարուեստական և հասարակական-քաղաքական բնոյթի գրքերի հեղինակ: Մերութեան օրերին ուսուցիչ էր Լեռնային Գանձակի՝ Հայրենի Բանանց գիւղում: 1937թ. զոհ գարձաւ Ստալինեան բռնութիւններին, որպէս Դաչնակցական, պրպտուածքների ենթարկւեց, և 1937թ. աքսորւեց: Գնդակահարւել է 1938թ., տեղը՝ անյայտ: (Խմբ.)

Դաշնակցութեան հիմնադրութեան տարիներից անդամագրուած կուսակցութեանն ու մտերմացած Քրիստափորի հետ: 1907-8 ուսանողական տարում նա Ղարաբաղի թեմի գիւղական դպրոցների տեսուչ էր նշանակուած և երբ եկաւ Շուշի, Կ.Կ.-ի կազմի մէջ հրաւիրեցին օգտւելու համար նրա կուսակցական փորձառութիւնից և խորհուրդներից:

Ստեփանը իջևանել էր իր աներձագի՝ Աչխարհբեկ Քալանթարի մօտ, որտեղ և հանդիպեցի իրրև աւագ ընկերոջ, որի հետ կապուած էի լաւ յիշողութիւններով: Ստեփանը Բիւրօի կողմից եկել էր Պետրոգրադ, որպէս պատգամաւոր, մասնակցելու համառուսական գիւղացիական համագումարին: Ստեփանը Անուչաւանի հետ այցելեց Վ. Ջերնովին և էսէռական այլ գործիչների, որոնք եկել էին արտասահմանից կամ հեռաւոր Սիբիրից, ուր եղել էին բանտերում կամ աքսորավայրերում: Սիբիրից եկած հին յեղափոխականներից էր և ռուսական յեղափոխութեան "Տատիկ" մականունով կոչուած Եկատերինա Բրեշկո-Բրեշկովսկայան[18], որին յարգալիր այցելութիւն տւեց Ստեփանը և հայ ժողովրդի կողմից չնորհաւորեց նրա աղատւելը: Բրեշկո-Բրեշկովսկայան չատ ջերմ ու սիրալիր ընդունելութիւն է ցոյց տալիս Ստեփանին, որի հետ ծանօթ էր յեղափոխութիւնից առաջ: Բրեշկովսկայան իր լուսանկարներից երկու հատ տալիս է Ստեփանին, մէկի վրայ մակագրուած (ռուսերէն)՝ "Յիշատակ բազմաչարչար հայ ժողովրդին", իսկ միւսի վրայ՝ "Սիրելի ընկեր Ստեփանին":

Ստեփանը կշտամբեց Աչխարհբեկին ու ինձ, որ մնացել ենք Պետրոգրադում, մինչդեռ երկրում կատարելիք չատ գործ կայ և աչխատող ձեռքի պակաս է զգացւում բոլոր գաւառներում: Աչխարհբեկը արդարացաւ, որովհետև համալսարանում աչխատակցում էր Հայազէտ Մառին, պէտք է աւարտէր որոչ աչխատանքներ, որ կարողանար մեկնել Կովկաս: Ես արդարանալու պատճառ չունէի, պիտի թողնէի Պետրոգրադը, մանաւանդ որ դաշնակցական ուսանողութիւնը որոշել էր արդէն վերադառնալ երկիր:

---

[18] Բրեշկո-Բրեշկովսկայա Եկատերինա (1844-1934). Ռուսաստանի էսէռական կուսակցութեան կազմակերպիչներից ու ղեկավարներից մէկը: Մամուլը նրան կնքել էր «յեղափոխութեան սատիկ» մականունով. տարագրւել է երկրից 1919թ.: (Խմբ.)

ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅՐԵՆԻՔ

1917 Թ. յունիսի սկզբներին մեկնեցի Պետրոգրադից և հասայ Բազու: Անմիջապէս գնացի մեր Կուսակցութեան հաւաքատեղին, որտեղ հանդիպեցի աւագ ընկեր Աբրահամ Գիւլխանդանեանին և ուրիշ երիտասարդ ընկերների: Աբրահամին հարցրի՝ "Պապաչային որտե՞ղ կարող եմ տեսնել, իրենց ապրած տանը, թէ՞ իր ծառայութեան վայրում:" Աբրահամը կշտամբանքի տոնով դարձաւ ինձ թէ՝

– Լևոնի մասի՞ն ես հարցնում. նա այլևս Պապաչա չէ: Պապաչան դու ես, մենք Լևոնին մի ամիս չկայ, որ պահել ենք, հիմա քեզնից աւելի երիտասարդ է: Եթէ ուզում ես տեսնել, դեռ կէս ժամ կայ մինչև Լևոնի դուրս գալը գրասենեակից, հիմա գնա, տես, յետոյ դարձեալ կը գաս այստեղ:

Անմիջապէս կառք նստեցի, գնացի ուղիղ նաւթարդիւնաբերողների խորհրդի գրասենեակը, որտեղ Պապաչան պաշտօնավարում էր որպէս հաշւապահ: Պապաչայի հետ ողջագուրւելով սկսեցի խօսել իր արած ապստրանքի չուրջ: Ձթողեց, որ չարունակեմ, ասաց՝ "Քառորդ ժամ չկայ, որ Սաքօ Եալոնը եկաւ, հրաժեշտ տուաւ ու գնաց կայարան, որ տոմսակ գնի, մեկնի Շուշի, հիմա եթէ գնաս կայարան, կը գտնես նրան, իսկ եթէ այնտեղ չլինի, կը նշանակէ գնացքը մեկնել է, չի հասել, պիտի վերադառնայ ինձ մօտ և վաղը երթայ:

Անմիջապէս դուրս թռայ Պապաչայի մօտից և կառք նստեցի, հասայ կայարան: Եօթ տարուց աւելի էր, ինչ Շուշու բանտում հրաժեշտ էի տւել Սաքօին. ես որպէս աղատ աքսորական Կովկասի սահմաններից դուրս ապրելու աքսորավայր ընտրել էի Հաչտարխան քաղաքը, իսկ Սաքօն, որ դատապարտւած էր տասը տարւայ տաժանակրութեան, 1907 Թ. պիտի ուղարկւէր Սիբիր: Նա Յեղափոխութիւնից մօտ մէկ տարի առաջ բանտից ազատւել, ազատ աքսորական էր դարձել. նամակ էր գրել ինձ, որ մի կերպ, մի հազուստ ուղարկեմ իրեն, որպէսզի բանտային հագուստով դուրս չգար: Երկուսս էլ մի հասակի, կարճ և գրեթէ նոյն կազմւածք, ունեցող էինք, ուստի ոչ մեկ դժւարութիւն չկար, երկու ձեռք իմ չափի հագուստ, սպիտակեղէն ու վերնաչապիկներ փոստով ճամբեցի իրեն: Կապոցը փոստից ստանում, հագնւում է, նկարւում և նկարը ուղարկում ինձ:

Գնացի կայարան. լիքը ժողովուրդ, ինքը կարճահասակ, ես կարճահասակ, ինչպէս՞ գտնեմ ամբոխի մէջ: Սկսեցի ամբոխի միջով երկայնքին ու լայնքին գնալ ու յետ գալ: Քանիցս ուղղւեցի

դէպի տոմսակավաճառի խուցը: Զկար ու չկար: Արդէն յոյս կտրել էի, որ չպիտի գտնեմ: Հէնց այդպէս մտածում էի, յանկարծ մէկը ետևից գրկեց ինձ. ետ նայեմ՝ Սաքօն, որ ամբողջը ճնդքելով ուղղակիս է եղել դէպի տոմսակ վաճառողի խուցը: Ողջագուրւելուց յետոյ առաջարկեցի, որ յետաձգի գնալը մի քանի օրով և միասին գնայինք, չհամաձայնեց:

– Ձեմ կարող, Կատինին հեռագրել եմ արդէն, որ մեկնում եմ այսօր. դու խօ չատ լաւ գիտես, որ խեղճը աչքը ճամբին է, գրեթէ տասը տարի է ինչ, սպասում է ինձ: Խօ ես էլ քարից, երկաթից չեմ չինւած, մանաւանդ Հրաչիս, որ արդէն տասը տարեկան է, անհունօրէն կարօտել եմ: Դու էն ասա, տասնոցդ մնու՞մ է, թէ ոչ: Ինչպէս գիտես, իմը ձերբակալւելիս Ղափանում գրաւեցին ոստիկանները. առանց ղէնքի մնալ չեմ կարող. երկտող գրիր նրան, Համեստին, որ քոնը տայ ինձ, մինչև որ մէկը ճարեմ: Պապաչայից ուղեցի, ասաց, որ դժբաղատաբար չունեն, Բագւից տեղահանւելու ժամանակ տակն ու վրայ է եղել ամէն բան:

Հէնց կայարանում մէկ կտոր թղթի վրայ երկտող գրեցի քրոջս, որ մեր ունեցած երկու տասնոցներից մէկը տայ Սաքօին:

– Սաքօ, բնաւ չնեղւես ատրճանակ ձեռք բերելու համար, իմս պահիր մօտդ, վերադարձնելու մասին էլ մի մտածիր. մեր տանը երկու հատ ունենք, մէկը կը բաւէ մեզ:

– Ձիչտն ասած, ես էլ երկու հատ եմ ունեցել, մէկը մեր ծակլաբնում[19] թաքցրել եմ, հողի մէջ է, կասկածում եմ որ լաւ մնացած լինի, դրա համար եմ ուղում քոնը. եթէ իմը լաւ վիճակում մնացած լինի, քոնը կը վերադարձնեմ:

Սաքօն տոմսակ գնեց. երրորդ զանգը հնչելուց յետոյ համբուրւելով բաժանւեցինք:

Վերադարձայ Պապաչայի մօտ, պայմանաւորւեցինք, որ յաջորդ օրը Աբրահամի հետ հանդիպում ու խորհրդակցութիւն ունենանք. եթէ որոշ ապսպրանք ու հրահանգ կայ մեր չրջանի վերաբերեալ, պարզւի, տեղեկացնելու համար Շուչու ընկերներին:

Ապառաժի կոմիտէն, եկեղեցական կալւածների գրաւումից ի վեր, արդէն Կ.Կ. էր դարձած, անմիջական կապ ունենալով Բիւրոյի հետ, միաժամանակ միչտ յարաբերութեան մէջ էր նաև Բագւի (Ռևկանապատի) կենտրոնական կոմիտէի հետ: Պատճառը հասկանալի է՝ Զանգեզուր-Ղարաբաղից ահաղին թւով պիւղացիներ ամէն տարի աչնանացանից յետոյ գնում էին Բագւի նաւթահանքերում աչխատելու որպէս բանւորներ, իսկ գարնանը վերադառնում էին պիւղ, դաչտային աչխատանքները կատարելու: Կային մեծ թւով բանւորներ, որոնք տարիներով մնում էին

[19] Անչաք, կիսաղեռնասովոր բուն՝ չան և այլնի համար: (Խմբ.)

Հանքերում: Վերջապէս, Բագւի Հայուհեան ճնշող մեծամասնութիւնը զանգեղուր-ղարաբաղցիները էին, որոնցից չատերը Շուչում սեփական տներ ունէին, որտեղ անց էին կացնում ամառւայ ամիսները: Բագւի Կ.Կ.-ին ենթակայ մարմիններում և խմբերում մեծ թիւ էին կազմում զանգեղուր-ղարաբաղցիները:

Միւս օրը երեկոյեան գնացի Դաշնակցութեան հաւաքատեղին, ուր արդէն եկել էին մեր աւագ ընկերները՝ Պապաչան, Աբրահամը, Արամայիսը (Միսակ Տէր-Դանիէլեան), Մածոն Խէչօն (Միրզաբէկեան), Ս. Արարատեանը, Իշխան Միրզաբէկեանը: Շուտով եկան իրարու ետևից Բալախանէի, Սև քաղաքի, Բիբի-Էյբաթի և այլ բանւորական վայրերի չրջիկ քարոզիչները՝ զեկուցելու իրենց կատարած աշխատանքների մասին: Շրջիկներից մէկն էր տխրահռչակ Ալիս (Աւետիս) Նուրիջանեանը[20], որն այն ժամանակ մոլեռանդ դաշնակցական էր, կիևի ուսանողներից:

Ընկերները լսեցին նաև իմ ամփոփ զեկոյցը Պետրոգրադում կատարած մեր աշխատանքի մասին, ապա որոչ խորհուրդներ տւեցին մեր չրջանում կատարելիք
աշխատանքների վերաբերեալ:

Յաջորդ օրը երեկոյեան մեկնեցի Բագւից և առաւօտեան հասայ Եւլախ կայարանը, որը Շուչուց 100 վերստի վրայ է գտնւում: Յուլիսի տասն էր. կառք վարձելով, նոյն օրը երեկոյեան հասայ Շուչի:

Լիժինեան հալածանքներից[21] յետոյ, Կովկասի մէկ ծայրից միւսը, մեր կազմակերպութիւնը չատ էր սեղմւել, թուլացել. հարիւրաւոր ընկերներ բանտերում, աքսորավայրերում և փախստական, թափառական վիճակում էին: Երբ պայթեց առաջին

---

[20] Ալիս. Աւետիս Նուրիջանեան (1896-1937). կիևւում ուսանելու տարիներին՝ Դաշնակցական, Հետագայում՝ բոլշեւիկ: Ղեկավար մասնակցութիւն է ունեցել Հայաստանի բոլշեւիկեան կազմակերպութեան գործունէութեան մէջ, եղել է Հայաստանի Յեղկոմի անդամ, 1921-23ԹԹ.՝ Հկ(բ)կ կենտկոմի քարտուղար, Հայաստանի ռազմական գործերի Ժողկոմ: 1923-30ԹԹ. կուսակցական աշխատանք է կատարել Լենինգրադում և Ռեազանի մարզում, 1930-37ԹԹ. Անդրկովկասի Կոլխոզկենտրոնի նախագահ: (Խմբ.)

[21] Լիժինեան Հալածանքներ. 1905-07ԹԹ. յեղափոխական չարժումների ընթացքում Ռուսաստանի ամենաակտիւ քաղաքական ուժերից էր Դաշնակցական կուսակցութիւնը. մասնաւորապէս Անդրկովկասում: Ցարական գաղտնի ոստիկանութեան կողմից այն դիտւում էր որպէս հակապետական չարժումների կազմակերպիչ և ենթարկւում Հալածանքի ու հետապնդման: Ընդ որում, Թուրք-Թաթարական ուժերը ամէն կերպ սրում էին իշխանութիւնների հակահայ տրամադրութիւնը, օգտագործում ծալու լրագրողներին ու չինովնիկներին: Ներքին գործոց նախարար Սաոլիպինի բռնութիւնների ժամանակ բանտարկւում է չուրջ 160 դաշնակցական, որոնց վերաբերեալ մօտ 20 հատոր թերթ մեղադրական գործ էր կազմւել: (Խմբ.)

աշխարհամարտը և հայութիւնը, որպէս փոքրիկ դինակից Եռեակ Համաձայնութեան,[22] հրապարակ ելաւ իր կամաւորական խմբերով, ընկերների մէկ մասը, որ աքսորավայրերում կամ փախստական վիճակում էր, ազատեց և գործի անցաւ: Ամենուրեք վերակաղմեցին մեր չարքերը և բուռն ոգևորութեամբ լծեցին գործի մեծ ակնկալութիւններով, թէ պատերազմի յաղթական վախճանը պիտի պսակէր արևմտահայութեան ազատագրութեամբ: Եւ երբ տեղի ունեցաւ յեղափոխութիւնը, մեր ցանկութիւնների իրականանալը կարծես աւելի հաւանական թւաց, թէև բոլորի մէջ խօսում էր նաև վախը, որ կարող էր ամէն ինչ ջուրն ընկնել արդէն սկսած անիշխանութեան պատճառով:

Երբ պատերազմը սկսեց, և ծայր առաւ կամաւորական չարժումը՝ հրապարակ ելաւ կուսակցութիւնը՝ ուղղութիւն տալու և հունի մէջ դնելու համար չարքերը: Վերակաղմեց միւս չրջանների պէս նաև Զանգեզուր-Ղարաբաղի, կարճ ասած Ապառաժի Կ.Կ.-ութեան, չրջանը: Կարճ ժամանակում վերականդնել էին մեր արհեստակցական բոլոր միութիւնները՝ ուսուցիչների, գործակատարների և հաչւապահների, ղերձակների, կօչկակարների, ոսկերիչ-ժամագործների, հիւսների, որմնադիր-քարտաչների, թիթեղագործների, դարբինների և երկաթագործների, ծառանների և սպասաւորների, թամբագործների, կառապանների և մչակների, որոնց թիւը հասնում էր 400-ի:

Նուչում Կ.Կ.-ի կաղմից միայն ես էի բացակայ, երբ տեղի է ունենում յեղափոխութիւնը: Կ.Կ.-ի անդամների մեծամասնութիւնը տեղումն էր՝ Հայրապետ Մուսայէլեան, Յարութիւն Թումեան, Անուչաւան Տ. Միքայէլեան, Աստուածատուր Ալեոխեան, Գրիգոր Ղարագեօղեան և Ար. Բաղդասարեան, որոնք արագ գործի անցնելով, վերակաղմել էին բոլոր արհեստակցական միութիւնները, որոնց անդամների ընդհանուր թիւը հասել էր 800-ի: Շատ արհեստաւորներ, որ նախայեղափոխական տարիներին զգուչանում էին միութեանն անդամագրուելուց, հիմա ազատօրէն անդամագրւում և ակտիւ մասնակցութիւն էին ունենում կատարուող աշխատանքներին: Բոլոր միութիւնները ընտրել էին վարչութիւն, որը ղեկավարում էր աշխատանքները, հարկաւ կենտր. Կոմիտէի հետ համաձորհուրդ:

Կ.Կ.-ի նիստին ընկերները պատմեցին, որ պայքար է սկսած արհեստակցական միութիւնների վարչութեան և ղէլեգացների

---

[22] «Եռեակ Համաձայնութիւն». Գերմանիայի, Աւստրօ-Հունգարիայի և Իտալիայի միջև ռազմաքաղաքական դաշինք: Ձեւաւորւել է 1879-82թթ., ուղղուած էր Հնձանախառն Ռուսաստանի և Ֆրանսիայի դէմ, որը հանդիսացել Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի միջև դաչինքի ստեղծմանը (Անտանտ). 1904-1907թթ: 1915 թ. Իտալիան դուրս եկաւ Եռեակի կազմից, պատերազմի մէջ մտաւ Աւստրօ-Հունգարիայի ու Գերմանիայի դէմ, որով Համաձայնութիւնը կազմալուծուեց: (Խմբ.)

Հոգաբարձուβեանց միջև: Վարչուβիւնը պահանջում է, որ Հոգաբարձուβիւններն՝ իրենց հաշիւները և գանձարկղի մնացորդը ներկայացնեն ու իրենց հրաժարականը տան՝ βողնելով գործը վարչուβեան տնօրինմանը: Հոգաբարձուները ընդդիմանում են, ասելով, որ իրենք ընտրուած են ժողովրդից, ծխական ժողովների քւէով, ուստի ասպարէզը βողնել կարող են միայն ծխական ժողովների որոչմամբ ու հրահանգով: Հոգաբարձուները չատ էին գրգռուած մեր մի քանի երիտասարդների յոխորտանքից: Հոգաբարձուներին յննարան էին գարձել բոլշևիկները, մենշևիկները և էսէրները, որոնք բոլորը միասին հազիւ մի քանի տասնեակի հասնող βիւ էին կազմում:

Կ.Կ.-ն արհեստակցական միութիւնների վարչուβեան հետ խառն նիստում մտքերի փոխանակութիւն ունենալով յանգեց այն եզրակացութեան, որ չպէտք է սրել պայքարը, քանի որ Հոգաբարձական մարմինները ժողովրդի կողմից են ընտրուած, ուստի պիտի ջանալ, որ ժողովրդի միջոցով կարգադրւի գործը:

Որոչւում է եկեղեցական կանոնադրութեան համաձայն, նախկին ձևով, հրաւիրել եկեղեցական ծխական ժողովներ, ընտրել պատգամաւորներ, ապա ունենալ ընդհանուր պատգամաւորական ժողով, որը կ'ընտրէ իր միջից և գրսի քաղաքացիներից կազմած Հոգաբարձական մարմիններ βեմական գպրոցի ու Ղուկասեան և Մարիամեան գպրոցների համար: Ծխական ժողովները տեղի են ունենում համեմատաբար խաղաղ մթնոլորտում և կայանում են պատգամաւորների ընտրութիւնները. 85%-ից աւելին գաշնակցական βեկնածուներ են ընտրւում: Բնականաբար, Հոգաբարձական մարմիններն էլ նոյն պատկերն ունեցան:

Ուժեղ պայքար տեղի ունեցաւ պարենաւորման վարիչ ընտրելու չուրջ: Մեր βեկնածուն էր ընկ. Արամ Բաղդասարեանը (տնտեսագէտ), իսկ մեր դէմ՝ բոլշևիկներ, մենշևիկներ[23] ու էսէռներ, որոնց միացել էին նաև Թաթարները[24]: Ընտրւում է մենշևիկների βեկնածու Ստեփան Մանդինեանը (իրաւաբան):

---

[23] Մենշևիկ, բառացի՝ փոքրամասնական, ի հակադրութիւն բոլշևիկի, որը նշանակում է մեծամասնական (ռուս). Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Հասակներից մէկը: (Խմբ.)

[24] Թաթարներ. ներկայիս Ադրբէջանի և ընդհանրապէս Անդրկովկասի թրքալեզու բնակչութեան մուսուլմանական յեղերի ընդհանուր անուանումը մինչև 1930ական թուականները. 1930ական թուականների կէսերից պաշտօնապէս կոչուեցին ադրբէջանցիներ, սակայն բան այդ բնակչութեան մեծամասնութիւնը էր և մնաց պարզապէս «մուսուլման». 1990ական թուականներից գործածութեան մէջ են մտել նաև «Ադերիներ» ու «Ադերի Թուրքեր» անուանումները: (Խմբ.)

Օրւայ պահանջ էին դարձած զինուորական, բանուորական և գիւղացիական խորհուրդները[25]: Բոլոր կուսակցութիւնների համաձայնութեամբ բացւած էր ժողովրդական համալսարան, Ղուկասեան ղպրոցի դահլիճը յատկացնելով համալսարանին, ուր ազատօրէն կարող էին ելոյթ ունենալ բոլոր հոսանքների մարդիկ՝ դասախօսութիւններ տալով հայերէն և ռուսերէն:

Բանուորական խորհուրդ կազմել Շուշում հնարաւոր չէր, քանի որ Շուշում գործարանային բանուորութիւն չկար. զաւառական քաղաքների պէս միայն արհեստաւորներ կային, որոնք արդէն ունէին իրենց վարչութիւնը, որը և "խորհուրդ" անունն էր կրում:

Քաղաքի կայազօրը, մօտ չորս հարիւր հոգի, տարիքով մարդիկ էին, մեծամասնութիւնը պահեստի հին զինուորներ. գրեթէ 90% -ը ռուսներ, իսկ մնացածը կազանի թաթարներ, կալմիկներ, օսեր, ինգուշներ, վրացիներ: Բոլշեւիկները, մենշեւիկները և Էսէրները կանխել էին մեզ, մտել զօրանոց և հետաքրքրութիւն առաջ բերել իրենց նշանաբաններով: Ինչպէս համայն Ռուսաստանում, այնպէս էլ մեզ մօտ, ով հռետորական ձիրք ունէր ու գեղեցիկ լեզուով արտայայտել գիտէր, ընականաբար, կարողանում էր տպաւորութիւն թողնել: Պիտի խոստովանել, որ մերայինների մէջ ռուսերէնին տիրապետող և հռետորական ձիրք ունեցողներ չունէինք, եթէ ունենայինք էլ, կայազօրի զինուորութիւնը մնացող զանգւած չէր, գնացողական էր, որովհետև բոլշեւիկեան պրօպագանդը իր գործը տեսել էր արդէն, զինուորութիւնը մեզ համար կայուն յենարան չէր կարող լինել: Շնորհիւ կայազօրի երկու հայ սպաների՝ մէկը Ղարաբաղցի մեր ընկերներից Բագրատ Բարաղամեան և միւսը Ալէքսանդրոպօլի չրջանից Մովսիսեան, զինուորների մէկ մասը համակրութիւն ունէր մեր հանդէպ: Կայազօրի զինուորներից, վրացի, Զվանիձէ ազգանւամբ, մենշեւիկ էր և վրացիներին յատուկ ինքնարժեցնելու չնորհքով օժտւած : Սա թէև հազիւ տարրական կրթութիւն ունէր, ռուսերէնի մէջ ոչ միայն իր վրացական ականջ ծակող առոգանութեամբ, այլև օրն ի բուն խօսելու, ձեռքի, գլխի, ոտքերի չարժումով, անյագ ցանկութիւն ունեցող ու մեծ խանդի տէր մարդ էր: Զինուորների վրայ տպաւորութիւն էր թողել, և երբ զինուորական խորհուրդ ընտրուեց, նա դարձաւ խորհրդի նախագահ և մտաւ իր դերի մէջ: Զինուորական խորհրդին վճռական ձայնով մասնակցում էին բոլոր յեղափոխական կուսակցութիւնների ներկայացուցիչները: Զինուորական խորհրդում Կ.Կ.-ի կողմից մասնակցում էր Ա-տուր Աւետիսեանը Կիևի

---

[25] «Խորհուրդներ» (Սովետներ՝ ըստ ռուսերէնի). Առաջին անգամ Ռուսաստանում 1905-1907թթ. յեղափոխութեան ժամանակ ստեղծւեցին բանուորների, գիւղացիների, զինուորների պատգամաւորների խորհուրդներ, որի վորձի հիման վրայ 1917թ. ձեւաւորւեցին խորհուրդներ, որպէս յեղափոխական իշխանութեան մարմիններ: Բոլշեւիկների տիրապետութեան տարիներին՝ պետական իշխանութեան «ընտրովի» մարմիններ: (Խմբ.)

Համալսարանի բժշկական ֆակուլտետի 5-րդ կուրսից, տարեվերջին դօրակոչի ենթարկուած, որպէս բժիշկ։

ՕԶԱԿՈՄ[26], ՊԱՐԵՆԱԽՈՐՈՒՄ, ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ, ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ինչպէս բնական հետևանք յեղափոխութեան, համայն Ռուսաստանում անիշխանութիւն էր տիրում և այդ պատճառով խիստ անկանոն էր դարձել հաղորդակցութիւնը քաղաքների ու գաւառների մէջև։ Բանտերից ու աքսորավայրերից աղատուած ամէն կարգի քրէական յանցագործները ողողել էին ամբողջ երկիրը, ալան-թալանը դարձել էր սովորական երևոյթ։ Կովկասը Ռուսաստանի հացն էր ուտում և Ռուսաստանից ստանում իր առանին պէտքերի համար ամէն բան։ Քաղաքում պարենի, կտորեղէնի և այլ ապրանքների պակաս էր զգացւում։ Պարենաւորման գործը յատկապէս կանգ էր առել, պարեն չէր ստացւում, ժամանակաւոր կառավարութեան մէկ կարգադրութեան պատճառով, ըստ որի արգելւում էր գաւառից-գաւառ պարեն փոխադրելը, իբր թէ որպէսզի չարաշահութիւն տեղի չունենայ։ Եթէ այդ արգելքը չլինէր, գաւառներից հնարաւոր էր պարեն բերել քաղաք։

Պիտի ասել, որ պարենի կողմից թուրքերը, հայերի հետ համեմատած, աւելի ապահով էին։ Թուրք(թաթար) հարուստ ալիւրավաճառներ կային, որոնք մեծ քանակութեամբ ալիւր ունէին. բացի այդ, թաթար աղնւականութիւնը գիւղացիների ցուցադրած ակներև թշնամական վերաբերմունքից ահաբեկւած, գաւառներից իրենց ընտանիքներով փախել, ապաստանել էին քաղաքում, իրենց հետ պարենի ահագին պաշար բերելով։ Աղնւականների՝ քաղաքում ապաստանելու հետևանքով կրկնապատկւել էր փոքրամասնութիւն կազմող թաթարների թիւը, որը հետագայում, քաղաքային ինքնավարութեան ընտրութիւններում վճռական նշանակութիւն ունեցաւ։

Կայազօրի մեղ համակիր սակաւաթիւ զինւորները տեղեկացնում են յիշեալ հայ սպաներին, որ զինւորների մէջ խօսւում է, թէ Զինւորական խորհրդի մէջ հարց է դրւելու քաղաքի բնակչութեան պարենի և կերպարւեստի պահանջը բաւարարելու համար խուզարկութիւն կատարելու թէ հայերի և թէ թաթարների բոլոր տներում և երևան հանելու բոլոր ապրանքները, քարտային կարգով բնակչութեան կարիքները հոգալու նպատակով։ Այս

[26] Օզակոմ. 1917թ. Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութեան կողմից ստեղծած՝ Անդրկովկասի կառավարման երկրամասային մարմին (ռուսական անւանման կրճատ ձեւը։ (Խմբ.)

տեղեկութիւնը հասել էր նաև թաթարներին, որոնք խստիւ զրգռուել, սպառնալիքներ էին կարդում, թէ պէտք է ղէնքով դիմադրեն խուզարկութիւնն կատարողներին:

Կենտրոնական Կոմիտէն անմիջապէս նիստ ունեցաւ և մտքերի չտապ փոխանակութիւն ունենալով գտաւ, որ խուզարկութիւնը կարող է պատճառ դառնալ զրգռութիւնների՝ ուղղուած հայերի դէմ, որի հետեւանքը կը լինի անմիտ և անիմաստ ընդհարում, որով կը ստեղծուի հայերիս համար խիստ վտանգաւոր կացութիւն: Կ.Կ.-ը նկատի ունենալով սպառնացող վտանգը, յանձնարարում է, ներկայացուցիչ ընկերոջը՝ Ա. Աւետիսեանին դիմումով Դաշնակցութեան տեսակէտը և միևնոյն ժամանակ պարզ ու որոշ սպառնալ, որ եթէ Զ. Խորհուրդը նման քայլ անելու լինի, պիտի հանդիպի կուսակցութեան դիմադրութեան:

Տեղի է ունենում Զինուորական Խորհրդի նիստը, և կաչաղակի պէս անվերջ կչկչացող Զաւանիձէին սկսում է ճառել, թէ ժողովուրդը տառապում է, պիտի օգնել, նրա կարիքները բաւարարելու նպատակով անհրաժեշտ է միջոցի դիմել, տներից հանել թաքցուած ապրանքները: Հէնց այդ վայրկեանին մեր ներկայացուցիչը ընդհատում է Զաւանիձէին ու սպառնում Դաշնակցութեան անունից, որ նա և նրա նմանները հանդիպած մնան իրենց տեղում: Ոչ ոք չի առարկում. լռում են նաև միւս կուսակցութիւնների ներկայացուցիչները: Զինուորական Խորհրդում տեղի ունեցած անցուդարձը նոյն օրը սենսացիա է դառնում թաթարների, որոնք չատ դոհ են մնում:

Յունիսի կէսերին Բազից ընտանիքով Շուշի եկաւ հին, երկրորդ սերնդի աւագ ընկերներից Արամայիսը (Միսակ Տէր-Դանիէլեան). Դումանի և Մածոն Խէչօի մտերիմ ընկերներից, "Աղատութեան Արշալոյսին" և "Գաղափարի ճանապարհին" գրքերի հեղինակը, որին Ն. Աղբալեանը հայոց Անդէրսըն անունն էր տուել: Արամայիսը մասնակցում էր Կ.Կ.-ի նիստին և տարուող գործնական աշխատանքներին:

Ինչպէս յիշեց իր տեղում, Անդրկովկասեան աղգերը՝ հայ, վրացի և թաթար, տենդագին զինման մէջ էին՝ պատճառաբանելով, թէ կեանքի ու գոյքի ապահովութիւն չկայ. բանտերից, տաժանակրութիւնից և աքսորից աղատուած քրէական յանցագործները ողողել էին ամբողջ երկիրը: Սպանութիւնները, կողոպուտը, թալանը և այլ բռնութիւններ այնս սովորական էին դարձած. աղատ երթևեկութիւն չկար գաւառից-գաւառ. մանաւանդ Շուշի-Ելալս խճուղու երկայնքին, ուր օրը ցերեկով կատարում էին ամէն տեսակի խժդժութիւններ: Սակայն մեզ առանձնապէս մտահոգութիւն պատճառողը աւազակախմբերի գործած

«սևբադրծուվիենները» չէին, այլ թաթարների մէջ երևացած տահկական դործակալները, որոնք առանդուն դործունէութեան էին անցել Մուղանի տափաստանում, թաթարներին կաղմակերպելու հայերի դէմ: Ամառւայ ամիսներին նրանք դևռ մեծ արդիւնքի չէին հասած, չնորհիւ զիւղացիների ընդվղման՝ բէկերի և կալւածատէրերի դէմ:

Գիւղացիութիւնը Ֆարուխ բէկ Վեղիրովի ունեցւածքը՝ զիւղատնտեսական ֆիրման և բամբակագործ դործարանն ու ամբարած բամբակը դրաւել էր ու Վեղիրովի կառավարչին ու միւս ծառայողներին քշել: Այդ ակտը արագօրէն տարածւել էր Մուղանի երկայնքին ու լայնքին և բէկերն ու խաները ընտանիքներով ապաստան էին դտել Շուչում: Սակայն Կ.Կ.-ը վախ ունէր, որ տահկական դործակալներին կարող է յաջողւել, թաթար զիւղացիների և բէկերի միջև եղած թշնամանքը վերացնել, ապա թաթարական դանդւածներին պան-իսլամական թոյն ներարկելով ու նրանց վայրենաբարոյ ընդղունները զրգռելով, բոլորի ուշադրութիւնը կենտրոնացնել «զևաւուռների»՝ հայերի վրայ: Պարզ էր, որ մենք կանգնած էինք հրամայական մէկ պահանջի առջև՝ օր առաջ միջոցներ մտածել լուռ ու մունջ, ամէն կերպ խուսափելով ցուցական չարժ ու ձևից, ժողովրդի ինքնապաչտպանութեան համար:

Աւաղակային խմբերը այնպիսի վիհակ էին ստեղծել, որ թաթար խաղաղ զիւղացիութեան մէջ էլ խիստ դժդոհութիւն էր սկսւել: Թիֆլիս և Բագու հրատարակւող բոլոր թերթերում ամէն օր կոչեր, յօդւածներ էին լոյս տեսնում, ժողովրդին պաչտպանելու ի նպաղեր: Ահա այդ ժամանակ է, որ Անդրկովկասի յատուկ կոմիտէն (ռուսերէն Օսօբոյ Զակաւկազսկոյ Կոմիտէտի սկղբնատառերի միացումով կոչւում էր ՕԶԱԿՈՄ) որոչում է զիւղերում իւրաքանչիւր քսան տան մէկ Բերտան սիստեմի հրացան տալ, աւաղակներից պաչտպանւելու համար: Այդ որոչման մասին միայն լսեցինք, բայց դործնական դդալի չափով արդիւնք չտեսանք, և աւաղակներից պաչտպանւելու միջոցներ որոնելը մնացել էր ժողովրդին:

Ինչպէս յիչւեց վերը, մեղ այնքան այդ հարցը չէը մտահոգում, որքան տահկական դործակալների նոոն դործունէութիւնը: Պատերազմի սկզբից թաթարների դևկավարութեան կողմնորոչումը ակնբաղ կերպով յայտնի դարձաւ մանաւանդ 1914 թ. ռուսական բանակի՝ Սարիղամիչից կարճ ժամանակւայ նահանջից յետոյ: Թաթարները ցնծութեան մէջ էին թէ՛ քաղաքում և թէ՛ զիւղերում: Յեղափոխութիւնից առաջ, բաղմիցս, Մուղանի տափաստանի թաթարական զիւղերում տահկական լրտեսներ ու քարոզիչներ էին ձերբաղաււել ու դնդակահարւել: Բայց յեղափոխութեան չնորհիւ լայն հնարաւորութիւն էր ստեղծւել տահկական դործակալների համար:

Կ.Կ.-ը նախ որոշեց թէ՛ քաղաքում և թէ՛ գիւղերում չտապ կերպով վիճակագրութիւն կատարել, թէ ինչքան ղէնք ունի մեր ժողովուրդը: Պատերազմի հէնց սկզբից, նկատի ունենալով թաթար ղեկավարութեան բռնած դիրքը, Բիւրոյի որոշմամբ անհրաժեշտ էր համարւած կազմակերպել ժողովրդին, ինքնապաշտպանութեան դիմելու անակնկալ վտանգի ժամանակ: Հէնց այդ նպատակով որոշ ընկերներ գործուղելով կուսակցական մարմինների կողմից, լինում էին ռազմաճակատին մօտ գտնուող վայրերում, գերիներից վերցւած ու վաճառւող հրացաններ ու փամփուշտ ձեռք բերելու և կուսակցութեան որոշած սակով վաճառելու գիւղացիներին ու քաղաքացիներին:

Ինչպէս յիշւեց վերը, քսան տան մէկ հրացան տալու որոշում էր կայացրել ՕԶԱԿՈՄ-ը, ուստի չտապ կերպով, ձեռքի տակ ունեցած պաշտօնական վիճակագրական տեւեալների հիման վրայ, մեր շրջանի բոլոր գիւղական համայնքների վիճակագրական աղիւսակը կազմեցինք և ուղարկեցինք Թիֆլիս՝ ՕԶԱԿՈՄ-ի կարգադրութեան: Նոյնիսկ գիւղական հասարակութիւններից ներկայացուցիչներ էլ գնացին Թիֆլիս, նկարագրեցին օր աւուր ծանրացող դրութիւնը աւաղակների յաճախակի յարձակումների հետևանքով, սակայն ինչ կարող էր անել մի իշխանութիւն, որ անունով գոյութիւն ունէր, առանց հեղինակութեան և աղդեցութեան: Կատարևալ անիշխանութիւն էր: Վերջապէս ՕԶԱԿՈՄ-ի կողմից ներկայացուցիչներ ուղարկւեցին շրջանները, տեղի վրայ խրախուսելու ժողովրդին և որոշ միջոցներ ձեռք առնելու աւաղակների դէմ: Ուղարկւած ներկայացուցիչները, մտաւորական մարդիկ, թէկուզ ճանաչւած իբրև անբասիր վարք ու բարք ունեցող գաղափարականներ, այնուամենայնիւ ոչինչ անել չէին կարող: Աւաղակների դէմ կարելի էր միմիայն կազմակերպւած ու լաւ զինւած ուժերով գործել:

Մեր շրջանում աշխատելու համար, որպէս ՕԶԱԿՈՄ-ի ներկայացուցիչ, Թիֆլիսից եկել էր չուչեցի Միքայել Ղարաբէկեանը, գաղափարական մարքսիստ և անբասիր մտաւորական, նախկին դաշնակցական: Նոյն ժամանակաշրջանում Ղարաբաղում անուն էր հանել աւաղակապետ թաթար Քեամրան անունով մէկը.
Շուշու մեր "Ապառաժ" անունով թերթում, որը Հ. Մուսայէլեանի խմբագրութեամբ կանոնաւոր լոյս էր տեսնում յեղափոխութիւնից յետոյ Մարտ ամսից ի վեր, երիտասարդ յօդւածագիրներից մէկը՝ Աղամիր Քարամեան, երգիծական մի յօդւած էր գրել՝ "Օղակոմ"-ի ներկայացուցչի հանդիպումը Քեամրանի հետ" խորագրով: Ներկայացուցիչ Միքայել Ղարաբէկեանը իբր յանդիմանում է Քեամրանին, կշտամբում, որ գիւղացի լինելով, փոխանակ խաղաղ աշխատաւորական կեանք վարելու, յօդուտ իւր համագիւղացիների գործ անելու, նրանց ինչքն է թալանում, կողոպտում և նեղութիւններ պատճառում: Քեամրանը պատասխանում է՝ "Ես

Մարքսի և Լենինի ասածն եմ իրագործում. չէ՞ որ գիւղացինները սեփհականատէր լինելով, յեղափոխութեան դէմ են, ուստի նրանց լիւթ (սեփհականաղուրկ, ընչաղուրկ) եմ դարձնում, որպէսզի արձանագրուեն յեղափոխութեան բանակին՝ կապիտալիզմը խորտակելու համար:

Ինչպէս քաղաքներում էր, այնպէս էլ գիւղաւաններում կազմակերպուել էին զաւառական ու գիւղական գործադիր մարմիններ կանանց մասնակցութեամբ: Ամենուրեք, թէ՛ Հայերի և թէ՛ Թաթարների մէջ, տղամարդիկ դժգոհ էին կանանց մասնակցութիւնից: Հայերի մէջ դժգոհութիւնը այն չափով ուժեղ չէր, ինչ չափով Թաթարների մէջ, որոնք ամենուրեք դէմ եղան կանանց մուտք գործելուն գործադիր մարմինների մէջ. Հայերի մէջ, չնորհիւ մեր ընկերների քարոզչութեան, մեղմացաւ դժգոհութիւնը, հաշտուեցին մտքի հետ և չատ գիւղերում կանայք տղամարդկանց հաւասար գործուն դեր էին խաղում:

Զարակամութիւնը ծայրայեղ չափերի էր հասել. աղգաբնակութեան կողմից գործ ածուղ ամէն տեսակի ապրանքի և ուտեստի՝ հաց, միս, պանիր և այլն, արժէքները տասնապատկուել էին, ուստի թերթերում արծարծուում էր կօօպերատիւները հիմնելու խնդիրը: Սիւնիքում մէկ ծայրից միւսը մեր ընկերները լծուեցին աչխատանքի՝ բոլոր գիւղերում բացատրելով ու հասկացնելով կօօպերատիւների անհրաժեչտութիւնը: Ամենուրեք ժողովուրդը առանց առարկութեան ընդունեց ընկերների առաջարկութիւնը. կօօպերատիւներ հիմնուեցին բոլոր գիւղերում, ընտրուեցին վարչութիւնները, սակայն ամենուրեք կօօպերատիւների խանութները միայն անունով գոյութիւն ունէին, դատարկ էին, առանց ապրանքների և մթերքների: Որտեղից՞ կարելի էր ապրանք ու մթերք ձեռք բերել, երբ նման տեղ գոյութիւն չունէր: Գործածութեան ամէն տեսակ ապրանքների, ինչպէս և հացի մեծ մասը բուն Ռուսաստանից էր ստացւում մինչև յեղափոխութիւնը, որից յետոյ անիչխանութիւն էր առաջացել, Ռուսիայից ոչինչ չէր ստացւում: Ամենադլխաւորը հացի խնդիրն էր: Յեղափոխութիւնից առաջ, փաստ է, Անդրկովկասի ժողովուրդները իրենց կարիքը լրիւ բաւարարելու համար, համապատասխան չափով վարուցանք չէին կատարում, քանի որ լիառատ Ռուսաստանը էժան գնով ալիւր էր մատակարարում, պէտք չունէր տքնաջան աչխատանք կատարելու, հացահատիկ ցանելու, մէկի դիմաց ամենաչատը 12–15 ստանալու, որ թանկ էր նստում, մանաւանդ լեռնային չրջաններում, ուր լաւագոյն բերքի տարին ստանում էր 8–10: Յեղափոխութիւնը տեղի ունեցած տարին, ամառւայ ընթացքում, հացի պակաս զգացուեց. հայ ու թաթար գիւղացիներին դաս եղաւ, և աւելի չափով ցանքս կատարեցին թէ՛ աչնան և թէ՛ յաջորդ տարի գարնանը:

Գաւառից-գաւառ պարեն փոխադրելու արգելքը մեծ դժգոհութեան տեղիք տուաւ. թէ քաղաքներից և թէ գաւառներից բողոքի ձայներ բարձրացան թերթերի միջոցով և կառավարութիւնը վերացրեց արգելքը, որից յետոյ գաւառների միջև փոխանակութիւններ տեղի ունեցան. հացառատ վայրերից հացահատիկ գնեցին կարիք ունեցող գիւղացիները: Բացի այդ, պարզուեց, որ Եւլախ կայարանում բաւական ալիւր կայ չտեմարաններում քաղաքի և գաւառական մի քանի կենտրոնների՝ Թարթառի, Աղդամի, Կարեագինօյի , Շուշու, Հադրութի և Ջաբրայիլի համար: Քաղաքի համար փոխադրութիւն կատարում էին առաջւայ պէս Մալիբէկլու թաթար գիւղի փուրգոնչիները, իսկ Կարեագինօյի և Ջաբրայիլի և Հադրութի համար հայ և թաթար գիւղացիներ իրենց արաբաներով էին փոխադրութիւն կատարում: Յուլիս ամսին, Կարեագինօյի, Հադրութի և Ջաբրայիլի համար ալիւր փոխադրող հարիւրից աւելի արաբաչիների ճամբան, Աբդալ և Գիւլափլու թաթարական գիւղերի մօտ թաթարները մի մեծ աւազակախումբ փակում է: Աւազակները, վաթսուն հոգի, լոյսն էլ ձիւսուր, ուղում են ալիւրը բարձել իրենց ձիերին և տանել, որպէս իրենց հասանելիք բաժին: Արաբաչիները հակառակւում են և օգնութեան կանչում յիշեալ գիւղերի թաթարներին, որոնցից դինւած մի խումբ օգնութեան է գալիս. սակայն աւազակները համազարկով փախցնում են Աբդալ-գիւլափլուցիներին, հայ արաբաչիներից մէկը հասնում է Նախիջևանիկ, Փերջամալ հայկական գիւղերը: Այդ միջոցին Փերջամալում էր գտնւում մեր հին մարտիկներից մէկը, դինւորական ծառայութիւն անցած, աւագ ենթասպայի աստիճանով, Վարդան գիւղացի Իշխան Զերքէշեանը, որը կարողանում է չտապ հաւաքել իր չուրջը նախիջևանիկցի, փերջամալցի, վարդանցի և մերիչինցի զէնք ունեցող գիւղացիներին, զրեթէ բոլորը դինւորական ծառայութիւն անցած, դինւորական կարգով լեռներից իջնում են արագօրէն դաշտը և յարձակւում աւազակախմբի վրայ, որը անկարող լինելով դիմադրել հայ մարտիկների զրոհին, փախուստի է դիմում: Հայերի այդ օգնութիւնը շատ լաւ տպաւորութիւն է թողնում թաթարների վրայ, որոնք երախտագիտական զգացումներ են ղեղում, մեծարելով Իշխանին ու մարտիկներին:

Ինչպէս յիշւեց իր տեղում, իւրաքանչիւր քսան տան հաշւով մէկ հրացան ստանալու համար, գիւղախմբերի համայնքներից ներկայացուցիչներ էլ գնացին Թիֆլիս՝ զէնք ստանալու իշխանութիւններից, բայց բոլոր դիմումները արդիւնք չունեցան: Անհատական ձեռներէցութեամբ, դրամի ուժով, մասնաւոր մարդկանցից զէնք ձեռք բերել հնարաւոր էր, բայց կարող էին միայն դրամ ունեցողները: Մէկ օր լսեցինք, որ Գիղակի Խծաբերդ

գիւղացիներից մէկը, Մուխի[27] անունով, Զևեիձէի միջոցով կարողացել է իրենց վաճառուն տուն ունեցող գիւղի համար քսան "Լէբել" սիստէմի հրացան ստանալ, վեց հազար փամփուշտով միասին: Ստացած զէնքերը Գանձակի վրայով ու լեռնային ճանապարհով խծաբերդցիները հասցրել են իրենց գիւղը: Լսեցինք միաժամանակ, որ յիշեալ Մուխին Պետրոգրադի կայազօրի զինուորներից է եղել, որ Զևեիձէի մօտ Թիւնապահի պաշտօն է ունեցել. երբ Պետրոգրադից եկել են Թիֆլիս, Մուխին տեղեկանալով, որ ժողովուրդը զէնքի պահանջ է զգում, դիմել է Զևեիձէին, նկարագրել իրենց գիւղի վիճակը, և Զևեիձէն յաջողացրել է զէնք ստանալու գործը:

Յաջորդ տարւայ գարնանը, գործով Դիլմակի գիւղերը շրջելիս, երկու մարտիկ ընկերների՝ Գարեգին Ղահրիմանեանի և Յովհ. Հասրաթեանի (Իւանի) հետ եղանք Խծաբերդ գիւղում, որտեղ գիւղական ժողովում, իմ խնդրանօք, ընկերը Ներսէսը (Ուլունց) հրաւիրեց Մուխիին՝ հետը ծանօթանալու համար: Դէմքը չատ ծանօթ երևաց, ուստի հարցրի Պետրոգրադում, յեղափոխութեան օրերին հայոց եկեղեցու բակում եղե՞լ է, թէ՞ ոչ: Չէի սխալւած: Յեղափոխութեան մեղրամսին, մարտին էր, գնացել էի մեր եկեղեցին, որը կոչւում է Սուրբ Կատարինէի անունով: Եկեղեցու ծերունազարդ Գրիգոր քահանայ Տէր Գրիգորեանի հետ զրուցելով դուրս գալով եկեղեցուց, բակի ղրան մօտ՝ մայթի վրայ կանգնած չարունակում էինք մեր ղրոյցը: Պողոտայով աջ ու ձախ յաճախ բեռնատար մեքենաներով արագօրէն զինուորներ էին գնում. մեքենաներից մէկը կանգ առաւ երկու-երեք մետր հեռաւորութեան վրայ, զինուորներն իջան և սպասեցին ինչ-որ կարգադրութեան: Զինուորներից մէկը, միջին հասակի, արևելահանձ դէմքով, լայնաթիկունք, առոյգ, կարծես պողպատից ձուլած լինէր, մօտեցաւ և մեր բարբառով դարձաւ քահանային.

– Ա դէր, օրհնեա Տէր:
– Աստած օրհնեսցէ, որդիս, ի՞նչ էք ուզում:
– Ա դէր, Ռուսէթը քանդում ընք:
– Որդիս, ինչո՞ւ էք քանդում, լաւ չէք անում, մի քանդէք:
– Ա դէր, մեզ հրամայում ըն, մունք էլ քանդում ընք:

Տեսնելով, որ մեր բարբառով է խօսում, հարցրի նոյն բարբառով՝ "որտեղացի է՞ք:
– Խըծըբերդեցէ ըմ (Խծաբերդցի եմ):

Ուզում էի ուրիչ հարցեր տալ, մանրամասնութիւններ իմանալու համար, երբ զինուորներից մէկը կանչեց. գնաց ընկերների մօտ, արագօրէն մեքենայի վրայ բարձրացան ու գնացին:

---

[27] Միքայէլ անունը Ղարաբաղում ձևափոխելով դարձել է Մուքայէլ, Մուքլի, Մուքի Մուխան, Մուխի, Մուխտէլ, ինչպէս Սարգիսը՝ Սաքան, Սաքլի: (Հեղ.)

Հիմա որ իրենց դիւղումն ենք, գիւղացիներին ժողովի ենք հրաւիրել՝ ինքնապաշտպանութեան նպատակով ցուցակագրելու զէնք ունեցող մարդկանց և մարմին ու խմբապետ ընտրելու համար, Մուխուն հարցնում եմ "Լաւ եղա՞ւ, որ Ռուսէթը քանդուեց, թէ՞ ոչ": Ժխտական պատասխան ստացայ: Յիշեցրի Տէր Գրիգորի խօսքերը:

Էհ, պարոն, չէինք սպասում, թէ ինչպէս կը վատանան պայմանները. Ջանըմ, ամէն օր դանազան մարդիկ էին գալիս զօրանոց, ճառ ասում, զնում, և բոլորն էլ ասում էին, թէ լաւ կը լինի, բայց լաւը չտեսանք, քանի գնում, աւելի վատանում են պայմանները. աւազակներն էլ հանգիստ չեն տալիս, օր չկայ, որ չյարձակուեն գիւղի հօտը թալանելու նպատակով:

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ինչպէս յիշուեց, կենտրոնական կոմիտէն մեծապէս մտահոգուած էր ինքնապաշտպանութեան խնդրով: Որոշուեց գործադիր կոմիտէների միջոցով ստուգել, թէ մօտաւորապէս ինչքան (ամէն սպատէմի) հրացան ու փամփուշտ ունի գիւղացիութիւնը: Մէկ ամսուայ ստուգումից պարզուեց, որ ժողովուրդը մօտաւորապէս 15000 հրացան ունի և իւրաքանչիւր հրացանաւոր 200-250 փամփուշտ: Նկատի ունենալով չրջանի ընդարձակ լինելը և հայ-թաթարական սահմանագծի երկարութիւնը, բացի այդ, ներսում դանազան տեղերում ցցուած թաթարական գիւղերը, և որ վտանգի դէպքում նրանց անվնաս դարձնելու համար ուժեր պիտի դրաղուեն, մեր ժողովրդի ունեցած պաչարը բաւարար չէր ինքնապաշտպանութեան համար:

Ձիչտ մեր մտահոգութեան այդ օրերին, մեզնից անկախ, նոյն հարցով մտահոգուած են եղել Շուչու վաճառականները: Սրանք բոլորը կազէտական (ռամկավարական) կուսակցութեան հետևորդներ էին: Մէկ օր նրանց կոմիտէի նախագահը՝ Նիկոլայ Զուրաբեանը, քաղաքում "Հայոց Թագաւոր" մականունով ճանաչուած, հրաւիրեց ինձ իրենց զրասենեակը, որ միաժամանակ Կովկասի Հայոց Բարեզործական ընկերութեան Շուչու մասնաճիւղի զրասենեակն էր: Ներկայ էին նաև Մելքում Խաչատրեանը, Արչ. Շաֆիէրեանը և ուրիշներ: Զուրաբեանը դարձաւ ինձ ու ասաց՝ "Մենք ոչինչ չունենք, իհարկէ. Դաչնակցութիւնը որպէս յեղափոխական կուսակցութիւն, ամբողջովին տարուած է

յեղափոխական գործերով, ժողովրդական համալսարանում դասախօսութիւններ է տալիս, ժողովրդին բացատրում, մասնակցում չատ բաների. դրանք իրենց կարգին կընթանան, բայց մի բան, որ չատ կարևոր է, կասեմ ամենակարևորն է, դա ժողովրդի ինքնապաչտպանութեան գործն է: Մենք, վաճառականներս, մեկ ամսից աւելի է, չատ ենք խօսել մեր միջև: Լաւ բան չենք սպասում ստեղծած ներկայ խառնաչփոթի վիճակից: Յուլիս ամիսն է, աչունը մօտենում է, աւելի պիտի վատանայ դրութիւնը: Ձասես, թէ վաճառական եմ և հակա-յեղափոխական, ուստի վատ եմ խօսում: Մենք յեղափոխութեան հետ կամ դէմ, ոչինչ չունենք, մեղ հետաքրքրողը ամրողջ հայութեան սպառնացող վտանգն է. դուք եթէ յոյս ունէք, որ թաթարները խաղաղ պիտի մնան, միանգամայն սխալւում էք: Դուք մեղանից լաւ գիտէք, տաճկական լրտես-քարոզիչները միչտ թաթարների մէջ քարոզում են, գրգռում քրիստոնեաների, մանաւանդ հայերի դէմ. թաթարներն էլ մութ, խաւար ժողովուրդ են, կարող են ծռել իրենց միտքը և վտանգել մեր կեանքը: Եթէ մի վտանգ առաջանայ, Դաշնակցութիւնից բացի մեկ ուրիչ կուսակցութիւն չկայ, որ գործի դլուխ անցնի և ժողովրդի ինքնապաչտպանութեան գործը ղեկավարի: Հայ թաթարական կռիւները դուք էք վարել, հիմա էլ դուք պիտի վարէք. սակայն ժամանակը չի սպասում մեղ, անցնում, գնում է և չուտ է անցնում, ուստի պէտք է այժմեանից միջոցներ մտածէք. իհարկէ, գործը դրամով պիտի կատարւի, մենք էլ պարտաւոր ենք մեր կարողութեան սահմաններում անհրաժեչտ ղոհողութիւնն անենք. դրան մեղնից ոչ ոք հակառակ չի լինի ":

Ինչ պիտի ասէի, բացի գոհունակութիւն յայտնելուց, որ վաճառականութիւնն էլ ընդդաբար դղում և հասկանում է այն ահաւոր վտանգը, որ մի օր կարող է ցցւել մեր առջև : Գոհունակութիւն յայտնելով Կ.Կ.-ի կողմից, որ իրենք էլ մտահոգւած են նոյն խնդրով, ասացի, որ Կ.Կ.-ը միջոցներ խորհում է և կարիք եղած դէպքում միչտ կը դիմի իրենց աջակցութեան: Յայտնեցի, որ Կ.Կ.-ին էլ ամէնից չատ մտահոգող հարցը ժողովրդի ինքնապաչտպանութեան հարցն է:

"Մենք կռահում էինք, որ կուսակցութիւնը մտածում է այդ մասին և աւելի առաջ պիտի մենք խօսէինք ձեղ հետ. մի քիչ ուչացանք, վնաս չունի. բոլորս մեր ղոհունակութիւնն ենք յայտնում կուսակցութեան, որ մոռացութեան չի տուել ամէնազլխաւոր հարցը, ասաց մեր "հայոց թադաւորը:"

Վաճառականների հետ ունեցած հանդիպման մասին դեկուցեցի Կ.Կ.-ին: Արամայիսը նկատեց, թէ մարդիկ պարղ դղում են, որ վտանգը ընդհանուրին է սպառնում, և իրենք պիտի անեն՝ ինչ որ կարող են:

Կ.Կ.-ը մտքերի երկար փոխանակութիւն ունենալով յանգեց հետեւեալ եզրակացութեան.

ա) եթէ բաւարար քանակութեամբ ղրամ էլ ունենանք մեր տրամադրութեան տակ, որեւէ տեղ մեծաքանակ զէնք ու զինամթերք գնելու հնարաւորութիւն չկայ, այդպիսի տեղ չկայ էլ.

բ) անգամ եթէ հնարաւոր լինէր որեւէ տեղ մեր ցանկացած քանակութեամբ զէնք ու զինամթերք գնել և ամբարել, փոխադրելու, մանաւանդ արագօրէն ու աննկատ փոխադրելու հնարաւորութիւնը չկար.

գ) զէնք ու զինամթերք ձեռք բերելու երկու հնարաւոր միջոց կայ՝ 1) դիւզացիներին խումբ-խումբ ուղարկել Երեւան, Ալէքսանդրօպոլ, Կարս, պետական պահեստներից զէնք ու մթերք ստանալու և բերելու, և 2) հայկական գնդերը փոխանակ Վրաստան Լագոդիխ[28] կամ այլ վայրեր ուղարկելու, հանգստեան ուղարկեն Ղարաբաղ, Խանքենդ (ներկայիս Ստեփանակերտ), որը ժամանակին եղել է դիվիզիայի կենտրոն և ամէն յարմարութիւններ ունի զօրանոցների, սպանների համար առանձին չէնք, պահեստներ և այլն:

Խանքենդը յայտնի էր իր առողջարար օդ ու ջրով, ինչպէս Բորժոմն ու Արապթումանը, Կովկասի և Ռուսիայի զանազան վայրերից բժիշկների խորհրդով հիւանդներ, մանաւանդ թոքախտաւորներ զալիս էին այնտեղ բուժւելու և կազդուրւելու: Պէտք է յաջողեցնել, որ հայկական երկու կամ զէթ մէկ գունդ ուղարկւի Խանքենդ հանգստանալու և զնդի հետ, միաժամանակ, անհրաժեշտ քանակութեամբ զէնք ու մթերք փոխադրւի Խանքենդի պահեստներում ամբարելու և վտանգի դէպքում գործածելու համար: Եւ եթէ յաջողւի այդ, զնդի հետ որպէս զնդին պատկանող ռազմամթերք կարելի կը լինի հասցնել Եւլախ կայարանը, որտեղից փոխադրութիւնը կը կատարեն մեր դիւզացիները մեր սայլերով: Ամբողջ գործը պիտի կատարւի մէկ նւագում, առանց աղմուկի:

Կ. Կոմիտէն քանիցս հանդամանօրէն այդ մասին նամակներ գրեց թէ Բիւրօին և թէ Ռոստոմին, բայց արդիւնք չունեցաւ. անիշխանութիւնն էլ օրէցօր աւելի ու աւելի էր չեչտւում, ապագան աւելի մչուշոտ գառնում:

Օգոստոսին և Սեպտեմբերին Թիֆլիսում հայկական խորհրդակցական ժողովներ տեղի ունեցան: Բիւրոյի կարգադրութեան համաձայն Շուշուց էլ ներկայացուցիչները գնացին՝ ընկ. ընկ. Հ. Մուսայէլեանը և Վ. Վարդապետեանը: Օգոստոսի խորհրդակցական ժողովը աւելի նախապատրաստական բնոյթ

---

[28] Թերթերում լոյս տեսած թղթակցութիւն կար, որ հայկական նորակազմ գնդերից նախկին կամաւորական խմբերի 6-րդ գունդը Լագոդիխ է ուղարկւած հանգստի: (Հեղ.)

ունէը, իակ Սեպտեմբերին բոլոր Հոսանքների մասնակցութեամբ բաղմամարդ հայկական համագումար տեղի ունեցաւ: Այդ համագումարին էր, որ Նիկոլ Աղբալեանը ելոյթ ունեցաւ իր պատմական ճառով, Հ.Յ.Դաշնակցութիւնը ներկայացնելով որպէս դարբնի, փոքր մուրճը ձեռքին, իակ միւս հոսանքներին, իբրև աշակերտների, ծանր մուրճերով երկաթին զարկողների, երբ վերջիններից մէկը սխալւի՝ վարպետը փոքր մուրճով հարւածում է չեղւողին, ղգաստացնում:

Դոկ. Լեոն Աթաբէկեանը, նախկին դաշնակցական, հետագային անջատւած էսէր, որ մեր լաւագոյն մտաւորականներից մէկն էր, Բազւից, Նիկ. Աղբալեանի ձեռքը սեղմելով դրւատում է՝ "Շատ լաւ խօսեցիք": Երբ մեր ներկայացուցիչները վերադարձան, պատմեցին ժողովի աշխատանքների մասին, որ դրուելեան ծանր լինելը ընդունում են բոլոր հայկական հոսանքները, որ ազգային Բիւրօի վրայ պարտականութիւն է դրւած լուրջ միջոցներ որոնելու՝ երաշխաւորելու հայութեան կեանքի և գոյքի ապահովութիւնը: Դա մի փոքր սփոփանք էր միայն:

Մեր Ազգային Բիւրօն այն խառն օրերին, երբ ամենուրեք անիշխանութիւն էր տիրում, ի՞նչ կարող էր անել: Նա սոսկ բարոյական նշանակութիւն և արժէք ունեցող ազգային մարմին էր, որը պետական իշխանութիւնների դէմ էր: Սակայն իշխանութիւններ նախկին ձևով գոյութիւն չունէին, աւելի ճիշտ՝ անունով միայն յայտնի էին, իրականում ոչ մէկ աղդեցութիւն չունէին և ոչինչ չէին կարող անել ապահով վիճակ ստեղծելու համար:

Մեղ պարզւեց, որ հայկական գունդ չպիտի ուղարկւի Ղարաբաղ Հանգստեան. ուրեմն մեր մտածած ձևով ռազմամթերք ստանալ չէինք կարող: Մնում էր միայն միւս ձևը՝ խմբերով մարդիկ ուղարկել Երևան, Ալէքսանդրօպօլ և Կարս՝ զինւելու և բաւարար զինամթերքով վերադառնալու իրենց տեղերը: Եւ դա հնարաւոր էր միայն դաշտային աշխատանքներն ու աշնանացանն աւարտելուց յետոյ. մինչ այդ գիւղացուն տեղից չարժել հնարաւոր չէր: Այլ ելք չկար, պէտք էր սպասել: Կ. Կոմիտէն գիւղացիներին կանխաւ յայտնեց այդ մասին և դաշտային աշխատանքները վերջանալուն զործի անցնելով, առաջարկեց գիւղացիութեանը, որ չրջան առ չրջան խմբեր կազմեն, ներկայանան, կուսակցական համապատասխան վկայականներ ստանան ու մեկնեն Երևան կամ Ալէքսանդրոպօլ՝ ղէնք ու փամփուչտ բերելու իրենց ինքնապաշտպանութեան համար:

Պէտք է խոստովանել, որ մեծ և վտանգաւոր քայլ էր, որ արաւ Կ. Կոմիտէն անիշխանութեան այդ օրերին, երբ թուրք աւազակախմբերը ողողել էին հանապարհները, որոնց մի խոչոր

մասը անցնում էր Թրքաբնակ վայրերով: Խմբերը պիտի գնային երկու գծով՝ Զանգեղուրի, Սիսիանի, Դարալագեազի և կամ Զանգեղուրի-Սիսիանի-Նախիջևանի վրայով: Այո, խիստ վտանգաւոր քայլ էր, որ սրտի սեղմումով կատարեց Կ.Կէնը, հարիւրներով մարդկանց ոխակի ննջարկելով: Սեպտեմբերի երկրորդ կէսից մինչև նոյեմբերի կէսերը երկու-երեք օրը մէկ խումբ էր մեկնում, կուսակցական կնքւած վկայականներով: Խմբերը Երևանում ոչինչ չտառնալով, մեկնում են Ալէքսանդրոպոլ և Երևանի մեր ընկերների մատնանչած մարդկանց ներկայանում: Բացի պաշտօնական գրութիւններից, նամակներ էինք ուղղում նաև անհատ, ճանաչւած ընկերների, որ աջակցեն մեզ: Ամիսներ տևեց, մինչև հնարաւոր եղաւ դէնք ու փամփուշտ ստանալ, կազմակերպւել և ճամբայ ընկնել:

Երկու ուղղութեամբ վերադարձան գիւղացիները, երկու մեծ խմբով՝ առաջինը Սևանայ լճի արևելեան կողմով, ճամբին թուրքերի հետ ընդհարւելով և մի քանի զոհեր տալով. միւս մեծ խումբը՝ Դարալագեազի-Սիսիանի և Զանգեղուրի վրայով, որը նոյնպէս հարկադրւած էր եղել թուրքերի հետ ընդհարւելու, նոյնպէս զոհեր տալով: Վերադարձող խմբերին միացել էին տուն զարձող սակաւաթիւ դինւորներ:

Կ. Կոմիտէն նկատի ունենալով մեր պայմանները, մեր չրջիկների միջոցով ամենուրեք գիւղերում զգաստացման խօսք է տանում ժողովրդին՝ ամէն կերպ ջանալ, որ թաթարների հետ ընդհարման առիթներից խուսափեն. աչխատել թաթար գիւղացիների բարեկամութիւնը վաստակել: Եթէ թաթարներից որևէ մէկը իւրայիններից ապրանք գողանայ և բերի հայերին ծախելու, խուսափեն, չօգնեն: Եթէ որևէ հայ ապրանք գողանայ թաթարներից, այդպիսին խստիւ պէտք է պատժւի: Թաթար գողունի ապրանք չգնելու մեր տւած խորհուրդը արդիւնք չունեցաւ. գիւղացիները գնումներ կատարում էին և եթէ վնաս կրած թաթարներից մէկը կռահելով կամ ուրիշի ցուցմունքով ապրանքի հետքով գալիս փնտրտուք էր կատարում և գողունի ապրանք գնած հայի հանդիպում, հայը ուրանում էր և երդւում, որ բնաւ տեղեկութիւն չունի գողացւած ապրանքի մասին:

Ի դէպ, Ղարաբաղում տարածւած մէկ աննկատող կար: Վարանդայի Ղաջար թաթարական գիւղի բոլոր բնակիչները, մեծից մինչև փոքրը յայտնի են իբրև գողեր և աւազակներ: Մի հայ գող համարձակութիւն է ունենում ղաջարեցի մի թաթարի երկու կովը գողանալու: Ղաջարեցին հետքը գտնում է՝ կռահելով և ուրիշների տւած ցուցմունքով, գող հայի օձիքից բռնում, պահանջում է իր

կովերը: Հայը երդում է Աստած, Քրիստոս վկայ կանչելով, թէ բոլորովին անմեղ է և ինքը չէ գողացել կովերը: Ղաչարեցին ասում է՝ "ես քո այդ երդումներին չեմ հաւատում, արի, գնանք Աղօղլանի վանքը, այնտեղ երդուիր, որ հաւատամ, թէ դու չես գողացել":

– Գնանք, անմիջապէս համաձայնում է գող հայը:

Աղօղլանի վանքը, Ամարասու Սուրբ Գրիգորիսի (Լուսաւորչի Յոռան անուան) վանքը, Աղուանից Կաթողիկոսների աթոռանիստն է եղել: Ղաչարի և մօտակայ այլ թաթար գիւղացիները պատկառանքով էին վերաբերւում վանքին: Հայն ու Թուրքը միասին գնում են վանքը, և հայը երդւում է.

– Այ սուրբ Մարաս[29] երեսս քո ոտքի տակը, երկու կով գողացի էս սարաս, մորթեցի, տհալ[30] արեցի, լցրի երկու կարաս, դու էս Թուրքի դիվանն անես:

Թուրքը համոզւած, որ հայն է գողացել իրա կովերը, ասում է.

– Այ էրմանի, անդ իչմա, չաթարաման (ա հայ, մի երդւիր, կը ճաքես):

Ինչպէս յիշեց իր տեղում, Մարիամ Ղուկասեան օրիորդաց միջնակարգ դպրոցի դահլիճը զարձած էր ժողովրդական համալսարան, ուր դասախօսութիւններ էին կարդում բոլոր հոսանքների մարդիկ: Դահլիճը հազիւ 280–300 հոգու տեղ ունէր: Սկզբներում դա բաւարարում էր, սակայն աստիճանաբար համալսարան յաճախողների թիւը սուարացաւ, և դահլիճը յարմար չեղաւ: Բացի այդ, սեպտեմբեր 1-ից ուսումնական տարին պիտի սկսէր, այլևս դպրոցի սրահից օգտւել հնարաւոր չէր: Սրահի պէտքը աւելի չատ մենք էինք զգում, որովհետև կուսակցական զանգւած մենք ունէինք, միւս հոսանքների մարդիկ բոլորը միասին հազիւ յիսուն-վաթսուն հոգի էին:

Կաղետական կուսակցութիւնը զանգւած ունէր: Շուչու վաճառականները և արհեստաւորների մի մասը՝ չորս-հինգ հարիւր հոգի: Սակայն կաղէտները իրենց առանձին հաւաքատեղին ունէին, Բարեգործական Ընկերութեան ընթերցասրահը, որ իրենց համար բաւարար էր:

Կ. Կոմիտէն որոշեց վարձով վերցնել Ռէալական դպրոցի նախկին ակումբի շէնքը, որը պատկանում էր բժիշկ Մովսէս Աթաբեկեանի ժառանգներին, որոնք մեր բարեկամներն էին՝ Ասլանը և քոյրը՝ բժշկուհի Աննան, համակիր դաշնակցականներ էին: Սրահը՝ որ կինօի էր ծառայել մի ժամանակ, հինգ հարիւրից աւելի մարդու տեղ ունէր: Վերցրինք շէնքը, յարակից բոլոր սենեակներով, որոնցից մէկը միացնելով սրահին, բեմ պատրաստեցինք, զարձրինք

[29] Ամարասի կրճատ ձևը (Հեղ.)
[30] Ղատրմա (Հեղ.)

մեր ակումբը, որտեղ փոխադրուեց "Ապառաժ" թերթի խմբագրութիւնը: Ակումբը յուլիսին արդէն պատրաստ էր:

Օգոստոսին իրենց գիւղը՝ Բռնակոթ գնալու համար Շուշի էր եկել մեր ընկերներից Բախչի (վերանուանեալ Մուշեղ) Զաքարեանը: Նա յայտնեց, որ Թաւրիզում է եղել, որպէս քաղաքների միութեան պաշտօնեայ, թէ՛ այնտեղ և թէ՛ Նախիջևան դասախօսութիւն է տուել "Մարքսիզմի Կրիզիսը" նիւթի շուրջ, որ դասախօսութիւնը լաւ ընդունելութիւն է գտել, ուստի ուղում է այն կրկնել և այստեղ: Ակումբի վարչութիւնը հաւանութիւն է տալիս, անմիջապէս թերթի և թռուցիկների միջոցով յայտարարում տեղի ունենալիք դասախօսութեան մասին:

"Մարքսիզմի Կրիզիսը" վերնագիրը բաւական ճչան էր և այն օրերին հետաքրքրութիւն առաջացնող, մանաւանդ երիտասարդների մէջ, որոնք ականջները սրած նորանոր խօսքեր, մտքեր լսելու բուռն հետաքրքրութիւն ունէին: Դասախօսութիւնը նչանակուած էր ակումբում: Անյետաձգելի մեկ գործով զբաղուած լինելով, հնարաւորութիւն չունեցայ ներկայ գտնուելու: Ճիչտն ասած, ցանկութիւն էլ չունէի ներկայ լինելու: Պետրոգրադում այնքան դասախօսութիւններ ու մանաւանդ միտինգային ճառեր էի լսել, բաւական կչտացել էի ճառախօսութիւններից: Ես ոչ ճառախօս եմ և ոչ էլ գրչի մարդ. կուսակցական կեանքում եղել եմ միչտ սև աչխատանք կատարող, հասարակութեան աչքից հեռու, հրապարակից խուսափող. դա սովորութիւն էր դարձած իմ մօտ, իսկ սովորութիւնը մարդու երկրորդ բնաւորութիւնն է:

Նախկին դաչնակցական, հետագային սոց. դեմոկրատ և Առաջին Աչխարհամարտին ցիմերվալդիստ-բոլչևիկ դարձած, գերմանական համալսարանաւարտ-պատմաբան Աչոտ Յովհաննիսեանը, որ այդ ժամանակ Շուշի էր, խմբագրում էր բոլչևիկեան "Նեցուկ" թերթը, յօդուածները գրում "Ներհակ" ստորագրութեամբ., Մուշեղի դասախօսութեանը ներկայ է գտնուում և հակաճառելով խիստ նեղը դնում մեր դասախօսին: Մուշեղ Զաքարեանը լրիւ միջնակարգ կրթութիւն չունէր, ինքնակրթութեամբ, Բագուում, բանւորական շրջանում էր զարգացում ձեռք բերել: Աչոտ Յովհաննիսեանը մտաւոր մեծ պաչար ունեցող տեսարան, հարկաւ, պիտի նեղը գցէր Մուշեղին, որին օգնութեան է հասնում ընկ. Հայրապետ Մուսայելեանը, նոյնպէս գերմանական համալսարանաւարտ-պատմաբան, մտաւոր լայն պատրաստութիւն ունեցող: Ընկերները պատմում էին, որ եթէ Հայրապետը ներկայ չլինէր, Մուշեղը պիտի բզիկ-բզիկ դառնար: Այս Մուշեղը հետագային հեռացաւ կուսակցութիւնից: Դրօն[31]

[31] Դրօ (Դրաստամատ Կանայեան). Հայ ազատագրական չարժման ակնառու գործիչ, Հայաստանի Հանրապետութեան հիմնադիրներից մեկը, տաղանդաւոր

Զանգեզուր եղած ժամանակ 1920 թ. նա գիւղը կազմակերպել, դարձրել էր Դրօի դէմ, քիչ էր մնացել արիւնահեղութիւն տեղի ունենար. բանակցութեամբ վերջ է դրւում գժտութեանը:

Յեղափոխութեան չնորհիւ փակ բերանները բացւել էին, նոյնիսկ չխօսկան մարդիկ աչխուժացել, ձայնակցում էին օղը թնդացնող ճառախօսներին: Օրւայ հերոսը նա էր, ով կարողանում էր բարձրաձայն գեղեցիկ լեզուով խօսել: Եւ խօսելացաւով էին բռնւած. առիթ էլ չլիներ, մարդկանց ուչադրութիւնը կը գրաւէին, հրատապ հարցերի չուրջ, լսելի դարձնելով իրենց խօսքը: Բազւում անուն էր հանել դարբարաղցի ուսանող Բաղդասարը, որը մեծ պատրաստութիւն չունենալով, որպէս սոց.-դեմոկրատ ընդդիմախօսել էր Լ. Աթաբէկեանին[32], վերջինիս՝ Շուչում ունեցած մեկ դասախօսութեան ընթացքում (1905) և նրան որպէս դաչնակցականի անւանարկել էր աղգայնական, մանր բուրժուական կուսակցութեան չահերի պաչտպան և հակառակ սոցիալիզմի: Աթաբէկեանը, պատասխանելով ընդդիմախօսին, իրեն յատուկ հիւմորով սկսում է հետևեալ խօսքերով՝ "մեր հիանալի Բաղդասարը հիանալի մտքեր արտայայտեց" և այլն. այդ օրւանից այլևս ընդդիմախօսի անունը մնաց "Հիանալի Բաղդասար": Նա, երբ տեղի ունեցաւ յեղափոխութիւնը, Բազւում անուն էր հանել որպէս բոլչևիկ և գրեթէ ամեն օր ղբօսավայրում կամ բանուկ պողոտաներում, մարդկանց հաւաքում էր չուրջը և ճառում:

Նման տիպերից թէև աղատ էր մեր կուսակցութիւնը, սակայն չնորհիւ ստեղծւած աղատութեան, ինչպէս ուրիչ կուսակցութիւնների մէջ, նոյնպէս էլ մեղանում, մի տեսակ առաջնութիւն չահելու ցանկութիւն ունեցողներ կային: Հայր. Մուսայէլեանը, որ Շուչու ընկերների մէջ ամենից պատրաստւած ընկերն էր, Պետրոգրադ գնաց նոր հասած ժամանակ մեկ-երկու ընկերոջ համակրանքը չէր վայելում: Առիթ եղաւ խօսելու այդ

ազմական կազմակերպիչ: Ծնուել է Իգդիր աւանում, 1884թ., սովորել է Երեւանի ռուսական գիմնազիայում, 1904թ. մտել է գինուորական ծառայութեան մէջ, 1905-ից ամբողջութեամբ նվիրուել հայ ժողովուրդի կեանքի ամենահրատապ խնդիրների լուծմանը: 1905թ. նրա վրնժառու բաղկի հարւածից ընկաւ Բաքւի նահանգապետ Նակաշիձէն, որ հայկական կոտորածի կազմակերպիչն էր: Նոյն ձեւով 1907թ. պատժեց հայերի ու վրացիների ոճրագործ, գինուրալ Ալիխանով-Ավարսկուն: Մեծ դեր է կատարել հայկական ինքնապաչտպանութեան, 1918թ. Մայիսեան յաղթական կռիւների ընթացքում, նոյն տարւայ վերջերին դարձ քչից վրացական զօրքը Լոռիից: Հետագայում նչանակւեց պաչտպանութեան նախարար, ջանք գործադրեց վրկելու Հանրապետութիւնը, անկումից յետոյ յոյս ունէր ազատագրելու Թուրքիային անցած տարածքները Մոսկւայի միջոցով, սակայն համոզւեց, որ անհնար է: Շուրջ երկու տարի մնաց Մոսկւայում, ապա հեռացաւ արտասահման: Վախճանւեց 1956թ. Բոստոնում (ԱՄՆ): (Խմբ.)

[32] *Լեւոն Աթաբէկեան (1875-1918) Հայ հասարակական-քաղաքական գործիչ, բժիչկ, բանաստեղծ. գործունէութիւն է ծաւալել Թիֆլիսում, Երեւանում, Գանձակում, Շուչիում: Նրա ջանքերով Բաքւում հիմնւել է Թաքսխասուրների հիւանդանոց: (Խմբ.)*

ընկերների հետ, որոնք Հ. Մուսայէլեանից չատ ցած էին իրենց մտաւոր պատրաստութեամբ, և Հայրապետին այնպիսի յատկութիւններ էին վերագրում, որոնցից նա միանգամայն զուրկ էր: Իրը թէ Հայրապետը աշխատում է, որ ոչ ոք աչքի չընկնի, միայն ինքը երևայ ասպարէզում և այլն: Դա պարզապէս չարախօսութիւն էր և չատ աոիթ էր առաջացնում ընդհարուելու: Մի անգամ աոիթ եղաւ խիստ ընդհարուելու և խստիւ կշտամբելու մի ընկերոջ, որը զրնիէ մէկ ամիս խոով մնաց, սակայն չարմար ու պատեհ մէկ աոիթով ինքս հրաւիրեցի նրան՝ ստանձնելու մէկ ակտիւ գործի ղեկավարութիւնը, և նա վայրկենապէս մտաւ իր դերի մէջ, կարծես ոչինչ չէր տեղի ունեցած մեր միջև, բուռն եռանդով ընծայք տալով գործին չատ մեծ յաջողութեամբ:

Ակումբում չատ եռուն կուլտուրական կեանք սկսուեց: Կուսակցական ընկերները դասախօսութիւններ էին տալիս, տեսական ու գործնական ընոյթ ունեցող հարցերի շուրջ. սիրողների խումբը ներկայացումներ էր տալիս, ակումբի վարչութիւնը զրական-երաժշտական երեկոյթներ էր ունենում, և այնքան հետաքրքիր կեանք էր ստեղծւել, որ միւս յեղափոխական հոսանքի մարդիկ՝ էս-էրներ ու մենչևիկներ, ցանկութիւն յայտնեցին անդամագրուել մեր ակումբին, քանի որ Շուչու հասարակական ակումբը իրենց չէր բաւարարում. այնտեղ միայն թուղթ խաղացողների համար լաւ էր: Ակումբում էր կենտրոնացած մեր ամբողջ կուսակցական աշխատանքը: Արհեստակցական միութիւնների վարչութիւնը նոյնպէս տեղ էր զրաւել ակումբի սենեակներից մէկում: Զարմանալիօրէն հինգ-վեց ամսւայ ընթացքում վարժւել էին դասախօսութիւնների, երեկոյթներ յաճախելու և դա այնպիսի մարդիկ, որոնք ցարական կառավարութեան ժամանակ նման բաներից խուսափում էին: Շուչու «երեք փիչկանի»[33] հայկական տարազով կանայք, որ նախկինում ոչ մէկ դասախօսութեան և երեկոյթի եղած չէին իրենց ամբողջ կեանքում, հիմա նոյնպէս զարժել էին ժողովականներ ու խուռներամ գալիս էին ակումբ:

Ակումբի հաւաքոյթների ժամանակ մեծ աշխուժութիւն և բարձր տրամադրութիւն էին ստեղծում դաշնակցական աշակերտական միութեան փողային և լարային նւագախմբերը: Նւագողներից մէկ-երկուսը թուրքեր էին, ռուսական դպրոցի աշակերտներից: Մէկը, լաւ յիշում եմ, Աբրահամով Ահմատ աղայի տղան էր:

---

[33] Կանայք հագուստի ձեւ, երեք փիչով, եռածալ, որպիսին հագնում էին Հիմնականում տարեցները: (Խմբ.)

Շուչու ռէալական և քաղաքային դպրոցները փողային գործիքներ ունէին: Բացի դրանից, Նիկ. Թարխանեանը (Հետագային Հայկական բանակի սպայ Կուռօն), Թիֆլիսի երաժշտական դպրոցն էր աւարտել պատերազմից առաջ, սեփհական փողային գործիքներով նւագախումբ էր ունեցել Շուչու Հասարակական ակումբի երեկոյթներին և ղբօսավայրում ամռան նւագելու համար: Նիկ. Թարխանեանը դինւորական ծառայութեան գնալով, գործիքները յողել էր մօր մօտ, և մայրը սիրով տրամադրել էր աշակերտներին:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ, ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Մօտենում են քաղաքային ինքնավարութեան և Սահմանադիր ժողովի պատգամաւորների ընտրութիւնները: Սահմանադիր ժողովի ընտրութեան աշխատանքները ղեկավարելու համար ՕՋԱԿՈՄ-ի կողմից նշանակւել էին երկու Հոգի, Հայերից՝ Հայրապետ Մուսայէլեան, իսկ Թուրքերից՝ Լիւթֆալի բէկ Բէհբուդով: Սահմանադիր ժողովի ընտրութեանց համար պէտք էր կանխաւ ճշտել և արձանագրել քւեի իրաւունք ունեցողների անուն աղգանունները, այդ նպատակով թեմական, ռէալական և քաղաքային դպրոցների բարձր դասարանների հայ և Թուրք աշակերտներին գործի լծեցին: Աշակերտները առանդուն կերպով գործի անցան և մէկ ամսւայ ընթացքում կատարեցին իրենց աշխատանքը:

Նախապատրաստական աշխատանքի էին անցած բոլոր հոսանքները քաղաքային ինքնավարութեան ընտրութիւնների համար: Իւրաքանչիւր կուսակցութիւն պարզում, բացատրում էր իր գործունէութեան ծրագիրը (պլատֆորմը): Քաղաքային ինքնավարութեան ընտրութիւնների օրը ճշտւած էր՝ **Հոկտեմբերի 22-ին:** Որոշ բարեմիտ հայեր խօսք ունեցան մեղ հետ, թէ լաւ կը լինի, եթէ ոչ բոլոր հայ կուսակցութիւնները, դէթ դաշնակցութիւնը և կազմտական կուսակցութիւնը միացնել ուժերով հանդէս գան. ոչ կազմտները և ոչ էլ մենք դա հնարաւոր չգտանք: Դաշնակցութիւնը պիտի հանդէս գար առանձին, և պարզւեց, որ կազմտները բլօկ են կազմել Թուրքերի հետ, էսէրներն ու մենշևիկները միասին, իսկ բոլշևիկները առանձին: Ցուցակները պէտք էր ներկայացնել քաղաքային ինքնավարութեան վարչութեան, ընտրութիւններից երկու չաբաթ առաջ նշանակւած յանձնախմբին, որի մէջ էին բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները:

Մեր ցուցակը Կ.Կ.-ը ճշտել էր արդէն և պատրաստ վիճակում էր ներկացնելու համար, բայց մի անակնկալ միջադէպ տեղի ունեցաւ հենց ժամկէտի վերջին օրը: Ցուցակը, որ ձեռագիր էր,

փչացաւ, ջնջւեց և հնարաւոր չէր ներկայացնել: Ցուցակ ընդունող մարդիկ պէտք էր երեկոյեան ժամը իննին փակէին գրասենեակը, իսկ ցուցակը փչացել էր ժամը 8-ին, մինչև ցուցակը արտագրւէր և տասնուհինգ հոգու ստորագրութիւն հաւաքւէր, ահագին ժամանակ կանցնէր: Հ. Մուսայէլեանը, որ ամէնից լաւ պատրաստւած մտաւորականն էր մեր մէջ, մեր ղեկավարն էր, ընտրութեամբ խաղաղ, պաղարիւնութեամբ դատող, այնքան վրդովւած էր տեղի ունեցածով, որ ասաց՝ «կը նշանակէ՝ դաշնակցութիւնը չի կարող մասնակցել ընտրութիւններին» ու դուրս եկաւ գրասենեակից: Գրասենեակում բաւականաչափ ընկերներ կային, որոնք կանգնել էին չւար և հարց էին տալիս, ի՞նչ պիտի անենք:

Այլևս երկար մտածելու տեղը չէր. անմիջապէս մեր մարտիկ ընկերներից երկու հոգու՝ Թամիրեան Մարգարին ու Պետրոսեան Յակորին ուղարկեցինք քաղաքային ինքնավարութեան գրասենեակը, ցուցակները ընդունող յանձնախմբին յայտարարելու, թէ չպիտի ցրուեն, մինչև Դաշնակցութեան ցուցակը բերւի և յանձնւի: Երկու մարտիկները պիտի հասկէին, որ ոչ ոք չհեռանար: Ցուցակը արտագրւեց և անհրաժեշտ թւով մարդկանց ստորագրութիւնը վաւերացնելուց յետոյ ժամը 10 և 1/2-ին ուղարկւեց յանձնախմբին: Ցուցակը ընդունելուց յետոյ յանձնախմբի անդամները խմբովին եկան մեր գրասենեակը՝ բողոքելու, թէ ինչու աղատ Ռուսաստանում նման բռնութիւն է դործադրւում: Շատ զարմացած դէմքի արտայայտութիւն ունէր յանձնախմբի անդամ մեր ընկերը՝ Յակոբ Կարապետեանը:

-Եղբայր, սա ի՞նչ բռնութիւն է. քաղցած, ծարաւ նստել ու ժամերով սպասել ցուցակի, որը պէտք է վաղուց պատրաստ լինէր, ասում էին յանձնախմբի անդամները՝ Ռ. Շահնազարեան, կաղէտ, Գր. Տ. Աւետիքեան, մեղնից, Մելքումեան, Էսէռ, Զալեանց Առաքել, բոլշևիկ:

– Ի՞նչ մեծ բան է, մէկ ժամ երկար էք նստել գրասենեակում. այդպէս պատահեց. խօ դիտմամբ չե՞նք արել, ուշացաւ ցուցակը, ասացի:

– Կուղարկէիք վաղը, խօ մենք չպիտի՞ հեռանայինք քաղաքից, գրեթէ միաձայն վրայ բերեցին մի քանիսը:

– Վաղն էլ կասէիք, թէ ժամկէտից ուշ էք բերել, ձեր ցուցակը չենք կարող ընդունել. չէ՞ որ ձեղ համար ցանկալի է Դաշնակցութեան չմասնակցելը կամ պարտւելը ընտրութիւններում:

– Իղուր են ձեր կասկածները, ինչու՞ չպիտի ընդունէինք ձեր ցուցակը:

– Լաւ, հիմա հարցը սպառւած պիտի համարել. մենք յարմար ենք համարել ձեղ պահել գրասենեակում մինչև մեր ցուցակը պատրաստւէր ու ներկայացնէինք: Հիմա ի՞նչ էք ուղում:

– Ոչինչ չենք ուղում, մեր դժգոհութիւնն ու բողոքն ենք յայտնում, ձեր գործած բռնութեան համար:

– Յեղափոխութեան չնորհած իրաւունքով, ասացի:

Յանձնախմբի անդամները, պարզ է, մնացին դժգոհ մեր արած քայլից ու հեռացան: Յանձնախմբի անդամ մեր ընկերը՝ Յակոբ Կարապետեան, ասաց՝ "գոնէ ինձ կանչէին տղաները դուրս, առանձին ասէին, թէ բանը ինչումն է: Ամբողջ ժամանակ բոլորը դժգոհ հարցումներ ու դժգոհութիւններ էին տեղում գլխիս և ասում. "Դուք գիտէիք, թէ սա ինչ խաղ է, որ մեր գլխին խաղացւում է, բայց չէիք ասում": Իմ խօսքերին, որ ոչնչից տեղեակ չեմ, չէին հաւատում:

– Կարապետ, ասացի, շատ լաւ է, որ դու անտեղեակ ես եղել, նախ՝ խղճդ հանգիստ է, մեր գործած "մեղքին" մասնակից չես և երկրորդը՝ անտեղեակ լինելով, պնդել ես քո պատասխանը, որ իրօք տեղեկութիւն չունես յանձնախմբի արգելափակման պատճառի մասին:

Սկսւեց ընտրական պայքարը կուսակցութիւնների միջև: Բոլորի ցուցակները տպագրւած, ցրւած էին ժողովրդի մէջ: Նուչում երեք ուղղութեան թերթեր էին հրատարակւում՝ "Ապառաժ" Դաշնակցական, "Փայլակ" մենչեվիկ և "Նեցուկ" բոլշեվիկեան: Պայքարը մղւում էր թերթերի միջոցով, ինչպէս և հրապարակային դասախօսութիւններ տալով և միտինգներ կազմակերպելով:

Դաշնակցութիւնը վստահ էր, որ ինքնավարութեան համար ընտրելիք 54 հոգուց, տասից- տասներկուսը պիտի ընտրւեն մեր ընկերները: Քանի որ այդ համոզումն ունէինք, մեր ցուցակում 22 հոգու անուն էինք մտցրել, հետևեալ կարգով՝ 1. Հայրապետ Մուսայէլեան, Մարիամ Ղուկասեան օրիորդաց ղպրոցի տեսուչ, 2. Բժ. Արտաշէս Բաբալեան, 3. Գերասիմ Բալայեան, 4. Անուշաւան Տէր-Միքայէլեան, ուսուցիչ, 5. Յարութիւն Թումեան, տեսուչ Մարիամեան ղպրոցի, 6. Գր. Ղարագեօզեան, ուսուցիչ, 7. Կար. Նարինեան, ուսուցիչ, 6. Կար. Յակոբեան, հաշւապահ, 9. Աստւածատուր Աւետիսեան, բժշկական ուսանող, 10. Մարտ. Արղումանեան, ուսուցիչ, 11. Աբրամ Բաղդասարեան, տնտեսագէտ, 12.Վար. Վարժապետեան, ուսուցիչ, 13. Հայկազ Վարդապետեան, զրաչար, 14. Սերգէյ Ազգալեան, գործակատար, 15. Արտաշէս Բաղամեան, ուսանող, 16. Արշակ Աստուրեան, ուսուցիչ, 17. Գասպարեան Աւետիս, ուսուցիչ, 18. Դաւիթեան Դաւիթ, խանութպան, 19. Նիկոլ Տէր Յովհաննէսեան, հաշւապահ, 20. Համբարձումեան Յակոբ, թիթեղագործ, 21. Պարոնեան Սամսոն, ոսկերիչ, 22. Մելիք Գասպարեան Ներսէս, Ինքնավարութեան պաշտօնեայ:

Նախապէս կատարւած վիճակագրութեան համաձայն ընտրական իրաւունք ունեցողների թիւը մօտ 13000 էր, որից հայերինը 6000-ից չէր անցնում, իսկ թուրքերինը մօտ 7000, որ նորմալ տարիներում հաղիւ 3200, 3500 էր:

Ընտրական ցուցակները յայտարարելուց յետոյ, Կ.Կոմիտէն որոշեց միտինգի հրաւիրել ժողովուրդը և թափօր կազմած, պլակատներով ու դրօշակներով, փողային նւագախմբի նւագածութեամբ այցելութեան գնալ Թուրքական թաղը և այնտեղ էլ ելոյթ ունենալ, թուրքերից ձայն վաստակելու համար:

Աչակերտական Միութեան վարչութիւնը տեղական մարմնի հետ միասին եռանդուն գործի էր: Մեծ պլակատներ պատրաստեցին, երկու լեզուներով՝ հայերէն-թուրքերէն, Դաշնակցութեան արդէն բաղմիցս թերթերում լոյս տեսած նշանաբաններով: Երկու դարաւոր եղբայրական կեանք ունեցող հայ և թուրք ժողովուրդների միակամութեան, միանման կարիք ու պահանջ և չահ ունենալու մասին, որ երկու ժողովուրդները ձեռք-ձեռքի պիտի առաջ տանեն իրենց գործը և այլն:

"Ապառաժ" թերթի միջոցով և թռուցիկներով յայտարարուեց միտինգի հաւաքելու Մարիամ Ղուկասեան դպրոցի հրապարակը: Առաւօտեան ժամը 7-ից ժողովուրդը հաւաքուեց նշանակուած տեղը մօտ երեք հազար հոգի՝ երկսեռ բաղմութիւն, մեծաւ մասամբ երիտասարդներ և դպրոցների բարձր դասարանների աչակերտներ: Երկու փողային նւագախումբ, ռէալական և քաղաքային դպրոցի աչակերտները փոխնիփոխ յեղափոխական երգեր հնչեցնելու համար, տասն օրից ի վեր պատրաստ վիճակում էին գտնւում: Կ.Կ.-ի կողմից յանձնարարութեամբ միտինգը բացած յայտարարելով հրաւիրեցի ընկ. Յար. Թումանեանին (Թումանեանի կրտսեր եղբայրն է), որպէս նախագահ միտինգի թափօրը դեկավարելու: Յարութիւնը, որին ճանաչողները Թումունց Արտեմ կամ Թումի անունով էին կոչում, մի ճառով բացատրեց միտինգ-թափօրի նպատակը և երթի ուղղութիւնը դէպի Թրքական թաղը, ռուսական նկեղեցու առջևի հրապարակը: Խօսեցին ուրիշ ընկերներ էլ քաղաքային ինքնավարութեան ընտրութիւնների չուրջ, ապա բաղմութիւնը նւագախմբերի երաժշտութեամբ չարժւեց դէպի Թրքական թաղը և կանգ առաւ որոշած վայրում:

Նման թափօր հոծ բաղմութեամբ, նւագախմբերով մէկ թաղից միւսը նախընթաց չէր ունեցած, ուստի մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց թուրքերի մէջ, և երկսեռ հաղարաւոր թուրք բաղմութիւն բռնեց ամբողջ հրապարակը: Կանայք չադրաներով էին: Կ. Կոմիտէն կանխաւ որոշած ու յանձնարարած էր թուրքերէն լաւ տիրապետող ընկերների՝ Նիկոլ Ստեփանեանին և Միքայել Ներսէսեանին նախապատրաստուած ելոյթ ունենալու:

Մեր կողմից յաջորդաբար խօսեցին Միքայել Ներսէսեանն ու Նիկ. Ստեփաննեանը: Միքայել Ներսէսեանը Դիլգակի չրջանի

գիւղացիներից էր, երկար ժամանակ եղած Պարսկաստան, Ռաչտում, որպէս զործակատար առևտրական հայերից մէկի մօտ, և Թուրքերէն խօսելուց պարսկերէն բառեր էլ էր զործ ածում, իսկ Նիկոլը, որ ընկերական չրջանում Կօլեա անունով էր ճանաչւած, ծնողները Խաչէնի Խանձք գիւղից, բնակութիւն հաստատած Շուշում: Սովորել էր թեմական դպրոցում. չորրորդ դասարանից ելած, կօչկակարութիւն էր սովորած: Արհեստաւոր հօր մահուան հետևանքով, հնարաւորութիւն չէր ունեցել ուսումը չարունակելու: Նիկոլը ծնւել է սպիտակ մաղերով, ալբինոզ[34] էր և խօսելու չնորհք ունէր: Սեվական զործ չունէր, թէև լաւ արհեստաւոր էր, աչխատում էր որպէս բանւոր, լինելով զործատիրոջ օզնականը: Ընկերները Բէրել[35] անունով էին մկրտել Կօլեային, որ խօսեց մեծ ոգևորութեամբ ժողովուրդների խաղաղ եղբայրական կեանք վարելու մասին, աղատ դեմոկրատական Ռուսաստանում, ցարական կառավարութեան հակաժողովրդական և հակաչխատաւորական ռէժիմի մասին, որի պատճառով Ռուսաստանը չատ յետ է մնացած եւրոպական երկրներից, գիւղացիութեան ու բանւորութեան կեղեքումների չուրջ և, ի վերջոյ, կայանալիք ինքնավարութեան ընտրութիւնների մասին կոչ անելով, որ ղրացի Թուրք եղբայրները իրենց քէները տան Դաչնակցութեան, որը լաւագոյնս կը պաչտպանի քաղաքի բոլոր աչխատաւորների չահերը:

Միտինգին, հարկաւ, արգելք չկար, կարող էին խօսել և միւս կուսակցութիւններին պատկանող մարդիկ: Բոլորը խօսեցին ռուսերէն, բացառութեամբ մէկի: Էսէրների կողմից խօսեց Ռուբէն Տէր Գասպարեանը, մենչևիկների անունից՝ վրացի Զվանիձէն, բոլչևիկների կողմից՝ Արմ. Ղարագեօզեանը[36] և Թուրքերէն՝ Մելիքսէթ Եսայեանը: Վերջինս եղել է Նիկոլ Դումանի մօտ բարեկամներից, 1907/8 թ. բանւորական չարժման օրերին հակւած է եղել սոց. դեմոկրատ, բոլչևիկ հոսանքին, բայց հետագային, 1917-ի վերջերին, հեռացած բոլչևիկներից, իբրև հայ գիտակից մարդ, աղգային չահը նկատի ունենալով, միչտ եղել է մեղ հետ:

---

[34] «Ալբինոս». Ալբինոս՝ լատիներէն ալպատակ բառից). մաչկի, մազերի, աչքի ծնածանաչխալանքի բնական գունաւորման բացակայութիւն: (Խմբ.)

[35] Աւգուստ Բեբել (1840-1913). Գերմանացի սոց.-դեմ. կուսակցութեան հիմնադիրներից մէկը (1869): Պայքարում էր ռազմատենչութեան ու պատերազմների դէմ, կռանից իրաւահաւասարութեան ջատագով: (Խմբ.)

[36] Ղարագեօզեան (Կարակեզով) Արմենակ Միքաելի (1890, Գորիս - 1937). Բոլչևիկեան կուսակցութեան գործիչ: 1917-ից՝ բոլչևիկեան կուսակցութեան անդամ: Աւարտել է Պետերբուրգի համալսարանը. 1917-1920ԹԹ. բոլչևիկեան կազմակերպական աչխատանք է կատարել Գորիսում, Շուշիում: Ապրիլեանում Խորհրդային կարգերի հաստատումից յետոյ ընտրւել է Ադրբէջանի Կոմկուսի կենտկոմի անդամ, նչանակւել 11րդ Կարմիր բանակի՝ Ղարաբաղ-Զանգեզուրի ղրւման գծով զործերի արտակարգ յանձնար: Պատասխանատու աչխատանքներ է կատարել Հայաստանում, Լենկոմի Ղարաբաղում, Ադրբէջանում, Անդրկովկասեան յանձնի և ԽՍՀՄ կենտգործկոմներում: (Խմբ.)

Թուրքերից խօսեցին երեք հոգի, երկուսը նոյնպէս քննադատեցին ու դատապարտեցին ցարական ռեժիմը, դրւատեցին. ժողովուրդների խաղաղ համակեցութիւնն ու միասին չինարար կեանք վարելը, և որ ինքնավարութեան համար պէտք է ձեռնհաս, օգտակար մարդկանց ընտրել: Երրորդ խօսողը Թրքական հոգևոր պետի՝ Ղազիի տղան էր, միջին տարիքի մարդ: Նա ասաց՝ "Մեր հարևան հայ եղբայրների այսպիսի բաղմութեամբ մեզ այցելութեան գալը, ղրօչակներով, պլակատներով և նւագախմբով, ամէնքիս մեծ ուրախութիւն պատճառեց: Մենք սովոր ենք լսել միշտ, թէ Դաշնակցութիւնը խիստ նեղ ու աղգայնամոլ մի կուսակցութիւն է, որ միայն իրենց աղգի համար է ցանկանում լաւ ու բարեկեցիկ կեանք, անտարբեր է միւս աղգերի հանդէպ: Մինչդեռ փաստ է, մենք գիտենք, որ Պարսկաստանում դաշնակցութիւնը, մեր եղբայր ֆարս մեծ ժողովրդի սահմանադրական կռիւներին մասնակցել ու չատ զոհեր է տւել: Եւ այսօր այս հանդիսաւոր այցելութեամբ մեզ նոյն Դաշնակցութիւնն է ուշադրութեան առել: Ես կոչ եմ անում՝ ձայն տալ դաշնակցութեան":

Ընտրութիւնները տեղի են ունենում նշանակւած օրը՝ Հոկտեմբեր 22-ին: Ընտրական յանձնախումբը, բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ, երկու քուէատուփ էր պատրաստած, մէկը Հայկական թաղում, Շուչու թեմական դպրոցի դահլիճում, միւսը՝ Թուրքաց թաղում, Խանի աղջկայ՝ Հաջար Խանումի տանը: Թուրք կանանց համար, Թուրքերի ցանկութեամբ, առանձին տեղ քուէատուփ էր պատրաստւած և Հայ ու Թուրք կանանցից կազմւած խառն յանձնախմբի տրւած:

Մամեդ-Հիւսէյին անունով մէկ Թուրք, որ Հայ վարպետի մօտ սովորած ղերձակ էր, արհեստանոց ունէր Թուրքաց չուկայում, բաւական աղատ խօսում էր Հայերէն, տեղական բարբառով. նա 1500 ընտրական բիւլիտէն էր ստացել Դաշնակցութեան տեղական մարմնից, յայտնելով, թէ իրենցից չատերը պիտի մեղ քուէ տային: Եւ ինչպէս վստահեցնում էր, ընտրութեան յաջորդ օրը, 1000-ից աւել մեղ ձայն տւողներ են եղել, բոլորը ստորին խաւի մարդիկ: Մինչդեռ, երբ քուէատուփը բացել են, դաշնակցական ոչ մի բիւլլետէն չի գտնւել:

Հայկական Թաղում ընտրութիւնները հետևեալ արդիւնքը ցոյց տւին՝ Դաշնակցութեան ցանկին տրւած էր 3700 քուէ, կադէտների ցանկին՝ 400 քուէ, Էսէրների և մենշևիկների միացեալ ցանկին՝ 300 քուէ և բոլշևիկներին 1600 քուէ:

Ինքնավարութեան անդամներ ընտրեցին՝ Դաշնակցականները 12 հոգի, կադէտներ՝ Թուրքերից ստացած

քուէների չնորհիւ, 12 հոգի, էսէը 1 հոգի, մենշևիկ 1 հոգի և բոլշևիկ 1 հոգի, թուրքեր 27 հոգի, ընդհամէնը 54 հոգի:

Հետաքրքիր չատ խաղեր տեղի ունեցան այն ընտանիքներում, որոնցում կուսակցական միատարրութիւն չկար: Կաղէտ մեծ եղբայրը փոքրին, որ Դաշնակցական է, ուզում էր համոզել, ձայնը տալու Կաղէտներին, փոքրը չէր համաձայնում. Դաշնակցականը քարոզում էր մենշևիկ կամ բոլշևիկ փոքր եղբօրը՝ Դաշնակցութեանը ձայն տալ, նոյնպէս անյաջող. գիչերը քնած ժամանակ իրարու բիւլետէնների տակ ծրարները փոխելու դէպքեր են տեղի ունեցել, որ պատմում էին որպէս անեկդոտ, ծիծաղում:

Քաղաքային ինքնավարութեան ընտրութիւններին կուսակցութեան տարած յաղթանակով, պարզ է, ընկերները չատ գոհ ու ոգևորուած էին: Ընտրութիւնների արդիւնքը միւս կուսակցութիւնների համար ապացոյց եղաւ, որ Դաշնակցութիւնը իրօք խոր արմատներ է ձգած ժողովրդի մէջ:

Ընտրութիւններից չորս օր անց լսեցինք, որ ամսու 25-ին տեղի է ունեցել բոլշևիկեան յեղաչրջում և ժամանակաւոր կառավարութիւնը խորտակուած է. մի բան, որ միանգամայն անակնկալ էր մեղ համար ու ծանր մտահոգութեան մատնեց ոչ միայն մեղ, այլև միւս հոսանքներին ու ժողովրդի բոլոր խաւերին, բացի բոլշևիկներից, որոնք գոհ էին:

Յեղափոխութեան հետևանքով ստեղծուած ժամանակաւոր կառավարութիւնը, որ գործի էր անցած պետական գործերը վարելու մինչև Սահմանադիր ժողով, երկար ամիսների ընթացքում չարունակ ենթակայ էր յարձակումների: Բոլշևիկները պահանջում էին իշխանութիւններն անմիջապէս յանձնել բանուորագիւղացիական ու զինուորական խորհուրդներին: Միւս հոսանքները զէմ էին, երկրի վիճակը լաւագոյս տնօրինելու համար պահանջ էին դրել և ժամանակաւոր կառավարութիւնը ընդունել, որոշել էր հրաւիրել ժողովրդի իսկական ներկայացուցիչներին, որոնք կը կազմէին Սահմանադիր ժողով, որը միակ իրաւասուն էր՝ ճչտելու և որոչելու, թէ ինչպիսի պետական վարչական ձև պիտի ունենայ երկիրը: Բացի այդ, Սահմանադիր ժողովին էին թողնում հողային և այլ տնտեսական հարցերի լուծումը:

"Ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին", այդ նշանաբանով էին ամենուրեք աղմկում, ցոյցեր անում բոլշևիկները: Շուչու բոլշևիկները չատ չէին մնում Ռուսաստանի իրենց ընկերներից: Դասախօսութիւններ էին տալիս Ժողովրդական Համալսարանում, իրենց տեսակէտները հասարակութեան սեփականութիւն դարձնելու, լհարկէ, հետևորդներ ու համակիրներ ձեռք բերելու

համար և միշտ հանդիպում միւս հոսանքների ընդդիմութեան: Ամռան օգոստոս ամսին, Պետրոգրադը զբաւելու նպատակով դօր. Կոռնիլովի[37] կատարած արշաւանքի առթիւ, ինչպէս ուրիշ քաղաքներում, Շուշում էլ տեղի ունեցաւ միտինգ, ռէալական դպրոցի դիմաց, լայն հրապարակում: Կայազօրի զինուորութիւնն էլ մասնակցում էր միտինգին: Բոլշևիկների կողմից խօսեցին Աչոտ Յովհաննիսեանը[38] (հետագային ակադեմիկոս) և չուշեցի նշանաւոր բոլշևիկ Բաղդան Կնունեանցի[39] քոյրը՝ Փառանձեմը: Պարզ է, երկուսն էլ դատապարտելով կոռնիլովեան չարժումը, պահանջ էին դնում ամբողջ իշխանութիւնը յանձնելու խորհուրդներին:

Հարկաւ, ելոյթ ունեցան և միւս հոսանքի մարդիկ՝ Ռ. Տ. Գասպարեան՝ էսէռ, Լև. Վարդապետեան՝ մենշևիկ և մեր կողմից՝ Հ. Մուսայելեան, որոնք նոյնպէս դատապարտելով կոռնիլովեան չարժումը, գտնում էին, որ պէտք է սպասել մինչև գումարւի երկրի իսկական իրաւասուն, Սահմանադիր ժողովը, որը կը տնօրինի թէ՛ վարչական և թէ՛ տնտեսական կեանքը:

Կաղէտները Շուշու այդ եռուղեռին անմասն էին, լուռ դիտողի դերում: Մէջերնին կային ինտելիգենտ մարդիկ, որոնցից և ոչ մէկը փորձ չարաւ դասախօսութիւն տալու ժողովրդական համալսարանում: Սակայն մասնաւոր ղրոյցների ընթացքում չէին թաքցնում իրենց կարծիքները ու տեսակէտները տեղի ունեցող երևոյթների և ղէպքերի վերաբերեալ: Կոռնիլովեան չարժումը չէին դատապարտում, ընդհակառակը՝ գտնում էին, որ միակ մարդն էր այն օրերին, որ կարող էր վերջ տալ տիրող անիշխանութեանը, խաղաղ կեանք հաստատել ու հնարաւոր դարձնել Սահմանադիր ժողով գումարելը, երկրում ամուր կացութիւն ստեղծելու և յարատևելու համար:

---

[37] Լաւր Կոռնիլով (1870–1918). Ռուս գեներալ. 1917թ. Օգոստոսին փորձեց յեղաշրջում կատարել, հաստատել ռազմական դիկտատուրա, վերջ տալ Ռուսաստանում ծաւալող անիշխանութեանը, տանգնել կայսր կարգուկանոն, որը յայտնի դարձաւ «Կոռնիլովչչինա» անունով: (Խմբ.)

[38] Աչոտ Յովհաննիսեան (1887–1972): Մանկավարժ, պատմաբան, ակադեմիկոս, հասարակական-քաղաքական գործիչ, բարձրագոյն կրթութիւնը ստացել է Գերմանիայում, պատաւանդել է Շուշիի հողեւոր սեմինարիայում: Քաղաքական գործունեութեան սկիզբը՝ Դաշնակցական, յետոյ՝ ռուսալ-դեմոկրատ: Մասնակցել է Բաքւի կոմունային, աշխատել է Մոսկուայում՝ ազգութիւնների ժողկոմատ, մասնակցել է Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատմանը, 1921–22 թթ. եղել է Հանրապետութեան լուսժողկոմը, 1922–28թթ՝ Կոմկուսի կենտկոմի անդամ: 1928թ. աշխատանքի է անցել Մոսկուայում, 1954թ. մինչև կեանքի վերջը՝ Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի պատմութեան ինստիտուտում: (Խմբ.)

[39] Բադդան Կնունեանց (1878–1911). Ռուսաստանի ռուսալ-դեմոկրատական բանւորական կուսակցութեան ակտիւոր գործիչ. 1901-ից սկսած՝ այդ կուսակցութեան Բաքւի կոմիտէի պեկավարներից: Հայ ռուսալ-դեմոկրատական Միութեան հիմնադիրներից մէկը (1902թ.), ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտէի և բանւորական պատգամաւորների խորհրդի քարտուղար: Բանից բանտարկւել է, աքսորւել, վախճանւել է Բաքւի բանտում: (Խմբ.)

Մենք, թէև առարկում էինք կաղէտներին, սակայն ներքուստ, ինչպէս յիշեցի, բոլորս մտահոգ էինք, յատկապէս հայերիս բացառիկ վիճակում գտնուած լինելը նկատի ունենալով: Լենինի արձակած վճիռը՝ վերջ տալ պատերազմին և կոչը, որ դինուորները վերադառնան իրենց տները, բոլորիս ահարեկ կացութեան էր մատնել: Արդէն ամառուանից ղօրքերը կազմալուծուած, անիշխանութեան էին ենթարկուած և դանգուածօրէն ղէպի տուն ճամբա էին բռնած: Բացի բոլշևիկներից, միւս բոլոր հոսանքները, պիտի խոստովանել, խիստ մշուշապատ էին պատկերացնում ապագան:

Այո, հայութիւնը գտնւում էր բացառիկ վիճակում, խիստ աննպաստ պայմաններում: Մեր անմիջական հարևանների՝ վրացիների և թուրքերի մէջ նկատելի էին անջատողական ձգտումներ, որից միանգամայն զերծ էին հայկական բոլոր հոսանքներն անխտիր, Ռուսաստանի անբաժան մասը համարելով Անդրկովկասը: Ռուսաստանից անջատելով, հայութեան գոյութիւնը կը վտանգուէր, քանի որ զարաւոր մեր ոսոխը՝ տաճիկը, կանգնած էր մեր դիմաց, որպէս հաղար գլխանի վիշապ, երակը բաց ու պատրաստ, կլանելու հայութեան մնացորդը: Հայութեանն սպառնացող վտանգը բնաղդօրէն զգում էին հայութեան բոլոր խաւերը, նոյնիսկ բոլշևիկները, բայց նրանք, Հոկտեմբերեան յեղաշրջմամբ ոգևորուած, էքստազի մէջ էին և թէև ընդունում էին մեր գոյութեանն սպառնացող վտանգը, բայց խորը չէին ապրում, վստահ էին, թէ Հոկտեմբերեան յեղաշրջման հետևանքով պիտի խաղաղ կեանք ստեղծուէր ու վերացուէին ամէն տեսակի վտանգներ ու խոչընդոտներ:

Ապագան թէև մշուշոտ էր երևում մեզ, և բոլորի սիրտը կախ էր ճնշող, ծանր ապրումների պատճառով, այնուամենայնիւ, կուսակցութիւնը նախապատրաստական աշխատանքներ էր կատարում Սահմանադիր ժողովի ընտրութիւնների համար, որ նշանակուած էր Նոյեմբեր 26-ին, թէ՛ քաղաքում և թէ՛ դիւղերում:

Ինչպէս յիշեց վերը, ղօրքերը խուռներամ ղէպի տուն էին ձգտում, և ցաւ ի սիրտ պիտի խոստովանել, որ քայքայումը սկսել էր նաև մեր դինուորների մէջ, որոնք չէին գիտակցում և ղգում մեղ սպառնացող վտանգը, դասալիք լինելով փախչում էին ճակատից, վերադառնում իրենց տեղերը: Դասալքութեան ղէմ եղած բանաւոր ու գրաւոր քարոզչութիւնը առանձին արդիւնք չէր տալիս, ուստի փորձեր եղան ակտիւ միջոցների ղիմելու, դասալքութեան առաջն առնելու համար: Թիֆլիսից մեղ մօտ նկաւ Բերդաձորցի (Ղարաղչլաղ) Բախչի Սարուխանեանը, մեր դրագէտ, լաւագոյն

դաշնակցական մարտիկներից, Քեռու բանակում աչքի ընկած իր քաջութեամբ:

Բախչին 1907/08 թուականներին բանւորական շրջաններում աչքի ընկած գիտակից ընկերներից մէկն էր: 1908 թ. Ոսկանապատի (Բագու) Կ.Կ.-ի որոշմամբ ահաբեկման էր ենթարկել ոստիկաններից մէկին ու թէև աղատ մնացել հետապնդումից, բայց հետագային մատնութեամբ բռնւել, ճանաչւել էր և զինւորական դատական ատեանի կողմից մահուան դատապարտւել: Պաշտպան փաստաբանը բողոք էր ներկայացրել աւելի բարձր ատեանի, սակայն ոչ մէկ յոյս կար մահուան վճիռը փոխելու, ուստի կուսակցութիւնը որոշում է Բախչուն փախցնել բանտից: Դաշնակցութիւնը ամենակարող ժամանակաշրջանում չէր թէև, Լիժինեան հալածանքների հետեւանքով ընկերների մէկ մասը բանտում, մէկ մասը աքսորական և մէկ մասը փախստական, բայց և այնպէս Ոսկանապատում դեռ աղատ մնացած ընկերները կարողանում են յաջողեցնել Բախչու փախուստը Բայիլով թաղամասի բանտից, որը մեծ ուրախութիւն և ոգևորութիւն պատճառեց ընկերներին, մանաւանդ երբ յայտնի դարձաւ, որ Բախչուն փախցնելու օրը դատական բարձրադոյն Ատեանի որոշումն էր ստացւած, թէ զինւորական ատեանի վճիռը մնում է անփոփոխ և յաջորդ օրն իսկ պիտի կախաղան բարձրացնէին նրան:

1909 թ. սկզբներին էր, մի օր երեկոյեան ուշ մեր դուռը ծեծեցին. դուռը բացեցի և ղէմս հրազի լոյսով տեսայ միջահասակ, չատ լաւ հագուստով և չատ համակրելի, դեղնցիկ դէմքով երիտասարդ մարդու, ձեռքին փոքրիկ մի ճամպրուկ:

– Եղիչէ Իշխանեանն այս տո՞ւնն է ապրում, հարցրեց.

– Ես եմ, դնանք ներս, ասացի:

Առանձնացանք իմ սենեակը, յանձնեց երկտող Մածոն Խէչոյից, որ յանձնարարում էր մեր "Ապառաժի" Կ.Կ.-ին՝ լաւ պահելու ընկերոջը, մինչև նոր կարգադրութիւն կը լինի: Բախչին պատմեց իր գլխին եկածը և յայտնեց, որ ճամբին միանգամայն աննկատ է մնացել: Բագւից, ուղեցոյց ընկերոջ օգնութեամբ, ոտքով հասել են Բալաջարի կայարանը, որտեղ ընկերներից մէկը տոմսակ առած սպասելիս է եղել: Բալաջարից չոգեկառքով հասել են Ելաւս և ընկերների հրահանգի համաձայն, կառքը ամրողջովին վարձել էր, որ ուրիշ մէկը տեղ չզրաւէր, որպէսզի միանգամայն աղատ մնար անակնկալօրէն ծանօթ մարդու հանդիպելուց: Քաղաքում կառքից իջնելով, ուղիղ եկել էր մեզ մօտ:

Բախչուն անմիջապէս տարայ քաղաքի հիւսիսային մասում, Քամու Ջաղացի թաղը, ընկերներից մէկի՝ կօշկակար Աբգար Գասպարեանի տունը, որտեղ պիտի մնար որպէս պանսիօներ:

Աբգարը մեր փորձած ընկերներից մեկն էր, խիստ դաղտնապահ և ցուցմունքի պէտք չունէր: Բախչու մասին, ի հարկէ, պէտք է իրազեկ դարձնէի Կ.Կ.-ին: Լիժինեան հալածանքների հետեւանքով Կ.Կ.-ի կազմը քայքայուած էր մօտ տաս ամիս.Կոստի Համբարձումեանը Մետեխի բանտումն էր. Արտաշէս Մելքոնեանը անցել էր արտասահման, Աւագ Հայրապետեանն ու Ռուբէն Քայլերունին ի վիճակի չէին կուսակցական գործով ղբաղուելու, Բիւրօի որոշմամբ Կ.Կ-ն կազմալուծուած էր, գոյքերի պահպանութիւնը Յողնուած ինձ:

1908/09 ուսումնական տարում մեզ մօտ էին եկել Նիկոլ Աղբալեանը և Արշալոյս Աստուածատրեանը, պաշտօնավարելու Շուշու թեմական դպրոցում, որպէս ուսուցիչներ: Բիւրոյի որոշմամբ Նիկոլը, Արշալոյսը և ես ստանձնում ենք Կ.Կ.-ի պարտականութիւնները: Կ. Կոմիտէն նիստերի համար երկու սենեակ ուներ մեր ընկերների բնակարաններում, մէկը՝ Հանգստարանի թաղում և միւսը՝ քաղաքի վերին մասում՝ Խանքենդցոց թաղում: Յաջորդ օրը Կ.Կ.-ի նիստին ընկերներին յայտնեցի Բախչու մասին:

Ա.հա, այս Բախչին, որ կուսակցական յանձնարարութեամբ քանիցս բաց աչքերով ղէպի վտանգն էր ընթացել և Քեռու բանակում աչքի ընկել որպէս քաջ կուռող, Թիֆլիսից եկել էր յատուկ յանձնարարութեամբ, դասալիքներին համախմբելու և ճակատ ուղարկելու: Կ.Կոմիտէն յոռետես էր, անչափ դժուարին գործ էր՝ դասալիքներին հարկադրել, որ ճակատ դնային: Դասալիքներից չատերը աւազակութիւն էին անում: Բայց ղէպքեր եղան, երբ ճակատից փախած զինուորներ, ճամբի հայկական գիւղերում հիւրընկալուած ժամանակ, հիւրընկալները զիչերը քնած զինուորի հրացանը վերցնում, թաքցնում էին, յայտարարելով թէ գողացել է կամ էլ բացարձակ կերպով իւրացնում, զինաթափ վիճակում ճամբա էին դնում հիւրին: Թրքական գիւղերով անցնելիս նրանք նաեւ ենթարկւում էին թուրք աւազակների յարձակման: Տեղի ունեցաւ մի չատ քստմնելի ղէպք Վարանդայի Աւետարանոց գիւղում: Դիղակի չրջանի դասալիքներից մեկը հիւրընկալւում է Աւետարանոցի գիւղացիներից մեկի տանը: Գիչերը զինուորին քնած տեղը սպանել էր տանտէրը, հրացանը իւրացնելու նպատակով, դիակը գիւղի մօտ չտապ կերպով թաղել և որովհետև գերեզմանը խոր չէր, շները հետքը գտել էին և փորփրել: Գիւղացիներից մի քանի հոգի տեսել էին, ճանաչել, թէ զինուորը ում տանն էր հիւրընկալուած: Գաղտնիքը բացւում է, չրջանի կոմիսարը՝ Ալեքօ Բէկ Փիրումեանը ձերբակալում է ոճրագործին և բերում քաղաք, ներկայացնում Կ. Կոմիտէին: Ոճրագործը արտաքինով իսկական ոճրագործի տիպ էր ներկայացնում, այլանդակ դէմքով, լայն մեծ բերանով, չար աչքերով: Կ.Կ.-ի առաջարկով քաղաքում եղած սպաներից կազմւում է զինուրական դատական ատեան, որը դատում և մահուան վճիռ

արձակելով, զնդակահարում է նրան, ապա թռուցիկով յայտարարում այդ մասին թէ՛ քաղաքում և թէ՛ գաւառներում:

Կ. Կոմիտէն, ինչպէս յիշեց, դասալիքների հաւաքման և ճակատ ճամբելու խնդրում յոռետես էր և Բախչուն խորհուրդ տուեց դադրիլ, քանի որ դասալիքների մէջ չատերը "Թալանիր Թալանածը" սկզբունքը դարձնելով, աւազակարարոյ կեանք էին վարում և ոչ մէկ կարևորութիւն էին տալիս իրենց չրջապատի հասարակական կարծիքին: Կենտրոնական Կոմիտէն չէր սխալուած, որ կասկած էր յայտնել ունեցալիք յաջողութեան վերաբերեալ և զգուշացման խօսք ասել: Բախչին զնաց իրենց գիւղը, որի բնակիչները, չրջապատուած Քրքական գիւղերով, հայ-Թալարական ընդհարումներին քաջութեամբ պաչտպանել էին իրենց, յետ մղել Թալարական յարձակումները և հակայարձակմամբ պարտութեան մատնել Թշնամիներին: Բերդաձորի բնակիչները կենտրոնացած չէին մէկ տեղում. հազար տնից աւելի բնակիչ ունէր: Մեծ Շէն կոչուած մասը հինգ վեց հարիւր տնից բաղկացած կենտրոնական գիւղ էր, իսկ մնացածը՝ 30, 40, 60 մինչև 100 տներից բաղկացած խմբեր մերձակայ սարալանջերին ու խութերին թառած: Բերդաձորը, կարելի է ասել, գիւղ չէր, այլ գաւառակ: Բախչին չատ լաւ ճանաչելով իրենց գիւղացիներին, այնուամենայնիւ տաքարիւն լինելով, չկարողացաւ ղուսպ մնալ. իր և դասալիքների մի խմբակի միջև սուր վէճ է առաջանում ու հետևանքը լինում է այն, որ դասալիքները սպանում են Բախչուն, վերջնիս տուած սպառնալիքից զգաստացած միջոցին: Բախչու սպանելը մեծ ցաւ պատճառեց բոլոր ընկերներին: Նրա կորուստը մեծ էր հէնց իրենց գիւղի համար, քանի որ լաւագոյն ղեկավարը կարող էր լինել գիւղը վտանգի ենթարկուած պահին:

Նոյեմբերի 10-ին էսէրներն ու մենչևիկները ժողովրդին միտինգի էին հրաւիրել "Մեծ Թուխսանէ" կոչուած հրապարակում, հասարակական ակումբի եռայարկ չէնքի առջև: Ակումբի չէնքի հրապարակին նայող մասը երկյարկ խանութների չարք էր: Երկրորդ յարկի չարքը երկար բալկոն ունէր, որտեղից խօսում էին ճառախօսները: Մեր Կ. Կոմիտէն հրաւէր էր ստացել մասնակցելու միտինգին, Սահմանադիր Ժողովի նչանակութեան և արժէքի մասին խօսելու: Հերթով խօսեցին էսէրներից Ռ. Տ. Գասպարեանը, մենչևիկ Լևոն Վարդապետեան, և մեր կողմից Հ. Մուսայէլեանը, որից ժողովուրդը չատ գոհ էր, որովհետև արծարծելիք նիւթի չուրջ չատ մատչելի կերպով էր խօսում, առանց եւրոպական բառերի կոյտով ծանրաբեռնելու իր խօսքը:

Երկրորդ յարկի խանութներից մէկը մեր ընկերներից երկուսի՝ վարսաւիրներ Լևոնի և Խաչատուրի արհեստանոցն էր, ուր մի քանի հոգի նստած լսում էինք ճառախօսներին: Հերթը բոլշևիկների կողմից խօսողինն էր՝ Արմենակ Ղարագեօղեանինը,

համալսարանական գիւղատնտես և ընագիտութեան ուսուցիչ ոչխալական գպրոցում: Մագումով գիւղացի էր, Սիսիքի ամենախոչոր գիւղից՝ պատմական Խնձորեսկից:

Ղարագեօղեանը ռուսերէն էր խօսում և չնորհք էլ ունէր խօսելու. ռուսական գպրոցասարտ լինելով, հայ գրական լեզուին չէր տիրապետում, Ղարաբաղի բարբառով խառն էր հայերէնը: Խօսեց բոլշևիկեան յեղաչրջման արժէքի և նչանակութեան, նրա չնորհիւ լինելիք բարիքների մասին. դատափետում էր աւատական ու բուրժուական դասակարգերին որպէս կողոպտիչների, որոնք բանուորի և գիւղացու արդար աչխատանքն էին իւրացնում: Ապա սպառնալիք կարդաց հակայեղափոխական տարրերին, թէ՝ "Ձեռնոցը նետած է. մենք հպարտ բարձրացնում ենք նետած ձեռնոցը և գոչում՝ կեցցէ Բոլշևիկեան կուսակցութիւնը, ողջոյն քաղաքացիական պատերազմին" և այլն: Այս խօսքերի վրայ մեծապէս դրգռւում են ռուսերէն գիտցող հայերը, որոնց համար անսպասելի էր Ղարագեօղեանի յոխորտանքը: Գրգռել էին և մեր ընկերները, որոնցից մէկը՝ կոմնիձորցի Միքայէլը, Ս. Գէորգի բոլոր չքանչանները լրիւ ստացած, դաչոյնը հանած խոյանում է դէպի Ղարագեօղեանը: Այդ միջոցին Հայրապետը (Մուսայէլեան) ներս մտնելով խանում, կչտամբեց՝ "ի՞նչ ես հանգիստ նստել, Միքայէլը կատաղել, սուրը հանած ուղում է Ղարագեօղեանին սպանել": Անմիջապէս դուրս նկայ պատչգամ, իրօք, Միքայէլը ուղում էր բարձրանալ վեր և մեր ընկերները չէին թողնում. իսկ նա սպառնում էր և մեր ընկերներին՝ "ձեզ էլ կը խփեմ ինձ էլ, թողէք սատկացնեմ էդ չան որդուն":

Միքայէլի հետ չատ մօտ էի, յարգում էի որպէս հերոս մարդու, որ պատանեկան հասակում արդէն, հայ-թաթարական ընդհարումների ժամանակ աչքի էր ընկել իբրև անվախ, քաջ կուռղ: Կարգապահութեան ենթակայ մարդ էր և գաչնակցական, միչտ պատրաստ կուսակցութեան հրահանգը կատարելու, թէկուզ կեանքի գնով: Դժւար չէր կուսակցութեան անունից սատնել ու խաղաղեցնելը: Կանդնել էի դէմը, երբ աստիճաններից երկու ոտք էր մնացել բարձրանալու պատչգամ, բռնեցի թևից և Կ. Կ.-ի անունից յայտարարեցի, որ հանգիստ մնայ և դաչոյնը դնի պատեանի մէջ: "Եղիչէ, ես ենթարկւում եմ կուսակցութեան հրահանգին, բայց համոզւած եմ, որ յետոյ պիտի փոչմանէք, ըրանք քանդեցին մեր երկիրը, զօրքը փչացրին, զեղերտիր զարձրին և թչնամիների ճանապարհը բաց արին": Վերջացրեց իր խօսքը և Ղարաբաղի եօթ յարկանի հայհոյանքների տարափ տեղաց բոլշևիկների հասցէին, բազմութեան արձագանքին ու համակրանքին արժանանալով:

Այն միջոցին, երբ ես ուղում էի խաղաղեցնել Միքայէլին, բոլշևիկ պատանիներից մէկը ռուսերէն դառնում է միտինգին ներկայ գտնուող բաւականաչափ ռուս զինուորներին, որոնք լուռ լսում , աւելի ճիշտ՝ դիտում էին, ասելով. "ընկերներ, դիմէք ղէնքի, ուզում են մեր ընկերոջը սպանել": Զինուորների մէկ մասը բոլշևիկներ էին, ուստի մեր ընկերներից Ասատուր Աւետիսեանը մօտենում է զինուորներին և հասկացնում ականջ չղնել յիմար պատանու կոչին, որովհետև զօրանոցի ճամբան կուսակցութեան մարտական ուժերի հսկողութեան ենթակայ է և եթէ որևէ փորձ անելու լինեն, ռումբերի զոհ կերթան:

Եւ իրօք, Կ.Կոմիտէի որոշմամբ զօրանոցից, որ գտնւում էր քաղաքի ամենավերին մասում, դէպի ցած նայող գլխաւոր երկու-երեք փողոցների որոշ տներում ռումբերով զինուած մարտիկներ էինք տեղաւորել, որովհետև միտինգի նախօրեակին գրգռիչ լուրեր էին չրջան առել, թէ ռուս զինուորները, որոնք ենթակայ են բոլշևիկներին, պիտի զինուած ելոյթ ունենան: Ընկերոջ յայտարարութիւնը ազդում է միտինգին ներկայ զինուորների վրայ, որոնք մնում են խաղաղ իրենց տեղում:

Ժողովուրդը, սակայն, Ղարագեօզեանի ճառից չատ էր գրգռուած և բարձրաձայն դժգոհութիւն էր յայտնում և պահանջում պատասխանատուութեան կանչել նրան, դատել ու պատժել, իսկ ո՞վ կարող էր այն օրերին դատի կանչել մարդկանց և իրաւունք ղղալ դատելու, ապա մեղաւորին պատժելու: Պէտք էր որևէ ձևով խաղաղեցնել կրքերը:

Հայրապետը առաջարկում է, որ մի երկու խօսք էլ ես ասեմ ժողովրդին, խաղաղեցնելու համար:

– Հայրապետ, ես ի՞նչ ճառախօս եմ, աւելի լաւ է՝ դու խօսես:

– Ոչ, դու պիտի խօսես, բոլորը տեսան, որ Միքայէլին դու խաղաղեցրիր, ուրեմն երկու խօսք էլ պէտք է ուղղես հասարակութեան և պարտաւոր ես ասել հէնց մեր բարբառով, որ լաւ հասկանան:

Աւաղ ընկերոջ խօսքը կարելի՞ էր գետին նետել, մանաւանդ որ աչակերտական տարիներին մեր խմբակի ղեկավար դասախօսն էր եղել: Այո, պէտք էր խաղաղեցնել կրքերը: Արմենակ Ղարագեօզեանին մօտրել էին խանութներից մէկը, և մեր ընկերներից երեք-չորս հոգի հսկում էին, որպէսզի որևէ մէկը ներս չմտնի և բռնութիւն գործ դնի:

Բիւրոյի հրահանգով Թիֆլիսի Կ. Կոմիտէն, իրենց չրջանի երիտասարդ գործիչներից հինգ հոգու ուղարկել էր Շուչի, մեզ օգնելու համար: Ընկերներին մեր հերթին ուղարկեցինք Գորիս, այնտեղի կոմիտէի ցուցմունքով աչխատելու Զանգեզուրի, Ղափանի, Սիսիանի և Գինուազի չրջաններում:

Շուտով Բագւի Կ. Կոմիտէի հրահանգով Բագւից մեզ մօտ եկան Նիկոլ Դումանի կրտսեր եղբայրը՝ Պօղոս Տէր Յովհաննիսեանը, յայտնի Պաւլի Բէկ անունով, և էրզրումցի Գարեգին Կարապետեանը, էջմիածնի ճեմարանաւարտ: Պաւլի Բէկին, որպէս ղարաբաղցու, ճանաչում էինք. երկրորդ ընկերոջ մասին տեղեկացանք, որ եղել է կամաւոր Քեռու բանակում, և երբ լսեց Բախչու սպանուած լինելու մասին, չատ ցաւեց ու չատ ափսոսաց: "Մենք նրան Բախչի դայի անունով կը կոչէինք և ամէնքիս սիրելին էր," ասում էր Գարեգինը, որ մի յօդւածով էլ արտայայտւեց "Հորիզոն" թերթում:

Պաւլին ու Գարեգինը ծանօթանալով մեր ընկերների կատարած աչխատանքներին չատ գոհ էին մնացել և ասում էին՝ "Դուք մի բանով էլ առաջ էք մեզնից, մենք, որ աւելի յարմարութիւններ ու միջոցներ ունենք, դեռ չենք կարողացել ձերինի պէս ակումբ ունենալ հաւաքոյթների, երեկոյթների, դասախօսութիւնների համար":

Ընտրութիւններին մնացել էր հինգ-վեց օր, և մեր նախապատրաստական աչխատանքները թէ՛ քաղաքում և թէ՛ չրջաններում աւարտւած էին: Բագւից եկած ընկերները գտան, որ իրենք անելիք չունեն, վերադարձան իրենց տեղը: Թիֆլիսից եկած երիտասարդները Զանգեզուրից և միւս չրջաններից վերադառնում են ընտրութիւններից յետոյ:

Նոյեմբեր 22-ից սկսած, բոլոր կուսակցութիւնների մէկական ներկայացուցիչներից կազմւած խմբերը, ընտրական ցուցակներով բեռնաւորւած, մեկնում են չրջանները, տեղերում կազմւած ընտրական յանձնախմբերի հետ միասին ընտրութիւններ կատարելու: Ընտրութիւնները տեղի են ունենում Նոյեմբեր 26-ին և ամէն տեղ քւէների 90%-ից աւելին տրւում է Դաչնակցութեան ցուցակին, որը թիւ 4-ն էր Կովկասի բոլոր նահանգներում

Հ. Յ. Դ. -Ի ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ . ԹԻՖԼԻՍ

Դեռ ընտրութիւնների արդիւնքը յայտնի չեղած, հէնց ընտրութեան օրը, Բիւրոյից հեռագիր ստացանք, որ կուսակցական կարևոր խորհրդաժողով պիտի տեղի ունենայ. Կենտ. Կոմիտէն

պէտք է անպայման ուղարկի իր ներկայացուցչին: Կ. Կոմիտէի անդամներից Յ. Թումեանի, Ա. Աւետիսեանի և Գ. Ղարագեօզեանի հետ նիստից առաջ մեր մէջ արդէն որոշում կայացրինք, որ իրրև ներկայացուցիչ գնայ խորհրդաժողով մեր ամենապատրաստուած մտաւորականը՝ Հ. Մուսայէլեանը: Սակայն Կ. Կոմիտէի նիստին Մուսայէլեանը պնդեց, որ ես գնամ Թիֆլիս, մանաւանդ որ աղատ եմ, որեէ պաշտօն չունեմ, իսկ Կ. Կ.-ի միւս անդամները, որպէս ուսուցիչներ, ի վիճակի չեն բացակայելու:

Նոյեմբեր 27-ին մեկնեցի Շուշուց. ճամբան աղատ էր աւազակներից, մի քանի օր առաջ, Աղդամի և Քեօչաղուի միջև թուրք աւազակների մի փոքրիկ խմբակ, յարձակուել էր քաղաքի համար ալիւր ու մթերք փոխադրող ֆուրգոնչիների վրայ, բայց Աղդամից օգնութեան հասած ձիաւոր ոստիկանները, կուի բռնուելով, աւազակներից երկուսին սպանել և միւսներին փախուստի էին մատնել:

Ելալս կայարանում ահագին բաղմութիւն էր սպասում գնացքի, մեծ մասը Բագու գնացող: Գնացքների երթևեկը խիստ անկանոն էր դարձած, ճիչտ ժամանակին տեղ չէին հասնում, յաճախ կայարաններում սովորականից աւելի երկար ժամանակ կանգ առնելով, ուշանում էին: Տոմսակավաճառի լուցի առջև բաղմութիւնը հանգիստ հերթի սպասել չէր կարողանում, մարդիկ իրարու հրմշտում էին չուտ տոմսակ գնելու, որպէսզի գնացքը ժամանելուն չուտ տեղ բռնեն: Վերջապէս ինձ էլ յաջողուեց տոմսակ գնել և սպասել Թիֆլիս տանող գնացքին, որը շատ ուշ եկաւ, ուշ էլ հասանք Թիֆլիս, նոյեմբեր 28-ին: Յաջորդ օրը գնացի մեր ժողովատեղին. արդէն ժողովը բացուել էր և նախագահ էր ընտրուած Մարտ. Յարութիւնեանը: Ժողովին ներկայ էին Արամը, Կոմսը, Նիկ. Ադրալեանը, Ս. Արարատեանը, Վ. Խորէնին, Յով. Ամատունին, Ալ. Խատիսեանը, Վ. Նաւասարդեանը, Բժ. Մելքոնեանը, Տիկ. Սաթ. Արղութեանը, Գր. Զամոյեանը:

Հարևան սենեակում, որի դուռը բաց էր, տեսնում էինք Ռուբէն Տէր Մինասեանին, որ անվերջ ծխում էր, և Միչա Արզումանեանին, քիթ-քթի ցածր ձայնով դրուցելիս, և յաճախ ելումուտ էին անում նրանց մօտ դանազան մարդիկ, որոնց արտաքինից երևում էր, որ մեր մարտիկներից էին: Ժողովի նախագահը քանիցս հրաւիրեց նրանց մասնակցելու նիստերին, բայց երկուսն էլ հրաժարւում էին, հանաքի ձև տալով իրենց մերժումին թէ՝ "մենք աղգի (իմա ժողովի) հրամանին ենթակայ և պատրաստ գործակատարներ ենք, ինչպէս կը հրամայի աղգը, այնպէս էլ կը կատարենք":

Ժողովի օրակարգի կարևոր հարցերն էին՝ ռազմաճակատի կայունացման, Թիկունքի ապահովութեան, պարենաւորման

կանոնաւորման, դասալքութեան առաջն առնելու հարցերն ու հարեւան աղգերի հետ ունենալիք փոխյարաբերութիւնները և այլն:

Ժողովը տևեց մինչև Դեկտեմբերի 8-ը: Հարցերի չուրջ հանգամանօրէն մտքերի փոխանակութիւն տեղի ունեցաւ: Ամենակարևորը ռազմաճակատի կայունացման հարցն էր: Ռուսական զօրքերը, "զէպի տուն" նշանաբանով տարւած, ահաբեկ ոչխարի հօտի պէս, թողնում, լքում էին ճակատը, հեռանում: Ճակատը մնում էր բաց, և թշնամին դիւրութեամբ կարող էր խուժել և բնաջնջման ենթարկել հայութեան մնացորդը: Ճակատը կայունացնելու աշխատանքը միասնաբար պիտի կատարէին Անդրկովկասի երեք աղգութիւնները՝ հայ, վրացի և թուրք: Այդ ուղղութեամբ կենտրոնի մեր ընկերները՝ Բիւրօն ու Թիֆլիսի Կ.Կ.-ը որոշ աշխատանքներ էին կատարում, յաճախակի յարաբերութիւնների մէջ մտնելով վրաց ղեկավար շրջանակների հետ: Նշաններից երևում էր, որ վրացիները քիչ էին մտահոգւած ճակատի կայունացման խնդրով: Նոյնանման աշխատանք տարւել էր և թրքական ղեկավար շրջանում: Թուրքերը բոլորովին մտահոգ չէին: Պարզ էր և հասկանալի մեր հարևանների վերաբերմունքը, որոնք պատերազմի սկզբից ոչնչով չահագրգռւած չլինելով, միանգամայն անտարբեր էին զտնւած պատերազմի նկատմամբ, հայութիւնն էր միայն, որ զլխովին նետւել էր ասպարէզ, որպէս փոքրիկ դաշնակից հսկաների կողքին, և այժմ, երբ հսկայ Ռուսաստանը անմտօրէն լքում էր ճակատը, հայ ժողովուրդը մնում էր մեն մենակ:

Ժողովից, ի զէպ, բացակայում էր Ռոստոմը, որ զնացել էր Ստոկհոլմ, միջազգային սոցիալիստական համագումարին մասնակցելու Դաշնակցութեան կողմից: Եւ Ռոստոմի բացակայութիւնը այդ օրերին խիստ զգալի էր բոլորի համար:

Ապագան մռայլ էր պատկերանում բոլոր ընկերներին: Նիկոլ Աղբալեանը լսօսք առնելով, ամփոփ և պատմական իր ճառն ասաց, և ոչ մէկ առարկութիւն չեղաւ: Իր ճառով բանաձևեց բոլոր հարցերը:

"Ընկերներ, մենք, երբ պատերազմը սկսւեց, աղգովին ասպարէզ նետւեցինք բուռն ոգևորութեամբ, մեր արևմտահայ եղբայրների աղատագրման դաղափարով տոգորւած, մանաւանդ որ աչխարհի մեծերը մեր ցանկութիւնները չոյող խոստումներ արին: Մեծերը մեղ իրենց փոքրիկ դաչնակիցը համարեցին, քանի որ իրենց կողքին միասնաբար կռւում ենք ընդհանուր ոսոխի դէմ. բայց այսօր մենք մնացել ենք մենակ և պէտք է մեր յոյսը մեղ վրայ դրած, ադգովին մեր զլխի ճարը զտնենք: Մենք պէտք է նախ և առաջ մեր յենակէտը որոշենք, որպէս մեր թիկունքի յենարանը, ամրութիւնը,

մեր ոյժերի չարունակական եռանդ ու կորով ներչնչողը: Իմ կարծիքով մեր միակ յենարանն է փոքր Կովկասեան լեռնաչղթան՝ ամբողջովին հայկական, սկսած Լօռիից մինչև Ղարաբաղ: Մեր ամբողջ ռազմամթերքն ու պարենը պիտի կենտրոնացնենք այնտեղ, որպէսզի կարողանանք դիմադրել թշնամուն: Հարկաւ, միաժամանակ ամէն ջանք թափելով հաւաքելու դասալիք զինուորներին, նոր զօրամասեր կազմելու և ճամբելու ճակատ: Դասալիքների հաւաքման գործին պիտի լծուին մեր բոլոր ընկերները: Անխնայ գտնելու է հասարակական կեանքը վրդովող աւազակարարոյ տարրերի նկատմամբ, կանգ չառնելով ոչ մէկ միջոցի առջև: Անչուշտ հարևան ազգերի հետ պիտի չարունակել տարուող նոյն աշխատանքները. մենք չենք կարող մեկուսանալ, որից միայն տուժել կարող ենք: Այո, թէկուզ ցանկալի արդիւնք չունեննանք էլ, պէտք է աշխատանքը նոյնութեամբ չարունակենք: Ես նոր բան չասեցի, կրկնեցի այն, ինչ որ ասել եմ սեպտեմբերին մեր կուսակցական ժողովներում: Շատ ենք ուշացել, ուստի պիտի չտապալել":

Վրացիների պարագլուխ Ն. Ժորդանիայի հետ հանդիպում էր ունեցել Միչա Արղումանեանը: Ժորդանիան ասել էր, որ զօրքերը թողնում, հեռանում են, եթէ զէնքերը թողնէին ու հեռանային, այնքան էլ ցաւալի չէր լինի, մեր ժողովուրդները մնում են զուրկ զէնքից. վաղւայ օրը, եթէ մի վտանգ սպառնալու լինի, հնարաւոր չպիտի լինի պաշտպանուելու. միջոցներ պիտի մտածել, որ հայերն ու վրացիները միացեալ ջանքերով հարկադրեն զօրքերին՝ զէնքերը թողնելու: Երբ Միչան հարցրել է, որ եթէ չհամաձայնեն զօրքերը, ի՞նչ պիտի անել, Ժորդանիան ասել է. "Ճամբաները պիտի փակել, դժուարութիւններ յարուցել. ծայրայեղ դէպքում՝ բռնի միջոցի դիմել:"

Միչան համաձայն չլինելով ներքուստ, ասել է՝ "ընկ. Ժորդանիա, չատ պատասխանատու և ծանրակչիռ հարց է, որ պէտք է խորհրդածութեան նիւթ դարձնել: Ես պիտի զեկուցեմ մեր ընկերներին, ուստի անձնական կարծիք յայտնել չեմ կարող:"

Եւ պիտի ասել, որ թէ Ժորդանիայի և թէ վրացի այլ զեկավար կամ աչքի ընկած գործիչների հետ Միչան ծանօթ էր, ու ազատ չփումներ ունէր: Ամէն անգամ էլ իւր ունեցած զրոյցների մասին զեկուցում էր ընկերներին. վրացիները աշխատում էին Միչային ներչնչել իրենց տեսակէտները, բայց նա տեղի տուող չէր. զգոյշ էր, մանաւանդ այն տագնապալի օրերին:

Վրացի մենշևիկները կարողացել էին կազմակերպել զաղտնի կերպով, կայարանում ճակատ ուղարկելու համար ռազմամթերքով բարձած մի քանի վագոնները միացնել չոգեկառքին և գոլունի ճամբու դնել Քութայիս: Երկաթուղու հայ ծառայողներից մէկը նկատելով, անմիջապէս լուր է տալիս Հայ Ջինուորական Միութեան

Խորհրդին, որը արագօրէն զինուած մի կիսավաչտ է ուղարկում ճնպընթացով էրզրումի զրաւման մասնակցած և քաջութեան համար Գէորգեան Խաչ ու Ոսկէ Թուր ստացած կապիտան Ստեփան Տէր-Սարգսեանին, որը սրարշաւ հասնում է գողերին, ռաղմամթերքը զրաւում, վագոնները կցում իր չոգեկառքին և բերում Թիֆլիս:

Ստեփան Տէր-Սարգսեանը Ղարաբաղի Ջրաբերդ գաւառից էր, ճեմարանաւարտ, միջնակարգի բաժնի, ապա էքստերն քննութեամբ Շուշու ռէալական դպրոցի վկայականն ստացած Պետրոգրադի հոգե-նիարդաբանական ինստիտուտի ուսանող, պատերազմի սկզբից զինուորական ծառայութեան կանչուած: Թերթերում յօդուածներ կը գրէր Ստեսար ստորագրութեամբ:

Փողոցում Ստեփանի հետ զրուցում էինք, մօտեցաւ մեզ Ստեփան Կանայեանը, որին գիտէի, որպէս ճեմարանի գնահատուած ուսուցիչներից մէկի, բայց ծանօթ չէի: Ժպտալով ձեռք տուաւ Ստեփանին ու ասաց.

– Ստեփան, մի բան եմ լսել, ճի՞շտ է, որ էդ անպիտան վրացի գողերը ճակատի համար ուղարկելիք զինամթերքը կայարանից թոցրել են և դու ճնպընթացով հասել, գրաւել, բերել ես:

– Այո, ճիշտ է, պարոն Կանայեան:

– Էհ, որ ճիշտ է, ապրես Ստեփան, միշտ այդպէս յաջող լինես քեզ յանձնարարուած պարտականութիւնները կատարելիս: Ես սրտանց ուրախանում եմ իմ աշակերտների յաջողութիւններով:

– Շնորհակալ եմ և ղգացուած ձեր անկեղծ վերաբերմունքից հանդէպ ձեր աշակերտների, որոնցից մէկն էլ ես եմ:

Ստեփանը ծանօթացրեց ինձ Կանայեանի հետ: Շատ բարեհամբոյր մարդ էր. միասին զնացինք կաֆէ՝ Ստեփանի առաջարկութեամբ, բաւական զրուցեցինք դէսից-դէնից: Կանայեանը նոյնպէս, ինչպէս մեր բոլոր ընկերները, խիստ մտահոգ էր ստեղծուած կացութեամբ և չեչտում էր Հայութեան համար ստեղծուած բացառիկ ծանր պայմանները:

Յաջորդ օրը, առաւօտեան ժամը ութից անց, գնում էի խորհրդաժողովի հերթական նիստին. արդէն հասել էի Երևանեան հրապարակը, որ հրացանաձգութեան ձայներ լսեցի: Տեղեկացայ, որ մենչևիկները փորձ էին արել զրաւելու պետական զինանոցը, որտեղ ահագին քանակութեամբ ռազմամթերք կար և պահապանները բոլշևիկ զինուորներ էին, որոնք անմիջապէս համազարկով էին զիմաւորել մենչևիկներին, որոնք կծիկը դրել, փախել էին: Ինչպէս ասացին, դա երկրորդ անյաջող փորձն էր, որ արել էին մենչևիկները:

Այդ օրը Միչան կրկին հաղիպել էր վրացիներին և կրկնել նոյն առաջարկները՝ միանալ, զրաւելու իշխանութիւնը և զոյքը:

Ժողովը երկընտրանքի մէջ էր: Քաղաքում տիրող անիշխանութիւնը, որ ծայրայեղութեան էր հասել, պակաս չափով չէր մտահոգում թէ՛ բնակիչներին և թէ՛ մեղ բոլորիս:

Ժողովը որոշեց հեռագրել Դրօին՝ հայկական մէկ գունդ առած գալու, Թիֆլիս քաղաքը խաղաղեցնելու և կարգը վերականգնելու: Երեկոյեան նիստի ընթացքին Միչան մի քանի անգամ դուրս գնաց, եկաւ, Ռուբէնի հետ առանձին փսփսացին: Մի կողմից մեղ մնչեւիկներն էին քաչում և միւս կողմից բոլչեւիկները. մասնաւորապէս գինանոցի խնդրով չատ էին մտահոգւած վրացիները, որոնք ուղում էին գինանոցի պահպանութիւնը իրենց ձեռքն առնել:

Երկու սննեակների միջև դուռը յաճախ բաց էր մնում և տեսնում էինք Ռուբէնին. չարունակ ծխելով անցուդարձ էր անում սննեակում, մտքերի մէջ խորասուզւած: Վրացիների այդ օրւայ անյաջող փորձից յետոյ ստեղծւած մտահոգ կացութիւնը բոլորիս մի տեսակ սպասողական դրութեան մէջ էր դրել: Նիկ. Աղբալեանը դարձաւ Ռուբէնին, թէ ի՞նչ է մտածում, ի՞նչ պիտի անել, ինչո՞ւ չի մասնակցում ընկերների խորհրդակցութեանը: Ռուբէնը նոյն խուսափողական պատասխանն էր տալիս: Այդպէս մնացել էինք անչարժ մինչև առաւօտ. դեկտ. 3-ին արևը դեռ չծագած, ներս մտաւ Միչան ու ժպտալով յայտարարեց՝ "խաղաղութեամբ վերջացաւ և մթերանոցի խնդիրը լուծւեց":

Պարզւեց, որ Միչան մեր մարտիկներից քառասուն հոգով մտել է մթերանոցի բակը, պահապանների գլխաւորի հետ բանակցել և առաջարկել, որ խուսափելու համար անախորժ դէպքերից, մթերանոցների ներքին պահպանութիւնը թողնել բոլչեւիկներին, իսկ արտաքինը՝ մթերանոցներից որոչ հեռաւորութեան վրայ, մնչեւիկներին: Այնպէս որ մթերանոցները պահպանւեն երկու դինւորական չղթաներով, որոնք պիտի փոփոխւեն միաժամանակ, որոշեալ ժամերին:

Պարզ է, ի հարկէ, բոլոր ընկերները գոհ մնացին, որ մեկ ծանր խնդրից աղատւեցին:

Նոյն օրը ժողովը նկատի ունենալով, որ բոլչեւիկներն էլ միւս կողմից են ուղում քաչել մեղ իրենց կողմը, որոշեց որ Սարգիս Արարատեանը Ստեփան Շահումեանի հետ հանդիպելիս տեղեկանայ, թէ ինչ առհաւատչեայ ունեն, որով կարող են յոյս ներչնչել մեղ, որ իրենց հետ միասին աչխատելով, կարելի կը լինի դրութիւնը փրկել:

Յաջորդ օրը, ժողովը ճաչից յետոյ, երեկոյեան դէմ պիտի տեղի ունենար. ուղղուեցի դէպի Երեանեան հրապարակի վրայ "Կաֆէ Յենտրալ" սրճարանը: Ճամբին պատահեցի Արարատեանին:

– Ո՞ր ես գնում, հարցրեց:

– Կաֆէ Յենտրալ, պատասխանեցի:

– Լաւ, միասին կերթանք, Շահումեանի հետ ժամադրուած եմ, դու էլ ներկայ կը լինես, ոտ բռնես:

– Ես չորան մարդ եմ, իմ ի՞նչ գործն է մասնակցել ձեր ղրոյցին:

– Աւել պակաս մի խօսի. նախանցեալ օրը ինքդ ասացիր մեր ղրոյցի ընթացքին, որ Շահումեանի հետ ծանօթ ես, աքսորավայրում յաճախ էք հանդիպել իրար հայոց ակումբում: Ասում ես չորան ես, վնաս չունի, չորանավարի կը խօսես, չխօսես, խօ վկայ կը լինե՛ս մեր ղրոյցին:

Միասին գնացինք. Շահումեանը զրաւել էր մէկ սեղան ու ղրուցում էր մի երիտասարդի հետ: Մենք որ մօտեցանք, բարևեցինք, երիտասարդը հեռացաւ:

– Հը, Սարգիս, ի՞նչ էք մտածել, ի՞նչ պիտի անել ստեղծուած ներկայ պայմաններում:

– Այդ հարցը ես պէտք է տամ ձեզ: Իշխանութիւնները ղուք էք առել ձեր ձեռքը, զօրքը հմայուած "դէպի տուն" նշանաբանով, մերկացնում է ռազմաճակատը, լայն բաց անելով Թշնամու առաջ: Դուք է, որ պարզ ու որոշ պիտի ասէք, թէ ինչ էք անելու: Արդեօք, զէթ ճակատը պահելու համար, կարո՞ղ էք պահել զօրքը իրենց տեղերում, թէ՞ ոչ: Ձեր հաստատուն դրական որոշումից է կախուած խնդրի լուծումը:

Գիտէ՞ք ինչ, պէտք է նկատի ունենաք մի բան, որ երկար ժամանակ աշխատած լինելով վրացի մենշևիկների հետ, նրանց ես աւելի լաւ եմ ճանաչում, քան դուք: Գիտեմ, նրանք ուղում և աշխատում են, որ իրենց հետ լինէք ու միասին աշխատէք. մեղ չատ լաւ յայտնի է այդ բանը: Նրանք էլ, դուք էլ ազգային կուսակցութիւն էք, սակայն, չեմ թագցնում, նրանք չովինիստ, թէժու ազգայնամոլ են և սեպարատիստ, դուք չովինիստ չէք և սեպարատիստ չէք, մի բան որի մէջ համոզուած եմ: Այնպէս որ մեղ համար ձեռնտու է ձեղ հետ բլօկ կազմել: Եւ եթէ դուք մեղ հետ լինէք, մենք կը կարողանանք պահել զօրքը:

– Սակայն ինչպէս կարող էք պահել, երբ զօրքի մէջ կարգապահութիւնը բոլորովին խախտուել է, կարգ ու կանոնի ենթակայ չէ և չի ուղում ենթարկուել:

– Զօրքի մէջ կան բաւական դիտակից տարրեր, որոնք նկատում են, որ տեղական ժողովուրդներից հայերը բարեացակամ վերաբերմունք ունեն ռուսների հանդէպ և երբ բլօկ կազմուի, մենք կը կարողանանք օգտագործել դիտակից տարրերին ու ցանկալի

արդիւնք ունենալ. մենք վստահ ենք, որ յաջողութիւն կունենանք:

Այսպէս, բաւական տևեց փոխատացութիւնը նրանց միջև. եղրակացութիւնն այն էր, որ երկուստեք մտածեն, կրկին հանդիպումներ ունենան:

Արարատեանը Շահումեանի հետ ունեցած զրոյցը նոյնութեամբ զեկուցեց խորհրդաժողովին, որը, պարզապէս տատանման մէջ էր՝ ո՞ր կողմը հակել: Կտրուկ որոշում կայացնել չէր կարողանում, բնական ու հասկանալի աննպաստ պայմանների պատճառով:

Երեկոյեան Հայկական մէկ գնդի գլուխ անցած Դրօն Թիֆլիս հասնելով, գունդը տեղաւորելով , ուղղակի գալիս է ժողովատեղին, երբ դեռ նիստը չարունակւում էր:

– Մենք նոր տեղ հասանք, ասաց Դրօն. ազգը ի՞նչ է հրամայում մեզ, ի՞նչ պիտի աննենք:

Նախագահը նկարագրեց քաղաքի ողբալի կացութիւնը. քաղաքի աղգաբնակչութիւնը ահաբեկւած է չրջան առած զանազան լուրերի հետևանքով, թէ կարող է քաղաքացիական կռիւ սկսել, ալան-թալանի կենթարկւեն մարդիկ, մէկ ոչխալ ուժ էլ չկայ, որ նման դէպք տեղի ունենալուց կարողանայ կտրուկ միջոցի դիմել ու խաղաղութիւնը վերականգնել: Հէնց այդ նպատակով էլ յարմար գտանք, որ դու այստեղ լինես հայկական գնդի գլուխ անցած: Նոյն իսկ վրացիները էլ ցանկացել են, որ մեր գնդերից մէկը գայ կարգ ու կանոնը պահպանելու:

Երբ ղօրքերի մէջ քայքայումը մեծ չափերի էր հասել, ռուս գիտակից զինուորականների մէջ մի չարժում էր սկսւել. թռուցիկներով յայտնում էին, թէ հայրենիքը վտանգւած է, յանուն հայրենիքի փրկութեան պէտք է մահւան գնդեր կազմել, կուրծք տալու թշնամուն և մահւան գնով պաշտպանել երկիրը: Այդ չարժումը արձագանք էր գտել հայ զինուրականների մէջ, որոնք մահւան գնդի կազմակերպման գործին էին ձեռնարկել արդէն, Թիֆլիսում: Երևանեան հրապարակում ու յարակից փողոցներում, յաճախ կարելի էր հանդիպել Մահւան Գնդի հայ զինուրների, որոնց գլխարկների վրայ գանգի ձևով կոկարդներ էին ամրացւած:

Մի օր Սօլօլակ փողոցի վրայ Մահւան Գնդի մի խումբ հայ զինուրներ կանգնած զրուցում էին. մի քանիսի հետ, որ ղարաբաղցիներ էին, ծանօթ լինելով, բարևեցի ու կանգ առայ, տեղեկութիւններ ձեռք բերելու հետաքրքրութեամբ: Այդ միջոցին զինուրները նկատեցին մի ռուս սպիտակահեր ղօրավարի, որ գալիս էր դէպի խումբը: Զինուրները, նախայեղափոխական կարգապահական կանոնի համաձայն, պատրաստուեցին պատւի առնելու: Երբ ղօրավարը բոլորովին մօտեցաւ, զինուրները

կուրծքները ցցած, ուղղահայեաց պատուի կեցան: Զօրավարը կանգ առաւ, խիստ զարմացած, հարցրեց:

– Տղաներ, ո՞ր զօրամասից էք.

– Հայկական Մահւան Գումարտակի, ձերդ գերազանցութիւն.– պատասխանեց աւագ ենթասպայի աստիճանով մէկը:

– Ապրէք տղաներ, ուրեմն դեռ ամէն ինչ կորած չէ. ես հայ զինուորներին ճանաչում եմ ռազմաճակատից, քաջ են և կարգապահ, ապրէք:

Անցաւ զօրավարը, երեսը դէպի վեր ուղղելով, և ինքն իրեն խօսելով. պարզ լսեցինք, ասում էր՝ "Փառք Քեզ, Տէր, փառք Քեզ":

Այո, ռուս զօրավարին մեծ զարմանք էր պատճառել հայ զինուորների կեցուածքը: Անիշխանութեան այն օրերին զինուորները սպաներին, ցածր կամ բարձր աստիճան ունեցողներին, զինուրական պատուի չէին առնում:

Խորհրդաժողովը աւարտեց իւր աշխատանքները դեկ. 8-ին, համապատասխան որոշումներ կայացնելով օրակարգի գլխաւոր հարցերի շուրջ. ամէն ճիդ, ջանք դործ դնել հայ զինուորներից զօրամասեր կազմակերպելու և վստահելի սպաների ղեկավարութեամբ ճամբելու ճակատ, որի ծանրութիւնը ամբողջովին ընկած էր հայ ժողովրդի ուսերին: Միաժամանակ ջանալ, վրացիների և թուրքերի հետ փոխադարձ համաձայնութեան եղը դտնել, միասնական աշխատանք կատարելու համար: Հրահանգել կուսակցական մարմիններին՝ աչալուրջ հետևելու տեղի ունեցող երևոյթներին ու դէպքերին, խառն ապրող շրջաններում միշտ ջանալով, որ պրովակացիայի[40] զոհ չդառնան հայերը, մանաւանդ հայ-թրքական խառն շրջաններում: Անցեալի փորձից յայտնի է, որ խաւարի մէջ խարխափող յետամնաց թրքական զանգւածները դիւրութեամբ ենթակայ են դառնում պրովակացիայի, ուստի ջանալու է, որ բախում տեղի չունենայ մեր և նրանց միջև, կանխաւ և միշտ չփման մէջ լինելով նրանց ազդեցիկ տարրերի հետ:

ԲԱԳԻՈՒՄ

Դեկտեմբերը 9-ին մեկնեցի Թիֆլիսից և նոյն օրը հասայ Գանձակ, տեսնելու այնտեղի ընկերների հետ, որ յառաջիկային, ինչպէս հայ-թրքական ընդհարման տարիներին էր, դարձեալ լուռային ճանապարհով կապւելնք իրարու հետ, քանի որ աւազակախմբերը Շուչի-Եւլախ գիծը վտանգել էին, առանց խտրութեան կողոպտում էին դիմադրողներին, լինի հայ, թէ թուրք,

[40] կանխամտածւած ձեւով հրահրել. սադրել՝ վնասակար քայլերի: (Խմբ.)

ու սպանում: Գանձակում տեսնւեցի Արմենակ Բորեանի[41] և Բէյնօ Նալչաջեանի հետ, պատմեցի մեր խորհրդաժողովի աշխատանքների և Թիֆլիսում տեղի ունեցող դէպքերի մասին: Դեկտեմբերը 12-ին մեկնեցի Բագու, որտեղ յաճախ ընկերների հետ հանդիպումներ էի ունենում, մեր կարիքների մասին զեկուցում: Մեր շրջանի բոլոր ընկերներին, մեծից սկսած մինչև կրտսերը, ամենաչատ մտահոգողը և կարելի է ասել միակը, ժողովրդի ինքնապաշտպանութեան հարցն էր, որովհետև բոլորն էլ չատ յոռետես էին ղարաճած ապագայի նկատմամբ:

Բագու անցնելու նպատակս այն էր, որ Կ.Կ.-ի միջոցով յաջողեցնէի Շուշու ընկերների ճանաչած բազաբնակ հեղինակաւոր ընկերներից մէկի փոխադրելը Ղարաբաղ, և անհրաժեշտ էր, որ փոխադրուող ընկերը մարտական փորձառութիւն ունենար, վտանգի պահին իր դերի մէջ մտնելու: Այս մասին քանիցս մտքերի փոխանակութիւն էինք ունեցել Կ.Կ.-ում դնո ամիսներ առաջ, և բոլորս նոյն տեսակէտն ունենալով, մի քանի անուններ էինք նկատի առել: Երբ Բագուում հէնց առաջին օրը իմացայ, որ Մածոն Խէչօն (Խաչատուր Միրղաբէկեան, Վարանդայի Փիրջամալ գիւղացի) այնտեղ էր, մէկը մեր հին սերնդի մարդկանցից, կուսակցական մեծ ստաժով, Խանասօրայ արշաւանքից ի վեր, հայ-թրքական ընդհարումներին որպէս Վարանդայի մէկ հատուածի հրամանատար աչքի ընկած իր հմուտ զեկավարութեամբ ու քաջութեամբ, և յարգւած էր ընկերների կողմից, այլևս ուրիշ թեկնածուի մասին աւելորդ էր մտածել, պէտք էր օր առաջ կապնել Խէչոյի փէչից և խնդրել, որ հրաժեշտ տայ Բագուին ու գայ մեզ մօտ՝ Շուշի, որտեղ, համոզւած էի, ընկերները զրկարաց կընդունէին նրան:

Խէչոյին վերջին անգամ տեսել էի 1906 թ. աշնան վերջերին կայացած Ապառաժի Կ.Կ.-ի չրջանային ժողովում, որից յետոյ նա մեկնել էր Բագու և երբ Լիժինեան հալածանքներն էին սկսել, նա էլ բանտարկւել էր մի չարք ընկերների հետ, ապա Պետրոզրադի դատավարութեամբ[42] ենթարկւել պատժի, աքսորւելով Սիբիր: Շուրջ

---

[41] Արմենակ Բորեան. Յեղափոխական-քաղաքական գործիչ (1886-1918), Բաքւում խորհրդային իշխանութեան հաստատման մասնակից, Բաքւի Խորհրդի անդամ, թուրք-անգլիական ուժերի կողմից այդ իշխանութեան տապալումից յետոյ դնդակահարւել է Ստեփան Շահումեանի և միւս զեկավարների հետ միասին:

[42] Պետրոգրադի դատավարութիւնը. 1905-1907թթ. ու նրանից յետոյ սկսած զանգւածային բռնութիւնների ժամանակ բանտարկւած մի մեծ խումբ դաշնակցականների դատավարութիւնը, որը կայացաւ 1911թ. վերջերին, պետական դումայի յատուկ յանձնաժողովի առջև: 52 հոգի դատապարտւեցին բանտարկութեան, որոնցից 4ը տաժանակրութեան աքսորւեցին Սիբիր: Դատավճիռը համաձայն է համեմատարար մեղմ, չատերը արդարացւեցին, որովհետև, նախ՝ Ստոլիպինն արդէն չկար, սպանւել էր, և յետոյ՝ դատը պաշտպանում էին Ռուսաստանում ճանաչւած այնպիսի գործիչներ, ինչպիսին էին Ալ. Կերենսկին (Հետագայում Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութեան նախագահ), Պաւ. Միլիւկովը (Հետագայում արտաքին գործոց նախարար) և ուրիշներ: Կարեւոր դեր խաղաց և այն, որ կառավարութիւնը, քաղաքական նկատառումներով, այլևս չէր ուզում ճնշում

տասն ու մէկ տարի էր անցել, որ Խէչօին չէի տեսել, ուստի որոշեցի Պապաչայից իմանալ հասցէն և գնալ մօտը:

Յաջորդ օրը դուրս գալով տնից, ուղղուեցի ղէպի նաւթարդիւնաբերողների խորհրդի գրասենեակը՝ Պապաչայից իմանալու Խէչոյի հասցէն. համփին Մօլօկանսկայա փողոցով գնալիս, մէկ տնից յանկարծ ղէմս դուրս եկաւ Խէչօն: Մի քանի մետրից վաղէվաղ ընկայ գիրկը և պինդ ողջագուրուեցի հետը:

– Ե՞րբ ես եկել Շուշուց, ինչպէ՞ս են տղաները, ի՞նչ վիճակում է մեր չրջանը: Յայտնեցի, որ Շուշուց գնացել էի Թիֆլիս և այնտեղից հասել Բագու: Միասին գնացինք մեր կուսակցական հաւաքատեղին, որտեղ մանրամասն պատմեցի յեղափոխութիւնից յետոյ մեր չրջանում կատարուած կուսակցական և հասարակական իրաղարձութիւնների մասին, ապա յայտնեցի մեզ մեծ մտահոգութիւն պատճառող հարցի՝ ինքնապաչտպանութեան խնդրի լուծման համար մեր կատարած աչխատանքի մասին, որ անհրաժեչտ է իր ներկայութիւնը Ղարաբաղում, որպէս փորձառութիւն ունեցող և գործին քաջածանօթ մարդու:

Ամենայն մանրամասնութեամբ իր հարցումների չուրջ տւածս բացատրութիւնները լսելուց յետոյ զտաւ, որ իրօք մեր չրջանում ստեղծած կացութիւնը լուրջ է, մտահոգութիւն պատճառող, և որ ինքը մտածել էր նոյնը, անկախ մեզնից, և ցանկութիւն էլ ունեցել էր Ղարաբաղ գալու, ուստի մտածել էր այդ ուղղութեամբ, ազատուելու իր ստանձնած որոչ պարտականութիւններից և ընտանիքով փոխադրուելու Շուչի: Ինչ խօսք, որ ինձ չատ ուրախութիւն պատճառեցին Խէչոյի այդ ասածները. համոզուած էի, որ Շուշու մեր բոլոր ընկերները առանց բացառութեան, կուրախանան, երբ յայտնեմ իրենց այդ մասին: Սակայն մեզ չվիճակուեց Խէչոյին տեսնել մեր մէջ Ղարաբաղում, անցանկալի դէպքերը արագօրէն յաջորդաբար տեղի ունենալով, կտրուեցինք Բագուից, Խէչօն չկարողացաւ գալ և հետագային տաճիկների արչաւանքին դոհուեց ճակատում:

Դաչնակցութեան հաւաքատեղիում չարունակ եռուզեռ էր տիրում, մանաւանդ մեր երիտասարդների չնորհիւ, որոնց մեծ մասը ղանազան քաղաքների բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների՝ համալսարանների և ճեմարանների ուսանողներ էին, բանուորների մէջ քարոզչութիւն անողներ: Ուսանողներից մէկն էր և Աւետիս Նուրիջանեանը, որ պիտի ասել այն օրերի ամենաեռանդուն պրոպագանդիստներից մէկն էր և մի տեսակ էքստազի մէջ: Բուռն ոգևորութեամբ պատմում էր իր և իր

դործադրել Հայերի վրայ (արտաքին քաղաքական դաչտի վրայ Հայերի դերն սկսել էր աւելի կարևորուել): (Խմբ.)

հետ միասին ելոյթ ունեցած ընկերների մասին, թէ ինչպէս կարողացել են յաջող կերպով ընդդիմախօսել միւս հոսանքների պրոպագանդիստներին և բանւորութեան ճնշող մեծամասնութեան համակրութիւնը չահել: Եւ այդ Աւետիսը, 1921 թ. դարձաւ իսկական դահիճ, կացնահարել տւեց իր երեկւայ ընկերներին: Համազասպը, որ քանիցս բարիք էր արել նրան, երբ նա ճակատում կամաւորական գնդի հրամանատար էր, իսկ Աւետիսը սանիտար գնդի, մանաւանդ՝ Բագւում եղած ժամանակ, երբ կարիքի մէջ էր գտնւել, Համազասպի օժանդակութիւնն էր վայելել: Երբ Հայաստանը խորհրդայնանում է, Համազասպը գտնւում էր Բայաղէտում, որպէս հրամանատար սահմանապահ դօրամասի: Աւետիսը, որպէս զինւորական կոմիսար, խաբէութեամբ պաշտօն տալու պատրւակով, Համազասպին հրաւիրում է Երևան և բանտարկում ու հետագային, ուրիշ դաշնակցական ընկերների հետ կացնահարել տալիս: Իսկական ճիւաղ:

Դեկտեմբեր 18-ին Կ.Կ. -ի նիստն էր. ես էլ ներկայ եղայ նորութիւններ ու տեղեկութիւններ ստանալու և Շուշու ընկերներին հաղորդելու համար: Նիստին ներկայ էին ընկ. ընկ. Պապաչան, Մ. Գիւլլսանդանեանը, Յ. Քաջաղնունին, Ռ. Դարբինեանը, Ս. Արարատեանը, Ս. Յակոբեանը, Միս. Տ. Դանիէլեանը (Արամայիս), Խ. Միրզարէկեանը (Մածոն Խէչօ), Գէորգ Վարլամեանը:

Նախորդ օրը քաղաքային ինքնավարութեան նիստին Ալեօչա Ջափարիձէն յոխորտալից ելոյթ էր ունեցել, քննադատել միւս հոսանքներին որպէս բոլշևիկ և յայտարարել, թէ քանի որ գոյութիւն չունի ժամանակաւոր կառավարութիւնը, իշխանութեան գլուխ է անցած պրոլէտարիատը, որը իր կամքը կը պարտադրի, և Բագւի չրջանում ոչ մի հակառակ ոյժ չպիտի կարողանայ յեղափոխական կառավարութեան յառաջխաղացը խափանել:

Առարկողներ եղել են և ամէնից խիստ արտայայտւել է Քաջաղնունին, երբ Ջափարիձէն իրօնիայով հարց է տւել Քաջաղնունուն՝ "Ի՞նչ կարող էք անել դուք": Քաջաղնունին պատասխանել է՝ "մենք կը պայքարենք, կը կռւենք ձեր դէմ բոլոր միջոցներով՝ հրացանով, ռումբով և թնդանօթով": Բագւի մեր "Արև" թերթում ինքնավարութեան նիստի մասին յօդւած էր լոյս տեսել և լրիւ տրւած էր Քաջաղնունու ճառը:

Բագու լինելուց միչտ էլ այցելում էի Բժ. Լևոն Աթաբէկեանին, որը իմ կուսակցական ուսուցիչներից մէկն է եղել: Ճիչտ է, անձնատական չարժման գլուխ անցած, Հեռացաւ Դաշնակցութիւնից, սակայն իր ընկերական կապերը չէր խղել իր ընկերների հետ: Մէկ-մէկ լինում էր "Արև"-ի խմբագրատանը և այնտեղ, ղարաբաղցու հանդիպելիս, մեր բարբառով էր բարևում ու

հետը զրուցում: Մի անգամ ես էլ խմբագրատանն էի, եկաւ այնտեղ Աթաբէկեանը, ներս մտնելուն պէս, սկսեց հետս Ղարաբաղի բարբառով խօսել: Աբրահամ Գիւլխանդանեանը, անդրադառնալով մեր բարբառով խօսելուն, ասաց՝ "Ես տնաչէն ղարաբաղցիները և ղոկերը նեղէ տասը համալսարան էլ աւարտեն, իրար հանդիպելուց մէյտ իրենց բարբառով կը խօսեն": Աթաբէկեանը վրայ բերեց, թէ՝ "իսկական հայերէնը ղարաբաղցիերէնն է, որից դուրս բոլորը բարբառներ են": Ընկերները ծիծաղով ընդունեցին այս փոխաստացութիւնը:

ԴԷՊԻ ՂԱՐԱԲԱՂ . ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեկտեմբեր 19-ին պէտք է մեկնէի Բաղւից. արդէն հեռագրական տեղեկութիւններ էին ստացած, որ Շուշի-Ելալս խճուղին գարձեալ վտանգուած է: Ընկերները խորհուրդ տւին չչտապել և սպասել. թերևս խաղաղութիւնը կը վերականգնւի, յետոյ կը մեկնեմ: Երբ գնացի Բժ. Աթաբէկեանին հրաժեշտ տալու, ասաց, որ Թիֆլիսից, աղգային Բիւրոյից հեռագիր է ստացել՝ մեկնելու այնտեղ խորհրդակցական ժողովի. խորհուրդ տւաւ սպասել, միասին մեկնենք Բագւից Գանձակ, որտեղից ինքը կը չարունակէ ճամբան, ես կիջնեմ և Գանձակից լեռնային ճամբով կը վերադառնամ Շուշի:

Զնայած, որ տրւած խորհուրդները խելացի էին, բայց մի բան ներսից բթում էր կարծես, որ չսպասեմ, ճամբայ ընկնեմ: Փոքր քոյրս, Հայկանուշը, որ Բագւի օրիորդաց գիմնազիայի աշակերտուհի էր, հեռագրական լուրերից ահաբեկւած, նոյնպէս խորհուրդ էր տալիս և պնդում սպասել. բայց չեղաւ, որոշեցի մեկնել:

Ի դէպ, մեր կուսակցութեան համակիր Շուշեցի օրիորդներից մէկը՝ Նինա Հալսեանը, որ ուսուցչուհին էր անում Բագւում, չատ խնդրեց, որ ընկերանար ինձ, միասին վերադանալու Շուշի, որտեղ իր ծնողներն էին, որոնց հետ ընտանեկան մօտ ծանօթ բարեկամ էինք: Ես չէի համաձայնում, մտածելով, որ եթէ մի վտանգ պատահի, թերևս կարողանամ փախուստ տալ. եթէ օրիորդը հետս լինի, չի կարող ճամբայ կտրել տղամարդու պէս. ես էլ իրեն լքել չեմ կարող, ուրեմն, երկուսով պիտի աւաղակների ձեռքն ընկնենք: Կայարանում հրաժեշտ տալով քրոջս ու Օր. Հալսեանին, մեկնեցի Ելալս, մտածելով, որ եթէ իրօք խիստ վտանգւած լինի ճամբան, կերթամ Գանձակ և այնտեղից լեռնային ճամփով՝ Շուշի: Հետագային, երբ տաճիկները գրաւեցին Բագուն, իրենց հետ Բագւի

ընակիչների համար նէր բերած իսպանկա[43] հիւանդութիւնը համաճարակի ընոյթ ստացաւ, Օր. Հակնանը զոհ գնաց իսպանկային: Ճիչտն ասած, խղճի խայթ էի զգում, թէ ինչու մերժեցի, չուղեկցեցի, թերևս Շուչում ևերծ կը մնար հիւանդութիւնից ու չէր վախճանի վաղաժամ:

Գնացքի մէջ հանդիպեցի ղարաբաղցի/Մմակահող գիւղացի/ սպայ Սիմոն Պօղոսեանին, Գէորգեան չքանչանակիր, որ արևմտեան ճակատում էր եղել, վերադառնում էր Ղարաբաղ: Վագոնները լեփ լեցուն էին, հազիւ կարելի եղաւ տեղ գրաւել: Երկու-երեք կայարան անցած, վագոնի ճրագները մարեցին: Վագոնի ճրագները նաւթ չէին ունեցել բաւարար չափով: Անիչխանութիւն էր, ինչպէս կասեն, չունը տիրոջ չէր ճանաչում, երկաթուղու ծառայողները սանձարձակ դարձած:

Լուսաբացին հասանք Եւլախ, կայարանի չէնքը լեփ լեցուն էր մարդկանցով, մեծաւ մասամբ Թուրքեր և Հայեր, Բագու և Թիֆլիս գնացող ճամբորդներ, որոնց մէջ նկատեցի մեր ընկերներից ներկայացուցիչ Վալօղիային, որը չտապ մօտեցաւ և յայտնեց, որ Աղդամի և Բարդայի/Հին Պարտաւի/ միջև ճամբան աւազակները բռնել, ճամբորդներին անխտիր, Հայ թէ Թուրք, բոլորին կողոպտում են, ընդդիմացողների հետ չատ խիստ վարուում, նոյնիսկ սպանում: Եթէ կողոպուտով բաւարարուում են, ասացի, կը նչանակէ, հնարաւոր է, ունեցածից զրկելով, ճամբան չարունակել: Ես ուսանող մարդ եմ, վկայականս էլ գլխարկս է ուսանողական, որքա՞ն զրամ կարող է ունենալ ուսանող մարդը, արժէքաւորը՝ մէկ զամբիւղ լիքը գրքերն ու բրօշիւրներն են, որ Բագւի ընկերները նւիրել են մեր գրադարանին, եթէ առնեն, պիտի չատ ափսոսամ և ցաւեմ, որ ընկերների նւէրից զրկուում է մեր գրադարանը:

Վալօղիան և մի խումբ ուրիչ հայեր իրենց գործերով Բագու էին գնում: Կայարանում կային նաև արևմտեան ճակատից տուն դարձող եօթանասուն և հինգ հայ զինուորներ, որոնցից միայն երկու հոգի անդէն էին, իսկ միւսները ուինաւոր հրացաններով զինուած: Նրանք մեզնից երեք ժամ առաջ, ուրիչ գնացքով էին եկել: Տեսնելով զինուորներին, Սիմոնն ու ես ուրախացանք, որ ճամբան ապահով կերթանք զինուորների հետ միասին: Մօտեցանք զինուորներին, որոնք համախումբ զրաւել էին սրահի մէկ մասը: Մի քանիսը ինձ լաւ ծանօթ գիւղացիների որդիներն էին, որոնք պատմեցին, թէ ինչպիսի դժուարութեամբ են ճամբայ կտրել, օրերով կայարաններում ուչանալով և փոխանակ հինգ օրւայ, տասներկու օրւայ ընթացքում են հասել Եւլախ:

---

[43] Իսպանկա, Գրիպի ծանր տեսակը, որի համաճարակը 1918-1919թթ. ընդգրկել էր բազմաթիւ երկրներ: Առաջին անգամ նկարագրել է Իսպանիայում, որի հետ էլ կապած է անուանումը: (Խմբ.)

Սիմոնը դինուորներին բացատրեց, որ պէտք է պատերազմական կարգով չարունակէինք ճամբան, քանի որ աւազակախմբերը սովորաբար ամէնաչատը 10-15 հոգուց էին բաղկացած լինում, հետից կը տեսնեն որ մենք չատ ենք իրենցից, չեն համարձակւի մօտենալ: Պէտք է կառքերը վարձենք այն հաշւով, որ իւրաքանչիւրում երկու հոգի նստեն և կառքերը իրար ետևից, մէկը միւսից 10-20 մետր հեռաւորութեան վրայ, թւով մեծ երևալու և տպաւորութիւն թողնելու համար:

Ճամբայ ելնելու հարցը որոչւած էր, մնում էր կառքերը վարձել, բայց Եւլախում այդ գործով զբաղւող միակ գրասենեակը, որի տէրը հայ էր, բացակայ էր, տեղին ծանօթ ուրիչ հայ չկար: Հէնց այդ մասին էինք մտածում, երբ մօտեցան մեզ երկու թուրք, աղղամցիներ, ծանօթացանք, մէկը սեյիդ[44] էր, թրքական դպրոցի ուսուցիչ, իսկ միւսը խանումպան: Իմացան, որ Շուշի գնացողներ ենք, ցանկութիւն յայտնեցին, որ միասին ճամբայ գնանք: Պարզուեց, որ նրանք էլ մեզնից առաջ էին հասել Եւլախ և տատանւում էին՝ չարունակել ճամբան, թէ՞ ոչ: Զրոյցի ընթացքին յայտնի եղաւ, որ Հօրեղբօրս՝ Աբրահամ-բէկի լաւ ծանօթ բարեկամներն էին: Հօրեղբայրս, որպէս գիւղագործ, երկար տարիներ Աղղամում եղել է Խուրլարեան եղբայրների կոնեակի և այլ խմիչքների գործարանի կառավարիչը: Գործարանին խաղող մատակարարողներից են եղել սեյիդն ու խանումպանը:

Կառքեր վարձելու պարտականութիւնը սեյիդն ու խանումպանը ստանձնեցին: Ասացին, որ մեծ թւով աղղամցի և նրա մօտակայ գիւղերից կառապաններ կան, որոնք վախենում են ճամբորդներ տանել, սպասում են խաղաղ ղրութիւն ստեղծւի, որ գործի անցնեն: Կառապանները վարձով աշխատող մարդիկ են, իսկ կառքերը պատկանում են մի ընկերութեան, կազմւած չուշեցի և աղղամցի թուրքերից, որոնք չատ խստապահանջ են, ուստի կառապանները խիստ զգոյշ են, որպէսզի գործատէրերին չբարկացնեն և ծառայութիւնից չղրկւեն: Բայց քանի որ օրթանասուն հոգուց բաղկացած դինուրական խումբը կայ, կառապանները չեն վախենայ, բոլորիս կը տանեն, ինչպէս ասացին սեյիդն ու ընկերը: Գնացին կառապանների հետ խօսելու: Զինուրներին Սիմոնն ասաց, որ իրենց նախաճաշն աննի, պատրաստ սպասեն, մենք էլ ուղղւեցինք դէպի բուֆետը՝ մեր նախաճաշն աննելու:

[44] Սեյիդ՝ արաբերէն՝ պարոն. պատւաւոր տիտղոս մուսլմանների մօտ: Միաժամանակ նշանակում է Մարդարէի տոհմից(Խմբ.)

Մի ժամ չանցած, սէյիդն ու ընկերը եկան, յայտնեցին, որ կառքեր չատ կան և կառապանները համաձայն են բոլորիս տանելու, առանց չարաչահութեան, սովորական արժէքով:

Կէս ժամ անց կառքերը եկել, չարք-չարք, կայարանից սկսած, խճուղու երկայնքին կանգնել, մեղ էին սպասում: Սիմոնը մէկ դինուորի հետ նստեց առաջին կառքը, ետևի 18-րդ կառքը, մեկ դինուորի հետ՝ ես. 19-րդը սէյիդն ու խանութպանը, իսկ ամէնավերջինը, աւազ. ննթասպայի աստիճանով դինուորը՝ մեկ ընկերոջ հետ միասին և ճամբայ ընկանք, ճիչտ այնպէս, ինչպէս Սիմոնը կարգադրել էր, մեկ կառքը միւսից 20-30 մետր հեռաւորութեան վրայ:

Մինչև առաջիկայ կայանը՝ Բարդա, 20-30 վերստ էր: Մեր կառապանը չատ տպաւորիչ էր, ինչպէս ասում էին սէյիդն ու խանութպանը: Եւ իրօք, մօտ 350 մետր երկարութեամբ կառապանը չարժւում էր առաջ, գինուորները հրացաններն իրենց առջևը, յենած կառքի յատակին, ուղղահայեաց. արևի տակ սվիններն փայլփլում էին և հէնց ամէնից տպաւորիչը սվինների փայլփլելն էր: Ճամբին մի քանի աւազակախմբեր, տարբեր տեղերում, իրարից հինգ-վեց վերստ հեռու, փորձեցին մօտենալ, օդի մէջ կրակելով, դիմոնստրացիաներ արին, բայց, համաձայն Սիմոնի կարգադրութեան, գինուորները հանգիստ էին և ուշադրութիւն չէին դարձնում: Միայն մէկ տեղ, մինչև Բարդա ճանապարհի կէսը անցած, մի համեմատաբար աւելի մեծ խումբ երեք-չորս վերստ հեռաւորութիւնից սկսեց հրացան արձակել և միաժամանակ իմբուվին աղաղակել: Երբ խումբը սրարշաւ դիմեց դէպի մեզ աղաղակներով և հրացան արձակելով, Սիմոնը ձայն տուաւ կանգնել. կառապանը կանգ առաւ, գինուորներն իջան ցած և Սիմոնի .տւած նշանով համաղարկով պատասխանեցին աւազակախմբին: Աւազակների արձակած գնդակների սուլոցը արդէն մեր գլխի վրայից լսելի էր: Սիմոնը երկրորդ անգամ հրահանգեց կրակել, ուղիղ նշան բռնելով: Երկրորդ համազարկին խումբը ուղղուեց դէպի յետ և արագ անհետացաւ:

Արևը բաւական բարձրացել էր, երբ հասանք Բարդա, որտեղ խճուղու վրայ չայչիխանաները[46] կային. որոշուեց մի-մի բաժակ թէյ խմել ու չարունակել ճամբան: Չայչիխանաներից մէկից յանկարծ մեր դէմն նյաւ մեր ընկերներից մէկը՝ Մամիկոնեան Ռուբէնը, Կովկասեան ճակատի դինուորներից. գունդը հանգստի ուղարկած լինելով Լոպոտկին (Վրաստան), արձակուրդ էր վերցրել, հանգստի ժամանակամիջոցը հարազատների հետ անցկացնելու. հասել է Բաթում և երկու օր է չէր կարողանում համոզել կառապանին՝

[46] Թէյատուներ: (Խմբ.)

չարունակելու ճամբան, քանի որ չէր ուզում վտանգի ենթարկուել: Նրան վերցրի իմ կառքի մէջ: Լաւ էր, կարողացել էր Հետը տասնոց ունենալ, հազուստի տակից խրած գօտին:

Ռուբէնը յայտնեց, որ ճամբին մի մեծ աւազակախումբ յարձակուել է փուրգոնչիների կարաւանի վրայ: Փուրգոնչիները դիմադրութիւն են ցոյց տուել, բայց չեն կարողացել կասեցնել աւազակներին, որոնք փուրգոններից մէկում եղած մանուֆակտուրայի ապրանքը ամբողջովին թալանել էին: Բանը նրանում է՝ որ աւազակները խստութիւն չէին դնում Հայի և Թուրքի միջև: Փուրգոնչիներն սկզբում փորձել են խաղաղութեամբ վերջացնել գործը, այսինքն՝ մի գումար տալով գլուխներն ազատել. այդ նպատակով ճամբորդ մի Թուրք կնոջ, ծծկեր երեխայով միասին, ուղարկում են աւազակների մօտ՝ լուր տալու, որ համաձայն են իրենց պահանջը բաւարարելու դրամով, ուստի աւազակներից մէկը գայ իրենց մօտ: Աւազակները չարունակում են հրացանաձգութիւնը և կամաց-կամաց չարժւում դէպի փուրգոնները: Աւազակների արձակած գնդակներից դիպչում են կնոջն ու երեխային, որոնք տեղնուտեղը մահանում են: Արձակւած գնդակներից բաւական ձիեր են սպանուում: Եւ երբ աւազակները հարուստ աւարով հեռանում են, նոր միայն հասնում է Թարթառի կոմիսարը՝ իր ձիաւորներով:

Ռուբէնի հետ միասին գնացինք կոմիսարի մօտ. ծանօթացանք: Թարթառեցի երիտասարդ Թուրք էր՝ Ուղուրլուբէկ Ուղուրլուբէկով անունով: Սա ուրախութիւն յայտնեց, որ մեզ հետ եօթանասուն սւինաւոր հայ զինուորներ կան, ապա ասաց՝ "ինձ հետ այժմ 150 ձիաւոր միլիցիօներներ եմ բերել աւազակներին հետապնդելու նպատակով. նրանք արդէն այնքան են սանձարձակ դարձել, որ իշխանութիւնների դէմ էլ են գործում. եթէ ճամբաներին թուով գերազանցում են միլիցիօներներին, այլևս աչ ու ձախ չեն նայում: Նրանք Խաչէն – Թարթառ գետերի միջև եղած տարածութեան վրայ են գործում. մենք էլ 150 հոգով ձեզ հետ միասին կը լինենք. երբ աւազակները մեր դէմ ելնեն, կը կարողանանք չրջապատել և բոլորին զինաթափ անել":

Սիմոնը համաձայնեց, ասելով՝ "Թող աւազակները փորձեն մեզ կողոպտել, մի լաւ դաս կը տանք նրանց":

Կէս ժամ հանգստանալով, ճամբայ ելանք, Ուղուրլուբէկն էլ իր 150 ձիաւորներով, անցանք Թարթառ գետից և կանգ չառանք մինչև Քեօչաղու կոչւած կայանը, որ գտնւում է Խաչէն գետի աջ ափին:

Քեօչաղուին հաղիւ մէկ վերստ մնացած, ճամբի եղերքին տեսանք սպանւած 12 ձի: Երբ հասանք Քեօչաղու, տեղեկացանք,

որ աւաղակները յարձակւել են փուրգոնչիների կարաւանի վրայ. Հարիւրի չափ բարձած փուրգոններ են եղել. ահագին թալան են կատարել, 14 հոգու վիրաւորել և 5 հոգու սպանել: Սպանուածներից մէկը Խաչէնի շրջանի գիւղերից էր. երկու հոգի էլ վիրաւոր, մէկը ուսանող, չուչեցի, Մեղրեցոց եկեղեցու քահանայի՝ Տէր Մինասի տղան, միւսը Վարանդայի Սօս գիւղացի: Կային և ճամբորդներ, չուչեցիներ, գիւղացիներ:

Բարերաստարար, Քեօչաղուում գործում էր 30-35 տարեկան մի թուրք փելտչէր, Ուսուր անունով, որ բարի մարդ էր երևում, անխտիր բոլոր վիրաւորներին բժշկական օգնութիւն էր ցոյց տալիս իր ունեցած հնարաւորութեան սահմաններում: Բոլոր վիրաւորները մէկ մեծ սենեակում էին, պառկած գետնին, իրենց հագուստներով, մահճակալի, տեղաչորի և այլ յարմարութիւնների մասին, ի հարկէ, մտածելն էլ աւելորդ էր:

Կէս ժամ չէր անցել, ինչ հասել էինք Քեօչաղու, և մտածում էինք վիրաւորներին Աղդամ փոխադրելու մասին, որ հազիւ 15 վերստ հեռու էր, երկու ժամւայ ճանապարհ, մէկ էլ ուժեղ հրացանաձգութեան ձայն լսեցինք հեռուից, որ մօտենում էր կամաց-կամաց: Մեր զինուորները Սիմոնի հրահանգով իսկոյն պառկեցին չարքով, պատրաստ վիճակում: Խաչէն գետի երկայնքին թրքական գիւղերի այգիներն են, որոնք փակում էին հորիզոնը, հեռուները տեսնել հնարաւոր չէր: Խնդուղու վրայ երևաց փուրգոնների մի չարք, որ արագ գալիս էր մեր կողմը, փոշու ամպ բարձրացնելով: Եկան, փուրգոնները հասան մեզ, կառապանները հևիհև պատմեցին, որ հսկայ մի աւաղակախումբ կուի է բռնւել մեկ ուրիշ խմբի հետ, իրենք հազիւ կարողացել են փախչել, ազատւել թալանելուց:

Սիմոնի հետ մտածում էինք՝ ինչ անել, երբ հորիզոնի վրայ, չարք կազմած, հարիւրից աւելի ձիաւորներ, դէպի մեզ էին գալիս հրացան արձակելով: Սիմոնը տղաներին հրահանգեց պատրաստ լինել: Սիմոնը հրահանգները տալիս էր ռուսերէն, և երբ կրակելու պահը հասաւ, Սիմոնի հրահանգին հետևեց զինուորների միահամուռ համազարկը: Համազարկ տւին և Ուղուրլուբէկովի ձիաւորները, որոնք մեր աջ կողմն էին բռնած: Աւաղակախումբը կանգ առաւ ու չարունակեց հրացանաձգութիւնը անկանոն համազարկներ տեղալով: Սակայն աւաղակախումբը դնալով մեծանում էր և պարզ նկատւում էր այդ: Մենք փախչելու ոչ տեղ և ոչ էլ հնարաւորութիւն ունէինք: Երբ հրացանաձգութիւնն ուժեղացաւ, ճամբորդ չուչեցիներից երկու հոգի կարողացան գետն ի վեր գնալ դէպի հայկական գիւղերը: Նրանց գնալը ոչ ոք չի իմացել, բայց այդ մասին յետոյ:

Այո, պարզ տեսնում, նկատում էր, որ աւազակախումբը րոպէներով խտանում, ծաւալւում էր: Աւազակախումբը կրկնապատկել, թերևս քառապատկել էր, մէկ էլ տեսանք, Ուղուրլուբէկը իր ձիաւորներով անյայտացաւ,դլխապատառ փախչում էին յետ, և ինչպէս ֆելդչէր Ուսուբի մօտ էր արտայայտւել, կրկնում էր "Ջանըմ, երկու հարիւր հոգով ինչ կարող ենք անել երեք հազարի դէմ":

Մնացինք հայերս 75 հոգով, եռապատիկ ուժի դէմ: Զինւորներից մէկը թևից թևին վիրաւորւել էր. տարայ ներս, ֆելդչերի մօտ թևը կապելու, հրացանը Սիմոնը պահեց իր մօտ: Ներս գնացինք վիրաւորների սենեակը, որտեղ ֆելդչերն էր, մեղ հետ եկած սէյիդի և խանութպանի հետ, կուչ եկած: Ֆելդչերն անմիջապէս վերջին ուննցած վիրակապով կապեց զինւորի վէրքը. գնդակը մսից էր անցել, ոսկորն անվնաս էր:

Սէյիդը գարձաւ ինձ՝ "ահա և մեր ձեռք բերած աղատութիւնը: Սա էլ կեանք է, որ ստեղծել է մեղ համար: Նիկալային թախտից գցեցին ցած, լաւ, իսկ աւազակներին էլ բաց թողեցին մեր ջանին: «Ջանըմ, բու հիւրիաթ դայիլ, խարիաթ դըր (սա աղատութիւն չէ, այլ էչութիւն): Նիկալայն էր, որ էս էչերի հակիցը գալիս էր, հիմա սրանց սանձը քաշող չկայ, ով գիտէ, թէ դեռ ինչ օրեր պիտի տեսնենք»:

Յեղափոխական լինելով հանդերձ, տեղի ուննցած փետրուարեան յեղափոխութեամբ տարւած, ոգևորւած չեմ եղել, ինչպէս շատ դաչնակցականները, թողած մի կողմ անկուսակցական և բուրժուական մտաւորականներին, որոնք բոլորը դէմ են եղած, նկատի ուննալով միայն մեր ժողովրդի բացառիկ պայմանների մէջ գտնւած լինելը: Սակայն և փաստը անհերքելի է, որ յեղափոխութիւնն էլ պրղիւնքն էր նիկալայների հակաժողովրդական, հակամարդկային կարգերի: Եթէ Ռուսական առաջին յեղափոխութեան հետևանքով ստեղծւած Պետական Դուման իսկական ժողովրդական խորհրդարան դարձած լիներ և նախարարները պատասխանատու լինէին Դումայի առջև, որպէս վերջինի կողմից ընտրւած մարդիկ, իսկական սահմանադրական կարգեր հաստատւած լինէին, հաւանօրէն տեղի չէր ունենայ երկրորդ յեղափոխութիւնը, որը յանգեց բոլշևիկեան յեղաշրջման, որի հետևանքը եղաւ ստեղծւած անիշխանութիւնը, որի մէջ տապակւում էին ժողովուրդները: Սէյիդին այսպիսի առարկութիւն անելը օգուտ չունէր, այն էլ այդ պահին, երբ բոլորը մէկ բանի մասին էին մտածում՝ որևէ ձևով աղատւել կողոպուտից, առաւել ևս էչ նահատակ չդառնալ: Զինւորի հետ վերադարձանք "ճակատ", որ հաղիւ հարիւր յիսուն քայլ հեռու էր վիրաւորների սենեակից: Երբ կուզէկուզ հասանք տեղ, տեսնենք, Սիմոնը և հրահանգ էր տալիս համադարկի և ինքն էլ հրացանով կրակում: Վիրաւոր զինւորները

պառկել էին Սիմոնի կողքին: Նրանցից մէկը ասում է, որ թեւի վէրքը թեթեւ է, որ հրացանը տայ իրեն, բայց Սիմոնը ուշադրութիւն չի դարձնում, քովը միւս կողմին պառկած ղինուորից փամփուշտ էր ուզում կրակելու համար: Մօտեցայ Սիմոնին, ասացի՝ "Սիմոն, բոլորը իրենց յոյսը քո վրայ են դրել իբրև ղեկավարի, եթէ պիտի հրացան արձակելով տարուես, ուշադրութիւնից կը վրիպի կատարելիք որևէ անհրաժեշտ բան. աւելի լաւ է, հրացանը տաս ղինուորին և միայն քո դերի մէջ մնաս":

Տեսնում էինք, որ բացի ձիաւոր աւազակներից, առջևից ընթանում էին ղէպի մեզ նաև հետևակներ: Մէկ էլ տեսանք, որ աւազակները արագացրին իրենց ընթացքը և Սիմոնի տւած նշան բռնելու հրահանգից պարզուեց, որ 1200 քայլի վրայ են: Սիմոնը հրահանգեց՝ "Տղերք, նշան բռնէք ուղիղ ձիերին. երբ կանգ չառնեն, աւելի առաջ անցնեն, խփէք և իրենց":

Սիմոնի հրահանգով տղաները միահամուռ մի քանի համազարկ տեղացին արագօրէն: Տեսնում էինք, թէ ինչպէս ընկնում էին ձիերը և ձիու տակից բարձրացողը չոքելով, մի քանի անգամ կրակում առաջ էր գալիս: "Տղերք, չվնասել, խփէք չան որդիներին. տեսնում են, որ քիչ ենք, երես են առել":

Տղաների համազարկներից ընկնում էին մարդիկ, սպանւած կամ վիրաւոր: Մէկ էլ գնդացիրի ձայն լսեցինք, բաւական հեռուից: Սիմոնը մի տեսակ սթափւածի պէս ականջները սրեց մի պահ և ասաց, "Զլինի՞, թէ, այս սրիկաները գնդացիր էլ ունեն, իրենց թիկունքի պահեստի մարգկանց մօտ, որոնք մեզ վախեցնելու և իւրայիններին ոգևորելու համար կրակեցին: Միևնոյն է, մէկ ժամից աւելի է, ինչ կռւում ենք, բացի մէկ վիրաւորից, սպանւած չունենք. նրանք մեր տղաների պէս նշան խփել չեն կարողանում, տեսնում ես, նրանց գնդակները մեր վրայից, բարձրից են անցնում կամ քսան-երեսուն արշին մեր առջև գետինը խրւում. մեռնել կայ, անձնատուր լինել չկայ": Ապա ղարձաւ տղաներին՝ "Տղերք, լաւ նշան բռնէք, գնդակը զուր չանցնի":

Բայց յանկարծ տեսանք աւազակները հետևակ թէ ձիաւոր երկու մասի բաժանւեցին. մի մասը գետի հոսանքն ի վեր, միւս մասը հոսանքն ի վար. Սիմոնն ասաց՝ "ինչպէս երևում է, չան որդիներն ուզում են մեզ չրջապատել", ապա կարգադրեց, որ տղաների մի մասը հակառակ ուղղութեամբ, հարիւր քայլ հեռաւորութեան վրայ չարք կազմած պառկի և սպասի հրահանգի:

Գնդացիրի ճարճատիւնը արդէն չատ էր մօտեցել. մէկ էլ տեսանք երկու ֆուրգոն սլանալով ղէպի մեզ են գալիս. երբ հասան

մեզ, փուրգոններից մեկից արագ իջաւ մի ռուս կին և մօտեցաւ ինձ, բռնեց թևս ու ասաց՝ "պարոն ուսանող, ի սէր Աստծոյ, ի սէր Քրիստոսի, բարի եղէք մեզ փրկելու": Միւս փուրգոնից էլ իջաւ մի սպայ:

Սիմոնը, որ նոր չարք բռնած զինուորների հետ էր, եկաւ մեզ մօտ: Տիկնոջից հարցրի՝ "Տիկին, կարելի՞ է իմանալ՝ ո՞վ էք և որտեղի՞ց էք գալիս":

-Ես սահմանապահ վեցերորդ գնդի հրամանատար փոխգնդապետ Բելիաևի կինն եմ:

- Որտե՞ղ է գնդապետը:

- Գալիս է գնդի հետ միասին. ճամբին մեր առջևը մի տեղ փակեցին աւազակները, որ հաղարից աւելի էին, ուզում էին զինաթափ անել զինուորներին, բայց չկարողացան, որովհետև գնդացիրները գործի ղրին, և նրանք բաւական զոհեր տալով փախան:

- Տիկին, հանգստացէք. դո՛ւք պէտք է փրկէք մեզ և ո՛չ թէ մենք ձեզ:

Այդ միջոցին մօտեցաւ միւս փուրգոնից իջած սպան և ասաց խիստ յուզուած՝ "այս սրիկաներին պէտք է այնպէս պատժել, որ չհամարձակուեն փորձ անել ռուս զինուորից ղէնք խլելու":

Հէնց այդ պահին երեացին ուրիշ փուրգոններ, որոնցից իջան ռուս զինուորներ "Մաքսիմ" սիստէմի գնդացիրներով, որոնցից կրակելիս են եղել փուրգոնների վրայից, երկու իրար հակառակ ուղղութեամբ, ինչպէս յայտնեց ռուս սպան: Գունդը չրջապատելու առաջին փորձը տեղի է ունեցել Կարեագինից Աղդամ գալու ժամանակ, զրեթէ կէս ճամբին, երկրորդ փորձը Աղդամից յետոյ, ճամբի մեծ մասը անցած միջոցին: Սպայի պատմածից Սիմոնն ու ես հասկացանք, որ զինաթափման փորձ անողները սոսկ աւազակներ չեն եղել, այլ թուրք զիւղացիները ղանգւածօրէն. աւազակախմբերը փոքրաթիւ կազմ ունեն, մինչդեռ հազարաւոր մարդիկ են եղել զինաթափման փորձ անողները, հրազէն և սառն ղէնք ունեցողները:

Զինուորները չորս հատ գնդացիր ունէին, իջնելուն պէս գետի աջ ափի տարածութեան վրայ, երկուսը ուղղեցին գետի հոսանքն ի վեր, երկուսն էլ հոսանքն ի վար և սպասողական վիճակում էին: Մէկ էլ տեսանք, ահագին բաղմութիւն զինուած թուրքերի, որը սկսեց կրակել զինուորների վրայ: Ինչպէս երևում էր, թուրքերը փորձ էին անում գնդացիրները խլելու, բայց զինուորները գնդացիրները գործի ղրին և սկսուեց մարդկային հունձը: Թուրքերը փախուստ տուին մի մասը ղէպի վեր և միւս մասը ղէպի վար: Միաժամանակ լսւում էր մօտեցող համաղարկների ու գնդացիրների ձայնը: Ռուս սպան, որ

ղեկավարում էր զնդացիրների դինուորներին, եկաւ մեղ մօտ, զարձաւ տիկնոջը, թէ՝ «արդէն գունդը զալիս է» : Եւ իրօք, չուտով երևաց զնդի առաջամասը, և չատ չանցած եկաւ գունդը: Մանօթացանք զնդապետ Բելիաևի հետ, որ հաղիւ յիսուն տարեկան, առողջակազմ մարդ էր:

Այդ միջոցին փելդշեր Ուսուրը մօտեցաւ ինձ և կամացուկ ասաց, որ եթէ կարելի է, խնդրեմ զնդապետին, զնդի ունեցած ւօղից և վիրակապերից մի քիչ տայ, որովհետև իր մօտ եղածը վերջացել է, պէտք է վիրաւորների կապերը փոխուեն, բայց մաքուր վիրակապեր չունի:

Գնդապետին մի քանի խօսքով պատմեցի ճամբին տեղի ունեցածը և խնդրեցի, որ եթէ հնարաւոր է, ւօդ ու վիրակապեր տրամադրէր: Գնդապետը սիրով ընդառաջեց և կարգադրեց զնդի փելդշերին մի սրսակ ւօդ, բամբակ և վիրակապեր տալ Ուսուբին:

Կարևորը մեր հարցն էր, որ արդէն Սիմոնի հետ որոշել էինք, որ հրացանաւոր դինուորները Սիմոնի հետ միասին միանան զնդին, զնան Եւլախ և այնտեղից Գանձակ, լեռնային, ճամբով անցնեն Ղարաբաղ, իսկ ես անդէն, մեղ հետ և մեղնից առաջ եկած մի քանի անդէն դինուորների և ճամբորդների հետ գնամ Աղդամ: Այնտեղ զաւառակի կոմիսար էր ընտրուած Իլդրըմ Շիրինբէկովը, որին զիտէի և ճանաչում էի յեղափոխութիւնից առաջ, պարսկական սահմանադրական կռիւների ժամանակներից, երբ քառասուն հոդի թուրք կամաւորներով անցել էր Պարսկաստան, Թաւրիզ, և միացել Քեռու խմբին, չցանկալով միանալ Սաթտար Խանի կամ մէկ ուրիշի խմբին: Վստահ էի, որ Իլդրըմը մարդիկ կուղարկէր ոչ միայն թուրք, այլ բոլոր վիրաւորներին ու սպանուածներին փոխադրելու Աղդամ, որտեղից դէնը հեչտ էր: Սիմոնը խօսեց զնդապետի հետ, որը սիրով ընդունեց մեր դինուորներին, Սիմոնին ասելով՝ "Գունդը աւելի կուժեղանայ և եթէ ճամբին նոր ընդհարումներ լինեն, անիծւածներին լաւ դաս տալով կերթանք":

Սիմոնն ու դինուորները զնդին միացան, զնացին: Կէս օրից անց էր, ժամը չորսը չէար ղեռ, յոյսս սեյիդի և փելդշեր Ուսուրի վրայ էի դրել, որ նրանց միջոցով համոզենք կառապաններին՝ մեղ տանելու Աղդամ: Սեյիդը և Ուսուրը ընդառաջեցին, խօսեցին կառապանների հետ, և սրանք համաձայնեցին: Հէնց էն էր, պատրաստուած սպասում էինք, որ կառքերը դուրս բերէին քարւանսարայի բակից, նստէինք ու չարունակէինք ճամբան սեյիդի առաջնորդութեամբ, դինուած թրքական մի մեծ խումբ, Աղդամի չրջանի գիւղացիներից, Ալիչ Բէկի գլխաւորութեամբ, սրարչաւ ցցւեցին մեր առջև: Սրանք օգնութեան էին եկել թրքական այն բաղմութեանը, որ զանազան բէկերի առաջնորդութեամբ փորձ էր արել Բելաևի գունդը դինաթափելու, բայց ուչացել էին: Ալիչ Բէկին

ճանաչում էի, նա էլ ինձ գիտէր Շուչուց, ուր ամարանոց գալու սովորութիւն ունէր և հայերի մէջ երևալու՝ ընծայագում կամ հասարակական ակումբներում: Գնդեցիկ տղամարդ էր, բարձր հասակով ու լաւ կազմուածքով: Ալիչ Բէկի մարդիկը հեռու կանգնած, անդէն, տուն վերադարձողների կապոցներն էին քակում, խուզարկում, ղէնք գտնելու դիտաւորութեամբ, սակայն տեսայ, որ դինուորների մօտ գտնուած չաքարը և սպիտակեղէնը յափշտակում են, ուստի դիմեցի Ալիչ Բէկին, նրա ինքնասիրութեանը դիպչելու փորձ անելով: "Ալիչ Բէկ, դուք լաւ գիտէք, որ ամբողջ Ղարաբաղը, հայ, թուրք ձեզ չատ լաւ են ճանաչում. իմ կարծիքով, լաւ չէ, որ ձեր մարդիկը ռազմաճակատից վերադարձող դինուորների ունեցած չնչին բանները խլում են. մարդիկ առանց այն էլ չատ զրկանքներ են կրել և իրենց խնայած բանները տանում են հարազատներին ուրախացնելու: Ի հարկէ, ամէն տեղ իմանալու են, որ ձեր մարդիկն են դինուորներից խլել նրանց չնչին բանները: Վատը և ցաւալին այն է, որ միաժամանակ, պիտի ձեր անունն էլ յիշեն, թէ ձեր մարդիկն են եղել և իրը ձեր օգտին են արել":

Ճառս իւր ազդեցութիւնն ունեցաւ և նա զարձաւ իւրայիններին ու խիստ տոնով կարգադրեց, որ ով ինչ վերցրել է, վերադարձնի: Բացի այդ, դինուորներին մէկ մէկ հարց տուաւ, թէ ումից ինչ է վերցուած: Երբ կողոպուտը վերադարձրին, մի նոր միտք յղացայ, ասացի՝ "Ալիչ Բէկ, Բարդայից մեզ հետ միասին էր եկել Ուղուրլուբէկը, իր հարիւր յիսուն ձիաւորներով, բայց վերադարձաւ Բարդա, որտեղ պիտի մեծ թիւով դինուած մարդիկ կենտրոնանան ռուսներին դինաթափելու համար: Պարզ է, ի հարկէ, 150 հոգով դժուար է գործ տեսնել":

Խելքին պառկեց ասածս և յիսունի չափ իւր դինուորներով ուղղուեց դէպի Բարդա: Երբ Ալիչ Բէկը գնաց, Սէյիդն ասաց՝ "Սրիկաներից մէկը հէնց էդ Ալիչ Բէկն է, որ ամբողջ կեանքը աւազակութեամբ է ապրել: Հայրը խաղաղ մարդ էր, բայց սրա կատարած անիրաւութիւններից բոլորը զզւել են և անիծում են":

Վերջապէս համբայ ընկանք: Ճամփի կէսից աւելին անցել էինք, արևը մայր էր մտնում, երբ յանկարծ խճուղու երկու կողմից դուրս եկան հրացանաւոր մի խումբ աւազակներ ու պահանջեցին տալ իրենց, ինչ որ ունենք: Աւազակները յափշտակելով սէյիդի և խանութպանի երկու մեծ խուրջինները՝ լիքը կտորեղէնի թուփերով, ասլա իմ զամբիւղը զրքերով: Զինուորների ցեխոտ քսակներին ձեռք չտուին, չտապով ուղում էին հեռանալ: Սէյիդը, յենուած իր կանաչ գօտիի զօրութեան, սկսեց խիստ յանդիմանել ու կչտամբել աւազակներին, որոնք վեց հոգի էին, թէ ինչու նամարդութիւն են անում, խաղաղ անցորդներին կողոպտում են. Աստուած կը պատժէ իրենց:

– Թող պատժէ, ասում է հրացանաւոր յաղթանդամ մէկը և քաչում խուրջինը, որ կառքի մէջ, Սէյիդի առջևն էր:

– Ես Սէյիդ, մարգարէի սերնդից լինելով, համարձակւում ես խլել ինձնից իմ ապրանքը, չե՞ս ամաչում:

– Ինչո՞ւ պիտի ամաչեմ, չատ մի խօսիր, եթէ չես ուղում, որ դործը վատ վերջանայ, պատասխանեց աւազակը:

Սէյիդը դարձաւ իմ ղամբիւղը վերցրած աւազակին՝ "էդ ղամբիւղի մէջ գրքեր են, ինչո՞ւ ես տանում, հե՞րդ, մե՞րդ ու կնի՞կդ են կարդալու, թէ՞ դու":

–Քե՞զ ինչ, հայը չի խօսում, դու՞ ես խօսում, ասաց աւազակը, ամենախայտառակ հայհոյանքը տեղալով սէյիդի հասցէին:

Վերջապէս բաց թողին մեզ: Սէյիդը դարձաւ մեզ՝ "ասացի ձեզ չէ՞, որ հուրիաթ չի տեղի ունեցել, այլ խարիաթ, այն էլ մեծ խարիաթ: Մուսուլմանը սէյիդ մարդուն հակառակւի բաւական չէ, դղւելի հայհոյանքներ տայ: Կը նչանակի, սրանք Աստծուց չեն վախենում":

Շարունակեցինք մեր ճամփան:

Վերջապէս, մութը կոխած, հասանք Աղդամ: Սէյիդը և խանութպանը հրաժեչտ տուին, գնացին իրենց տուն, յաջորդ օրը հանդիպելու համար: Հայերս իջևանեցինք Ղղղալայեցի Բախչու մօտ, որը ճաչարան ունէր և ճաչարանի վերնայարկում մահճակալներով և կահոյքով սենեակներ՝ ճամրորդների դիչերելու համար:

Բախչուն հարցրի՝ Իլդրըմը Աղդամում է՞, թէ բացակայ է, ասաց, որ բացակայ չէ և չատ մօտ է ապրում: Իլդրըմը ճանաչում էր հօրս և չատ մօտ ծանօթ էր հօրեղբօրս, Աբրահամ Իչխանեանի հետ. ուստի խնդրեցի, որ Բախչին իր մօտ ծառայող հայ երիտասարդին ուղարկի Իլդրըմի մօտ, յայտնի, որ Աբրահամ Իչխանեանի եղբօր որդին խնդրում է նեղութիւն քաչի, գայ հիւրանոց: Բախչին ասաց, որ ինքը կերթայ և անձամբ կը խնդրի:

Քառորդ ժամ չանցած, եկան Իլդրըմն ու Բախչին, երկու զինուած միլիցիօներների հետ: Իլդրըմը ընդունեց ինձ որպէս մօտ ծանօթի և յայտնեց, թէ Պարսկաստանից վերադարձին իմ մասին լսել է հօրեղբօրիցս, որ իբրև դաչնակ աքսորուած եմ եղել Ռուսաստանում: Ձամբին տեղի ունեցածի մասին լսելուց յետոյ, ասաց: "Դու որ դաչնակ ես, ի հարկէ, չատ լաւ գիտես, թէ ինչ մարդիկ էին Եվրեմ Խանն ու Քեռին. ախ ես մատաղ լինեմ նրանց

զերեզմանին, իսկական հերոսներ էին. նրանք պէտք է, որ կենդանի լինէին, և հինգ հարիւր հոգով ամբողջ Ղարաբաղը կառնէինք մեր բուռի մէջ, ոչ մէկ մարդու քթից իսկ արիւն չէր հոսի իղուր տեղը":

Իլդրըմին պատմեցի ճամբին տեղի ունեցած մեր կողոպտուելու մասին ևս: Նա կարգադրեց միլիցիոներներից մէկին, որ յայտնի աւադ միլիցիոներին, հաւաքելու բոլոր ձիաւոր միլիցիոներներին՝ կազմ ու պատրաստ սպասելու իրեն. միւսին ուղարկեց սէյիղի մօտ, ստուգելու կողոպուտի տեղը և թէ որ կողմն են գնացել աւազակները: Շուտով եկաւ միլիցիոներներից մէկը սէյիղի հետ միասին, որոնք իրարու պատահել էին ճամբին. չատ երկար չտևեց, եկաւ միւս միլիցիոները և յայտնեց, որ ամէն ինչ պատրաստ է: Իլդրըմը սէյիղից իմացաւ մեր կողոպտուելու տեղը և աւազակների որ կողմ գնալը և դուրս գնաց միլիցիոներների հետ: Սէյիղը, Բախչու հետ մօտ ծանօթ լինելով, սկսեց իր անէծքը էն մարդկանց հասցէին, որ աչխարհը տակն ու վրայ են արել:

Բախչին ղդուչացրեց մեզ, որ մահճակալների վրայ չը քնենք, այլ գետնին և կարգադրեց ծառայողին, տեղաչորները գցել յատակին փուած կարպետի վրայ: Բացատրեց պատճառը, որ մօտակայ Ջուխուրմահլա և Խղրլու գիւղերը, որ զրեթէ կպած են Աղդամին, իրարու հետ հակառակութիւն ունենալով, նրանց բնակիչները յաճախ իրարու վրայ են հարձակւում: Պատահական գնդակներից պատուհանների ապակիներից մի քանիսը ջարդել ու գնդակները խրել էին պատերի մէջ, և մտահոգւած էինք, որ չլինի թէ յանկարծ նոյնպիսի պատահական գնդակների զոհ դառնայինք:

Բախչին իրաւունք ունէր ղդուչացնելու: Գիչերւայ կէսից բաւական անցել էր երևի, որ հրացանաձգութիւնից արթնացանք, ու այլևս քնել չկարողացանք մինչև լոյս: Արևը Հորիզոնի ծայրին երևալուց հրացանաձգութիւնը դադարեց: Առաւօտեան նախաճաչն արինք ու սպասեցինք Իլդրըմի վերադարձին: Բախչու հետ խորհրդակցում էինք կառքեր վարձելու մասին, որովհետև մեր կառապանները խոստացել էին մեղ բերել մինչև Աղդամ միայն և այդ միջոցին ներս մտած երկու թուրք վաճառականներ, որոնք լսել էին արդէն մեր մասին, որպէս Շուչի գնացող ճամբորդների, ցանկանում էին մեր միջոցով ապսպրանք անել քաղաքի իրենց մարդկանց: Պարզւեց, որ աղդամցիների մէջ էլ աւազակային հակում ունեցող տարրեր կան և հանդիստ չեն տալիս մարդկանց ու մասնաւորապէս լաւ չեն տրամադրւած չուչեցիների դէմ, որոնցից մէկի կտորեղէնի խանութից ահագին ապրանք են թռցրել. նրանց համոզումով գողերը աղդամցիներ են, իսկ վերջիններս պնդում են, թէ չուխուրմահլացիներ կամ խղրլուցիներ են: Իրենցից մէկին ուղարկել են արդէն Շուչի, որպէդի այնտեղի ղեկավարները միջոցներ ձեռք առնեն, փրկելու թէ՛ իրենց և թէ՛ իրենց ունեցած ապրանքը:

Մեղնից խորհուրդ հարցրին, թէ ինչպէ՞ս անեն, որ չտուժեն: Մենք տեղեկացանք, որ Աղղամում ունեցած խանութները Շուշում ունեցած իրենց խանութների մի մասն են կազմում և համեմատաբար, ապրանքը չատ քիչ է: Ասացինք իրենց, եթէ մօտ բարեկամներ ունեն, ապրանքը պահ տան նրանց և եթէ անապահով են ղղում իրենց, գնան Շուշի:

– Ճիշտն ասած, մարդկային ազահութիւնը վատ բան է, ասաց մեկը, հէնց մեր բարեկամ համարածը կարող է ապրանքը իւրացնել, ծախել ու հետագային մեղ ջանալ համոզել, թէ ղողերը տարել են:

– Այդ դէպքում մնում է մեկ միջոց, որ ձեր ունեցած ապրանքը էժան գնով, թեկուզ ինքնարժէքից քիչ պակասով ծախէք աղղամցի վաճառականներին, խանութները լիկվիդացիա անէք, գնաք քաղաք:

– Այդ միջոցը աւելի ընդունելի է, ասացին ու գնացին միւսների հետ որոշում կայացնելու:

Բախշին պատմեց, որ չուշեցի մանուկ-պակտուրիստները չորս հինդ հոգի են, որոնք ահագին ապառիկ ստանալիքներ ունեն թէ՛ աղղամցիների և թէ՛ մօտակայ ու հեռաւոր գիւղերի գիւղացիներից և գանձել չեն կարողանում և դրանից չատ են նեղւում, հիմա էլ որ զրուժինը տագնապալի է դարձել, յոյս չունեն գանձելու և վախենում են, որ կեանքից էլ զրկուեն:

Կէսօրին եկաւ Քեօչարլուից Իլդրըմի միլիցիօներների մեկ մասը և բերեց բոլոր սպանուածներին ու վիրաւորներին, որոնք մեծաւ մասամբ Կարևազինօի գաւառի թուրքեր էին. ինչպէս ասացին, միւս մասը աղղամցիներ ու մօտակայ գիւղացիներ, Բազէի նաւթահանքերում աշխատած բանուորներ: Միլիցիօներները բերել էին և սպանուած հային, որին մենք զրինք առանձին սենեակում, սպասելով Իլդրըմին, որի միջոցով պիտի կարողանայինք կառքեր վարձել և չարունակել մեր ճամբան:

Պարզուեց, սպանուած համարուած հայը կենդանութեան թոյլ նշան էր ցոյց տալիս. գնդակը դիպել էր գլխին, ծակել և միւս կողմից դուրս եկել, աչքերը փակ, մարմինը տաք, և չարունակ մեկ ոտքի կրունկով խփում էր յատակին: Աղղամում բժիշկ չկար, որին բերէինք, տեսնէր մարդուն, ուստի որոշեցինք նոյն ձևով հասցնել Ասկերան և այնտեղից լուր տալ իր հարազատներին՝ գալու և տանելու իրենց մարդուն:

Ճաշից յետոյ եկաւ Իլդրըմը մեկ ձիու վրայ բարձած սեյիղի խուրջինը և բեռան մէջտեղը ցցուած ինձնից խլուած զամբիւղը՝ զրքերով: Բոլորս, ճիշտն ասած, զարմացանք, և մեր զարմացած հայեացքը նկատելով, Իլդրըմը ասաց՝ "Բա ի՞նչ էիք կարծում, Եփրեմ Խանի, Քեռու ղինակից ընկերը պիտի ձեռնունայն

վերադառնա՞ր: Ես նրանցից չատ դասեր եմ առել. եթէ մոռանայի նրանց տուած դասը, պէտք է փափախս դէն չպրտէի և կնոջ թաչկինակ կապէի գլխիս":

Միլիցիօներներից մէկին ուղարկեց սէյիդին կանչելու, որ իր ապրանքը ստանայ: Ես սրտանց չնորհակալութիւն յայտնեցի Իլդրըմին և խնդրեցի, որ կարգադրի, մեզ կառքեր տրամադրեն՝ չարունակելու մեր ճամբան:

– Ձեզ ճամբու կը դնեմ վաղը, առաւօտեան, իսկ մինչ այն մէկ պարտականութիւն էլ դու պիտի կատարես, ասաց Իլդրըմը:

– Ուրախութեամբ, եթէ իմ ուժերից վեր չլինի, ասացի:

– Ձեր ուժերից վեր գործ չէ, ձեր փեչակն է. ես որոշել եմ խղրլուցի և չուխուրմահլեյի թայֆայապաղներին կանչեմ այստեղացիների հետ խառն ժողովի. ես չատ եմ խօսել նրանց հետ. էչ մարդիկ են, չնչին բանի համար իրարու հետ հակառակւել են: Արտերը ջրելու համար, առուներից օգտւելու չուրջ վէճ է ծագել, մէկը միւսին մեղադրում է հերթ խլելու կամ խարերայութեամբ երկու անգամ ջուրը արտերի մէջ կապելու համար: Ես ուղում եմ, որ դու գաս ժողովի, խօսես և խրատ տաս, նրանք քեզ իբրև հայի աւելի լաւ կը լսեն և կարելի կը լինի աղդել վրանին:

Համաձայնեցի, որ թերևս արդիւնք ունենայ իմ խօսելը, սակայն մտքումս Իլդրըմի հետ համաձայն չէի, որ ինձ էլ հաչւում էր այն մարդկանց չարքում, որոնք լաւ խօսելու չնորհք ունէին:

Երեկոյեան ժամը հինգին գիւղացիները հաւաքւել էին եղբ. Խուբլարեանների կոնեակի գործարանը, ուր, միլիցիայի հսկողութեամբ, հաւաքւել էին հարիւրից աւելի գիւղացիներ, որոնք աղդեցութիւն ունէին իւրայինների վրայ. Իլդրըմը ներկայացրեց ինձ մի քանի խօսքով, որպէս գիւղացիների չահերը պաչտպանողի և բարեկամ մարդու, ապա առաջարկեց ինձ իմ խօսքն ասելու:

Թուրքերը յեղափոխական մէկ կուսակցութիւն իսկ չունէին: Հրապարակի վրայ Մուսաւաթ յորջորջւած կուսակցութիւնը պանիսլամիստական գաղափարներով տոգորւած թրքական բարձր խաւերի, վաճառականների և բէկերի կուսակցութիւնն էր: Թրքական դանդւածները միանգամայն անհաղորդ էին յեղափոխական գաղափարաբանութեան. Թրքական գիւղերում ի սկղբանէ մուտք էին գործած տաճկական լրտեսները, որոնք պանիսլամիստական քարոզներ էին տալիս: Թրքական գիւղերում յեղափոխական կուսակցութիւններ մուտք չէին գործած և գաղափար էլ չունէին յեղափոխական չարժման մասին:

Իմ գիտցած թուրքերէնի աղքատիկ պաչարով խօսեցի նախայեղափոխական հակաժողովրդական վարչակարգի մասին, որը հոգ չէր տանում ժողովրդի կրթութեանը, այդ պատճառով էլ Ռուսաստանը, համեմատած եւրոպական երկրների հետ, չատ յետ

էր մնացել մանաւանդ տեխնիկապէս և արդիւնաբերութեամբ: Յեղափոխական կուսակցութիւնների նպատակն էր, որ ժողովուրդը կրթուի, ուսումը ձրի լինի, որպէսզի չունևոր գիւղացիների զաւակներն էլ կարողանան սովորել, ուսումը ունևորների սեփականութիւնը չդառնայ, որ ժողովուրդները ապրեն խաղաղ ու հանդիստ, լինեն իրարու հետ սիրով, որպէս եղբայրներ: Ասացի, որ միապետական կառավարութիւնը,տարիներ առաջ պրովակացիայի միջոցով թուրքերին ու հայերին կռւացրեց իրարու հետ և եղբայրասպան կռիւներին հարիւրաւոր, հազարաւոր մարդիկ սպանեցին: Հիմա, որ յեղափոխութիւն է տեղի ունեցել, ժողովուրդները աղատւել են ամէն տեսակի բռնութիւններից, պէտք է լծւեն խաղաղ, չինարար աշխատանքի, ապրեն սիրով և իրարու հետ ունեցած վէճերը վերացնեն փոխադարձ զիջումներով ու համաձայնութեամբ:

Ժողովից յետոյ Իլդրըմը յայտնեց, որ պատւիրել է երեք կառապանների, վաղը, առաւօտեան 8-ին պատրաստ լինել Բախչիի ճաչարանի առջև, և ինքն էլ իր ձիաւորներով մեզ կուղեկցի մինչև Ղարաաղաչի կոչւած տեղը՝ հայ-թրքական սահմանագծի վրայ:

Միւս օրը, որոշւած ժամին, կառքերը եկան, չարւեցին Բախչու ճաչարանի առաջ: Եկաւ Իլդրըմը, իր հետ նաև Աղդամի ու չրջանի հոգևոր պետը, երկու մոլլաներով, մի քանի աղդեցիկ աղդամցիների և երեսունի չափ միլիցիօներների հետ: Պարզ էր, Իլդրըմն էր այդպէս կարգադրել:

Հասանք Ղարաաղաչի, որտեղ ալիտի հրաժեչտ տալինք նրանց ու չարունակէինք մեր ճամբան: Կանգ առանք, Իլդրըմը, մոլլաները և աղդեցիկ աղդամցիները կիսաչրջան կազմեցին և նրանց թիկունքին՝ միլիցիօներները: Մոլլաները կրօնական արարողութիւն կատարեցին, ապա հոգևոր պետը դարձաւ մեզ ու ասաց՝ "Ես ուղում եմ երկու խօսք ասել ձեզ, որպէս մեր բարեկամների, որ ճամբին տեղի ունեցած դէպքերը նոյնութեամբ հաղորդէք գործի գլուխ կանգնած թէ՛ հայ և թէ՛ թուրք մարդկանց, որպէսզի միջոցները մտածեն ստեղծւած խայտառակ անիչխանութեանը վերջ տալու: Աւազակները, առանց խտրութեան, ճամբորդներին, հայեր լինեն, թէ թուրքեր, բոլորին կողոպտում են, ընդդիմացողին սպանում: Ջեն խնայում նոյնիսկ կանանց: Ասէք, որ ամէն կերպ աշխատեն վերականգնել խաղաղութիւնը: Թող Աստւած օգնէ մեզ աղատւելու այս պատուհասից:

Շնորհակալութիւն յայտնելով բոլորին, խոստացանք պատմել ամէն բան, ինչպէս տեղի է ունեցել ճամբին: Ապա չարունակեցինք ճամբան, հասանք Ասկերան և ինչ տեսնենք. հարիւրաւոր ղինւած հայ դիւղացիներ Դալի Մահրասայի գլխաւորութեամբ փակել են

Ասկերանի կիրճը: Այդտեղ պարզուում է, որ Քեօչարլուից բոլորից զաղտնի հեռացած այն երկու չուչեցիները հասնելով Խաչէն, ահաղանգ են տուել, որ թուրքերը մեծ զինուած բաղմութեամբ բռնել են ամբողջ ճանապարհը, մեղ առել են օղակի մէջ՝ կոտորելու և ապա չարժւելու դէպի Ասկերան, ներս խուժելու դէպի հայկական գիւղերը, տակն ու վրայ աննելու, թալանելու նպատակով:

Դալի Մահրասան Խաչէնի Առաջաւոր գիւղի Եսայի քահանայի որդին էր, թեմական դպրոցի չորրորդ դասարանից ելած, Բազում վականագործութիւն սովորած, Մանթաչեանի նաւթահանքում աշխատած որպէս բանւոր և հօր ցանկութեամբ քահանայ ձեռնադրւած: Աշխարհական անունը Յարութիւն էր, Բազում ընկերական և ծանօթ չրջաններում յայտնի Քէչիչ օղլի Արտէմ անունով: Յաղթանդամ, վայելչակազմ ու գեղեցիկ տղամարդ, ահռելի ֆիզիկական ոյժի տէր: Մենամարտելով Բազւի թուրք Այթաղլը անունով յայտնի ըմբիշի հետ, նրան առել էր իր ձեռքերի մէջ, բարձրացրել էր օդը ու զարկել գետին: Դաշնակցական բանւորական խմբերից մէկի անդամ էր եղած և Բագւի Կ. Կ.-ի որոշմամբ մի քանի զաղտնի ոստիկանների և լրտեսների էր ահաբեկել: Քահանայ էր ձեռնադրւել 1903 թ. և նշանակւել Դաչբուլաղ գիւղի եկեղեցու հովիւ: Հայ-թաթարական ընդհարումներին լինելով Համազասպի խմբում և նրա օգնականներից մէկը, աչքի էր ընկել իր խիզախութեամբ ու քաջութեամբ, խմբի ունեցած բոլոր կռիւների ժամանակ: Երբ ահազանգ տւող յիշեալ երկու չուչեցիները Համնում են Դաչբուլաղ, ներկայանում են Դալի Մահրասային (Մեսրոբ քահանայ Շահջանեան), և վերջինս, լինելով Խաչէն գետի աջափնեայ տարածութեան վրայ զտնւած գիւղերի գործակալը, անմիջապէս գործի է անցնում, սուրհանդակների միջոցով իմաց տալիս զինւած ուժերին՝ չտապելու Ասկերան, լուր է ուղարկում նաև Ասկերանի մօտ գտնւող Վարագայի գիւղերին:

Գիւղացիներին, որ խռնւած էին Դալի Մահրասայի չուրջը, պատմեցի ճամբին տեղի ունեցած դէպքերը: Բոլորը զոհ մնացին և ուրախացան, որ հայ-թրքական կռիւ վտանգ չկայ. այնուամենայնիւ, ոչ ոք դժգոհ չէր, որ Դալի Մահրասան ահազանգ էր հնչեցրել, ընդհակառակը, երբ խորհուրդ տւի խաղաղութեամբ վերադառնալու իրենց տեղերը, բոլորը Դալի Մահրասային գոհունակութիւն էին յայտնում, որ նման կարգադրութիւն էր արել: Պտրեցիք գիւղացի Զարչոնց Երեմիան, որ Դալի Մահրասայի զինակիցն էր եղել հայ-թաթարական ընդհարումներին Համազասպի խմբում, զարձաւ նրան ու բարձրաձայն ասաց. "Տէր հայր, ճիշտ է, ոչ մի վտանգ չի եղել, բայց եթէ իսկապէս վտանգ եղած լինէր, մենք էլ անտեղեակ, ի՞նչ վիճակ կը ստեղծւէր մեղ համար: Ոչ մեկս չենք կարող դժգոհ լինել,

որ եկել ենք: Դու չատ լաւ ես արել, որ մեզ հաւաքել ես այստեղ. սա լաւ դաս եղաւ, իրրև փորձ, որ վտանգի դէպքում բոլորս անխտիր մեր պարտականութիւնը կատարենք":

Դալի Մահրասայի հետ խորհրդակցելով, որոշեցինք, որ ձիաւորներից մի խումբ խաչէնցիներից ու վարագացիներից մնան Ասկերանում մի առ ժամանակ, մանաւանդ որ յարմարութիւններ կան ապրելու և աննկատ մնալու, ապա, երբ միանգամայն պարզուի, որ աւազակային ներխուժման վտանգ չկայ, կը վերադառնան իրենց տները:

Մեզ հետ ըերած սպանուած հային ճանաչողներ եղան մի քանի հոգի և յայտնեցին, որ իրենց գիւղից է, ուստի խոստացան դիակը տանել գիւղ:

Ռուբէնն ու ես երկու վիրաւորին առած չարունակեցինք մեր ճամբան և Բալլուջա գետի կամրջից մի քանի վերստ անցած, պատահեցինք փուրգոնների կարաւանի: Ութ փուրգոն լիքը զինուած թուրքեր. Խասայ Մամեդովի գլխաւորութեամբ, մեզ տեսնելով, կանգ առան և հարցեր տեղացին. "Աղղամում ճի՞շտ է, որ տեղացիները թալանել են բոլոր չուչեցիներին և նրանց կեանքին վտանգ է սպառնում": Մենք հերքեցինք, որ նման բան տեղի չէ ունեցած և յայտնեցինք վաճառականների մեզ հետ ունեցած խորհրդակցութեան մասին. թուրքերը հանգստացան մեր տուած տեղեկութիւններով և որոշեցին վերադառնալ քաղաք:

Խանի Բաղ կոչուած տեղում, հէնց խճուղու եզրին կանգնած Ահմադ Աղա Աբրահանովին և իր տղային՝ Իբիչին հանդիպեցինք: Իրարու լաւ էինք ճանաչում, ուստի բարևելով, ուղում էինք չարունակել ճամբան, բայց Ահմադ աղան նչան արաւ, որ կանգ առնենք:

Ահմադ աղան և Իբիչը հետաքրքրուեցին ճամբին տեղի ունեցած դէպքերով. մենք պատմեցինք, ապա իրենք ասացին, թէ՝ "քանի որ զօրքերը հեռանում են, պէտք է զէնքերը թողնեն մեզ, որ մենք պաշտպանենք երկիրը": Մտքումս ասացի՝ ինչ լաւ երկիր պաշտպանող էք: Ահմադ աղան ու տղան զարմացել էին, որ թուրքերը չեն կարողացել դինաթափ անել ռուսներին: Ինչպէս մենք, նոյնպէս և նրանք անտեղեակ էին. հետագային պարզուեց, որ Քևօչարլուից մինչև Եւլախ մի քանի տեղ փորձել են դինաթափ անել Բէլիաևի զնդին և ամէն անգամ ահագին կորուստներ են տուել:

ՇՈՒՇԻ . ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲԻՒՐՕ

Վերջապէս հասանք Շուշի դեկտեմբեր 22-ին: Յաջորդ օրը ընկերներին զեկուցեցի խորհրդաժողովի աշխատանքների և համբին տեղի ունեցած դէպքերի մասին: Ապա ընկերները յայտնեցին, որ Շուշում, դեկտեմբերի 16-ին սպայ Նիկ. Խաչանեանի նախաձեռնութեամբ կազմուել է Հայ Ձինուորական Միութեան Ղարաբաղի ճիւղը, որը քաղաքի անդորրութիւնը պահպանելու նպատակով, զէնքի տակ է առել 150 հոգուց մէկ վաչտ, զօրանոցում պահելու հնարաւորութեամբ: Դեկտ. 21-ից Թիֆլիսի զինուորական չտաբի կարգադրութեամբ Շուշու զաւառի զինուորական չէնքերի և այլ գոյքերի պահպանութիւնը յանձնուած էր Հայ Ձինուորական Միութեան Շուշու ճիւղին: Ստեղծուած տագնապալի դրութիւնը նկատի ունենալով, միաժամանակ, բոլոր հայ հոսանքները միտք են յղացել միջկուսակցական ժողով ունենալու, խորհրդակցելու, թէ ինչ միջոցներով կարելի կը լինի փրկել դրութիւնը, պրովակացիայի զոհ չդառնալու համար:

Դեկտեմբեր 23-ին տեղի ունեցաւ բոլոր հոսանքների ներկայացուցիչների ժողովը, որը քննութեան առնելով ստեղծուած լարուած դրութիւնը և այն, որ թուրքերի վերաբերմունքը հանդէպ ռուսների բարեկամական չէր, այլ թշնամական, մի բան, որ միանգամայն աննպաստ էր մեզ համար, և որ թուրքերը չատ հեչտութեամբ կարող էին տաճկական քարոզիչների դրդմամբ, թշնամական դիրք բռնել նաև մեր հանդէպ, ուստի կուսակցութիւնները պէտք է պատրաստ և զգաստ լինէին և միջոցներ ստեղծէին մեր ժողովրդի պաչտպանութեան համար:

Ժողովը միաձայնութեամբ յանգում է այն եզրակացութեան, որ անհրաժեչտ է մէկ մարմին ստեղծել բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներից, միասնաբար գործելու համար ուստի որոչուեց, որ յաջորդ օրն իսկ կուսակցութիւնները ընտրեն իրենց ներկայացուցիչներին, որոնք կը հաւաքուեն և կը կազմեն ցանկալի մարմինը, Միջկուսակցական Բիւրօ անունով, նրան յանձնելով գործնական միջոցների դիմելու բոլոր աչխատանքները: Քանի որ, թէ՛ Քաղաքային և թէ՛ Սահմանադիր ժողովի ընտրութիւններին, Դաչնակցութիւնն էր յաղթանակ տարել, մենչեւիկների և Էսէրների կողմից առաջարկ եղաւ, որ երեքական ներկայացուցիչներ մտնեն Միջկուսակցական Բիւրօի մէջ, իսկ Դաչնակցութեան կողմից աւելի մեծ թիւով, ընդհանուրի կէսից աւելի:

Դեկտեմբեր 24-ին լուր հասաւ քաղաքը, որ ամսի 23-ին Կարիազինօյից մօտ 10 կիլոմետր հեռաւորութեան վրայ կատարուող

Ջուլֆա-Ալիաթ երկաթուղու պահեստը պայթել է և ահագին թվով մարդիկ (թուրքեր) են զոհվել: Զոհերի թիվը և նիւթական վնասները դեռ ճշտւած չեն:

Դեկտեմբեր 24-ին տեղի ունեցաւ Ղարաբաղի Միջկուսակցական Բիւրօի կազմի համար կուսակցութիւնների կողմից ընտրւած ներկայացուցիչների ժողովը, հետևեալ կազմով:

Դաշնակցութեան կողմից՝	1. Արզումանեան Մարտիրոս,
	2. Աւետիսեան Աստւածատուր,
	3. Բալասանեան Յակոբ,
	4. Եղիազարեան Խաչատուր,
	5. Թումեան Յարութիւն,
	6. Իչլսանեան Եղիչէ,
	7. Ղարագեօզեան Գրիգոր,
	8. Մուսայէլեան Հայրապետ,
	9. Տէր Միքայէլեան Անուշաւան,
Բոլշևիկների՝	10. Մատուրեան Ալէքսանդր,
	11. Եսայեան Մէլիքսէթ,
	12. Ղարագեօզեան Արմենակ,
Սոց. յեղափոխականների՝	13. Մելքումեան Ալեքսանդր,
	14. Միքայէլեան Արամ,
	15. Տէր Միքայէլեան Հռիփսիմէ,
Հնտազգային՝	Տէր Գասպարեան,
Մենշևիկների՝	16. Մանդինեան Ստեփան,
	17. Մելիք-Յովսէփեան Աչոտ,
	18. Վարդապետեան Լևոն,
Կաղետների(ռամկավար)՝	19. Խաչատրեան Մելքում,
	20. Մինասբէկեան Գրիգոր,
	21. Ստեփանեան Աստւածատուր,
Զինւորական Միութեան՝	22. Իսայսանեան Նիկողայոս:

Ժողովը բացեց Հ. Մուսայէլեանը, անդրադառնալով միջկուսակցական խորհրդակցական ժողովների ընթացքին արծարծւած խնդիրներին, որոնցից ամենակարևորը չրջաններում խաղաղութիւն պահպանելն է և ժողովրդի համար պարեն հայթայթելը: Սակայն, վերջին տասն օրւայ մէջ տեղի ունեցած տագնապալի դէպքերը նկատի ունենալով, միջկուսակցական բիւրոյի վրայ պարտականութիւն ընկաւ միջոցներ մտածել ժողովրդի գոյութեանն սպառնացող վտանգի դէմ, կարճ ասած, կազմակերպել ինքնապաշտպանութեան գործը, առանց աղմուկի, լռելեայն ու գաղտնի, պրովակացիաներից և անտեղի, անցանկալի դէպքերից խուսափած լինելու համար: Ապա առաջարկեց, որ Բիւրոյի դիւանի ընտրութիւն կատարւի, ընթացիկ գործերը վարելու համար, իսկ

Բիւրոյի ամբողջ կազմը չարաթական մէկ նիստ կունենայ, զեկուցումները լսելու: Անհրաժեշտ դէպքերում, Դիւանը արտակարգ նիստ կը գումարի՝ հրատապ որևէ հարցի շուրջ խորհրդակցելու և որոշում կայացնելու:

Ժողովը բաց քւէարկութեամբ ընտրեց իւր դիւանը հետևեալ կազմով,

Նախագահ՝	Հայրապետ Մուսայէլեան,
փոխ-նախագահներ՝	Աչոտ Մելիք Յովսէփեան,
	Եղիշէ Իշխանեան,
քարտուղար՝	Արամ Միքայէլեան,
գանձապահ՝	Աստուածատուր Ստեփանեան:

Բոլշևիկները ընտրութիւնից առաջ յայտնեցին, որ կը մասնակցեն Բիւրոյի նիստին, բայց դիւանի աշխատանքներին չեն մասնակցի: Ժողովն ընդունեց նրանց յայտարարութիւնը և հակառակ խօսող չեղաւ:

Հարց տրւեց՝ Զին. Միութիւնից ներկայացուցիչ ունենա՞լ, թէ՞ ոչ: Որոշուեց, որ Բիւրոյի կազմից մէկը ստանձնէ դիւանագիտական կոմիսարի պարտականութիւնը. որպէս կոմիսար ընտրուեց Յար. Թումանեանը:

Երկրորդ հարցը գաւառական կոմիսարի մասին էր: Ժամանակաւոր Կառավարութեան օրօք Շուշու հայերից ու թուրքերից կազմուած գաւառական գործադիր խորհուրդը գաւառի կոմիսար էր նշանակել Լ.. Վարդապետեանին և օգնական՝ Խոսրով Փոլադովին: Հարցն այն էր, թէ ի՞նչ պէտք է արւէր թիւրիմացութիւններից խուսափելու համար:

Նախագահը յիշեցրեց, որ անցեալ խորհրդակցական ժողովներին մտքերի փոխանակութիւն տեղի ունեցաւ հարևան թուրք ժողովրդի հետ յարաբերութիւնները խաղաղ պահպանելու շուրջ և առաջարկ եղաւ, որ Բիւրօն քայքայուած գաւառական գործադիր խորհրդի փոխարէն նոր, աւելի գործունեայ մէկ մարմին ստեղծէ երկու ժողովուրդների կողմից հաւասար թիւով ներկայացուցիչներով: Գաւառական կոմիսարի խնդիրը պիտի թողնել կազմուելիք հայ-թրքական կոմիտէին:

Մտքերի փոխանակութիւն ունենալով, ժողովը, առանց յետաձգելու ընտրեց ներկայացուցիչներ հայ-թրքական կոմիտէի կազմի համար հետևեալ անձանց՝ Հ. Մուսայէլեանին, Աչոտ Յովսէփեանին, Լևոն Վարդապետեանին, Արամ Միքայէլեանին, Արսէն Բակունցին, Աստուածատուր Աւետիսեանին և Եղիշէ

Իչևանևանին: Արսէն Բակունցը Բիւրոյի անդամ չէր, բայց ժողովը որոշում էր կայացրել նախապէս, որ Հայ-Թրքական կոմիտէի մէջ ընտրուեն ոչ միայն Բիւրոյի անդամները, այլև ոչ-անդամները: Ժողովը նկատի ունենալով, որ Թուրքերն էլ ցանկութիւն են յայտնել, որ քայքայած Գաւառական Գործադիր Մարմնի փոխարէն նորը պէտք է ընտրել, և որ նրանք արդէն նկատի ունեն կամ ընտրել են իրենց մարդկանց, ուստի յանձնարարում է Դիւանին, հէնց վաղը յարաբերութեան մէջ մտնել Թուրքերի հետ և ժողով կայացնել նրանց մարդկանց հետ:

ՀԱՅ – ԹՐՔԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Դեկտեմբերի 25-ին Հասարակական Ակումբում տեղի է ունենում հայ և Թուրք ներկայացուցիչների ժողովը, որը, մտքերի փոխանակութիւն ունենալով, որոշում է համարել իրեն Գաւառական Գործադիր Խորհրդին փոխարինող մարմին, անուանելով այն Հայ-Թրքական Կոմիտէ:

Հայերի կողմից ներկայ էին ընտրուած ներկայացուցիչները, թուով 7 հոգի: Թուրքերի կողմից՝ Լիւթֆալի Բէկ Բէհբուդով, Խոսրով Բէկ Փոլադով, Միրզա Ջամալով, Խասայ Մամեդով, Սարուխչի Մամեդ, Աբուլֆաղ Բէկ Հասանբէկով և Հէյդարբէկ Սէյիդբէկով: Լիւթֆալի Բէկը անկուսակցական էր համարում իրեն, Հէյդարբէկը համարւում էր մենշևիկ, իսկ միւսները մուսաւաթականներ: Հայ-Թրքական կոմիտէն մտքերի փոխանակութիւն ունենալով, որոշեց իբրև կոմիտէի նախագահ չեղոք, օտարազգի մէկ մարդ ընտրել և որպէս այդպիսին յարմար գտան վրացի հաշտարար միջնորդ Իոսիֆ Իլլարիոնովիչ Կոբրևին, համոզմունքներով նացիոնալ-դեմոկրատ, յարգւած հայ և Թուրք հասարակութեան կողմից: Եւ որոշեց միւս օրը՝ Դեկտեմբեր 26-ին ունենալ առաջին պաշտօնական նիստը և կատարել փոխ-նախագահի և քարտուղարի ընտրութիւնը: Կոբրևը համաձայնեց ստանձնել կոմիտէի նախագահութիւնը, յոյս յայտնելով, որ երկու աղգութեանց ներկայացուցիչները անկեղծօրէն կը լծուն աշխատանքի, ձգտելով մէկ նպատակի՝ խաղաղութիւնը վերականգնել թէ՛ գաւառներում և թէ՛ քաղաքում:

Դեկտեմբեր 26-ին տեղի ունեցաւ կոմիտէի առաջին պաշտօնական նիստը Կոբրևի նախագահութեամբ: Նախագահն առաջարկեց նախ ընտրել երկու փոխ- նախագահներ և քարտուղար՝ նիստերի արձանագրութիւնները կազմելու համար: Միաձայնութեամբ որպէս փոխ-նախագահներ ընտրուեցին Հայրապետ Մուսայէլեանն ու Լիւթֆալի Բէկ Բէհբուդովը, որպէս քարտուղար Աչոտ Մելիք Յովսէփեանը: Աբուլֆաղ Բէկ

Հասանելիկովը զաւառի և քաղաքի աղմինիստրացիայի խնդիրը յարուցեց, առաջարկելով, որ կոմիտէն մտքերի փոխանակութիւն ունենայ և որոշումներ կայացնի զաւառական ու չրջանային կոմիսարների մասին:

Կոմիտէն որոշեց առայժմ փոփոխութեան չենթարկել զաւառական նախկին զործաւոր խորհրդի նչանակած պաչտօնեաներին, ըստ որում, որպէս զաւառական կոմիսար պէտք է չարունակէ իր պաչտօնը Լ. Վարդապետեանը և որպէս օգնական՝ Խոսրով Բէկ Փոլադովը: Շրջանային բոլոր կոմիսարները նոյնպէս կը չարունակեն իրենց պաչտօնները և այդ մասին պէտք է համապատասխան զրութիւններ ուղղուեն բոլոր պաչտօնեաներին:

Կոմիտէն ընթացիկ զործերը թողնելով Դիւանին, որոչում է զէթ երկու չաբաթը մէկ լրիւ կազմով նիստ ունենալ, թէկուզ քննելիք հարցեր էլ չլինեն, իրարու հանդիպելու, սերտ կապ պահպանելու համար:

Շուտով տեղեկութիւններ հասան զաւառներից, որ Դեկտ. 22-25-ը կողոպուտներ ու յափչտակութիւններ են տեղի ունեցել Բարդայում և Կարիագինոյում, թրքական աւազակախմբերի կողմից: Յարձակել են ու խոչոր կալւածատէրերի ունեցած նախիրը տարել:

Դեկտեմբերի 23-ին Կարիագինոյի մօտ տեղի էր ունեցել մի ահռելի պայթիւն, որի մասին պատմում էին, թէ պահեստի թալանչիների մէջ ծխողներ են եղել և նրանց անզգուչութեան հետևանքով բռնկուել են վառօդի և դինամիտի պահեստները: Պահեստում եղել է 1200 փութ (մօտ 2 տոննա) վառօդ, իսկ դինամիտ 300 փութ (կէս տոննա): Ըստ մէկ տեղեկութեան, թալանչիները մօտ երկու հազար, իսկ մէկ ուրիչ տեղեկութեան համաձայն, մօտ հազար հոգի են եղել, որոնք էշերով, ձիերով եկած են եղել առատ թալան տանելու:

Պայթիւնը այնքան ուժեղ է եղել, որ Կարիագինոյի, ինչպէս նաև մի քանի վերստ հեռաւորութեան վրայ գտնուող գիւղերի տների պատուհանների ապակիները փչուր-փչուր են եղել: Պայթիւնի որոտը լսելի է եղել եօթանասուն վերստ հեռու գիւղերում, ուր բնակիչները երկրաչարժ համարելով դուրս են թափել տներից: Հարիւրաւոր մարդիկ սպանուել և վիրաւորուել են: Պայթիւնի հետևանքը չատ ծանր էր աղդել թուրքերի վրայ:

Հայ-թրքական կոմիտէի հէնց առաջին նիստին թուրքերը զեկուցեցին, որ Աղդամում երկու օր առաջ անկարգութիւններ են սկսուել, տեղացիները լրւած են չուչեցիների, անկատիր՝ թէ՛ մանուիլակատուրիստների և թէ՛ մանրավաճառ խանութ ունեցողների

ղէմ, հեռագրով խնդրել են, որ այս քաղաքից մարդիկ գնան և խաղաղացնեն մտքերը: Նախագահն առաջարկում է, որ անմիջապէս մի խառն յանձնախումբ մեկնի Աղդամ, քանի դէպքերը չեն բարդացել: Որոշւում է, և հէնց նոյն օրը մեկնում են ինքը՝ նախագահ Հայր. Մուսայէլեանը, Խ. Փոլադովը, Լ. Վարդապետեանը և Խասայ Մամեդովը: Թուրքերը խիստ անհրաժեշտ էին համարում հայ գործիչների երևալը իրենց ժողովրդի մէջ այն օրերին, գտնելով, որ մերոնց, որպէս հարևան ժողովրդի մարդկանց, խօսքը աւելի աղդեցութիւն կունենայ, մինչդեռ իրենց վրայ այլ աչքով են նայում: Այսպիսով թուրքերի ներքին կեանքը խաղաղացնելն էլ մի տեսակ հայերի վրայ է ընկնում: Մենք ընդառաջում էինք թուրքերի առաջարկին խաղաղարարի դեր ստանձնելու, մանաւանդ որ Թիֆլիսի և Բագւի հետ կապը թրքական տափաստանով անցնող միակ խճուղին էր, որի ապահովութիւնը մեզ համար էլ կենսական նշանակութիւն ունէր:

Բոլոր հոսանքները չատ դոհ և ուրախ էին, որ թուրքերը մեծ նշանակութիւն և արժէք էին տալիս մեր գործիչներին. մեր բոլորի համոզումն էր, որ հայ-թրքական յարաբերութիւնները եթէ խախտւէին, մեծապէս պիտի տուժէինք մենք, միանգամայն կտրւելով դրսից: Մենք որոշել էինք ամէն ճիգ թափել, որպէդի դրացիական խաղաղ յարաբերութիւնները պահպանւէին, միանգամայն խուսափելով թիւրիմացութեան տեղիք տւող որևէ առիթից, որը կարող էր լարւածութիւն առաջ բերել կողմերի մէջև: Մասնաւորապէս, դաշնակցականներիս համար մի բան պարզ էր միանգամայն, որ մեր ունեցած ստոյգ տեղեկութիւնների հիման վրայ, մեր ժողովուրդը միանգամայն զուրկ էր զինամթերքից, զէնքերի էլ պակաս ունէր, եթէ կռիւ սկսւելու լինէր մեր և թուրքերի մէջև, մեծապէս տուժողը մենք պիտի լինէինք, զրսից օգնութեան ոչ մեկ յոյս ունենալով: Հարկաւ, եթէ թուրքերը նախայարձակ լինելու փորձեր անելու լինէին, պիտի պաշտպանւէինք առանց վարանման և ընկրկման: Պէտք էր փամփուշտը կրակել խնայողաբար, այնպէս, որ զնդակը զուր չանցնէր, պէտք էր երբէք աննպատակ չկրակել: Պէտք էր այս բանը հասկացնել չրջիկների միջոցով մեր բոլոր զիւղացիներին:

Երեք օրից յետոյ վերադարձան Աղդամ գնացած խաղաղարարները, առանց Հ. Մուսայէլեանի, որը Մարիամ Ղուկասեան դպրոցի դանադան պէտքերը հոդալու պատրւակով, թուրքերի և ի մասնաւորի Իլդրըմի աջակցութեամբ, անցնում է Թարթառ և այնտեղից Գանձակ, Թիֆլիս: Հայրապետ Մուսայէլեանի Թիֆլիս գնալը Կ. Կ.-ի համար անսպասելի չէր, քանի որ դեռ ամռան ամիսներին որոշել ու դիմել էինք Բիւրոյին՝ յաջողեցնել, հանգստեան ուղարկւող հայկական գնդերից մէկը Ղարաբաղ ուղարկելու: Թիֆլիսում եղած օրերին այդ մասին

բաւական երկար բացատրութիւններ եմ տւած, որ Հանդստի ուղարկւող գնդի հետ կարելի լինէր ռազմամթերք փոխադրել Ղարաբաղ: Քանի որ երկաթուղուն միացնող Շուշի-Ելզախ ճամբան արդէն վտանգւել էր, ղեկտեմբերից սկսած պէտք էր միջոցներ ձեռք առնել, համեմատաբար ապահով գծով՝ Նոր-Բայազէտ-Վայոց Ձոր (Դարալագեաղ)-Սիսիան-Զանգեզուր գծով կատարել փոխադրութիւնը: Հէնց այդ նպատակով էլ Հայրապետը գնում է Գանձակ, այնտեղից անցնելու Թիֆլիս: Այդ մասին Կ.Կ-ում մտքերի փոխանակութիւն եղել էր արդէն Հայրապետի առաջարկութեամբ, և ընկերները յանգել էին յիշեալ եղրակացութեան:

Խաղաղարար յանձնախումբը Աղդամ մեկնելու յաջորդ օրը Հադրութից չտապ կերպով Շուշի է հասնում այնտեղի հայկական դպրոցի երկարամեայ վաստակաւոր ուսուցիչ դաշնակցական Ստեփան Ստեփանեանը, որը ընկերական շրջաններում յայտնի էր Զիժիկ անունով (կարճահասակ լինելու համար այդ անունով էին կնքել իրեն): Ստեփանը Հադրութի շրջանային կոմիտէի նախագահն էր և առաջարկեց չտապ կերպով Կ. Կ.-ի նիստ գումարել: Անմիջապէս լուր տրւեց ընկերներին, հաւաքւեցին, և Ստեփանը յայտնեց, որ սահմանապահ վեցերորդ գնդի մեծ մասը հեռանալուց յետոյ, մեկ վաշտ յետ է ընկել և պիտի գայ Շուշի. իսկ գնդի թողած ռազմամթերքի մասին, սահմանապահ զօրամասերի հրամանատարը, աղդով լեհ Յահլ Մէյերովիչ Ռամիշևակին, որ ընտանիքով ապրում է Հադրութում, հայասէր մարդ է, երեխաների հետ էլ պարապում, դասաւանդում է մեր ընկեր Ասլան Միրզայեանը, որին ասել է մտերմաբար, որ պահեստում, Ջեբրայիլ աւանում, մնացել է չուրջ 750 հրացան և 300 հազար փամփուշտ. վախենում է՝ թուրքերի ձեռքն ընկնի, ուստի առաջարկում է մեզ փոխադրել հայկական գիւղերից մեկը: Առաջարկը ընկերները ընդունել են և որոշել Կ. Կ.-ին յայտնել այդ մասին ու խնդրել, որ կուսակցական կնիքով վաւերացւած հրահանգ գրւի գիւղական խորհուրդներին ներկայացնելու, որպէսզի առանց առարկութեան, անմիջապէս իրենց ունեցած փոխադրական միջոցները տրամադրեն Հադրութի մարմնին՝ անյապաղ ռազմամթերքը փոխադրելու մօտակայ հայկական գիւղերը: Այդ զեկոյցը բոլորիս մեծ ուրախութիւն պատճառեց, որ գոնէ հարաւային կողմից ինքնապաշտպանութեան միջոց կունենայ ժողովուրդը. ուստի հէնց տեղի վրայ գրւեցին անհրաժեշտ գրութիւնները, որոնք կնքելով յանձնեցին Ստեփանին, որը վերադարձաւ Հադրութի ընկերների հետ գործի անցնելու: Երրորդ օրը ընկերները տեղեկացրին, որ գիւղացիները սիրով ընդառաջել են և այնքան ձիեր, ջորիներ, էշեր են տրամադրել որ կարողացել են մեկ գիշեր մինչև լոյս աշխատելով ամբողջ ռազմամթերքը փոխադրել մեր գիւղերը՝ Բանաղուր, Յոր, Հադրութ և Կարմրակուճ:

1918

Յունուար 3-ին Պետական Դումայի թուրք պատգամաւոր Իսմայիլ Խան Զիաթխանովը Աղդամ հասնելով Գանձակից, հեռագրով խնդրում է հայ-թրքական կոմիտէին՝ հեռագրական ապարատի մօտ հաւաքուել, ասելիք ունի: Շուտով կերպով հաւաքուեցինք ապարատի մօտ՝ հայեր Լ. Վարդապետեան, Աչոտ Մելիք Յովսէփեան, Եղիչէ Իշխանեան և թուրքեր՝ Լիւթփալի Բէկ Բէհբուդով,[46] Խոսրով Փոլադով և Հէյդար Բէկ Հիւսէյինով:

Շուչու պետական դանձարանը, որը Գանձակի նահանգական դանձարանի ճիւղն էր հանդիսանում, ամիսներից ի վեր դրամազուրկ էր, դանձարանի կառավարիչը քանիցս դիմել էր Գանձակ դրամ փոխադրելու, բայց փոխադրութիւնը յապաղում էր և դա ծանրօրէն անդրադառնում էր քաղաքի և գաւառի տնտեսական կեանքի վրայ: Հաղարաւոր մարդիկ դանձարանի խնայողական արկղում դրամ ունէին, բայց մէկ կոպէկ ստանալ չէին կարող, դանձարանը դատարկ լինելու պատճառով:

Զիաթխանովը յայտնում է, որ երկուսուկէս միլիոն դրամ է բերել հետը Գանձակից Շուչու դանձարանի համար, սակայն Աղդամ հասնելով, տեղեկացել է որ ամենուրեք անիշխանութիւն է տիրում և Աղդամում էլ խաղաղարար յանձնախումբը հեռանալուց յետոյ, դարձեալ կարծես սկսել են հակառակութիւնները, ինչպէս տեղում են պատմում: Եւ քանի որ խաղաղութիւնը խախտած է տեսնում, չի ուզում չարունակել ճամբան մինչև Շուշի, այլ վերադառնալ Գանձակ իր հետ բերած երկուսուկէս միլիոն դրամն էլ տանելով Գանձակ, վերադարձնել դանձարանին:

Ի պատասխան Հայ-Թրքական կոմիտէն յայտնում է, որ քաղաքը, չնորհիւ դանձարանի դրամազուրկ լինելուն, մատնուած է

---

[46] Ի դէպ, Լ. Բէհբուդովի կինը՝ Էյլա խանումը, վարչապետական Կաղան քաղաքացի Թաթար ծնողների աղջիկ էր, կրթուած և բացի ռուսերէնից, վիպեր նաև լեհերէն, գերմաներէն, ֆրանսերէն և անգլերէն: Բազից փոխադրելով Շուշի, ամուսնուն պայման էր դրել հայկական Թաղում ապրելու, չէր հանդուրժում Թրքական Թաղերն կեղտը: Աղախինը, ծառան և երեխաների դաստիարակը հայեր էին և այդ պատճառով Թուրքերի յարդանքը չէր վայելում: Բազի միլիոնատէր հաջի Զէյնալ Թաղիևի հետ ունեցած յայտնի դատավարութիւնից յետոյ, Բէհբուդովը զգուշանում էր, որ կարող էր մի կաչառած Թուրքի զոհ դառնալ. ատ ի զգուշութիւն, հայկական Թաղում էին ապրում: (Հեղ.)

ծանր կացութեան, թէ միջին խաւի և թէ բարձր խաւի (վաճառականներ) մարդիկ, զանձարանում, հաչուով, ահագին դրամ ունենալով, չեն կարող դրամ ստանալ զանձարանից, որովհետև վերջինս դատարկ է, բառի բուն նչանակութեամբ: Եւ որ Աղդամից մինչև Շուշի ճամբան ապահով է, զերծ աւազակախմբերից, ուստի առանց վարանման դրամներով միասին գայ Շուշի, որով քաղաքը աղատւած կը լինի տնտեսական տագնապից և Կոմիտէն հնարաւորութիւն կունենայ իրա հետ միասին խորհրդակցելու ստեղծւած ընդհանուր ծանր կացութեան ու կոմիտէին չահագրգռող մի չարք կարևոր հարցերի չուրջ, որոնց մասին իր կարծիքները լսելու կարիքն ունի կոմիտէն:

Փոխասացութիւնը տեղի էր ունենում ռուսերէն, որ տևեց գրեթէ երկու ժամից աւելի և չյաջողւեց համոզել այդ որակեալ մուսափաթիստ- համիսլամիստին, որ զար Շուշի և, որ կարևորն էը, դրամը բերէը յանձնէը զանձարանին. մի բան, որ կենսական նչանակութիւն և արժէք ունէը քաղաքի համար: Առանց կանխաւ մտքերի փոխանակութիւն ունենալու իրարու հետ, հայ-թրքական կոմիտէի հայ անդամների համար խիստ կասկածելի էը թւում Զիաթխանովի բռնած յամառ ընթացքը. յետոյ, երբ բաժանւեցինք կոմիտէի թուրք անդամներից, բոլորս նոյն եղրակացութեան էինք յանգել, որ Զիաթխանովը, հայերին նեղ վիճակի մէջ պահելու համար, չէր ուղում դրամը բերել Շուշի: Թուրքերի համար դա առանձին կարևորութիւն չունէր, նահանգական զանձարանը գտնւում էր Գանձակի թուրքաց մասում, ինչպէս պետական հաստատութիւնների մեծագոյն մասը. պարզ է, դրամը մնում է իրենց մօտ, իրենք կարող էին օգտւել նահանգական զանձարանից, մանաւանդ երբ անիչխանութիւնը համատարած էր դարձել և խաղաղ կեանքը նախկին ձևով վերականգնելու յոյսը չկար: Եւ այդպէս, Շուշու Հայութիւնը մնաց առանց դրամի, մի բան, որ չատ ծանրացրեց մեր վիճակը:

Յունւար 4-ին, վեցերորդ զնդի յետ մնացած մասը, երկու վաչտ, զերմանացի կապիտան Շմիդի գլխաւորութեամբ, Խուդաֆերինից Դիլգակի – Վարանդայի վրայով հասնում է Շուշի, տեղաւորւում կայազօրի ղօրանոցում: Վաչտի հետ գրեթէ միաժամանակ **Շուշի են գալիս Դիլգակի Առաքել գիւղից մի քանի հոգի, իրենց մասնաւոր գործով,** և պատմում են, որ թուրքերը, Կարիագինօի պահեստի պայթիւնից յետոյ, մի գիչեր, երբ գինւորները քնած են եղել, ահագին բաղմութեամբ յարձակւել են գինւորների վրայ, կոտորել բոլորին և երկու հարիւր հոգուց հազիւ երկու հոգի հրաչքով ազատւել են, փախել և ապաստանել Բանադուր հայկական գիւղը: Այդ դէպքի մասին արագօրէն տարածւեց քաղաքում, և հայերը Շուշի ևկած գինւորներին գուրգուրալի վերաբերմունք ցոյց տւին, աննղամթերք մատակարարեցին:

Միջկուսակցական Բիւրօն լրիւ կազմով նիստ ունեցաւ և քննութեան առաւ վեցերորդ սահմանապահ գնդի մնացորդի խնդիրը: Բիւրօն միահամուռ կարծիք յայտնեց, որոշելով յարաբերութեան մէջ մտնել զինուորների հետ, համոզել, որ մնան մեզ մօտ մինչև խաղաղութեան վերականգնելը, իսկ եթէ չուզենան մնալ, թողնեն իրենց զէնքերը, հրացաններն ու երկու մաքսիմ սիստեմի գնդացիրները, և հայկական գիւղերով գնան Գանձակ և այնտեղից Թիֆլիս կամ Բագու: Բիւրօն միանգամայն դէմ արտայայտուեց բռնի զինաթափման: Բիւրոյի բոլշևիկ և մենշևիկ անդամները յանձն առան միասնաբար բանակցել սպաների և զինուորների հետ և համաձայն որոշման, մի քանի անգամ ղօրանոցում հանդիպումներ ունեցան սպաների և զինուորների հետ: Զինուորները ասում էին, որ եթէ սպաները մնան, ի հարկէ, իրենք էլ կը մնան. իսկ սպաները միտք չունէին մնալու, ասում էին, թէ պարտաւոր են հասնել, միանալ իրենց գնդին: Վճռական դեր էր խաղում կապիտան Շմիդը. միւս երկու սպաները տեղակալ և ենթակայ էին Շմիդին, որը չէր ուզում զէնքերը թողնել մեզ: Թէև Շուչու կայազօրը մէկ ամիս առաջ լքել, հեռացել էր Շուչուց, բայց կայազօրի պետը, գնդապետ Բաչկովսկին, որ տարիներից ի վեր հաստատուած էր ընտանիքով Շուչում (ինքը, կինը, մէկ տղան և աղջիկը) մնացել էր և հեռանալու էլ միտք չունէր. ուստի խնդրեցինք նրան, որպէս աստիճանով բարձր սպայ, խօսի Շմիդի հետ և համոզի, զէնքերը թողնելու: Բաչկովսկին բարի ռուս մարդ էր, հայասէր և այնքան մօտ յարաբերութեան մէջ հայ ընտանիքների հետ, որ երեխաները, չարունակ դպրոցական ընկեր-ուհիների հետ լինելով, հայերէն էին սովորել և տեղական բարբառով լաւ խօսում էին: Բաչկովսկին սիրով յանձն առաւ և երկու անգամ բաւական երկար զրոյց ունեցաւ Շմիդի հետ, չկարողացաւ համոզել վերջինիս և ռուսական բացութեամբ արտայայտուեց, թէ՝ "իսկական Գերմանացի է, յամառ, ինչպէս եղը": Հետագային պարզուեց, որ վատ դեր էր խաղացել նաև պատահաղ Կուզմինը. այդ մասին յետոյ:

Յունուար 6-ին Աղդամից Հայ-Թրքական կոմիտէն հեռագիր ստացաւ, թէ կրկին խախտուել է խաղաղութիւնը, կողմերը լարուած պատրաստ են իրար յօշոտելու և խնդրում են մարդ ուղարկել՝ խաղաղեցնելու մտքերը, քանի որ տեղացիներին չեն ուզում լսել իսկ:

Կոմիտէի անդամները չտապ նիստ ունեցան և որոշեցին յաջորդ օրն իսկ ուղարկել Աղդամ մէկ ուրիչ յանձնախումբ՝ մտքերը խաղաղեցնելու համար: Յանձնախումբը կազմուեց չորս հոգուց՝ երկու հոգի դաշնակցականներ՝ Անուշաւան Տէր Միքայէլեան և Յակոբ Բալասանեան, ու երկու հոգի մենշևիկներ՝ Լևոն Վարդապետեան և Աչոտ Յովսէփեան, որոնք ամսի 7-ին մեկնեցին Աղդամ:

Ճիչտը խոստովանած, Թրքական յետամնաց, անիշխանական դանդաւածների մտքերը խաղաղեցնելով Թուրքերը մեծապէս իրենք էին օգտւում: Նրանք Թայֆաների բաժանւած պայքարում էին իրարու դէմ. բանման վայրն էլ հեռու էր մեզանից և մենք հարկաղրւած էինք ընդառաջել Թուրքերի խնդրանքին, որպէսզի հասկանային, որ մենք անկեղծօրէն ցանկանում էինք վերականգնւած տեսնել խաղաղութիւնը այնպէս, ինչպէս մինչև յեղափոխութիւնն էր: Եւ մեզ համար չատ Թանկ արժէր և խիստ անհրաժեշտ էր խաղաղութիւնը, հարևան ժողովրդի համերաշխ վերաբերմունքը. այլապէս եԹէ պրովակացիայի ենԹարկւէր Թրքութիւնը և կրկնւէին 1905/06 Թւերի ազգամիջեան ընդհարումները, մենք կորստեան կը մատնւէինք, որովհետև ռազմական պաշարից զուրկ էինք. եԹէ ընդհարումներ տեղի ունենային, կասկածից դուրս էր, որ Հերոսական դիմադրութիւններին յաջորդէր կատարեալ պարտութիւնը, զինական պաշարի սպառման հետևանքով: Բիւրոյի որոշումն էր, ամէն գնով նպաստել խաղաղութեան:

Յեղափոխութիւնից առաջ, տարբեր ժամանակներ, մէկից աւելի տաճկական լրտեսներ էին ձերբակալել ԹԷ՛ Գանձակի և ԹԷ՛ Բագւի նահանգի զանազան վայրերում: Մեզ համար կասկածից դուրս էր, որ յեղափոխութիւնից յետոյ, տաճկական լրտեսներն ու քարոզիչները աւելի դիւրութիւն ունէին Թափանցելու Թրքական զանգւածների մէջ և զրգռութիւն հրահրելու: Եւ անակնկալի չգալու համար, Բիւրօն զբաղւում է ինքնապաշտպանութեան հարցով ու համապատասխան որոշում կայացնում, այն է՝ ԹԷ՛ քաղաքում և ԹԷ՛ գիւղերում ցուցակագրել ինչքան զէնք և մթերք ունենք, ԹԷ քաղաքը և ԹԷ զաւառները բաժանել ինքնապաշտպանական շրջանների, որոնք պիտի ունենան իրենց ինքնապաշտպանական մարմինները և հրամանատարները: Եւ դուտ ինքնապաշտպանական գործի ղեկավարութիւնը տալ սպաներին, որոնց պիտի ենԹարկւեն խմբապետները: Առ ի զգուշութիւն որոշւում է առաջին հերթին քաղաքի ինքնապաշտպանութեան գործը կազմակերպել և աշխատանքը յանձնարարւում է Յար. Թումեանին ու ինձ՝ սպաների հետ միասին կատարելու և ղեկավարութիւնը Թողնելու իրենց: Քաղաքը, ինչպէս հայ-Թրքական ընդհարումների ժամանակ էր, նոյն ձևով բաժանւում է վեց շրջանի, որոնցից իւրաքանչիւրը ունենում է շրջանային կամ Թաղային իր խորհուրդը, իր շրջանապետը, ենԹակայ՝ շրջանի հրամանատար սպային: Թաղային խորհուրդը շրջանապետի հետ միասին ցուցակագրում է իւր շրջանի զէնք ունեցողներին, որոնք պէտք է հերթով և խիստ աննկատելի կերպով զիրքապահութիւն անեն գիչերները:

Խաղաղարար երկրորդ յանձնախումբը, աղղամիջներին խաղաղեցնելով, երրորդ օրը վերադառնում է Շուչի:

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Վեցերորդ գնդի մնացորդ զինուորներն ու սպանները, իրենց ճամբան չարունակելու համար, խնդրում են, որ փոխադրական միջոցներ տրվի իրենց: Ֆուրգոնների կարիք ունէին և պէտք է առ նւազն չորս հատ ունենային, որպէսզի կարողանային իրենց իրերը և գնդացիրները բարձէին: Ֆուրգոններ միայն Թուրքերն էին աշխատեցնում և չորս ֆուրգոն տրւում է 6-րդ գնդին: Պէտք է մեկնէին ամսի 12-ին, բայց մէկ օր առաջ են մեկնում, նրանց հետ միասին նաև դատախազ Կուզմինը: Ասկերանից անցնելու ժամանակ, խաչէնցիներից ու վարանդացիներից նշանակւած պահակախումբը տեղնակ լինելով, խաղաղ կերպով ղէնքեր ստանալու համար քաղաքում կատարւած անյաջող փորձին, մտածում են բռնի կերպով զինաթափ անել. բայց Դալի Մահրասան արգիլում է, քանի որ կենտրոնից նման ակտ կատարելու կարգադրութիւն չէր եղած:

Յունւար 13-ին Բարդայում Թուրքերը, դատախազ Կուզմինի աջակցութեամբ, կարողանում են խաղաղ կերպով զինաթափ անել 6-րդ սահմանապահ գնդի մնացորդին: Կուզմինը համոզում է Շմիդին, թէ մինչև երկաթուղու կայարան 20 վերստ կտրելիք ճամբայ ունեն, որ երեք-չորս ժամում կը հասնեն, և, վազոն նստելուց յետոյ, բնաւ կարիք չպիտի ղգան ղէնքի, ուստի աւելի լաւ է ղէնքերը յանձնեն տեղական իշխանութիւններին, պաշտօնական արձանագրութեամբ և հանդիստ չարունակեն ճամբան: Կուզմինը, միաժամանակ, Թուրք գլխաւորների հետ առանձին է խօսում. միաժամանակ, պայմանաւորւում է քառասուն հազար ռուբլի կաշառք տալով սպաներին, յաջողեցնել գործը: Շմիդը համաձայնութիւն է տալիս: Այս մասին մենք տեղեկանում ենք Աղդամից և Բարդայից եկած հայ արհեստաւորներից, որոնք մինչև յունւարի վերջերը աշխատելիս են եղել յիշեալ վայրերում:

Ռուսները գնալուց յետոյ, զօրանոցը մնում է Թափուր. ոչ ոքի ուշադրութիւնը չէր գրաւում: Զօրանոցի բակը բաւական ընդարձակ էր, այնքան, որ կայազօրի 500-600 հոգի զինւորները իրենց վարժութիւններն ու զանազան զօրախաղերը կատարում էին այնտեղ, առանց նեղւելու, ազատ կերպով: Զօրանոցը գտնւում էր քաղաքի վերին ծայրամասում, հայկական Թաղում, և քանի որ ազատ էր բակը, Թաղի պատանիները այնտեղ խաղում էին: Մի քանի օր անց, պատանիներից մէկը, որ հայկական դպրոցի աշակերտներից էր, գալիս է Միջկուսակցական Բիւրոյի գրասենեակը, յայտնում, որ զօրանոցի ներսում, պատերի վրայ զինւորները վատ բաներ են գրել մեր հասցէին:

Անմիջապէս ներկայ գտնուողներս՝ Աչ. Մ. Յովսէփեան, Նիկ. Խաչատեան, Մ. Եսայեան, Յար. Թումեան, Աբ. Միքայէլեան ու ես գնացինք ղօրանոց ու պատերի վրայ, երկու տեղում, ածուխով և լաւ ձեռագրով գրած էր հետևեալը՝ ռուսերէն " սոլիօնիըմ արմիաչկամ նի օղնովո ռուժիա նևէ սդաղիմ, ումրեօմ, նևէ սդաղիմ. Սոլդատոմ չէստովո պոգրանիչնևվո պոլկա, 1918 գ. 10 վո եանվարեա (բառացի թարգմանութիւնը՝ աղի հայուկներին ոչ մի հրացան չենք տայ. կը մեռնենք, չենք տայ: Սահմանապահ վեցերորդ գնդի երրորդ վաշտի զինուորներ: 1918 թ. յունուարի 10-ին):

Վիրաւորական գարշելի գրութիւնը խոր զայրոյթ առաջացրեց բոլորիս մէջ: Մեր հոգատար լաւ վերաբերմունքի համար, արժանացանք նման "երախտագիտական" գնահատանքի, որ աւելի քան գարշելի է: Մեր մէջ Յարութիւնը, որ չատ տաքարիւն էր, ճչաց, "սրիկաներ, ձեզ հետ պիտի վարուէինք այնպէս, ինչպէս թուրքերը վարուեցին Շամքորում: Այո, պիտի բռնի ոյժի զիմէինք, զինաթափ անէինք, թէկուզ զոհեր էլ տայինք, որպէսզի իմանայիք, որ իւղը մածնից են պատրաստում":

Մեզնից ոչ մէկը, սակայն, չէր կասկածում, որ պատերի վրայ Շմիդն է գրել յիշեալ վիրաւորանքը ուղղած մեզ: Յարական տէմար կառավարութիւնը երբէք չկարողացաւ ճանաչել ոչ իւր բարեկամ տարրերին և ոչ էլ թշնամիներին: Գերմանիայի հետ պատերազմ ունենալով, արևմտեան ճակատի մէկ հատուածի հրամանատար էր նշանակել զօրավար Ռենինկամպֆին[47], որին յետոյ պաշտօնանկ արաւ, որովհետև միանգամայն չմտածած քայլ է արել՝ քանդել տալով Բալթիկ ծովափին գտնուած Լիբաւայի բերդը և դրանից օգտուել են գերմանացիները, գրաւել անպաշտպան քաղաքը, ձեռք բերելով այնտեղ կուտակուած տասնեակ միլիոնաւոր տոն ալիւրը:

Յարական կառավարութիւնը, նկատի ունենալով հայերի և տաճիկների դարաւոր թշնամութիւնը, պէտք է պատերազմի սկզբից ռուսական բանակում եղած բոլոր հայ զինուորներին, որոնց թիւը հասնում էր 300 հազարի, կետրոնացնէր կովկասեան ճակատում, որտեղ պաշտօնները չպիտի տրուէր ոչ միայն մահմեդական զինուորականների, այլ և քաղաքացիական սիվիլ պաշտօնեաների, որոնք ի վնաս պետութեան էին գործում: Յարական կառավարութիւնը, հարկաւ, չատ լաւ էր հասկանում հայերի

[47] Ռենինկամպֆ, Պ. Կ. Ռեննենկամպֆ (1854-1918): Ռուս գեներալ, Առաջին Համաշխարհային պատերազմի սկզբում եղել է բանակի հրամանատար, արեւելա-պրուսական ռազմական գործողութեան ժամանակ կրած պարտութեան մեղաւորներից մէկը: Գնդակահարուել է բոլշեվիկեան յեղափոխական արիքունալի դատավճռով (ինչ խօսք, ոչ յիշեալ ռազմական գործունէութիւն ձախողման համար, այլ պարզապէս որպէս ցարական զինուորական): (Խմբ.)

վերաբերմունքը դէպի Թիւրքիան և գիտէր, թէ ինչպիսի եռանդով ու քաջութեամբ կարող են կռւել իրենց զարաւոր ոսոխի դէմ, սակայն, ամենայն հաւանականութեամբ կասկածում էր, թէ պատերազմի վախճանին, միատեղ կռւտակւած հայկական զինւած զանգւածը փորձանք կը դառնար իր պլսին, զէնքն ուղղելով ի՛ր դէմ, անկախանալու նպատակով. Թէև, հայերը միմիայն իրենց եղբայրներին Թրքական ծանր լծից աղատելու մտքով էին տարւած, առանց Ռուսաստանից անջատւելու միտում ունենալու: Գերմանացի Շմիդը ոչնչով չտարբերւեց Թիւրքիայում գտնւած Շմիդներից, որոնք ամենայն պաղարիւնութեամբ բաղում անգամներ հայկական կոտորածներն են նկարահանել, հայ ժողովրդին "ներքին թշնամիները" համարելով:

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ինչպէս յիշւեց իր տեղում, Միջկուսակցական Բիւրօի կազմը բաղկացած էր քսանումեկ հոգուց՝ ինն հոգի զաչնակցականներից և տասներկու հոգի միւս չորս կուսակցութիւնների երեքական ներկայացուցիչներից: Մենչևիկներն այդ օրերին (Յուն. 13) առաջարկում են, քանի որ Քաղաքային Ինքնավարութեան և Սահմանադիր Ժողովի ընտրութիւններին Դաչնակցութիւնը հայութեան ճնշող մեծամասնութեան քւէն էր ստացել, ուստի նա պէտք է օրինական մեծամասնութիւն կազմէ Բիւրոյում գէթ մէ՛կ ձայնի առաւելութիւն ունենալով տասներեք ներկայացուցիչներով: Մենք առարկեցինք դրա դէմ, պատճառաբանելով, որ Բիւրօն կազմւած է դուտ ինքնապաչտպանութեան նպատակով, քանի որ վտանգի պահուն, թշնամին ոչ մէկ խտրութիւն չի դնելու, թէ ո՞վ ինչ համոզումների տէր է և բոլոր կուսակցութիւններին պատկանող մարդկանց հանդէպ միատեսակ վերաբերմունք պիտի ունենայ: Կարճ ասած, մենք Բիւրոյի մէջ աշխատում էինք որպէս հայեր, առանց կուսակցական նպատակ հետապնդելու, ուստի մենք կարող էինք բաւականանալ նոյն իսկ ներկայ գտնւող եօթ ներկայացուցիչներով: Մենչևիկների առաջարկը չանցաւ:

Ռուսական վեցերորդ գնդի մնացորդը գնալուց յետոյ, Քոչարլուի և Ելախի միջև եղած ճանապարհը դարձեալ բռնւում է աւազակախմբերի կողմից և վտանգւում նաև թուրք ճամբորդների համար: Քաղաքը պարենի մեծ պաչար չունէր, մինչդեռ Ելախ կայարանում Քաղաքային Ինքնավարութիւնը բաւականաչափ ալիւր ունէր, որի մեծ մասը թալանել էին մօտակայ գիւղերի բնակիչները և ի լրումն այդ ամէնի կապը կտրւել էր Թիֆլիսի, մանաւանդ Բաքւի հետ, որտեղ Հայութեան մեծ մասը Զանգեղուր-Ղարաբաղցիներ էին,

որոնցից չատերը՝ գիւղացիներ, նաւթահանքերում աշխատող բանուորներ:

Յունուար 14-ին Բիւրօն որոշում է դատ-զատ յանձնախմբեր կազմել զէթ Գանձակի հետ մշտական կապ ստեղծելու, Ջրաբերդի (Ջիվանչիրի) գաւառում ալիւր ձեռք բերելու և հայ-թրքական ընդհարումների ժամանակ հանգուցեալ Բժ. Քր. Քալանթարեանի հանգանակած դրամով կառուցած Շուշի-Գանձակ լեռնային ճանապարհի նորոգման համար ստուգում կատարելու:

Գանձակ-Շուշի կապի համար ընտրեցին՝ Յար. Թումեան և Արշ. Քամալեան Գանձակ-Շուշի լեռնային ճամբան ստուգելու համար՝ Իւան Իշխանեան, որը ճանապարհի չինութեան ժամանակի վարչութեան նախագահն էր եղել և տեխնիկ Լեոն Մինասբէկեան և պարենի գնումներ կատարելու համար՝ Յովսէփ Տէր-Աւետիսեան և Ասատուր Ստեփանեան:

Նոյն օրը հայ-թրքական կոմիտէն հեռագիր է ստանում Աղդամի զործակալ մարմնից, թէ Վեղիրովների Հինդ Արխում ունեցած փիրման և բամպակ զտելու զործարանը կուսակնաձոր է զարձել գիւղացիական երկու թայֆաների միջև: Իւրաքանչիւրն ուզում է գրաւել, մանաւանդ՝ ամբարուած, զտուած բամպակը: Կողմերը զինուած են, ամէն րոպէ կարող է բախում տեղի ունենալ բամպակը թալանելու նպատակով և արիւն թափուել: Անհաւանական չէ, որ զործարանն ու բամպակը կրակի մատնուի: Վեղիրովները իրենց ինչքը թողել են ծառաների հսկողութեան տակ և փախել, ուստի խնդրւում է մարդ ուղարկել խաղաղեցնելու զրգռուած ամբոխներին և մի կարգադրութիւն անելու Վեղիրովների ունեցուածքի վերաբերեալ:

Կոմիտէն մտքերի փոխանակութիւն ունենալով, որոշում է խաղաղարար յանձնախումբ ուղարկել Հինդ Արխ, հանգստացնելու և հաշտեցնելու կողմերին, ապա, որպէսզի նորից կռիւ չծագի, երկու կողմի մարդկանցից մի մարմին ստեղծել և Վեղիրովների ինչքի պահպանութիւնը նրան յանձնել ցնոր կարգադրութիւն:

Որոշւում է յանձնախմբի կազմը՝ Աչոտ Մելիք-Յովսէփեան, Նիկողայոս Խալխանեան, Յակոբ Բալասաննեան և Արուփաղ Բէկ Հասանբէկով:

Յաջորդ օրն իսկ յանձնախմբերը մեկնում են, վեց հոգի, լեռնային ճանապարհով դէպի Գանձակ, իսկ խաղաղարարը՝ Աղդամ-Հինդ Արխ:

Յունուար 17-ին Հ. Մուսայէլեանը Թիֆլիսից Երևան, Նախիջևան երկաթուղով և այնտեղից, լեռնային ճանապարհով՝ Սիսիանի և Զանգեղուրի վրայով, հասնում է Շուշի: Եւ նա այդ ճամբան կտրել էր մի այնպիսի ժամանակ, երբ Գայլի Դրունքից մինչև Նախիջևան երկաթուղին ապահով չէր աւազակախմբերից և ի մասնաւորի Նախիջևան-Կարմալինովկա գիւղում վխտում էին աւազակախմբերը:

Հ. Մուսայէլեանը նախ իր կատարած աշխատանքի մասին զեկուցեց կենտրոնական կոմիտէին, ապա Բիւրոյի լիակազմ նիստին: Նա, հարկաւ, առաջին հերթին ներկայացել էր մեր Հ.Յ.Դ.-ի Բիւրոյին, նկարագրելով մեր վիճակը, ապա յայտնել մեր կարիքների մասին: Նա նոյնանման զեկուցումներ էր տուել Ազգային Խորհրդին ու Հայ Զինուորական Միութեան կենտրոնական խորհրդին:

Հ. Մուսայէլեանը զեկուցում է վերջին ամսայ ընթացքում տեղի ունեցած իրադարձութիւնների մասին, նշելով, որ ռուսական զօրքերի ճակատը լքելու հետևանքով, ճակատի ամբողջ ծանրութիւնը ընկած է հայ ժողովրդի վրայ և ստեղծած դրութիւնը, որ յղի է անակնկալներով, խիստ մտահոգութիւն է պատճառում աղգային մարմիններին: Մասնաւորապէս մեր չրջանի ինքնապաշտպանական գործին նպաստած լինելու նպատակով, Հայ Զինուորական Միութիւնը յանձն է առնում, մի գունդ կազմակերպել զարարաղցիներից և վորձառու սպաների ղեկավարութեամբ ուղարկել Շուշի: Գունդը կոչւելու է Շուշու անունով. և ինքը այնտեղ եղած ժամանակ հրամանատարական կազմը որոշել և սկսել է գնդի կազմակերպման գործնական աշխատանքը: Գունդը պէտք է գայ Շուշի Բայաղէդի, Դարալագեազի և Զանգեղուրի վրայով:

Հինգ օր յետոյ վերադարձաւ Հինգ Արևից խաղաղարար յանձնախումբը, որը կարողացել էր հաշտեցնել կողմերին, ընտրել խառն մի մարմին, վերջնիս յանձնելով Վեզիրովների գոյքի պահպանութիւնը: Կողմերին համոզել էին, թէ Վեզիրովների գոյքը ժողովրդական հարստութիւն է, չպէտք է ալան-թալանի տալ, այլ այնպէս կարգադրել գործը, որ ժողովուրդն օգուտ այդ հարստութիւնից և այն չդառնայ մասնաւոր անհատների սեփականութիւն: Եւ ըստ կարգի երրորդ խաղաղարար յանձնախումբը վերջինը եղաւ, որ գնաց Մուղանի տափաստանի միջ-թայֆայական հակառակութիւնները վերացնելու: Վերջինների գոյքը պահպանեց մինչև տաճիկների մուտքը Ղարաբաղ, 1918 թ. ամառը: Տաճիկները ոչ միայն գրաւեցին Վեզիրովների, այլ և ուրիշների չարժական և իրենց պիտանի գոյքերը: Ի դէպ, տաճիկները Կովկասից նահանջելուց յետոյ, չատ մանրամասնութիւններ, իրենք, թրքերն էին մեզ պատմել խոր

ղժգոհութեամբ, թէ ինչպիսի վնասներ են կրել: Տաճիկները հաղարաւոր տոն ցորեն ու գարի էին բռնագրաւել և Բաֆոմի վրայով ուղարկել Պոլիս. բացի այդ, ղօրքի համար, թէ՛ քաղաքներում և թէ՛ գիւղերում, սպիտակեղէն էին հաւաքել տուրքի ձևով: Գիւղացիները հեգնելով ասում էին՝ "այս օսմանցիները փոխանակ ժողովրդին օգնելու, չունևորներին սպիտակեղէն բաշխելու, ժողովրդի վրայի սպիտակեղէնն են խլում. Նիկոլայի կառավարութիւնը նման բան երբէք չէր անում :" Տաճիկները հեռանալուց տափաստանի թուրքերը գոհ էին մնացել:

Հ. Մուսայէլեանի բացակայութեան ժամանակ, Բիւրօն, իր լիակազմ նիստում քննութեան էր առել Բիւրօի բիւջէի խնդիրը: Բիւրոյի անդամներից ոչ մէկը նիւթական որևէ ակնկալութիւն չունէր, իւրաքանչիւրը ապրում էր, աւելի ճիշտ՝ ինչպէս կասեն "եօլա էր գնում", սակայն քաղաքի և գաւառների ոստիկանական պաչտօնէութիւնը պահելու համար դրամ էր պէտք, իսկ Բիւրօն դրամ չունէր, ուստի որոչեց առ այժմ 200,000 ռուբլի հանգանակել քաղաքի հայ բնակչութիւնից: Բիւրօն, նկատի ունենալով, որ քաղաքի հայ բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը հաղիւ էր կարողանում իւր կարիքները հոգալ, ի վիճակի չէր դրամ տալու, ուստի որոչեց, որ 200,000 ռուբլին զանձւի ունևոր դասից: Եւ, որպէսզի հայ-թրքական ընդհարումների ժամանակւայ դժգոհութիւնները տեղի չունենան, թէ բռնութիւն է գործ դրւում դրամ զանձելուց, որոչեց հրաւիրել վաճառական դասի և գործատէր, բանւորներ աշխատեցնող արհեստաւորների ներկայացուցիչներին ու բաշխման գործը յանձնել նրանց, որոնք կորոշեն իւրաքանչիւրի վճարելիք գումարը, ապա ցուցակի երեսով կը գանձեն դրամը և կը ներկայացնեն Բիւրոյին:

Քաղաքացիների ներկայացուցիչների ժողովը տեղի ունեցաւ Մննդեան տօներին Բիւրոյի դրասենեակում: Ներկայացուցիչներին բացատրւեց ժողովի նպատակը և ոչ մէկ առարկութիւն չեղաւ: Մէկ չարաթ ժամանակ տրւեց, որ կազմեն բաշխման ցուցակը, համաձայն Բիւրոյի որոշման, նկատի ունենալով միմիայն միջոցաւոր մարդկանց և ներկայացնեն Բիւրոյին ի հաստատութիւն, որպէսզի գործի անցնեն:

Ժամկէտը չլրացած, ներկայացուցիչները Բիւրոյին յանձնեցին իրենց կազմած ցուցակը այն մարդկանց, որոնք պարտաւոր էին իրենց մասնակցութիւնը բերել հանգանակութեան և ցուցակում նչանակւած էր, թէ ո՞վ ինչքա՞ն պիտի վճարէր: Բիւրօն, հէնց ներկայացուցիչների ներկայութեամբ ծանօթացաւ ցուցակի հետ և գտաւ, որ կազմւած է ոչ Բիւրոյի տւած հրահանգի համաձայն: Ցուցակի մէջ էին մտցրել բոլոր ուսուցիչներին, գործակատարներին, խոհարարներին, ծառաներին և նման ուրիչներին, որոնք հաղիւ էին

իրենց գոյութիւնը քարչ տալիս, ուստի վերադարձուեց, որ նոր ցուցակ կազմեն, համաձայն Բիւրոյի որոշման: Երեք անգամ ներկայացուցիչները ցուցակ ներկայացրին և երեք անգամն էլ գտանք անբաւարար: Վերջին անգամին սուր փոխանացութիւն տեղի ունեցաւ ներկայացուցիչների միջև և ես հարկադրուած խոստիւ կշտամբեցի, որ զուրկ են ազգային ոգուց, չեն գիտակցում օրւայ պահանջը, որ ժողովրդի չքաւոր դասը առանց վարանելու բաց աչքերով ընդառաջում է վտանգին միշտ պատրաստ, կեանքի գնով պաշտպանելու ժողովրդին, իսկ ունևոր դասն էլ, որ անընդունակ է նման զոհաբերութեան, գէթ պէտք է սրտանց նիւթական զոհողութիւն անի, խրախուսելու մարտական տարրերին աւելի ոգևորութեամբ կատարելու իրենց ստանձնած դերը, մինչդեռ ունևոր դասը զողում է իր կոպէկների վրայ, ցուցադրելով միանգամայն ակնբախ կերպով իւր չարչիութիւնն ու կոպէկանոց լինելը:

Ներկայացուցիչները իմ վերաբերմունքը համարեցին անարդար, որ ես իրաւունք չունեմ վիրաւորելու իրենց, որ իրենք երբէք չեն խնայել իրենց դրամը, որ իրենք էլ ունեն իրենց ազգային պարտականութիւնը և այլն:

Ցուցակ ներկայացնողները երեք հոգի էին՝ Զուրաբեան Նիկողայոս, որը հեղնօրէն "Հայոց թագաւոր" անունով էր յայտնի քաղաքում, Շամիրեան Արչակ և Վարչաւսկիյ Համբարձումը, որի անունը չեմ յիշում, բայց որը իր խանութի անունով էր յիշատակւում գրութիւնների մէջ:

Մեր վիճաբանութիւնն այնքան սուր կերպարանք ստացաւ, որ աւելի խիստ որակումներ անելով, կարճ ու կտրուկ հրահանգ տւինք, որ ցուցակի մէջ չպիտի մուծւի որևէ ուսուցչի, գործակատարի և անունը նման մարգկանց, որոնք ի վիճակի չեն դրամ տալու. պահանջած գումարը պիտի վճարեն միմիայն ունևոր մարդիկ: Եւ երեք օր ժամանակ տւինք, որ ներկայացնեն իրենց կազմած ցուցակը:

Վերջին սուր վիճաբանութիւնից երեք օրն անցել էր, բայց դեռ տեղեկութիւն չունէինք: Չորրորդ օրը Բիւրոյի նիստ ունէինք երեկոյեան: Ճաշից յետոյ չուկայով անցնելիս հանդիպեցի Վարչաւակիյ Համբարձումին, որն ասաց՝ "ես հէնց գալիս էի ձեղ մօտ, լաւ է, որ պատահեցինք: Այն օրը ինչ թուք ու մուր տւեցիր մեզ, մենք արժանի էինք, դեռ դա քիչ էր մեզ: Հէնց հիմա գնանք մեր ժողովարանը, տեսէք ինչ վիճակ է ստեղծւել: Բոլորը իրարուց դժգոհ են և փոխանակ մարդավայել իրար հետ խօսելու, փողոցային հայհոյանքներ են տալիս միմիանց, հեր, մեր, քոյր խառնելով իրար":

Շուկայի միլիցիոներներից մէկին տանելով մեզ հետ, գնացինք ռամկավարների ժողովարանը: Կովկասի Հայ Բարեզործական Ընկերութեան Շուշու ճիւղի վարչութիւնը ռամկավարներից էր կազմած և իրենց ժողովներն էլ տեղի էին ունենում բարեզործականի գրադարան-ընթերցարանի սրահում, որ շուկային շատ մօտ էր: Երբ մօտեցանք ժողովարանին, ներսում տիրող ժխորը լսելի էր դուրսը. խայտառակ ածականներով էին որակում միմեանց, ըստ պատւէրի՝ միլիցիոներ Ժամհարօղլի Ասատուրը, որ մեր հին ղինւորներից էր, յաղթանդամ, թիկնեղ մէկը, ներս մտնելով, իր թաւ բարիտոն ձայնով յայտարարեց, որ լռեն, մարդիկ են գալիս: Ներս մտանք այն րոպէին, երբ Շաֆիբեան Արչակը գոռում էր հայոց թագաւորի վրայ՝ "սուտ ասողի բալան մեռնի, ես քեղ չափ հարու՞ստ եմ, որ ինձ 5000 ես զրում": – Այո, դու էլ ինձ չափ ունես և պարտաւոր ես – պատասխանեց "հայոց թագաւորը": Երբ "հայոց թագաւորը" նկատեց մեզ, զարձաւ ինձ, թէ՝ "չորրորդ օրն է, և չենք կարողանում համաձայնութեան գալ. ահա մեր կազմած ցուցակը, ոչ մէկը չի համաձայնւում. վերցրէք, դուք նչանակէք գումարները, թէ ով ինչքան պիտի վճարի. մենք իրարու համոզել չենք կարողանում:"

Ցուցակը վերցրի, դուրս եկայ. ժողովականները չարունակեցին իրարու կչտամբանք ու հայհոյանք տեղալ:

Բիւրոյի նիստին դնկուցեցի ռամկավարների ժողովի մասին, որ համաձայնութեան չեն եկել. խնդրի լուծումը թողել են մեզ:

Մտքերի բաւական երկար փոխանակութիւն տեղի ունեցաւ և բոլորը գտնում էին, թէ ոչ ոք չգիտէ, ով ինչ միջոցներ ունի և ինչքան կարող է վճարել: Աչոտ Մելիք-Յովսէփեանի հետ կանխաւ մտքերի փոխանակութիւն էինք ունեցել, որ միակ միջոցը ստոյգ տեղեկութիւն ունենալու այն է, որ Փոխատու Վարկի Դրամատան և պետական գանձարանի հաչւապահներին՝ Կոստանդին Յարութիւնեանին (մենչևիկ) և Կարապետ Յակոբեանին (դաշնակցական) հրահանգենք, ներկայացնեն յիչեալ հաստատութիւններում դրամ ունեցողների ցուցակը, թէ ով ինչքան դրամ ունի մուծած և այդ ցուցակը հիմք ունենալով որոչի գումարները:

Նոյն միտքը յայտնեցի նաև Բիւրոյին: Առարկութիւն արին միայն ռամկավարները, թէ՝ օրէնքով դրամատան հաչւապահը իրաւունք չունի նման տեղեկութիւն տալու, որ դա դրամատան գաղտնիքը դրսեւորել է նչանակում, որ նման քայլ անողը կը պատժւի:

Աչոտը հարց տաւ, ո՞վ պիտի պատժէ կամ ո՞ր իշխանութիւնը: Այն օրէնքը, որի մասին խօսւում է, նրա սահմանողը գոյութիւն չունի և ներկայիս իշխանութիւնը քաղաքում և գաւառներում հանդիսանում է Բիւրօն, ուստի Բիւրօն էլ համապատասխան որոշում պիտի կայացնի:

Բիւրօն որոշում կայացրեց և որոշման կիրառումը թողեց նախագահութեան:

Յաջորդ օրն իսկ Կ. Յարութիւնեանին և Կ. Յակոբեանին յայտնեցինք Բիւրոյի որոշումը և նրանք խոստացան երկու օրւայ ընթացքում կազմել ցուցակները, որոնցով ներկայանան, մեզ հետ միասին ցուցակի չուրջ խորհրդակցելու. թերևս լինեն խնդիրներ, որոնց չուրջ լուսաբանութիւններ կը տան:

Կ. Յարութիւնեանը և Կ. Յակոբեանը ներկայացրին պահանջւած ցուցակները և յայտնեցին, թէ մօտ վեց ամիս է ոչ ոք դրամ չի մուծում դրամատուն, վախենալով, որ կորստեան կը մատնուեն, ուստի դրամը տներում են պահում, թերևս հէնց ժամանակւայ սովորութեամբ, ապահովութեան համար, կամ ամանների մէջ թաղում են հողում: Այնպէս որ նկատի ունենալու է այդ հանգամանքը:

Բիւրօն ցուցակների չուրջ մտքերի փոխանակութիւն ունենալով, որոշեց՝ որպէս տուրք, հիմք ունենալով ցուցակում յիշատակւած գումարները, բոլորից անխտիր պահանջել տաս տոկոսը:

Հարկաւ առանց միջադէպերի չանցաւ գանձումը, գտնւեցին տիպեր և ամէնից ունևորները, որոնք սկսեցին սակարկել, թէ իրենց կարողութիւնից վեր է Բիւրոյի պահանջը, չեն կարող վճարել և այնքան յամառեցին, որ հարկադրւած եղանք բանտարկել այդպիսիներին: Իսկական չարչիներ: Երբ վերադարձաւ Թիֆլիսից Յայրապետ Մուսայէլեանը, բանտարկութեան ենթարկւածները գանգատւեցին նրան որպէս նախագահի և մասնաւորապէս իրենց ղժգոհութիւնն ու բողոքը յայտնեցին իմ դէմ, որ իբր ես անհատաբար եմ գործել, նկատի չեմ առել իրենց առարկութիւնները, խիստ եմ գտնւել ու նոյն իսկ հայհոյել իրենց:

Հայրապետը ականջ չի կախում, կարճ ու կտրուկ պատասխանում է, յայտարարելով, թէ ինչ որ կատարւել է, Բիւրոյի որոշմամբ է կատարւել և առանց հիմք ունենալու չէ տեղի ունեցած խստութիւնը:

Մի օր, յունւարի երկրորդ կէսերին, առաւօտեան տնից դուրս գալով փողոց, նկատեցինք բոլշևիկների Կովկասեան էմիսարի անունից պատերին փակցւած յայտարարութիւնը, որով հրահանգւում էր իրենց ընկերներին, համաձայն կուսակցութեան կենտրոնական կոմիտէի որոշման, չմասնակցել ազգային մարմինների աշխատանքներին:

Այս յայտարարութիւնը լաւ տպաւորութիւն չթողեց Բիւրոյի ոչ բոլշևիկ անդամների վրայ և բոլորը այն տեսակէտն ունէին, որ Ղարաբաղը բացառիկ պայմաններում է գտնւում, վտանգը սպառնում է բոլոր հայերին անխտիր, և Բիւրօն կազմւել է վտանգը կանխելու համար. որ բոլշևիկները առանց առարկութեան մտել են կազմի մէջ և մեկ ամսից աւելի է, մինչև այժմ մեզ հետ միասին են ընթանում, պէտք է չարունակեն նոյն ընթացքը և պիտի ջանայ, որ չհեռանան կազմից:

Յունւար 24-ին տեղի ունեցած Բիւրոյի լիակազմ նիստին Ալէքսանդր Մատուրեանը (Ալ. Ռուբէնի)[48] յայտնեց, որ առաջարկութիւն ունի իրենց կազմակերպութեան կողմից, և ծոցից հանեց նեղ, բաւական երկար մի թուղթ ու սկսեց կարդալ՝ "Ի նկատի ունենալով, որ տեղի ունեցած Ռուսական վերջին մեծ յեղափոխութիւնը չի նմանւում, այլ բոլորովին տարբերւում է Ֆրանսիական և այլ բուրժուական յեղափոխութիւններից, որոնք առաւելապէս քաղաքական բնոյթ են ունեցել, մինչդեռ Ռուսական մեծ յեղափոխութիւնը առաւելապէս սոցիալական բնոյթ ունի, ձգտելով հիմքից փոխելու երկրում տիրող կարգերը" և այսպէս, մի երկարապատում "բոլշևիկեան Դանիէլի գրութիւն", որի եղրակացութիւնը այն էր, թէ իրենք չեն կարող գործօն մասնակցութիւն ունենալ մի օրգանի, որում բաղմած են բուրժուազիայի ներկայացուցիչները. մինչդեռ ռուսական յեղափոխութեան նպատակն է խորտակել բուրժուազիայի տիրապետութիւնը և նրա փլատակների վրայ հաստատել պրոլետարիատի դերիշխանութիւնը:

Երբ Մատուրեանը վերջացրեց իր ընթերցումը, ռամկավարների ներկայացուցիչները վեր կացան ու յայտարարեցին, որ իրենք է՛լ չեն կարող մասնակցել Բիւրոյի աշխատանքներին,

---

[48] Մատուրեան Ալէքսանդր Միքայէլեանի (Ռուբէնի): Ծնւել է Շուշիում 1881թ., յետոյ տեղափոխւել է Բաքու, 1903թ. մտել է սոցիալ-դեմոկրատական բանւորական հայ կազմակերպութեան մէջ: 1909-1913թթ. սովորել է Մոսկուայում, վերադարձել Շուշի,աշխատել թեմական դպրոցում որպէս ուսուցիչ, ապա՝ տեսուչ: Ղարաբաղի հայ բոլշևիկեան կազմակերպութեան ղեկավարներից էր: Ունի հրատարակութիւններ ժամանակի հայ մամուլում: Զոհւել է 1920թ. Շուշիում թուրքերի (ադրբեջանցիների) կազմակերպած ջարդի ժամանակ: (Խմբ.)

մինչև պարզ կերպով չորոշւի միւս հոսանքների վերաբերմունքը և դուրս գնացին:

Այնուհետև տեղի ունեցաւ վիճաբանութիւն Բիւրոյի երեք կուսակցութեանց ներկայացուցիչների և բոլշևիկների միջև: Բիւրոյի Դաշնակցական, սոց. յեղ. և մենշևիկ սոց.դեմ. անդամները պարզ յիշեցրին Բիւրոյի ստեղծման նպատակը, որ զուտ ինքնապաշտպանական է, քանի որ իրենք բոլշևիկները նոյնպէս ընդունում էին թուրք ժողովրդի յետամնաց լինելը, որ կարող է հնչտութեամբ պրովակացիայի ենթարկւել, դառնալ կոյր գործիք բէկերի և խաների ձեռքին, որոնց չատերի արտայայտիչն է Մուսաւաթ կուսակցութիւնը, որ թուրք ժողովուրդը ղուրկ է, չունի իր չահերին նւիրւած յեղափոխական, առաւել ևս սոցիալիստական կուսակցութիւն, որ պայքարէր Մուսաւաթական մութ ուժերի դէմ. և աւելի քան պարզ է, որ պրովակացիայի ենթարկւած թուրք ժողովուրդը, հակահայ դիրք բռնելով, ընաւ խտրութիւն չպիտի դնէ, թէ ով ինչ համոզմունքի տէր է և ո՞ր դասակարգի մարդ. հետևաբար, իր զէնքը պիտի ուղղէ բոլոր հայերի դէմ անխտիր, այնպէս որ, բոլշևիկների բռնած ընթացքը աւելի սխալ է և անընդունելի:

Ալ. Մատուրևանը կարճ յայտարարութիւն արեց, ասելով, թէ մնում են իրենց որոշման վրայ, գրաւոր յայտարարութիւնը թողնելով Բիւրոյին, և Արմ. Ղարագիոզեանի և Մել. Եսայեանի հետ միասին դուրս քայլեց:

Նիստը չարունակւում է, առանց կադետների և բոլշևիկների: Ջանցած քառորդ ժամ, սպասարանում մարդկանց ընդունող և ղեկուցանող մեր պաչտօնեան ներս մտաւ և կամացուկ ինձ կանչեց դուրս: Սպասարանում տեսայ Մել. Եսայեանին, որ նստած սպասում էր:

– Հը՞, ի՞նչ կայ, Մելիքսէթ:

– Սիրելիս, գիտե՞ս, որ ես նախկին դաշնակցական եմ և երկար տարիներ չատ մօտ եմ եղել Հանդուցեալ Դումանին, որի հետ իմ կապը չեմ կտրել մեծամասնականներին յարելուց յետոյ էլ: Վերջապէս, մեծամասնականներին յարելով ես հայ լինելուցս չեմ հրաժարւել լսո: Երեկ երեկոյեան ժողով ունեցանք և մինչև գիշերւայ մէկը վիճում էինք: Ես և ուրիշ երկու հոգի պնդում էինք, որ պէտք է մասնակցենք Բիւրոյի աչխատանքներին, նկատի ունենալով նախ՝ որ կտրւած ենք Ռուսաստանից, իսիտ ծանր կացութիւն է ստեղծւած հայութեան համար և երկրորդ, որ Ղարաբաղը կտրւած է նաև աղղային կենտրոններից և երրորդ, որ վտանգը հաւասարապէս սպառնում է բոլոր հայերին անխտիր: Ես դուրս եկայ ժողովից Մատուրևանի և Ղարագիոզեանի հետ միասին, սակայն ինչպէս երեկ յայտարարել եմ մեր ժողովին, ես կենտրոնական կոմիտէի հրահանգը մեզ համար պարտաւոր չեմ համարում. այնպէս, որ ես

այժմ աղատ քաղաքացի եմ և ինձ զնում եմ ձեր տրամադրութեան տակ, պատրաստ եմ կատարելու Բիւրոյի յանձնարարութեամբ իմ ուժերին համապատասխան որևէ աշխատանք:

Ես իմ գոհունակութիւնը յայտնեցի Մելիքսէթին. նա գնաց և ես իր պատմածները հաղորդեցի Բիւրոյին, որը գոհունակութեամբ նկատի առաւ այդ՝ առաջիկայի աշխատանքների համար:

Կաղետներին յայտնուեց, որ բոլշևիկները համաձայն իրենց կենտրոնի հրահանգի, չպիտի մասնակցեն Բիւրոյի աշխատանքներին, ուստի իրենք կարող են վերադառնալ և ստանձնել իրենց պարտականութիւնը:

Յաջորդ օրւայ լիակազմ նիստին, հարկաւ, առանց բոլշևիկների, մենշևիկները կրկնեցին իրենց մերժած առաջարկը, այն է, որ դաշնակցութիւնը, զէթ մէկ ձայնի առաւելութեամբ, մեծամասնութիւն կազմէ Բիւրոյում: Այդ առաջարկին պատասխանեցինք, որ դրա պէտքը մենք չենք զգում, որ Բիւրոյի կազմի մէջ մտած մեր ինն հոգին, լի ու լի բաւական են, նոյնիսկ աւելիով, քանի որ Բիւրօն ղուտ ինքնապաշտպանական նպատակով է կազմուել, առանց դասակարգային կամ կուսակցական նպատակների:

Պէտք է նշել, որ բոլշևիկները թէև հրաժարուեցին գործօն մասնակցութիւն ունենալուց Բիւրոյի աշխատանքներում, սակայն նրանք պայքարող հակառակորդ էլ չդարձան, նոյնիսկ որոշ դէպքերում քաղաքին կամ ընդհանուր Ղարաբաղին վերաբերող խնդիրների լուծման համար զումարուած պատգամաւորական ժողովներին մասնակցում էին խորհրդակցական կամ վճռական ձայնով: Եւ Բիւրոյի զէմ կամ հետագային, երբ դաշնակիցները զրաւեցին Կովկասը, Ազգային Խորհրդի գործունէութեան չրջանում, պայքար չմղեցին: Եւ պէտք է ընդգծել, որ մէկ ու կէս տարի կուսակցութիւնները գործեցին համերաչխօրէն, իրական կօալիցիօն իշխանութիւն ստեղծելով:

Հայ զինուորական Միութեան Շուչու ճիւղի վարչութեան կողմից գրաւոր զիմում էր ուղղուել Բիւրոյին, որ իրենց ներկայացուցչին թոյլ տրւի Բիւրօի նիստերին ներկայ գտնուելու: Դա աշխատանքների յաջողութեան համար անհրաժեշտ էր, որպէսզի միութեան վարչութիւնը իրազեկ լինէր տիրող կացութեան և կապը Բիւրոյի հետ աւելի սերտ լինէր:

Մտքերի կարճ փոխանակութիւն ունենալով Բիւրօն գտաւ միանգամայն բանաւոր Զինու. Միութեան զիմումը և որոշեց, որ նրա

ներկայացուցիչը մասնակցի Բիւրոյի նիստերին վճռական ձայնի իրաւունքով:

Այնուհետև առաջարկ եղաւ, Բիւրոյի ընթացիկ գործերի տնօրինումը թողնել Դիւանի լրիւ կազմին՝ Նախագահին (Հայր. Մուսայելեան), Փոխ նախագահներին (Եղ. Իշխանեան և Ա. Մ. Յովսէփեան), Քարտուղար (Արամ Միքայէլեան) և Գանձապահ – Հաշուապահին (Աստուր Ստեփաննեան):

Դիւանը կը դառնայ այդպիսով գործադիր մարմին և, անհրաժեշտ դէպքերում միայն, կը հրաւիրէ Բիւրոյի լրիւ կազմով արտակարգ նիստ, իսկ առ նուազն երկու չաբաթը մէկ անգամ հերթական նիստ՝ զեկուցումների համար:

Տեղեկութիւններ են ստացւում Ջրաբերդի շրջանից, որ ձակատից վերադարձած զինուորներ "թալանիր թալանուածը" նշանաբանով տարած անկարգութիւններ են սկսել, յարձակումները գործելով ունևոր գիւղացիների վրայ և սպառնում են Իւղբաշեանի տնտեսութիւնը տակն ու վրայ անել, թալանել: Ինչ խօսք, որ եթէ կտրուկ միջոցներ ձեռք չառնուեն, անիշխանական երևոյթներով կը վարակուեն միւս շրջաններն էլ: Որոշուեց պատժիչ մէկ խումբ կազմակերպել Բալլուջեցի Ալէքսան Բալասեանի հրամանատարութեամբ և երկու օգնականներով՝ Դալի Մահրասայի և Տամբաւ գիւղացի Մուսային (Մուսա Խաչատրեան) ուղարկել աւազակների դէմ:

Ալէքսան Բալասեանը, հայ Թրքական ընդհարումներին եղել է Համաղասպի օգնականը. Ղարաբաղում յայտնի է, Ալէքսան Դայի անունով, և անուն է հանած, որպէս քաջ մարդ և լաւ, անչեղ նշանառու:

Դալի Մահրասան կեղծ անունն է Դաչրուլաղ գիւղի Մևսրոպ քահանայ Շահիջանեանի, որ նախապէս եղել է փականագործ Մանթաշեանի Բազէի նաւթահանքերից մէկում. աւազանի անունը Յարութիւն էր, որ Բազում կոչել է Արտեմ և որովհետև քահանայի զաւակ էր, վերակոչել է Քէչիչօղլի Արտեմ: Պատանի հասակից մտած է եղել Դաշնակցութեան շարքերը և Բազէի Կ. Կ.-ի որոշմամբ տեռորներ է կատարել Բալախանում և Սաբունչիում, զաղտնի ոստիկաններ ահաբեկելով: Իւր հօր Եսայի քահանայի ցանկութեամբ քահանայ է ձեռնադրուում: Հայ Թրքական ընդհարումներին Համաղասպի խմբում մասնակցել է խմբի ունեցած բոլոր կռիւներին, աչքի ընկել իւր քաջութեամբ և իբրև անվրէպ նշանառու:

Մուսան Դամբաւ գիւղացի էր. դինուորական ծառայութիւնից անցած, կրտսեր ենիչասպայի աստիճանով, Հայ Թրքական ընդհարումներին մասնակցել էր Խաչէնի, Ջրաբերդի և Շուշու կռիւներում, աչքի էր ընկած իւր քաջութեամբ և միաժամանակ իւր համեստ կեցուածքով:

Ալէքսան Դային, խմբապետ Վարդանի (Խանասորի)[49] հետ միասին է եղել զինուորական ծառայութեան մէջ. Վարդանը փախել է, անցել Պարսկաստան և այնտեղից էլ Վասպուրական ինսուրնական թուականների առաջին կէսին, իսկ Ալէքսան Դային մնացել է մինչև ծառայութեան վախճանը և աւագ ենիչասպայի աստիճանով թողել զօրանոցը:

Ալէքսան Դային աքսորից ազատուելով առաջին պատերազմին Դալի Մահրասայի հետ միասին մի որոշ ժամանակ եղել են Իչխան Արղութեանի զնդում և Պարսկաստան գտնուած ժամանակ զինուրական ծառայութիւնից անցած մի չորք կամաւորների հետ քննութիւն էին տուել զօրավար Զերնազուբովի կայանում և սպայական աստիճան ստացել:

Երեքով միասին քսան հոգուց բաղկացած մի խումբ են կազմում և անցնում Ջրաբերդ. այնտեղ էլ աչքի ընկած գիւղացիներից տասնհինգ-քսան հոգու միացնում խմբին, ապա յարաբերութեան մէջ մտնում աւազակների հետ և առաջարկում առանց հակառակելու ներկայանալ, բայց աւազակները կտրականապէս մերժում են, սպառնալիքներ կարդալով: Բարերախտաբար, այդ ժամանակ Կուսապատ գիւղում էր գտնուում երկրագործական նախարարութեան պաշտօնեայ բամպակարոյծ ընկ. Խաչատուր Եղիազարեանը, որը չրջանում ճանաչուած և համակրանքի արժանացած, բարեհամբոյր մարդ էր: Անմիջապէս չտապում է դէպի վայրը և աւազակներին միացած գիւղացիներին համոզում է՝ չհակառակել Բիւրոյի կողմից ուղարկուած խմբին և գնալ իրենց տները: Աւազակախումբը բաղկացած էր ութ հոգուց. երբ գիւղացիները հեռանում են, աւազակների թափը մեկէն ընկնում է և տեսնելով, որ գիւղացիները չպիտի հովանաւորեն և օգնեն իրենց,

---

[49] Խանասոր. 1895թ. քրդական ցեղապետ Շարաֆ բէկը մասնակցում է Դաշնակցութեան մարտական խմբի ոչնչացմանը. զոհւում են երեք նախրեապետներ: Որպէս դրա դէմ վրէժխնդրութեան և յատկապէս Արեւմտեան Հայաստանում բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտութիւնը քարոզելու համար, ձեռնարկւում է ռազմական յանդուգն գործողութեան՝ խմբապետ Վարդանի գլխաւորութեամբ: Կազմակերպելով Իրանում, խումբը անցնում է Խանասորի Հովիտը, որտեղ գտնուում էր Շարաֆ բէկը: Անսպասելի յարձակում է կատարուում 1897թ. Յուլիսի 24-ին: 12 ժամ չարունակւում է դաժան մարտը: Յուլիսի 25-ի առաւօտեան հակառակորդը գլխովին ոչնչացած էր արդէն: Վարդանի հրամանով խնայում են միայն կանանց ու երեխաներին: Շարաֆ բէկը վախչում է՝ ծպտուած կնոջ հագուստով, սակայն նրա մօտ հիւրընկալուած Թուրք հարիւրապետը չի փրկւում: (Խմբ.)

համաձայնւում են յանձնել և խուսափել անտեղի և անօգուտ արիւն թափելուց: Աւազակները պրոֆեսիոնալ աւազակներ չէին, այլ դասալիքներ, "Թալանիր Թալանւածը" նշանաբանի ազդեցութեան տակ, ունևորների ինչքը գրաւելը արդար գործ համարելով, կարողացել էին բաւական գիւղացիների էլ միացնել իրենց:

Պատժիչ խմբի ունեցած յաջողութիւնը տարածւում է գիւղից գիւղ և որովհետև խումբը Բիւրոյի անունից էր գործել, Բիւրոյի վարկն էլ է բարձրանում. մի հանգամանք, որ կարևոր էր: Դաշնակցութիւնը Սիւնիքում (Զանգեզուր-Ղարաբաղ) մինչև հայ-թրքական ընդհարումները ղանգւածների կողմից ճանաչւած ու տարածւած չի եղել. հայ-թրքական ընդհարումներին կուսակցութիւնը արագօրէն տարածւեց ու ճանաչւեց: Եւ որովհետև չրջիկ պրոպագանդիստները, ղանաղան գործիչներ, խմբապետները դաշնակցութեան Բիւրոյի մասին յաճախ առիթներ էին ունեցել խօսելու, ակնարկներ անելու, բացի այդ, ղանաղան առիթներով Բիւրոյի հրատարակած թռուցիկները տարածւելով Բիւրօն ժողովրդի կողմից ճանաչւել էր որպէս կոմիտէներից բարձր մարմին, որ դաւաճաններին, լրտեսներին խստիւ պատժում է: Եւ երբ որ Միջկուսակցական Բիւրօն հրապարակ եկաւ, գիւղացիութիւնը ընդունում էր համոզւած, թէ Դաշնակցութեան նոյն հին Բիւրօն է: Այդ պարագան չատ էր նպաստում Բիւրոյի անունից չրջաններում աշխատողներին, ուստի գործիչները երբէք չէին հասկացնում գիւղացիներին, թէ Միջկուսակցական Բիւրօն ուրիչ մարմին է, իրենց գիտցածը չէ:

Դասալիք ութ հոգուն Ալէքսան Դային և օգնականները բերին Շուչի ու բանտարկեցին զօրանոցի յարակից չէնքերից մէկում: Արևասանձ երեսներով, քաջառողջ, կարծես պողպատից ձուլւած տղաները էին, որոնք, անզրազէտ ու պարզամիտ գիւղացիներ լինելով, մեծապէս աղդել էին Լենինի թևաւոր նշանաբանից՝ "Թալանիր Թալանւածը," առանց հասկանալու նշանաբանի իմաստը. ուստի անհրաժեշտ համարւեց, որ լաւ "լացւի" և մաքրւի տղաների ուղեղը: Մօտ երկու չաբաթ մնացին բանտարկւած, ապա իրենց ծնողների և համագիւղացիների երաչխաւորութեամբ, արձակւեցին, խոստանալով, որ հանգիստ կը մնան և կը զբաղւեն խաղաղ աշխատանքով: Եւ, իրօք, իրենց խոստումը չխախտեցին, այլ և, պէտք եղած պարագային, կատարում էին իրենց չրջանի կոմիսարի կարգադրութիւնները:

Բիւրօն, թէ՛ չրջուն գործիչների, թէ՛ չրջաններում եղած գիտակից, զրագէտ գիւղացիների միջոցով և թէ թռուցիկներով ժողովրդին հասկացնում էր՝ աշխատել ամէն կերպ պահպանելու խաղաղութիւնը թէ՛ ներսում և թէ՛, մանաւանդ, հարևան թուրք ժողովրդի հետ, որ աւելի քան կարևոր էր և անհրաժեշտ:

Բիւրօն, սակայն, նկատի ունենալով, որ ամէն անգամ, տեղի ունեցող անկարգութիւնները վերացնելու համար, նման ձևի արշաւախմբեր կազմելով հնարաւոր չի լինի արագ գործողութիւններ կատարել, մինչդեռ ճակատից վերադարձող զինւորները զինւորական կարգապահութիւնը խախտած, յաճախ կարող են գլխացաւանքներ պատճառել, մանաւանդ որ չատերը հակամէտ էին րոնագրաւումներ անել, ուստի անհրաժեշտ էր պատրաստ ունենալ մի փոքրիկ կազմակերպւած զինւորական ոյժ, որով, սպանների առաջնորդութեամբ, արագօրէն առաջն առնւէր տեղի ունեցող ամէն անկարգութեան: Եւ որոշւեց թէ՛ քաղաքի և թէ՛ գաւառների զինւորական ծառայութիւնը չվերջացրած ընտիր երիտասարդներից կազմել մի վաչտ, որը կը տեղաւորւէր զօրանոցում և որի բոլոր ծախսերը կը հոգար Բիւրօն:

Զինւորական Միութիւնը առաջնորդւելով նախայեղափոխական ժամանակւայ զինւորական կանոնագրութեան, հին օրէնքների և կանոնների թելադրութեամբ, կարգապահական ձևերը վերականգնելով ըստ աստիճանի, գլխապետ (կապիտան) Արտաչէս Վարդապետեանին ընտրեց իբրև աւագերէցի, որը, կռիւ բռնկւելուց որևէ վայրում, հրամանատարի դեր պիտի կատարէր, իսկ փոխգլխապետ Արտաչէս Առատամեանին իբրև չտաբի պետի:

Փետրւարի կէսերին արդէն վաչտը կազմւած էր ու տեղաւորւած զօրանոցում: Տնտեսական մասի պետ է նշանակւում փոխ-տեղակալ Գէորգ Նազարեանը և իբրև վիրահատ-փելդշէր Բաղդազիւլեան Արտեմը (աւագ եղբայրպայ):

Արձակուրդով, Ղարաբաղում էին գտնւում, քաղաքում և գիւղերում, ղանաղան աստիճանի սպաները, առանց զօրքի թէև, հետագային օգտակար եղան որպէս ինքնապաչտպանական չրջանների հրամանատարների, միլիցիոն ձևի կազմակերպւած ուժերի:

Յունւարի վերջերին վերադառնում են Գանձակի ազգային մարմինների հետ կապ ստեղծելու, պարեկաւորման և Շուչի-Գանձակ լեռնային ճանապարհը վերականգնեցնելու նպատակով մեկնած յանձնախմբերը և զեկուցում Բիւրօին իրենց կատարած աշխատանքների մասին:

Կապի յանձնախումբը զեկուցեց, որ Գանձակում գործի գլուխ էր անցել Քաղաքացիական Կոմիտէ անունով մարմինը, որում աշխատում էին Դաշնակցութեան հետ միւս հոսանքները: Կար և առանձին զինւորական մարմին, որը ստանձնած էր ինքնապաչտպանութեան գործի զեկավարութիւնը:

Տեսակցուβիւն ունենալով երկու մարմինների հետ հարց էին դրել, թէ ինչո՞վ և ինչքա՞ն կարող են օժանդակել մեր չրջանի ինքնապաշտպանութեան գործին. արդիւնքը եղաւ այն, որ, իրենց ունեցածից երկու ձի և երկու ջորի, 40 բերթան և 3 մօսին, 15 լբել սիսէմի հրացաններ ու 9000 փամփուշտ բաժին հանեցին մեղ խոստանալով, որ մեր սուրհանդակների միջոցով միշտ կը հաղորդեն իրենց ունեցած տեղեկութիւնները քաղաքական անցուդարձի մասին, քանի, որ մեր կապը կտրուած էր կենտրոնների հետ:

Պարենաւորման յանձնախումբը տեղի վրայ տեղեկացել էր, որ մի չարք գիւղերից՝ Սարով, Մարտակերտ, Կուսապար, Զայլու, Մարաղա և Աւան, Իւզբաչեանի ունեցած տնտեսութիւնը կարող էր ալիւր տրամադրել քաղաքի բնակչութեան, բացի այդ, չրջանի գիւղերի մեծամասնութիւնը կարող էր այլ մթերքներ փոխադրել քաղաք վաճառելու համար:

Շուչի-Գանձակ լեռնային ճանապարհի յանձնախումբը գտել էր, որ տեղ- տեղ նորոգութեան պէտք ունի ճամբան, ուստի նրա երկայնքին գտնուող մօտակայ գիւղերի բնակիչների հետ խօսել էին և նրանք խոստացել էին, կարճ ժամանակւայ ընթացքում նորոգել ճանապարհի իրենց մօտակայ հատուածները:

Յունուարի վերջերին մի քանի քստմնելի ոճիրներ տեղի ունեցան Վարանդայի, Աւետարանչոց Սղնախ և Ալամանց Գոմեր գիւղերում. ճակատից վերադարձած զինուորներ յիշեալ գիւղերում կանգ էին առել հանգստանալու նպատակով, և գիչերը, հիւրընկալուած տներում քնած ժամանակ մորթոտել էին հիւրընկալողների ձեռքով: Ոճրագործները սպանել էին զինուորներին, վերջիններիս հրացաններին տիրանալու նպատակով:

Այս դէպքը խորապէս յուզել էր գիւղացիութեանն ու քաղաքի բնակչութեանը: Այդ օրերին Աչան և Ղզղալա գիւղերի մօտերքում երկու թուրքեր էին սպանուել: Թուրքերը յուզել և սպանութիւնը վերագրում էին հայերին. իսկ կողմնակի միջոցներով մեր ձեռք բերած տեղեկութեանց համաձայն սպանութիւնը կատարել էին որպէս փոխ-վրէժ սպանուածների հակառակ թայփայի մարդիկ, մի բան, որ չատ սովորական բան էր թուրքերի մէջ: Սակայն թուրքերի մէջ միչտ էլ մութ ուժերը ամէն մի նման դէպքից օգտւում, գրգռումներ անելով աչխատում էին սրել երկու ժողովուրդների յարաբերութիւնները:

Բիւրօն լիակաղմ նիստում որոչում է ըստ արժանւոյն պատժել հայ ոճրագործներին և հրահանգում է Վարանդայի կոմիսար Ալիքօ Փիրումեանին անմիջապէս գործի անցնել, երևան ըերել ոճրագործներին և փոխադրել քաղաք: Գիւղացիութիւնը օգնում է

կոմիսարին. Փետրուարի վերջերին ոճրագործներին ձերբակալելով հինգ հոգու փոխադրում են քաղաք:

Շուչուց երեսուն վերստ հեռաւորութեան վրայ, Մեծ Քիրս լերան հիւսիսակողմում է գտնւում Բերդաձոր գիւղը, որին Թուրքերը Կալաղարասի և Ղարաղզլաղ անուններով էին կոչում: Բերդաձորը ութ հարիւր տուն բնակիչ ունի և տարբերւում է Ղարաբաղի գիւղերից նրանով, որ մէկ տեղում չէ կենտրոնացած, ցրւած է ահագին տարածութեան վրայ, ուստի կարելի է ասել ոչ թէ գիւղ, այլ գիւղախումբ է: Կենտրոնում Մեծչէնն է, որ վեց հարիւր տնից աւելի է, իսկ մնացած տները, խումբ-խումբ Մեծչէնի չուրջը գտնւող ըլուրներին են թառած: Գիւղի բնակիչները վաղուց յայտնի էին իրենց քաջութեամբ և հայ-թրքական ընդհարումների ժամանակ, Թուրքերը քանիցս չկրցան տիրել գիւղը, բայց գրաւել չէին կարողացել, պարտւել ու նահանջել էին:

Բերդաձորը Շուչին և Գորիսը միացնող միակ ճանապարհի արեւմուտեան պահակն է, որի չնորհիւ կապը պահւում էր անվտանգ. Բիւրօն լաւ հասկանալով Բերդաձորի արժէքն ու նշանակութիւնը, Խանասորի հայդուկներից, Ալէքսան Դայուն և Զէյէեան Ասատուրին, ուղարկում է այնտեղ Բերդաձորի ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու: Փետրուարի սկիզբներին էր, Ալէքսան Դային և Ասատուրը զինուորներից մի քանի հոգի էլ առնելով իրենց հետ Թուրքերից աննկատ հասնում են Բերդաձոր և տեսնում, որ գիւղացիները իրենք ինքնաբերաբար որոշ աշխատանք կատարել են արդէն, ուստի գիւղի խմբապետի և օգնականների ընտրութիւնը կատարում, պաշտպանողական դիրքերը որոշում խմբապետների հետ միասին, պահակներ ունենալը պարտադիր դարձնում և վերադառնում են:

Մինչև յունւարի երկրորդ կէսերը կապը Բիւրօյի և Զինուորական Միութեան վարչութեան միջև պահպանւում էր Բիւրօյի զինուորական կոմիսարի միջոցով. բայց երբ Միութեան ներկայացուցիչը ընդունւեց Բիւրօյի կազմի մէջ, բնականաբար զինւ. կոմիսարի միջոցով կապը վերացւեց:

Գանձակի հետ կապ հաստատող յանձնախմբի կողմից հարց է դրւում, քննութեան առնելու ինքնապաշտպանութեան գործի կազմակերպման ձևը: Յարութիւն Թումեանը և Արշաւիր Քամալեանը առաջարկում են, ու ինչպէս Գանձակում է, այնպէս էլ մեզ մօտ երկու մարմին ստեղծւի՝ քաղաքացիական և զինուորական, գործերը վարելու համար:

Ես առարկում եմ այդ առաջարկի դէմ, քանի որ երկու մարմիններ ստեղծելով երկիչխանութիւն կը ստեղծւի: Ղարաբաղի

միակ ղեկավար մարմինը Բիւրօն է, որին մասնակցում է նաև Զինուորական Միութեան ներկայացուցիչը. ապա նաև պէտք է նկատի ունենալ մի հանգամանք, որ հայ-թրքական ընդհարումների ժամանակ ժողովրդի մէջ աշխատում էին ինքնապաշտպանական կոմիտէները և ժողովուրդն էլ վարժւած էր այդ անուններով մարմիններին, ուստի նոյն ձևով էլ պէտք էր վարել գործը:

Մտքերի փոխանակութիւն կատարելով քէչարկութեան է դրւում երկու առաջարկները՝ ա) քաղաքացիական և զինուորական մարմիններ ստեղծել թէ՛ քաղաքում, և թէ՛ գաւառներում, և բ) գիւղերում ստեղծել միայն ինքնապաշտպանական մարմիններ, որոնք միաժամանակ խմբապետների հետ միասին կը վարեն թէ՛ քաղաքացիական և թէ՛ զինուորական գործերը:

Ձայների ստւար մեծամասնութեամբ անցնում է առաջին բանաձևը. երկրորդը ստանում է երեք ձայն՝ Հ. Մուսայէլեան, Ա. Մելիք-Յովսէփեան և Եղիչէ Իշխանեան:

Մինչև Զինուորական Միութեան վարչութեան ներկայացուցչի ընդունելը Բիւրոյի կազմի մէջ, վարչութեան հետ կապ պահելու պարտականութիւնը ինձ վրայ էր դրւած որպէս Բիւրոյի զինուորական կոմիսարի, բայց երբ վարչութեան ներկայացուցիչը՝ սպայ Նիկ. Իսալանեանը ընդունւեց, ըստ իս, աւելորդ էր յատկապէս կապի համար զին. կոմիսար ունենալը. ուստի առաջարկեցի, որ վերացւի այդ պաշտօնը: Բիւրօն մերժեց և յանձնարարեց չարունակել ստանձնած պարտականութիւնը:

Յարութիւնը (Թումեան) առաջարկեց Ղարաբաղը բաժանել երկու զինուորական կոմիսարութեան. մէկը՝ Խաչէնի, Ջրաբերդի և Գիւլիստանի, իսկ միւսը Վարանդայի և Դիզակի չրջանները, և որ առաջինը տրւի իրեն, իսկ երկրորդը՝ ինձ:

Ես երկւութեան դէմ առարկեցի պատճառաբանելով, որ զինուորական գործը կետրոնացած ձևով կարելի է լաւագոյնս վարել. երկւութիւնը նպաստաւոր չէ, կարող է տարակարծութիւններ առաջացնել. թող լինի մէկ կոմիսար, թէկուզ մէկից աւելի օգնականներով:

Թէև կուսակցական կոլեկտիւը Հ. Մուսայէլեանի հետ միասին որոշել էին, որ ես չարունակեմ զին. կոմիսարի պարտականութիւնը, երբէք չհրաժարւեմ, բայց ինքս առաջարկեցի, որ զին. կոմիսարութիւնը տրւի Թումեանին, և Յակոբ Բալասանեանին, որ փորձւած, թրծւած մեր ընկերներից էր, նշանակել զին. կոմիսարի օգնական:

Փետրուարի առաջին կէսերին արևմտեան ճակատից տուն վերադարձող զինուորների 75 հոգինոց մի խումբ, Զանգեզուր-Ղարաբաղի զանազան գիւղերից, Վլադիկաւկազ քաղաքից մեկնելով, ռազմավարական ճանապարհով, հետիոտն, մեծ դժւարութիւններ կրելով և մի քանի կէտերում ճամբան փակող լեռնականների հետ ընդհարւելով, մի կերպ հասնում են Թիֆլիս այնտեղից Գանձակի վրայով Ղարաբաղ անցնելու համար: Երբ հասնում են Գանձակի կայարանը, որտեղից մինչև քաղաք երեք կիլոմետրից աւելի էր, տեղեկանում են, որ ճամբան վտանգւած է, թուրքերը դարան մտած կողոպտում, սպանում են հայերին:

Զինուորները արևմտեան ճակատում թրծւած, բազմիցս բաց աչքերով դէպի մահը ընթացած մարդիկ, խորհրդակցում են՝ ինչ՞պէս անել, որ ծուղակը չընկնեն: Եթէ կարողանային լուր տալ Գանձակի հայկական ազգային մարմիններին, անկասկած վալադ[50] կուղարկէին, որ խմբին առաջնորդէր քաղաք: Զինուորներից ոչ մէկը ծանօթ չէր տեղին, ուստի որոշում են ճամբից դուրս, բաւական հեռու տեղով, ճամբին զուգահեռ գծով ուղղւել դէպի քաղաք: Ճամբի երեք քառորդն անցնում են առանց միջադէպի. բայց նկատւում են թուրքերի կողմից, որոնք կրակում են զինուորների վրայ: Զինուորներին առաջնորդում էր Տեղ գիւղացի Պետրոսը, որ չուչեցի յայտնի վիրթիող թառ նւագող փոքր Գրիգորի փեսան էր, Գէորգեան չքանչաններով կուրծքը զարդարւած քաջ մարդ, որ համօրէն զեկավարելով խմբին, չեչտակի և անվրէպ համազարկերով կասեցնում է թուրքերի մօտ 100 հոգինոց յառաջացող խմբին: Թուրքերը տասը սպանւած և վիրաւոր են ունենում, իսկ հայերը հինգ վիրաւոր:

Փետրուար 23-ին Բիւրոյին ներկայացաւ թրքական "վայրենի դիվիզիայի"[51] (դիկայա դիվիզիեա) սպայ Մևսմանդարովը, որ նոր էր Գանձակից եկել և յայտնեց, որ լիազօրւած է ընդունելու Խանքենտի զօրանոցների պաշտպանութիւնն ու հսկողութիւնը, ուստի

---

[50] Տեղեակ մարդ: (Խմբ.)

[51] «Վայրենի Դիվիզիա». Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Կովկասի մուսուլմանական ժողովուրդների հեծեալ գնդերից, նաեւ որոշ հետեւակ ուժերից, չեչեններ, ինգուշներ, չերքեզներ, Թաթարներ (ադրբէջանցիներ) եւայլն, ինչպէս նաեւ կոզակներից կազմւած դիվիզիայի մականունը: Ռուսաստանում երկար սպրիններ մուսուլմանները բանակ չէին զօրակոչւում, ուստի այդ ժողովուրդների մօտ արհեստավարժ զինուորականներ, ռազմական գործի գիտակներ համարեա բոլորովին չկային, չկար զինուորական կարգապահութեան ավանդոյթ եւայլն: Նրանց մօտ գործում էին միայն կողոպուտով ու աւազակութեամբ զբաղւող զինւած խմբեր: Եւ ստեղծւած դիվիզիան հէնց այդ կողմից էր ալբի ընկնում ու կնքւեց «վայրենի» անունով: Միապետութեան տապալումից յետոյ, յատկապէս ազգային անկախ պետութիւնների ձեւաւորման ու գոյութեան շրջանում, երբեմնի դիվիզիայի զօրամասերը յայտնի դարձան իրենց աւազակային գործունէութեամբ (Շամխորի մօտ ռուսական զօրամասին կողոպտող, անզէն ռուսներին գնդակահարող հիմնական ուժը ադրբէջանական «վայրենի դիվիզիան» էր: (Խմբ.)

առաջարկում է, որ նշանակվի մեկը յանձնումի գործողութիւնը կատարելու, պաշտօնական արձանագրութեամբ:

Սա մի խաղ էր և, ինչպէս հետագային պարզուեց, նախաձեռնութիւնը Գանձակի թուրքերինն էր. հայ-թրքական կոմիտէի թուրք անդամները երբէք չէին հետաքրքրուել Խանքենտի զօրանոցներով:

Սպայ Մելմանդարովին կտրուկ կերպով յայտարարեցինք, որ ինչպէս Խանքենտի, այնպէս էլ Հաղրութի զօրանոցների պաշտպանութիւնը, Կովկասեան չտաբի պաշտօնական կարգադրութեամբ, յանձնուած է Հայ Ձինուորական Միութեան Շուշւայ հիւղին , մինչև նոր կարգադրութիւն, իսկ իրեն, որ ոչ մեկ պաշտօնական հանգամանք և իրաւունք չունի, որպէս մասնաւոր մարդու, ոչինչ չի յանձնուի: Սպայ Մելմանդարովը իւր խօսելու եղանակով և տարօրինակ չարժ ու ձևերով աննորմալ մարդ էր երևում, միանդամայն պատչամ "վայրենի դիվիզիայի" զինուորական լինելու:

Փոստ-հեռադրատան բակում Մելմանդարովը հանդիպում է մի հայ զինուորի, որը զինուորական պատւի չի առնում իրեն. բարկացած նկատողութիւն է անում զինուորին, իսկ վերջինս սպառնալիք է կարդում թէ՝ "չատ մի խօսիր, չանսատակ կանեմ քեզ": Մելմանդարովը սարսափած և Հայ-Թրքական կոմիտէի թուրք պատգամաւորների միջոցով խնդրում է, որ մեկ պահակ տրւի իրեն մինչև Հայ-Թրքական սահմանը, Ասկերանից 10-15 վերստ հեռու Ղարաղաջի կոչուած տեղը հասնելու:

Մարտ 2-ին Թիֆլիսից գալիս են Լիւթֆալի բեկ Բէհբուդովը և կաղետական կուսակցութեան անդամ իրաւաբան Հրանդ Բահաթրեանը, դոկտ. Խաչատրեանի որդին, որը իւր հօր պէս աղնիւ ու չիտակ հասարակական գործիչներից էր: Նրանք Կովկասեան Կոմիսարիատից բերում են պաշտօնական մի գրութիւն, որով Բէհբուդովին և Հ. Մուսայէլեանին նշանակել էին իբրև լիազօր ներկայացուցիչներ կոմիսարիատի, վերակազմելու Շուշու, Ջիւանչիրի, Կարիագինի և Զանգեզուրի գաւառների քաղաքացիական իշխանութիւնները:

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հայ-Թրքական կոմիտէն, ինչպէս իր տեղում նշուեց, հէնց գործի անցնելու առաջին նիստին զբաղուել էր քաղաքացիական իշխանութիւնների հարցով և որոշել առայժմ փոփոխութիւններ

չկատարել, մանաւանդ որ գործիչ ինտելիգենտ ուժերի պակաս էր ղզացւում, նոր մարդիկ պաչտօնների կոչելու համար: Լիւթփալի բէկ Բէհբուդովը և Հայրապետ Մուսայէլեանը Հայ-Թրքական կոմիտէի անդամները լինելով, քաղաքացիական իշխանութիւնները վերակազմելու նպատակով խնդիրը խորհրդակցութեան են դնում կոմիտէի նիստում: Մտքերի փոխանակութիւն ունենալուց յետոյ կոմիտէն մնում է նոյն որոշման վրայ, փոփոխութիւնների համար համապատասխան և պահանջւած թւով պաչտօնների հրաւիրելիք թեկնածուներ չունենալու պատճառով: Սակայն, Կոմիտէի երկու անդամների Կովկասեան կոմիսարիատի լիազօր ներկայացուցիչներ նչանակւած լինելու հանգամանքը աւելի է ծանրացնում կոմիտէի կչիռը:

Գաւառներում և քաղաքում պարենի ու կենսամթերքի պակասը քանի դնում, աւելի ղգալի է դառնում: Ժամանակաւոր Կառավարութիւնը մի ղեկրետով արգիլել էր գաւառից-գաւառ ալիւր և այլ կենսամթերք փոխադրել: Այդ արգելքի հետևանքով, քաղաքում և գաւառներում տեղ-տեղ կացութիւնը ծանրացել էր: Եւ յիշեալ արգելքը դնելով, Ժամ. Կառավարութիւնը նպատակ էր ունեցել պայքարելու չարաչահութիւնների դէմ, մինչդեռ, իրականում, արգելքը ճիչտ հակառակ արդիւնքն էր ունեցել: Գիւղերում ամառւայ վերջերից սկսած, չաքարը վերացել էր, չէր ճարւում. գիւղացիները դդումը կտրտում, դոչարով եփում էին և նրանով թէյ խմում: Թէյը դժւարութեամբ և չատ թանկ գնով էր ձեռք բերւում, ուստի կաղինի և չատ աւելի չորացրած լորենու, վայրի վարդի ծաղիկների թերթիկներից էին թէյ պատրաստում: Շուտով նոյն ձևով չաքար ու թէյ սկսեցին դործածել և քաղաքում: Մեղրն ու դոչարը առատ էր, ուստի չատերը չաքարի փոխարէն դոչարով և մեղրով էին թէյ խմում: Քաղաքում սուրճը անհետացել էր, դրսից եկ ստանալու յոյս չկար, ուստի կաղինից, հաճարից և գարիից չատ լաւ սուրճ էին պատրաստում, չաքարի փոխարէն մեղրով խմում:

Պատերազմը սկսելուց ի վեր, գինւորների ընտանիքները պետութիւնից նպաստ էին ստանում. ամառւանից սկսած նպաստները անկանոն էր բաչխւում, իսկ աչնան կէսերին նպաստ չէր տրւում, ուստի գինւորների ընտանիքները ծանր դրութեան մէջ էին:

Շուչու պետական դանձարանը դատարկ էր Զիաթխանովի Թրքաթարոյ և տմարդի վերաբերմունքի հետևանքով: Նա եթէ Գանձակից Շուչու պետական դանձարանի համար ուղարկւած դրամը յետ տարած չլինէր, Բիւրօն կը կարողանար բաւարարել գինւորների ընտանիքներին:

Մարտի 3-ին Շուչուց համեմատաբար մօտ գտնուող Խաչէնի և Վարանդայի գիւղերի՝ Ղայբալուի, Կրկժանի, Խանքենտի, Խանածախի, Շոշի, Դաչուչէնի, Սղնախի, Աւետարանոցի կանանց ահագին մի բազմութիւն գալիս է քաղաք ու Բիւրոյի չէնքի դիմաց գտնուող քարւանսարայի ընդարձակ բակը ծայրէ-ծայր բռնում: Կանանց ուղեկցել էին սպառազինուած մի խումբ միջին տարիքի տղամարդիկ: Ինչպէս պարզուեց, միաժամանակ, երկու չրջանի գիւղերում նախապատրաստական աշխատանք էր կատարուել որոշուած օրը լինելու քաղաքում, Բիւրոյից պահանջելու, որ զինուորների ընտանիքներին նպաստ տրուի: Բիւրօի համար անսպասելի էր կանանց, այն էլ այդպիսի բազմութեամբ քաղաք գալը, զինուորական նպաստ պահանջելու նպատակով:

Յարութիւն Թումեանը չտապ գնում է կանանց մօտ՝ խօսելու և ստուգելու նրանց քաղաք գալու նպատակը: Կանայք իրենց բողոքն են յայտնում, որ ամիսներից ի վեր նպաստ չեն ստացել, խիստ կարիքի մէջ են ու պահանջում են բաւարարել իրենց: Յարութիւնը սկսում է բացատրել, թէ Բիւրօն յանցանք չունի, որ ցարդ զինուորների ընտանիքները նպաստ չեն ստացել և Բիւրօն ղրամ էլ չունի, որ կարողանար բաւարարել եղած պահանջին: Կանայք ոչինչ չեն ուզում հասկանալ, սկսում են իրենց ճուռղիւնով օդը թնդացնել: Յարութիւնը աշխատում է լռեցնել, հանդստացնել: Եւ երբ Յարութիւնը բարկանալով հրամայում է լռել, սպառազինուած մարդիկ պաշտպան են կանգնում կանանց, սպառնական դիրք ընդունում և նոյն իսկ այնքան համարձակ դառնում, որ ուզում են յարձակուել Յարութիւնի վրայ և ծեծել նրան: Քարւանսարայի ներկայ գտնուող ծառայողները, որ մեր չարքային ընկերներից էին, միջամտում, Յարութիւնին դուս են բերում ամբոխի միջից, բայց ամբոխը չարունակում է աղմկել:

Յարութիւնը ներս է մտնում այլայլած և պատմում տեղի ունեցածն ու առաջարկում Բիւրոյի լիակազմ նիստ գումարել և զինուորների ընտանիքներին բաւարարելու միջոցների մասին խորհել:

Մինչ այն, սակայն, պէտք էր համոզել կանանց բազմութեան, որ վերագառնային իրենց տեղերը, խոստանալով, որ Բիւրօն մտահոգուած է նրանց հարցով և կաչխատի ամէն կերպ և որքան հնարաւոր է չուտ ղրամ ձեռք բերել ու բաւարարել նրանց:

Հայրապետը, նկատի ունենալով կանանց ու տղամարդկանց մէկ մասի Խաչէնցիները լինելը, առաջարկեց ինձ, որպէս Խաչէնցու, ներկայանալ կանանց և խոստանալ, որ Բիւրօն անպայման կը բաւարարի իրենց պահանջին, մարդիկ կերթան Գանձակ կամ Թիֆլիս ղրամ բերելու, որովհետև տեղւոյն պետական գանձարանը բոլորովին դատարկ է:

Ներկայացայ կանանց, բարձրացայ, բակում գտնւած արկղի վրայ կանգնեցի և հէնց ուղեցի բերանս բացել, երբ առաջին չարքում կանգնած կանանցից մէկը, որը Խանքէնդցի էր և քաղաքում յայտնի խմորեղէն պատրաստող Յարութիւնի և Գրիգորի քոյր Մարիամն էր և ճանաչում էր ինձ, ասաց.

– Է, Իվան Բէկի տղայ, թագաւորին թախտիցը գցել, տեղը նստել ես, դէ հաց տուր, որ ուտեմ, սոված եմ: Ինչ՞ կասես, իսկի խօսք ունե՞ս ասելու:

– Այո, Մարիամ Բաջի, նախ և առաջ թագաւորին ես չեմ թախտիցը գցել:

– Ես լաւ եմ իմանում, դու Պիտրիպոլկումը մենակ չես եղել, ուրիչ քեզ նմանների հետ միասին թագաւորին թախտիցը գցել, էս օրին էք հասցրել մեղ. սոված ենք, հաց տուէք:

– Մարիամ Բաջի, թող որ խօսքս վերջացնեմ, յետոյ, ինչ որ կուզես, կասես:

Այդ մոմենտին գիւղացի կանանցից մէկը, որ գիւղի մետաքսէ թել քաշելու գործարանի բանւորուհիներից էր, ինձ օգնութեան հասաւ, դառնալով Մարիամին, թէ՝ "Մարիամ, թող խօսի, վերջացնի խօսքը, տեսնենք ինչ է ասում":

– Այո, Մարիամ Բաջի, դու սխալւում ես, թագաւորին ես չեմ թախտիցը գցողը: Ճիշտ է, ես այնտեղ եմ եղել, բայց եղել եմ իբրև թամաշա անող և տեսել եմ, թէ ինչպէս են թախտիցը գցել: Մի՞թէ ես, կամ իմ ընկերները կուզենք, որ դուք վատ ապրէք և այս օրւայ ծանր վիճակում լինէք: Մի՞թէ մենք ձեզ թշնամի ենք: Բիւրօն մինչև ձեր գալը, տեղեկանալով ձեր ծանր վիճակի մասին, որոշել է մարդիկ ուղարկել Գանձակ ու Թիֆլիս և դրամ բերել ձեզ համար: Եթէ Բիւրօն ձեր մասին չմտածի, էլ ուրիչ ով պէտք է մտածի: Դուք մեր հարազատ քոյրերն էք, մենք էլ որպէս ձեր եղբայրները, պատրաստ ենք ձեզ համար անել, ինչ որ հնարաւոր է և կարելի է. եթէ չաննենք, մեր խիղճը հանգիստ չի լինի: Այնպէս որ չատ չուտով մեր մարդիկը կերթան դրամ բերելու, իսկ դուք բոլորովին հանգիստ եղէք, վերադարձէք ձեր տեղը, հէնց որ դրամը ստանանք, իսկոյն ձեզ իմաց կը տանք, կը գաք՝ կստանաք ձեզ հասանելիքը:

– Ուրեմն, արևային մնա՞նք, հաւատացած, որ անպատճառ մարդ կուղարկէք փող բերելու, – հարցնում է նոյն Մարիամը:

– Մարիամ Բաջի, եթէ կուզէք, ինչ որ խոստացայ, գրաւոր կերպով թուղթի վրայ տամ ձեզ, բոլոր ընկերների ստորագրութեամբ, որպէսզի արևային մնաք:

– Չէ, թուղթ պէտք չի, հաւատում ենք, որ պիտի կատարէք ձեր խոստումը, ասաց կանանց հետ եկած գիւղացիներից մէկը, Դաչուչէնացի Սահակը և նրան միացան միւս տղամարդիկ, ապա դարձան կանանց և ասացին, որ վերադառնան ու սպասեն:

Մարտ 7-ին Բիւրոյի լիակազմ նիստին որոշւում է կազմել դինւորադաչտային դատարան Վարանդայից բերւած հինգ

ոճրագործներին դատելու համար: Հինգ հոգինոց կազմը նչանակւում է, որի անդամներն էին Ստեփան Մակինեան, իրաւաբան, Մարտիրոս Այվազեան, սպայ՝ տեղակալի աստիճանով և Ռուբէն Շահնազարեան, ուսուցիչ, զինուորներից երկու հոգի:

Այդ նոյն նիստին մենչեվիկները մի նոր առաջարկ են անում, որ Դաչնակցութիւնը մենակ ստանձնէ բոլոր աչխատանքները, քանի որ ինչպէս փաստօրէն հաստատուեց "Քաղաքային Ինքնավարութեան" և "Սահմանադիր Ժողովի" ընտրութիւններին, Դաչնակցութիւնը միակ հեղինակաւոր կուսակցութիւնն է, որին լսում է ժողովուրդը և ենթարկւում: Դաչնակցութիւնը կը վարի գործերը, իսկ մենք և միւս հոսանքները ենթարկւելով դաչնակցութեան հրահանգներին, օժանդակողի դերում կը լինենք: Այսպիսով հնարաւորութիւն կը տրւի զեկավար օրգանին, արագ ընթացք տալու գործերին: Բիւրօն, պիտի խոստովանել, որ դանդաղկոտ էր:

Մենչեվիկների այդ առաջարկը գործից խուսափելու միտումով չէր. առաջարկն արւած էր առանց յետին մտքի, սակայն, այնուամենայնիւ, մենք չընդառաջեցինք, քանի որ անկեղծօրէն, կօալիցիոն հիմունքով կազմւած Միջկոմ. Բիւրօն հասարակութեան վրայ լաւ տպաւորութիւն էր թողել և արդէն կարճ ժամանակամիջոցում ճանաչւած էր ժողովրդի կողմից: Բիւրօն որոշեց, որ իւր անդամներից նրանք, ովքեր ի վիճակի էին քաղաքից բացակայելու, մէկ-երկու ամսով անցնէին գաւառները, տեղի վրայ ծանօթանալու ժողովրդի դրութեան, գաւառային գործադիր մարմինների և կոմիսարների կատարած աչխատանքներին ու, եթէ պէտք լինի, մարմինների և պաչտօնատար անձանց փոփոխութիւններ կատարէին, և իրենց գործունէութեան մասին տեղեկագրէին Բիւրոյին, որպէսզի վերջինս էլ, իր հերթին, անհրաժեչտ տեղեկութիւնները հաղորդէր չրջագայութեան մեկնած գործիչներին:

Արչաւիր Քամալեանը յանձն առաւ մեկնել Վարանդա, իսկ նա՝ Դիլդակ:

ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Մարտ 10-ին, մեր նախկին "Գեաւուր" մարտական խմբից մնացած երկու հոգու՝ Գարեգին Շահրիմանեանին և Իվան Հասրաթեանին առնելով հետս, մեկնեցի Դիլդակ, Ղարաբաղլի հարաւային, Պարսից սահմանին կից ծայրագաւառը, որի կենտրոնն է Հաղրութ աւանը:

Ճամբին կանգ առանք Վարանդայի Թաղավարդ գիւղում, գիշերելու և յաջորդ օրը չարունակելու ճամբան: Գիւղի ուսուցիչ Գրիգոր Կարապետեանը դանգատւեց, թէ կարծես անապատի մէջ ենք ապրում, կտրւած աչխարհից, թերթեր չենք ստանում այլևս, չգիտենք նոյնիսկ քաղաքի անցուդարձի մասին, ուստի խնդրում է, որ ժողով գումարւի դպրոցում, տեղեկութիւններ հաղորդեմ և յայտնեմ, թէ ինչ անելիքներ ունեն իրենք առաջիկային: Ժողովը տեղի ունեցաւ, տեղեկացրի անցուդարձի մասին և յայտնեցի, որ չատ չուտով Վարանդայի չրջանի գործերին վերահասու լինելու համար, պիտի գայ իրենց մօտ Բիւրոյի անդամներից Արչաւիր Քամալեանը:

Ի դէպ, ժողովականների առաջին չարքում նկատեցի չէկ լեևսերով, ռուսի դէմքով, յաղթանդամ, վայելչակազմ մէկին, զաչոյնը գօտուց կախ, տեղացիների պէս հագնւած, ոտքերին տրեխներ: Դէմքը ծանօթ էր թւում, բայց վարանում էի, նա է՞, թէ՞ ոչ: Երբ հետաքրքրւեցի, պարզւեց, որ չէի սխալւել: Այս մարդը իսկական ռուս էր, Վալօղիա անունով, որ Շուչու կայազօրում պինւորական ծառայութիւնը վերջացնելուց յետոյ, ընդունւել էր զաւառական ձիաւոր պահակախմբի մէջ և երկար տարիներից ի վեր մնացել էր Ղարաբաղ: Տեղական բարբառով չատ լաւ էր խօսում և առոգանութեամբ տեղացուց չէր զանազանւում: Շատ յաճախ լինելով Թաղավարդում, գիւղի աղջիկներից մէկի վրայ սիրահարւել, նչանւել էր հայոց եկեղեցում ու, ծառայութիւնը թողել, դարձել գիւղացի, և գիւղի վարժապետի որոչմամբ անւանւել Վարդան: Եթէ գիւղի մօտերքում աւազակախումբ երևար, դինւած գիւղացիների գլուխն անցած դուրս էր գալիս աւազակների դէմ կամ եթէ ուրիչ գիւղի օգնութեան գնային, խմբի գլուխ Վարդանն էր:

Ուրիչ մէկը ևս Նիկոլայ անունով, Խանքենդի էր հաստատւած և երրորդն էլ Իվան անունով՝ Շուչում: Նիկոլայը նոյնպէս պահակախմբի ձիաւորներից էր, իսկ Իվանը մեխանիկ լինելով, Մահդէսի Յակորեանների աղօրիքը աչխատեցնող վարպետի պաչտօնում էր հաստատւած: Երեքի էլ ընտանեկան լեզուն հայերէն էր, որովհետև կանայք ռուսերէն չգիտէին:

Յաջորդ օրը Տող գիւղում ևնք. Դիզակի Մելիք-Եգանեանների պատմական գիւղն է: Ինչպէս յայտնի է, Մելիք-Եգանեաններից մի քանիսին Շուչու Փանահ Խանի յաջորդներից մէկը բռնի կերպով թրքացրել էր և նրանց յաջորդները, մինչև մեր օրերը, իրենց հայկական ծագումը չէին մոռանում: Հայ-թրքական ընդհարումների տարինների, սրանք "Մելիք-Եգանեան" ազգանուն չէին կրում, մոլլաների դրդումով, թէ կամովին վաղուց փոխել, դարձել էին Մելիք-Ասլանով. իրենց ունեցւածքով, ապահովութեան համար փոխադրւել էին Թուրքերի թաղը Կարիազին աւանում, որ

համանուն գաւառի կենտրոնն էր: Հայ-Թրքական ընդհարումները վերջանալուց յետոյ, կրկին վերադարձել էին Տող, որտեղ իրենց տները պահ էին թողել իրենց աղգական Մելիք-Եգանեաններին:

Գիւղում առիթ եղաւ խօսելու Մելիք Ասլանովների երէց Բախչի Բէկի հետ: Գիւղի չնչին փոքրամասնութիւնն են կազմում Մելիք Ասլանովները, ընդամէնը հազիւ 10–12 ընտանիք: Բոլորն էլ խօսում են Ղարաբաղի բարբառով:

Բախչի Բէկը լսում է մեր մասին, որ քաղաքից ենք եկել, գալիս է մեզ մօտ: Վաթսունից անց, մազերը բաւական ճերմակած, բայց դեռ բաւական կայտառ մարդ էր: Դիմագծերից երևում էր ծագումը, որ մոնղոլական չէր: Բախչի Բէկին ասել էին, թէ ով է իմ հայրը, որի հետ մօտ ծանօթ էր եղել: Բախչի Բէկը արտաքինով չէր տարբերւում իր հայ ազգակիցներից: Նրա զաւակները մեծերին հօրեղբայր կամ քեռի էին ասում: Բախչի Բէկը համագիւղացիների պէս հետաքրքրւում էր երկրի անցուդարձով, շատ մտահոգ էր, որ խաղաղ կեանքը փոթորկւել, անիշխանութիւն է տիրում. ափսոսանքով էր յիշում յեղափոխութիւնից առաջ եղած կեանքը և լաւ օրեր տեսնելու յոյս չունէր:

Ուզեցի ստուգել, արդե՞օք ցանկութիւն չունի փոխադրւելու Կարիադինօ կամ մէկ ուրիշ թրքաբնակ վայր, իրեն աւելի ապահով զգալու համար: Շատ կտրուկ կերպով պատասխանեց. "Ես՞, ես մեկ էլ գնամ էն անպիտանների, գողերի և աւազակների մէջ ապրեմ, որ աչքները տնկած մեր ունեցուածքին, պատրաստ սպասում են յարմար րոպէի, գողանալու ինչ որ հնարաւոր է և երբ յանցանքի մէջ բռնւեն, փոխանակ ամաչելու, հայհոյեն և իբրև նախատինք մեր երեսով տան, թէ մենք մուսուլման չենք, հայ ենք: Նման դէպքերում իմ պատասխանն էր լինում, դուք որ ձեզ իսկական մուսուլման էք համարում, ինչու՞ էք գողութիւն անում: Տեսէք, հայերն ինչպէս են ապրում իրենց աշխատանքով. նրանց մէջ կարող է կենտ ու մենտ գողեր լինեն, անտառը առանց չաղալի[52] չի լինի, բայց մուսուլման գողերը անթիւ են: Ոչ մէկ ցանկութիւն չունենք, ոչ ես և ոչ էլ միւս աղգականներս, փոխադրւելու մուսուլմանների մէջ: Մենք կը մնանք մեր տեղում, թող մեզ սպանեն մեր հայ աղգականները: Բայց չենք գնայ էն անպիտանների մէջ":

Գիւղացիները մեզ մանրամասնութիւններ պատմեցին, որ հայ-թրքական ընդհարումներին թուրքերի մօտ եղած ժամանակ լաւ կեանք չեն ունեցել: Գողերը մի կողմից են վնասներ պատճառել, չարաչահներն էլ միւս կողմից և, ի լրումն այդ ամէնի, նախատինքի ենթարկւել:

---

[52] Ալեհ: (Խմբ.)

Մարտի 15-ին հասնում ենք Հաղրութ աւանը: Մեր առաջին գործն էր, դաշնակցական ընկերների հետ հանդիպում ունենալ, ղեկուցել վերջին ամիսների անցուդարձի մասին, ապա միասին ձեռնարկել ինքնապաշտպանութեան գործին: Դիղակի չրջանի մեր կուսակցական կենտրոնն էլ ընականաբար Հաղրութն էր, որը երկդասեան դպրոց ունէր. աւագ ուսուցիչն էր ընկ. Ասլան Միրզայեան (Աբասեան) Շուշու Ռէալական դպրոցի չրջանաւարտ 1906-ին:

Հազրութը բարեկեցիկ աւաններից մէկն էր, դպրոցի համար յարմար չէնք ունէր, և ի սկզբանէ լաւ ուսուցիչներ էր ունեցել:

Դպրոցում պաշտօնավարող ուսուցիչներ Ստեփան և Աբգար Ստեփանեանները դաշնակցականներ էին: Յիշեալ երեք ուսուցիչների հետ Արտէմ Լալայեանն ու Արտէմ Տէր-Ստեփանեանը կազմում էին Դիղակի չրջանի կոմիտէն:

Կոմիտէի նիստին պարզուեց, որ չրջանում հակառակ հոսանքի կազմակերպութիւններ չկան. կային անկուսակցականները, որոնք իրենց ընթացքով աւելի համակիրներ էին դաշնակցութեան, քան չէզոքներ:

Կոմիտէին ղեկուցեցի Սահմանադիր ժողովի ընտրութիւններից յետոյ մեր չրջանում տեղի ունեցած անցուդարձի, միջկուսակցական Բիւրոյի և Հայ-Թրքական կոմիտէի կազմութեան մասին: Ապա Բիւրոյի որոշումը՝ առաջին հերթին ինքնապաշտպանութեան գործը կազմակերպելու վերաբերեալ:

Յեղափոխութիւնը տեղի ունենալուց յետոյ, մինչև բոլշևիկների իշխանութեան գլուխ անցնելը, կոմիտէն և քաղաքից ժամանած չրջիկ ընկերները արդէն բաւական աշխատանք կատարել էին, ճիշտ միւս չրջանների օրինակով: Դիղակի զաւառային և գիւղական գործադիր մարմիններ ստեղծելով: Եւ ամենուրեք գործադիր մարմինների կազմի մէջ դաշնակցականներ էին մտած: Բնական ու հասկանալի էր, որովհետև չրջանում հակառակ այլ հոսանքներ գոյութիւն չունէին:

Եւ քանի որ ուրիշ հոսանքներ գոյութիւն չունէին ո՛չ Հաղրութում և ո՛չ էլ գիւղերում, որոշեցինք տեղում գտնուող ուժերից կազմել Բիւրոյի Դիղակի չրջանի ճիւղը, բաղկացած եօթ հոգուց:

Ստեփան Ստեփանեան, նախագահ, Արտէմ Լալայեան, Արտէմ Տէր-Ստեփանեան, Ասլան Միրզայեան և Աբգար Ստեփաննան, դաշնակցականներ, իսկ Սարգիս Դուրգարեան և Անդրէաս Ասլանեան, անկուսակցականներ:

Մարտ 20-ին Հաղրութի Բիւրօն ունեցաւ իւր առաջին նիստը: Դրւած էր առաջին հերթին ինքնապաշտպանութեան խնդիրը: Որոշուեց գնդապետ Բամիչևսկուն համարել Դիղակի չրջանի հրամանատար, ուստի պէտք էր այդ առթիւ խօսել նրա հետ և ասել, որ դա ժողովրդի ցանկութիւնն է: Յարմար նկատուեց, որ Ասլան Միրզայեանը և ես խօսենք գնդապետի հետ: Ապա որոշուեց, որ Արտեմ Լալայեանը լինի որպէս օգնական հրամանատարի և միաժամանակ վարէ գաւառական կոմիսարի պաշտօնը: Կոմիտէն գտաւ անհրաժեշտ, որ ես անպայման այցելեմ բոլոր գիւղերը և գիւղական մարմիններին բացատրեմ իրենց պարտականութիւնները, որպէս ինքնապաշտպանութեան գիւղական կոմիտէների:

Յաջորդ օրը Ասլան Միրզայեանն ու ես ներկայացանք գնդապետ Բամիչևկուն, յայտնեցինք Բիւրոյի ցանկութիւնը և նա սիրով ընդունեց, ասելով՝ "Եթէ դուք չասէիք, ես ինքս պէտք է խօսէի ինքնապաշտպանութեան մասին և յայտնէի, որ եթէ որևէ կերպ կարող եմ օգտակար լինել, միշտ պատրաստ եմ":

Մինչև Ապրիլի 19-ը յաջողուեց լինել Դիղակի գիւղերի մեծ մասում: Գիւղեր կային այնքան մօտ իրարու, որ երկու, երեք և աւելի գիւղ միասին էին ժողով ունենում չրջիկ-գործիչների խօսքը կամ պաշտօնական յայտարարութիւնները լսելու: Մեծ գիւղախումբը Հաղրութինն էր, որի չուրջն էին և կամ 3/4 կիլոմետր իրարուց հեռաւորութեան վրայ՝ Վրթինաշատ, Վանք, Տեաք, Թաղասեր, Նորաչէն, Կարմրակուճ գիւղերը: Անհրաժեշտ համարուեց, գործին արագ ընթացք տալու համար, որ ես այցելեմ Դիղակի արևմտեան և հարաւային մասի գիւղերը, իսկ Ստ. Ստեփաննանը և Ասլան Միրզայեանը հիւսիսային և արևելեան մասի գիւղերը:

Բացառութեամբ Առաքել, Բանաղուր, Դոլանլար, Մեծ Թաղլար, Հին Թաղլար և Խծարերդ գիւղերի, պէտք եղաւ ինքնապաշտպանութեան նոր կոմիտէներ ընտրել, որովհետև ընտրուած գործադիր մարմինների անդամների մեկ մասը գիւղերից հեռացել էին, իսկ բոլոր միւս գիւղերում մարմինները մնացել էին անփոփոխ: Բիւրոյի ընդունած կազմակերպական ձևը՝ ստեղծելու քաղաքացիական և զինուորական մարմիններ չրջանում, պարզուեց, որ հնարաւոր չէ: Գիւղեր կային, որոնցում հազիւ երեք-չորս զրագէտ կարելի էր գտնել և այդ երեք-չորս հոգին կարող էին օգտակար լինել մեկ մարմնում, ուրիշ զրագէտ չէր գտնուի, որ մի երկրորդ մարմնի անդամ նշանակուէր: Այնպէս որ, թէ՛ չրջանի կենտրոնական և թէ՛ վերջնիս ենթակայ մարմինները "ինքնապաշտպանութեան կոմիտէ" անունը պիտի կրէին: Երկուական մարմիններ ստեղծելու կարիքը ոչ միայն չդգացուեց, այլ և աւելորդ համարուեց:

Գիւղացիութեան յայտարարուեց, որ չրջանի հրամանատար է ղնդապետ Բամիչևսկին, օգնական ունենալով Արտեմ Լալայեանին, որը մեր փորձած, հին մարտիկներից մեկն էր և միաժամանակ պիտի վարէր զաւառական կոմիսարի պաշտօնը: Թէ՛ բանաւոր կերպով և թէ՛ նամակներով մարմիններին բացատրուեց, որ Հադրութի կենտրոնական ինքնապաշտպանութեան կոմիտէն միջոցներ չունի պահակախումբ պահելու, հաղիւ երկու ձիաւոր պահակներ ունի, որոնք սուրհանդակների դեր պէտք է կատարեն:

Հարաւային կողմի գիւղերը չատ մօտիկ լինելով Թրքական գիւղերին առօրեայ յարաբերութեան մէջ էին նաև դրանց հայ ու թուրք բնակիչները: Վերջիններս տեղեկանում են, որ քաղաքից մարդիկ են եկել և կարգ ու կանոն են մտցնում գիւղերում, որ նոր մարդիկ են նչանակել պաշտօնների և որ խաղաղութիւն է տիրում: Եւ թուրքերից մի չարք մարդիկ դիմում են Արտեմ Լալայեանին, որին չատ լաւ էին ճանաչում, գիտէին, թէ ով էր, ժողովրդի մէջ ինչպիսի դիրք ու հեղինակութիւն ունէր և խնդրում են, որ Հադրութի հայոց կոմիտէն իրենց գիւղերն էլ առնէ իւր իշխանութեան ներքոյ և կառավարէ: Արտեմ Լալայեանը Հայ-Թրքական ընդհարումներին եղել է Դիղակի չրջանի հրամանատար Մօրուք Խէչոյի[55] օգնականը:

Դիղակը արևմտեան կողմից կապած է Բարգիւչատի չրջանին: Սահմանագծի երկարութեամբ երեք փոքր գիւղեր՝ Սիպտակ Շէնը, Թիսխարաբը և Արփագիադուկը սահմանապահների դեր են կատարում, հանդիսանալով Խծաբերդ գիւղի ամրութիւնները:

Խծաբերդը թիկն տւած Դիղափայտ լերան հարաւային լանջին, կռիւների ժամանակ միչտ լաւ պաչտպանել է չնորհիւ իւր դիրքի անմատչելիութեան: Պատահել է, որ դաչտային աչխատանքների ժամանակ, գիւղի տղամարդիկ հանդերում գտնուելով, թուրքերը յարձակում էին գործել գիւղը գրաւելու միտումով, բայց գիւղում մնացած պահապանի պարտականութիւն կատարող երեք-չորս հոգին կարողացել էին անվերջ հրացանաձգութեամբ ամբոխի յառաջխաղացումը կասեցնել, մինչև գիւղացիները դաչտերից վերադառնային և ընդհանուր գրոհով յետ մղէին ու փախուստի մատնէին թչնամուն:

Նման դէպքերից մեկի ընթացքին խիստ աչքի էին ընկել երիտասարդ Ուլունց Ներսէսը (դաչնակցական) իւր հօրեղբօր, տարիքն առած 60-65 տարեկան Միրզայի հետ միասին: Ներսէսը զրագէտ և գիտակից մարդ էր և գիւղի մարմնի ղեկավար անդամն էր: Խծաբերդը պատրաստ էր. չատ անելիք չունէինք այնտեղ:

---

[55] Սպանուած Պարսկական Սահմանադրական կռիւներից մեկում, Խոյում: (Հեղ.)

Խծաբերդից արևելահարաւ կողմում է գտնւում Հին Թաղլար գիւղը, որը իւր վարք ու բարքով միանգամայն տարբերւում է Ղարաբաղի բոլոր գիւղերից: Հին Թաղլարցիների հասկացողութեամբ դողութիւնը նոյնքան անպատիւ գործ էր, որքան մարդասպանութիւնը: Միջակ ունևոր գիւղացիներից մէկի այծը գողացել էր և իրրև գող կասկածւել, միջակ ունևորից ցած, կարելի է ասել չունևոր գիւղացիներից մէկը: Կասկածւած գողը ներկայացաւ մեզ, ասելով. "Մեր գիւղը հիմնւելու օրւանից մինչև այսօր, չէ պատահել, որ մէկը մեղադրւած լինի իրրև գող. իղուր տեղը ղրպարտում են ինձ, թէ իբր ես եմ գողացել այծը: Ես չեմ ուղում կեղտոտ և ղրւելի գող անուն տան ինձ: Դա մեծ ամօթ է, ինչով կուզէք, երդւեմ, որ ես գող չեմ և վստահ եմ, որ գողը մեր գիւղացի չէր: Ես պատրաստ եմ իմ ունեցած այծերից մէկը տալու գողացւածի փոխարէն, բայց երբէք յանձն չեմ առնի մի յանցանք, որը ես չեմ գործել: Ես խնդրում եմ, որ խիստ քննութիւն կատարէք":

Որոշեցինք կողմնակի կերպով հետաքրքրւել թէ՛ Թաղլարում և թէ՛ մօտակայ գիւղերում, թերևս այդպիսով յաջողւէր պարզել, թէ ով էր գողը և կասկածւած հին Թաղլարցուն հոգևական տառապանքից ազատել: Ճիչտն ասած, նրա յուղմունքով խօսելը, ղէմքի ընկճւած լինելը ենթադրել էր տալիս, որ մարդը զուր տեղն է կասկածւել: Շատ չանցած, իրողութիւնը պարզւեց. Հարևան Խծաբերդ գիւղում յայտնաբերւեց, թէ ով էր գողը: Պարզւեց, որ գողութիւնը կատարել է Խծաբերդի Մուխին և կատարել է ոչ թէ կարիքից հարկադրւած: Նաև այդ քայլն արել է վստահ, թէ գողանում է Հին Թաղլարի նախկին քեօխւա և վաչխառու Աբրահամի այծը, պարզապէս նրան վնաս հասցնելու միտումով: Երբ գողացւած այծի պատմութիւնը սեպհականութիւնն է դառնում խծաբերդցիների, Մուխին ինքը խոստովանում է և պատրաստակամութիւն է յայտնում վնասի հատուցումը տալ այծի տիրոջը:

Գիւղացիները գանգատւեցին Աբրահամ քեօխւայից, որ իր բանջարանոցը կից լինելով եկեղեցու հողին, վերջինից բաւական տեղ իւրացրել, միացրել է իւր ունեցածին և ցանկապատի մէջ առել: Երկար տարիներից ի վեր վէճը չարունակւում էր ժողովրդի և Աբրահամ քեօխւայի միջև, ու կարծես սպասում էին, որ դրսից մէկը գար, վերջացնէր: Հետաքրքիր ու հաճելի էր լսել գիւղացիներին, թէ ինչպէս գովում էին Աբրահամի տղային, որը գիւղացիների կողմն էր պահում՝ ի հեճուկս իր հօր, որի արարքը սկզբից դատապարտել էր: Անկախ գիւղացիներից, տղան առանձին խօսեց և խնդրեց, որ հարկադրենք հօրը՝ վերադաձնելու եկեղեցուն պատկանող հողակտորը:

Գիւղացիների հետ միասին գնացինք եկեղեցու հողամասը տեսնելու: Եկեղեցին չրջափակ չունէր, ուստի և հնչտ էր հող իւրացնելն ու միացնելը կից որևէ հողամասի: Աբրահամ քեօխւսայի հետ առանձնացանք երկուսով, և նա բաւական խօսեցի հետը. ասացի, որ մենք կարող ենք մեր ունեցած իշխանութեամբ զրաւել ոչ թէ եկեղեցապատկան հողի կտորը, այլև նոյնքան, որպէս տուգանք իր հողից, այն կցելով եկեղեցուն, սակայն լաւագոյնը կը լինի, որ ինքը իր կամքով կատարէ գիւղացիների արդար պահանջը, վերադարձնի եկեղեցու հողամասը և այդպիսով գիւղացիների համակրանքը ձեռք բերի: Ասացի, որ ըստ մեր հայկական սովորութեան, ունևոր մարդիկ իրենց ծնողների յիշատակի համար եկեղեցի, դպրոց կամ կամուրջ են շինում, և եթէ անգամ գիւղացիների ասածը ճիշտ չլինէր, որ եկեղեցու հողից կցել է իւր հողին, ինքը հէնց գիւղացիների գանգատին վերջ տալու նպատակով պէտք է պահանջած չափով հող տար եկեղեցուն՝ յիշատակի համար եւ այլն:

Աբրահամ քեօխւսան, որ մինչև վերջ լուռ լսում էր, ոչ մէկ առարկութիւն չարեց. երբ վերջացրի "ճառս", դարձաւ ինձ ու ասաց:

– Ձեր ասածները ընդունում եմ, նեղութիւն քաշէք, ինչքան կուզէք, կտրէք հողից կամ ինչքան ժողովուրդն է ուզում, միայն թէ դոհանան և գանգատը վերջանայ:

– Կեցցես, Աբրահամ քեօխւսա. ժողովրդին կը կանչենք, ասացի, դու ինքդ իրենց աչքի առջև, եկեղեցու բաժինը կը կցես եկեղեցու հողին:

Գիւղի գլիրին ասացի, որ բոլոր գիւղացիներին կանչէ եկեղեցու բակը. գիւղացիները հաւաքւեցին, և յայտարարեցի, որ Աբրահամ քեօխւսան պատրաստ է կատարելու ժողովրդի պահանջը. ցոյց տուէք, թէ մինչև որտեղն է պատկանում եկեղեցուն, որ սահմանը որոչւի: Գիւղացիները հողը կէս մետրի չափ փորեցին և ցոյց տուին հնուց թաղւած ածուխը, որ երկու հողամասի սահմանանիշն էր:

– Թող մի բան էլ աւել կցեն, հետս էն դունեան[54] չեմ տանելու.. հողը ինչի՞ս է պէտք,– ասաց Աբրահամ քեօխւսան:

Մերունիներից մէկը ասաց՝ "Աբրահամ, աւելին հիմա պէտք չկայ կցելու: Եկեղեցունը հիմա կը կցենք, իսկ յետոյ երբ կուզենաս հող նէրել, առանձին կարգադրութիւն կանես դաբալայով[55]":

Աբրահամի տղան ոգևորւած գլիրին կարգադրեց, որ տներից նշաններ բերի, ցանկապատը յետ տանելու համար: Գլիրը տասը-տասնհինգ հատ նշան և մի քանի հատ կացիններ բերաւ:

---

[54] Աչխարհ: (Խմբ.)

[55] Փաստաթուղթ, պայմանագիր: (Խմբ.)

Գիւղացիները վրայ թափւեցին, մի քանիսը ցանկապատից դուրս քաշելով ձողերը, սրեցին ու չարքին խփեցին Հողամասի սահմանի երկայնքին, իսկ միւսները փչնայ ցանկապատը քաշելով, արագ-արագ նոր սահմանի երկարութեամբ տնկւած ձողերին հագցրին մաս-մաս: Մի ժամ չտևեց, արդէն նոր ցանկապատը զրւած էր և եկեղեցու բակն էլ բաւական մեծացած:

Աբրահամ քեօխւային մօտենալով, ձեռքը սեղմեցինք ես և մեր երկու մարտիկ ընկերները: Մեզ հետևեցին և գիւղի աղասախկալները: Թաղլարում աննկիք ուրիչ գործ չունէինք. ուղեցինք մեկնել Դոլանլար գիւղը, բայց Աբրահամ քեօխւան խնդրեց մնալ, իրենց տան հացից մի կտոր ուտել և յետոյ ճամբայ ընկնել: Մեկ էլ տեսանք, որ տղան մի մեծ ոչխար չալակն առած, եկաւ ու դարձաւ գիւղի գղիրին, որ մորթի, իբրև մատաղ տեղի ունեցած հաչտութեան համար:

Աբրահամը գիւղի ծերունիներին և մեզ առաջնորդեց իրենց տուն. մատաղը մորթւել, բաժանւել էր գիւղացիներին. երկու չամփուր խորոված մատաղից հիւրերիս հասաւ, և ծերունիները օրհնեցին, ասելով՝ "Աստւած ընդունելի համարի մատաղը, կենացդ, Աբրահամ քեօխւա": Ինչպէս երևում էր, հիւրասիրութեան համար կանխաւ պատրաստութիւն տեսնւած էր եղել, որովհետև սեղանի վրայ բաւական եփւած հաւեր կային: Պարզ է, ի հարկէ, ես էլ պարտաւոր էի "ճառ" ասել, նիւթ ունենալով համերաշխութիւն ասւած բանը, որ խիստ անհրաժեշտ էր, հացի ու ջրի չափ անհրաժեշտ հայերիս համար:

Երբ արդէն պիտի ձի նստէինք ու մեկնէինք գիւղից, Աբրահամ քեօխւայի տղան ընկերացաւ մեզ բաւական տեղ և իր անչափ չնորհակալութիւնը յայտնեց, որ յաջող կերպով վերջացաւ գործը և ասաց, որ հօրը մի քիչ էլ վախեցրել է, թէ ինձ ուղեկցող մարտիկները ահաբեկիչներ են, որ եթէ հակառակւի և յամառի, կարող են ահաբեկման ենթարկել:

Դոլանլարը բաւական մեծ գիւղ էր և որովհետև կարծես մի քիչ առանձնացած ու կղզիացած վիճակ ունէր, խիտ անտառներով չրջապատւած և անջատւած ու բաւական հեռու հայկական գիւղերից, աւելի մօտ թրքական գիւղերին և հայ-թրքական ընդհարումներից ի վեր, ինչպէս Խծաբերդն ու նրա չրջակայ գիւղերը՝ բաւական ղզաստ: Ունէր դպրոց և ուսուցիչ՝ յանձինս նոյն գիւղացի Տիգրան Մելիք Գասպարեանի, որ գիւղական գործադիր մարմնի նախագահն էր: Գործադիր մարմնի անդամները դաշնակցականներ էին. գործադիր մարմինը ղարձաւ ինքնապաշտպանութեան կոմիտէ, որի անդամներից մեկը՝ Իվան

Մկլիք Գասպարեանը, նշանակուեց գիւղի խմբապետ: Գիւղը բաւականաչափ ղէնք ունէր:

Երբ վերադարձանք Հաղրութ, մարտի վերջին, ընկերները տուեցին կարդալու քաղաքից ստացած գրութիւնները, որոնցով Բիւրօն յայտնում էր հետևեալ տեղեկութիւնները:

Մարտի 18-ին Բագուում թուրքերը ելոյթ էին ունեցել հայերի դէմ: Հայերը յարձակում էին գործել և գրաւել քաղաքը: Բագւի ղեկքերին արձագանքել էին գաւառների թուրքերը և բոյկոտ յայտարարել մեր ղէմ Ջիվանչիրի և Շուշու գաւառներում: Դիզակը ղերծ էր մնացել բոյկոտից:

Մարտ 20-ին, ղինուորաղաչտային դատարանի որոշմամբ հրացանաղարկ էին արել Վարանդայի կղրայրասպան ոճրագործները՝ հինգ հոգի, որոնցից չորսը մեղաղրւել էին հայ ղինուորներ սպանելու մէջ, նրանց ղէնքերը ձեռք բերելու նպատակով, իսկ մէկ հոգին՝ Ղղղալայի և Աչանի մօտերքում թուրք սպանելու պատճառով: Այս մասին Բիւրօն կարճ թռուցիկով յայտարարում էր ի գիտութիւն ժողովրդին և միաժամանակ ղգուշացման խօսք ասում, որ բոլոր ոճրագործները անխտիր պիտի պատժւեն, մանաւանդ չարաչահութեամբ ղբաղւողները: Ի ղէպ, թուրքերի վրայ, քաղաքում, մեծ տպաւորութիւն էր թողել այն, որ թուրք սպանող հայը անպատիժ չէր մնացել: Ըստ արժանւոյն պատժւել էր:

Ասկերանում **մարտ 24-ին** մօտակայ Վերին ու Ներքին Խանաբաղ, Քեաթուկ և Վերին ու Ներքին Ղլիջբաղ գիւղերի ժողովուրդը, աւելի ճիշտ, ճակատներից վերադարձած ղինուորները, "թալանել թալանածը" նշանաբանով տարւած, յարձակում էին գործել, քաղաք տարւող 40 փուրդոն ալիւրը թալանել, տարել էին իրենց գիւղերը:

Մարտ 25-ին Իւան Բէկ Իշխանեանը ուղարկւել էր Գանձակ, որպէս փինանսների նախարարութեանը ենթակայ աքցիղային վարչութեան պաշտօնեայ, պետական դանձարանից յաջողել է ստանալ 280 հազար ռուբլի և բերել Շուշի՝ հայ ղինուորների ընտանիքների նպաստը վճարելու համար:

Մարտ 27-ին Հայրապետ Մուսայէլեանը և Լիւֆֆալի բէկ Բէհբուդովը գնացել են Գորիս, որպէս Կովկասեան Կոմիսարիատի լիազօրներ, Զանգեզուրի, Սիսեանի, Ղափանի և Գինուազի չրջանների վերաբերեալ անհրաժեշտ կարգադրութիւններից յետոյ հայ-թրքական համագումար ունենալու Շուշում: Ընկերները, Ստեփան և Արզար Ստեփանեանները, ղեկուցեցին, որ գիւղերում

եղած գործադիր մարմինները զարձրել են ինքնապաշտպանութեան կոմիտէներ: Մարմինները չուտով պիտի ուղարկէին իրենց գիւղերում ունեցած ղէնքերի և փամփուշտների քանակը:

Ես էլ իմ հերթին ղեկուցելով կատարուած աշխատանքների մասին, ընդհանուր թուերով ներկայացրի այցելածս գիւղերի ունեցած ղէնքերի և փամփուշտների քանակը, իսկ հրացան ունեցողների մանրամասն ցուցակը կոմիտէները խմբապետների հետ պիտի կազմէին և ուղարկէին: Ի պատասխան իմ հարցումին, թէ Բամիչևսկու տուած ղէնքերը համարներով արձանագրուա՞ծ են, և թէ ում ձեռքին է գտնւում նաև փամփուշտի քանակը, պարզուեց, որ մանրամասն արձանագրուած են միայն Հաղրութում. իսկ միւս գիւղերինը՝ ընդհանուր թուերով, ղէնքերի քանակը և քանի արկղ փամփուշտ:

Գիւղացիների մօտ, ինչպէս պատմեցին ընկերները, այն կարծիքն էր տիրում, թէ ղէնքերն ու փամփուշտը որ գիւղում էլ որ լինեն, նոյն գիւղի սեպհականութիւնն են և գիւղից չպիտի դուրս բերուեն, ուստի որոշուեց յատկապէս լինել այն բոլոր գիւղերում, որտեղ ղէնք և փամփուշտ բաժանուած է արդէն: Որոշուեց բաշխուած ղէնքերի մանրամասն ցուցակ կազմել. դրանք կրողները պիտի դառնան գիւղի մարտական խումբի անդամներ, ամէն րոպէ պատրաստ վտանգի պահուն հրապարակ գալու իրենց գիւղում կամ օգնութեան փութալու ուրիշ գիւղերի: Զէնքերը և փամփուշտները գտնւում են Առաքել, Բանաղուր, Յոր, Թաղասեր և Կարմրակուռ գիւղերում: Բոլոր գիւղերում եղանք, մանրամասն ցուցակ կազմեցինք՝ ղէնքերի և փամփուշտի քանակը յիշատակելով, երկու օրինակ, Բիւրոյի, Հաղրութի չրջանային ինքնապաշտպանական Կոմիտէի և գիւղի կոմիտէի անդամների ստորագրութեամբ վաւերացած, մէկ օրինակը Հաղրութի և միւսը գիւղի կոմիտէի մօտ: Արձանագրութեան մէջ յիշատակւում է, որ ղէնքն ու ռազմամթերքը ընդհանուր ժողովրդի սեպհականութիւնն են և յանձնւում են գիւղի կոմիտէին ի պահ: Պահ տրուած ղէնքը կամ փամփուշտը ծախողը կենթարկւի ամենախիստ պատժի:

Տեղեկութիւն հասաւ այդ օրերին, որ Դարալագեաղի, Սիսեանի և Զանգեղուրի վրայով ղարաղաղցիների մի մեծ ղինուած խումբ, թուրքերի հետ կռիւները մղելով, կարողացել է հասնել Շուշի. կռիւների ընթացքում զոհեր են տուել, որոնցից մէկն էլ Հաղրութի ղիմաց, մէկ կիլոմետրի վրայ գտնուող Վանք գիւղից է՝ Արտեմ (Յարութիւն) Բաղդասարեանը, Արսօ Բաղդասարեանի եղբայրը:

Արտեմի ղին Արսօն բերել, հասցրել էր գիւղ. թաղման օրը ներկայ եղանք պատարագին եկեղեցում և գերեզմանատանը: Թաղումից յետոյ հանդիպում ունեցայ Արսօյի հետ: Նախկին դաշնակցական էր, 1907 թ. անջատական չարժման յարած և միւս

անջատականների հետ հեռացած կուսակցութիւնից: Պատերազմին եղել էր Ռուսական քաղաքների միութեան պաշտօնեայ կազղւանում, Սարիղամիչում և այլուր: Մանրամասն պատմեց ճամբին ունեցած կռիւների մասին, որ թուրքերը չատ լաւ պինւած էին և մեծ վտանգ էին հանդիսանում:

Ընդհանուր գծերով պատմեցի վերջին հինգ-վեց ամիսների անցած ղարձածի մասին և թէ ինչպէս ստեղծուեց Միջկուսակցական Բիւրօն և Հայ-Թրքական կոմիտէն: Քանի որ էսէրները մտած են Բիւրօյի մէջ, խոստացաւ անցնել Շուչի և մասնակցել տարուող աշխատանքներին:

Ապրիլի սկզբներին նամակ ստացայ Արշաւիր Քամալեանից, որ Վարանդայի չրջանի ինքնապաշտպանութեան գործն էր ղեկավարում Բիւրոյում ընդունւած բանաձևի համաձայն, միաժամանակ քաղաքացիական և պինւորական մարմիններ ստեղծելով բոլոր գիւղերում: Արշաւիրը գրում է, որ գիւղացիները պինւորական մարմին ասած բանը հասկանում, և ընդունում են, բայց քաղաքացիական մարմին չեն հասկանում և անտարբեր են: Հարցնում է, թէ ինչպէս է յաջողւել Դիղակում կազմակերպութիւն ստեղծել, որի մասին տեղեկացել էր Դիղակից Շուչի գնացող մէկ հաղորդացուց, որին հանդիպել էր Թաղավարդ գիւղում, պատահաբար: Գրեցի իրեն, որ անիչխանութիւն եմ արել, Բիւրոյի ընդունած երկորեակ մարմիններից խուսափել, բոլոր գիւղերում ստեղծել ենք ինքնապաշտպանական կոմիտէներ, որոնց ժողովուրդը վարժւել է հայ-Թրքական ընդհարման տարիներից ի վեր: Հետագային, երբ հանդիպեցի Արշաւիրին, զաւեչտական բաներ էր պատմում գիւղացիների մասին: Գիւղացիներն ասել էին, "Պ. Արշաւիր, հասկանում ենք, թէ ինչ է պինւորական մարմինը, որը կռիւների ժամանակ կռւողներին կառավարում է, ցոյց տալիս, թէ ինչպէս պիտի կռիւ անել. էդ քաղաքացի մարմինը ի՞նչ ղաղ է. մենք քաղաքացի չենք, գիւղացի ենք. երբ որ պինւորական մարմինը կայ, քաղաքացի մարմինը ի՞նչ պիտի անէ":

Արշաւիրը բացատրութիւններ է տալիս կրկին, բայց իզուր. նախ քաղաքացիական բառի իմաստը չեն հասկանում և երկրորդ, պնդում են, որ պինւորական մարմինը միայն բաւական է գիւղի համար, կռւի ժամանակ կռիւ կանի, խաղաղ ժամանակ էլ գիւղին վերաբերող գործերը կը կարգադրի: Եւ հարկադրւած է լինում բոլոր տեղերում պինւորական ինքնապաշտպանական մարմիններ ընտրել:

Ապրիլ 10-ին Մելիքջանլու գիւղից ահազանգ են հնչեցնում, թէ երկու- երեք կիլոմետրի վրայ ինչ-որ պինւած խումբ է երևացել: Արտէմ Լալայեանը անմիջապէս մի քանի ձիաւոր մարտիկներով

սրարչաւ մեկնում է Մելիքջանլու, հասկանալու, թէ ինչումն է բանը, որպէսզի եթէ պէտք լինի, իմաց տրւի մօտակայ գիւղերի մարտական խմբերին՝ չտապ մեկնելու այնտեղ:

Գնդապետ Բամիչևսկու հետ մենք էլ Հաղրութի Կոմիտէի անդամներին միացած բաւական տեղ ոտքով գնալով, գրեթէ կէս ճամբին կանգ առանք, սպասեցինք աղդանչանի. կէս ժամ հաղիւ էր անցել, վերադարձաւ Արտէմը, խիստ վրդոված, որ իղուր տեղն է ահաղանգ հնչեցւել: Ինքը հասել է թուրք խմբին, տասը-տասներկու հոգի, բոլորն էլ ծանօթ մարդիկ, որոնք իրենց հակառակորդ թայփայից ղգուշանալով, ճամփան չեղել էին, հայկական գիւղերի մօտով առաջանալով, հակառակորդներին չհանդիպելու համար, այլապէս, եթէ հանդիպէին, բախումը անխուսափելի կը լինէր:

Հաղրութում եղած օրերին միշտ համդիպումներ էի ունենում Բամիչևսկու հետ, մենակ կամ Ասլանի հետ միասին: Ինտելիգենտ, բարեկիրթ մարդ էր, ստիպում էր, որ ամէն օր իր հետ ճաշենք. հաղիւ երկու անգամ, քաղաքավարութիւն համարելով, մնացի մօտը ճաշի, այլապէս աշխատում էի, ճաշից յետոյ միայն այցելութեան գնալ:

Հաղրութում էր գտնւում Ջուլֆա-Բագու երկաթգիծը կառուցող ինժենէր Միչկինը, իր կնոջ հետ միասին, և ապրում էին Հաղրութի Կոմիտէի անդամ Սարգիս Դուրգարեանի տանը, որպէս պանսիօներ: Սարգիսը աշխատելիս էր եղել Միչկինի մօտ, որպէս չինանիւթերի մատակարար: Երբ անիշխանութիւն է ստեղծւում, բանւորութիւնը թողնում, հեռանում է. պահեստը պայթելուց յետոյ բաւօք է համարում փոխադրւել հայերի մէջ, ոչ մէկ վստահութիւն չունենալով թուրքերի վրայ: Միչկինը յայտնեց, որ Կարիագինօյի ռուսները գիմել և խորհուրդ են հարցրել իրենից՝ մնա՞ն տեղերում, թէ՞ հեռանան: Եւ ինքը խորհուրդ է տւել, որ եթէ իրենց ապահով չեն զգում, փոխադրւեն հայերի մէջ: Սակայն իրենք այդ ուղղութեամբ էլ մտածել են և գտել, որ հայերին նոյնպէս վտանգ է սպառնում: Թուրքերի մէջ, ինչպէս տեղեկացել էին նրանք, անցեալ տարիների պէս, դարձեալ տաճկական քարոզիչներ էին եկել և քարոզում էին թէ՛ հայերի, թէ՛ ռուսների դէմ: Բոլորը մէկ հաչիւ է. եթէ գնան, չատ չնչին բան կարող են վերցնել իրենց հետ, չարժական ունեցւածքը հաղիւ թէ կարողանան լաւ արժէքով ծախել և նենթադրում են, որ իշխանութիւնները իրենց չպիտի պաչտպաննն, եթէ թալան լինի, ինչ որ չատ հաւանական է: Ոչ մէկը վստահ չէ, որ ճամփին չեն թալանի: Աւազակախմբեր կան, որ թուրքերին էլ են թալանում. այդպիսիներից աղատւել չկայ, եթէ հանդիպելու լինեն: Բոլոր ընտանիքները դրամական միջոցներ ունեն, որ մի քանի միլլիոնի է հասնում. իրենց աւելի չատ ա՛յդ ունեցւածքի ապահովութեան հարցն է դրաղեցնում. արդեօք հնարաւորութիւն

կա՞յ փոխանակութիւն կատարելու. այստեղ դրամը տան մէկին կամ մի քանիսին և փոխարէնը ստանան Բազում: Միչկինը պատասխանել է, որ ունևոր այդպիսի մարդիկ չկան Հաղրութի հայերի մէջ, արդեօք Շուշում էլ չկան:

Ասացի՝ չնայած Բազի միլիոնչի հայերի ճնշող մեծամասնութիւնը Ղարաբաղցիներ են, բայց Շուշում նրանցից ոչ մէկը առևտրական կամ չահաբեր հաստատութիւններ չունի, որոնց տեղական գրասենեակները ընդունեն ի պահ և փոխարէնը Բազի գրասենեակը վճարի: Միակ ելքը այն է, որ հայկական գիւղերով հասնեն Գանձակ և այնտեղից երկաթուղով չարունակեն իրենց ճամբան: Հարկաւ, մինչև Գանձակ պիտի ամբողջ ծախսը հոգան՝ վճարելով մարդկանց գրաստների և սայլերի վարձը: Իսկ եթէ ուզենան մնալ ու փոխադրել հայերի մէջ, սիրով կընդունեն:

Ապրիլի 19-ն էր, Հաղրութի չրջանի ինքնապաչտպանութեան կոմիտէի նիստին ընթացիկ խնդիրներ էին դրած քննութեան. ընկերները զեկուցում և իրենց կարծիքներն էին յայտնում. մէկը դուռը ծեծեց, ներս հրաւիրեցինք: Ներս մտաւ ղարաբաղցի բարձրահասակ Աբրահամը, որը իր հայրենակիցների պէս Շուշում մշակութիւն էր անում: Արագ ճամբայ կտրող մարդ էր, ուստի չտապ կերպով նամակներ տեղ հասցնելու համար Բիւրոյին ծառայում էր որպէս սուրհանդակ: Աբրահամը ծոցից հանեց փակ ծրար ու տւաւ ինձ:

Աչոտ Մելիք Յովսէփեանն էր նամակ գրել Ասկերանի չրջանում սկսած անիչխանութեան մասին: Հայրապետ Մուսայելեանը և Արտէմ Թումեանը եղել են Ասկերանում և չրջանի գիւղերում, դիմել են գիւղացիներին, որ քաղաքին պատկանող ալիւրը վերադարձնէին . գիւղացիները ոչ միայն չէին համաձայնել վերադարձնելու ալիւրը, այլև սպառնական դիրք ընդունելով կտրականապէս մերժել էին: Արտէմը զգաստացման խօսք էր ասել, զգուչացրել, որ եթէ չվերադարձնեն ալիւրը, Բիւրօն հարկադրուած խիստ միջոցների կը դիմի: Գիւղացիները փոխանակ զգաստանալու, զէնքի էին դիմել, սպառնացել Հայրապետին ու Արտէմին, որոնք ձեռնունայն վերադարձել էին քաղաք: "Երբ նամակս ստանաս, – գրում էր նա, – անմիջապէս մեկնիր, առանց ուչանալու. գլուխդ այդտեղ թրջիր և այստեղ թրաչիր":

Ընկերների համար հաճելի չէր մեր հեռանալը Դիլագիից, որովհետև աղատ գործիչ չունէին. չրջանը կազմակերպելն, ինքնապաչտպանութեան գործը նոր-նոր հունի մէջ էր մտել. մտածում էինք այլևայլ աչխատանքների մասին, բայց հարկադրուած էինք հեռանալ: Ընկերներին յայտնեցի, որ երևի Բիւրոյի լիակազմ

նիստին մասնակցելու համար են կանչում քաղաք, ուստի խոստացայ Բիւրոյի ժողովից յետոյ վերադառնալ Դիղակ:

Հաղիւ մի ամիս ու տասը օր էր տևել Դիղակում կատարած մեր աշխատանքը, և հազիւ կարողացել էինք ծանօթանալ գաւառի ու գիւղացիութեան հետ և պիտի խոստովանենք, ինձ հետ չընգայող ընկերները՝ Գարեգինն ու Իվանը, չատ լաւ տպաւորութիւն էին թողել գիւղացիների վրայ իրենց համեստ և վայելուչ կեցուածքով: Ժողովրդին, ի հարկէ, ես էի "ճառում" և տրուած հարցերին պատասխանում, բացատրութիւնները տալիս. իսկ ժողովներից դուրս հարցասէր երիտասարդները գրոյցի էին բռնում Գարեգինի և Իվանի հետ: Երկուսն էլ ղպրոցում եղած, զրագէտ մարդիկ էին, ի մասնաւորի Գարեգինը, որ հասել էր թեմական դպրոցի հինգերորդ դասարան, բայց յեղափոխական մեկ ակտի հետևանքով, 1909 թ. հարկադրուած թողել էր դպրոցը, հեռացել ուրիչ վայր և անկեզալ կեանք վարել մինչև 1917 թ. յեղափոխութիւնը, որից յետոյ վերադարձել էր իւր ծննդավայրը: Իրենց ընկերականութեամբ զրաւել էին երիտասարդներին և բաւարարում էին նրանց հարցասիրութիւնը, իրենց կարողութեան սահմաններում:

Ապրիլ 18-ին մեկնեցինք Հաղրութից և 19-ին հասանք Շուշի: Նոյն օրն էլ տեղի ունեցաւ Բիւրոյի լիակազմ նիստը: Ընկերները ամփոփ կերպով տեղեկացրին վերջին քսան օրւայ ընթացքում տեղի ունեցած անցուդարձի մասին:

ՀԱՑ-ԹՐՔԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ապրիլ 2-ին տեղի էր ունեցել Հայ-Թրքական առաջին համագումարը երկու աղգութեան հաւասար թիւով՝ քառասունհինգական պատգամաւորների մասնակցութեամբ, Հ. Մուսայէլեանի և Լ. Բեհբուդովի նախագահութեամբ: Օրակարգի հարցերը՝

1) Անիշխանութեան վերացման հարցը,
2) Պարենաւորման հարցը,
3) Քոչի հարցը,
4) Պայքար սպեկուլեացիայի դէմ:

Համագումարը միաձայնութեամբ որոշում էր կայացրել՝

ա)Բոլոր հնարաւոր միջոցներով ջանալ վերացնել տիրող անիշխանութիւնը՝ այդ նպատակով թռուցիկներ հրատարակել, կոչ անել ժողովրդին՝ ամէն կերպ օգնելու Հայ-Թրքական Կոմիտէին, որ Ղարաբաղի ղեկավար մարմինն է, խաղաղութիւնը վերականգնելու. իրենց անհատական չահերի համար հասարակութեան խաղաղ

կեանքը խանգարողներին ապաստան չտալ և հետու վանել անկարգութիւններ անողներին ու մանաւանդ աւազակների դէմ խիստ ու անողոք լինել:

բ)Գիւղացիները, ինչ որ կարող են մատակարարել քաղաքին՝ ալիւր, ընդեղէն, մսացու, կանոնաւոր կերպով և անարգել փոխադրեն և վաճառեն քաղաքում ապրողներին:

գ)Զարաչահութեան դէմ խիստ միջոցներ ձեռք առնուեն: Զարաչահութիւն անողները երկրորդ ձեռք վաճառողներն են. երբ գիւղացիները ծախու մթերքները բերեն քաղաք և առանց միջնորդի վաճառեն քաղաքացիներին, չարաչահողներին մեծ հարուած կը տրուի և թերևս նրանք չքանան ասպարէզից:

դ) Քոչի վերաբերեալ համագումարում տարակարծութիւն է առաջացել: Զանգեզուրի հայ և թուրք պատգամաւորները դէմ են արտայայտել քոչին՝ բարձրանալու դէպի լեռները, իսկ տափաստանի թուրք պատգամաւորները բողոքել են դրա դէմ և յայտարարել, որ տափաստանի կիզիչ արևի չոգից անասունները կը հիւանդանան, կը կոտորուին կերի պակասութեան պատճառով: Ամառը արևից չորանում է տափաստանը, կանաչ ոչինչ չի մնում, ինչպէ՞ս կարելի է արգելք հանդիսանալ քոչի սար բարձրանալուն: Արգելքի հետևանքով խիստ ծանր կացութիւն կը ստեղծուի:

Քոչի հարցը առկախ է մնացել մինչև յաջորդ համագումար, որպէսզի մինչև այն խորհեն և մի միջին ճամբայ գտնեն: Համագումարը փակւել է ապրիլ 6-ին, Ղարաբաղի առանձին մի խորհուրդ ընտրելով : Անդամները՝ հայեր՝ Մուշեղ Զաքարեան և Ռուբէն Շահնազարեան, թուրքեր՝ Լիւթֆալիբեկ Բէհբուդով և Հիւսէյինբեկ Վէղիրով:

Հայ-թրքական Կոմիտէի և Բիւրոյի որոչմամբ Գրիգոր Քալանթարեանը պիտի գնար Աղդամ, այնտեղից պոլսադրելու "Քաղաքային Ինքնավարութեան"ը պատկանող ալիւրը, որը Ասկերանում տեղի ունեցած թալանից յետոյ չէին համարձակւել փոխադրել քաղաք: Ես էլ պիտի անցնէի Ասկերանի շրջանի գիւղերը, ուստի երկուսով ապրիլ 20-ին մեկնեցինք միասին: Ասկերանում պիտի իջնէի, իսկ Գրիգոր Քալանթարեանը պիտի շարունակէր ճամբան: Կեանքի կամ ինչպէս ասում են՝ ճակատագրի խաղով, 1909 թ. Բագւի Կեն.Կոմիտէի որոչմամբ անյաջող ահաբեկման էր ենթարկւել Գրիգոր Քալանթարեանը. ինքը և կինը վիրաւորւել էին. կնոջ առաջին ամուսնուց ունեցած ուսանող տղան՝ Սուրէն Աղամալեանը սպանւել էր: Եւ ինձ էլ թէև համաձայն չէի եղել, որ ահաբեկման ենթարկւէր Քալանթարեանը, այնուամենայնիւ, որպէս ոստիկանական հսկողութեան ենթակայ դաշնակցական,

ձերբակալել էին իրր ահաբեկումը կազմակերպողի և, փաստական տուեալներ չունենալով, աքսորել էին ինձ հինգ տարով Անդրկովկասի սահմաններից դուրս. և այսօր, երկուսս միասին, ինքնաչարժով մեկնում էինք հասարակական պարտականութիւններ կատարելու, միևնոյն մարմնի որոշմամբ:

Սուրէն Աղամալեանը Շուշու ռէալական դպրոցն աւարտելով մտել էր Մոսկւայի համալսարանի իրաւաբանական ճիւղը: Աչակերտական տարիներից չատ մօտ էինք եղել և պիտի ասել, որ աղդային ոգի ունեցող մէկն էր ու համակիր Դաշնակցութեան: Ինձնից միչտ "Դրօչակ" էր վերցնում կարդալու:

1908 թ. ամռան տեղի ունեցաւ, նչանաւոր Սաքօ Եապօնի (Համբարձում Սարգսեանի) դատավարութիւնը Շուշում: Սաքօն իր կատարած մի չարք ահաբեկումներից յատկապէս դատւում էր Շուշու ոստիկանապետ Սախարովի սպանութեան համար: Բագւի Կենտրոնական Կոմիտէն որպէս պաչտպանի վարձել էր երդւնալ հաւատաւոր նոտար Բայկովին, որը Բագւում աչքի էր ընկած դատավարութիւններում, իբրև լաւ պաչտպան թէ՛ քրէական և թէ՛ քաղաքական յանցաւորների:

Քաղաքաղլուխը Գր. Քալանթարեանն էր, որի տանն էր իջևանել Բայկովը: Քաղաքի հայերը սրտատրոփ սպասում էին դատավարութեան վախճանին: Դէպքի միակ ականատեսը եղել էր Սախարովի թիկնապահ դորոդովոյ[56] Ջաւադը, որը սկզբում վկայութիւն էր տւել, թէ ահաբեկիչը Սաքօ Եապօնն էր եղել: Հետագային Դաշնակցութեան անունից Համբարձումեան Կոստին հասկացնում է Ջաւադին, որ պէտք է փոխէ վկայութիւնը, հակառակ դէպքում կարող է Սախարովի վրէժակին արժանանալ: Ջաւադը նախքան դատավարութիւնը քննիչի մօտ հարցաքննութեան միջոցին փոխում է վկայութիւնը, և որովհետև արձակւել էր պաչտօնից իբրև թիկնապահ աչալուրջ չդտնւելու համար, ուստի դարձել էր մեր նպաստընկալը և ընտանիքի դոյութիւնը քարչ տալու համար, երկու տարուց աւելի ծանրացած մեզ վրայ, ամսական քսանուհինգ րուբլու սահմաններում օժանդակութիւն էր ստանում:

Սուրէնը պատմում էր մեզ և իրեն հասակակից մօտ ծանօթներին, թէ ինչպէս ինքը ամբողջ ժամանակ Բայկովի հետ խօսում էր ի նպաստ Սաքոյի, թէ նա ընտանիքով ծանրաբեռնւած դիւղացի է, որ արդէն մէկուկէս տարի է ընտանիքը մատնւած է նիւթական ծանր վիճակի, որ Ջաւադը ճիչտ վկայութիւն չի տւել, որովհետև երբ գնդակը դիպել է Սախարովին և վերջինս փուել է

[56] Դորոդովոյ. Ցարական Ռուսաստանում՝ չարքային ոստիկան, որ ծառայութեան էր վերցրւում կամաւոր, վճարով: (Խմբ.)

գետին, ինչպէս Ջաւադը պատմել է Հետագային, ինքը վախից և խիստ յուզումից ուշաթափ ընկել է գետնին. ատրճանակի ձայնի վրայ հասնող զորոդովոյները երեսին ջուր լեցնելով ուշքի են բերել, ոտքի կանգնեցրել:

Սաքօն սիրուած էր Ղարաբաղի ողջ հայութեան կողմից, որպէս քաջ մարտիկ, չիտակ, ուղղամիտ, աղնիւ մարդ: Վերին աստիճանի մատչելի, համեստ և ընկերական մարդ էր: Հայ-Թրքական ընդհարումների ժամանակ Վարանդայի երկրորդ մասի հրամանատար Ասլան Մելիք-Շահնազարեանի օգնականն էր: Առաջին մասի հրամանատարն էր Մածոն Խեչօն (Գրիգոր Միրզաբէկեան): Սուրէնը պատմում էր, թէ Բայկովը յուսադրում էր, որ բացի հակառական վկայութիւն տուած Ջաւադից, ուրիշ վկայ չկար, որով և հնարաւորութիւն կար արդարացուցիչ վճիռ կորզելու: Սպասումները չարդարացան. Բայկովը բողոքեց բարձրագոյն դատական ատեանին, դարձեալ ապարդիւն: Բարձրագոյնն էլ հաստատեց շրջանային դատարանի վճիռը՝ տասը տարուայ տաժանակրութիւն: Տղի ունեցած անյաջող ահաբեկութիւնը տեղիք տուաւ խիստ քննադատութիւնների, նոյն իսկ մեր ընկերների կողմից:

Այո, հիմա երկուսով ինքնաչարժի մէջ նստած գնում ենք զործի: Գր. Քալանթարեանը գիտէր, որ Սուրէնն ու ես իրար հետ չատ մօտ ենք եղել: Եւ, որ չատ կարևոր է, ահաբեկիչներից մէկը՝ Յովհաննէս Աղասեանը, երբ ձերբակալւում է, առաջին հարցաքննութեան ժամանակ յայտարարում է, որ միակ ինքն է յղացել մահափորձը, անձնական հաշիւ ունենալով Քալանթարեանի հետ: Իր մեծ եղբայրը՝ Մկրտիչը, ղինուորական ծառայութեան կանչուած ժամանակ, ինքը և մայրը դիմել էին Գ. Քալանթարեանին, որպէս քաղաքապլխի, որպէսզի աղատէր եղբօրը ղինուորական ծառայութիւնից, որովհետև Հայրը մեռած էր, տան միակ աշխատող ձեռքը եղբայրն էր, մինչ ինքը դեռ վերջին դասարանի աչակերտ էր:

Աքսորավայրից վերադառնալուց յետոյ զանազան խնդիրներով պէտք էր եղել հանդիպելու Գ. Քալանթարեանի հետ. կնն. Կոմիտէի որոշմամբ, և միչտ քաղաքավարութեամբ ընդունել և բացատրութիւններ էր տուել: Նրա տղան դաչնակցական աչակերտական չարքերում էր (ռէալական դպրոցում): Ենթադրում էի նրա վերաբերմունքից, որ թէև ոստիկանութիւնը իբր ահաբեկումը կազմակերպողի էր ձերբակալել ինձ, բայց Յովհաննէսի դատավարութիւնից յետոյ, եթէ որոչ կասկածներ ունեցել էր, փոխել էր: Այնպէս որ, ինքնաչարժի մէջ այնքան սիրալիր էր, կարծես որևէ դէպք տեղի չէր ունեցել:

Գ. Քալանթարեանը համողմունքներով, հարկաւ, չատ պահպանողական մարդ էր և խոր ցաւ էր զգում ցարական կառավարութեան անկման հետևանքով: Սակայն մեղ էլ այդ օրերին յեղափոխութիւնը չէր հետաքրքրում, աւելի ճիշտ, մոռացութեան էր տրւած, որովհետև յեղափոխութեան հետևանքով ահռելի վտանգ էր կախւել հայութեան գլխին, դամոկլեան սրի պէս, և բոլորի ուշադրութիւնը կենտրոնացած էր մեկ հարցի չուրջ՝ բոլոր հնարաւոր միջոցները գործի դնել վտանգի առաջն առնելու:

Հասանք Ասկերան ճիշտ այն ժամանակ, երբ հասարակ գինուորի հագուստով, միջահասակ, ամրակազմ՝ կարծես պողպատից ձուլւած, չիկահեր մի երիտասարդ, մոսին հրացանն ուսից կախ, վէճի էր բռնւել Թուրք կառապանի հետ, ուզում էր կառքի ձիերից մեկը ազատել լծից և վերցնել իրեն: Քալանթարեանն ու ես կանգնած էինք երկու քայլի վրայ կիսաշրջան կազմած գինւած երիտասարդ զինուցաների չարքին: Բոլորը լուռ ունկնդիր էին երկուսի վէճին.

– Եղբայր, ասում է Թուրքը, ոչ կառքը և ոչ էլ ձին իմ սեպհականութիւնը չեն. մաշադի Մուստաֆայինն է. բացի սրանից ուրիչ չատ կառքեր ու ձիեր ունի, հարուստ մարդ է, դու ելնէ ձիերից մեկը տանես, նա չպիտի հաւատայ իմ ասածին, որ դու խլել ես ինձնից, պիտի ասի՝ ձին դու ծախել ես և դու էլ արժէքը պիտի վճարես: Ես աղքատ մարդ եմ, ստացածս ռոճիկով հազիւ եմ ընտանիքս պահում. բայց նրա համար նչանակութիւն չունի. կաշխատ մաշկելով ձիու արժէքը պիտի դուրս բերի ինձնից: Յետոյ, եղբայր, այսպիսի կառքով մեծաւ մասամբ հայ ճամփորդներն են այս ճանապարհով Եւլախից գնում Շուշի և այնտեղից էլ գնում Եւլախ: Մի չարչարիր ինձ. թող չարունակեմ ճամբաս:

– Ինձ ի՞նչ, թէ դու պիտի վնասւես, բաց թողնեմ, գնաս, և ես ձի չունենա՞մ, որը չատ պէտք է ինձ: Քո ասած մասալը չի մտնում գլուխս, եթէ չատ հակառակւես, չան սատակ կանեմ և ամբողջ կառքը կը վերցնեմ, ասաց վէճի բռնւած հայը և կռացաւ, որ ձին կառքին միացնող կաշէ Թոկի օղը հանի լծի կեռից. այլևս յապաղել չէր կարելի. մօտեցայ և գոռացի վրան՝ բթնելով.

– Ի՞նչ ես ուզում անել, Թող կառապանին, գնայ, Հեռու կաց:

– Քեղ ի՞նչ, թէ ինչ եմ ուզում անել, գլխիս տէ՞րն ես, ինչ է. մի գիւղա տամ Թոքիդ, տեղդ մնաս, ասաց և ուղեց մի քայլ յետ կենալ ու հրացանը ձեռքն առնել. արագօրէն չեչտակի ապտակ հասցրի. կատաղեց, ու սկսեց հայհոյել և կանչել ընկերոջը՝ "Դաղաչ, որտե՞ղ ես, հասիր":

Գիւղացի երիտասարդների չարքում կանգնած էր մեր հին գինուորներից մեկը՝ գլիջքաղեցի Գրիգորը. գինւած և մի տեսակ ապուշ կտրած նայում էր.

–Գրիգոր, ի՞նչ ես ապուշ կտրել, անմիջապէս գինաթափ արա էս անպիտանին:

Գրիգորը քնից արթնացածի պէս ցնցուեց և յարձակուելով վրան, ձեռքից առաւ հրացանը: Երբ Դաղաչը, որ բաւական հեռու էր (նա էլ մէկ ուրիշ կառապանի հետ էր վէճի բռնուել), մէկին պահապան թողնելով, եկաւ ընկերոջ օգնութեան, Գրիգորը նրան էլ դինաթափ արաւ:

Գրիգորը հայ-թրքական ընդհարումներին իրենց գիւղի՝ Ներքին Ղլիջրաղի խմբապետն էր եղել. կիսաչրջան կազմած դինուած երիտասարդներն էլ նոյն գիւղից էին և ենթակայ Գրիգորի հրահանգին: Եւ երբ դինաթափ էր անում, Գրիգորի ազդանչանով, երիտասարդները կազմ ու պատրաստ հրացանները ձեռքներին կանգնեցին սպառնալի դիրք ընդունելով: Պարզուեց, որ կառքերից ձի հանելու փորձ անողները Ներքին Խանաբադ գիւղացիներ էին, ճակատից վերադարձած դինուորներ, մէկի անունը Սահակ էր, կեղծ անունով՝ Մաչոի, իսկ միւսինը՝ Արտաչէս, կեղծ՝ Դաղաչ: Թրքական անուններ էին իւրացրել որպէսզի թալան անելիս այդ անուններով իրարու կոչեն, այն տպաւորութիւնը թողնելու համար, թէ թալանչիները թուրքեր են:

Կառապաններին կարգադրեցինք, որ չարունակեն իրենց ճամփան: Գ. Քալանթարեանն ասաց ռուսերէն, թէ "չատ լաւ եղաւ, որ կառապանները չտուժեցին, յափշտակման փորձ անողներն էլ դինաթափ եղան և իրենց պատիժը կրեցին: Կառապանները պատմելու են, ի հարկէ, և ես էլ լաւ նիւթ կունենամ նրանց մեծերի հետ խօսելու, որ օրինակ առնեն, թէ ինչպէս պիտի վարուել յանցաւորների հետ":

Քալանթարեանը մեկնելուց յետոյ առանձնացայ Գրիգորի հետ՝ մանրամասնօրէն տեղեկանալու Ասկերանում տեղի ունեցած թալանի մասին. թէ ովքեր էին եղել ղրղողները և որ գիւղի մարդիկ էին կատարել թալանը: Գրիգորը պատմեց, որ քաղաքի ալիւրի թալանը յղացել էին Ներքին Խանաբադի մարդիկ, և ղրղողը եղել էր խանաբադցի Ռոջայ Ներսէսը, որը նախապէս կազմակերպած էր եղել թալանչիներին:

Զինաթափ արուած տղաներին առանք մեզ հետ և Ղլիջրաղցի մի քանի երիտասարդների ուղեկցութեամբ գնացինք Ներքին Խանաբադ գիւղը և իջևանեցինք Բժ. Աչատուր Բահաթրեանի վիլլայում: Խանաբադ գիւղը հայ-թրքական ընդհարումներից առաջ պատկանելիս էր եղել թուրք բէկերից մէկին և հանգուցեալ բժիշկը թուրք բէկից վիլլան գնել էր այն նպատակով, որ հայ հարուստները հետևէին իրեն, թուրք բէկերից գնէին նրանց պատկանող բոլոր հայ գիւղերը և այդպիսով թրքական կալւածներից ազատուէին հայկական գաւառները: Սակայն բժիշկի օրինակին հետևող հարուստները չգտնուեցին, թէկուզ սահմանափակ թուով:

Հայ հարուստ դասակարգը, այսպէս կոչուած "բուրժուազիան", ի սկզբանէ ղեմազուրկ տարր է եղել. երբէք իր խոհերի նիւթ չէր դարձրած աղգային-հասարակական խնդիրները, որոնցով չէր հետաքրքրուում, անունով "բուրժուազիա" էր, բայց եւրոպական բուժուազիայից խստիւ տարբերուում էր նրանով, որ իր իսկ դասակարգային գիտակցութիւնը չունէր և կազմակերպուած չէր:

Հայ մարքսիստները Դաշնակցութիւնը քննադատելիս կասէին, թէ Դաշնակցութիւնը հայ բուրժուական կուսակցութիւն է. թէ հայ բուրժուազիան ձգտում է Տաճկահայաստանը աղատագրել իր դասակարգային շահերի համար, որ կարողանայ իր կապիտալը շահարկել: Երանի հաւատացելոց: Մեր դժբախտութիւնը հէնց նրանում էր, որ եւրոպական իմաստով դասակարգային գիտակցութեամբ բուրժուազիա չունէինք. ինչպէս ժամանակին նկատել էին Մ. Վարանդեանը, Խաժակը և Ե. Թումչեանն ու ուրիշներ: Տրեպի հոտը դեռ հայկական բուրժուազիայի քթից չէր անցած. նա մնացել էր անփոփոխ, նոյն ասիացին, թէկուզ անչափ հարստութիւն դիզած: Երանի չէ՞ր հայ բուրժուազիան աղգային յեղափոխական բնոյթ ու կերպարանք ունենար, հէնց իր իսկ կապիտալի անվախութեան համար, մի բան, որ հնարաւոր էր անկախ հայրենիքում: Թող որ հայ բուրժուազիան ձգտէր աղատագրելու տաճկահայութիւնը սուլթանական դաժան ռէժիմից և իր իշխանութիւնը հաստատէր ու եւրոպական բուրժուազիայի պէս իր ազգի աշխատաւորական տարրերը չահագործէր: Նա այդպիսի միտում չի ունեցել ու չունի, սահմանի երկու կողմերում էլ: Հայ աղատագրական-յեղափոխական չարժումը սկզբից ի վեր ծանրացել էր աշխատաւորութեան և միջին խաւի վրայ:

ՆՈՐԻՑ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ. ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Ապրիլ 21-ին Բիւրօն ձիաւոր սուրհանդակի միջոցով մի գրութեամբ հաղորդում էր. "համաձայն կանխաւ գիւղացիութեան յղուած հրաւէրի, 22-ին Խանքենդիում պիտի կայանայ Խաչէնի և Վարանդայի գիւղացիական համագումարը". ուստի, առաջարկում էր մեկնել Խանքենդի և Ասկերանի վերաբերեալ կարգադրութիւնները թողնել համագումարից յետոյ:

Ձինաթափ արուած տղաներին գիւղի աղ-սախկալների երաշխաւորութեամբ արձակելով, Գրիգորի ու Խանաբադի և Ղլիջբաղի ներկայացուցիչների հետ մեկնեցինք Խանքենդի: Քաղաքից եկել էին Հ. Մուսայէլեանը, Խ. Մելքումեանը և Ջին. Միութեան կողմից Նիկ. Իսախանեանը: Համագումարին եկել էին

համեմատարար Խանքենդուց մօտ գտնուող Խաչէնի Ղայլալու, Կրկժան, Օթահլուլ, Խանածախ, Բալլուջա, Մէհտիչէն, Դահրաւ և Վարանդայի Շուշու, Դաշուչէն, Սղնախ, Աւետարանոց գիւղերի ներկայացուցիչները: Հեռաւոր գիւղերից մեզ հետ եկածները Ղլիջըաղի և Խանարադի ներկայացուցիչներն էին միայն:

Համաղումարը երկու խօսքով բաց անելով, առաջարկեցի ընտրել նախագահ և քարտուղար: Որպէս նախագահ ընտրուեց Հ. Մուսայէլեանը և քարտուղար՝ Խ. Մելքումեանը: Համագումարի միակ խնդիրը, որով պիտի զբաղուէին գիւղերից եկած ներկայացուցիչները, քոչի խնդիրն էր:

Հ. Մուսայէլեանը հանդամանօրէն բացատրեց, որ տափաստանի խաչնարած թուրք գիւղացիների համար անասուններին, խոշոր կամ մանր եղջիւրաւոր, ամառուայ ամիսներին սար բարձրացնելը կենսական պահանջ է: Զանգեղուրի հայերն ու թուրքերը դէմ են տափաստանցիների սար բարձրանալուն, ինչպէս արտայայտուել էին ապրիլ 2-6-ը տեղի ունեցած հայ-թրքական համագումարում: Եւ որպէսզի քոչւորները չկարողանային բարձրանալ սարերը, մենք պէտք է արգելք հանդիսանայինք հայ-թրքական սահմանագլխի մուտքի կէտերում, որտեղ, ի հարկէ, անխուսափելիօրէն պիտի բախում առաջանար, որի հետևանքով երկու կողմերը զոհեր պիտի տային, արիւն թափէին, որից ոչ մէկ օգուտ չէինք ունենայ: Յաւելի էր, որ հակառակ Բիւրոյի ցանկութեան, բոլոր գիւղերից ներկայացուցիչներ չէին եկել, թէև իր ժամանակին իմաց էր տրուել բոլոր գիւղերին:

Այնուհետև խօսք առին գիւղացիներից մի շարք գիտակից մարդիկ և գտան, որ վտանգաւոր դրութիւն է ստեղծուում: Խօսեց նաև Զինուորական Միութեան ներկայացուցիչ Նիկ. Իսախանեանը, չեչտելով, որ ժողովրդի ղարերով ունեցած ապրելաձևը, սովորութիւնները մէկ որոշումով, զրչի մէկ հարուածով չի կարելի փոխել կամ վերացնել. ներկայ դէպքում չենք կարող արգելել քոչւորների սար բարձանալը. ամառուայ չորին տափաստանում մնալ չեն կարող:

Խօսք առնելով, ես էլ ասացի, որ Համագումարի կազմը պակասաւոր և չատ անբաւարար է, չի կարող պատասխանատուութիւն ստանձնել և վճիռ արձակել այնպիսի ծանրակչիռ հարցի վերաբերեալ, ինչպիսին քոչւորների սար բարձրանալուն արգելք լինելու - չլինելու հարցն է. ուստի լաւագոյնն է, որ Բիւրօն լիակատար կազմով համագումար հրաւիրէ թիւրիմացութիւններից խուսափելու համար, և որքան չուտ, այնքան լաւ, որովհետև քոչւորների սար բարձրանալու ժամանակը մօտալուտ է, պիտի չտապել:

Առաջարկ եղաւ և որոշուեց, որ Համազումարը Հրաւիրուի ու տեղի ունենայ թուրքերի աչքից աննկատ, Դաչբուլաղ գիւղում, ամէնաուշը ապրիլ 27-ին: Համեմատաբար Դաչբուլաղը կենտրոն է Ղարաբաղի հինգ գաւառների՝ Գիւլիստանի, Ջրաբերդի, Խաչէնի, Վարանդայի և Դիզակի համար:

Ներկայ եղողները խօսք են տալիս ամէն կերպ աջակցել Բիւրոյին, որ Համազումարը ճիշտ ժամանակին գումարուի և լրիւ կազմով, որ իւրաքանչիւր գիւղական հասարակութիւնից մասնակցեն առնուազն երեք պատգամաւորներ:

Կարկառ գետի երկու կողմերի՝ Խաչէնի և Վարանդայի մասերի կոմիսար Բազրատ Միքայէլեանի հետ, ձիաւոր պահակախմբով, վերադարձայ Ասկերանի չրջանը, քաղաքին պատկանող թալանուած ալիւրը բերելու:

Հասնելով Խանաբադ, մեր առաջին գործը եղաւ ձերբակալել թալանը նախաձեռնող տասնեօթ հոգուն և Խոջա Ներսէսին: Առանց միջադէպի չանցաւ առաջին փորձը. գիմադրողներ եղան մի քանի հոգի, որոնք լաւ ծեծ կերան Խոջայի հետ միասին ու, ինչպէս կասեն, բամբակ դարձան, փափկեցին: Կանչել էինք, և եկան Վերին ու Ներքին Ղլիչբաղերի և Խանաբադների գիւղացիները. ըստ պատչաճի ճառ ասելով, բացատրեցինք ու հասկացրինք, որ անիշխանութիւնը և ալան-թալանը մեզ դէպի կործանում կը տանի, որ պարտաւոր ենք քաղաքի ալիւրը, ինչքան որ կայ, յանձնել, իսկ պակասը կը լրացնի հացահատիկները կալսելուց յետոյ: Եւ եթէ կամովին չերեն յանձնելու, միևնոյն է, բռնութեամբ պիտի դուրս բերենք ալիւրը:

Բարեբախտաբար թալանից բաժին ստացած մէկը՝ Պօղոս անունով,[57] որը գիւղի ինքնապաշտպանութեան կոմիտէի անդամներից էր, Բազու եղած գրագէտ բանւորներից և աչքաբաց, խորհուրդ էր տուել հաշուով բաժանել ալիւրը գիւղերի միջև, իսկ ամէն գիւղի մարդիկ էլ իրենց մէջ հաշուով պիտի բաժանէին: "Ով գիտէ, ասել էր նա, վաղը իշխանութիւնը ոտի կը կանգնի, կուժեղանայ, կը գայ, կը պահանջի, հաշիւ ունենանք, որպէսզի աւելին չպահանջեն": Գիւղացիներից պահանջեցինք, և ներկայացրին իրենց կազմած ցուցակները: Ապա քառասունութ ժամւայ ընթացքում իւրաքանչիւր գիւղում եղած ալիւրը սայլերի վրայ բարձած բերին Ասկերան, Շուշի տանելու համար:

---

[57] Սա հետագային դարձաւ գիւղի խմբապետը, և ընկերները կնքեցին Պօղոս Նուբար Փաչա անունով, այդ անունով էլ յայտնի դարձաւ թուրքերին: (Հեղ.)

Ասկերանի ձախ կողմի գիւղացիների թալանի խնդիրը կարգադրելով, որոշեցինք անցնել աջ կողմի՝ Քեաթուկ, Նախիջևանիկ և Փիրջամալ գիւղերը: Գիւղի աղասկալների և ինքնապաշտպանութեան կոմիտէի երաշխաւորութեամբ աղատ թողինք բանտարկեալներին, իսկ Խոջա Ներսէս կոչուածին ղգուշացրինք, որ եթէ երկրորդ անգամ ձերբակալւի, ոչ միայն կը բանտարկւի, այլև ամենախիստ պատժի կենթարկւի: Եւ նա կռահում էր, որ թալանը կազմակերպելու իր միտքը մեզ յայտնի է դարձել: Ձերբակալուած տասնուեօթ հոգին ճակատից վերադաձած և "թալանիր թալանուածը" նշանաբանը լաւ իւրացրած, սկսել էին նեղը դնել ունևոր համարուած համագիւղացիներին և ամէնից չատ Խոջային, զանազան պահանջներ ներկայացնելով, ուստի, փորձանքը գլխից հեռացնելու համար, դրդել էր յարձակւել փուրգոնների վրայ և թալանել քաղաքի ալիւրը: Եւ հէնց այդ պատճառով ամէնից "լաւ ու կուչտ" նա ծեծ կերաւ:

Քեաթուկ, Նախիջևանիկ և Փիրջամալ գիւղերը իրարու չատ մօտ էին, ինչպէս Ասկերանի ձախ կողմի գիւղերը: Այնպէս, որ հնարաւորութիւն ունեցանք մէկ օրւայ ընթացքում լինել բոլոր գիւղերում և նոյն ձևով հարկադրել թալանուած ալիւրի ստացման գործը, ապա անցնել Ասկերան և սպասել արդիւնքին: Որոշուած ժամկէտին չեկան գիւղացիները. սկսեցինք կասկածել՝ չլինի՞, թէ փոխել են իրենց միտքը, չեն ուզում բերել ալիւրը: Բագրատն ասաց, որ պահակներից մէկին ուղարկենք տեղեկանալու, թէ ինչու են ուշանում: Գիւղացիները ալիւր բարձած սայլերով պէտք է առաւօտեան Ասկերան հասած լինէին, և բոլոր գիւղերի սայլերը միասին մեկնէին Շուշի: Խորհրդակցելով, որոշեցինք սպասել մինչև կէսօր, նոյնիսկ մինչև երեկոյ, մարդ չուղարկել գիւղ, որպէսզի ցոյց տուած լիննենք, որ կասկած չունենք իրենց հանդէպ:

Գիւղացիները բարձած սայլերի չարաններով կէսօրից երկու-երեք ժամ անց եկան երկու կողմից էլ: Մօտ մէկ ժամ զոմէշներին ու եղներին կեր տալով, իրենք էլ իրենց ստամոքսները, այսպէս ասած, պնդացնելով՝ ճամբայ ընկան, որպէսզի ճամբին մի տեղ հանգստանալով, այնպէս անեն, որ յաջորդ օրը, արևը քիչ բարձրացած, քաղաք հասնեն, ալիւրը յանձնեն ու վերադառնան նոյն օրը՝ ապրիլ 26-ին: Բագրատը պահակներով հետևեց սայլաչարքին մինչև մի որոշ տեղ: Իսկ ես որոշեցի անցնել դարձեալ Խանաբադ, բժ. Բահաթրեանի վիլլան. որդին՝ Հրանդը, որ Բիւրոյի անդամ էր, այն գրել էր ազդի տրամադրութեան տակ՝ բոլոր յարմարութիւններով հանդերձ:

Վիլլան պահպանում էր Ղարաբաղցի գիւղացիներից մէկը՝ Շաքարի անունով, որ ընտանիքով ապրում էր առաջին յարկում, իրեն յատկացուած երկու լուսաւոր սենեակում: Շաքարին խնամք էր տանում բժշկի պատրաստել տուած խաղողի և պտղատու ծառերի

այգիներին, ապա ծառայութիւնները անում վիլայում իջևանող ազգային մարզվանց: Շաքարին Պարսից սահմանադրական կռիւներին Եփրեմի ղօրամասում ծառայած զինուորներից մէկն էր, մասնակցած Ռահիմ Խանի զլխաւորութեամբ միապետականների դէմ տեղի ունեցած կռիւներին: Պարզ, հասարակ ու միամիտ գիւղացի էր և ոգևորութեամբ կռիւներից էր պատմում և Եփրեմ Խանի (Հայրիկի, ինչպէս զինուորներն էին անւանելիս եղել նրան) գովքն էր անում:

– Ուրիշ մարդ էր, պարոն Եղիչէ, էղպէս մարդ, ինչպէս Հայրիկն էր, ոչ եղել է, ոչ էլ կը լինի: Ափսոս, ափսոս, որ չուտ գնաց էս աշխարհից:

Ապրիլ 26-ի երեկոյեան գիւղացիները վերադարձան քաղաքից, բերելով մի գրութիւն Բիւրոյից, որը յայտնում էր, թէ ալիւրը յանձնած է քաղաքային վարչութեան, որ բոլոր չրջանների գիւղացիներին սուրհանդակների միջոցով չրջաբերականներ են ուղղած, անպայման ապրիլ 29-ին լինելու Դաչբուլաղում, քոչի խնդիրը լուծելու համար և որ ես էլ, Ասկերանի չրջանի ներկայացուցիչների հետ միասին, այնտեղ լինեմ:

Թալանի ալիւրի մասին կարգադրութիւն անելու ընթացքին, միաժամանակ, գիւղերի ինքնապաշտպանական կոմիտէի ժողով հրաւիրելով, ընտրել էինք ուել նաև հրաւիրելիք համագումարի պատգամաւորներին Խանաբադի ու Փիրջամալի գիւղացիներից, երեքական հոգի: Առաւօտեան չատ վաղ Խանաբադի չրջանի երեք պատգամաւորների հետ միասին ճամփայ ելանք և երկուսուկէս ժամ կամ աւելի անց հասանք Դաչբուլաղ, ժամը 6-ին: Գիւղի ծայրին յատուկ տուն կար չինուած, համաձայն ցարական կառավարութեան հրամանի, գիւղը եկող-գնացող պաշտօնական անձանց իջևանելու համար: Ամենուրեք, գիւղական հասարակութիւնները նման տներ ունէին, բաղկացած մէկ ընդարձակ սենեակից ժողովների համար, յարակից ուրիշ երեք – չորս սենեակներից և խոհանոցից: Ծառայութիւն անում էր գիւղի զղիրը:

Մինչև ժամը իննը չարուէչարան եկան, հասան գիւղացիների ներկայացուցիչները: Հարիւրից աւելի էր պատգամաւորների թիւը, քառասուն և հինգ գիւղական հասարակութիւններից: Անակնկալ էր Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան Արքեպիսկոպոս Տէր Գէորգեանի ներկայութիւնը: Վահան Սրբազանը նախապէս քահանայ էր եղել Կրասնովոդսկ քաղաքում. կինը մահանալուց յետոյ որոշել էր իր մէնուճար տղային յանձնել իր եղբօր խնամքին և կուսակրօնութիւն ընդունել, ձեռնադրելով վարդապետ, ապա աստիճանաբար հասնել արքեպիսկոպոսութեան: Շատ համեստ մարդ էր Վահան Սրբազանը և յարգւած ժողովրդի կողմից: Գործով պիտի մի քանի օր առաջ գնացած լինէր Գանձասարի վանքը. այդ

մասին տեղեկանալով, Համագումարին չուք տալու և պատգամաւորների վրայ տպաւորութիւն թողնելու մտքով, խնդրեր էր նրան՝ ներկայ գտնուելու Համագումարին, մասնակցելու և ապա չարունակելու ճամբան: Սրբազանը համաձայներ էր և Հայրապետ Մուսայէլեանի ու մի չարք գործիչների և սպաների հետ կառքերով եկեր Դաչրուլաղ:

Համագումարի պատգամաւորների ճչտում կատարելուց պարզուեց, որ միայն երկու- երեք չատ հեռու ընկած գիւղական հասարակութիւններ չէին ուղարկել իրենց ներկայացուցիչներին. այդուամենայնիւ, գիւղական հասարակութիւնների ճնշող մեծամասնութեան պատգամաւորները ներկայ էին: Համագումարը բացած յայտարարելով, առաջարկեցի Սրբազան Հօրը ընդունել ժողովի պատուոյ նախագահութիւնը, ժողովը վարելու նախագահի պարտականութիւնը տալով Հայրապետ Մուսայէլեանին: Ժողովը միաձայնութեամբ ընդունեց: Հ. Մուսայէլեանը առաջարկեց ընտրել մի քարտուղար: Միաձայնութեամբ ընտրուեց Նիկ. Խաչատեանը: Քւեարկութիւնները կատարուում էին բաց:

Հ. Մուսայէլեանը խնդրեց Սրբազանին՝ իւր խօսքն ասելու ժողովին: Ըստ ընկալեալ սովորութեան, Սրբազանը նախ օրհնեց ժողովը, որը յոտնկայս լսեց օրհնանքը, ապա խրախուսանքի խօսք ուղղեց ժողովականներին, որ աչալուրջ լինեն, դրւած ծանրակչիռ խնդիրը լուծելիս և ջանան այնպիսի որոշում կայացնել, որ չխախտի խաղաղութիւնը և չվնասի մեր ժողովուրդը: Նա կոչ արեց, որ պատգամաւորները, իրենց չրջանները վերադառնալով, ամէն կերպ ջանան ժողովրդի մէջ համերաչխութեանը դարկ տալ ու խուսափեն անիչխանական քայլերից և միկունք հանդիսանան աղգային իչխանութիւններին, մեր ժողովրդի կեանքի փրկութեան համար:

Հ. Մուսայէլեանը անցնելով իւր դերին, չատ մատչելի լեզուով խօսեց բոլորի միտքը ղբաղեցնող քոչւորների խնդրի մասին: Զանգեղուրի հայերն ու թուրքերը, ինչպէս արտայայտուել էր հայ-թրքական համագումարին, դէմ էին քոչը սար բարձրացնելուն, պատճառաբանելով, որ տափաստանի անասունները ուտում են արօտները, և ձմեռը տագնապ է ստեղծում անասունների կերի պակասութեան հետևանքով: Զանգեղուրցիների համար ճիչտ է նման որոշում կայացնելը, ասաց Հ. Մուսայէլեանը, որովհետև հեռու են գտնուում տափաստանից, իսկ մենք սահմանակից ենք, եթէ բաց չթողնենք, բախումը անխուսափելի կը լինի, որի հետևանքը չատ ծանր կը լինի մեզ համար: Այս համագումարի վրայ ծանր պատասխանատուութիւն է ընկած՝ այնպիսի որոշում կայացնելու, որ մեր ժողովուրդի կեանքը չվտանգւի:

Զանգեզուրի պատգամաւորները հայ-թրքական համագումարում զանգատեցին քոչւորներից նաև այն մասին, որ ղինւած քոչւորների հետ յաճախ ընդհարման առիթներ ու պատճառներ են լինում: Նրանցից չատերը գողութեամբ և աւազակութեամբ են պարապում և հէնց դրա հետևանքով էլ տեղի են ունենում բախումներ, իղուր մարդկային արիւն հեղելով: Զանգեզուրի հայ ու թուրք պատգամաւորները առաւել ևս չարիք են համարում տափաստանցիներին ղինւած ղէպի լեռները բաց թողնելը:

Արտայայտեցին զիւղացիներից չատերը, որոնց մի մասը աչխարհ տեսած մարդիկ էին, մեծաւ մասամբ Բագւում բանւորութիւն արած նաւթահանքերում. աչքաբաց, փորձառու և բնական առողջ դատողութեան տէր: Ոչ մէկը համակարծիք չէր Զանգեզուրցիների տեսակէտին, և զտնում էին, թէ անկաղճութիւն կը լինէր տափաստանի քոչւորներին սար բարձրանալ արգիլելը: Մնում էր մէկ ուրիչ հարց, դա քոչւորների՝ ղինւած զանգւածով սար բարձրանալն էր, որ նոյնէ արգելքի հարց լինէր, դա միմիայն զէնքի վերարերեալ պիտի լինէր: Կարճ ասած, պիտի քոչը բաց թողնել, պայմանաւ, որ քոչւորները բարձրանան սարերը առանց զէնքի:

Ապա խօսք եղաւ այն մասին, թէ թուրքերը լռելեայն բոյկոտ են արել և մեզ չեն ծախում հայերին. ուստի պայման պէտք էր դնել, որ վերացւի բոյկոտը: Ժողովը տևեց մինչև ժամը 2-ը: Առաջարկւեց մի բանաձև ըստ որի պէտք է քոչւորներին ճամբայ տային սարերը բարձրանալու, պայմանաւ, որ զէնք չպիտի կրէին և պարտաւոր էին մեզ ծախել հայերին զիւղերի և քաղաքի մօտով անցնելիս: Ժողովը փակեց նախագահը, յաջողութիւն մաղթելով ընդհանուր գործին:

Սըրաղանը և քաղաքից իրեն ուղեկցող քահանան չարունակեցին իրենց ճամբան՝ Սէյդիչէն մնալու և առաւօտեան վաղ մեկնելու Գանձասար:

Քաղաքից եկած սպաները և գործիչները վերադարձան քաղաք, Հ. Մուսայէլեանը մնաց ինձ հետ միասին Ասկերանի ինքնապաչտպանութիւնը կազմակերպելու և ապա միասին մեկնելու քաղաք: Հ. Մուսայէլեանը Դաչբուլաղից էր, զիւղացի, սակայն զնո ինքը փոքր էր եղած, Շուչու թնդանոթի աչակերտ, որ ընտանիքով փոխադրւել էին Խանքենդի, որտեղ իրենց սեպհական տունն ունէին: Դաչբուլաղից մեկուկէս կիլոմետրի վրայ մեր զիւղն էր, Խանձի. առաջարկեցի, որ գնանք այնտեղ, հանգստանանք մեր տանը, միւս օրը գործի անցնենք:

Հօրեղբօրս հետ հայրս բաժանուած չէր, միասին տասնուեօթ հոգանոց մէկ ընտանիք էինք: Հօրեղբայրս զինուատնտեսութեամբ էր զբաղում: Նախապէս ուսուցիչ էր եղել, կնոջ ու փոքր երեխաների հետ միասին զիւղում էր ապրում, իսկ մեծ երեխաները մեզ հետ՝ Շուշում: Հայրս և հօրեղբայրս՝ Աբրամ բէկը, շատ սիրով եղբայրներ էին: Հօրեղբայրս արդէն սպասում էր մեզ. տեղեկացրել էի, որ ժողովից յետոյ պիտի գնայինք մօտը: Գիշերեցինք մեր տանը, *միւս օրը մէկին ուղարկեցինք* Դամրաւ գիւղը և Մուսա Խաչատրեանին յայտնեցինք, որ Բալլուջա գիւղը գնա, Ալէքսան դայու մօտ սպասէ մեզ: Մենք էլ անցանք Դաչբուլաղ, նոյն գիւղացի Աղասի Վերդեանին, որ Համաղասպի կամաւորական խմբի վաշտապետներից էր, վերցրինք և միասին գնացինք Բալլուջա:

Ալէքսան դային չէր կարողացել զալ Դաչբուլաղ՝ համագումարին մասնակցելու, ուստի պատմեցինք համագումարի կատարած աշխատանքի մասին և ապա խորհրդակցաբար իրագործեցինք Բիւրոյի որոշումը: Ասկերանում ունենալ երկու պահակախումբ, փոխնիփոխ հսկողութիւն կատարելու և թոյլ չտալու, որ գիւղացիների խաղաղ կեանքը վրդովւի Ասկերանի շրջանում, որտեղ կատարած ամէն անկարգութիւն անդրադառնում էր բոլոր գիւղերի վրայ, վարակիչ օրինակ հանդիսանալով:

Պահակախմբերից իւրաքանչիւրը պէտք է բաղկացած լինէր քսանուհինգ հոգուց: Խմբերի մէջ պիտի առնել ընտիր և դիսցիպլինի[58] ենթակայ երիտասարդների, պայմանաւ, որ թիւրիմացութիւններից և բամբասանքներից խուսափած լինելու համար, Դաչբուլաղ, Խանձի ու Դամրաւ գիւղերից ոչ ոքի չվերցնեն պահակախմբերի մէջ: Բիւրօն դրամական միջոցներից զուրկ լինելով, բնականաբար, պահակախմբերի մարտիկներին ամսականներ տալ չէր կարող, հէնց այդ պատճառով էլ խմբերի մէջ պէտք է ընդունէին միլիցիօն սիստեմով, որպէս կամաւորների: Գիւղերում ունէինք կուսակցական, գիտակից շատ երիտասարդներ, որոնք սիրով կը մտնէին պահակախմբի մէջ: Երկուսն էլ՝ Մուսան և Աղասին՝ հաւասար աստիճան և իրաւունք ունենալով, իրրև աւագ պահակապետի պիտի ենթարկուէին Ալէքսան դայուն, որը մէկ-մէկ, ինչպէս կասեն, "գլուխ կը քաշի" նրանց տեղի վրայ, Ասկերանում: Երբ խմբերը պատրաստ լինէին, կը տեղեկացնէին Ալէքսան դայուն , միասին երթալու Ասկերան, որ գիւղացիները տեսնեն և իրենց հաշիւը քաշեն. ապա խմբերից մէկը կը մնայ Ասկերանում մի ամբողջ շաբաթ և որոշուած օրը միւս խումբը կը գայ նրան փոխարինելու: Այդպիսով, շաբաթը մէկ կը փոխուի պահակախումբը:

Բալլուջայից մենք գնացինք Շուշի:

---

[58] Կարգապահութիւն (ռուս.): (խմբ.)

Մայիսի սկզբներին Դիզակից Շուշի եկաւ Արսօ Բաղդասարեանը կամ Համ. Յովհաննիսեանը և յայտնեց Բիւրոյին, որ պատրաստ է իր ուժերը ի սպաս դնելու ժողովրդի համար կատարուող աշխատանքներին: Մայիսի 5-ին, Բիւրոյի լիակազմ նիստին, Արսօ Բաղդասարեանը խիստ քննադատութեան ենթարկեց Բիւրոյի գործունէութիւնը, չեչտելով, որ նա, Բիւրօն, բէկերի և խաների հետ միացել, մոռացութեան է տուել յեղափոխութեան նւաճումները և այնքան տարուել ու մինչև կոկորդ խրուել պատեհապաչտութեան մէջ, որ յեղափոխական անուններով չեն կոչւում վարչական պաշտօնեաները, այլ հին, ցարական կառավարութեան ժամանակւայ անուններով՝ օրինակ կոմիսարի փոխարէն գիւղերից չատերում պրիստաւ բառն է գործածւում: Ասում էր, ռուսերէն, "ի՞նչ էք գլուխ դնում բէկերի և խաների հետ. նրանք բացայայտ հակայեղափոխականներ են . թողէք նրանց և ամէն կերպ ջանացէք մերձենալ թուրք գանգւածին, աշխատաւորական տարրերին և նրանց հետ ձեռք-ձեռքի աշխատէք:"

Արսօ Բաղդասարեանին պատասխան տուեց ըստ արժանւոյն, որ յեղափոխական նւաճումները պահել չկարողացան ռուս յեղափոխական կուսակցութիւնները, մանաւանդ սոցիալիստ յեղափոխականները, դրա հետևանքով է, որ ստեղծել է տագնապալի վիճակ. ժողովուրդը անճարակութեան է մատնւած, ելք գտնել չի կարողանում: Իշխանութիւնը, կարելի է ասել, որ սոցիալիստ յեղափոխականների ձեռքին էր, Սահմանադրական Ժողովի ընտրութիւնների ժամանակ, պատգամաւորների երկու երրորդը, եթէ ոչ աւելին, սոցիալիստ յեղափոխականներ էին ընտրել: Եւ Կալիաևների[59], Սազօնովների[60], Բալմաչովների[61] և նման անճնուրաց հերոսների պլչաղայ ունեցած կուսակցութիւնը չկարողացաւ պահել իր ձեռքում յեղափոխական իշխանութիւնը, իր նւաճումներով հանդերձ: Եւ այդ բոլորից յետոյ, բացառիկ պայմաններում գտնուող հայ ժողովո՞ւրդը պիտի պահէր յեղափոխութեան նւաճումները, երբ նրա գլխին դամոկլեան սրի պէս կախւած էր կորստեան մատնելու վտանգը:

---

[59] Կալիաև, Կալեայև Իւան. (1877-1905). ռուս յեղափոխական, 1903 թուականից՝ էսէր, «մարտական կազմակերպութեան» անդամ: 1905թ. սպանել է Մոսկւայի զնեռալ-նահանգապետ, մեծ իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչին, որի համար կախաղան է բարձրացել: (Խմբ.)

[60] Սազոնով, Սազոնով Եվ. (1879-1910). Ռուս յեղափոխական, էսէր, 1903 թուականից՝ «մարտական կազմակերպութեան» անդամ: 1904թ. սպանել է ներքին գործոց նախարար Վեաչեսլաւ Պլեհվէին, դատապարտւելով ցմահ բանտարկութեան: Ինքնասպան է եղել, որպէս բոլոր մարմնական պատիժների դէմ: (Խմբ.)

[61] Բալմաչով, Բալմաչև Ստեփան (1881-1902). էսէր, ուսանող, սպանել է Ռուսաստանի ներքին գործոց նախարար Դիմիտրի Սիպիագինին, որի համար կախաղան է բարձրացել: (Խմբ.)

Շրջաններից Բիւրոյին դժգոհութիւններ ու գանգատներ էին հասնում, որ կոմիսարները հազիւ կարողանում են վարչական գործերի վերահասու լինել, մինչդեռ գիւղացիներին չհաղորդուող գանազան խնդիրներ ու հարցեր կան, որոնց ընթացք, ուղղութիւն տալ չեն կարողանում, և շրջանները պէտք ունեն գործիչների, որոնք կարողանան օգտակար լինել իրենց խորհուրդներով ու կարգադրութիւններով: Մտքերի փոխանակութիւնից և գանգատների առաջարկները լսելուց յետոյ, Բիւրօն յանգեց այն եզրակացութեան, որ պէտք է գործիչներ ուղարկել, որ նրանք տեղի վրայ ծանօթանալով գիւղացիներին չհաղորդուող հարցերին և խնդիրներին, անհրաժեշտ կարգադրութիւններ անեն: Կոմիսարները պէտք է օժանդակեն գործիչներին, երբ վերջիններիս կողմից կարիք զգացւի:

Գործնական նկատառումով, Աչոտ Մելիք-Յովսէփեանը առաջարկում է Ղարաբաղը բաժանել երկու շրջանների և իւրաքանչիւրում ունենալ Բիւրոյի մէկ լիազօր ներկայացուցիչ, իր օգնականներով. կոմիսարներն էլ ենթակայ կը լինեն լիազօրներին: Առաջարկը ընդունւում է առանց առարկութեան: Ապա Բիւրօն որոշում է Գիւլիստանի, Ջրաբերդի, Խաչէնի շրջանները և Վարանդայի մէկ մասը, կարկառ գետի աջ ափի գիւղերը, Ասկերանից մինչև Շօշու գիւղը, համարել մէկ լիազօրութեան շրջան, Վարանդայի մեծագոյն մասն ու Դիղակը՝ միւս լիազօրութեան շրջանը:

Առաջին շրջանի լիազօր է նշանակւում Եղիշէ Իշխանեանը, օգնական ունենալով Խանքենդու և Շօշու գիւղախմբերի համար Խ. Մելքումեանին, Թէոդորոս Տէր Յովսէփեանին (մենշևիկ) Ձախափնեայ Խաչէնի, Մարտիրոս Արզումանեանին (Քեօխւա կնդծանունով յայտնի, դաշնակցական)՝ աջափնեայ Խաչէնի, իսկ Վարդան Վարդապետեանին (դաշնակցական) Ջրաբերդի և Գիւլիստանի համար: Երկրորդ շրջանի լիազօր է նշանակւում Արսօ Բաղդասարեանը, օգնականները ունենալով Սամսոն Յովհաննէսեանին և Լևոն Մելիք- Մանուչարեանին (սոց. յեղափոխականներ):

Մայիսի 14-ին Ասկերանում տեղի է ունենում հայ-թրքական "Համագումարը," որին մասնակցում են հայ գիւղացիներ Կարկառ գետի երկու ափերի մօտ գտնուող գիւղերից և քոչւորների ներկայացուցիչները: Համագումարը հապճեպ գումարւած լինելով, ընականաբար, իր կազմով չատ թերի էր, ուստի խորհրդակցական բնոյթ ունեցաւ, և որոչւեց աւելի լրիւ կազմով համագումար ունենալ մայիսի վերջերին: Այնուամենայնիւ, առիթից օգտւելով, հայ գիւղացիները պահանջ են դնում՝ ա) անվտանգ դարձնել Բագւի ճանապարհը, բ) վերացնել հայերի հանդէպ դոյութիւն ունեցող

բոյկոտը և գ) ընդունել Կովկասեան կոմիսարիատի բոնները, որ նոյնպէս բոյկոտի էր ենթարկուած թուրքերի կողմից, որոնք միայն ցարական ժողովրդամ էին պահանջում հայերին որևէ բան վաճառելիս: Կերևնակու ժամանակւայ դրամները խիստ դժւարութեամբ էին ընդունում:

Բիւրոյի որոշմամբ երկրորդ անգամ Ե. Իշխանեանը գնում է Գանձակ և չատ դժւարութեամբ, կարողանում է պետական գանձարանից 100 հազար ռուբլի ստանալ դինւորների ընտանիքներին նպաստ տալու համար և մայիսի 18-ին հասնում Շուշի:

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌՉԱԿՈՒՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՐԵՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Մայիս 27-ին մեր սուրհանդակը տեղեկութիւն է բերում Գանձակից, որ տաճիկների պահանջով ու հարկադրանքով Կովկասեան Սէյմը իւր կապը խզել է Ռուսաստանի հետ, և Վրաստանը և Ադրբէջանը[62] անկախ պետութիւններ են հռչակւել:

Այս տեղեկութիւնը ռումբի պայթիւնի աղդեցութիւն ունեցաւ անխտիր բոլոր հոսանքների և ժողովրդի վրայ: Ինչ կը լինի հայութեան վիճակը, մեն-մենակ արիւնարբու ոսոխի դիմաց, որը իր գայլի սուր ատամներով պատրաստ է ծէչն- ծէչն անելու հայութեան մնացորդը: Բոլորի վրայ կարծես սառը ջուր էին թափել, և ամէնքը ծանր ապրումներով, ընկճած տրամադրութիւն ունէին: Կովկասահայութեան կեանքը վտանգած էր, և դա այնքան ակնբաղա էր, որ վէճի ենթակայ չէր, և այդ հարցում հայկական բոլոր հոսանքների կարծիքը նոյնն էր. հակառակը պնդող մէկ անհատ իսկ չկար: Գանձակի մեր աղգային մարմինները կանոնաւոր կապ չունէին Թիֆլիսի հետ. երկաթուղին վտանգած լինելու պատճառով, Շամքոր-Ջազիամի դէպքերից[63] ի վեր, կապը Թիֆլիսի հետ պահւում էր լեռնային ճանապարհով, սուրհանդակների միջոցով: Գանձակի

---

[62] Հռչակւել է ոչ թէ « Ադրբէջան », այլ՝ « մուսուլմանական Հանրապետութիւն ». «Ադրբէջան » անւանումը յետոյ է ստեղ: (Խմբ.)

[63] «Շամխորի դէպքերը». Կովկասեան ռազմաճակատից տուն վերադարձող ռուս զինւորների զինաթափումը և ջարդը 1918թ. Յունւարի 9-12ը, Շամխոր կայարանում և Գալիարի մօտ: Կազմակերպել էին Անդրկովկասեան Սէյմի վրայի պատասխանատու Նոյ Ժորդանիան, Եզեկի Գեդեչկորին, Ակակի Ձհենկելին՝ ադրբէջանական գործիչների հետ միասին՝ հիմնականում զինքը կողոպտելու նպատակով: Իրականացւեց Վրացական և, դլխաւորապէս, Գանձակի մուսուլմանական ազգային կոմիտէի զինւած ուժերի, ադրբէջանական «վայրենի դիվիզիա» կոչւած զօրամասի կողմից, որոնց միացել էին չրջակայ ադրբէջանական գիւղերից մնձաթիւ աւազակ խմբեր: Ի դէպ, Ն. Ժորդանիան առաջինը հայերին էր առաջարկել՝ համառել յարձակւել գնացքի վրայ, կողոպտել, բայց հայերը հրաժարւել էին այդ պատւաւոր քայլից: (Խմբ.)

ազգային մարմինների հաղորդած կցկտուր տխուր տեղեկութիւնները չատ բան էին ասում և բացատրում: Կովկասահայութիւնը ոչ միտք և ոչ էլ ցանկութիւն էր ունեցել երբևէ իր կապերը խղելու Ռուսաստանի հետ և անջատելու: Եւ բոլորիս համար կասկածից դուրս էր, որ տաճիկ կառավարութիւնը իւր նենգ ու խարդախ նպատակին է ձգտում՝ հայութիւնն առանձնացնելու և ոչնչացնելու: Ըստ Գանձակից ստացած կցկտուր տեղեկութիւնների, ազգային բիւրօն և Սէյմի ու կոմիսարիատի մեր պատգամաւորները զէմ էին տաճկական պահանջներին:

Մի քանի օր յետոյ Գանձակից տեղեկութիւն հասաւ, որ հայ-տաճկական ուժեղ կռիւներ են տեղի ունեցել Սարդարապատում, Բաշ-Ապարանում ու Ղարաքիլիսայում ու թէև հայերը կասեցրել են տաճիկների յառաջխաղացումը, այնուամենայնիւ, հարկադրուած են եղել մայիսի 28-ին յայտարարել Հայաստանը անկախ պետութիւն. ապա Ղարաքիլիսայի երկաթուղագիծը բաց են թողել տաճկական զօրքերի առջև, Ադրբէջան հասնելու:

Ճիշտը խոստովանած, Հայաստանի անկախութեան հռչակումը[64] ոգևորութիւն չառաջացրեց Ղարաբաղում, քանի որ տարակարծութիւններում էր տեղի ունենում այն և մեր դարաւոր արիւնռուչ թշնամու նենգամտութեամբ: Փաստը կատարուած էր, և պարտաւոր էինք սպասել դէպքերի զարգացման ընթացքին և արդիւնքին:

Շուտով տեղեկութիւն ստացանք, որ Նուրի Փաշան հասել է Գանձակ, իւր չտարբը հաստատել այնտեղ, և տաճկական զօրքերը անարգել երկաթուղով ուղարկւում են դէպի Բագու, զրաւելու նաւթահանքերը:

---

[64] Անդրկովկասին տիրելու համար Թուրքիան ջանում էր նախ այն անջատել Ռուսաստանից և ապա մասնահատել ու մաս-մաս նուաճել: 1918թ. ապրիլի 22-ին Թուրքիայի ճնշման տակ, Անդրկովկասեան Սէյմը հռչակեց Ռուսաստանից անկախ Անդրկովկասեան դեմոկրատական դաշնակցային Հանրապետութիւն: Դաշնակից կոչուածներից մուսուլմանները ձգտում էին մօտենալ Թուրքիային, իսկ վերջինիս խառնուածների ու նրա նպատակների վրայ հմանուած, վրացիները ամէն հարցում աջակցում էին մուսուլմաններին, ջանում տիրանալ հայկական տարածքներին: Սէյմը և միմիանց յետևից յաջորդ օրերին հռչակեցին Վրաստանի, Մուսուլմանական և Հայաստանի անկախ հանրապետութիւնները: Հայ պետականութեան վերականգնումը տեղի ունեցաւ ներքին ու արտաքին օրհասական պայմանների մէջ, և հայկական տարածքների՝ այդ թւում և Ղարաբաղի մնալուրդը նորաստեղծ Հանրապետութեան նրա ստեղծման չրջանակներում՝ չափազանց ծանր խնդիր էր: Հանրապետութիւնները հռչակել էին՝ առանց սահմանները ճշտելու: Վրացիները ու մուսուլմանները ձգտում էին աչք դնել այլ նահանգների՝ երբեմնի ամբողջ Թիֆլիսի նահանգին, իսկ երկրորդները՝ ամբողջ Բաքւի ու Ելիզավետպոլի նահանգներին, յատկնելով նաեւ Երեւանի նահանգի մասին: (Խմբ.)

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Մինչև Հայաստանի անկախութեան հռչակման մասին տեղեկութիւն ստանալը Ասկերանում, մայիս 29-ին տեղի ունեցաւ Հայ-Թրքական երրորդ բաղմամարդ համագումարը, որին բաւական մեծ թիւով քոչւորներ ու հայ գիւղացիներ էին մասնակցում. բայց, ի հարկէ, թուրք բէկերն էլ պատկառելի թիւ էին կազմում:

Համագումարի օրակարգի հարցերը կրկնութիւնն էին նախորդ երկու համագումարներին դրուած հարցերի:

ա) Քոչը սար բարձրանալու մասին:
բ) Հայերի հանդէպ եղած լոյկոտի մասին:
գ) Կովկասեան կոմիսարիատի բոնները:
դ) Բագւի ճանապարհը ապահովելու քայլեր:

Քոչի հարցով չհագեցած էին տափաստանի թուրքերը, որոնց համար խիստ կենսական նշանակութիւն ունի: Հայերը դէմ չէին քոչւորների սար բարձրանալուն. այդ հարցը դրական լուծում էր ստացել հայ գիւղացիական համագումարում. սակայն հայերի դէմ թուրքերի հաստատած արգելքները՝ մթերքներ չծախել և փոխանակութիւն չկատարել, Կովկասեան բոները չընդունել, իրենց վատ անդրադարձումներն էին ունենում հայութեան կեանքի վրայ. վերջապէս, Բագւից կտրուած մնալը մեծապէս ծանրացնում էր հայ գիւղացիների տնտեսական վիճակը, որովհետև Բագւի հայ բանուորութեան ճնշող մեծամասնութիւնը զարթուղի էր, որը զրկւել էր իր ընտանիքներին նիւթական օգնութիւն հասցնելու հնարաւորութիւնից:

Համագումարին, առանց կանխաւ մե՛ր համաձայնութիւնը ունենալու, ելոյթ ունեցաւ Խոջալու կայարանի մօտերում գիւղատնտեսութեամբ զբաղւող մեր զրագէտ և գիտակից ընկերներից մէկը՝ Մովսէս Մովսիսեանը, որը լերդաձորցի էր: Մովսէսը իր խօսքը ուղղեց թուրք քոչւորներին, որոնց ճնշող մեծամասնութիւնը աշխատաւորներ էին: Մովսէսը որպէս գիւղացի խօսելով քոչի մասին, ասաց. "Սիրելի թուրք հայրենակիցներ, մենք, հայ գիւղացիներս, ձեզ պէս աշխատաւոր, մեր քրտինքի հաշով վաստակով ապրող մարդիկ ենք: Մենք շատ լաւ ենք հասկանում ձեզ, և դուք էլ լաւ էք հասկանում մեզ: Մենք կարող ենք իրարու դարդ ու ցաւն իմանալ և դարման անել: Դուք առանց ճնշելու ձեր դարդը ուղղակի մեզ պէտք է յայտնէք և մենք էլ ձեզ, առանց միջնորդների: Ո՛չ ձեր բէկերի, ո՛չ էլ մեր պ. Եղիշէի, ու պ. Աչոտի և միւսների միջնորդութիւնը մեզ պէտք չէ, մենք այդ կարիքը չունենք և պէտք է ուղղակի, անմիջականօրէն իրարու մերձենանք, մեր

սրտերը բաց աննենք, միասին մտածենք, խորհուրդ աննենք և իրարու կարիքները հոգանք:"

Մովսէսը լսօսկուց, պարզ նկատելի էր, թէ ինչպէս վատ էր ազդում բէկերի վրայ, որոնց զէմքերը մռայլւում էին: Ճիչտն ասած, մեզ համար անակնկալ էր Մովսէսի յեղափոխական ելոյթը. մեզ էլ թէև խառնել էր Թուրք բէկերին, մէկ մակարդակի վրայ դնելով, բայց պարզ էր, որ դա զիտակցարար էր անում, իբր խտրութիւն դրած չլինելու համար: Լիւթվալիբէկ Բէհրութովը, որ լաւ համարում ունէր Մովսէսի մասին, դարձաւ ու ռուսերէնով Մովսէսին ասաց. "Սիրելի Մովսէս, այսօր և այսպիսի համագումարում քո ելոյթը միանգամայն անսպասելի էր. քեզ պէս խելացի երիտասարդին չի պատշաճում նման ճառով հրապարակ գալը. մենք հաւաքւած ենք այստեղ կենսական հարցեր որոշելու, պէտք է գործնական լինենք և նման ճառերից խուսափենք. ձեր խօսքերը ուրիչ մի տեղում յարմար կարող են լինել":

Այնուհետև, կարճ կապելու համար, երկու խօսքով յայտնեցի մեր գիւղացիների որոշումը քոչի մասին, չեչտելով, որ պէտք է Թոյլ տրւի քոչւորների սար բարձրանալը և որ ոչ մէկ հայ գիւղացի ղէմ չէ դրան. սակայն մեր գիւղացիներն էլ իրենց կենսական հարցերն ունեն, ու մեր հարևան Թուրք ժողովուրդը պէ՛տք է դրական մօտեցում ցոյց տայ. ա) որպէսզի Զանգեզուրի Թուրքերն ու հայերը ղժդոհ չմնան, հակառակ դիրք չբռնեն. քոչւորները զինւած չպէտք է սար բարձրանան. պէտք է բարձրանան իբրև խաղաղ մարդիկ, բ.) պէտք է վերացնել հայերի հանդէպ հաստատւած բոյկոտը՝ այդ վերաբերում է մթերքներ ծախելուն և փոխանակելուն, գ) առուծախի ժամանակ ընդունել Կովկասեան կոմիսարիատի բոնները, առանց առարկութեան և դ) ջանալ, որ բացւի Բազւի ճանապարհը նաև հայերի առջև:

Բանւորներից երկու ծերունիներ, լսօսք առնելով, իրենց գոհունակութիւնը յայտնեցին հայ գիւղացիութեանը, որ որոշել է ճամբայ տալ քոչւորներին սար բարձրանալու, որ իրենք էլ սիրով կը կատարեն հայերի ցանկութիւնը՝ մթերքներ ծախելու կամ փոխանակելու և նոր դրամներն էլ ընդունել հին դրամների պէս, առանց հակառակութեան: Ինչ կը մնայ ճամբան դէպի Բազու բաց անելուն, դա իրենցից չէ կախւած և վեր է իրենց ուժերից:

Համագումարը, ընկալեալ սովորութեամբ, պէտք է դիւան ունենար, բայց առանց դիւանի կատարեց իր գործը, առանց երկար ձգձգումների մէջ ընկնելու:

Մեր գիւղացիները ինքնաբերաբար հիւրերին հիւրասիրելու համար պատրաստութիւն էին տեսել: Բնաթուխ գիւղացի Անդրէաս

Սաղեանի այգում: Համագումարից յետոյ հիւրերը կանաչ խոտերի վրայ սեղան էին բացել, երկու չարք. ղեմ-ղիմաց խառն նստած, խորոված էին ուտում, իրարու բարեմաղթութիւններ անում: Յանկարծ որտեղից, անակնկալօրէն, մէկ մետրանոց մի չալ օձ սեղանի մի ծայրից մտաւ և արագօրէն սողաց ղէպի միւս ծայրը: Բոլորը վեր թռան. սակայն խանաբաղցի Պօղոսը վրայ հասաւ, օձի գլուխը ջախջախեց, ապա կաչին մաչկելով անցկացրեց իւր թըի վրայ և ասաց՝ "չէ,թանի գլուխը ջախջախուեց, էլ վատ բան չի պատահի, չարունակէք, անուշ արէք խորոված ու հացը, որ հալալ լինի":

Լիւթփալիբէկ Բէհբուդովը, Ալիբէկ Ալիբէկովը, որ լաւ էին ճանաչում Պօղոսին, բացականչեցին՝ "Կեցցես, Պօղոս Փաչա, կեցցես, իրաւունք ունես փաչա լինելու":

Բոլոր հիւրերը լաւ տրամադրութեամբ վերադարձան իրենց տեղերը: Թուրքերից մի քանի հոգի, Լիւթփալիբէկի հետ մեր քաղաքից եկած լինելով, վերադարձան Շուշի: Համագումարին մասնակցել էին միայն Ասկերանի երկու կողմի՝ Ղլիջբաղի, Խանաբադի, Խրամորթի, Քեսթուկի, Նախիջևանիկի և Փիրջամալի գիւղացիները: Կարիք զգացւեց ուրիշ գիւղերից էլ պատգամաւորներ կանչելու:

ՔՍՏՄՆԵԼԻ ՈՃԻՐ ՇՈՒՇԻՈՒՄ

Մայիսի 29-ի լոյս 30-ի գիշերը, իր բնակարանում,Շուշու ղինուորական ատեանի պետ գնդապետ Նիկ. Գր. Ռաչկովսկին, կինը, պատանի տղան և աղջիկը չարագործների ձեռքով մորթուում են: Դալի Մահրասայի և Արչօ Աւետիսեանի հետ միասին 31-ին հասնում ենք Շուշի, անտեղեակ կատարուած քստմնելի ոճրի մասին: Անակնկալի եկանք, երբ տեղեկացանք, թէ ովքեր էին ոճրագործները: Գնացինք ոճիրի վայրը: Ռաչկոսվկին տարիներից ի վեր ապրում էր Հայկական Հին Հանգստարանի մօտակայ թաղում, որը չատ հեռու չէր Հայկական քաղաքամասի կենտրոնից: Տունը պատկանում էր մէկին, որը ընտանիքով Բագւում էր ապրում և ամբողջովին վարձով տւել էր գնդապետին:

Ինչպէս տեղեկացանք ընկերներից, եղեռնը կազմակերպել էր Շուշու փոխատու վարկի ղրամատան վարչութեան անդամ Խուդուչ Կուլիևը, նոյն բանկում պաշտօնավարող կրտսեր հաշւապահ Հայկ Յովհաննէսեանի և ղրամատան ծառայ մչեցի Սմբատի օգնութեամբ: Հարկաւ, երկու ստոր արարածները կաշառւած էին եղել Խուդուչի կողմից:

Ի՞նչն էր եղել դրդապատճառը, որ գաբչելի Խուդուչը յղացել և իրագործել էր քստմնելի ոճիրը: Խուդուչի տղան, ռէալական դպրոցի աշակերտ, սիրահարւած է լինում Ռաչկովսկու դեռատի, օրիորդաց գիմնազիայի աշակերտուհի աղջկայ վրայ և վերջինիս առաջարկ էր արել ու մերժում ստացել: Աղջիկը կորականօրէն յայտարարել էր, որ մինչև դպրոցը չաւարտէր, ամուսնանալու մասին ընաւ չպիտի մտածէր և որևէ մէկին էլ խօսք չպիտի տար. բացի այդ, եթէ ամուսնանալու միտք ունենար, երբէք և ոչ մի դէպքում մահմեդականի հետ չէր ամուսնանայ: Աղջկայ մերժումը այնքան է աղդել տղայի վրայ, որ վերջինս հօրը յայտնել է մերժման մասին և ատրճանակով ինքնասպանութիւն գործել:

Աղջիկը ջերմ սիրով կապւած էր եղել նոյն թաղում ապրող իր դասընկերուհիներից մէկի եղբօր հետ և չատ յաճախ երեկոները, մնասին դասերը պատրաստելուց յետոյ, մնալիս է եղել ընկերուհու մօտ քնելու: Կենսուրախ աղջիկ էր, տեղական, Ղարաբաղի բարբառով աղատ խօսելու չնորհիւ իր դասընկերուհու ծնողների սիրելին էր դարձել: Մայիս 29-ի երեկոյեան իր ընկերուհու մօտ է լինում, ժամանցի համար. արդէն դպրոցի արձակուրդը սկսւել էր: Ընկերուհին և մայրը չատ են խնդրում, որ գիչերը մնայ իրենց մօտ: Ջի համաձայնում, տուն է գնում և գիչերը նահատակւում: Ռաչկովսկու տղան սովորում էր Թիֆլիսի զինուորական դպրոցում: Երբ Կովկասում անիչխանութիւն ծաւալւեց, գնդապետը տղային պահեց Շուչում, որ պատրաստւի և մտնի ռէալական դպրոց: Հարկաւ, եթէ գնացած լինէր Թիֆլիս, քստմնելի այդ ոճրին զոհ չէր դառնայ:

Երբ ներս մտանք, տեսանք, թէ ինչպիսի զարհուրելի ոճիր էր գործւած: Ջորս դիակ, իրենց հագուստների մէջ, մէջքի վրայ պառկած ղրուխեամբ, մէկ չարքի: Բոլորն էլ դաչոյնով էին սպանւած: Դաչոյնը խրել էին իւրաքանչիւրի սիրտը և արիւնը ողողել էր յատակը և լճացել: Պատկերը ահաւոր էր: Քաղաքում ողջ հայութիւնը խորապէս ցնցւել էր քստմնելի ոճրից և դայրոյթով համակւել ոճրին մասնակից ստոր հայերի դէմ: Միանգամայն անհանդուրժելի էր, որ ռէալական դպրոցն աւարտած, միջնակարգ կրթութեամբ, Հայկ Յովհաննիսեանը լաւ համբաւ ունեցող ընտանիքի զաւակ, իսկ Սմբատը 1896 թ. հայկական կոտորածից ճողոպրած որբերից մէկը, որ վոքը հասակում հասել էր Շուչի, հոգատար վերաբերմունքի արժանացել, գործիք էին դարձել մի գաբչելի թուրքի ձեռքին: Եւ թուրքի եաթաղանից աղատւած Սմբատը, որ միչտ երիտասարդներին Մշոյ և այլ տեղերի կոտորածների մասին էր պատմում, մոռանալով այդ բոլորը, դարձել էր ոճրագործ ու մասնակից Ռաչկովսկիների սպանութեան:

Մէկ մարդու գործ չէր կատարուած ոճիրը, ինչպէս նշաններից երևում էր, մէկից աւելի էին եղել ոճիր կատարողները, մի բան, որ հետագային էլ հաստատուեց: Սակայն թէ ոճրագործներն ինչպէս էին թուրքաց թաղից հայկական թաղը մտել և սահմանագծից մինչև գնդապետի ապրած տունը, ահագին տարածութիւն, հայկական նեղ փողոցներով աննկատ անցել, դժուար էր հասկանալ:

Ինչպէս թուրքերը, այնպէս էլ մենք հայ-թրքական սահմանագծի ամբողջ երկայնքին գիշերապահութիւն ունէինք: Վեց ինքնապաշտպանական չրջաններն ունէին իրենց չրջանապետները, չրջանային խորհուրդները, որոնք հետևում էին հերթապահութեանը, որպէսզի կանոնաւոր կերպով իւրաքանչիւր թաղի գիշերապահները ճիշտ ժամանակին դիրքերում լինէին: Հայկ Յովհաննիսեանը չրջանային խորհրդի անդամ էր, իսկ Սմբատը գիշերապահներից մէկը: Երկուսով յայտնեցրել էին ոճրագործների աննկատ մուտքը հայկական թաղը: Գնդապետի տան պարիսպները չատ բարձր չէին և բակում չուն չէր եղել, այնպէս որ, ոճրագործները նրա էին թափանցել, արագօրէն սպանել չորս հոգու և դուրս եկել, նոյն ատոր արարածների աջակցութեամբ, աննկատելի կերպով գնացել իրենց որջը: Առաւօտեան գնդապետի համար ամէն օր կաթ բերող տղան երբ կաթը բերում է, ներս մտնելով, տեսնում կատարուած ոճիրը, դուրս է գալիս և ահազանգ հնչեցնում: Հայկ Յովհաննիսեանը և Սմբատը ձերբակալւում, ուղարկւում են բանտ, դատելու, սակայն դա լինում է իրական փրկութիւն նրանց համար:

Ոճրագործները ոչինչ չէին վերցրել գնդապետի տնից, ամէն ինչ իր տեղումն էր մնացած: Գնդապետը լաւ գրադարան ունէր, ռուս բոլոր կլասիկների, փառակազմ հատորներով և լաւ պահարաններում տեղաւորուած, լաւ կահոյք, արծաթեղէն՝ բաժակակալներ, գդալներ և այլն: Բիւրօն յատուկ յանձնախումբ է կազմում, նախ՝ թաղման վերաբերեալ անհրաժեշտ կարգադրութիւնները անելու և երկրորդ՝ մանրամասնօրէն ցուցակագրելու գնդապետի ունեցուածքը, փոխադրելով ամբողջ ռչալական դպրոցի ընդարձակ չէնքի սենեակներից մէկը, որպէսզի յետոյ որոշում կայացւի, թէ ինչ պիտի անել դրանց հետ:

Սպաներն ու զինուորները խիստ զրդուած, ջղային վիճակ էին ապրում և իրենք իրենց մեղադրում, որ Հայկ Յովհաննիսեանին ու Սմբատին լինչի դատաստանի չէին ենթարկել[65]:

---

[65] Տալինը, երկար տարիներ անցնելուց յետոյ, 1932 թ. պատահականաբար հանդամանքով Բագրեց Թէհրան վոխադրուած դատաբաղմներից մէկը բանաւոր տեղեկութիւն է հաղորդում ապայ Աղաբալան Օրբէլեանի կողմից, որ Ռաչկովսկու վրէժը հանել է ինքը, որպէս Զէկայի պատասխան: Խուդոչ Կալինը և իր ազգականները բոլորը Թումանեաթակացիներ էին, ուստի Կալինիներից այլ մարդ չի մնացել, ամէնքը գնդակահարել են: (Հեղ.)

Յանձնախումբը, բաղկացած Հինգ հոգուց՝ Ստ. Մանդինեան, Գերասիմ Բաղդասարեան, Լևոն Վարժապետեան, Գր. Ղարագեօղեան և Մարտիրոս Այվազեան, գործի է անցնում, չորս ղազաղ պատրաստել տալիս և որոշում թաղումը կատարել հայ-թրքական ընդհարումներին զոհուած հայերի փոքրիկ գերեզմանատանը՝ քաղաքային հիւանդանոցի մօտ:

Յունիս 2-ին հայկական ծիսակատարութեամբ, ահագին բազմութեան ներկայութեամբ, աճիւնները, չորս ղազաղի մէջ, ամփոփւում են իրար կողքի մէկ ընդհանուր չիրիմի մէջ: Տեսարանը չատ յուզիչ էր: Տղայի և աղջկայ ընկեր-ընկերուհիների հեկեկանքը յուզում էր մեծերին և առաւելապէս կանանց, որոնք արտասուում էին այնպէս, կարծես հարազատներին էին կորցրել: Մերունիներից մէկը, քարտաչ Յակորը, յուզուած ասում է՝ "Ռուս, էն օրն ընկնես՞, որ քոսոտ ու քաչալ թուրքը համարձակւի քո պալկովնիկին, կնոջը և երիտասարդներին ոչխարի պէս մորթի":

Դազաղները ամփոփւելուց յետոյ, զինուորների երկու դասակ, ինչպէս ընդունւած է զինուորական կանոնադրութեամբ, երից համազարկ տւին:

ՏԱՃԻԿՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ. ԿՈՉԸ ԵՒ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Յունիսի 5-ին վերադառնում եմ Ասկերան:

Յունիսի 7-ին ճարտար գիւղի Ալբալի կոչւած դաշտում ընդհարում է առաջանում թուրք քոչւորների և հայերի մէջև: Հայերը իրը թէ թալանում են քոչւորների 8000 ոչխարը, մի բան, որ միանգամայն անցանկալի էր և որը անակնկալ աւելի ծանր դէպքերի դուռ կարող էր բացել: Բիւրօն նման դէպքերից խուսափելու և քոչը խաղաղ անցնելու համար, որոշում է Ասկերանից մինչև Շուշու մօտ գտնուող աղբիւրը 120 հոգի հետևակ և 60 միլիցիոներներ ուղևորել, Մուսա Խաչատրեանի և Աղասի Վերդեանի զեկավարութեան ներքոյ: Հետեւակ միլիցիոներները պիտի ստանային ամսական 100 ռուբլի, իսկ ձիաւորները՝ 125 ռուբլի. Աղդամից մինչև հայ-թրքական սահմանը քոչւորներին պիտի հետևէին թուրք միլիցիոներները:

Բացի Ղարաբաղի առաջին մասի լիազօրից, Ասկերանում պիտի ներկայ լինէին մէկական հոգի հայ և թուրք, նշանակւած հայ-թրքական կոմիտէի լիազօրի կողմից, միասին հետևելու քոչի ընթացքին: Աղդամից մինչև հայ-թրքական սահմանագիծը՝ Ղարաղաջի, ճամբի հսկողութիւնը թուրքերը յանձնում են Խզրլու

գիւղացի, Աղդամի վոստատան նախկին պաչտօնեայ Հիւսէյինին, որը Համագիւղացիների իր խումբն ունէր: Աղդամից Ղարաղաջի հաղիւ 15 կիլոմետր է, և Հիւսէյինի 15 հոգանոց խումբը բաւարար համարուեց, պայմանով, որ նա ինքը անկարգութիւն չանի:

Յունիսի 9-ից քոչը սկսում է բարձանալ սարերը Ասկերանում. ըստ հայ-թրքական վերջին համագումարում կայացած համաձայնութեան, մեր պահակները ստուգում են կատարում, որ վրաններ սարքելու համար տարուող թաղիքի բեռների մէջ հրացանները բարձած չլինեն:

Յունիսի 19-ին մի սպառնական զրուխիւն եմ ստանում Աղդամում նոր պաչտօնի անցած տաճիկ կոմենդանտ[66] Քեազըմ Բէյից: Սա յայտարարում է, որ եթէ քոչէորներին հայերը նեղութիւն պատճառեն կամ վնասներ տան, ինձ պատասխանատու պիտի նկատի և համաձայն օրէնքի վարուի ինձ հետ: Նամակը գրուած էր ռուսերէն. հաւանաբար իր թելադրութեամբ ռուսերէն գիտցող թուրքերից մէկը գրել էր և ինքը ստորագրել տակը:

Ես էլ ռուսերէն կարճ պատասխան գրեցի թէ՝ "յարգելի պարոն, նախ՝ ես չդիտեմ և պէտք էլ չկար գիտնալու ձեր ով լինելը. դուք եթէ Ադրբէջանցի պաչտօնեայ էք, ձեր իրաւասութեան սահմանները հասնում են մինչև Ղարաղաջի, որից այս կողմը անցնելու իրաւունքը չունէք, ուստի ես ձեզ չեմ ճանաչում: Երկրորդ՝ ձեզ պէտք է, որ յայտնի լինի և, կարծում եմ, գիտէք հաւանօրէն, որ Ղարաբադի հայերն ու թուրքերը փոխադարձ համաձայնութեամբ ստեղծել են երկու կողմերի մարդկանցից մի կոմիտէ, որը գլխաւորում է չրջանը, և երկու հարևան ժողովուրդները խաղաղ կեանք են վարում: Եւ երրորդ, շատ լաւ կանէք, որ միջամուխ չլինէք մի չրջանի ներքին գործերին, որը ձեզ նեմակայ չէ:"

Յունիսի 17-ին քաղաքից եկան Մարտիրոս Արզումանեանը և Երևանի արական գիմնազիայի ուսուցիչ Իսմայիլբէկ Շամիլբէկովը, որը եկել էր Շուշի՝ ամառուայ արձակուրդն անց կացնելու:

Մարտիրոսը պատմեց, որ Մուշեղ Զաքարեանի գրգռումով Շուշու երիտասարդ դաշնակցականները յեղաչրջում են կատարել, Բիւրօն ցրել և իշխանութիւնն առել իրենց ձեռքը, սակայն մի չարաթ անցած հրաժարուել են իշխանութիւնից և դիմել Բիւրոյին, որ յետ վերցնի իշխանութիւնը: Մարտիրոսի հետ, քեաթխուդեցի Թեմուրի տանը (Ասկերանում) նստած գրուցում էինք, երբ գրսից աղմուկի ձայն լսեցինք: Դուրս եկանք ու տեսանք, որ մեր պահակները վէճի

[66] Պարոն: (Խմբ.)

են ըսւնել Թուրք տխրահռչակ աւազակարարոյ Նաջաֆիկուլի աղա Վեղիրովի հետ: Վերջինս բարձրաձայն դժգոհութիւն է յայտնում, որ քոչւորներին համբայ են տւել սար բարձրանալու.՝ "ես ուղում եմ դինւորագրեմ տղամարդկանց, ուղարկեմ կռւի հակատ, Բագւի դէմ, իսկ դուք այստեղով մարդկանց վախցնում էք. ո՞վ է ձեզ այդպիսի իրաւունք տւել": Մեր պահակապետը՝ Մուսան, սպառնալով ասում է՝ "գլուխդ ծանրութիւն է անում ուսերիդ. ո՞վ ես դու, ի՞նչ իրաւունք ունես այստեղ դոռդոռալու: Դու կարող ես ձեր բակում, ձեր հանդում քո ծառանների վրայ դոռդոռալ: Ինչպէս ևկել ես, այնպէս էլ վերադարձիր այստեղից, եթէ գլուխդ չի ցաւում:"

–Ես Նաջաֆիկուլի Վեղիրովը լինեմ և դուք համարձակւէք այդպիսի լեզու բանեցնել, սպառնո՞ալ:

Մուսան աւելի բարկացաւ և սպառնաց՝ եթէ անմիջապէս ձիուդ գլուխը չչրջես ու չգնաս, չանսատակ պիտի լինես: Դէհ, չուտ": Իսմայիլբէկ Շաֆիբէկովը մօտեցաւ Նաջաֆիկուլուն և քաղաքավարի հասկացնել ուղեց, որ իզուր է վիճում, որովհետև հայ-թրքական համաձայնութիւններ են տեղի ունեցել, և որոշւել է, որ ճամբայ տրւի քոչւորներին, պահակները նչանակւեն ճանապարհին, որպէսզի թիւրիմացութիւն չպատահի:

Նաջաֆիկուլի Վէղիրովի գլուխը, ինչպէս երևում էր, բաւական հաստ էր և չէր ուղում հասկանալ, որ մասնաւոր մէկին է ինքը, թէև պոչին փակցւած էր "աղա" բառը. նա յանդիմանում է Շաֆիբէկովին և սպառնում, որ մէկ օր կը հանդիպենք: Այդ ժամանակ Նաջաֆիկուլուն մօտեցաւ խանաբադցի Պօղոսը, բռնեց թևից, քաշեց մի կողմ և խորհուրդ տւեց, որ հեռանայ: Եւ նա գնաց, հեռացաւ, առանց յետ նայելու:

Յունիսի 19-ին Ասկերանից մեկնում եմ Շուշի, գործով: Տեղեկանում եմ, որ երկու օր առաջ ղեկավար նոր մարմին է ստեղծւել՝ «Հայ յեղափոխական կուսակցութիւնների և կազմակերպութիւնների կոմիսարների խորհուրդ» անունով, Բիւրոյի մնացորդ անդամների և կուսակցութիւնների յաւելեալ նոր ներկայացուցիչների լայն ժողովի կողմից:

Նախագահ՝ Անուշ Տէր Միքայէլեան, դաշնակցական, քարտուղար՝ Ռուբէն Տէր Գասպարեան, փոխ-նախագահ՝ Աչոտ Մելիք Յովսէեան, արտաքին գործերի վարիչ, Հայրապետ Մուսայէլեան՝ պարենաւորման հարցերի վարիչ, Յարութիւն Թումեան՝ դինւորական հարցերի վարիչ, Արամ Միքայէլեան՝ ֆինանսների վարիչ, Արսէն Բակունց՝ հաղորդակցութեանց վարիչ, Արտաշէս Պետրոսեան՝ ներքին գործերի վարիչ, Ասատուր Ստեփանեան՝ հաշւապահ:

Թրքական թաղում, զանազան տներում նորոգութիւններ կատարող հիւան ու որմնադիր արհեստաւոր հայեր, առանց ցոյց տալու, թէ հետաքրքրւում են, ականջ են դրել թուրքերի իրարու հետ ունեցած զրոյցներին, որոնցից պարզ հասկացել են, որ քոչւորների հետ Ասկերանից մինչև Ղայբալու ճամբայ է կտրել տաճկական բանակի սպայ, աղդով չերքէզ՝ Հասան Բասրի Բէյը: Ղայբալուի ղիմաց սպասելիս են եղել Խասայ Մամէդովը և Սապունչի Մամէդը, և նրան ընդունել, բերել են Շուշի: Խանի աղջկայ տանը մեծ հիւրասիրութիւն է եղել ի պատիւ Հասան Բասրի բէյի, որը նշանակած էր Շուշու կոմենդանտ, յունիսի 16-ին:

Յունիսի 23-ին Բիւրոյի գրասենեակն է գալիս բժ. Քեարիմբէկ Մելամանդարովը, Շուշու մուսաւաթականների պարագլուխը, Միրզա Ջամալովի և Աբուլֆասլրէկ Հասանբէկովի հետ, և պատմում, որ գնացել էր Աղդամ, հիւանդ տեսնելու ամսի 20-ին Զանգելանի վրայով այնտեղ է հասել Նաղըմ փաչան, որին ժողովուրդը ընդունել է մեծ պատուով: Ժողովրդի հետ շատ սիրալիր զրոյց է ունեցել, անչափ հիացած է Ղարաբաղով, որ շատ գեղեցիկ երկիր է, լաւ ընութիւն ունի, և ժողովուրդը այս դրախտանման տեղում պէտք է լաւ ապրի, երջանիկ դդայ իրեն և ամէն կերպ աչխատի, որ աւելի գեղեցկանայ Ղարաբաղը, երբ գրաւի Բագուն և պատերազմը վերջանայ: Եւ իբր թէ Նաղըմ փաչան խորհուրդ է տուել հարևանների (իմա՝ հայ ժողովրդի) հետ սիրով լինել և խաղաղ ապրել, կռիւ չանել:Նորակազմ կոմիսարների խորհրդի անդամները և ես լուռ լսում էինք ու հայեացքներով իրարու հասկացնում, թէ՝ երանի հաւատացելոց: Տաճիկը քարող կարդայ, որ թուրքը խաղաղ և սիրով ապրի հարևան հայ ժողովրդի հետ:

Վերադաձայ իմ պաչտօնատեղին, Ասկերան. հարկադրւած էի մինչև քոչւորների վերջին հօտի և մարդկանց սար բարձրանալը լինել Ասկերանում, օդնելու ընկերներին և յաձախ քոչւորների տգիտութեան պատճառով տեղի ունեցող թիւրիմացութիւնները հարթելու: Եւ քանի որ յեղափոխութեան հետևանքով քայքայել, վերջացել էին պետական հաստատութիւնները, նորերն էլ չէին ստեղծւել և հնարաւոր չէր ստեղծել, ուստի Բիւրոյի լիազօրները ստիպւած դրաղւել էին գիւղացիների միջև ծագած վէճերով, քննիչի, հաչտարար միջնորդի և դատաւորի դեր կատարելով:

Վարանդայի Դահրաղ գիւղի բնակիչները տարիներ ի վեր վէճ ունէին համագիւղացի, հարուստ (կուլակ) Սումանց Միրզայի հետ մի հողամասի չուրջ, և ցարական հաչտարար միջնորդները երկու կողմից կաչառքներ առնելով ձգձգել էին, չէին վճռահատել: Քանիցս կողմերը բախումներ էին ունեցել երկու մասի բաժանւած՝ գիւղացիների մեծամասնութիւնը և Սումանց Միրզայի՝ փոքրամասնութիւն կազմող աղդականները: Յեղափոխութեան

Հետևանքով, բնականաբար, գիւղացիները խիստ համարձակ էին դարձել և սպառնում էին Միրզային, թէ գէնքի միջոցով վերջ կը տան վէճին: Սակայն Միրզան պնդազլուխ մէկն էր, յամառում և չէր ուզում մի թզուկի հող զիջել: Միրզայի երիտասարդ տղան՝ Միքայէլը և եղբօր տղան՝ Արմենակը, որ Արևմտեան ճակատում քաջութեամբ աչքի ընկած, Գէորգեան խաչերով վարձաւրուած աւազ ենթասպայ էր և հանգստեան արձակուրդով գիւղումն էր, դիմում են մեղ՝ միջամտելու և վերջ տալու վէճին, որի համար մեղաղրում էին Միրզային, որը վիճելի հողամասի պէտքը չունէր բնաւ:

Կոմիսարների խորհրդի փոխնախագահ Աչոտ Մելիք-Յովսէփեանը և Զինուորական Միութեան նախագահը Նիկ. Խալախանեանը, խորհրդի որոշմամբ, դուրս էին եկել քաղաքից՝ այցելելու չրջանները: Երկուսն էլ իրաւաբաններ էին ու եկել էին Ասկերանի չրջանի Խանաբադ, Ղլիչբաղ, Խրամորթ գիւղերից սկսած այցելելու Խաչէնի բոլոր գիւղերը: Անհրաժեշտ էր ինտելիգենտ մարդկանց գիւղերում երևալը: Այցելութեան եկած ընկերների հետ միացած, Մարտիրոս Արզումանեանն ու ես, միասին գնացինք Դահրադ, որտեղ ժողովուրդը արդէն սպասում էր մեղ:

Գիւղերում աւանդական սովորութիւն կար պապերից մնացած, որ հողաբաչխման ժամանակ սահմանները ճշտիւ որոշելիս, հողամասի անկիւններում ածուխ էին թաղում կէս մետր կամ աւելի խորը հողի մէջ: Գիւղի բոլոր տղամարդկանց հետ միասին գնացինք հաւիւ մէկ կիլոմետր հեռու գտնուող վիճելի հողամասը տեսնելու: Գիւղի նեռի կողմում, չատ զուգեցիկ ու գրաւիչ էր տեղը, որի եզրից սկսում էր անտառը ու ձգւում մինչև Հարաւ գիւղը: Վիճելի հողը հաւիւ չորս քառակուսի կիլոմետր էր: Մերոնիններից մէկը ասաց՝ "եթէ Միրզան հայոց օրէնքով, եկեղեցում, քահանայի ներկայութեամբ, խաչի և աւետարանի վրայ երդւի, որ այս հողը իր սեպհական հողն է, ժողովրդին չի պատկանում, մենք կը հրաժարւենք նրանից: Քանի անգամ առաջարկել ենք, մերժել է, չի երդւել, հիմա նորից ենք առաջարկում: Մենք համաձայն եղանք ձերունու առաջարկին, որ գնանք եկեղեցի, ու Միրզան երդուի. բայց վերջինս սկսեց հարցումի ձևով առարկել՝ "ինչու՞ պէտք է երդւեմ. հողը իմն է. միչտ ես եմ հող տարել և հերկել":

Հարցը պարզ էր, Միրզան յենւած իր ղոռայութեան վրայ, ճնշել է գիւղացիներին. հիմա չէր կարող, մանաւանդ որ իր հարազատներն էլ տարիներ տևող վէճից ձանձրացել էին և տրամադիր չէին իրեն պաչտպան կանգնելու: Եթէ նոյն իսկ իւրայինները ուզենային պաչտպանել, արդիւնքի չպիտի հասնէին, որովհետև Միրզայի և նմանների ղոռայութեան ժամանակը անցել էր, ժողովրդի պահանջը արդարացի էր, ուստի կարճ ու կտրուկ

յայտարարեցինք Միրզային, որ իրաւունք չունի չահագործելու վիճելի դարձած հողը, որ այլևս յանձնւում է գիւղացիներին, որովհետև նրանց սեպհականութիւնն է: Եւ եթէ Միրզան կրկին դժւարութիւնները յարուցելու լինի, պիտի խստիւ պատժւի: Եթէ մենք չմիջամտէինք, գիւղացիները այնքան զրգռւած էին, որ կարող էին լինչի դատաստանի ենթարկել Միրզային: Գիւղի ծերունիները, որոնց գիւղացիները պատկառանքով էին վերաբերւում, թոյլ չէին տալիս ծայրայեղ միջոցի դիմելու:

Վերադարձանք Ասկերան, Աչոտն ու Նիկողայոսը անցան Խաչէնի միւս գիւղերը: Ես մնացի Ասկերանում, մինչև քոչւորների վերջին խմբի սար բարձրանալը: Դահրաղի գիւղացիների ունեցած վէճը միակը չէր, ուրիշ շատ գիւղերում նման և այլ վէճեր կային. կոմիսարները հազիւ կարողանում էին ծերունիների օգնութեամբ թոյլ չտալ, որ անկարգութիւններ տեղի ունենային, սպասելով Բիւրոյի կարգադրութեանը: Եւ Բիւրոյի լիազօրներն ու օգնականները շատ յաճախ էին գրաղւում վէճերով, աշխատում խաղաղ կերպով վերջ տալ դրանց, ամէն տեղ չկանալով հասկացնել մեր ժողովրդի գլխին դամոկլեան սրի պէս կախւած վտանգը: Սակայն չէինք կարող չզղացնել մեր զայրոյթը գիւղերի խաղաղ կեանքը վրդովող ղողբաններին, որոնք իրենց կոպիտ նիւթապաշտութեամբ և չարչիութեամբ խոր ղգւանք էին պատճառում: Նրանք այնպէս էին կառչած նիւթին, որ ընաւ Հեռուն չէին տեսնում. նրանց մտքով չէր անցնում, որ մի օր կարող էին ղրկւել իրենց ամբողջ ունեցւածքից, որը կարող էր հրոյ ճարակ դառնալ կամ թշնամու ձեռքն անցնել: Նման վէճերից դատ, բաղմաթիւ վէճեր էլ կային հէնց գիւղացիների մէջ, մօտ աղգականների և նոյնիսկ եղբայրների միջև:

Ինչպէս յիշւեց իր տեղում, քոչւորները յունիսի 9-ից սկսել էին սար բարձրանալ, և մեր պարտականութիւնն էր, որ Ասկերանից մինչև քաղաքի մօտ գտնւող Պեկսի աղբիւրը հսկէինք, որ հայերի կողմից որևէ մէկը չխանգարէր կարգը, քոչւորները խաղաղ անցնէին ճանապարհը: Դրչի համար, յեղափոխութիւնից առաջ, սարերը բարձրանալու մի քանի ճանապարհներ էին օգտագործւում. սակայն, մենք թուրքերին կանխաւ յայտնել էինք, և նրանք համաձայնւել էին, որ բոլորը գլխաւոր ճանապարհով՝ Աղդամ – Շուշի խճուղիով բարձրանային: Այդ ձևով մենք ուժերի մեծ խնայողութիւն և հսկողութիւնը տեխնիկապէս աւելի դիւրացնելու հնարաւորութիւն էինք ունենում: Մի պարագայ մեզ մտահոգութիւն էր պատճառում, դա քոչւորների զանազան թայֆաների միջև եղած հակառակութիւնն էր, որ ամէն ժամ մի չնչին առիթով կարող էր բախումի պատճառ դառնալ և հայերին էլ խառնել իրարանցումին, վերջում պրովակացիայի ենթակայ դարձնելով նրանց: Ճարտար դիւղի մօտ, Ալրալի կոչւած դաշտում տեղի ունեցած բախումը աւչար

և չահսովան ցեղերի միջև, անտարբեր չէր թողել նաև հայերին, որոնք խառնվել էին կուին և, ըստ ոմանց, իրը թէ 8000 ոչխար էին թալանել, բայց վերջում պարզվել էր, որ թալանուած ոչխարները մի քանի հարիւրից չէին անցնում թուրքերը զիտմամբ մեծացրել էին թիւը:

Մեր զիւղացիները զիտէին, թէ ինչպիսի թայփաներ կային և որ թայփաներն էին իրարու հակառակ այնքան, որ իւրաքանչիւրը չէր ուզում հակառակորդը սար բարձրանար, այլ ջանում էր տափաստանում պահել նրան, որպէսզի վնասէր: Այդ իմաստով նոյնիսկ արտայայտութիւններ էին եղել, ուստի մենք պիտի չատ զգոյշ լինէինք, որ հակառակ թայփաներ միաժամանակ սար չբարձրանային: Ասկերանում թուրքերի կողմից մեզ հետ աշխատող Իսմայիլ բէկը չատ աւելի լաւ տեղեակ էր թայփաների միջև եղած հակառակութեան. մեզ հետ համաձայն էր միանգամայն, որ կանխաւ ստուգում կատարէինք և ապա ճամբայ տայինք նման քոչւորներին: Պատահել էր, որ թայփաներից մէկը ամէն կերպ աշխատել էր հասնել հակառակորդին ու յարմար վայրում հաշիւը տեսնել, բայց մենք արդէն տեղեկութիւն ստացած լինելով, հետապնդող թայփային կարգադրում էինք սպասել այնքան, որ միւս թայփան բաւական հեռացած լինէր: Եւ ամէն կերպ զգուշութիւններ ձեռք առնելով հանդերձ, թիւրիմացութիւններից բոլորովին զերծ չէինք մնում, հարկադրուած միջամտում էինք վէճերի և չատ յաճախ մտրակի ուժով կարգը վերականգնում:

Մէկ ամսից աւելի տևեց քոչւորների սար բարձրանալը և մենք ամբողջ օրը ձի հեծած տեղից-տեղ էինք չտապում, կարգադրութիւններ անում:

Յունիսի վերջերին մեր սուրհանդակը մի զրութիւն է բերում Գանձակից Նիկոլ Ադրալեանի, Մարտիրոս Յարութիւնեանի և Մինաս Արդումանեանի ստորագրութեամբ: Ընկերները խորհուրդ էին տալիս լինել չրջահայեաց եւ աչալուրջ, հարևանների հետ խաղաղ ապրել, ամէն կերպ խուսափելով խաղաղութիւնը խախտող առիթներից, համբերութեամբ սպասելով Ղարաբաղի հարցի լուծման՝ Պոլսոյ հայ-թրքական կոնֆերանսում:

Յունիսի 28-ին Վարանդայի կոմիսար Իսրայէլ Տէր Իսրայէլեանը, որ աւազակների ղէմ մղած կռիւներին խիստ աչքի էր ընկած իւր անվախութեամբ ու քաջութեամբ, իւր օգնական Գէորգի Գասպարեանի ու Հայրապետ Մուսայէլեանի հետ միասին գնում են Գանձակ: Իսրայէլը Ղազախի չրջանի զիւղերից էր և մօտ մէկ տարի չէր եղել իւրայինների մօտ, որոնց տեսնելու ցանկութեամբ գնում էր իրենց գիւղը, գործերը թողնելով օգնականին, իսկ

Հայրապետը գնում էր Գանձակի աղգային մարմինների հետ ինֆորմացիոն նպատակով հանդիպում ունենալու:

Յուլիսի 10-ին Հայրապետ Մուսայելեանն ու Գէորգի Գասպարեանը վերադառնում են Գանձակից: Ըստ ձեռք բերուած տեղեկութիւնների, տաճիկները ուժեղ դիմադրութեան էին հանդիպել Բագւի ուժերի կողմից և Բալաջառի կայարանից յետ չպրտել ու ահագին տարածութիւն նահանջել: Կռիւները կատաղի բնոյթ էին ստացել:

Աղդամից մինչև Ղարադաջի, ինչպէս յիշեց իր տեղում, հսկողութիւնը յանձնել էր փոստատան նախկին պաշտօնեայ Հիւսէյինին. սա Աղդամի տաճիկ կոմենդանտի հետ ինչ-որ վէճ է ունենում. կոմենդանտը սպառնում է բանտարկել և խիստ պատժել նրան: Հիւսէյինը խոյս է տալիս, թաքնւում իր բարեկամների մօտ և մեկ չարաթ թաքնւած մնում: Կոմենդանտը խիստ փնտրտուքներ է կատարում: Հիւսէյինի հակառակորդները օգնում են կոմենդանտին և ամէն կերպ աշխատում են գտնել նրա հետքը. ապաստան տւած բարեկամը, վախենալով, որ ինքն էլ կարող է պատժւել, Հիւսէյինին խորհուրդ է տալիս ուրիչ շրջան գնալ, բայց Հիւսէյինը մտածում է, որ եթէ իր բարեկամը վախենում է, թէ կարող է ինքն էլ վտանգւել և չի ուղում ապաստան տալ, օտարը առաւել ևս կը ղգուշանայ, տեղ չի տայ իրեն և որոշում է փախչել հայերի մօտ ու առանց վարանելու, իր երկու մտերիմ ընկերների հետ ձի նստելով, ղինւած գալիս է Խանաբադ գիւղը, յանձնւում Պօղոսին, ասելով՝ "կուղէք, տեղ տուէք, մնանք ձեղ մօտ իբրև բարեկամներ. չէք ուղենայ պահել, սպանէք մեղ ձեր ձեռքով. մենք չենք ուղում մեր անձնական հակառակորդի ձեռքն ընկնել:"

Պօղոսն ընդունում է պայմանաւ, եթէ մենք չենք ընդդիմանայ և համաձայն կը լինենք: Պօղոսը եկաւ, ղեկուցեց, և մենք համաձայնութիւն տւինք պայմանաւ, որ Հիւսէյինը այնպիսի քայլեր չանի, որ դժգոհութիւն առաջացնի թուրքերի միջև, տաճիկ կոմենդանտի ուշադրութիւնը դրաւէ, վերջինն էլ մեղ անհանգստութիւն պատճառէ: Հիւսէյինը խոստանում է, և մենք խորհուրդ ենք տալիս, որ իրենց ընտանիքները իրենց բարեկամներին անգամ չյայտնեն, որ մեղ մօտ են գտնւում: Հիւսէյինը յայտնեց, թէ իրենք դիտակցաբար ընտանիքներին չեն յայտնել և չպիտի յայտնեն, որ ապաստան են գտել հայերի մօտ: Հիւսէյինը ոչ միայն իր խոստումը կատարեց, այլև օգտակար եղաւ մեղ՝ տեղեկութիւն բերելով Բագւայ և տաճիկների միջև մղւող կռիւների մասին:

Հիւսէյինի՝ մեղ մօտ ապաստանելուց ղետ մի չարաթ չէր անցել, մեղ մօտ, Թեմուրի "Հիւրանոցը" եկան երկու երիտասարդ

թուրքեր. եղբայրները էին՝ Նարիման և Մահմուդ անուններով: Պատմեցին, որ իրենց հակառակորդների ձեռքից են փախել: "Վաղուցայ արևան թշնամիներ ենք, կոմենդանտին զանգատել են հօրս և մեր դէմ, իբր աւազակութիւն ենք անում և իրենց անասունների մի մասը յափշտակել, ծախել ենք հայերի: Կոմենդանտի մօտ երդուեցինք, որ մենք նման բան չենք արել, բայց նա հաւատ չընծայեց, մեղ ծեծելուց յետոյ ղինաթափ արաւ, զէնքերը գրաւեց, սպառնալով, որ եթէ նորից գան ու մեղնից գանգատուեն, մեղ կախադան կը հանի: Մենք գնացել էինք մեղնից երկու ժամ հեռաւորութեան վրայ Հինդ Արևում ապրող մեր բարեկամներից մէկի մօտ. այնտեղ ուշացանք, ղիշերը մնացինք և առաւօտեան, լոյսը չբացուած, ճամբայ ընկանք, եկանք տուն, տեսանք տունը տակնուվրայ արուած, թալանուած և հայրս ու մայրս էլ սպանուած փռուած գետնին: Մեր լացի վրայ հարևանները հասան, օգնեցին, մեր ծնողներին թաղեցինք: Հարևանները խորհուրդ տուին համբերել վատահ, որ կը պարզուեն, յայտնի կը դառնան ոճրագործները, որոնք պատժի կենթարկուեն: Մեղ համար միանգամայն պարզ է, որ մեր արևան թշնամիներն են ոճրագործները, որոնք վրէժով լցուած էին մեր դէմ, որովհետև մեր հանդուցեալ հօրեղբայրը հակառակորդների կողմից յարձակման ենթարկուելով, պիտի սպանուած լինէր, եթէ ճարպիկ չգտնուէր ու չսպաներ նրանց մեծին ու փախուստի չմատներ միւսներին: Եւ տասը տարի առաջուայ այդ սպանութեան վրէժն է, որ հանեցին: Մենք երկուսով երկար մտածելուց յետոյ որոշեցինք փախչել հայերի մօտ, ծառայութիւն անելով մի կերպ ապրել ու սպասել մինչեւ որ կռիւները վերջանան, օսմանցիները գնան մեր մօտից, այն ժամանակ վերադառնանք մեր տեղը: Քանի կոմենդանտը Աղդամում նստած է, մենք չենք կարող ապահով զգալ մեզ. նա մեր հակառակորդից կաշառուելով մեղ կը սպանէ: Մենք ղիշերով փախանք, թաքնուեցինք Ղարաղաջլի մօտ, գետափի ճամբին, ապա լոյսը բացուելուն պէս, եկանք Անդրի ամու մօտ և այնտեղից ձեղ մօտ: Հիմա մեր կեանքը ձեղնից է կախուած, ինչպէս կուզէք, այնպէս էլ վարուեք:"

Կարդաղրեցինք, որ հէնց Անդրի ամու մօտ էլ մնան, աշխատեն նրա այգում և քանի քոչուորները դեռ բոլորը սար չեն բարձրացել, խճուղու վրայ չերևան, որովհետև իրենց ճանաչողները կը լինեն, լուր կը տան իրենց հակառակորդներին, Աղդամ կամ կոմենդանտին, և գլխացաւանք կը պատճառեն մեղ: Երկու եղբայրներն էլ մնացին մեղ մօտ: Բազի կռիւների մասին Նարիմանն ու Մահմուդն էին տեղեկութիւններ ըերում, իրենց բարեկամներից լսելով տաճիկների առաջխաղացման կամ նահանջի մասին: Երբ Բազի մեր ուժերը գրաւում են Շամախին, Նարիմանն ու Մահմուդը տեղեկութիւն ըերին, և մենք ենթադրում էինք, թէ մեր ուժերը գերազանցում են, պիտի կարողանան աւելի առաջանալ ու հասնել մեղ, տաճկական ուժերին գլխովին ջարդելով: Մեր մէջ

կարծիք յայտնողներ էլ կային, թէ տաճիկները չատ են հետացել իրենց բաղայից, չպիտի կարողանան Բագուն զրաւել, կարծես թէ Աղբրէջանը բաղայ չէր հանդիսանում: Տաճիկների նպատակն էր օր առաջ Բագուն զրաւել, որից յետոյ հայ ժողովրդի մնացորդի՝ կովկասահայութեան հաչւեյարդարը միանգամայն կը հեչտանար իրենց համար: Ղարաբաղի ամբողջ հայութիւնը ուչքը կենտրոնացրած էր Բագւի վրայ, յուսալով, որ տաճիկները ջարդ ու փչուր կը լինէին Բագւի հայ-ռուսական ուժերից: Թուրքերի համար անհրաժեչտ էր օր առաջ զրաւել Բագուն, որովհետև, ինչպէս հետագային պարզուեց, Եռեակ Զինակցութիւնը նաւթի և բենզինի սուր կարիքի մէջ էր:

Յուլիսի կէսերին չատ տխուր և ցաւալի մի դէպք տեղի ունեցաւ. Փիրջամալ գիւղից երկու հայեր գնում են մօտակայ Արդալ և Գիւլափիւլու գիւղերի ծանօթ թուրքերից ինչ-որ գնումներ անելու: Գիւղացիների չար բախտից, մի խումբ ձիաւորներով եկած է լինում այնտեղ նաև Աղդամի կոմենդանտը՝ Քեաղըմ Բէյը, որը նկատած լինելով նրանց, հարցաքննութեան է ենթարկում, որից յետոյ խարոյկ է պատրաստել տալիս և երկուսին կենդանի այրում, մոխիր դարձնում, իբրև լրտեսների: Այս մասին Նարիմանն ու Մահմուդը տեղեկութիւն բերին մեզ: Այս սարսափելի լուրը տարածուեց, և այնուհետև հայ գիւղացիները չատ մօտ գտնուող թրքական գիւղեր գնալ-գալուց ղգուչացան:

Հետագային, տաճիկները Շուչի մտնելուց յետոյ, երբ չատերին բանտարկեցին, մեզ հետ բանտարկուած Սալման բէկ Ալիբէկովից տեղեկացանք, որ Քեաղըմ Բէյը իրօք յիչեալ երկու փիրջամալցիներին խարոյկի վրայ այրել է որպէս լրտեսների և թուրքերի մէջ տաճիկների ղէմ քարոզչութիւն անողների. բացի այդ, մեղադրել են նաև, թէ նրանք իբր հակատաճկական բովանդակութեամբ թռուցիկներ էին տարածել ժողովրդի մէջ: Սալման բէկը Քեաղըմ Բէյի այդ զարհուրելի արարքը համարում էր մտացածին յերիւրանքի արդիւնք՝ նպատակ ունենալով սարսափ տարածելու ժողովրդի վրայ: Լրտեսելու նպատակով պէտք է որ Միջկուսակցական Բիւրօն, աւելի ճիչտ՝ Զինուորական Միութիւնը նման բան ձեռնարկէր. իսկ թէ՛ մեկը և թէ՛ միւսը նման բան չէին յանձնարարած, և թռուցիկները տարածելու պատմութիւնը միանգամայն չինծու էր: Գրեթէ 100%ով անզրագէտ թուրք գիւղացիութիւնը ինչ լեզուով պիտի կարդար թռուցիկը. Թրքագէտներ էլ չկային մեղանում, որ թուրքերէն թռուցիկ գրէին ու տպագրէին:

Յուլիսի առաջին կէսին քոչւորների վերջին խմբերն անցան: Կոմիսարների խորհուրդը վարչական չրջանների ճչտում կատարեց, 1) ամբողջ Դիդակը մնաց նոյնը, որպէս մեկ զաւառապետութիւն,

գաւառապետ՝ Արտէմ Լալայեան, օգնական՝ սպայ Աչոտ Շաղունց: 2) Վարանդայի մէկ մասը Դրնաւից Աւետարանոց, ուղիղ գծով հարաւ, գաւառապետի պաշտօնում թողնելով Իսրայէլ Տէր Իսրայէլեանին՝ օգնական, Գէորգի Գասպարեան. երբ Իսրայէլը չը կարողացաւ վերադառնալ իր պաշտօնին, գաւառապետ եղաւ Գէորգի Գասպարեանը: 3) Վարանդայի մնացորդ փոքրիկ մասում, աջափեան Խաչէնի հետ, սկզբում գաւառապետ նշանակուեց Ալիքօ Փիրումեանը, որին փոխարինեց Բագրատ Միքայէլեանը: 4) Ձախափեան Խաչէնի, Ջրաբերդի և Գիւլիստանի գաւառապետ՝ Մարկոս Տէր Աստուածատրեանը, օգնական՝ Արչակ Շահիջանեան, որը հետագային դարձաւ գաւառապետ, երբ Մարկոս Տէր Աստուածատրեանը Ջրաբերդի և Գիւլիստանի կողմից մասնակցելով Ղարաբաղի առաջին համագումարին, ընտրուեց Ղարաբաղի Կառավարութեան անդամ:

Միլիցիոն ձևով, կամաւոր ձիաւոր խմբեր կազմուեցին յիսունական հոգուց, որոնք պարտականութիւն ունէին, պահանջ եղած դէպքերում, խմբապետի հրահանգով կենտրոնանալու և չարժւելու ցոյց տրւած ուղղութեամբ:

ա) Դիղակի ձիաւորների պետն էր Արսէն Լալայեանը,
օգնականներ՝ Աչոտ
Շաղունց, Աւանէս Զէտեանց,

բ) Վարանդայի ձիաւորների պետն էր Աղալար
Հայրապետեանը, օգնական՝ Աղապարոն Դանիէլբէկեան,

գ) Աջափեան Խաչէնի ձիաւորների պետն էր Աղասի
Վերտեանը, օգնական՝ Դալի Մահրասա,

դ) Ձախափի,
1) Հաթերքի չրջան՝ Աւետուր,
2) Առաջաձորի չրջան՝ Սուքիասեան Արտեմ,

ե) Ջրաբերդ՝ Նիկ. Համբարձումեան, Նիկ. Ձախարբէկեան:

Յուլիսի առաջին կէսին անկարգութիւններ են տեղի ունենում Բլրլաք, Ծովատեղ և Խերկան գիւղերում: Լիազօր Աբսօ Բաղդասարեանի յորդորները, որ վերջ տան ջայֆարազութեան, արդիւնք չի ունենում և դժգոհները յամառ դիրք են ընդունում: Կոմիսարների խորհուրդը որոշում է կայազօրի վաչտը, գնդապետ Արտաչէս Վարդապետեանի հրամանատարութեամբ, ուղարկել՝ յիշեալ գիւղերի միջև ծայր տւած հակառակութիւններին ու անկարգութիւններին վերջ տալու և մեղաւորներին պատժելու:

Մեր ցաւը կարծես քիչ էր, պակասը պիտի լրանար ներաղգային անիմաստ և դատապարտելի ընդհարումներով: Թուրքերի մէջ դա սովորական երևոյթ էր, իսկ մեր մէջ՝ անհանդուրժելի: Պատժիչ վաչտի հետ գնում են նաև Յար. Թումեանը, Արշաւիր Քամալեանը և Նիկ. Խալատեանը՝ բարոյապէս

աղղելու և զիւղացիների մտքերը խաղաղացնելու: Բացի այդ, անհրաժեշտ էր շրջանային համագումարներ հրաւիրել Դիլղակում և Վարանդայում, պատգամաւորներ ընտրելու համար՝ առաջիկային հրաւիրելիք Ղարաբաղի համագումարին մասնակցելու: Կոմիսարների խորհուրդը որոշում ունէր համագումար հրաւիրելու և Ղարաբաղը ղեկավարելու համար օրինական մարմին ընտրելու:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ

Համագումարները տեղի ունեցան նախ Խաչէնում, Ջրաբերդում և Գիւլիստանում: Յուլիս 15-ին և 16-ին պատգամաւորներն ընտրուած, պատրաստ սպասում էին հրաւէրի: Յուլիսի 21-ին Շուշուց Դաչբուլաղ է վերադառնում Մ. Արզումանեանը և պատմում, որ յուլիսի 19-ին քաղաքագլուխ Գերասիմ Մելիք Շահնազարեանը Թիֆլիսից, որտեղ նա գտնուում էր ամիսներից ի վեր, քաղաքի պէտքերի համար բերում է 700 հազար ռուբլի: Ճամբին քաղաքագլխին միանում են Գանձակից Խորէն Համասփիւռը (դաշնակցական) և Գէորգ Մելիք Շահնազարեանը (էսէռ, նախկին դաշնակցական): Վերջին երկուսը արդելափակուած վիճակում են պահւում Կոմիսարների խորհրդի որոշմամբ, որպէսզի ժողովրդի հետ չփում չունենան:

Համասփիւռը և Մ. Շահնազարեանը յայտնում են, որ իրենք եկել են Շուշի Նուրի Փաչայի հրամանով, յայտնելու, որ ինչպէս Գանձակն է ընդունել Ադրբէջանի իշխանութիւնը, այնպէս էլ Ղարաբաղը ընդունի: Պատմում են, որ Գանձակում խաղաղութիւն է տիրում, և Նուրի Փաչան այնտեղ հաստատւելուց ի վեր, որևէ թիւրիմացութիւն տեղի չի ունեցել: Հայաստանից ստացած են տեղեկութիւնները, որ հայ պատւիրակները են գնացել Պոլիս, տաճիկ կառավարութեան հետ բանակցելու, և պէտք է սպասենք Պոլսի կոնֆերանսի[67] աշխատանքների արդիւնքին, որպէսզի ըստ այմմ էլ չարժուենք:

Եկած պատգամաւորներին Կոմիսարների խորհուրդը պատասխանում է, որ Ղարաբաղը ինքնուրոյն չրջան է, որ հարևան թուրքերի հետ խառն մարմին կազմելով, միասին խաղաղ ապրում ենք և Ադրբէջանի կառավարութեան ենթարկելու պէտք չունենք: Մենք մեզ կառավարում ենք և չենք ուզում ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը:

---

[67] Թուրքիան ջանում էր Հայաստանը մեկուսացնել, առանձին «լուծելու» իր հարցերը հայկական կողմի հետ, ի հակադրութիւն առաջին համաշխարհային պատերազմին վերջ դնելու կապակցութեամբ խորը պառակտումների կողմից նախապատրաստուող հաշտութեան կոնֆերանսի, որտեղ պիտի քննարկուէր նաև հայկական հարցը: (Խմբ.)

Եկած պատգամաւորները, բնականաբար, ձեռնունայն վերադառնում են Գանձակ առանց չփոումներ ունենալու ժողովրդի հետ:

Յուլիսի կէսերին քոչւորների վերջին խմբերը բարձրացան Սիւնիքի (Զանգեզուր-Ղարաբաղի) լեռները: Եւ ամէն օր լարւած ջղերով գործի վրայ էին Ասկերանում աշխատող խառն հայ-թրքական հսկիչ յանձնախմբի անդամները՝ Իսմայիլբէկ Շամիլբէկովը, ուսուցիչ և թուրք անկեղծ խաղաղասէրներից մէկը, Մարտիրոս Արղումանեանը, դաշնակցական, աշակերտական տարիներից ընկերական չրջանում մկրտւած Քեօխւա (գիւղական տանուտէր) անունով, Արմենակ Բէգլարեանը, էս-էր, Ալէքսանդր Մելքումեան , էսէռ (նախկին դաշնակցական), երեքն էլ ուսուցիչներ զանազան գաւառներում: Մարտիրոսը, որպէս օգնական ինձ հետ միասին Ասկերանում էր, Բիւրօն նամակով յայտնեց, որ Բէգլարեանը և Մելքումեանը նչանակւած են խառն յանձնախմբի անդամներ, Ասկերանում հսկելու քոչւորների երթին:

Արդէն քոչւորները հասել էին Ղարաղաջի և օրէցօր սպասում էին Թոյլտւութեան՝ Ասկերանից անցնելու: Սուրհանդակի միջոցով տեղեկացրի այդ մասին Բիւրօյին և խնդրեցի յանձնախմբի անդամներին չուտ ճամբել Ասկերան:

Արմենակ Բէգլարեանը տարիներ առաջ ընտանեկան յարկ էր ստեղծել, իսկ Ալէքսանդր Մելքումեանը երկու օրւայ ամուսնացած էր, երբ Բիւրօն հրահանգում է չտապ մեկնել Ասկերան: Երբ ներկայացաւ, "Թոյնը" թափեց իմ գլխին: "Այ քեաֆուր, գոնէ մի չարաթ յետոյ կանչէիր, երեք օր չկայ, որ տընտրւել եմ": Այո, Սաչա, ասացի, իրաւունք ունես դժգոհելու, բայց վնաս չունի, քոչւորների վերջին խմբի հետ կը բարձրանաս վեր, քաղաք. այժմ հաչւիր, թէ դեռ նչանւած ես, չես ամուսնացել: Մարդը կարող էր Բիւրօյին յայտնել իր ամուսնութեան մասին, որպէսզի մէկ ուրիչին ուղարկէին, սակայն դաշնակցութեան աւազանում մկրտւած, ապա նրա չարքերում դաստիարակւած ու հասակ նետած մարդը Բիւրօյին ոչինչ չէր ասել. Թասիբի խնդիր է, երբ հասարակական պարտականութիւն կատարելու պահանջ կայ, նախ պէտք է հասարակական գործը կատարել և յետոյ անձնական որևէ ցանկութիւն բաւարարել:

Ամէն օր փոքրիկ միջադէպեր անպակաս էին հէնց քոչւորների միջև և ամէն օր խճուղու երկայնքին փոչու, քրտինքի մէջ կորած, պարտաւոր էինք, ձիով կամ ոտով, համբորդել և վերահասու լինել գործին: Իսմայիլ Բեկը տարիքն առած մարդ էր ու մեզ հետ ոտք բռնել չէր կարող. չատ ժամանակ մնում էր Ասկերանում, մեր այսպէս կոչւած "սպաչտօնավայրում": Նրա ներկայութիւնը

Ասկերանում խիստ անհրաժեշտ էր, որպէսզի քոչւորները նրան տեսնելով, հասկանային, թէ հայ-թրքական խառն իշխանութիւնն է իրենց վրայ հսկողը: Բացի այդ, Աղդամի տաճիկ կոմենդանտի անտեղի և յանիրաւի միջամտութիւնների առթիւ պատշաճ գրութիւններ էր պատրաստում խառը յանձնաժողովի անունից, նրան դգացնելով, որ իրաւունք չունի խառնուելու մեր գործերին: Խճուղու երկայնքին, Ղարաղաջիից մինչև քաղաք, մեր հետևակ և ձիաւոր միլիցիան աչալուրջ հսկում էր, որպէսզի որևէ թիւրիմացութիւն տեղի չունենայ հայերի և քոչւորների միջև, և չատ դէպքերում քոչւորների միջև տեղի ունեցող փոքրիկ թիւրիմացութիւնները միլիցիօներներն էին հարթում:

Քոչւորների վերելքի ընթացքին հայերը չատ լաւ կեցուածք ունէին. որևէ ընդհարման կամ թիւրիմացութեան դէպք տեղի չունեցաւ: Ցարական կառավարութեան ժամանակ քոչւորների հետ չատ ընդհարումներ էին ունենում այն հայ գիւղացիները, որոնց գիւղի մօտից անցնում էին քոչւորները , երբ վերջինների անասունները անուշադրութեան հետևանքով մտնում էին գիւղացիների արտերը կամ մարգագետինները, երկու կողմերը մահակներով զինուած յարձակւում էին միմեանց վրայ. գլուխ էր, որ պատռւում էր. հաւարը հասնում էր ձիաւոր պահակներին, որոնք գալիս էին ու բոլորին տանում ոստիկանատուն: Եթէ չրջանի ոստիկանը կաշառակերի մէկն էր, երկու կողմին էլ տուգանքի էր ենթարկում չօգուտ իր զրպանի, ապա հնր ու մեր հայհոյելով, վռնդում էր ոստիկանատնից, խիստ զդուչացնելով, որ եթէ երկրորդ անգամ "հիւբ" գալու լինեն իրեն, չատ աւելի վատ կը վարւի հետները: Եւ ոստիկանատնից վռնդւելով, կողմերը դուրսը ինքնաբերաբար հաչտւում էին: Երկու կողմերն էլ համոզւած էին, թէ ոստիկանը, իրենց ջոկ-ջոկ կանչելով իր առանձնասենեակը, իւրաքանչիւրից կաշառք էր վերցրել, և իւրաքանչիւրից ծպրելով հարցնում էին մէկը մեսն ՝ "Հազրատ Աբբասը վկայը հազիւ 10 ռուբլի ունէի, ամբողջ առաւ, " ասում է Թուրքը: Յիսուս Քրիստոսը վկայ, չատ փող ուղեց , ունէի էլ, բայց հինգ մանէթից աւելի չտւի, ասում է հայը:

Վերջում իրարու յանդիմանում էին, թէ ինչու այնպէս արին, որ ոստիկանութիւնը միջամտէր, և տուժէին իրաւ տեղը:

Այն ժամանակներում չատ յաճախ է պատահել, որ երկու հակառակորդներ, քէնով լեցւած թայֆաներ, վերելքի ճամբին մի փոքրիկ առիթով ընդհարւում էին և երբեմն այնքան ուժեղ, որ մահակների փոխարէն թրեր ու դաչոյներ էին գործածում: Մեր չրջիկները և պաչտօնեաները այնքան էին խօսել գիւղացիների հետ ժողովներում ու հասկացրել, թէ ինչպիսի ծանր վիճակ է ստեղծւել մեզ համար, որ ամէն կերպ պիտի ջանալ թիւրիմացութեան տեղիք չտալ, չխախտել խաղաղութիւնը, մի բան, որ մեր իսկ չահն է պահանջում: Եւ, այո, գիւղացիները կարգապահ գտնւեցին:

Բոլոր չրջաններում խստիւ հրահանգւած էր գիւղացիներին, որ գողացւած անասուններ չգնեն Թուրքերից: Գողերը անասունները շատ էժան գներով ծախում էին մեր գիւղացիներին, և երբ տուժած Թուրքերը որևէ ձևով գտնում էին հետքը, ահագին գլխացաւանք էր առաջանում: Քանիցս ղէպքեր եղան, Թուրքերից գողացւած ապրանք գնելու համար մարդիկ պատժւեցին: Յանցաւորներին ուղարկում էինք Խանքենդի գինւորական բանտը, որում, սակայն, երկար ժամանակ պահելու հնարաւորութիւն չունէինք, ամենաչատը հազիւ 10 – 15 օր: Բանտարկեալներին երկար ժամանակ բանտում պահելը ծախս էր պահանջում, իսկ մենք դրամական միջոցներից զուրկ էինք, ուստի հին ձևի պատիժներ էինք գործադրում, նայած գործած յանցանքին: Կային այնպիսիները, որոնք մտրակի հարւածներ ստանալուց յետոյ, երաշխաւորութեամբ, ազատ էին Թողնւում. իսկ աւելի ծանր յանցաք ունեցողները, Խանքենդի բանտում մէկ չարաթ չարունակ ամէն օր կէս փթանոց քարը վղից կախւած, մէկ երկու ժամ կանգնած էին մնում պահակի հսկողութեամբ: Այսպիսի պատիժներ մի քանի անգամ միայն տրւեցին, ապա որոշւեց տուգանքի ենթարկել յանցագործներին: "Տուգանքի" չափը ըստ գործած յանցանքի էր, և պիտի ասել, որ տուգանքը շատ աւելի զգալի էր յանցաւորի համար, քան ծեծը կամ քարը վղից կախ կանգնելը:

Քանիցս պատահել է, որ կոմիսարը հեռու գտնւելով, ինքս էի հարցաքննում յանցաւորին, որի մասին արդէն ստոյգ տեղեկութիւն ունէինք: Տրւած հարցերին խուսափողական պատասխաններ էր տալիս, ապա կտրականօրէն ժխտում, Թէ ինքը ոչ մի տեղեկութիւն չունի, գողունի ապրանք չի գնել: Գողացւած եղների Թուրք տէրը եկել էր ուղիղ ինձ մօտ, գանգատւում և ասում էր, Թէ ստոյգ տեղեկութիւն ունի, որ եղները ծախւել են Քեաֆուկ գիւղացու: Ստուգումը ապացուցել էր, որ Թուրքը ճիշտ է ասում, ուստի կարողացանք և իմանալ, Թէ ով է գողունի ապրանք գնել: Մի հարպիկ երիտասարդ էր, որ գողերից ապրանքն ընդունում էր, առանց դրամ վճարելու, ապա ապրանքը տանում էր ուրիշ չրջան, ծախում և յետոյ գողերին վճարում:

Խդըրլու և Զուխուր Մահալ կոչւած գիւղերը սահմանակից են Խանարադ, Ղլիջքաղ և Քեաֆուկ գիւղերին ու միշտ վէճերի մէջ էին իրարու հետ: Եւ երկու հակառակորդ գիւղի մարդիկ իրարուց անասուններ էին գողանում և ծախում հայերին: Գանգատաւոր Թուրքը խղրլուցի էր և պարզ յայտարարում էր, որ Զուխուր մահլացիներ են իր եղները գողացել, ծախել քեաֆուկեցի հայերին:

Դեռ Ասկերանում էինք, քոչւորները բարձրանում էին սար, խղրլուցի Սադղ անունով մի Թուրք, արտաքինով շատ խելք մէկը,

նկաւ, զանգատուեց մեղ և տեղեկացրեց, թէ ով էր գողունի եղներ գնողը. դինւորներից երկու հոգու ուղարկեցինք, բերին յանցաւորին: Պարզուեց, որ վերջինս երկրորդ անգամն է նման յանցանքի մէջ մեղաւրւում: Առաջին անգամ գիւղի "աղաախակալները" թուք ու մուր տալով գողունի ապրանքն առել, տուել են տիրոջը: Երբ սկսուեց հարցաքննութիւնը, հէնց առաջին վայրկեանից կտրականօրէն ժխտեց, թէ ոչ մի տեղեկութիւն չունի, յոխորտ կեցուածք ընդունելով սկսեց բարձր ձայնով բողոքել, որ անհաղստութիւն ենք պատճառում իրեն:

Զինւորները, տրուած կարգադրութեան համաձայն, պառկեցրին երեսն ի վար և ես սկսեցի մտրակի հարուածներ տեղալ: Հարցաքննութեան ներկայ էին մի խումբ գիւղացիներ՝ խանարադցի, ղլիջրադցի և քեաթուկեցի, որոնցից հասակաւոր մէկը, երբ սկսեցի հարուածել, ասաց՝ "թխե, թխե, ստրաժնիկի[68] թխած տեղը քոր ա կնամ" (խփիր, խփիր, ստրաժնիկի խփած տեղը քոր է գալիս): Հարուածում էի, սակայն յամառում էր, չէր խոստովանում, թէև հարուածները աստիճանաբար ուժեղանում, խստանում էին, այնքան, որ յանկարծ տուժած թուրքը մօտ գալով, միջամտում է և ասում՝ "Աղա, խեղճ է տղան, մի խփիր, մեղք է, ես ձեռք եմ քաչում իմ եղներից, հրաժարւում եմ:" Դարձայ թուրքին, մտրակի երկու հարուած տալով դոռացի՝ "կորիր այստեղից:" Թուրքը արագ հեռացաւ և կծկուեց մի ծառի տակ, իսկ ես շարունակեցի հարուածները տեղալ: Ձեռքս արդէն յոգնել էր և ինչպէս էր, չիմացայ, մտրակի ծայրը ղիպաւ ականջին, որի խիստ ցաւից ճչաց, ապա թէ՝ "ասեմ, ասեմ, թէ որտեղ են եղները". այդ միջոցին պահակ զինւորներից մէկը՝ բալլուջեցի Զոփուռ Ջաւաղը աքացի տուաւ յանցաւորին, ասելով՝ "Շան որդի, չուտ ասէիր և էդքան էշի պէս չծեծուէիր, լաւ չէ՞ր լինի":

– Դէհ, ասա, որտե՞ղ են եղները, հարցրի, դադարեցնելով ծեծը:

– Բլէթա սարումն են, պատասխանեց:

Անմիջապէս Ջաւադին ու պահակներից մէկին ուղարկեցինք Բլէթա սարը, որի լանջին է թիկնած Քեաթուկը, բերելու թուրքի եղները: Թուրքը հասկացաւ, որ յանցաւորը խոստովանեց, եղները առել է գողերից, դարձաւ մեղ ու ասաց՝ "Որտե՞ղ է Նիկոլայ Թագաւորը, ցոյց տուէք տեղը, գնամ նրա ոտները համբուրեմ, լիզեմ, նա որ թախտին լինէր, այս օրին չէինք հասնի": Զորս ժամ տևեց, մինչև եղները բերին: Տղաները պատմեցին, որ եղները լաւ կապած էին ծառերին և իւրաքանչիւրի առջև բաւական կանաչ խոտ դրւած:

---

[68] Ստրաժնիկ. Ցարական Ռուսաստանում՝ ասիլիանական ցածր աստիճան, հանրութեան յատուկ տեղամասերում, մաքսային, առհասարակ, վիւղական: (Խմբ.)

Եղները տուցինք թուրքին, առաւ, չնորհակալութիւն յայտնելով զնաց: Այդ ժամանակ անդրադարձայ թէ՛ նրա և թէ՛ հայ գիւղացու խօսքերին: Մէկը հեգնանքով ասում է, որ պէտք է ծնծել, որովհետև ստրամժնիկի զարկած տեղը քոր է գալիս, իսկ թուրքն էլ ցաւով ու կարօտով ցարին էր յիշում, որ նրա օրօք աւելի լաւ էր, և ես ակամայից յիշեցի Ալէքսանդր Մատուրեանի կարդացած Դանիէլին, Բիւրոյի լիակազմ նիստին, մատների վրայ հաչւող Շուչու բոլշևիկների կողմից, թէ քանի որ Ռուսաստանում տեղի ունեցած յեղափոխութիւնը խստիւ տարբերւում է Ֆրանսիական, Գերմանական և այլ բուրժուական յեղափոխութիւններից, լինելով իր բնոյթով սոցիալական, ուստի իրենք չեն կարող մասնակցել մի օրգանի, որին մասնակցում էին բուրժուական տարրեր: Եւ յիշեցի նաև Հանգուցեալ Արամին, որն 1917 թ. ամռանը գնացել էր Եալթա (Ղրիմ) Հանգստանալու և, զլխաւորապէս, բժշկելու համար, այնտեղից նամակ էր ուղղել ինձ Շուչի, մի դործի վերաբերեալ և, ի միջի այլոց, գրել էր, թէ՝ " Ղրիմում տեղեր կան, ուր որևէ պրոպագանդիստ ոտք չէ դրած":

Յուլիսի կէսերին Դիլակի հրամանատար Արտեմ Լալայեանը Կոմիսարների Խորհրդին յայտնում է, որ Ղարադաղի Ռահիմ խանի տղան, Բէյուք խանը, դիմել է իրեն և օգնութիւն է խնդրում: Ղարադաղում նրաչտի պատճառով սով է տիրում, իսկ ընդհանրապէս Պարսկաստանում հացի խիստ պակաս կայ և արժէքը չատ է բարձրացել: Ինքը՝ Բէյուք խանն էլ մեծ կարիք ունի, ուստի խնդրում է հնարաւորութիւն տալ իր մարդկանց, երևսուն բեռ հացահատիկ գնելու հայկական գիւղերից, իր անձնական կարիքը հոգալու համար: Լալայեանը հարցնում է՝ թոյլ տա՞լ, թէ՞ ոչ, և միաժամանակ յայտնում, որ Բէյուք խանը Ղարաբաղի հայ գիւղացիների հանդէպ լաւ վերաբերմունք ունի: Կոմիսարների Խորհուրդը դրական պատասխան է տալիս, և Բէյուք խանի մարդիկ ազատօրէն սահմանն անցնելով, հացահատիկ գնում, տանում են:

Ռահիմ խանը, պարսկական սահմանադրական կռիւների ժամանակ միապետականների կողմը լինելով, ղարաբաղցի թուրքերից ահագին բանակ կազմած, կռւել է սահմանադրականների դէմ: Սակայն երբ Եփրեմը ջարդում է միապետական ուժերին, գրաւում Ղարադաղը, Ռահիմ խանը իրեն վտանգած դգալով, անցնում է Արաքսը և ապաստանում ռուս սահմանապահների մօտ, ապա ռուսական իշխանութիւնների կարդադրութեամբ, ուղարկւում է սահմանից հեռու վայր:

Այդ դէպքը տեղի է ունեցել 1910-ին: Այդ ժամանակ, Լիժինեան հալածանքների հետևանքով, Զանգեզուրի-Ղարաբաղի սահմաններում վալեսուն դաշնակցականներ Շուչու բանտում էինք: Եփրեմ խանի և դաշնակցութեան կատարած դերի չնորհիւ թուրքերը

ակնածանքով էին վերաբերւում հայերին և արդէն Թուրք աչուղները երգեր էին յօրինել Եփրեմին նւիրւած: Բանտում հայեր և Թուրքեր խառն էին. մեր սենեակում ութ հայեր և իննն Թուրք միասին էինք: Մի օր մէկ նոր բանտարկեալ բերին մեր սենեակը, Աղդամ աւանից, Մանաֆի անունով, որը պատմեց, Թէ ինչպէս Ռահիմ խանը ստրաժնիկներով Աղդամից անցնելու ժամանակ, ժողովուրդը ծաղրական ցոյց էր արել, Թիթեղեայ դոյլեր ծեծելով և բացականչութիւններ անելով՝ "Ռահիմ խան, չուտ արա, չուչանաս, Եփրեմ խանը սահմանն անցաւ, վայ քեղ" և այլն:

ԱՆԴՐԱՆԻԿԸ ՋԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Յուլիսի երկրորդ կէսին էր, որ տուն վերադարձող երեք դինւոր՝ Ջրաբերդի և Գիւլիստանի գիւղերից, Գօրիսի վրայով հասնում են Շուշի, իրենց հետ բերելով մէկ գնդացիր, մաքսիմ սիստեմի, որը զրաւում է դինւորական վարչութիւնը: Զինւորները բողոքում են, Թէ գնդացիրը բերել են իրենց չրջանի պաշտպանութեան համար, նոյնիսկ փորձ են անում չտալ, բայց անյաջող:

Այս դինւորները տեղեկացնում են, որ Անդրանիկը հազարաւոր դինւած զաղթականներով հասել է Սիսիան: Զինւորների բերած լուրը արագօրէն տարածւում է ամբողջ Ղարաբաղում և ընդհանուր ոգեւորութիւն առաջացնում: Բոլորը ոգեւորութեամբ խօսում են իրարու հետ, երեւակայելով Անդրանիկի մուտքը Ղարաբաղ և պատկերացնում, Թէ ինչպիսի ընդունելութեան պիտի արժանանայ: Ասկերանում ենք, Թեմուրի՝ արդէն պատմական դարձած "Հիւրանոցում", Դալի Մահրասան, Մարտիրոս Արղումանեանը, Աղասի Վէրտեանը, Մուսա Խաչատրեանը, գիւղացիների մի խումբ, քաղաքուկեցիներ, խնարադցիներ, որոնք լսել էին Անդրանիկի՝ Զանգեղուր անցած լինելու մասին, հետաքրքրւում էին, բուռն կերպով հարցեր տալիս, "պիտի գա՞յ Ղարաբաղ. նէյ գալու է, ո՞րը պիտի գայ:" Դալի Մահրասան բնականից օժտւած չատ լաւ ձայն ունէր և չատ լաւ երգում էր Թէ՛ հայերէն, Թէ՛ Թուրքերէն : Սկսեց երգել Անդրանիկի անւան հետ կապւած երգերը: Ապա դառնալով Աղասուն, որ եղել է կամաւոր Համազասպի խմբում, ասաց՝ "Աղասի, պատմիր Փաչայից, Թող լսեն տղաները, Թէ ինչպիսի քաջ մարդ է":

Աղասին ասում է՝ "Անդրանիկի քաջութիւնները մի ամբողջ օր պատմելով չի վերջանայ: Այսքանը իմացէք, որ Անդրանիկը վախ ասած բանը չի հանաչում: Կուի ժամանակ միչտ կանգնած է հրամաններ տալիս, Թշնամիների հարիւրաւոր գնդակներից ոչ մէկը չի դիպչում նրան":

Չինուորներից խլուած գնդացիրը, Չին. վարչութեան և Կոմիսարների Խորհրդի որոշմամբ, ուղարկուում է Խաչէն, Դաչբուլաղ գիւղում պահելու, որ հետագային, եթէ թուրքերը Ասկերանի ուղղութեամբ յարձակում գործելու լինեն, այնտեղ գործածւի: Այդ օրերին մի լուր էր չրջան առել, թէ Աղդամի տաճիկ կոմենդանտը իրը ուղում է փորձ անել՝ իրեն ենթարկելու Ասկերանի չրջանի գիւղերը: Յետոյ պարզուեց, որ լուրը երևակայութեան արդիւնք է եղել: Ի դէպ, գնդացիրը օգտակար չեղաւ և չպիտի լինէր, ինչպէս սկզբից էլ նկատւել էր, որովհետև մենք այնքան փամփուշտ չունէինք, որ կարողանայինք կեր մատակարարել գնդացրին: Անթիւ փամփուշտ կրակողին իւրաքանչիւր կրակած փամփուշտի համար 10–20 ռուբլի տուգանք էինք նշանակում: Ի դէպ, գնդացիրը փորձանք դարձաւ և պայթեց իմ գլխին: Այդ մասին իր տեղում կասւի:

Քոչւորներից զատ, մեզ գլխացաւանք էր պատճառում նաև Շուշուց 20–25 կիլոմետրի վրայ գտնուող Խոջալու կայանի մօտ համանուն թրքական գիւղը: Խոջալուի հողերը պետական էին, որոնց մեկ մասի վրայ թուրքեր էին բնակեցւած վաղուց ի վեր, իսկ հայ-թրքական ընդհարումներից յետոյ 10–12 տուն բերդաձորցիներ վերաբնակուելիւն էին հաստատել, և ամեն տարի աւելանում էր նրանց թիւը: Հայերն ու թուրքերը խաղաղ ապրում էին և հաչտ էին: Թուրքերը վախ ունէին Մէհտիչէնի, Բալլուջայի, Դամբաւի հայերից, որոնք չատ մօտ լինելով, հաչտ աչքով չէին նայում իրենց, ինչպէս քանիցս արտայայտւել էին:

Թուրքերը սխալւած չէին, ճակատից արձակուղով տուն եկած և գլխաւորապէս դասալիք զինուորների մի խումբ մէհտիչէնցիներ, «Թալանիր Թալանւածը» նշանաբանը իւրացրածներ, սպառնական պերք էին բռնել, և երկու անգամ քիչ էր մնացել, որ ընդհարում առաջանար: Երկրորդ անգամ մէհտիչէնցիներին միացել էին նաև բալլուջեցիները, սակայն մենք աւելի խիստ գտնւեցինք: Կանխաւ մեզ տեղեկացրել էին, որ աւելի մեծ խումբ պիտի փորձ անէր՝ վախցնելու խոջալուցիներին, ուստի կարգադրեցինք, կոմիսարն էլ Խանքենդից հասաւ Խոջալու, և թալանի ախորժակ ունեցող գլխաւոր երեք գերակատարներին զինաթափ արինք. միւսներն էլ տեսան, որ խիստ պիտի վարւենք իրենց հետ, առանց յետ նայելու վախանը: Երեք գերակատարներին կոմիսարը տարաւ Խանքենդի՝ բանտարկելու:

Այդպիսով, սակայն, գլխացաւանքից իսպառ աղատւած չդգացինք. թուրքերը մեր օձիքը բաց չէին ողին, խնդրում են, որ մշտական պահապաններ պահէինք իրենց գիւղում: Մենք բաւական խորհելուց յետոյ գտանք, որ լաւագոյնն է ամբողջ գիւղը գաղթեցնենք Դրնաւաղի, Դաչուչէնի և Խանքենդի միջև գտնուղ

Թրքական Մալիրէկլու մեծ գիւղը: Խօսեցինք Թուրքերի հետ, համաձայնեցին, ուսաի իրենց չարժական ամբողջ ունեցուածքը, անասուններ և տան իրեր, հաւաքեցին, բարձեցին եզների և ձիերի վրայ, մեր պահակների ուղեկցութեամբ անցկացրինք Կարկառի աջ ափը, մինչև Խանի բաղի մօտ, որտեղից իրենք չարունակեցին ճանապարհը մինչև գիւղ: Գիւղից մեկնելիս իրենց դատարկ տները թողեցին հայերի պահպանութեան:

ՂԱՐԱԲԱՂԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Կոմիսարների Խորհրդի կողմից Յուլիս 14-ին հրահանգ է ուղարկւում հինգ չրջանների 21 գիւղական հասարակութիւններին՝ ուղարկելու իրենց երկուական պատգամաւորներին՝ մասնակցելու Ղարաբաղի առաջին համագումարին, որը պիտի տեղի ունենար 22-ին: Հրաւէր էի ստացել նաև ես, որպէս լիազօր, մասնակցելու համագումարին, բայց հնարաւորութիւն չունեցայ մասնակցելու, որովհետև, թէև քոչւորների վերջին խմբերը բարձրացել էին սար, բայց մտքերը բոլորովին խաղաղ չէին, չրջան առած վրդովեցուցիչ ղանաղան լուրերի պատճառով, ուսաի Մուսան, Ազասին և մի քանի ընկերներ խորհուրդ տւին չրջանում մնալ, մանաւանդ որ քաղաքում ընկերներ չատ կային, ուժերի պակաս չէին զգում:

Որոչած ժամանակին բոլոր չրջանների 21 գիւղական հասարակութիւնների երկուական ներկայացուցիչները հասնում են քաղաք, որոնց միանում են քաղաքի կողմից ընտրուած ութ ներկայացուցիչները և բոլոր կուսակցութիւնների կողմից (դաշնակցական, սոց.դեմ., Էսէր, բոլշևիկ և կադէտ) երկուական հոգի, այդպիսով պատգամաւորների թիւը լինում է 60 հոգի[69]: Համագումարին մասնակցում է Վարանդայի և Դիզակի լիազօր Արսօ Բաղդասարեանը[70]: Համագումարը բացւում է յուլիսի 22-ին. սկզբում նախագահ է ընտրւում Ալ. Մատուրեանը, որ յետոյ հրաժարւում է, ապա ընտրւում է Արսօ Բաղդասարեանը, փոխնախագահ՝ Արշաւիր Քամալեան, քարտուղար Մելիքսէթ Եսայեան:

Օրակարգի խնդիրները:

1. Հաչենաւութիւն Բիւրոյի և Կոմիսարների Խորհրդի:
2. Պարենաւորման խնդիրը:

---

[69] Նկատի ունենալու է մի հանգամանք, որ կարևոր է. համագումարի պատգամաւորների դրեթէ մեկ երրորդը ունևոր գիւղացիներ էին: (Հեղ.)

[70] Համագումարին, հարկաւ, խորհրդակցական ձայնով մասնակցում են Միջկուսակցական . Բիւրոյի բոլոր անդամները, նաև մի քանի հոգի ինտելիգենտներ ղանաղան կուսակցութիւնից պատահաբար, բայց պաշտօնական հանգամանք չունեցողներ: (Հեղ.)

3. Հարկահանութիւն:
4. Դատարանների հարցը:
5. Արտաքին յարաբերութիւնների մասին:
6. Ղարաբաղը որպէս անբաժան մասը Արարատեան Հանրապետութեան:
7. Ինքնապաշտպանութեան խնդիրը:

1) Բիւրոյի և շարունակութիւնը կազմող Կոմիտարների Խորհրդի կողմից զեկուցում են երկու հոգի, եօթ ամսւայ գործունէութեան մասին՝ Հայր. Մուսայէլեանը Բիւրոյի ներքին աշխատանքների, իսկ Աչոտ Մ. Յովսէփեանը՝ արտաքին յարաբերութիւնների մասին: Զեկուցւում է, թէ ինչպէս է կազմուել Բիւրօն և ինչ նպատակով, ինչ աշխատանքներ են կատարուել քաղաքում ու չրջաններում, ապա արտաքին յարաբերութիւնների, կարճ ասած՝ հարևան Թուրքերի հետ մեր վարած քաղաքականութիւնը, Հայ-Թրքական կոմիտէում:

2) Պարենաւորման հարցը վերաբերում է միայն քաղաքին: Մտքերի փոխանակութիւնից յետոյ յանգում են այն եզրակացութեան, որ Ռուսաստանից այլևս ալիւր չպիտի ստացւի, Կովկասը փաստօրէն կտրուած, կղզիացած է, ուստի գիւղացիութիւնը պիտի կենսամիջոց հայթայթի քաղաքին:

3) Հարկահանութեան վերաբերեալ համագումարը զրական որոշում է կայացնում, որ ժողովուրդը պէտք է հոգայ վարչական և բոլոր այլ ծախսերը, ուստի պէտք է տուրք տայ: Եւ, որովհետև ժողովուրդի մէջ զրամական չրջանառութիւնը չատ է Թուլացել և զրամի սղութեան պատճառով, որոշւում է, որ տուրքերը գանձւեն նաև նատուրայով[71], Թէ որ գիւղից ինչքան տուրք պիտի գանձւի, այդ հարցը Թողնել երկրի ղեկավար օրգանին, որը ձեռնհաս մարդկանցից կազմւած յանձնախմբի միջոցով կուսումնասիրէ և համապատասխան որոշում կը կայացնէ:

4)Դատարաններ ունենալու վերաբերեալ համագումարը որոշում է քաղաքացիական բնոյթ ունեցող գործերի համար կիրառել միջնորդ դատարանները, Թէ գիւղերում և Թէ քաղաքում, իսկ քրէական յանցագործներին դատելու համար ամէն անգամ կազմել զինուորական դատարան, որի արձակած վճիռները պիտի ներկայացուեն Ղարաբաղի ղեկավար մարմնին՝ ի հաստատումն:

5) Արտաքին յարաբերութիւնների, կարճ ասած՝ Թուրքերի հետ մեր ունեցած յարաբերութիւնների մասին համագումարը

[71] Բնամթերքով (Խմբ.)

որոշում է նոյնը չարունակել և առաջիկային, ամէն կերպ ջանալով, որ թիւրիմացութիւններ տեղի չունենան:

6)Ինքնապաշտպանութեան գործը աւելի լաւ կազմակերպելու և ուժեղացնելու համար ամենուրեք ղեկավարութիւնը յանձնւի սպաներին, որոնց ենթակայ պիտի լինեն խմբապետները՝ օգնականի հանգամանքով:

7) Ի՞նչ անունով պիտի կոչւի և վերաբերմունքը՝ Արարատեան Հայկական Հանրապետութեան հանդէպ: Համագումարը միաձայնութեամբ որոշում է, որ Ղարաբաղը Արարատեան Հանրապետութեան մասն է կազմում, թէև տիրող պայմանների չնորհիւ կտրւած է նրանից, սակայն պիտի ջանալ կապ հաստատել ու կցել նրան: Համագումարը ընտրում է Ղարաբաղի ժողովրդական Կառավարութիւն որը պիտի ունենայ երկիրը կառավարելու բոլոր իրաւունքները, մինչև կցումը Հայաստանի Հանրապետութեանը:

Համագումարը ընտրում է Ղարաբաղի ժողովրդական Կառավարութիւն, հետևեալ կազմով. 1) Այվազեան Մարտիրոս, 2) Բաղդասարեան Արսէն, 3) Եսայեան Մելիքսէթ, 4) Թումեան Յարութիւն, 5) Իշխանեան Եղիշէ, 6) Տէր Աստուածատրեան Մարկոս ըէկ, 7) Քամալեան Արշաւիր:

Համագումարը ընտրւած կառավարութեան է թողնում, եթէ կարիք ղգացւի, կազմը ուժեղացնելու, կօօպտացիայի[72] իրաւունքով, ըստ իր հայեցողութեան, նոր մարդիկ հրաւիրելու աշխատանքի:

Յուլիսի 27-ին զրուցիւն ստացայ նորընտիր կառավարութիւնից՝ չտապ մեկնելու քաղաք: Յաջորդ օրը առաւօտեան Դալի Մահրասայի հետ մեկնեցինք և, դեռ կէսօր չեղած, անցանք Խանքենդուց,և չհասած՝ հանդիպեցինք Հայր. Մուսայէլեանին, որը գալիս էր Խանքենդի, իրենց տուն: Ամփոփ պատմեց համագումարի կատարած աշխատանքների և արդիւնքի մասին: Հայրապետը խիստ մտահոգ դէմք ունէր: Դալի Մահրասան ու ես իրար նայեցինք խիստ զարմացած հայեացքով:

– Լաւ, սակայն ինչպէս է, որ դու չես ընտրել. ես չեմ կարողանում պատկերացնել Ղարաբաղի ղեկավար մի մարմին առանց Հայրապետ Մուսայէլեանի, –ասացի ես, – դա կը նշանակէ, ինչ-որ մութ բան է կատարւել:

– Մութ բանը ո՞րն է, իսկական ինտրիգ է կատարւել, վրայ բերեց Դալի Մահրասան:

---

[72] Կոօպտացիա. լատ.՝ «մինչեւ ընտրութիւնները» (լատ.). ընտրովի մարմնի կազմի մէջ նոր անդամներ կամ թեկնածուներ մտցնելը՝ առանց լրացուցիչ ընտրութիւններ անցկացնելու: (Խմբ.)

– Յամենայն դէպս, ինչ եղել է, պէտք է աչք փակել, վրայից անցնել, ասաց Հայրապետը, և քեզ պարտադրում եմ, իմ մասին հարց չյարուցես և լուռ գործի անցնես, մանաւանդ որ դու միաձայնութեամբ ես ընտրուած, պէտք է պատչահ դիրքում մնաս:

–Հայրապետ, սա դու էլ գիտես, ես էլ գիտեմ, թէ ինչ խաղ է և ովքեր են այս խաղը խաղացողները. պէտք է ղգացնել գոնէ, որ պատուարեր դեր չեն խաղում, ասացի:

– Ճիշտ է ասում Եղիչէն, վրայ բերեց Դալի Մահրասան:

– Ոչ, ճիշտ չէ, ինչպէս ասացի, այնպէս պիտի անես, որ ոչ մի կերպ և ոչ մի պարագայի Հայրապետ Մուսայէլեանի խնդիր չյարուցւի, այլապէս, եթէ հակառակ իմ ցանկութեան վարւելու լինես, ես կը խզեմ իմ կապը քեզ հետ:

– Լաւ, համաձայն եմ քեզ հետ, անհատական խնդիրներ յարուցելուց պիտի խուսափել, բայց և որոշ կարգի մարդկանց պիտի ղգաստացնել, որ անհատական կրքերով չղեկավարւեն:

– Այդ խնդիրը այժմ պէտք է թողնել. հետագային, մի յարմար առիթով կարելի կը լինի ղգաստացնել և նոյնիսկ կշտամբել:

Բաժանւեցինք. Հայրապետը գնաց Խանքնդի, իսկ մենք՝ Շուշի: Երբ հասանք քաղաք, նախքան կառավարութեան անդամների հետ հանդիպելը, որոշեցի համագումարին մասնակցած ընկերներից մէկի հետ տեսնւել՝ որոշ մանրամասնութիւններ իմանալու համար: Հանդիպեցի բժ. Ասատուր Աւետիսեանին և Միքայէլ Տէր-Յովհաննիսեանին, որոնք պատմեցին համագումարում անցած-դարձածի մասին:

Համագումարում խստիւ քննադատել էին Բիւրոյի գործունէութիւնը, թէ թոյլ է գտնւել այնքան, որ երիտասարդները կուդէտա[73] են կատարել, թէկուզ կարճատև, անհրաժեշտ չափով ուշադիր վերաբերմունք ցոյց չի տրւել գիւղացիների ղանազան դիմումներին ու գանգատներին: Եւ այդ բոլոր մեղքերի համար պատասխանատու է Հայրապետ Մուսայէլեանը, ինչպէս արտայայտւել են մի քանի հոգի: Սակայն Բիւրօն եթէ թոյլ է եղել, որոշ վրիպումներ է ունեցել, ինչու՞ պէտք է պատասխանատու միայն Մուսայէլեանը համարւէր, որպէսզի անգրագէտ, դպրոցի երես չտեսած գիւղացիներից մէկը բացագանչէր միամտօրէն, թէ՝ "պէտք է ձերբակալել Մուսայէլեանին": Համագումարին ներկայ են եղել Հ.Յ.Դ.-ի Կենտ. Կոմիտէի անդամները, որոնցից Ասատուր Աւետիսեանը, հակազդելու համար տեղի ունեցած մեղադրանքներին և բացագանչութեան, դայրոյթով ելոյթ է ունենում և յայտարարում՝ "Ովքեր փորձ կանեն բռնանալ որևէ դաշնակցականի, առաւել ևս Հայրապետ Մուսայէլեանի վրայ, կենթարկւեն կարմիր տեռօրի":

[73] Յեղաշրջում, ըմբոստութիւն, խռովութիւն: (Խմբ.)

Ճիշտ էր ասում Հայրապետը, անհատի խնդիրներ յարուցելուց պէտք էր խուսափել, սակայն այդ այն դէպքերում, երբ հասարակութիւնը դէմ է որևէ մէկի ընտրութեան, աղդային, հասարակական այս կամ այն մարմնի մէջ: Ներկայ դէպքում Հայրապետի դէմ հասարակութիւնը չէ արտայայտուղը, այլ մի քանի անհատներ: Հայրապետը ոչ միայն մեր ղանգւածի, այլ և հասարակական բոլոր խաւերի ու հակառակորդ հոսանքների յարգանքն էր վայելում, մի բան, որ խիստ ակներև էր: Եւ պիտի ասել, որ Հայրապետի չընտրելու խնդրում բոլշևիկները-ոչ մէկ ղեր չէին խաղացել: Քսանի հասնող բոլշևիկների զբաղիչ կէսը Հայրապետի դալրոցական աշակերտներն էին, որ միշտ յարգանքով և ակնածանքով էին վերաբերւում իրենց ուսուցչին:

Հայրապետը ինքն էլ ղգում էր, որ երկու-երեք հոգու կրքերի ղոհ է գարձած և չէր ուղում, որ իր մասին խօսք լինէր և հետևանքը՝ նոր դժգոհութիւն: Սակայն միշտ աչքիս գիմաց էր Հայրապետի խիստ մտահոգ դէմքը: Նա համոզւած էր աւելի քան և խիստ ցաւ էր ղգում ոչ թէ չընտրելու հետևանքով, այլ որ մեր ժողովրդի մնացորդի վտանգւած օրերին անգամ գտնւում են մարդիկ, որոնք անհատական կրքերից ձերբազատւել չեն կարողանում, խիստ անձնասէր լինելու հետևանքով:

Ճիշտն ասած, սկղբից էլ ինձ համար աւելի հաճելի է եղել գաւառում, գիւղում աշխատելը. քաղաքը ինձ չէր գրաւում և չատ գոհ էի լիաղօր լինելով, որպէսղի չարունակ մնայի գիւղացիութեան մէջ, ուստի ընաւ հաճելի չէր կառավարութեան անդամ ընտրւած լինելս: Երևկոյեան ներկայացայ կառավարութեան նիստին, արդէն բոլոր անդամները հաւաքւած էին: Արչաւիր Քամալեանը դարձաւ ինձ, թէ՝ "խնդրում ենք անցնես քո պարտականութեան": Կառավարութեան անդամներից ոչ մէկը չգիտէր Հայրապետի հետ ունեցածս հանդիպման մասին, ուստի հարցրի, իբր անտեղեակ մէկը՝ "Ի՞նչ պարտականութիւն, չրջանի մեր գործերի մասի՞ն ղեկուցեմ":

– Ոչ, վրայ բերեց Արսէն Բաղդասարեանը, ղեկուցումդ օրակարգի մէջ կը դրւի, յետոյ կը լսենք. ներկայ եղողներս ընտրւած ենք որպէս կառավարութեան անդամներ. դու ընտրւած ես իբրև նախագահ համագումարին, ուստի, նախ ղերիդ մէջ մտիր, յետոյ կանցնենք օրակարգի խնդիրներին:

– Ես ոչ մէկ ցանկութիւն չեմ ունեցել և չունեմ գաւառը թողնելու և գալու քաղաք. ոչ ոք էլ կանխաւ իմ կամքը չի հարցրել, քաղաքում նախագահի պարտականութիւն կատարող մէկից աւելի թեկնածուներ կը ճարւեն, գաւառը, գիւղն է դուրկ գործիչներից. ես ամենայն ուրախութեամբ ու հաճութեամբ կը մնամ գաւառում իմ համեստ ղերի մէջ. ոչ մէկ ցանկութիւն չունեմ քաղաքում մնալու:

– Եթէ դու չես ուղում մնալ, առաւել ևս ես չեմ ուղում մնալ և հրաժարւում եմ կառավարութեան անդամութիւնից, վրդովւած

տոնով ասաց Արսէն Բաղդասարեանը, թողեց նիստը և անցաւ միւս սենեակը:

– Եթէ այդպէս է, մենք էլ չենք կարող մնալ, – ասաց Արշաւիր Քամալեանը, –ուստի պիտի նոր համագումար հրաւիրել և առաջարկել, որ նոր ընտրութիւն կատարւի:

Մելիքսէթ Եսայեանը ներողամտութիւն խնդրելով ներկաներից, առաջարկեց մի քանի րոպէ թոյլ տալ իրեն առանձին խօսելու ինձ հետ: Ընկերները թոյլ տւին: Մելիքսէթը տարիքով էր բոլորիցս: Առանձնացանք մէկ ուրիշ սենեակում, և նա, որ արդէն չէղոք մարդ էր դարձած բոլշևիկներից հեռանալուց յետոյ, համագումարի անց ու դարձին լաւատեղեակ էր, յայտնեց, որ տեղի է ունեցել որոշ ինտրիգ, որի հետևանքով Հայրապետն էլ չի ընտրւել: Սակայն մի հանդամանք կայ, որ պէտք է նկատի ունենաս դու, իբրև նախագահ, համագումարի կողմից ես ընտրւած, այժմ քո մասնակցութեամբ կայանալիք առաջին նիստին պիտի կատարւի աշխատանքների բաժանումը անդամների միջև, եթէ հրաժարւենք, նոր համագումար հրաւիրւի, բնականաբար, մեղքն ամբողջովին պիտի ծանրանայ քո վրայ: Համագումարի կողմից դու միաձայն ես ընտրւել. դա կարևոր է և միանգամայն պարզ ու հասկանալի է, թէ ինչու մեղքն ամբողջովին պիտի բարդւի քո վրայ: Ես գիտեմ, հասկանում եմ միտքդ, որ Հայրապետի դէմ ինտրիգ է տեղի ունեցած, սակայն չպէտք է հրաժարւես, վնաս չկայ այս միջադէպից, որը կը զգաստացնի որոշ մարգկանց. իսկ այժմ գնանք ներս":

Գնացինք ներս, Մելիքսէթը դարձաւ ընկերներին, թէ՝ "թիւրիմացութիւնը պարզւած է, վիճելի խնդիր չկայ. անցնենք գործի": Ապա անցաւ այն սենեակը, որտեղ Արսէն Բաղդասարեանն էր. նրան էլ բերեց, և անցանք գործի, կանխաւ իմ ներողամտութիւնը խնդրելուց յետոյ, մեր առաջին գործը եղաւ աշխատանքի բաժանում կատարել հետևեալ ձևով՝

1)Այվազեան Մարտիրոս, հաղորդակցութեան և հանապարների վարիչ,

2) Բաղդասարեան Արսէն[74]՝պարենաւորման գործի վարիչ,

3) Եսայեան Մելիքսէթ՝ քարտուղար և չրջանների հետ կապի վարիչ,

4) Թումեան Յարութիւն՝ դինուորական գործերի վարիչ,

5) Իշխանեան Եղիչէ՝ ներքին և արտաքին գործերի վարիչ,

6)Տէր Աստուածատրեան Մարկոս բէկ՝ արդարադատութեան գործերի վարիչ,

7) Քամալեան Արշաւիր՝ ֆինանսների վարիչ:

---

[74] Արսէն Բաղդասարեանը երկու ազգանուն ունէր. մէսը Յովհաննիսեան էր: (Հեղ.)

ՏԱՃԿԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յուլիս 29-ին, առաւօտեան ժամը 8-ին Զարիսլուի կողմից խուլ հրացանաձգութեան ձայն էր լսւում, որը քանի գնում, աւելի ուժեղանում էր: Հրացանաձգութեան ձայնի վրայ ահագին թւով մարդիկ վերին հանգստարանի քարաժայռի և զօրանոցից վերև հաւաքւած, ականջ էին գնում հրացանաձգութեան, բոլորը մտահոգ վիճակ ունէին և սպասում էին, թէ ինչով կը վերջանայ: Կայազօրի հրամանատարը որոշում է հետախոյզներ ճամբել, լուր բերելու՝ արդեօ՞ք հայերի և թուրքերի միջև է հրացանաձգութիւնը, թէ՞ թրքական թայֆաների: Հետախոյզները դեռ քաղաքից դուրս չեկած, մէկ ղինւոր հևիհև գալիս, լուր է տալիս, որ Զարիսլուի մօտ 3,500 տաճկահայ գաղթականներ և բաւական թւով ղինւորներ չրջապատւել են զարիսլուցիների և այլ թրքական աւազակախմբերի կողմից: Գաղթականներից 20-30 հոգի ղինւած են և միացած վաճառուն ղինւորների, պաչտպանւում են ու թէեև լաւ դիրքեր բռնած, բայց ահագին թւով թրքական ղինւած ուժերի չղթան պատռել, գաղթականութեան ճամբայ բաց անել չեն կարող, ուստի իրեն ուղարկել են քաղաք և օգնութիւն են խնդրում:

Կայազօրի հրամանատար Արտաչէս Վարդապետեանը անմիջապէս զօրանոցի վաչտի գլուխն անցնելով, մի քանի սպաներով միասին չտապ ճամբայ են ընկնում դէպի վայրը: Վաչտին հետևում են նաև երեսունի չափ քաղաքի մարտիկներից, որոնց հետ գնում է նաև Դալի Մահրասան: Մեր ղինւած ուժերը տեղ հասնելով, հրամանատարի հրամանով երեք մասի են բաժանւում և երեք կէտերից յանկարծակի զարկում թրքական ղինւած ամբոխի թիկունքին: Երեք ու կէս – չորս ժամ դիմագրելուց յետոյ, ամբոխը, ընկճւած մեր ղինւորների և մարտիկների չէչտակի հարւածներից, սկսում է նահանջել, բաւական սպանւածներ ու վիրաւորներ տալուց յետոյ: Մեր կողմից վիրաւորւել էին 14 հոգի, սպանւած չունեցանք: Մեղ նպաստող մի հանգամանք կար, այն է, որ թուրքերը լաւ հրացանաձիգներ չեն ընդհանրապէս, մինչդեռ հայերը ղինւորական ծառայութիւն անցած, ղինավարժ ու լաւ հրացանաձիգներ են, ուստի թուրքերը, մեղ հետ համեմատած, երկու-երեք և աւելի անգամ զոհեր էին տալիս: Երեկոյեան դէմ մեր ղինւած ուժերի ուղեկցութեամբ գաղթականութիւնը հասնում է քաղաք և բացօթեայ տեղաւորւում քաղաքի ընդարձակ զբօսավայրում, մինչեւ նոր կարգադրութիւն:

Երեկոյեան կառավարութեան նիստի գլխաւոր հարցը գաղթականութեանը տեղաւորելն էր, որտե՞ղ և ինչպէ՞ս, քանի որ

քաղաքում պահելու ոչ մի հնարաւորութիւն չկար, գլխաւորապէս պարենի սղութեան և դժւարութեամբ հայթայթելու պատճառով:

Նիատին ներկայ էր Արտաչէս Վարդանեանը, որը զեկուցեց կռւի մասին, թէ՝ "Թուրքերի ամբոխը մոլեգնութեամբ դիմադրում և մէկ-մէկ հակայարձակում էր գործում, բայց մերոնք ամէն անգամ յետ էին չպրտում և ուժգին զրոհելով հարկադրում նրանց նահանջել: Թուրքերը լաւ էին զինւած և, ինչպէս երևում է, շատ ռազմամթերք ունէին. անընդհատ կրակում էին, մինչդեռ մերոնք առանց հրահանգի չէին կրակում, որովհետև մեր ունեցած պաշարը շատ և շատ քիչ էր. ուստի փամփուչտները խնայողութեամբ էին կրակում զինւորները: Պէտք է ասել, որ զինւորները լաւ կռւեցին, աչքի ընկնելով իրենց խիզախութեամբ: Սպաները՝ Արշաւիր Պետրոսեանը, Գէորգ Նազարեանը, Արտեմ Բաղդազիւլեանը և Դալի Մահրաեան, իրենց անվախութեամբ խիստ ոգևորել էին զինւորներին, որոնք չարունակ առաջ էին չարժւում":

Գլխապետ (կապիտան) Արտաչէս Վարդանեանը ճարտար զինւորական է: Ինքը և երկու եղբայրները՝ Հմայակ՝ իրենից մեծը, և փոքրը՝ Գրիգոր, ծնողներից զրկւել էին փոքր հասակում, Հօրեղբօր՝ Յովհաննէս քահանայի խնամքին մնացել: Տէր Յովհաննէսը երեքին էլ միջնակարգի կրթութիւն էր տւել: Արտաչէսը զինւորագրւել էր Առաջին համաշխարհային պատերազմից մէկ տարի առաջ, արդէն սպայ էր, երբ պատերազմը սկսւել էր ու տարւել էր Արևմտեան ճակատ: Բրուսիլովի բանակում աչքի է ընկնում քաջութեամբ և աստիճանաբար հասնում գլխապետութեան: 1917թ. յուլիսին, երբ զօրքերը քայքայւած նահանջում են, գալիս է Շուշի: Վերին աստիճանի համեստ մարդ էր և, չնայած զեռ շատ երիտասարդ, բայց խոհուն և չրջահայեաց: Զինւորների և սպաների կողմից շատ սիրւած և յարգւած էր:

Ամբողջ մէկ ժամ մանրամասնօրէն պատմում էր կռւի մասին, գովում էր սպաներին: Արշաւիր Պետրոսեանին (փոխ տեղակալ), Գէորգ Նազարեանին (վառակիր՝ պրապորշչիկ), Արտեմ Բաղդազիւլեանին (վիրակապ-ֆելդշէր), Դալի Մահրաեային, բայց ոչ մի անգամ չասաց՝ ես այսպէս կամ այնպէս հրահանգեցի. մինչդեռ ինքն էր կռւի ղեկավարը: Երկու հարիւր յիսուն-երեք հարիւր զինւորներով ու մարտիկներով, կարողացել էր յաղթահարել հաղարից աւելի թրքական ամբոխի կատաղի զրոհները, բաւական զոհեր խլելով հարկադրել նահանջելու՝ չնորհիւ իր հմուտ և ձեռնհաս ղեկավարութեան: Սպաներն ու զինւորները ոգևորութեամբ քաղաքում պատմում էին հրամանատարի բարեմասնութիւնների մասին: Մասնաւորապէս Դալի Մահրաեան հիացմունքով էր պատմում Արտաչէսի մասին: Անգլիացիների

կողմից նա էլ Ղարաբաղից աքսորուեց Վրաստան, Թիֆլիս, 1919 թ. որտեղ և Թոքերի բորբոքումով հիւանդանալով վախճանուեց 1920 թ.:

Գաղթականութեան հետ միասին Շուշու գնդի սպաներից մէկ հոգի՝ Գրիգոր Ասրեան, որ եկել էր յանձնարարութեամբ, ներկայացաւ ու յայտնեց, որ Շուշու գունդը Բայաղէդի և Դարալագեազի վրայով, գնդապետ Միքայել Մելիք-Շահնազարեանի գլխաւորութեամբ, հասել է Սիսիան, այնտեղից Գորիս, ուստի իրենց հրամանատարը և իր օգնական գլխապետ Յովակ Ստեփաննանը ուղարկել են՝ յայտնելու Ղարաբաղի զեկավար մարմնին, որ միջոցների դիմի՝ գունդը փոխադրելու Շուշի: Անհրաժեշտ է զիւղերից սայլեր ու ձիեր ուղարկել Գորիս, գնդի ունեցուածքը՝ թնդանօթները, հրանօթները և ռազմամթերքը փոխադրելու համար:

Կառավարութիւնը առաջին հերթին զբաղւում է գաղթականութեան խնդրով: Մի բան պարզ էր, որ 3500 հոգի գաղթականութեանը քաղաքում պահելու ոչ մէկ հնարաւորութիւն չկար, ուստի որոշուեց բոլորին ուղարկել չրջանները, բացառութեամբ նրանց, որոնք արհեստաւորներ էին և կարող էին աշխատել իրենց համապատասխան արհեստաւորների մօտ: Այդ գործը վարելու համար, որոշուեց Մուշեղ Զաքարեանին նշանակել գաղթականութեան գործի վարիչ և որպէս օգնականի՝ Անուշաւան Տէր Միքայէլեանին:

– Ի նկատի առնելով, որ նախկին Միջկուսակցական Բիւրոյի օրօք արտաքին գործերի վարիչը չարունակ եղել էր Աչոտ Մելիք Յովսէփեանը, որը միաժամանակ Հայ-Վրքական կոմիտէի քարտուղարն էր, առաջարկեցի, որ Աչոտ Մելիք Յովսէփեանը Հրաւիրւի կազմի մէջ, նախկին ձևով վարելու արտաքին գործերը: Կառավարութիւնը միաձայնութեամբ համապատասխան որոշում կայացրեց, և Աչոտ Մելիք Յովսէփեանը Հրաւիրուեց որպէս անդամ կառավարութեան: Ապա Արչաւիր Քամալեանը, նկատի ունենալով, որ մինչև ուսումնական տարին սկսելը քիչ ժամանակ է մնացել, առաջարկեց, որ յարմար մէկը Հրաւիրւի կազմի մէջ դպրոցական գործերը վարելու համար: Մի չարք թեկնածուներ առաջարկուեցին և յարմար համարուեց աշխատանքի Հրաւիրել ռէալական դպրոցի ուսուցիչ Ռուբէն Շահնազարեանին:

Այդպիսով կառավարական կազմը լրացաւ: Ի դէպ, կառավարութիւնը նոր էր գործի անցած, որ դիտողութիւն եղաւ քաղաքացիներից ոմանց կողմից, թէ չպիտի Միջկուսակցական Բիւրոյի անունը վերացուէր ու փոխարինուէր կառավարութեան անունով, քանի որ, իրականին մէջ, ընտրուած կառավարութիւնը օտար կառավարութիւնների կողմից չի ճանաչուած և չպիտի ճանաչի որպէս այդպիսին, հէնց մեր Հարևան ժողովրդի կողմից, մանաւանդ, որ մեր դարաւոր թշնամին՝ տահիկն էլ եկել, մեր դռներն է ծեծում,

չատ աւելի նպատակայարմար կը լինէր, որ զարձեալ մարմինը Բիւրօ կամ Ազգային Խորհուրդ անունով կոչէիր: Դիտողութիւնը ճիշտ էր, որով և ծաւալուեց և զարձաւ խիստ քննադատութիւն:

Կառավարութիւնը ինքը զգում և չատ լաւ հասկանում էր, որ իր անուան համապատասխան ոչ միջոցներ ունի և ոչ էլ դիրքը՝ արտաքին աշխարհում: Համաղումարում էլ ոչ ոք չէր անդրադարձել այդ հանգամանքին: Այո, լաւ կը լինէր, որ թողնուէր Բիւրօ անունը կամ Ազգային Խորհուրդ անունով կոչուէր համաղումարից ընտրուած մարմինը:

Առաջարկ եղաւ, որ կառավարութիւնն ինքը անուան փոփոխութիւն կատարի, բայց առարկութիւն եղաւ, թէ յանկարծ կը զտնուեն դժգոհներ, որոնք կը սկսեն քննադատել կառավարութեանը, թէ ինչու համաղումարի որոշման հակառակ է ընթացել: Յարմար նկատուեց ականջ չկախել քննադատների դժգոհութիւններին և այդ հարցը թողնել առ ի ապա, մինչև յաջորդ համաղումար:

Գաղթականութեան վարիչները զործի անցնելով, որոշեցին նախ կազմել ցուցակը այն զիւղերի, որոնց տնտեսական վիճակը համեմատաբար լաւ էր, և ապա զաղթականներին բաժանել այդ զիւղերի վրայ, ժամանակաւոր պահելու և կերակրելու ընդհանուր միջոցներով, մինչև նոր կարգադրութիւն: Համարեա բոլոր չրջաններից մարդիկ կային քաղաքում, որոնք մեծապէս օգնեցին զաղթականութեան վարիչներին, ճչտելու ի վիճակի եղող զիւղերը, ուր և խումբ- խումբ ուղարկեցին զաղթականներին, որոնց հրահանգուած էր իրենց ապրած զիւղերում զիւղացիներին օգնել զաչտային աչխատանքներում և հացահատիկը կալսելու զործում: Գաղթականները սիրով յանձն առան օգնել զիւղացիներին և օգնեցին բոլոր աչխատանքներում. զիւղացիներն էլ զոհ մնացին, որ զաղթականների չնորհիւ աչխատող ձեռքերը չատացան, և աւելի չուտ աւարտուեցին աչխատանքները:

Շուչու ղնդի մասին սպանների բերած տեղեկութիւնը արագօրէն տարածւում է քաղաքում, և մարդիկ, հային յատուկ բնաւորութեամբ, ոգևորւում, թնդացնում են օդը: Գնդի հրամանատար զնդապետ Միք. Մելիք- Շահնազարեանի եղբայր Սամսոնն ու իրենց մի քանի բարեկամները նախաձեռնութիւն ստանձնելով, առանց կառավարութեան զիտութեան և համաձայնութեան, օգոստոս 2-ին քաղաքացիներից ժողով են զումարում և հարց զնում՝ միջոցներ խորհելու, գունդը Շուչի փոխադրելու համար: Մտքերի փոխանակութիւն ունենալով, ընտրում են մի յանձնախումբ, որ այդ գործով զբաղւի: Առաջարկ է լինում, որ յանձնախումբը կառավարութիւնից անջատ, ինքնուրոյն

գործի: Մի խումբ քաղաքացիներ խիստ դէմ են արտայայտւում յանձնախմբի անջատ գործելուն և առաջարկում են, որ յանձնախումբը ներթակայ լինի Զինւորական Միութեան վարչութեան: Առաջարկը ընդունւում է:

Հարկաւ, կառավարութիւնը չէր կարող անտարբեր մնալ, ուստի պատասխանատուութեան է կանչում նախաձեռնողներին և յայտնում, որ իրենց անտեղի աղմուկով միայն վնաս կարող են հասցնել գործին: Գործը հնարաւոր կը լինի յաջող կատարել, լուռ ու մունջ, առանց աղմուկի, որպէսզի չիմանայ թշնամին և արգելքներ չստեղծի: Հարևան թուրքերը չպիտի տեղեկութիւն ունենան մեր կատարելիք գործի մասին, որը չատ պատասխանատու գործ է: Սակայն, ինչպէս ժողովրդական առածն է ասում՝ "սևին սապոնն ինչ, խևին խրատն ինչ". մարդիկ, յեղափոխութիւնից յետոյ դարձել էին լեզուագարներ, այնքան խօսացին և աղմկեցին, որ թշնամին արթնացաւ և մեծ հարուած հասցրեց մեզ, ինչպէս կը տեսնենք յետոյ:

Օգոստոս 4-ին Կուսապատից գալիս են Նիկ. Համբարձումեանը և Նիկ. Ջախուրբէկեանն ու յայտնում կառավարութեանը, որ Սարովի գիւղացիները իրենց վտանգւած են զգում, քանի որ հայկական չրջանից դուրս է, մեկուսի և չորս կողմից չրջապատւած թուրք գիւղերով: Թուրքերը յայտնում են, որ օսմանցիները չատ են առաջ գնացել, կռիւները Բագուի չուրչն են: Սարովցիները լսելով այս մասին, ժողով են արել, որ եթէ Բագուն ընկնի, թուրքերը կարող են իրենց մեծ վնաս հասցնել, ուստի մտածել ու որոշել են՝ գիւղը թողնել, ամէն ունեցւածք վերցնել և փոխադրւել հայկական չրջան: Այդ առթիւ խօսել են Առան Իւղրաչեանի կառավարչի հետ, և նա խորհուրդ է տւել փոխադրւել Մարգուչաւան, ապա հաստատւել մօտակայ ջրամօտ վայրում և նոր գիւղ հիմնել: Սարովցիները համաձայնել են և գտնելով, որ մեն-մենակ իրենց ուժերով չեն կարող արագ և կարճ ժամանակամիջոցում փոխադրւել, բացի այդ, ով գիտէ, յանկարծ թուրքերը օգտւելով պահից, մի խաղ կը խաղան իրենց գլխին, դիմել են չրջանի ինքնապաչտպանութեան մարմնին, որ օգնէ իրենց: Մենք էլ մարմնի մէջ մտքերի փոխանակութիւն ունենալով, զտանք, որ լաւ կը լինի, եթէ կառավարութիւնից հրահանգ յղւի բոլոր գիւղերին, սայլեր ու բեռնատար ձիեր տրամադրելու մարմնին, որպէսզի արագ կարելի լինի կատարել առաջադրանքը:

Բացի այդ, խնդրում են, որ կառավարութեան կողմից աղղեցիկ հեղինակութիւն ունեցող մարդիկ նչանակւեն, որոնք տեղի վրայ անհրաժեչտ կարգադրութիւնները անեն և հսկեն գործին:

Կառավարութիւնը քննութեան առաւ խնդիրը և ճիչտ գտաւ սարովցիների փոխադրւելու որոչումը: Հայ-Թրքական

ընդհարումներին Սարով գիւղը պաշտպանելու համար մեծ դժւարութիւններ եղան, և ուժերի մեծ լարումով հազիւ կարելի եղաւ ամէն անգամ թրքական յարձակումները յետ մղելու: Կառավարութիւնը որոշում է ընդառաջել գիւղացիներին, մանաւանդ որ Առան Իւղբաչեանին պատկանող արզաւանդ հողերի վրայ հաստատւելու հնարաւորութիւն էր տրւում այդպիսով: Գործի վրայ տեղում կարգադրութիւնները անելու ամենայարմար անձնաւորութիւնը Ալէքսան դային էր, որը հայ-թրքական ընդհարումներին լինելով Համաղասպի օգնականը և իրական ղեկավարը, կռիւների ընթացքին շատ ժամանակ հէնց Ջրաբերդի շրջանում է եղել, ժողովուրդի կողմից լաւ ճանաչւած և հեղինակութիւն վայելող, որպէս անվախ ու քաջ կռւող:

Կառավարութեան որոշմամբ մեկնում եմ Խաչէն, Բալլուջա գիւղը, յայտնելու իր մասին կայացւած որոշումը և միասին ծրագրելու սարովցիների փոխադրութեան գործը: Ալէքսան Դային այն կարծիքն է յայտնում, որ պէտք է հրահանգել, որ բացի փոխադրութիւն կատարողներից, զինւած ուժեր կենտրոնանան որոշ տեղերում, որպէսզի փոխադրութիւնը ապահով կատարւի: Անհրաժեշտ համարեցինք Դալի Մահրասայի, Աղասու և Մուսայի հետ ևս խորհրդակցել, վերջնական կարգադրութիւն անելու համար: Մարդ ուղարկեցինք Մուսային յայտնելու, որ անցնի Դաչբուլաղ, որտեղ և գտնւում են Դալի Մահրասան և Աղասին. մենք էլ ուղղւեցինք այնտեղ:

Խորհրդակցութիւնը տեղի ունեցաւ և միւս ընկերներն էլ համամիտ եղան. ուստի որոշւեց անմիջապէս գործի անցնել: Կառավարութեան կողմից գրւած, պատրաստ էին գրութիւնները, որոնցում յիշատակւած էր, որ Ալէքսան դային նշանակւած է փոխադրական գործի ղեկավար, ուստի հրահանգւում է գիւղական կոմիտէներին և խմբապետներին, առանց այլևայլութեան ենթարկւել նրա կարգադրութիւններին: Որոշւեց Մուսայի և Աղասու ձիաւորներին յիսուն հոգի էլ աւելացնել և հարիւր հոգանոց խմբով մեկնել Կուսապատ: Օգոստոս 7-ին Ալէքսան դային իր օգնականներով, ձիաւոր խմբի գլուխն անցած, մեկնեցին Կուսապատ և միաժամանակ կառավարութեան հրամանագիրը խմբի մարտիկների միջոցով ուղարկեցին Ջրաբերդի և Գիւլիստանի գիւղական մարմիններին՝ իրենց փոխադրական միջոցներով կենտրոնանալու Մարդակերտ գիւղում:

Համաձայն կառավարութեան որոշման, Ալէքսան դային և ընկերները գործի անցնելուց յետոյ, ես մնացի Դաչբուլաղում, որոշ գործեր կարգադրելու կառավարութեան կողմից: Օգոստոս 11-ին քաղաքից եկաւ Մարտիրոս Այվազեանը և պատմեց, որ որոշ տիպերի լոպաղութեան և լեղւազարութեան պատճառով մի կողմից,

իսկ միւս կողմից էլ Մելիք Շահնազարեան գնդապետի եղբօր ու բարեկամների ճառողիւնի հետեւանքով, թուրքերը տեղեակ են Շուչու գնդի փոխադրութեան մասին, նոյնիսկ հարց են տալիս, թէ ինչու՞ համար է բերւում գունդը, ի՞նչ կարիք կայ բերելու, մենք խաղաղ ապրում ենք: Այդ հարցը տրւել է հայ-թրքական կոմիտէի անդամների կողմից և մերոնք ասել են, որ այդ գունդը պիտի անցեալ տարւայ ամառւայ ամիսներին նկած լինէը Խանքենդու զօրանոցների և այլ պինւորական չէնքերի պահպանութիւնը ստանձնելու, բայց ուշացել է: Մի բան, սակայն, խիստ մտահոգութիւն է պատճառում կառավարութեան. թուրքերը աչալուրջ հետեւում են մեր բոլոր շարժումներին: Արտէմ Լալայեանը տեղեկացնում է, որ Առաքելի և Բանաղուրի գիւղացիները դաշտային աշխատանքների ժամանակ տեսել են, որ տաճկական մի զօրամաս է անցել դէպի Հաքարու գետի կողմը: Կառավարութիւնն այն կարծիքին է, որ ամենայն հաւանականութեամբ տաճկական զօրամասը գնում է մեր գնդի ճամբան փակելու. ուստի որոշւում է նախազգուշական միջոցներ ձեռք առնել սահմանների վրայ, անակնկալի չգալու համար, և որ կառավարութիւնը իրեն նչանակել է Ասկերանի չրջանի հրամանատար, պէտք է միասին գնանք այնտեղ անհրաժեշտ կարգադրութիւնները անելու: Թերևս իղուր վախեր են, և թէկուզ ոչինչ էլ տեղի չունենայ, այնուամենայնիւ, պէտք է զգոյշ լինել:

Մարտիրոս Այվազեանը պատմեց նաև քաղաքում տեղի ունեցած մէկ ժողովի և հակակառավարական քննադատութիւնների մասին: Բաւական թւով քաղաքացիները, որոնք ուզում են, որ օր առաջ Շուչու գունդը փոխադրւի, հաւաքւում են քաղաքային ակումբի ամառային չէնքում և դիմում կառավարութեանը, որ յայտնի, թէ ինչ միջոցներ է ձեռք առել գունդը փոխադրելու համար և մօտաւորապէս երբ կը փոխադրւի: Ժողովին ներկայ են եղել բոլոր հոսանքներին պատկանող մարդիկ: Բուռն վէճեր են տեղի ունենում, կառավարութիւնը մեղադրւում է դանդաղկոտութեան և անվճռականութեան մէջ: Դժգոհները պահանջում են, ամէնաչտապ կերպով հրահանգ ուղարկել դիւղերը, որ սայլերով և ձիերով կենտրոնանան քաղաքում, միասին ճամբայ ընկնելու դէպի Գորիս:

Կառավարութիւնը դէմ է արտայայտւում, առարկելով, որ սայլերի և ձիերի կենտրոնացումը քաղաքում խիստ աչքի կը զարնւի, թուրքերը կը տեսնեն, ասիլի կը տանք նրանց աւելի կասկածանքով վերաբերւելու մեզ հետ և թերևս միջոցներ մտածեն մեր գործը խանգարելու: Թուրքերն անկասկած հետեւում են մեր շարժումներին, ինչպէս և մենք ենք հետեւում նրանց շարժումներին, անվստահութիւնը փոխադարձ է, լրւին, առանց բացորոշ արտայայտութեան, ուստի պիտի միանգամայն խուսափել ցուցական քայլերից: Եւ որովհետև կառավարութեան կողմից

բացատրութիւններ էր տալիս Յար. Թումեանը, որպէս դիւանագական կոմիսար և խիստ դէմ էր արտայայտում քաղաքացիների անհանդիստ չարժումներին, ուստի զժգոհ տարրերը իրենց պահանջները ուղղում են Թումեանի դէմ, ասելով, թէ՝ "Դուք վաղուց էք ղրաւել նրանց ուշադրութիւնը ձեր ընդանօթաձգութեամբ. մի բան, որ բոլորն են նկատել": Վիճաբանութիւնը սուր կերպարանք է ստանում:

Ի դէպ, պիտի խոստովանել, որ ճիշտ էր, ընդանօթաձգութիւնը թուրքերի ուշադրութիւնը գրաւել էր արդէն, և նրանց հարցերին, թէ ինչ ընդանօթի պայթիւններ են, պատասխանել էինք, թէ պայթիւնները ընդանօթի չեն, այլ ձեռնառումբերի, որոնք ճակատից վերաղարձած դինուորներն են բերել իրենց հետ, և որովհետև անզգուշութեան պատճառով մէկը պայթել է ու դինուորը սպանել է տեղնուտեղը, ուստի պահանջել ենք, ովքեր ռումբ ունեն, ոչնչացնեն, պայթեցնեն. ահա այդ դէպքերի պայթիւնները են, որ լսում են: Ի հարկէ, նրանք մեր բացատրութիւնները հալած իւղի տեղ չէին ընդունում, չարունակում էին կասկածանքով վերաբերուել, և դա նկատելի էր, որովհետև մէկ-մէկ առիթ լինելուց, ակնարկում էին ընդանօթների մասին:

Ինչ էր այդ ընդանօթ ասւածը, մի պարզ, տեղում պատրաստած ռմբաձիգ. Յ. Թումեանը հէնց սկզբից առանձին և մեծ ուշադրութեամբ, կարելի է ասել նախրատութեամբ է վերաբերուել իր յղացած այդ գործին: Չնայած որ ինքն էլ համոզուած էր, գիտէր, որ տեղում պրիմիտիւ ձևով պատրաստած փոքրիկ երկու կամ աւելի ռմբաձիգները աւերիչ ուժ չունեն, բայց եղնելով այն բանից, որ հայ-թրքական ընդհարումների և ռուս-պարսկական պատերազմի[75] ընթացքում (1828 –30) պարսիկներից գրաւած չուգունէ 40 փթանոց ընդանօթից կրակելով մեծ սարսափ էին տարածել հայերը թուրքերի վրայ, ուստի որոշում է հին ընդանօթների պէս, բայց աւելի թեթև և հեչտութեամբ տեղից-տեղ փոխադրելիք ռմբաձիգներ պատրաստել: Որպէս դինուորական կոմիսար, հարցը դնում է Բիւրոյի նիստին քննութեան, որ Բիւրօն դինական արհեստանոց ունենայ, որտեղ աշխատեն հմուտ, փորձած վարպետները, որոնք հայ-թրքական ընդհարումներին աշխատել են արհեստանոցներում և հմուտ են դէնքերը նորոգելու և ընդունակ կամայ-կամաց, լռելեայն ռմբաձիգներ պատրաստելու: Զէնքերի նորոգութեան համար արհեստանոց ունենալը անհրաժեշտութիւն էր, առարկութիւն չվերցնող, իսկ ընդանօթ պատրաստելու դէմ առանձին առարկութիւն էլ չի լինում. ռմբաձիգների պատրաստութեան դէմ է արտայայտում միայն Յակոբ

[75] Ռուս-պարսկական 1828-30թթ. պատերազմ. վրկայում է. Շեղթուած են ռուս-պարսկական 1826-28թթ և ռուս-պարսկական 1828-29թթ պատերազմների թուականները: (Խմբ.)

Բալասանեանը, որը զինուորական կոմիսարի օգնականն էր: Նա խիստ ցուցական համարելով գործը, հրաժարական է տալիս: Ինչևիցէ, քաղաքում գործող երկու փականագործներ պարտաւորւում են մատչելի վարձատրութեամբ նորոգելու թէ՛ զինուորների և թէ՛ զիւղացիների ղէնքերը: Մարտ ամսին Միջկուսակցական Բիւրոյի Զինուորական կոմիսարը փոքրիկ թռուցիկով յայտարարում է չրջանների զիւղացիութեանը, որ նորոգութեան պէտք ունեցող ղէնքերը բերուեն քաղաք, նորոգելու Բիւրոյի զինուորական արհեստանոցում: Թռուցիկները ստացուեցին ժամանակին Հադրութում և ցրուեցին բոլոր զիւղերում: Այդ էր գլխաւոր առիթը եղել Յակորի հրաժարական տալուն: Յակոբ Բալասանեանը հին դաշնակցական էր. մենք ցածր դասարանների աշակերտներ եղած ժամանակ, նա կոմիտէի անդամ էր, իսկ հայ-թրքական ընդհարումներին արդէն կենտրոնական կոմիտէի անդամ և խիստ պատասխանատու դերում, լինելով զինապահեստների պետ Տիգրան Մելիք Ալլահվերդեանի օգնականը, զաղտնի աշխատանքների վարժուած. նրա մօտ արդէն բնաւորութիւն էր դարձած չերևալու, աննկատ մնալու, ուստի թռուցիկով յայտարարութիւն անելը խիստ ցուցական քայլ համարելով, հրաժարական էր տուել: Երբ Դիզակից վերադարձայ, արդէն Յակոբ Բալասանեանին փոխարինել էր Խաչիկ Մելքումեանը, որպէս օգնական զինուորական կոմիսարի: Խաչիկ Մելքումեանը Յար. Թումեանի դասընկերներից էր և նրան համամիտ:

Յակոբ Բալասանեանը զանգատւեց, թէ Բիւրօն լրջօրէն չի վերաբերուել հարցին չնայած, ինքը հանգամանօրէն խօսել, յայտնել է իր կարծիքը, որ մէկ-երկու հատ պրիմիտիւ ձևերով պատրաստուած ռմբաձիգներով չպիտի ապահովւի մեր չրջանի ինքնապաշտպանութիւնը. միայն հարևանների ուշադրութիւնը կը գրաւենք, ուրիշ ոչինչ:

Ճիշտն ասած, ես էլ մի օգուտ չէի սպասում ռմբաձիգներից և առանձին Յարութիւնի հետ երկար զրոյց էի ունեցել, որ իղուր տեղը եռանդ չսպառի, խնայի իր ուժերը և նիւթի ինքնապաշտպանութեան կազմակերպչական աշխատանքներին, մանաւանդ որ ռմբաձիգներ պատրաստելը մեծ դժուարութիւնների հետ էր կապուած, քաղաքում ոչ միայն ձուլարան, այլև հասարակ հալոց չկար, պէտք էր ամէն ինչ պրիմիտիւ ձևով պատրաստել: Սակայն Յարութիւնը տարուած էր իր յղացած մտքով, ուզում էր անպայման գլուխ բերել գործը և այդ նպատակով արդէն խօսել էր մեր երիտասարդ ընկեր ճարտարագէտ Գուրգէն Օհանեանի հետ: Յամենայն դէպս, Բիւրօն խորհուրդ էր տուել Յարութիւնին՝ ռմբաձիգների փորձերը կատարել քաղաքից հեռու վայրերում, որպէսզի պայթիւնի ձայնը չլսւի քաղաքում: Մեծ դժուարութիւններով հաղիւ երկու հատ ռմբաձիգ է պատրաստւում, պղնձից ձուլուած: Կրակելու փորձերը կատարում են Սղնախ և

Աւետարանոց գիւղերի միջև եղած ձորում, որը բաւական հեռու է քաղաքից, մօտ 10-12 կիլոմետր, բայց և այնպէս, ձայնը խուլ կերպով լսելի է լինում քաղաքում: Պիտի ասեմ, հետազօտին մեր այս նոր "թնդանօթը" երկրորդ փորձանք դարձաւ և էլի իմ գլխին պայթեց: Այդ մասին իր տեղում:

Դժգոհ քաղաքացիները, ինչպէս պատմում էր Մարտիրոսը, ամբաձիզները մատի փաթաթան են չինում և յոխորտանքով խօսում, թէ ինչու կառավարութիւնն անմիջապէս գործի չի անցել, սայլեր, ձիեր և այլ գրաստներ ճամբել՝ գունդը փոխադրելու Շուշի: Մինչև ժողովը, քաղաքում նոյնիսկ պրովոկացիօն լուրեր էին չրջան առած եղել, թէ կառավարութիւնը չի ուղում, որ գունդը փոխադրւի Շուշի: Ճիշտ է, կառավարութեան նիստին անդամներից մէկ-երկու հոգի, նկատի ունենալով տաճկական ղօրամասի Հաքարու գետի մօտ հասնելու փաստը, ղէմ է արտայայտել գնդի փոխադրութեանը մի առ ժամանակ, մինչև որ նպաստաւոր դրութիւն ստեղծւէը և կարելի լինէր առանց աղմուկի, լուռ կերպով կատարել փոխադրութիւնը:

Պիտի խոստովանել, որ տաճկական ղօրամասի՝ Հաքարուի կողմը անցնելու հետևանքով, կառավարութիւնը հակւած չէր գնդի փոխադրութեանը և ցանկալի էր համարում յետաձգել փոխադրութիւնը, որովհետև բոլորի կարծիքն այն էր, որ տաճկական ղօրամասն ուղարկւել է գնդի ճամբան փակելու: Քաղաքացիների մէջ էլ կային սակաւաթիւ գիտակից, չրջահայեաց մարդիկ, որոնք ղէմ էին փոխադրութեանը, նոյն վախերն ունենալով: Սակայն գնդի փոխադրութեան կողմնակիցները իրենց ամենօրեայ դժգոհ արտայայտութիւններով, քննադատութիւններով և չարժուձևերով, օդն այնքան էին խտացրել, որ կառավարութիւնը, ի վերջոյ, տեղի է տալիս և որոչում՝ ձեռնարկել փոխադրութեան գործին:

Պիտի նչել մի հանգամանք, որ փոխադրութեան կողմնակիցների ճնչող մեծամասնութիւնը մեծապէս չահագրգռւած էր ոչ այնքան գնդի փոխադրութեամբ, որքան գնդի ռազմամթերքի: Երկու հարիւր հոգուց բաղկացած գունդը չէր, որ չօչափելի օգուտ պիտի բերէր, այլ նրա ռազմամթերքը, որից զուրկ էինք: Դրամական միջոցներ եթէ ունենայինք, հենց տեղում կարելի էր մէկից աւելի գնդեր պատրաստել: Եւ փոխադրութեան ղէմ եղողները վախենում էին դրկւել գնդի ռազմապաչարից ու չէին թաքցնում իրենց վախը. բաց կերպով արտայայտում էին և զգուչացնում, թէ կարող է այնպէս լինել, որ մեծ, անդարմանելի կորուստ ունենանք: Հետազօտին տեղի ունեցած դէպքերը ապացուցեցին, որ արդար էր նրանց դժգոհութիւնը: Եւ, իրօք, մեծ կորուստ ունեցանք:

Օգոստոս 12-ին Մարտիրոս Այվազեանի հետ գնացինք Ասկերան, կանչեցինք Ասկերանի երկու թևերի գիւղական կոմիտէների ներկայացուցիչներին ու խմբապետներին, որոնց հետ Մարտիրոսը խորհրդակցելով, որոշ կարգադրութիւններ արաւ՝ Ասկերանի պահակութիւնը կանոնաւոր չարունակելու:

Օգոստոս 14-ին սուրհանդակի միջոցով կառավարութիւնը Մարտիրոսին չտապ կանչում է քաղաք և մի գրութեամբ էլ առաջարկում է ինձ՝ կարգադրել գիւղական կոմիտէներին, որ սայլերով և բեռնատար ձիերով կենտրոնանան Բալլուջա և Խանածախ գիւղերում, որտեղից, առանց քաղաք մտնելու, Ղայբուլախ ձորով դուրս գան Պիւլլու թումբի (Կլոր թմբի) մօտ, այն հաշւով, որ 21-ի առաւօտեան միանան Վարանդայի և Դիզակի բեռնատար ձիաւորներին ու միասին գնան Դաչբուլաղ, այնտեղից Գօրիս:

Սուրհանդակը բերել էր պատրաստի նամակներ, որոնց մէջ գիւղերի անունները և սայլերի քանակը բաց էր ձգած. պէտք էր լրացնել դրանք և ապա ուղարկել գիւղական մարմիններին: Մարտիրոսը մնկնեց քաղաք, իսկ ես՝ Դաչբուլաղ, սպասելու Ալէքսան դայուն և միւս ընկերներին: Նոյն օրը Ջրաբերդից եկան ընկերները և պատմեցին, թէ սարովցիների փոխադրութիւնը տևեց վեց օր, ոչ մէկ միջադէպ տեղի չունեցաւ թուրքերի և մեր միջև: Բոլոր գիւղացիները, որոնք իրենց սայլերով եկել էին փոխադրութիւնը գլուխ բերելու. մեծ եռանդով աշխատեցին և կարծես մրցութիւն էր տեղի ունենում չատ և արագ աշխատելու մէջ: Եւ սարովցիները արմատապէս տեղահան եղան. ամէն ինչ, տների ղուռ-պատուհաններն էլ փոխադրեցին, իրենց չրջանակներով միասին, որպէսզի տներ կառուցելիս պատրաստի ունենային: Ժամանակաւոր կերպով պիտի տեղաւորէին Մարաղայում, Զայլիում, Մարտակերտում և միւս գիւղերում, ապա կամաց-կամաց իրենց տները չինէին որոչուած գիւղատեղում: Որոչուած ժամանակին 200 սայլ և 50 բեռնակիր ձիեր, 21-ի վաղ առաւօտեան, հասնում են որոչուած տեղը Մուսա Խաչատրեանի գլխաւորութեամբ: Ձիաւորների մէկ մասը Մուսայի խումբն էր, որ յաճախ ակտիւ աշխատանք էր տանում:

Սայլերը Բալլուջա և Խանածախ գիւղերից համբելուց յետոյ, Բալլուջայում Ալէքսան դայու մօտ էինք Դալի Մահրասան, Աղասին և ես, երբ Ասկերանից Պօղոսի գինուորներից մէկը եկաւ, տեղեկացրեց, որ Աղդամից Մուխտար անունով մէկը եկել և ուզում է մեզ հետ խօսել: Անմիջապէս համբայ եղանք դէպի Ասկերան: Մուխտարը յայտնեց, որ Աղդամի կոմխառ Քեազըմ Բէյն է ուղարկել իրեն, յայտնելու, որ անցեալ գիշեր Աւդալ-Գիւլափլուից եղներ են գողացել, և անասունների հետքը գտել են գիւղացիները և

հաստատել, որ դրանք տարել են հայերի կողմը. ուստի պահանջում է անասունները յետ առնել գողերից և ուղարկել Աղդամ՝ յանձնելու տէրերին:

Երբ Թուրքը լսում էր, Ալէքսան դային, Դալի Մահրասան և Աղասին բարկութիւնից գոյն էին նետում, գոյն առնում. որպէսզի չպոռթկային, կանխեցի, ասելով, որ ես կը պատասխանեմ: Թուրքին ասացի, որ յիշեցնէ Քեաղրմ Բէյին, թէ մի անգամ էլ ուղել է իշխանութիւն բանեցնել մեզ վրայ, Թուղթ էր գրել և մենք էլ պատասխանել ենք, որ իր իշխանութիւնը Ղարաբաղից այս կողմ չի անցնում, ուստի մենք չենք ճանաչում իրեն և չատ լաւ կանի եթէ միջամուխ չը լինի մեր ներքին գործերին: Ինչ կը վերաբերի գողացած անասուններին, մենք ինքներս առանց կողմնակի մարդկանց թելադրութեան, գտնում և վերադարձնում ենք տէրերին և գողերի հետ կապ ունեցող մարդկանց էլ պատժում: Քանի-քանի դէպքեր են պատահել, որ Թուրք գողեր անասուններ են գողացել Թուրքերից և իբրև իրենց պատկանող ապրանք ուղել են ծախել մեր գիւղացիներին, բայց գիւղացիները կասկածելով, չեն գնել, թէև գողերը նոյնիսկ առաջարկել են ապառիկ տալ ապրանքը: Քեաղրմ Բէյին չատ լաւ յայտնի է, որ գողերից ապրանք ընդունած հատ ու կէնտ գիւղացիներ խիստ պատժել են: Ինչ կը վերաբերի այս վերջին գողութեան, մենք կը հետաքրքրուենք ու եթէ սահմանից մեր կողմ անցած լինեն անասունները, կը գտնենք և կը հարկադրենք գողերին՝ վերադարձնել անասունները իրենց տէրերին:

Թուրքը գնաց, Ալէքսան դային դարձաւ մեզ ու ասաց՝ "Էդ չան տղի Քեաղրմ Բէյի համարձակութիւնը և պահանջ անելը ես վատ նչան եմ համարում: Օսմանցիները մուսաննաթ և աղէտ մարդիկ են. կամաց-կամաց ոտերն առաջ են դնում, որ մի օր մեր գլխին զարկեն: Նրանք մի զօրամաս ուղարկել են Հազարուի կողմը, պարզ է, Շուշու գնդի առաջը փակելու համար. ինչո՞վ ենք երաչխաւորւած, որ մի առիթ ստեղծելով, մեզ էլ ուրիշ զօրամաս չեն ուղարկի Ասկերանը բռնելու : Մենք, ինչպէս ժողովուրդը, պիտի միշտ վատը աչքի առաջ ունենանք, որ կարողանանք միջոց մտածել՝ լաւ արդիւնքի հասնելու":

– Մօտիկ ապագային, կարծում եմ, որոշ բաներ կը պարզուեն: Վաղը կերթամ քաղաք, այնտեղ մերոնք հայ-ընդրկական կոմիտէում Թուրք ներկայացուցչների չարժուձևից և ակնարկներից կարողանում են որոշ կռահումներ անել: Թուրքերը երբեմն էլ պարզ լսօսքեր են Թոցնում: Յամենայն դէպս, եթէ մի բան իմանամ, անմիջապէս կը գրեմ ձեզ:

– Դու նախ և առաջ չպիտի գնաս քաղաք. այնտեղ չատ մարդ ունենք և մարդու պէտք չկայ. բոլորը հաւաքւել են քաղաք, զաւառներում հատ ու կէնտ գործիչներ կան միայն, – առարկեց Ալէքսան դային, և Դալի Մահրասան ու Աղասին էլ միացան նրան:

Ճիչտը խոստովանած, քաղաքը չէր զրաւում ինձ և, իրօք, այնտեղ մէկից աւելի գործող ընկերներ ունէինք:

ԿՌԻԻՆԵՐ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Երրորդ օրը կառավարութիւնը տեղեկացրեց մեր սուրհանդակի միջոցով, որ Թիֆու ջրի կողմից հրացանաձգութեան ձայն է լսւում ու, թէև ղեռ ստոյգ տեղեկութիւն չունենք, պէտք է ամէն պարագայի զգոյշ լինել:

Մենք ենթաղրութիւնների մէջ ընկանք, բայց հաւանական էինք համարում, որ կռիւը Ղարաբաղի մօտ էր. երևի թուրքերը, ինչպէս ենթադրում էին կառավարութեան անդամները, փակել էին ճամբան: Ալէքսան դային յիշեցրեց, որ հայ-թրքական ընդհարումների տարիներին Ղարաղչլաղը պահակի դեր էր կատարում, և չնորհիւ Ղարաղչլաղի, հնարաւոր էր կապ ունենալ Գօրիսի հետ: Թուրքերը քանիցս յարձակւել էին՝ խորտակելու այդ ամրութիւնը, բայց անյաջող: Վերջին ամենաուժեղ թրքական յարձակման ժամանակ Խաչէնի մեր ուժերի մէկ մասը Մէյդանի կողմից հանեցինք, ուղարկեցինք Հաջի Սամլու, թուրքերի թիկունքը: Ղարաղչլաղի դիմաց գտնւող թրքական ուժերը անակնկալի են գալիս, որովհետև երբէք չէին սպասում, որ Խաչէնի կողմից կարող է յարձակում տեղի ունենալ, ուստի թրքական ուժերի մի խոչոր մասը փոխադրւում է երկրորդ ճակատը: Մեր կողմից դա սոսկ ցոյց էր՝ թշնամու ուժը չլատելու, մի բան, որ յաջողւեց մեզ: Ղարաղչլաղցիները օգտւելով աստւածատուր մառախուղից և լաւ վալաղ լինելով իրենց չրջանի ամէն քար ու քեոլին և դար ու փոսին, մի խումբ անց են կացնում թշնամու թիկունքը, որը նրանց չփոթութեան է մատնում: Թուրքերը բաւական մեծ թւով զոհեր տալով նահանջում են: Շատերը, տեղին անծանօթ լինելով, ժայռերից գլորւում են ցած, տեղնուտեղը մնում: Հիմա էլ նոյնը պիտի անել: Ալէքսան դայու պատմածը ճիչտ էր, և լաւ եմ յիշում: Առաւել ևս չատ լաւ էին յիշում Դալի Մահրասան ու Աղասին, որոնք Ալէքսան դայու հետ մասնակցել էին այդ դէպքերին: Ալէքսան դային ասում է, որ պէտք է կրկնել նոյնը: Որոչւում է անմիջապէս սուրհանդակի միջոցով տեղեկութիւն ստանալ, թէ Ղարաղչլաղի մօ՞տ է կռիւը. եթէ այո, անմիջապէս գործի անցնենք: Որոչւում է Ասկերանի երկու թևերի ուղղութեամբ սահմանամերձ գիւղերը թողնել աղատ, այդ գիւղերից մարդ չկանչել, նաեւ, համեմատաբար սահմանամերձ գիւղերից չկանչել. ձախափնեայ Խաչէնի Դամբաւ, Պտրեցիք, Խանձի, Խնձորեստան, Սէյդիչէն, Քոլատակ, աջափնեայ Խաչէնի Վանք, Մմակահող, Առաջաձոր, Հայաղ, Վաղուհաս և Ուշաջղ գիւղերից մարդկանց կանչել:

Սուրհանդակի միջոցով չորրորդ օրը տեղեկացնում ենք կառավարութեանը մեր ծրագրի մասին և հարցնում, թէ իրօ՞ք Ղարաղչլաղի հետ է կռիւը, որ անմիջապէս գործի անցնենք: Սուրհանդակը տեղեկութիւն է բերում, թէ կասկածից դուրս է, որ կռիւը Ղարաղչլաղի չուրջն է, իսկ Ալէքսան դայու ծրագրի վերաբերեալ դրական կամ բացասական կարծիք չի յայտնում: Կառավարութեան անդամներին բոլորին յայտնի է 1906 թ. Ղարաղչլաղի մեծ կռւին Խաչէնի կողմից կատարած ցոյցը և, քանի որ հակառակ կարծիք չկայ, համարելով լռութիւնը համաձայնութեան նշան, ամսու 26-ին համապատասխան գրութիւն ենք ուղարկում յիշեալ գիւղերը, ղինւած ուժեր ուղարկելու Պտրեցիք գիւղը, որտեղից պիտի խիստ դժւարին տեղերով վերելք կատարւի՝ բարձրանալու Խաչէնի լերկ լեռնաչղթան: Ըստ Ալէքսան դայու, Դալի Մահրասայի և Աղասու փոխադարձ համաձայնութեամբ պէտք է որոչւի, թէ որ գիւղը քանի հոգի պիտի ուղարկի:

Օգոստոս 29-ին հաւիւ հնարաւոր է լինում մարդկանց կենտրոնացնել Պտրեցիք գիւղում: Ըստ Ալէքսան դայու, քանի որ ղինւած ուժերի հետ են հայ-թրքական ընդհարումներում աչքի ընկած մեր ընկերներից խմբապետներ՝ Աթանէս Ղահրամանեանը և Յակոբ Քոչարեանը, ուստի Աղասին և Դալի Մահրասան կը մնան Ասկերանում և կուժեղացնեն պահակախումբը մօտակայ գիւղերի մարտիկներով:

Օգոստոս 30-ին, Պտրեցիք գիւղից վալադների առաջնորդութեամբ և խիստ դժւարութեամբ, 450 հոգի Ալէքսան դայու ղեկավարութեամբ բարձրանում են Մէյդան կոչւած սարահարթը և այնտեղից ուղղւում Հաջի Սամլու: Ես մնում եմ Ասկերանում, Դալի Մահրասայի և Աղասու հետ:

Օգոստոս 30-ին ղինւած ուժերը վաղ առաւօտեան ճամբայ են ընկնում, իսկ մօտ երկու ժամ անց քաղաքից մեկը գալիս է Պտրեցիք, փոքրիկ գրութեամբ, ուղղւած Ալէքսան դայուն, որ յետ կանգնի իւր ձեռնարկից, որի հետևանքով կարող է գրութիւնը բարդանալ: Բացի այդ, ինչպէս նախապէս Գօրիսից դնդապետ Մ. Շահնազարեանը տեղեկացրած էր եղել, նրբ սայլերը հասնեն Ղարաղչլաղ, այնտեղ սարերի դագաթներին մի քանի խարոյկ վառեն, նշան տալու համար, որ ղունդը Գօրիսի կողմից պատրաստ գտնւի որոչ տեղում, եթէ սայլաչարը վտանգւի, անմիջապէս գործի դրւեն թնդանօթները. գնդապետի այդ ապսպրանքի մասին զիտէինք արդէն, այդ մասին նա գրաւոր կերպով էր յայտնել. սակայն թէ ինչո՞ւ կարող էր գրութիւնը բարդանալ Ալէքսան դայու ձեռնարկի հետևանքով, միանգամայն անհասկանալի էր. Ալէքսան դայուն կարգադրած էր ոչ մի քայլ չառնել, հակառակ պարագային

պատասխանատուվթեան կենթարկուէր, ուստի, երբ վալադի օգնուվթեամբ քաղաքից եկած մարդը հասնում է և յիշեալ երկտողը աալիս Ալէքսան դայուն, վերջինս հակակարգապահական քայլ արած չլինելու համար, ենթարկւում է կարգադրուվթեան և, տառապալից վերելքից յետոյ, խիստ տխուր վերադառնում: Ուժերը ցրւում են իրենց գիւղերը, Ալէքսան դային էլ բարկացած, խռովածի պէս գնում է իր տուն: Իսկ մենք այդ բոլորի մասին տեղեկանում ենք դինւած ուժերի վերադարձի յաջորդ օրը:

Ով որ էլ լինէր Ալէքսան դայու փոխարէն, պիտի բարկանար, հետու քայլէր, քանի որ դրուվթիւնն արդէն բարդացած էր, նոր չպիտի բարդանար: Կարգադրուվթիւնը սխալ էր, ի հարկէ: Եւ պահավիժօրէն իրարու յաջորդող ծանր դէպքերը, որոնց հետևանքով տագնապալից դրուվթիւն ստեղծուեց, խիստ պայմաններ առաջարկեցին: Հետագային, երբ մի քիչ բնականոն վիճակ տիրեց, համագումարներում խստագոյնս քննադատուեց կառավարուվթիւնը նման սխալ կարգադրուվթիւն արած լինելու համար:

Բազէի ճակատից լուրեր, պարզ է, թուրքերն ունէին և նրանք էլ, երբ իրենց համար ուրախալի տեղեկուվթիւններ էին ստանում, չէին թաքցնում: Բազէի մեր ուժերը երբ հասել էին Քիւրդամիր, այդ մասին մեզ տեղեկացրել էին մեզ մօտ ապաստանած երկու թուրք եղբայրները՝ Նարիմանը և Մահմուդը, որոնք ընկնում են իրենց հակառակորդների ձեռքը և սպանւում օզոստոսի կէսերին: Իսկ Հիւսէյինը Աղդամի կամենդանտ Քեազըմ Բէյի կողմից խորամանկուվթեամբ սարքած թակարդի մէջ է ընկնում: Հիւսէյինի բարեկամներից մէկը Քեազըմ Բէյի սիրելին էր դարձած: Երբ Քեազըմ Բէյը տեղեկանում է, որ իրեն չողոքորթող մարդը Հիւսէյինի բարեկամն է, պարտադրում է նրան՝ համոզել Հիւսէյինին վերադառնալու: Վերջինս չի համոզւում, ուստի Քեազըմը գիտնալով, որ Հիւսէյինը մէկ-մէկ գիշերանց դաղտնի մնում է իր տանը, աննկատ խիստ հսկողուվթեան տակ առնելով տունը, կարողանում է նրան թակարդը գցել: Ըստ մէկ լուրի, նա պնդակահարւում է, իսկ ըստ մէկ ուրիշ լուրի, ինքնասպան է լինում:

Օգոստոսի երկրորդ կէսից թուրքերի դիմադարտայայտուվթիւնից երևում էր, որ տաճիկները յաջողուվթեան մէջ են: Եւ իւրաքանչիւր դարաբաղցի քաջ գիտակցում էր, թէ ինչպիսի մեծ դեր է կատարում Բազուն Ղարաբաղի հայուվթեան կեանքի փրկուվթեան համար: Քսան հազարից աւելի հրացանակիրներ ունեցող Ղարաբաղը, իւրաքանչիւր հրացանակիրի ունեցած 100–200 փամփուշտով ի՞նչ պիտի աներ, եթէ տաճկական զօրքը կանոնաւոր ռազմական գործողուվթիւն սկսէր: Հարկաւ, համաձայն ժողովրդի տրամադրուվթեան և համագումարների որոշման, պիտի դիմադրէր մինչև վերջին փամփուշտը կրակելով և, ի վերջոյ ջարդ ու փչուր

լինէր: Եւ տաճիկները պիտի հասնէին իրենց նպատակին, ոչնչացնելով նաև հայութեան արևելեան հատուածը: Ոչ թէ միայն Ղարաբաղի, այլ Կովկասի ամբողջ հայութիւնը փրկուեց նախ՝ չնորհիւ Բագւի ճակատի, որտեղ հայութիւնը ոգի ի բուին գիմադրելով տաճիկներին, գիւային հայաջինջ ծրագրի իրագործման ժամանակն էր յետաձգում և երկրորդ՝ չնորհիւ Սարրայլի բանակի, որ ճեղքելով Բալկանեան ճակատը, ծունկի բերեց տաճիկներին, որոնք չհամարձակուեցին չարունակել ցեղասպանութեան գործը:

Ղարաղչլաղը տասը օր հերոսական գիմադրութիւն է ցոյց տալիս: Երբ ռազմամթերքը սպառուում է, իւրաքանչիւր հրացանակիր հազիւ 15–20 փամփուշտ է ունենում, այդ պայմաններում չարունակել գիմադրութիւնը և վերջին փամփուշտը կրակելուց յետոյ եաթաղանի ղոհ գառնալ անմտութիւն էր, ուստի որոշում են գիւղը լքել և ուղղուել դէպի քաղաք: Դրսից օգնութեան ոչ մէկ յոյս չունէին կուող ուժերը: Սարերի զագաթներին որպէս աղդանչան վառուած խարոյկներին Գօրիսի կողմից չեն պատասխանում նման աղդանչանով: Կուողները տասն օրւայ կռիւների ընթացքին տալիս են 12 սպանուած և 20 վիրաւոր: Թուրքերի ղոհերը չատ աւելի են եղել: Զինուորականները ծրագրում են ինչպէս անել, որ կանայք, երեխաները և անղէն մարդիկ ապահով ճամբով առաջ գնան, բաւական հեռու ճակատից, որպէսզի անտեղի ղոհեր չտան: Եւ այդ տագնապալի օրը դարձեալ Ղարաբաղի փրկարար թնանձր մառախուղը օգնութեան է հասնում: Ժողովուրդի ասելով՝ նախախնամութեան մատը խառն էր:

Կարգադրւում է անմիջապէս գիւղացիների չարժական տնային ունեցուածքը բարձել թէ գիւղի և թէ գրսից եկած սայլերին ու գրաստներին, մնացած հօտը քշել գիւղից դուրս և լուռ հեռանալ, առանց աղմուկի: Մառախուղը գրեթէ երկու օր, սեպտեմբեր 3–4-ը պահպանում էր ժողովրդին, որը կարողանում էր աննկատ և լուռ թողնել գիւղը, փոխադրուել քաղաք: Երբ գաղթի ծայրը հասնում է քաղաքին, գաղթականական յանձնախումբը գործի է անցնում անմիջապէս, ժողովրդին տեղաւորելու թէ քաղաքում և թէ մօտակայ գիւղերում:

Բոլորի հայեացքը ուղղուել էր ինձ, ճանաչում էին որպէս կառավարութեան անդամի: Ի՞նչ ասէի, մարդիկ իրաւացի էին, պէտք եղած նախազգուչական միջոցները ձեռք չէին առնուած:

– Ժողովուրդ, ասացի, Կառավարութիւնը ձեր թշնամին չէր խօ. ի հարկէ, եթէ կառավարութիւնը իմանար, թէ վերջը այսպէս պիտի լինէր, իղուր տեղը ժողովրդին մահուան գիրկը չէր նետի:

– Տղերք, բարձր ձայնով միջամտեց Դալի Մահրասան, դուք ասացիք, այո, Աստուած է փրկել ժողովրդին ու ձեղ: Աստուած է

միայն, որ չի սխալւում. բոլոր մարդիկս սխալած ենք և չատ անգամ ենք սխալւում: Փառք տւէք Աստծուն, Թող փառքը չատ լինի:

– Հալրաթ (ի Հարկէ), Տէր Հայր, Փառք Աստծոյ, ծառայ ենք Նրա ղօրութեանը:

– Աստւած ձեղ հետ, –ասաց Տէր Հայրը, և չարունակեցինք մեր ճամբան ծանր խոհերով:

Ճամբին, Կրկժան և Ղայրալու գիւղերի միջև հանդիպեցինք Ղարաղէլաղից վերադարձող սայլաչարին, որ սրընթաց ցած էր գալիս: Սայլապանները, որ նկատեցին մեղ՝ կանգ առան և, կարծես նախապատրաստւած, միաբերան սկսեցին դատափետել մեղ, "Այս ի՞նչ փորձանք էր, որ մեր գլխին բերեցիք: Մեղ ասացին, որ Շօչւայ պօլկի (գնդի) պալկովնիկը (գնդապետը) իրա թօփերով/թնդանօթներով/ պիտի ղար օգնելու, ո՞րտեղ մնաց նրա օգնութիւնը: Ամեն օր, ինչպես ասել էին, կրակ էինք անում սարերի գլխին, որ պօլկն էլ կրակով պատասխան տար, բայց պատասխան չտւին: Էդ ի՞նչ տեսակ մարդ ա պալկովնիկը, որ իրա խօսքը չի կատարում: Աստւած ժողովրդին և մեղ ազատեց հաստատ մահից: Քչաթոխպը (մառախուղը) եկաւ, պատեց սար ու ձոր, ու կարողացանք թշնամու ձեռքից ազատւել. եթէ քչաթոխպը չլինէր, մի մարդ էլա չպիտի պրծնէր: Ախըր, մի բան, որ հաստատ չի, խի՞ էք անում, հը՞":

Սեպտեմբեր 4-ին, մառախուղի մէջ, գիւղը թողնելով հազարաւոր թրքական ամբոխին, ժողովուրդը չարժական ինչ որ հնարաւոր էր վերցնում է իր հետ, իսկ չատ բան լեցնում հացահատիկների հորերի մէջ և որոչ բաներ էլ թաղում ու չտապում ղեպի քաղաք:

Ղարաղէլաղի անկումից յետոյ, թուրքերի տրամադրութիւնը չատ բարձր էր երևում. պարզւում է, որ սեպտեմբեր 3-ին Բագուն ընկել էր, և իրենք՝ թուրքերը իբրև ուրախալի լուր հաղորդում են: Այդ լուրը սարսափ է առաջացնում քաղաքում, թէև չատերը չէին հաւատում, աւելի ճիչտ՝ չէին ուղում հաւատալ ու բացատրում էին, թէ թուրքերը դիտմամբ են տարածել լուրը, հայերի մէջ յուսալքում առաջացնելու նպատակով, սակայն չատ չուտով, ինչպես կը տեսնենք, հաստատւում է ահաւոր ճչմարտութիւնը:

ԹՈՒՐՔԵՐԻ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ

Սեպտեմբեր 4-ին Ղարաբաղի կոմենդանտի պաչտօն վարող դնդապետ Իսմայիլ Հակկի բէյը Շամիր բէկ Փիրումեանի միջոցով գրաւոր վերջնագիր է ուղարկում Ղարաբաղի Ժողովրդական Կառավարութեանը՝ զէնքերը վար դնելու և ճանաչելու Ադրբէջանի իշխանութիւնը: Մինչև սեպտեմբերի կէսերը Ասկերանի շրջանի

այգիներում, որոնք գտնում են դաշտային մասում, Կառվառ գետի երկու ափերի երկարութեամբ, գիւղացիները աշխատում էին: Գլխաւորապէս օղի քաշողներ: Շամիր բէկն էլ օղի քաշող էր, և նրան Աղդամի ու մօտակայ գիւղերը շատ լաւ ճանաչում էին, տարիներ շարունակ, հայերից փախստական, ապրած լինելով նրանց մէջ, ուստի երբ Իսմայիլ Հակկի բէկը, ինչպէս հետագային պարզուեց, գրաւոր վերջնագիրը Շուշի տանելու համար յանձնում է թուրքերից մէկին, վերջինս, վախենալով, որ ճամբին կարող է սպանուել, թուղթը բերում է, այդում աշխատող Շամիր բէկին յանձնում, որ տեղ հասցնէ: Շամիր բէկը, խորամանկ մէկը լինելով, Ասկերանից չի անցնում, այլ աւելի հեռու տեղով, ապա դուրս է գալիս ու խճուղիով շարունակում ճամբան: Երբ հասնում է քաղաք և գրութիւնը ներկայացնում կառավարութեանը, հէնց տեղն ու տեղը ձերբակալւում, բանտարկւում է, որպէսզի լուրը չտարածւի քաղաքում, սակայն տարածւում է: Բանտը անունով բանտ էր, կառավարութեան չէնքի գետնայարկի սենեակներից մէկը, որ մառանի տեղ էր գործածւում: Սենեակի դուռը դրսից փականքով փակում են, սակայն խիստ հսկողութիւն չի նշանակւում, ենթադրելով, որ բանտարկութիւնը ժամանակաւոր է, ինչպէս իր մօտ լսօսւել է այդ մասին, սակայն Շամիր բէկը կասկածելով, որ իր հին մեղքերի համար կարող են պատժել, որոշում է փախչել և փախչում է: Բանտի դուռը դիւրաբեկ փայտից չինւած լինելով, ոչ մի դժւարութիւն չունէր կոտրելու:

Սեպտեմբեր 6-ին Ղարաղչլաղի անկման տխուր լուրը առնելով, Դալի Մահրասային և Աղասուն թողնում եմ Ասկերանում, հերթապահ պահակութեան եկած Մովսէս Մովսիսեանի և իր համագիւղացի երեք երիտասարդների հետ գնում Շուշի: Լուրը սոսկալի ծանր էր ու ճնշող:

"Դժբախտ ժողովուրդ ենք", ասում է Մովսէսը, "փորձանքը, աղէտը անպակաս է մեր գլխից: Մեր ամենամեծ դժբախտութիւնը այն է, որ Աստւած մեզ տաճիկի, թուրքի պէս մի խաւար ժողովրդի հարևան է դարձրել: Այո, սիրելիս, տաճիկը հինգ հարիւր տարուց աւելի նստած է քաղաքակիրթ Եւրոպայի կրծքին և ի՞նչ է տւել մարդկութեան, ոչինչ: Բիւզանդիան, որ ժամանակի ամենափարթամ, ղարգացած կենտրոնն էր աշխարհի, զրաւեցին, բայց տիրող քաղաքակրթութիւնից բնաւ չազդեցին: Վայրենաբարոյ, արիւնոտչտ ժողովուրդ էր, նոյնն էլ մնացել է մինչև այսօր, ամենաղոյղն չափով չի քաղաքակրթւել և իրականում թշնամի է քաղաքակրթութեանը, ուստի քաղաքակրթուղ, ղարգացող ազգերին կոտորելու մէջ է գտնում իւր ապահովութիւնը":

Աղէտը տեղի ունենալուց յետոյ, մեր այս ու նման արտայայտութիւնները այրւած սրտի սփոփանք է, ինչպէս

ժողովրդական ասացուածքն է ասում, ուրիշ ոչինչ: Ճամբան թէ ի՞նչպէս կտրեցինք, չղզացինք ու չնկատեցինք. այնքան էինք տարուած ծանր մտքերով, որ երբ հասանք վերին հանգստարանի տակ, որոշել էինք քաղաքի ներքևի մասի թուրքաց թաղի մօտով չմտնել քաղաք. յոգնած, քրտինք կտրած, ձիերով բարձրանալիս, մէկ էլ ահագին թուով կանայք, երևիանները, բաւական թուով տղամարդիկ՝ ղարաղչլաղցիները, մեր դէմ եկան, իջնում էին քաղաքից՝ զաղթականական յանձնախմբի կարգադրութեամբ, Խոջալուի ղարաղչլաղցիների մօտ, թրքական լքուած ղատարկ տներում տեղաւորելու: Հէնց որ տեսան Մովսէսին, բոլորը միասին յանկարծակի փղձկացին, լաց եղան և գանգատուեցին. "Մովսէս, քեզ մատաղ, այսպէ՞ս պիտի լինէր մեր վերջը, այս ի՞նչ ղուլում է":

Տեսարանը սրտաչարժ էր ու տխուր. Մովսէսը, որ բաղմիցս աչքերը բաց դէպի մահաւորէ վտանգներ էր ընթացել, երևոյթի պէս հեկեկում էր:
"Մեր ժողովրդի չար բախտից է", արցունքը սրբելով ասում է Մովսէսը: "Սիրելիներս, մէկ ամիս առաջ ձեր աչքի առաջ տաճկահայ զաղթականները Գօրիսից եկան այս կողմը: Զուլումը եկել, պատել է մեր երկիրը:"

Ժողովուրդը երիտասարդներից մէկի առաջնորդութեամբ ուղղուեց դէպի Խոջալու, իսկ մենք, չարունակելով ճամբան, հասանք քաղաք: Փողոցում եղող մարդկանց տխուր և ընկճուած դէմքերից պարզ նկատելի էր, թէ քաղաքի բնակչութիւնը որքան աղուած է տեղի ունեցած աղէտից:

ՂԱՐԱԲԱՂԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Երևկոյեան տեղի ունեցաւ կառավարութեան նիստը, որին հրաւիրուած էին ներկայացուցիչներ, բոլոր հոսանքներից երկուական հոգի: Օրակարգի խնդիրը տաճկական կոմենդանտին տրուելիք պատասխանն էր, որի համար չատ կարճ ժամանակ էր տրուած, հինգ օր: Խառն ժողովը, որին մասնակցում էին Դալի Մահրասան, Մովսէսը, Վարանդայից դիպուածաբար քաղաքում գտնուող Գևորսիմ Խաչատրեանը և Համբարձում Ալէքսանեանը, Դիլղակից՝ Արմենակ Տ. Բաղդասարեանը, Թևան Ղազարեանը, Ջրաբերդից՝ Շահնազար Գասպարեան: Մտքերի փոխանակութիւն ունենալով, որոշուեց՝ քանի որ խիստ ծանր ու պատասխանատու խնդրի առջև ենք կանգնած և խնդիրը վերաբերում է ամբողջ Ղարաբաղի հայութեանը, ուստի խնդրի լուծումը պիտի տան ժողովրդի ներկայացուցիչները և պէտք է անմիջապէս ներկայացուցիչներ հրաւիրել բոլոր գիւղական հաստատութիւններից, երեքական հոգի իւրաքանչիւրից: Բիւրօն առաջարկում է, որ համագումարը տեղի

ունենայ Խանքենդում, որ քաղաքի ճնշող մեծամասնությունից աղատ լինեն մարդիկ և բացի այդ, այնտեղ ներկայացուցիչների գալ- գնալը աննկատ կը մնայ թուրքերից: Վերջիններս մեր չարժուձևերից չեղրակացնեն, թէ ահարեկած վիճակ է տիրում մեղանում: Որոշում է, որ առաւօտեան չատ վաղ, դեռ լոյսը չբացուած, գաւառներից ներկայ գտնուող ընկերները վերադառնան չրջանները և գիւղական հասարակութեանց գործադիր կոմիտէների միջից, ըստ հնարաւորին չուտ, ուղարկեն իրենց ներկայացուցիչներին Խանքէնդ: Եւ ընկերները, նկատի ունենալով, թէ ինչպիսի ծանրակչիռ հարցի լուծման առաջ է կանգնած ժողովուրդն ու կառավարութիւնը, արագօրէն ու բարեխղճութեամբ կատարեցին իրենց վրայ դրուած պարտականութիւնը: Սեպտեմբեր 7-ին բոլոր գիւղական հասարակութիւններից ընտրուած էին պատգամաւորները, որոնք չտապում են Ժողովի, Գիւլիստանի, Ջրաբերդի և Խաչէնի պատգամաւորները Խանքենդի, իսկ Վարանդայի և Դիզակի պատգամաւորները, թիւրիմացաբար, Շուչի: Երբ վերջինները հասնում են, Կառավարութիւնը հապճեպ նիստ ունենալով որոշում է անմիջապէս յատուկ մէկին զրութեամբ ուղարկել Խանքենդ, որ չմնան այնտեղ, գան քաղաք: Այդպէս աւելի յարմար էր, քան քաղաքից մեծ խմբով իջնելը, որ արդէն պիտի նկատելի լինէր, հետաքրքրութիւն առաջացնէր. մի բան, որից ցանկալի էր համարւում խուսափել:

Սեպտեմբերի 8-ին բոլոր գիւղական հասարակութիւններից ընտրուած երեքական ներկայացուցիչները Շուչում են, ընդամէնը 22 գիւղական հասարակութիւն՝ 66 հոգի. քաղաքից 10, կառավարութեան որոշմամբ Զանգեզուրից յուլիս ամսին եկած տաճկահայաստացիներից 3, ղարադլաղցիներից 3, կուսակցութիւններից երկուական հոգի՝ 10: Ընդհանուր թիւով՝ 92 հոգի. այս թիւի վրայ աւելանում են կառավարութեան անդամներ 9 հոգի, ընդհանուր թիւը բարձրացնելով 101 հոգու:

Դեռ համագումարը չբացուած, քաղաքի ընկերներից երկու հոգի՝ Հայկազ Վարդապետեանը, և Արել Համբարձումեանը, հևիհև եկան կառավարութեան չէնքը և յայտնեցին, որ քաղաքում խիստ լարուած զրութիւն է տիրում, անպատասխանատու և տհաս մարդիկ զրգռումներ են անում մանաւանդ Ղարադլաղցիների մէջ, յարձակելու թրքաց թաղի վրայ, աւերելու, կոտորելու և թալանելու մեր ունեցած վնասի փոխարէն ու այդպիսով վրէժ լուծելու: Եւ յայտնեցին, որ Գանձակի չրջանի գիւղացիներից մէկը, Եապօն Ալէքսան[76] անունով, իրա մի քանի ընկերներով, ղարադլաղցիներին

[76] Մենք ունեցել ենք առաջնակարգ ահաբեկիչ Սաքօ Եապօն, Համբարձում Սարգսեան, Հետագային՝ մեկ ուրիշ ահաբեկիչ Եապօեայի Յովհաննէս (Յովհաննէս Պարոնեան), երկուսն էլ գօրխոցի, երկուսն էլ կարճահասակ, դէմքով եապօնացու նմանող, մանաւանդ Սաքօն: Հնչակեանները, մեղնից յետ չմնալու համար, կրկժան գիւղացի

հաւաքել է Կուսանաց վանքի բակը՝ միտինգի, և զրգռիչ ճառեր են ասում:

Դեռ մէկ ժամ յետոյ պիտի կատարէր համագումարի բացումը, Կուսանաց Վանքը մօտ լինելով, Հայրապետ Մուսայէլեանը, Աչոտ Մ. Յովսէփեանը և ես չտապեցինք այնտեղ ու հասանք այն մոմենտին երբ եպսկ Ալէքսանը փրփուրը բերնին տակից-գլխից դուրս էր տալիս, թէ՝ "Թուրքերը ինչ վատ են, պէտք է ուռայ կանչելով յանկարծ յարձակւենք, զարը (համազարկ) տանք, կրակը դնենք մի քանի տեղից, պիտի Թողնեն, փախչեն առանց յետ նայելու. Էստեղի կառավարիչները վախկոտ մարդիկ են, Ղարաղչլաղը ձեռքից տվին և հիմա էլ քաղաքը պիտի տան":

Վանքի բակում գրեթէ բոլորը ղարաղչլաղցիներ էին, երկու հարիւր հոգուց աւելի տղամարդիկ և տասի չափ կանայք, որոնցից մի քանիսը կռիւներին իրենց տղամարդկանց հետ դիրքերում բաղմիցս կռւել են Թուրքերի դէմ: Բարեբախտաբար այնտեղ էին գիւղի գործադիր մարմինը, որ միաժամանակ մեր կուսակցական կոմիտէն էր, որ Բերդաձորի կոմիտէ անունն էր կրում: Այնտեղ էին աչքի ընկած իրենց քաջութեամբ և մեր միւս ընկերները: Մեզ նկատելով, առաջինը ընկերներից եղիչէ Աբրահամեանը նչան արաւ Հոետոր Եպսկոպոսին, և վերջինս լռեց:

– Հետաքրքիր է իմանալ, ասաց Հայրապետը, ինչո՞ւ էք հաւաքւել այստեղ և ի՞նչ էք ուղում ասել:

– Հաւաքւած մեղ ու մեղ խօսում ենք, – պատասխանում է Եպսկոպոսը :

–Դուք գիտէք, որ Ղարաբաղի բոլոր գիւղական հասարակութիւնները ներկայացուցիչներ են եկել, և այսօրւանից սկսում է Ղարաբաղի երկրորդ մեծ ժողովը, համագումարը: Գիտէք, որ տաճիկները ծանր պահանջներ են անում, և բոլոր գիւղական հասարակութիւններից եկած մարդիկ կանգնած են դժւար լուծելի հարցի առաջ. պիտի լուրջ, լաւ մտածենն և ապա վճիռ կայացնեն: Եւ Ղարաբաղի ժողովրդի կամքը, ցանկութիւնը յայտնողը մեծ ժողովը, համագումարն է, ուրիշ ոչ ոք: Այսպիսի մասնաւոր ժողովները ոչ մի իրաւունք չունեն. այսպիսի ժողովները միմիայն կը խանգարեն համագումարին՝ խաղաղ կերպով աշխատելու և միջոց գտնելու, դժւար դրութիւնից դուրս գալու:

– Մենք չենք խանգարում,– վրայ է բերում Եպսկոպոսը, – էնտեղ հաւաքւածները իրենց համար են խօսում. թող խօսեն. մենք էլ մեղ համար ենք խօսում: Եպսկոպոսը խօսելուց այնպիսի կեցւածք էր

մէկ կաթոլիկ վանք ունէին Միլոպ անունով, նրան անւանում էին Եպսկոպոսայի: Ղորդորդը այս Ալէքսանն է Եպսկոպ կոչւել. թէև կաթոլիկ, բայց եպսկոպոսաց ոչ մէկ նմանութիւն: (Հեղ.)

ընդունել, կարծես չատ կարևոր դեր ստանձնած մէկը լինէր: Եապօնը և իր մի քանի ընկերները, Ղարաղչլաղի կուից առաջ, կարողացել էին զինչերը Թուրքերից աննկատ Հազարու գետից անցնել և առանց կանգ առնելու հասնել Շուշի: Եւ քանի որ Նուրի Փաչան Գանձակ էր գտնւում, բաւական հեռու, որոշում են մի առ ժամանակ մնալ Շուշում, աւելի ապահով համարելով: Միաժամանակ լուրեր էին պատում, որ Եապօնն ու ընկերները ճակատը լքած զինուորներ են չատերի պէս: Նրա ընդունած դիրքն ու խօսելու ձևը անհանդուրժելի էր, ուստի դարձայ հաւաքւածներին:

– Ընկերներ, դուք և մենք իրարու լա՞ւ ենք ճանաչում, թէ՞ ոչ:

– Ի հարկէ լաւ ենք ճանաչում,– պատասխանեցին տասնեակ ձայներ:

– Դո՞ւք էք մեզ լաւ ճանաչում, թէ՞ Ալէքսանն ու իր ընկերները:

– Ի հարկէ, մենք, նրանք նոր եկած դռնաղ (հիւր) մարդիկ են, –դարձեալ պատասխանեցին տասնեակ ձայներ:

– Պատերազմի սկզբից ո՞վ է եղել մեր գլխաւոր թշնամին, որ մինչև այսօր էլ մեզնից ձեռք չի քաշում:

– Օսմանլուն, Օսմանլուն, պատասխանում են չատերը:

– Այո, ճիչտ էք ասում, Օսմանլուն, տաճիկն է, որ հինգ հարիւր տարի մեր արիւնն է թափում: Գիտէք, որ տաճիկները Տաճկահայաստանում մեր ամբողջ ժողովրդին կոտորել են, և կոտորելու հերթը մեզ է հասել: Եապօն Ալէքսանն ու ընկերները, եթէ իրենց քաջ և անվախ են համարում, ինչո՞ւ են թողել ճակատը. ինչո՞ւ թշնամու առաջը չեն կտրել, թողել, եկել են այստեղ և քարող են տալիս ձեզ՝ յարձակւել քաղաքի թուրքերի վրայ և ուռայ կանչելով, զարը տալով բոլորին ոչնչացնել: Թուրքերը ձեռքերը ծալած պիտի նստեն, չղիմադրեն, որ մենք իրենց սրի քաշե՞նք: Ինչպէս մեղանում կասեն, թշնամու հրացանների մէջ մածուն է մերած, անչարժ պիտի մնա՞յ: Ինչպէս ընկեր Հայրապետը բացատրեց, Ղարաբաղի ժողովրդի անունից կարող են խօսել և վճիռ կայացնել ժողովրդի ներկայացուցիչները, որոնք արդէն հաւաքւել են, և այսօր պիտի սկսւի մեծ ժողովը, համագումարը, ինչպէս յայտնեց ընկ. Հայրապետը, ձեր ներկայացուցիչներն էլ, որ ընտրւած և պատրաստ են, պիտի մասնակցեն, իսկ այս ժողովը ոչ մի իրաւունք չունի որևէ քայլ անելու: Ովքեր փորձ անեն հակառակ մի քայլ անել, պիտի խստիւ պատժւեն, թող բոլորը լաւ իմանան, որ դաշնակցութիւնը կառավարութեան հետ է և Կ.Կ-ն էլ որոշում ունի՝ խստիւ պատժելու բոլոր այն մարդկանց, ովքեր կը համարձակւեն ինքնագլուխ մի քայլ անել: Այդ մասին յայտարարում եմ Կ. Կ-ի անունից, որ նկատի ունենաք միչտ:

- Մենք էլ ենք դաշնակցական, պարոն, – ասում է Եապօնը, խօսելու տօնը փոխած, զգուչացած մարդու տօնով:

– Եթէ դաշնակցական էք, առաւել ևս պարտաւոր էք կարգապահ լինել, որպէսզի աւելի խիստ չպատժէք, –ասացի:

– Դէհ, վերջացաւ, – վրայ բերեց բարձր ձայնով Ասատուրը, որ կանգնած էր առաջին շարքում, իր յաղթական հասակով, – հիմա ցրւենք, ամէն մարդ գնայ իր տունը:

Հաւաքոյթը սկսեց ցրւել. մենք էլ ղարաղշլաղցիների ներկայացուցիչների, Եղիչէի, Ասատուրի և Սահակի հետ գնացինք ժողովի, համագումարի, որ տեղի ունեցաւ Ռէալական դպրոցի չէնքում, որը մեկուսի չինւած էր դասայդու մօտ: Լրիւ կերպով եկել էին բոլոր հասարակութիւնների ներկայացուցիչները: Համագումարի նպատակը երկու խօսքով յայտնելով, առաջարկեցի ընտրել դիւանը: Ընտրութիւնները տեղի ունեցան բաց քւէարկութեամբ, գրեթէ միաձայն: Որպէս նախագահ ընտրուեց Գր. Ղարագեօղեան, դաշնակցական, փոխ- նախագահներ՝ Ս. Վարդապետեան, ս. դ. մենչևիկ, Աս. Աւետիսեան, դաշնակցական, քարտուղարներ՝ Թէոդորոս Տ. Յովհաննիսեան, մենչևիկ, Արշակ Ասատուրեան, դաշնակցական:

Համագումարի օրակարգի խնդիրները՝ տաճիկ կոմիտէական պահանջը՝

ա) ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը,

բ) հնթարկւելով իշխանութեան, վար դնել ու յանձնել զէնքերը,

գ) զեկուցում կառավարութեան և անւանափոխութիւն:

Ընթերցւում է Իսմայիլ Հակկի բէյի գրաւոր պահանջը՝ առանց այլևայլութեան ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը, յանձնել զէնքերը, դիմադրութիւն ցոյց չտալ զօրքին, թողնել աղատ մուտք զործելու Շուշի: Պահանջագրում Իսմայիլ Հակկի բէյը չէր ղլացել մի քանի անուշ խօսքեր էլ ասել մէկ յուսով է, որ հայ ժողովուրդը, որպէս դրացի բարի ժողովուրդ, կը չարունակէ խաղաղ ապրել դրացի աղրբէջանցիների հետ:

Ժողովը մտքերի փոխանակութիւն ունեցաւ, և բոլոր պատգամաւորները նոյն միտքը արտայայտեցին, որ խիստ դժւարին կացութիւն է ստեղծւած, մանաւանդ, եթէ իրօք Բագուն ընկել է, պարզ է, վտանգւած է Ղարաբաղի հայկական կեանքը: Զէնքը վար դնել, հնթարկւել, նշանակում է ոչխարի պէս վիզը սրի տակ դնել: Եւ բաւական խօսելուց յետոյ, մերժւում է տաճկական պահանջը և որոշւում է յայտնել Իսմայիլ Հակկի բէյին, որ Ղարաբաղի հայերն ու թուրքերը դարեր չարունակ միասին խաղաղ ապրել են մինչև այժմ և նոյն ձևով էլ չարունակում են իրենց կեանքը ներկայիս: Հայերն ու թուրքերը հաւասար թւով ներկայացուցիչներից կազմած ունեն մի

կոմիտէ, որը կառավարում է ժողովրդին լաւագոյն կերպով, և մեր Թուրք եղբայրները կը վկայեն, որ մինչև այժմ որևէ թշնամական քայլ չէ կատարուած որևէ մէկի կողմից, և ոչ մի Թիւրիմացութիւն տեղի չէ ունեցած:

Եւ քանի որ տեղեկութիւն ունենք, որ անդրկովկասեան ժողովուրդների վիճակը տնօրինելու նպատակով Պոլսում կոնֆերանս է տեղի ունենում և մեր չքջանի վերաբերեալ Պոլսի կոնֆերանսը պիտի որոշում կայացնի, մենք պիտի սպասենք այդ որոշման և մինչև կոնֆերանսի որոշումը պիտի պահպանւի ներկայ վիճակը: Պարզ է, որ մեր չքջանը առանց այլևայլութեան պիտի ենթարկւի Պոլսի որոշման: Կառավարութիւնը պատրաստի գրաւոր դեկուցում չունէր, ուստի բանաւոր կերպով ես յուլիս 26-ից ի վեր կառավարութեան ունեցած մէկուկէս ամսւայ գործունէութեան մասին դեկուցեցի: Մէկուկէս ամսւայ ընթացքին երկու յիշատակելի ձեռնարկ է տեղի ունեցել՝ Սարով գիւղի յաջող փոխադրութիւնը և Շուչու գնդի փոխադրութեան ձախողանքը՝ որի հետևանքով էլ տեղի է ունենում Ղարաղէլաղի կործանումը: Որպէս յաջող գործ յիշւում է նաև յուլիս վերջերին Գօրիսից Շուչի անցնելու ժամանակ տաճկահայ գաղթականների վտանգելը և քաղաքի մեր վաչտի օգնութեան գնալն ու նրանց աղատելը:

Սարովի փոխադրութեան և տաճկահայ գաղթականների օգնութեան հասնելու մասին համագումարը գնահատեց ըստ արժանւոյն: Ղարաղէլաղի կործանման չուրջ խիստ դժգոհութիւն արտայայտեցին պատգամաւորները, դատափետելով կառավարութեանը, որ կանխաւ լաւ չուսումնասիրած և առանց հեռուն նայելու, ձեռնարկել է գործի, որը, բնականաբար, պիտի ձախողէր: Բուռն վէճ է առաջանում կառավարութեան անդամների և մասնաւորպէս Արա Յովհաննիսեանի ու համագումարի որոշ անդամների միջև:

Արա Յովհաննիսեանը ոգի ի բուին պաշտպանում է կառավարութեանը, Թէ վերջինս կանխաւ որոշում է ունեցել՝ գունդը փոխադրելու համար մարդիկ ուղարկել Գօրիս: Կառավարութիւնը այն կարծիքին է եղած և վստահ, որ գունդը ինչ ձևով հասել է Զանգեղուր, նոյն ձևով էլ կը չարունակէր իր ճամբան մինչև Շուչի: Խնդիրը հիմնովին փոխւում է տաճկահայ գաղթականների հետ մի քանի հոգի չուշեցիների գալուց յետոյ: Եկող չուշեցի սպաներից մէկը՝ Գրիգոր Ասրեանի միջոցով գնդապետ Միքայէլ Մելիք Շահնազարեանը առաջարկում է սայլեր ու գրաստներ ուղարկել Գօրիս, գնդի ունեցւածքը և ռազմամթերքը փոխադրելու: Եւ նամակի մէջ պարզ դրւած է, որ սայլերն ու ձիերը Ղարաղէլաղ հասնելուց զիչերը սարերի գլխին մի քանի տեղ խարոյկ վառեն և իրենք էլ որպէս պատասխան, էն կողմից խարոյկներ կը վառեն,

որով հասկանալի կը լինի, որ գունդը իր կողմից միջոցներ պիտի ձեռք առնի, որպէսզի, եթէ հայ թրքական սահմանից անցնելիս թուրքերը թշնամական գործողութեան փորձ անեն, անմիջապէս փութան օգնութեան, և փոխադրութեան գնացող մարդիկ ապահով տեղ հասնեն: Մենք վստահ մեզ ուղղուած գրութեան, սայլեր, գրաստներ ճամփեցինք, և մեր մարդիկ, համաձայն կարգադրութեան, սարերի գլխին վառել են ամէն գիշեր խարոյկները, բայց պատասխան չեն ստացել: Եւ գունդը ոչ մի կերպ չի արձագանքել:

Ապա, Խաչէնի պատգամաւորները բուռն կերպով բողոքեցին այն կարգադրութեան դէմ, որով արգիլել է Ալէքսան դայուն՝ յարձակում գործելու Մէյդանի կողմից Հաջի Սամլուի վրայ, թշնամու ուժը չլատելու, թուլացնելու նպատակով: Կառավարութեան տուեց բացատրութիւն, թէ քանի որ սպասում էր Շուշու զնդի յառաջխաղացումը էն կողմից, ուստի, բարդութիւնից խոյս տալու համար է կարգադրել, որ Ալէքսան դային յետ կանգնի: Սակայն պատգամաւորները տրւած բացատրութիւնից գոհ չմնացին:

Համագումարը ճիչտ գտաւ, թուրքերի հետ խաղաղ ապրելու համար, Բիւրոյի սկսած աշխատանքի չարունակութիւնը հայ-թրքական կոմիտէի մէջ և քանի որ դրութիւնը աւելի է լրջացել, պէտք է ջանալ աւելի ևս սերտ յարաբերութիւն պահպանել, ամէն կերպ խոյս տալով թիւրիմացութեանց տեղի տւող առիթներից, և որքան երկար տևի խաղաղութիւնը, այնքան աւելի օգտւած կը լինենք:

Համագումարը, լսելով զինուորական կոմիսարի զեկուցումը ինքնապաշտպանութեան նպատակով կատարւած աշխատանքների մասին, որոշեց, որ կառավարութիւնը էլ աւելի զարկ տայ գործին:

Կառավարութիւնը, օրակարգի խնդիրների քննութեանց աւարտին, իր հրաժարականն է ներկայացնում, որպէսզի նոր ընտրութիւն կատարւի, սակայն համագումարը չի ընդունում հրաժարականը: Ինչպէս երևաց, պատգամաւորները կանխաւ խորհրդակցութիւն ունեցել էին, որ միաձայնութեամբ ու չատ կտրուկ կերպով չընդունեցին կառավարութեան հրաժարականը: Ապա մի խումբ պատգամաւորների կողմից առաջարկ եղաւ լրացուցիչ ընտրութիւն կատարելու, հինգ հոգի ևս ընտրելով, և կառավարութեան անունը փոխելու: Առաջարկւեց ընտրւած կամ լրացւած մարմինն անւանել Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհուրդ:

Կառավարութիւնը պնդում է իւր հրաժարականի վրայ, առաջարկում է, անպայման ընտրութիւն կատարել: Ես պայման եմ դնում, որ իմ թեկնածութեանը կը համաձայնւեմ, եթէ պիտի ընտրւի Հայրապետ Մուսայէլեանը, առանց որի ոչ մի պարագայի չեմ մտնի

նորընտիր մարմնի մէջ: Առաջարկւած ցուցակով եռակի թւով թեկնածուներից ընտրւում են հետեւեալ անձինք:

1. Եսայեան Մելիքսէթ, չէղոք, քարտուղար:
2. Զաքարեան Մուշեղ, դաշնակցական, խնամատար:
3. Թումեան Յարութիւն, դաշնակցական, զինուորական:
4. Իշխանեան Եղիշէ, դաշնակցական, նախագահ:
5. Մուսայէլեան Հայրապետ, դաշնակցական:
6. Յովհաննիսեան Արա, էս-էռ, պարոն:
7. Շահնազարեան Ռուբէն, կադետ, լուսաւորութիւն:
8. Վարդապետեան Լեւոն, մենշևիկ, արդարադատութիւն:
9. Տէր Միքայէլեան Անուշաւան, դաշնակցական:
10. Քամալեան Արշաւիր, մենշևիկ:

Սեպտեմբեր 10-ին փակւում է համագումարը: Համագումարը խորհրդին ոյժ տալու և աշխատանքները դիւրացնելու նպատակով որոշում է, որ պատգամաւորների մէկ երրորդը մնայ, իսկ միւսները յաջորդ օրը, սեպտեմբեր 11-ին ցրւում, վերադառնում են չրջանները, միչտ ականջը սրած, տեղերում հրահանգներ կատարելու:

Աշխատանքի բաժանում է կատարւում. նախ ընտրւում է Ազգային Խորհրդի դիւանը: Ես առաջարկում եմ ընտրել Հ. Մուսայէլեանին. թէև ընկերները միաձայնութեամբ են ընտրում, բայց ինքը կտրականօրէն հրաժարւում է, պատճառաբանելով, որ լաւագոյնս օգտակար կը լինի, եթէ աղատ մնայ որևէ պաշտօնից, ուստի ընկերները պարտադրում են ինձ՝ ստանձնելու նախագահի և արտաքին գործերի պարտականութիւնը: Որպէս քարտուղար ընտրւում է Մելիքսէթ Եսայեանը:

Պաշտօնապէս, ճիչտ է, անւանափոխութիւնը կատարւեց, սակայն Ազգային Խորհրդի փոխարէն դարձեալ կառավարութիւն անունով էր կոչւում նորընտիր մարմինը, ուստի այդ անունով էլ չարունակում եմ արձանագրութիւնը: Հարկաւ, ինչպէս իր տեղում մատնանչել է, մեր կառավարութիւնը բառի իսկական առումով կառավարութիւն չէր իր ստորաբաժանումներով, բայց և այնպէս, աշխատանքի բաժանումը կատարւում է ըստ տեսակների: Այսպիսով, ֆինանսների կոմիսար է ընտրւում Արշաւիր Քամալեանը, թէև մեկ սանթիմ դրամ չունէինք:

Արդարադատութեան՝ Արսօ Յովհաննիսեան, Լեւոն Վարդապետեան:
Զինուորական՝ Յարութիւն Թումեան:
Լուսաւորութեան՝ Ռուբէն Շահնազարեան:
Գաղթականութեան՝ Մուշեղ Զաքարեան:
Խնամատարութեան՝ Անուշ Տէր Միքայէլեան:

Ես հարց եմ ղնում ղարձեալ կազմի մէջ հրաւիրել Աչոտ Մ. Յովսէփեանին՝ վարելու արտաքին գործերը, քանի որ նա է չարունակ հայ-թրքական կոմիտէում աշխատել որպէս քարտուղար, և աւելի իրազեկ էր հարցերին:

Քաղաքում գտնուող անհանգիստ տարրեր նոյն Եապօն Ալէքսանի և ընկերների հետ, ինչպէս պարզուեց, գաղտնի նրանց միացած մի քանի արևմտահայերի, ինչպէս օրինակ՝ Միք. Իշլեմէհեանի հետ, գաղտնի ժողով են ունենում և որոչում յարձակում գործել սարերից իջնող քոչւորների վրայ: Ժողովականներից մէկը, թէև ժողովին ոչ մի առարկութիւն չի անում, սակայն նկատի ունենալով, որ կարող է բարդանալ և աւելի ծանրանալ դրութիւնը, կառավարութեանը յայտնում է յիշեալ ժողովի մասին, հարկաւ, պայմանաւ, որ գաղտնի մնայ իր անունը: Կառավարութիւնը, նկատի ունենալով, որ վերոյիշեալ խմբակը մի օր կարող է փորձանք բերել մեր դլխին, որոչում է միջոցներ ձեռք առնել և միանգամայն չէզոքացնել նրան յարմար ձևով, առանց ընդհարման ու վտահելի մարտիկներից պահակներ նչանակել քաղաքի հիւսիսային կողմի ձորով հոսող կարկառ գետի ձախակողմի վտակի երկայնքին մի քանի տեղերում՝ կանխարգիլելու որևէ թալանի փորձ: Կարևոր էր այդ որոչումը, մանաւանդ որ Լիւթֆալի Բէհբուդովը մի գրութեամբ դիմել էր ինձ և կասկած յայտնել, թէ կարող են գտնուել մարդիկ, որոնք կուղենան յարձակում գործել քոչի վրայ ու խնդրում էր հարց դնել մեր կոմիտէում, առ ի զգուշութիւն, կանխաւ որոչ միջոցների դիմել: Նամակի մէջ յիշում է նաև, որ սլիտի իջնեն և իրենց ծառաներն ու գիւղացիները իրենց ձիերի երամակներով. ափսոս են, չպէտք է թողնել, որ թալանեն Ղարաբաղի հպարտութիւնը հանդիսացող մեր աղնուացեղ ձիերը:

Երկրորդ համագումարի ընթացքին Գանձակի չրջանի գիւղացիներից մի քանի հոգի, Աբլահ գիւղացի Բագրատ Ղազարեանի հետ միասին, եկել էին բանակցելու Ղարաբաղի կառավարութեան հետ, որպէսզի իրենց չրջանն էլ միացնի Ղարաբաղին: Համագումարին զեկուցւում է այդ մասին, և առանց երկար ու բարակ խօսելու, կանխաւ արդէն խորհրդակցած լինելով, համագումարի պատգամաւորները միահամուռ արտայայտւում են, գոչելով՝ "Ընդունել, ընդունել": Բագրատ Ղազարեանը Համազասպի կամաւորական գնդի լաւագոյն, քաջ վաչտապաններից մէկն էր, Կառավարութիւնը նչանակում է նրան Ջրաբերդի և Գիւլիստանի հրամանատար:

Սեպտեմբեր 10–11-ին տեղի է ունենում կառավարութեան, քաղաքում մնացած պատգամաւորների և կուսակցութիւնների ներկայացուցիչների խառն նիստը, որոչելու, թէ ինչ ձևով

Համազումարի արձակած վճիռը փոխանցւի Իսմայիլ Հակկի բէյին: Մտքերի փոխանակութիւն կատարելով, խառն ժողովը որոշում է.

ա) ընտրել պատգամաւորներ, գնալու Աղդամ իբրև բանագնացներ՝ խօսելու Իսմայիլ Հակկի բէյի հետ և յայտնելու մեր որոշումը: Բանակցելով, ջանալ համոզել, որ մեր չրջանը Թողնի նոյն վիճակում, ղեկավարելու հայ-Թրքական կոմիտէի ցուցմունքներով, մինչև Պոլսում տեղի ունեցող կոնֆէրանսի որոշում կայացնելը: Խառն ժողովը խիստ դժւարութեամբ կարողանում է որպէս բանագնացների ընտրել հետևեալ անձանց:

Գերասիմ Շահնազարեան, քաղաքագլուխ, կաղնտ:

Հայրապետ Մուսայէլեան և Գաբրիէլ Առաքելեան, դաչնակցական:

Աչոտ Մելիք Յովէփեան և Արշաւիր Քամալեան, մենչևիկ:

բ) Ընտրում է նաև մի յանձնախումբ, ուղարկելու համար Ասկերանի չրջանը՝ մտքերը խաղաղեցնելու նպատակով և եԹէ Իսմայիլ Հակկի բէյը մերժելու լինի առաջարկը և պնդելու լինի ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը, բացել Ասկերանը և ղինաթափ լինել, անմիջապէս յանձնախումբը լուր տայ բոլոր գիւղերին՝ երկուական ներկայացուցիչներ ուղարկելու Շուշի, գ-րդ մեծ համազումարը կայացնելու: Յանձնախմբի անդամներ են ընտրւում՝ Յ. Թումանեանը, Արա Յովհաննիսեանը և Բագրատ Ղաղանչեանը, որը Ասկերանում պիտի սպասի բանագնացների կատարած աշխատանքի արդիւնքին և յետոյ անցնի իւր աշխատանքի վայրը: Այնտեղ Հ. Բահաթրեանը պիտի միանար յանձնախմբին:

Սեպտեմբեր 12-ին, վաղ առաւօտեան, բանագնացները ԼիԹիֆալիբէկ Բէհբուդովի հետ միասին մեկնում են Աղդամ, ուր Բաքւից ժամանած է լինում Բագուն ղրաւող Գալիպօլեան դիվիզիայի[77] հրամանատար Ջամիլ Ջահիդ բէյը/չերքէզ/: Բանագնացներին հետևում է Ասկերանի չրջանի համար կազմւած յանձնախումբը:

Նոյն օրը, կէսօր չեղած, բանագնացները հասնելով Աղդամ, ներկայանում են Ջամիլ Ջահիդ բէյին, որը լսել անգամ չի ուղում բանագնացներին, որոնք բանտարկւում են, իսկ ԼիԹիֆալիբէկը առնւում է խիստ հսկողութեան տակ: Տահիկները պնդում են իրենց պահանջների վրայ՝ առանց առարկութեան ընդունել Ադրբէջանի իշխանութիւնը, բացել Ասկերանը և ղինաթափ լինել:

---

[77] Գալիպոլեան Դիվիզիա. Թուրքիայի եւրոպական մասում գտնւող թերակղզու անունից, որտեղ 1915Թ. ծաւալւել է յայտնի «Գալիպոլեան ռազմական ծովային գործողութիւնը» (կոչւած նաև Դարդանելեան), որն անյաջող կերպով ձեռնարկւեցին անգլիացիները ու ֆրանսացիները՝ Դարդանելին, Բոսֆորին ու Կոնստանդնուպոլսին տիրելու նպատակով: (Խմբ.)

Բանագնացներին յայտարարելով իրենց պայմանները, Գ. Մելիք Շահնազարեանին, Աչոտ Մելիք Յովսէփեանին և Արշաւիր Քամալեանին պահում են որպէս պատանդների, իսկ Հ. Մուսայէլեանին և Դ. Առաքելեանին հրամայում վերադառնալ Շուշի և իրենց պահանջը յայտնել Ղարաբաղի հայութեանը:

Սեպտեմբեր 14-ին, վաղ առաւօտեան, Հ. Մուսայէլեանն ու Դ. Առաքելեանը, մեկնելով Աղդամից, չուտով հասնում են Ասկերան, այնտեղ յանձնախմբին յայտնում տեղի ունեցածի մասին: Անմիջապէս, համաձայն համագումարի որոշման, Ասկերանից ձիաւոր պահակների միջոցով լուր է տրւում գիւղերին՝ չատ չտապ կերպով երկուական ներկայացուցիչներ ուղարկել Շուշի, պատասխան տալու տաճիկներին:

Հաւար է ընկնում գիւղերում. տաճիկների պահանջը արագօրէն հասնում է անդամ ամենահեռաւոր գիւղերին, և ներկայացուցիչները խումբ-խումբ դիմում են դէպի քաղաք:

Հ. Մուսայէլեանը, Դ. Առաքելեանը նոյն օրը երեկոյեան չատ ուշ հասնում են քաղաք: Առաւօտեան հաւաքւում են կառավարութեան անդամները, քաղաքում մնացած համագումարի պատգամաւորները և կուսակցութիւնների ներկայացուցիչները՝ խառն ժողովի: Վերադարձած բանագնացների տւած զեկուցումը, բնականաբար, չատ ծանր ու ճնշող տպաւորութիւն է թողնում: Ժողովը կանգնած է անելի առջև: Մի քանի րոպէ ընկճւած, լռութիւն էր համակել բոլորին: Պատգամաւորներից մէկը՝ Մարտակերտցի Նիկոլ Համբարձումեանը, հարց է տալիս կառավարութեան՝ թէ վերջինս ի՞նչ տեսակէտ, ի՞նչ որոշում ունի: Եւ, որպէս նախագահի, հարցը ուղղում է ինձ. նրան միանում են միւս պատգամաւորները:

-Կառավարութիւնը ժողովրդի կամակատարն է, ասացի, նրա ցանկութիւնները իրականացնողը: Ինքը որոշում չունի, սպասում է ժողովրդի կայացնելիք որոշմանը՝ կամ ընդունել թշնամու պահանջը և կամ ընդդիմանալ:

-Այդ դէպքում աւելորդ է այս ժողովը, -վրայ է բերում դրնավաղցի Համբարձում Մելքումեանը: -Սպասենք բոլոր գիւղերի պատգամաւորներին, որպէսզի ժողովն իւր խօսքն ասէ:

-Հէնց այդ նպատակով էլ, ասացի, համաձայն Բ. Համագումարի որոշման, հրաւիրւում է երրորդ և աւելի խոշոր համագումար, որին պիտի մասնակցեն բոլոր գիւղերի ներկայացուցիչները, կառավարութեան հետ միասին մտածելու, եօթն անդամ չափելուց յետոյ կտրելու, ինչպէս կասեն մեզանում: Աւելի քան պարզ է, կառավարութիւնը չի կարող և իրաւունք չունի

ինքնուրոյնաբար վճիռ կայացնելու, ինչպէս ասացի, կառավարութիւնը ժողովրդի կամակատարն է, ուրիշ ոչինչ:

Բանագնաց պատգամաւորներից երեքը պատանդ պահելու և երկուսին խիստ պահանջով յետ ուղարկելու մասին լուրը կայծակի արագութեամբ տարածւում է քաղաքում ընդհանուր, ընկճած վիճակ ստեղծելով: Խառն ժողովը չի ցրւում. մասնակցողները մի տեսակ զամւած տեղերում, չարունակում են մտքերի փոխանակութիւն կատարել: Պատգամաւորներից մէկը՝ Ղչլաղ գիւղացի Բախչի Մուրադեանը, Բագւում աշխատած աչքաբաց մի բանուր, կարծիք է յայտնում՝ "Արդեօք չի՞ լինի, որ ժամանակաւորապէս ճանաչենք Ադրբէջանի իշխանութիւնը և թոյլ տանք, մէկ բատալիօն զօրք մտնի Շուշի, սպասենք, մինչև Պոլսի ժողովի որոշում տալը:"

-Ինչպէս ղեկուցեցինք, -ասաց Հ. Մուսայէլեանը, - Ջամիլ Ջահիդ բէյը չուղեց մեզ լսել, հրամայեց՝ անմիջապէս բանտարկել մեզ: Մենք գնացել էինք հէնց այդ նպատակով բանակցելու, չանալով դրւած պահանջը մեղմացնել, սակայն մեզ լսել անգամ չուղեցին, պնդեցին իրենց պահանջի վրայ: Բոնի ոյժին ոյժով պիտի պատասխանել: Ունե՞նք այդ հնարաւորութիւնը, թէ՞ ոչ: Եւ մեր առջև այդ հարցն է ցցւած, որին պատասխանելու համար պէտք է շատ խորը մտածել և լուրջ ու ճչգրիտ որոշում կայացնել:

Քաղաքում, այն միջոցին, երբ խառն ժողովն էր տեղի ունենում, զանազան տականքներ, տաք գլուխ մարդիկ զրգռումներ են անում, նորից յուղում են ղարաղչլաղցիներին, նրանց լարում կառավարութեան դէմ, վերջինիս մեղադրում գիւղի կործանման մէջ: Մեր ընկերներից մէկը՝ Աբել Համբարձումեանը, ներս մտնելով, ներողութիւն է խնդրում և տեղեկացնում զրգռումների մասին:

Ղարաղչլաղի երեք պատգամաւորները, ապրելով քաղաքում, մասնակցում էին խառն ժողովին, ուստի նրանց հետ միասին Մուշեղ Ջաքարեանը, Յար. Թումանեանը և Լևոն Վարդապետեանը դուրս են գնում դարձեալ վանքի բակը, որտեղ յաճախ էին հաւաքւում մարդիկ և մասնաւորապէս ղարաղչլաղցիները: Վերջիններս, պիտի ասել, որ լսում են իրենց պաշտօնատար մարդկանց և աղ-սաւսկալներին: Եւ աղ-սաւսկալների մէջ մէկից աւելի բնականից օժտւած խելացի, հեռատես մարդիկ կային, որոնցից մէկի՝ Բաղդասար ապօր տղան՝ Աղալարը, անվեհեր, քաջ մարտիկներից մէկն էր, որին կառավարութիւնը, մի տեռորի համար, 1911 թ. կախել էր Նովոչերկասկի բանտում: Ղարաղչլաղցիները Բաղդասար ապօր չատ էին յարգում: Մի օր Հիւանդ էր զրիպով, գնացել էի այցելութեան (տաճիկները Ղարաբաղից հեռանալուց յետոյ), յոյց տւաւ Աղալարի մօսին հրացանը, արտասւելով. "Սա է մնացել իմ

ասլան բալասուց որպէս յիշատակ և ես պահում եմ աչքիս լոյսի պէս":

Պատանդ մնացածների ընտանիքները տագնապի էին մատնւած և յաճախ կը հետաքրքրւէին՝ "լուր չկ՞այ մերոնցից": Այդ հարցումն էր, որ կուղղէին կառավարութեան անդամներին, որոնք իրենց չատ անյարմար կացութեան մէջ էին ղգում, ճնշւելով: Քաղաքի հայութիւնը, խիստ ընկճւած, ջղային վիճակ էր ապրում և ականջները սրած լուրի սպասում: "Ջուլումը մեր գլխից անպակաս է եղել. մեր աղգի կէսը եաղին (թէնամին) կոտորեց. ուզում է միւս կէսն էլ կոտորի. անտէր ժողովուրդ ենք. ռուսը թողեց մեղ եաղու ռնխին (երախում), գնաց. ի՞նչ կարող ենք անել", այսպէս խօսում էին իրարու հետ մարդիկ և հրաչքի սպասում: Քաղաքի մթնոլորտը ոչ թէ ժամ-առ-ժամ, այլ րոպէառորոպէ վատանում է, դժգոհութեան ձայներ են լսւում, որ նոյնպէս ուժեղանում է արագօրէն, ժողովուրդը ուզում է ճիշտը իմանայ, ի՞նչ է կատարւում, պահանջում են ժողով անել և ասել, թէ ի՞նչ է իրենց անելիքը:

Սեպտ. 16-ին, երեկոյեան դէմ, Մարիամ Ղուկասեանի անւան դպրոցի ընդարձակ բակը լցւում է մարդկանցով, կանայք ու տղամարդիկ. ամէն տարիքի, մօտ 2000 հոգի, որոնց հետ նաև պատանդների ընտանիքները: Հերթով խօսում ենք՝ ես, Հ. Մուսայէլեանը, Արսօ Յովհաննիսեանը, որ յանձնախմբի միւս անդամների հետ նոր էր եկել Ասկերանից, եւ Լ. Վարդապետեանը: Նկարագրում ենք դրութիւնը և յայտնում, թէ կառավարութիւնը որ խիստ ծանր խնդրի առջև է կանգնած, ինքնուրոյնաբար որոշում կայացնել չի կարող, իրաւունք չունի, առանց ժողովրդի կամքը իմանալու, ուստի, Համաձայն տեղի ունեցած վերջին Բ-րդ. Համագումարի որոշման, հրաւիրւած է Գ-րդ մեծ Համագումարը, որին պիտի մասնակցեն բոլոր գիւղերի ներկայացուցիչները, որոնք վաղը, միւս օրը կը գան քաղաք և քաղաքի ներկայացուցիչների հետ միասին կորոշեն, թէ ինչ պիտի անի կառավարութիւնը:

Ժողովրդի մէջ առաջին չարքներում գտնւած աննչան պինւորներից մէկը սկսում է զրգռիչ ճառ ասել, թէ կառավարութիւնը պէտք է սկզբից մտածէր, որ կարող էր այսպիսի դրութիւն ստեղծւել. կառավարութիւնը ժամանակին չի դինել ժողովրդին, ահաղին թւով մարդիկ անղէն են. դիմադրել չեն կարող, կառավարութեան մարդիկ անկարող մարդիկ են: Մօտը կանգնած մեր մարտիկներից երկու հոգի՝ Մարգար Թամիրեանը և Յակոբ Պետրոսեանը, ձեռքով փակում են բերանը և սպառնում, որ լռի:

Երկրորդ անգամ հարկադրւած ելոյթ ունենալով, հաւաքւած բաղմութեան ուշադրութիւնն եմ հրաւիրում, որ անպատասխանատու, տաք գլուխ, պրովակացիոն իմաստով ճառեր

ասող, մտքեր պղտորող մարդկանց խօսքերին ականջ չկախեն: "Մենք կանգնած ենք խիստ ծանրակչիռ խնդրի լուծման առջև, մեկ խնդիր, որ վերաբերում է ոչ թէ միայն քաղաքի, այլ Ղարաբաղի ամբողջ հայութեան լինել-չլինելուն, ուստի պէտք է խնդրին լուրջ մօտենանք, եօթն անգամ չափենք և յետոյ կտրենք: Քիչ առաջ ճառ ասողը մոմենտին համապատասխան լրջութեամբ չի մօտենում հարցին, բոլորովին չի հասկանում, չի ըմբռնում, ուստի, որպէս անպատասխանատու մեկը, անիմաստ և անտեղի մեղադրականներ է չարտում կառավարութեան երեսին. կառավարութիւնը ժողովրդի ծառան է և ինչ էլ որ անելու լինի, ժողովրդի, ձեզ հետ համաձայնհուրդ պիտի անի: Եթէ կառավարութիւնը իրաւունք չի համարում անկախ ժողովրդից որևէ քայլ անել, առաւել ևս մասնաւոր մարդիկ իրաւունք չունեն հրապարակ նետուելու և ժողովրդի բախտի հետ խաղալու: Նրանք, ովքեր փորձեն հակառակ որևէ քայլ անել, կենթարկուեն ամենախիստ պատժի":

Յաջորդ օրը, **Սեպտեմբեր 16-ին,** կառավարութիւնը առանձին նիստ ունեցաւ և, հանգամանօրէն մտքերի փոխանակութիւն ունենալով, յանգեց այն եզրակացութեան, որ Ղարաբաղի հայութիւնը, չնայած որ քսան հազարի չափ հրացան ունեցող մարտիկներ ունի, սակայն երկարատև կռիւները մղելու ռազմամթերք չունի:

Մտքերի հանգամանօրէն փոխանակութիւն ունենալուց յետոյ կառավարութիւնը (Աղգային Խորհուրդը) յանգում է հետևեալ եզրակացութեան, թէ պէտք է՝

ա) ճանաչել Աղրբէջանի գերիշխանութիւնը, քանի որ Ղարաբաղի հարցը պիտի որոշուի Պոլսի կոնֆերանսում,

բ) երեսանց ղինաթափ լինել, ժողովրդի մէջ գտնուող հին և փչացած ղէնքերը յանձնելով,

գ) թոյլ տալ՝ տաճկական մեկ վաչտ մտնելու Շուշի:

դ) կառավարութեան կազմի մէջ հրաւիրել տեղական թուրք ներկայացուցիչների:

Այդ օրը երևկոյեան սենսացիօն լուր է տարածւում քաղաքում, թէ իբր Շուշու գունդը հասել է Թթու Ջուրը և ժողովրդի տրամադրութիւնը բարձրանում, վայրկենապէս փոխւում է խանդավառութեան, մանաւանդ երբ ենթադրութիւններ են արւում, որ եթէ Շուշու գունդը գալիս է, կը նչանակէ Անդրանիկն էլ է գալիս: Քաղաքում գտնուող տաճկահայերը, թուով մօտ երկու հարիւր հոգի, խռնուելով կառավարական չէնքի առջև, ղէնք են պահանջում: Անմիջապէս հարց է ծագում, ո՞վ է սենսացիօն տեղեկութիւն բերողը, հարց ու փորձով չատ չուտ պարզւում է, որ սենսացիայի

Հեղինակը գիւղական վարժապետ Գրիգոր Կարապետեանն[78] է, որ սկզբնաղբիւրում յայտնի էր "Կղերիկոս" անւամբ, իսկ հետագային՝ "խոզի տղայ" անունով: Եւ երբ փնտրտուք սկսեց՝ գտնելու Կղերիկոսին, վերջինս օգտւելով մթութիւնից, կարողանում է կծիկը դնել, փախչել՝ աղատւելով լինչի դատաստանից:

Սեպտեմբեր 17-ին, վաղ առաւօտեանից սկսած, խումբ-խումբ քաղաք էին մտնում գիւղերից եկած երկուական ներկայացուցիչները, և Բ. համագումարից քաղաքում մնացած պատգամաւորները ցուցակագրում էին եկողներին, թէ որ գիւղից են: Մինչև երեկոյ գրեթէ բոլոր գիւղերից գալիս են ներկայացուցիչները, բացառութեամբ մէկ-երկու գիւղից, մօտ երեք հարիւր հոգի, որոնց գրեթէ կէսը դինւած: Համագումարին, հարկաւ, մասնակցում էին Ղարադչլաղի և արևմտահայ գաղթականների ներկայացուցիչները: Ինչպէս յիշւեց իր տեղում, Բ. համագումարը ընդունել էր նրանց առաջարկը: Գարղմանի չրջանի գիւղերից երեք հոգի, կեսաինտելիգենտ դաչնակցականներ՝ որոնք եկել էին Շուշի ծանօթանալու՝ իրերի դրութեան հետ, թէ ինչպէս՞ է, որ Ղարաբաղը աղատ է մնացել Նուրի Փաչայի իշխանութիւնից և անկախ կառավարութիւն ունի, որի մասին մի քիչ չափազանցած տեղեկութիւն էր հասել իրենց և ցանկութիւն էին յայտնում, որ իրենց չրջանն էլ միանայ Ղարաբաղին, ուստի նրանք էլ մասնակցեցին համագումարին:

---

[78] Սա թեմական դպրոցում սովորած աշակերտներից էր, բայց չորրորդ, թէ հինգերորդ դասարանից դպրոցը թողել էր, միջոցների սղութեան հետևանքով: Մի ժամանակ քաղաքում մուգ կապոյտ ակնոցներ կը դնէր, երկար, ծոծրակին նասած մազեր և խնամքով երկար եղունգներ կը պահէր և աչխատում էր արևմտահայերէն խօսել: Մէկը Կղերիկոս անունով էր կնքել, և նրբ ծանօթները հետաքրքրւելին, հարց կը տային, թէ ինչու է երկար մազեր ու եղունգներ թողնում, բարկացած կը պատասխաներ՝ "Ադ քո բանը չէ": Մարդկանցից խուսափում էր, ուստի "խոզի տղայ" անունը վաստակեց և ի վերջոյ գիւղական վարժապետ դարձաւ, մազերն ու եղունգները կարճացրեց և ակնոցները չդոլծածեց, բայց և այնպէս մականուններից չազատւեց: (Հեղ.)

ՂԱՐԱԲԱՂԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Սեպտեմբեր 18-ին բացւում է Երրորդ, Արտակարգ Համագումարը:

Նախագահ է ընտրւում Մուշեղ Զաքարեանը, փոխ նախագահներ՝ Ասատուր Աւետիսեանը և Գրիգոր Ղարագեօղեանը, քարտուղարներ՝ Թէոդորոս Տէր Յովհաննիսեանը և Արշակ Առատամեանը:

Հայրապետ Մուսայէլեանը և Դանիէլ Առաքելեանը զեկուցում են, թէ Ջամիլ Ջահիդ բէյը ինչպէս է վարւել իրենց հետ, չի ուղեցել անգամ լսել իրենց, որպէս բանագնացների, հրամայել է անմիջապէս բանտարկել բոլորին, ապա իրենց երկուսին աղատ է թողել, յայտարարելով՝ "գնացէք և յայտնեցէք ձեր իշխանութիւններին ու ժողովրդին, որ առանց այլևայլութեան ենթարկւեն դրւած պահանջին՝ զէնքը ցած դնեն, հեռու քաշւեն Ակերանից, որ զօրքը աղատ մուտք ունենայ Շուշի, ճանաչեն և ենթարկւեն Ադրբէջանի իշխանութեան՝ մինչև Պոլսի կոնֆերանսի վերջնական որոշումը: Օսմանեան պետութիւնը ճանաչում է միայն Երևանի հայոց կառավարութեանը, որի ներկայացուցիչները մասնակցում են Պոլսի կոնֆերանսին: Երկրորդ ուրիչ կառավարութիւն չեն կարող ճանաչել:

Բնականաբար, Հ. Մուսայէլեանի և Դ. Առաքելեանի զեկուցումները մղձաւանջի չափ խիստ ծանր ու ճնշող տպաւորութիւն են թողնում բոլորի վրայ: Եւ պատգամաւորների տրամադրութիւնը չատ աւելի է ծանրանում, երբ Համագումարի ընթացքին տեղեկութիւն հասաւ, որ Հաջի Սամլուի քրդերը Խանքենդու հիւսիս արևմտեան կողմից, Ղարաբաղի լեռնաշղթայի Քեօսալար կոչւած տեղից յարձակում են սկսել Ղայրալի, Կրկժան, Փահլուլ և Ջոմկլու գիւղերի վրայ, որոնց դէմ է դուրս եկել Խաչէնի ուժերի հրամանատար Ալէքսան դային, նրան օգնութեան են հասել նաև Վարանդայի, Դրնավազի, Հարաւի, Ղաւալանի, Աւետարանոցի, Սղնախի և Շօշու մարդիկ: Համագումարը լարւած վիճակում չարունակում է նիստերը և առաջարկում, որ կառավարութիւնը պարզէ իր տեսակէտը: Կառավարութիւնը առանձին իրա տեսակէտը պարզել էր արդէն. բայց ինչպէ՞ս յայտնել ժողովրդին: Ճիշտ է, Համագումարի ճնշող մեծամասնութիւնը հասարակ, անզրագէտ գիւղացիներ էին, բայց և այնպէս դուրս գալ ու յայտնել, թէ պիտի ենթարկւել Օսմանեան բանակի հրամանատարութեան պահանջին, չատ ծանր էր գալիս, պարզապէս տագնապի մատնում բոլորիս: Զինուորական կոմիսարը՝ Յար. Թումանեանը, և զինուորական չտաբի պետը՝Արտաշէս Առատամեանը, հանգամանօրէն բանաւոր զեկուցումներ ու բացատրութիւններ են տալիս մեր ունեցած

ինքնապաշտպանութեան միջոցների մասին, որ բաւարար քանակութեամբ ղէնք ունենք, բայց տեսական պաշտպանողական կռւի համար վճռիուչտ չունենք: Այսպիսի բացատրութիւններ տրւեցին, նկատդրելով, որ դէթ մի հոգի պատգամաւորներից կասէր՝ "թէ քանի որ այդ է մեր իրական վիճակը, ուրեմն, ճար չկայ, պիտի ընդունել տաճիկների պահանջը": Սակայն իզուր, լուռ են բոլորը և սպասում են, որ կառավարութիւնը յայտնէ իւր տեսակէտը:

Այդ միջոցին պատգամաւորներից մէկը, դրնավաղցի Համբարձում Մկրտումեանը, տեղից խօսելով, ասում է՝ "եթէ յաջողւած լինէր Շուչու գնդի փոխադրութիւնը, ի հարկէ, կարելի կը լինէր աղատ կարծիք յայտնել. յամենայն դէպս, էլի կառավարութիւնն է, որ աւելի տեղեակ է մեր դրութեան, հետևաբար նա պիտի ասի, թէ ինչ անենք":

Շուչու գնդի անյաջող փոխադրութեան մասին յիշելը առիթ տւեց, որ մի քանի պատգամաւորներ, որոնք մասնակցել էին փոխադրական ձախաւեր գործին, բորբոքեն Ղարաղէչլաղի անկման խնդիրը, և սկսւեց խստիւ քննադատութիւն կառավարութեան գործունէութեան դէմ: Գլխաւոր հարցը՝ տաճկական հրամանատարի պահանջին պատասխան տալը, մոռացութեան տրւեց, և կրկին պահանջւեց բացատրութիւններ տալ, թէ ինչու կառավարութիւնը նման անյաջող գործի էր ձեռնարկել:

Կրկին անդամ բուռն վիճաբանութիւն է սկսւում. կառավարութեան կողմից յաջորդաբար հանդամանօրէն ելոյթ են ունենում դին. կոմիսարը՝ Յարութիւն Թումեանը և Արսօ Յովհաննիսեանը, ինչպէս Բ. համագումարին, այնպէս էլ այս անդամ նրանք բացատրութիւնները տւին, և պիտի ասել, որ վիճաբանութիւնը չատ երկար տևեց, ամբողջ նիստն ընթացաւ Շուչու գնդի և նրա փոխադրութեան չուրջ: Բոլորի ջղերը լարւած էին, խօսում էին աւելի ջղերով, քան թէ ուղեղով և բոլորը անհանդիստ վիճակ ունէին Քեօսալարից սկսւած յարձակման հետևանքով: Համագումարի դնւած պատգամաւորները չատ աւելի անհանդիստ էին, որ փոխանակ Ալէքսան գայուն օգնութեան գնալու, պարտաւորւած գտնւել են ամբոխներին, թշնամուն պատասխան տալու մտահոգութեամբ: Առաւօտեան 9-ին սկսւելով համագումարը, մէկ ու կէս ժամւայ ընդմիջումով, տևեց մինչև երեկոյեան ժամը 10-ը: Բոլորը յոգնած և ջղակոտոր վիճակ ունէին: Նախագահը, փակելով նիստը, խնդրեց, որ իւրաքանչիւրը մանր-մունակ լուրջ քննութեան առնէ խնդիրը, սառն դատողութեամբ եզրակացութեան յանգած ներկայանայ նիստին, պատասխան տալու տաճկական հրամանատարին:

Սեպտեմբեր 19-ին առաւօտեան իննին բոլոր պատգամաւորները գրաւել էին իրենց տեղերը և կարծես աւելի խաղաղ վիճակ ունէին, որովհետև Ղայրալիի գիւղացիները տեղեկութիւն էին բերել քաղաք, որ մեր ուժերը լաւ են դիմադրում, թուրքերը առաջ չարժւել չեն կարողանում: Նախագահը նիստը բացած յայտարարելով, հարցրեց, թէ ո՞վ է ուզում խօսել և յայտնել իւր կարծիքը, թէ ի՞նչ պատասխան պիտի տրւի թշնամու պահանջին:

Մարղակերտցի Նիկոլ Համբարձումեանը (դաշն.) տեղից արձագանքեց, թէ էլի կառավարութիւնը ինքը երևի մտածել է և չատ աւելի տեղեակ լինելով ընդհանուր մեր վիճակին, պէտք է արդէն որոշած լինի, թէ ինչպիսի պատասխան պիտի տայ, ուրեմն աւելի լաւ է, որ կառավարութիւնն ասէ, թէ ինչ պիտի անել:

Զինւորական կոմիսարը և չտարի պետը կրկին ղեկուցում են մեր ունեցած զինւած ուժերի, կազմակերպական ձևի, ռազմամթերքի չգոյութեան մասին, հանդամանօրէն բացատրութիւններ տալիս: Զեկուցումներից դժգոհ է մնում համագումարը, չի բաւարարւում: Հարկաղրւած, ես եմ լրացուցիչ որոչ բացատրութիւններ տալիս և յայտարարում, որ կառավարութիւնը ժողովրդի կամակատարն է և ոչ թէ կամք թելադրողը: Մենք կանգնած ենք չատ ծանր խնդրի լուծման առջև, որի համար էլ հրաւիրւած է համագումարը, որը միայն ժողովրդի կամքը արտայայտել կարող է, եթէ կորոշէք մերժել տահկական հրամանատարին ու ընդդիմանալ, կառավարութիւնը անմիջապէս գործի կանցնի անհրաժեշտ անելու, իսկ եթէ գտնում էք, որ տևական կռիւ. մղելու հնարաւորութիւնը չունենք, ռազմամթերքի չգոյութեան պատճառով, աւելի քան պարզ է, պէտք է մտածել, միջոց գտնել ծանր վիճակից ելնելու համար:

Հարկաւ, կառավարութեան անդամները խուսափում են իրենց տեսակէտը յայտնելուց և ղեկուցումներ ու բացատրութիւններ տալով և կրկնութիւններ անելով ջանում են, որ իրենց ունեցած տեսակէտը պատգամաւորներից եթէ ոչ մի քանիսը, գէթ մէկը յայտնէ, եւ առիթ տայ մտքերի ղրսևորման, որպէսզի կառավարութիւնը վիճաբանութեան ընթացքին յարմար մոմենտի իր տեսակէտը պարզ յայտարարէ: Եւ կառավարութիւնը ևնթադրում էր, եթէ տեսակէտների բախում տեղի ունենայ, անպայման համագումարի որոշ պատգամաւորներ յանգած լինելով կառավարութեան տեսակէտին, կարտայայտւեն, և կառավարութիւնն էլ իր համախոհութիւնը ցոյց կը տայ:

Համագումարին, ինչպէս նախորդ համագումարներին, վճռական ձայնով մասնակցում էին բոլոր կուսակցութիւնների երկուական ներկայացուցիչները, ի չարս որոնց և համայնավարների

կողմից՝ դոք. Սաքօ Համբարձումեանը և Ալէքսանդր Մատուրեանը (Ալ. Ռուբէնի)։ Վերջինս Ղարաբաղի թեմական ղպրոցի տեսուչ էր։ Երկուսն էլ քաղաքում ընդհանուրի կողմից լաւ ճանաչուած մարդիկ էին։ Քաղաքի ներկայացուցիչներից մէկը՝ կօչկակար Սերգէյ (Սարգիս) Կիրակոսեանը յանկարծ առաջարկ է անում, որ Ալէք. Մատուրեանը խօսէ, թերևս կը կարողանայ մի միջոց առաջարկել, ծանր կացութիւնից ելնելու։

Նախագահը հարցնում է՝ "Պարոն Մատուրեան, կուզէ՞ք արտայայտուել"։

– Ոչ, – պատասխանում է Մատուրեանը։

–Ինչո՞ւ ոչ, պարոն Մատուրեան, – հարցնում է նոյն Սերգէյ Կիրակոսեանը, – ննջադրենք դուք բժիշկ էք, և ձեր առջև գտնուում է ծանր հիւանդ. հիւանդի տէրը խնդրում է ձեզ քննել և բժշկութեան միջոցն առաջարկել։

–Ինչո՞ւ պիտի ես ստանձնեմ ձեր առաջարկած դերը. թող խօսեն, փրկութեան միջոց առաջարկեն այն մարդիկ, որոնք երեսուն տարի չարունակ խաղացել են դժբաղատ հայ ժողովրդի կեանքի հետ ու հասցրել այս օրւան. նրանք պէտք է խօսեն և պարտաւոր են խօսել ու փրկութեան միջոց առաջարկել։

Մատուրեանի ելոյթը անտեղի էր և ամբոխավարական ձև ու բնոյթ ունէր, ուստի ձայն խնդրեց Հ. Մուսայէլեանը և ասաց.

–Պարոն Մատուրեանի ճառը միանգամայն անտեղի էր և ներկայ կացութեան համար անհամապատասխան ու անպատշաճ։ Նրա ելոյթը ինձ զարմանք չպատճառեց. տասն ու հինգ տարի է չարունակ այդ նոյն ճառն է ասում նա ամենուրեք, իւր սլաքներն ուղղելով դաշնակցութեան դէմ և տասնհինգ տարի է, որ Մատուրեանը նման անամէջ ճառեր արտասանելով է իւր գոյութիւնը զգացնում, առանց մատը մատին խփելու յանուն այն դժբաղատ ժողովրդի, որի մասին իր սրտացաւ, խօսքն ասաց։

Դեռ Մուսայէլեանը ճառը չվերջացրած, Մատուրեանը տեղում անհանգիստ չարժումներ էր անում, ըստ երևոյթին ջղայնացած էր, և այդ մոմենտին Աչ. Մելիք Յովսէփեանը ականջիս ասաց.

–Տես, հիմա Մատուրեանը պիտի թողնի սրահը և ծլկի դուրս։ Եւ, իրօք, Ալ. Մատուրեանը արագ դուրս գնաց սրահից։

Առիթ եղաւ, որ երկրորդ անգամ ելոյթ ունենալուց, զարձեալ կրկնելով տրւած բացատրութիւնները, ասէի՝ "տեսաք, որ թեմական ղպրոցի տեսուչը, որ մեր պատրաստած մարդկանցից մէկն է, չուզեց իր տեսակէտը յայտնել և խուսափելու համար անտեղի մեղադրականներ չպրտեց որոչ հասցէներով, այդուամենայնիւ,

պատրաստ ենք բոլորս Համալսորհուրդ գտնել մի միջոց, անելից դուրս գալու համար":

Համագումարի կէսօրւայ ընդմիջումն էր, չուտով պիտի վերսկսէր նիստը. ռէալական դպրոցի մուտքի մօտ հանդիպեցի Ս. Համբարձումեանին և Ալ. Մատուրեանին: Համբարձումեանը թէ որպէս Կոստիայի եղբայրը և թէ իրրև մեր տան բժիշկը, շատ մօտ էր: Համոզուած համայնավար էր թէեւ, բայց վերին աստիճանի բարեկիրթ և լաւ հայ, ընչատեաց և իսկական ղեմոկրատ, ժողովրդանուէր մարդ, զարձաւ ինձ ու ասաց:

-Եղիշէ, դու երկու անգամ ելոյթ ունեցար և տարբեր խօսքերով ու խմբագրութեամբ նոյն բանն ասացիր, վերջին անգամ՝ աւելի հանգամանօրէն և չատ պարզ. ես հետեւում էի ուշի-ուշով ինչպես բոլորի, այնպէս էլ քո խօսքերին: Քո խօսքի ընթացքին հասել էիր մի կէտի, որ ես սրտատրոփ սպասեցի, թէ պիտի կառավարութեան տեսակէտը յայտարարէիր, բայց, չվիրաւորուես, խորամանկութիւն արեր, չարտայայտուեցիր: Արդէն չատերը գիտեն կառավարութեան տեսակէտը, աւելի ճիշտ՝ կռահում են և կառավարութեան անդամների, առաւել ևս քո վերջին ելոյթի ասած խօսքերից աւելի են ամրանում իրենց կռահումի մէջ: Կառավարութիւնը պէտք է իւր տեսակէտը յայտնի և պէտք է դու յայտնես:

- Դոկտոր, ինչո՞ւ կառավարութիւնը յայտնէ և ոչ թէ պատգամաւորներից մէկն ու մէկը. երբ համագումարը կայ, խօսքը նրան է պատկանում և նա այդ նպատակով է զումարուած: Համագումարի բոլոր պատգամաւորները ժողովրդի լիազօրներն են, իսկ կառավարութիւնը նրանց գործակատարը: Համագումարը դիմեց Սաչային (Ալ. Մատուրեանին) իր կարծիքը յայտնելու. նա կարող էր իր անհատական կարծիքը յայտնել, և ժողովականները, ինչպիսի կարծիք էլ յայտներ, չէին կախելու, բայց խուսափեց և ժողովից հեռացաւ:

-Ես իմ կարծիքը պարզ յայտնեցի, ուրիշ կարծիք չունէի, վրայ բերեց Ալէքսան Մատուրեանը, որ լուռ լսում էր մեզ:

Որպէս Բախչի Իշխանեանի աղգականը, դեռ նախ քան համայնավար դառնալը, Ալ. Մատուրեանը լաւ վերաբերմունք ունէր իմ հանդէպ, երբ դեռ թեմական դպրոցի բարձր դասարանների աշակերտ էր: Երբ սոցիալ դեմոկրատ դարձաւ, զլխիս աւետարան կը կարդար, թէ դաշնակցութիւնը մանր բուրժուական կուսակցութիւն է, դեկավարները Ռամփիական ռոմանտիկ գաղափարներով յագեցած, ռէալ մտածելակերպից զուրկ ֆանտազիօրներ են, դոյղն չափով իսկ իրատեսութիւն չունեն և այլն: Ճիշտ է, ես Մատուրեանի չափ պատրաստութիւն չունէի, բայց խօսքի տակ մնացողը չէի և պաշտպանում էի, նոյն իսկ մեղադրում

իրեն, որ թողել, հեռացել է դաշնակցութիւնից, որում նա կարող էր օգտակար լինել ժողովրդին, մինչդեռ հեռանալով, իրեն դատապարտել էր անգործութեան: Յայտնում էի իրեն, որ ինձ ծանօթ է Բախչու և Թումեանի, ինչպէս և Բախչու և իր միջև տեղի ունեցած նամակագրութեանց բովանդակութիւնը,[79] որ իր գրած նամակներից երևում էր, թէ ինչպիսի մոլեռանդ դաշնակցական է եղել:

– Ասացի, Սաչա, արի ծուռ նստենք և ուղիղ՝ ճիչտը խօսենք, կարծի՞ք էր, որ դու յայտնեցիր, թէ իբրև հակառակորդ, յարմար առիթ համարեցիր՝ մեղադրական խօսք ասելու դաշնակցութեան հասցէին, իբրև դատախազ: Ոչ ոք չարձագանքեց քեղ, ընդհակառակը, լաւ տպաւորութիւն չստացաւ: Անտեղի և անժամանակ մեղադրական էր քո ասածը:

– Ես նպատակ չունէի լաւ տպաւորութիւն թողնել և այլն, ինչ որ ասացի, իմ տարիների համողումն է, ասաց Ծատուրեանը:

Այդ միջոցին էր, ձիաւոր փոքրիկ խմբի գլուխ անցած, Ալէքսան դային արագ մօտ եկաւ, իջաւ ձիուց, ապա խմբից երկու հոգու պահելով, միւսներին ուղարկեց քարւանսարաներից մէկում տեղաւորելու ձիերին:

– Հը, դայի, ինչո՞վ վերջացաւ կռիւը, –հարցրի:

– Ինչո՞վ պիտի վերջանար. չան որդի Հաջի Սամլուի քրդերը կարծել են, թէ եա՛ Ալի՛ պոռալով պիտի սարսափ աղդէին մեր վրայ. նրանք չատ էին յոխորտում, հայհոյելով, որ նմուշի համար մէկ հատիկ հայ չպիտի թողնէին: Շան որդիները մեզ հաւի ճտի տեղ էին դրել, բայց լաւ կերան, կը պատմեմ ....

Այդ միջոցին մի քանի հոգի պատգամաւորներից մօտենալով մեզ և ճանաչելով Ալէքսան դայուն, իրար հրմչտկելով, մեզնից առաջ ներս մտնելով, աստիճաններից բարձրանալով երկրորդ յարկ, պոռալով յայտնեցին Ալէքսան դայու գալը: Սրահից պատգամաւորները ուրախ-ուրախ դուրս թափուեցին ընդառաջ և երիտասարդներից մի քանի հոգի արագ իջնելով ցած, Ալէքսան դայուն առան իրենց թևերի վրայ, բարձրացան վեր և բոլոր պատգամաւորները միաբերան "կեցցէ Ալէքսան դային" գոչելով ովացիա արին: Պատգամաւորների ոգևորութիւնը անսահման էր:

Ալէքսան դային մանրամասն պատմեց, թէ՝ Հաջի սամլուեցիները լուսաբացին յանկարծ յարձակուել էին մեր գիւղերի

---

[79] Թումեանը Մոսկուայի Համալսարանի և Բախչին էջմիածնի ուսանող եղած ժամանակ նամակագրութիւն են ունեցել իրարու հետ: Այն ժամանակ Մոսկուայում աշակերտ էր բարձր դասարաններում և աշակերտական միութեան կոմիտէ կոչ էր պահելիս եղել Դաշ. կոմիտէի հետ: Բախչին հայրը՝ Զաքար ամէն, բոլոր նամակները ուղ էր ինձ, և իմ ունեցած թղթերի հետ հրոյ ճարակ եղան, ինչպէս և Թումանի, Վալդանի և Յովհան Թումէնեանի՝ հօրս (իրենց դպրոցական ուսուցչին) գրած նամակները. Շուչա ապրատամբական արկածախնդրութեան ժամանակ: (Հեղ.)

վրայ, որոնցից Փահլուլը և Ջամիլյան չատ փոքր լինելով, տղամարդիկ կանանց և երեխաներին ճամբայ են դնում Խանքենդ, իսկ իրենք զիւղերից դուրս դիրք բռնում: Կեցցեն Կրկժանի և Խանքենդի տղաները. անմիջապէս օգնութեան են հասնում, երբ հրացանաձգութեան ձայնը լսում են, տղաներից չատերը այնքան էին չտապել, որ կիսահագնւած փամփչտակալները կապել մէջքներին, հրացանն առել, վազել էին դէպի դիրքերը: Յարձակման մասին հաւարը չուտ է հասնում Խնածախ և Բալլուջա զիւղերը: Ես ձիաւորներով չտապեցի ժամ առաջ հասնել: Մի ժամ անց հասան հետևակ ուժերը. կէսօրին հասան Վարանդայի մեր ուժերը և Դալի Մահրասան, որ զիւղումն էր եղած, քրդերի յարձակման մասին լուրը առնելուն պէս, դաչրուլադցի ձիաւորների գլուխն անցած նոյնպէս հասնում է կուին: Կռիւը բորբոքւեց, սաստկացաւ կէսօրից յետոյ: Շատ որդի քրդերը, աւատ փամփուչտ ունենալով անդադար համազարկ էին տալիս: Կեցցեն մեր տղերքը: Բանի տեղ չէին դնում ոչ նրանց դոռում-դոչիւնին, ոչ համազարկերին և ոչ էլ դում-դում փամփուչտների պայթիւններին, խնայողութեամբ էին գնդակ արձակում, անտեղի չէին կրակում: Բոլորը կարգապահութեան ենթակայ էին: Քրդերը այսօր առաւօտեան նահանջելու նշան ցոյց տւին և մերոնք հրամանի էին սպասում, հէնց նշանը տրւելուն պէս, տղերքը ուռռա գոռալով առաջ նետւեցին, կրակելով ոչ յաճախակի: Քրդերը տեսնելով մեր խոյանալը դէպի առաջ, նահանջի ճամբան բռնեցին կրակելով: Մենք ահագին տարածութիւն կտրեցինք, քրդերի նահանջը փոխւեց փախուստի և մենք կանգ առանք, այլևս առաջ չգնացինք: Քրդերը եօթանասուն և վեց դիակ էին թողել նահանջելիս. բոլոր դիակները առանց զէնքի էին. ի հարկէ, չիմար չէին, որ զէնքերը թողնէին մեզ: Մենք մեկ ու կէս օրւայ կռւում տասն ու չորս վիրաւորներ ունեցանք, որոնցից միայն չորս հոգի ծանր են, բայց յուսով ենք, կառողջանան, իրենց պլնդ էին դգում: Շատ լաւ գործ էին կատարել դիւղերի և Խանքենդում տանը մնացած անդէն տղամարդիկ ու կանայք, որ իսկոյն խմոր են պատրաստել, առաւօրէն հաց թխել, ձու եփել, պանիր ու սոխ, հասցրել կռւողներին, որոնք մինչև կէսօր ոչինչ չէին կերել. երբ հացը հասաւ, տղերքը դադար չառան, հէնց ուտելով էլ կռւում էին: Այսօր առաւօտեան տղերքը ոչ միայն հաց ու պանիր, այլ և խաչած միս էին բերել կռւողներին: Պիտի ասել, որ կռւողը լաւ կռւեց, տանը մնացածներն էլ իրենց պարտականութիւնը լաւ կատարեցին: Ինչ խօսք, որ Ալէքսան դայու դեկավարութեամբ կատարւած ինքնապաշտպանութեան յաջող գործը՝ քրդերի յարձակումն ու փախուստը մեծապէս աղդեց պատգամաւորների վրայ, բոլորի տրամադրութիւնը բաւական բարձրացաւ, որն աւաղ, նորից պիտի ընկճւէր:

Երբ Ալէքսան դային վերջացրեց իր խօսքը, բոլորը բուռն կերպով ծափահարեցին. մի քանի պատգամաւորներ դանադան

հարցեր տվին Ալէքսան դայուն, նա էլ պատասխանեց: Տրուած հարցերից մէկը հետաքրքրական էր, թէ ինչպէս է, որ թիչնամին այդքան ղոհեր է տալ, իսկ մերոնք, համեմատաբար՝ չատ քիչ: Ալէքսան դային ասաց՝ "Աստուած Մակար Կաթողիկոսի[80] հողին լուսաւորի, այն ժամանակ, երբ ռուսաց թագաւորը հրաման տուաւ, որ հայերն էլ պարտաւոր են զինուոր տալ կառավարութեանը, մեր ծնողները անիծում էին թագաւորին, որ մեզանից զինուոր է պահանջում, իսկ կաթողիկոսից էլ ժողովուրդը դժգոհ էր, որ թագաւորի պահանջը ընդունել էր: Իմ մայրն էլ ուրիչների պէս լացով է ճամբայ ղրել զինուորութեան, բայց հայ-թրքական կռւին տեսանք զինուոր դառնալու օգուտը. մեր կռւողները չատ աւելի լաւ էին նչան բռնում, թուրքերի հետ համեմատած. թուրքերը մեծ պաչար ունէին և առատօրէն, անխնայ կրակում էին. մեր սպանուածները առհասարակ պատահականօրէն զիպած գնդակներից են": Մեր կռւողները զօրքում ծառայած և սովորած են հրացան բանեցնելը: Միանգամայն ճիչտ էր, ի հարկէ, Ալէքսան դայու բացատրութիւնը:

Ի դէպ, զարարաղցիներս գիտէինք, աւելի ճիչտ, ինչպէս լսել էինք, որ Ալէքսան դային էլ ուրիչ զարարաղցիների հետ մասնակցել է Խանասորայ արչաւանքին, այդ մասին վկայում էր արչաւանքին մասնակցած Դիղակի թաղ գիւղացի Զթչեան Աստուրը. հետագային, չատ ուչ, Թէհրանում պատահական զրոյցի ընթացքին ալաչկերտցի հին խմչապետ Արամայիս Աղնաուրեանը և ախալցխացի Ուսուլ Խէչօն (Խաչատուր Տէր Կարապետեան), որոնք յաճախ էին լինում մեզ մօտ, պատմում էին Խանասորայ արչաւանքի նախապատրաստական աչխատանքների մասին և ասում էին, թէ Ալէքսան դային, որպէս զինուորական ծառայութիւնը աւարտած աւագ եֆենասպայ, ոչ զինավարժ մարտիկներին մարդում էր, գնդակ արձակել սովորեցնում: Ուսուլն ասում էր՝ "գնդակը ճիչտ խփելը Ալէքսան դային է սովորեցրել ինձ": Ս. Վրացեանի հրատարակած "Դաչնակցութեան Դիւանի" "Բ" հատորում, Գալուստ Ալոյեանի կազմած Խանասորայ մարտիկների անուանացանկում չգտայ Ալէքսան դայու անունը: Վրացեանը փաստաթղթերի հետ վարուելիս նկատած է որպէս չատ ըծախնդիր մարդ, որ անճչտութիւններ չպրդուեն ներս, նա ի հարկէ, նոյնութեամբ լոյս է ընծայել Գ. Ալոյեանի կազմած անուանացուցակը, որում փնտրեցի և չգտայ Ալէքսան դայու անունը. դա ինձ համար հանելուկ մնաց: Արամայիսը ներզաղթին վերադարձաւ երկիր, այնտեղ մեռաւ, իսկ

[80] Մակար Կաթողիկոս. Մակար Ա. Թեղուտցի (1813-1891). Ամենայն Հայոց կաթողիկոս՝ 1885 թուականից: 1864թ. նչանակել էր Վրաստանի Հայոց Հոգեւոր Թեմի առաջնորդ, 1876-ին՝ Նոր Նախիջեանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ, 1883-ից՝ նաեւ Գէորգ Դ. կաթողիկոսի անդամապահ: Նրա ջանքերով 1885թ. ցարական արքունիքը վերանայել է իր 1884թ. որոչումը՝ «Կովկասի Հայ լուսաւորչական եկեղեցու ուսումնարանների մասին», թոյլատրել վերաբացել հայկական դպրոցները, վերականգնել կաթողիկոսի իրաւունքները: (Խմբ.)

Ուսուլը՝ Թէհրանում: Նրանց մահուանից յետոյ լոյս տեսան Դիւանի երկու հատորները, այնպէս որ, ստուգել հնարաւոր չէր:

Անանանացուցակը ուշի ուշով կարդալով տեսայ, որ Ուսուլ Խէչոյի անունը կրկնուած է No.121 և No.142 Խաչ. Տէր Կարապետեան. երկու տեղում էլ յիշուած է կեղծ անունը՝ Ուսուլ: Խէչոյին ճանաչում էի Կովկասից, իր մեծ եղբայրը՝ Պօղոսը, մեր երգեցողութեան ուսուցիչն է եղել Շուշու թեմական դպրոցում, ղեմքով էլ մի քիչ նմանում էր Նիկօլայ Թագաւորին, չիկահեր, բարձրահասակ մարդ էր. Ուսուլը կարճահասակ էր:

Արչաւանքի մարտիկների ցուցակում տեղանունների աշխարհագրական սխալներ կան: Հին օրերի Դաշնակցութիւնը թղթեր մրոտելու ոչ ժամանակ և ոչ էլ առանձին հակում է ունեցել, ինչպէս իրաւամբ նկատել էր Միք. Վարանդեանը: Գալուստ Ալոյեանը արչաւանքի մարտիկների ցուցակը կազմել է արչաւանքից տարիներ յետոյ, թերևս ձեռքի տակ անհրաժեշտ զրաւոր տեղեկութիւններ լրիւ չի ունեցել և յիշողութեամբ է զրի առել ցուցակի մի մասը: Հարկաւ, յեղափոխական թոհուբոհի ժամանակ զրի առնուած թղթեր են, կամքից անկախ սխալներ կարող են լինել:

Տաճկական հրամանատարի պահանջը, ի հարկէ, յայտնի էր Ալէքսան դայուն, որին մի քանի հոգի պատգամաւորներից հարց տւին, թէ ինչ կարծիք ունի, ի՞նչ պիտի անել: Ալէքսան դային կարճ պատասխան տուաւ. "Ես մի ղինուոր մարդ եմ. ժողովրդի ծառան, ինչպէս ժողովուրդը կարգադրէ, այնպէս պատրաստ եմ կատարելու: Դուք, որպէս ժողովրդի ներկայացուցիչներ, դուք պիտի որոշէք, թէ ինչ պիտի անել, և մեկն էլ ես կը լինեմ, որ ձեր կարգադրութիւնը կը կատարեմ":

Նախորդ օրւայ պէս պատգամաւորներից չատները արտայայտւեցին, մեկը միւսի ասածները կրկնելով, կառավարութեան օձիքը բաց չէին թողնում, ուղում էին, որ կառավարութիւնը յայտնէ դէմ իր կարծիքը, եթէ ոչ պարզ և որոշած տեսակէտը:

Պատգամաւորներից մի քանի հոգի՝ մարտակերտցի Նիկոլ Համբարձումեան, Ղչլաղցի Բախչի Մուրադեան և ղրնավազցի Համբարձում Մելքոնեանը առաջարկում են նիստը փակել, գտնելով, որ յոգնած ուղեղով հնարաւոր չէ որոշում կայացնել. պէտք է թողնել վճռահատումը յաջորդ օրւայ նիստին: Սակայն հիշտ այդ վայրկեանին Ասկերանի սուրհանդակը հասաւ և տեղեկացրեց, որ Ասկերանի ճակատում՝ Խրամորթից մինչև Միւրիչէն, տաճկական ուժերը յարձակում են սկսել և մեր ուժերը ուժեղ դիմադրութիւն են ցոյց տալիս: Պատգամաւորների տրամադրութիւնը, որ Քևսալարի

կուում քրդերին ջարդելու հետևանքով բաւական բարձրացել էր, նոր հասած տեղեկութեան պատճառով, տեղի տուց անկման և բոլորը մեկէն լրջացան, ու չարունակուց նիստը և առաջին հերթին որոշուեց սուրհանդակներ ուղարկել թէ չղթայազերծած կռւի ճակատը և թէ այն տեղերը, որտեղ կարող էր նոր ճակատներ ստեղծուել, ամենուրեք ժողովրդին կրկնելու մէջտ աբւած նախազգուշութիւնը՝ երբէք նախայարձակ չլինել, դուտ ինքնապաշտպանական դիրքում մնալ և խնայողաբար, ճիշտ նպատակի գործ ածել փամփուշտը: Սուրհանդակներ ճամրելուց յետոյ, երբ արդէն բաւական ուշ էր, ժամը 10-ից անց, նիստը փակուեց: Քաղաքի ու կուսակցութիւնների ներկայացուցիչները և կառավարութեան անդամները խմբովին դրուցելով ժողովատեղիից ուղղուել էինք դէպի Մարիամ Ղուկասեան դպրոցի առջևի հրապարակը, երբ քաղաքի արհեստաւոր ընկերներից կօշկակար Արմենակ Ահարոնեանը վաղէվաղ մօտեցաւ և ասաց՝ "Տաճիկները Բազից երկու հայ են ուղարկել կառավարութեան հետ խօսելու.:" Բոլորը միասին անակնկալ փաստից յանկարծակիի եկած, արագացրին իրենց քայլերը, գրեթէ վաղէվաղ հասնելով հասարակական ակումբը, որտեղ և գտնուում էին ուղարկուած երկու հոգին:

Սրահում, բացի մեր խմբից, տեղ էին գտնել նաև բաւական թւով ակումբի անդամներից, լսելու լրաբերներին: Գիւղացի տղաներ էին, որոնք աչխատելիս են եղել նաւթահանքերում, որպէս բանուորներ: Խելացի, աչքաբաց երիտասարդներ էին, երեսունից ոչ անց:

Զարմանալի էր, քաղաքի հայերի մէկ մասը չէր հաւատում, որ Բազուն գրաւել են տաճիկները և քանի որ կցկտուր տեղեկութիւն էր հասել, այն էլ չուչեցի թուրքերից լսած, որ Բազւի հայերի մի չնչին մասը նաւերով դուրս է եկել բաց ծով, ուստի կռահողները աւելի ճիշտ երևակայութեան դօռ տուած լինելու հետևանքով, իբրև լինելիք բաներ էին ասում, թէ հաւանօրէն հայերը Հաչտարխանից[81] և Պետրովդաղսկից ռուսներից օգնութիւն ստանալով արդէն հակայարձակմամբ գրաւած կը լինեն Բազուն և հալածած տաճիկներին, որոնք ամբողջ երեք ամիս կրակ տեղացին հայերի վրայ. հայերը նրանց մի անգամ քշել էին մինչև Կարամարևան, Քիւրդամիր. իսկ կային հայեր, որ չէին էլ հաւատում, թէ Բազուն ընկել է: Յիշեալ երկու հոգին, հէնց այդ պատճառով, բոլորի ուշադրութիւնն էին գրաւել. նրանց մասին տեղեկութիւնը կայծակի արագութեամբ տարածւել էր քաղաքում, և չուտով ակումբի չուրջը ահագին բազմութիւն էր հաւաքուել, տեղեկանալու, թէ ճի՞շտ է Բազւի անկումը, թէ ոչ. բոլորը ուզում էին նրա մասին. ակումբի

[81] Աստրախան: (Խմբ.)

դռնապանները ընդիմանում էին, ուստի յայտարարուեց բաղմութեանը, թէ եկողները կառավարութեան հետ գործ ունեն, կառավարութիւնը ինչ որ իմանայ, կը յայտնէ ժողովրդին:

Եկած տղաները պատմեցին Բագւում տեղի ունեցած սարսափների մասին, թէ ինչպէս կոտորել են անպաշտպան ժողովրդին, առանց սեռի և հասակի խտրութեան. կոտորել են թէ տաճիկները և թէ տեղական թուրքերը: Տեղացի թուրքերից եղել են չատերը, որ իրենց ծանօթ հայերին պաշտպանել են՝ նրանց թաքցնելով և խաբելով կատաղած կոտորած սարքողներին, թէ իրենց մօտ հայեր չկան, իրենք էլ թաքնուած են եղել, բայց նկատել են հարեան թուրքի տնից, երբ դուրս են եկած եղել բակը: Կոտորածի վերջին օրն էր, իրենց էլ բանտ են նետում, որտեղ մի քանի օր պահելուց յետոյ, տանում են տաճկական չտարը՝ հարց ու փորձի: Երկու զարաբաղցիները ասկնարների հսկողութեամբ ուղարկուել են Շուշի, յայտնելու հայերին, թէ Բագւի հայերը ընդունել են Աղբրէջանի իշխանութիւնը, որպէսզի Ղարաբաղն էլ ընդունի: Նրանք յայտնեցին նաև, որ իրենց ճամբու դնելիս մի քանի հոգի հայեր կային, որոնք իրենց պատուիրել են յայտնել Ղարաբաղի ժողովրդին, դիմադրութիւն ցոյց չտալ տաճիկներին, ինչ որ առաջարկեն՝ ընդունենք:

Կառավարութեան անդամները և կուսակցութեանց ներկայացուցիչները, ղանաղան հարցեր տալով, ուղեցին, որ նրանք Բագւում տիրող կացութեան մասին աւելի պարզ խօսեն, բայց կիսագրագէտ տղաները իրենց աչքով տեսածից ու լսածից աւելին տալ չէին կարող: Ակումբից դուրս եկանք, թէ չէ, դրսում սպասողները չրջապատեցին տղաներին, հարցեր տալով՝ "ճի՞շտ է, որ Բագւում կոտորել են հայերին", "ճի՞շտ է, որ ժողովուրդը նաւերով փախել է դէպի բաց ծով", ոմանք էլ դեռ չէին հաւատում, որ Բագուն ընկել է, հարցնում էին՝ "ճի՞շտ է իսկապէս, որ Բագուն ընկել է, թէ՞ ոչ": Տղաները չչկուել էին հարցերի տարափից. այդ միջոցին ղարաբաղցիներից մի քանի հոգի տղաներին առան իրենց մէջ ու բաղմութիւնից աղատելով, տարան իրենց մօտ ղիչերելու և հանգստանալու:

Սեպտեմբեր 20 ին առաւօտեան Ալէքսան դային եկաւ մեր տուն, միասին թէյ խմելու, նախաճաչ անելու: Ինչպէս յիշեց իր տեղում, կառավարութիւնը իր տեսակէտը պարզել էր արդէն, բայց, ճիշտը խոստովանած, չէինք համարձակւում յայտնել, մինչդեռ պատգամաւորները կառավարութիւնից էին սպասում այն պատասխանը, որ պիտի տուէր տաճկական հրամանատարութեան, և որովհետև դէպքերի ընթացքով ես էի դարձել կառավարութեան նախագահը, հարցը ինձ էին ուղղում: Կառավարութեան կարծիքն էլ այն էր, որ նթէ պիտի յայտարարւի կառավարութեան տեսակէտը,

իմ պարտականութիւնն էր՝ յայտարարութիւն անել: Եւ, ինչպէս դուք. Համբարձումեանն էր նկատել, ելոյթներ ունենալուց մոմենտները են եղել, որ պիտի յայտնէի, բայց խուսափել էի: Մեր տեսակէտը յայտնելու հարցը կառավարութեան բոլոր անդամներին հաւասարապէս մտահոգութիւն էր պատճառում, և չարունակ վարանում էինք, յանկարծ պրովակացիա տեղի չունենար, տակն ու վրայ լինէր ամէն բան:

Գիշերը չատ քիչ էի քնել և ամբողջ ժամեր մտածում էի, ինչպէս անել, մի կերպ յայտնի դարձնելու մեր տեսակէտը և, ի վերջոյ, յանգեցի այն եզրակացութեան, թէ քանի որ Ալէքսան դային օրւայ իրական հերոսն էր, նրա ներկայութիւնից օգտուել և նրա միջոցով կարդադրել գործը հետևեալ ձևով: Պատգամաւորների մէջ կային այնպիսի մարդիկ, որոնք հեղինակութիւն ունէին ոչ միայն իրենց գիւղում, այլ հարևան մի չարք գիւղերում և քանից աւելի էին նման հեղինակաւոր անձինք պատգամաւորների մէջ, որոնց հետ առանձին հաւաքոյթ ունենալով Ալէքսան դայու մասնակցութեանը, իրերի դրութիւնը հանգամանօրէն կրկին պէտք էր քննարկել, որից յետոյ և Ալէքսան դային պիտի ասէր՝ "ընդդիմանալու և երկարատև կռիւ մղելու ոչ մի հնարաւորութիւն չունենք". ես էլ վրայ պիտի բերէի, թէ՝ "ի հարկէ չունենք, հակառակ մեր կամքի և ցանկութեան, ստիպւած, պիտի ենթարկւենք, համաձայն պահանջի": Յիշեալ հեղինակաւոր մարդիկ արդէն նախա-պատրաստուած կը սպասեն, երբ ձայն վերցրած պատգամաւորները վերջացնեն իրենց խօսքը, դարձեալ խօսք կուղղեն կառավարութեան, որպէսզի վերջինս յայտնի իր կարծիքը, ես էլի կը կրկնեմ տւածս ղեկուցումը, որ ընդդիմանալու և երկարատև դիմադրութեան հնարաւորութիւնը չունենք. իրենք կը բացականչեն՝ "ուրեմն կը նշանակէ պիտի ենթարկւել". իմ պատասխանը կը լինի՝ "եթէ հնարաւորութիւն չկայ, պարզ է, որ պիտի ենթարկւել:"

Ալէքսան դայուն յայտնեցի միտքս, և նա համաձայնեց: Որոշեցինք նիստի կէսօրւայ դադարին հաւաքել հեղինակաւոր պատգամաւորներին և նախապատրաստել նրանց, ճաշից յետոյ կայանալիք նիստին գործի անցնելու: Այդպէս էլ արինք: 30 հոգու առանձին հաւաքելով, խորհրդակցական նիստին պարզ յայտնեցի կառավարութեան տեսակէտը, և Ալէքսան դային, որպէս օրւայ ամենահեղինակաւոր մարդը, դատւ, որ ճիշտ է կառավարութեան տեսակէտը, ուստի պատգամաւորները որոշեցին պաշտպանել այն:

Առաւօտեան ժամը 9-ին նիստը սկսւեց, նախագահը մի քանի խօսքով յոյս յայտնեց, որ անչուշտ պատգամաւորները լուրջ քննութեան են առել հարցը և անչուշտ յանգել են որոշ եզրակացութեան. պէտք է վերջապէս մի որոշում կայացնել,

որպէսզի պատգամաւորները վերադառնան իրենց տեղերը և ներկայ տագնապալի օրերին ժողովրդի հետ լինեն ու իրենց պարտականութիւնը կատարեն: Ապա հարց տուաւ, թէ ով է ուզում խօսել:

Ձայն է խնդրում արևմտահայ գաղթականների պատգամաւոր Հմայակ Փափազեանը, զրագէտ, լուրջ ու խոհուն, երեսունն անց, համեստ մի մարդ: Նա չատ ամփոփ զեկուցեց, թէ Ղարաբաղ հասած արևմտահայ բեկորների խումբը տաճկական նաթաղանից հրաչքով ազատուած մարդիկ են և չատ զգացած այն ջերմ ընդունելութիւնից, որին արժանացան իրենց եղբայրների կողմից, սակայն խնդրում են, որ ինչպիսի որոշում էլ կայացնելու լինի համագումարը, որոշման մէջ հրաչքով փրկուած մեր բեկորների գոյութեան սպառնացող կէտ չլինի, որովհետև բոլորը համոզուած են, որ եթէ տաճկական հրամանատարութիւնը պահանջ դնի արևմտահայերին յանձնելու և ժողովուրդը հարկադրուած լինի կատարել տրուած հրահանգը, կասկածից դուրս է, որ բոլորին սրի պիտի քաշեն:

Նախագահը և կառավարութեան անդամները, որ բոլորուած էին սեղանի չուրջը, միաբերան գոչեցին՝ "նման բան չկայ", ապա նախագահը ամփոփ կերպով պատասխանեց Փափազեանին, թէ՝ "ցարդ նման պահանջ չի եղել տաճկական հրամանատարութեան կողմից և եթէ հետագային նման պահանջ լինի, ամենայն ուժգնութեամբ պիտի յետ մղուի, կտրականապէս մերժուի: Ղարաբաղի ժողովուրդը անընդունակ է դաւաճան լինելու իր հարազատ եղբայրների հանդէպ: Վերջապէս մի բան պէտք է պարզ լինի, և երկու կարծիք լինել չի կարող. եթէ տաճիկները ուզենան հայ կոտորել, ոչ մէկ խտրութիւն չեն դնի արևմտահայի և արևելահայի միջև, երկուսին էլ կը կոտորեն:

Այնուհետև ձայն խնդրեց դոք. Արշաւիր Տէր Գաբրիէլեանը, որ կանգ առաւ ստեղծուած ծանր կացութեան վրայ, թէ իրօք կրիտիկական է մեր վիճակը, ինքնապաշտպանութեան համար ամէնաանհրաժեշտ բանը՝ ռազմամթերք, չունենք. այո, խիստ ծանր է մեր վիճակը, բայց, այնուամենայնիւ, այնպէս պիտի աննենք, որ յոյսը չինելու փոխարէն, աչքը չհանենք: Եւ որոշակի առաջարկ չի անում, թէ ինչպէս պիտի վարուել:

Քաղաքի պատգամաւորներից մէկը՝ Սերգէյ Կիրակոսեանը (կօչկակար), որ առաջին շարքում էր նստած և անհանգիստ շարժումներ էր անում, երբ դոքտորը վերջացրեց իր խօսքը, տեղից բացականչեց հեգնանքով՝

- Ի՞նչ ասացիք դոքտոր. մի բան չասացի՛ք, ոչ մի միջոց չառաջարկեցիք:

Բժշկին յաջորդեցին ուրիշ պատգամաւորները, որոնք նոր բան չէին ասում. մէկը միւսի ասածն էր կրկնում և նոյն խօսքերով վերջացնում ճառը թէ՝ "իսկապէս ղրուխինը չատ ծանր է, մարդ չգիտէ, թէ ինչ պիտի անել:" Խօսողները յաջորդում էին իրարու առանց նոր բան ասելու և նստում իրենց տեղը: Կիրակոսեանն էլ ամէնքին կասէր նոյնը՝ "Ի՞նչ ասացի՛ք. ոչի՛նչ չասացիք": Նախագահին կամացուկ ասացի, որ ձայն տայ Կիրակոսեանին՝[82] արտայայտելու, քանի որ ղժգոհ բոլոր խօսողներից, ամէնքին էլ նոյն բացականչութիւնն էր անում: Նիստի դադար տալու ժամը լրանալու վրայ էր, նախագահը դարձաւ Կիրակոսեանին, թէ՝ "Պարոն Կիրակոսեան, խօսքը ձեզ է պատկանում":

– Ես ձայն չեմ խնդրել, պարոն նախագահ:

– Ոչինչ, որ չէք խնդրել, ինքս եմ ձայն տալիս ձեզ և խնդրում, որ ձեր կարծիքն ասէք, թէ ինչ պիտի անել, թերևս դուք մի միջոց կասէք:

Պատգամաւորներից մի քանիսը, որ արդէն խօսել էին, կարծես, կոահելով նախագահի միտքը, տեղներից հաւանութիւն տալով, արձագանքեցին՝

– Այո, այո, խնդրում ենք, որ պարոն Սերգէյը խօսի:

Կիրակոսեանը խուսափել չկարողացաւ, վրին ընկած վեր կացաւ, մօտ եկաւ ամբիոնին, բարձրացաւ և խնդճ-խնդճ դարձաւ ժողովին: "Գիտէք, իսկապէս, որ ղրուխինը չատ ծանր է, մարդ չգիտէ, թէ ինչ պիտի անել»: Ժողովը, կարծես էլեկտրական կոճակը սեղմելու նման, մէկէն փռթկաց. բոլորը միահամուռ ծիծաղեցին, մի պահ մոռանալով օրեր տևող խիստ ընկճած հոգեվիճակը: Նախագահը, օգտւելով առիթից, դարձաւ ժողովին, թէ՝ "դադարի ժամ է, նիստը փակւում է" և պահանջի ձևով ասաց, որ ճաշից յետոյ պատգամաւորները պատրաստած գան ժողովի, նկատի ունենալով, որ ամէն մի րոպէն թանկ է, մինչդեռ ժամերով, օրեր չարունակ միայն խօսում ենք առանց արդիւնքի. պատգամաւորները, որպէս ժողովրդի լիազօր ներկայացուցիչներ, պիտի իրենց այո՛ն կամ ոչը ասեն, ու այլևս չպիտի խօսել, պիտի քւէարկութեան դրւի հարցը:

Ճաշից յետոյ նիստը բացւած յայտարարելով, նախագահը կրկնեց արդէն նախորդ նիստին իր ասած խօսքերը և խնդրեց, որ պատգամաւորները ձևակերպած առաջարկներ կամ, աւելի ճիշտ, թանաձևեր առաջարկեն:

Առանձին պատգամաւորներից խորհրդակցութեան մէկը՝ մասնակից մարդակերտցի Նիկոլայ

---

[82] Սա մեր լաւագոյն ընկերներից մէկի՝ Գաբրիել Կիրակոսեանի եղբայրն էր: Հայաստանը նոր խորհրդայնացած օրերին, Ղարաքիլիսէի մեր կոմունիստական հայ համայնավարները նրան, Տիկ. Նատալիա Մուրադխանեանի և այլ ընկերների հետ, դնդակահարեցին 1921թ. յունւար 9-ին: (Հեղ.)

Համբարձումեանը, տեղից բացականչեց "Ախր, պարոն նախագահ, ինչո՞ւ կառավարութիւնը, որ աւելի տեղեակ է, չի յայտնում իր տեսակէտը, որը գուցէ հէնց բոլորիս ուզածն է" : Խորհրդակից միւս պատգամաւորներն էլ ձայնակցեցին, բացականչելով՝ "Այո, այո, ճիշտ է ասում Նիկոլը, թող կառավարութիւնը պարզ յայտնի իր տեսակէտը»:

Եւ բոլորի հայեացքները ուղղուեցին դէպի կառավարութեան անդամները, որ կիսաշրջան նստած էին իրենց տեղում, նախագահութեան երկու կողմը, իսկ կառավարութեան անդամները, որ արդէն տեղեակ էին Ալէքսան դայու մասնակցութեամբ պատգամաւորների հետ ունեցած խորհրդակցութեան, աչքով նշան արին, որ մտնեմ դերիս մէջ: Եւ ես էլ, ինչպէս դասը լաւ սերտած աշակերտ, կրկնեցի նախորդ նիստերին ասածներս, չեչտելով մի հանգամանք, որ շատ կարևոր է և վճռական նշանակութիւն ունեցող. այն է՝ "որ մենք գուրկ ենք ռազմամթերքներից և եթէ գործ ունենայինք միայն Ադրբէջանի կառավարութեան հետ, թերևս առանձին մեծ դժուարութիւն չունենայինք մեր դիրքը որոշելու, ծառանալու և ամենայն ուժգնութեամբ մերժելու տրուած պահանջը: Տեսանք, փաստը, մեր աչքի առջևն է. երեկ քրդերը յանկարծակի վրայ տուին Քեօսալարի կողմից և ջարդուեցին: Եւ եթէ Ղարաղչլաղի կուին միմիայն տեղական թուրքերը լինէին, մենք պարտութիւն չէինք կրի, արդէն յայտնի է դարձած, որ տաճկական կանոնաւոր զօրամաս է գործելիս եղել տեղացիների հետ միասին: Եւ մենք հիմա գործ ունենք պետական զօրքի հետ, որը Բագւի իր յաղթանակով յղփացած և ռազմական մեծ պաշարով կանգնել է մեր դիմաց, իսկ մենք, կտրուած մեր կենտրոնից, Երևանից և մեր միւս հատուածից՝ Զանգեզուրից, որևէ օգնութիւն ստանալ չենք կարող, ի վիճակի չեն օգնելու ոչ Երևանը և ոչ էլ Զանգեզուրը: Եթէ մենք մեր ունեցած զէնքերի համեմատութեամբ անհրաժեշտ քանակութեամբ ռազմամթերք ունենայինք, կարող կը լինէինք համարձակ խօսել թշնամու հետ. ռազմամթերք չունենք, առ առաւելը երկու օրուայ պաշտպանողական կռի փամփուշտ ունեն մեր հրացան ունեցող մարդիկ, և ուժով դիմադրութիւնից յետոյ, մեր հրացանները պիտի դառնան հասարակ մահակներ": Վերջին նախադասութեանը հետևեց մի քանի նախապատրաստ պատգամաւորների դրեթէ միաձայն հարցական բացականչութիւնը՝ "Ուրեմն դինաթա՞փ լինենք և լուռ նստարկուե՞նք":

– Ոչ, ասացի, պէտք է ընտրել երկու չարիքից փոքրագոյնը, այն է՝

ա) Ոչ թէ բոլորովին, այլ երեսանց դինաթափ լինել, ժողովրդից հաւաքել ամէն տեսակ ծխարձակ հրացանները՝ ըմբաան, այնալու (մարտին), զավիաղլու, դաշաղլու, չախմախլի, չիչլի և նման զէնքերը, որոնք այլևս չեն գործածւում, յանձնել տաճիկներին:

բ) Քանի որ մեր հարցը իր լուծումը պիտի ստանայ Պոլսի կոնֆերանսում, ժամանակաւոր կերպով ճանաչել Աղբրէջանի իշխանութիւնը և սպասել Պոլսի որոշման:

գ) Համաձայնել, որ մի վաչտ զօրք մտնի Շուշի, կարգ պահպանելու նպատակով:

դ) Մեր զինուած ուժերը ցուցական ձևով չերևան ոչ մի տեղ. զգոյշ մնան իրենց տեղերում, եթէ տաճիկները ուղենան կոտորած սարքել, ուժեղ դիմադրութիւն ցոյ տալ ու, եթէ պիտի կոտորուենք, ոչխարների պէս չկոտորուենք:

Ահա, այս է կառավարութեան տեսակէտը, որին նա յանգել է, ստեղծուած ծանր դրութիւնը հանգամանօրէն ամէն կողմից քննելուց յետոյ:

Երբ վերջացրի խօսքս, խորհրդակցութեանը մասնակցած պատգամաւորներից Նիկ. Համբարձումեանը, Համբ. Մելքումեանը, Բ. Մուրադեանը, Ա. Սուքիասեանը և ուրիշներ յաջորդաբար խօսեցին ու պաչտպանեցին կառավարութեան տեսակէտը, յայտարարելով, որ ուրիչ ելք չունենք:

Ի դէպ, քաղաքի ոստիկանապետ Միքայել Իշլեմէճեանը, որ միապետական ժամանակւայ կոպիտ ոստիկաններից աւելի կոշտ ու կոպիտ վերաբերմունքով ընդհանուրի հակակրանքին էր արժանացել, համագումարների ընթացքին իր որոշ չարժումներով կասկածելի էր դարձել, որպէս իր կոչման բարձրութեան վրայ չգտնուող պաչտօնեայ: Եւ այդ կասկածները հետևանք էին առաւելապէս Եպսօն Ալէքսանի և նմանների հետ ունեցած իր սիրալիր վերաբերմունքի: Գ. համագումարի ընթացքին, թուրքերի կողմից մի քանի երիտասարդներ քաղաքի հարաւային կողմի եղրի ապառաժների վրայով, իբրև թէ դիօսնելու նպատակով, ուղղել էին դէպի հայկական Բաղումց Հորեր կոչուած թաղը: Թուրքերը դանդաղ քայլերով գալիս, կանգնում են հայկական թաղի դիմաց: Իշլեմէճեանը նոյն ժամանակ գտնելով զբօսավայրից վեր, նոյն ապառաժների չարունակութեան հայկական մասի վրայ թէյ, կաթ, լիմոնադ ու նման խմիչքներ ծախողներից մէկի սեղանի չուրջը հաւաքուած մի քանի զինուած երիտասարդների հետ, նկատելով թուրքերին, գնում է նրանց մօտ ու երկար ղրոյցի բռնւում: Իրեն տրուած հարցին, թէ ինչու է գնացել նրանց մօտ, պատասխանում է, թէ տեղեկութիւններ իմանալու նպատակով է մօտեցել նրանց: Բացատրեցին իրեն, որ իր արտաքինով և տաճկերէնով չէր կարող վստահութիւն ներչնչել նրանց, որպէսզի իրեն տեղեկութիւններ հաղորդէին այդ օրերին, երբ լարուած դրութիւն էր, ո՞ր թուրքը կարող էր դաւաճանի դեր կատարել և ի վնաս իրենց ազգի տեղեկութիւն հաղորդել. խաղաղ ժամանակ անգամ նրանք տեղացի հայերին բան չէին ասում, ուր մնաց՝ իրեն ասէին: Նրա այդ

վարմունքը, հակառակ կառավարութեան կարգադրութեան, չարունակուեց. հանդիպումներ է ունենում թուրքերի հետ նոյն տեղում, ուստի կառավարութեան կողմից յայտարարուեց իրեն, որ պաչտօնից ղրկւում է, մանաւանդ որ չարագործելով իւր պաչտօնը, փորձել էր վաճառականներից երկու հոդու չանտաժի ենթարկել: Իչլեմէճեանը մի քանի կասկածելիների և Եապօն Ալէքսանի հետ մեկնում են քաղաքից գաղտնի կերպով: Անմիջապէս Ալէքսան դային ձիաւորներից մէկին ուղարկում է Խանքէնդ ու Խանածախ մեր վաչտապետներին յայտնելու, որ այնտեղ երևացող ոչ տեղացի զինուորներից ղգոյչ մնան:

Համագումարի ժամանակ, սեպտեմբեր 21-ին, Նուրի Փաչան գալիս է Աղդամ, իր հետ ունենալով Գանձակի առաջնորդ Լևոն Վրդ. Փսերեանին և Հայոց Քաղաքացիական Կոմիտէի անդամ Սերգէյ Տէր Իսրայէլեանին (Էս-Էր) ու հրամայում արձակել բանտից մեր պատանդներին, որոնք տեղեկանում են, որ Լիւթփալիբէկը ճակատում խփւել է: Մերոնք մնում են զարմացած: Լիւթփալի բէկը համալսարանաւարտ ճարտարապետ մարդ, երբէք զէնքի հետ գործ չունեցած, խաղաղասէր մէկը, ինչո՞ւ պէտք է ճակատում խփւէր: Մի քանի օր անց, երբ եղբայրը, Ալիբէկը, եկաւ Շուչի, իմացանք, որ տաճկական հրամանատարութեան թոյլտուութեամբ ուղել է գալ մեր դիրքերը, համոզել մերոնց, որ չդիմադրեն, աչխատեն բանակցութեան միջոցով լուծել խնդիրը, քանի որ զօրքի հետ գործ ունեն, ի վերջոյ պիտի ուժի առջև տեղի տան և իղուր տեղը ժողովուրդը պիտի տուժի: Երբ նա հետիոտն, սպիտակ փոքրիկ դրօչակը ձեռքին ուղղւում է դէպի մեր դիրքերը, առիթից օգտւում են իւր անձնական քինախնդիր հակառակորդ թուրքերը, սպանում են, որպէսզի ասէին, թէ հայերի գնդակով է սպանւել: Սակայն պարզւում է, որ Լիւթփալիբէկը խփւել է թիկունքից: Այնուամենայնիւ, սպանողն էլ պատժից ազատ է մնում:

Ալէքսան դային մեկնում է Խաչէն և Խանքէնդով անցնելիս տեղեկանում, որ Եապօն Ալէքսանը և Իչլեմէճեանը հայ խանութպաններից և սակաւաթիւ ռուս բնակիչներից դրամ են չորթել, անհանգստութիւն են պատճառում մարդկանց: Թէ հայերը, թէ ռուսները չեն ընդդիմացել, ենթադրելով, թէ դեռ պաչտօնական մարդիկ են: Ալէքսան դային Եապօնին, Իչլեմէճեանին ու նրանց հետ եղած մարդկանց ղինաթափ է անում և մտրակի հարուածներ տալով պահանջում անմիջապէս, որ հեռանան և դուրս ելնեն Ղարաբաղի սահմաններից: Զինաթափւած խուլիգանական խումբը ամօթահար, գլխիկոր հեռանում է և առանց յետ նայելու ուղղւում դէպի Գանձակի չրջանը: Նրանց մասին իրաղեկ դարձրինք Գանձակից եկած հիւրերին, որ նկատի ունենան:

Սեպտեմբեր 20-ի երեկոյեան չատ ուշ, Սեյդիչէնի գիւղացիներից մէկը լուր բերաւ, որ Առաջաձոր գիւղի առջև, Խաչէն գետի ձախ ափին, սարից իջնող քոչւորները փորձ են արել հանդում արածող հօտը խառնել իրենց հօտին ու քշել, տանել, բայց գիւղացիների հովիւների հարային վրայ է հասնում Բազրատ Ղազանչեանը իր խմբով, յարձակւում քոչի վրայ, մօտ 1000 գլուխ տաւար, 300 ոչխար և 15 բեռ հացահատիկ խլում և քոչւորներին քշում մեր սահմաններից դուրս: Անչուչտ քոչւորները տեղեկութիւն ունէին Բազի անկման և Ղարաբաղի հայութեանը տրուած վերջնագրի մասին, որ երեք առած, փորձ էին արել Առաջաձորի հօտը քշելու, ուստի Բազրատը պատժել էր նրանց:

Կռիւները չարունակւում են ճակատի երկարութեամբ Քարագլխից մինչև Սեյդիչէն, ուստի համաձայն համագումարի որոշման, յանձնախմբեր են կազմւում՝ ուղարկելու Ասկերանի երկու թևերի ուղղութեամբ գտնւած Խաչէնի և Վարանդի գիւղերը՝ ժողովրդի մտքերը խաղաղեցնելու եւ համագումարի որոշմանց հակառակ քայլեր չառնելու: Համագումարի վերջին նիստի արձանագրութիւնը, որի մէջ են կայացւած որոշումները, վաւերացւում են բոլոր պատգամաւորների ստորագրութիւններով: Համագումարի որոշմամբ երկու յանձնախումբ է կազմւում, ա) Վահան Եպ. Տէր Գէորգեան, Տիգրան Իւդրաչեան և Բախչի Մուրադեան, Ասկերան և նրա ձախ թևի երկարութեամբ գտնւող Խաչէնի գիւղերը գնալու, իսկ Ասկերանի աջ կողմի՝ Վարանդայի գիւղերը գնալու՝ Գարեգին քհնյ. Յովհաննիսեան, Եղիչէ քհնյ. Թարխանեան և Կարապետ Քհնյ. Վարդապետեան: Ճակատից, սուրհանդակների միջոցով, հրամանատարները չարունակ տեղեկացնում են կռիւների մասին: Սեպտեմբեր 21-ին յանձնախմբերը մեկնում են:

Համագումարը իր լիակազմ վերջին նիստում որոշում է կայացնում, որ պատգամաւորների մի փոքր մասը մնայ, չարունակելու աշխատանքները կառավարութեան հետ միասին: Ղարաբաղի հինգ գաւառների պատգամաւորները առանձին-առանձին իւրաքանչիւր չրջանից հինգական հոգու ընտրում են, որոնց միանում են քաղաքի պատգամաւորներից հինգ հոգի:

ՆՈՐ ԿՌԻՎՆԵՐ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Սեպտեմբեր 21-ին ճակատի երկայնքին կռիւը բորբոքւում է վաղ առաւօտից սկսած. մերոնք կատաղի դիմադրութիւն են ցոյց տալիս: Ճակատի ղանաղան կէտերից սուրհանդակներ են գալիս և փամփուչտ պահանջում և դատարկաձեռն վերադառնում: Թուրքերը ուժեղ զրոհով զրաւում են Ասկերանի աջ կողմում գտնւող

Մորիչէնկու դիւղը, սակայն Քևաշուկ ու Փիրջամալ, Վարաղաբուն դիւղերի մարտիկները սպայ Արշաւիր Պետրոսեանի ղեկավարութեամբ ուժեղ դիմադրութիւն են ցոյց տալիս և, բաւականաչափ կորուստներ պատճառելով, թշնամուն յետ մղում: Ղլիղրաչ, Խրամորթ, Քարագլուխ դիւղերի և Ասկերանի մարտիկները ձախ կողմում չարունակում են պաշտպանել, առանց մի քայլ դիջելու թշնամուն: Դալի Մահրասան, Մուսան, Աղասին Ալէքսան դայու ղեկավարութեամբ յամառութեամբ յետ են մղում թշնամու գրոհները, և Քարագլխի առջև թշնամին բաւական կորուստ է ունենում:

Սեպտեմբերի 22-ի առաւօտեան, համագումարի որոշմամբ, քաղաքագլուխ Գևորսիմ Մելիք Շահնազարեանը և Գրիգոր Ղարագիոզեանը՝ համագումարի պատգամաւոր, քաղաքից մեկնում են Աղդամ, բանակցութեան՝ տանկական զօրքերի հրամանատարի հետ: Կէսօրից անց թուրքերը Միւրիչէնկուից թիկունքից են կատարում՝ գրաւելով Դամրաղ գիւղը և սպառնում թիկունքից Քևաշուկի, Փիրջամալի և Վարաղաբոյնի ուժերին: Շարունակւում է դիմադրութիւնը երկու ճակատի վրայ: Առաւօտեան Ղլիղրաչ, Խնարտ, Խրամորթ, Քարագլուխ գիւղերի դիմաց կատաղի կռիւները չարունակւում են մինչև երեկոյ, ու թէև թրքական ուժերը մի քանի անգամ զգալի կորուստներով յետ են մղւում, այնուամենայնիւ, դադար չեն տալիս մեր մարտիկներին, որոնց փամփուչտը սպառելու վրայ լինելով, երկարատև դիմադրութիւն ցոյց տալու հնարաւորութիւն չկար այլևս, բացի դրանից, թուրքերը Ասկերանի աջ կողմից Միւրիչէնկու և Դամրաղ գիւղերը գրաւելով, անցել էին մեր ուժերի թիկունքը, որոնք չէին կարող դիմադրութիւն ցոյց տալ, այն էլ երկու ճակատի վրայ, մանաւանդ որ փամփուչտի պաչարից դուրկ էին: Անգամ եթէ ձախ թևի ուժերը անհրաժեշտ քանակութեամբ փամփուչտ ունենային, դարձեալ չպիտի կարողանային դիմադրել, որովհետև, թուրքերն արդէն գրաւել էին Ասկերանի աջ թևի բարձունքները, որոնք իշխում էին ձախ կողմի բարձունքների վրայ, և, ի լրումն այդ ամէնի, ձախ կողմի հրամանատար Ալէքսան դային վիրաւորւել էր երկու տեղից և փոխադրւել թիկունքի դիւղերից մէկը՝ Խանձք, քանի որ ի վիճակի չէր հետևելու կռւի ընթացքին: Այնպէս որ, մեր ուժերը մութին ընկնելուց նահանջում էին, ձախ կողմի ուժերը դէպի Սարդարաչէն, և աջ կողմի ուժերը դէպի Հարաւ:

Սեպտեմբեր 23-ին գիշերը թուրքերը գրաւում են Քարագլուխ, Խրամորթ, Խանարատ, Ղլիղրաչ, Ասկերան, Քևաշուկ, Նախիջևանիկ, Փիրջամալ, Վարաղաբոյն գիւղերը: Մութը չընկած, Ասկերանի անկման լուրը հասնում է քաղաք, որը չատ ծանր է ազդում. բոլորի տրամադրութիւնը ընկնում, մի տեսակ ընդարմացած վիճակ է տիրում: Ի՞նչ կարելի է անել: Կառավարութեան

անդամները, համագումարի պատգամաւորները, ընկճուած, իրարու երես էինք նայում: Կառավարութեան անդուզական քարտուղարը՝ Մելիքսէթ Եսայեանը, Դումանի անձնական մօտ ընկերներից, նախկին դաշնակցական և ռուսական առաջին յեղափոխութեան ժամանակ յարած հայ սոցիալ-դեմոկրատներին և 1917-ի յեղափոխութեան ընթացքին մի չարք ընկերների հետ յարել էր մեծամասնական թևին, սակայն հետագային, 1918 թ. սկզբներին հեռացած ու չէզոքացուած, չեչուած կերպով աղգայնական լինելու չնորհիւ, ամէնից ընկճուած տրամադրութիւնն ունէր: Ամառային վերարկուն առած ուսերին, նստած աթոռին, աչքերը փակ, լուռ էր: Հարցնում եմ՝ մեծ ապա (մեծ եղբայր), քնե՞լ ես. պատասխանում է՝ "ոչ, պիծի ապա (փոքր եղբայր), մեռած եմ":

Երկու օր առաջ Սպիտակ չէնացի մեր հին մարտիկներից Աղալար Հայրապետեանը, որ ամբողջ ժամանակ մեզ հետ ակումբում էր լինում, երբ լրաբերը յայտնեց Ասկերանի անկման մասին, Աղալարը գարձաւ ինձ՝ "Եղիչէ, պատրաստուիր, միասին դուրս գանք քաղաքից, որտեղ քո մնալն աւելորդ է, դու գաւառում աւելի օգտակար կը լինես": Արչաւիրը նայեց ինձ և ընկճուած տոնով ասաց՝ "ուրեմն մեզ պիտի թողնես, գնա՞ս": Հայրապետը դարձաւ Աղալարին, թէ՝ "Եղիչէն այժմ չպիտի գայ քեզ հետ, դնա պիտի մնայ մեզ մօտ, կը գայ հետագային":

Աղալարը ճիչտ էր ասում, որ գաւառում օգտակար կը լինէի, սակայն կառավարական կազմին ու համագումարի պատգամաւորներին թողնել, հեռանալը քաղաքից, մի տեսակ վտանգից փախչել էր թւում և լաւ տպաւորութիւն չէր թողնի. ուստի մնացի:

Սեպտեմբեր 23-ին, ցերեկը համագումարը նիստ ունեցաւ Լևոն վարդապետի և Սերգեյ Տէր Իսրայէլեանի մասնակցութեամբ: Վերջինս Նուրի փաչայից չքանչան էր ստացել և կանաչ ժապաւէնով կրծքից կախուած էր: Լևոն վարդապետը զեկուցեց Գանձակում տիրող վիճակի մասին, թէ՝ "առանց դիմադրութեան ժողովուրդը ենթարկուել է տաճկական հրամանատարութեան, դինաթափ եղել, չգործածուելիք ոչ միայն հին, այլև նոր սիստեմի հրացաններ յանձնելով: Քաղաքի թուրքերը խաղաղ մնացին, որովհետև հրամանատարը խստիւ հրամայել էր ամբողջ ժողովրդին՝ "խաղաղ մնալ, հակառակ պարագային խստիւ կը պատժուեն, և ում մօտ դէնք գտնուի, պիտի գնդակահարուի": Բաւական ժամանակ էր, որ թուրքերն ու հայերը կտրուած էին իրարուց, յարաբերութիւն չունէին միմեանց հետ, հիմա վերականգնել է նախկին խաղաղ փոխյարաբերութիւնը: Հնարաւորութիւն ենք ունեցել մարդ ուղարկել Թիֆլիս, որոշ տեղեկութիւններ բերելու: Թիֆլիսի ազգային Բիւրոյի մարդիկ խորհուրդ են տուել՝ ամէն կերպ ջանալ, որ

խաղաղությունը չխախտի մեր ու հարևանների միջև, քանի որ մեղ համաղբող հարցերն ու խնդիրները պիտի լուծում ստանան Պոլսում, ուր և գնացել են մեր ներկայացուցիչները: Շատ պարզ և հասկանալի է, որ մենք ոչ մեկ հնարաւորութիւն չունենք ընդդիմանալու և ոչ մի դիջում չանելու, հարկադրւած ենք ևօթ անգամ չափել ու մի անգամ կտրել:

Արդ, քանի որ իրերի նոյն դրութիւնն է ստեղծւել նաեւ այստեղ, բնականաբար, մեր ժողովուրդն այստեղ էլ հարկադրւած նոյն դիրքն ու վերաբերմունքը պիտի ունենայ՝ հանդէպ նոր տէրերի:

Կառավարութեան անդամները և համազումարի պատգամաւորները ուշադիր լսում էին Լևոն վարդապետին, յանկարծ ներս է մտնում մեր ընկերներից մեկը՝ Արեւլ Համբարձումեանը, շատ յուզւած, կամացուկ յայտնում ինձ, թէ փոստի փողոցում Հարաւ գիղացի Ալէքսանը և երեք-չորս հոգի արևմտահայ գաղթականներ, մի քանի թուրքերի բռնել, ուղում են սպանել: Կամացուկ թողնում եմ համազումարը, գուրս գալիս և Աբելի հետ միասին արագ գնում դէպքի վայրը, որ հեռու չէր: Հասնում եմ այն ժամին, երբ թուրքերից երեք հոգուն ծանօթ հայեր պատսպարել էին, իսկ մեկ հոգուն Ալէքսանը հրացանը պատրաստ բռնած, թուրքին զցած առաջը, մտնում են կողքի նեղ փողոցը: Վազում եմ այնտեղ, պոռում՝ "Ալէքսան, ի՞նչ ես անում, ի՞նչ իրաւունք ունես այդ մարդուն բռնելու, բաց թող": Ալէքսանը հրացանն ուղղում է դէպի ինձ և զայրացած գոռում՝ "Ջմոտենաս, պարոն Եղիշէ, կը խփեմ", ասելն ու նչան բռնելը մեկ եղաւ: Ինչ կարող էի անել պրովակացիայի ենթարկւած տգետ մեկ գիւղացու: Դարձայ դէպի մեծ փոստի փողոցը, միլիցիօներ կամ մեր մարտիկ ընկերներից մեկին կանչելու, այդ միջոցին զայրականներից մեկը, կարճահասակ, նիհարակազմ, ցցւեց դէմս, արտճանակը բռնելով դէմքիս, ասաց՝ "Դուք մեր ազգը կը ծախէք, ձեղ պէտք է սատկացնել": Ես արագօրէն բռնեցի դաստակից, ուղում էի ձեռքից խլել ատրճանակը, յանկարծ չըջապատւած տեսայ ինձ ղարադչլաղցիներով՝ "ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել, պարոն Եղիշէ", գրեթէ միաբերան հարցնում են: "Այս անպիտանը ատրճանակը ուղղել էր ճակատիս և ասում էր, թէ՝ "ազգը ծախում եմ":

Այս որ լսեցին ղարադչլաղցիները, կրակ կտրեցին. Աաատուրը ուժգին ապտակեց և ատրճանակը ձեռքից առաւ: Ուղում էին քոթակ տալ, արդիլեցի. Հէնց այդ պահին, հասաւ. քաղաքի կոմիսար Արտաշէս Մելքումեանը, երեք-չորս միլիցիոներով: Արտաշէսը առաջարկեց, գնանք իրենց տուն, որ շատ մօտ էր: Ես իրեն ասացի, որ անմիջապէս հասնի Ալէքսանին և թոյլ չտայ, որ թուրքին սպանեն: Մտանք իրենց տունը, որ գրեթէ դէպքի վայրի

դիմացն էր, ղարաղչլաղցի Աբրահամն ու Բախչին մնացին ինձ հետ, Արտաչէսը Ասատուրի և միլիցիօների հետ գնաց, և Ալէքսանի ձեռքից աղատեցին Թուրքին այն ժամանակ, երբ քաղաքի վերին ծայրից պիտի դուրս եկնէին: Պարզ է, Ալէքսանը տանում էր Թուրքին քաղաքից դուրս գնդակահարելու:

Արդէն ամէն բան վերջացած էր, երբ արագօրէն ներս է մտնում Խաչիկ Մելքումեանը, կրակ կտրած, հարցնում, թէ ինչ է պատահել: Պատմեցի իրեն տեղի ունեցածը:[83]

Վերաղարձայ ակումբ, համագումարը չարունակւում էր, և կառավարութեան անդամներն ու պատգամաւորները զանազան հարցեր էին տալիս Լևոն վարդապետին, և նա լուսարանում էր:

Սեպտեմբերի 23-ի երեկոյեան, դեռ մութը չընկած, քաղաքի տահկական պարէտ Հասան Բասրի բէյից ուլտիմատում ստացուեց, որ Աւետիսեան Ասատուրը, Զաքարեան Մուշեղը, Թումեան Յարութիւնը, Իշխանեան Եղիշէն, Համբարձումեան Սարգիսը, Աչոտ Մելիք Յովսէփեանը, Մուսայելեան Հայրապետը, Խաչանեան Նիկողայոսը, Շահնազարեան Ռուբէնը, Վարդապետեան Լևոնը ներկայանան իրեն:

Որոշւում է, որպէս լիազօրներ ներկայանան Աւետիսեան Ասատուրը, Խաչանեան Նիկողայոսը և Մելիք-Յովսէփեան Աչոտը, լսելու պարէտին:

ՋԻՆԱԹԱՓՈՒՄ

Հասան Բասրի բէյը երկար խօսելու պէտք չունէր, ուստի, կարճ կտրելով, խստիւ պահանջում է զինաթափ լինել և սպառնում է, թէ ում մօտ որ զէնք գտնի, պիտի կախաղան բարձրացի:

Մեր ներկայացուցիչները համաձայնութիւն են տալիս և խնդրում, որ հնարաւորութիւն տրւի, զէնքերը հաւաքելու: Հասան Բասրի բէյը չորս օր ժամանակ է տալիս:

Հոյս 24-ին, կառավարութեան ու համագումարի դիւանի որոշմամբ, Թումեան Յարութիւնը, Մելքումեան Խաչէնը և Լևոն

---

[83] Հետագայում "Հայրենիք" ամսագրում տպւած իր մէկ գրութեան մէջ, նա ասում է, որ իբր ինքը եղել է դէպքի վայրում, մասնաւոր առաքելութեամբ հասել և, սպառնալով, ինձ աղաւել է, չի համապատասխանում իրականութեանը. ոչ մէկ դէր չի խաղացել, դեռ աւելին, նա պրում է, թէ իբր զարաղչլաղցիները են յարձակում գործել վրաս: Անհամեմատութիւն չհամարւի, այդ օրերին եթէ մէկը կար, որին շատ մօտ էին ու լսում էին, նւաստս էր, որի վրայ երբէք չեն յարձակուել: (Հեղ.)

Վարդապետանանը մեկնում են Վարանդա, այնտեղի "ղինաթափութեան" գործը ղեկավարելու:

Նոյն նպատակով Դիղակ են մեկնում Ներսէս Մելիք Գասպարեանն ու Թեան Ղաղարեանը: Իսկ աջափեան Խաչէն՝ Արղումանեան Մարտիրոսը և Մուրադեան Բախշին: Ձախափեան Խաչէն՝ Սուքիասեան Արտէմը և Դաւթեան Դաւիթը: Ջրաբերդ-Գիւլիստան՝ Գասպարեան Շահնազարն ու Համբարձումեան Նիկոլը: Զինաթափման համար բաղմամարդ ժողով է տեղի ունենում ակումբի դահլիճում: Բոլոր վեց ինքնապաշտպանական չրջաններից ներկայ էին չրջանապետներն իրենց օգնականներով ու թաղային խորհրդների անդամները և ուրիշներ: Արդէն ամէնքին յայտնի էր համագումարի որոչումը, թէ խստիւ պահանջ լինելուց ինչպէս պէտք է ղինաթափ լինել: Ի մասնաւորի, չրջանապետները և թաղային խորհրդի անդամները լաւ տեղեակ էին "ղինաթափման" ձևին, ուստի երկար չի տևում ժողովը, ցրւում են իրենց տեղերը:
Կառավարութիւնը համագումարի ղեւանի հետ միասին որոչում են իշխանութեան փոխանցում կատարել, ի նկատի ունենալով այն պարագան, որ տաճիկները չատ խիստ ղիրք են ցուցաբերում յեղափոխական հոսանքների և, ի մասնաւորի, դաշնակցութեան անդամների հանդէպ: Եւ այդ նպատակով կազմւում է յատուկ յանձնախումբ որպէս իշխանութեան վերին մարմին, հետևեալ կազմով՝ Գերասիմ Մելիք-Շահնազարեան, քաղաքապետ, Գրիգոր (Գիգի) Քալանթարեան, Գրիգոր Մինասբէկեան, Մելքում Խաչատրեան և Ռուբէն Շահնազարեան:

Ընտրւում է ղէնքերն ընդունող և պարէտին յանձնող կոմիսիա, հետևեալ կազմով՝ նախագահ՝ Ռուբէն Շահնազարեան, անդամներ՝ Իսահակ Զոհրաբեան և Ներսէս Մարտիրոսեան: Ղէնքեր ընդունող կոմիսիան պահանջ է դնում, որ կառավարութեան անդամներից մէկը օգնէ, քանի որ կառավարութեանը յայտնի են, թէ չրջանում ովքեր և ինչպիսի ղէնքեր ունեն: Կառավարութիւնը պարտադրում է, որ օժանդակողի դերը ևս ստանձնեմ:

Կառավարութեան պաշտօնատեղին զտնւում էր քաղաքի ճիշտ կենտրոնում, Միքայէլ Խանդամիրեանի տանը, որի տէրը Բազու էր ապրում, տունը բոլորովին աղատ ու դատարկ լինելով, կառավարութիւնը հաստատւել էր այնտեղ:

Ղարաղչլաղցիների ներկայացուցիչ Եղիչէ Աբրահամեանը, Աստուր և Բախչու հետ միասին առանձին խօսեցին ինձ հետ և խնդրեցին, եթէ կը յանձնեմն Եռագծեան (Մօսին) լաւ հրացաններ, փոխանակում մաչւած և փչացած հրացանների հետ: Ճիշտն ասած, ինքս էլ մտածել էի այդ ուղղութեամբ և ուղում էի որոշել, թէ մեր մարդկանցից որոնց միջոցով կազմակերպւի գործը, որը արդէն պատրաստ հրամցնում են ղարաղչլաղցիները, և ես ընդունում եմ

ամենայն սիրով: Մնում է միայն յանձնելիք փամփուշտների և ձևի համար տալիք անպէտք ղենքերի, ինչպէս եւ սայլի վրայ բարձուելիք ղենքերի երեսին դրելիք լաւ հրացանների թողնելու գործը, որը եղիչէն է ստանձնում ուրիչ խմբի յանձնարարել, դարձեալ իրենց գիւղացի ճարպիկ տղաների:

Ձենքերի փոխանակութիւնը կատարելու ոչ մի դժւարութիւն չկար, բայց կոմիսիայի անդամները չպիտի իմանային: Ձենքերը թալանող խումբն էլ արդէն կազմ ու պատրաստ էր, պէտք էր յաջորդ օրը՝ սեպտեմբեր 24-ին գործի անցնէր: Մնում է լրացուցիչ մի բան էլ, այն է՝ կեղծ մահափորձ կազմակերպել իմ դէմ, թէ ինչու ղենքերը յանձնում ենք տաճիկներին: Մեր տղաներից մէկին՝ Վալօղիա Հայրապետեանին, հին հանգստարանի ինքնապաշտպանական չրջանի մարտիկներից, յայտնում եմ միտքս, և նա սիրով յանձն է առնում: Պէտք է ատրճանակով կրակէ և գոռգոռա՝ "ինչո՞ւ էք ղենքերը յանձնում, դուք ժողովրդին զրկում էք ինքնապաշտպանելու հնարաւորութիւնից, եթէ ղենք պահելու համար վախենում էք, տուէք մեղ, մենք կը պահենք" և այլն:

Սեպտեմբեր 24-ին առաւօտեան ղենքեր ընդունող կոմիսիայի անդամները կառավարական չենքում պատրաստ սպասում են, որ քաղաքացիները բերեն, յանձնեն իրենց մօտ եղած ղենքերը, տաճկական զօրքերին յանձնելու: Քաղաքացիներից մէկը եկաւ և խնդրեց, որ բժիշկը նեղութիւն քաշէ, այցելի հիւանդին, որին բժշկում է ինքը և բժիշկը հարկադրւած եղաւ գնալ, մանաւանդ որ հիւանդը չունևոր էր և ձրի էր բժշկւում: Բժիշկը դարձաւ մեղ ու ասաց՝ "գուցէ ուշ գամ կամ չգամ, դուք ինձ չսպասէք և, վերջապէս, ես ի՞նչ եմ հասկանում ղենքից, պիտի միայն մտիկ անեմ, առանց ինձ էլ կարող էք կատարել, ձեղ հետ լինելուց պիտի առօրին լծւած եղան պոչի ճանճի դերը կատարեմ", ասաց ու գնաց:

Քաղաքացիները սկսեցին կամաց-կամաց բերել իրենց մօտ գտնուող զանազան տեսակ հրացաններ՝ զափաղլու, դաչաղլու, վարանտել, խողովակը լեցնովի, իբրև հնութիւն լաւ պահւած, բայց կռւի համար անպէտք հրացաններ, որոնցով կէս սայլ բարձւած էր, երբ սկսեցին բերել բերդան, մարտին սիստեմի հրացանները, ամբողջը եղաւ հաղիւ մէկ սայլ. ապա տեսանք, որ բերում են մօսին հրացանները, չատ լաւ պահւած և նոյնիսկ չատերը չգործածւած, զանազան վաճառականների մօտից: Քաղաքում կային երիտասարդներ, որոնք ղենք ունէին, բայց ղլանում էին հրացանները թաքստոցներից դուրս բերել ու տալ նրանց, որոնք պատրաստ էին կեանքի գնով պաշտպանելու ժողովրդին:

Այդ միջոցին, քաղաքի մեծահարուստ բարեգործ Սահակ Թաղէոսեանի տղայի, իմ չատ մօտ բարեկամի՝ Հիւանդութեան պատճառով պաշտօնաթող եղած սպահեստի սպայ Լեւոն

Թաղէոսեանի ծառան բերաւ և յանձնեց ինձ նրա կարճ՝ (ձիաւորի) մօսին Հրացանը, 250 փամփուշտով միասին ու նշեց, թէ՝ "պարոն Լևոնն ասաց, որ անձանը ձեզ յանձնեմ":

Յանձնախումբը գտնւում էր կառավարական չէնքի վերնայարկում և այնտեղից հետևում էր զէնքերը բարձելուն՝ փողոցում, սայլերի վրայ: Ռուբէն Շահնազարեանը ուշադիր հետևում էր զէնքերը բարձելուն եւ չնկատեց, որ ևս Հրացանը փամփուշտներով միասին դրի կառավարութեան արխիւի պահարանը՝ բայց Ներսէս Մարտիրոսեանը, որ մի բարեհամբոյր մարդ էր, նկատեց և կամացուկ ականջիս չչնջաց թէ՝ "Էս անպիտանից զգոյշ եղիր. չինովնիկ վարժապետ է, ֆորմալիստ և թուլբերան": Խօսքը վերաբերում էր Ռուբէն Շահնազարեանին, բարձրագոյն կրթութիւն ստացած, փիղիկո-մաթեմատիկ, ուսուցիչ ռէալական դպրոցի, չսիրւած ոչ ուսուցիչներից և ոչ, մանաւանդ, աշակերտներից: Նախկին համակիր դաշնակցութեան, ապա յարած կադետական կուսակցութեան, համոզմունքներով աւելի չուտ միապետական:

Կիսատ սայլերը լրիւ բարձեցին, ուստի վերևից կարգադրեցինք քաղաքի կոմիսարին՝ Արտաշէս Մելքումեանին և յանձնման գործը կատարելու համար յատկապէս նշանակւած Խաչունց Սամսոնին, որ զէնքերը տանեն, յանձնեն: Հաղիւ խօսքս վերջացրած, ներքևից պատրաստ կանգնած "թալանչիները" պոռացին՝ "ինչո՞ւ տանեն և ո՞ւմ յանձնեն զէնքերը, ի՞նչ իրաւունքով դուք զէնքը թշնամուն էք յանձնում. մի՞թէ մենք մեռած ենք, որ թողնենք, զէնքերը տան թշնամուն, որ մենք մնանք առանց զէնքի և մեզ կոտորե՞ն":

Այդ միջոցին Վալօղիան, ցածից դէպի վեր կրակելով ատրճանակը, ասաց՝ "էլ ի՞նչ էք սպասում, տղերք, վերցրէք մօսինները": Ես դարձայ Ռուբէն Շահնազարեանին ու Ներսէս Մարտիրոսեանին, ասելով՝ "գաղաղել են մարդիկ, ոչինչ չենք կարող անել, լաւ է, մուտքը փակւած է, չեն բարձրանայ վերև": Ռուբէն Շահնազարեանը վախից սարսափած, գոյնը թռել, այս ու այն կողմ էր ընկնում և ասում՝ "կատաղած ամբոխից ամէն բան սպասելի է, նրանք կարող են բռնութեան դիմել և ծեծել մեզ, նոյնիսկ սպանել": Դարձայ իրեն՝ "Ռուբէն Նիկոլայևիչ, կուզես՝ մտիր այս պահարանը, դրսից կը փակեմ, եթէ վերև բարձրանան, կասեմ, որ դուք տան յետևի դռնով դուրս էք գնացել". ետևի դուռը պինդ փակւած էր թէև ու եղնել այնտեղից չէր կարող: Մտաւ պահարանը, և Ներսէս Մարտիրոսեանն էլ, որ անակնկալի էր եկել, հասկացաւ, որ դրսում տեղի ունեցած ցոյցը խաղ էր:

Աղմուկը վերջացաւ, կոմիսար Ա. Մելքումեանը և Խաչունց Սամսոնը չարը մնացած, կանգնել էին բարձած սայլերից մի քիչ հեռու, հարց էին տալիս, թէ ի՞նչ պիտի անել:

– Է, ինչ որ պէտք է անել, սայլերը տարէք, յանձնէք ղէնքերը, ասացի:

–Բայց մի մասը Թալանեցին, տարան. հեռու կանգնած երկու Թուրքեր կային, տեսան և վախենալով փախան իրենց Թաղը. նրանք պարետին անպայման յայտնած կը լինեն. ի՞նչ ասենք, հարցնում է կոմիսարը:

–Աւելի լաւ, ասացի, Թուրք վկաներ էլ ունէք, կասէք, որ Թալանեցին տզէտ, աւազակարարոյ, ղրսից եկած մարդիկ ու փախան:

Կոմիսար Ա. Մելքումեանը և Խաչունց Սամսոնը սայլերի առաջն ընկնելով, ուղղեցին դէպի Թուրքաց Թաղը, ահագին ժողովրդի աչքի առջև, որ տեղի ունեցած կրակոցի վրայ համալսարել էր մօտակայ Թաղամասերից: Լևոն Թադէոսեանի ծառան, երբ տեղի է ունենում Թալանը, վազում է տուն, Լևոնին յայտնում, Թէ իրը ինձ վրայ ատրճանակ են կրակել և չգիտէ, գնդակը դիպե՞լ է ինձ, Թէ ոչ: Լևոնը անակնկալի է գալիս, զաղաղում, ատրճանակը խլում գօտին, չտապում դէպքի վայրը, հասնում այն րոպէին, երբ բարձած սայլերը ուղղւում էին դէպի Թուրքաց Թաղը: Սկսում է բարձրաձայն նախատել մարդկանց, որ Թոյլ են տուել խուլիգաններին Թալանել ղէնքերը և, որ գլխաւորն է, ղէնք բարձրացնել ժողովրդի ընտրած մարդկանց վրայ, որոնք ծանր պարտականութիւն էին կատարում ժողովրդի կամքով:

Սայլերը ճամբելուց Ռուբէն Շահնազարեանին պահարանից դուրս բերի, որ ականատես լինի, սակայն վախենում էր պատուհանից դուրս նայել, ուստի ասաց, քանի որ խաղաղել է դուրսը, կարող է գնալ տուն: Եւ երբ իջնում էր աստիճաններով, հաղիպում է Լևոն Թադէոսեանին, որը բարձրանում էր վերև: Շահնազարեանը արագ պատմում է Լևոնին, Թէ ինչպիսի ահաւոր դէպք է տեղի ունեցել, ուղեցել են գնդակահարել մեզ՝ "գնացէք վերև, Եղիչէն և Ներսէսը կը պատմեն ձեզ ամէն բան", ասում է և արագ իջնում աստիճաններից ու Թռնում դուրս:

Լևոնը վերին աստիճանի զգայուն մարդ էր, երբ ներս մտաւ, յուզմունքից փղձկաց, լաց եղաւ, ասելով՝ "էն օրին հասննենք, որ հայ մարդիկ իրենց համար գիշեր-ցերեկ աշխատողների վրայ ատրճանակ կրակեն, ուղենան սպանե՞լ":

– Բան չկայ, Լևոն, անցաւ, տզէտ մարդիկ են, –ասաց Ներսէսը:

– Ես ևթէ իմանայի, որ իմ հրացանը պիտի Թալանչիների բաժին դառնար, չէի տայ, տուեցի, որպէսզի զժգոհութեան տեղիք

չտային, քանի որ չատերը գիտէին, որ Հրացան ունէի, եղիչէ, դու լաւ գիտես, որ անցեալ տարի Յակորն[84] էր բերել ինձ նէր:

– Աստուած մեծ է, Լևոն, դարդ մի արա, ասում է Ներսէսը և նայում ինձ:

– Ներսէսը ճիշտ է ասում, դարդ մի արա, քո Հրացանը պահել եմ, ասացի:

– Ինչպէ՞ս կարող էիր պահել Թալանչիների ձեռքից:

Ճիշտ պահարանի դիմաց էինք կանգնած, բաց արի, ցոյց տուի, հէնց որ տեսաւ, բարկութիւնը վայրկենապէս անցաւ, պինդ գրկեց ինձ ու համբուրեց:

– Տեսա՞ր, Լևոն, – վրայ բերեց Ներսէսը, – քեղ ասացի, թէ դարդ մի արա, Աստուած մեծ է:

Լևոնին ասացի, որ Հրացանը մութին ընկած ժամանակ մեր տղաներից մէկի միջոցով կուղարկեմ իրեն, որ իրենց ծառան էլ չիմանայ: Լևոնը կոահեց, ինչ որ բան տեղի է ունեցել, բայց հանգստացաւ ու դուրս դնաց:

Մէկ ժամից աւելի սպասում էինք, վերադարձան կոմիսարն ու Խաչոնց Սամսոնը և յայտնեցին, որ պարետը պահանջում է, անպայման յանձնել նաև մեր թնդանօթները, ասացին ու ծիծաղեցին, որովհետև մենք թնդանօթներ չունէինք, մեր ունեցած չունեցածը պղնձից ձուլած, կէս մետրանոց մի ռմբաձիգ էր, որը պատրաստուած էր Հարիւր տարի առաջ պարսիկներից գրաւուած թնդանօթների պէս, ռումբը դնտեղում էր մէջը բերնից և պայթեցնում էր պատրոյգի միջոցով, վառօդի ուժով:

Ռմբաձիգը Յարութիւն Թումանեի յղացումն էր, իսկ պատրաստողը՝ ճարտարապետ Սուրէն Օհաննեանը, Քրիստափոր Օհաննեանի, Խանասորայ արչաւանքի բժշկի եղբօր որդին: Ամիսների ընթացքում չարչարուել, հաղիւ յաջողել էր հալոց պատրաստել, ապա՝ կաղապար: Հալոցի և կաղապարի պատրաստելը տևեց գրեթէ վեց ամիս: Յարութիւնը, հայ-թրքական ընդհարումներին, Ռոստոմի հիմնած զինական արհեստանոցում, Խարբերդցի ռմբագործ Կարոյից սովորած լինելով պատրոյգաւոր ռումբեր չինելը, պատրաստեցին նաև ռումբեր, որոնք փորձուեցին քաղաքից վեց-եօթ կիլոմետր հեռու, Սղնախ գիւղի ձորում, և պայթիւնի ձայնը քաղաք հասնելով, թուրքերն էլ լսել էին ու համոզուել, թէ պատերազմի ճակատից վերադառնող զինուորները իրենց հետ թնդանօթներ են բերել, և այդպէս էլ յայտնել էին տաճկական պարետին:

---

[84] Յակոբ Բալըրմեանը, քանաքեռցի մեր ընկերներից, Պետրոպրադի Համալսարանի վկայուած իրաւաբան, պատերազմին զօրակոչի ենթարկուած, ապագայում դարձած առաջին Լևոնի կնոջ Հօրեղբօր աղջկայ ամուսինը: (Հեղ.)

Ասկերանի կուին ճակատից դասալիք եղած զինուորների բերած մաքսիմ
սիստեմի ծանր գնդացիրը գործի էին դրել, և տաճկական հրամանատարությունը
կարծիք էր կազմել, թէ մենք տասնեակներով գնդացիրներ ունենք: Մեր ունեցած թնդանօթների և գնդացիրների փորձանքը պայթեց իմ գլխին, սակայն այդ մասին իր տեղում:

Յարութիւնը, ինչպէս յիշեց արդէն, քաղաքում չէր գտնւում, թնդանօթի պահուած տեղը գիտէր Սուրէնը, ուստի պահանջւեց, և նա բերաւ: Երկու փոքրիկ անիւների յարմարեցուած, հինգ սանտիմետր տրամագիծ ունեցող խողովակ, որը առաջին անգամ էր ցուցադրւում ժողովրդին, համախմբուած կառավարական չէնքի մօտ: Եւ այդ ծանր պահին ոմանք չկարողացան զուսպ մնալ, հեգնում էին, ասելով՝ "ուրեմն մեր յոյսը այս սամովարի (ինքնաեռի) տրուբայի (խողովակի) վրա՞յ էինք դրել, որ պիտի թշնամու առաջխաղացը արգիլէ՞ր:

– Միայն սա՞ է, թէ ուրիշն էլ կայ, – հարցնում է Խաչունց Սամսոնը:

– Հէնց դա է, էլ չկայ, – ասում է Սուրէնը:

Խաչունց Սամսոնը և Արտաշէս Մելքումեանը "թնդանօթը" տանում, յանձնում են պարետին, որի գրասենեակի առջև բաւական բազմութիւն հաւաքուած, սպասում էր՝ տեսնելու մեր թնդանօթը, համոզուած, որ Տուլայի նշանաւոր գործարանում ձուլուած թնդանօթներից է: Երբ Խաչունց Սամսոնը «թնդանօթը» քաշելով մօտենում է պարետի չէնքին, խմբուած բազմութիւնը մէկէն փոթկացնում է և հարցումների տեղատարափի ենթարկում:

– Իսկապէ՞ս դա է ձեր թնդանօթը, դա սամովարի տրուբա է, –ասում է մէկը:

– Երևի իսկականները պահել են, – վրայ է բերում մէկ ուրիշը: Հռհռոցի վրայ պարետը դուրս է գալիս և Արտաշէսը, պատուի կենալով, յայտնում է, որ մեր ունեցած միակ թնդանօթը բերուած է, ուրիշ թնդանօթ չունենք:

– Եթէ յետոյ պարզուի, որ ունէք և թաքցրել էք, պիտէ՞ք որ պատասխանատուները մահուան պատժի կենթարկուեն, – ասում է պարետը:

Արտաշէսն ու Սամսոնը հաստատապէս գիտէին, որ մենք մինուճար մէկ թնդանօթ ունէինք, ուստի վստահ յայտնում են պարետին, որ եթէ պարզուի, որ իրենց բերածից բացի ուրիշ մէկն էլ կայ, հէնց իրենք կամաւոր կը լինեն կախաղան բարձրանալու:

- Բայց սա ի՞նչ թնդանօթ է, որ բերել էք, մենք թնդանօթ ենք պահանջել և ոչ թէ այս ծիծաղելի առարկան, – ասում է պարետը:

– Պարոն պարետ, ինչով ուղէք, կերդւենք, որ մեր ունեցածը միմիայն սա է, ուրիչ մէկը չունենք, –պատասխանում է Արտաչէսը:

Ապա պարետը հարցրել է իմ մասին, ատրճանակից ստացածս "վէրքը" ծա՞նր է, թէ թեթեւ, Արտաչէսը պատասխանել է, որ գնդակները վրիպել են, չեմ վիրաւորուել:

– Հետաքրքիր է, –ասում է Ներսէսը, –ուղում էր ծա՞նր վիրաւորած լինէր Եղիշէն:

– Այդ հասկանալ դժւար էր, –պատասխանում է Արտաչէսը:

– Տեսչէն, –ասում է Ներսէսը, –տաճիկները հարիւր հաղարներով հայեր են կոտորել, երբ մի հայ վիրաւորւի հայի ձեռքով, կը զոհանան, իսկ եթէ սպանւի, չատ աւելի ուրախ կը լինեն:

Ինչպէս յիշւեց իր տեղում, երկու սայլ լեփ-լեցուն ամէն տեսակի հրացաններ, իրենց փամփուչտներով ուղարկւեց, տաճիկ պարետին: 200-ի չափ չալմալսաւոր, որսորդական բերնից լցնովի և փամփուչտաւոր, բերդան, մարտինի: Հրացաններից 30 հատը մաչած և խողովակը ժանգից կերւած մօսիններ էին:

Սեպտեմբեր 25-ին Աղդամից վերադառնում են Գ. Մելիք Շահնազարեանը և Գ. Ղարագեօղեանը, որոնց Ջամիլ Ջահիդ բէյը խիստ հրամայել էր՝ գաւառների ժողովրդին հարկադրել՝ յանձնել զէնքերը Իսմայիլ Հակկի բէյին և ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը: Գ. Մ. Շահնազարեանը և Գ. Ղարագեօղեանը Ասկերանից մարդիկ են ճամբում Խաչէն ու Վարանդա, մեր խմբապետներին, յայտնում տաճկական հրամանատարի հրամանը: Գիւղացիութիւնը չի հաւատում, որ տաճկական ուժերի հետ գործ ունի. իբր տեղական թուրքերը, տաճիկների անունից սպառնալով, ուղում են հպատակեցնել հայերին: Եւ Խաչէնում տեղի է ունենում գիւղացիական համագումար, ուր Գ-րդ համագումարին մասնակցած պատգամաւորները գոնէ այնքան զգաստ են գտնւում, որ գիւղացիութեան թելադրում են՝ աշխատել ամէն կերպ տեղից չտալ կռիւների, երբէք նախայարձակ չլինել և ծայրայեղօրէն խնայողաբար կրակել փամփուչտները, երբ հարկադրւած լինեն ինքնապաշտպանւելու: Նոյն իմաստով քաղաքից էլ կառավարութեան կողմից նամակներ են գրւում գաւառի խմբապետներին:

Սեպտեմբեր 26-ին Ջամիլ Ջահիդ բէյը, Գալլիպօլիեան[85] 6000-նոց դիվիզիայի գլուխն անցած, 9 դաշտային թնդանօթներով, 66 գնդացիրներով և 3 զրահապատ ինքնաշարժերով, մտնում է Շուշի:Թուրքերը ահագին բազմութեամբ, որ հաղարներով էր

[85] Թուրքիայի եւրոպական մասում գտնուող Գալլիպոլիա անունից. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, 1915թ. այնտեղ ռազմական մեծ գործողութիւններ են կատարւել: (Խմբ.)

հաչւում, մեծ խանդավառութեամբ դիմաւորում են ղօրքերին ու հրամանատարին: Թուրքերի հրաւէրին արձագանքելով բաւական թիով հայեր էլ գնացել էին դիմաւորելու: Թրքական չուկան զարդարուած էր գորգերով, խփուած պատերին կամ կախուած պատչդամներից. հետևելով թուրքերի օրինակին, քաղաքի Կոմիսիայի թելադրութեամբ, նոյն ձևով զարդարում է և հայոց չուկան, որ տօնական տեսք էր ստացել:

Ջամիլ Ջահիդ բէյը, ղրահապատ ինքնաչարժերի ուղեկցութեամբ, առանձին օթոյի մէջ նստած, ձիաւոր զինուորներով շրջապատուած, ահագին բաղմութիւնը ետևից, ուղղւում են դէպի հայոց թաղը: Հայոց չուկան ծայրէծայր բռնւում է հաղարաւոր թուրքերով և հայերով: Ջամիլ Ջահիդ բէյը ճառ է ասում և յայտարարում, որ եկել է Շուշի՝ երկու հարևան ժողովուրդների համար խաղաղ և ապահով կեանք ստեղծելու, թոյլ չտալու, որ խառնակիչ մարդիկ դեր խաղան ու վրդովեն ժողովրդի խաղաղ կեանքը: Զննմարկուղները խստագոյնս կը պատժուեն: Ապա յայտարարում է՝ պաշտօնատար անձանց կարգադրութիւնները ճշտիւ կատարել, հակառակ ընթացք ընդունողները և անփոյթ վերաբերմունք ցոյց տուողները նոյնպէս կը պատժուեն խստագոյնս:

Բաղմութիւնը "կեցցէ Ջամիլ Ջահիդ բէյը" պոռալով փառաբանում է զօրահրամանատարին ուռաներով: Ջամիլ Ջահիդ բէյը վերադառնում է թրքական թաղը և իջևանում խանի աղջկայ՝ Հաջար խանումի տանը, որը թրքական թաղի միակ լաւ տունն էր:

Թուրքերը, բնականաբար, խանդավառուած էին տաճիկների յաղթական մուտքով Շուշի, ուրախ տրամադրութեամբ աղաւ գալիս էին հայոց թաղը, վստահ, որ ոչ մի վտանգ չկայ: Մինչ այդ ղգուշութեամբ, վախով կը գային: Հայերն էլ փոխադարձում էին, դիւսաւորապէս թրքական չուկայում անհրաժեշտ գնանգան գնումներ անելու համար, և միշտ կասկածը, վախը սրտերում:

Սեպտեմբեր 26-ին, մութն ընկնելուն, Ջամիլ Ջահիդ բէյի իջևանած Հաջար խանումի տան առջևի ընդարձակ հրապարակը, որ չարունակւում է ռուսաց եկեղեցու առջևից մինչև թրքական չուկայ, ուժեղ կերպով լուսաւորուած էր մաշալներով. թուրք երևելիները, ի պատիւ հրամանատարի և սպաների, մեծ խնջոյք էին կազմակերպել: Հայոց թաղից երևում էր հրապարակում խմբուած բաղմութիւնը, որ գոռում, գոչում էր՝ "Եաշասըն Ջամիլ Ջահիդ բէյ" և ուռռա կանչում:

Տասնեակ հրթիռներ, որպէս կրակէ պարաններ, ձգւում էին դէպի վեր, շատ բարձր և իրենց պայթիւններով օդը թնդացնում: Եւ առաւօտեան յայտնի եղաւ, որ այդ գիշեր հայոց թաղում քնած մարդ

չկար. անդամ երեխաները մնծերի, մանաւանդ ծերերի ախուվախով ղրոյցները լսելով, ականջները չորս արած, կծկւել էին, թէ ինչ պիտի պատահի: Շատ ղրկիցները քով-քովի հաւաքւած մտքերի փոխանակութեամբ են ժամանակը անցկացրել, և բոլորի մէջ կարծես նոյն միտքն է գործել՝ եթէ պիտի կոտորած լինի, աղաւնւելու ճար չկայ, միասին մեռնենք: Սակայն քաղաքի ինքնապաշտպանութեան ուժերը նոյնպէս քնած չէին, արթուն հայ-թրքական սահմանագծի ամբողջ երկայնքին, իրենց դիրքերին կից տներում, որ եթէ թուրքերը, արբեցած տաճկական յաղթանակով, յարձակում գործեն, վստահ, որ տաճկական զօրքը կօժանդակէ, անմիջապէս դիմադրեն և եթէ աղաւնւել չկայ, պատուով մեռնենք: Բայց և միևնոյն ժամանակ քաղաքի վեց ինքնապաշտպանական շրջանների մարտիկներին խստիւ կարգադրւած էր զգոյշ լինել, զէնքի հետ զգոյշ վարւել, որովհետև հրաղէնի մի պայթիւն կարող էր պրովակացիայի տեղիք տալ, և վատ հետևանք ունենալ:

Ինչպէս պատմում էին, հաւատացեալ մարդիկ, մանաւանդ ծեր կանայք ու տղամարդիկ, ամբողջ գիշերը, ծունկի եկած աղօթքով են անցկացրել, որ Աստւած չարը խափանէ, ժողովուրդը քաւութեան նոխազ չդառնայ: Եւ մարդիկ իրար հանդիպելիս պատմում էին, թէ ինչպէս են անցկացրել գիշերը, անքուն՝ "Եթէ օձից խայթւածին քուն կը գայ, ինձ էլ քուն կը գար այն գիշեր": Անքուն էինք և մենք՝ հայրս, մայրս, քոյրս, հօրեղբօրս մանկահաս տղան, գպրոցական աշակերտ, և ես: Մայրս հաւատացեալ կին էր, նոյնպէս չարունակ աղօթում էր:

Սեպտեմբեր 27-ին Մուշեղ Զաքարեանը, Արմենակ Ղարագեօղեանը և Սերգէյ Բաղիկեանը, Ջամիլ Ջահիդ բէյի հրամանի համաձայն, քաղաքի յանձնախմբի որոշմամբ, մեկնում են Գօրիս, "Համոզելու" Անդրանիկին, որ ննջարկւի Աղբրէջյանի իշխանութեան: Մուշեղ Զաքարեանը և Արմենակ Ղաղարեանը, անկախ Ջամիլ Ջահիդ բէյի հրամանից, արդէն միջոցներ էին խորհում Զանգեզուր անցնելու, և երբ առաջարկ եղաւ նրանց Գօրիս անցնելու, անմիջապէս համաձայնեցին, մանաւանդ որ տաճկական հրամանատարութիւնը հրաման էր արձակել, որ Շուշուց-Գօրիս երկարող խճուղու մօտ թրքական գիւղերը հանգիստ մնան և անցորդներին ձեռք չտան:

Վարանդայում և մասամբ Դիլակում պրովակացիաներ են չրջան անում, թէ իբր կառավարութիւնը դաւաճանել է, ադրը ծախել տաճիկներին: Հետագային պարզւում է, որ պրովակացիայի հեղինակը եղել է Նախիջևանիկ գիւղի բնակիչ Կարապետ քեօվա Ասրեանը, նպատակ ունենալով զրգռել ժողովրդին՝ համախմբւելու և ինքնապաշտպանութեան միջոցների դիմելու:

Լիւթփալիրէկ Բէհրուդովի բնակարանում հոգեհանգիստ է կատարւում հանգուցեալի յիշատակին: Ներկայ են հանգուցեալին յարգող չատ հայեր և նրա հետ աչխատած մարդիկ՝ Միջկուսակցական Բիւրոյի և կառավարութեան անդամները: Հոգևոր արարողական աղօթքից յետոյ, Արսօ Յովհաննիսեանը ծնկաչոք յարգանքի խօսք է ասում, վեր հանելով հանգուցեալի բարեմասնութիւնները: Արսօն այդ մօմենտին մոռացութեան էր տւել Միջկուսակցական Բիւրոյին քանիցս ուղղած իր յանդիմանութիւնները, թէ ինչու Բիւրօն գործ է ունենում բէկերի հետ՝ «Чего вы якшаетесь с этими беками, контр-революционерами, такую политику могут вести только буржуазные элементы, ничуть не революционные и социалистические партии.»[86]

Սեպտեմբեր 29-ին Իսմայիլ Հակկի բէյը հրաման է արձակում Խաչէնի և Վարանդայի ժողովրդին՝ զինաթափ լինել և զէնքերը յանձնել իրեն Ասկերանում: Խաչէնում գումարուած համագումարը արդէն ընտրել էր Հինգ Հոգու՝ "զինաթափման և զէնքերը յանձնելու" գործին հետևելու՝ Աբրահամ Իշխաննան, Բախչի Մուրադեան, Մովսէս Մովսիսեան, Մովսէս Մահտեսի Կարապետեան, Գրիգոր Անդրէասեան:

Վարանդայի Դրնավազ գիւղում տեղի է ունենում գիւղացիական համագումար, որտեղ ելոյթ է ունենում Կարապետ քեօխվա Ասրեանը, "ճառ" ասում, կառավարութեանը խստիւ քննադատում, համարում ազգը ծախող և այլն:
Համագումարի որոչում է կազմակերպել և ինքնապաչտպանութեան համար միջոցների դիմել, ուստի ընդհանուր գործը ղեկավարելու նպատակով Սոկրատ Մելիք-Շահնազարեանին ընտրում է Վարանդայի հրամանատար:

Կապիտան Արտաշէս Վարդապետեանը, մեր զինուորական հրամանատարը, չատ համեստ և միաժամանակ աչքի ընկած իր վարչական ընդունակութեամբ ու քաջութեամբ, առաջարկում է, որ միասին անցնենք գաւառ, համախմբելու մեր գիտակից ոյժերին և կազմակերպելու ինքնապաչտպանութեան գործը: Ես համաձայնում եմ, սակայն, հակառակ մեր բուռն ցանկութեան՝ դուրս գալու քաղաքից, որտեղ մթնոլորտը ծանրացել, անչնչելի էր դարձել, չի յաջողւում: Տաճկական հրամանատարութիւնը պաչարողական դրութիւն էր յայտարարել քաղաքում և պահակներ դրել բոլոր այն տեղերում, որտեղից կարելի էր դուրս գալ: Երեկոյեան ժամը 7-ից յետոյ արգիլւած էր փողոց ելնել. չհնազանդողը կը գնդակահարւի:

---

[86] "Որևէ էք բանի տեղ դնում այդ բեկերին , հակայեղափոխականներին, այդպիսի քաղաքականութիւն կարող են վարել միայն բուրժուական տարրերը և ամենևին ոչ յեղափոխական և ընկերավարական կուսակցութիւնները" (Ռուս.): (Խմբ.)

Սեպտեմբերի 30-ին (կիրակի) Ղաղանչեցւոց Ամենափրկչեան եկեղեցում, հայ-թրքական խուռն բազմութեամբ, հոգեհանգիստ է կատարւում Լիւթիփալիբեկ Բէհբուդովի յիշատակին. յաւուր պատշաճի խօսք են ասում՝ Հայրապետ Մուսայէլեան (հայերէն), Աչոտ Մելիք Յովսէփեան (ռուսերէն) և Արսօ Յովհաննիսեան (հայերէն):

Ընայած այդ բոլորին, մթնոլորտը չարունակում է մնալ ծանր և բոլորի տրամադրութիւնը ընկճած: Ամէնքի միակ կասկածը, որ կարող է կոտորած տեղի ունենալ, ուժեղ էր եւ չէր անցնում: Կարելի՞ էր վստահել տաճիկ կառավարութեանը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1918

ՋԱՄԻԼ ԲԷՅ . ԹՐՔԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ջամիլ Ջահիդ բէյը Խոսրով բէկ Փոլադովին նշանակել էր Շուչու գաւառապետ, որ նախապէս գաւառական հայ-թրքական գործադիր կոմիտէի կողմից նշանակւած գաւառապետ Լևոն Վարդապետեանի (մենշևիկ) օգնականն էր եղել:

Հոկտեմբերը 1-ին, առաւօտեան ժամը 3-ից անց, Խոսրով Փոլադովի և Հասան բէյի ղեկավարութեամբ սկսւում են ձերբակալութիւններ, որ չարունակւում են մինչև հոկտեմբերը 11-ը: Ձերբակալւած Ա. խումբը հոկտեմբերը 1-ին՝ Հայրապետ Մուսայէլեան, Աչոտ Մելիք Յովսէփեան, Եղիշէ Իշխանեան, Լևոն Վարդապետեան և Արսօ Յովհաննէսեան, կառավարութեան անդամներ, Արտաշէս Առաքելեան, չրջանի պետ: Բ. խումբը՝ Արշաւիր Քամալեան, կառավարութեան անդամ, Արտաշէս Վարդապետեան, ընդհանուր հրամանատար, Մարտիրոս Այվազեան, հրամանատարի օգնական, Ստեփան Մանտինեան, պարենաւորման կոմիսար, Գերասիմ Բաղդասարեան, Գուրգէն Օհանեան, զիւղատնտես, Սուրէն Օհանեան, ինժեներ, Մելիքսէթ Եսայեան, կառավարութեան քարտուղար, Իլիա Մելիք Շահնազարեան, կալւածատէր, Սիմոն Բաբաջանեան, տպարանատէր, Յովհաննէս քահանայ Տէրտէրեան, Յարութիւն Թումեան, որը թաքնւած լինելով, փոխարէնը հայրը՝ Գրիգոր ապերը և մայրը՝ Բահարը, Նիկողայոս Իսախանեան, իրաւաբան, Լևոն Մինասբէկեան, քաղաքի չինարար-տեխնիկ, Ռուբէն Տէր Գասպարեան, ուսուցիչ: Գ. խումբը՝ Գրիշա Խաչեան իրաւաբան, Վաղդէն Միրզաբէկեան, աչակերտ, Միքայէլ Տէր Յովհաննէսեան, ուսուցիչ, Կարապետ Աբրահամեան (Բոսակենց): Դ. խումբը՝ արհեստաւորներ և մանրավաճառներ՝ 25 հոգի, ընդամէնը՝ 51 հոգի: Ինձ մտցրին այն սենեակը, որում 7-8 հոգի թուրքեր էին և զնդապետ Ռաչկովսկու ընտանիքի

սպանութեան մէջ մեղադրուող Հայկ Յովհաննիսեանը, որի հետ միասին լինելը խիստ անհաճելի էր ինձ համար, սակայն, ինչ արած, հարկադրուած էի: Սակայն ուրախացայ, երբ, տեսայ Սալմանբէկ Ալիբէկովին, որ պառկած էր, թաչկինակը երեսին գցած, քնած: Երբ արթնացաւ, տեսաւ ինձ իւր մօտ նստած, զարմացածի պէս նայեց, սկսեց հարցեր տեղալ՝ միայնակ ե՞ս եմ, թէ ուրիշներն էլ ձերբակալուած են: Պատասխանեցի, որ առայժմ վնց Հոգի ենք: Մեր ղրոյցը ռուսերէն էր:

Սալմանբէկը Թիֆլիսի ուսուցչական ճեմարանից վկայուած ուսուցիչ էր և տարիներ չարունակ ուսուցչութիւն էր արել իրենց գիւղում՝ Նարիման Բէկլիում (Ջիվանչիրի գաւառում), ապա գաւառի կենտրոնում՝ Թարթառում: Նա Թուրքերի մէջ յայտնի էր, իբրև սոցիալիստ, ուստի արժանացած էր բէկերի և խաների ատելութեանը, որոնց պահանջով բանտարկուել էր, իբրև խռովարար, գիւղացիութեանը բէկերի դէմ լարող, գրգռող: Սալման բէկը որևէ կուսակցութեան անդամ չէր, չնորհիւ իւր բնաւորութեան, կուսակցականի վիճակում լինել չէր կարող, ուղում էր աղատ լինել և անկախ իր մտածումներով: Համիսլամականներին չէր հանդուրժում, այն համարելով յետադիմական չարժում. կրօնական կապերից միանդամայն աղատ էր դգում իրեն և խիստ դէմ Թուրք հոգևորականութեանը, որը դէմ էր ժողովրդի լուսաւորմանն ու զարգացմանը: Օրինետասիօնը[87] ռուսական էր և այն համոզումն ունէր, որ ֆէդերատիւ (դաշնակցային) կապերով ռուս մեծ ժողովրդին կապած Ռուսաստանի աղգերը, իրենց ինքնավար մշակութային կեանքով, չատ աւելի հնարաւորութիւն կունենան յառաջդիմելու և զարգանալու, քան եթէ անկախ լինեն ու չարունակ իրարու հետ վէճի և հաւանական բախումների մէջ:

Սալմանբէկը ամառւայ սկզբներին, երբ տաճիկները տիրում են Ղարաբաղի տափաստանին, որ Մուղանի զաչտի մասն է կազմում, կծկւում է իրենց գիւղում, վախենալով, որ հակառակորդները, ժամը հասած համարելով, կարող էին մաքրել իր հաչիւը: Եւ երբ լսում է, որ քոչւորները բարձրանում են լեռները, և հայ-թրքական մի յանձնախումբ աչխատում է Ասկերանում, որ քոչւորների և հայերի միջև թիւրիմացութիւնները տեղի չունենան, որոչում է՝ աննկատ կերպով հասնել Ասկերան, այնտեղ հայ անդամների հետ տեսնուել և ապաստան խնդրել հայկական գիւղերից մէկում. իրագործում է որոչումը, իր համագիւղացիներից մէկի հետ հասնում է Ասկերան, հարցնում, թէ ովքեր են Ասկերանի յանձնախմբի հայ անդամները, յայտնում են Արմենակ Բէգլարեանի (գիւղական ուսուցիչ, սոց. յեղափոխական) և իմ անունը: Իմ աղգանունը լսելով, հարցնում է հօրս անունը, յայտնում են և

[87] Կողմնորոչում: (Խմբ.)

պարզում է, որ իր մօտ ծանօթի որդին եմ, ուստի ուղում է անպայման ինձ հետ տեսնուել, սակայն այդ օրը բացակայ եմ լինում, զործով Նախիջևանիկ գիւղը գնացած լինելով: Որոչում է խօսել Բէզլարեանի հետ, բայց վերջինս ղղուչանում է, չի համաձայնում, պարզապէս չճանաչելով Սալման բէկին: Վերջինս ղգալով, որ վստահուելիւն չկայ իր հանդէպ, որոչում է մնկնել Շուշի, յոյսը դնելով այնտեղի մէկ-երկու իր մօտ ծանօթների վրայ, թերևս նրանք հնարաւորութիւն ստեղծէին անվտանգ ապրելու որոչ ժամանակ, մինչև որ կարողանար փոխադրուել մի ապահով վայր, եթէ յաջողուէր: Խօսակցական լեզուն ռուսերէն էր, այնպէս որ, բանտարկեալ միւս թուրքերը չէին հասկանում:

" Ես համոզուած եմ, որ մեր բէկերը պիտի իմ գլուխն ուտեն, հալածեն եղբօրս, որը չպիտի կարողանայ օգնել կնոջս և երեխայիս, որոնք անօգնական վիճակում մնալով, ի վերջոյ պիտի սովամահ լինեն", ասաց Սալմանբէկը և յուզմունքից աչքերը լեցուեցին:

– Չպէտք է յուսահատուել, Սալմանբէկ, Աստուած մեծ է, մի միջոց կը գտնուի, և կազատուես վտանգից, – ասացի նրան:

Նա սկսեց պատմել տաճիկների զործած բռնութիւնների և բռնագրաւումների մասին, որ գիւղացիութիւնը ղժգոհում է, ահազին քանակութեամբ հացահատիկներ են բռնագրաւել և Բաթումի վրայով ուղարկել Տրապիզոն և Պոլիս: Թարթառում, Ելպախում, Բարդայում և Աղդամում գտնուող զօրամասերի ու նրանց ձիերի կերակրելը ծանրացած է ժողովրդի վրայ, առանց վճարի: Եւ վատն այն է, որ մեծամասամբ տուժողը գիւղացիութիւնն է, բէկերն ու խանները ճարպկօրէն կարողանում են խուսափել պարտադրուած նիւթական զոհողութիւններից: Բէկերի և խանների մէջ կային այնպիսի հարուստներ, որոնցից իւրաքանչիւրը կարող էր ամբողջ կայազօր կերակրել: Տեղի են ունեցել բռնաբարման դէպքեր գիւղերում և զանազան անախորժութիւններ: Զօրքի համար սպիտակեղէն են պահանջում ժողովրդից, մինչդեռ ժողովուրդը ինքը տկլոր է: Տաճաստանի ամբողջ ժողովուրդը խուլ դժգոհութիւն է յայտնում, որ նոր կառավարութիւնը փոխանակ նիւթական օժանդակութիւն ցոյց տալու, իր չունեցածից բաժին է պահանջում: Ճիշտ է, դժգոհ է ժողովուրդը, սակայն ձայն- ծպտուտ հանել չի կարող, քանի որ չնչին մի առարկութիւն տեղիք է տալիս սոսկալի ծեծի: Մէկ երկու դէպքեր տեղի են ունեցել, զարի են պահանջել ձիերի համար, գիւղացին պատասխանել է, որ չունի, որտեղի՞ց տայ, և գիւղացու դժգոհութիւնը չաւուչին դուռ չի հնկել, գաղաղել փայտով խիստ ծեծել է խեղճ գիւղացուն, մարմինը կապոյտներով ու ջարդուածքներով զարդարել: Վայրենի, անտաշ, մարդկային զգացմունքներից զուրկ մարդիկ են: Եւ ժողովուրդը համեմատելով ռուս ոստիկանական պաշտօնէութեան հետ, սարուձորի չափ տարբերութիւն է գտնում երկու պետութեանց մարդկանց միջև և չատ բարձր գնահատում ռուսներին: Ժողովուրդը չարունակ

ախուվախ անելով հին կարգերն է վերյիչում և երանի տալիս այն օրերին:

Ժողովրդի վիճակը տեսնելով, առիթ ունեցայ խօսելու Թարթառում գտնուող մի չարք բէկերի հետ, որոնք չատ էին ոգևորուած տաճիկների Ղարաբաղ մուտք գործելով: Արտայայտուեցի, բաւական խիստ, որ օսմանցիները եկել են այս կողմերը ժողովրդին կեղեքելու: Իմ քննադատական վերաբերմունքի հետևանքով համարուեցի թշնամի, դաւաճան, և սկսեցին հալածանք իմ ու ազգականներիս դէմ: Մինչև տաճիկների կովկաս գալն էլ հանդէպ ինձ լաւ չէին բէկերն ու խաները. իբրև "հաւատացեալ ժողովրդի միտքը պղտորողի," "խառնակչի", իսկ տաճիկների գալուց յետոյ աւելի լարուեցին, այն աստիճան, որ միտք էին յղացել վերջ տալու իմ կեանքին: Իմ բարեկամ վաճառականներից մէկը, թէև խիստ հակառակորդ իմ գաղափարներին, բայց չար մարդ չլինելով, բէկերի ծրագրին տեղեակ լինելով, զգուշացրեց ինձ ու խորհուրդ տուաւ հեռանալ մեր (Ջիվանչիրի) գաւառից: Ես որոշեցի ապաստան գտնել հայերի մօտ, չյաջողուեց, և ես համոզուած եմ, երբևէ ինձ չեն արձակի բանտից, եթէ նոյնիսկ չսպանեն էլ, կը պահեն, մինչև որ մի օր մնաս բարով ասեմ աչխարհին:

Սալմանբէկ, ասացի մի յուսահատուէք, Աստուած մեծ է, դուք ոչ մարդասպան էք, ոչ աւազակ և ոչ էլ գող. ուսուցիչ մարդ էք, տարիներ չարունակ նուիրուած էք եղել մանուկ սերնդի կրթական գործին և եթէ մարդկանց գործած անարդարութիւնների դէմ բողոքել, պայքարել էք, ձեր անձնական շահի համար չէք արել, ինչ արել էք, ժողովրդի համար էք արել, ի վերջոյ, արդարութիւնը ձեր կողմն է, դուք կազատուէք:

– Սիրելիս, դուք եթէ անձամբ գործ չէք ունեցել մեր բէկերի հետ, սակայն ձեր հայրը և ձեր հօրեղբայրը չատ յաճախ լսել, տեսել են, թէ բէկերը ինչպէս են չարչարում, տանջում մեր գիւղացիութեանը, անչուչտ նրանք պատմելու առիթներ ունեցել են ձեր տանը, և դուք լսել էք, թէ ինչպիսի ոճրագործ տիպեր են. ես եթէ քրէական յանցաւոր մէկը լինէի, այստեղ չէին բերի ինձ. քրէական տիպերը ազատ են մեր մէջ, իսկ աչխատաւորների, գիւղացիների չահերը պաչտպանողները համարուում են իսլամի դէմ մեղանչող, ազգի թշնամի:

Երբ Սալման բէկը պատմում էր այն մասին, թէ ինչպէս բէկերը հալածել են իրեն և նոյնիսկ դաւադրել իր կեանքի դէմ, ուստի հարկադրուած հեռացել է իրենց չրջանից, ապահով մի տեղ որոնելու նպատակով, և հետևանքը եղել է բանտարկութիւնը, այդ միջոցին միտք յղացայ ազատելու նրան բանտից, եթէ ես ազատ արձակուելու լինեմ: Յղացածս միտքը՝ նրան ազատելու ծրագիրը, չատ պարզ ու դիւրին կերպով իրագործել կարելի էր: Յեղափոխութիւնից յետոյ դեռ չարունակւում էին ցարական

կառավարութեան ժամանակեայ դատաստանական օրէնքները թէ մեր և թէ թուրքերի մէջ: Անգամ տաժանակրութեան դատապարտած յանցագործի դէմ որևէ մէկը կարող էր դանգատուել Հաչտարար դատաւորին, պատճառաբանելով, որ յանցագործը իրեն պարտ է մնացել X ռուբլի կամ յանիրաւի զաւթել է իր մի կտոր հողը և այլն, ուստի խնդրում է դատաւորին, որ օրէնքի ուժով յանցաւորից պահանջի իրեն հասանելիքը: Այս մասին ես անմիջապէս չյայտնեցի Սալմանբէկին, սպասելով, որ՛ մեր վիճակը պարզելուց յետոյ յայտնեմ, այսինքն, եթէ յուսալի լինի մեր ազատուելը, ազատուելուց յետոյ մէկի միջոցով դատ սկսել, ի հարկէ, Հաչտարար դատաւորը ոչինչ չպիտի իմանայ, թուղթ կը գրէ բանտապետին պահակների հսկողութեամբ Սալման բէկին ղրկել դատարան: Բանտապետը կուզարկի, դատարանում Սալման բէկը կը խոստովանի, որ իրօք պարտական է դանգատաւորին, յանձն կառնէ վճարել պարտքը և վերադարձին բանտ, ճամբին մեր տղաները պահակների ձեռքից կը խլեն Սալման բէկին: Հաչտարար դատաւորը հայ էր, միամիտ մէկ մարդ և դատարանն էլ գտնւում էր հայոց թաղում:

Հոկտեմբեր 3-ին բանտ բերւած նոր ձերբակալւած արհեստաւորներից տեղեկանում ենք, որ առաւօտեան կախել են Ջանախչի (Աւետարանոց) գիւղացի Աւագ Սայեաղեանցին, որը նպարավաճառի խանութ ունէր փոստի փողոցի վրայ: Աւագը մեր լաւագոյն մարտիկներից մէկն էր և տաճիկների գալուց առաջ, գաւառ գնալ-գալուց միչտ զինւած էր եղել և չատ թուրքեր տեսել էին նրան զինւած, ուրեմն գիտէին, որ զէնք ունի: Անպիտանի մէկը մատնում է. տաճիկները խանութը տակն ու վրայ են անում, գտնում մօսին Հրացանը, հարիւրաւոր փամփուչտներով և անմիջապէս կախում, համաձայն կանխաւ արած ազգարարութեան, որ զէնք պահողը պիտի պատժւի խստագոյնս:

Հոկտեմբեր 6-ին, առաջին անգամ տանում են քննութեան Լևոն Վարդապետեանին և ինձ: Ասկեար պահակներն իրենց մէջ առած մեղ տանում են նչանակւած տեղը՝ խանի աղջկայ՝ Հաջար խանումի տունը, Ջամիլ Ջահիդ բէյի կենտրոնատեղին: Երկու յարկանի մեծ տուն է, չատ սենեակներով, որոնցից երեք-չորս սենեակ ղբաղեցնում է պարետը, և նրանցից մէկում մեղ կարգադրում են սպասել: Երբ բանտից հասանք ռուսաց եկեղեցու հրապարակը, տեսանք հինգ կախաղան կանգնեցւած երկու չարք՝ երկուսը առանձին և դիմացը երեք հատ: Լևոն, -ասացի, -տեսնու՞մ ես տնկւածները, այն երկուսից մէկի վրայ ինձ են կախելու, որպէս նախագահի, երկրորդի վրայ Մելիքսէթին, որպէս քարտուղարի, մանաւանդ որ, նախքան տաճիկների գալը, խիստ լեզուով արտայայտւել էր նրանց հասցէին: Միւս երեքի վրայ՝ քեզ, որպէս գաւառապետի, Հայրապետին, որպէս Օզակոմի կողմից

Ղարաբաղում նչանակված լիազօրի և Աչոտին, որպէս հայ-Թրքական կոմիտէի քարտուղարի:

– Այ մարդ, դու էլ հանաք անելու ժամանակ գտար –վրայ է բերում Լևոնը, տնքալով:

– Թրքական ասացուածքի պէս՝ մեռնելը մեռնել է, էլ վերջի խոխոռոցը ինչի՞ է պէտք, ասացի, սակայն Լևոնը լուրջ մտահոգւած էր, թէ ինչ պիտի անեն մեզ. մարդավարի պիտի հարցաքննե՞ն, թէ ոչ: Երբ մեզ տեղաւորեցին սենեակներից մէկում, քառորդ ժամ հազիւ էր անցել, երբ ներս թողին տպարանատէր Սիմոն Բարաջանեանին, մի քանի արհեստաւորների հետ միասին: Հարցնում եմ Սիմոնին, թէ ինչու են եկել, յայտնեց, որ կանչել են ինչ որ վկայութեան համար:

– Ձեզ բերել են, որ մեզ հետ միասին տանեն բանտ, –ասացի:

– Չի կարող այդպէս լինել, մեզ ասացին, թէ պիտի հարցաքննեն, իբրև վկաների:

Մեր փոխադրութեան վերջին ներս մտցրին Ստեփան Մանդինեանին, Գևորգ Բաղդասարեանին, Յովհաննէս Ֆհնյ. Տէրտէրեանին, որոնց նոյնպէս ասել էին, թէ պիտի հարցաքննեն իբրև վկաների: Երեք ժամից աւելի սպասում էինք, ոչ մէկին չկանչեցին հարցաքննութեան. արդէն ժամը 2-ից անց էր: Երբ ասացի Լևոնին, որ սոված եմ, ուտել եմ ուզում, ասաց՝ "Էս պայմաններում էլ մարդ ախորժակ կունենա՞յ ուտելու":

Պատահաբար հրապարակում գտնւած հայերից մէկը, երբ Լևոնին ու ինձ բերում են բանտից հարցաքննութեան, տեսնելով մեզ, գնում, լուր է տալիս Լևոննց ու մերոնց: Լուրը տարածւում է, և չատերն են տեղեկանում: Ժամը երեքն էր արդէն, մէկ էլ տեսանք, մեր տղաներից երկու հոգի Լևոննց և մեր տնից մատուցարանների մէջ սպիտակ սփռոցում կապած լաւաչ ներս բերին, տապակած լաւ միս, կատէտ, պանիր, փաթաթած լաւաչ հացի մէջ, կանաչեղէն ու պտուղ: Ներսի սեղաններից մէկի վրայ բաց արինք, և ես ախորժակով սկսեցի ուտել: Լևոնը չկամ-չկամ երկու պատառ բերանը դնելով, չէր ուզում չարունակել:

– Լևոն, կեր, ուտենք, կչտանանք, գոնէ կուչտ փորով մեռնենք, – ասացի:

– Այ տնաչէն, էլի սկսեցիր, մարդկանց սրտից արիւն է հոսում, իսկ դու ղարավաթ (հանաք) անելու մարմաջով ես բռնւել, – ասում է Լևոնը:

Այդ միջոցին ներս մտաւ Լևոն Թադէոսեանի ծառան, գլխին դրած մի սինի, ծածկւած սփռոցով:

– Պարոն Եղիչէ, պարոն Լևոնն ասաց, որ ուշ ենք իմացել, եթէ չուտ իմանայինք, լաւ ճաշ կը պատրաստէինք, չտապ-չտապ են պատրաստել բերածս:

Էլ ինչ ասես, որ չկար սինիի մէջ, էլ տապակած հաւ, էլ լուլա քեաբաբ, ծեծած (ատրիվնոյ) կատլետ, տապակած զետնախնձոր և պտուղ, եօթ հոգու բաժին:

Դարձայ Մանդինեանին, Սիմ. Բարաղամեանին, Յով. Մհնյ. Տէրտէրեանին ու արհեստաւորներին և առաջարկեցի, որ մասնակցեն մեր ճաշին: Ստեփան Մանդինեանը և Սիմ. Բարազամեանը ասացին, թէ տներում սպասում են, կը վերադառնան և տանը կը աշեն:

– Վերադառնալ չկայ, լաւ իմացէք, մեղ հետ միասին բանտ պիտի գնաք, իսկ բանտում ոչ մեղ համար և ոչ էլ, մանաւանդ, ձեզ համար, ճաշ չեն պահելու:

– Ոչ, ոչ, մենք իրրև վկաներ ենք կանչուած, – ասաց Սիմոնը, մեղ կը հարցաքննեն և բաց կը թողնեն:

– Շատ լաւ, կը սպասենք, կը տեսնենք, թէ ինչպէս պիտի հարցաքննեն, –ասացի ժպտալով:

Տէր Յովհաննէսը իրենց գիւղի (Շօչ) քահանան էր, գործով եկել էր քաղաք, թեմի առաջնորդի մօտ և, նոյնպէս իրրև վկայ, միւսների հետ ընթրել պարետի մօտ՝ հարցաքննելու: Տէր Հայրն ու արհեստաւորները չմերժեցին, մօտեցան սեղանին և ճաշակեցին:

Մի կտոր հաւի մսից, մի կտոր ոչխարի մսից լաւաշի մէջ փաթաթեցի՝ Սալման բէկի համար տանելու: Ժամը 4-ից անց էր արդէն, և ոչ մէկիս չհարցաքննեցին: Պարետը, դուրս գալով իր կաբինէտից, հրամայեց ասկարներին, որ բոլորիս բանտ տանեն:

– Հը, Սիմոն, ասում էիր, թէ իրրև վկայի պիտի հարցաքննէին ու բաց թողնէին, բայց չհարցաքննեցին. քեզ ասացի, հաց կեր, չկերար, ձեռքիս փաթեթը առ, կեր միջի միսն ու հացը, –ասացի:

– Ջէ, չեմ ուզում, կուշտ եմ, ճիշտն ասած, երբ միլիցիօները եկաւ տուն, յայտնեց, թէ կանչում են հարցաքննութեան, մտածեցի, որ կարող են ուշ բաց թողնել, ուստի լաւ կերել, փորս պնդացրել եմ, ախորժակ չունեմ, կուշտ եմ:

Հասանք բանտ, ես գնացի իմ սենեակը, միւսներին էլ տեղաւորեցին ուրիշ սենեակներում: Սալմանբէկը չատ չնորհակալ եղաւ իր բաժնի համար, որովհետև բանտում լաւ չէին կերակրում բանտարկեալներին: Կային դանադան թեթև յանցանքներով ձերբակալուած չուչեցի թուրքեր, որոնք իրենց տներից կերակուր ստանում էին և լաւ էին սնուում, իսկ գիւղացի թուրք բանտարկեալները՝ բանտի աղքատիկ ճաշով. տալիս էին բողբաչ (սուպ), մէկ-մէկ փլաւ՝ չամիչով, և թանապուր: Սուպը զետնախնձորով, հաչուով, իւրաքնաչիւր պնակի մէջ մի հատ և մի փոքր կտոր միս. փլաւը մի հացի գդալ չամիչով, իսկ թանապուրը առատ կանաչեղէնով համեմուած:

Ամեն օր մեկ-երկու բանտարկեալ էին բերում, և նրանք կեցտուր տեղեկութիւններ էին յայտնում գաւառում տեղի ունեցած ղէպքերի մասին, որոնց մանրամասնութիւնները մենք իմացանք բանտից դուրս գալուց յետոյ միայն: Հոկտեմբեր 11-ին երկու ասկեարների հսկողութեամբ բանտապետն ինձ ուղարկեց զինուորական դատարան՝ հարցաքննութեան: Դատարանը գտնւում էր թրքական չուկայի տներից մէկում: Դատարանի առջև թուրքեր կային խմբւած, որոնք ճանաչում էին ինձ և մի քանիսի հետ էլ ծանօթ էի: Դատարանի չէնքը մի յարկանի էր, փողոցից մտանք փոքր, նեղ միջանցքը, որը երեք դուռ ունէր իրարու մօտ՝ ճակատի և աջ ու ձախ կողմի վրայ: Ինձ մտցրին ձախ կողմի սենեակը, որը երկու պատուհան ունէր փողոցի վրայ. թուրքերը հետաքրքրութեամբ պատուհաններից նայում էին ներս. ասկեարներից մէկը նկատողութիւն արաւ, հրամայելով, որ հեռանան: Շատ չանցած, ճակատի դռնից դուրս եկաւ բարձրահասակ, նիհար մի զինուորական, կանգնեց իմ սենեակի բաց դռան չէմքում, խոժոռ հայեացքն ուղղելով ինձ, ձայն տւաւ հետևել իրեն: Ճակատի դռնից ներս մտանք բաւական ընդարձակ մի երկար ու լայն սենեակ, որի պատուհանները բացւում էին ընդարձակ բակի վրայ:

Սենեակը լաւ կահաւորւած էր. յատակն ամբողջովին ծածկւած էր զեղեցիկ գորգերով, պատերի տակ չարւած աթոռներ, երկու-երեք տեղ փոքր սեղաններ, իսկ մեկ կողմին՝ կանաչ մահուդով ծածկւած մեծ սեղան, որի կենտրոնի կողմը նստած էր մի զինուորական և նրա երկու կողմին նոյնպէս զինուորականներ, որոնք, երևում էր, որ աստիճանով ցածր էին: Իրարու հետ խօսելու ընթացքին յայտնի եղաւ կենտրոնում նստածի՝ նախագահի անունը, Թայրի բէյ, իսկ նրա ձախ կողմինը՝ Զաքի բէյ, աջակողմեանի անունը չիմացայ: Երեք հոգին էլ անգլիական զինուորականի հագուստներ էին հագած: Նախագահը և աջ կողմինը կանոնաւոր գիմագծեր ունեցող մարդիկ էին, իսկ Զաքի բէյը վագրի չար աչքեր ունէր և խոժոռ, փոքր, քացախած դէմք, որն ամբողջովին անգթութիւն էր արտայայտում: Ներս մտնելով, գլխի չարժումով բարևեցի նախագահին, որն առաջարկեց նստել իր դիմացի կողմը գտնւած աթոռին:

Երբ ներս մտայ քննիչների սենեակը, տեսայ դիմացի պատի տակ նստած Ջիվանչիրի գաւառի բէկերից մեկին՝ Ֆրէյդունբէկ Ուղուրլուբէկովին, որը շատ լաւ ճանաչում էր ինձ եւ ծանօթ էր Հօրս և Հօրեղբօրս հետ: Երբ նախագահի առաջարկով նստեցի, Ֆրէյդուն բէկը բարձրացաւ և խոր գլուխ տալով ուղեց դուրս գնալ և, դրան չէմքի մօտ կանգ առնելով, դարձաւ քննիչներին, թէ՝ "էֆենդիներ,

այստեղի հայերի ամենամեծը հէնց սա է, – ցոյց տալով ինձ, – սրա օձիքից պինդ բռնեցէք և ինչ որ պէտք է, պահանջեցէք":

Անպիտանի մեկն էր Ֆրէյդունբէկ կոչւածը, ոչ մեկ դեր չէր խաղում, երբ թուրքերի հետ հայ-թրքական կոմիտէում աշխատում էինք, նախքան տաճիկների արևելեան Անդրկովկաս մուտք գործելը և հետագային, մինչև Բագւի անկումը, թուրքերի կողմից չատ յաճախ դանազան բէկեր, որևէ խնդրով, իբր այս կամ այն չրջանի ներկայացուցիչ, յարաբերութիւն ունեցել էին մեղ հետ, իսկ այս անպիտանը երբէք ուշադրութեան չէր առնւել որևէ մեկի կողմից: Սալմանբէկը մանրամասն պատմեց նրա մասին, որ նոյն իսկ իր աղգականների մօտ ոչ մեկ վարկ չուներ: Բանտից ելնելուց յետոյ տեղեկացայ չուչեցի ծանօթ մաչադի Զալիլից, որը պարսից սահմանադրական կռիւների ժամանակ, առևտրական գործով, Ղարաբաղի վրայով, աղատ, որպէս ռուսահպատակ, Թաւրիզ գնալ-գալուց, մեկ-մեկ օգտակար էր եղել մեղ, պատմեց, որ Ֆրէյդունբէկի գիւղացիները դանդատւել են տաճկական հրամանատարին, թէ ցարական կառավարութեան ժամանակ Ֆրէյդունբէկը իրենց տանջել է, կողոպտել, և որովհետև իշխանութիւնների բարեկամն էր դարձած, նրանց չարունակ կերցնում, խմացնում էր, ուստի իրենց դանդատները մնում էին ապարդիւն: Տաճիկները Ֆրէյդունին պինդ են բռնել և գիւղացիները յոյս ունեն, որ իրենց նիւթական վնասը կը ստանան Ֆրէյդունբէկից: Հարկաւ, գիւղացիները միամիտ մարդիկ էին և իրենց հաւատակիցներին լաւ չէին ճանաչում, ասում եմ ինքս ինձ. տաճիկը Ֆրէյդուն բէկից եթէ կարողանայ մի բան կորզել, էլ ինչու՞ պիտի տայ նրանց:

Պատասխանեցի, որ չուչեցի եմ, անունս Եղիշէ, ազգանունս Իշխանեան, Պետրոգրադի գիւղատնտեսական ճեմարանի ուսանող եմ: Նախագահը դրասեղանի վրայի թղթածրարի միջից հանելով, ցոյց տւաւ իմ լուսանկարը և հարցրեց.

– Ո՞մ լուսանկարն է այս

– Իմն է, -պատասխանեցի:

Այդ միջոցին բռունցքի ուժեղ հարւած հասցնելով, աջ կողմիս նստած Զաքի բէյը ասաց.

– Դու վանի իշխանը չէ՞ս, ինչո՞ւ ես ստում:

– Ես Վանում երբէք չեմ եղել և Ռուսաստանի սահմաններից երբէք դուրս չեմ եկել. այստեղ չուչեցի չատ թուրքեր ճանաչում են ինձ, դոք. Քեաբիմբէկ Մեհմանդարովը, Աբուլֆասյբէկ Հասանբէկովը, վաճառական Միրզա Շահինը, Ալիբէկ Ալիբէկովը և չատ ուրիչներ, որոնցից կարող էք տեղեկանալ իմ մասին:

Զաքի բէյը վերցնելով նկարս, դէմ արաւ աչքիս ու հարցրեց.

– Դու ընդունում ե՞ս, որ սա քո նկարն է:

– Այո, իմ նկարն է:

– Ուրեմն, դու Վանի Իշխանն ես, և ես երեք տարի է, որ փնտրում եմ քեզ:

–Էֆենտի, դուք սխալւում էք, գուցէ որոշ նմանութիւն կայ ձեր ասած մարդու և իմ դէմքի միջեւ, բայց իմ անունս Եղիշէ է և աղգանունս Իշխանեան, իմ անունը Իշխան չէ և ես Վանեցի չեմ, այլ չուշեցի:

– Դուք ստում էք, իմ ձեռքից չէք պրծնի, –ասաց Զաքի բէյը և բռունցքի մի հարւած էլ իջեցրեց գլխիս. չչմեցի:

Այդ միջոցին ներս մտաւ նախկին ցարական ոստիկանական պաշտօնեայ (պրիստաւ) Իբրահիմբէկ Հիւսէյինբէկովը, որը չատ լաւ էր ճանաչում ինձ. 1915 թ. միաժամանակ բանտարկւած էինք եղել Շուչու բանտում, ես իբրև քաղաքական յանցաւոր, իսկ նա և իր ծառան մի թուրքի սպանութեան պատճառով: Բանտապետը, Գերման Եվրեմովիչ Նուդվոցկին, երկղասեան գիւղական դպրոց աւարտած, բարի մարդ էր և մօտ ծանօթ հօրս հետ, ուստի, որպէսզի տխուր չանցնէր օրս, առաջարկել էր ինձ գրասենեակում աշխատել, և ես սիրով յանձն էի առել խիստ անկանոն վիճակում գտնւող հաշիւները կարգի բերելու: Այնպէս որ, արտօնեալ վիճակում էի: Իբրահիմբէկը, իւր ծառայի հետ միասին, ճիշտ իմ սենեակի դիմացի սենեակում էր պահւում, իւրայինների հետ տեսակցութեան թոյլատւութիւնից զրկւած: Ինձ հետ նոյն սենեակում և միևնոյն գործով բանտարկւած էին հայր ու որդի՝ Գէորգ և Սարգիս Տէր Գաբրիէլեանները: Մերայիններին թոյլատրւում էր այցելութեան գալ բանտը, ամէն կիրակի հայրս՝ Իվան (Յովհաննէս) Իշխանեանը, որ պետական պաշտօնեայ էր աքցիզային վարչութեան և քոյրս՝ Համեստը, ինչպէս և Տէր Գաբրիէլեանների հարազատները, մեզ կերակուր ու պտուղ կը բերէին առատօրէն: Մեղ հետ միասին բանտարկւած էր թուրք միջին տարիքի վաճառական Միրզա Շաֆիևը, ինչ որ քաղաքացիական գործով: Իբրահիմբէկը ճանաչում էր հօրս և ծանօթ լինելով, ցանկութիւն յայտնեց լսօսել հետս: Ես աղատ էի բանտում, միայն ճաշի և թէյի ժամանակ կլիչնիկին[88] կասէի, սենեակի դուռը կը բանար, ներս գնալու. չատ յաճախ բանտապետը թոյլ չէր տայ սենեակ գնալու, իր բնակարանից, որ բանտի ընդարձակ բակում, երկյարկանի փոքրիկ շէնք էր, թէյ բերել կը տար, իւր կնոջ պատրաստած խմորեղէնով, միասին թէյ կը խմէինք, կ'ընթրէինք: Բանտապետից պահանջւել էր, որ պէտք է քաղաքային դպրոցի չորս դասարանի աւարտական վկայական ունենար, ուստի հետը պարապում էի թւաբանութիւն և երկրաչափութիւն: Արդէն յիսունն անց մարդ էր, չատ դժւարութեամբ էր ըմբռնում և սովորածն էլ յաջորդ օրը մոռանում: Պիտի քննութիւն տար Շուչու քաղաքային չորսդասեան դպրոցում, որի տեսչի հետ մօտ ծանօթ էր հայրս, քննութեան ժամանակը

[88] Բանալեալահ (ռուս.), բանդապահակ: (Խմբ.)

մտածելուց խօսում, համոզում է տեսչին, որ մի կերպ անցկացնեն, բաւարար թւանշաններ նշանակելով, քանի որ դուտ ձեւական նշանակութիւն ունէր աւարտական վկայականը: Տեսուչը համաձայնում է, և նա աւարտական վկայական ստանում է, աղաւաղելով մի "ծանր բեռից," ինչպէս ինքն էր արտայայտւում:

Ես Իբրահիմբէկի սենեակի դռան կլոր անցքին մօտենալով, հարցրի, թէ ինչ է ցանկանում: Ասաց, որ մեզնից առաջ են ձերբակալել իրեն և ծառային, որը սպանել է համագիւղացիներից մէկին, որի հարազատները իրենց գանգատի մէջ մտցրել են և իր անունը, որպէս սպանութիւնը կազմակերպողի: Եւ չորրորդ ամիսն է, իր հարազատներից ոչ մէկին թոյլ չեն տալիս տեսակցելու իրա հետ և բանտապետին էլ կարգադրւած է խիստ հսկողութեան տակ պահել, ուստի իր անունից խնդրեմ հօրս, որ խօսէ դատախազի հետ, թոյլատրելու գէթ իր կնոջը հետ տեսակցելու: "Ձեր հայրը բարձր պաշտօնեայ է և անչուշտ ծանօթ է դատախազի հետ, խնդրում եմ, հնարաւորը չխնայէ": Խոստացայ և յայտնեցի հօրս Իբրահիմբէկի խնդրանքը, և նա յանձն առաւ, խօսեց դատախազի հետ, և կնոջը իրաւունք տւին տեսակցելու: Արդ, երբ ներս մտաւ Իբրահիմբէկը, ուրախ եղայ և դիմեցի նախագահին, թէ Իբրահիմբէկը ինձ լաւ ճանաչում է և կը վկայէ իմ մասին որ ես չուշեցի եմ: Նախագահը դեռ բերան չբացած, Իբրահիմբէկը ասաց՝ "երիտասարդ, ես ձեզ չեմ ճանաչում, այս առաջին անգամն է, որ ձեզ տեսնում եմ":

– Իբրահիմբէկ, մի՞թէ մոռացել էք, որ 1915 թ. միասին բանտումն էինք, երկուսս էլ բանտարկւել էինք տարբեր մեղադրանքով, դուք բանտարկւած էիք ձեր ծառայի հետ միասին:

– Դուք երևի ուրիշ մարդու հետ էք չփոթում, իմ և նրա դէմքի նմանութիւն գտնելով:

– Ոչ, ես չեմ սխալւում, դուք մոռացել էք. . .

Այդ միջոցին կողքի սենեակից ձեռքի չարժումով կանչեց մէկին, դուրս եկաւ՝ Ստեփան Մանդինեանը, որի գլխի մազերը միշտ լաւ սանրւած էին լինում, գզգզւած վիճակում էր և դէմքի գոյնն էլ թռած էր: Շատ զարմանալի թւաց նրա տեսքը, և կասկածը սկսեց կրծել ներսս, չլինի՞ թէ Ստեփանն էլ բռնութեան է ենթարկւել: Ստեփանին կանգնեցրին դէմս, ու նախագահը հարցրեց ինձ.

– Ճանաչո՞ւմ էք այս մարդուն:

– Այո, պատասխանեցի, մեր գաւառական գործադիր կոմիտէի (հայ-թրքական) պարենաւորման կոմիսարն է, միասին ենք աշխատել:

Մանդինեանին ճամբու դրին, յանձնարարելով ասկեարներից մէկին, որ տանէ բանտ, ապա չարունակւեց իմ հարցաքննութիւնը:

Թայրի բէյը, չատ մեղմ տոնով, նորից սկսեց իր հարցուփորձը.

– Դուք եթէ ճիչտ խոստովանէք, յօգուտ ձեզ կը լինի, բայց եթէ չարունակէք պնդել ձեր ասածի վրայ, դա ի վնաս ձեզ կը լինի: Ապա, ասէք, ե՞րբ էք հեռացել Վանից և ի՞նչ ճամբով:

– Ես ձեզ ճիչտն ասացի, որ երբէք Վանում չեմ եղել, Վանի մասին միայն աչխարհագրութիւնից գիտեմ:

– Դու ստում ես, խող, գոռաց Զաքի բէյը, փորձեց բռնել բեխիցս, կարճ էր չկարողացաւ բռնել, ապա բռունցքի հարուածներ տեղաց գլխիս:

Թայրի բէյը ձեռքի նչանով Զաքի բէյին հասկացրեց լռել և հանգիստ մնալ: Այդ մոմենտին նայեցի Զաքի բէյի դէմքին ու խոր զարչանք զգացի: Ինձ թւաց, որ իսկական բորենի է դէմս՝ մարդկային կերպարանքով: Աւելի քան գարչելի էին աչքերը, որոնք սոսկալի չարութիւն և անզթութիւն էին արտայայտում: Գոհ էի, որ գլխիս մաղ չկար, ճաղատ էի:

– Դուք ընդունեցիք, որ այս նկարը ձերն է, և սա Վանի Իչխանի նկարն է, ուրեմն դուք Վանում եղել էք. ինչու՞ չէք խոստովանում, -հարցնում է նախագահը:

Այդ միջոցին ներս մտաւ քաղաքի մեր ընտրած յանձնախմբի անդամ Ռուբէն Շահնազարեանը, ինչ-որ խնդրի առիթ խօսելու նախագահի հետ: Առիթից օգտւելով, ասացի նախագահին, որ կարող է հարցնել պ. Շահնազարեանին, որը դպրոցական աչակերտ եղած ժամանակւանից ի վեր ճանաչում է ինձ և գիտէ, ով եմ, ում որդին եմ: Եւ մեր փիղիկո-մաթեմաթիկոսը առանց ամաչելու, առանց սպասելու նախագահի հարցին, դարձաւ ինձ և թուրքերէն ասաց. "Ես ձեզ այստեղ, մեր քաղաքում տեսայ առաջին անգամ անցեալ տարւայ ամառը և այնուհետև չատ յաճախ որովհետև չարունակ այստեղ էիք, իսկ անցեալ տարւանից առաջ չգիտեմ, որտեղ էք եղել":

Մտքումս երիցս անիծեցի այս անպիտան, վախկոտ հային և խիստ կչտամբեցի ինքս ինձ, որ արժէք տալով նման մարդուկի, դիմեցի նրան, որ բարոյական աջակցութիւն ցոյց տայ ինձ: Ապա ասացի ինքս ինձ, եթէ հայը նման վերաբերմունք է ցոյց տալիս, ինչու՞ պիտի Իբրահիմբէկը կամ մեկ ուրիչ թուրք լաւ վերաբերմունք ցոյց տայ: Եւ այս ողորմելի մարդը ընտրւեց յանձնախմբի անդամ, օգտակար լինելու հասարակութեանը, իչխանութիւնների հետ որոչ միւրիմացութիւններ պարզաբանելու: Ստայօդ տեղեկութիւն է նաև ինձ Վանի Իչխան համարելը, և Ռ. Շահնազարեանը, վախկոտ նապաստակի պէս ականջները կախ, փախուստի ճամբան բռնեց, ուրացաւ հին ծանօթութիւնը, որ աչակերտական տարիներում, երբ ինքն էլ դաչնակցական աչակերտական միութեան անդամ էր, միասին ժողովներում եղած և սոց.-դեմոկրատների դէմ եղած, բայց համալսարան գնալուց յետոյ համոզումները փոխել էր, յարելով կադետական կուսակցութեան: Այնուամենայնիւ, մեր

ծանօթութիւնը իրարու հետ, որպէս համաքաղաքացիների, չարունակւել էր:

– Ինչպէս լսոստովանեցիք, այս նկարը ձերն է, սա Վանի Իչխանի նկարն է, կը նչանակէ, դուք եղել էք Վանում, բայց, ասացէք, խնդրեմ, ե՞րբ էք հեռացել Վանից, – կրկնեց նախագահը իր հարցը:

Նկարը, կասկածից դուրս է, իմս էր և աւելի երիտասարդ տարիքի նկար, երբ ես ճաղատ չէի, գլխիս առատ, ղէպի յետ սանրւած մազ կար, և երեսս ածիլւած չէր, մաղով ծածկւած էր: Ինչպէ՞ս է ընկել իրենց ձեռքը: Հարկաւ, որևէ ընկեր կամ բարեկամ, որ ունեցել էր նկարս, չէր տւել դահիճների ձեռքը և ես անմիջապէս կռահեցի, որ այդ նկարը Գանձակի պահնորդական բաժանմունքից են վերցրել: 1909 թւի նկար է, այն տարին, երբ առաջին անգամ ոստիկանութիւնը ձերբակալեց ինձ, բանտում լուսանկարեցին, և մատներս մրոտելով կնքեցին թղթերի վրայ: Յեղափոխութեան հետևանքով ցարական կառավարութեան հաստատութիւնները, թուրքերի թաղում լինելով, անցնում են թուրքերի ձեռքը: Պարզ է, Գանձակի թուրքերից հայ քաղաքական յանցաւորների՝ այնտեղ եղած նկարները նոյնութեամբ պահել են, որպէս փաստական տւեալներ նկատի ունենալով, թէ գուցէ պէտք գան իրենց:

Վանի Իչխանը, թէև չորս տարով մեծ ինձնից, ինձ հետ միասին և միևնոյն ուսումնական (1896/97) տարին է մտել Շուչու թեմական դպրոցը, ընդունւել երկրորդ նախակրթարանը: Վարանդայի Քառասնի գիւղից է, իր համագիւղացի Գէորգ (Եգոր) Առաքամեանն էր մտցրել դպրոց: Եւ Գէորգ Առաքամեանի ազդեցութեան տակ լինելով, նրա չնորհիւ էլ մուտք է գործել Դաշնակցութեան չարքերը, աւելի առաջ ինձնից և ուրիշ ընկերներից, որովհետև բոլորից մեծ էր տարիքով: Թեմական դպրոցում, մինչև 1905/06 ուսումնական տարին, աշակերտների տարիքի հարցը խիստ չէր դրւած: Վանի Իչխանը՝ Նիկոլ Պօղոսեանը, Շուչում ապրում էր իւր քեռու, Հերհեր գիւղացի որմնադիր Խոսրով Զալեանի տանը, որ գտնւում էր մեր փողոցում, մեր տանը չատ մօտ, զրեթէ հարևան: Առաւօտները յաճախ միասին կերթայինք դպրոց: Նիկոլն ու ես ղէմքի որոչ նմանութիւն ունէինք և դպրոցում չատերը մեզ եղբայրներ էին կարծում: Թայրի բէյի ձեռքի իմ նկարը մազով, մօրուքով աւելի էր նմանւում Նիկոլին: Հետագային երբ առաջին անգամ ծանօթացայ Ռուբէնի (Տէր Մինասեան) հետ, նա էլ որոչ նմանութիւն գտնում էր երկուսիս միջև:

– Ինչպէս սկզբից ձեզ յայտնեցի, նախ իմ անունը Իչխան չէ, այլ Եղիչէ, և ես Վանում կամ Թուրքիայի որևէ քաղաքում չեմ եղել, Ռուսաստանի սահմաններից երբէք դուրս չեմ եկել: Ես ձեզ ասացի, որ մեր հարևան թուրքերից չատերը ճանաչում են ինձ և տւեցի

նրանց անունները. ես կարող եմ բազմաթիւ ուրիչ անուններ էլ տալ ձեզ:

– Ձեր յեղափոխականներից չատերին գիտենք, որ տարբեր տեղերում զանազան անուններով են աշխատել, այնպէս որ, դուք այստեղ յայտնի էք Եղիչէ անունով, բայց մեզ մօտ դուք եղել էք Վանում, Իչխան անունով:

– Ես կրկնում եմ, որ Վանում չեմ եղել և մէկ անուն ունեմ միայն, Եղիչէ:

Վերջին խօսքը հազիւ արտասանած, ուժեղ հարւած իջաւ գլխիս. չար զազան Զաքի բէյ կոչւած բորենին էր.

– Ինչու՞ չես ճիշտն ասում, ինչու՞ ես ստում, խոզ, խոզի տղայ, –ասաց և ուժեղ հրելով, աթոռով միասին, մէջքի վրայ գլորեց ինձ ցած և սկսեց կոխկրտել վայրագօրէն:

– Ես չեմ ստում, – ասացի ճչալով:

Մէկ էլ, որ արդէն չչմած էի գլխիս հարւածներից, ուսիցս բռնեց, վեր քաշեց.

– Կազնիր, խոզ, – ասաց:

Կանգնեցի, և նախագահը առաջարկեց նստել:

– Հիմա ասէք, թէ որտեղ են պահւած ձեր թնդանօթներն ու գնդացիրները, հարցրեց նախագահը:

– Մենք ոչ մի թնդանօթ և ոչ մի գնդացիր չենք ունեցել ու չունենք, –ասացի:

Այդ միջոցին գարչելի գազանը, Զաքի բէյը, կրկին ուժեղ հարւածներ տեղալով գլխիս, ասում է՝ "խոզի տղայ, խոզ, ինչու՞ ես ստում, Ասկերանում ձեր գնդացիրները չէի՞ն գործում մեր դէմ, ինչու՞ ես ստում, ուրանում":

– Ինչպէս ասացի, մենք մէկ հատիկ իսկ թնդանօթ չենք ունեցել. մեր ունեցածը այն ռմբաձիգն է եղել, որ յանձնել ենք Հասան Բասրի բէյին:

– Այդ ռմբաձիգը մասխարայ բան է, դուք պէտք է յանձնէք մեզ ձեր իսկական թնդանօթներն ու գնդացիրները, որոնք պահւած են, և եթէ յանձնէք, յօգուտ ձեզ գործած կը լինէք, կամաւ չյանձնէք, մենք կը գտնենք, և չատ վատ կը լինի ձեզ համար, – ասում է նախագահը:

– Ինչպէս ասացի, կրկին ասում եմ ճիշտը, որ մենք մէկ հատիկ իսկ թնդանօթ չունենք:

– Մենք ճիշտ տեղեկութիւն ունենք, որ դուք թնդանօթներ ու գնդացիրներ ունէք, դուք պէտք է յանձնէք ձեր թնդանօթներն ու գնդացիրները, մեր այս պահանջը դուք անպայման պիտի կատարէք և խուսափել չէք կարող. համաձայնէք, քանի դեռ ուշ չէ:

Արդէն համբերութիւնս ծայր աստիճանի էր հասել. անվերջ նոյն պահանջը և նոյն պատասխանները: Մտածում էի, այս մարդիկ ձեռ ե՞ն առել մեզ և նման պահանջով ուզում են չարչարել, գիտակցաբար տանջել, որպէս գեաւուրի: Եւ որոշեցի, ի

պատասխան, մի բացատրութիւն տալ, թէ ինչա այդպիսով վերջ դրի "Հարցաքննութեան":

– Ձեզ ճիշտ տեղեկութիւն չեն տուել. դուք դինուորական մարդիկ էք և չատ աւելի լաւ էք հասկանում խնդիրը, քան ես. եթէ մենք թնդանօթներ ունենայինք, պէտք է որ Ասկերանից և նրա երկու կողմի լեռներից գործէին ձեր դէմ, բայց ձեր դէմ մէկ հատ իսկ թնդանօթ չի գործել, և դուք խաղաղ կերպով անցել էք Ասկերանից:

Պարզ է, ուղում էի ասած լինել, որ եթէ թնդանօթ ունենայինք, իրենք չէին կարող մուտք գործել Ասկերանից այնքան հեչտութեամբ: Իմ խօսքերից ցնցուեց զարչելին, Զաքի բէյը, կատաղած չան պէս ցատկելն ու բռունցքի հարուածներով ինձ գետին գլորելը մէկ եղաւ և "դեաւուր օղլու, դեաւուր, դոնգուղ օղլու, դոնգուղ" ղղուելի հայհոյանքներ տալով, սկսեց կոխկրտել, իշավարի աքացիներ տեղալ: Ես երեսի վրայ ընկած, ուսանողական գդակը գլխիս մի ձեռքով պահում էի, որ աքացի կպնելուց պահպանուէր գլուխս: Կոխկրտելուց լաւ տրորուել էի արդէն և չգիտէի, որքան պիտի տևէր կոխկրտոցը, երբ յանկարծ դուռը արագ-արագ ծեծեց մէկը: Ներսից ձայն տուեց մէկը՝ "Ներս մտէք»: Զաքին թողեց ինձ հանգիստ, առիթից օգտուելով, երեսս զարձրի դէպի դուռը և տեսայ, որ ներս մտնողը մի դինուոր էր, կապոյտ գոյնի մէկ թուղթ երկարեց Թայրի բէյին, որը դինուորի ձեռքի տետրակում ստորագրեց և դինուորը դուրս գնաց: Թայրի բէյը կապոցը ձեռքին կանգնել էր տեղում. մօտեցան Զաքին ու միւս դինուորականը, կողք-կողքի լուռ կարդում էին բովանդակութիւնը և հազիւ լսելի ձայնով մրթմրթում էին, բայց ես ոչինչ չէի հասկանում: Զինուորի բերած կապոյտ գոյնի թուղթը, պարզ էր, որ հեռաղիր էր: Նկատեցի, որ թղթի բովանդակութիւնից աղդւել էին և դա պարզ երևում էր նրանց դէմքի արտայայտութիւնից: Թայրի բէյը նշան արաւ, Զաքին հրամայական տոնով դարձաւ ինձ, թէ՝ վեր կաց և դուրս գնայ: Դուրս եկայ, և այն սենեակում, ուր սկզբում եղել էի, ոչ ոք չկար, միջանցքում միայն մէկ դինուոր էր, և ես կանգնեցի սենեակի բաց դռան չէմքում, որ քննիչների սենեակի դռան կից էր, մտածելով, թէ գուցէ բարձր ձայնով կը խօսէին, ու մի բան կը հասկանայի: Եւ յանկարծ, դուռը բացելով, կայծակի արագութեամբ դէմս ցցուեց զարչելի Զաքի բէյը իր երկար հասակով, ուժեղ աքացի տուաւ կրծքիս, զարչելի հայհոյանք տեղալով, և ես երերալով փուեցի գետին: Ներս գնաց, հազիւ մի քանի րոպէ անց դուրս եկաւ և հրամայեց դինուորին, որ ինձ տանէ բանտ:

Զարդուած, փչրուած, այլայլուած դէմքով, դուրս եկանք փողոց և ուղղուեցինք դէպի բանտ: Երբ բաւական հեռացանք տանջարանի չէնքից, Ռուսաց եկեղեցու հրապարակից անցնելիս տեսայ հեռուում կանդնած հօրս և մեծ քրոջս՝ Համեստին, միասին: Երբ մեզ բերել էին քննութեան, ծանօթ թուրքերից մէկը լուր էր տուել մերոնց, և

Հայրս ու քոյրս ուտեստի մի կապոցով եկել էին Հանդիպելու: Զինուորին ասացի, որ Հայրս ու քոյրս են, երբ մօտեցանք, զինուորը արգելք չեղաւ, որ մի քանի խօսք փոխանակենք: Հօրս յայտնեցի որ ժամը 12-ին էին բերել քննութեան. Հայրս նայեց իր ժամացոյցին և ասաց, որ արդէն չորսից անց է: Կարճ պատմեցի մի քանի խօսքով. խնդրեցի, որ յայտնէ քաղաքից ընտրած յատուկ յանձնախմբին, և դանգատուեն Ջամիլ Ջահիդ բէյին. քննութիւն կատարում են, կատարեն մարդավարի և ոչ թէ ծեծելով: Քոյրս տուաւ ինձ Թաչկինակի մէջ կապած ուտեստեղէնը, և հօրս հետ միասին վերադարձան տուն:

Խիստ քաղց էի զգում, երբ Հրապարակից անցանք, Գանձակի դրունքին հասնելով, քանդուած պարսպի վրայ բաց արի Թաչկինակը, հաւի մսի մէկ ոտը լաւաշի հետ տուեցի ասկեարին, մի ոտն էլ ես վերցրի, կրծելով հասանք բանտ: Ճամբին զինուորը բացուեց, սկսեց պատմել իրենց կեանքից. "Պարոն, դուք պէտք է իմանաք, որ թեթև պրծաք. ձեզ ձեռքով էին ծեծում, դռան ձեղքից երևում էր, բայց մեզ մօտ, ղօրանոցում, մի փոքրիկ սխալի համար փայտերով են ծեծում, այնքան, որ մարդ ջարդ ու փչուր է լինում, չարժւել չի կարողանում": Ճիչտ էր ասում զինուորը:

Բացի այն, որ կարդացած գրքերից գիտէի, Հայ-Թրքական ընդհարումներին մեր տան ապրած արևմտահայ մշեցի, խնուսցի մեր զինուորներից և աւելի առաջ Ղարսի չրջանում 1904 թ. այնտեղի դիւղերում ապրող հայդուկներից մանրամասնութիւններ էի լսել, թէ տաճկական բանտերում ինչպիսի գաղանաբարոյ վերաբերմունք էր ցոյց տրւում յատկապէս քաղաքական բանտարկեալներին: Բանտարկեալի եղունգները քաշելը կամ եղունգների տակ ասեղներ խոթելը սովորութիւն էր դարձած: Հարկաւ, համեմատաբար, ինձ պատճառած ցաւերը թեթև էին:

Հասանք բանտ, բանտապետը ընդունեց ինձ և ճամբեց իմ սենեակը, որի դռան մօտ կանգնած, սպասում էի պահապանին, որ գար, դուռը բաց անէր, ներս գնայի: Իմ դիմացի սենեակում Արշաւիր Քամալեանն էր, որը դռան մօտ ժամերով կանգնած, սպասելիս էր եղել վերադարձիս, չարունակ դռան վրայի կլոր անցքից դուրս նայելով: Արշաւիրը ձայն տուաւ՝ "Եղիչէ, ինչպէ՞ս եղաւ, պատմիր երկու խօսքով:

– Լաւ ջարդեցին, ի՞նչ քննութիւն, խայտառակութիւն: Արշաւիր, գլխիդ մազերը խուզել տուր բանտի վարսավիրի մօտ. մազերից քաշում են:

– Ինչպէ՞ս թէ ջարդում են, մազերից քաշում են, դա ինչ՞ հակամարդկային վերաբերմունք է:

– Տնաչէն, տաճիկը մա՞րդ է, որ մարդկային վերաբերմունք ցոյց տայ:

Պահապանը եկաւ, լռեցինք, դուռը բացեց, ներս գնացի: Նախորդ օրը բերել էին բանտ նոր ձերբակալուած մեր մի ընկերոջ՝ ուսուցիչ Միքայել Տէր Յովհաննիսեանին և նրա քրոջ տղային, Վաղդէն Միրզաբէկեանին, ռէալական դպրոցի աշակերտ, որոնք փորձ էին արել դուրս գալ քաղաքից և գնալ գաւառ, միանալու մեր մարտական ուժերին: Միքայէլը քաղաքի ինքնապաշտպանական վեց չրջաններից մէկի՝ Քամու Ջաղացի և Ղումլուղ կոչուած թաղերի պետն էր: Երբ ներս մտայ, Սալմանբէկը ռուսերէն և Միքայէլը հայերէն միաժամանակ հարց տուին, թէ ինչպէ՞ս եղաւ, ինչ արին: Ես չատ ամփոփ կերպով պատմեցի, թէ ինչպէս են քննել և ինչ պահանջել:

Սալմանբէկն ասաց՝ "այդ կուրսը ես էլ եմ անցել, չնորհիւ մեր աւաղակապետ բէկերի, որոնք ինձ պարետին ներկայացրել են, որպէս բոլշևիկի: Ինձ դուրս չեն տարել, հէնց ծեծել, ջարդել են առաջին յարկի սենեակներից մէկում: Ձիչտն ասած, ես դիտակցաբար սկզբից չեմ յայտնել այդ մասին, որպէսզի հանգիստ մնայիք և ջղային վիճակ չունենայիք: Գաղանները են իսկական":

Հոկտեմբեր 12-ին, բանտապետ Ահմէդ բէյը, մի ողորմելի արարած, կարգադրում է Յովհաննէս քահանայ Տէրտէրեանին՝ աւելը ձեռքն առնել և արտաքնոցը սրբել, մաքրել: Տէր Յովհաննէսը առարկում է, որ քահանայ մարդ է, իրեն չի պատչաճում նման աշխատանք, բայց Ահմէդը մնում է անյողդողդ և սպառնում է ծեծել: Բանտարկեալներից մէկը միջամտում է և ասում, որ տէր Հօր փոխարէն ինքը կը մաքրէ, բայց Ահմէդը դարձեալ չի համաձայնում: Տէր Հայրը հարկադրւած աւելը վերցնում է և սկսում մաքրել ու միաժամանակ յայտնում բարձրաձայն, որ պիտի դանդատւի քաղաքի կոմենդանտին: "Կուզես, հրամանատար Ջամիլ Ջահիդ բէյին դանդատւիր, բայց զրծդ կատարիր", բղաւում է զարչելի արարած բանտապետը, որը, ինչպէս պարզուեց յետոյ, լաւած էր եղել:

Մեղ վրայ չատ վատ տպաւորութիւն թողեց քահանայի հանդէպ բանտապետի ունեցած զարչելի վերաբերմունքը: Մինչև անգամ մեղ հետ բանտարկւած գիւղացի Թուրքերը, երբ իմացան քահանային նման աշխատանք պարտադրելը, արտայայտեցին, թէ՝ "ինչպէ՞ս կարելի է քէչիչ աղային նման կեղտոտ աշխատանք պարտադրելը. դա մեծ մեղք է, Աստւած չի ների, հոգևոր մարդուն պէտք է պատւով վերաբերւել":

Սալմանբէկը կարծես ափիթի էր սպասում պոռթկալու՝ "ինչ կարելի է սպասել վայրենի, անկիրթ և տգէտ մարդուց, ինչպիսին

բանտապետն է," խօսքը ուղղում է թուրք բանտարկեալներին, իրենց լեզուով:

Բանտարկուած թուրքերից մէկը քաղաքացի էր, նոր էին բերել, մի քանի օր առաջ, չարունակ լուռ էր, լեզու առաւ, սկսեց գանգատուել՝ "Ջանըմ, տնէ-տուն ընկած, ղօրքի համար սպիտակեղէն, գուլպայ, կօշիկ ևն պահանջում, կառավարութիւնն էլ ժողովրդից բան կը հաւաքի՞, ինքը պէտք է տայ, ժողովրդի պակաս-պատառը լրացնելով, ինձնից մի ղոյզ կօշիկ, երկու ղոյզ նոր գուլպայ և երկու ձեռք սպիտակեղէն ուղեցին, ասացի, որ չունեմ: Ցոյց տուեցի կօշիկներս, որոնց վրայ սաղ տեղ չկայ, ծածկուած են մի բուռ կարկատաններով, ահա տեսէք, հագիս են: Ասացի՝ ես բախկալ[89] մարդ եմ, ասի՞ Հոգանոց ընտանիքի տէր, հաղիւ մի կերպ ապրում ենք և մենք սպասում ենք, որ նոր կառավարութիւնը մեղ ձեռք բռնէ, օգնէ, բայց հակառակը, կառավարութիւնն է պահանջում, ես որտեղի՞ց տամ: Նոր հաւաքողներից մէկը մի սիլլա տուեց և ասաց՝ «չատ ես գլխիդ զօռ տալիս, հայդէ,» իրենց հետ եղած զինուորներից մէկին ասաց՝ սրան տար բանտ: Եւ հիմա չեմ իմանում, ինչով կը վերջանայ իմ գործը:"

Հոկտեմբեր 16-ին կէսօրից յետոյ, ժամը 3-ին, պահապանները բաց արին բոլոր սենեակները և հայ բոլոր բանտարկեաններին ասացին, որ դուրս գան բակը: Դուրս եկանք և տեսանք ի՞նչ՝ բակի երկայնքին կանգնած են բոլորիս հարազատները, որի եղբայրը, որի քոյրը, որի հայրը կամ մայրը: Ամէնքը եկել էին կապոցներով: Եկել էին հայրս ու քոյրս, կապոցի մէջ լաւաշ, թերթի մէջ փաթաթուած: Քոյրս ասաց՝ "կը կարդաս թերթը, որոշ բաներ կիմանաս, ուստի չեմ պատմում": Հայրս ասաց՝ "Հրամանատարը բացակայ է եղել. եկել է նախանցեալ օրը, յանձնախումբը ամբողջ կազմով ներկայացել է և գանգատուել, որ քեզ հարցաքննութեան ժամանակ կոպտորէն ծեծել են: Հրամանատարն ասել է՝ նա, ով ձեռք է բարձրացրել Եղիչէ Իշխանեանի վրայ, ծեծել, ինքն էլ պէտք է գնայ վաղը, Եղիչէի կողքին պառկի, այսինքն՝ բանտարկուի: Ի հարկէ, ոչ ոք հաւատ չի ընծայել այդ յայտարարութեանն, սակայն Հրամանատարի մեղմ տոնից և քարոզչական որոշ խօսքերից երևում է, որ վերաբերմունքը փոխուած է, Հրամայական, յոխորտական յայտարարութիւններ տեղի չեն ունենում: Բանտարկեալների տեսակցութիւնը հարազատների հետ Հրամանատարի կարգադրութեամբ է տեղի ունեցած, և Թայրի բէյը իրաւաբան Իսմայիլ խան Զիաթխանովի հետ միասին եկել էին բանտ, դիտելու բանտարկեալների և հարազատների տեսակցութիւնը: Զիաթխանովը զինուորականի համազգեստ էր հագած, բաց մոխրագոյն սպայական վերարկու, փայլուն ուսադիրներով և թուրը կախ ուսից, որ միանգամայն զարմանք էր

[89] Նպարավաճառ: (Խմբ.)

պատճառում: Տեսակցությունը տևեց կէս ժամ կամ մի քիչ աւելի երկար, ապա լաւ տրամադրութեամբ բաժանուելով հարազատներից, կապոցներով վերադարձանք մեր սենեակները:

Թէև արդէն բանտի անհամ կերակուրը ստացել, ճաշել էինք, բայց կուշտ չէինք. բացեցինք Միքայէլենց և մեր տնից բերուած կապոցները, թերթը ղղուշութեամբ ծալեցի, դրեցի մի կողմ, յետոյ կարդալու, և Սալմանբէկի հետ միասին բոլորուեցինք սիրոցի չուրջը: Մեզ հետ, բացի Սալմանբէկից, որ մեզ հետ միասին սենեակի մէկ պատի տակ էր տեղ գրաւած, դիմացի պատի տակ չորս հոգի ուրիչ թուրքեր էլ կային, երեքը գիւղացիներ և մէկը չուխեցի: Միքայէլին ասացի, որ բաժիններ պատրաստէ և հրամցնէ մեր բախտակիցներին, որոնք սիրով ընդունեցին, բարեմաղթութիւններ անելով, որ Աստուած օգնութեան հասնէ բոլորիս, աղատուենք, գնանք խաղաղ կեանք վարելու:

Յաջորդ օրը մի նոր բանտարկեալ թուրք մտցրին մեր սենեակը: Դէմքը ծանօթ թւաց, չեչուած մոնղոլական դիմագծեր ունէր: Երբ նատեց, նկատեցի, որ նա էլ ինձ է նայում, անչուշտ դէմքս ծանօթ էր երևում նրան: Սալմանբէկի հարցումին, թէ որտեղացի է, պատասխանեց, որ քոչւոր աւշար ցեղից է, սարից իջնելիս ընդհարուել են վարալուեցի քոչւորների հետ, և իրեն ձերբակալել են, մօտ երեք չաբաթ է, որ բանտարկուած է, ուրիչ սենեակում է եղել, իր հետ եղած ուրիչ թուրքեր վատ են վարուել իրա հետ, կռուել են, ուստի խնդրել է, և իրեն փոխադրել են մեր սենեակը: Նոր յիշեցի այդ մարդուն, որի բերը խուղարկելով, Ասկերանի մեր պահակի մարտիկները մի մօսին հրացան էին բռնագրաւել, ըստ հայ-թրքական համագումարի որոշման, քոչւորները պէտք է անղէն բարձրանային սարերը: Աւշար թուրքն էլ, իր հերթին, յիշեց ու ճանաչելով դարձաւ ինձ և ասաց. – Դուք Ասկերանում խլեցիք իմ հրացանը, որը ինձ չատ պէտք էր և նոր իշխանութիւնը թոյլ է տալիս հրացան ունենալ, ուստի ես ուղում եմ և դուք պէտք է վերադարձնէք իմ հրացանը, որպէսզի չգանգատուեմ ձեր դէմ:

– Ձեր հրացանը մեր հրացանների հետ միասին մենք արդէն յանձնել ենք նոր իշխանութեան, որովհետև պահանջեցին յանձնել բոլոր զէնքերը, եթէ չյանձնէինք, պիտի ենթարկուէինք խիստ պատժի:

– Ձեր ասածները չեն մտնում իմ քեալլաս, ես պիտի պահանջեմ հրացանս:

– Այդ րոպէին միջամտեց Սալմանբէկը, խիստ լեզուով նախատելով աւշար թուրքին.

– Լռիր, ասաց բարկութեամբ, այստեղ ամօթ է նման պահանջներ անելը. բանտում բոլորս վիճակակից, բախտակից մարդիկ ենք, պէտք է իրարու յարգանքով ու սիրով վերաբերուենք,

իրարու ղարդ, ցաւ հասկանանք և եթէ կարող ենք, միմիանց օգնենք, ոչ թէ պահանջներ աննենք: Դու չգիտես մի բան, ինչպէս և մեղնից իւրաքանչիւրը չգիտէ, պիտի սաղ-սալամաթ դուրս գա՞ս այստեղից, թէ ձեր հակառակորդները պիտի համոզեն իշխանութեանը, որ տարիներով պահեն քեղ այստեղ: Սուս կաց, հանգիստ նստիր տեղդ և մտածիր քո ազատութեան մասին:

Սալման բէկի խօսելը ունեցաւ իւր ազդեցութիւնը, աւչար Թուրքը այլևս ձայն չհանեց ու հրացանի վերաբերեալ բերան չբացեց:

Քրոջս բերած թերթը "Մշակ"ի Հոկտեմբեր 7-ի, թէ՞ 9-ի թիւն էր, որ մի քանի օրինակ Գանձակից ուղարկել էին Շուշի եկողի միջոցով, և Լևոն Թադէոսեանը մէկ օրինակ տւել էր քրոջս՝ ինձ տալու: Թերթը կարդացինք Միքայէլը, Վաղգէնն ու ես, հասկացանք, որ Բալկաններում տաճիկների աստղը թեքւել է՝ չնորհիւ Ֆրանսիական բանակի, որը ղօրավար Սարրայլի ղեկավարութեամբ ճեղքել է Բուլղարական բանակի պաչտպանական գիծը, ահա թէ ինչու բանտարկեալներին այցելութեան եկած մեր բոլոր հարազատները սրտապնդիչ խօսքեր էին ասում, թէ ամէն բան լաւ կը վերջանայ, որ Նուրի փաչայի հրամանով դինուորականների վերաբերմունքը շատ է փոխւել, մեղմացել, քաղաքավարի դարձել:

Եւ քանի որ վտանգը անցած էր համարւում, կախաղանների վրայ ոչ մէկիս մարմինը չպիտի ճօճւէր, և ազատութիւնը մօտալուտ էր թւում, մոմենտը յարմար համարեցի, յայտնել Սալմանբէկին իրեն ազատելու համար մտածածս ձևը, որը յայտնել էի Միքայէլին, որ եթէ ինձնից առաջ դուրս գար բանտից, մեր երկու նւիրւած մարտիկների՝ Յակոբ Պետրոսեանի և Մարգար Թամիրեանի միջոցով իրագործէր մտածւած ծրագիրը: Միքայէլը, որպէս կուսակցական, սիրով յանձն առաւ գործը: Սալմանբէկն անչափ ուրախ եղաւ, տրամադրութիւնը բարձրացաւ և յանկարծ ուրախութեան արցունքով լցւեցին աչքերը:

– Ախ, եթէ յաջողւի դուրս գալ լոյս աշխարհ, պիտի մամուլի միջոցով դուրս գամ բոլոր աւազակ բէկերի դէմ, պատռեմ նրանց դիմակները, մերկացնեմ նրանց կատարած կեղտոտ գործերը և ընդհանուրի սեպհականութիւն դարձնեմ:

Ճաշի գնալու ժամանակ, միջանցքներում կամ խոհանոցում, պատահում էին իրարու մեր բանտարկեալները, ուրախ – ուրախ մտքերի փոխանակութիւն ունենում: Մեր մէջ Վաղգէնը ամէնից կրտսեր բանտարկեալն էր, հազիւ 17–18 տարեկան, թեմական դպրոցի վերջին, եօթերորդ դասարանի աշակերտ, դաշնակցական աշակերտական միութեան վարչութեան անդամ:

ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄ ԲԱՆՏԻՑ

Հոկտեմբեր 18-ին երեկոյեան արդէն մութն ընկել էր, միջանցքի պահակը բաց արաւ մեր սենեակի դուռը, կանչեց ինձ դուրս և ասաց, որ զնամ գրասենեակ, որը գտնւում էր առաջին յարկում: Իջայ ցած, մտայ գրասենեակ, տեսայ պարետ Հասան Բասրի բէյին ու բանտապետին՝ նստած, իսկ պատի տակ չարքի կանգնած՝ Հ. Մուսայէլեան, Ա. Մելիք-Յովսէփեան, Ն. Իսախանեան, Գ. Օհանեան, Ս. Օհանեան, Ա. Յովհաննիսեան և Մ. Այվազեան, որոնց կողքին տեղ բռնեցի և ես: Հասան Բասրի բէյը տեղից վեր կենալով, յայտնեց, որ Ջամիլ Ջահիդ բէյը պահանջել է՝ մեզ տանել իրա մօտ: Պատրաստ ենք, ասացինք: Եւ Հասան Բասրի բէյը մի քանի ասկեարներով ուղեկցեց մեզ լսանի աղջկայ, Հաջար լսանումի տունը, որտեղ իջևանած էր Ջամիլ Ջահիդ բէյը:

Տարան մեզ ներս, մի ընդարձակ, կահաւորւած սենեակ, մէջտեղը մի երկարաւուն սեղան, որի մէկ կողմի երկարութեամբ Ջամիլ Ջահիդ բէյն ու Զիաթխանովը անց ու դարձ էին անում, առաջ ու յետ, զրուցելով: Մեզ տեսնելով, կանգ առան երկուսն էլ, և մենք գլխով բարևեցինք, ապա Ջամիլ Ջահիդ բէյը դարձաւ մեզ, թէ՝ "ես չատ աւելի առաջ պիտի խօսէի ձեզ հետ, բայց չատ զբաղւած լինելով և քաղաքից բացակայ, Հնարաւորութիւն չեմ ունցել: Եւ որպէսզի իմ ասածներն աւելի հասկանալի լինի, խնդրել եմ Զիաթխանովին՝ թարգմանի
պարտականութիւն կատարել, որովհետև դուք աւելի տեղեակ էք Ադրբէջանի բարբառին":

Ջամիլ Ջահիդ բէյի խօսքը Զիաթխանովը թարգմանեց նախադասութիւն առ նախադասութիւն ռուսերէն:"Դուք հիմա իմ խօսքը լսելուց յետոյ, ազատ կը լինէք ու կերթաք տուն, ուստի ուզում եմ մէկ երկու խնդրի չուրջ խօսել ձեզ հետ, հասկացնել միտքս: Մինչեւ այսօր մենք պատերազմի մէջ էինք, բայց արդէն պատերազմը վերջացած է, կողմերը զէնքերը ցած են դրել, ուրեմն պիտի ժողովուրդները խաղաղ կեանք ապրեն:

Մենք այստեղ երկար չպիտի մնանք, պիտի գնանք, ուստի վստահ ենք, ինչպէս առաջ, այնպէս էլ այսուհետև, ձեր հարևան թուրք եղբայրների հետ խաղաղ կապրէք: Ձեր Երևանի կառավարութեան հետ խօսւել է, էլի պիտի խօսւի նոյնը, ինչ որ պիտի ասեմ հիմա: Դուք, հայերդ, որոշ պահանջներ ունէք մեզանից, ի հարկէ, հէնց ձեր ունեցած պահանջների մասին է խօսքս: Եւ ես խորհուրդ եմ տալիս ձեզ, որ ձեր ունեցած պահանջների չուրջ ուղղակի մեզ հետ խօսէք, առանց ուրիշների միջամտութեան կամ

միջնորդութեան: Խորին համողմամբ ասում եմ ձեզ, այն, ինչ որ կարող էք ձեռք բերել ուղղակի մեզ հետ բանակցելով, փոխադարձ համաձայնութեամբ, նոյնը ձեզ երբէք չի տայ ոչ Լոնդոնը, ոչ Փարիզը և ոչ էլ Մոսկուան: Ես չերբեղ եմ և չատ լաւ եմ տեղեակ միջազգային պայմաններին, ձեր ու մեր կառավարութեան միջև տեղի ունեցած բանակցութիւններին, ուստի կրկնում եմ, այն, ինչ որ մենք կը տանք ձեզ, առանց ուրիշների միջամտութեան, ուղղակի, անմիջականօրէն մեզ հետ խօսելով, ինչպէս ասացի, չի տայ ձեզ ոչ Լոնդոնը, ոչ Փարիզը և ոչ էլ Մոսկուան: Այս բանը լաւ հասկացրէք ձեր ժողովրդին, և յոյս էլ չդնէք Մոսկուայի վրայ, թէ աւելի մօտ է ձեզ և ձեր ցանկացածը կը տայ ձեզ":

Առաջինը խօսք առաւ Արսօ (Արսէն) Յովհաննիսեանը և վկայ յայտարարելով Զիաթխանովին, ասաց.

– Իսմայիլ խան, դուք գիտէք, որ ես ռուս կառավարութեան կողմից բանտարկուել էի, տարիներ բանտ նստել, որովհետև պայքարել եմ ռուս կառավարութեան դէմ, որը թշնամութիւն էր առաջացրել երկու դարաւոր խաղաղ հայ ու թուրք ժողովուրդների միջև, եղբայրասպան կռիւ ստեղծել: Եւ ժողովուրդների խաղաղ, եղբայրաբար ապրելը, ինչպէս քաջ յայտնի է ձեզ, Իսմայիլ խան, որպէս Պետական Դումայի պատգամաւորի, ցանկալի չէր ցարական կառավարութեան, սակայն մենք՝ հայերս և մեր հարևան թուրք եղբայրները չատ լաւ հասկանալով կառավարութեան չար միտքը, վերականգնեցինք մեր խաղաղ կեանքը, որ չարունակւում է մինչև այսօր և պիտի չարունակի ընդմիշտ":

Ապա խօսք առաւ Աչոտ Մելիք Յովսէփեանը և ասաց. " Յեղափոխութիւնից յետոյ, երբ անիշխանութիւն սկսւեց Շուշում, հաւասար իրաւունքներով ստեղծուեց հայ-թրքական խառն մի կոմիտէ, որը սկզբից մինչև վերջ մէկ նպատակ է ունեցել, այն է՝ աշխատել ամէն կերպ, որ մեր երկու ժողովուրդների խաղաղ կեանքը չվրդովւի, թիւրիմացութիւններ տեղի չունենան: Քաղաքացնակ մեր թուրք հարևանները բոլորը և մասնաւորապէս կոմիտէի անդամները կարող են վկայել, որ մենք անկեղծօրէն ցանկացել ենք, որ խաղաղ անցնի կեանքը: Հայ-թրքական կոմիտէի մեր թուրք ընկերները կարող են վկայել, որ քանիցս իրենց առաջարկութեամբ կոմիտէի հայ անդամներն են գնացել եւ Աղդամի և Հինդարենի շրջանի թուրք գիւղացիութեան մէջ առաջացած անիշխանութիւնը վերացրել: Եւ աւելի քան պարզ է, որ առաջիկային էլ նոյն կեցուածքը ու վերաբերմունքը պիտի ունենանք, որովհետև երկու հարևան ժողովուրդների չահը դա է պահանջում":

Երկու խօսողներից յետոյ Ջամիլ Ջահիդ ըէյը յայտարարեց մեղ, որ աղատ ենք, և մենք դուրս եկանք, գնացինք մեր տները, ուր մեր հարազատներն արդէն քաղաքի յանձնախմբից տեղեկութիւն

ունէին, որ պիտի աղատէին մեզ, սպասում էին, թէև աղատման օրը չգիտէին:

Հոկտեմբեր 19-ին Ջամիլ Ջահիդ բէյը պիտի մեկնէր Գանձակ, այլևս չպիտի վերադառնար, ուստի քաղաքի Յանձնախումբը ներկայանում է բարի ճանապարհ մաղթելու և չնորհակալութիւն յայտնելու՝ բանտարկեալներին աղատ արձակելու առթիւ: Ջամիլ Ջահիդ բէյն էլ իւր գոհունակութիւնն է յայտնում իրեն արուած բարեմաղթութեան առթիւ և ասում, որ արդէն կարգադրել է՝ բոլոր բանտարկեալներին աղատ արձակելու:

Մեր ընկերներից դոք. Աւետիս Աստուածատրեանը, որ աղատ էր մնացել, չէր բանտարկւել, եկաւ մօտս և պատմեց, թէ մեր բանտարկւելուց յետոյ ինչ դէպքեր են տեղի ունեցել գաւառներում: Այսպէս, ժամանակագրական կարգով: Հոկտեմբերի 5-ին տաճիկները յարձակում են գործել Մարղակերտ գիւղի (Ջրաբերդի չրջան) ուղղութեամբ, երկու գումարտակ կանոնաւոր և չորս հազարի չափ տեղական թուրքեր: Կռիւը տևել է ամբողջ մի օր, Ջրաբերդի ուժերը, Բագրատ Ղազանչեանի ղեկավարութեամբ, ուժեղ դիմադրութիւն են ցոյց տուել, կէսօրից յետոյ Խաչէնից օգնական ուժեր հասնելով, հակագրոհի են անցնել: Կռիւը բորբոքւում, կատաղի բնոյթ է ստանում և, ի վերջոյ, թշնամու ուժերը չդիմանալով մերոնց կատաղի գրոհներին, չտապ նահանջում են, և տասներկու բեռ փամփուչտ մեր ձեռքն է ընկնում:

Հոկտեմբեր 6-ին տեղի է ունեցել Խաչէնի ղինաթափութիւնը Ասկերանում, որտեղ ղէնքերը ընդունողը եղել է Իսմայիլ Հակկի բէյը: Առաջին հերթին "ղինաթափւել են" Դաչբուլաղ և Ղչլաղ գիւղերը, որոնք աւելի մօտ են Ասկերանին, ապա միւս գիւղերը:

Խաչէնի "ղինաթափութեան" մասին հետագային պատմեց Հօրեղբայրս՝ Աբրահամ Իշխանեանը, որը Խաչէնի գիւղացիութեան կողմից ընտրուած է եղել ղէնքերը յանձնող ուրիշ երկու գիւղացիների հետ՝ ղեկավարելու "ղինաթափման" գործը, համաձայն գ-րգ համագումարի որոչման:

Խաչէնի Բաղարա կամ Պտրեցիք անունով մօտ 250 տուն ունեցող գիւղը, որի բնակիչները հայ-թրքական ընդհարումներին աչքի էին ղարնւել իրենց խիղախութեամբ ու քաջութեամբ, ականջ կախելով գիւղի քեօխվայի սխալ բացատրութեան, երեսանց ղինաթափութիւնը, ըստ համագումարի որոչման, նչանակում է ունեցած ղէնքերի մի մասը յանձնել: Եւ Պտրեցիք որոչում են ունեցած եռագնեան հրացաններից՝ մօսին և լէբել սիստէմի յիսուն հատ յանձնել, համապատասխան քանակութեամբ փամփուչտներով, որոնց վրայ աւելացրած նաև չախմախլի, ղաչաղու և բերդան սիստէմի հրացանները: Հարևան Խանգի գիւղացիները, որ խենթ

են ճանաչած,[90] տեղեկանալով այդ մասին, երկու գիւղերի միջև եղած սահմանի երկարութեամբ դիրք են բռնում: Երբ ղէնքերով բեռնաւորուած սայլը մօտենում է, կանգնեցնում են և ուղեկցողներին հարցնում, թէ ինչ՞ու այդքան մօսին և լէրել Հրացաններ տանում են յանձնելու տաճիկներին, եթէ չեն կարող պահել, տան իրենց, իրենք պահեն, և տեղի է ունենում բուռն վէճ, որը քիչ է մնում հասնի լուրջ բախման, երբ հասնում են երկու գիւղի աղասակալները (սպիտակ մօրուքաւորները), այսինքն ծերերը, հաչտութեամբ վերջացնում տարաձայնութիւնը, բոլոր լաւ ղէնքերը վերադարձնում գիւղ, հին սիստէմի հրացանների հետ մի քանի արդէն մաչած եռագցան հին հրացաններ ուղարկում են Ակերան:

Հօրեղբայրս պատմում էր, որ երբ բոլոր գիւղերից բերին հին սիստէմի անպէտք հրացանները, նրանց մէջ կային 25-30 հատ եռագցան, որոնց խողովակների ներսը ժանգ բռնած կամ մաչած էր: Հարկաւ, Իսմայիլ Հակկի բէյը չէր հաւատում, որ մենք մեր լաւ հրացաններն ենք յանձնում, ուստի իւր զժգոհութիւնն է յայտնում թէ՝ "քաղաքից Ջամիլ Ջահիդ բէյին ներկայացած ձեր պատգամաւորները խոստացել են լաւ ղէնքեր տալ, մինչդեռ ձեր ներկայացրած զէնքերը կարելի է գործ ածել, որպէս հասարակ երկաթ. մեզ պէտք չեն այդ խլամները": Վարանդայի գիւղերից բերուածներն էլ նոյնանման խլամ էր, և երբ յայտնեցինք, թէ այլևս ղէնք չի մնացել, բոլորը յանձնել ենք, Իսմայիլ Հակկի բէյը հին չափամոլի հրացաններից երեք հատ վերցրեց, երկուսը կախեց ներկայ եղող գիւղացի երիտասարդներից երկուսի վզից և մի հատ էլ էշերից մէկի վզից, պարզ էր, մեզ ծաղրելու նպատակով : Այնուամենայնիւ, սակայն, նա ամբողջ խլամը բարձել տւեց սայլերի վրայ, հրամայեց տանել, յանձնել Աղդամի պարետին, իսկ ինքը, հեծնելով ձին, իր ձիաւորների հետ ուղղւեց դէպի իր պաշտօնատեղին, Աղդամ, հրամայական տօնով կարգադրելով՝ անպայման հաւաքելու պահած ղէնքերը և կենտրոնացնելու Ակերանում, ուր պիտի գար կրկին ընդունելու, սակայն գնաց ու չեկաւ այլևս:

Հոկտեմբեր 9-ին Գալիպօլեան դիվիզիայից 240 ասկեարները, երկու սպայի հրամանատարութեամբ, համաձայն ղինուրական հրամանատարի կարգադրութեան, պէտք է Շուչուց գնային

---

[90] Ըստ աւանդութեան, իբր Մելիք-Շահնազարը կարգադրել է, որ Ղարաքաղի իւրաքանչիւր գիւղից մի լաւ ղէնք բերեն իրա մօտ, իսկ Խանգիից՝ ով որ պատահի, նրան բերեն: Որոշ ճշմարտութիւն կայ դրա մէջ, սրովհետև Թուրք քոչւորները որևէ հայկական գիւղի հետ ընդհարում չէին ունենում, բայց Խանգիի սահմաններին կռիւը անպակաս էր լինում ամէն տարի: Շատ յաճախ մի չնչին առիթով տեղի կունենար վէճ քոչւորների և գիւղացիների միջև. քոչւորներից մէկի անասունը մտել է մարգագետինը, արածելու. դա բաւական էր, որ մարգագետնի տէրը, բարկացած, անասունը դուրս քշէր, ուղևնար կալանքի տակ դնէր, պահանջէր իր վնասը. կռիւը կը սկսէր մահակներով և երբեմն կը հասնէր սառը զէնքի օգտութեան: (Հեղ.)

Թրքական Ղաջար գիւղը, նրանց մեծագոյն աւաղակաբներից մէկը: Պահանջւում է հայերից, որ մի ուղեցոյց տրւի զինւորներին, որոնք պիտի հաստատւէին Ղաջար գիւղում, կարգ ու խաղաղութիւն պահպանելու նպատակով: Ղաջարցիները չատ անհանգիստ մարդիկ էին, մեծից մինչև փոքրը աւաղակներ ու գողեր: Նրանք ցարական կառավարութեան ժամանակ իսկ հանգիստ չէին տալիս գիւղացիութեանը, յեղափոխութիւնից յետոյ սանձարձակ էին դարձել և յաճախ անհանգստութիւն էին պատճառել, երբ տաճիկ զինւորները հաստատւէին Ղաջարում, աւելի սանձարձակ պիտի դառնային և պրովակացիոն մի արարքով հայ-թրքական կռիւ ստեղծէին: Ասկեարների այնտեղ հաստատւելը՝ իբր խաղաղութիւն պահպանելու
նպատակով, կասկածելի էր թւում հայերին: Ինչպէ՞ս հաւատալ տաճիկներին, երբ բանտը լեցրել էին հայերով և չարունակ սպառնալիքներով էին խօսում: Եղած պահանջի հիման վրայ, վիճակ է ընկնում Ներսէս Հէյրաբեանին, Վարանդայի Հերհեր գիւղացի, Շուչու քաղաքային դպրոցն աւարտած, յեղափոխութիւնից առաջ անտառապետի պաշտօն վարած մարդ: Վերջինս ստանձնում է ուղեցոյցի պարտականութիւնը, և դեռ քաղաքից չմեկնած, արդէն լուրը հասնում է Վարանդայի և Դիղակի մեր մարտական ուժերին: Նա և ասկեարները հասնում են հայկական Մամնա գիւղը: Մամնայի ձորի ճամբան փակել էին Դիղակի Կարմրակուռ գիւղի մարտիկները, իրենց խմբապետ Ասլանիկի ղեկավարութեամբ:

Ասլանիկը դարան մտած իւր ուժերով սկսում է կռիւը. չուտով հասնում են նաև Տումի գիւղացիները՝ Թևանի ղեկավարութեամբ, և ապա, տեղակալ Արտեմ Պետրոսեանը՝ Վարանդայի մարտական ուժերով և ստանձնում կռւի ղեկավարութիւնը: Տաճիկ ասկեարներին միացած են լինում 10, թէ 15 հոգի տեղական թուրքեր: Երբ ուժերը յարմար դիրքեր բռնած տաճիկներին առնում են խաչաձև կրակի տակ, տաճիկները յուսահատական դիմադրութիւն են ցոյց տալիս թէև, բայց գլխովին ջարդւում են, ազատւում են միայն ութ հոգի, որոնք հետևում են Ներսէսին, որը մահւանից խոյս տալով, մի կերպ կարողանում է ճողոպրել, առանց յետ նայելու, ութ հոգով վերադառնում քաղաք: Զինւորները իրենք պատմում են քաղաքի օրթահրամանատարին, որ հրաչքով են ազատել չնորհիւ Ներսէսի: Մամնայի ձորում տեղի ունեցած տաճիկների ջարդի լուրը կայծակի արագութեամբ տարածւում է ամբողջ Ղարաբաղում և չատ մեծ տպաւորութիւն թողնում ժողովրդի վրայ: Մարտակերտի կռւում տաճկական զօրքը պարտել ու նահանջել էր: Մամնայի ջարդն էլ տաճիկների երկրորդ պարտութիւնն էր: Մեր ժողովուրդը սրտապնդել էր, գ-րդ համազումարի որոշման համաձայն պատրաստ լինել՝ դարձեալ դիմադրելու, եթէ տաճիկների կողմից նոր յարձակում տեղի ունենար:

Եւ չատ չանցած, **Հոկտեմբեր 13-ին** տաճիկները, դարձեալ տեղացի Թրքական ամբոխն առած իրենց հետ, երկրորդ անգամ յարձակում են գործում Մարտակերտի ուղղութեամբ: Առաջին կռւից դաս առած լինելով, մեր ուժերը զգոյշ էին և կանխաւ որոշ կարգադրութիւններ արւած էր, որ կռիւն սկսելուց նչանակւած սուրհանդակները անմիջապէս լուր հասցնեն Թիկունքի ուժերին՝ օգնութեան հասնելու: Այնպէս որ, երբ տաճիկները յարձակում են գործում, մեր ուժերը անակնկալի չեն մատնւում, հրամանատար է դարձել Բազրատը, Մարտակերտի և մօտակայ գիւղերի մարտական ուժերի գլուխն անցած բուռն դիմադրութիւն են ցոյց տալիս, մինչև որ հասնում են Ջրաբերդի Թիկունքի և Խաչէնի մօտակայ գիւղերի մարտական ուժերը, ուժգին թափով հակայարձակման անցնելով, հարկադրում են Թչնամուն՝ նահանջել և այլևս յարձակման փորձ չանել, և Թչնամին կռւի դաշտում վնց բեռ փամփուչտ և 7 ջորի է Թողել: Եւ հինգ օրւայ մէջ տեղի ունեցած անյաջողութիւնը, Մամնայի ձորի ջարդը և Մարտակերտի ճակատից նահանջը ի մտի ունենալով, տաճիկները քաղաքում աւելի են խստացնում իրենց հսկողութիւնը հայերի վրայ, կասկածելով, Թէ քաղաքի հայերը տեղեկութիւններ են հաղորդում գաւառացիներին ու տոն տալիս վերջիններիի չարժումներին:

ՇԱՄԻՐ ԲԷԿ ՓԻՐՈՒՄԵԱՆԸ ԿԱԽԱՂԱՆ Է ԲԱՐՁՐԱՅՒՈՒՄ

Ասկերանի աջ Թևի/Վարանդայի/Քեաթուկ, Նախիջևանիկ և Փիրջամալ գիւղերի բնակիչները լսւած գրգռւել էին Շամիր բէկ Փիրումեանի (Նախիջևանիկ գիւղացի) դէմ, որ յաճախ յարաբերութեան մէջ էր լինում Աղդամի տաճկական պարէտի՝ Իսմայիլ Հակկի բէյի հետ: Հայ-Թրքական ընդհարման առաջին տարում, Շամիր բէկի մեծ եղբայրը՝ Հաթամ բէկը, անձնական Թչնամութեան հետևանքով, սպանում է Քեաթուկ գիւղացի Հայրապետ Սաղեանին: Վերջինիս փոքր եղբայրը, Ալէքսանդրը, որպէս փոխվրէժ, սպանում է Հաթամ բէկին, որը յոխորտալից կեցւածք էր ունեցել, սպառնալիքներ կարդալով իւր անձնական հակառակորդներին: Շամիրը, որ եղբօր, Հաթամի կենդանութեան օրօք նոյնպէս չատ համարձակ էր զտնւել, նրա սպանելուց յետոյ իր կեանքն էլ վտանգւած է համարում, որովհետև, իրենց հերթին, Սաղեաններն են սպառնում, որ անպատիժ չեն Թողնի որևէ մէկին, եԹէ փորձ լինի փոխվրէժի, ուստի փախչում է, Թուրքերի մէջ ապաստան գտնում և, ինչպէս լսւում էր այն ժամանակ, սպառնալիքներ կարդում իր հակառակորդներին, Թէ անպատասխան չի Թողնի իւր եղբօր արիւնը Թափածների արարքը: Հայ-Թրքական ընդհարումների ամբողջ տևողութեան, նա չի

համարձակւում գալ իրենց զիւղը, իսկ ընդհարումները վերջանալուց յետոյ ցարական իշխանութիւնների հովանաւորութիւնն էր վայելում:

Շամիրը աւազակարարոյ տիպ էր և ճարպիկ գող, կապ ունենալով թուրք գողերի հետ, որոնցից գողունի անասուններ ստանալով ծախում էր հայերին, իսկ վերջիններից իրա և ուրիշ մէկերկու ճանաչւած գող հայերի գողացած անասունները թուրք գողերի միջոցով սպառում: Դաչնակցութեան "Ապառաժի" Կենտրոնական Կոմիտէն որոշել էր ահաբեկման ենթարկել Շամիրին, սակայն վերջինս, որսորդական չան հոտառութիւն ունենալով, չատ զգոյշ էր, և բոլոր փորձերը անյաջող են անցնում:

1909 թ. գտնւում էի Շուշու բանտում, առանձին մէկ փոքրիկ սենեակում, որը գաղտնի կոչւած չորս սենեակներից մէկն էր, որոնցում առանձին պահում էին չհարցաքննւած յանցագործներին, մինչև քննութեան վերջը, որից յետոյ փոխադրում էին ընդհանուրին յատկացւած սենեակներից մէկը: Այդպէս առանձնացւած և առանց հաղորդակցութեան միւս բանտարկեալների հետ ու հարազատների այցելութիւնից զուրկ վիճակում պահում էին, որպէսզի հարցաքննութեան ենթարկւածները կանխաւ տալիք պատասխանները չսովորեցնեն և հարազատներն էլ փաստաբանի տւած խորհուրդները չհաղորդեն: Եւ մի օր առաւօտեան իմ սենեակի դռան կլոր ծակից մէկը բարև ասաւ՝ "Բարի օր, դայօղլի (քեռորդի)", մօտեցայ դռան ծակին, տեսայ՝ Շամիրն է, զարմացայ:

– Հը, ի՞նչ գործ ունես այստեղ, – հարցրի:

– Բա ի՞նչ, ես էլ գործ ունեմ, այս քսան և երկուերորդ անգամն է, որ բերում են ինձ այստեղ, իսկ կուից (Հայ-Թրքական) յետոյ առաջին անգամն է:

– Բայց ինչու՞ համար, ինչ պատճառով, – հարցրի:

–Դուռ քննիչը չի հարցաքննել, չգիտեմ:

Հարկաւ, չյայտնեց պատճառը, բայց յետոյ, երբ աղատ հաղորդակցութեան մէջ էի բանտարկեալ ընկերների և ուրիշների հետ, պարզւեց, որ թուրք աւազակների հետ կատարած կողոպուտի համար է բանտարկւել: Խիստ ճարպիկ մարդ լինելով, կարողացել էր կանխաւ իր բարեկամ թուրքերից վկաներ պատրաստել, բանտարկւելու դէպքում իր ալիբին հաստատելու համար: Այնպէս որ, 22-րդ անգամ մի քանի ամիս յետոյ աղատ է արձակւում, թէև քննիչը համոզւած էր Շամիրի յանցագործ լինելու մէջ: Մէկ տարի անց, սակայն, յանցանքի վայրում բռնւած լինելով իր երկու թուրք աւազակների հետ, այլևս աղատւել չի կարողանում, որպէս աւազակ դատւում է, մեղաղրւելով սպանութեան ու կողոպուտի մէջ, չորս տարով դատապարտւում է տաժանակրութեան, քչւում Սիբիր: Տաժանակրութեան տարիները լրանալուց յետոյ դառնում է աղատ աքսորական և համառուսական յեղափոխութեան հետևանքով

աղատւում, վերադառնում է գիւղ, չատ խեղճ վիճակում: Յեղափոխութեան պատճառած ուրախ տրամադրութեամբ համակուած լինելով, գիւղացիները հանդուրժող վերաբերմունք են ցոյց տալիս, հնարաւորութիւն ընձեռելով, որ Շամիրը խաղաղ աչխատանքով զբաղւի: Մինչև տաճիկների մուտքը Ղարաբաղ, իրեն լաւ է պահում, զբաղւում է իր այգիներով ու վարելահողի աչխատանքներով և երբ մի անգամ Իսմայիլ Հակկի բեյի հրամանը բերում է Շուչի ու բանտարկւում մեր՝ առանց պահապանի բանտում, փախչում է բանտից և վախից զարձեալ ապաստանում իր բարեկամ Թուրքերի մօտ: Երբ տաճիկները խաղաղ մուտք են գործում Շուչի, իրենց իչխանութիւնը յայտարարում ամբողջ Ղարաբաղի վրայ, Շամիրը վերադառնում է իրենց գիւղը, իրեն աղատ զգում: Օգտւելով ստեղծւած դրութիւնից, գիւղացիները բռնում են Շամիրին և ձեռքերը կապկպած ներկայացնում Վարանդայի Հրամանատար Սոկրատ Մելիք Շահնազարեանին: Վերջինս հրահանգում է, որ Վարանդայի բոլոր գիւղերից երկուական հոգի ներկայանան Հաղորդի գիւղ, իրենից կարևոր հրահանգներ լսելու համար: Բոլոր գիւղերի երկուական ներկայացուցիչները իր ժամանակին զալիս են Հաղորդի գիւղը, որտեղ Սոկրատի կարգադրութեամբ կախաղան էր պատրաստւած, և գիւղական պատգամաւորների ներկայութեամբ, թելով իր կատարած յանցանքները, Շամիրին կախաղան են բարձրացնում: Եւ ինչպէս վկայում էին ներկայ զտնուողները, երբ թոկը քաչում են վեր, կարւում է, և Շամիրը ընկնում է գետնին, ապա ժպտալով ասում՝ " Պինդ քեանդիր (թոկ) չկա՞յ, որ փտած քեանդիրով էք կախում": Շամիրը կախւում է Հոկտեմբեր 15-ին. կատարւած ակտի մասին յայտնի է դառնում համայն Ղարաբաղու: Այդ մասին տեղեկանում են և տեղացի Թուրքերը, որոնք, իրենց հերթին, Հաղորդում են տաճիկներին:

Ընկ. Ա. Աւետիսեանի տւած տեղեկութիւնները լսելուց յետոյ միասին զնում ենք Հայրապետ Մուսայէլեանի մօտ:

ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Կ.Կ. -Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Հոկտեմբերի 21-ին միաժամանակ, նամակները եմ ստանում Խաչէնից՝ Ալէքսան դայուց,Բագրատ Ղաղանչեանից, Աղասի Վերդեանից, քարագլխցի Գրիգորից և Դալի
Մահրասայից, որոնք հրաւիրում են ինձ գաւառ, որոչ խնդիրները կարգադրելու միասին: Ես ի պատասխան բոլորին գրում և իմ պատրաստակամութիւնն եմ յայտնում, խնդրելով, որ մի քիչ սպասեն, թերևահնարաւորութիւն ունենամ օրինաւոր կերպով մեկնելու քաղաքից, որպէսզի աւելորդ կասկածների տեղիք չտրւի:

Նոյն օրը խորհրդակցելով Հայրապետ Մուսայէլեանի հետ, որոշեցինք միաժամանակ նախաձեռնել կուսակցական կազմակերպութիւնը վերականգնելու և այդ նպատակով քաղաքում գտնուած ընկերներին հրաւիրել խիստ գաղտնի ժողովի, համապատասխան որոշումներ կայացնելու տրւելիք օրակարգի խնդիրների չուրջ: Յարմար ենք գտնում ժողովը հրաւիրել Սեդրակ Եղեանի տանը, որը գտնուում էր վերին թաղում, և Գէորգեան ճեմարանի ուսանող Գէորգ Համբարձումեանի միջոցով հրաւիրում ենք ժողովի ստորև յիշուած ընկերներին, նախապէս ժողովատեղիի համար Սեդրակ Եղեանի համաձայնութիւնն առնելուց յետոյ:

Ժողովը նշանակւում է երեկոյեան ժամը 6-ին, երբ մութն ընկնում է, և որոշուած ճիշտ ժամին ներկայ են գտնուում՝ Հայրապետ Մուսայէլեան, Ասատուր Աւետիսեան, Գրիգոր Ասրեան, Խաչիկ Մելքումեան, Հայկազ Վարդապետեան, Խաչատուր Եղիազարեան, Գէորգ Համբարձումեան, Վարդան Վարդապետեան, Մարգար Թամիրեան, Արշակ Առատամեան, Արտաշէս Բազամեան, Յակոբ Պետրոսեան, Անուշաւան Տէր Միքայէլեան, Սեդրակ Եղեան և Եղիշէ Իշխանեան, 15 հոգի:

Ժողովը բաց է անում Հ. Մուսայէլեանը և առաջարկում դիւանի ընտրութիւն կատարել: Իբրև նախագահ ընտրւում է Հ. Մուսայէլեանը, քարտուղար՝ Ե. Իշխանեան: Առաջարկւում են օրակարգի հետևեալ խնդիրները՝

ա)կուսակցական կազմակերպութիւնը վերականգնել քաղաքում և շրջաններում,

բ)աշխատանքի ձևը,

գ)կապը գաւառների հետ,

դ)ինքնապաշտպանութեան կանոնաւորման հարցեր,

ե)կուսակցական մարտական խմբի հարցը,

զ)ընտրութիւն կենտրոնական կոմիտէի:

Հանգամանօրէն մտքերի փոխանակութիւն ունենալով, ժողովը համապատասխան որոշումներ է կայացնում օրակարգի խնդիրների չուրջ:

ա) Ի նկատի ունենալով տիրող պայմանները, կազմակերպութիւնը պէտք է լինի խիստ գաղտնի, թիւրիմացութիւններից ու պրովակացիոններից խուսափելու համար:

բ) Քաղաքում խմբերը բաղկացած լինեն առաւելը 10 հոգուց, դիւրութեամբ և աննկատ խմբական ժողովներ ունենալու համար:

գ) Քաղաքում և գաւառներում խուսափել գրագրային կապ պահելու ձևից, խմբերի միջև կապը պահել ներկայացուցիչների կամ խմբապետների միջոցով:

դ) Առաջին իսկ հնարաւորութեամբ մարդիկ դրկել շրջանները և շրջաններում ստեղծել առժամեայ նշանակովի

մարմիններ, մինչև որ հնարաւորութիւն կը լինի համապատասխան ժողովներ գումարել, օրինական մարմիններ ստեղծելու համար:

ե) Վերատուգում կատարել քաղաքի ինքնապաշտպանութեան գործի, չրջանապետների ժողով հրաւիրել և, լսելով նրանց դեկուցումները, համապատասխան կարգագրութիւններ անել:

զ) Գաւառների ինքնապաշտպանութեան վերաբերեալ ընկերների ունեցած կցկտուր տեղեկութիւնները լսելով երևում է, որ գաւառների միջև կապը խիստ թոյլ է կամ գոյութիւն չունի, ուստի յանձնարարւում է ընտրելիք Կ.Կ.-ին լիազօրած ընկերները ուղարկել չրջանները, առաջին հերթին չրջանների միջև կապը կանոնաւորել, և .մեղմացնել գոյութիւն ունեցող թիւրիմացութիւնները:

է) Քաղաքի աչխատունակ մարտիկ ընկերներից կազմակերպել կուսակցական մարտական մէկ խումբ, հարկ եղած դէպքերում գործելու Կ. Կ.-ի հրահանգների համաձայն:

ը) Կենտրոնական կոմիտէի կազմը բաղկացած լինի երեք հոգուց. ընտրութիւնը պիտի կատարւի գաղտնի քւէարկութեամբ և քւէները պիտի բաց անէ ժողովի կողմից ընտրած մէկ հոգի, որն ընտրութիւնից յետոյ անմիջապէս կից սենեակում կը բացէ քւէները, կը ստուգէ և պարզ մեծամասնութիւն ստացածներին կը համարէ ընտրած, ապա քւէները ծրարի մէջ կը դնէ, կը պահէ, յաջորդ օրը ընտրածներին կը հրաւիրէ նիստի և, քւէները հաչւելով, համապատասխան արձանագրութիւն կը կազմւի: Քւէները մէկ էջի վրայ կրում են նախագահի ստորագրութիւնը:

Ժողովը միաձայնութեամբ որոչում է, որ Կ. Կ.-ի կազմը խիստ գաղտնի պահելու նպատակով անհրաժեչտ է, որ քւէները բացողը դառնայ Կ. Կ.-ի ներկացուցիչը, խորհրդակցական ձայնով մասնակցելով Կ. Կ. -ի նիստերին:

Տեղի է ունենում երեք հոգանոց Կ. Կ. -ի ընտրութիւնը: Բաց քւէարկութեամբ և միաձայնութեամբ ընտրւում է Գր. Ասրեանը, որը յաջորդ օրը Հ. Մուսայէլեանին, Ա. Աւետիսեանին և Ե. Իչխանեանին նիստի հրաւիրելով, յայտնում է նրանց Կ. Կ.-ի անդամ ընտրւած լինելը և հրաւիրում աչխատանքի անցնելու:

Հոկտ. 23-ին Կ. Կ. -ի առաջին նիստին որոչւում է, որ անմիջապէս, առաջին հերթին, չատ վստահելի ընկեր սուրհանդակներ ունենանք երկու ուղղութեամբ աչխատող՝ մէկը Կ.Կ. -ի գրութիւնները Վարանդայի և Դիզակի, իսկ միւսը՝ Խաչէնի և Ջրաբերդի հրամանատարներին տանելու, ապա նրանցից պատասխաններ բերելու: Որոչւում է՝ առաջին երկու հրամանատարների հետ կապ պահելու համար նկատի ունենալ Յակոբ Պետրոսեանին, իսկ երկրորդ երկու հրամանատարների կապի համար՝ Յովհաննէս Դադունցին:

Կենտրոնական Կոմիտէն որոշում է, որ ես անցնեմ գաւառ, Հրամանատարների միջև կապ ստեղծեմ, որ միասնական գործունէութիւն ունենանք, իւրաքանչիւր չրջան առանձին և անկախ չաշխատէ, որպէսզի գործը չտուժէ: Արդէն քաղաք հասած կցկտուր տեղեկութիւններից երևում էր, որ Հրամանարների միջև ոչ մի կապ չկար, ուստի Կ. Կ.-ի որոշմամբ նամակներ եմ գրում չորս չրջանների Հրամատարներին՝ Դիլակ՝ Արտէմ Լալայեանին, Վարանդա՝ Սոկրատ Մելիք Շահնազարեանին, Խաչէն՝ Աղասի Վերդեանին, Ջրաբերդ՝ Բագրատ Ղազանչեանին: Հրամանատարներին յայտնում եմ, որ միջոցների ենք դիմում յաջողեցնելու, որ օրինական կերպով մեկնեմ քաղաքից, թիւրիմացութիւնների և կասկածների տեղիք չտալու իչխանութիւնների մօտ: Քաղաքացիներին իրաւունքով թոյլ են տալիս գնալ մօտակայ գիւղերը՝ կենսամթերք գնելու. չպիտի այնպէս անել, որ այդ իրաւունքից զրկուեն քաղաքի բնակիչները:

Հոկտեմբերի 25-ին բոլոր Հրամանատարներին չրջաբերական եմ ճամբում և խնդրում պատասխանել: Շրջաբերական նամակների տակ ես եմ ստորագրում, որպէս թէ գրութիւնը մասնաւոր բնոյթ ունի: Սուրհանդակները, կենսամթերք գնելու պատրւակով, պարէտից իրաւունք ստացած, առաւօտեան մեկում են երկու ուղղութեամբ՝ Յովհաննէսը Խաչէն և այնտեղից Ջրաբերդ, իսկ Յակորը՝ Վարանդա և այնտեղից Դիլակ:

Յակորը Ջանախչիում Սոկրատ Մելիք Շահնազարեանին ուղղուած գրութիւնը յանձնելով, ճամբան չարունակում է դէպի Դիլակ - Հաղրութ, Արտէմ Լալայեանին յանձնելու նրան ուղղուած գրութիւնը: Մինչև Յակորը վերադառնար Սոկրատից պատասխան ստանալու և բերելու մեղ, Սոկրատը կանխում, իր պատասխանը ուղարկում է իր ղինուորներից մեկի միջոցով, Հոկտեմբերի 26-ին: Ջինուորը Սոկրատի նամակը բերում է և քաղաքում պատահում Արսօ Յովհաննիսեանին, որին չա լաւ ճանաչում էր, որպէս իրենց չրջանի լիազօր գործչի ու միամտօրէն, թէև ծրարի վրայ գրած է լինում իմ անուն- ազգանունը, նամակը յանձնում է Արսօին: Վերջինս ընկերական արքով նամակը բացում է, կարդում և քիթը կախում: Արսօն նամակը կարդալուց յետոյ տալիս է ղինուորին, որ բերէ, ինձ յանձնէ: Նամակում Սոկրատը գրել էր՝ "լաւ էք մտածել, անհրաժեչտ է, որ ձեղնից մեկը գայ մեր չրջանը. ուրախ ենք, որ որոչել ես գալ, և մենք կը սպասենք քեղ, որ մենակ գաս և Ես-ին հետդ չբերես, իսկ եթէ քո գալը չըյաջողուի, ուրիչ մեկին ուղարկէք, բայց պրն. Ես-ին (Արսոյին) չուղարկէք: Եւ եթէ կարող ես, մի փողային նւագախումբ կազմակերպես, ուղարկես մեղ մօտ":

Սոկրատի նամակը չատ էր աղդել Արսոյի վրայ և դրանից էր կախել քիթը, սակայն ես ինձ միամիտ ձևացրի հանդիպելուց, իբր

ոչինչ չեմ հասկացել և ընաւ ակնարկ էլ չարի նամակի բովանդակութեան վերաբերեալ:

Պէտք է ասել սակայն, որ Արսոյի " Ես"-ի մասին ակնարկ անողը հետազային իր համակ էութեամբ այնպիսի "Ես" դրսեւորեց, որի համեմատութեամբ Արսոյի արտայայտած ես-ը մի բան չէր:

Կենտրոնական Կոմիտէն, գործունէութեան անցնելով, կանգնած էր մէկ դժւարութեան առջև, այն է, որ նիւթական միջոցներից զուրկ լինելով, անհրաժեշտ և անյետաձգելի որոշ ծախսեր անելու հնարաւորութիւնը չունէր: Նախքան տահիկների մուտքը Ղարաբաղ, ամառը երբ քաղաքագլուխ Գևրասիմ Մելիք Շահնազարեանը վերադարձաւ Թիֆլիսից, լսել էինք, որ մեծ գումար դրամ էր բերել, ուստի Կ.Կ. -ի նիստում որոշուեց, որ դիմենք քաղաքագլխին և խնդրենք, որոշ գումար դնէ մեր տրամադրութեան տակ, և որպէսզի դիմումը պաշտօնական ձև ունենայ, զրւի կառավարութեան (Ազգային Խորհրդի) անունից ու որպէսզի թիւրիմացութեանց տեղիք չտրւի, կանխաւ առնել նախկին Ազգային Խորհրդի անդամների համաձայնութիւնը և ապա խօսել քաղաքագլխի հետ: Ազգային Խորհրդի անդամներին պիտի յայտնել սկսւած գաղտնի աշխատանքների մասին, որ գաղտնի մարմնի նպատակն է, նախորդ տարիների պէս, համագործակցութիւն ստեղծել դարձեալ և աշխատել, ըստ հնարաւորին չուտ, կօալիցիօն հիմունքով ազգային մի մարմին ստեղծել՝ Լեռնային Ղարաբաղի դատը հետապնդելու:

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 26-ին խորհրդակցական ժողով գումարւեց նախկին Ազգային Խորհրդի անդամների, որոնք արդէն աղատ էին արձակւել բանտից: Բացակայում էին Յարութիւն Թումանը, որ չարունակում էր թաքնւած մնալ, Մուշեղ Զաքարեանը, որ մեր բանտարկւելուց առաջ արդէն անցել էր Գօրիս և Ռուբէն Շահնազարեանը, որը չուղեց մասնակցել և յայտարարեց, որ այլևս որևէ մարմնի կամ կազմակերպութեան հետ ոչ մէկ յարաբերութիւն չպիտի ունենայ: Ներկայ էին՝ Հայրապետ Մուսայէլեան, Մելիքսէթ Եսայեան, Արսէն Յովհաննիսեան, Արշաւիր Քամալեան, Լեւոն Վարդապետեան, Անուշաւան Տ. Միքայէլեան, Եղիշէ Իշխանեան:

Զեկուցում եմ, որ կազմւած է խիստ գաղտնի մէկ մարմին, որը յարաբերութեան մէջ է մտել չրջանների հրամանատարների հետ, որոնցից իւրաքանչիւրը առանձին, ինքնուրոյն կերպով աշխատում է, առանց կապ ունենալու միւս չրջանների հրամանատարների հետ: Ընդհանուր հրամանատար ղոյութիւն

չունի, մի բան, որ խիստ աչքի է զարնում, որից զործն է տուժում, որը չարունակելու դէպքում, հետագային կարող է չատ ծանր հետևանքներ ունենալ: Այդ բոլորը նկատի ունենալով, զաղտնի ղեկավար ժամանակաւոր մարմինը պիտի ջանայ, ըստ հնարաւորին չուտ, հրաւիրել համագումար բոլոր զիւղական հասարակութիւնների ներկայացուցիչների օրինական ղեկավար մարմինը ստեղծելու նպատակով: Ժամանակաւոր զաղտնի մարմինը ամէնանախնհրաժեշտ ծախսերը կատարելու հնարաւորութիւնը չունի, ուստի միայ յղացաւ, Գ-լոդ համագումարից ընտրած Ազգային Խորհրդի անունից դիմել քաղաքագլխին, որ Թիֆլիսից ընտած 750 հազար[91] ռուբլուց քաղաքի պէտքերի համար 100 հազար ռուբլի տայ, իբր թէ Ազգային Խորհրդի Թողած պարտքերը վճարելու նպատակով, բայց դրամը յատկացնելով զաղտնի մարմնին, անհրաժեշտ ծախսերը հոգալու և հետագային հաշիւ ներկայացնելու հրաւիրելիք համագումարին:

Ընկերները միաձայնութեամբ հաւանութիւն տւին, որ նախկին Ազգային Խորհրդի նախագահի հանդամանքով բանակցութեան մէջ մտնեմ քաղաքագլխի հետ և ստանամ դրամը:

Յաջորդ օրն իսկ դիմեցի քաղաքագլխին, հանդամանօրէն բացատրութիւն տւի Ազգային Խորհրդի Թողած պարտքերի մասին, որ իրականին մէջ, պարտատէրերը չէին պահանջում մեղնից, որովհետև մարմինը դադարել էր գոյութիւն ունենալուց, տաճիկները Շուչի մուտք զործելուց ի վեր: Սուր կարիքը, սակայն, հարկադրում էր պարտքերը վճարելու պատրւակով դրամ ստանալ քաղաքագլխից, որովհետև ժամանակը սուղ էր, հանգանակութիւն կատարելու հնարաւորութիւն էլ չկար:

– Ես այդ դրամները ստացել եմ միմիայն քաղաքի մեր անհրաժեշտ կարիքները հոգալու համար և որոնց պատասխանատուն ես եմ, իսկ դուք, նախկին Ազգային Խորհրդի անդամներդ, այլևս պաչտօնական հանդամանք չունէք, Ազգային Խորհուրդը դադարած լինելու պատճառով, ես ձեղ դրամ տալ չեմ կարող:

– Գերապիւ Խաչակովիչ, ասացի, Ազգային Խորհուրդը դադարել է գոյութիւն ունենալուց տաճիկների Ղարաբաղ մուտք զործելու պատճառով, և թէև անդամները պաչտօնական հանդամանք չունեն ներկայիս, սակայն նրանք պատասխանատուութիւնից աղատ չեն, պէտք է հաչիւ տան

[91] Գերապիւ Մ. Շահնազարեանը ամսոը վերադարձաւ Թիֆլիսից, ճամբին մեռած Գանձակից Նուբի վաչայի կողմից ուղարկուած Հայ բանագնացների հետ: Նա յայտնել էր նեղ չրջանում, որ յաջողել է իրեն 750 հազար ռուբլի ստանալ քաղաքի կարիքները հոգալու համար: Հետագային մեկ տարի անց, Գոքչա. Բաքուլանը և ուրիշներ յայտնեցին, որ դրամը տրուած է ոչ թէ միայն քաղաքի, այլ և գաւառների ամէնաանհրաժեշտ կարիքները հոգալու համար: (Հեղ.)

ծրագրելիք Համագումարին: Ազգային Խորհուրդը, ի նկատի ունենալով որոշ հանգամանքներ, յարմար գտաւ, որ յատուկ յանձնախումբ կազմւի ձեր իսկ նախագահութեամբ, որպէս քաղաքի ներկայացուցիչներ յարաբերութեան մէջ լինելու տաճկական հրամանատարութեան հետ, և դուք էլ հաշւետու լինէք նոյն Համագումարին: Եւ Համագումարը չի դատապարտի ձեղ՝ մեղ տւած դումարի համար:

– Դուք չգիտէք, Թէ ինչ դժւարութեամբ կարողացայ ես ղրամ ստանալ, մեր ամէնաանհրաժեշտ ծախսերի համար. ես իրաւունք չունեմ քաղաքին պատկանող ղրամից յատկացումներ անել այլ նպատակների:

– Գերապատիւ Խահակովիչ, ոչ Ազգային Խորհրդի անդամները և ոչ էլ նրանից առաջ գոյութիւն ունեցած բոլոր օրգանների անդամները, Միջկուսակցական բիւրօից սկսած, հասարակապատւական ղրամներից չեն օգտւել, ռոճիկ չեն ստացել, աշխատել են նւիրւածութեամբ և ապրել են իրենց ունեցած համեստ միջոցներով, ինչպէս կասեն՝ նօթա են գնացել, սակայն ունեցել ենք ոստիկանութիւն և կայազօր քաղաքում, որոնց համար գումարներ են ծախսւել հանգանակութեամբ ձեռք բերւած, և կատարւած են որոշ ծախսեր պարտքով, որ պիտի վճարւի, և դուք հակասութիւն կամ ապօրինութիւն չպիտի համարէք, եթէ քաղաքապատկան գումարից վճարէք Ազգային Խորհրդի և նրան նախորդած օրգանների թողած պարտքը, քանի որ քաղաքի միլիցիայի և կայազօրի համար կատարւած ծախսերի պարտքն է:

Քաղաքագլխի հետ խօսեցինք ոչ միայն ես, այլև Ազգային Խորհրդի ու նախորդած Ղարաբաղի Ժողովրդային Կառավարութեան անդամներից մի քանի հոգի՝ Աչ. Մ. Յովսէփեան, Ա. Քամալեան և Հայրապետ Մուսայէլեան, որը, բաւական վիճելուց յետոյ, քաղաքագլխին յայտարարում է՝ "Ձեր բռնած ընթացքը ի վնաս Ղարաբաղի Հայութեան է և որևէ համագումար, ինչպիսի կազմ էլ ունենայ, ձեզ պիտի դատապարտէ": Այդ օրւանից նա դարձաւ խիստ հակառակորդ Հ. Մուսայէլեանին:

Համաձայն ընկ. ժողովի որոշման, Կենտրոնական Կոմիտէն յանձնարարում է խօսել բոլոր հոսանքների հետ, որոնք միասնաբար աշխատել են մեզ հետ, որ առաջին իսկ հնարաւորութեան խառն ժողով ունենանք և մտքերի փոխանակութիւն կատարենք մեզ չահագրգռող հարցերի ու խնդիրների և գործնական անելիքների չուրջ: Բոլոր մեզ հետ աշխատած հոսանքները սիրով և ուրախութեամբ իրենց համամտութիւնն են յայտնում: Եւ առաջին հերթին, գիւղատնտես մենշևիկ Գրիգորիս Տէր- Աւետիքեանը յայտնում է, որ իրեն գնում է Դաշնակցութեան տրամադրութեան

տակ աշխատելու, ինչպիսի յանձնարարութիւններ արուի քաղաքում կամ դուրսը:

Հոկտեմբեր 27-ին բանտից արձակւում են մնացած բոլոր բանտարկեալները միասին: Մինչ այդ մաս-մաս էին արձակւում, երկու, երեք հոգով: Բանտարկեալներից ամէնից կրտսերը, Վազգէն Միրզաբէկեանը, չի աղատւում այդ օրը, որովհետև ձերբակալման ժամանակ մօտը փոքր գրպանի ատրճանակ էին գտել և, որպէս անչափահաս, խիստ պատժի չէր ենթարկւել, երբ բանտում եղածներին միասին արձակւում են, նրան գիտակցաբար պահում են աւելի երկար, մէկ չարաթ, թէ տասն օր աւելի: Վազգէնի հայրը՝ Յովհաննէս վարժապետը, չատ ահաբեկւած վիճակ ունէր և ամէն օր հանդիպելիս ընկճւած տրամադրութեամբ Վազգէնի մասին հարց կը տար, թէ երբ պիտի աղատւի:

– Պատասխանատու բոլոր գործիչներին աղատել են, մեր Վազգէնը ոչ մի պաչտօն չի ունեցել, դպրոցական աչակերտ, ի՞նչ է արել, որ այսքան երկար պահում են բանտում: Մի խաղ չխաղան էրեխի գլխին:

– Ոչինչ չի լինի, երկար պահում են ձեռքին բռնած ատրճանակի պատճառով: Եթէ անչափահաս չլինէր, աւելի ծանր պատիժ կը տային. այնպէս որ, վատ բաներ մի մտածի, – ասում էինք խեղճ մարդուն:

Հոկտեմբեր 31-ին գիւղատնտես Գրիգորիս Տէր Աւետիքեանը խնդրեց, որ իրեն ուղարկենք Վարանդա կամ այլ չրջան. անկախ նրանից, թէ համագործակցութիւն կը ստեղծւի կամ չի ստեղծւի, ինքն ուղում է աշխատել, և պատրաստ է գործելու գոյութիւն ունեցող գաղտնի մարմնի և հետագային ստեղծւելիք աղգային մարմնի հրահանգներով:

Գրիգորիսին յայտնեցի, որ ապօրինի կերպով դուրս գալու հնարաւորութիւն չկայ, որովհետև քաղաքից ելքի բոլոր կէտերը ասկնարներով բռնւած են, պիտի ջանալ որևէ պատրւակով պարետից թոյլտւութիւն ստանալ և աղատ մեկնել քաղաքից:

Գրիգորն ասաց, որ Ամարասում (Վարանդա) այգիներ ունի, կարող է դիմել պարէտին, որ այգիներին վերահասու լինելու համար ուղում է գնալ գիւղ, և այդ պատրւակով իրաւունք ստանալ:

ՀԱՅ-ԹՈՒՐՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյեմբեր 1-ին պարէտ Հասան Բասրի բէյը հրաւիրում է քաղաքագլխին՝ Գ. Մելիք Շահնազարեանին, Հ. Մուսայէլեանին, Լ. Վարդապետեանին, Ա. Մելիք Յովսէփեանին ու ինձ, նախկին զաւառական վարչութեան հին չէնքը, որ գտնւում էր Թուրքաց Թաղում, որոշ հարցերի շուրջ խօսելու: Ժողովի հրաւէրը կարգադրում է մեր Թաղի ոստիկանի Արտաշէս Մելքումեանի միջոցով: Նշանակած ժամը 4-ին գնում ենք զաւառական վարչութիւն, ուր արդէն հաւաքուել էին աւելի մեծ թիւով Թուրքեր, Հայ-Թրքական կոմիտէի անդամներ՝ Խոսրով բէկ Փոլադով, Միրզա Ջամալով, Խասայ Մամեդով, Հէյդարբէկ Սէյիդրէկով և ուրիշներ՝ Դոքտ. Քերիմբէկ Մելամանդարով, Միրզա Շաֆի և այլ վաճառականներ:

– Ձեզ այսօր հրաւիրել եմ, որպէս քաղաքի պատուաւոր մարդկանց, մէկ-երկու խնդիրների չուրջ խօսելու, ասաց Հասան Բասրի բէյը: Եւ ես յոյս ունեմ և վստահ եմ, որ բոլորդ պիտի համաձայն լինէք ինձ հետ և պիտի աջակցէք, որ բոլորիս վրայ դրւած պարտականութիւնը լաւ կատարենք: Ջամիլ Ջահիդ բէյը մեկնելիս խիստ հրաման տւաւ ուշի-ուշով հետևել, որ երկու հարևան ժողովուրդները խաղաղ ապրեն, եթէ գտնւեն այնպիսի տարրեր, հայ կամ Թուրք, որ ուղենան խախտել քաղաքի խաղաղ կեանքը, ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ կեանքը խանգարողների դէմ և խախտողներին դինուորական դատարանին յանձնել, համապատասխան պատժի ենթարկելու: Ես էլ մտածեցի, որպէսզի թիւրիմացութիւնները տեղի չունենան, ձեզ յայտնելով իմ մտահոգութեան մասին, որպէս քաղաքի ներկայացուցիչների, ուղում եմ, որ դուք էլ ձեր հերթին խօսէք ու հասկացնէք ժողովրդին, որ խաղաղ մնան, չար մարդկանց հանդէպ խիստ լինեն, Թոյլ չտան մարդկանց մտքերը պղտորելու,դրգռումներ անելու: Ես համոզւած եմ, որ երկու հարևան ժողովուրդներից ոչ մէկը չի ուղենայ, որ խաղաղ կեանքը վրդովւի: Եւ ես փաստօրէն գիտեմ, հինգ ամսից աւելի այստեղ լինելով, չարունակ ուշի-ուշով հետևել եմ երկու ժողովուրդների խառն կոմիտէի գործունէութեանը և համոզւել, որ երկու կողմն էլ անկեղծօրէն խաղաղութիւն են ցանկանում:

Հասան Բասրի բէյի խօսքերը ռուսերէնի էր Թարգմանում Դոքտ. Քերիմբէկ Մելամանդարովը: Քաղաքագլուխը խօսեց ռուսերէն, ի պատասխան պարէտի, և Քերիմբէկը Թարգմանեց Թուրքերէնի.

–Որպէս քաղաքագլուխ և ընտրւած երկու ժողովրդի կողմից, ես աւելի և աւելի համոզւած եմ, որ քաղաքի երկու ժողովուրդներից

ոչ մեկը չի ցանկանում, որ խաղաղությունը խախտի. բոլորը ցանկանում են խաղաղ ապրել և փոխադարձաբար օգնել իրարու: Ինչպես որ երկու կողմի պատասխանատու մարդիկ աշխատել են միշտ իրար հասկանալ, նոյնը պիտի չարունակեն և առաջիկային, որովհետև երկու ժողովուրդների չահը դա է պահանջում:

Խօսք առաւ Խոսրովբեկ Փոլադովը և ասաց. "Ես նոյնպէս համոզուած եմ, որ քաղաքի երկու հարևան ժողովուրդները սրտանց ցանկանում են խաղաղ ապրել
և քաղաքի հայ ու թուրք գործիչները ինչպէս մինչև հիմա, այսուհետև էլ պիտի համերաշխ գործեն ու թոյլ չտան, որ պատահական մարդիկ վրդովեն մեր խաղաղ կեանքը: Սակայն, պարոններ, մենք չպիտի սահմանափակենք քաղաքի խաղաղութեամբ, պիտի աշխատենք, որ գաւառներում էլ խաղաղութիւն տիրի: Պարզ ու ըստ խօսանք, որ գաւառի հայկական գիւղերում ինչ-որ չարժման մէջ են մարդիկ, և դա յայտնի է ղարձած մեր ժողովուրդին, որի միտքը հանգիստ չէ, ուստի մեր հայ եղբայրները պէտք է աշխատեն, որ գաւառներում էլ խաղաղ կեանք ստեղծեն:

Հ. Մուսայէլեանը, Լ. Վարդապետեանը, Ա. Մելիք Յովսէփեանն ու ես իրարու հայեացք ողղելով հասկացրինք, որ յարմար ժամանակ է՝ աղատ երթևեկի հարցը դնել, ու Աչոտ Մելիք Յովսէփեանը խօսք առնելով, ասաց. "Մենք վիճելի ոչ մէկ հարց չունենք, և բոլորիս անկեղծ ցանկութիւնն է, որ թէ քաղաքում և թէ գաւառներում խաղաղութիւն լինի, ժողովուրդը հանգիստ սրտով իւր աշխատանքով զբաղուի, ուստի պարզ է, որ առաջւայ պէս անհրաժեշտ է մարդիկ ուղարկել չրջանները":

–Մեր ուղածն էլ հէնց դա է, զրեթէ միաժամանակ ասեցին Մելամանդարովն ու Խոսրովբեկ Փոլադովը, ապա վերջինս խօսքն ուղղելով ինձ, ասաց՝ պարոն Եղիչէ, ես իմ կողմից կարող եմ ասել, որ ուղում եմ հէնց դուք գնաք գաւառ, որտեղ յաճախ էք եղել, չատերին ծանօթ էք, ճանաչում էք և կը կարողանաք հեչտութեամբ կատարել մեր ցանկացածը:

– Ես չեմ խուսափի, ասացի, ես էլ կերթամ, ուրիչներն էլ կերթան սիրով, ինչպէս միչտ գնացել են: Միայն անհրաժեշտ է, որ Հասան Բասրի բէյը պահանջած կարգադրութիւնն անէ՝ աղատ երթևեկ ունենալու համար:

Հասան Բասրի բէյն ասաց՝ ով ուղենայ գնալ գաւառ, կը ներկայանայ զրասենեակ և անմիջապէս թոյլտուութեան թուղթ կը ստանայ: Խորհրդակցութիւնը վերջացած լինելով, դուրս եկանք թուրքերի հետ միասին: Թուրք ներկայացուցիչների դէմքից երևում էր, որ զոհ էին խորհրդակցական ժողովի արդիւնքից, ինչ խօսք, որ մենք էլ զոհ էինք, մանաւանդ որ երթևեկի հարցը լուծուեց զրական

իմաստով, որ աւելի դիւրին կը դառնայ, ձգձգումները չի լինի դիմումներ ներկայացնելուց:

Նոյեմբեր 3-ին գիւղատնտես Գրիգորիս Տէր Աւետիսեանը տաճիկները Շուշին գրաւելուց յետոյ առաջինը եղաւ քաղաքացնակ ինտելիգենտներից, որ երկտող յանձնարարականով գնաց գաւառ, Վարանդա, Սոկրատի Հրամանատարութեան ենթակայ չրջանում օգտակար լինելու ինքնապաչտպանական գործին: Մի քանի օր Գրիգորիսը մնում է Ջանախչիում Սոկրատի մօտ, ապա մի նամակով տեղեկացնում է, որ Սոկրատը բաւական բարձրից է վերաբերւում իւր չրջապատին և մեծ համարում ու կարծիք ունի իր մասին, որպէս կարող անձն: Սակայն նրա հետ հնարաւոր չէ միասնական աչխատանք կատարել, ուստի թողնում, հեռանում է, գնում Ամարաս:

Լաւ լուրեր չենք ստանում նաև միւս չրջաններից, մանաւորապէս Խաչէնից ու Ջրաբերդից՝ հրամանատարների միջև ծայր տուած տարաձայնութեան մասին, ուստի ընկերները ասում են, որ պէտք է օր առաջ մեկնել գաւառ, քանի դեռ դժգոհութիւնները չատ չեն խորացել:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԳԱՒԱՌԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Նոյեմբեր 9-ին քաղաքից մեկնում եմ Շօշու, որտեղ գիւղացիների ժողով գումարելով, լսում եմ իրենց ունեցած դժգոհութիւնը: Գանգատւում են, որ քաղաքը այնքան մօտ լինելով հանդերձ, կտրուած էին միմեանցից, յարաբերութիւն չունէին քաղաքի հետ և հնարաւորութիւն չունէին մտնել քաղաք և իրենց պէտքերը հոգալու համար գնումներ կատարել, հաղիւ չորս հինգ օր է, որ քաղաքի դռները բացել են:

Յայտնեցի, որ քաղաքացիք էլ կտրուած էին գաւառից և խիստ կարիք ունէին գաւառից մթերք ստանալու. ուստի քաղաքի յատուկ յանձնաժողովը քաղաքագլխի հետ միասին դիմել էին պարէտին, որ վերջինս աղատ երթևեկի իրաւունք տայ և նա խոստացել էր և կատարեց յանձնախմբի ցանկութիւնը: Յայտնեցի նաև, որ թուրքերը սիրալիր են դարձած, որովհետև տաճկական զօրքերը հրաման են ստացել թողնել Կովկասը և վերադառնալ իրենց երկիրը: Եւ հէնց այդ պատճառով մեղ ժողովի են կանչել ու առաջարկել, որ ամէն կերպ աչխատենք խաղաղութիւն հաստատել երկու հարևան ժողովուրդների միջև:

Շօշուից անցայ Ջանախչի, Սոկրատի կենտրոնատեղին, որտեղ և ինքն էր բնակւում: Սոկրատը տարիներ չարունակ

Զանալեչիի երկդասեան դպրոցի ուսուցիչն էր եղել մինչև յեղափոխութիւնը: Միջնակարգ կրթութիւն չունէր, աւարտել էր Շուշու քաղաքային չորսդասեան դպրոցը: Սոկրատը բացակայ էր գիւղից, սպասեցի իրեն երկու օր, չեկաւ, ուստի որոշեցի անցնել ուրիշ գիւղեր՝ հանդիպելու իրեն և մեր գիւղացի ընկերներին: Յաջորդաբար եղայ Մարտաչէն, Հաղորդի, Մաչաղիչէն, Սպիտակչէն, Մուշկապատ, Ծովատեղ, Հերհեր, Խերխան, Բիլիաք, Ղաւախան, Սարուչէն, Սխտորաչէն, ոչ մի տեղ չկարողացայ հանդիպել Սոկրատին, որը չրջագայութեան մէջ էր, ոչ մի տեղ կանգ չէր առնում: Սակայն ես ուղում էի օր առաջ հանդիպել, որովհետև քաղաքում թուրքիկ լուր էինք լսել, թէ Սոկրատը նամակ է ստացել Անդրանիկից, բայց բովանդակութիւնը ճշտիւ չգիտէինք:

Զանալեչիից ընկերացել էր ինձ, պատահաբար այնտեղ գտնւած ծովատեղցի ընկերներից մէկը՝ Մարկոս Յարութիւնեանը, պատերազմից արձակուրդով տուն եկած ու մնացած, քաջութեամբ աչքի ընկած Արևելեան ճակատում, Գէորգեան չքանչանի արժանացած դինւոր, աւագ ենթասպայ: Մարկոսը ճամբին պատմեց, թէ Մամնայի կռւին ինչպիսի կատաղութեամբ էին կռւում մեր մարտիկները և թէ գիւղացիները ինչքան զաղզաղած էին, որ սպանւած թշնամիների դիակները փոխանակ թաղելու, կտրել, սապոն էին եփել:

– Մարկոս, անհաւատալի բաներ ես պատմում: Զոհերից չատերը կմախքացած վիճակում էին, ի՞նչ սապոն կը ստացւէր նրանցից:

– Բոլորը կմախքացած չէ՞ին լսո, մի մասը յաղթանդամ, լիքը կաղմւածք ունեցող դինւորներ էին, հէնց դրանք էլ լաւ սապոնի նիւթ էին, իսկ անպէտքներին բոլորին մի մեծ փոսի մէջ լեցնելով, հողով ծածկել են:

– Մօտաւոր հաչւով, քանի դիակ է սապոն դառել, հարցնում եմ:

– Մօտաւորապէս չիսուն դիակ:

– Մարկոս, այնուամենայնիւ, չեմ կարողանում հաւատալ, որ մեր գիւղացիները այդքան վայրագօրէն գաղաղած են եղել և մարդկային դիակից սապոն են պատրաստել:

– Ինչո՞ւ չէք հաւատում. տաճիկները վայրագօրէն ծնողների աչքի առջև զաւակներին են կոտորել Տաճկահայաստանում և զաւակների առջև՝ ծնողներին: Մծկեր երեխայի մօրը սպանել են, երեխային պահեցրել մօր կրծքին և ծիծը դրել երեխայի բերանը: Հայ կանանց և աղջիկներին բռնաբարել են ու չետոյ սրախողխող արել և այդ զաղանութիւնները սեպհականութիւնն են դարձել մեր ժողովրդի,որը եթէ զաղաղել է, արդար ցասումի չնորհիւ և եթէ տաճիկի դիակից սապոն է պատրաստել, չպիտի զարմանալ և չպիտի մեղադրել:

Սարգսաչէնում Բէգլար Խաչատրեանի տանն էի իջևանել: Նա մի քանի անգամներ ընտրել էր իրենց չրջանի գիւղախմբի տանուտէր (քեօխայ) և այդ պատճառով, թէև վաղուց թողել էր այդ պաշտօնը, հակառակ գիւղացիների ցանկութեան, բայց քեօխայ մականունից չէր աղատւել: Բէգլար քեօխայի տղաները և աղջիկները տարրական կրթութիւն էին ստացել քաղաքում, չորդասեան դպրոց աւարտել: Տղաները՝ Գևրասիմն ու Սերգէյը, մեր կուսակցական ընկերներից էին, իսկ աղջիկները՝ համակիրներ: Տղաները բացակայ էին, գտնւում էին Բագւում, նաւթահանքերում պաշտօնեաներ էին: Սերգէյը 1909 թ. ամառը Շուչում տեղի ունեցած անյաջող ահաբեկման հետևանքով, որպէս ահաբեկչին պատսպարողի, ահաբեկչի՝ թեմական դպրոցի վերջին դասարանի աշակերտ Յովհաննէս Աղասեանի հետ միասին, դատապարտւել էր տասը տարւայ տաժանակրութեան, և բանտարկւած էին մինչև յեղափոխութիւն Պետրոպալովսկ ըերդում (Պետրոգրադում): Յովհաննէսը Թոբոլսկից վախճանւում է ըերդում, իսկ Սերգէյը Փետրուարեան յեղափոխութեան չնորհիւ ազատւում է:

Աւետիս Ահարոնեանը Բագւում 1914 թ. իր տւած դասախօսութեան ընթացքին ասել էր, թէ հայ օջախի հիմքը հայ կինն է հանգիսանում, նա տան սիւնն է, որ կառչած հայրենական աւանդապահութեան, անգամ այրիանալուց չի լքում իր օջախը, նոյն իսկ երբ զաւակ չի ունենում, ի յարգանս ամուսնու. իսկ եթէ զաւակ է ունենում, ամբողջովին նուիրւում է իր զաւակին, նրան սնուցանում, չատ յաճախ մեծամեծ զրկանքներ կրելով, մինչև նրա հասունանալը:

Զանախչիում, յեղափոխութիւնից առաջ, տեսնելով տաժանակրութեան դատապարտւած Սաքօ Եապօնի կնոջը՝ Կատինին, թէ ինչպէս զրկանքներ կրելով, նուիրւած էր իր միակ զաւակին և աչքը ճամբին, սպասելով իր ամուսնու վերադարձին, իսկ Սարգսաչէնում Սերգէյի կնոջը՝ Սաթենիկին, թէ ինչպիսի հոգատար վերաբերմունք ուներ ծերացած սկեսրայրի հանդէպ և նոյնպէս աչքը ճամբին, սպասելով ամուսնու վերադարձին: Երկուսն էլ, թէ Կատինը և թէ Սաթենիկը, երիտասարդ կանայք էին, ռուսական ցարական օրէնքով տաժանակրութեան դատապարտւած մարդկանց կանայք իրաւունք ունէին ամուսնանալու, և թէև քիչ չէին նրանցով հետաքրքրւող աչքերը, բայց նրանք մնացին անսասան իրենց դիրքում: Մասնաւորապէս Սաթենիկը, որ աւելի երիտասարդ էր և կրթութեամբ աւելի բարձր, նրանով հետաքրքրւողներ աւելի չատ էին, մանաւանդ որ զաւակ չունէր: Եւ քանի-քանի այդպիսի կանայք են եղել ու կան մեր ժողովրդի, մանաւանդ գիւղացիութեան մէջ:

Բէգլար քեօխան իւր հանաքներն ունէր մեր ընկերների հետ, մանաւանդ երբ խմբովին իրենց մօտ հիւր լինէին. "Հը, չաղրաբուտաններ (այդպէս էր անւանում մերոնց), ի՞նչ փանդի

տէր էք, ուղում էք Նիկալայ Թագաւորին թախտից գլորէք ցած և դուք նրա տեղը բռնէ՞ք: Լաւ երազ է": Հիւանդ պառկած էր Բէգլար քեօխւան, և Սաթենիկը ամենայն հոգածութեամբ խնամում էր սկեսրայրին, որը, թէև ծերութեան սահմանները թևակոխած, բայց արտաքինով ներկայանալի, յաղթանդամ, առողջակազմ մարդ էր:

– Բէգլար քեօխւա, քեզ հիւանդանալ, պառկելը չի սազում, – ասացի:

–Թուրքը կասէ՝ սեքսենննէն դըր (ութսունից է), – ասում է Բէգլար քեօխւան, այսինքն՝ տարիքը մօտեցել է ութսունին, ծերացել է, օրգանիզմի դիմադրական ոյժը թուլացել է, և հիւանդութիւնը յաղթանակել է:

Յաջորդ օրը Մարկոսի հետ գնացինք իրենց գիւղը՝ Մովատեղ, որտեղ ինչ-որ անձնական գործով եկել էր սպիտակչէնացի ընկ. Աղալար Հայրիկեանը: Հանդիպելով գիւղամիջում, բռնեց ձիուս սանձից, ասելով՝ "էլ իմ ձեռքից չես աղատւի, ես քեզ ասացի, դուրս եկ քաղաքից, դեռ տաճիկները չեկած, ի հարկէ, չես մոռացել, կտուրումն էինք բոլորս այն երեկոյեան, չլսեցիր ինձ, մնացիր և տաճկական բանտի համն էլ տեսար: Եթէ մեզ հետ միասին դուրս եկած լինէիր, չէիր բանտարկւի:

– Եթէ քեզ հետ միասին դուրս գայի, պիտի իմ փոխարէն ծնողներիս, քրոջս և հօրեղբօրս մանկահաս տղային բանտարկէին: Ծնողներս արդէն ծերացած են, քիչ չեն տառապել իմ պատճառով, լաւ եղաւ, մնացի, և նրանց ձեռք չտուին: Արտեմը (Թումեան) թաքնւել է, և փոխարէնը ծեր հօրն ու մօրը, այն էլ հիւանդ վիճակում, բերին բանտ:

Աղալարը Դաչնակցութեան մեծ դատավարութեան ժամանակ նոյնպէս, իբրև յանցապարտ, դատւել և անորոշ ժամանակով աքսորւել էր Սիբիր, և աղատւել յեղափոխութիւնից յետոյ: Միասին գնացինք իրենց գիւղը՝ Սպիտակչէն, որտեղ գիւղացիների հետ ժողով ունենալուց յետոյ, հետևեալ օրը Աղալարի հետ անցանք վերը նշածս գիւղերը և ամսու 15-ին հասանք Ջանախչի, ուր նախորդ օրը եկել էր արդէն Սոկրատը: Հէնց նոյն օրը քաղաքապլուհը մի նամակով, ուղղւած Սոկրատին, յայտնում է, թէ զօրավար Տոմսընը հրամայել է՝ վերջ տալ կռիւներին ու ննջարկւել անգլիական վերին հրամանատարութեան կարգադրութիւններին:

ՆԱՄԱԿ ԱՆԴՐԱՆԻԿԻՑ

Սոկրատը յայտնում է, որ Անդրանիկից կոնիձորցի սուրհանդակի միջոցով նամակ է ստացել, թէ ամսու 16-ին յարձակում է սկսելու Հաջի Սամլուի ղէմ, Շուչու ուղղութեամբ, ուստի հրահանգում է Վարանդայի ուժերը հանել՝ Քիրսի բարձունքները զրաւելու և օգնելու յառաջխաղացմանը: Սոկրատն ու ես, իրենց տանը ղէմառղէմ նստած, խօսում ենք Անդրանիկի նամակի մասին:

– Լաւ, հիմա պարտաւո՞ր ենք ուժերը Քիրսի լանջերին կենտրոնացնել, ինչպէս կարզադրել է Անդրանիկը, –հարցնում եմ Սոկրատին:

– Նա թէև զրել է, որ Քիրսը բռնենք, բայց ես էլ իմ ծրագիրն ունեմ, լսօսել եմ զինուորների հետ, և բոլորը պատրաստ են, սպասում են հրամանի: Քաղաքագլխին էլ զրել եմ այդ մասին: Ես որոշել եմ քաղաքը զրաւել և հէնց քաղաքը զրաւելուց յետոյ ուժերի մէկ մասն ուղարկել Ղարաղչլաղում ղիրք բռնելու, և այնտեղից նպաստել Անդրանիկի առաջանալուն:

– Դու չատ լաւ կանես, եթէ քաղաքը զրաւելու միտքը Թողնես և Անդրանիկի հրահանգի համաձայն, Քիրսի լանջերը բռնես, որ Անդրանիկի ուժերը կարողանան հեչտութեամբ ճեղքել հաջիսամլուցիների չղթան, անցնեն այս կողմը, և քո ուժերն էլ միացած Անդրանիկի ուժերին, առաջ կը չարժւէք դէպի Շուչի: Երբ Անդրանիկը անցնի Հագարու գետից այս կողմը, և տաճիկները լսեն նրա յառաջխաղացման մասին, խորապէս համոզուած եղիր, մէկ հատիկ տաճիկ չի մնայ Շուչում. կը Թողնեն քաղաքը, կերթան, աւելի ճիչտ՝ կը փախչեն, նրանց հետ նաև տափաստանից քաղաք ապաստանած բէկերը: Այսօր դեռ ամսի 15-ն է, ամենաուչը ութ-ինն ժամում քո զինուորները կարող են հասնել Քիրսի բարձունքները և Ղարաղչլաղ. դեռ ուչ չէ:

– Անդրանիկը, ինչպէս ասում ես, վաղը պէտք է յարձակում սկսէ:

– Ես զրել եմ քաղաքագլխին, որ պահանջ պիտի դնեմ, որ տաճիկները Թողնեն, հեռանան քաղաքից. երբ նրանք կը հեռանան, կը մտնենք քաղաք, դու էլ մեզ հետ միասին, ապա այնտեղից կուղղւենք դէպի Գօրիս:

– Ես համոզուած եմ, որ պահանջի հետևանքով տաճիկները չեն հեռանայ. նրանք անմիջապէս քաղաքի բոլոր ելքերը, որոնք իչխող դիրքեր են, բարձր ժայռերի կատարներին, կը փակեն, իսկ քո մարտական ուժերը պիտի ձորից բարձրանան վեր, իսկ ժայռերի ծերպերին Թառած տաճիկները չէ Թէ զնդակների, այլ սոսկ քարերի տարափ տեղալով, Թոյլ չեն տայ ձեզ մի քայլ առաջ անցնէք:

– Իսկ ես համոզուած եմ, որ նրանք առիթի և յարմար վարկեանի են սպասում, չտապ կերպով Թողնելու քաղաքը և

հեռանալու, մեր հետախոյզները նկատել են, որ մալիբէկլուցիները[92] տասնեակ փուրգոններով ամէն օր քաղաքից Աղդամ են փոխադրում, կը նշանակէ՝ հեռանում են:

Այսպէս երկար, ժամեր տևող փոխատացութիւն է տիրում մեր մէջ, առանց եզրակացութեան և համաձայնութեան գալու: Յոգնած լինելով ճամբին, ըստ գիւղական սովորութեան, արդէն մութն ընկած լինելով, պառկում ենք, քնում, սպասելով վաղւայ լինելիքին:

Առաւօտեան վաղ վեր կենալով, տեսնում ենք սեղանի վրայ արդէն ինքնաեռը պատրաստ, հաց, պանիր, կարագ դրւած մեզ են սպասում: Լւացւելով, սեղանի չուրջը նստած, թէյ խմելով, մտքերի փոխանակութիւններ ենք ունենում դարձեալ, աւելի ճիշտ՝ վիճում տաք-տաք: Մեր վէճը ընթացքի մէջ, ծառան ներս մտնելով յայտնում է, թէ քաղաքից մարդ է եկել: Անմիջապէս երկուսս արագ դուրս ենք գալիս՝ իմանալու, թէ ով է եկել: Տեսանք, որ մեր ընկերներ Հայրապետ Մուսայէլեանը և Եսայի Քամալեանը ձիերից իջել, մնացել են կանգնած, սպասողական վիճակում, ձիերի սանձը բռնած: Սոկրատը կարգադրեց ծառային՝ ձիերը տանել, տեղաւորել գոմում, իսկ ընկերներին հրաւիրել ներս:

Հայրապետ Մուսայէլեանը պատմում է, թէ երկրորդ հեռագիրն է ստացել քաղաքում, տեղեկացնելով, որ վաղը կամ միւս օրը Բագւից երկու զինւորականներ կը գան՝ կարգադրելու խնդիրները. քաղաքի թուրքերը հաջհամլուցիներին տեղեկացրել են, որ Անդրանիկ փաշան ուժեր է կենտրոնացնում իրենց դէմ, և թուրքերը անմիջապէս հեռագրել են Բագու, ուստի Տոմսոնը երկու զինւորականների ղրկում է՝ կարգադրելու խնդիրները, այսինքն՝ պարզ է, թոյլ չտալու, որ Անդրանիկը առաջ գնայ: Ընկերները ժողով են ունեցել, և բոլորը համոզւած են, որ եկող զինւորականները պիտի պահանջեն Անդրանիկից առաջ չչարժւել, ենթարկւել անգլիական հրամանատարութեանը և նոյնքան էլ համոզւած են, որ Անդրանիկը չի կարող չենթարկւել անգլիական հրամանատարութեանը, ուստի բոլոր ընկերների կարծիքն այն է, որ պէտք է որևէ միջոց մտածել՝ խափանելու զինւորականների՝ Գօրիս գնալը: Քաղաքի պատասխանատու բոլոր ընկերները միակարծիք են այս խնդրում, խօսել է նաև բոլոր միւս Հոսանքների ղեկավարների հետ, որոնք նոյնպէս գտնում են, որ պէտք է խանգարել զինւորականների Գօրիս գնալը, ուստի ընկերների լիազօրութեամբ եկել ենք ձեզ հետ միասին խորհրդակցելու և որոշելու, թէ ինչ կարելի է անել: Հայրապետը պատմեց նաև, որ

---

[92] Մալիբէկլուն Շուշուց 10-12 կիլոմետրի վրայ թրքական գիւղ է, բնակիչները բոլորը փուրգոնչիներ են: (Հեղ.)

ինքն ու Աչոտ Մելիք Յովսէփեանը միտք են յղացել՝ կեանքի կոչելու Ազգային Խորհուրդը, որը լուծւած էր համարում քաղաքի յատուկ յանձնախումբը, որը կազմւած էր ժամանակաւոր կերպով և որոշ նկատառումներով, տաճկական հրամանատարութեան հետ յարաբերութիւն պահպանելու համար: Այժմ արդէն, երբ նշաններից պարզ երևում է, որ տաճիկները կամաց-կամաց լուռ հեռանում են, Ազգային Խորհուրդը, որ ընտրւած է ժողովրդի կողմից, հրապարակ գալով, կը կարողանայ չրջանների և հրամանատարների միջև կապ ստեղծել, ննջարկել մէկ ընդհանուր, այն է՝ Ազգային Խորհրդի ղեկավարութեան: Ներկայիս, անհերքելի փաստ է, որ չրջանների միջև կապ չկայ, իւրաքանչիւրը դործում է ինքնուրոյնարար, և դրանից աղգային ընդհանուր գործն է տուժում: Ազգային Խորհուրդը պատասխանատու է համագումարի, ասել է՝ ժողովրդի առաջ: Վերջինս Ազգային Խորհրդին չի մեղադրի յատուկ յանձնախումբ կազմելու և իշխանութիւնը նրան փոխանցելու համար ժամանակաւոր կերպով, բայց որ այժմ կարող է իր դերի մէջ մտնել և իր ստանձնած պարտականութիւնը կատարել, և խուսափում է, ուստի ժողովուրդը կը մեղադրէ Ազգային Խորհրդին: Ընկերական խորհ. ժողովը նպատակայարմար չգտաւ այդ ձևով Ազգային. Խորհուրդը կեանքի կոչելը, որ կարող է յատուկ յանձնաժողովի կողմից ընդդիմութիւն լինել, հակառակ Ազգային Խորհրդի գործունէութեան, որ ներկայ պայմաններում միանգամայն անցանկալի է:

– Մենք պէտք է անմիջապէս մի նամակ գրենք Անդրանիկին, որ ականջ չդնի իրա մօտ գնացած ղինւորականներին, չարունակի իւր յառաջխաղացը:

–Մեր ընկերական ժողովում այդ մասին խօսք եղաւ, և մտքերի փոխանակութիւնից պարզուեց, որ հազիւ թէ Անդրանիկը ընդդիմանայ անգլիական հրամանատարութեան. չէ որ նա անցել էր Պարսկաստան, որպէսզի այնտեղից անցնէր Միջագետք, միանալու անգլիական զօրքերին, որպէս դաչնակիցների. հիմա որ անգլիացիք իրենք են եկել կապ ստեղծելու իր հետ, ինչպէ՞ս կարող է ընդդիմանալ, ասում է Հայրապետը:

– Էլ ուրիչ ի՞նչ կարող ենք անել, –ասում է Սոկրատը:

– Պէտք է ասեմ ձեղ նաև, որ ամառը Անդրանիկի մօտից եկած արևմտահայ գաղթականներից քաղաքում մնացած են սակաւաթիւ, ոչ գիւղացիներ, որոնք բանիմաց ու գիտակից մարդիկ են. առիթ եղաւ նրանց կարծիքը լսելու, և ամէնքը վստահ նոյն կարծիքը յայտնեցին, թէ Անդրանիկը անպայման կննջարկւի Տոմսոնի հրամանին, մանաւանդ որ ահագին թւով գաղթականութիւն ծանրացած է իր վրայ, և առիթից պիտի օգուտ հարկաղրելու, որ սովալուկ գաղթականութեան վիճակը բարւոքուի, –ասում է Հայրապետը:

– Ես ուրիչ միջոց չեմ գտնում, –ասում է Սոկրատը:

Սոկրատի խօսքերը խիստ զարմանք են պատճառում Հայրապետին, որի հայեացքից պարզ հասկացւում էր նրա հարցականը, մի՞թէ սա է Սոկրատը, որի անունը չարունակ հոլովւում է վերջին մէկուկէս-երկու ամսւայ ընթացքում թէ զաւառում և թէ քաղաքում, մանաւանդ Մամնայի Թրքական վայրի ջարդից յետոյ:

– Մէկից աւելի միջոցներ կան, Սոկրատ, ասացի:

– Դու ի՞նչ միջոց ես առաջարկում, հարցնում է Սոկրատը:

– Ես նկատի ունեմ հետևեալ միջոցները՝

ա) Մի խումբ կտրիճ տղաներ ճամբել Ղարաղաջի, Ասկերանից ցած, Հէնց որ անգլիացի դինւորականները կը հասնեն այնտեղ, իրրև աւազակներ, կողոպտեն նրանց, մօտի զէնքերն ու թղթերն առնեն և հեռանան: Նրանք կողոպտւած վիճակում Շուչի չեն գնայ, կը վերադառնան Աղդամ, հեռագրելու Տոմսոնին, և մինչև վերջինս միջոցների դիմէ, թևրևս զրահապատ ինքնաչարժերով ղօրք ուղարկելու, բաւական ժամանակ կը տևի, առաւելագոյն արագ չարժւելով իսկ մինչև անգլիական զրահապատներով օժտւած անգլիական մի զունդ հասնի Գօրիս, Անդրանիկն արդէն Շուչում բաղմած կը լինի:

բ) Մեղ յարմար տեղում, Ասկերանից ցած, Հայ-Թրքական սահմանին մօտ կամ Թթու ջրի ճամփին զարան մտած, մի քանի հոգի լաւ նչանառուներ, մի քանի հոգու զնդակահարեն և դիակները կողոպտեն, որպէս թէ հասարակ աւազակներ են գործ կատարողները:

գ) Մի փոքրաթիւ խումբ լաւ նչանառուներ, դիրք բռնեն Ղալա Գեօրդուքեան կոչւած տեղում, և երբ հեռւից կերևան դինւորականների ինքնաչարժերը, համաղարկերով արգելք լինել նրանց առաջանալուն, չսպանել ոչ մէկին, չերևալ: Նրանք հարկադրւած կը լինեն վերադառնալ Շուչի, հեռագրել Տոմսոնին, թէ հնարաւոր չէ առաջ երթալ և դարձեալ մինչև Տոմսոնը դինւորական ուժ հասցնի, Անդրանիկը կը հասնի Շուչի, մանաւանդ երբ Սոկրատի մարտական ուժերը բռնած կը լինեն Քիրսի բարձունքները, ըստ Անդրանիկի կարգադրութեան: Անդրանիկը Շուչի հասնելով, կը լուծւի և Ղարաբաղի հարցը, գէթ ժամանակաւոր կերպով, Թուրքերը մեղ հետ միասին կը սպասեն հարցի վերջնական կարգադրութեան: Ես հակամէտ եմ այս վերջին միջոցին:

– Ձեր կարծիքով, ինչպէ՞ս պիտի խանգարել անգլիացի սպաների Գորիս գնալը, հարցնում է Սոկրատից Հայրապետը:

– Ես արդէն զրկել եմ քաղաքապետին և սպասում եմ պատասխանի, ասաց Սոկրատը. ես զրկել եմ, թէ որոշել եմ և պէտք է զրաւեմ քաղաքը, ուստի, որպէսզի աւելորդ արիւնահեղութիւն չլինի, յայտարարէ Թուրքերին, որ ընդդիմադրութիւն ցոյց չտան և լռելեայն ենթարկւեն:

– Ներկայիս միտք չունի քաղաքը դրաւելու փորձ անել, ասաց Հայրապետը, դա կարող է նոյնիսկ վատ հետևանք ունենալ, կարևորը ղինուորականների Գօրիս գնալը խանգարելն է. այդ մասին պիտի միջոց մտածել:

Հայրապետը խօսքը վերջացնելուն, մէկը ծեծեց դուռը: "Մտիր", չնչուած տրնով ասաց Սոկրատը: Դուռը բացուեց, ներս մտաւ քաղաքապլխի կրտսեր եղբայրը՝ Իլիկօն, և խնդրեց Սոկրատին, որ առանձնանան, իրա հետ խօսելիք ունի, և անցան կից միւս սենեակը:

Կէս ժամից աւելի տևեց Իլիկօյի և Սոկրատի առանձին խօսակցութիւնը. միասին դուրս եկան, Իլիկօն հրաժեշտ տուաւ ու դնաց:

– Վախկոտ մարդ է էս մեր Գերասիմը. նամակ է գրել, որ քաղաքը գրաւելու փորձ չանեմ. դրանով չճշնամացնեմ Թուրքերին և աւելի չծանրանայ դրութիւնը:

– Ճիշտը խոստովանած, ասաց Հայրապետը, քաղաքագլուխը ճիշտ պատասխան է տուել, նոյնն է ասում, ինչ քիչ առաջ ես ասացի: Ներկայիս քաղաքը դրաւելը միտք և օգուտ չունի, կարևորը դրուած հարցի լուծումն է՝ ինչպէս խանգարել անգլիացի սպանների Գօրիս գնալը, մանաւանդ որ այսօր արդէն Անդրանիկը յարձակման է անցել:

– Մտածենք, ասաց Սոկրատը:

– Երկար մտածելով, ուրիչ միջոց չպիտի գտնենք. ինչպէս Հայրապետն ասաց, քաղաքում բոլորը գտել են, որ եթէ սպանները գնան Գօրիս, պիտի խանգարեն, արգիլեն Անդրանիկի յառաջխաղացումը: Միակ միջոցն է, նախ՝ Համաձայն Անդրանիկի հրահանգի, Վարանդայի ուժերը անմիջապէս ճամբել Քիրսի հիւսիսակողմի բարձունքները բռնելու, որ Մուսալմանլարի թուրքերը չարժել չկարողանան, ապա Ղարաքեօթուքում դիրք բռնել և արգիլել սպանների Գօրիս գնալը:

– Ես էլ գտնում են, որ միակ միջոցը դա է, ուրիչ կերպ հնարաւոր չէ, ասում է Հայրապետը:

– Ես էլ նոյն կարծիքին եմ, ասաց Եսային:

– Խօսքը քոնն է, Սոկրատ, ասացի, գործի յաջողութիւնը քեզնից է կախուած:

– Տեսնեմ, մտածեմ, պատասխանեց այնպիսի տոնով, որ ղգացնել էր տալիս, թէ որքան ծանր բեռ է դրուում իր ուսերին:

Հարկաւ, Սոկրատի ուժերից վեր էր նման ծանր պարտականութիւն ստանձնելը, զէյքերի բերումով, սահմանափակ ուժերի տէր մարդ լինելով, դարձել էր հրամանատար Վարանդայի, այն էլ տագնապալի չրջանում: Պարզ էր, որ խուսափում էր որևէ

կտրուկ միջոցի դիմելուց: Ինչ-որ գործի վերաբերեալ, իր հետ եղող դինուորներից մեկը՝ զարադչլաղցի Բախչին, ներս գալով, յայտնեց, թէ մարդիկ սպասում են իրենց. Սոկրատը զուրս գնալով, ասաց, որ չուտով կը վերադառնայ: Առիթից օգտւելով, երեքով խորհրդակցեցինք, ինչ անել մեր վարժապետ Հրամանատարին տեղից չարժելու համար: Անդրանիկի կարգադրութիւնը խիստ կարևոր էր և վճռական նշանակութիւն ունէր յաւաջխաղացումը դիւրացնելու համար: Սոկրատը այլ փորացաւ ունէր երեքիս կարծիքով, ուղում էր Շուչին գրաւել և իրրև յաղթութիւն, Վարանդայի ուժերի մի մասն ուղարկէր դիմաւորելու Անդրանիկին: Պարզ էր, որ փառամոլութիւնամբ էր համակուած: Մամնայի կուին ոչ մի մասնակցութիւն չէր ունեցել, կուի վայրից գործով չատ հեռու գտնւելով և եթէ ներկայ էլ գտնուէր՝ առանձին դեր չպիտի կարողանար կատարել, որովհետև մարտական փորձառութիւնից դուրկ էր, ինչպէս ռուսները կասեն՝ "նեկ իմել բոյէվոլո կռէչչենիա"[93]: Մամնայի կուիւը դեկավարել է Քարինտակ գիւղացի տեղակալ, Արևմտեան (գերմանական) ճակատում կրակների մէջից անցած և բաղում անգամներ մահուան հետ խաղացած Յարութիւն (Արտեմ) Պետրոսեանը, որ իրականին մարտական ուժերի դեկավարն էր Վարանդայի, իսկ Սոկրատը՝ անւանական հրամանատարը և Մամնայի յաղթանակի թողած տպաւորութիւնից օգտւողը, յեղինակութիւն ձեռք բերողը: Երեքիս միահամուռ կարծիքն էր դա, սակայն երեքս էլ մասնաւոր մարդիկ էինք, հարկադրելու հնարաւորութիւնը, աւելի ճիշտ՝ իրաւունքը չունէինք:

– Մենք այստեղ երկար մնալ չենք կարող, ասաց Հայրապետը. հէնց այսօր էլ պիտի վերադառնանք քաղաք. հիմա որ կը գայ, մի փորձ էլ անենք, խօսենք, եթէ չկարողանանք համոզել, թողնենք, հեռանանք:

Շատ չանցած, եկաւ Սոկրատը, և Հայրապետը առաջինը խօսելով, ասաց. "Մենք այսօր պիտի վերադառնանք քաղաք, ուստի կուզենայինք բոլորին հետաքրքրող հարցի պատասխանը պարզ ու որոշ տանել մեզ հետ, ուստի նորից եմ կրկնում, պէտք է անպայման խանգարել սպանների Գօրիս գնալը, որպէսզի Անդրանիկը կարողանայ իրագործել իր ծրագիրը, զրաւի Հաջի Սամլուն, որը ցցւած է Զանգեզուր-Ղարաբաղի մէջտեղը, բաժանելով երկու մասի մեր երկիրը և ջլատելով մեր ուժերը: Այսօր փաստօրէն մենք զերի ենք Հաջի Սամլուի քրդերին: Շուչուց ապահով գնալ-գալ հնարաւոր չէ: Առիթը չպիտի փախցնենք, քանի որ Անդրանիկը սկսել է գործը, վերացնելու այն մեծ արգելքը, որի պատճառով ժողովուրդը իրարուց կտրւած, բաժան է ապրում. պիտի հնարաւոր աջակցութիւնը չխնայենք Անդրանիկին, որպէսզի մեր երկիրն ամրողջանայ:

---

[93] Մարտական մկրտութիւն չի ունեցել. (ռուս.): (Խմբ.)

– Խօսքը քոնն է, Սոկրատ, մեր երեքի կարծիքը, տեսակէտը պարզ է. պէտք է խանգարել անգլիացիների Գօրիս գնալը. նրանք որ հասնեն, պիտի Անդրանիկին հրամայեն՝ կանգ առնել, և նա, որպէս փոքր դաշնակից, պիտի ենթարկուի:

– Ես ասացի, պատասխանեց Սոկրատը, մտածեմ, գուցէ յաջողուի մեր ուժերը հանենք Քիրսի բարձունքները:

– Դա գործի մէկ մասն է, որ չպիտի մտածել, այլ պէտք է անմիջապէս կարգադրել, չէ՞ որ Անդրանիկը այսօր արդէն սկսել է յարձակումը, և դեռ ուշ չէ, անմիջապէս պիտի զինուորներին ճամբել, իսկ անկախ դրանից, անգլիացիների Գօրիս գնալը պիտի խանգարել, ինչ գնով լինի, ասացի:

– Լաւ, տեսնենք, կը կարողանա՞նք այսօր ճամբել մէկ մասին, մինչև բոլոր գիւղերից էլ հասնեն, իսկ անգլիացիների վերաբերեալ պիտի իսկապէս մտածել, ասաց Սոկրատը, որի խօսակցութեան տոնը թոյլ էր և վճռականութիւնից զուրկ:

Հայրապետն ու Եսային վեր կացան՝ դուրս ելնելու, Սոկրատն ասաց՝ "ինչու՞ էք չտապում. արդէն ճաշելու ժամն է, մի կտոր հաց կուտենք, յետոյ կերթաք":

– Քաղցած չենք, ասացին Հայրապետն ու Եսային, զրնթէ միաժամանակ:

– Մեղ քաղաքում սրտատրոփ սպասում են, ասաց Հայրապետը, և մենք յանձն ենք առել, որքան կարելի է չուտ վերադառնալ:

Հայրապետն ու Եսային իջան բակը, որ ձի նստեն, գնան, ես մի քանի րոպէ ներսում մնալով, Սոկրատին ասացի՝ "լաւ չեզաւ. անորոշ պատասխանը չի պատչաճում քո անւան, իբր Վարանդայի ուժերի հրամանատարի": Դուրս եկայ բակը, ծառան ձիերը դուրս էր բերում. Հայրապետը մի կողմ տանելով, կամացուկ ասաց.

– Դու մնում ես, իհարկէ, դարձեալ փորձիր, թերևս այդ ապուշը համաձայնի գործի անցնել:

Հայրապետն ու Եսային արդէն ուզում էին հեծնել ձիերին, Սոկրատը դուրս գալով բակը, ասաց. "Լաւ չէք անում, դեռ կէսօր է, քաղաքը հեռու չէ, մէկ ու կէս ժամւայ ճամբայ է. մնացէք, ճաշենք, յետոյ գնացէք":

– Ձենք կարող մնալ, ասաց Հայրապետը, նստեց ձիուն, նրան հետևեց Եսային, և, հրաժեշտ տալով, արագ մեկնեցին:

Ներս գնացինք երկուսս, լուռ նստած ենք, գլուխներս կախ, խորասուզուած մտքերի մէջ: Աչքի տակով նայում եմ Սոկրատին, չատ խեղճացած վիճակ ունէր: Անչուշտ զգում էր, որ հռչակած իր անունին համապատասխան կարողութիւնը չունէր, սակայն և դժւար էր տեղի տալը:

– Լաւ չեղաւ, իղուր չտապեցին, զնացին, կը մնային, կը ճաչէին, կը հանգստանային, կը խորհրդակցէինք, դուցէ աւելի լաւ միջոց գտնէինք, ասաց Սոկրատը:

– Լաւ չեղաւ, որովհետև անորոշ պատասխանով զնացին: Եթէ վստահ լինէին, որ մէկ-երկու ժամ մնալով, վճռական ու դրական պատասխան կը ստանային, նրանք մինչև վաղն էլ կը մնային, ասացի:

– Քաղաքագլուխն էլ միւս կողմից խանգարեց, չեմ իմանում, ինչու է հակառակւում և չի ուզում, որ քաղաքը գրաւեմ: Արդէն տաճկական զօրքերը հեռանում են, մեր հետախոյզները տեսել են չատ մօտիկից, խճուղու վրայ, փուրգոնների ահագին չարան, լիքը զինուորներով, դէպի Աղդամ զնալիս, առանց տաճիկների, տեղացի թուրքերը չեն համարձակւի դիմադրութիւն ցոյց տալ:

– Գիտե՞ս ինչ, Սոկրատ, Շուչու թուրքերի մասին քո ունեցած կարծիքը սխալ է բոլորովին: Նրանք դիմադրութիւն ցոյց կը տան և չատ ուժեղ կերպով: Ընդունենք, որ դու խաղաղ կերպով մտել ես քաղաք վերևի կողմից և տիրել ես հայկական մասին, քո իշխանութիւնը թուրքերի վրայ տարածել չես կարող և պիտի կռիւ սկսւի: Ճիշտ է, մեր դիրքերը իշխում են նրանց վրայ, քանի որ քաղաքի ցածր մասում է թրքական թաղը, սակայն նրանք չատ լաւ են զինուած, ահագին քանակութեամբ ռազմամթերք ունեն, մինչդեռ մեր ունեցած պաչարը, զինուորների վրայի փամփչտակալներում եղածն է: Այո, կը դիմադրեն և չատ ուժեղ կերպով: Անգամ եթէ թուրքերն էլ ենթարկւեն քո իշխանութեան և անգլիացի սպաները առանց արգելքի հասնեն Գօրիս, կը կանգնեցնեն Անդրանիկի յառաջխաղացումը, միանգամայն արժէք չպիտի ունենայ քաղաքի գրաւումը: Համոզւած կարելի է ասել, որ Անդրանիկի յարձակումը ծրագրւած է լրջօրէն, մանաւանդ, որ գիտենք, Անդրանիկի հետ աչխատում են որակով բարձր սպաներ: Ինչպէս Հայրապետը ճիշտ նկատեց, առիթը չպիտի փախցնենք, օժանդակենք Անդրանիկին ամէն կերպ, որ իրագործւի յղացւած ծրագիրը:

Ճաչին և ճաչից յետոյ մինչև մութն ընկնելը խօսեցինք, աւելի ճիշտ՝ խօսեցի, որովհետև Սոկրատը լեզուն ծամծմելով նոյն անորոշ, անբովանդակ բանն էր կրկնում: Հարկաւ, իմ ասածներն էլ կրկնութիւններ էին նոյն իմաստով, միայն տարբեր խմբագրութիւններով, և ես աւելի քան համոզւեցի, որ մեր այս "Հրամանատարի" մէջ փառամոլութիւնն է խօսում և միաժամանակ գործից խոյս տալը: Զանախչիում Սոկրատի մօտ մնալը բոլորովին անօգուտ համարելով, միւս օրը, նոյեմբերի 17-ին մեկնեցի դէպի Խաչէն:

Ճամբին չարունակ մտաղրաղ վիճակում էի, մեր ունեցած անյաջողութեամբ, որ չկարողացանք համոզել Սոկրատին: Պարզ է, Սոկրատը դէպքերի բերումով դարձել էր Հրամանատար

Վարանդայի. եթէ Դրնավաղի զիւղացիական համագումարում չնչուած ու յետոյ ուրիչ մէկը գտնուած լինէր, Սոկրատը հրամանատար չէր ընտրի. կիսագրագէտ գիւղացիների մէջ զիւղական վարժապետ Սոկրատը, բնականաբար, աչքի էր ընկնում իւր արտասանած մի քանի խրախուսիչ խօքերով, ուստի և ընտրուում է իբրև հրամանատար Վարանդայի ուժերի: Հայ-Թրքական ընդհարումների ժամանակ Վարանդան բաժանուած էր եղել երկու չրջանի, առաջին, արևելեան մասի հրամանատարն էր Մածոն Խչէօն իսկ երկրորդը, արևմտեան մասինը, Սոկրատի մեծ եղբայրը՝ Նիկ. Մելիք-Շահնազարեանը (Ասլան), կախուած 1908 թ. Մէրվ քաղաքում:

1917 թ. դեկտեմբերին, երբ կարճ ժամանակով Բագու էի, Կ. Կոմիտէում հարց էի տրել, որ ղարաբաղցի մի քանի ընկերներ գան, աչխատեն Ղարաբաղում, որտեղ նրանց կարիքը զգացուում է՝ Մածոն Խչէօն, Արամայիս Տէր Դանիէլեանը, Հայկ Թորոսեանը, Պաւլի բէկը (Դումանի կրտսեր եղբայրը), Իչխան Միրզաբէկեանը: Աբրահամ Գիւլխանդանեանը առարկում է, թէ տեղում բաւականաչափ ընկերներ ունենք, կարող ենք աչխատել առանց դրսից մարդիկ
հրաւիրելու: Ես պատճառաբանեցի, որ զեթ երկու-երեք ընկերներ պէտք է մեզ հետ լինեն, որոնք իրենց հեղինակութեամբ չատ օգտակար կը լինեն, որպէս ընդհանուր զեկավարներ: Աբրահամը վրայ բերեց, ընդհատելով խօսքս, թէ՝ "Հայ-Թրքական ընդհարումներին ես քո տարիքն ունէի Գանձակում և զեկավարում էի չրջանի աչխատանքները. դու էլ, միւս ընկերներն էլ, կարող էք նոյնպէս զեկավարել գործերը, առանց դրսի ուժերի":

– Եթէ նորմալ պայմաններում գտնուէինք, թերևս նման հարց չյարուցէինք, սակայն պայմանները քանի գնում, վատանում են և ով գիտէ, թէ վաղը ինչպիսի դրութիւն կը ստեղծուի, պէտք է ունենանք մեր մէջ անցեալ ունեցող մէկ հեղինակաւոր ընկեր, որը կը կարողանայ չատ օգտակար լինել իբրև զեկավար և թոյլ չտալ, որ տարաձայնութիւն առաջանայ չարքերում: Այդ տեսակէտով մօտենալով խնդրին, Մածոն Խչէոյի ներկայութիւնը Ղարաբաղում խիստ անհրաժեչտ եմ համարում:

Մեր վոխատացութեանը վերջ տուաւ Պապաչան, թէ՝ "պէտք չկայ երկար վիճելու, կը խօսենք ընկերների հետ, որոնք ի վիճակի են անմիջապէս անցնելու Ղարաբաղ: Հարկաւ, եթէ որևէ մէկը ի վիճակի չլինի թողնելու Բագուն կամ այն վայրը, որտեղ աչխատում է, հարկադրել չենք կարող: Խչէոն քաղաքից բացակայ է, վաղը, միւս օրը կը վերադառնայ, ինքդ էլ կարող ես խօսել ընկերների հետ, որպէսզի համաձայնի. անհրաժեչտ ծախսերը մենք կը հոգանք:"

Յաջորդ օրը փողոցում (Մալականակի) յանկարծ ղէմառղէմ ելանք Մածոն Խէչօն ու ես: Տասը տարի էր անցել այն օրւանից, հայ-թրքական ընդհարումները դադարելուց յետոյ, 1907 թ., երբ Խէչօն հեռացաւ Ղարաբաղից, և առաջին անգամն էր, որ հանդիպում էինք: Հէնց տեսայ Խէչօյին իւր պարթև հասակով, ժպիտը դէմքին, նետւեցի գիրկը, ջերմօրէն ողջագուրւելով հետը: Իր հարցերին, թէ երբ եմ եկել, որտեղից, որքան ժամանակ պիտի մնամ Բաղւում, պատասխանելուց յետոյ, ասացի, որ ուզում եմ իրա հետ խօսել մէկ խնդրի շուրջ: Մտանք մի կամէ, Խէչօն պատւիրեց երկու զաւաթ մածուն, ըստ իր հնաւանդ սովորութեան: Եւ չատ մածուն ուտելու համար է, որ Մածոն մականունն է ժառանգել:

Պատմեցի իրեն Աբրահամի հետ ունեցած փոխատացութիւնը և ասացի, որ սոսկ իր ներկայութիւնը կարող էր չատ բարերար աղդեցութիւն ունենալ հէնց ընկերների փոխյարաբերութիւնների վրայ: Ինչպէս նկատել եմ իր տեղում, յեղափոխութեան հետևանքով չխօսկան, մէկ նախադասութիւն արտասանելու կարողութիւնից զուրկ մարդիկ անգամ զարձել են ճառախօսներ, իսկ յեղափոխութիւնից առաջ եղած խօսկանները չատ աւելի համարձակ և ոմանք էլ ամբարտաւան, չնայած իրենց համեստ պատրաստութեան տէր լինելուն: Մեր մէջ, որ ամէնից պատրաստւած ընկերը Հայրապետ Մուսայէլեանն էր, որին իր ժամանակին Շուշում գնահատում էին այնպիսի բարձրօրակ մտաւորականներ ,ինչպէս Նիկոլ Աղբալեանը, Իսահակ Տէր Ղազարեանը և ուրիշներ, գտնւեցին անհատներ, որոնք իրենց միջնակարգի պատրաստութեամբ ոտնձգութիւններ և ինտրիգներ արին, թէև պարտւեցին, չնորհիւ ընդհանուր ընկերների ցոյց տւած անվերապահ յարգանքի, հանդէպ Հայրապետի: Սակայն կարևորը ներկայ դէպքում այն է, որ եթէ Մածոն Խէչօն Ղարաբաղում լինէր, բնականաբար նա չէ թէ միայն Վարանդայի արժանաւոր ղեկավարը կը լինէր, այլ և մեծապէս կաղդէր միւս չրջանների հրամանատարների վրայ, որոնց կը չաղկապէր իրարու հետ, որպէսզի իւրաքանչիւրը իւ՛ր ուղածի պէս աչխատէր: Անչուչտ, եթէ Խէչօն Ղարաբաղում գտնւէր, թէ Անդրանիկի ցանկութիւնը կատարած կը լինէր և թէ արդեօք կը ստեղծէր անգլիացի սպաների Գօրիս գնալուն:

Խէչօյի հետ հանգամանօրէն խօսեցի, պատմեցի մեր կատարած բոլոր աչխատանքների մասին, և նա համաձայնեց աւարտել իրեն հետ կապւած աչխատանքները, ապա անցնել Ղարաբաղ: Ես վերադարձայ, պատմեցի ընկերներին Խէչօյի հետ ունեցած տեսակցութեան մասին, ընկերները գոհ մնացին, որովհետև այդ առթիւ մեր մէջ մտքերի փոխանակութիւն էր տեղի ունեցած, և բոլորս միակարծիք էինք եղած: Մեր ցանկութիւնը չկատարւեց. 1917 թ. դեկտեմբերի վերջից մեր կապը կտրւեց

Բագրից, Շուշի-Ելալա խճուղին միանգամայն վտանգած լինելով թրքական աւազակախմբերի կողմից, որոնցով ողողած էր Ղարաբաղի տափաստանը: Այո, Խէչոյի պէս մարդիկ լինէին Ղարաբաղում, ժամանակին մեր բաղմից կատարած դիմումները անհետևանք մնացած չլինէին, ռազմամթերք կենտրոնացած լինէր Ղարաբաղում, Բագւի կռիւների ընթացքին Ղարաբաղի տասնեակ հազարաւոր ղինւած մարտական ուժերը թերևս որոշ ակտիւ ղեր էլ կատարէին: Հիմա Վարանդայում հեղինակութիւն է դարձել մի Սոկրատ, վայելելով տարւած յաղթանակի (Մամնայի) պտուղը:

Այսպէս, անցեալը վերյիշելով, մտքերի մէջ խորասուզւած, հասայ Մաղէ կամուրջը, Կարկառ գետի ձախ ճիւղի վրայ. կամրջի մօտ է գտնւում Ամարէկեանների ամառանոցը և գետի վրայ կառուցւած փրանսիական ձևի մեծ ջրաղացը: Այնտեղ հանդիպեցի Կրկժան գիւղի մեր մարտիկներից մի քանիսին և ուրիշ իրենց համագիւղացիների, որոնք ցորեն էին բերել աղալու: Միտք յղացայ՝ մի նամակ գրել Սոկրատին, կրկին խորհուրդ տալ, որ կատարէ Անդրանիկի հրահանգը և Հայրապետի առաջարկը, որը քաղաքի ընկերների միահամուռ տեսակէտն է : Դեռ կէսօր չէր եղած, նամակը գրեցի և կրկժանցի մարտիկներից մէկի միջոցով ուղարկեցի Սոկրատին: Խնդրեցի, որ գործի անցնելուն պէս երկտողով յայտնի մեղ Դաչբուլաղ: Գրեցի, թէև յոյս չունէի, թէ մի բան կանէր:

Գիւղացիներին հրաժեշտ տալով, չարունակեցի ճամբաս, Խանքենտի, Խնածախ, Բալլուջա, Մէհդիչէն գիւղերից անցնելով հասայ Դաչբուլաղ: Ջրարերդից այնտեղ էր եկել նաև Բագրատ Ղազանչեանը: Ասկերանի ճակատում, տաճիկների դէմ մղած կռւում, ծանրօրէն վիրաւորւել էր Ալէքսան դային, որին փոխարինել էր իր երկու օգնականներից Աղասի Վերդևանը: Տեղեկացայ, որ Ալէքսան դային պառկած էր Խանձք գիւղում և նկատեցի, որ Բագրատի ու Աղասու միջև յարաբերութիւնը բաւական պաղ էր, խռովածի պէս էին: Ընկերների այդպիսի վերաբերմունքը իրարու հանդէպ, վատ տպաւորութիւն թողեց վրաս, ուստի, առանց յետաձգելու, հարցրի պատճառը:

Բագրատը դժգոհ էր Աղասուց, որ Մարտակերտի վրայ երկրորդ անգամ տաճիկների գործած յարձակման ժամանակ լուր տւած է եղել Աղասուն՝ փութալու և հարւածելու տաճկական ձախ թևին, բայց յապաղել է, չուտ չի ուղարկել մարտական ուժերին, և դրանից օգտւել է թշնամին: Աղասին էլ բացատրութիւն էր տալիս, թէ մի քիչ սուրհանդակն է ուշացել ու հաղիւ հնարաւոր է եղել մարտական ուժերի մէկ մասը՝ ձիաւորներ, ի մի խմբել և ուղարկել Մարտակերտի ճակատը՝ օգնութեան:

– Ոչ քննութեան ժամանակ է, ոչ էլ զատաստանի, ասացի, աւելի լաւ է մոռացութեան տանք տեղի ունեցած թիւրիմացութիւնը և մտածենք, մտքերի փոխանակութիւն կատարենք հետագայ անելիքների չուրջ և որոշենք մեր
անելիքները: Երկուսդ էլ ղէնքի հին ընկերներ էք, ձեր միջև եղած պաղութիւնը լաւ տպաւորութիւն չի թողնի ժողովրդի, մանաւանդ մարտիկների վրայ: Երկսիդ էլ լսեցի, կրկնում եմ, ինչպէս ասացի, վերացած համարենք՝ ինչ որ եղել է, առաջիկային ջանանք խուսափել թիւրիմացութիւններից, ուստի նախ ձեռք-ձեռքի տուէք, յետոյ լսէք իմ զեկուցումը, որ տեղեակ լինէք երկրի ներկայ դրութեանը: Ընկերները իրարու ձեռք սեղմեցին և Հէնց այդ ժամանակ ներս մտաւ Դալի Մահրասան, որ Ալէքսան դայու միւս օգնականն էր: Տէր Հայրը տեսնելով ընկերների ձեռք սեղմելը, մտաւ իր քահանայական ղերի մէջ, խաչակնքեց և օրհնութեան իւր խօսքն ասաց:

Այնուհետև պատմեցի ընկերներին տաճիկների՝ Շուչին զրաւելուց ի վեր տեղի ունեցած անցուդարձի մասին ամենայն մանրամասնութեամբ, Անդրանիկի սկսած յարձակման մասին Հաջի Սամլուի վրայ, նրա տւած Հրահանգը Սոկրատին՝ բռնելու Փիրսի բարձունքները և Սոկրատի անչարժ մնալը, Բագրից եկող անգլիական զինուորականների և նրանց նպատակի մասին, Շուչու բոլոր հոսանքների միակարծիք լինելը՝ խանգարելու զինուորականների՝ Գօրիս գնալը, այդ նպատակով ընկ. ընկ. Հայրապետի և Եսայու Զանախչի զալը, այնտեղ ունեցած խորհրդակցութիւնը Սոկրատի հետ, վերջնիս վարանոտութիւնն ու անվճռականութիւնը, տարւած լինելը իւր յղացած՝ Շուչին զրաւելու անմիտ ծրագրով և այլն:

Ընկերները լսելով իմ զեկուցումը, գոհունակութեամբ արտայայտեցին, նախ՝ որ քաղաքի կուսակցական ընկերները յուսալքւած չեն, վերակազմւել, զինավար մարմին են ընտրել և յարաբերութեամ մէջ մտել միւս հոսանքների հետ, որոնք զարձեալ առաջւայ պէս համերաշխ են և համակարծիք ընդհանուր աղգային խնդիրներում ոչ միայն խօսքով, այլև գործնականապէս: Ընկերներին չատ զայրացրեց Սոկրատի անճարակութիւնը: Մանաւորապէս Դալի Մահրասան և Աղասին լաւ ճանաչելով Սոկրատի հանգուցեալ եղբօրը՝ Նիկողայոսին (Ասլանին), որ հայ-թրքական ընդհարումներին Վարանդայի մէկ մասի ինքնապաշտպանական խմբերի հրամանատարն էր, արտայայտեցին, որ "եթէ իր եղբօր ունեցած կարողութեան զէմ քաւորդն ունենար, մի բան կանէր. ինչպէս երևում է, վախկոտ մէկն է": "Զարմանալի մարդիկ են Վարանդայի մեր գիւղացիները, ի՞նչ մարդ է, որ դրան ընտրել են հրամանատար", վրայ բերեց Բագրատը:

– Կարծել են, թէ եղբօրը պէս ինքն էլ ընդունակ և կարող կը լինի, ասաց Դալի Մահրասան, սխալը տեղի է ունեցել, դժբաղատաբար, չատ վատ ժամանակ:

–Ճիչտ է ասում Տէր Հայրը, ասացի, գրեթէ անիշխանութեան էր մատնուած չրջանը, գործիչներից ոչ մէկը ներկայ չի եղել Դրնավաղի ժողովին, որը պատահական մարդկանց ժողով կարելի է համարել, ժողովրդի կողմից ընտրուած, լիազօր մարդիկ չեն եղել, ինչպէս իրենց խելքը կտրել, այնպէս էլ վարուել են: Սոկրատն էլ պատահարար այնտեղ է գտնուել և միակ զրագէտ մարդը, որին յարմար գտնելով ընտրել են հրամանատար: Այժմ այդ սխալը ուղղելու հնարաւորութիւնը չկայ:

Որոչուեց, որ նամակ գրւի Շուչի, ընկերներին, նոր տեղեկութիւններ ստանալու. ամփոփ նամակ գրուեցի Հայրապետին, որ Սոկրատից դժգոհ հեռացայ, հասայ Դաչբուլաղ, Դալի Մահրասայի, Բաղրատի և Աղասու հետ միասին սպասում ենք քաղաքից նոր տեղեկութիւնների: Գրեցի նաև, որ ճամբից նամակ եմ գրել Սոկրատին, կրկին յիշեցրել Անդրանիկի հրահանգի և քաղաքի ընկերների արած առաջարկի մասին, յորդորել, որ վճռականապէս գործի անցնի, բայց յոյս չունեմ: Նամակն ուղարկեցինք երիտասարդներից մէկի միջոցով, որը սեպհական ձի ունէր, պատուիրեցինք, որ ձին Թողնի Ղայբալիչէնի քահանայի մօտ և քաղաք մտնի դէպի հիւսիս նայող բերդի աւերակ բուրգերի կողմից, որոնք հայկական վերին թաղի վերջաւորութեանն են գտնւում:

Սուրհանդակը մեկնեց ամսու 18-ին, վաղ առաւօտեան, որ մեր հաչուով պիտի վերադառնար ամէնաուշը երեկոյեան 5-ին, ուստի Բազրատը որոշեց սպասել սուրհանդակի վերադարձին և յետոյ գնալ իւր չրջանը:

Առաւօտեան Դալի Մահրասայի մօտ ենք:

– Ափսոս, որ Անդրանիկը աչնան սկզբին չի սկսել արչաւանքը, ասաց Դալի Մահրասան, մենք կը կարողանայինք Մէյդանի կողմից բարձրանալ Հաջի Սամլու, յարձակում գործել և դիւրացնել Անդրանիկի ծրագրի իրագործումը: Հաջի Սամլուն է մեր մէջքը կոտրողը, չլինէր , զոյութիւն չունենար, մեր թիկունքը ամուր կը լինէր կռիւների ժամանակ: Մէյդանի կողմից մինչև որոշ տեղ խիստ կուսական անտառ է, որ բռնում է մինչև ապառաժուտ լեռնաչղթայի լանջերը, իսկ յետոյ սկսւում է բոլորովին լերկ մասը, սեպաձև կաս ընկած ժայռեր: Անտառապատ մասը այնքան էլ դժւար չէ անցնելը, ոտքդ բռնում է գետինը, իսկ լերկ մասը ունի միայն քարայծի ճամբայ, որ միմիայն ոտով կարելի է բարձրանալ և չատ զգուշութեամբ, չլլորւելու համար անդունդը:

– Էդ չանորդի Սոկրատը Անդրանիկին չի ճանաչում, չգիտէ, թէ ինչ մարդ է. տայ Աստուած, որ Անդրանիկը ականջ չկախի

անպլիացիներին, - ասում է Բագրատը, - չարունակի յարձակումը, տեղահան անի Հաջի Սամլուի քրդերին, հասնի Շուչի և Սոկրատ կոչեցեալին կանչի բացատրութեան. այն ժամանակ կը հասկանայ, թէ ինչ մարդ է Անդրանիկը, որի հրահանգը չի կատարել. . .

- Այո, այո, տայ Աստուած, կատարուի բոլորիս ցանկութիւնը, ասաց Դալի Մահրասան. չէ որ դեռ ամռանն էինք սպասում Անդրանիկին:

Քանի որ դեռ բաւական ժամանակ կար մինչև սուրհանդակի վերադառնալը, ես անցայ մեր գիւղը, Խանձք, որտեղ պառկած էր Ալէքսան դային, որին ուղում էի այցելել և պատմել անցուդարձի մասին: Ես պատմեցի նոյնը, ինչ պատմել էի Դալի Մահրասային, Բագրատին և Աղասուն: Ալէքսան դային Ասկերանի ճակատում երկու վէրք էր ստացել, մէկը ձախ կողքից, առանց ներքին օրգանը վնասելու, և մէկը աջ ոտից, որը աւելի էր նեղութիւն պատճառել, որովհետև առաջինը եռագծեան հրացանի սրածայր գնդակի վէրք էր եղած, իսկ երկրորդը պայթող, դում-դում կոչուած գնդակի, որը լայն վէրք էր պատճառել: Սակայն վատը այն էր, որ ոչ փելդշէր կար այդ չրջանում, ոչ էլ դեղատուն, իսկ բժշկի մասին աւելորդ է նոյնիսկ խօսելը: Հօրեղբօրս մօտ մի քիչ եօդ է եղել, այն էլ սպառուել է մի քանի օրում, ուստի բժշկութիւնը կատարել է գիւղի դալլաքը (վարսավիր), անգրագէտ, սովորական գիւղացի, իր հասկացած ձևով, և այդ պատճառով ոտքի բուժումը դանդաղ ու երկար էր:

- Մարդ ուղարկեցինք Խանքենդի՝ եօդ բերելու, բայց դատարկաձեռն եկաւ, թէ եօդ չկայ, ուստի դալլաքի "բժշկութեան" յուսով մնացի, ասաց Ալէքսան դային, կողքիս վէրքը սպիանալու վրայ է, բայց ես անտէր ոտիս վէրքն է ուշ լաւանում: Դալլաքի ասելով, դեռ մի ամիս էլ քաշելիք ունեմ: Վնաս չունի, չատը գնացել քիչն է մնացել: Շատ վատ եղաւ, որ Վարանդայի հրամանատար դարձաւ Սոկրատը: Քո պատմածից երևում է, որ վախկոտ և անվճռական մարդ է, նա չպէտք է յանձն առնէր հրամանատարութիւնը. ինչպէս լսել եմ, նրա մօտ մի չատ քաջ կուռող սպայ կայ, որ Մամնայում ջարդել է տահիկներին և Սոկրատի անունն է բարձրացել: Նա եթէ խելօք մարդ լինէր, հրամանատարութիւնը կը տար այդ սպային, հետու կը կենար և պատասխանատուութիւնից կաղատուէր: Եթէ Անդրանիկի ձեռքն ընկնի, չի աղատուի, համոզուած եղիր, որ կը դնդակահարուի: Կրակ ընկնի Բագուն, որ քաչում, տանում է մեր երիտասարդ ուժերին, և գաւառը մնում է Սոկրատի պէս մարդկանց: Վարանդայի չրջանից լաւ ուժեր կան Բագուում և անդրկովկասեան երկրներում. եթէ աչքի ընկած մի քանիսը Վարանդա լինէին, Սոկրատը երբէք չէր երևայ ասպարէզում:

- Բանն էլ հէնց դրանում է, Ալէքսան դայի: Դեռ անցեալ տարի ամառը Կենտրոնական Կոմիտէն նամակներ է գրել Բիւրոյին, Ռոստոմին և Ղարաբաղում դտնւած ուրիչ ընկերների, որ անհրաժեշտ է ինքնապաչտպանութեան մասին մտածել,

ռադմամբներ կենտրոնացնել և անցնալ ունեցող, փորձած մի քանի ընկերներ ուղարկել Ղարաբաղում աշխատելու, բայց մեր բոլոր դիմումներին ընծայը չտուեց, և երբ թշնամին կանգնեց մեր չեմին, պիտի տեղում գտնուած մարդիկ զործի զլուխ կանչէին, և այդ մարկանցից մէկը Սոկրատն էր: Մենք հիմա նրան փոխարինել մէկ ուրիշով չենք կարող, որովհետև դեկավար իրաւասու ադդային մարմին չունենք, պիտի ստեղծւի, և այն ժամանակ խօսք կարող է լինել նոր հրամանատար նչանակելու մասին:

Վեր կացայ՝ հրաժեչտ տալու և վերադառնալու Դաչբուլաղ, Ալէքսան դային պատուիրեց, որ սուրհանդակի բերած տեղեկութիւնները յայտնենք իրենց: Խոստացայ, եթէ սուրհանդակը երեկոյեան վերադառնայ, առաւօտեան անպայման տեղեակ դարձնեմ իրազարձութիւնեանը:

Վերադարձայ Դաչբուլաղ, ու թէև արդէն մութն ընկել էր, բայց դեռ սուրհանդակը չէր վերադարձել քաղաքից: Դալի Մահրաապայի մօտ չորս հոդով նստած, ժամառժամ սպասում էինք սուրհանդակին: Սպասումի ժամերը, ինչպէս ամէն մարդու, այնպէս էլ մեզ համար չատ երկար էին թւում: Սուրհանդակը վերադարձաւ չատ ուշ և տուաւ Հայրապետի զրած ամփոփ նամակը: Հայրապետը յայտնում է, որ Բաղից գեներալ Տոմսոնի յանձնարարութեամբ երկու դիւանագէտներ են եկել Շուշի, կէսօրւայ մօտ, մէկը անգլիացի է, կապիտան Գոլդսմիտ, միւսը ֆրանսիացի կապիտան Կասթէլը, որոնք վազը թուրք Արտլթաղլրէկ Հասանբէկովի ուղեկցութեամբ պիտի մեկնեն Գօրիս: Բոլոր հոսանքների ներկայացուցիչները, ժողով դումարելով, մտքերի փոխանակութիւն ունեցան և անհրաժեչտ զտան, որ անգլիացիներին որպէս ուղեկցող մէկ հայ էլ հետերնին լինի: Այդ առթիւ խօսեց քաղաքագլխի հետ, որ յարմար կը լինի, եթէ ինքը խօսի դիւանագէտների հետ, իբրև դիւրութիւն տալու նպատակով, եւրոպական լեզու դիտեցող մէկ հայ էլ դնա հետերնին, մանաւանդ որ Արտլթաղլրէկը միայն ռուսերէն դիտէ, օգտակար լինել չի կարող: Մեր ցանկութիւնն է, որ գնացողը մեր ընկերներից Դոքտ. Արտաչէս Գանջեցեանը լինի, Ժընեվի համալսարանից վկայած, դիտէ ֆրանսերէն և գերմաներէն: Մեր ընկերոջ դնալու նպատակն էլ այն է, որ Անդրանիկին պատմի մեր դրութիւնը, որում գտնւում էինք տաճիկների մուտք զործելուց ի վեր և որ ժողովուրդը միչտ զրկարաց սպասել է իրեն և որ իր հրահանգի մասին, ֆիրսի բարձունքը բռնելու, քաղաքը կտրած լինելով դաւաոից, ուշ ենք իմացել և, բացի այդ, քաղաքում ադատ բանտարկեալի վիճակում գտնուղ զործիչները ի վիճակի չեն եղած օգտակար լինելու: Քաղաքագլուխը համաձայնեց, դիմեց դիւանագէտներին, որոնք սիրով ընդունեցին և նոյն իսկ Արտլթաղլրէկին էլ գոհունակութիւն յայտնեց, որովհետև ոչ անգլերէն և ոչ էլ ֆրանսերէն դիտէր, մատնած էր դժւար

կացութեան: Դոքտ. Արտաշէսը ներկայ գտնելով Անդրանիկի և երկու դիւանագէտների տեսակցութեանն ու խօսակցութեանը, կը դայ, կը պատմի տեսածն ու լսածը և ինչ որ պիտի կատարուի: Մենք, յամենայն դէպս, լաւ բան չենք սպասում, նոյն կարծիքն ունենք, որ Անդրանիկը տեղի է տալու:

Նամակը ընկերների վրայ ծանր աղդեց, ինչպէս պարզ նկատելի էր նրանց դէմքի արտայայտութիւնից: Մի պահ լուռ էին, ապա Բագրատը խախտեց լռութիւնը:

-Ջար բախտը հալածում է մեր ժողովրդին. անյաջողութիւնը անյաջողութեանն է յաջորդում, վերջ չունի, ասում է Բագրատը: Ես լաւ բան չեմ սպասում:

– Ես էլ չեմ սպասում. վրայ բերեց Դալի Մահրասան: Քաղաքի ընկերները ճիշտ են ասում. Անդրանիկը հարկադրուած պիտի տեղի տայ, որպէս փոքր դաչնակից, չպիտի հակառակ դիրք ընդունի մեծ դաչնակիցների առաջարկ- հրահանգին պիտի ենթարկուի, ասում է Դալի Մահրասան: Այնուամենայնիւ, պիտի սպասենք տեսակցութեան արդիւնքին, տեսնենք, ինչ է նրանց նպատակը:

– Կասկածից դուրս է, որ թուրքերի դիմումի հետևանքով է Տոմսոնը երկու դիւանագէտների ուղարկել Անդրանիկի առաջխաղացումը դադարեցնելու: Անդրանիկը թուրքերի աչքի փուշն է դարձել և քանիցս, անցեալներում, հայ-թրքական կոմիտէի նիստերին, թուրք ներկայացուցիչները խօսք են ունեցել Անդրանիկի մասին Աղուդի, Վաղուդի թրքական գիւղերը աւերելուց յետոյ, թէ երկմիտ են և վախենում են, որ Անդրանիկը հանգիստ չի մնայ, կը վրդովէ մեր երկրի խաղաղ կեանքը: Անգլիացիները Պարսկաստանից են անցել Բագու և շատ հաւանական է՝ թուրքերի կողմից եղած դիմումի համաձայն, ինչպէս կոահել են քաղաքի ընկերները. և եթէ եկել են առանց որևէ դիմում-հիմք ունենալու, ինքնուրոյնաբար, դա առանձին նշանակութիւն չունի, նրանց հետապնդած նպատակը մնում է անփոփոխ: Այո, քաղաքի ընկերները ճիշտ են գատում, անգլիացիների նպատակն է թոյլ չտալ, որ Անդրանիկը առաջանայ, հասնի Ղարաբաղ: Պարզ է, դրանից մեծապէս պիտի օգտուեն թուրքերը, իսկ մենք պիտի վնաս ունենանք:

Բագրատը իր հետ նկած երկու մարտիկների հետ վերադարձաւ Ջրաբերդ, խնդրելով, որ նոր տեղեկութիւններ ստանալուց իրեն էլ հաղորդեմ: Հայրապետի նամակի ամփոփ բովանդակութիւնը գրի առնելով, ուղարկեցի Ալէքսան դայուն: Դալի Մահրասան առաջարկում է միասին պատրաստ կատարել գիւղերում Աղասու կամ իրա հետ, փոխանակ մնալու Դաչբուլաղ սպասողական դրութեան մէջ: Ես որոշում ունէի արդէն լինել մի չարք գիւղերում, մեր գիտակից, գրաճանաչ գիւղացի ընկերների և ժողովրդի հետ հանդիպում ունենալ, ուստի Աղասին մնաց տեղում, իսկ Դալի

Մահրասան ու ես յաջորդաբար եղանք Խնձորեստան, Ռև, Ղչլաղ, Նորագիւղ, վերադառնալով Դաչբուլաղ և այնտեղից Դահրաւ ու Պտրեցիք գիւղերը:

Ամսի 27-ին սուրհանդակ Աւանէսի միջոցով Հայրապետն ու Աչոտը մի նամակ են ուղարկում ինձ. գրում են, որ գործս վերջացնեմ և անմիջապէս մեկնեմ Շուչի, կարևոր հարցերի ու խնդիրների քննութեան մասնակցելու համար:

Ամսի 28-ին, Դալի Մահրասայի հետ միասին, երկու ղինուորների ուղեկցութեամբ, Մէհտիչէն, Բալուջա, Խնածախ, Խանքենտի և Կրկժան հանդիպումներ ունենալով, երեկոյեան չատ ուշ մտնում ենք քաղաք, վերին՝ Երևանեան դռներից: Դալի Մահրասան ղինուորներին ուղարկում է քարւանսարա, որը պահում էր մեր համակիրներից մէկը՝ Ուղտ Մանասի տղան, Աւանէսը, և յարմար սենեակներ ունէր դրսից եկողների գիչերելու համար: Դալի Մահրասան գնաց իր մի աղգականի մօտ, իր սովորական իջևանատեղին, ես էլ մեր տուն, վաղը միասին մեր հաւաքատեղիում ընկերներին ներկայանալու:

Նոյեմբեր 29-ի առաւօտեան եկաւ մօտս ընկ. Միքայէլ Տէր Յովհաննէսեանը և յայտնեց, որ երեք օր առաջ Սալմանբէկին փախցրել են, բանտում յղացած ծրագրի ճիչտ գործադրութեամբ: Հաչտարար դատաւորին գանգատ է ներկայացրել ընկերներից մէկը՝ Ս. Աւագեանը, որ Սալման բէկը իրեն պարտք է 2000 ռուբլի, և երրորդ տարին է, ոչ տոկոս է վճարում և ոչ էլ պարտքը: Գանգատը ներկայացուած է հաչտարար դատաւորին, որը մի գրութեամբ, ուղղուած բանտապետին, պահանջել է նրան ուղարկել դատարան, հարցաքննելու և համապատասխան վճիռ կայացնելու: Գանգատը ներկայացնելուց յետոյ երկու չաբաթ տևեց, մինչև որ Սալման բէկին դատարան ուղարկեցին: Տղաները՝ Մարգար Թամիրեանն ու Յակոբ Պետրոսեանը, ամէն օր որոչուած տեղում սպասում էին, անհրաժեչտը կատարելու համար: Սալման բէկին ուղարկել էին մէկ պահակի ուղեկցութեամբ և, Սալմանբէկին Թոցնելու րոպէին, պահակը յանկարծակիի գալով, ապուչ էր կտրել: Գործը կատարուեց արագօրէն և առանց աղմուկի: Սալմանբէկը գտնուում է ապահով տեղում, Գեաուր Ղալայում, յաճախ հարցնում է, թէ երբ պիտի գամ քաղաք: Միքայէլին ասացի, որ միւս օրը Սալման բէկին փոխադրի մեր տունը, մինչև տեսնենք, ինչ կը լինի: Սալմանբէկը փոխադրուեց մեղ մօտ ու թէև չատ ուրախացաւ, բայց վախենում էր, թէ թուրքերը կը պահանջեն յանձնել իրեն: Վստահացրի, որ եթէ նման պահանջ լինի, երբէք տեղի չենք տայ և ոչ ոք չի կարող բռնի ուժով տանել:

Նոյեմբեր 29-ին հաւաքատեղիում, ընկերական ժողովում Հայրապետը պատմում է, որ Տոմսոնի ուղարկած ղինուորականները Դոքտ. Արտաչէս Գանջեցեանի ուղեկցութեամբ ամսու 19-ին հասել են Գօրիս, ներկայացել Անդրանիկին և յայտնել Տոմսոնի կարգադրութիւնը՝ դադարեցնել յարձակումը, մնալ խաղաղ, և անգլիական հրամանատարութիւնը կը հոգայ իր ունեցած կարիքները: Անդրանիկը ունեցել է իւր բժիշկը, Ամերիկայում սովորած. և նա էր թարգմանչի դեր կատարել: Անդրանիկը բաւական խիստ տոնով է խօսել, չեչտել մեր ժողովրդի կրած կորուստների մասին, որ մահուանից փրկւած մեր բնակորները չարունակում են դեռ տառապել և որոնց մէկ մասը իր հետ է, մատնւած մեծ զրկանքների, և մեր դաշնակիցները չտապել են իրենց աջակցութիւնը ցոյց տալ մեր թշնամիներին:

Ղինուորականները՝ Գօլդամիտը ու Կասփելդը, վստահացրել են Անդրանիկին, որ անմիջապէս օգնութիւն կը հասցնեն զաղթականութեանը, որպէսզի կարողանայ չարժւել, գնալ Երևան, որտեղ Հայաստանի կառավարութիւնը անմիջականօրէն յարաբերութեան մէջ է դաշնակից պետութիւնների ներկայացուցիչների հետ, որոնք հնարաւոր աջակցութիւնը չպիտի խնայեն մեր ժողովրդին: Ապա առաջարկում են, որ մեկին նշանակէ իրենց հետ Բաքու մեկնելու, որպէսզի չտապ կերպով առաջին օգնութիւնը հասցնեն, դրամ ուղարկելով զաղթականների կարիքները հոգալու համար: Նշանակւել է ընկեր Արշակ Շիրինեանը, որը երկու ղինուորականների հետ միասին, նոյեմբերի 19-ին վերադարձել, գնացել են Բաքու, երկու միլիոն ռուբլի տալով Արշակին, ճամբել են յետ: Արշակը երեկ, մեկ ուրիշ ղինուորականի, մայոր Գիբբոնի հետ, հասել է տեղս և այսօր պիտի մեկնեն Գօրիս: Արշակը երկու հարիւր հազար ռուբլի տւել է մեղ, բաժանելու զաղթականներին: Մայոր Գիբբոնը պիտի տեղի վրայ ծանօթանայ զաղթականների ունեցած կարիքների հետ, որպէսզի ըստ այնմ էլ օգնութիւն ցոյց տրւի:

ՄԱՅՈՐ ԳԻԲԲՕՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Ղինուորականների՝ Գօրիսից վերադառնալուց յետոյ մի քանի անգամ խորհրդակցական ժողովներ են տեղի ունեցել քաղաքացիական նոր իշխանութիւն կազմելու համար, որ օտար ուժերի հետ յարաբերութիւն պահէ իբրև ժողովրդի կողմից ընտրւած ներկայացուցչութիւն: Վերջին անգամ խորհրդակցութիւն եղաւ նախորդ օրը. ընկերների մէկ մասը գտնում է, թէ պէտք է կուղէտա անել Գ-րդ. Համագումարին ընտրւած Ազգային Խորհուրդը կեանքի կոչելով, իսկ միւս մասը անհրաժեշտ է համարում նոր համագումար հրաւիրել և նոր իշխանութիւն ընտրել:

Հայրապետի զեկուցումից յետոյ կրկին մտքերի փոխանակութիւն տեղի ունեցաւ, և ընկերները յանձնեցին այն եզրակացութեան, որ այլևս անյարմար է կուղետա անել անգլիական հրամանատարութեան ներկայացուցչի տեղս ժամանելուց յետոյ: Թերևս աւելի յարմար կը լինէր, եթէ կուղետան արւած լինէր Գոլղամիտի և Կասֆելդի տեղս հասնելուց առաջ: Մայոր ԳիբբԹօնի դալուց յետոյ կուղետա անելը կարող է Թշնամական ակտ համարւել անգլիացիների դէմ, ուստի այդ հարցը համարւեց սպառւած: Համագումար հրաւիրել չտապ կերպով հնարաւոր չէր, ուստի նպատակայարմար համարւեց, որ կազմւի ժամանակաւոր Աղգային Խորհուրդ, որի կազմի մէջ մտնեն չորս հրամանատարների՝ Ջրաբերդի Բագրատ Ղազանչեանի, Խաչէնի՝ Ալէքսան դայու, Վարանդայի՝ Սոկրատ Մ. Շահնազարեանի և Դիղակի՝ Արտեմ Լալայեանի կողմից նչանակւած ներկայացուցիչները , քաղաքագլուխ Գերասիմ Մ. Շահնազարեանը և Միջկուսակցական Բիւրոյի նախագահը՝ Հայրապետ Մուսայէլեանը: Միջկուսակցական Բիւրոն նախկին իր բնոյթը չունէր. բարոյական նչանակութիւն և արժէք ունէր, որովհետև Ղարաբաղի վերաբերեալ հարցերի և խնդիրների չուրջ յաճախ մտքերի փոխանակութիւն ունենալու չնորհիւ, նպաստում էր հոսանքների միջև եղած համերաշխութեան:

Խորհրդակցական ժողովից յետոյ անմիջապէս Ապառաժի Կ.Կ-ի կողմից համապատասխան նամակներ գրւեց բոլոր հրամանատարներին, չտապ կերպով քաղաք ուղարկել իրենց ներկայացուցիչներին: Դալի Մահրասան Խաչէնի և Ջրաբերդի հրամանատարներին ուղղած նամակները առնելով, չտապ մեկնեց Խաչէն, իսկ Վարանդայի և Դիղակի հրամանատարներին ուղարկւեց յատուկ սուրհանդակի միջոցով:

Դեկտեմբեր 1: Մայոր ԳիբբԹօնը ներկայանում է թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոս Տէր Գէորգեանին, յայտնում իր միսիայի մասին, որ գեներալ Տոմսոնի կողմից նչանակւած է Ջանդեզուր-Ղարաբաղի գաղթականների վիճակի հետ ծանօԹանալու և անհրաժեչտ օգնութիւնը ցոյց տալու: Ապա յայտնել է, որ ինքը բաւական ճանաչել է հայ ժողովրդին պատերազմից առաջ, Թիւրքիայում միսիոնար եղած ժամանակ, յաճախ մարդկանց հետ չփման մէջ լինելու չնորհիւ: "Մեր քրիստոնէական պարտականութիւնն է՝ հնարաւոր օգնութիւնը ցոյց տալ գաղթականներին," ասել է ԳիբբԹօնը, "և վստահ ենք, որ ձեր կողմից էլ կարզադրութիւն կը լինի, որ՝ անհրաժեչտ դէպքերում, գործին ծանօԹ մարդիկ բարոյապէս աջակցեն մեղ, որ արդարութեամբ բաչխուեն նպաստները": Սրբազանը պատասխանել է, որ ամէն տեղ գործի գլուխ կանգնած են ժողովրդից ընտրւած և իրենց պարտականութեանը գիտակ մարդիկ, որոնք անհրաժեչտ

աջակցութիւնը միշտ ցոյց կը տան: Գիբթիոնը հայերէն իմանալով, խօսակցութիւնը ունեցել է սրբազան հօր հետ առանց թարգմանի:

Դեկտեմբեր 2: Հրամանատարների կողմից նշանակւած ներկայացուցիչները գալիս են Շուշի. Դիզակից՝ Ա. Լալայեանի կողմից՝ Ասլան Շահնազարեան, անկուսակցական, նախկին գաշնակցական: Վարանդայից՝ Ս. Մ. Շահնազարեան, Արտաշէս Միքայէլեան, գաշնակցական: Ջրաբերդից՝ Բ. Ղազանչեան, Մարկոսրէկ Տէր Աստուածատրեան, անկուսակցական. Խաչէնի հրամանատարի օգնական Աղասի Վերդեանի կողմից, որպէս ներկայացուցիչ, նշանակւել էր Եղիշէ Իշխանեանը:

Երևկոյեան խորհրդակցական ժողով է նշանակւում բոլոր հոսանքների ներկայացուցիչների մասնակցութեամբ: Հայրապետ Մուսայէլեանը բացած յայտարարելով ժողովը, պարզում է ստեղծւած նոր դրութիւնը անգլիացիների Զանգեզուր-Ղարաբաղ մուտք գործելու հետևանքով, որ որոշ նախանշաններ նկատի ունենալով, անհաւանական և անսպասելի չէ, որ պահանջւի մեզնից՝ ենթարկւելու Ադրբէջանի գերիշխանութեանը, ուստի մենք պէտք է ընդհանուր մէկ տեսակէտ ունենանք դրական կամ բացասական պատասխանելու համար, և քանի որ Հայաստանի հանրապետութիւնը փաստօրէն նոյնքան ճանաչւել է որքան Վրացական և Ադրբէջանական հանրապետութիւնները, բնականաբար Զանգեզուր-Ղարաբաղը պիտի համարւի որպէս անբաժան մասը Հայաստանի հանրապետութեան: Մտքերի փոխանակութիւնից պարզւեց, որ բոլոր հոսանքների տեսակէտը մի է՝ Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է, ուստի ժամանակաւոր Ազգային Խորհրդին առաջարկւեց՝ առաջիկայ իրենց գործունէութեան ընթացքին առաջնորդւել այդ տեսակէտով:

Նոյն օրը, կէսօրւանից անց, քաղաքի պատերին փակցւած տեսանք տպագիր յայտարարութիւն տեղակալ Արօ (Արտեմ) Պետրոսեանի, Մամնայի կռւի հերոսի ստորագրութեամբ, որ ինքը նշանակւած է քաղաքի կոմենդանտ (պարէտ), թէև յայտարարութեան մէջ չի յիշատակւած, թէ ում կողմից է նշանակւած, բայց ստորագրութիւնը պարզ հասկացնում է, որ Սոկրատի օյինրաղութիւնն է, որին դէմ եղաւ հէնց իր ազգական քաղաքագլուխը:

Յաջորդ օրը, դեկտեմբեր 2-ին, պատերին տեսանք փակցւած մայոր Գիբթիոնի հակաղդը, թէ իշխանութիւնն ինքն է հանդիսանում, օգնականներ ունենալով քաղաքագլխին և թուրք զաւառապետին՝ Խոսրովբէկ Փոլադովին, որը նշանակւած էր տաճիկների օրօք, Ադրբէջանի կառավարութեան կողմից: Գիբթիոնի հակաղդը մի

Հարւած էր, որ Հասաւ ոչ թէ Արօ Պետրոսեանին, որը յարդւած էր իբրև քաջ ու համեստ դինուորական, այլ Սոկրատին:

Դեկտեմբեր 4-ին Անդրանիկի կողմից սուրհանդակը գրութիւն է բերում Գիրքօնին, որին Անդրանիկը հրաւիրում է Գօրիս, տեղի վրայ ծանօթանալու զաղթականների վիճակի հետ և ըստ այնմ ցոյց տալու նպաստը: Մայորը, ինչպէս լսեցինք, խոստանում է քաղաքում ունեցած գործը վերջացնել ու մեկնել Գօրիս:

Դեկտեմբեր 4-ին Շուչու վաճառականները ի պատիւ մայոր Գիրքօնի ակումբում ճաշկերոյթ են տալիս, բաւականաչափ մարդիկ հրաւիրելով աչքի ընկած քաղաքացիներից և հոսանքներից: Հրաւիրւում են քաղաքագլխի հետ նաև հրամանատարների ներկայացուցիչները: Տեղի ունեցան քաղաքական բովանդակութեամբ ճառեր, և մեր «խելօք» քաղաքագլուխն ու իր համախոհները, իրենց խօսքի մէջ, չնչուած կերպով ցոյց տւին իրենց ռուսասիրութիւնը, ցաւ յայտնեցին, որ ներկայ չէ մեր միւս զաչնակցի ներկայացուցիչը, և յոյս յայտնեցին, որ ռուսները կը զան Անդրկովկաս և տէր կը կանգնեն իրենց ունեցւածքին:

Մայոր Գիրքօնի դէմքի պաղ արտայայտութիւնից երևում էր, որ տեղի ունեցող ճառերը լաւ տպաւորութիւն չեն թողնում վրան, և նա, երբ չնորհակալութիւն յայտնեց իր պատւին տրւած հիւրասիրութեան առթիւ, իր խօսքի ընթացքին արտայայտւեց թէ՝ "Հայերդ չատ սիրում և դրաղւում էք քաղաքականութեամբ, որով այնքան էք տարւած, որ ճաշին էլ էք դրաղւում": Մեզ թւաց, որ այդ դիտողութիւնը ոչ թէ քաղաքականութեամբ չատ դրաղւելուն էր վերաբերում, այլ դրսևորւած ռուսասիրութեանը, մի բան, որն իրեն դուր չէր եկել: Ճաշկերոյթից յետոյ, երբ Գիրքօնը գնաց, Հայրապետը դիտողութիւն արաւ, որ պէտք չէր դրսևորել իրենց ռուսասիրութիւնը, որ դա անտակտութիւն էր և չէր կարող դուր զալ անդլիացուն:

Դեկտեմբեր 8-ին Բագւից գալիս է կապիտան Սերբայը, որպէս գնդապետ Տոմսօնի ներկայացուցիչը, մի սպայի հետ, մեկ մեքենայում, ուղեկցութեամբ ուրիչ չորս մարդատար մեքենաների, իբրաքանչիւրում չորսական դինուոր, որոնք ունէին դնդացիրներ՝ տեղադրւած մեքենաների վրայ: Քաղաքագլուխը ներկայացնում է կապիտան Սերբային, որը յայտնում է իր ստանձնած պարտականութեան մասին, որ պիտի ջանայ խաղաղութիւն պահպանել Ղարաբաղում երկու ժողովուրդների միջև և խաղաղութիւնը պահպանելու համար անդլիական զօրք կը զայ, որ արդէն ճամբին է: Կապիտան Սերբայը գիտէր ռուսերէն:

Դեկտեմբեր 9-ին մայոր Գիբթօնը Աբուլֆազլրէկ Հասանբէկովի հետ միասին մեկնում է Գօրիս:

Դեկտեմբերի 10-ին ժամանակաւոր Ազգային Խորհրդի մէջ մտած չորս Հրամանատարների կայացրած միաձայն որոշմամբ, կանխաւ չրջարերական գրութեամբ Հրամանատարները հրաւիրել են քաղաք, միասնաբար որոշ խնդիրներ կարգադրելու համար: Բացի Սոկրատ Մ. Շահնազարեանից, միւս երեք Հրամանատարները դալիս են Շուշի:

Դեկտեմբերի 12-ին Գիբթօնը Գօրիսից վերադառնում է Անդրանիկի բժիչկ Ռուբէն Տէր Ստեփաննեանի հետ միասին: Ռուբէնը մանրամասնօրէն պատմում է անգլիացի սպաների ունեցած տեսակցութեանց ու զրոյցների մասին Անդրանիկի հետ: Պատմում է, որ Անդրանիկը խօսել է հետերնին խրոխտ տոնով և համարձակ, այնպէս ինչպէս, կը խօսի պարտատէրը պարտապանի հետ:

Դեկտեմբերի 13-ին Գօրիսից գալիս է Շուչու գունդը, որին նախորդ օրւանից քաղաքացիները սպասում էին, քանի որ բժ. Ռուբէնը տեղեկացրել էր այդ մասին: Առաւօտւանից հարիւրաւոր մարդիկ բռնել էին ղօրանոցի բակը. նրանցից չատերի զաւակները գնդում զինուորներ էին, մի քանիսը սպաներ: Գնդին դիմաւորելու համար ռէալական դպրոցի աչակերտները իրենց վողաւոր նւագախմբով դերք էին զրաւել ղօրանոցի առջև: Մի խումբ երիտասարդներ, որոնք ձիեր ունէին, ընդառաջ էին գնացել բաւական տեղ: Ժամը 12-ին մօտ գունդը մտաւ քաղաք, ուղղւելով դէպի ղօրանոցի բակը, և երբ երևաց գնդի ծայրը, նւագախումբը հնչեցրեց զինուորական քայլերգը: Հասարակութիւնը ուռաներով դիմաւորեց գնդին, ապա զաւակ ունեցող ծնողները, իրենց զիրկն առած զաւակներին, գնացին իրենց տները, և հասարակութիւնը ուրախ տրամադրութեամբ ցրւեց:

Յաջորդ օրը, թուրքերի սադրանքով, թէ գունդը խախտելու է խաղաղութիւնը, յարձակում գործելով թրքաց թաղի վրայ, կապիտան Սէրրայդը պահանջում է մեղնից, որ գնդի զինքերը յանձնւի իրեն, մտքերը խաղաղեցնելու համար: Կտրականապէս մերժում ենք Սէրրայդի պահանջը և հասկացնում, թէ ինչ է ներկայացնում իրենից գունդը, երբ է կազմւել, ովքեր են գնդի զինուորները, որոնք վերադարձել են իրենց տները, զօրացրւած լինելով պատերազմից յետոյ:

Հրամանատարների ներկայացուցիչները քանիցս տեսակցութիւն ունեցան քաղաքագլխի հետ, առաջարկելով, որ նա և Հայրապետ Մուսայէլեանը միանան իրենց, որպէս քաղաքի

ներկայացուցիչներ և, այդպիսով, լրանայ ժամանակաւոր Ազգային Խորհրդի կազմը և անցնի գործի:

Քաղաքագլուխը, ինչպէս ղիտւեց իր տեղում, հակառակ ղիրք էր ընդունել Հայրապետ Մուսայէլեանի և Աչոտ Մելիք Յովսէփեանի ղէմ, վերջիններիս կողմից քննադատութեան ենթարկուած լինելու հետեանքով: Մասնաւորապէս Հայրապետի ղէմ էր լարուած, մայոր Գիրքօնի պատուին տրուած ճաշկերոյթին նրա կատարած դիտողութեան համար, որ չատ տեղին էր: Կորականօրէն մերժում էր մտնել մի ազգային մարմնի մէջ, որի անդամ կը լինէր Հայրապետ Մուսայէլեանը: Գերասիմ Մելիք Շահնազարեանը, ճիչտ է, մաքուր մարդ էր, նիւթամոլ ու կաչառակեր չէր ուրիչ քաղաքագլուխների պէս, սակայն ջղագար, քմահաճ ու կամակոր, հիւանդագին անձնասէր, դիտողութիւն չհանդուրժող մէկն էր: Կենտրոնական Կոմիտէի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ բոլոր հոսանքների ներկայացուցիչների խառն ժողով. նկատի ունենալով ստեղծուած նոր պայմանները, որոչեց դաչնակից ուժերի ղէմ յանդիման դուրս գալ միացեալ ճակատով, առանց տարաձայնութեան. ուստի ջանալ քաղաքագլխին համոզել, որ հակառակ ղիրք չբռնի, մտնի կազմի մէջ: Անգլիացի դիւանագէտները քաղաքագլխին այնպիսի վերաբերմունք էին ցոյց տալիս, ինչպէս իրենց քաղաքների "մէյըր"-ին և այդպէս էլ անւանում էին նրան: Մենք ուղում էինք պահպանած լինել նրան տրուած արժէքն ու նչանակութիւնը, պայմանաւ, որ աչխատէր համախորհուրդ՝ չրջանների ներկայացուցիչների հետ, բայց քմահաճութեամբ ու քէնով էր համակուած, չէր ուղում աչխատել մի մարդու հետ, ինչպիսին Հայրապետ Մուսայէլեանն էր, համալսարանական կրթութեամբ, վերին աստիճանի լուրջ, բարձր որակի մտաւորական, որին յարգանքով էին վերաբերում բոլոր հոսանքների և այն հոսանքի մարդիկ, որի պատասուր անդամներից մէկն էլ ինքը քաղաքագլուխն էր:

Ժողովը, մտքերի փոխանակութիւն ունենալով, յանգեց այն եղրակացութեան, թէ պէտք է դիմել Թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոս Տէր Գէորգեանին, որ նա իր մօտ հրաւիրի հրամանատարների ներկայացուցիչներին, քաղաքագլխին և Հ. Մուսայէլեանին, որպէս միջկուսակցական խորհրդաժողովի ներկայացուցչի, ժամանակաւոր Ազգային Խորհրդի կազմ յայտարարի և առաջարկէ, ըստ հնարաւորին, չուտով հրաւիրել Ղարաբաղի Հայութեան Ջորրորդ համագումարը, որը և օրինական ձևով կընտրի Ազգային Խորհուրդ՝ ղեկավարելու չրջանը և Ղարաբաղի Հայութեան լիազօր ղեկավար մարմին հանդիսանայ օտար ներկայացուցիչների մօտ:

Ժողովից յետոյ, Հէնց նոյն օրը, Ապառաժի Կ.Կ.-ի յանձնարարութեամբ, ներկայացայ Առաջնորդին, պատմեցի տեղի ունեցած անցուդարձը և միջկուսակցական խորհրդաժողովի ցանկութիւնը, որ հրաւիրի յիշեալ ներկայացուցիչներին, ժամանակաւոր Ազգային Խորհուրդ կազմելու:

Վահան Եպիսկոպոսը չատ ղգայուն մարդ էր և նման ղէպքերում ծանր ապրումներ էր ունենում: Խոր ցաւ յայտնեց, որ նման պատմական մի ժամանակաշրջանում լինում են եսակենտրոն մարդիկ, որոնք չեն կարողանում դուրս գալ իրենց կեղևից, լինել լայնախոհ, համբերատար և իրարու հանդուրժող: Երբ խօսում էր Սրբազանը, չատ ցայտուն կերպով նկատելի էր ղէմքի արտայայտութիւնից, թէ որքան ծանր էր աղղել քաղաքագլխի բռնած անպարկեշտ և անմիտ ընթացքը և սիրով յանձն առաւ հրաւիրել բոլոր վերը յիշեածներին ու կազմել ժամանակաւոր Ազգային Խորհուրդ:

Յաջորդ օրը, դեկտեմբերի 16-ին, երեկոյեան, առաջնորդի հրաւէրով, հրամանատարների ներկայացուցիչներս ու Հ. Մուսայէլեանը ճիշտ նչանակուած ժամին գնացինք Առաջնորդարան. քաղաքագլուխը դեռ չէր եկել. սպասեցինք կէս ժամից աւելի, և եկաւ մեր աղա քաղաքագլուխը, որը, պարզապէս, տառապում էր նախնիներից ժառանգած "բէկական" հողեբանութեամբ ու մտայնութեամբ:

ՂԱՐԱԲԱՂԻ ԶՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Առաջնորդը, առանց երկարաբանութեան, մի քանի խօսքով յայտնեց, թէ ինչու համար է հրաւիրել, և առաջարկեց, որ համերաշխութեամբ ձեռք-ձեռքի տանք, աշխատենք որպէս ժամանակաւոր Ազգային Խորհուրդ, պարտականութիւն ստանձնելով ամէնակարճ միջոցում հրաւիրելու Ղարաբաղի Զորրորդ Համագումարը, աղատելով ստանձնած ծանր պարտականութիւնից:

Երբ Սրբազանը վերջացրեց խօսքը, առաջինը արտայայտեց քաղաքագլուխը, յայտարարելով, թէ չի խուսափի իր վրայ դրուող պարտականութիւնից, սակայն չի կարող աշխատել մէկ մարմնի մէջ, որի անդամ կը լինի պարոն Մուսայէլեանը:

Եպիսկոպոսը նորից խօսեց, թէ, որպէս թեմի հոգևոր առաջնորդ, իր սեպուհ պարտականութիւնն է՝ հակառակութիւնները վերացնել հասարակութեան մէջ և հէնց այդ նպատակով էլ

Հրաւիրել է մեզ. իր անկեղծ ցանկութիւնն է, որ մոռացութեան տանք մեր միջև եղած թիւրիմացութիւնները, ձեռք-ձեռքի տանք և համերաշխեմք աշխատենք մինչև Ջորջորդ Համազումարը, որից յետոյ իւրաքնաչիւրս աղատ կը լինենք:

Քաղաքագլուխը մնաց անդրդուելի և վեր կացաւ, որ դուրս գնայ, բայց Եպիսկոպոսը խնդրեց, որ մնայ: Այն ժամանակ արտայայտուեց Ասլան Շահնազարեանը, որ նախկին դաշնակցական էր, բայց հայ-թրքական ընդհարումներից յետոյ ինքնաբերաբար չէզոքացել էր:

– Մենք ուզում ենք իմանալ, թէ պարոն Մելիք Շահնազարեանը ինչու՞ չի ցանկանում աշխատել մի մարմնի մէջ, որի անդամ է նաև պարոն Հ. Մուսայէլեանը:

– Ջեմ կարող պարոն Մուսայէլեանի հետ աշխատել, որովհետև նա աշխատում է միշտ ստորագնահատել ինձ մարդկանց ներկայութեամբ. ես քաղաքագլուխ եմ, և նա ինձ արժէքազրկում է մարդկանց աչքում:

– Գերապիւ Իսահակովիչ, մի՞թէ քննադատել մէկի սխալը, նշանակում է քննադատողի պրեստիժը[94] զցել, հարցնում եմ:

– Մուսայէլեանը պարզապէս հակառակ է ինձ և ուզում է նսեմացնել ինձ, ասում է քաղաքագլուխը:

– Ձեր դատողութեան համաձայն, դուք որպէս քաղաքագլուխ երբէք չպիտի քննադատութեան ենթարկուէք, երբ աչք ծակող սխալներ էլ զործէք, որովհետև քաղաքագլուխ էք և որովհետև Մուսայէլեանը իւր շատ տեղին դիտողութիւնն է արել ձեզ ու ձեր համախոհներին, ասացի ես:

– Ես, պնդելով իմ ասածները, կրկնում եմ, որ պարոնի հետ միատեղ աշխատել չեմ կարող. սա իմ վերջին խօսքն է, ասաց քաղաքագլուխը:

– Կասկածից դուրս է, ասաց Հայրապետը, որ մենք տարբեր մակարդակի մարդիկ ենք, տարբեր սկզբունքներով ու համոզումներով, ուստի և հասարակական-աղգային խնդիրների ու հարցերի վերաբերեալ տարբեր հակացողութիւնները և ըմբռնումներ ունենք: Հասարակական կեանքում քննադատութիւնը, առանց չակերտների, իւր օգտակարութիւնն ունի և անհրաժեշտ է հէնց այդ տեսակէտով, սակայն քննադատութիւնը վիրաւորանք հասցնելու նպատակ չունի բնաւ: Յամենայն դէպս, ես նպատակ չունեմ որևէ աթոռ զրաւելու, եթէ հասարակական զործիչների պարտադրանքը չլինէր, ես չպիտի ներկայ զտնուէի այստեղ, ուստի ես իմ թեկնածութիւնը հանում եմ ցանկից:

– Քանի որ քաղաքագլուխը անհատական հարցեր է յարուցում, ես էլ յայտարարում եմ, որ առանց Հայրապետ Մուսայէլեանի չեմ մտնի Ժամանակաւոր Աղգային Խորհրդի մէջ

[94] Հեղինակութիւն (ռուս.): (Խմբ.)

աշխատելու. Թող Խաչէնից, իմ փոխարէն, ուրիշ մէկին նշանակէ այնտեղի Հրամանատարը, յայտարարեցի ես:

Այնուհետև Հ. Մուսայէլեանը վեր կացաւ և նչան արաւ ինձ՝ հետևելու իրեն և անցանք կից սենեակը: Հայրապետը կանգ առաւ և հարց տուաւ՝ "Դու ինչո՞ւ չես ուղում աշխատել":

-Ձևո՞ս տեսնում, էդ կամակոր մարդու մէջ անպիտան Մելիք Շահնազարի արիւնն է խօսում, նրա տարամերժ, անհաչտ հոգին. նրա հետ պէտք է այլ կերպ խօսել:

-Դու իրաւունք չունես հրաժարուելու, մանաւանդ որ մարմինը ժամանակաւոր է, ոգի ի բռին կաչխատենք, չատ կարճ ժամանակամիջոցում կը հրաւիրենք Զորրորդ Համագումարը, որը բոլորին էլ ցոյց կը տայ իրենց իսկական տեղը, ասաց Հայրապետը:

Մենք վիճում էինք իրար հետ, երբ դուռը բացուեց և երևաց Սրբազանը, որը դուռը փակելով, մօտեցաւ մեղ, չատ ընկճուած, ղէմքի տխուր արտայայտութեամբ, ասաց՝ "Սիրելիներս, չատ վատ եղաւ, թևերս միանգամայն թուլացան, չգիտեմ, ինչպէս համոզել քաղաքագլխին, որ ղիջող լինի":

-Պէտք չկայ, ասաց Հայրապետը, Եղիչէն նչանակուած է Խաչէնի հրամանատարի կողմից որպէս այն չրջանի ներկայացուցիչ և իրաւունք չունի հրաժարուելու, կը վերադառնայ, ժողովը կը չարունակէք, ուրիչ ոչինչ:

-Աստուած օգնէ ձեղ, պարոն Հայրապետ, ճիչտ էք ասում, Եղիչէն վերադառնայ, վերջացնենք ժողովը: Համբերութիւնը կեանք է, ճիչտ է ասուած, համբերութեամբ պիտի յանձն առնել ստեղծուած դժուարութիւնները, մինչև համագումար, ասաց Սրբազանը:

Ուրիչ ելք չկար, Հայրապետը գնաց, և ես, հետևելով Սրբազանին, ներս գնացի, և չարունակեցինք ժողովը: Սրբազանը յայտնեց, որ Հայրապետը կտրականօրէն հրաժարուեց մտնելու ժամանակաւոր Ազգային Խորհրդի մէջ, ուստի ներկայ գտնուղների պարտականութիւնն է՝ ստանձնել իրենց վրայ դրուած պատասխանատուութիւնները և անցնել գործի: Ընդունեցինք Սրբազանի առաջարկը:

Սրբազանի ներկայութեամբ որոչուեց, որ Ազգային Խորհուրդը առաջին նիստն ունենայ հէնց յաջորդ օրը և ճչտէ իր անելիքները:

Դեկտեմբերի 16-ին ժամանակաւոր Ազգային Խորհուրդը իր առաջին նիստը ունեցաւ քաղաքագլխի բնակարանում: Օրակարգի խնդիրները՝

ա) Դիւանի ընտրութիւն:

բ) Ժամանակաւոր Ազգ. Խորհրդի գործի անցնելու մասին ծանուցում տալ ժողովրդին:

զ) Յարաբերութեան մէջ մտնել Բագւի, Գանձակի, Գօրիսի և, վերջինիս միջոցով, Երևանի հետ:

Ընտրուեց դիւան, նախագահ՝ ե. Իշխանեան, քարտուղար՝ Ա. Միքայէլեան, զանձապահ՝ Մարկոս բէկ Տէր Աստուածատրեան, առանց զանձի: Արտաչէս Միքայէլեանը, *ռուսական* (ռէալական) դպրոցում և Պետերբուրգի գիւղատնտեսական ճեմարանում կրթութիւն ստացած լինելով, պաշտօնական քարտուղար էր, հայերէն գրական լեզուն լաւ չիմանալու պատճառով, ղեկուցումներ և այլ լուրջ գրութիւնները Ասլան Շահնազարեանն ու ես էինք գրում, որպէս անպաշտօն քարտուղարներ: Դրանից մենք չէինք նեղւում, աշխատում էինք ամէնայն սիրով, և հրամանատարների ներկայացուցիչների փոխյարաբերութիւնը ղուտ ընկերական էր:

Դեկտեմբեր 17-ին Սոկրատ Մելիք Շահնազարեանը նոյնպէս Շուշու վերին դարպասներից մտնում է քաղաք, զօրանոցի բակում միայն 60-70 հոգի հետաքրքրուող քաղաքացիներ են լինում և այն տպաւորութիւնը չի թողնում, ինչպէս Շուշու զնգի մուտքը: Պարզ էր, զնդի ղինուորների մեծագոյն մասը չուշեցիները էին, որոնց ծնողներին միացել էին իրենց ազգականներն ու բարեկամները, ահագին բաղմութիւն կազմելով, իսկ Սոկրատը եկել էր քաղաք մի քանի թիկնապահ ձիաւորներով, թէև քաղաքում ունէր իր մարդիկը մի քանի հոգի, որոնք կանխաւ տեղ էին պատրաստել իջևանելու համար, մեծահարուստ Կրասնոկիկեանների անմարդաբնակ գեղեցիկ երկյարկանի տանը, քաղաքի վերին մասում: Պիտի նկատի ունենալ և մի հանգամանք, որ Անդրանիկի հրահանգը չկատարելով, արդէն ժողովրդի աչքում ընկել էր նրա վարկը:

Օգտւելով բժ. Ռուբէնն Տէր Ստեփաննեանի մէկ չաբաթ տևող ներկայութիւնից, հանգամանօրէն ծանօթացնում ենք նրան 1917 թ. ամառւանից ի վեր Ղարաբաղում տեղի ունեցած անցուդարձի մասին, որ Երևան անցնելուց ղեկուցէ, ուր որ պէտք է, թէ կառավարութեան և թէ մեր կուսակցութեան կենտրոնին, որպէս դաշնակցական: Միաժամանակ, խիստ ամփոփ մի ղեկուցում ենք պատրաստում՝ ի սկզբանէ յիշեալ ժամանակաշրջանում մեր կատարած բոլոր աշխատանքների մասին, որ Ռուբէնը իր հետ տանի և յանձնի մեր կառավարութեանը:

Մայոր Գիբսօնը դեկտեմբերի 20-ին բժ. Ռուբէնի հետ միասին մեկնում է Գօրիս, որտեղից Գիբսօնը Նախիջևանի վրայով պիտի գնար Երևան:

ԿԱՊԻՏԱՆ ՍԷՐԲԱՅԴԸ ԵՒ ԳԵՆԵՐԱԼ ՏՈՄՍԸՆԻ ՀՐԱՀԱՆԳԸ

Կապիտան Սէրբայդը, գնեռալ Տօմսոնի կարգադրութեան համաձայն, յայտնում է ժամանակաւոր Ազգային Խորհրդին, թէ պէտք է կազմել մի յանձնախումբ, որը պէտք է ճշտէ տաճկական զօրքերի և ապրբէջանեան բանդաների կողմից Ղարաբաղին հասած վնասները: Կարգադրութեան ռուսերէն թարգմանութիւնը յանձնեց մեղ: Կապիտան Սէրբայդը յայտնում է, որ յանձնախումբը պէտք է բաղկացած լինի առաւելը տասը հոգուց, իսկ աշխատակիցներ՝ որքան գործը կը պահանջի: Յանձնախումբը ներկայ պիտի լինի իրեն և ինքը կը լինի յանձնախմբի նախագահը, որը կունենայ իր օգնականը, ընտրած յանձնախմբի կողմից: Գործավարութիւնը պիտի լինի ռուսերէն լեզուով:

Հէնց նոյն օրը ժամանակաւոր Ազգային Խորհուրդը ներկայացրեց կապիտան Սէրբայդին վնասուց ճշտման յանձնախմբի կազմը, բաղկացած հետևեալ մարդկանցից՝ Լևոն Վարդապետեան, որը ընտրուեց փոխ-նախագահ յանձնախմբի, Աչոտ Մելիք Յովսէփեան, քարտուղար, Գրիգոր Մինասբէկեան, Հրանդ Բահաթրեան, Սերգէյ Աթաբէկեան, Գրիգոր Խաչեան, Ստեփան Մանդինեան, Նիկողայոս Իսախանեան, բոլորը պատմաբաններ, Ասլան Շահնազարեան, ուսուցիչ և եղիչէ Իշխանեան, ուսանող:

Յանձնախումբը իւր առաջին նիստում որոշեց, որ՝

ա) Ազգային Խորհուրդը յատուկ շրջաբերականով յայտարարէ գիւղական հասարակական գործադիր մարմիններին վնասուց ճշտման յանձնախումբ կազմած լինելու մասին, որը պէտք է արձանագրէ տաճկական զօրքերից և ապրբէջանեան աւազակախմբերից տուժած գիւղերի և անհատների կրած վնասները, ուստի տուժած գիւղերի բնակիչները ցուցակագրեն գիւղի կրած վնասները և իրենց ներկայացուցիչների միջոցով ուղարկեն քաղաք, յանձնախմբին, իսկ եթէ միմիայն անհատներ են տուժել, ապա նրանք դան քաղաք, յանձնախմբին յայտնեն իրենց ունեցած վնասները, որպէսզի արձանագրւի:

բ) Յանձնախումբը պէտք է ունենայ իւր դիւանական և այլ ծախսերը, որպիսիք հոգալու համար, անհրաժեշտ է, որ Ազգային Խորհուրդը որոշ մի գումար տայ յանձնախմբին:

Ազգային ժամանակաւոր Խորհուրդը մեկ կոպեկ անգամ չունէր, ուստի որոշեց դիմել քաղաքագլխին, որը, ինչպէս ժամանակին յայտնել էր, ամռանը Թիֆլիսում 750 հազար ռուբլի էր ստացել քաղաքի կարիքների համար, ուստի այդ դրամից 50 հազար ռուբլի տայ Ազգային Խորհրդին՝ իւր անհրաժեշտ ծախսերը հոգալու:

Նոյն օրը նիստ ունենալով քաղաքագլխի մօտ, հրամանատարների ներկայացուցիչները, որ առանձին խորհրդակցել էին, հարց դրեցին, որ քաղաքագլուխը իր բերած դրամից մի որոշ գումար դնէ Աղգային Խորհրդի տրամադրութեան տակ, որպէսզի կարողանայ հոգալ թէ վնասուց յանձնախմբի և թէ այլ անհրաժեշտ ծախսերը: Քաղաքագլուխը, ինչպէս անցեալները, նոյնպէս և այժմ, ասում էր, թէ 750 հազար ռուբլին ձեռք է բերել քաղաքային վարչութեան
համար, քաղաքի ամենաանհրաժեշտ ծախսերը հոգալու համար և ուրիշ նպատակի յատկացնել չի կարող. ինքը պատասխանատու է: Քաղաքագլուխը պարզ չէր ասում, թէ ինչ աղբիւրից է ստացել դրամը, և մենք կասկածներ ունէինք, որ աղգային միջոցներից է ստացել, սակայն այդ հարցում զգոյշ էինք փորփրումներ անելուց, որովհետև կամակոր և յամառ մարդու հետ գործ ունէինք, արդիւնք չպիտի ունենայինք, որոշեցինք չվրդովել ստեղծւած խաղաղութիւնը:

Ինչպէս իր տեղում յիշւեց, նոյեմբեր 26-ին, ընկեր Միքայել Յովսէփեանի ղեկավարութեամբ, մեր երկու մարտիկ ընկերները՝ Մարգարն ու Յակորը, թոգրել էին աղրբէջանցի յեղափոխական Սալմանբէկ Ալիբէկովին, որը ապրում էր մեր տանը և վախենում էր, որ Աղրբէջանի մուսաւաթական կառավարութիւնը կը համոզի զեներալ Տօմսոնին կտրուկ կերպով պահանջելու մեղնից՝ յանձնելու իրեն անգլիացիներին, որոնք իրենց հերթին կը յանձնեն մուսաւաթականներին: Հայրս և ես վստահեցնում էինք, որ եթէ անգլիացիները ննջարկուեն մուսաւաթական կառավարութեանը նման քայլ անելու, ոչ մի դէպքում նրանց այդ անարդար պահանջը չենք կատարի, և եթէ չատ պնդեն իրենց պահանջի վրայ, սպառնան, թէ կարող են խիստ միջոցների դիմել, իրեն կը փոխադրենք հայկական խուլ գիւղերից մէկը, որտեղ խիստ դաղտնի կը մնայ, և կը յայտարարենք, որ վերադարձել է իրենց գիւղը. եթէ չեն հաւատայ, թող պրպտումներ անեն քաղաքում և գտնեն:

Աղգային Խորհրդին յայտնեցի այդ մասին և հարց դրեցի, որ դիմենք կապիտան Սէրըայլին, յայտնենք Սալմանբէկի մասին, թէ ինչ մարդ է, և խնդրենք, որ նկատի ունենայ, եթէ պահանջ լինի Աղրբէջանի կողմից՝ յանձնելու Սալմանբէկին, մենք չպիտի յանձնենք, որովհետև նա ապաստան է գտել մեղ մօտ և, ինչպէս յայտնի է, միջադգային օրէնքով անթոյլատրելի է ապաստան գտած քաղաքական յանցաւորին յանձնել այն իշխանութեան, որից փախստական է դարձել:

Դեկտեմբերի 22-ին Ասլան Շահնազարեանն ու ես ներկայացանք կապիտան Սէրըայլին, հանդամանօրէն պատմեցինք Ասլանբէկովի հանդէպ թուրք բէկերի ունեցած թշնամական

վերաբերմունքը, որովհետև նա չարունակ միջամտություններ է արել զրկանքների ենթակայ գիւղացիների և բէկերի միջև պայքարներին, պաշտպանել է գիւղացիների շահերը: Վերջապէս, Սալմանբէկը Թիֆլիսի ուսուցչական ճեմարանն աւարտած "ինտելիգենտ" մարդ է, երկար տարիների ուսուցիչ, որին դէմ են անգրագէտ կամ կիսագրագէտ բէկերը, որոնք խիստ յետադէմ տարրեր են և միանգամայն դէմ եւրոպական լուսաւորութեանն ու մշակոյթին:

Կապիտան Սէրբայդը ուշադրութեամբ լսեց մեղ, ապա հարցրեց, թէ որտեղ է գտնւում Սալմանբէկը. պատասխանեցի, որ գտնւում է քաղաքում և ապրում է մեր ընտանեկան յարկի տակ:

– Յայտնեցէք Սալմանբէկին, ասաց կապիտան Սէրբայդը, որ այս օրւանից գտնւում է անգլիական կառավարութեան հովանու տակ և հանգիստ զգայ իրեն:

Երբ Սալմանբէկին յայտնեցի կապիտան Սէրբայդի պատգամը, նա անչափ ուրախացաւ:

Դեկտեմբերի 23-ին կապիտան Սէրբայդը յայտնեց Ազգային Խորհրդին զեներալ Տօմսոնից ստացած հրամանը, որ մենք ժամանակաւորապէս ճանաչենք Ադրբէջանի գերիշխանութիւնը, մինչև այս հարցի վերջնական լուծումը: Ազգային Խորհուրդը մերժեց, պատճառաբանելով, որ այդ հարցը պէտք է Ղարաբաղի հայութեան համագումարը քննութեան առնի և իր պատասխանը տայ. Ազգային Խորհուրդը, որ ժամանակաւոր օրգան է, իրաւունք չունի զբաղւելու այդ հարցով, ուստի պիտի սպասել համագումարին, որ չատ չուտով պիտի տեղի ունենայ:

Դեկտեմբերի 24-ին կապիտան Սէրբայդը խնդրում է, որ թիւրիմացութիւններից զերծ մնալու համար, առաջիկայ 1919 թւի յունւարից ամսաթիւերը նոր տոմարով նչւեն. Ազգային Խորհուրդը ընդունում է եղած առաջարկը:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆԻ ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻՒՆԸ

Կրկին հարց է ղրուում՝ գրամ պահանջել քաղաքագլխից, մանաւանդ որ հրամանատարներից մէկը՝ Բագրատ Ղազանչեանը, Ջրաբերդի չրջանը պիտի գնար և ղրամի խիստ կարիք ուներ, ամէնաանհրաժեշտ ծախսերի համար: Դիմում ենք քաղաքագլխին, նոյն պատճառաբանութեամբ ղարձեալ մերժում է և չի ընդունում մեր չորսի գրաւոր խոստումը, հետագային պահանջ լինելու դէպքում, ենթարկւել պատասխանատուութեան:

Քաղաքագլխի այդ անիմաստ և անմիտ վերաբերմունքը ղրսևորուում, սեպհականութիւն է դառնում հանրութեան, և ամէնքը մեղադրում են նրան: Հրամանատարների ներկայացուցիչները որոչեցին գիտակից և կչիռ ունեցող քաղաքացիների մի սահմանափակ ժողով հրաւիրել, պարզել խնդիրը, թերևս հնարաւոր լինէր մի փոքր գումար հանգանակել ունևորներից, մասամբ բաւարարելու չրջանների ամէնասուղ կարիքները և վնասուց յանձնախմբի անհրաժեշտ ծախսերը: Յանձնախմբի անդամները, ինչպէս և հրաւիրւելիք աչխատակիցները, յանձն են առել աչխատելու անվճար, գա համարելով ազգային պարտականութիւն, սակայն Ազգային Խորհուրդը պարտականութիւն էր համարում հոգալու յանձնախմբի անհրաժեշտ ծախսերը: Աս. Շահնազարեանը և ես այդ նպատակով, առաջին հերթին, նախքան ժողով հրաւիրելը, անցեալի փորձը նկատի ունենալով, պետական գանձարանի հաչւապահ Կարապետ Յակոբեանի և փոխատու վարկի ղրամատան հաչւապահի Կոստ. Յարութիւնեանի կարծիքը լսեցինք: Երկուսն էլ յայտնեցին, որ ղրամատները բոլորովին զուրկ են ղրամից և քաղաքացիները մեծ դժւարութիւնների են ենթակայ, անւանապէս ղրամատներում փող ունեն, բայց իրականին մէջ ղրամարկղներում փող չկայ ոչ հնչիւն և ոչ թղթէ: Երկու ղրամատները տագնապի են ենթարկւած այն օրւանից, երբ գանձակեցի Թուրք փաստաբան, տխրահռչակ Իսմայիլ խան Զիաթխանովը, որ Շուչու պետական գանձարանին յանձնելու համար երկու և կէս միլիոն ռուբլի ղրամը հասցրել էր Ազղամ, բայց, ինչ-որ չար նպատակով, չհասցրեց Շուչի. Ազղամից վերադարձաւ, հակառակ հայ-թրքական կոմիտէի խնդրանքի, և ղրամն էլ հետը տարաւ: Այնպէս որ, հանգանակութիւնը հազիւ թէ յաջողութեամբ պսակւի:

Մեր խորհրդակցութիւնը երկու հաչւապահների հետ ակումբի սենեակներից մէկում էր, յանկարծ ուժեղ աղմուկ լսեցինք ակումբի ճաչարանի և փոյէի սենեակներից, իսկոյն բոլորս նետւեցինք այն կողմը և ինչ տեսնենք, Բագրատ Ղազանչեանին իրենց գիրկն առած,

եօթ-ութ հոգի, խնդրում են հանգստանալ, արիւն չթափել, իսկ նա գոռդոռալով ասում էր, "քաղաքագլուխ է, ի՞նչ է, մեծ մարդ է, թող մեծութիւն անի, բայց մարդ լինի, ոչ թէ արհամարհի ժողովրդի ներկայացուցիչներին, ժողովուրդի համար բերած ղրամի վրայ նստի և վող չտայ ժողովրդի գործի համար":

Երբ մօտեցանք Բագրատին ու նրա թևերից պինդ բռնած մարդկանց, վերջիններս չատ ուրախացան: Բագրատը չատ էր յուզուած, սակայն մեղ տեսնելով բաւական մեղմացաւ: Տեղեկացանք, որ խօսակցութիւն է ունեցել քաղաքագլխի հետ և հարցրել, թէ ինչու ղրամ չի տալիս, չրջանը թողել, եկել է քաղաք, որովհետև կանչւել է Աղգային Խորհրդի կողմից, ահա բաւական ժամանակ է, սպասում է ղրամի և չի ստանում, քանի որ ղրամը նրա մօտ է և մերժում է տալ: Քաղաքագլուխը, դժգոհ Բագրատի գանգատից ու կչտամբանքից, գրգռած տոնով ասում է, թէ պարտաւոր չէ բացատրութիւն տալու իւրաքանչիւր պատահական մարդու և ահա այս խօսքերից է վիրաւորւել: Բագրատը, գոռալով վրան՝ "ես պատահական մա՞րդ եմ", ասում և հանում է ատրճանակը, ներկայ գտնուղները արագօրէն անմիջապէս չրջապատում, կախւում են Բագրատի թևերից, մի կերպ պահում են, որ արիւն չթափւի հասարակութեան ակումբում, օրը ցերեկով:

Երևոյթը վատ էր, ի հարկէ, և ծանր տպաւորութիւն էր թողել ներկաների վրայ, սակայն պիտի ասել, մեղքը քաղաքագլխինն էր, որ ցարական չինովնիկից աւելի պինդ էր կառչել ձևապաչտութեան, թէ իբր Թիֆլիսից իր բերած ղրամը քաղաքային վարչութեան համար է, քաղաքի կարիքները հոգալու, և այդ ղրամից մէկ կոպէկ այլ նպատակի յատկացնել չի կարող, իրաւունք չունի. թէ մեր և թէ միւս հոսանքների մէջ կասկածներ կային, որ ղրամը, ամենայն հաւանականութեամբ, ստացել է աղգային աղբիւրից, որովհետև 1918 թ. ամառը անդրկովկասեան ընդհանուր իշխանութիւն գոյութիւն չունէր այլևս, մանաւանդ ՝ գերմանացիները ու տաճիկները մուտք գործելուց և Բագւի գէմ արչաւանք սկսելուց յետոյ: Եւ քանի որ Թիֆլիսից կտրուած էինք, սոսկ կասկածների վրայ յինւած, ճնշում գործ դնել կամ հարկադրական աւելի աղդու միջոցի դիմել վարանում էինք, ուստի աշխատում էինք համոզել քաղաքագլխին:

Երբ ներկաները, կախւած Բագրատի թևերից, փորձում էին հանգստացնել նրան, քաղաքագլուխը արագ դուրս է գալիս ճաշարանից և փախչում իր տունը: Նոյն օրը, միջադէպից երկու ժամ յետոյ, երեք հաղար/3000/ռուբլի է ուղարկում մեղ, որ բաւարարենք Բագրատին ու ճամբու դնենք: Իսկական չինովնիկի վերաբերմունք, ուղում է, չնչին մի գումար տրամադրելով Աղգային Խորհրդին, հարցը փակւած համարել: Ուղարկւած 3000 ռուբլիով առայժմ կը

դոհանայ Բագրատը, սակայն ինչպէ՞ս դոհացնել միւս չրջանների հրամանատարներին և վնասուց յանձնախմբին: Ազգային Խորհուրդը որոչեց, որ Ասլան Շահնազարեանն ու ես հանդիպենք քաղաքագլխին և խիստ ձևով հարցը դնենք, մեզ հետ չվաղայ և այնպէս չանէ, որ ժողովուրդը դուրս գայ իր դէմ, և անցանկալի դէպքեր տեղի ունենան:

Յաջորդ օրը Ասլան Շահնազարեանն ու ես դնացինք քաղաքային վարչութիւն և իր առանձնասենեակում հանդիպում ունեցանք: Մեզ որ տեսաւ, կարծես սպասում էր մեզ, խիստ դժգոհութիւն յայտնեց, որ իբր մեր ներքին խնդիրները դրսևորել, սեպհականութիւն ենք դարձրել հասարակութեան և, առիթից օդտւելով, ինչպէս երևակ, պատահական անպատասխանատու մարդիկ հրապարակ էին եկել և անպատչաճ ձևով միջամուխ եղել մեր ներքին խնդիրներին, ղրամ պահանջելով:

–Գերապիմ Իսահակովիչ, մեղքը մերը չէ, ասացի, մենք գաղտնի, դաւադրական գործեր կատարող մարմին չենք: Ազգային Խորհուրդը լեգալ մարմին է, նրա գործունէութեանը պէտք է, որ տեղեակ լինի հասարակութիւնը: Թիֆլիսից ձեր բերած ղրամի մասին քաղաքացիները դիտեն, որովհետև դուք էք յայտնել այդ մասին: Եւ երբ մենք ուղեցինք հանդանակութիւն անել, այդ առիթիւ խօսեցինք մի քանի հոգու հետ, որոնք հարցրին, թէ ինչու՞ քաղաքագլխին չէք դիմում, իր բերած ղրամից մի որոշ դումար Ազգային Խորհրդի արամադրութեան տակ գնելու, նա կարող է ղրամ տալ և պէտք է տայ: Մենք չմտաբերինք, ասացինք, որ դիմել ենք ձեղ, և դուք մերժել էք: Բնականաբար, ձեր մերժումն էլ տարածուել, սեպհականութիւն է դարձել հասարակութեան:

Բագրատ Ղաղանչեանը պատահական մարդ չէ, չրջանի հրամանատար է, մէկը այն մարտիկներից, որոնք պատերազմի սկզբից մինչև այսօր զէնքի տակ են: Եւ Բագրատը բաղմիցս բաց աչքերով դէպի մահն է գնացել, աչքի ընկել քաջութեամբ, Գէորգեան ոսկէ խաչի չքանչանի արժանացել և Մարտակերտի ճակատում էլ իր արժանավայել դերն է կատարել, երկու անգամ տաճիկների գործած յարձակումները յետ մղելով: Մարդը երկու չարաթի է, ղրամի է սպասում, խոստում ենք արել՝ բաւարարելու իրեն: Բագրատը, ինչպէս ասւեց, զէնքի մարդ է և, որպէս այդպիսին, միշտ իր կոչման բարձրութեան վրայ կանգնած է եղել: Մենք էլ պատրաստ ենք ըստ արժանւոյն գնահատել նրան, որ այն յուսալքման օրերին կարողացել է իւր անձնական օրինակով մարտական ուժերի ոգին բարձր պահել:

–Իսկ ես այն օրերին, երբ տաճկական զօրքը յարձակում էր գործում Ասկերանի ճակատի երկայնքին, ծնկաչոք աղաչել, պաղատել եմ, որ Վահիդ բէյը չռմբակոծէր մեր գիւղերը: Ես մի՞թէ

մեր ժողովրդի համար չեմ մտածում, նրա բարին չեմ ցանկանում, ասում է քաղաքագլուխը:

–Մենք զնահատել ու զնահատում ենք ձեր կատարած գործը, չենք մոռանում, ասացի, սակայն դուք խիստ ձևապաշտութիւն էք անում այն ժամանակ, երբ այլևս իշխանութիւն գոյութիւն չունի, կատարեալ անիշխանութիւն է, և դուք դողդողում էք ձեր ըերած դրամի վրայ, վախենում էք դրամ տրամադրել Ազգային Խորհրդին:

–Գերասիմ Իսահակովիչ, ես զարմանում եմ, ասաց Ասլան Շահնազարեանը, ո՞վ պիտի հաշիւ պահանջէ ձեզնից: Ձեզ մօտ եղած դրամը, ճիշտ է, ռուսական դրամ է, բայց ինքը՝ ռուսը չկայ. ո՞վ պիտի ձեզնից հաշիւ պահանջէ՝ վրացի՞ն, թէ՞ աղրբէջանցին: Երկուսն էլ իրենց կապը կտրել են մեզ հետ, ուստի չեն կարող, որովհետև իրաւունք չունեն հաշիւ պահանջել ձեզնից և ոչ էլ ուրիշ մէկ հայից: Այո, ինչպէս միշտ ասել ենք, նորից կրկնում ենք, որ Ազգային Խորհրդին բաց թողնելիք դրամի ամբողջ պատասխանատուութիւնը վերցնում ենք մեզ վրայ, մենք վստահ ենք, որ Թիֆլիս, Բագու և Անդրկովկասեան երկրում ապրող բազմահազար ղարաբաղցիները արձագանք կը տան մեր դիմումին և օգնութեան կը հասնեն լիաբուռն նուիրատուութեամբ: Եւ եթէ մի օր, իրօք, հանդէս գայ պետական մի օրգան, որ լիազօրութիւն կունենայ հաշիւ պահանջելու ձեզնից պակսած դրամի համար, մի բան, որին չեմ հաւատում, այնուամենայնիւ, ղարաբաղցիներս ձեզ մենակ չենք թողնի: Մեր դժւարութիւնը մինչև չորրորդ համագումար հրաւիրելն է, երբ համագումարը տեղի ունենայ, օրինական ձևով ընտրուած Ազգային Խորհուրդը, որպէս ազգային իշխանութեան լիազօր դործադիր մարմին, անչուշտ, ազդու միջոցների կը դիմէ դրամ ձեռք ըերելու համար:

–Գերասիմ Իսահակովիչ, ասացի, եթէ դուք վարանոտ չդտնուէիք, դրամ տայիք, ոչ մէկ թիւրիմացութիւն տեղի չէր ունենայ:

–Բայց Բագրատ Ղազանչեանը իրաւունք չունէր ուղղակի ինձ դիմելու և դրամ պահանջելու, իրա ներկայացուցիչը Ազգային Խորհրդի անդամ է, որը Ազգային Խորհրդի միջոցով պէտք եղածը պիտի աներ: Նոյնիսկ Ազգային Խորհրդի մէկ անդամը, առանց Խորհրդի որոշման որևէ քայլ չպիտի անի, ասում է քաղաքագլուխը:

–Գերասիմ Իսահակովիչ, ասացի, դուք այնպէս էք խօսում, կարծես Բագրատը եթէ ոչ բարձր, դէթ միջնակարգ կրթութիւն ստացած մարդ է: Նա զրագէտ գիւղացի է, ազնիւ մարդ և քաջ մարտիկ, միշտ պատրաստ՝ կեանքը զոհելու իր ժողովրդի համար: Եւ եթէ նա ջղային վիճակում նման ելոյթ է ունեցել, ներելի է, որովհետև կանխամտածւած քայլ չէ: Եւ, վերջապէս, ինչպէս մեր խօսքի սկզբին ասացի, դուք եթէ ձևապաշտութիւն չանէիք, որևէ թիւրիմացութիւն տեղի չէր ունենայ և եթէ դուք պաղարիւնութեամբ մօտենայիք խնդրին, ինքներդ կը գայիք այն եզրակացութեան, որ սխալանքի մէջ էք և ձեր սխալի հետևանքն է տեղի ունեցած անախորժ դէպքը:

– Եղիշէ, ես տեսնում եմ, որ դու ուղում ես միակ յանցաւորը ինձ համարել և այդպէս էլ հասկացնել բոլորին: Իսկ ես էլ իմ հերթին քեզ եմ մեղադրում, դու ես թէև տալիս մարզկանց, որոնք համարձակւում են անպատչաճ քայլեր անել: Ես հէնց հիմա ասում եմ քեզ, երբ հնարաւորութիւն ունենամ Թիֆլիս գնալու, պիտի զանգատւեմ Ռոստոմին[1] և պիտի պատմեմ ամէն բան, որ քեզ դատեն և ըստ արժանւոյն վերաբերմունք ցոյց տան, ասում է քաղաքագլուխը: Երբ խօսքը վերջացրեց, ես ծիծաղեցի, ապա ասացի՝ Գերասիմ Իսահակովիչ, սրտանց ուղում եմ, որ դուք զանգատւէք Ռոստոմին, և նա էլ կանչի ինձ բացատրութեան, հէնց ձեր ներկայութեան:

–Դու ծիծաղում ես, իսկ ես լուրջ եմ ասում. այո, պիտի զանգատւեմ Ռոստոմին և դատի տամ քեզ:

–Լաւ, ես էլ կը սպասեմ ձեր դատին, ասացի, սակայն մենք կարևոր հարցը, որի համար եկել ենք, չվերջացրինք, դուք 3000 ռուբլի էք ուղարկել, այդ չնչին գումարով մեր ո՞ր ցաւին դարման անենք: Դուք պարզապէս խաղում էք մեզ հետ. վաղը եթէ հասարակութեանը, յայտնի դառնայ, որ դուք 3000 ռուբլի էք տւել մեզ, պիտի ծաղրի ենթարկէ ձեզ էլ, մեզ էլ:

–Գերասիմ Իսահակովիչ, դուք նոյնպէս Ազգային Խորհրդի մէկ անդամ էք և պարտաւոր էք ոչ միայն քաղաքի, այլև գաւառների կարիքների մասին մտահոգւել, ուստի, որպէս Ազգային Խորհրդի անդամ, ի՞նչ միջոց էք առաջարկում չրջանների պահանջներին բաւարարութիւն տալու համար, հարցնում է Ասլ. Շահնազարեանը:

–Գերասիմ Իսահակովիչ, Առաջնորդի մօտ, Ազգային Խորհուրդ կազմելիս, կտրականօրէն հրաժարւեցիք աշխատել Հայրապետ Մուսայէլեանի հետ, որն այսօր ծանրօրէն հիւանդ պառկած է, և հիւանդացել է իր ազգային-հասարակական պարտականութիւնը կատարելիս, տիֆով վարակւել ղարաղչլաղցի չքաւոր ընտանիքների նպաստը բաժանելիս և նա, որ բնաւ ցանկութիւն չունէր աթոռ դրաւելու, տեղի էր տւել ոչ միայն մեր ընկերների, այլև միւս հոսանքի գործիչների ցանկութեանը, մտնել կազմի մէջ և օգտակար լինել. նա, որ Շամքորի արիւնոտ դէպքերի օրերին, Գանձակի վրայով, ամէն վտանգ արհամարհելով, ինքնակամ գնացել էր Թիֆլիս, պարզել մեր վիճակը, Շուշու գնդի կազմակերպման պահանջը դրել մեր ազգային մարմինների առջև և Նախիջևանի խիստ վտանգւած չրջանից վերադարձել տեղս, այդպիսի մարդու հետ չուղեցիք աշխատել, և նա, որպէս բարեկիրթ մարդ, յանուն գործի յաջողութեան, թողեց, հեռացաւ, որպէսզի դուք հանգիստ սրտով լաւ աշխատէք: Արդ, դուք չէք ղղում կամ

---

[1] Ռոստոմը քաղաքապլխի վեճան է, քրոջ՝ Եղիսաբէթի (Լիզայի) ամուսինը: Քաղաքագլուխը ուրիչ անգամներ էլ մէկից աւելի առիթներով ասել էր, որ Թիֆլիս գնալուց պէտք է զանգատւէր Ռոստոմին Ասլառաժի Կ.Կ.-ի գործունէութեան մասին, որն ըստ իր դատողութեան, նեղ կուսակցական բնոյթ ունէր, ի վնաս հասարակական համերաշխութեան և խաղաղութեան: (Հեղ.)

ընդունում, որ առաջիկային կայանալիք չորրորդ համագումարին, մեզ հետ հաւասարապէս դուք էլ պիտի պատասխանատուութեան ենթարկուէք, ասացի:

-Գերասիմ Իսահակովիչ, երեկւայ տխուր դէպքից յետոյ, ասաց Աս. Շահնազարեանը, մենք, Ազգային Խորհրդի չորս անդամներս, նիստ ունեցանք և բաւական մտքերի փոխանակութիւն ունեցանք: Բոլորս ցաւում ենք, որ նման ցաւալի, տխուր դէպք է տեղի ունեցել, այն էլ այս օրերին, երբ աւելի քան անհրաժեշտ էր, որ Ազգային Խորհուրդը միակամ, միացեալ ներքուած լինի իւր սահմանած դերին, ամուր կանգնած իւր կոչման բարձրութեան վրայ: Դուք մեզ էք մեղադրում տեղի ունեցած անախորժ դէպքի համար, իբր թէ ներքին հարցերը մենք դրսեւորելով, առիթ ենք ընձեռել նման ելոյթի: Ինչպէս նկատեց, ձեր դէմ դժգոհութիւն ստեղծելու նպատակով ոչինչ չի կատարուել: Եւ, վերջապէս, աշխարհում բացարձակ գաղտնիք գոյութիւն չունի, իսկ մեր գործունէութիւնը գաղտնի չէ, միանգամայն բաց է և պէտք է, որ բաց լինի, որպէսզի ժողովուրդը տեսնի, իմանայ, թէ իր մարդիկ ինչպէս են աշխատում և ինչ են անում: Սրա համար պէտք չկայ վրդովուելու: Թէ դուք սկզբից ձևի ետևից չընկնէիք, նկատի ունենալով ներկայ կացութիւնը, չվախենայիք ինչ-որ երևակայական հաշիւ պահանջողներից, միջոցներ տրամադրէիք, ոչ մէկ թիւրիմացութիւն տեղի չէր ունենայ: Հիմա եկել ենք ձեր վերջին խօսքը լսելու, և ձեր խօսքը լինի դրական կամ բացասական, միևնոյն է, սեպհականութիւնը կը դառնայ հանրութեան:

Ամբողջ ժամանակ, երբ փոխնիփոխ Աս. Շահնազարեանն ու ես խօսում էինք, քաղաքագլուխը լուռ լսում էր, մտախոհ դէմքով: Եւ երբ Աս. Շահնազարեանը խօսքը վերջացրեց, ասաց. "Ես կը մտածեմ և վաղը ձեզ պատասխան կը տամ":

-Գերասիմ Իսահակովիչ, երկար մտածելու պէտք չկայ, ասացի, Ազգային Խորհրդի երեկւայ նիստին, չորս հոգով, միաձեսակ կարծիք ունենալով, յանգեցինք այն եզրակացութեան, որ Ազգային Խորհուրդը չորս հրամանատարական չրջանի համար, առ նւազն հարիւր հազար (100.000) ռուբլու պէտք ունի, և այդ դրամը միայն դուք կարող էք տալ: Մենք գնում ենք, մտածէք, սակայն նկատի ունեցէք, եթէ մերժում լինի ձեր պատասխանը, անհաւանական չէ, որ նոր, աւելի տխուր ու ցաւալի դէպքեր տեղի ունենան, որը միանգամայն ցանկալի չէ, այն էլ օտար ներկայացուցիչների աչքի առջև:

-Դու սպառնալիք ես տալիս, եղիչէ, և հէնց քո բռնած այդ ընթացքի համար, ինչպէս ասացի, քեզ դատի եմ տալու, երբ գնամ Թիֆլիս:

- Շատ լաւ, ես էլ ընդունում եմ, դատի տուէք:

-Մենք գնում ենք, Գերասիմ Իսահակովիչ, կը սպասենք ձեր վաղւայ պատասխանին:

Հիւանդանոցի, և Լիւդվիգ Տէր Գրիգորեան, կայազօրի (զինուորական), համեմատաբար երիտասարդ: Շուչու գնդի հետ եկել էին երկու բժիշկներ էլ, չուչեցի Արամայիս Բաղդասարեան և քարինտակեցի Աւանէս Աւանէսեան: Եւ վեց հոգով հազիւ հազ կարողանում էին հնարաւոր օգնութիւնը ցոյց տալ հիւանդներին: Բաւական էր ընտանիքիդ անդամներից մէկը հիւանդանար իսպանկայով, վարակւում էին հերթով և, նոյնիսկ միաժամանակ, միւսները:

Մօտենում էին Նոր տարւայ և Մննդեան տօները, բայց ժողովուրդը անտարբեր էր: Ըստ հայկական աւանդական սովորութեան Նոր տարւայ և Մննդեան տօները կատարելու համար օրեր առաջ պատրաստութիւնների մէջ էին ամէնքը, կերուխումի համար, կանայք խոնչաներով չտապում էին փռնչիների մօտ, իրենց պատրաստած անուշ դաթիաներն ու կաթնահունցները թխելու, տղամարդիկ չուկայից անհրաժեշտ գնումներն էին անում ըմպելիքների և զանազան ուտեստեղէնի, սակայն նոյեմբեր ամսու երկրորդ կէսից սկսած հիւանդութիւններից այնքան շատ վախճանուողներ եղան, որ ոչ ոք տօների մօտալուտ լինելը չէր ղղում: Թաղ չկար, որտեղ լաց ու կոծի ձայն չլսւէր, և այդ պատճառով, մարդիկ ասում էին, սիրտ չի մնացել տօն կատարելու համար, երբ պատը պատիդ կպած հարևանիդ մինուճար տղան կամ բաղմանդամ ընտանիքի միակ աշխատող ձեռքը դաժան հիւանդութեան զոհ է ղարձել, և տեղի ունեցած կորստեան պատճառով անվերջ սուգ ու չիւանի աղաղակն է հնչում ականջիդ, տրամադրութի՞ւն կը մնայ տօն կատարելու:

Նոր Տարին եկաւ անձայն և անչչուկ, մարդիկ անգուն չմնացին դիմաւորելու համար, զիչերն անցկացրին սովորական զիչերների պէս: Փողոցում, սակայն, իրար հանդիպելիս, ինչպէս կասեն՝ բերանի կողքով, այսինքն՝ ձևի համար, չնորհաւորում էին իրարու Նոր տարին և ասում՝ Աստուած չարը խափանի ու բարին կատարի:

1919 Թ. Նոր տոմարով

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Ազգային Խորհուրդը որոչեց ամփոփ մի զեկոյց պատրաստել և ուղարկել Բազէի մեր Ազգային Խորհրդին, այդպիսով կապ հաստատել և խնդրել, հնարաւորութեան սահմաններում զօրավիգ լինել մեզ, մեր անկապտելի իրաւունքները պաչտպանելու օտար

ներկայացուցիչների մօտ: Ասլան Շահնազարեանը պատրաստեց զեկոյցը, կարդացուց Ազգային Խորհրդի նիստին, որին ներկայ էր և քաղաքագլուխը, միաձայնութեամբ ընդունեց և որոշեց ճամբել: Զեկուցումը ստորագրեցինք երկու հոգի, նաստս, իբրև նախագահ, և Ասլան Շահնազարեանը, որպէս քարտուղար:

Առիթից օգտւելով, քանի որ պիտի յատուկ սուրհանդակ գնար Բագու, Ապառաժ Կենտրոնական Կոմիտէին ևս առանձին, համանման մի տեղեկագիր պատրաստեց, ուղարկելու համար Բագուի Կ. Կ.-ին:

Երկու մարմիններն էլ խնդրում են չարունակաբար տեղեակ պահել մեղ քաղաքական անցուդարձին, որովհետև դրսից կտրուած ենք, կանոնաւոր չէ գործում փոստը, թերթեր չեն ստացւում:

Յունւար 7-ին Ազգային Խորհրդի առաջին սուրհանդակը՝մեր արհեստաւորներից ներկարար Խաչին, իր բանւորական չորերը հագին, նամակներն առնելով, մեկնեց Բագու:

Տեղեկանալով, որ վնասուց յանձնախմբի մէջ աշխատող Գր. Խաչեանը պիտի գնայ Բագու, որոշեց մանրամասն տեղեկագիրը պատրաստել և առանձին եռամսեայ մեր բիւջէն կազմել, ուղարկել Բագուի Ազգային Խորհրդին, որ բագւաբնակ ունևոր չուչեցիներից հանգանակեն և ուղարկեն, որովհետև թէ դիւղերի և թէ քաղաքի բնակչութիւնը տնտեսապէս ծայր աստիճան քայքայւած է, իսկ Ազգային Խորհուրդը, դրամական միջոցներ չունենալու պատճառով, անել վիճակում է գտնւում, ուստի պէտք էր օր առաջ օգնութեան հասնել: Բիւջէն կազմեցինք, և պարզւեց, որ երեք ամսւայ մեր ծախսերի համար թէ դինւորական և թէ քաղաքացիական, պէտք ունենք 2,700,000 - 3,000,000 ռուբլու:

Ազգային Խորհրդի նիստին կարդացւեց տեղեկագիրն ու կազմւած բիւջէն և միաձայնութեամբ ընդունւեց: Քաղաքագլուխը հարց դրեց առանձին մի ամփոփ զրուցին էլ պատրաստել, ուղղւած Բիչերախովին, նրան յայտնել Ջիրրայելի (Կարեագինի) գաւառում թուրքերի կողմից տեղի ունեցած խժդժութիւնների մասին 1917 թ. դեկտեմբերին, սահմանապահ ռուս դինւորներին դինաթափելու և սրախողխող անելու վերաբերեալ: Գրուխիւնները պատրաստ լինելով, քաղաքագլուխը վերցնում է, քաղաքային վարչութեան մեքենագրողին տալու, որ մեքենագրէ, և յետոյ սրբագրենք, ուղարկենք: Գրուխիւնները մեքենագրել է տալիս, առանց նախագահ- քարտուղարի, գրուխիւնների վերջում նչում Ազգային Խորհրդի անդամներ բառերը և առաջինը ստորագրում ինքը, ապա վարչութեան ցրիչի միջոցով գրուխիւններն ուղարկում մեղ՝ ստորագրելու: Ազգային Խորհուրդը անընդունելի համարեց

քաղաքագլխի այդ ձևի ստորագրութիւնը դրութիւնների տակ, որը չի պատշաճում որևէ օրգանի, ինչպիսին էլ լինի նա, պիտի ունենայ իր դիւանը, կարճ ասած՝ թէ նախագահը և թէ քարտուղարը, ուստի մի կողմ թողնելով քաղաքագլխի պատրաստած օրինակները, Ազգային Խորհուրդը պատրաստեց նորը, նախագահի և քարտուղարի ստորագրութիւններով, ուղարկելու Բագու։

Այդ մասին որոշուեց միաժամանակ յայտնել քաղաքագլխին, որ իր պատրաստել տւած օրինակը անպատշաճ համարելով, չուղարկուեց։ Քաղաքագլուխը զժգոհ մնաց և ասաց, որ դէմ է գրութիւնների տակ նախագահ և քարտուղար ստորագրութիւններին, ուստի չի կարող մնալ Ազգային Խորհրդի կազմի մէջ իբրև անդամ և հեռանում է։

–Գերասիմ Իսահակովիչ, կուզէք դուք ստորագրէք, իբրև նախագահ, ասաց Աս. Շահնազարեանը։

–Ոչ ես և ոչ էլ ուրիշ մէկը չպէտք է ստորագրէ իբրև նախագահ. պիտի ստորագրենք բոլորս, իբրև անդամներ, ուրիշ ոչինչ։

–Ի՞նչ իմաստ ունի ձեր ասած ձևը, հարցրեց Ա. Շահնազարեանը։

–Աւելի լաւ է, որ բոլորս ստորագրենք, իբրև անդամներ, ասում է քաղաքագլուխը։

–Եթէ ուղում էք, որ բոլոր անդամները ստորագրած լինեն, դժւար չէ, կարելի է և նախագահի և քարտուղարի ստորագրութիւններից յետոյ նշել անդամներերի անունները, որոնք կը ստորագրեն, ասաց Աս. Շահնազարեանը։

–Ոչ, իմ ասած ձևով պէտք է լինի, ասում է քաղաքագլուխը։

Այլևս չհամբերեցի և բաւական կտրուկ ձևով յայտարարեցի՝ "ձեր ասած ձևը միանգամայն անընդունելի է, որովհետև անպատշաճ է և անհանդուրժելի, որովհետև ձեր կապրիղն է, ուրիշ ոչինչ"։

Քաղաքագլուխը այլևս ոչինչ չկարողացաւ, վեր կացաւ և արագ դուրս եկաւ։ Մարկոսբէկն ասաց՝ "Այ մարդ, չուտ ասէիր էդ խօսքերը, որ չուտ էլ ադ լինէր այստեղից, ազատուէինք"։

–Երևի փոշմանել է, որ սկզբից սխալւել է, և չի ընդունել Ազգային Խորհրդի նախագահութիւնը, երբ առաջարկեցինք իրեն, ասում է Ար. Միքայէլեանը։

–Նա պարզապէս առիթի էր սպասում, իր վրայից գցելու Ազգային Խորհրդի անդամի պատասխանատուութիւնը, հրաժարւելով կազմից, ազատւեց իր ստանձնած պարտականութիւնից, մենք էլ ազատուեցինք իրենից, ասացի։ Գրիգոր Խաչեանը մեկնեց յունուարի 11–ին և տարաւ մեր գրութիւնները։

Զինուորական Միութեան վարչութիւնը, Ազգային Խորհրդի համաձայնութեամբ, որոշում է իր կազմից երկու հոգու ուղարկել

Բագու, ներկայանալու այնտեղի Ազգային Խորհրդին և յատկապէս ղօր. Բագրատունուն, ղեկուցելու Ղարաբաղի ինքնապաշտպանութեան մասին, թէ ինչ վիճակում է գտնւում, ինչպիսի կարիքներ ունի և որչափով օգնութիւն կարելի է յուսալ Բագւից և այլ տեղերի ազգային մարմիններից: Յունւար 12-ին սպանները Արտաշէս Վարդապետեանը և Մարտիրոս Այվազեանը գնում են Բագու, որպէս Ղարաբաղի Ջինւորական Միութեան ներկայացուցիչներ:

Յունւար 13-ին մի խումբ քաղաքացիներ համալսօսական մի գրութեամբ, ուղղւած Անգլիական Միսիային, յայտնում են, որ չեն ճանաչում Ադրբէջանի իշխանութիւնը, որ իրենք ճանաչում են միայն Դ.Ջնիկինի իշխանութիւնը: Գրութիւնը յանձնում են կապիտան Սէրրայդին, վերջինս ծանօթանալով համալսօսագրի բովանդակութեանը, անմիջապէս մեղ կանչում է իր մօտ և բացատրութիւն պահանջում: Մեղ համար կասկածից դուրս էր, որ քաղաքագլխի անխոհեմ թելադրանքով է կազմւած համալսօսագիրը, ուստի, ակնարկ իսկ չանելով քաղաքագլխի մասին, կտրականօրէն յայտարարեցինք, որ ներկայացւած գրութիւնը մի խումբ քաղաքացիների, բնակչութեան չնչին մասի մտայղացումն է, միանգամայն անկախ մեղնից, որ Ղարաբաղի հայութեան անունից խօսելու և գործելու իրաւունքը պատկանում է միայն Ազգային Խորհրդին, իսկ նման համալսօսագիրը մանաւոր ընոյթ ունի և միանգամայն ղուրկ է արժէքից:

Ազգային Խորհրդի կողմից Ասլան Շահնազարեանը և ես եղանք Կադետական կուսակցութեան հաւաքատեղիում, Անդրկովկասի Հայ Բարեգործական Միութեան ճիւղի գրադարանի ընթերցարանում և հանդիպում ունեցանք համալսօսագրի տակ ստորագրած վաճառականների հետ և խիստ նկատողութիւն արինք, որ համալսօսագիր ներկայացնելը, չեչտւած ռուսասիրութեամբ, անիմաստ ու անխոհեմ քայլ է, կատարւած առանց լրջօրէն մտածելու: Անգլիան թէև դաշնակից լինելով Ռուսաստանին, վերջինիս համարում է իր ախոյեանը, որի հանդէպ այնքան ցցուն կերպով դրսևորւած սէրը, ընականաբար, պիտի խիստ տհաճութիւն պատճառի անգլիացուն: Վերջապէս, երբ Ազգային Խորհուրդ կայ, որը միակ լիազօրն է Ղարաբաղի հայութեան անունից խօսելու և գործելու, ի՞նչ իրաւունքով նման անխոհեմ քայլ են արել:

Վաճառականները պարզ ասացին, որ ինքնագլուխ չեն արել, քաղաքագլուխն է խորհուրդ տւել:

Յունւարի 14-ին, Աղդամում, թրքական մի մեծ հրոսակախումբ, չրջապատում է օրը ցերեկով այնտեղ գտնւող անգլիական մէկ վաչտի կայանը, դինւորներին դինաթափ անելու նպատակով: Եւ երբ պահանջում են դէնքերը յանձնել, վաչտը

պատասխանում է համաղարկով: Թուրքերը նոյնիսկ փորձ չեն անում կրակելու, փախուստի են դիմում: Դա մի փորձ էր, որ եթէ յաջողւէր զինաթափ անել վաչտը, հաւանօրէն ուրիշ տեղեր գտնուող պահակների վրայ էլ յարձակումներ գործէին:

Յունուարի 17-ին Դոքտ. Խոսրովբէկ Սուլթանովը, Ադրբէջանի կառավարութեան կողմից, ղօրավար Տօմսոնի համաձայնութեամբ նշանակւած իբրև Ղարաբաղի նահանգապետ, գալիս է Շուշի ի հեճուկս հայերի: Ադրբէջանի կառավարութիւնը Ղարաբաղի նահանգապետ, նշանակելով, Հայաստանի կառավարութեանը կանգնեցնում էր կատարւած փաստի առջև, յուսալով տէր դառնալ Ղարաբաղին, թիկունքին ունենալով ղօրավար Տօմսոնին, որպէս ուժեղ յենարան:

Ազգային Խորհուրդը հանգամանօրէն տեղեկագիր է պատրաստում՝ ուղղւած Հայաստանի կառավարութեանը, ստեղծւած նոր կացութեան մասին, թէ ինչպէս անգլիական ներկայացուցիչները ամէն կերպ ջանում են կատարել ադրբէջանցիների ցանկութիւնը և զուտ հայաբնակ Ղարաբաղը, որտեղ թուրքերը չնչին փոքրամասնութիւն են կազմում, ենթարկել Ադրբէջանի իշխանութեանը: Նոյնը ամփոփ կերպով կազմւում է, ուղղւած Անդրանիկին: Երկու զրուխիւնները սուրհանդակի միջոցով ուղարկւում են Գօրիսի զործադիր մարմնին, մէկն ուղարկւելու համար Երևան և միւսը յանձնելու Անդրանիկին:

Հ. ՄՈՒՍԱՅԷԼԵԱՆԻ ԵՒ Կ. ՆԱՐԻՆԵԱՆԻ ՄԱՀԸ

Յունուար 19-ին (Հին տոմարով 6-ին) ջրօրհնէքի օրը վախճանւում են Հայրապետ Մուսայէլեանն ու Կարապետ Նարինեանը, բծաւոր տիֆից:

Մանաւորապէս Հայրապետ Մուսայէլեանի մահով չատ մեծ, անդարմանելի կորուստ ունեցաւ Ղարաբաղի հայութիւնը: Հայրապետը, բնիկ Դաչբուլաղ զիւղացի, վերաբնակիչ Խանքէնդ աւանի, նախնական կրթութիւնը ստանալով Շուշու թեմական դպրոցում, որտեղ եղել է յառաջադէմ և չնորհունակ աշակերտներից մէկը, դպրոցն աւարտելով, 1903 թ. մեկնում է Գերմանիա, ընդունւում Լայպցիգի համալսարանի պատմափիլիսոփայական ֆակուլտետը, որն աւարտելով 1907 թ., վերադառնում է հայրենիք, պաշտօնավարում իր իսկ ուսած դպրոցում, աւանդելով հայոց և ընդհանուր պատմութիւն: Հայրապետը մեր բարձրորակ ու լրջախոհ մտաւորականներից մէկն էր: Մարիամ-Ղուկասեան օրիորդաց դպրոցի տնօրէնն էր: Դպրոցը կառուցել են մեծահարուստ

Ղուկասեան եղբայրները՝ ի յիշատակ իրենց վաղաժամ վախճանուած քրոջ՝ Մարիամի: Ղուկասեանները երկյարկանի լաւ տուն ունէին, որտեղ իջևանել էր Խրիմեան Հայրիկը 1898 թ., այդ տան կից կառուցած էր ղպրոցի լուսաւոր, սրբատաշ գրանիտեայ չէնքը: Հին տան մէկ մասը յատկացուած էր տեսչին, բնակութեան համար, իսկ միւս մասը՝ դրադարանի, բնագիտական աշխատանոցի և ուսուցչանոցի: Ղուկասեանները ոչինչ չէին խնայել ղպրոցը յարմարաւէտ և առողջապահիկ դարձնելու համար, ապա ամէն տարի իրենց նիւթական օժանդակութեամբ ջանում էին, որ ղպրոցը պակասներ ու թերութիւններ չունենայ:

Դպրոցը իր արժանաւոր տեսուչն ունեցաւ յանձինս Հայրապետ Մուսայէլեանի, որը իր համակ էութեամբ նուիրուած էր ղպրոցին ու աշակերտութեանը: Հասարակութիւնը մեծապէս գնահատում էր տեսչին, և հոգաբարձութիւնը հիացմունքով էր արտայայտւում նրա կատարած աշխատանքի մասին: Իր ընկերական վերաբերմունքով վայելում էր ուսուցիչների անվերապահ յարգանքը, իսկ հայրական նուիրուածութեամբ՝ աշակերտուհիների անսահման սէրը:

Դպրոցի ընդարձակ բակում երկու թաղստ էր դրուած, մէկի վրայ դրուած էր Կարապետ Նարինեանի դազաղը: Կարապետը ղպրոցի ուսուցիչներից մէկն էր, որ երկար տարիների մանկավարժական վաստակ ունէր Շուշու թեմական, ինչպէս և Բաթումի հայկական դպրոցներում պաշտօնավարած լինելու շնորհիւ, իսկ տարիներ էլ՝ որպէս Մարիամ-Ղուկասեան օրիորդաց ղպրոցի դաստատու:

Դպրոցի ընդարձակ բակը լեցուած մօտ 2000 յուղարկաւորներ ու աշակերտութեան մի մասը բակում և մի մասը ղպրոցի ընդարձակ միջանցքում երկչարք կանգնած, լացից կարմրած աչքերով սպասում էին սիրելի տեսչի դագաղը բնակարանից դուրս բերելուն: Անմոռանալի է և չափազանց յուզիչ այն պահը, երբ ընկերներն ու ուսուցիչները հին չէնքից դէպի միջանցքը բացուող դռնից դուրս էին բերում դագաղը, ամբողջ աշակերտութիւնը վայրկենապէս պոռթկաց ողբաձայն բարձր աղաղակով: Աշակերտութեան սրտակեղեք ողբը աղղել էր ոչ միայն կանանց, այլև տղամարդկանց չատերի վրայ, և ամէնքը հոնգուր-հոնգուր լաց էին լինում:

Եւ երբ քահանաներն ու տիրացուները լռեցին, հոգաբարձութեան կողմից դամբանական խօսեց տասնեակ տարիների հասարակական գործիչ Դոքտ. Նիկ. Եարամիչեանը, որը քաղաքի լաւագոյն բժիշկներից մէկն էր և միւս բժիշկների՝ Իս. Զուրաբեանի, Ս. Համբարձումեանի և Լ. Տէր Գրիգորեանի հետ

միասին ամէն կերպ աշխատել էին փրկել երկուսի էլ կեանքը, բայց մահուան ճիրաններից պոկել հնարաւոր չէր եղել:

Դոքտ. Ն. Եարամիչեանը խոր յուղումով խօսեց, թէ վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ պատերազմների ժամանակ այնքան դոհեր չի տալիս մարդկութիւնը, որքան հիւանդութիւնների համաճարակի ժամանակ, որովհետև գիտութիւնը դեռ աղդու միջոցներ չի գտել որոշ հիւանդութիւններ երևալուց անմիջապէս առաջն առնելու: Հայրապետ Մուսայէլեանը և Կարապետ Նարինեանը դոհւեցին իրենց աղգային – հասարակական պարտականութեան կատարման ընթացքին, երկուսը միասին, չքաւոր հայ ընտանիքներին նպաստ բաժնելու ժամանակ վարակւելով բծաւոր տիֆով: Բժիշկներն ամէն ջանք գործ դրին, չկարողացան փրկել: Եւ այսօր հասարակութիւնը դրկւում է իր երկու վաստակաւոր գործիչներից, որոնք դեռ լեցուն էին եռանդով և պատրաստ՝ իրենց ուժերը ի սպաս դնելու իրենց հարազատ ժողովրդին:

Դաչնակցութեան կողմից խօսեց ընկ. Անուշաւան Տէր Միքայէլեանը, վեր հանելով երկու ընկերների կատարած դերը, մասնաւորապէս ուսուցչական ասպարէզում. երկար տարիներ միասին աշխատած լինելով, ականատես է եղած նրանց նւիրածութեան և բարեխիղճ աշխատանքին: Նոյն նւիրածութեամբ էլ աշխատել են կուսակցական, աղգային, հասարակական կեանքում:

Ռուսերէն չատ ղգացւած դամբանական ասաց Աչոտ Մելիք Յովսէփեանը, հայ սոց. դեմոկրատ կազմակերպութեան կողմից: Աչոտը Ղարաբաղի Հայոց Միջկուսակցական բիւրօն կազմելու օրից ի վեր, չարունակ աշխատելով միասին, ի մօտոյ լաւ էր ճանաչել Հայրապետին և ոչ միայն յարգում, այլև սիրում էր նրան: Իր խօսքի մէջ չեչտեց, թէ ժողովուրդը ինչպիսի մեծ կորուստ է ունենում Հայրապետի մահւամբ: Վեր հանեց Հայրապետի կատարած դերը աղգային հասարակական կեանքում, իբրև բաձրորակ մտաւորական, թէ ուսուցչական և թէ այլ ասպարէզներում: Ապա թւելով նրա բարեմասնութիւնները, որպէս անձնուրաց, նւիրւած գործչի, դնահատեց իբրև մարդկային բարձր արժանիքներ ունեցող անհատի:

Աչակերտութիւնը ցանկութիւն էր յայտնել, որ իրենց սիրելի տեսչի դին ամփոփւէր դպրոցի պարտէղում, որպէսզի իրենց աչքի առջև լինէր չիրիմը, խնամք տածել կարողանային, չուրջը միչտ ծաղիկներ ցանէին, բայց Հոդաբարձութիւնը չարմար չէր գտել և որոչել էր ամփոփել քաղաքային հիւանդանոցից քիչ վեր, զբօսայդու մօտ, հայ-թրքական ընդհարումներին զոհւածների փոքր գերեզմանատանը: Եւ երբ վերջացան դամբանականները,

Կարապետ Նարինեանի դին վերցրին իր հարազատները և յուղարկաւորների մի մասի հետ ուղղուեցին քաղաքից դուրս, վերին Հանգստարանը, իրենց տոհմական գերեզմանատանն ամփոփելու:

Հայրապետի դին, աչակերտութեան և մեծ բազմութեան յուղարկաւորութեամբ, ուսամբարձ տարուեց զոհուածների գերեզմանատունը, որ բաւական մօտ էր, դպրոցի հանդիպակաց կողմին: Ճամբին աչակերտութիւնը հետևում էր դագաղին, չարունակ լուռ արտասուելով մինչև գերեզմանատուն, և երբ դին իջեցրին գերեզման, աչակերտութիւնը դարձեալ պոռթկաց ողբաձայն աղաղակով. եղան ուշաթափուողներ: Տեսարանը խիստ յուղիչ էր: Գերեզմանատանը խիստ ղգացուած խօսեց ընկ. Աստուր Աւետիսեանը կուսակցական ընկերների և ուսուցիչների կողմից, որից յետոյ հասարակութիւնը տխուր-տրտում ցրուեց:

Հայրապետի կորուստը չատ ղգալի էր ոչ միայն մեր կուսակցական կազմակերպութեան, այլև ամբողջ հասարակութեան համար: Նա, չնորհիւ իր լաւ բնաւորութեան, վարւելակերպի, անաչառ դատողութեան, անձնական հակառակութիւնները ցուցադրած մարդկանց հանդէպ ունեցած ներողամտութեան, ամէն վտանգ արհամարհող խիղախութեան, մեծապէս գնահատուած, բոլորի յարգանքն էր վայելում: Յուղարկաւորների մէջ էր նաև քաղաքագլուխը, որ գլխահակ լսում էր դամբանական ասողներին: Եւ Հայրապետի թողած բացը մնաց, չկար մէկը, որ փոխարինէր նրան:

Յունուարի 23-ին Բագւից վերադառնում են Զինուորական Միութեան ներկայացուցիչները՝ կապիտան Արտաշէս Վարդապետեանը և Մարտիրոս Այվազեանը, որոնք դնկուցում են Բագւի Աղգային Խորհրդի և յատկապէս զօր. Բազրատունու հետ ունեցած համոզիպումների, դրոյցների և մտքերի փոխանակութեանց մասին: Թէ Աղգային Խորհուրդը և թէ զօր. Բագրատունին դրւատանքով են խօսել Ղարաբաղում կուսակցութիւնների համերաչխ գործունէութեան մասին և այն դգուչաւոր քաղաքականութեան, որով կարողացել են ժողովուրդը սպառնացող վտանգներից աղատ պահել: Զօր. Բագրատունու չնորհիւ, կարողացել են Աղգային Խորհրդից ստանալ 200 հազար ռուբլի, Միութեան անհրաժեչտ ծախսերը հոգալու, հետախուղական աչխատանք կատարելու և արդիւնքի մասին տեղեկագրելու Հայաստանի կառավարութեանը: Թէ Աղգ. Խորհուրդը և թէ Բագրատունին խորհուրդ են տալիս, որ իրենց կատարած աչխատանքների մասին դեկուցեն նաև Բագւի Աղգային Խորհրդին, երթևեկող սուրհանդակների կամ վստահելի քաղաքացիների միջոցով:

ՋԻՆԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յունուարի 24-ին տեղի ունեցաւ Ջինւորական Միութեան ընդհանուր ժողով, որին հրաւիրուած էի և ես, Ազգային Խորհրդի կողմից: Արտաչէս Վարդապետեանը ղեկուցեց, որ Սոկրատն էլ, հետևելով Միութեան, սպաններից երկու հոգու, Արտեմ Պետրոսեանին և Ալլահվերդեան Միքայէլին, ուղարկել է Բագու, Բագրատունուն ներկայանալու և օժանդակութիւն խնդրելու: Տեղի ունեցած խօսակցութեան ընթացքին պարզուեց, որ Սոկրատը հանդիպումներ է ունեցել սպաններից չատերի հետ, ակնարկներով հասկացրել, որ լաւ կը լինի, եթէ զառնայ հրամանատար, Ղարաբաղի բոլոր ուժերը ընդհանուր մէկ ղեկավարութիւն ունենան և այլն: Պարզ է, մարդու մէջ սոսկ փառասիրութիւնն է խօսում և ոչ թէ իրական գործ կատարելու ցանկութիւնը: Մտքերի փոխանակութիւնից յետոյ, սպաների ժողովը միաձայն որոշում է կայացնում ենթարկուել արդէն կեանքի կոչուած ժամանակաւոր Ազգային Խորհրդին, վերջինիս յանձնել զառնալ ամէն կերպ, ըստ հնարաւորին չուտ հրաւիրելու Ղարաբաղի չորրորդ համագումարը, օրինական ձևով ընտրելու Ազգային Խորհուրդ, որը և կը լինի միակ ղեկավար մարմինը:

Յունուարի 25-ին ժամանակաւոր Ազգային Խորհուրդը որոշում է չորրորդ համագումարը հրաւիրել փետրուար 10-ին: Նախապատրաստական և համագումարի ծախսերը յանձն է առնում հոգալ Ջինւորական Միութեան վարչութիւնը: Հրաւիրագրեր ուղարկուում են Ղարաբաղի 22 գիւղական հասարակութիւններին՝ երեքական պատգամաւորներ ուղարկելու՝ Ազգային Խորհուրդ ընտրելու, չրջանը ղեկավարելու համար և միաժամանակ, Ղարաբաղի հարցի չուրջ խորհրդակցելու, Ադրբէջանի կառավարութեան ոտնձգութիւններին դէմ դնելու համար:

ՍՈՒԼԹԱՆՈՎԻ ԽԵՂԱԹԻՒՐՈՒՄՆԵՐԻՆ ՀԱԻԱՏՈՒՄ ԵՆ ԱՆԳԼԻԱՑԻՔ

Կապիտան Սէրրայդը Ազգային Խորհրդին հրաւիրում է իր մօտ և ղրոյց ունենում Ղարաբաղի հարցի չուրջ: Նա յայտնում է, թէ, ըստ ադրբէջանցիների յայտարարութեան, նրանք են հանդիսանում Զանգեզուր-Ղարաբաղի բնիկները, ուստի, բնականաբար, Զանգեզուր-Ղարաբաղը պէտք է ենթարկուի Ադրբէջանի իշխանութեանը:

Հարկաւ, որևէ հայ մարդու համար, որ միջնակարգ կրթութիւն է ստացել, մանաւանդ Հայկական դպրոցում, դժւար չէ հերքել աղրբէջանցիների հնարած սուտը: Ժամանակաւոր Ազգային Խորհրդի կազմի անդամներից Ասլան Շահնազարեանը, վկայած Գէորգեան ճեմարանից և Պետրոգրադի համալսարանի արևելեան ուսմանց ֆակուլտէտից, գրեթէ մի ժամ տևողութեամբ դասախօսութիւն տւաւ հայոց պատմութիւնից և ճշտեց, թէ որ թւին են երևացել թուրքերը Անդրկովկասի սահմաններում: Ջանգեզուր-Ղարաբաղը, բացատրեց նա, մեկ մասն է պատմական Սիւնիք կոչւած հայկական նահանդներից մեկի[4], որի սահմանները շատ ընդարձակ են և որը Սիւնեաց նախարարութեան էր պատկանում: Եւ այդ ընդարձակ նահանգում տասնեակներով կանգուն վանքեր ու եկեղեցիներ կան, որոնք հազար տարւայ և աւելի հնութիւն ունեն, չինւած թուրքերի՝ Կովկաս գալուց շատ առաջ: Եւ ամբողջ Սիւնիքում մեկ հատիկ իսկ յուշարձան չկայ թրքական, որ զէթ մի քանի հարիւր տարւայ հնութիւն ունենայ:

Երբ Ասլան Շահնազարեանը խօսում էր, Սէրրայդը ուշադիր կերպով լսում և նօթագրում էր: Երբ վերջացրեց Ասլան Շահնազարեանը, կապիտան Սէրրայդը հարցրեց, ունենք արդեօք Հայաստանի քարտէզը, և երբ դրական պատասխան տւինք, խնդրեց՝ եթէ հնարաւոր է, պատմական Սիւնիքի քարտէզը դնենք և տանք իրեն:

Կապիտան Սէրրայդը շատ վատ կարծիք յայտնեց Խոսրովբէկ Սուլթանովի մասին, որը բժիշկ լինելով, համալսարանական կրթութեամբ, իրեն սուտ տեղեկութիւններ է հաղորդել Ղարաբաղի մասին. իբր թրքական հող է, հայերը եկւոր են:

Թեմական դպրոցի գրադարանում կային Հայաստանի թէ պատմական և թէ Բագւի Հայոց Կուլտուրական Միութեան հրատարակած քարտէզները, որոնք յանձնեցին Ջինւորական Միութեան վարչութեանը, պատրաստելու Սիւնիքի քարտէզը, Սիւնիքի սահմանների մէջ գծելով/լեռնային Գանձակն ու Ղազախի գաւառը:

Յունւարի 27-ին Տօմսոնի հրամանով աղրբէջանական մի գունդ անգլիական մի գումարտակի հետ միասին մտնում են Խանքէնդ և գրաւում զօրանոցներն ու սպայական ակումբը: Երբ լուրը հասաւ քաղաք, ժողովրդի վրայ շատ ծանր տպաւորութիւն

[4] Հանրայայտ վաստ է, որ Սիւնիքը, Արցախը (յետագայում կոչւած Ղարաբաղ) և Ուտիքը պատմական Հայաստանի 3 ինքնուրոյն նահանգներ են եղել: Ռուսական կայսրութեան կազմից դրանք մտցրել են էլիզաւետպոլի նահանգի մէջ, որտեղ հայութիւնն ունեցել է լուրջ, մշակոյթի, կենցաղի և շատ ընդհանուր գծեր, ուստի և դիտւել է որպէս պատմական մեկ միաւնութիւն: (Խմբ.)

[illegible], ամէնքը, առանց կուսակցական խտրութեան, դժգոհ էին, յուզած: Ժամանակաւոր Ազգային Խորհուրդը ներկայացաւ կապիտան Սէրրայղին և բուռն կերպով բողոքեց աղբրէջանական զօրքը Ղարաբաղ մտցնելու դէմ, յայտնելով միաժամանակ, որ ժողովուրդը խիստ դժգոհ է Տօմսոնի այդ կարգադրութիւնից:

Սէրրայդը յայտնեց, թէ ինքը չէր սպասում, որ նման կարգադրութիւն կը լինէր Տօմսոնի կողմից, որովհետև ի մօտոյ ծանօթանալով տեղին ու պայմաններին, այն կարծիքն էր յայնած եղել Տօմսոնին, որ միմիայն անգլիական զօրք մտցւի Ղարաբաղ, մինչև հարցի լուծումը, ուստի խորհուրդ տւեց, որ դիմենք Հայաստանի կառավարութեան, որպէսզի վերջինս հարկ եղած միջոցներին դիմէ՝ Ադրբէջանի զօրքը հեռացնել տալու Ղարաբաղի սահմաններից: Յայտնեց նաև, որ ինքը գրութիւն ուղղել է Տօմսոնին, որ լաւ կը լինէր, եթէ միայն անգլիական զօրքեր լինէին Ղարաբաղում՝ խաղաղութիւն պահպանելու համար:

Յունուարի 27 թէ 28-ին, Սոկրատը, առանց ժամանակաւոր Խորհրդի համաձայնութիւնն ունենալու, երկու հոգու ուղարկում է Բագու, որպէս Վարանդայի մարտական ուժերի դեկավար Սոկրատ Մելիք Շահնազարեանի ներկայացուցիչների, դեկուցելու Վարանդայում տեղի ունեցած ինքնապաշտպանական կռիւների մասին և զրամական օժանդակութիւն ստանալու՝ աշխատանքները չարունակելու նպատակով:

Ինչպէս լսում ենք, գնացողները նամակներ էին տարել քաղաքագլխից, ուղղւած Բագւի իր ծանօթ հասարակական գործիչներին, որպէսզի գնացող ներկայացուցիչներին հնարաւորութեան սահմաններում աջակցութիւն ցոյց տան: Պարզ էր, ուրեմն, որ Սոկրատը և քաղաքագլուխը միասնաբար էին աշխատել, ուստի աւելի էին սրել ժամանակաւոր Ազգային Խորհրդի ու Սոկրատի, ինչպէս և քաղաքագլխի միջև եղած փոխյարաբերութիւնները:

Ժամանակաւոր Ազգային Խորհրդի կողմից Ասլան Շահնազարեանն ու ես սուր վէճ ունեցանք Սոկրատի հետ, որ իրաւունք չունէր անհատաբար, Խորհրդից անկախ, նման քայլ անելու:

Յունուարի 30-ին հայ սոց. դեմոկրատների և դաշնակցականների նախաձեռնութեամբ քաղաքային խորհրդի սրահում հասարակական ժողով է տեղի ունենում, Ադրբէջանի զօրքերի կողմից, անգլիացիների աջակցութեամբ, Խանքէնդում զօրանոցները գրաւելու առթիւ: Բոլոր հոսանքների կողմից ելոյթ ունեցան և իրենց բողոքը յայտնեցին անգլիական

հրամանատարությանն խիստ կողմնակալ վերաբերմունքի համար և հարցապնդում արին, թէ ժամանակաւոր Ազգային Խորհուրդը ինչ վերաբերմունք է ցոյց տւել և ինչ միջոցների է դիմել: Ժողովին Ազգային Խորհրդի կողմից բացատրութիւններ եղան, տեղեկացուց Կապիտան Սէրրայդի հետ ունեցած տեսակցութեանն, յայտնած բողոքի և Հայաստանի կառավարութեանն ուղղած տեղեկագրի մասին: Կապիտան Սէրրայդի տւած խորհուրդը, որ Հայաստանի կառավարութիւնն է ճանաչւած դաշնակիցների կողմից, ուստի մեր բոլոր բողոքները Հայաստանի կառավարութիւնը պէտք է ներկայացնէր և համապատասխան պահանջներ անէր:

Յունւար 31-ին կապիտան Սէրրայդը հրաւիրեց Ասլան Շահնազարեանին և ինձ իր մօտ ու յայտնեց, թէ Խոսրովբէկ Սուլթանովը պահանջում է յանձնել իրեն «քրէական յանցագործ» Սալմանբէկ Ասկերբէկովին և որ ինքը կտրականապէս մերժել է: Սուլթանովը խիստ գրգռւած է Սալմանբէկի՝ դաշնակցական մամուլում ելոյթ ունենալու հետևանքով: Դեկտեմբերի երկրորդ կէսին յայտնել է Սալման բէկի ընտանիքը, կինը և հինգ-վեց տարեկան տղային հայկական գիւղերի վրայով բերել տալ Շուշի: Ինքը նամակ գրեց եղբօրը, ուղարկեցինք Բագրատ Ղազանչեանին, և նա մարտակերտցի մեր մարտիկներից մէկի միջոցով ուղարկում է Նարիմանբեգլու գիւղը, որտեղ գտնւում էր իր ընտանիքը: Երբ եղբայրը բերաւ կնոջն ու երեխային, առանձին կահաւորւած սենեակ վարձեցինք, Կուսանաց վանքի դիմաց, որտեղ հանգիստ ապրում էր ընտանիքը: Եղբայրը վերադառնալիս պատւիրեց, որ իրենց հարևան չրջաններում տեղի ունեցող անցուդարձի մասին միշտ նամակով յայտնի, նամակները անձամբ բերի կամ իրենց ազգականներից մէկի միջոցով ուղարկի Մարտակերտ, յանձնի Բագրատին: Եղբայրը պատմում էր, որ իրենց և հարևան չրջանների բէկերը խիստ գրգռւած են Սալմանբէկի դէմ, որին զաւեշան են համարում: Եղբայրը, ինչպէս ինքը, մեծ միջոցներ չունէր, մի փոքր դումար էր տւել, խոստանալով, որ անասուններից մէկը կը ծախի և դրամը Բագրատին կը տայ, ուղարկելու նրան: Ես եղբօրը յայտնեցի, որ Սալմանբէկի գոյապրուստի մասին մտահոգ չլինի, մենք ինչ որ պէտք է, կանենք, հանգիստ մնայ:

Տահիկների հեռանալուց յետոյ, երբ Պարսկաստան և այլուր ձողոպրած Բագւի հայութիւնը վերադառնում է Բագու, հասարակական հոսանքները ինքզինքները հաւաքում են, կեանքը կամաց-կամաց նորմալ ընթացքի մէջ է մտնում, դարձեալ սկսում են կուլտուրական աշխատանքները: Դաշնակցութեան Բագւի Կ. Կոմիտէն սկսում է հրատարակել "Պերիոդ" (Յառաջ) ռուսերէն յեղափոխական-ազգային թերթը, որը սուրհանդակի միջոցով կանոնաւորաբար ստանում էինք Շուշում: Երբ առաջին անգամ թերթը տւեցի Սալմանբէկին կարդալու, մեծ յափշտակութեամբ

կարդաց և բուռն ցանկութիւն յայտնեց՝ յօդուածներ ուղարկելու Թերթին և հէնց այդ պատճառով խնդրեց, եթէ Հնարաւոր է, բերել տանը կնոջն ու երեխային, որովհետև վախենում էր, թէ իր հակառակորդ բէկերն ու խաները սրի կը քաշեն ընտանիքը:

Թերթի խմբագիրն էր ճարտարագէտ ընկ. Աւետիս Օհանջանեանը, որին նամակ գրեցի Սալմանբէկի մասին, թէ ով է, ինչ զաղափարների տէր մարդ է և ուղարկեցի Սալմանբէկի առաջին յօդուածը այն մասին, թէ ինչպէս է կեղեքւում թուրք գիւղացիութիւնը բէկերի կողմից: Յօդուածը լոյս տեսաւ, և սուրհանդակը բերեց յաջորդ անգամ գալուն: Սուրհանդակը մեր գիտակից և գրագէտ ընկերներից մէկն էր, Հայկ Աստուածատրեանը, որը չատ ճարպկօրէն կատարում էր իր ստանձնած դերը, ապահով կերպով Բաքւի Կ. Կ.-ի և մեր նամակները տանել-բերելով: Սալմանբէկը երբ տեսաւ, որ յօդուածը անփոփոխ տպագրել է, ոգևորութեամբ սկսեց խիստ մերկացումներ անել, բէկերի և խաների չահատակութիւնները և գործած քրէական այլևայլ յանցանքները հանրութեան սեպհականութիւն դարձնելով: Սալմանբէկը իր յօդուածները գրեթէ միշտ կը սկսէր "Նէ բըզիզվըտնօ, չտօ իզվըստնըյ ռաղրոյնիկ[5]" խօսքերով, ուստի ծանօթները հանդիպելիս, ժպտալով բարևելիս, Սալման բէկին կասէին նոյն խօսքերը: Ահա այդ յօդուածների հետևանքով Խոսրովբէկ Սուլթանովն ու միւս բէկերը չափազանց զազազել էին Սալմանբէկի դէմ, որին այլևս դաւաճան էին յայտարարել:

Վնասուց յանձնախմբի յայտարարութիւնները ստանալով, գիւղացիները, որոնք վնասներ էին կրել, առաջին հերթին դարաղչլաղցիները, խումբ-խումբ գալիս էին քաղաք, արձանագրել տալու իրենց վնասները: Վնասուց յանձնախմբերի ղեկավար կենտրոնական մարմինը կազմած էր Թիֆլիսում, բանաստեղծ Յովհ. Թումանեանի նախագահութեամբ, որը աշխատանքները վարելու իր ցուցմունքներն էր անում և անհրաժեշտ բացատրութիւններ տալիս: Շուչու յանձնախումբը արդէն գործի էր անցել, կանոնաւոր կերպով մանրամասն արձանագրում էր տաճկական ու ադրբէջանական զօրքերի և խուժանների պատճառած վնասները: Հսկայական աշխատանք էր, որը յանձնախումբը միայն իր կազմով կատարել չէր կարող, ուստի ժամանակաւոր Ադդային Խորհրդի հետ խորհրդակցելով, որոշեց ռուսերէն իմացող աշխատակիցների հրաւիրել վարձատրութեամբ, քանի որ Թիֆլիսի կենտրոնական յանձնախմբից զրաւոր հրահանգ էր ստացել Յովհ. Թումանեանի ստորագրութեամբ, ըստ հնարաւորին արագ կատարել աշխատանքը, որպէսզի ժամանակին աւարտւի, Վերսայլի միջազգային խորհրդաժողովին ներկայացնելու

[5]« Անյայտ չէ, որ յայտնի աւազակ է» (ռուս.): (Խմբ.)

համար, իսկ ծախսերը հոգալու համար, դրամական միջոցներ յատկացուն ըստ ներկայացուած բիւջէի: Վնասուց Յանձնախումբը, Աղգային Խորհրդի հետ միասին, խորհրդակցարար կազմեց յանձնախմբի բիւջէն, թէ ամսական մօտաւոր հաշուով ինչքան ծախս կունենայ, և ուղարկեց Թիֆլիս, Կենտրոնական Յանձնախմբին:

Ներջանատուխեան մէջ էին ցարական, Ռուսական ժամանակաւոր կառավարուխեան (Կերենսկու) և Կովկասեան կոմիսարիատի դրամները: Առաջին երկուսը աւելի յարգի էին: Շուչու յանձնախմբի ծախսը, ըստ կազմուած համեստ բիւջէի ամսական 8000 ռուբլու սահմաններում էր, տպագրական և դիւանական ծախսերի հետ միասին: Թիֆլիսի Կենտրոնական Յանձնախումբը առաջին առթիւ, փոխանակագրով, Թիֆլիսարնակ չուչեցի վաճառական Ղևոնդ Այդինեանի միջոցով, ուղարկեց Շուչու յանձնախմբին 20000 ռուբլի, երկու ամսւայ համար, խոստանալով կանոնաւորարար հոգալ յաջորդ ամիսների ծախսը:

Յանձնախումբը Սալմանբէկին էլ հրաւիրեց պաչտօնի, հաւասար վարձատրուխեամբ: Նա ուրախուխեամբ ստանձնեց պաչտօնը, որը կատարում էր կանոնաւոր կերպով:

ՍՈՒԼԹԱՆՈՎԸ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

Սուլթանովը Խանքէնդը գրաւելուց յետոյ, աւելի ամուր ղգալով ոտքի տակի հողը, կապիտան Սէրբայդի միջոցով պահանջ է դնում հայերին՝ ճանաչելու իր իշխանուխիւնը, քանի որ Զօր. Տօմսոնի գիտուխեամբ ու համաձայնուխեամբ է ստանձնել Ղարաբաղ-Զանգեզուրի նահանգապետուխիւնը և իր պահանջը դնում է կապիտան Սէրբայդի միջոցով, վերջինիս առաջարկելով, որ ինքն էլ ճնշում գործ դնի մեղ վրայ: Կապ. Սէրբայդը յայտնում է, որ նրա, Սուլթանովի պահանջը կը յայտնի մեղ, բայց որևէ ճնշում գործ դնել չի կարող, որովհետև նրա թակայ չէ իրեն:

Կապիտան Սէրբայդը, յայտնելով Սուլթանովի պահանջը, կտրուկ մերժման պատասխան ստանալով, արդիւնքի մասին տեղեկացնում է Սուլթանովին, իսկ վերջինս, ինչպէս յետոյ յայտնեց մեղ Սէրբայդը, բողոքել էր Տօմսոնին, որ չէր կատարել իր առաջարկը՝ ճնշում գործ դնելու հայերի վրայ:

Սուլթանովի ոտնձգուխիւնը մեծ յուղում էր առաջ բերել քաղաքում, բոլորը՝ մեծ ու փոքր, տներում, խանուխներում, փողոցներում բարձրաձայն խօսում, քննադատում էին, Տօմսոնին

անիծում, հայհոյում իր կողմնակալ վերաբերմունքով Ղարաբաղի կեանքը վրդովելու համար:

Փետրուարի 1-ին քաղաքում բռնկուած դժդոհութիւնների առթիւ տեղի ունեցաւ միջկուսակցական խորհրդակցութիւն , մտքերի փոխանակութիւնից յետոյ խմբագրուեց մի բողոքագիր, քաղաքացիների բաղում ստորագրութիւններով, ժամանակաւոր Աղգային Խորհրդի միջոցով ներկայացնելու անգլիական միսսիային Ադրբէջանի ոտնձգութիւնների դէմ, բռնի կերպով Հայաստանի բնական մաս կազմող և միաւորը հայ բնակչութեամբ Ղարաբաղը, որտեղ թուրքերը չնչին փոքրամասնութիւն էին կազմում, կցելու Ադրբէջանին: Բողոքագրի մէջ չեչուած կերպով պահանջ էր դրուում՝ յանուն խաղաղութեան "հեռացնել Ղարաբաղից թէ Սուլթանովին և թէ Ադրբէջանի զօրքը":

Քաղաքացիների բողոքը Զինուորական Միութեան վարչութեան կողմից պատրաստուած Անդրկովկասի քարտէզի հետ միասին յանձնեցինք կապիտան Սէրրայդին: Վերջինս ուշի-ուշով նայում էր, քարտէզում գծուած Սիւնիքի մասին հարցումներ անում և մեր բացատրութիւնները լսում: Սիւնիքի սահմանների մէջ էր առնուած Ղաղախը և Գանձակի լեռնային մասը, Գանձակ քաղաքի հայկական մասով միասին: Քարտէզում նչուած էին բոլոր հինաւուրց կոթողները՝ վանքեր, եկեղեցիներ, որոնցից մի քանիսը հաղար տարուց աւելի առաջ չինուած, ինչպէս Տաթեւի և Ամարասի վանքերը, վերջինս, որ գտնւում է Ղարաբաղի տափաստանին մօտ, ոչ շատ հեռու հայ-թրքական ներկայ սահմանից, եղել է չարունակ Աղուանից կաթողիկոսի աթոռանիստը մինչև ԺԷ-րդ դարու երկրորդ կէսը, երբ վանքը յաճախ թրքական հրոսակախմբերի յարձակմանց ննթակայ է դառնում, Պետրոս Գ-րդ իշխանական կաթողիկոսի օրօք (1653-1675), կաթողիկոսը հարկադրուած է լինում աթոռը փոխադրել աւելի ապահով վայր՝ Գանձասարի վանքը, փոխադրելով միաժամանակ վանքի արժէքաւոր հայկական ունեցուածքը՝ մատենադարանը, եկեղեցական անօթներն ու սպասները: Մոնղոլական արչաւանքների ճնշման տակ, շատ աւելի վաղ ժամանակից, փոխադրուել և Գանձասարի մօտ Վանք գիւղում էին հաստատուել Հասան-Ջալալեան տոհմի մարդիկ, Խաչէնի զերիշխանները, որոնց ննթակայ էին դառնում տեղական իշխանները: Հարկաւ, Գանձասարի վանքը աւելի ապահով էր, գտնւելով Խաչէնի իշխանների անմիջական պաշտպանութեան ներքոյ, թիկունքը տուած այն ժամանակւայ առումով անմատչելի Կաչաղակաբերդ, Թարխանաբերդ, Խոխանաբերդ անուամբ դիրքերին, որոնք կառուցուած էին սեպաձև բարձրաբերձ ժայռերի կատարներին:

Ի դէպ, 1907-ին Հանգուցեալ Դոքտ. Քրիստափոր (Խաչատուր) Բահաթրեանի միջոցով բազաւանակ ղարաբաղցի հարուստներից հանգանակած ղրամով, Գանձասարի վանքը, որ կառուցած է 13-րդ դարում[6], սրբատաշ զրանիտեայ քարով, լաւ նորոգութեան է ենթարկւում և պարզւում է, որ կաթողիկէն երկյարկանի է: Վարպետ Խոսրով Զալեանը նկատում է, որ կաթողիկէի քառակուսի քարերից մէկը, որտեղից սկսւում է սրածայր մասը, երկու սանտիմետրի չափ չարքից դուրս է գտնւում, երկաթահատ դուրով փորձում, տեսնում է, որ քարը չարժւում է, ուստի բանւորներից մէկի օգնութեամբ, բաւական ճիգ գործ դնելով, կարողանում է քարը հանել, որի տեղին երևում է կաթողիկէի կամարը և վրան չարւած բաղում զանազան անօթներ ու սպասներ: Վարպետ Խոսրովը անմիջապէս կանչում է վանահօրը վեր և ցոյց տալիս թաքստոցը: Բացւած անցքով միջին կազմւածք ունեցող մարդը կարող է ազատ փորսող տալով ներս գնալ ու ելնել: Դա վանքի թաքստոցներից մէկն էր, սակայն, ըստ աւանդութեան, փոխադրւած մատենադարանն էլ տեղաւորւած է թաքստոցներից մէկում, որը յայտնաբերւած չէ: Վանահայրը բանւորների օգնութեամբ դուրս է բերում բոլոր անօթներն ու սպասները, ցուցակագրում և յայտնում թեմի առաջնորդին: Նորոգման օրերին գործով լինելով Վանք գիւղում, առիթից օգտւելով, բարձրացանք և տեսանք թաքստոցը, որի ներսում կարելի է միայն չոքչոք չարժւել:

Փետրուարի 2-ին Տօմսոնից հեռագիր ստանալով, կապիտան Սէրրայդը մեկնում է Բագու: Բաղուից եկաւ սուրհանդակ Ռուբէն Տէր Աստւածատրեանը, բերելով Ազգային Խորհրդի և Կ.Կ.ի նամակները, որոնցով ղրւատում են ժողովրդի և Ժամանակաւոր Ազգային Խորհրդի ժխտական վերաբերմունքը Ադրբէջանի ոտնձգութիւնների դէմ և խորհուրդ են տալիս երբէք ընդհարման առիթ չտալ, անգլիական միսսիայի հետ յարաբերութիւն պահպանելիս կոպիտ վերաբերմունք ցոյց չտալ, միշտ կրկնելով մխիթարական միտքը, որ Ղարաբաղը հայկական բնագաւառ է և կազմում է Հայաստանի անբաժան մասը. այնպէս որ, աշխատել չվաստակել անգլիացիների կողմից թշնամական վերաբերմունք:

ՁՕՐ. ՏՕՄՍՈՆԸ ՀՐԱՀԱՆԳՈՒՄ Է ԱՆԴՐԱՆԻԿԻՆ՝ ՀԵՌԱՆԱԼ ՁԱՆԳԵԶՈՒՐԻՑ

Փետրուարի 3-ին յայտնի է դառնում ղօրավար Տօմսոնի հրահանգը Անդրանիկին՝ հեռանալ Զանգեզուրից Գորիս-Եւլախ-Գանձակ գծով, և անցնել Թիֆլիս: Երբ իմացանք այդ

[6] Վանքը կառուցւել է 1216-1238 թթ., օծումը՝ 1240 թ: (Խմբ.)

տեղեկութիւնը, կասկած ընկաւ մեր սիրտը, որ այդ կարգադրութիւնը մի դաւադրութիւն է, յղացած Ադրբէջանի իշխանութիւնների կողմից, որ ղօրավար Տօմսոնի միջոցով Անդրանիկին քաշեն, տանեն Ղարաքաղի տափաստանը, Շամքորում ռուս զինուորների գլխին խաղացած խաղը կրկնեն, թակարդի մէջ ղցեն ու ջարդեն, ոչնչացնեն Սասնոյ արծիւին և նրա ջոկատին: Անմիջապէս նամակները պատրաստուեցին Ժամանակաւոր Ազգային Խորհրդի և Կենտրոնական Կոմիտէի կողմից, ուղղուած Անդրանիկին, որ ոչ մի դնով չհամաձայնուի Գօրիս-Եւլախ դծով մեկնելու Զանգեղուր-Ղարաբաղից: Նամակները սուրհանդակի միջոցով ուղարկուեցին Գօրիս փետրուար 4-ին, և երեք օր յետոյ պատասխան ստացուեց Անդրանիկից, երեք նամակ՝ մէկը Ազգային Խորհրդին, երկրորդը հրամանատարներին և երրորդը Ապառաժի Կ. Կ-ին, որ մեկնում է Սիւնիքից և հրահանգում միչտ համերաչխ ու միաբեալ ճակատով ծառանալ թշնամու դէմ և պաչտպանել մեր ժողովրդի արդար պահանջները:

ա) **Փետրուարի 6-ին** վերադառնում են Սոկրատի պատգամաւորները՝ Արտեմ Պետրոսեանն ու Միքայէլ Ալլահվերդեանը, որոնք քաղաքագլխի ծանօթների աջակցութեամբ ներկայացել էին Բագւի ղարաբաղցի ունևորներին և 100 հազար ռուբլի ստացել:

բ) **Փետրուարի 8-ին**, կապիտան Սէրրայդի փոխարէն, գալիս է անգլիական նոր միսիա՝ Մոնկ Մէսընի գլխաւորութեամբ, իր հետ ունենալով կապիտան Բոնիֆէյսին և մի քանի այլ սպաների, որոնց հետ նաև բժիչկ Ռուբէն Տէր Ստեփանեանը, որը մայոր Գիբթոնի հետ Գօրիսից պիտի անցնէր Նախիջևան, այնտեղից Երևան և Բագու, Զօր. Տօմսոնի խոստացած զրամական նպաստը ստանալու արևմտահայ զաղթականութեան համար: Առիթից օգտւելով, Հ.Յ.Դ. Բագւի կենտրոնական կոմիտէն Բժ. Ռուբէնի միջոցով 400 հազար ռուբլի է ուղարկում Ազգային Խորհրդի անհրաժեչտ ծախսերը հոգալու համար, ինչպէս գրուած էր նամակում, Պապաչայի (Լևոն Թաղէոսեանի) ձեռամբ և ստորագրութեամբ: Բժ. Ռուբէնին համապատասխան ստացական եմ տալիս, Բագւի Կ. Կ.-ին ուղարկելու համար, բժիչկը յայտնում է, որ յաջորդ օրը պիտի գան Գերասիմ Բալայեանը և Լևոն Զաւաչեանը Ազգային Խորհրդին և Կ. Կ. -ին օգնելու համար. նրանք էլ պիտի իր հետ գային, բայց պէտք էր եղած Տօմսոնի համաձայնութիւնն առնել, որը յաջողել էր: Կ.Կ. -ի ուղարկած զրամը պիտի Գ. Բալայեանն ու Լ. Զաւաչեանը բերէին՝ և որովհետև նրանց չի յաջողւել միանալ անգլիական միսիային, ուստի զրամը տւել էին Բժ. Ռուբէնին, որպէս վստանգից աղատ մարդու:

գ) Երբ Գեներալ Տօմսոնը Մայոր Մոնկ Մէսընին նշանակում է Շուչու անգլիական միսսիայի պետ Կապիտան Սէբրայդի փոխարէն (ի դէպ, վերջինս թրքատեաց էր), յանձնարարում է նրան՝ Սուլթանովի հետ միասնաբար աշխատել և յայտնում է միևնոյն ժամանակ, որ Սուլթանովն էլ պէտք է կարևւոր կարգադրութիւններ անելիս մայորի հետ խորհրդակցելով անի: Բժիշկ Ռ. Տէր Ստեփաննեանը այդ ժամանակ գնացած էր Բագու՝ Գեներալ Տօմսոնից ստանալու Անդրանիկին խոստացած դրամը, զաղթականութեան կարիքները հոգալու համար: Գեներալ Տօմսոնի մօտ էլ Մայորը ծանօթացած լինելով Բժ. Ռուբէնի հետ, առաջարկում է միասին հանդիպել Սուլթանովին, որը նոյնպէս գործով գնացել էր Բագու, իր կառավարութեանը, ներկայանալու: Ռուբէնը պէտք է թարգմանի դեր կատարէր, և միասին հանդիպում են Սուլթանովին:

Մայորը Սուլթանովին յայտնում է Տօմսոնի ասածները, և Սուլթանովը պատասխանում է՝ "Ես ընաւ չեմ ենթարկւի նման կարգադրութեան. դուք ուզում էք ինձ կօնտրօլի տա՞կ առնել. ես պատասխանատու եմ միայն իմ կառավարութեանը և որևէ կօնտրօլ ձեր կողմից չեմ ընդունի և ձեր խորհրդի կարիքն էլ չեմ զգում":

Մայորը վրայ է բերում, և Ռուբէնը ճչտիւ թարգմանում է՝ "Ջհաննամ, թէ դուք չէք լսի իմ խորհուրդը, բայց և առանց իմ համաձայնութեան ոչ մի քայլ չէք կարող անել": Բժիշկ Ռուբէնի տուած այս տեղեկութիւնը Կենտրոնական Կոմիտէի նիստին զոհունակութեամբ լսեցինք և յուսացինք, թէ հետագային հնարաւոր կը լինի, յարմար մի առիթով, հեռացնել տալ մոլեռանդ պանիսլամիստ Սուլթանովին:

դ) **Փետրուար 9-ին** գալիս են Գերասիմ Բալայեանն ու Լևոն Ջառաֆեանը:

Արդէն քաղաք էին հասել բոլոր գիւղական հասարակութիւնների պատգամաւորները՝ յաջորդ օրը Դ.-րդ համագումարին ներկայ գտնուելու: Պատգամաւորների ճնշող մեծամասնութիւնը երկրագործ գիւղացիներ էին, բայց, ինչպէս կասն՝ աչքաբաց, բնականից օժտուած տրամաբանօրէն դատելու կարողութեամբ: Կային և միջնակարգ կրթութեամբ գիւղական տարրական դպրոցների ուսուցիչներ:

ՍԿՍԻՒՄ Է ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՑՈՑ ԶՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Փետրուար 10-ին տեղի ունեցաւ Ղարաբաղի Հայոց Զորրորդ Համագումարի բացումը Շուշու թեմական դպրոցի սրահում: Համագումարի բացումը կատարեցի ես՝ Ազգային Խորհրդի կողմից, դոհունակութիւն յայտնելով, որ ճիշտ ժամանակին եկել են պատգամաւորները, առաջադրեցի, նախքան գործի անցնելը, յոտնկայս յարգել պատերազմի դաշտում ընկած, ինչպէս և արևմտահայ Մեծ Եղեռնի զոհերի յիշատակը, որից յետոյ առաջարկեցի կատարել զիւանի ընտրութիւն և անցնել աշխատանքի:

Միաձայն և բաց քւէարկութեամբ ընտրեցին նախագահ՝ Ասլան Շահնազարեանը, փոխ Նախագահ՝ Յակոբ Եսայեան, քարտուղարներ՝ Թէոդորոս Տէր Յովհաննիսեան և Արչակ Առաքելեան:

Ընտրեց երեք հոգանոց յանձնախումբ՝ պատգամաւորների մանդատները ստուգելու, ըստ որում 22 զիւղական հասարակութիւններից 3-ական ներկայացուցիչներ, որով ընդհանուր թիւը՝ 66 հոգի, քաղաքի ներկայացուցիչների ընդհանուր թիւը՝ 8, բոլոր հինգ կուսակցութիւններից 2-ական հոգի՝ 10, Ընդհանուր գումար՝ 84 :

Դիւանը գործի անցնելով, առաջարկեց ճչտել օրակարգի խնդիրները, ժամանակաւոր Խորհրդի նկատի ունեցած և ընդհանների կողմից առաջարկուած մէկ-երկու խնդիրներով միասին ընդունեց հետևեալը՝

1) Զեկուցում Ղարաբաղի ժողովրդական կառավարութեան և նրան յաջորդած Ազգային Խորհրդի,

2) Զեկուցում ժամանակաւոր Ազգային Խորհրդի,

3) Ինքնապաշտպանութեան հարց,

4) Ղարաբաղը Հայաստանին կցելու հարցը, որպէս նրա բնական անբաժան մասը,

5) Ֆինանսական, մուտքի և ելքի հարց,

6)Վարչական , դատարաններ կազմելու, դպրոցների ապահովման հարցեր,

7) Հայ-Թրքական յարաբերութիւններ,

8) Ընտրութիւններ:

Համագումարի աշխատանքները տևում են փետրուարի 10ից մինչև 20ը, տասը օր: Նախ լսում են զեկուցումներ՝

ա) Ղարաբաղի Ժողովրդական կառավարութեան, Գ-րդ Համագումարից ընտրած և հրամանատարների ներկայացուցիչներից կազմած ժամանակաւոր Ազգային Խորհուրդների գործունէութեան մասին, զեկուցող Ե. Իշխանեան:

բ)Պատգամաւորներից մի քանի հոգու ցանկութեամբ Յար. Թումեանը, որպէս զինուորական կոմիսար Միջկուսակցական Բիւրոյի և Ղարաբաղի Ժողովրդական կառավարութեան, զեկուցում է իր կատարած աշխատանքների մասին: Յարութիւնը զեկուցման ընթացքին ծանրանում և չեչտում է չատ կարևոր հանգամանքի վրայ, որ Ղարաբաղի հայութիւնը, թէև բաւականաչափ զէնք ունի ինքնապաշտպանութեան համար, բայց ռազմամթերք չունի, և Գանձակի մեր քաղաքացիական մարմնից ստացած 30 լերկել մակնիչի հրացաններն ու փամփուչտները մի կաթիլ էին ծով կարիքի դիմաց: Ունեցել ենք լաւ սարքաւորուած արհեստանոց, հմուտ վարպետի զեկավարութեան ներքոյ, փչացող զէնքերի անվճար նորոգմանց համար, որի մասին տպագրուած թերթիկներով յայտարարուած է բոլոր գիւղերին, որ զէնքերը ձրիաբար կարող են նորոգել քաղաքի ազգային արհեստանոցում: Իր զեկուցման վերջում յայտնեց, որ Ղարաբաղը, ինչպէս յայտնի է բոլորին, 1917թ. վերջերից կտրուած էր դրսի աշխարհից և հայկական կենտրոններից՝ Երևանից, Թիֆլիսից և, մանաւանդ, Բագուից, ուր մեծ թւով ղարաբաղցիներ կան, մեծ մասը տնտեսական ապահով վիճակ ունեցող, մէկից աւելի մեծահարուստներ, որոնք կարող էին օգտակար լինել իրենց գաւառին. բայց հնարաւոր չեղաւ նրանցից դէթ նիւթական օգնութիւն ստանալ: Պարզ է, ուրեմն, որ Ղարաբաղը ապաւինեց միայն իր ուժերին, ուստի, Միջկուսակցական Բիւրոյի հրապարակ գալուց ի վեր, մէկ նպատակ հետապնդեց՝ ջանալ ամէն կերպ, որ խաղաղութիւնը չխախտի և թշնամական գործողութիւն չսկսի մեր ու թուրքերի մէջ, այլապէս ժողովուրդը կորստեան կը մատնէր: Ստեղծած աննպաստ պայմաններում հնարաւոր չէր աւելին անել:

Պատգամաւորներից մի քանի հոգի Ղարաբաղի Ժողովրդական Կառավարութեանը մեղադրեցին, թէ Շուշու զունդն ու ռազմամթերքը Գօրիսից փոխադրելու գործը լաւ չէր կազմակերպել և հետևանքը եղել էր Ղարադլաղի կործանումը տաճկական ուժերի և տեղական թուրքերի կողմից:

Թէ Յարութիւնը և թէ Արսօ Յովհաննիսեանը ոգի ի բուն պաշտպանեցին կառավարութեանը, թէ մեղք չունի կառավարութիւնը: Համաձայն զնդապետ Միքայել Մելիք-Շահնազարեանի առաջարկութեան, անհրաժեշտ քանակութեամբ սայլեր, զրաստներ ու մարտական ուժեր ուղարկուել են Ղարադլաղ և, ըստ զնդապետի պայմանի, խարույկ վառել Ղարադլաղի այն

բարձունքներում, որոնք տեսանելի են Գօրիսի կողմից, որպէսզի գունդը որոշ բարձունքներ բռնէր, և սայլերն ու գրաստները ճամբան անցնէին, բայց տրւած նշանին պէտք էր պատասխան տրւէր, խարոյկ վառւէր, սակայն Գօրիսի կողմում չի վառւում, թէև օրեր շարունակ, մոլթը ընկնելուն պէս, Ղարաղէլաղի բարձունքներին խարոյկը անչէջ վառւում էր: Արդիւնքը լինում է աղէտաբեր, տասն օր հերոսական ղիմադրութիւն ցոյց տալուց և անհամեմատ քիչ մարդկային ղոհեր տալուց յետոյ, լքւում է զիւղը և աւերւում:

2) Ինքնապաշտպանութեան հարցի չուրջ, մտքերի փոխանակութիւն ունենալուց յետոյ, ընդունւում է Ժամանակաւոր Ազգային Խորհրդի առաջարկը, որ վերակազմութեան պէտք է ենթարկել ինքնապաշտպանութեան գործը Զինւորական Միութեան միջոցով, ամբողջովին ղեկավարութիւնը յանձնելով Միութեան վարչութեանը, սակայն պէտք է դիմել Հայաստանի կառավարութեանը՝ փորձւած և հմուտ մէկ զինւորական ուղարկելու, ինքնապաշտպանութեան գործը ղեկավարելու համար:

3) Ղարաբաղի և Ադրբէջանի փոխյարաբերութիւնը: Համագումարը միաձայնութեամբ որոշում է կայացնում՝ չճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը, քանի որ Ղարաբաղը, պատմական Սիւնիքի մի մասը լինելով, Հայաստանի բնագաւառներից մէկն է հանդիսանում, որը իր զրեթէ միատարր հայ բնակչութեամբ պէտք է կցւի Հայաստանին, որպէս նրա անբաժան մասը:

4) Հայ-Թրքական փոխյարաբերութիւնների վերաբերեալ համագումարը գտնում է, որ պէտք է շարունակել բարի դրացիական համակեցութիւնը և խաղաղ պայմաններում Թրքական փոքրամասնութեան իրաւունքն է՝ ունենալ իր ինքնավար ազգային մշակութային կեանքը՝ որպէս Հանրապետական Հայաստանի հպատակների:

5) Ընտրելիք Ազգային Խորհուրդը չրջանը ղեկավարելու համար պէտք է, որ գործնական միջոցներ ունենայ. ուստի որոշւում է դիմումներ ուղղել ոչ միայն դրսի մեր հայրենակիցներին՝ կամաւոր դրամական օժանդակութիւն ցոյց տալու, այլև Հայաստանի կառավարութեանը, որ հոգայ չրջանի ինքնապաշտպանութեան, պաշտօնէութեան և զաղթոցների ծախսերը, ունենալով իր ներկայացուցիչները, որոնք իրրև պետական վերահսկիչներ, տնօրինեն տնտեսական, դրամական գործառնութիւնները:

Համագումարի ընթացքին, Բագւի Կ. Կ-ի կողմից, փետրւարի 12-ին Շուչի եկան ընկերներ Իշխան Միրզաբէկեանը և Ներսէս Նասիբեանը: Համագումարի մի չարք պատգամաւորներ ցանկութիւն են յայտնում, որ Բագւից եկած ընկերները պատմեն Բագւում մարտ

ամսին տեղի ունեցած վայրիվերումների մասին: Թուրքերի սկսած հակայեղափոխական գործողութիւնների հետևանքով, Դաշնակցութիւնն ու միւս յեղափոխական կուսակցութիւնները միացեալ ճակատ են կազմում հակայեղափոխական տարրերի դէմ, որոնք ղեկավարում էին Մուսաֆաթի և տաճկական գործակալների, ապա տաճկական զօրքերի աջակցութեամբ Բագու: Ամիսների յամառ դիմադրութիւնից յետոյ Բագուի ուժերը տեղի են տալիս, մի մասը ղէպի Հիւսիս և միւս մասը ղէպի Պարսկաստան նահանջելով, ապա պատմում են, թէ ինչպէս տաճիկները, տեղական թուրքերի հետ միասին, Բագուն ղարձնում են սպանդանոց, տասնեակ հազարաւոր մարդկանց, առանց սեռի և հասակի խտրութեան, եաթաղանի ղոհ են ղարձնում և կողոպուտի ենթարկում նրանց ունեցուածքը: Պատմում են ապա, թէ ինչպէս Ռոստոմի հրահանգով Ստեփան Շահումեանին և նրա հետ 24 բոլշևիկներին ազատում են բանտից, ուր նետել էին Բագուի հակայեղափոխական իշխանութիւնների կողմից: Համաձայն Ռոստոմի հրահանգի, Թազիոս Ամիրեանը, Շահումեանին և միւսներին առնելով, նաև են նստում, Հիւսիսային Կովկաս կամ Աստրախան գնալու նպատակով, սակայն նաւի ռուս անպիտան կապիտանը նաւը հասցնում է Կրասնովոդսկ և 26 բոլշևիկներին յանձնում անգլիացիներին, որոնք բոլորին ղնդակահարում են: Ընկերների տաճ ամփոփ տեղեկութիւնները ուշի- ուշով լսում են պատգամաւորները և ծանր տպաւորութիւն ստանում:

Փետրուար 15-ին Սալմանբէկը, կանխաւ համաձայնութիւն ստացած լինելով Համազումարի նախագահութիւնից, ելոյթ ունեցաւ ու ոգևորուած, թուրքերէն ասաց (նախքան Համազումարը օրակարգի խնդիրների քննութեանն անցնելը).

"Հայ եղբայրներ, չատ լաւ գիտէք, որ ցարական կառավարութեան օրօք լայնածաւալ Ռուսաստանի բոլոր ժողովուրդները հաւասարապէս ճնշուած և դժգոհ էին տիրող կարգերից: Դժգոհ էր նաև հէնց ինքը՝ ռուս մեծ ժողովուրդը, որի լաւագոյն զաւակները, յանուն աղատութեան, իրենց հոգին են աւանդել կախաղանների վրայ կամ Սիբիրում, չղթայակապ տաժանակիր աշխատանքներ կատարելիս: Հարիւրաւոր, հազարաւոր յեղափոխականների կեանքի գնով, ի վերջոյ, տեղի ունեցաւ Փետրուարեան յեղափոխութիւնը, ծագեց աղատութեան արևը, սկսեց կամաց-կամաց ջերմացնել ղրկանքների և տառապանքների ենթակայ բոլոր ժողովուրդներին, ոգի և եռանդ տալ նրանց՝ նոր աւելի լաւ կեանք ստեղծելու, սակայն չար բախտի պատճառով տակն ու վրայ եղաւ ամէն ինչ: Մենք յոյս ունէինք, որ ռուս մեծ դեմոկրատիայի հետ միասին կը կարողանայինք համերաչխ եղբայրական կեանք ստեղծելով, մշտական խաղաղ աշխատանք ղարգացնել, գիտութեամբ լուսաւորելու հնարաւորութիւն ձեռք բերել: Մեղ

խանգարեցին օտար ուժերը, պարտադրեցին կտրել Ռուսաստանից, որից մենք պիտի մեծապէս օգուտէինք, ինչպէս միշտ օգուտ ենք: Դուք տեսաք, թէ օտար ուժերը՝ օսմանցիները, ինչ չարիք գործեցին, եղբայրասպան կռիւ ստեղծելով Բագուում, տասնեակ հազարաւոր մարդկային զոհեր խլելով: Օսմանցիները ինչպէս ձեղ, նոյնպէս էլ կողոպտեցին Թուրք գիւղացիներին: Տասնեակ հազարաւոր տոննա ամէն տեսակի հացահատիկներ գրաւելով ուղարկեցին իրենց երկիրը, վաստակելով Թուրք գիւղացիութեան բուռն դժգոհութիւնը: Թուրք բէկերն ու խանները մնացին անձեռնմխելի. գիշեր ու ցերեկ օսմանցիների հետ խրախճանքի մէջ էին, տուժողը միայն Թուրք ռանչպարը եղաւ: Այժմ, այդ բոլոր վատութիւններից յետոյ ես, որպէս հայ ժողովրդի բարեկամ, ամբողջ հոգով ու սրտով ցանկանում եմ ձեղ յաջողութիւն ձեր կատարած և կատարելիք աշխատանքների մէջ, ապա նոյն ձևով սրտանց ցանկանում եմ իսկական խաղաղութիւն համայն Ռուսաստանի բոլոր աղգերի համար, որպէսզի մեր հարևան զոյգ ժողովուրդներն էլ սիրով ապրեն այնպէս, ինչպէս ապրել են դարեր չարունակ":

Համագումարը լուռն կերպով ծափահարեց Սալմանբէկին: Սալմանբէկը համոզուած ռուսասէր էր և գիտէր երկու ժողովուրդների տրամադրութիւնը, որոնք Ռուսաստանից կտրուած, մէկուկէս տարի անջատ կեանք ապրելով, տնտեսապէս քայքայել էին, քաղաքականապէս մատնել անիշխանութեան. բոլորը ախուվախով հին խաղաղ օրերն էին յիշում: Ճիշտ է, տիրող դասակարգը, բէկերն ու խանները, ժողովրդին կեղեքում էին, ամուր յենարան հանդիսանալով ցարական կառավարութեանը, որը, իր հերթին, ժողովրդին նեղում, ճնշուած պայմաններում էր պահում, հնարաւորութիւն չէր տալիս յառաջադիմելու կրթութեամբ և 75 – 80%-ը անգրագէտ էր ու խարխափում էր տգիտութեան մէջ , բայց, այնուամենայնիւ, ֆիզիքական գոյութեան ապահով վիճակ ունէր: Եւ Սալմանբէկը չէր սխալւում, մեր ժողովուրդը, ելնելով իր աշխարհագրական, աղգային-քաղաքական պայմաններից, իր առողջ բնաղդով ռուսասէր էր, և իրականութեան դժնդակ պայմանները, դարեր առաջ, հայ ժողովրդին թելադրել էին նայել դէպի հիւսիս, ռուս մեծ ժողովրդին ապաւինել, կապել նրան իր համակ էութեամբ:

Ճիշտ է, ռուսական բռնակալ կառավարութիւնը, ելնելով իր պետական չահերից, համաձայն Պետրոս Մեծի յղացած ծրագրի, ձգտում էր դէպի հարաւ, ուստի պիտի Հայաստանի վրայով անցնէր, իր նպատակին հասնելու համար, ասել է՝ Հայաստանը նրա համար հանդիսանում էր կայան, ուստի հայ ժողովրդին սիրաչահում էր կեանքի և գոյքի ապահովութեամբ: Եւ երբ Ղարաքիլիսէի և Սարղարապատի ճակատամարտերից հինգ հարիւրի չափ

ղարաբաղցի ղինուորներ, Բասար-քեչարի[7] վրայով, տելական թուրքերի հետ կռւելով ու զոհեր տալով, հասան Ղարաբաղ ու յայտնեցին անկախ Հայաստան ստեղծելու մասին, ժողովուրդը չատ անտարբեր վերաբերմունք ցոյց տւաւ, որովհետև մեր ժողովուրդը մտքով անգամ չէր անցկացրել, թէկուզ մէկ վայրկեան իրեն անջատւած տեսնել Ռուսաստանից: Հ.Յ.Դ.-ն նպատակ չի ունեցել անջատելու Ռուսաստանից, մի բան, որը սեպհականութիւն էր դարձած մեր ժողովրդին և վերջինս անվերապահօրէն վստահում էր իր քաղաքական պահանջների պաշտպանութիւնը Դաշնակցութեանը:

Փետրւարի 12–20: Համազումարի ընթացքին մի քանի միջկուսակցական խորհրդակցական ժողովներ տեղի ունեցան Բագւից եկած ընկերների մասնակցութեամբ: Խորհրդակցական ժողովների ընթացքին և ժողովից դուրս Բագւից եկած ընկերները բաւական ծանօթանում են Ղարաբաղում կուսակցութիւնների ունեցած համերաշխ գործունէութեանը, որը չարունակւում էր 1917 թ. դեկտեմբեր ամսին Միջկուսակցական Բիւրոյի կազմելուց յ վեր:

Մտքերի փոխանակութեանց ժամանակ քննադատութեան ենթարկւեց քաղաքագլուխը՝ իբր բռնած անհամերաշխ, այլև քմահաճ վերաբերմունքի համար՝ հանդէպ աղգային մարմինների, սակայն, այնուամենայնիւ, Բագւից եկած ընկերների և տեղում աշխատած գործիչների մէկ մասի տեսակէտով, անհրաժեշտ և ցանկալի էր համարւում համերաշխութեան կղզ զտնել քաղաքագլխի հետ, քանի որ վերջինիս, որպէս պաշտօնական հանգամանք ունեցող մարդու, անգլիացիները կարևորութիւն և համապատասխան վերաբերմունք էին ցոյց տալիս: Աղգային իշխանութեան չրջափակի մէջ առնելով քաղաքագլխին, աւելի ուժեղ տպաւորութիւն կառաջանար անգլիական միսսիայի մօտ, որին նա կը նայէր որպէս աղգային կուռ միութեան ներկայացուցչութեան:

Խորհրդակցական ժողովի համաձայնութեամբ, Գևրասիմ Բալայեանը և Լևոն Զաւարեանը յանձն են առնում, որ համագումարի նիստերին, երբ թևկնածուների չուրջ մտքերի փոխանակութիւն սկսենք, իրենք պատճառաբանեալ առաջարկութեամբ քաղաքագլխի թեկնածութիւնը դնեն և պաշտպանեն:

Համագումարի ընթացքին կողմնորոշման չուրջ հանգամանօրէն մտքերի փոխանակութիւն տեղի չունեցաւ: Պիտի ասել, որ թէև պատգամաւորների ճնշող մեծամասնութիւնը գիւղացիներ էին, բայց իրենց բնաղդով, բոլորը ռուսական

[7] Ներկայումս՝ Վարդենիս: (Խմբ.)

կողմնորոշում ունէին, քանիցս չեչտուած կերպով դժգոհութիւնամբ արտայայտուեցին անգլիական հրամանատարութեան կողմնակալ վերաբերմունքի առթիւ և խստագոյնս քննադատեցին Սուլթանովին Ղարաբաղի նահանգապետ նչանակելը ու Խանքէնդ աղբրէչանական զօրք մտցնելու քայլերը: Անգլիական հրամանատարութիւնը, փոխանակ չէզոք քաղաքականութիւն վարելու, իր կողմնակալ վերաբերմունքով գոյութիւն ունեցող խաղաղութիւնն է խախտում: Անգլիական հրամանատարութիւնը ուղիղ և արդար վարուած կը լինէր, եթէ մէկ անգլիացի նահանգապետ նչանակած լինէր, եթէ չէր ուղում, որ հայ նահանգապետ նչանակուէր, մինչև որ խաղաղութեան խորհրդաժողովում որոչուէր ու լուծուէր Ղարաբաղի հարցը: Անգլիական կառավարութեան ներկայացուցիչների վերաբերմունքը աւելի քան ցայտուն կերպով երևաց այս վերջին երկու ամսւայ ընթացքում:

Համագումարին ելոյթ ունեցաւ Արսօ Յովհաննէսեանը, որպէս սոց. յեղափոխական, խորագոյնս քննադատելով կապիտալիստական մեծ երկրների պետութիւններին, որոնք "ելնելով իրենց շահերից, փոքր ազգերի դատը շահագործելով, պատերազմներ են ստեղծում իւղոտ պատառ ձեռք բերելու նպատակով: Պատերազմներից օգտուողը լինում է միայն շահագործող դասակարգը, իսկ տուժողը՝ աշխատաւոր մարդկութիւնը: Պատերազմների ընթացքին գիւղացին ու բանւորը որպէս թնդանօթի միս են հանդիսանում, առատօրէն թափւում է աշխատաւորների արիւնը, որից ուռճանում, մեծանում է կապիտալիստ շահագործող դասակարգերի դրամագլուխը: Ի՞նչ շահ բերեց համաշխարհային այս վերջին պատերազմը. հայ ժողովրդին խոստումներ եղան, և ժողովուրդը գլխովին նետուեց աշխարհասասան բախումի մէջ, նիւթական և բարոյական հսկայական զոհաբերութիւն անելով: Հարիւր հազարաւոր զինուորներից բացի, որ զօրակոչի ենթարկուեցին և ճակատ մեկնեցին, կազմուեցին նաև կամաւորական գնդեր: Արդիւնքը եղաւ մեր ժողովրդի մի խոշոր մասի բնաջնջումը, հսկայական, անհաշիւ նիւթական վնաս կրելը և հարիւր հազարաւոր գաղթականութեան՝ զրկանքների ու տառապանքի ենթարկուելը: Փիչ էր մեր ժողովրդի կրած զրկանքը, տառապանքը, աւերացաւ և համաճարակ հիւանդութիւնների զոհած աւերը, տասնեակ հազարաւոր մարդկային կորուստը: Եւ այսօր մեր դաչնակից համարուած պետութեան ներկայացուցիչները, որպէս վարձատրութիւն հայ ժողովրդի արած անհաշիւ նիւթական ու բարոյական զոհաբերութեանց, բռնանում են մեր կամքի վրայ՝ յանուն իրենց զծուծ շահերի, ուղում են զօռով մեր վզին փաթաթել յետադիմական մուսաւաթական օտար իշխանութիւնը: Մենք պէտք է առաջնորդւենք Ռուսաստանի մեծ յեղափոխութեան նչանաբանով,

սերտօրէն կապուած ռուս մեծ ժողովրդավարութեան աչխատաւորութեանը":

Խօսողները եղան մէկ-երկու հոգի, որոնք առարկեցին, թէ գործնականօրէն հնարաւորութիւն չկայ կապելու ռուս աչխատաւորութեան հետ, որից իրական օգնութիւն ստանալ չենք կարող, որովհետև մեր և նրանց միջև սպիտակ ռուսական կառավարութիւնն է գրաւել ահագին տարածութիւն իր բանակներով: Բարձրացաւ տեղից փոխ-նախագահ Յակոբ Եսայեանը և ասաց՝ "երկար խօսելու պէտք չկայ. կարճ ու պարզ պէտք է ասել, ուղում է Լենինը գայ, թէ Դենիկինը, միայն թէ ռուսը գայ, տիրութիւն անի իր լքած երկրին": "Այո, այո" գոչեցին մի չարք պատգամաւորներ:

Յակոբ Եսայեանը գիւղական ուսուցիչներից մէկն էր, գիւղացի և տասնեակ տարիների ուսուցիչ, պաչտօնավարած Ղարաբաղի բոլոր չրջանների մի չարք գիւղերում և լաւ ծանօթ ժողովրդի մտայնութեանը և ցանկութիւններին: Նրա ասած խօսքերը համապատասխանում էին ժողովրդի ցանկութիւններին: Այո, ժողովուրդն ուղում էր, որ ռուսը կրկին իչխէր Կովկասում, իչխողը Լենինը կը լինէր թէ Դենիկինը, միևնոյնն էր նրա համար, երկուսն էլ հաւասարարժէք ռուսներ էին իր հասկացողութեամբ. մէկի բանակը գար, թէ միուսինը, ժողովուրդը նրանց գրկաբաց ընդունելու պատրաստ էր, սպասողական վիճակում էր: Թէ Արսօ Յովհաննիսեանի և թէ Յակոբ Եսայեանի ասածները ճիչտ էին թէև, սակայն մոռանալու չէր մի հանգամանք, որ ռուսական կողմնորոչման դրսևորումը, այն էլ այսքան չեչտած կերպով, նպատակայարմար չէր, պիտի առիթ դառնար անգլիացիների համար՝ աւելի պնդելու, որ Ղարաբաղը Ադրբէջանի իչխանութեան ենթարկւէր: Պիտի նկատի ունենալ մի հանգամանք, որ անգլիացին ուր որ է դնում առաջին անգամ, նախ աչխատում է տեղացի իր գործակալն ունենալ, իր աչքն ու ականջը՝ տեսնելու և լսելու, թէ ինչ է կատարւում չուրջը, ուստի ժամանակաւոր Ազգային Խորհուրդը ղգոյչ էր, մանաւանդ առևտրականների՝ ի պատիւ մայոր Գիրթոնի տւած ճաչկերոյթին արտասանւած ճառերի և մանաւանդ նոյն առևտրականների՝ Սէրրայղին ներկայացրած անմիտ ու անտեղի համախօսագրի հետևանքով անգլիացիների յայտնած դժգոհութիւններից յետոյ:

Նախագահը դիտողութիւն արաւ, որ համագումարի օրակարգում կողմնորոչման խնդիր չէր դրւած և չպէտք էր դնել, որովհետև դա ընդհանուր հայկական հարց էր և քանի որ մեր բուռն ցանկութիւնն է՝ տեսնել Ղարաբաղը կցւած Հայաստանի Հանրապետութեանը, ուստի այդ հարցով պէտք է դրաղւի Հայաստանի կառավարութիւնը: Ես չընդհատեցի խօսողներին,

Թողնցի, որ վերջացնեն իրենց խօսքը, սակայն այդ խնդրի չուրջ այլևս չպիտի խօսել և պէտք չկայ խօսելու։

Պատգամաւոր Ամանես Ղահրամանեանը, որ գրագէտ, գիտակից գիւղացիներից մէկն էր, երկար ժամանակ Բազու ապրած և կուսակցական խմբերում աշխատած, հարց է տալիս Ժամանակաւոր Ազգային Խորհրդին, թէ ինչ միջոցների է դիմել գործնականօրէն՝ դիւրացնելու Ղարաբաղի կցումը Հայաստանի Հանրապետութեանը։

Տրւած հարցին պատասխանելով, ասացի, որ Ժամանակաւոր Ազգային Խորհրդի ունեցած երկու ամսւայ գործունէութեան մասին տրւած զեկուցումից պիտի պարզ լինի բոլորի համար, որ Ժամանակաւոր Ազգային Խորհուրդը չէ, որ կարող է և պէտք է գործնական միջոցներ մտածի Ղարաբաղը կցելու Հայաստանի Հանրապետութեանը, այլ Հայաստանի կառավարութիւնը։ Ժամանակաւոր Ազգային Խորհուրդը կատարել է իր որոշ պարտականութիւնները, որ չի ճանաչի ու չի ենթարկւի Ադրբէջանի իշխանութեանն ու միաժամանակ դիմել է Երևան, որ կառավարութիւնը անհրաժեշտը կատարի։ Մի բան պէտք է ամէնքիս համար պարզ լինի, որ եթէ Հայաստանի կառավարութիւնը աղդու միջոցների չդիմի Սուլթանովին և Ադրբէջանեան զօրամասը հեռացնել տալու Ղարաբաղից, ու վերջինս դառնայ կուսակցական երկու հարևան պետութիւնների միջև, մարզարէ չպիտի լինել զուշակելու համար, որ Ադրբէջանը և Հայաստանը պիտի բախւեն և հետևանքը պիտի լինի այն, որ Ղարաբաղը կը դառնայ երկուսի վերեղմանը։ Եւ եթէ, Ազգային Խորհրդի ղեկտեմբեր ամսի դիմումին ընդառաջելով, Հայաստանի կառավարութիւնը ուղարկած լինէր մէկին Շուշի, Ղարաբաղ-Զանգեզուրի (Սիւնիքի) նահանգապետի պաշտօնով, կանխած կը լինէր Ադրբէջանին, և այսօր ոչ Սուլթանով կը լինէր Շուշում և ոչ էլ թրքական զօրք Խանքենդում։ Այն ժամանակ Ադրբէջանը, անշուշտ, կատարւած փաստի առջև կանգնած լինելով, հարցը պիտի թողնէր դաշնակիցների հրամանատարութեանը, բայց ղրանից աւելի չպիտի անէր։ Ինչպէս էլ մօտենալու լինէր խնդրին, ի վերջոյ պիտի յանդենար այն եղրակացութեան, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը, որպէս իրաւատէր, պիտի ամէն միջոցի դիմէ՝ դիւանագիտական կամ այլ ճանապարհով տիրանալու Ղարաբաղին։

Փետրւար 19-ին Ալէքսան դային, Արտեմ Լալայեանը և Դալի Մահրասան առանձին խօսակցութիւն ունենալով ինձ հետ, հարցնում են, թէ Ազգային Խորհուրդը ինչ միջնաձուներ նկատի ունի ընտրելիք Ազգային Խորհրդի կազմի համար։ Յայտնեցի, որ այդ խնդրով Ազգային Խորհուրդը առանձնապէս չի զբաղւել, քանի

որ պատգամաւորները լաւ ճանաչում են բոլոր հոսանքների համապատասխան ուժերին, որոնցից կը կարողանան թեկնածուների ցանկ կազմել: Ճիշտն ասած, ինչպէս լսում ենք, որոշ դժգոհութիւններ կան ժամանակաւոր Ազգային Խորհրդի դէմ նոյնիսկ մեր ընկերների մի մասի մօտ, որոնք Ազգային Խորհուրդը համարում են չատ թոյլ. ուստի պէտք է աշխատենք, որ ընտրութիւններում աւելի ուժեղ կազմ ստեղծենք:

Նոյն օրը վերջին անգամ միջկուսակցական խորհրդակցական ժողով է տեղի ունենում և մտքերի փոխանակութիւն՝ ընտրութիւնների չուրջ: Բազմից եկած ընկերները չատ մեծ բաւականութեամբ էին մասնակցում ժողովին և չատ լաւ տպաւորութիւն էին ստացել այն համերաշխ ոգուց, որ գոյութիւն ունէր հոսանքների միջև: Գ. Բալայեանը և Լևոն Զաւարեանը այս կամ այն ժողովականի մասին հարցնում էին, թէ նրանք մեր ընկերների՞ց էին. և բացասական պատասխան ստանալով, զարմանում էին, որ կուսակցական նեղմտութիւնից ղերծ էին, և մեծ գոհունակութեամբ հետևում նրանց խօսածներին: Պարզ էր, ի հարկէ, թէ ինչ պատճառով հոսանքների միջև յարաբերութիւնը այնքան սերտ էր և անկեղծ: Բոլոր հոսանքների մարդիկ սկզբից խորապէս հասկացել էին, որ ամբողջ հայութեան գլխին էր վտանգը սրի պէս կախուած և սպառնում էր անխտիր բոլոր հոսանքների մարդկանց, իրրև հայերի: Արդ, քանի որ այդպէս է, ամէնքը իրենց հայկական պարտականութիւնն են կատարում, մտածում, խօսում են իրրև հայ և ազգային մարմինների մէջ կամ դուրսը աշխատում իրրև հայ:

ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՄԱՅՈՐ ՄՈՆԿ ՄԵՍԸՆԻ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ

Փետրուար 20-ին տեղի է ունենում վերջին նիստը: Նախագահը, խօսքն ուղղելով պատգամաւորներին, ասում է՝ "մենք խաղաղ մթնոլորտում քննեցինք մեզ հետաքրքրող հարցերը. մտքերի փոխանակութիւն ունեցանք աղատօրէն, մնում է, որ կատարենք մեր մէկ պարտականութիւնը ևս, այն է՝ Ազգային Խորհրդի ընտրութիւնը և, վերջացած համարելով մեր աշխատանքները, հանգիստ սրտով վերադառնանք մեր տեղը: Անչուշտ, դուք ժողովից դուրս ձեր մէջ խօսել էք թեկնածուների հարցի չուրջ, մտքերի փոխանակութիւն ունեցել էք, ուստի կը խնդրէի, որ թեկնածուների անուններ տայիք, որպէզի արձանագրեն քարտուղարները, ապա անցնենք ընտրութեանը":

Հէնց այդ վայրկեանին, ներս մտաւ Մարդի Դաղեանի հիւրանոցի ծառան և յայտնեց, թէ Մայոր Մոնկ Մէսընը խնդրում է

ինձ՝ անցնել անմիջապես իր մոտ: Հիւրանոցի ծառայի խօսքերը լսեցին պատգամաւորները: Ես դուրս եկայ սրահից և գնացի Դաղեանի հիւրանոցը, որը միակ օրինակելի հիւրանոցն էր Շուշում և ուր ժամանակաւորապէս տեղաւորւել էր անգլիական միսսիան, մինչև որ մանաւոր մեկ տուն յարմարւէր ու տրամադրւէր միսսիայի մարդկանց: Հիւրանոցը չատ մօտ էր դպրոցին: Երբ ներս մտայ, Մայոր Մոնկ Մէսընը, որ միչտ ժպիտով էր ընդունում Ադգային Խորհրդի մարդկանց, չատ լուրջ, կարելի է ասել՝ խոժոռ դէմք ունէր և անմիջապէս, դժգոհ տօնով, թարգման ռուս Մասլինիկովի միջոցով իւր դժգոհութիւնը յայտնեց, ասելով. "Ինձ տեղեկացնում են, որ ձեր համագումարի մարդիկ բոլչեվիկներ են և հակա-անգլիական բոլչեվիկեան գրգռիչ ճառեր են արտասանում: Ես անձամբ բարեկամ եմ հայ ժողովրդին, որը մեր փոքր դաչնակիցն էր պատերազմի ընթացքին, սակայն այժմ, չգիտեմ ինչու, հակառակ դիրք է ընդունած մեր դէմ": Կասկածից դուրս էր, որ Կապիտան Սէրրայդը մեկին ձեռք էր բերել, որպէս տեղեկատուի, որ դժւար չէր այն ժամանակւայ պայմաններում, երբ ամենաղօր ղրամը աւելի քան աղդեցիկ դեր էր խաղում: Սէրրայդը մեկնելուց յետոյ, տեղեկատուն որպէս ժառանգութիւն անցել էր Մայոր Մոնկ Մէսոնին: Տեղեկատուի համար ոչ մի դժւարութիւն չկար տեղեկութիւնները ձեռք բերելու, որովհետև համագումարի օրերին բուռն հետաքրքրութիւն էր առաջացած համագումարի աշխատանքների չուրջ: Օրւայ հրատապ խնդիրների չուրջ ասում, խօսում էին ամենուրեք, տներում, խանութներում, հաւաքոյթներում: Գիւղերից եկած պատգամաւորները իջևանել էին, մեծաւ մասամբ, իրենց բարեկամների ու ծանօթների մօտ, փոքր մասը քարւանսարաներին կից իջևանատեղերում:

Մայոր Մոնկ Մէսոնին որոշակի և չեչտւած կերպով յայտնեցի, որ իր ստացած տեղեկութիւնը միանգամայն սխալ է. կարող է լինել, որ մանաւոր անհատներ դուրսը բոլչեվիկեան մտքեր արտայայտել են, սակայն Համագումարի պատգամաւորներից և ոչ մեկը բոլչեվիկ չէ և բոլչեվիկեան ճառ ասել չէր կարող: Պատգամաւորների մեծ մասը գիւղացիներ են, որ, պիտի ասել, քաղաքականութեամբ չեն զբաղւում: Փոքրամասնութիւն կազմող ինտելիգենտ մարդիկ պատկանում են զանազան ոչ-բոլչեվիկեան հոսանքների, որոնք բոլչեվիկների կողմից համարւում են հակայեղափոխականներ:

Յամենայնդէպս, ասաց Մայոր Մէսընը, "իմ պարտականութիւնն է՝ զգուշացնել ձեզ և խորհուրդ տալ, որ Թոյլ չտաք տեղի ունենան նման երևոյթներ":

–Դրանում իանգամայն վստահ եղէք, – ասացի և հրաժեչտ տալով դուրս եկայ:

Երբ վերադարձայ, տեսայ բոլորը սպասողական վիճակում էին, թէ ինչ նորութիւն պիտի յայտնեմ, ուստի հարցական հայեացքներն ուղղելով, կարծես ասում էին՝ "Հը, ի՞նչ կայ, ի՞նչ լուր":

Արտաչէս Տէր Միքայէլեանը տեղից հարց տւաւ՝ "խէ՞ր է, թէ՝ չառ":

Յայտնեցի մայորի հետ ունեցածս փոխասացութիւնը, զգուշացնելով, որ դուրսը, Համագումարի աչխատանքների մասին խօսելիս, նկատի ունենան մայորի հետ ունեցած խօսակցութիւնս:

Նախագահը կրկին անդրադառնալով Ադգային Խորհրդի ընտրութիւնիւններին, ասաց, որ թեկնածուները առաջարկւեն, կազմւի ցանկը, և ապա քննութիւն կատարւեն, ուստի նախ պէտք է որոչել, թէ կազմը քանի հոգուց պէտք է բաղկացած լինի:

Մտքերի փոխանակութիւն ունենալուց յետոյ երկու առաջարկ եղաւ՝ ա) կազմը բաղկացած լինի 7 հոգուց և բ) կազմը 9 հոգուց: Երկու դէպքում էլ նկատի է առնւած մեկ տեղ՝ Հայաստանի կառավարութեան կողմից ուղարկւելիք դիւանագործականի համար: Բաց քւեարկութեամբ որոչւում է, որ կազմը բազկացած լինի 9 հոգուց, որոնցից երկու հոգին՝ Գերասիմ Բալայեանը և Լևոն Զաքաֆեանը, որոնք Բագւի Ադգային Խորհրդի կողմից եկել են՝ օգնելու Ադգային Խորհրդին, համարւում են իրրև ընտրւածներ: Ապա սկսւեց մտքերի փոխանակութիւն թեկնածուների չուրջ՝ եռակի ցուցակ կազմելու:

Գերասիմ Բալայեանը և Լևոն Զաքաֆեանը, համաձայն խորհրդակցական ժողովին ստանձնած յանձնառութեան, դրին քաղաքագլխի թեկնածութիւնը, որի չուրջ սկսւեց, ինչպէս կասեն, մտքերի աչխոյժ փոխանակութիւն: Պատգամաւորներից ոմանք գտնում էին, որ քաղաքագլուխը կազմի մէջ առնելը թէ համերաչխութեան և թէ արտաքին, օտարների վրայ լաւ տպաւորութիւն թողնելու համար կարևոր է, իսկ ոմանք անհրաժեչտ չէին համարում, մանաւանդ որ ժամանակաւոր Ադգային Խորհրդի անդամ լինելով, անհամերաչխ է գտնւել իր քմահաճ բնաւորութեամբ և հիւանդոտ անձնասիրութեամբ: Երկու կարծիքների բախումը բաւական երկար տևեց. խօսողները կրկնութիւնների մէջ ընկան, և նախագահը հարկադրւած եղաւ սպառած յայտարարել քաղաքագլխի թեկնածութեան հարցը, որը պէտք է որոչել քւեարկութեամբ: Կարծիքների փոխանակութեան ընթացքին ժամանակաւոր Ադգային Խորհրդի անդամները թիւր արտայայտւեցին: Թէ Գ. Բալայեանը և թէ Լ. Զաքաֆեանը մի քանի անգամ արտայայտւեցին հակառակ կողմին համոզելու յոյսով, սակայն արդիւնք չունեցաւ, ուստի նախագահը քաղաքագլխի թեկնածութիւնը դրեց բաց քւեարկութեան և ասաց, թէ ովքեր դէմ են, ձեռք բարձրացնեն, և հէնց այդ վայրկեանին ձայն խնդրեց

Խաչենի պատգամաւորներից Վանք գիւղացի Աթանէս Ղահրամանեանը:

Ա. Ղահրամանեանը Խաչենի և Ջրաբերդի պատգամաւորների անունից խօսելով, ասաց. "Համագումարի նիստերի դադարին երկու չրջանների պատգամաւորներս առանձին խորհրդակցական ժողովներ ենք ունեցել թեկնածուների չուրջ ընդհանրապէս և քաղաքագլխի թեկնածութեան մասին մասնաւորապէս: Երկու չրջանների պատգամաւորներս հանգամանօրէն ծանօթացել ենք այդ մարդու գործունէութեանը և ազգային մարմինների հանդէպ ունեցած վերաբերմունքին ու միաձայն եկել այն եզրակացութեան, որ նրա թեկնածութիւնը չպէտքէ դնել ցանկում, և մենք միաձայնութեամբ սեւ քւէ ենք տալիս նրան":

Ա. Ղահրամանեանի յայտարարութիւնը ծանր և ճնշող էր: Քաղաքագլխի թեկնածութիւնը առաւելապէս պաշտպանում էին Վարանդայի պատգամաւորների մէկ մասը և քաղաքի ներկայացուցիչները, որոնք պարզ տեսնում էին, որ երկու չրջանների միաձայն սեւ քւէ տալուց յետոյ, չպիտի կարողանային պնդել քաղաքագլխի թեկնածութեան վրայ: Եւ երբ Դիզակի պատգամաւորներն էլ յայտարարեցին, թէ իրենք էլ սեւ քւէ են տալիս, այլևս հարցը սպառուած համարուեց: Քաղաքագլխի թեկնածութեան մերժելը մտահոգ դարձրեց Բագւից եկած ընկերներին. նրանց անկեղծ ցանկութիւնն էր, որ սեւ քւէի չարժանանար քաղաքագլուխը:

Մի չարք պատգամաւորների կողմից խօսելով, Բալսչի Մուրադեանը այն կարծիքն է յայտնում, թէ ժամանակաւոր Ազգային Խորհուրդը իր գործունէութեան ընթացքին ծանօթացել, ճանաչել և գիտէ, թէ որոնց կարելի է իբրև թեկնածուներ նկատի ունենալ, հետեւաբար թող յայտնի անունները և մենք ընտրութիւն կատարենք":

-Ժամանակաւոր Ազգային Խորհուրդը, ասացի, երկու ամսւայ գործունէութիւն ունի և, ինչպէս խօսւել է քանիցս, այդ ուղղութեամբ առանձնապէս ոչ մտածել և ոչ էլ թեկնածուներ է որոշել:

Համբարձում Մելքումեանը, Վարանդայի պատգամաւորներից (դաշնակցական), ընդհատելով ինձ, ասաց. "Դուք որ սկզբից ի վեր եղել էք անգամ բոլոր յաջորդող մարմինների, հէնց ինքներդ կարող էք թեկնածուների անուններ տալ, դուք տուէք":

- Այո, այո, ձայնակցեցին մի չարք պատգամաւորներ:

-Գիտէք ինչ, ասացի, իղուր տեղը ձգձգում էք. ձեղնից չատերը, իբրև պատգամաւորներ, մասնակցել են մեր բոլոր համագումարներին և չատերին լաւ ճանաչում են ու գիտեն, կարող են թեկնածուներ առաջարկել: Իմ կարծիքով, թեկնածուներ են

Համագումարին ներկայ գտնուող ու մասնակցող բոլոր մարդիկ, ուստի պէտք է նաեւ համագումարից դուրս գտնուող գործիչներին նկատի ունենալ և անունները տալ: Ես իմ կողմից առաջարկում եմ Աչոտ Մելիք Յովսէփեանին, որը եղել է բոլոր մարմինների մէջ գործօն և չատ օգտակար դեր կատարել, ինչպէս նաև՝ հէնց Հայ-Յեղափոխական կոմիտէում, նոյնպէս Արշաւիր Քամալեանին, որ մեր ֆինանսական միջոցները կանոնաւորելու գործում հմտութիւն է ցոյց տւել: Դուք էլ ձեր գիտցած մարդկանց անունները տուէք:

Նախագահը բաւ համարելով թեկնածուների չուրջ մտքերի փոխանակութիւն կատարելը, պահանջեց, որ անուններ տրուեն, ցանկ կազմելու համար: Պատգամաւորները այս ու այն կողմից անուններ տւին և եռակից աւելի ընդարձակ ցանկ կազմուեց:

Արշաւիր Քամալեանը և մի չարք պատգամաւորներ, որոնց անունները տրւել էին, զանազան պատճառաբանութիւններով հրաժարուեցին թեկնածու լինելուց, և քանի չափ թեկնածուներ մնացին ցանկում, ուստի թղթեր բաժանուեցին ամէնքին, գաղտնի քւէարկութեան համար:

Գաղտնի քւէարկութեան թերթիկները հաւաքւում, ժողովի ցանկութեամբ յանձնւում են Գերասիմ Բալայեանին ու Լեւոն Զաւաֆեանին՝ նախագահի հետ միասին ճշտելու ընտրւածների անունը: Քւէները ստուգողները ժողովին յայտնեցին, թէ ընտրւած են ձայների ճնշիչ մեծամասնութեամբ հետեւեալները, այրբէնական կարգով՝

1. Բահաթրեան Հրանդ,
2. Իշխանեան Եղիշէ,
3. Մելիք-Յովսէփեան Աչոտ,
4. Միրզաբէկեան Իշխան,
5. Շահնազարեան Ասլան,
6. Տէր Միքայէլեան Արտաշէս,

որպէս փոխ-անդամներ՝

1. Եսայեան Մելիքսէթ,
2. Տէր Գրիգորեան Պետրոս:

Ընտրւած վեց հոգու հետ ընկերներ Գերասիմ Բալայեանն ու Լեւոն Զաւաֆեանը միասին համարւում են Ազգային Խորհրդի ութ հոգանոց կազմը, որը պիտի լրանայ Հետագային Հայաստանի կառավարութեան նշանակած դիւորականով:

Նոյն օրը երեկոյեան տեղի ունեցաւ նորընտիր Ազգային Խորհրդի առաջին նիստը. ներկայ էին բոլոր անդամները: Գերասիմ Բալայեանը առաջարկում է դիւանի կազմ ընտրել հետեւեալ ձեւով՝ նախագահ՝ Ասլան Շահնազարեան, երկու փոխ նախագահ՝ Եղիշէ

Իշխանեան, Աչոտ Մելիք Յովսէփեան: Գերասիմը, որոշ նկատառումներով, ցանկանում էր, որ նախագահը չէղոք անկուսակցական մէկը լինի և յարմարագոյնը Ասլան Շահնազարեանն էր, որը թէև Գէորգեան ճեմարանից սկսած մինչև Պետերբուրգի համալսարանն աւարտելը դաշնակցական էր եղել և աչտարակցի ընկ. Ամասիա Սուքիասեանի հետ միասին բաւական ժամանակ ղէնքի և զինամթերքի փոխադրական գործով զբաղւել հայ-թրքական ընդհարումներին, բայց հետագային, մանկավարժական ասպարէզ մտնելով, չէղոքացել էր: Ազգային Խորհուրդը որոշում է կազմի մէջ ներառնել խորհրդակցական ձայնով, որպէս քարտուղարի, Մելիքսէթ Եսայեանին, որը գործօն մասնակցութիւն էր ունեցել նախկին ազգային մարմիններում՝ Ղարաբաղի ժողովրդական կառավարութեանը յաջորդած Ազգային Խորհրդի մէջ, քարտուղարի հանգամանքով:

Յաջորդ լրիւ կազմով նիստը նշանակւեց միւս օրը, փետրուար 21-ին, Աթաբէկեաններին պատկանող ռէալական դպրոցի նախկին չէնքում, որը 1917 թ. աշնանից Դաշնակցութեան տրամադրութեան տակ էր: Վերնայարկը յատկացւեց Խորհրդին: Նորընտիր Ազգային Խորհրդի անդամներս լաւ տրամադրութեամբ իրարու ղիչեր բարի ասելով, ցրուեցինք, որ միւս օրը, առաւօտեան ժամը 10-ին, հաւաքւենք մեղ յատկացուած յարկաբաժնում, գործնական մեր անելիքները ճշտելու: Զգիտէինք, սակայն, բնաւ չէինք էլ կասկածում, թէ միւս օրը ինչ անակնկալ պիտի տեղի ունենայ: Ժողովից յետոյ հանդիպեցի Մելիքսէթ Եսայեանին, յայտնեցի, որ ընտրուած է և հրաւիրւում է կազմի մէջ, խորհրդակցական ձայնով, ստանձնելու քարտուղարի պաշտօն: Մելիքսէթը, որ իր համակ էութեամբ ապրում էր Ղարաբաղի հարցով, սիրով համաձայնեց աշխատել նորընտիր Ազգային Խորհրդում:

ՋՕՐ. ՏՕՄՍՈՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՃԱՆԱՉԵԼ ԱԴՐԲԷՋԱՆԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Փետրուար 21-ին Ազգային Խորհրդի գրասենեակում հաւաքւել էին բոլոր անդամները, եկել էին և բոլոր չրջանների հրամանատարները, միասնաբար խորհրդակցելու թէ չրջաններում և թէ քաղաքում մեր կատարելիք աշխատանքների մասին: Նիստը բացւած յայտարարելով, նախագահն առաջարկեց ճշտել օրակարգի խնդիրները, որոնք պիտի քննութեան ենթարկւեն, հէնց այդ րոպէին մէկը թիկնացրեց դուռը: Արտ. Տէր Մինքայէլեանը, որ դռան մօտ էր նստած, բարձրացաւ, բացեց դուռը, և ներս մտաւ անգլիական

միսսիայի թարգման Մասլիննիկովը: Վերջնիս ճանաչողների և, ի մասնաւորի նախկին ժամանակաւոր Ազգային Խորհրդի անդամների դէմքով վայրկեանապէս մոռի ամպ անցաւ: Այս մարդը, որպէս թարգման, մեր հանդիպումների ընթացքին այն տպաւորութիւնն էր թողել, որ անգլիացուց աւելի անգլիացի էր: Նա թարգման էր, վարձու պաշտօնեայ, սակայն իր կողմից խորհուրդներ էր տալիս ճչտիւ հետևել անգլիական հրամանատարութեանը, Տօմսոնի կարգադրութիւններին, ի նպաստ Ադրբէջանի կառավարութեան: Եւ մենք նոյնիսկ կասկածում էինք, որ հաւանօրէն Սուլթանովից կաչառած մէկն է, ուստի նրա զալը մեզ մօտ, բնականաբար, հաճելի չէր:

Նախագահը առաջարկեց նրան դիւանի սեղանին մօտ ազատ աթոռին նստել, որից յետոյ թարգմանը դարձաւ ներկաներին և յայտնեց հետևեալը. "Մայոր Մոնկ Մեսընը հեռագիր է ստացել գեներալ Տօմսոնից, որը պահանջում է, որ Ղարաբաղի հայութիւնը ճանաչի Ադրբէջանի գերիշխանութիւնը և բոլոր հաստատութիւնները ենթարկուեն Սուլթանովի իշխանութեանը:

Ի պատասխան յիշեալ յայտարարութեան, նախագահն ասաց. "Յայտնեցէք մայորին, որ Ղարաբաղի հայութեան ղեկավոյն լիազօր ներկայացուցիչները իրենց չորրորդ համագումարում միաձայնութեամբ վճռել են չճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը, որ Ղարաբաղը իր հազարամեայ պատմական յուշարձաններով և 85%-ից աւելի հայ ազգարնակութեամբ հանդիսանում է Հայաստանի անբաժան մասը, որպէս նրա բնազաւառներից մէկը: Համագումարից ընտրուած Ազգային Խորհուրդը, իր լրիւ կազմով, և բոլոր չրջանների հրամանատարները, որ ներկայ են ու պատասխանատու Ղարաբաղի ղեկավոյն լիազօր օրգանի՝ համագումարի առջև, կանգնած նրա որոչման ու տւած հրահանգի վրայ, չեն ճանաչում և երբէք չեն կարող ճանաչել Ադրբէջանի գերիշխանութիւնը":

Մասլիննիկովը վեր կացաւ ու դուրս գնաց, որից յետոյ ժողովը չարունակեց և ղբաղեց Տօմսոնի պահանջով:

Թէ Ազգային Խորհրդի անդամների և թէ հրամանատարների կարծիքը նոյնն էր, որ Ադրբէջանի կառավարութիւնը չատ եռանդուն աշխատում էր, միաժամանակ, աղդու միջոցների դիմելով, կարողանում է անգլիական հրամանատարութեան աչքում երևալ որպէս աւելի վստահելի տարր, քան հայկական կառավարութիւնը: Բոլոր նշաններից երևում է, որ Ադրբէջանի իշխանութիւնը աւելի ճարպիկ է, քան Հայաստանի կառավարութիւնը, որին կանխեց, Սուլթանովին անգլիական հրամանատարութեան միջոցով նշանակելով Զանգեզուր-Ղարաբաղի նահանգապետ:

Հայաստանի կառավարութիւնը քայլ տեղեակ էր Զանգեզուր-Ղարաբաղի հարցին, Ադրբէջանի ոտնձգութիւններին. նա առանց նոյն իսկ անգլիական հրամանատարութեան համաձայնութիւնը առնելու, պիտի իր ժամանակին փորձառութիւն ունեցող զինուորականի նահանգապետ նշանակէր և միայն ի տեղեկութիւն յայտնէր դաշնակից ղօրքերի հրամանատարութեանը: Այո, թուրքերը ճարպիկ են մեզնից, և այդ կարծիքն էր տիրում բոլորի մօտ:

Տօմսոնի այս վերջին պահանջի չուրջ բաւական մտքերի փոխանակութիւն կատարելուց յետոյ, ժողովը նկատի ունենալով այն հանգամանքը, որ Բագուի Ազգային Խորհուրդը և դաշնակցութեան Կ.Կ. -ը չարունակ խորհուրդ են տուել անգլիական միսսիայի հետ ունեցած յարաբերութիւններում ընդհարումներից ու սուր վէճերից խուսափել, նոյնիսկ, նամակներում ընդգծած ասել են, որ եթէ անգլիական միսսիան պնդելու լինի որևէ անտեղի պահանջի վրայ, խուսափել բախումից, իրենք Բագուում անհրաժեշտ միջոցների կը դիմեն, ուստի, անհրաժեշտ է, որ Ազգային Խորհրդի կողմից մարդիկ գնան, Ղարաբաղում ստեղծուած արդի կացութեան մասին խօսեն, միասնաբար խորհրդակցեն, թէ իրական ինչ հնարաւոր միջոցների դիմելով կարելի կը լինի Ադրբէջանի ոտնձգութիւնների առաջն առնել:

Թեկնածուների չուրջ կարծիքներ փոխանակուեցին, թէ անդամներից որ մէկը գնայ. ապա ընդունուեց նախագահի Առաջարկը, այն է, որ Բագու գնան թեմի Առաջնորդ Վահան Եպիսկոպոս Տէր Գէորգեանը և անդամներից մէկը միասին: Առաջարկն ընդունուեց միաձայնութեամբ, և Առաջնորդին ուղեկցելու համար ընտրուեց Հրանդ Բահաթրեանը: Որոշուեց ներկայանալ Առաջնորդին և յայտնել Ազգ. Խորհրդի որոշումը և խնդրել, եթէ որևէ արգելառիթ հանգամանք չկայ, հէնց վաղը օթոյով մեկնել:

Ժողովից յետոյ Խորհրդի ղեւանը ներկայացաւ Առաջնորդին, յայտնեց Զօրավարի պահանջը և Ազգային Խորհրդի տուած պատասխանը, ապա Խորհրդի կայացրած որոշումը, այն է՝ Ազգային Խորհրդի անդամներից մէկի ուղեկցութեամբ գնար Բագու, որպէս հոգևոր պետ իր ժողովրդի անունից խօսելու և նրա իրաւունքները պաշտպանելու: Առաջնորդը սիրով ընդունեց Ազգային Խորհրդի որոշումը և պատրաստակամութիւն յայտնեց յաջորդ օրը մեկնելու:

Փետրուար 21-ին թեմի առաջնորդն ու Հրանդ Բահաթրեանը մեկնեցին Բագու:

Փետրուար 22-ին մի նոր, չատ անսպասելի անակնկալի առջև կանգնեցին Ազգային Խորհուրդը և ժողովուրդը: Համաձայն

Խորհրդի որոշման, ամէն օր ժամը 9-ին բոլոր անդամները պիտի հանդիպէին միմեանց, թէկուզ քառորդ ժամով, և յետոյ ղրան գործերին վերահասու լինէին: Առաւօտեան 9-ին բոլոր անդամները Խորհրդի գրասենեակում էին: Ներկայ էին նաև ընկ. Ներսէս Նասիբեանն ու Տիգրան Տէր Գրիգորեանը: Մարդի Դաղեանի հիւրանոցի ծառան եկաւ, Գերասիմ Բալայեանին և Լևոն Զառաֆեանին յայտնեց, թէ Մայորը խնդրում է անցնել իրա մօտ: Հիւրանոցը, որտեղ միսիան էր տեղաւորուած, գտնւում էր ճիչտ Ազգային Խորհրդի գրասենեակի դիմաց, երկու քայլի վրայ, ուստի ընկերները, առանց վերարկու հագնելու, գնացին մայորի մօտ և չուտով վերադարձան: Բոլորս նախազգում էինք, որ խեր բանի համար չեն կանչել ընկերները, և երբ նրանք ներս մտան, բոլորը այլայլուած, տխուր դէմքով, սրտատրոփ սպասում էինք, թէ ինչ պիտի ասեն:

– Զգացի անմիջապէս, որ վատ բան պիտի լսենք, երբ ծառան յայտնեց, թէ Մայորը կանչում է մեզ, – ասաց Գերասիմը: Գեներալ Տօմսոնը Բազու հասած օրն իսկ զգացրեց, որ Ադրբէջանի երգևեալ հովանաւորն է և ամէն կերպ աչխատում է սիրաչահել թուրքերին: Մայորն ասաց, որ Գեներալ Տօմսոնը մեզ չտապ կանչում է Բազու, որոչ խնդիրների և հարցերի բացատրութեան համար:

–Կանչում է, կը նչանակէ ձեզ աքսորում է այստեղից, զրեթէ միաբերան ասացին ներկայ եղողները:

–Ե՞րբ պիտի գնանք, ըստ պահանջի, – հարցնում է նախագահը:

–Հէնց այսօր, մէկ ժամ միջոց է տրուած, հանդիպելու տուն և զալու միսիայի գրասենեակը, որ անգլիական մեքենայով մեկնենք, պատասխանեց Գերասիմը:

–Կասկածից դուրս է, որ աքսորում են, –ասաց խիստ զրգռուած և ջղայնացած վիճակում Ներսէս Նասիբեանը, Տօմսոնի սրիկայութիւնն է, ուրիչ ոչինչ:

Պարզ է, ասացի, Գերասիմին և Լևոնին Բազու կանչելը, այսինքն՝ նրանց աքսորելն այստեղից պատասխանն է մեր կտրական մերժումի, որ երբէք չենք ճանաչի ու չենք ենթարկուի Ադրբէջանի իշխանութեանը: Իմ կարծիքով, չպիտի ենթարկել Տօմսոնի հրամանին, պէտք է ընդիմանալ,ասաց Ներսէս Նասիբեանը, և մենք չպէտք է թոյլ տանք, որ տանեն որևէ մէկին մեզանից:

Գերասիմ Բալայեանն ու Լևոն Զառաֆեանը ուժեղ կերպով ընդդիմացան Ներսէսի առաջարկին, յայտարարելով, թէ րնաւ չպիտի նման միջոցի դիմել, որովհետև մենք եկել ենք այստեղ Տօմսոնի համաձայնութեամբ ու թոյլտուութեամբ: Մենք նրան խոստացել ենք նպաստել Ղարաբաղում գոյութիւն ունեցող խաղաղութեանը, որը հաստատել է իրենց՝ անգիացիների չնորհիւ,

և պատասխանատու ենք իր մօտ, իրենց տեսակէտով մեր կատարած սխալի համար: Պէտք չկայ որևէ ձևի ընդդիմութեան. մենք կերթանք Բազու ու անհրաժեշտը այնտեղ կանենք:

Գևրասիմն ու Լևոնը գնացին իրենց տները, վերցնելու համրորդական անհրաժեշտ բանները և գալու միսսիայի դրասեննակը:

Մինչև Գևրասիմի և Լևոնի վերադարձը կայծակի արագութեամբ ընկերների աքսորման լուրը տարածւել էր քաղաքում, և բոլոր թաղերից նկած երկսեռ ահագին բազմութիւն բռնել միսսիայի առջևի վողոցը: Երբ ընկերները վերադարձան, Աղգային Խորհրդի անդամները միանալով գնացին միսսիայի դրասեննակը, ուր ներս գնալուց յետոյ հինգ րոպէ հաղիւ էր անցել, դրսում ահագին աղմուկ սկսւեց և ասյա լսեցին ատրճանակի կրակոցներ: Դուրս նկանք միսսիայի պատչդամբը և հազարից աւելի բազմութիւնը գոռում-գոչիւնով սկսեց օդը թնդացնել, բողոքել, թէ ինչու են նման բռնութիւն գործ գնում քրիստոնեայ կոչւած անգլիացիները, տաճիկներն անդամ քաղաքից մարդ չեն աքսորել, իսկ քրիստոնեայ աղգերի պաշտպան անգլիացիները ուղում են բռնի կերպով մեզ ենթարկել Աղբրէչանին: Թող կորչի Աղբրէչանը, Սուլթանովը և այլն:

Սիպայիների[8] մի կիսավաչտ բռնել էր Հիւրանոցի մայթը. անգլիական երեք մեքենայ պատրաստ վիճակում Հիւրանոցի առջևում էին: Միսսիայի թարգմանը մայորի կողմից ասում է մեղ, թէ ինչու մենք ժողովրդին գրգռել ու հաւաքել ենք միսսիայի առջև: Ներսէս Նասիբեանը, որ հաղիւ էր զսպում իրեն, մէկէն բռնկւեց. "Մենք չէ, որ գրգռում ենք ժողովրդին, այլ դուք՝ ձեր անարդար վերաբերմունքով: Հակառակ ժողովրդի ցանկութեան և սպասածի, բռնի կերպով ուղում էք մեր վրին փաթաթել օտար և անհարազատ մի իշխանութեան լուծը, դուք չպէտք է կողմնակալ դառնայիք":

Ի պատասխան Ներսէսի, մայորը թարգմանի միջոցով յայտնում է, թէ՝ "Գեներալ Տօմսոնը վերջնական կարգադրութիւններ չէ, որ անում է, տերրիտորեալ հարցերը պիտի որոշւեն հետագային, այլ տեղ:

---

[8] Սիպայի. բառացի՝ զինւոր (հնդկի յզրով). 18րդ գ. մինչև 1947թ. վարձկան զինւորները Հնդկաստանում, որ հաւաքագրւում էին անգլիական բանակի կողմից, տեղական բանակութիւնից: Այդ բանակի կազմում նրանք հասել են Բարձր, այդտեղից՝ Լաթաքայ: (Խմբ.)

Ասլան Շահնազարեանի խօսքը Մասլինիկովը թարգմանեց:[9] Գևրասիմն ու Լևոնը միջամտեցին, իրենց խօսքը ուղղելով մեզ, թէ՝ "աւելորդ է այլևս երկար ու բարակ փոխատացութեան մէջ մտնել, կերթանք Բագու, կը բողոքենք, եթէ մեզ յետ կանչելը ժամանակաւոր, բացատրութեան համար չլինի անհրաժեշտ, այլ ճամփով կաչխատենք Աղրբէջանի ոստնձգութիւնների առաջն առնելու, ապա թարգմանի միջոցով յայտնեցին մայորին, որ պատրաստ են մեկնելու:

Գևրասիմն ու Լևոնը անգլիական մի սպայի հետ տեղաւորուեցին մարդատար մեքենայի մէջ, իսկ առջևի և ետևի փոխադրական մեքենաների մէջ սպառազէն սիպայիները, մէկական զնդացիրներ երկու մեքենաներում յարմարեցուած, ճամբայ ընկան, և ժողովուրդը ցրուեց, տխուր-տրտում, անէծքի և հայհոյանքի տարափ տեղալով անգլիացիների հասցէին:

ՄԻՋՈՑՆԵՐ՝ ՀԱՄԱՁԱՐԱԿԻ ԴԷՄ

Բծաւոր տիֆ և իսպանկա կոչուած հիւանդութիւնները համաճարակի ընոյթ էին ստացել և աւերներ էին գործում թէ մեր գաւառներում և թէ թուրքերի մէջ, տափաստանի գիւղերում, ժողովուրդը ահ ու սարսափի մէջ էր. գաւառներում չէ թէ բժիշկներ, այլև բուժակներ չկային: Ազգային Խորհուրդը որոշեց դիմել քաղաքում գտնուող մի քանի բժիշկների, խնդրել, որ անցնեն գաւառներն իրենց խորհուրդներով ու ցուցմունքներով օգնեն ժողովրդին, պայքարելու հիւանդութիւնների դէմ: Այդ առթիւ

---

[9] Ի դէպ, ճիշտ ասած, կասկածում էինք, թէ Մասլինիկովը հարազատօրէ՞ն էր թարգմանում խնդիրը որպէս թարգման, թէ՞ ոչ: Ամբողջ Զանգեզուր-Ղարաբաղում այդ ժամանակ մէկ հատիկ անգլերէն գիտցող մարդ կար՝ Լևոն Բահաթրեանը, որի արևմտահայ ծնողները Ռուսաստանի հարաւում էին հաստատուած, ինքը ռուսական միջնակարգ դպրոց աւարտելուց յետոյ գնացել էր Անգլիա և դիւղատնտեսութիւն սովորել ու համալսարանն աւարտելուց յետոյ եկել Կովկաս՝ Շուշի, հայկական և պետական դպրոցներում մի քանի տարի չալուսնակ ընտիկական առարկաների դասատու լինելուց յետոյ, ամուսնացել չուշեցի օրիորդ Հ. Ղազարբէկեանի հետ, ապա որպէս պետական հաստատուկ ընտանիքով Ջրաբերդում և պրծում էր իւր մասնագիտութեամբ: Մասլինիկովը իր ընթացքով, չարժ ու ձևերով կասկածելի էր դարձել մեր աչքում, ուստի քանիցս խնդրեցինք, որ Բահաթրեանը գոր քաղաք, աշխատէր մեզ հետ մնալին, բայց հնարաւորութիւն չէր ունենում, մանաւանդ երկար ժամանակ քաղաքում մնալու համար: (Հեղ.)

խորհրդակցութիւն ունեցանք քաղաքում եղած սակաւաթիւ բժիշկներից աւագագոյնի՝ Դոկտ. Նիկ. Երամիշեանի հետ, որը խոստացաւ ամէն կերպ աջակցել մեզ, կազմակերպելու բժշկական էքսպեդիցիա գաւառների համար: "Ես ամենայն սիրով կերթայի գիւղերը, սակայն ձիով ճամբորդել չեմ կարող, որովհետև, պարզապէս, ձի նստելու վարժ չեմ, բայց գաւառ գնացած բժիշկների պահանջներին բաւարարութիւն տալու համար, անհրաժեշտը կատարելու պատրաստ եմ", չեչտել էր նա:

Ժողովի հրաւիրեցինք քաղաքում գտնուող բժիշկներին՝ Լիւդվիգ Տէր Գրիգորեանին, Արամայիս Բաղտաթեանին, Յովհաննէս Պետրոսեանին և Արտաշէս Գանջեցեանին:

Աղգային Խորհրդի կողմից խօսեց Ա. Շահնազարեանը, զեկուցելով գաւառներում բծաւոր տիֆի և խպանկայի համաճարակի մասին, որն ամենուրէք աւեր է գործում, ժողովուրդը գտնւում է ծանր պայմաններում, չիվարած, ուստի Ազգային Խորհուրդը որոշեց դիմել բժիշկներին, որ յանձն առնեն գնալ գաւառները, օգնութեան հասնելու ժողովրդին հնարաւորութեան սահմաններում: Եւ Ազգային Խորհուրդը պատրաստ է ամէն կերպով աջակցել, դիւրութիւններ ստեղծել գաւառներում աշխատելու համար: Ազգային Խորհուրդը որոշել է գաւառ մեկնող բժիշկներին որոշ գումար, որպէս "աւանս" տալ, որպէսզի ընտանիքների որոշ կարիքները հոգան և ապա մեկնեն գաւառ: Եւ որքան չուտ մեկնեն գաւառ, այնքան լաւ: Բժիշկ Աւանէս Պետրոսեանը, որ կոմիկ, կենսուրախ մարդ էր, առաջինը խօսեց, թէ՝ "ի հարկէ, Ազգային Խորհուրդը չպիտի կարողանայ կանոնաւորաբար ռոճիկ վճարել բժիշկներին: Գիւղացիութիւնն էլ ղրամազուրկ է, ոչինչ չի կարող վճարել, արդեօ՞ք Ազգային Խորհուրդը դէմ չի լինի, եթէ բժիշկները իրենց աշխատանքի վարձը նաստուրալով[10] ստանան՝ ինչպէս օրինակ՝ հաւ, ձու, պանիր, ալիւր և այլն:

Ա. Շահնազարեանը պատասխանեց՝ "Ազգային Խորհուրդը այդ ձևով հարցը խորհրդակցութեան նիւթ չի դարձրել, սակայն, կարծում եմ, դէմ չի լինի. յամենայն դէպս, այդ հարցը Խորհրդի քննութեան նիւթ կը դարձնենք հէնց այսօր և արդիւնքի մասին կը յայտնենք ձեզ, իսկ մինչ այդ ցանկալի է, որ Ազգային Խորհրդի համար որոշ լինի, թէ ովքեր կարող են մեկնել գաւառ: Բոլորը համաձայն եղան անցնելու չրջանները և հնարաւոր աջակցութիւնը ցոյց տալու գիւղացիութեանը:

Երևկոյեան նիստին բժ. Աւանէսի ղրած հարցի չուրջ մտքերի փոխանակութիւն տեղի ունեցաւ, և Ազգային Խորհուրդը գտաւ, որ

[10] Բնամթերքով: (Խմբ.)

բժիշկները կարող են նատուրայով վարձատրումին ստանալ, եթէ զիւղացիները դրամի փոխարէն ուտելիք, մթերք տալու լինեն:

Առաջինը Աւանէան եղաւ, որ ցանկութիւն յայտնեց գաւառ գնալու: Նրան հետեւեցին միւսները: Բժիշկները որոշ դրամական օժանդակութիւն պիտի ստանային Ազգային Խորհրդից: Հնարաւորութեան սահմաններում զիւղացիներից ոչինչ չպիտի պահանջէին, իսկ ինչ-որ զիւղացիները տալու լինեն կամաւ, կարող էին ընդունել:

ՏԱՃԻԿ ՋԱՐԴԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ

Փետրուարի 23-ին մայոր Մոնկ Մէսընը հրաւիրում է մեզ իր մօտ. ներակայանում ենք երկուսով, Ասլան Շահնազարեանն ու ես: Մայորը մեզ ծանօթացնում է Հանսըն ազգանունով մի սպայի հետ, որը բաւական գիտէր ռուսերէն: Մասլիննիկովը չկար, մեկնել էր Բազու: Մենք զոհ էինք, որ Մասլիննիկովը չկար, և կարող էինք առանց թարգմանի ուղղակի արտայայտել ռուսերէն: Քաղաքում կային մէկից աւելի գերմաներէն և ֆրանսերէն պիտցողներ, բայց միսիայի անդամներից ոչ մէկը, բացի անգլերէնից, այլ լեզու չգիտէր: Ազգային Խորհրդի նախագահը, որ որոշ ժամանակ սովորել էր Գերմանիայում, տիրապետում էր գերմաներէնին, բայց միսիայի անդամները չգիտէին:

Հանսընը յայտնեց մեզ իր՝ Ղարաբաղ գալու նպատակը, ասաց, որ դաշնակիցները հետապնդում են տաճիկ ոճրագործներին, մանաւանդ զնկավար տարրերին՝ նախարարների, նահանգապետերի, զանազան աստիճանի պինւորականների և ոստիկանական պաշտօնեաների ու ժանդարմների, որոնք կոտորածներ են սարքել Տաճկաստանում, քրիստոնեաներին ոչնչացնելու համար: Ըստ իրենց հասած տեղեկութեան, Էնվեր բէյը ծպտուած հասել է Ղարաբաղ և գանւում է թուրք գիւղերից մէկում. ուստի ուղում է, որ մենք մեր ունեցած հնարաւորութեան սահմաններում օգնենք իրեն, գաղտնի հետախուղութեամբ յայտնաբերելու նրա թաքստոցի տեղը, գիւղը, որը կը պաշարեն զօրքով և կը ձերբակալեն նրան:

Մենք խոստացանք հնարաւորն ու կարելին չխնայել: Ի պէպ, մայորը, կարծես առիթի էր սպասում և ասաց հետևեալը, որ թարգմանեց Հանսընը. "Ես իռլանդացի եմ, ինչպէս նաև Հանսընը. թուրքերին չեմ սիրում, որովհետև վայրենի, գաղանաբարոյ, արիւնռուչ մարդիկ են, իմ մէկ եղբայրը, որ ծովային սպայ էր, զոհւել է Դարդանելում: Ես համակրում և յարգում եմ հայ

ժողովրդին, որովհետև քրիստոնեայ է, խաղաղասէր և աշխատող: Թուրքերը աւազակարարոյ մարդիկ լինելով, քրիստոնեաներին կեղեքելով են ապրում: Ես բարեկամաբար խորհուրդ եմ տալիս ձեզ, որ զգոյշ լինէք, ղեմոնստրատիւ քայլեր չանէք և ձեր բոլոր պահանջները Հայաստանի կառավարութեան միջոցով ներկայացնէք՝ ուր որ պէտք է":

Գ. Բալայեանի և Լ. Զառաֆեանի աքսորման հետևանքով, Մել. Եսայեանը և Տիգրան Տէր Գէորգեանը, որպէս համագումարի կողմից ընտրուած փոխանդամները, հրաւիրուում են կազմի մէջ, որպէս իսկական անդամներ. այդպիսով լրանում է Ազգային Խորհրդի կազմը: Ապա հարց է դրուում կազմի մէջ հրաւիրել մէկ հաչեապահ մարդու, որ Խորհրդի որոշմամբ կատարէր անհրաժեշտ ծախսերը և կանոնաւոր հաշիւ պահէր: Մի քանի թեկնածուներ նկատի առնուեցին, որոշուեց հրաւիրել Աստուր Ստեփանեանին, որ ինքնապահ, երկար տարիների փորձաւոր, հմուտ հաչեապահ էր: Ա. Ստեփանեանը սիրով յանձն առաւ Ազգային Խորհրդի զանձապահ-հաչեապահի պաշտօնը:

Ազգային խորհրդի անդամներից Ա. Շահնազարեանը և Ա. Տէր Միքայէլեանն անցել էին գաւառները՝ Վարանդա և Դիլոակ, տեղերում որոշ գործեր կարգադրելու նպատակով. քաղաքում մնացել էինք Աչոտ Մ. Յովսէփեանը, ես և Իշխան Միրզաբէկեանը, որը նոյնպէս համաճարակ դարձած տիֆով հիւանդ, պառկած էր:

Սուլթանովը, վստահ, որ Բաքուից եկած ընկերների աքսորելու հետևանքով ընդդիմադրական ոգին թուլացած կը լինի հայերի մէջ, առաջարկում է միսխայի միջոցով, որ հայկական մասի քաղաքացիական իշխանութիւնները և բոլոր հաստատութիւնները ենթարկուեն իրեն, և կտրական մերժում է ստանում: Սուլթանովը նոյնիսկ անմիջականօրէն գրութիւններ է ուղղում ռէալական դպրոցի տեսուչ Պետրովին, Մարիամեան գիմնազիայի տեսչուհի Մարիա Միխայլովային, քաղաքի դպրոցի տեսուչ Իվանովին և պետական դատարկ զանձարանի կառավարչին, որ անմիջականօրէն ենթարկուեն իրեն և իր հրահանգներով ու ցուցմունքներով չարունակեն իրենց գործունէութիւնը: Ցիշեալ դպրոցների ոչ միայն տեսուչները, այլ և ուսուցիչները կտրականօրէն մերժում են Սուլթանովի պահանջը, յայտարարելով, որ իրենք ենթարկուում են անմիջականօրէն իւրաքանչիւր դպրոցի ծնողական խորհրդին:

Ապա Սուլթանովը առաջարկում է նոյն ճամբով Ազգային Խորհրդին՝ անմիջական բանակցութեան մէջ մտնելու, համաձայնութեան եղը գտնելու նպատակով և դարձեալ կտրական մերժում է ստանում:

Փետրուար 24-ին լոյս է տեսնում, Ռուբէն Շահնազարեանի խմբագրութեամբ և քաղաքապլխի հովանաւորութեամբ ու ցուցմունքով, ռուսերէն "Գոլոս Նարոդա" (Ժողովրդի Ձայն) թերթը, պարզապէս ուղղած Ազգային Խորհրդի դէմ:

Թերթը, բացառութեամբ մի չնչին փոքրամասնութեան, բաղկացած յիշեալ երկու հոգուց, Սոկրատից, որը հաստատուել էր քաղաքում, փոխանակ իւր չրջանը գնալու, և մի քանի ուրիչներից, ոչ մէկ հոսանքի համակրութեան չարժանացաւ: Եթէ թերթը առարկայական վերլուծումներով քննադատէր Ազգային Խորհրդի գործունէութիւնը անաչառօրէն, թերևս աւելի մեծ թիւով մարդիկ խմբւէին չուրջը: Մասնաւորապէս չատ ծանր էր աղդել դաչնակցական չարքերի վրայ և ընդհանուր գրգռում առաջ բերել այնքան, որ առանց կենտրոնական Կոմիտէի որոշման սպասելու, երկու ընկերներ՝ Խաչ. Եղեազարեան և Խաչ. Մելքումեան, միասին հանդիպում են քաղաքապլխին, իւր բնակարանում, խիստ լեզուով խօսում հետը, պահանջում վերջ տալու իւր բռնած ընթացքին, այլապէս կենթարկուի խիստ պատժի:

Քաղաքում 1917 թ. յեղափոխութիւնը տեղի ունենալուց անմիջապէս յետոյ, երեք հայերէն թերթեր էին լոյս տեսնում, մինչև նոյն տարւայ վերջը՝ դաչնակցական "Ապառաժ"-ը, հայ-սոց. դեմոկրատների "Փայլակ"-ը և հայ-բոլշևիկների "Նեցուկ"-ը, սակայն բոլոր թերթերը դադարեցին, քաղաքում այլևս տպագրական թուղթ չլինելու պատճառով: "Ժողովրդի Ձայն" թերթը լոյս էր տեսել բաց սրճադրան, կապոցները փաթաթելու թղթերի վրայ:

26 Փետրուար: Շուչու գնդի հետ եկել էին 10-12 սպաներ, գլխապետ Յովակ Ստեփանեանի գլխաւորութեամբ, որը եղել է գնդի կոմիսարը: Սպաները ընդհանուր ժողով գումարելով, նկատի են առնում Զորրորդ Համագումարի որոշումները. հարց է դրւում՝ ինքնապաչտպանութեան վերակազմութե՞մբ զբաղուել ու նախապատրաստական աչխատանքներ կատարել՝ մինչև Հայաստանի կառավարութեան կողմից ընդհանուր զինուորական զեկավար ուղարկուելը, թէ՞ սպասել զինուորականի ժամանման ու նրա հետ գործի անցնել: Կարճ խորհրդակցութիւն ունենալով, ժողովը գտնում է, որ անկախ Հայաստանի կառավարութեան կամքից, կարող է ուչանալ ընդհանուր զինուորական զեկավարի գալը, ուստի, առանց սպասելու նրան, կազմել Ղարայլաղի զինուորական չտարը, հրաւիրելով կազմի մէջ Ազգային Խորհրդի մէկ ներկայացուցչին, և անցնել ինքնապաչտպանութեան գործի կազմակերպման: Ազգային Խորհրդի որոշմամբ, չտարի խորհրդակցութիւններին մասնակցելու և օգնելու նպատակով, որպէս ներկայացուցիչ, նչանակուում է Նաստա:

Մարտ 1: Սպաների ընդհանուր ժողովը:

Ինչպէս ասւեց, Սոկրատի՝ Բազու ուղարկած ներկայացուցիչները ձեռնունայն չէին վերադարձել, որով դրամական նպաստ ստացել էին: Եւ այժմ, ոտքի տակի հողը ամուր ղգալով, որ իր ներկայացուցիչները ուշադրութեան են արժանացել, սկսում է տեսակցութիւններ ունենալ սպանների հետ, ինքնապաշտպանութեան չուրջ մտքերի փոխանակութիւն ունենալ, խոստումներ անել սպաններին այն ակնկալութեամբ, որ թերևս յաջողւի ուժեղ հետաքրքրութիւն ստեղծել իր անձի չուրջ և սպաններին թեքելով իր կողմը, հնարաւոր դարձնել իրեն ընդհանուր հրամանատար հռչակելը: Եւ որպէս սպանների համար մտահոգւած մէկը, պատրաստակամութիւն է յայտնում նոյնիսկ նիւթական օժանդակութիւն ցոյց տալու, առաջին հերթին խիստ կարիքաւոր սպաններին, իսկ հետագային աշխատելու, որ բոլոր սպանները կանոնաւոր կերպով ամսականներ ունենան:

Սպանների մօտ բուռն հետաքրքրութիւն էր առաջացել Սոկրատի հանդիպումների, ինքնապաշտպանութեան հարցի չուրջ, սպանների վիճակով մտահոգւած լինելու չնորհիւ: Եւ պիտի խոստովանել, որ սպանների մէկ մասի վրայ տպաւորութիւն էր թողել Սոկրատը. սպանների մասին նրա մտահոգւած լինելը լուրջ համարելով, նրանք գտնում էին, որ Ազգային Խորհուրդը պէտք է ընդառաջի Սոկրատին և նրան գործելու աւելի լայն ասպարէզ տայ, իսկ մեծամասնութիւնը Սոկրատի հանդիպումներ և զրոյցներ ունենալը սպանների հետ համարում էր միջոց իւր անձնական նպատակին հասնելու, այն է՝ դառնալու Ղարաբաղի մարտական ուժերի ընդհանուր հրամանատար:

Ժողովին հրաւիրել էին նաև ինձ, որպէս Ազգային Խորհրդի ներկայացուցչի: Սպանների՝ Սոկրատի հետ ունեցած հանդիպումների և արած առաջարկների մասին զեկուցեց սպայական միութեան վարչութեան նախագահը՝ Արտաշէս Վարդապետեանը, և հարցը կտրուկ կերպով դրաւ՝ պարզ ու որոշ արտայայտելու, որպէսզի կարելի լինի մի որոշ եզրակացութեան յանգել: Սոկրատից լաւ տպաւորւած սպանները գտնում էին, որ Սոկրատը արհամարհելի ոյժ չէ, նա տաճիկների՝ Ղարաբաղ մուտք գործելու ժամանակ և յետոյ իւր մեծ ծառայութիւնն է արել ժողովրդին, չպէտք է հեռու վանել, այլ լայն ասպարէզ տալ՝ իրագործելու ինքնապաշտպանութեան վերաբերեալ իւր յղացած ծրագիրը:

Հակառակ արտայայտւող սպանները, առաւելապէս Արտաշէս Վարդապետեանն ու Մարտիրոս Այվազեանը, պատասխանելով Սոկրատին լայն ասպարէզ տալու կողմնակից փոքրամասնութիւն կազմող սպաններին, պարզ ու որոշ և կտրուկ ձևով յայտարարեցին՝

ա) Տաճիկների՝ Ղարաբաղ մուտք գործելու օրերին Քեաթուկից մինչև Միւրվելելու ճակատում տաճկական ուժերին դիմադրութիւն ցոյց տուող մեր մարտական ուժերին ղեկավարողը եղել է սպայ Արչաւիր Պետրոսեանը, զինուորական միութեան անդամ, որ գործել է ինքնուրոյնաբար և ոչ մի կապ չի ունեցել Սոկրատի հետ, առաւել ևս՝ վերջինին ենթակայ չի եղել:

բ) Մամնայի ձորում տաճկական զօրքի վրայ նախայարձակ է եղել Դիղակի չրջանի Կարմրակուճ գիւղացի Ասլանիկը իր վաչտով, որին օգնութեան են հասել Տումի գիւղացիները՝ թևանի զլխաւորութեամբ, ապա Վարանդայի մի չարք գիւղերի մարտիկներն էին հասել. հասնում է նաև սպայ Արտեմ Պետրոսեանը և ստանձնում կուի ղեկավարութիւնը, որում ոչ մի մասնակցութիւն չի ունեցել Սոկրատը, բայց վայելել է Մամնայի յաղթանակի փառքը, որպէս Վարանդայի հրամանատար, որովհետև Մամնան Վարանդայի գիւղերից էր և՝

գ) Շամիլ բէկին բռնել են գիւղացիները և բերել Սոկրատի մօտ, որը տեղեկութիւն էլ չի ունեցել գիւղացիների ինքնուրոյն կայացրած որոշման մասին:

Սոկրատը գիտէր, որ նրա մասին Ազատաժի Կենտրոնական Կոմիտէն ահաբեկման վճիռ ունէր կայացրած, ուստի Հաղորդի գիւղի մօտ նրան կանգնել է տալիս բոլոր գիւղերի ներկայացուցիչների աչքի առջև: Ահա, այս է նրա կատարած միակ ակտիւ գործը: Եւ, որպէսզի թիւրիմացութիւններ տեղի չունենան, անհրաժեշտ է, որ Ազգային Խորհուրդը որոշ կարգադրութիւն անի:

Ազգային Խորհուրդը, համագումարը, ասացի, որոշել է, որ վերակազմւի, զինուորական միութիւնը, և նախապատրաստական աշխատանքներ կատարւին մինչև Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմից ուղարկվելիք զինուորականի տեղս հասնելը: Այնպես համագումարի որոշումը չատ պարզ ու հասկանալի է, թիւրիմացութիւններ տեղի ունենալու առիթ հանդիսացող խնդիրներ չկան: Ինչ կը վերաբերի Սոկրատի կողմից ցուցադրուած հետաքրքրութեանը՝ հանդէպ ինքնապաշտպանութեան գործի, մի մանեովը է՝ սպաների համակրութիւնը ձեռք բերելու և սպաների աջակցութեամբ Ղարաբաղի ինքնապաշտպանութեան ուժերի ընդհանուր հրամանատարը դառնալու, մի բան որը յայտնի է Ազգային Խորհրդին: Եւ պիտի ասել, որ նրա մէջ այդ ցանկութիւնը եղել է ժամանակաւոր Ազգային Խորհրդի օրօք էլ. Ազգային Խորհուրդը երբէք չի կարող համաձայն լինել, որ Սոկրատը դառնայ ընդհանուր հրամանատար, որի համար, ինչպէս ասւեց, նա պահանջւած անհրաժեշտ կարողութիւնը չունի, ոչ անցեալի փորձառութեամբ և ոչ էլ զինուորական կրթութեամբ, որից

բացարձակ կևրպով զուրկ է: Դէպքերի ընթացքով, տահիկների մուտք գործելու օրերին վիճակվել է նրան հրամանատար ղեր խաղալ որպէս Վարանդայի ուժերի հրամանատար, և որպէս այդպիսին իր կոչման բարձրութեան վրայ չմնաց, հեղինակազուրկ եղաւ: Անդրանիկը, իր՝ դէպի Ղարաբաղ արշաւանքի յաջողութեան համար կանխաւ կարդագրել էր Սոկրատին, որ նա Վարանդայի ուժերի մէկ մասով բռնէր Մեծ Քիրսի հիւսիսային լանջի բարձունքները: Սոկրատը խնդրում է Անդրանիկին՝ տասն օր ժամանակ տալ ուժերը համախմբելու և անհրաժեշտը կատարելու համար, և Անդրանիկը ընդառաջում է խնդրանքին արշաւանքը տասն օր ուշ սկսում, և Սոկրատը չի կատարում իր պարտականութիւնը, թէև հանգուցեալ Հայրապետը, Եսայի Քամալեանը և ես ամէն կերպ աշխատեցինք համոզել, որ Վարանդայի ուժերը դուրս բերէր Անդրանիկի որոշած տեղը: Նա մատ մատի չվռնեց զննելու Տօմսոնի կողմից Անդրանիկի մօտ զործուղուած երկու զինուորականների գնալը խանգարելու, որպէսզի Անդրանիկը, օգտուելով առիթից, խուճապի մատնուած քրդական ուժերին հալածէր ու քշէր և Շուշում հանդիպում ունենար Բագուից ուղարկուած զինուորականների հետ, որ այլ արժէք ու նշանակութիւն կունենար: Եթէ Անդրանիկը հասնէր Շուշի, Ադրբէջանը չպիտի կարողանար Սուլթանովին նահանգապետ նշանակել: Կարճ ասած, Սոկրատը, անձնական մանր փառասիրական ցանկութիւններին յագուրդ տալու նպատակով, պարզապէս սաբոտաժ արաւ և հեղինակազուրկ եղաւ: Վերջապէս, մի հանգամանք չպիտի աչքաթող անել, որ միւս հրամանատարները՝ Ալէքսան դային, Արտեմը և Բագրատը, ինչպէս կասեն, ռազմի կրթութիւն ստացած, կռիւներում թրծուած մարդիկ են և Սոկրատի ընդհանուր հրամանատար զառնալու մտքի հետ չեն հաշտուի երբէք, նրա սաբոտաժ անելու փաստը նկատի ունենալով: Ազգային Խորհուրդը, որոշ վախկոտութեամբ, չի ուզում Սոկրատին կարգալոյծ անել, մինչև որ Զինուորական Միութիւնը իր որոշ նախապատրաստական աշխատանքները կատարի և զինուորական համազումար հրաւիրէ, ըստ չրջանների, զինուորական ուժերի բաշխում կատարէ և իւրաքանչիւր չրջանի համար նոր հրամանատար նշանակէ սպաններից: Չրջանների ներկայ հրամանատարները, որոնց հետ խօսուել է, "սիրով համաձայնել են"՝ նշանակուած նոր հրամանատարների օգնականները լինելու: Եւ այսպիսով հարցը պիտի համարել սպառուած, ուստի Ազգային Խորհուրդը առաջարկում է ձեզ՝ անցնել ձեր ստանձնած աշխատանքներին:

Մարտ 4-ին Հայ Ժողովրդական Կուսակցութեան մի քանի անդամների՝ Ռ. Շահնազարեանի, Ար. Մանուկեանի, Արչակ Պօղոսեանի, Մելքում Խաչատրեանի նախաձեռնութեամբ, կանխաւ տեղի ունեցած հանդիպումներից յետոյ, խառն խորհրդակցական ժողովի են հրաւիրուում բոլոր հոսանքների ներկայացուցիչները,

Ազգային Ժողովի և քաղաքագլխի միջև առաջացած անցանկալի փոխյարաբերությունն առիթ արտայայտելու, ապա միջոցներ մտածելու, այն վերացնելու նպատակով: Ժողովը նշանակած էր քաղաքային վարչության չէնքում:

Որոշած ժամին ներկայ էին բաւական թիւով ժողովրդական կուսակցութենան հոսանքի մարդիկ, քաղաքագլուխը, Ռ. Շահնազարեանը, Արչակ Պողոսեանը, Գր. Մինասբէկեանը, Մելիք Խաչատրեանը, Աստուածատուր Ստեփանեանները, Արգ. Մանգասարեանը, Ներսէս Մարտիրոսեանը, Մելիք Խալափեանը և ուրիշներ, երկուական ներկայացուցիչներ միւս հոսանքներից՝ դաշնակցութենան, մենշեւիկների, էսէռների և բոլշեւիկների կողմից: Հրաւիրուած էի նաև ես, առանձին:

Միւս հոսանքներից ներկայ էին՝ դաշնակցութիւնից՝ Ան. Տէր Միքայէլեան, Միքայել Տէր Յովհաննիսեան, մենշեւիկներից՝ Լեւոն Վարդապետեան, Տիգրան Տէր Գրիգորեան, էսէռներից՝ Ռուբէն Տէր Գասպարեան, Արամ Միքայէլեան, բոլշեւիկներից՝ Ալ.Մատուրեան, Արմենակ Ղարագեօղեան: Ներկայացուցիչների թիւը սահմանափակուած չէր, կարող էին շատ թիւով մասնակցել:

Ժողովը բաց է անում փաստաբան Գր. Մինասբէկեանը և յայտնում ժողովի նպատակը՝ միջոցներ խորհելու և վերացնելու Ազգային Խորհրդի ու քաղաքագլխի՝ Գ. Մ. Շահնազարեանի միջև առաջացած տարաձայնութիւնը և նրա հետևանքով զոյացած անցանկալի ներհակ փոխյարաբերութիւնը, որը անդրադառնում է մեր ազգային հարցի, Ղարաբաղի վիճակի տնօրինման վրայ: Մեզ անհրաժեշտ է միացեալ ուժերով աշխատել մեր նպատակին հասնելու համար, մինչդեռ քաղաքում ամէնքը մտահոգուած են, որ միութեան փոխարէն ներհակութիւն է առեղծուած Ազգային Խորհրդի և քաղաքագլխի միջև, ի վնաս ազգային գործի: Ապա առաջարկում է մի նախագահ ընտրել՝ ժողովը ղեկավարելու: Միաժամանակ, այս ու այն կողմից ասացին՝ "այդտը չկայ ընտրութեան, հէնց ինքներդ էլ եղէք նախագահ, ղեկավարէք ժողովը": Նախագահը հարց տուաւ, թէ ո՞վ կուզէ արտայայտել: Քաղաքագլուխը առաջինն եղաւ, որ ցանկութիւն յայտնեց արտայայտելու:

– "Ես կուզենայի ճշտել մի բան, ասաց քաղաքագլուխը, որ Ազգային Խորհրդի հետ չէ իմ ունեցած տարաձայնութիւնը, այլ եղիչէի հետ, որը վարում է դուռ անհատական քաղաքականութիւն, ուստի ամէն կերպ աշխատել է լարել Զորրորդ Համազումարի մարդկանց իմ դէմ, յաջողեցրել ընտրութիւնը իր ցանկացած մարդկանց, որպէսզի նրանք իր ուղած ձևով վարեն գործը: Ինքը գիտէ, որ ես դժգոհ եմ եղել իրենից Զորրորդ Համազումարը հրաւիրելուց շատ առաջ, երբ երկուսով միասին ժամանակաւոր

Ազգային Խորհրդի մէջ էինք մտած միասին աշխատելու և հէնց սկզբից ես նկատել եմ, որ իր անհատական դիծն է առաջ տանում, և իմ դժգոհութիւնը յայտնել էի ժամանակին: Կասեմ աւելին, որ դեռ անցնալ տարի տահկական հրամանատարութեան՝մեղ ուղղած պահանջի ժամանակ (անմիջապէս ճանաչելու Ադրբէջանի գերիշխանութիւնը), առիթ եղել է դժգոհութիւնս արտայայտելու: Ես գտնում եմ, որ Եղիշէն անհատական քաղաքականութիւն է վարում, և նրա վարած քաղաքականութիւնը չի համապատասխանում մեր ազգային չահերին: Ես առաջարկեցի, որ Ժամանակաւոր Ազգային Խորհրդի կողմից ուղարկուող թղթերը ստորագրուն բոլոր անդամների կողմից և Խորհրդի հէնց առաջին զրուխիւնը պատրաստել տուեցի զրամեքենայով, ստորագրեցի, ուղարկեցի իրեն, որ ինքն ու միւս անդամներն էլ ստորագրեն և ուղարկեն ուր պէտք էր, բայց նրանք ուրիշ մէկ օրինակ պատրաստում են զրամեքենայի վրայ, նախագահի՝ Ե. Իչխանեանի և քարտուղարի՝ Արտ. Տէր Միքայէլեանի ստորագրութիւններով ուղարկում: Քաղաքացիների մի խումբ պետիցիա է ներկայացնում անգլիական միսսիային այն իմաստով, թէ ցանկալի է, որ կրկին ռուսական իչխանութիւն հաստատուի Կովկասում, որպէսզի Կովկասի միւս ժողովուրդների հետ մեր ժողովուրդն էլ խաղաղ կեանք ունենայ: Բայց Եղիշէն Ժամանակաւոր Ազգային Խորհրդի միւս անդամների գլուխն անցած անգլիական միսսիային յայտնում է, թէ պետիցիա ներկայացնողները անպատասխանատու մարդիկ են, նրանք հաւանօրէն մէկի թելադրութեամբ են նման քայլ արել, միսսիան խօսակցութիւնից այնպէս է տպաւորուել, թէ ես եմ կազմակերպել: Ուրիշ փաստեր էլ կարելի է թուել, բայց չեմ ուզում երկարել: Եւ ի լրումն այդ բոլորի, ինքը, որ պատկանում է խօսքի աղատութիւն պահանջող ու քարոզող մի կուսակցութեան, հակառակ իր իսկ սկզբունքի է գործում, մարդիկ է ուղարկում՝ ինձ սպառնալիք տալով պահանջելու, որ չքննադատեմ իրենց սխալ գործունէութիւնը":

– Գերասիմ Իսակովիչի պատմածից երևում է, ասում է Մելքում Խաչատրեանը, որ քաղաքում պիտի մնայ մէկն ու մէկը՝ Գերասիմ Իսակիչը կամ Եղիշէն, և մէկը պիտի հեռանայ քաղաքից:

– Հարցը այդպէս չէ դրւած, ընդհատելով Մ. Խաչատրեանին, ասում է նախագահը, թէև նման արտայայտութիւններ եղել են դուրսը, մասնաւոր զրոյցների ընթացքին, սակայն այս խորհրդակցական ժողովը հրաւիրել է մէկ նպատակով, միջոցներ մտածել և աշխատել ամէն կերպ համերաչխութիւն ստեղծել, յանուն մեր ազգային գործի յաջողութեան, ուստի խօսքը տանք Եղիշէին, նա էլ իր բացատրութիւնները տայ, որ կարողանանք որոչ եղրակացութեան հասնել:

– Բարի ցանկութեամբ ու նպատակով հրաւիրուած այս ժողովը սպասում է, որ իրերի իսկական դրութիւնը հասկանալու և տեսնելու համար ուղղամտօրէն մօտենանք հարցերին ու բաց սրտով արտայայտենք: Գերասիմ Իսակիչի մէկ փաստը իմ վարած անհատական քաղաքականութեան, ինչպէս յայտնեց՝ Ազգային Խորհրդի գրութիւնների տակ փոխանակ Ազգային Խորհրդի անդամները ստորագրելու, աւելի օրինական և պատշաճ ձև է կիրառուած, գրութեանց տակը նախագահի և քարտուղարի ստորագրութիւնները դնելով. ժամանակաւոր Ազգային Խորհուրդը կազմելով, հէնց առաջին նիստին առաջարկուեց, որ ինքը ստանձնի նախագահի պաշտօնը, բայց հրաժարուեց, ուստի ինքը, միասին միւս անդամների հետ, ինձ յանձնարարեցին նախագահի դերը:

Այո, կասկածից դուրս է, որ մի խումբ քաղաքացիների պետիցիա ներկայացնելը ոչ մէկ ազգային ժողովի կամ պատասխանատու մարմնի թելադրանք չէ եղած, ուստի մենք համարել ենք անպատասխանատու մասնաւոր մարդկանց արժէքից զուրկ գործ, հաւանօրէն մէկի նախաձեռնութեամբ, խօ բոլորը միասին չեն նախաձեռնել կամ միտք յղացել, սակայն անգլիական միսիայի հետ խօսելիս հեռաւոր իսկ ակնարկ չի եղել Գերասիմ Իսակիչի վերաբերեալ: Անգլիացիները իրենք կռահել են, թէ Գերասիմ Իսակիչն է թելադրել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գերասիմ Իսակիչը չի թաքցրել, շատ պարզ կերպով զրսեորել է իւր ռուսական օրիենտացիա ունենալը:

Ներկաների մէջ այստեղ կան մարդիկ, որոնք մասնակցել են մայոր Գիբսօնի պատուին տրուած ճաշկերոյթին, թէ Գերասիմ Իսակիչը և թէ ուրիշները այնտեղ պարզ կերպով յայտնեցին, թէ որքան լաւ կը լինէր, որ մեր միւս մեծ դաշնակցի՝ ռուս ժողովրդի ներկայացուցիչներն էլ ներկայ գտնուէին: Հանգուցեալ Հայրապետ Մուսայէլեանը, երբ Գիբսօնը ճաշկերոյթից յետոյ գնաց, դիտողութիւն արաւ, որ սխալ և անցանկալի է անգլիացիների ներկայութեամբ ռուսական օրիենտացիայի պարզ դրսեորումը:

Ով չգիտէ, որ անգլիացիները դաշնակից լինելով Ռուսաստանին, միևնոյն ժամանակ խիստ դէմ են նրանց: Հայրապետ Մուսայէլեանի դիտողութիւնից խիստ վիրաւորուել էր Գերասիմ Իսակիչը և ոչ մի գնով չուզեց մտնել ժամանակաւոր Ազգային Խորհրդի մէջ, եթէ Հ. Մուսայէլեանն էլ ընտրուի իբրև անդամ: Եւ Հայրապետ Մուսայէլեանը, յանուն ազգային գործի յաջողութեան, իր թեկնածուութիւնից հրաժարուեց: Եւ պիտի ասել, որ այս բոլորը զաղտնի չէին մնացել, և հետևանքը եղաւ դժգոհութիւն հէնց Գերասիմ Իսակիչի դէմ, որ բնաւ ցանկալի չէր մեր Ազգային Խորհրդի համար:

"Գօլօս Նարոդա" թերթի հրապարակ գալը զարկ տուաւ արդէն գոյութիւն ունեցող դժգոհութեանը, որի հետևանքն է եղել երկու հոգու ինքնուրոյնաբար հանդիպելը Գերասիմ Իսակիչին և սպառնալիք կարդալը: Ոչ Ազգային Խորհրդի և ոչ էլ որևէ այլ մարմնի կողմից կարգադրութիւն չէ եղած, առաւել ևս իմ կողմից:

Ժամանակաւոր Ազգային Խորհուրդը հէնց առաջին օրւանից կէտ-նպատակ է ունեցել, աշխատել ամէն կերպ ըստ հնարաւորին չուտ հրաւիրելու Ղարաբաղի Հայութեան բարձրագոյն օրէնսդիր ժողովը՝ Զորրորդ Համագումարը, որը միայն լիազօրութիւն ունէր որոշելու, թէ ինչպիսի քաղաքականութիւն պիտի վարել և ինչպէս պիտի առաջ տանել դործերը: Եւ Համագումարից ընտրուած Ազգային Խորհուրդը առաջնորդւում է Համագումարի կայացրած որոշումներով, որոնցից որևէ չեղում կատարել չի կարող:

Իմ ղէմ ուղղուած մեղադրանքները ևս վերագրում եմ Գերասիմ Իսակիչին. այդուհանդերձ ամենաչնչին չափով անձնական որևէ հակառակութիւն կամ հակակրանք չունեմ իր հանդէպ: Քանի որ, ինչպէս ասւեց, դուրսը եղել են արտայայտութիւններ, թէ մէկնումէկը մեղնից պիտի հեռանայ Ղարաբաղից, ես կամ Գերասիմ Իսակիչը, յանուն մեր գործի յաջողութեան. նկատի ունենալով այդ, ես առաջարկում եմ, նախ՝ Գերասիմ Իսակիչը մտնէ Ազգային Խորհրդի մէջ, և որպէս հաւասար մէկ անդամի առաջնորդւի միայն Համագումարի տուած որոշումներով, առանց որևէ չեղում կատարելու և առանց անհատական տեսակէտներով առաջնորդելու, և ապա ժողովը պատասխանատուութիւն վերցնի իր վրայ, ես կղդիանում եմ, նոյնիսկ հեռանում Ղարաբաղից, որպէղի առանց ինձ Ազգային Խորհուրդը չարունակէ իր գործունէութիւնը, քանի որ Գերասիմ Իսակիչը դժգոհ չէ Ազգային Խորհրդից, միայն ինձնից է դժգոհ:

-Ես ոչ մէկ ցանկութիւն չունեմ աթոռ գրաւելու Ազգային Խորհրդի մէջ, ասաց քաղաքագլուխը, ես հաղիւ կարողանում եմ իմ պաշտօնը վարել, մանաւանդ որ անգլիական միսսիայի հետ հանդիպումներ ունենալու առիթներ յաճախ են լինում, ժամանակ չունեմ ուրիշ պարտականութիւն ստանձնելու:

Եւ վեր կացաւ, ասելով, թէ ժամադրութիւն ունի, պիտի գնայ, և դուրս գնաց:

Քաղաքագլխի գնալուց յետոյ, ժողովականները մտքերի փոխանակութիւն ունեցան և բոլորը նոյն միտքը արտայայտեցին, թէ ցանկալի է, որ քաղաքագլուխը ընդունւի Ազգային Խորհրդի մէջ որպէս հաւասար անդամ ու ձեռք-ձեռքի տուած աշխատէ միւս անդամների հետ:

Քաղաքագլխի պատճառաբանութիւնը, թէ չի կարող և ցանկութիւն չունի աշխոյժ գրաւելու Ազգային Խորհրդի մէջ, համոզեցուցիչ չհամարուեց ու չընդունուեց, ուստի միաձայնութեամբ մի յանձնախումբ ընտրուեց երեք հոգուց՝ Գր. Մինասբէկեան, Լեոն Վարդապետեան և Մելքում Խաչատրեան, խօսելու քաղաքագլխի հետ, որ չպնդէ իւր մերժման վրայ, համաձայնուի մտնել Ազգային Խորհրդի մէջ: Միաժամանակ նկատի ունենալով, որ Ազգային Խորհուրդը պէտք է համաձայն լինի քաղաքագլխի՝ կազմի մէջ ընդունուելու մտքին, ուստի այդ պատասխանատուութիւնն էլ դրուեց իմ վրին: Ի դէպ, պէտք է յիշեմ, որ ժողովից յետոյ նախ Մելքում Խաչատրեանը, որը քաղաքի խիստ հակադաշնակցական դէմքերից մէկն էր, առանձին մօտեցաւ և իր գոհունակութիւնը յայտնեց, որ ես ոչ միայն դէմ չեմ քաղաքագլխին, այլ ուղում եմ, որ մտնէ կազմի մէջ, ու միասին աշխատենք:

Ապա մօտեցաւ Գր. Մինասբէկեանը, որի հետ իմ յարաբերութիւնը խիստ բարեկամական էր. ասաց, թէ չէր սպասում, որ ժողովը յաջողութիւն կունենար, նկատի ունենալով քաղաքագլխի տաքարիւն լինելը, որ կարող էր պոռթկալ, բռնկուել ու փչացնել գործը. «լսօսքը մէջներս, դու քաղաքագլխի բերանը բամբակ խցկեցիր, էլ չլսօսեց, լաւ եղաւ»:

Նոյն օրը երեկոյեան, Ազգային Խորհրդի նիստին ղեկուցեցի ժողովում քաղաքագլխի և իմ միջև տեղի ունեցած փոխանայութեան և ժողովի՝ միաձայնութեամբ ընդունած իմ առաջարկի մասին: Խորհրդի անդամներից ոչ մէկը դեմ չէր, և եթէ քաղաքագլուխը համաձայնուեր, կոօպտացիայի իրաւունքով պիտի հրաւիրէինք կազմի մէջ:

Ասլան Շահնազարեանն ասաց՝ կը տեսնէք, նա մերժելու է յանձնախմբին և երբէք չի համաձայնի մտնել կազմի մէջ, նոյնիսկ, եթէ համաձայնի մտնել, շատ չանցած, մի առիթով պիտի թողնի, հեռանայ, ինչպէս հեռացաւ ժամանակաւոր Ազգային Խորհրդի կազմից: Սակայն համոզած և վստահ եմ, որ չպիտի համաձայնի:

Ազգային Խորհրդի անդամները բոլորը համաձայն էին Ա. Շահնազարեանի հետ: Ինքս առաջարկ անելով ժողովին, որ քաղաքագլուխը մտնէ Ազգային Խորհրդի մէջ, լսօ համոզած չէի՞, որ նա պիտի ընդունէր ու համաձայնուէր մտնելու կազմի մէջ: Մենք բոլորս ուղում էինք, որ նա դուրսը չմնար, մանաւանդ, որ անգլիացիները նրան մեր քաղաքի "լորդ մէյոր" էին հաշուում, բայց ինչպէս Ղարաբաղում կասէին՝ քաղաքագլուխը քաչկոտ էր, այսինքն՝ սատանաներ ունէր, որ միտքը ծռում էին:

Ժողովից ընտրուած յանձնախումբը երկու-երեք օր քաղաքագլխի հետ մի քանի անգամ հանդիպումներ է ունենում, բայց չի յաջողում համոզել նրան, որ մտնի Ազգային Խորհրդի մէջ:

Մարտի 6-ին Գօրիսից եկողները լուր են բերում, որ Հայաստանի Կառավարութեան կողմից նշանակուած է Զանգեզուր-Ղարաբաղի/Սիւնիքի/ կոմիսար կապիտան Արսէն Շահմազեանը, որն արդէն հասել է Գօրիս:

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝ « ԱՐՑԱԽ »

Ազգային Խորհուրդը որոշում է իւր թերթին ունենալ "Արցախ" անունով. խմբագրական կազմ էր որոշել երեք հոգու, նշանակելով Յովակ Ստեփանեանին, Նիկ. Իսախանեանին և ինձ: Թղթավաճառ Առաքել Ասրեանը, համաձայն Ազգային Խորհրդի որոշման, փնտրտուք կատարելով կարողանում է ձեռք բերել ոչ միայն քաղաքի հայկական, այլև թրքական մասում մի քանի անհատների մօտ գտնուած "բաց սրճագոյն" թուղթը, որի համար, որոշ կանխավճար ստանալով, Առաքելը պարտաւորւում է ոչ ոքի այդ թղթից չվաճառել, և եթէ մէկը ուզենայ գնել, պիտի ասէ, որ ծախուած է Ազգային Խորհրդին և նրա սեպհականութիւնն է:

Մարտ 7-ին լոյս տեսաւ "Արցախ" չաբաթաթերթի առաջին թիւը: Խմբագրականը գրեց Յովակ Ստեփանեանը՝ "Մերն է Արցախը" վերնագրով: "26 կոմիսսարների յիշատակին" յօդուածը՝ Նիկ. Իսախանեանի և "Հեռու քաշէք ձեր արիւնոտ ձեռքերը" իմ ստորագրութեամբ, Ադրբէջանի ղէմ:

"Արցախում" լոյս էին տեսնում Մելիքսէթ Եսայեանի և Աբրահամ Այդինեանի երգիծական յօդուածները: Առաջինը գլխաւորապէս ծաղրում էր տաճիկների ժամանակաւոր տիրապետութեան յոռի կողմերը, իսկ երկրորդը՝ մեր ներքին կեանքի նշանակալի երևոյթներն ու դէպքերը: Այդինեանը գրում էր արևմտահայ բարբառով. նրա մէկ յօդուածը նկարագրում էր Վէրսայլի վեհաժողովի մեր պատգամաւորներին՝ Պօղոս Նուպարի գլխաւորութեամբ. վերջինիս աթոռի տակ նստած է "Տարազ"չաբաթաթերթի խմբագիրը, չուչեցի Տիգրան Նաղարեանը և Պօղոս Նուպարին, որպէս սիւնեցու, յիշեցնում է չմոռանալ խստիւ պահանջելու, որ Ղարաբաղը կցւի Հայաստանին, և թէ ինչպէս Պօղոս Նուպարը, դժգոհ վեհաժողովի ընթացքից, թողնում, հեռանում է ահագին մի գլորուս առած թևերի մէջ, մի ձեռքը Կիլիկիայի և միւս ձեռքը Կասպից Մովի ափին դրած, "աղբար, ափ մը հող ալ չեն տար մեզի" ասելով դուրս է գնում: Չէ՞ որ խօսւում

էր, թէ Հայաստանը պիտի ծովից-ծով տարածուէիւն ունենայ: "Արցախ" թերթի թղթի պակասութեան պատճառով, մեծ տպաքանակով հնարաւոր չէր հրատարակել, ուստի լոյս տեսած թիւերը ձեռքից-ձեռք էին անցնում:

"Արցախ"-ը հաղիւ եօթ թիւ լոյս տեսաւ և թուղթ չլինելու պատճառով, նոյնպէս դադարեց:

Մարտ 8-ին Խորհրդի որոշմամբ Մելիքսէթ Եսայեանը մեկնեց Գօրիս, ներկայանալու Արսէն Շահնազարեանին, ղեկուցելու Զորրորդ Համագումարի կատարած աշխատանքների և Ազգային Խորհրդի մասին:

Մարտ 9-ին բծաւոր տիֆից վախճանւում է հին դաշնակցական գործիչ, Նիկոլ Դումանի համազիւղացի Իշխան Միրզաբէկեանը, որ ընտրած էր Ազգային Խորհրդի անդամ: Իշխանը հայ-թրքական ընդհարումների ժամանակ Շուշի էր աշխատում և վայելում էր հասարակութեան յարգանքը՝ չնորհիւ իւր ուղղամիտ և չիտակ կեցուածքի: Շատ մարդամօտ և համեստ մարդ էր: Նրա վաղաժամ մահը առանձնապէս ղգալի էր Ազգային Խորհրդում:

Մարտ 12-ին Մելիքսէթը վերադառնում է Գօրիսից, բերելով Արսէն Շահնազարեանի նամակը, հրահանգ Հայաստանի կառավարութեան անունից, աննահանջ, նոյն վճռականութեամբ չարունակել Ադրբէջանի դէմ բռնած դիրքը, իսկ Հայաստանի կառավարութիւնը պիտի դիւանագիտական ճամբով ամէն միջոց գործ դնի, որ Ադրբէջանը հեռու քաչէի Ղարաբաղից: Մելիքսէթը բերել էր Ա. Շահնազարեանի տւած 100 հազար ռուբլին՝ ցարական և կերենսկու օրօք բաց թողնւած թղթադրամներ:

Մարտ 16-ին թուրքերի կողմից առաջին անգամ ուժեղ յարձակում է տեղի ունենում Դիղակի արևմտեան մասի խծաբերդ գիւղի վրայ: Խծաբերդցիք ուժեղ դիմադրութեամբ պաչտպանւում են, մինչև որ հասնում են թիկունքի գիւղերի մարտական ուժերը Արտեմ Լալայեանի և իւր օգնական Թաթօղլի Արչակի ղեկավարութեամբ: Հայերը կէսօրից անց ինքնապաչտպանական դիրքերից դուրս գալով, հակայարձակում են գործում, ղգալի կորուստ պատճառում և, քչում թուրքերին: Կռիւը տևում է մինչև երեկոյեան մութն ընկնելը, որից օգտւելով, թուրքերը արագօրէն հեռանում են խծաբերդի սահմաններից:

ՏՕՄՍՈՆԻ ՆՈՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մարտի 19-ին անգլիական միսսիան յայտնում է, որ Ազգային Խորհրդից Տօմսոնը պահանջում է նոր ներկայացուցիչներ ուղարկելու Բագու, խօսելու Զանգեզուր-Ղարաբաղի նահանգապետութեան չուրջ, և որ Բագու գնան Ասլան Շահնազարեանը, Աչոտ Մելիք-Յովսէփեանը և Եղիշէ Իչևանեանը, կարճ ասած՝ Ազգային Խորհրդի դիւանը՝ լրիւ կազմով:

Ազգային Խորհուրդը քննութեան առնելով Տօմսոնի նոր պահանջը, գտնում է, որ դա հետևանքն է Սուլթանովի նոր սադրանքների, Խծաբերդի առջև Թրքական պարտութեան թարմ տպաւորութեան տակ: Մենք արդէն ներկայացուցիչներ ուղարկել ենք՝ թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոս Տէր Գէորգեանին և Հրանդ Բահաթրեանին, այնտեղ են գտնւում նաև Գերասիմ Բալայեանը և Լևոն Զառաֆեանը, որոնք փաստօրէն Ազգային Խորհրդի անդամներ են, ուստի Սուլթանովը աշխատում է նորանոր դժւարութիւններ յարուցելով, հարկադրել, որ հայերը ծունկի գան, ընդունեն իրեն որպէս Զանգեզուր-Ղարաբաղի նահանգապետի, այդպիսով, ճանաչելով Ադրբէջանի իշխանութիւնը, դէմ գնալով ժողովի կամքին ու ցանկութեանը: Խորհուրդը որոշեց միջկուսակցական խորհրդաժողով հրաւիրել՝ մտքերի փոխանակութիւն ունենալու:

Մարտ 20-ին միջկուսակցական խորհրդակցական ժողովը կայացաւ, ներկայ էին դաշնակցութեան կողմից՝ Ան. Տէր Միքայէլեան, Յար. Թումեան և Աստուածատուր Աւետիսեան, մենշևիկ Լև.ոն Վարդապետեան, Ստ. Մանդինեան և Գեր. Բաղդասարեան, բոլշևիկ Ալ. Ծատուրեան, բժ. Համբարձումեան և Արտ. Ղարագեօղեան, էսէռներ Արամ Միքայէլեան, Ռուստ. Տէր Գասպարեան, հայ ժողովրդական կուսակցութիւնից Գր. Մինասբէկեան, Մելքում Խաչատրեան և Աստուածատուր Ստեփաննեան:

Խորհրդակցական ժողովը, մտքերի փոխանակութիւն ունենալով, գտաւ, որ Տօմսոնը, չբաւականանալով արդէն Բագու գտնուող ներկայացուցիչների հետ ունեցած խօսակցութեամբ, նոր ներկայացուցիչներ է պահանջում, և Ազգային Խորհուրդը կուղարկէ իր յարմար դատած մարդկանց, ինչո՞ւ պէտք է ամբողջ դիւանը գնայ, մանաւանդ որ այստեղ իրեն ենթակայ միսսիա ունի, որի միջոցով միշտ թելադրանքներ է անում: Հաւանական է, որ Սուլթանովը այստեղի իր մարդկանց չնորհիւ տեղեկանալով, թէ ովքեր են Ազգային Խորհրդի անդամները, սադրանքներ է անում, անդամներին Բագու կանչելով, Ազգային Խորհուրդը ջլատելու և քայքայելու նպատակով: Այդ տեսակցութիւնից Տօմսոնի հետ, որ

կունենայ երկրորդ ներկայացուցչությունը, կը պարզուի, թէ Սուլթանովը որոշ դեր խաղացե՞լ է, թէ՞ ոչ:

Խորհրդակցական ժողովը յարմար է համարում, որ իբրև ներկայացուցչիներ Բագու գնան Ազգային Խորհրդի նախագահ Ասլան Շահնազարեանը, քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարեանը, փաստաբան Գրիգոր Մինասբէկեանը և Թեմական ղպրոցի ուսուցիչ Անուշաւան Տէր Միքայէլեանը:

Անգլիական միսսիան յայտարարում է մեզ, թէ Սալման բէկը այլևս անգլիական հովանաւորութիւնից աղատ է համարւում: Պարզ է, Սուլթանովը ձեռքերը ծալած նստած չէր, գործի էր, մանաւանդ որ Սալման բէկի ոխերիմ հակառակորդներից մի քանիսը գտնւում էին Շուշում և չարունակ հրահրում էին Սալման բէկի հարցը:

Սալման բէկը վախենում էր, որ անգլիացիները կարող էին ձերբակալել իրեն և յանձնել Սուլթանովին: Մենք վստահացրինք իրեն, որ հանգիստ մնայ. նախ՝ հաւանական չէինք համարում նման բան և երկրորդ, եթէ նման վտանգ սպառնալու լինի, կը փախցնենք մեր չրջաններից մէկը, որտեղ միանգամայն ապահով կը լինի:

ՇԱՏԻԼՎՈՐԴԸ ՅԱՋՈՐԴՈՒՄ Է ԶՕՐ. ՏՕՄՍՈՆԻՆ ԲԱԳԻՄՈՒՄ

Մարտ 22-ին Ազգային Խորհրդի երկրորդ պատգամաւորութիւնը վերը յիչած կազմով մեկնեց Բագու, ներկայանալու Տօմսոնին, որը արդէն հեռացել էր Բագուից, նրան փոխարինել էր Շատիլվորդը: Ինչպէս կը տեսնենք յետոյ, Ազգային Խորհրդի նախագահը Բագու կանչելով, աքսորւած է համարւում:

Անգլիական միսսիայի կարգադրութեամբ, իրենց մարդատար մեքենաներից մէկը տրամադրւում է մեր պատգամաւորներին՝ անգլիական զինուորների ուղեկցութեամբ գնալու Եւլախ, այնտեղից Բագու:

Քաղաքագլուխը մեկնելու ժամին, խիստ անվայել ու անպատչաճ ղիրք ընդունելով, վոզոցում, բարձրաձայն ուսերէն իր զժգոհութիւնն է յայտնում. "Ինչո՞ւ պէտք է ես գնամ Բագու, որպէս Ազգային Խորհրդի ներկայացուցիչ և ոչ թէ Եղիչէ Իչխանեանը, որը այս գործի ոգին է: Ես առանց նրան մի քայլ չեմ անի, նա էլ պէտք է ընկերանայ մեզ:

Ասլան Շահնազարեանը և Գրիգոր Մինասբէկեանը նկատողութիւն են անում, որ չչարունակէ տակից-գլխից յիմարութիւններ դուրս տալ: Նա ընաւ նկատի չունէը, որ մեզնից և ոչ մէկը ինքնուրոյն որևէ քայլ անել չի կարող, որ Ազգային Խորհուրդը գործում է համաձայնարի որոշմանց սահմաններում: Նա ինչ որ Ազգային Խորհրդի որոշմամբ կատարում էր, համարում էր իմ անհատական գործը: Նրա բուռն ցանկութիւնն էր՝ չէզոքացնել ինձ: Հանգուցեալ Հայրապետ Մուսայէլեանից և Աչոտ Մելիք-Յովսէփեանից յետոյ երրորդ անցանկալի և անհանդուրժելի անձը ես էի մնացել նրա համար:

Թէ մեր կուսակցական ընկերները և թէ Ազգային Խորհրդի անդամները դէմ էին իմ՝ Շուշուց հեռանալուն:

Ազգային Խորհրդի պատւիրակութիւնը Բագու մեկնելուց յետոյ Սուլթանովը դարձեալ պահանջ է դնում միասիայի միջոցով, որ հայերը ճանաչեն Ադրբէջանի իշխանութիւնը և ենթարկւեն իր հրահանգներին, սակայն կրկին կտրուկ մերժում է ստանում: Սուլթանովը կարծում էր, թէ անգլիական հրամանատարութիւնը Ազգային Խորհրդից ներկայացուցիչներ պահանջելով և ազդու յայտարարութիւններ անելով, հայերին կը հարկադրէ ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը, ի հարկէ, մեծապէս սխալւում էր, որովհետև հարկադրանքների հետևանքով հայերն աւելի յամառ էին դառնում իրենց դիրքում:

Մարտ 24-ին Մելիքսէթը նորից գնաց Գօրիս, հանդիպելու Արսէն Շահմազեանին և զեկուցելու ստեղծւած դրութեան մասին, որպէսզի Շահմազեանը յատուկ սուրհանդակի միջոցով տեղեկագրէ Հայաստանի կառավարութեանը Տօմսոնի կարգադրութիւնների վերաբերեալ, որպէսզի կառավարութիւնը անհրաժեշտ միջոցների դիմէ, վերջ դնելու Ադրբէջանի ոտնձգութիւններին:

Խանքենդի ադրբէջանեան զօրքում սահմանափակ թւով ծառայում էին մի խումբ սպիտակ ռուս սպաներ, որոնցից բարձրադոյն աստիճան ունեցողը գնդապետ Սակալով ազգանունով մէկն էր: Մեր սպաներից մէկը, Խանքենդցի Գրիգոր Ապրէսեանը, ապրում էր այնտեղ, իր ծնողների հետ և, պահանջւած դէպքում, գալիս էր քաղաք: Պատահաբար ծանօթանում է գնդապետի հետ և, չատ չանցած, բաւական մօտենում են իրար: Գրիգորը առիթ ունենալով, խօսում է Շամքորում և Ջիբրայէլի գաւառում տեղի ունեցած ռուս զինւորների ջարդի մասին, որ կատարւել էր թուրքերի ձեռքով: Պատմում է, թէ ինչպէս գիշերը Ջիբրայէլում, սահմանապահ զինւորները քնած ժամանակ, թուրքերը յարձակւել և կոտորել են բոլորին, միայն երկու հոգի հրաշքով ազատւել և ապաստանել էին հայկական Բանազուր գիւղում:

Սակայնվը, տեղեակ լինելով Կովկասում տեղի ունեցած անցուդարձին, ասում է՝ "սպիտակ ռուսները[11], բոլշևիկներին յաղթելուց յետոյ, անպայման պիտի գան Կովկաս, վերագրաւեն ռուս պետութեանը պատկանող հողերը, այն ժամանակ կոտորած սարբողները պիտի կրեն իրենց արժանի պատիժը: Կասկածից դուրս է, որ տաճկական գործակալներն էլ մեծ դեր են կատարել: Յեղափոխութիւնից առաջ էլ նրանք գործել են թէ Անդրկովկասում և թէ Պարսկաստանում, քանի-քանի անգամ բռնել են, ուղարկել են Սիբիր: Հիմա, ի հարկէ, աւելի համարձակ են գործած, չնորհիւ տիրող անիշխանութեան":

Ապա գնդապետը յայտնում է, որ կարիքից ստիպուած, ինքն ու միւս զինուորականները դիմել էին անգլիացիների օգնութեանը և նրանց չնորհիւ մտել ծառայութեան Ադրբէջանի զօրքի մէջ, սակայն յարմար ժամանակին պիտի թողնեն ծառայութիւնը և մեկնեն Հիւսիսային Կովկաս, միանալու սպիտակ ռուսներին: Գնդապետը մոայլ գոյներով է նկարագրում Ադրբէջանի զինուորական ծառայութիւնը. բացի այն, որ կարգապահութիւնը չատ թոյլ է, տեղի են ունենում գողութիւններ, պահեստից կօշիկներ և այլ բաներ գողացել են ու, հաւանօրէն, դուրսը ծախել:

Գնդապետի ասածները զինուորների գողութիւնների մասին, այն միտքն է թելադրում Գրիգորին, որ փորձի մօտենալ զինուորներին, գուցէ կարելի լինի նրանցից էժան գներով փամփուշտ ձեռք բերել: Եւ նա չատ զգուշութեամբ կարողանում է զրոյցի բռնել զինուորների հետ, որոնք աղատ ժամերին թափառում էին Խանքենդու փողոցներում, չատերը հայ կօշկակարների մօտ ժամերով նատած իրենց կօշիկները կարկատել տալիս: Ի վերջոյ, Գրիգորին յաջողւում է մէկ-երկուսի հետ խօսել, և նրանք զանգատւում են իրենց վիճակից, որ Խանքենդում չատ բան չի ճարւում, ճարուածն էլ չատ թանկ է, ստիպուած իրենց որոշ բաները ծախում են: Գրիգորը խօսքը վրայ բերելով, ասում է, "չէ՞ն կարող արդեօք մի քիչ փամփուշտ ծախել իրեն, ուզում է որսի գնալ, բայց փամփուշտ քիչ ունի: Զինուորը պատասխանում է, որ կարող է իր ունեցածը առանց դրամի էլ տալ, եթէ աչակցի իրեն, թողնելու ղօրանոցը և գնալու (փախչելու) իրենց գիւղը: Գրիգորն անմիջապէս միտք է յղանում, փամփուշտ ձեռք բերելու մտքից հրաժարւել, փորձել դասալքութեան մղել զինուորներին, ուստի հարց է տալիս՝ միայն նա՞ է ուզում փախչել, թէ՞ ուրիշներն էլ կան: Զինուորն ասում՝ է, եթէ ապահովութիւն լինի, հայերը ձեռք չտան, գրեթէ բոլորը յարմար մոմենտի են սպասում՝ փախչելու: Գրիգորը

[11] Սպիտակ ռուս. պայմանականօրէն «սպիտակ» էին կոչում ռուս միապետական և հակայեղափոխական, ասելի ճիշտ՝ հակաբոլշևիկեան ուժերը: Քաղաքական մեծ յեղափոխութեան (1789-94թթ.) ժամանակ թագաւորի կողմնակիցների դրօշը սպիտակ էր, այդ իմաստով էլ յօրինել է «սպիտակ ռուս» անուանումը: (Խմբ.)

խոստանում է աջակցել ղինուորին և իր ընկերներին, երբ ուղևնան, փախչեն, խճուղիով գնան ուղիղ ղէպի Ասկերան, անցնեն ղէպի տափաստան, վստահ, որ հայերը ձեռք չեն տայ: Գրիգորը ճիշտ էր խորհուրդ տւել, որ ղինուորները խճուղիով գնան, որովհետև եթէ հայկական գիւղերով գնային, անցանկալի ղէպքեր կարող էին տեղի ունենալ, ինչպէս որ տեղի ունեցաւ:

Գրիգորի ունեցած ղրոյցը ղինուորների հետ երբ լսեցինք, ճիշտ ասած, լուրջ բան չհամարեցինք, սակայն չուտով պարզուեց, որ իրօք դասալքութիւնան ցանկութիւն ունեցողներ շատ են, որովհետև երկու–երեք հոգով չէին փախուստ տւողները, այլ տասնեակներով 15–20 և մինչև իսկ 30 հոգով: Մի քանի խմբեր 15, 20 հոգուց բաղկացած, խճուղիով ապահով գնում են, որովհետև անգլիական ղինուորական մեքենաները՝ մեծաւ մասամբ մարդատար, երթևեկում էին խճուղիով, որը ապահով էր իսկապէս: Ի հարկէ, Ադրբէջանի իշխանութիւնները, ինչպէս լուրեր էին հասնում մեզ, միջոցների էին ղիմում դասալիքներին բռնելու, և մասամբ յաջողւում էր, բայց դասալքութիւնը վերջ դնել չէր յաջողւում: Մի տխուր ղէպք, սակայն, որ տեղի ունեցաւ մարտ ամսւայ վերջին, կասեցրեց դասալքութիւնը: Երեսուն ղինուորներ, Կարնագինի զաւառի գիւղացիները, որոշում են փախչել հայկական գիւղերով, աւելի կարճ ճանապարհով, և Շօշ գիւղի ձմեռանոցի (Փարմաքէի) վրայով, ուղիղ գծով հասնելով Թրքական Ղաջար, Զարգեար–Դիլուղա գիւղերի չրջանը, այնտեղից ղէպի իրենց գիւղերը: Այս խումբը ամբողջովին ոչնչանում է Փարմաքէի և Հարաւ գիւղի միջև, աւազակաբարոյ հայերի ձեռքով: Դէպքը յայտնի է ղառնում, ղայրոյթ առաջ բերելով չատ հայերի մէջ, սակայն զոհունակութիւն պատճառում Ադրբէջանի ղինուորական իշխանութիւնանը, որը օգտագործելով տեղի ունեցած դէպքը, ղգուչացնում է ղինուորներին՝ էչի նահատակ չղառնալ:

Ազգային Խորհուրդը հնարաւորութիւն չունեցաւ երևան բերելու ոճրագործներին: Գեներալ Տօմսոնի չարունակական հրահանգները միսիայի միջոցով, Սուլթանովի ինտրիգները, այնքան էին ղբաղեցնում, որ տեղի ունեցած տխուր ղէպքին վերահասու լինել հնարաւոր չեղաւ:

Ապրիլի 1: Գեներալ Տօմսոնին յաջորդած գնդապետ Շատիլվորը զերազանցեց իր նախորդին, աւելի և աւելի մեզ ղբաղեցնելով Սուլթանովի նահանգապետութեան, աւելի ճիշտը՝ Ադրբէջանի իշխանութիւնը ճանաչելու խնդրով: Միսիայի միջոցով աչխատում էր համոզել մեզ՝ ենթարկւել նահանգապետի կարգադրութիւններին: Սուլթանովն էլ առանձին աչխատանք էր տանում հայերի հետ, ծանօթ թուրք վաճառականների միջոցով, որ հայերը յաճախեն նահանգապետին, մասնակցեն նահանգական գործերին, պաչտօններ ստանձնեն: Նախկին հայ–թրքական

կոմիտէի անդամներից Խասայ Մամեդովը մի քանի անգամ ղրոյց է ունենում քաղաքի ինքնապաշտպանական նավակին չրջանապետներից Ներսէս Հէյրաթեանի հետ և առաջարկում նրան կոմիսարի պաշտօն ստանձնել: Հէյրաթեանը պատճառաբանում է, որ քաղաքում անձնական որոչ գործ ունի, պէտք է լիկվիդացիայի ենթարկէ, որ կարողանայ պաշտօն ստանձնել: Նա գիտակցաբար ձգձգում է, որովհետև առանց Աղգային Խորհրդի համաձայնութեան, չի ուղում նման քայլ անել: Երբ Ներսէսը յայտնեց մեղ այդ մասին, հարցը քննութեան առնուեց, անդամների մէկ մասը գտնում էր, որ Ներսէսը պէպք չէ պաշտօն ստանձնէ, որովհետև դրանով Աղրբէջանի իշխանութիւնը ճանաչած կնք լինում, իսկ մի մասը այն կարծիքն էր յայտնում, թէ որևէ ձևով պէտք է Սուլթանովի մօտ, թէկուզ անպաշտօն, երթևեկող մէկն ունենանք, որ տեղեակ լիննենք թէկուզ կցկտուր, մռուցիկ կերպով, նահանգապետարանում տեղի ունեցող անց ու դարձին: Այնտեղ երթևեկող անձը ականջը սրած, օդի մէջ անգամ տեղեկութիւններ իմանայ: Արդ, քանի որ նման առաջարկ են անում Ներսէսին, թոյլ տալ, որ գաւառական ոստիկանի պաշտօն ստանձնէ, իբր թէ անկախ մեղանից, անհատաբար, և իբր լսածի ու տեսածի մասին տեղեակ պահէ մեղ: Մարտի սկզբներից Ներսէսն արդէն գաւառական կոմիսարի պաշտօն էր ստանձնել, յաճախ լինում էր գիւղերում, գալիս քաղաք, Սուլթանովից առաջ հանդիպում մեղ, մեր ցուցմունքների համաձայն ղեկուցումներ տալու:

Սուլթանովը կարծում էր, թէ հայ պաշտօնեաներ ունենալով, կը կարողանայ գիւղացիութեան մէջ տրամադրութիւն ստեղծել, ճանաչելու Աղրբէջանի իշխանութիւնը: Ներսէսը, ի պատասխան Սուլթանովի հարցումներին, թէ ինչ վերաբերմունք ունի հայ գիւղացիութիւնը, պիտի ասէր, որ գիւղացիները ենթակայ են քաղաքի իշխանութեան և ասում են՝ "երբ քաղաքը ենթարկուի, իրենք էլ անմիջապէս կը ճանաչեն Աղրբէջանի իշխանութիւնը:"

Սուլթանովը պատուիրում է Ներսէսին, որ ուրիչ մարդիկ էլ գտնի, որոնք նոյնպէս կոմիսարի պաշտօն ընդունեն և աշխատեն գաւառներում: Ներսէսը յայտնում է, որ կաշխատէ համապատասխան մարդիկ գտնել, թէև յոյս չունի, որովհետև ոստիկանական պաշտօնից շատերը խրտչում են, համարելով այն ցարական կառավարութեան ժամանակւայ ոստիկանութեան շարունակութիւնը:

Ներսէսը, ի հարկէ, չէր կարող Սուլթանովից կամ նրա մօտ մարդկանցից դաղտնիքներ իմանալ, սակայն նահանգապետարանում վխտացող բազմաթիւ թուրքերի միջև տեղի ունեցող դրոյցներից որոչ տեղեկութիւններ իմանում էր և յայտնում մեղ: Թուրքերը իրենց դրոյցների ընթացքին պարզ արտայայտում

էին անգլիացիների մասին, զովում էին նրանց իբր բարեկամ Թուրք ժողովրդի, որովհետև Թուրքերը զէմ են ռուսներին, այնինչ հայերը *ձեռք չեն քաշում ռուսներից:* Եթէ հայերը զէմ եղած լինէին ռուսներին, անգլիացիները այնքան նեղը չէին գնի նրանց: Հիմա ինչքան էլ հակառակուեն Ադրբէջանի իշխանութեանը, միևնոյն է, անգլիացիք ուշադրութիւն չեն դարձնելու և վերջի վերջոյ հայերին պիտի հպատակեցնեն Ադրբէջանին:

Փարմաքէի և Հարաւ գիւղի միջև երեսուն ադրբէջանական դասալիք զինուորների սպանութեան առթիւ, մի քանի Թուրքեր հայերի արած այդ քայլը նամարդութիւն են համարում, իսկ ուրիշները բարերախտութիւն են համարում. դասալիք զինուորներին համարում են դաւաճաններ և գտնում են, որ իրենց արժանի մահն են գտել և դրա հետևանքով այլևս դասալիք չեն լինի, վախենալով, որ հայերի ձեռքը կընկնեն ու կը կոտորուեն:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ԲԱԳԻՒՑ ԵՒ ՉԵԿՈՒՑՈՒՄ

Ապրիլ 4-ին Բագու զնացած մեր բոլոր ներկայացուցիչները՝ Վահան Արքեպիսկոպոսը, Հրանդ Բահաթրեանը, Գերասիմ Մ. Շահնազարեանը, Գր. Մինասբէկեանը և Անուշ Տէր Միքայէլեանը վերադառնում են, իսկ Ասլան Շահնազարեանը մնում է Բագուում, որին Շատիլվորդը Թոյլ չի տալիս վերադառնալ:

Ապրիլ 5-ին Ազգային Խորհրդի նիստին Հրանդ Բահաթրեանը հանգամանօրէն զեկուցում է Վահան Արքեպիսկոպոսի հետ միասին Բագւի Ազգային Խորհրդի, հասարակական զանազան հոսանքների գործիչների հետ ունեցած հանդիպումների մասին և ապա երկուսով, որպէս Ազգային Խորհրդի ներկայացուցիչներ, Շատիլվորդի հետ *ունեցած տեսակցութեան* մասին: Բագւի Ազգային Խորհուրդը և զանազան հոսանքի մարդիկ բոլորը գրեթէ նոյն կարծիքն են յայտնել մեր բռնած դիրքի մասին, գտնելով, որ ճիշտ ենք վարուել՝ կտրականօրէն մերժելով անգլիական հրամանատարութեան պահանջը՝ ընդունելու Ադրբէջանի գերիշխանութիւնը: Շատիլվորդին մենք յայտնեցինք այն, ինչ որ յայտնել է ժամանակին կապիտան Սէյրայդին և այստեղի միսսիային, որ Զանգեզուր-Ղարաբաղը անբաժան մէկ նահանգն է Հայաստանի, նա հին պատմութեան Սիւնիքն է, հարուստ իր պատմական յիշատակներով՝ վանքերով, բերդերով և այլ հնութիւններով, Թուրքը, ասելի ճիշտը՝ Թաթարը Սիւնիքի ամբողջ երկայնքին ու լայնքին մէկ հատիկ պատմական յիշատակարան չունի, նա եկուոր տարր է, մոնղոլական արշաւանքի մնացուկը:

Սակայն Շատիլվորդը չէր ընդունում մեր բացատրութիւնները և պահանջում էր անպայման ներկայանալ Տօմսոնի՝ ժամանակին արած կարգադրութեանը, ճանաչել Աղբրէջեանի իշխանութիւնը: Սրբազանը և ինքը յայտարարում են, որ Ազգային Խորհուրդը Ղարաբաղի հայութեան կողմից համագումարի միջոցով ընտրած գործադիր մարմին է և ինքնուրոյնաբար որոշում կայացնել չի կարող: Ղարաբաղի հայութեան Ջորբորդ Համագումարը որոշում է կայացրել՝ չճանաչել Աղբրէջեանի իշխանութիւնը, և համագումարի որոշման հակառակ ընթանալ Ազգային Խորհուրդը չի կարող ոչ մէկ պարագայի: Համագումարի որոշումը կարող է փոխել միմիայն հրաւիրուած մի նոր համագումար: Եպիսկոպոսի և իր այդ բացատրութիւնը լսելով, Շատիլվորդը առաջարկեց, որ նոր համագումար հրաւիրի և համագումարին ինքը ներկայ կը գտնի, անմիջականօրէն ժողովրդի ներկայացուցիչների հետ խօսելու: Եւ համագումարի նչանակման օրւայ մասին կը յայտնի մեսիայի միջոցով, որպէսզի կարողանայ գալ Շուշի:

Երկրորդ ներկայացուցչութիւնը երբ հասաւ Բագու, եպիսկոպոսն ու ինքը միանալով ներկայացան Շատիլվորդին, որը կրկնեց նոյն իր պահանջները, ինչ որ Սրբազանին ու իրեն էր յայտարարել: Ազգային Խորհրդի նախագահը՝ Ասլան Շահնազարեանը, հանգամանօրէն պատմում է Ջորբորդ Համագումարի մասին, որը Ղարաբաղի հայութեան ցանկութիւնների և ձգտումների իսկական արտայայտիչն է և որի որոշման համաձայն Ազգային Խորհուրդը չի ճանաչի Աղբրէջեանի իշխանութիւնը և չի կարող ճանաչել:

Շատիլվորդը կրկնում է իր յայտարարութիւնը, թէ պիտի նոր համագումար հրաւիրել: Ապա յայտարարում է, թէ բոլորը կարող են վերադառնալ, բացի Ազգային Խորհրդի Նախագահից, որը ցնոր կարգադրութիւն կը մնայ Բագուում:

Ապա Հ. Բահաթրեանը պատմում է, որ Բագուում տեղեկանալով, որ Յովհաննէս Քաջազնունին գտնուում է Թիֆլիսում, որոշում է գնալ այնտեղ, հանդիպում ունենալ Քաջազնունու հետ, ներկայացնել մեր վիճակը և խորհուրդ հարցնել: Նա գնում է Թիֆլիս, տեսակցութիւն է ունենում թէ Քաջազնունու և թէ Ալէքսանդր Խատիսեանի հետ: Երկուսն էլ Հայաստանի կառավարութեան գործերով եկել էին այնտեղ:

Հայաստանի հանրապետութեան երկու գործիչները, որոնց ներկացել էր Հր. Բահաթրեանը և հանգամանօրէն զեկուցել Ղարաբաղի անցուդարձի մասին, իրարու հակասող խորհուրդներ են տուել Հ. Բահաթրեանին: Տեսակցութիւնը տեղի է ունեցել զատ-զատ, և երկուսն էլ աղատ արտայայտել են իրենց տեսակէտները:

Ալէքսանդր Խատիսեանը Ղարաբաղի հայութեան բռնած դիրքը համարել է ուղիղ և ճիշտ, պատշաճ ու համապատասխան իր պատմական անցեալին և. ունենցած ներկայ իր դերին ու կոչմանը, որպէս ազատատենչ ժողովրդի, ուստի խորհուրդ է տւել, որ Ղարաբաղը մնայ անսասան իր դիրքում, չարունակէ իր ընդդիմութիւնը և չենթարկւի անգլիական հրամանատարութեան պահանջին, չճանաչէ Ադրբէջանի իշխանութիւնը, որի ոտնձգութիւնների դէմ Հայաստանի կառավարութիւնը անհրաժեշտ քայլեր կառնէ դաշնակից պետութիւնների ներկայացուցիչների մօտ, աղդեցութիւն գործ ղնելու անգլիական հրամանատարութեան վրայ, որ Ղարաբաղը բռնի կերպով չենթարկէ Ադրբէջանին:

Յովհաննէս Քաջազնունին ամենայն ուչադրութեամբ Հ. Բահաթրեանին լսելով, որոչ հանգամանքներ աւելի պարզաբանելու նպատակով իր տւած հարցերի պատասխանները լսելուց յետոյ, չատ յստակ կերպով յայտնել է, թէ՝ "Հայաստանի կառավարութիւնը ներկայիս դտնւում է թէ քաղաքական, և թէ տնտեսապէս ամէնադժանը պայմաններում: Համաճարակ հիւանդութիւնների և ժողովրդի համատարած սովալլուկ վիճակի հետևանքով կառավարութիւնը ծանր տագնապ է ապրում: Պատերազմի և յեղափոխութեան յաջորդած անարխիայի պատճառով մեր ժողովուրդը բոլորովին ուժասպառ է եղած, չի կարող, ի պահանջել հարկին, ռազմական անհրաժեշտ քայլ անել: Դաշնակիցների լայնախոհութեան ու բարեացակամութեան վրայ յենւած, վճռական որևէ քայլ անել յուսալի չպիտի համարել, ուստի ես խորհուրդ եմ տալիս ձեղ բանակցութեան մէջ մտնել անմիջականօրէն Ադրբէջանի իշխանութեան ներկայացուցչի՝ Սուլթանովի հետ, համաձայնութեան եզր գտնել առաժամապէս, քանի որ Ղարաբաղի և մեր այլ հողերի՝ Հայաստանին կցելու հարցը պիտի որոչւի հրաւիրելիք համաչխարհային վեհաժողովում:

Հետագային դէպքերը, որոնք տեղի ունեցան Ղարաբաղում, ապացուցեցին, թէ որքան ճիշտ է եղել Յովհաննէս Քաջազնունու ցոյց տւած միջոցը, որով ապացուցւում է նրա պայծառատեսութիւնը:

Բագւում ինքը Բահաթրեանն առանձին տեսակցութիւն է ունեցել Հայաստանի դեսպան Տիգրան Բէկզատեանի հետ, որին պատմել է Ալ. Խատիսեանի և Յով. Քաջազնունու հետ ունեցած տեսակցութեանց ու նրանց տւած խորհուրդների մասին: Տիգրան Բէկզատեանը Հ. Բահաթրեանին ասել է թէ՝ "Ալ. Խատիսեանը, ճիշտ է, ճանաչւած է ընդհանուրի կողմից, որպէս եռանդուն և նւիրւած գործիչ, սակայն նոր է մտած Դաշնակցութեան չարքերը և չունի այն ստաժը, որպիսին ունի Յովհաննէս Քաջազնունին, որը ոչ միայն ստաժաւոր հին դաշնակցական է, այլ և բազմակողմանի

բարձրորակ մտաւորական, մտաւոր խոր ու լայն զարգացմամբ և չատ աւելի տեղեակ է կուսակցութեան ունեցած կարողութեանը, կառավարութեան գլխաւոր յենարանն է, իսկ Ա. Խատիսեանը նրա չափ իրազեկ չէ: Եւ ներկայ դէպքում, Քաջաղնունու տւած խորհուրդը աւելի գործնական պիտի համարել:"

Այնուհետև Հր. Բահաթրեանը պատմեց մեր քաղաքագլխի՝ Գ. Մ. Շահնազարեանի հերոսական ելոյթի մասին, ռուսաց ազգային խորհրդի սրահում, ուր սովորաբար հաւաքոյթներ են ունենում ռուսները և որը ակումբի դեր է խաղում: Գ. Մ. Շահնազարեանը գնում է այնտեղ, տեսնում է ռուսաց ազգային խորհրդի անդամների հետ, որպէս Շուշու քաղաքագլուխ և խորհրդի համաձայնութիւնն առնելով, ելոյթ ունենում, ճառ ասում որպէս ուլտրա- ռուսօֆիլ, յայտարարում, որ Ղարաբաղը հաւատարիմ է մնացած իր պատմական անցեալին, որ միշտ ձգտել է միանալ աղատարար քրիստոնեայ Ռուսաստանին և այժմ էլ նա չի ճանաչում Ադրբէջանի իշխանութիւնը, դարձեալ սպասում է, որ ռուսական զօրքերը կը գան, կը գրաւեն իրենց պատկանող հողերը, որոնցից մէկն էլ Ղարաբաղն է:

Քաղաքագլխի ճառը լաւ տպաւորութիւն է թողել ռուսների վրայ, որոնք դրւատանքի խօսքեր են ասել և մեծապէս գնահատել հայ ժողովրդի անկեղծ վերաբերմունքը հանդէպ ռուս ժողովրդի:

Երբ Հ. Բահաթրեանը տեղեկացել է այս մասին, խիստ վէճ է ունեցել քաղաքագլխի հետ, թէև երկուսն էլ Ժողովրդական Սահմանադրական Կուսակցութեան անդամներ էին : Բահաթրեանը քաղաքագլխին մեղադրել է անհատաբար նման ելոյթ ունենալու մէջ, մանաւանդ որ Ազգային Խորհրդի կողմից ընտրւած պատգամաւորներից մէկն էր և չպէտք է իր ստանձնած պարտականութեան սահմաններից դուրս գար, առաւել ևս Ազգային Խորհրդի բռնած դիրքին հակառակ դիրք ընդունէր: Մէկից աւելի անգամ առիթներ եղել են դիտելու և պարզ յայտարարելու, որ չպէտք է դրսևորել մեր ռուսական օրիենտացիա ունենալը, որը յայտնի դառնալով անգլիացիներին, աւելի վատ են տրամադրւում հանդէպ մեզ և, ընդհակառակը, աւելի թեքւում աղրբէջանցիների կողմը:

Ապա, Հ. Բահաթրեանը յայտնում է, որ Բագւի Ազգային Խորհուրդը 500,000 ռուբլի է տւել մեր չրջանի պէտքերը հոգալու համար, և որ այդ գումարը յանձնւում է գանձապահ-հաչւապահին. ի դէպ, Հ. Բահաթրեանը Թիֆլիսում բժիշկ Ա. Բաբալեանից տեղեկացել էր, որ քաղաքագլխի ստացած 750 հազար ռուբլին տրւած է եղել չէ թէ միայն քաղաքի, այլ ամբողջ չրջանի

անհրաժեշտ կարիքները հոգալու համար: Նոյնը յայտնել են և ուրիշ ղարաբաղցիներ՝ Եսայի Յարութիւնեանը և Տ. Աղամալեանը:

Ապրիլ 7-ին անգլիական միսիային յայտնում ենք, որ, համաձայն Շատիլվորդի առաջարկութեան, որոշել ենք նոր համագումար հրաւիրել, և մտքերի փոխանակութիւն ունենալով, համաձայնութիւն է կայանում համագումարը հրաւիրել ապրիլ 23-ին: Միսիան կը տեղեկացնի Շատիլվորդին, որ այդ օրը ներկայ գտնւի համագումարի բացմանը:

Ապա անմիջապէս անհրաժեշտ հրաւիրագրերը պատրաստելով, ուղարկում ենք բոլոր գիւղական հասարակութիւններին՝ ժամանակին հասցնելու իրենց երեքական պատգամաւորներին:

Զինուորական չտարը գաւառ փոխադրելու որոշումը տրւելուց յետոյ, զինուորական ընդհանուր հրամանատար Արտաշէս Վարդապետեանը, չտարի կազմած նախահաշւի համաձայն, հարց է դնում, որ գործի, ինքնապաշտպանութեան կազմակերպութեան յաջողութեան համար, անհրաժեշտ է, որ սպաները ձի ունենան, որպէսզի արագ կատարեն աշխատանքները: Ոտքով չրջելով չատ գանդաղ կընթանայ գործը, ամէն անգամ մի գիւղից մէկ ուրիշ գիւղ գնալու համար ձի վարձելով գործը արագ չի ընթանայ: Անհրաժեշտ է հինգ ինքնապաշտպանական չրջանների համար 10 ձի ունենալ աղգապատկան, 2-ական իւրաքանչիւր չրջանի հրամանատարի և օգնականի համար և 2 ձի էլ չտարի համար ընդհանուր հրամանատարի և չտարի պետի տրամադրութեան տակ:

Աղգային Խորհուրդը ընդառաջում է եղած առաջարկին, և ձի ճանաչող քաղաքացիների միջոցով անհրաժեշտ քանակութեամբ ձիեր գնեցին սպաների համար:

Հր. Բահաթրեանը Թիֆլիսում դեկուցել է Զանգեզուր-Ղարաբաղցիների հայրենակցական միութեան հաւաքոյթին Ղարաբաղի անցուդարձերի մասին, սկսած Միջկուսակցական Բիւրոյի գործի անցնելուց ի վեր: Պատմել էր, որ ամբողջ ժամանակ սերտ համերաշխութեամբ են գործել բոլոր հոսանքները և համերաշխութիւնը չարունակւում է նոյնութեամբ:

Յայտնում է տնտեսական այն տագնապի մասին, որ առաջացել է յեղափոխութիւնից յետոյ: Աղգային մարմինները, միանգամայն զուրկ նիւթական միջոցներից, գերազոյն ղոհողութեամբ կարողացել են դպրոցների գոյութիւնը պահպանել: Ամէն գովասանքից վեր է թէ ուսուցիչների և թէ աղգային մարմինների պաչտօնատար անձանց ղոհողութիւնը. մարդիկ մէկ

տարուց աւելի է, ինչ իրենց յատկացուած ռոճիկի չնչին մասը ստանալով,աղնուօրէն ու բարեխղճօրէն վարում են իրենց պաշտօնները: Մասնաւորապէս թէ ազգային և թէ պետական դպրոցների ուսուցիչները, առանց ազգային խորուրդեան, գերազանց նուիրածութեամբ են աշխատում: Եւ ազգային ղեկավար մարմինները ղրամական միջոցներից միանգամայն զուրկ լինելով, ոչ մէկ հնարաւորութիւն չեն ունեցել ամենաղոյղն չափով իսկ օժանդակութիւն ցոյց տալու: Անգլիացիների գալուց յետոյ էլ չարունակւում է նոյն վիճակը: Ազգային Խորհուրդը իւր ամենաանհրաժեշտ չնչին ծախսերը կատարելու ղրամական միջոցները չունի:

Այդ ղեկուցումը լսելուց յետոյ է, որ Ա. Բաբալեանը, Եսայի Յարութիւնեանը, Տիգ. Աղամալեանը յայտնում են Բահաթրեանին, որ քաղաքագլուխ Գ. Մ. Շահնազարեանը 1918 թ. ամռան սկզբներին, երբ Թիֆլիս էր գտնուում, ուզում էր գոյութիւն չունեցող պետական գանձարկղից ղրամ ստանալ, որը հնարաւոր չէր, ուստի և դիմումներ եղան ազգային այլևայլ մարմինների, և յաջողւեց 750 հազար ռուբլի ստանալ Շուշու և գաւառների ամենաանհրաժեշտ ծախսերը հոգալու համար. ինչու՞ Ազգային Խորհուրդը չի օգտւել այդ գումարից: Յիշեալ ղարաբաղցիները արդէն ճանաչուած ու յայտնի ազգային-հասարակական գործիչներ էին և մասնակից յիշեալ գումարը հայթայթելու աշխատանքին:

Ապրիլ 10-ին, համաձայն նախապէս տեղի ունեցած խորհրդակցութեանց, Զինուորական Միութեան Վարչութեան և Ազգային Խորհրդի խառն ժողովներին, հանգամանօրէն քննութեան առնելով ստեղծուած կացութիւնը և մտքերի լայն փոխանակութիւն ունենալուց յետոյ, որոշւել էր ինքնապաշտպանութեան զինուորական ղեկավարութեան կենտրոնը քաղաքից փոխադրել գաւառ, թողնելով քաղաքում 150 հոգուց բաղկացած վաշտ, իր վաշտապետի և օգնականի հետ միասին: Պիտի գաւառ անցնեն բոլոր սպաները, որոնք պիտի բաշխուեն ըստ չրջանների կարիքի և կազմակերպեն ինքնապաշտպանութեան գործը, միլիցիօն սիստեմով: Որպէս կենտրոնատեղի որոշւում է Դռնավազ գիւղը, ուր և գնում են բոլոր սպաները:

Նոյն օրը Մելիքսէթ Եսայեանը գալիս է Գորիսից, բերելով Արսէն Շահնազարեանի յայտնած տեղեկութիւնները, որ Հայաստանի կառավարութեան ուղղուած մեր գրութիւնները՝ ղեկոյցներ և առաջարկներ, չտապ կերպով ուղարկել է Երևան, որ ինքն էլ յնուած մեր ղեկուցագրերի վրայ, յատուկ գրութեամբ Կառավարութեան ուշագրութիւնն է հրաւիրել անգլիացիների վարած խտրական քաղաքականութեան վրայ, յայտնելով, որ անգլիացիները, պարզապէս, թրքօֆիլ քաղաքականութիւն են

վարում, ուստի անհրաժեշտ է բուռն կերպով բողոքել ուր որ պետք է, որպեսզի վերջ տրվի խտրականությանը և արդար, անկողմնակալ վերաբերմունք ցույց տրվի:

Ապրիլ 11-ին անգլիական միսիան յայտնում է զեներալ Շատիլվորդի "առաջարկությունը", թէ մթնոլորտը խաղաղացնելու համար պետք է քաղաքից հեռանան 1) Ե. Իչխանեան, 2) կապ. Արտ. Վարդանեան, 3) կապ. Յովակ Ստեփանեան, 4) Տիգ. Տէր Գրիգորեան և 5) փոխ-տեղակալ Նիկ. Տէր Գաբրիէլեան: Առաջին երկուսը պահւում են քաղաքում. Յով. Ստեփանեան ու Նիկ. Տէր Գաբրիէլեանը գտնւում էին արդէն քաղաքից դուրս, գաւառում: Քաղաքում ազատ մնում է Տիգ. Տէր Գրիգորեանը: Մեզ համար կասկածից դուրս էր, որ Շատիլվորդին մեր մասին տեղեկութիւնները հաղորդողը Սուլթանովն էր, նա ինքը մեզ չէր ճանաչում անձամբ, տեղեկութիւնները մատակարարում էին քաղաքացնակ թուրքերը, որոնք մեզ ճանաչում էին:

Շատիլվորդի առաջարկութիւնը պահանջի բնոյթ ունէր, որովհետև նախազդուշական խօսք էր ասւում, որ հեռանանք մեր կամքով, այլապէս անգլիական հրամանատարութիւնը հարկադրւած կը լինի անհրաժեշտ միջոցի դիմելու: Շատիլվորդի այս ձևի առաջարկ-հրամանը տարածւելով քաղաքի հայերի մէջ, բուռն ցասում էր առաջացրել, ամէնքը, մեծ ու պզտիկ, տղամարդիկ ու կանայք, դատապարտում էին քրիստոնեայ անգլիացիներին, որ հովանաւորում էին մահմեդական թուրքերին: Ազգային Խորհրդի՝ քաղաքում գտնւած անդամները որոշում են Շատիլվորդի նոր կարգադրութեան առթիւ գրաւոր կերպով տեղեկացնել Արեւէն Շահնազարեանին, որ իր հերթին առանձին գրութեամբ Հայաստանի կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրէ, որպեսզի անհրաժեշտ միջոցների դիմէ Ադրբէջանի ոտնձգութիւններին վերջ տալու համար, և որոշւում է, որ Ազգային Խորհրդի գրութիւնն առնելով նորից Մելիքսէթ Եսայեանը ապրիլ 17-ին գնայ Գօրիս և, ի պահանջնալ հարկին, անհրաժեշտ բացատրութիւնները տայ:

Ապրիլ 17-ին Մելիքսէթ Եսայեանը մեկնում է Գօրիս:

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ

Ազգային Խորհուրդը հիմք ունենալով Հ. Բահաթրեանի զեկոյցը քաղաքագլխի՝ Թիֆլիսում ստացած 750 հազար ռուբլու մասին, որոշեց, որ Հ. Բահաթրեանը, Մ. Մելիք Յովսէփեանը և Տիգ. Տէր Գէորգեանը ներկայանան քաղաքագլխին ու բացատրութիւն պահանջեն, թէ ինչու չրջանների հասանելիք բաժինը պահել է իր

մօտ ու չի յանձնել ժամանակին Ղարաբաղի ժողովրդական կառավարութիւնը կամ նրան յաջորդած ազգային խորհուրդներին: Պահանջել, որ չրջաններին հասանելիքը, համեմատական չափով հաշւած կարիքները, վճարել Ազգային Խորհրդին, հաշւելով, ի հարկէ, արդէն միանւագ վճարւած ութսուն հազար (80,000) ռուբլին ժամանակաւոր Ազգային Խորհրդին:

Պէտք է ասել, որ Ազգային Խորհուրդը, նախքան Հ. Բահաթրեանի մեկնելը Շուշուց, արդէն մի առիթով լսել էր հէնց քաղաքագլխից, որ յիշեալ գումարից ոչինչ չի մնացել, քանի որ այն ծախսւած է քաղաքի պէտքերի համար ութ-ինն ամսւայ ընթացքում: Ազգային Խորհուրդը, ի հարկէ, յոյս չունէր քաղաքագլխից ղրամ ստանալու, բայց ուղում էր ղգացնել քաղաքագլխին իր անպատասխանատու կերպով, ըստ կամս ազգային ղրամների հետ վարւելը և այդպիսով, կարճելով նրա լեզուն, թոյլ չտալ անհատական ելոյթներ ունենալու, և ճանաչել ազգային իշխանութիւնը, որի հանդէպ անպատչաճ կեցւածք է ունեցել և վերէն վար նայել ազգային մարմինների վրայ:

Ապրիլ 17-ին, երեկոյեան, Ազգային Խորհրդի յիշեալ երեք անդամները ներկայանում են քաղաքագլխին իր բնակարանում և յայտնում, թէ ինչ նպատակով են եկել մօտը: Հրանդ Բահաթրեանը ինչ որ ղեկուցել էր Ազգային Խորհրդին 750 հազար ռուբլու վերաբերեալ, նոյնութեամբ կրկնում է քաղաքագլխին: Ազգային Խորհրդի անդամները յայտնում են, որ նման վերաբերմունք, որպիսին քաղաքագլուխն է ունեցել, ոչ միայն անպատչաճ է, այլև դատապարտելի միանգամայն:

Քաղաքագլխի համար, ի հարկէ, անակնկալ էր Հր. Բահաթրեանի ղեկոյցը, սակայն նա տիրապետելով իրեն, առարկում և աշխատում է ապացուցել, որ Հ. Բահաթրեանի ստացած տեղեկութիւնը, 750 հազար ռուբլու վերաբերեալ, ճիշտ չէ, իրականութեան չի համապատասխանում:

– Ես Շուշու քաղաքագլուխ եմ միայն, իմ իշխանութեանը ննթակայ չեն չրջանները, և ես ղրամ ստացել եմ քաղաքի պէտքերի համար միայն, ի՞նչ իրաւունքով պիտի ղրամ ստանայի չրջանների համար: Եւ ես ղրամը ստացել եմ աղաչանքով ու պաղատանքով, ճամբին ղրամները ամառւայ չոգին կապել եմ մարմնիս վրայ, չապիկի տակից և տառապանքով հասցրել քաղաք: Ճամբին, թէև Գանձակի կայարանում ընկերացել էի Նուբի փաշայի ուղարկած մարդկանց, բայց, այնուամենայնիւ, ամբողջ ճամբան ղողալով եմ եկել, չարունակ վախենում էի, թէ աւազակները կը յարձակուեն մեղ վրայ, կը կողոպտեն ինձ, և ես սևերես կը մնամ: Եւ ղրամն ամբողջովին ծախսւած է քաղաքի վրայ:

Քաղաքագլուխը խօսում է զրգռած տոնով ու բարձրաձայն. յանկարծ կից սենեակի դուռը բացւում, ներս է գալիս քաղաքագլխի եղբայրը, Իլիկօն, այլայլած, խոժոռած դէմքով և ատրճանակը ձեռքին կանգ առնում, խօսքն ուղղում եղբօրը՝ "Ախպէր, ովքե՞ր են այս մարդիկը, ինչ՞ է նրանց ուղում քեզնից, երկու հոգի մի անզամ եկան, սպառնացին, զնացին, իրենց քալատից ես տանը չեմ եղել, որ ցոյց տայի, թէ ինչ է նչանակում սպառնալիք կարդալը, հիմա էլ սրանք են եկել, ի՞նչ են ուղում քեզանից, հէնց այժմ մէկ-մէկ բոլորի դիակը կը փռեմ յատակին": Քաղաքագլուխը տեղից վեր թռնելով, ծունկի է գալիս իրենից փոքր եղբօր առջև, ողբերգական դէմք ընդունած, պաղատագին խնդրում է՝ "Իլիկօ, ի սէր Աստծոյ և Քրիստոսի, խնդրում, աղաչում եմ, արիւն չթափես, խնդրում եմ անցնես միւս սենեակը": Իլիկօն խոժոռ հայեացքն ուղղելով Ազգային Խորհրդի անդամներին, ինչպէս կասեն՝ աչքերը ոլորելով, դուրս է գնում:

Ազգային Խորհրդի անդամները ամենադոյդն չափով անակնկալի չեն մատնւում Իլիկօի օյինբազութիւնից, չատ պաղարիւն կերպով դիտում են տեսարանը մինչև վերջ և երբ Իլիկօն դուրս է գնում, Աչոտ Մելիք Յովսէփեանը ասում է՝ "Գերասիմ Իսակիչ, ինչո՞ւ համար էր այս կոմեդիան, մե՞ղ, թէ՞ Ազգային Խորհրդին վախեցնելու համար: Դուք մոռանում էք մի հանգամանք, որ երեքս ներկայացել ենք ոչ թէ անհատաբար, իբրև անպատասխանատու մարդիկ, այլ որպէս Ազգային Խորհրդի ներկայացուցիչներ: Գիտէք, որ Ազգային Խորհուրդը ընտրած է Ղարաբաղի Հայութեան բարձրագոյն լիազօր օրգանի՝ Զորրորդ Համագումարի կողմից և որի իշխանութիւնը տարածւում է ամբողջ Ղարաբաղի վրայ, որին պարտաւոր էք ենթարկւել և դուք: Թիֆլիսաբնակ այն չուչեցիները, որոնք տեղեկութիւն են տւել 750 հազար ռուբլու մասին, ճանաչւած ազգային գործիչներ են, ինչպէս գիտէք. ինչո՞ւ պիտի անհիչտ տեղեկութիւն տային, մանաւանդ որ իրենք մասնակից են եղել ղրամի հայթայթման գործին, որպէս ղարաբաղցիներ մեղնից ոչ պակաս մտահոգւած իրենց ծննդավայրին օգտակար լինելու համար: Մենք եկել ենք ձեր կարճ պատասխանը լսելու, պիտի վճարէ՞ք չրջաններին հասանելիք բաժինը, թէ՞ ոչ":

-Ես իմ խօսքի մէջ ասացի, որ ղրամը ծախսւած է ամբողջովին քաղաքի կարիքները հոգալով: 670 հազար ռուբլին ծախսւած է ութ-ինն ամսւայ ընթացքում: Գիտէք, որ ղրամը որքան արժէքաղրկւած է ներկայիս, և 670 հազարով հազիւ հնարաւոր է եղել քաղաքի պէտքերը հոգալ: Քաղաքային ինքնավարութեան հաշիւները կանոնաւոր են պահւած, որևէ աւելորդ ծախս չի կատարւած, և բոլոր ծախսերը կատարւած են Քաղաքային Վարչութեան որոշմամբ և արդարացուցիչ փաստաթղթերով:

Ազգային Խորհրդի ներկայացուցիչները հարցը սպառած համարելով դուրս են գալիս քաղաքագլխի բնակարանից:

Ապրիլ 18-ին տեղի ունեցած Ազգային Խորհրդի նիստում քննութեան առնուեց քաղաքագլխի տանը տեղի ունեցած տրագի-կոմեդիան: Մտքերի փոխանակութեան ընթացքին թէև տեղի ունեցածը ոչ ոք կանխամտածուած բան չհամարեց, սակայն համարուեց անհանդուրժելի: Շատ աւելի անհանդուրժելի և դատապարտելի համարուեց քաղաքագլխի անհատական ելոյթը Բագւի ռուսաց աղգային հաւաքատեղիում, որպէս Ղարաբաղի հայութեան իղձերի արտայայտիչ, յայտարարելով մեր ժողովրդի չնչուած ռուսական օրիենտացիա ունենալու մասին: Նա, Ազգային Խորհրդի կողմից ընտրուած յանձնախմբի մէկ անդամը լինելով, չպէտք է ինքնուրոյն, անկախ, մանաւանդ հակառակ մոմինտի պահանջի, որևէ քայլ անէր: Պէտք է որոշ միջոցի դիմել՝ կարճելու նրա թէ ձեռքը և թէ լեզուն: Որոչուեց խորհել այդ մասին առանձնապէս, ապա որոշում կայացնել, թէ ինչ միջոցի դիմել:

Նոյն օրը տեղի ունեցաւ նաև Հ.Յ.Դ. Ապառաժի Կ. Կ. -ի նիստը: Ինչպէս իր տեղում յիշուեց, 1918 թ. հոկտ. 22-ին խիստ զաղտնի տեղի ունեցած կուսակցական ժողովում ընտրուեց Կ.Կ.-ի կազմը երեք հոգուց՝ Հ. Մուսայէլեան, Աստուածատուր Աւետիսեան և Ե. Իչխանեան: Միաձայնութեամբ, ընտրուել էր Գրիգոր Ասրեանը, որը զարձաւ Կ.Կ -ի ներկայացուցիչ և նիստերին մասնակցում էր խորհրդակցական ձայնով, ապա, եթէ Կ.Կ. -ի անդամներից մէկը պակաս էր, նա պիտի բռնէր նրա տեղը: Կ.Կ.-ի նիստին զեկուցեցի քաղաքագլխի հետ ունեցած Ազգային Խորհրդի ներկայացուցիչների հանդիպման մասին, ինչպէս նաև Ազգային Խորհրդի որոշումը, որ պէտք է կտրուկ միջոցի դիմել՝ կարճելու քաղաքագլխի լեզուն ու ձեռքը:

Կենտրոնական Կոմիտէն կարճ մտքերի փոխանակութիւն ունենալով գտաւ, որ միակ միջոցը նրան քաղաքից հեռացնելն է, ուստի որոշուեց Ապառաժի Կենտրոնական Կոմիտէի անունից կտրուկ պահանջ դնել, որ 24 ժամւայ մէջ թողնի, հեռանայ քաղաքից: Ապա որոշուեց, որ Կենտրոնական Կոմիտէի կողմից ներկայանայ քաղաքագլխին Աստուր Աւետիսեանը, մեր դինւած մարտիկներից մէկի հետ միասին և Կ. Կ. -ի անունից պահանջէ հեռանալ 24 ժամւայ ընթացքում:

Նոյն օրը երեկոյեան Ա. Աւետիսեանը իրագործում է Կենտրոնական Կոմիտէի որոշումը, և ապրիլ 19-ին քաղաքագլուխը թողնում է Շուշին ու գնում Թիֆլիս:

ՀՐԴԵՀ ՇՈՒՇԻՈՒՄ

Ապրիլ 20-ին գիշերը Սերգէյ Բաղիրեանի տանը, երբ բոլորը քնած են լինում, խոհանոցի օջախը յաւ հանգցած չլինելու պատճառով, վառւում են օջախի երկար չոր փայտերը և վառւած փայտի մէկ կտորը ընկնում է խոհանոցի տախտակամածին և սկսում կամաց-կամաց վառել և առաւօտեան ժամը չորսին բռնկւում է խոհանոցի կից սենեակը. ծխի քուլաները ննջարանին հասնելով, Ս. Բաղիրեանը ընտանիքով փախչում է դուրս և ահազանգ հնչեցնում. արթնանում են հարևաններն ու ամբողջ Թաղը: Իսկոյն մէկը, ըստ ընկալեալ սովորութեան, վազում է մօտակայ եկեղեցին և ժամկոչին կարգադրում զանգերը հնչեցնել: Զանգերի ղօղանջը լսելով, ուրիշ Թաղերի մարդիկ էլ չտապալում են դէպքի վայրը: Շուչում տները իրար կպած լինելով, երբ տներից մէկը վառւում էր, հրդեհը տարածւում էր արագութեամբ միւս տներին, մանաւանդ երբ քամի էր լինում:

Մարդի Թամիրեանի, Սերգէյ Բաղիրեանի, Աչոտ Մելիք-Յովսէփեանի և Նիկ. Զուրաբեանի տները մէկ չարքի իրար կպած տներ են, հասարակական ակումբի, փոխադարձ վարկի դրամատան չէնքերի դիմաց: Ապրիլի 11-ին Շատիլվորդի հրամանը իրր թէ ընդունելով, լուր էինք տւել, որ ես հեռացել եմ քաղաքից կապիտան Արտ.Վարդապետեանի հետ միասին, մինչդեռ քաղաքից չէինք հեռացել, միայն թէ գերեզը դուրսը չէինք երևում: Հրդեհի վայրում խմբւած ահագին բազմութեան գոռում-գոչումը, միախառնւած եկեղեցու զանգերի ղօղանջին, խիստ ճնշիչ, ծանր տպաւորութիւն էին թողնում: Հանգիստ նստել տանը չէր կարելի, նոյնիսկ դատապարտելի էր: Հերն անիծած Շատիլվորդի, անմիջապէս արագ հագնւելով դուրս եկայ տնից: Երբ հասայ մեծ չուկան, տեսայ ահագին բազմութիւն, խռնւած ակումբի առջև, կանգնած իրարու հետ խօսում էին բարձրաձայն և թամաշա անում: Մարդիկ իրարու այնպէս էին կպել, որ կարծես ամբոխը միաձոյլ զանգւած էր: Ետևի չարքում նկատելով զարաբաղցի ծանօթ խանութպան Կարապետին, թևից քաշեցի, ետ նայեց, զարմացած հարցրեց՝ "Ե՞րբ էք եկել". "Երեկ երեկոյեան" պատասխանեցի, ապա ասացի, որ ճամբայ բաց անի, անցննենք առաջ:

–"Տղերք, ճամբայ տւէք," ասաց Կարապետը. ճամփայ բացւեց, առաջ անցանք, բոլորն էլ ծանօթ դէմքեր, իրարու հարցնում են՝ "Էս ե՞րբ է եկել": Փաղաքում արդէն տարածւած է եղել, որ Շատիլվորդի պահանջմամբ Արտ. Վարդապետականն ու ես հեռացել ենք քաղաքից: Եւ երբ ամբոխի միջից առաջ անցայ, դէմս եկաւ կոմիսար Ալիքս Բէկ Պիրումեանն ու ասաց դողդողալով խղճած ձայնով:

– Եթէ հրդեհի առաջը չկտրենք, կը հասնի մինչև Գևաւուր Ղալայի թաղը, և հարիւրաւոր տներ հրոյ ճարակ կը դառնան: Կրակը ուժեղ է, քաղաքը մի հին նասօս[12] (ջրհան մեքենայ) ունի, որը փոքր է, ուժեղ կերպով ջուր չի տալիս, որ թուլացնէ կրակը, մարդիկ էլ իրարու չեն լսում, թէև չարունակ զոռզոռում են :

– Դու անմիջապէս կարգադրիր միլիցիոներներին, բարձրաձայն կանչեն ղարաղչլաղցի Եղիշէին ու Աբրահամին, ապա մեր չրջանապետներին՝ Թոմաս Թարվերդեանին, Վանիա Նարինեանին, Զուիուո. Իսահակին, հաւանօրէն ամբոխի մէջ են, եթէ այստեղ չեն, թող անմիջապէս գնան՝ տներից բերեն:

Բարեբախտաբար բոլորն էլ ամբոխի մէջ էին, չուտով եկան, Եղիշէին և Աբրահամին ասացի, որ կանչեն ժողովրդի մէջ գտնուող իրենց գիւղացիներին, իսկ չրջանապետները կանչեն մեր բոլոր մարտիկներին: Եւ չուտով եկան ղարաղչլաղցիներն ու քաղաքի ինքնապաշտպանութեան մարտիկները, մօտ 350-360 հոգի: Ապա պատուիրեցի Ալեքօին, միլիցիոներների միջոցով տներից 40-50 դոյլեր հաւաքել: Պահանջածից չատ աւելի դոյլ հաւաքեց:

Եղիշէին, Աբրահամին, Թովմասին, Վանիային և Իսահակին, որպէս հրշէջ յանձնախմբի, բացատրեցի, թէ ինչպէս պիտի ջուրը մատակարարել: Բոլոր տղաները պիտի բաժանուեն երկու մասի, կազմեն երկու չարք և կանգնեն իրար դիմաց, սկսած ջրհորներից մինչև հրդեհած տունը, որտեղ կը գործէ հրշէջ խումբը: Մէկ չարքը ջրով լեցուն դոյլերը իրարու տալով կը հասցնեն հրշէջ խմբին, իսկ միւս չարքը դատարկ դոյլերը ետ նալով հրշէջ խմբից իրարու տալով կը հասցնեն ջրհան խմբին:

Անմիջապէս չարքերը կազմեցին, հրշէջ յանձնախմբի մեկ մասը ջրհորի[13] մօտ, միւս մասը հրդեհած տան մօտ կանգնեցին և բոլոր տղաները ուղիղ պէմ-դիմաց չարք կազմեցին:

Կրակը հասել էր Աչոտենց (Մելիք Յովսէփեան) տանը: Աչոտը կնոջ և երեխայի հետ ապաստանել էր դիմացի Գրիգոր Բաղդասեանի տանը: Եղիշէի, Վանեայի և տղաներից մի քանիսի հետ միասին լայն դարպասից մտանք Աչոտենց բակը: Մեզ հետևեցին և ուրիշները, ապա տղաները բարձրացան տանիքը և սկսեցին քանդել երկաթէ տանիքը, որպէսզի կրակը չտարածւի:

---

[12] Պոմպ (Ռուս.): (Խմբ.)

[13] Շուշին յայտնի է իր ջրհորներով. տուն չկայ, որ անձրևաջուր հաւաքելու համար չունենայ լայթի և մաքրութիւնների համար, իսկ չատ տներ, բացի անձրևաջրի հորից, ունեն նաև իսկական, յատուկ ժայռերով ջրի հորեր: Ջրհան մեքենան չատ փոքր էր. հազիւ մի բշտամասի հասնող ջուր էր տալիս, այն էլ չատ դանդաղ. արաւհետև հնացած էր ու մաշած: (Հեղ.)

Իրօք որ կրակը չատ ուժեղ էր, չնորհիւ արևելքից փչող "Ասկերանի" անունով քամու: Կէս ժամ չանցած, ներս գտնուողներս արդէն մրոտուել էինք: Տղերքը չէին թողնում, որ բանի ձեռք տամ, սակայն լսելու համբերութիւն չկար, ինչպէ՞ս կարելի էր կանգնած հանգիստ դիտել: Դրսից մեր տղաներից մէկը եկաւ և յայտնեց, որ մայորը իրենց սպաների հետ եկել, դուրսը թամաշա են անում: Ես, օգտուելով առիթից, դուրս եկայ Աչոտենց փողոցի վրայի պատչգամբը և ճիչտ դիմացը տեսայ մայոր Մոնկ Մէսընին, երկու սպաների հետ միասին: Երբ նկատեց ինձ, բարևեցի, ընդունելով րարևս, ժպտալով ձեռքով նչան արաւ, ենթադրեցի, թէ ուզում էր ներս գալ, ես բացասական նչան արի և անմիջապէս իջայ ցած, փողոց: Թարգմանը մօտն էր, մօտեցայ, ձեռք տւի, սեղմեց ձեռքս ու հարցրեց, թէ երբ եմ եկել, ասացի՝ երեկ երեկոյեան: "Շատ լաւ է եղել, որ եկել էք, ինչո՞վ կարող ենք օգտակար լինել, հրդեհը մարելու համար", հարցրեց մայորը:

Բացատրեցի, թէ ինչպէս ենք ուզում կրակի առջևը կտրել, որպէսզի չտարածւի, եթէ իրենց զինուորները օգնեն, չուտ կ' աւարտաւի գործը:

Մայորը քովը կանգնած զինուորին ինչ-որ կարգադրութիւն արաւ, և նա չտապ վազեց դէպի իրենց զօրանոցը, որ չատ մօտ էր: Անգլիական հնդիկ զինուորները գրաւել էին կաղակների նախկին զօրանոցի չէնքը: Հազիւ քառորդ ժամ էր անցել, հարիւրի չափ սիպայիներ եկան իրենց վրանների երկար, մօտ երեք մետրաչափ ձողերով, որոնց ծայրին ամրացւած էին կարթի պէս կեռ երկաթներ, և կարճ կացիններով: Սիպայիներն անմիջապէս գործի անցան, մի մասը բարձրանալով Աչոտենց և հարևան մէկ ուրիչ տան կտուր՝ որ նոր էր կրակ բռնել, սկսեցին քանդել երկաթէ տանիքը, իսկ զինուորների միւս մասը երկար ձողերի ծայրի կարթերով, տանիքը քաչում էին ցած: Մէկ ու կէս, երկու ժամ տևեց մինչև որ հրդեհի առաջն առնւեց, և ժողովուրդը կամաց-կամաց ցրւեց:

Մօտեցայ մայորին, չնորհակալութիւն յայտնեցի ցոյց տւած օգնութեան համար: Ասաց, եթէ հրդեհի հետևանքով ուրիչ որևէ աչխատանք կայ, զինուորները կարող են մնալ և աչխատել: Ասացի, որ մեծապէս գնահատելի է միսիայի վերաբերմունքը, չնորհակալ ենք, այլևս անելիք չկայ:

Մտայ Աչոտի մօտ՝ յայտնելու, որ վտանգը անցած պիտի համարել և կարող է վերադառնալ տուն: Աչոտը թուլակազմ մարդ լինելով, չէինք թողել, որ մասնակցէ հրդեհաչիջման աչխատանքին, մնացել էր "բանտարկւած" Գրիգոր Բաղդաթեանի մօտ: Նոր էի անցել Աչոտի մօտ, ներս մտաւ Հայրս և, նայելով Աչոտին, սկսեց հեկեկալ: Գրիգոր Բաղդաթեանը իր դպրոցական աչակերտներից

էր, սկսեց հանգստացնել հօրս. "Բան չկայ, Իվան բէկ, պատահմունք է, եղաւ, թուրքը կասէ՝ « օլաջաղա չարա եոխ »[14]":

Աչոտի հանգուցեալ հայրը իմ հօր պաշտօնակիցներից է եղել, և նրա մահանալուց յետոյ՝ կինը իրենց տան վերարկուներ պանագան խնդիրներով միշտ Աչոտի մեծ եղբօր, Նիկիտայի հետ կը գար մեզ մօտ, հօրս հետ խորհրդակցելու կամ խնդրելու, ինչ-որ դժւարութիւն վերացնելու համար, որ հայրս օգնէր իրենց: Հայրս ենթադրել էր, թէ Աչոտենց տունը ամբողջովին վաուել էր, ոչինչ չէր փրկւել, չատ էր աղքել և յուղմունքը զսպել չկարողանալով, փղձկացել էր ու հեկեկացել:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՒ ՇԱՏԻԼՎՈՐԴԸ

Ապրիլ 21-ին և 22-ին չրջաններից գալիս են ե-րդ Համագումարի համար գիւղացիութենան կողմից ընտրւած պատգամաւորները: Հրդեհի հետևանքով Ազգային Խորհրդի անդամները լնգալիզ[15] եղան:

Ապրիլ 23-ին անգլիական միսիան յայտնում է մեզ, որ գևներալ Շատիլվորդը առաւօտեան ժամանել է Շուշի, անձամբ ներկայ գտնելու Համագումարին, անմիջականօրէն խօսելու ժողովրդի ներկայացուցիչների հետ, Ադրբէջանի իշխանութիւնը ճանաչելու չուրջ: Միսիայի կողմից տեղեկաբեր սպան յայտնեց նաև Շատիլվորդի հրահանգ-պահանջը, որ ես ներկայ չգտնւեմ Համագումարին ու մասնակցութիւն չունենամ: Պատճա՞ռը, իբր թէ ես եմ խանգարում, որ համաձայնութիւն չի կայանում:

Կէսօրւայ մօտ էր, երբ միսիայի սպան եկաւ, յիշեցրեց յայտարարութիւնն արաւ ու գնաց: Ազգային Խորհուրդը որոշեց, որ թիւրիմացութենան տեղիք չտալու համար, ներկայ չգտնւեմ և չմասնակցեմ համագումարին, քանի Շատիլվորդը Շուշի էր, որ համագումարի բացումը կատարէ Աչոտ Մելիք-Յովսէփեանը, բացի այդ, խնդրենք թեմի Առաջնորդ Վահան Եպիսկոպոս Տէր Գէորգեանին՝ ներկայ գտնւի համագումարին, որը կընարէ նրան իբրև պատւոյ նախագահ, և այդպիսով, աւելի չուք կը տրւի համագումարին և աւելի տպաւորիչ կը լինի:

Առաջնորդը սիրով ընդունեց, երբ յայտնեցի Ազգային Խորհրդի որոշումը, ապա չատ գոհ մնաց, որ չպիտի Շատիլվորդի

---

[14] Լինելու բանը կը լինի (Թուրք.) (Խնբ.)
[15] Բայայալուեցին: (Խմբ.)

հրահանգին հակառակ ներկայ գտնւեմ համագումարին. "Ճիշտ էր վարուել, թող որ քո բացակայութեամբ պատգամաւորների խօսքը լսէ և ղգայ, որ Աղգային. Խորհուրդը ժողովրդի ցանկութիւնն է կատարել և ոչ թէ որևէ անհատի:"

Երեկոյեան ժամը 6-ին չրջաններից եկած քաղաքի պատգամաւորները հաւաքւում են թեմական դպրոցի ընդարձակ դահլիճում, որի բեմը զորգերով զարդարւած էր, մեծ սեղան էր դրւած բեմում, աթոռներ՝ դիւանի համար: Բեմին կից դասարաններից մէկն էր, որտեղ բեմի վրայ բացւող դռան ետև նստած լաւ լսում էի դահլիճում խօսողների ձայնը:

Սրբազանը ժամանակին եկել, բեմում դրաւել էր իրա համար պատրաստւած առանձին փոքր սեղանի մօտ դրւած երկու աթոռներից մէկը, իսկ միւսը մնում էր Շատիլվորդի համար: Սրբազանի ձախ կողմին, մի քիչ հեռու, մեծ սեղան էր դրւած դիւանի համար:

Աչոտը բացւած յայտարարելով համագումարը, առաջարկեց, որ Սրբազան Հայրը ընտրւի պատւոյ նախագահ. ժողովը միաձայնութեամբ և բաց քւէարկութեամբ ընտրութիւն կատարեց: Ապա առաջարկեց, որ դիւանի ընտրութիւն կատարւի: Ժողովը որոշեց բաց քւէարկութեամբ կատարել ընտրութիւնը: Ձանազան անուններ տրւեցին և մտքերի կարճ փոխանակութիւնից յետոյ միաձայնութեամբ ընտրեցին՝

որպէս նախագահ՝ Նիկ. Խալխանեան,
փոխ-նախագահ՝ Յովհաննէս Առաքելեան, մենչևիկներ.
քարտուղարներ՝ Արչակ Առստամեան, դաշնակցական,
Թէոդորոս Տ. Յովհաննիսեան, մենչևիկ:

Պատգամաւորների թիւը նոյնն էր, ինչ որ չորրորդ համագումարինն էր՝

22 գիւղական հասարակութիւններից՝ 3-ական հոգի, ընդամենը՝ 66 հոգի,
քաղաքի հայութիւնից 8,
կուսակցութիւններից 2-ական 10,
Ընդհանուր թիւը 84:

Աչոտը հանդամանօրէն ամփոփ ղեկուցում է Դ-րդ Համագումարից յետոյ տեղի ունեցած անցուդարձի մասին, գլխաւորապէս Աղրբէջանի իշխանութիւնը մեղ պարտադրելու նպատակով անգլիական հրամանատարութեան գործ դրած ճնշումների վերաբերեալ, ապա յայտնում է, որ Ե-րդ Համագումարը հրաւիրել է անգլիական հրամանատարութեան պահանջով, որպէսզի հրամանատարութիւնը անմիջականօրէն խօսէ հայ ժողովրդի ներկայացուցիչների հետ և լսէ նրանց խօսքը:

Միսիային յայտնուած էր, որ Համազումարի պատգամաւորները երեկոյեան ժամը 7-ին կազմ ու պատրաստ կը սպասեն ղօր. Շատիլվորդին: Աչոտը իւր խօսքը վերջացրել էր, որ ղրսից լուր տին ղօր. Շատիլվորդի և Մայոր Մոնկ Մէսընի ժամանման մասին: Աչոտը և Ադգային. Խորհրդի անդամները գնացին ընդառաջ և ղօրավարին ու մայորին ներս բերին: Ջօրավարը դրաւեց Սրբազանի աջ կողմի աթոռը, իսկ մայորը առաջին չարքում, Ադգ. Խորհրդի անդամների մօտ:

Գէներալ Շատիլվորդը թարգմանի միջոցով յայտնում է անգլիական Հրամանատարութեան որոշումը՝ թէ Ղարաբաղը պէտք է ճանաչէ Ադրբէջանի իշխանութիւնը, ենթարկուի նրան, մինչև որ Ադրբէջանի և Հայաստանի սահմանները ճշտուն հետագային:

Վահան Եպիսկոպոսը, որ տեղեակ էր Յով. Քաջազնունու և Հրանդ Բահաթրեանի տեսակցութեան ընթացքին տեղի ունեցած խօսակցութեանը, ասում է՝ "Սիրելիներ, ինչպէս գիտէք, Ադրբէջանի իշխանութիւնը ճանաչելու և նրան ենթարկուելու խնդիրը շատ սուր կերպարանք է ստացել: Ջօրավարի առաջարկից պիտի հասկանալ, որ Ադրբէջանի իշխանութիւնը ժամանակաւոր կերպով պիտի ճանաչել, իսկ Ղարաբաղի հարցը պիտի լուծւի հետագային, միջազգային վեհաժողովում: Այժմ միայն ժամանակաւոր կերպով Ադրբէջանի իշխանութիւնը ճանաչելու մասին է խօսքը":

Եպիսկոպոսը գիտակցաբար չէջտը դնում է ժամանակաւոր ճանաչելու առաջարկութեան վրայ, թերևս լինէր մէկը՝ առաջարկը պաչտօնականացնող:

Ջրաբերդի շրջանից եկած պատգամաւորներից մէկը, բարձրահասակ, թիկնեղ, վաթսունի սահմաններում, տպաւորիչ արտաքինով գիւղացի, մոլմանի[16] մեծ փափախը դնելով յատակին, բարձրանում է տեղից, խօսքն ուղղում Եպիսկոպոսին, տեղական բարբառով ասում.

-Սրբազան Հայր, գէներալը որ ասում է, թէ այսօր մենք ժամանակաւոր ընդունենք Ադրբէջանի իշխանութիւնը, վաղը կը դառնայ մշտական, դրա համար էլ մենք ժամանակաւոր էլ չենք կարող ընդունել Ադրբէջանի իշխանութիւնը:

Շատիլվորդի ցանկութեամբ գիւղացու խօսքերը թարգմանւում են անմիջապէս. նախագահը ռուսերէն գիւղացու

---

[16] «Մոլմանի» վրավրա. համոզվում են նաև՝ մոլթի, նոյնիսկ՝ «մոթալ» հնչնափոխուած, ապաուղած ձևերով. ճիշտը՝ «մոլթի վրավրա», հիմնականում դառան (նաև ոչխարի) մորթուց պատրաստուած հաստաթաղ գլխարկ, որը սովորաբար ընդգծում էր կրողի պատկանելը հաստատակուքեան ցածր խաւին: (Խմբ.)

ասածները յայտնում է անգլիացի թարգմանին, իսկ վերջինս անգլերէն՝ Շատիլվորդին:

Խօսք են առնում ուրիշ պատգամաւորներ, որոնք մասնակցել էին նախորդ համագումարներին և քաջ տեղեակ էին դրւած հարցերին՝ Մելքումեան Համբարձում, Մուրաղեան Բախչի, Գասպարեան Շահնազար և ուրիշներ, որոնք յիշեցնում են, որ նախորդ համագումարներում հանգամանօրէն քննւած է Ադրբէջանի պահանջը, և համագումարները միաձայն որոշմամբ յետ են մղել այդ ապօրինի պահանջը, համարելով այն ոտնձգութիւն: Եւ մեղ ընտրող ժողովուրդը աւելի քան ամուր կանգնած է իր դիրքում, մերժելով-մերժում է ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը: Եթէ անգլիական հրամանատարութիւնը վիճելի է համարում Ղարաբաղի հայութեան արդար պահանջը, որ Ղարաբաղը՝ հին հայկական Սիւնիքը, Հայաստանին է պատկանում, և անհրաժեշտ է համարում ժամանակաւորապէս Ղարաբաղը ենթարկել Ադրբէջանին, մինչև հարցի վերջնական լուծումը հետագային, միջազգային վեհաժողովում, 'ապա չատ աւելի գործնական կը լինի և ընդունելի, եթէ ժամանակաւորապէս անգլիական մի կոմիսար նշանակւի Ղարաբաղը կառավարելու, մինչև հարցի վերջնական լուծումը, ուստի մենք լիազօրւած ենք ժողովրդի կողմից մերժելու Ադրբէջանի իշխանութիւնը:

Պատգամաւորների խօսածները թարգմանում են Շատիլվորդին, սակայն նա պնդում է, թէ Ադրբէջանի քոչը սարերը բարձրանալու համար պէտք է Ադրբէջանը իր սահմաններում ունենայ Ղարաբաղը, որպէսզի տափաստանի դիւղացիութիւնը կարողանայ առանց արգելքի ամառը բարձրանայ սարերը: Մի չարք պատգամաւորներ, խօսք առնելով, վերյիշում են նախորդ տարւայ զարնանը տեղի ունեցած համագումարների որոշումը, որ պէտք է թոյլ տալ քոչը բարձրանայ սարերը պայմանաւ, որ թիւրիմացութիւններից խուսափելու համար, քոչւորները բարձրանան առանց զէնքի, Ղարադաղիից սկսած մինչև Խալֆալու, Շուշուց հինգ կիլոմետր դէպի հիւսիս արևմուտք, հայ միլիցիոներները կը պահպանեն կարգ ու կանոն, որ քոչը խաղաղ կերպով կարողանայ բարձրանալ:

Ահա այդ ժամանակ Աչոտ Մելիք-Յովսէփեանն է խօսք առնում և արտայայտում Ազգային Խորհրդի վերջին անդամ միաձայնութեամբ ընդունած հետևեալ ձևը Ղարաբաղի հարցի ժամանակաւոր տնօրինման համար, այն է՝ "Անգլիական հրամանատարութիւնը նշանակէ անգլիացի մէկ դիւնորականի, որպէս կոմիսար Ղարաբաղի. կոմիսարը կունենայ հաւասար թւով օգնականներ երկու ազգութիւնից: Ինչ կը մնայ քոչի բարձրանալուն սարերը, Ղարաբաղի հայութիւնը պատրաստ է միշտ թոյլ տալու, որ

տափաստանի թուրք գիւղացիութիւնը աղատօրէն բարձրանայ, մինչև նրա նստակեաց դառնալը":

Թարգմանաբար պատգամաւորների խօսքերը լսելուց յետոյ, ըստ երևոյթին բաւարարւած չլինելով, Շատիլվորդը առաջարկում է ըղձօրէն մտածել դրւած խնդիրների չուրջ, ճիչտ եղրակացութեան յանգելու համար, ապա թողնում է ժողովը և հեռանում:

Ապրիլ 24-ին անգլիական միսիայից յայտնում են, որ Շատիլվորդը հրաւիրում է ինձ իր մօտ՝ անձամբ բացատրութիւններ տալու: Մեր ընկերները, տեղեկանալով Շատիլվորդի կարգադրութեան մասին, միտք են յղանում, որ եթէ ինձ ձերբակալելու լինեն անգլիացիք, ապա իրենք չանան փախցնել ինձ: Սակայն ձերբակալելու միտք չէր ունեցել Շատիլվորդը: Առաւօտեան ժամը 10-ին ներկայացայ Շատիլվորդին, որը իջևանել էր միսիայի վարձած չէնքում, Աբրահամ և Կարապետ Զառաֆեանների տանը:

Շատիլվորդը իր դժգոհութիւնն է յայտնում, որ մենք ընդդիմանում ենք անգլիական հրամանատարութեան կարգադրութեանը և չենք ճանաչում Ադրբէջանի իշխանութիւնը: Ասում է, որ իրեն հասած տեղեկութիւններից երևում է, որ Ազգային Խորհուրդը և մասնաւորապէս ես, գրգռում ենք ժողովրդին, արգելքներ ենք յարուցում: Ապա խօսքն ուղղելով ինձ, ասում է՝ "դուք եթէ ցանկանաք, նախ կը համոզէք ձեր ընկերներին, ապա ընկերներով միասին. ժողովրդին, որ ընդունեն անգլիական հրամանատարութեան կարգադրութիւնը, ճանաչեն Ադրբէջանի իշխանութիւնը, և քոչը ժամանակին սարերը բարձրանալ կարողանայ:"

Ասացի, պարոն Զօրավար, համաձայն ձեր ցանկութեան, ես երեկ ներկայ չեմ գտնւել համագումարի նիստին, չեմ մասնակցել և դուրսը տեղի ունեցած խօսակցութիւններին: Ժողովը սկսւեց, և դուք անձամբ չփում ունեցաք ժողովրդի ներկայացուցիչների հետ, առաջարկեցիք, որ ընդունեն, ճանաչեն Ադրբէջանի իշխանութիւնը և ժամանակաւորապէս ենթարկւեն նրան, բայց մերժում ստացաք: Ձեր տեղեկատուները ճիչտ տեղեկութիւններ չեն տւած ձեզ: Ազգային Խորհուրդը, առաւել ևս նրա մէկ անդամը, չեն կարող ժողովրդի համար պարտադիր որոչումներ կայացնել կամ հրամաններ արձակել ժողովրդին: Մենք պատմութիւնից գիտենք, որ Անգլիան ամէնահին պառլամենտական երկիրն է աչխարհում, գիտենք, որ Անգլիական կառավարութիւնը, Նախարարների Խորհուրդը չեն կարող մի քայլ անել, առանց պառլամենտի որոչման կամ համաձայնութեան, առաւել ևս նախարարներից մէկնումէկը չի կարող: Մեր համագումարն էլ մինիատիւր պառլամենտ է, որի

իշխանութիւնը տարածւում է ամբողջ Ղարաբաղում, և ժողովուրդը ենթակայ է համազումարի որոշումներին: Աղգային Խորհուրդը ընտրած է համազումարի կողմից, որպէս գործադիր մարմին, որ պարտաւոր է գործել համազումարի որոշմանց սահմաններում ինքնուրոյնաբար որևէ քայլ անել, առաւել ևս՝ չեղում կատարել չի կարող: Աղգային Խորհուրդը պատասխանատու է համազումարին : Եւ եթէ Աղգային Խորհուրդը մերժել է ճանաչել Աղրբէջանի իշխանութեանը, նա կատարել է ժողովրդի կամքը, ցանկութիւնը, որը արտայայտել են իր ներկայացուցիչները համազումարներում:

Պարոն Զօրավար, դուք պէտք է նկատի ունենաք, որ Ղարաբաղը Հայաստանի ընազաւառներից մէկն է, հարուստ իր հազարամեայ պատմական յիշատակներով ու մշակոյթով, թուրքերը միջին դարերում, Զինգիզխանի սկսած մոնղոլական արշաւանքների չնորհիւ, հասել են մեր երկիրը և տեղ գրաւել մեր երկրում: Դեռ բոլորովին նստակեաց չէ դարձած այս ժողովուրդը, կիսով նոմադ[17] է մնացած, և դարերի ընթացքում մշակոյթ չէ ստեղծած: Դուք քոչի խնդիրն էք յարուցում, մենք արդէն անցեալ տարի, նախ քան տաճիկների գալը, ընդառաջել ենք թուրքերի ցանկութեան, որպէս հարևան ժողովրդի, թոյլ ենք տւել քոչը բարձրանայ լեռները մեր ղինւած ուժերի հսկողութեամբ, որպէսզի ապահով անցնեն ճանապարհը, և համաձայնել ենք նոյնը չարունակել յաջորդ տարիներին: Երբ տաճիկները դրաւեցին ամբողջ Աղրբէջանը և պահանջ դրին, որ մեր ժողովուրդը ենթարկւի Աղրբէջանի իշխանութեան, ժողովուրդը մերժեց կտրականօրէն, սակայն մեր մէջ հաստատւած փոքրամասնութիւն կազմող թուրքերի հետ համաձայնութիւն կայացնելով, ընտրել էինք հայ-թրքական խառն կոմիտէ, որը չատ լաւ կառավարեց մեր չրջանը մինչև Բագւի անկումը: Երբ տաճիկները մուտք գործեցին Ղարաբաղ, ցրեցին հայ-թրքական կոմիտէն և բռնի աղրբէջանա-տաճկական իրենց իշխանութիւնը պարտադրեցին: Բագւում տաճիկներն ու աղրբէջանցիները հազարաւոր հայեր կոտորեցին, դա չատ ծանր էր աղդել մեր ժողովրդի վրայ, և եթէ հնարաւորութիւն ունենար, պիտի թոյլ չտար տաճիկներին մուտք գործելու Ղարաբաղ, բայց ի վիճակի չէր և հարկադրւած տեղի տւեց: Աղրբէջանի կառավարութիւնը, որպէս մասնակից Բագւի հայկական կոտորածի, տաճիկ կառավարութեան հետ համահաւասար վարկաբեկւած է մեր ժողովրդի աչքում և նա հոգեկանօրէն չի հաչտւում նրան ենթարկւելու մտքի հետ:

Եւ այդ բոլորից յետոյ, քանի որ անգլիական հրամանատարութիւնը պնդում է ժամանակաւոր կերպով ճանաչել ու ենթարկւել Աղրբէջանի իշխանութեանը, Աղգային Խորհուրդը հանդամանօրէն անդրադառնալով հարցին, յանդել է այն եզրակացութեան, որ

[17] Քոչւորների հին յատկան անւանումը: (Խմբ.)

լաւագոյն ձևն այն է, որ անգլիական Հրամանատարութիւնը իր դիւնորականներից մէկին նչանակէ գևներալ-կոմիսար Ղարաբաղի, հաւասար թուով հայ և թուրք օգնականների հետ չրջանը կառավարելու, մինչև Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը: Այնուհետև Շատիլվորդը կողմնակի զանազան հարցեր տուաւ:

– Դուք ամուսնացած է՞ք և ընտանիք ունէք՞:

– Ոչ, ամուսնացած չեմ, բայց ընտանիք ունեմ, հայր, մայր, եղբայր, քոյր:

– Յեղափոխութիւնից առաջ ի՞նչ պաշտօն ունէիք:

–Պաշտօն չունէի, ուսանող էի Պետերբուրգի զիւղատնտեսական ճեմարանում:

–Ես ցանկանում եմ անձամբ խօսել Համազումարի պատգամաւորներից մէկ-երկուսի հետ:

–Լաւ միտք է, ես համազումարի դիւանին կարող եմ ասել, որ ուղարկէ ձեղ մօտ պատգամաւորներից, որոնք կուզենան խօսել ձեղ հետ:

Շատիլվորդի մօտից դուրս գալով, դնացի ուզիղ համազումար, ամփոփ կերպով պատմեցի տեղի ունեցած խօսակցութիւնը, ապա յայտնեցի, որ Շատիլվորդը ցանկութիւն ունի պատգամաւորներից մի քանիսի հետ անձամբ խօսելու:

Հադրութի պատգամաւոր Ստեփան Ստեփաննանը (ուսուցիչ) ցանկութիւն յայտնեց ներկայանալու և հէնց յաջորդ օրը ներկայացաւ Շատիլվորդին, որը զարմանալ նոյն հարցերն է չօչափում՝ Ադրբէջանի իշխանութիւնը ճանաչել և ևնթարկվել նրան, թոյլ տալու, որ քոչէը բարձրանայ սարերը:

Ստեփանն էլ նոյն պատասխաններն է տալիս:Արդէն ուրիչ պատասխան էլ չունէինք: Այդ խնդիրների չուրջ այնքան է խօսւել, որ բոլորը անգիր արած ոտանաւորի պէս միատեսակ պատասխաններ ունէին:

Հետաքրքիր դրոյց է ունենում Շատիլվորդը Ստեփանի հետ :

– Դուք երկրագործ է՞ք:

– Ոչ, ես մեր զիւղի դպրոցի աւագ ուսուցիչն եմ:

– Ձեր ստացած տոճիկը բաւարարու՞մ է ձեղ, ձեր բոլոր կարիքները հոգալ կարողանու՞մ էք:

– Ունեմ սեպհական այգի, պակասը լրանում է այգու եկամուտով:

– Ամուսնացած է՞ք:

– Այո:

– Քանի՞ հոգուց է բաղկացած ձեր ընտանիքը:

– Տասներկու հոգուց՝ կինս, ես և տաս տղաներս:

– Եւ դուք այդպիսի բազմանդամ ընտանիքով չէ՞ք ուզում ճանաչել և ևնթարկվել Ադրբէջանի իշխանութեանը:

– Այո, ես չեմ ճանաչում Ադրբէջանի իշխանութիւնը, որին պիտի դիմադրեմ, ու եթէ պահանջ ղգացւի արիւն թափելու, ես իմ տասը տղաների հետ առաջին չարքերում կը լինեմ Ղարաբաղում, որը հազարաւոր տարիներից ի վեր մերն է եղել: Թուրքը եկաւոր տարը է, բռնի է տեղ դրաւել մեր մէջ, բայց դա պատճառ չէ, որ մեր հարազատ երկիրը իր սեպհականութիւնը համարի: Ինձ համազումարի պատգամաւոր ընտրող ժողովուրդը խստիւ հրահանգել է՝ չճանաչել և չհնթարկւել Ադրբէջանի իշխանութեան: Ես պատասխանատու եմ ինձ ընտրող ժողովրդի առջև և նրա կամքին հակառակ ընթանալ չեմ կարող: Վերջապէս, որպէս ղարաբաղցի մէկ անհատ, գտնում եմ միանգամայն ապօրինի Ադրբէջանի պահանջը, որ ճանաչենք իր իշխանութիւնը. ուստի խղճիս դէմ մեղանչել չեմ կարող: Մենք մեր համազումարում արդէն որոշ համաձայնութիւն կայացնելու աշխատանք ենք թափում, ինչպէս ձեր ներկայութեամբ խօսւեց, որ դուք ձեր զինուորականներից մէկին նչանակէք զհներալ-կոմիսար, հաւասար թւով հայ և թուրք օգնականներով ղեկավարելու Ղարաբաղը, մինչև հարցի վերջնական լուծումը: Քոչը, ինչպէս անցեալում է եղել, նոյն ձևով սար բարձրանալու հնարաւորութիւնը կունենայ, առանց մեր կողմից Ադրբէջանի իշխանութիւնը ճանաչելու:

Ստեփան Ստեփանեանին յաջորդում են ուրիշ պատգամաւորներ՝ Ալէքսանդր Մելիք Եգանեան, Քոչարեան Յակոբ, Սուքիասեան Արտեմ, և բոլորը գրեթէ նոյն ձևի պատասխան են տալիս Շատիլվորդին:

Հարկաւ, Շատիլվորդը գոհ չմնաց ոչ համազումարից, և ոչ անհատների հետ ունեցած խօսակցութիւնից, և ապրիլ 26-ին մեկնեց Շուշուց, և համազումարը կանոնաւոր կերպով չարունակեց իւր աշխատանքները, քննութեան առնելով օրակարգի հարցերը.

ա) Ադրբէջանի նահանգապետութեան հարցը,
բ) Վարչական մարմնի վերակազմութեան հարցը,
գ) Շրջանային խորհուրդների վերակազմութիւն,
դ) Դրամական հաչիւներ,
ե) Ազգ. Խորհրդի գործունէութեան չուրջ զեկուցում,
զ) Քոչի խնդիրը,
է) Ազգ. Խորհրդի հրաժարականը և նոր ընտրութիւն:

Համագումարը իւրաքանչիւր հարցի չուրջ հանգամանօրէն մտքերի փոխանակութիւն է կատարում մինչև փակման օրը՝ ապրիլի 29-ը:

Համագումարի ընթացքին՝ ապրիլ 26-ին, գալիս է Բագւի Կենտրոնական Կոմիտէի սուրհանդակ ընկ. Ռուբէն Տէր Աստուածատրեանը, նամակներ է բերում Կ. Կ. -ից ու Ազգային.

Խորհրդից, որոնք յորդորում են մնալ նոյն դիրքում, չճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը:

Նոյն օրւայ նիստին մէկ էլ տեսանք՝ ներս մտաւ մեր հին, երկրորդ սերնդի ընկերներից Միսակ Տէր Դանիէլեանը, զրչանունով Գնթունի և կուսակցական չարքերում Արամայիս մականուններով յայտնի: Արամայիսը լուռ գրաւեց միջին չարքերի աթոռներից մէկը: Պատգամաւորներից որոշ անհատներ միայն լաւ ճանաչում ու գիտէին Արամայիսին: Վեր կացայ, մօտեցայ և կամացուկ ասացի, որ իրա սենեակն անցնի: Մեր անչափ սիրած, յարգած, անձնազոհ, չիտակ ու աղնիւ հին ընկերներից, որի հետ անձնական սերտ ու մտերիմ կապ ենք ունեցել յեղափոխութիւնից առաջ, մանաւանդ Լիժինեան հալածանքների օրերին: Փիրջամալ գիւղացի էր, Մածոն Խեչոյի մանկութեան և դպրոցական (Շուչու թեմական) մտերիմ ընկերն ու համագիւղացին: Ողջագուրելով համառօտակի պատմեց Շուշի գալու չարժառիթի մասին, որ ինքն է Կ. Կ-ին առաջարկել՝ գալ Շուշի, Ազգային Խորհրդին օգտակար լինելու նպատակով: Իր համաձայնութիւնն առնելով, համագումարին ներկայացրի, յայտնելով, թէ ընկերը կարող է զեկուցել Բագւում և Հիւսիսային Կովկասում տեղի ունեցած անցուդարձերի մասին առ ի տեղեկութիւն: Պատգամաւորները բուռն հետաքրքրութեամբ ցանկութիւն յայտնեցին, և Արամայիսը մէկ ժամից աւելի զեկուցեց թէ Բագւայ դէպքերի, հայկական կոտորածի, և թէ Հիւսիսային Կովկասում տեղի ունեցած ու չարունակւող սահմռկեցուցիչ քաղաքացիական կռիւների մասին: Ապա յայտնեց, մասնաւորապէս Ղարաբաղի հարցի չուրջ բացարնակ ոչ միայն ղարաբաղցի, այլ և բոլոր հայերի կարծիքը , տեսակէտը, որ չպէտք է ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը և պէտք է ամուր մնալ դիրքերում:

Ապրիլ 27-ին Գօրիսից եկաւ սուրհանդակ Զաքար Առաքելեանը, բերելով Արսէն Շահմազեանի նամակը, որով նա չնորհաւորում է Ե-րդ Համագումարի բացումը և խրախուսում միահամուռ ջանքերով պահպանել դիրքերը, չճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը: Ապա յայտնում է մաղթում համագումարին՝ աշխատանքները արդիւնաւէտ կերպով կատարելու:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ա) Ես զեկուցեցի չորրորդ համագումարի ընտրած Ազգային Խորհրդի մէկ ամիս տասն օրւայ գործունէութեան մասին, ապա յայտնեցի, որ Ազգային Խորհուրդը իւր հրաժարականն է ներկայացնում և առաջարկում նոր ընտրութիւն կատարել, որովհետև Խորհրդի անդամներից մէկը, Իշխան Միրզաբէկեան,

վախճանել է, երկու անդամները՝ Բալայեան և Ջառաֆեան, աքսորուել են Շուշուց, խորհրդի նախագահը գնացել է Բագու, ներկայացել Շատիլվորդին Ազգային Խորհրդի կողմից, և Շատիլվորդը արդիլել է նրա վերադարձը Շուշի:

Պատգամաւորները տեղերից բացականչութիւններ արին, որ Ազգային Խորհրդի հրաժարականը չպիտի ընդունել: Նախագահը միջամտեց, չեչտելով, որ այդ հարցին համազումարը կանդրադառնայ իր աշխատանքների աւարտին:

բ)Ադրբէջանի կողմից նշանակուած Ղարաբաղի նահանգապետի վերաբերեալ համազումարը արտայայտեց իր տեսակէտը, թէ Ադրբէջանի կառավարութիւնը պարզապէս ոտնձգութիւն է կատարել նահանգապետ նշանակելով, ուստի պէտք է միահամուռ ընդդիմութիւն ցոյց տալ, բնաւ չճանաչել Ադրբէջանի նահանգապետին, որպէս այդպիսին:

գ) Որպէսզի հայ և թուրք ժողովուրդների միջև որևէ թիւրիմացութիւն տեղի չունենայ և վերջ տրւի Ադրբէջանի ոտնձգութիւններին, անգլիական հրամանատարութիւնը իր կողմից մէկ անգլիացի զինուորականի նշանակէ որպէս գեներալ-կոմիսար Ղարաբաղի վրայ: Գեներալ-կոմիսարը կունենայ երկու ժողովրդից հաւասար թւով օգնականներ, աւելի ճիշտ՝ երկու ժողովրդից հաւասար թւով ներկայացուցիչները կը կազմեն հայ-թրքական խորհուրդ, գեներալ- կոմիսարի հետ միասնաբար աշխատելով:

դ) Բոլոր շրջաններում կազմելու է շրջանային գործադիր խորհուրդներ, որոնք պիտի կատարեն նախկին գործադիր մարմինների դերը, նպաստելով թէ շրջանի վարչական աշխատանքների կանոնաւորման և թէ ինքնապաշտպա- նութեան ղեկավարներին:

ե)Ազգային Խորհրդի ստացած զումարների վերաբերեալ սխալ տեղեկութիւններ էր հասած շրջանները, թէ իբր միլիոններ են ստացւած, և դրամը ծախսւում է միայն քաղաքում: Այդ առթիւ կարճ վիճաբանութիւն տեղի ունեցաւ այն մասին, թէ ինչպէս պիտի բաշխուեն դրամները: Ազգային Խորհրդի գանձապահ- հաշւապահը կարդաց իր կազմած հաշւեկշիռը, որից պարզ տեսան, որ Ազգային Խորհուրդը ստացել է Բագւի Ազգային Խորհրդից, բժ. Ռուբէն Տէր Ստեփանեանի միջոցով՝ 400.000 ռուբլի, Զանգեզուր-Ղարաբաղի նահանգապետ Արսէն Շահմազեանից, Մելիքսէթ Եսայեանի միջոցով 100,000 ռուբլի Բագւի Ազգային Խորհրդից, Հր. Բահաթրեանի և Ան. Տէր Միքայէլեանի միջոցով 500.000 ռուբլի դումար, ընդամէնը՝ 1,000,000 ռուբլի:

Այս գումարից չատ քիչ դրամ է ծախսւած քաղաքի նորակազմ զինուորական վաչտի պէտքերը հոգալու նպատակով՝

20,000 ռուբլու սահմաններում: Մնացորդ գումարի չուրջ, մտքերի փոխանակութիւն ունենալով, Համագումարը որոշում է դրամը ծախսել ընդհանրական և վարչական կարիքները հոգալու համար:

ղ) Քոչի վերաբերեալ Համագումարը մտքերի փոխանակութիւն ունենալով գտնում է, որ ամառը պէտք է տափաստանի Թրքութիւնը իր հօտերը բարձրացնի սարերը, անասունները կորստեան չմատնելու համար: Եւ քանի դեռ Թուրք գիւղացիութիւնը բոլորովին նստակեաց չի դարձել, բարի դրացիական յարաբերութիւնները չխախտելու համար, պէտք է ղիջող լինել ու Թոյլ տալ, որ Թուրք գիւղացիութիւնը բարձրանայ սարերը: Համագումարը վստահ է, որ Ղարաբաղը Հայաստանին կցելուց յետոյ, ապագայ Հայաստանի կառավարութիւնը միշտ էլ կընդառաջէ դրացի Թուրք գիւղացիութեանը, բաւարարելու նրա կենսական այդ պահանջին:

է) Ընտրութիւն Ազգային Խորհրդի նոր կազմի: Պատգամաւորներից և ոչ մէկը համաձայն չեղաւ նոր կազմ ընտրելու, ամէնքը պահանջում էին, որ Զորրորդ Համագումարից ընտրուած Ազգային Խորհուրդը չարունակէ իր ստանձնած պարտականութիւնները, սակայն եթէ կարիք ղգայ օգնող ուժերի իր կազմի մէջ, ինքը կարող է, կոօպտացիայի իրաւունքով, յարմար համարած մարդկանց հրաւիրել կազմի մէջ, ուստի Համագումարը որոշեց՝ չընդունել Ազգային Խորհրդի հրաժարականը, Թողնել նոյնը անփոփոխ:

Համագումարի որոշմամբ խմբագրւում է մի յայտարարութիւն Ղարաբաղի հայութեան անունից և Ղարաբաղի վերաբերեալ, որ Ղարաբաղը ի սկզբանէ եղել է Հայաստանի անբաժան մասը, որպէս նրա բնագաւառներից մէկը, և որպէս այդպիսին, պիտի կցւի Հայաստանին: Մերժել և ոչ մի կերպ չճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը:

ՇԱՏԻԼՎՈՐԴԻ ՀՐԱՀԱՆԳ – ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ապրիլի 28-ին սիպայինները քաղաքի գլխաւոր փողոցների երկայնքին, բազմաթիւ տեղերում պատերին են փակցնում գեներալ Շատիլվորդի հրահանգ-կարգադրութիւնը, Թէ անգլիական հրամանատարութեան որոշմամբ Զանգեզուր-Ղարաբաղը պիտի ճանաչէ Ադրբէջանի իշխանութիւնը, ենթարկւի նրա իշխանութեանը: Յայտարարութիւնը ռուսերէն լեզուով է խմբագրւած և հաւանօրէն, Բագւում, որովհետև Շուշու Թուրքերը տպագրական մամուլ չունէին, իրենց անհրաժեշտ տպագրական գործերը պատւիրում էին հայկական տպարաններին:

Համագումարի դիւանի կարգադրութեամբ Համագումարի անունից խմբագրւած յայտարարութիւնը անմիջապէս տպագրւում և փակցւում է Շատիլվորդի յայտարարութեան կողքին: Երկու ժամ չէր անցել, սիպայիները խմբերի բաժանւած, չրջում էին փողոցներում և պոկում Համագումարի յայտարարութիւնը: Երկրորդ անգամ Համագումարի յայտարարութիւնը փակցրին նոյն տեղերում և երկրորդ անգամ գարձեալ սիպայիները պոկեցին, ուստի կարգադրւեց, որ Համագումարի յայտարարութիւնը փակցւի ուղղակի Շատիլվորդի յայտարարութեան վրայ, և երրորդ անգամ սիպայիները տեսնելով Շատիլվորդի յայտարարութիւնը անհետացած, Համագումարի յայտարարութիւնը առանձին պոկեցին կամ փչացրին. սակայն երկրորդ անգամ Շատիլվորդի յայտարարութիւնը չներւաց պատերին, ըստ երևոյթին ինչ որ ունեցել էին, փակցրել էին, պահեստի մաս չէին թողել:

Ապրիլ 29-ին Համագումարի վերջին նիստն է, քարտուղարները նախորդ նիստի արձանագրութիւնն են կարդում և ուղղումներ կատարում պատգամաւորների կողմից: Համագումարի նիստը չփակւած, Մարդի Դաղեանի հիւրանոցի ծառայողը լուր ըերաւ, թէ Հայաստանի կառավարութեան կողմից եկել է Միչա Արղումանեանը և ցանկանում է հանդիպել Ազգային Խորհրդի անդամների հետ: Դիւանը երկտող մի զրութեամբ յայտնեց Մ. Արղումանեանին, թէ քանի որ Համագումարի վերջին նիստն է, ուստի ցանկալի է, որ Հայաստանի ներկայացուցիչը բարեհաճի ներկայ գտնել նիստին, որպէսզի պատգամաւորները անմիջականօրէն լսեն Հայաստանի կառավարութեան ներկայացուցչի խօսքը և անձամբ նրան յայտնեն ժողովրդի ցանկութիւնները:

Միչա Արղումանեանը գնդապետութեան աստիճան ստացած, երկու գլխապետների՝ Գագա Տէր Օհաննեսի և Ռուբէն Կասումեանի հետ միասին, եկան Համագումար: Նա ամփոփ կերպով դնկուցեց Հայաստանի վիճակի մասին, Հանրապետութեան հռչակելուց ի վեր, նկարագրելով ծանր տագնապալի կացութիւնը, որ տաճկական հորդաների խուժումի հետևանքով էր ստեղծւել թէ քաղաքականապէս և թէ տնտեսապէս, աւելացրած՝ սոսկալի սովը և համաճարակ հիւանդութիւնները, որոնց պատճառով բոլորովին քամւեց, ուժասպառ եղաւ մեր ժողովուրդը: Ապա խօսքը մասնաւորելով Ղարաբաղ-Զանգեղուրի հարցի չուրջ, յայտնեց, որ Հայաստանի կառավարութիւնը ուժեղ կերպով ըողոքել է դաչնակից հրամանատարութեանն Ադրբէջանի ոտնձգութեան դէմ, որ Զանգեղուր-Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է կազմում, որտեղ Թրքութիւնը փոքրամասնութիւն է, որպէս եկւոր տարր: Ապօրինի է Ադրբէջանի կողմից Զանգեղուր-Ղարաբաղի

նահանգապետ նչանակելը, ուստի Հայաստանի կառավարութեան որոչմամբ նկել է ինքը, որ տեղի վրայ վերահասու լինի, չարունակ չփման մէջ լինելով անգլիական միսիայի հետ: Ապա Արղումանեանը դրւատելով Զանգեզուր-Ղարաբաղի հայութեան բռնած դիրքը, որ դիմադրել է Աղբրէջանի ոտնձգութիւններին, վստահութիւն է յայտնում, որ ժողովուրդը անսասան կը մնայ իր դիրքում:

Նախագահը, չնորհակալութիւն յայտնելով Մ. Արղումանեանին իր հաղորդած տեղեկութիւնների համար, ասաց, որ համագումարի աչխատանքների մասին կը տեղեկագրւի Հայաստանի կառավարութեանը, վստահ, որ անհրաժեչտ միջոցների կը դիմէ, վերջ տալու համար Աղբրէջանի ոտնձգութիւններին, ապա յայտարարեց համագումարը փակւած:

Ապրիլ 30-ին Սուլթանովը պաչտօնական գրութիւններ է ուղղում Շուչու պետական հաստատութիւններին՝ գանձարանի պետին, հաչտարար դատաւորին, ռէալական և քաղաքային դպրոցների, տղայոց ու "Մարինսկա" աղջկանց պրոգիմնազիայի տեսուչներին, որ ներկայանան նահանգապետարան ու ղեկուցեն իրենց հաստատութիւնների մասին: Բոլոր հաստատութիւնների ղեկավարները մերժում են ներկայանալ Սուլթանովին : Ռէալական դպրոցի տեսուչ Ն. Պետրովը, քաղաքային դպրոցի տեսուչ Իվ. Բազդրսկին, Մարինսկա պրոգիմնազիայի տեսչուհի Մ. Միխայլովան կտրականօրէն յայտարարում են, որ իրենք ենթակայ չեն իչխանութեան, առաւել ևս մի նահանգապետի, որին չի ճանաչում ժողովուրդը, այն ժողովուրդը, որի զաւակների կրթական գործն են վարում իրենք:

Ամէն անգամ Սուլթանովը, իր գոյութիւնը ղգացնելու նպատակով որևէ միջոցի դիմելով, աւելի և աւելի էր հայութեանը զրգռում իր դէմ: Աղբրէջանը ծաղր ու ծանակի նիւթ էր դարձել նոյն իսկ երեխաների բերնում կամ գործածւում էր իբրև հայհոյական բառ: Երեխաներն ու պատանիները խաղի ժամանակ, երբ յանկարծ վէճ կը սկսւէր, խիստ բարկացած իրարու հայհոյում էին՝ աղբրէջան աղբրէջանի տղայ, ասելով: Աղբրէջանը դարձել էր հասարակ բառ՝ աւանակ, էչ կամ նման այլ հասկացողութեամբ:

Եւ ամէն անգամ, երբ Սուլթանովը որևէ միջոցի էր դիմում՝ մեղ ենթարկելու իրեն, միաժամանակ թուղթ էր ուղղում անգլիական միսիային, որ վերջինս էլ իւր կողմից աջակցէ, ինչպէս խոստացւած է իրեն անգլիական հրամանատարութեան կողմից: Անգլիական միսիան էլ զէթ ձևականօրէն իւր պարտականութիւնը կատարած լինելու համար, կանչում էր մեղ իր մօտ և հաղորդում Սուլթանովի պահանջի մասին: Միսիայի պետը, մայոր Մոնկ Մէյսընը քանիցս իր դժգոհութիւնն էր այտայայտել Սուլթանովի վերաբերեալ և պարզ

յայտնում էր, որ հարկադրած է կանչում մեզ, որովհետև հրամանատարութիւնը ընդառաջել է Ադրբէջանի կառավարութեանը, աջակցութիւն ցոյց տալու Սուլթանովին:

Մ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Մայիս 2-ին Մ. Արզումաննեանը կուսակցական ժողովին ամփոփ կերպով և կենտրոնական Կոմիտէի նիստին, որոշ խնդիրների չուրջ աւելի հանգամանօրէն պատմում է կուսակցութեան գործունէութեան մասին: Պատմում է այն բոլոր դժւարութիւնների և ծանր պայմանների մասին, որ ստեղծուեցին, երբ կապը ռուսական կենտրոնական իշխանութեան հետ թուլացաւ, մանաւանդ երբ տաճիկների պահանջմամբ Անդրկովկասը ոչ միայն փաստօրէն, այլ և իրաւապէս բաժանուեց Ռուսաստանից, և ստեղծուեցին երեք անկախ պետութիւնները: Հայ ժողովուրդը մնացել էր մէն-մենակ դարաւոր թշնամու դիմաց, որը մեր ժողովրդի կէսը ոչնչացրել, յարմար վայրկեանի պիտի ոչնչացնէր և միւս կէսը: Ահաւոր կացութիւն էր ստեղծւել, և որևէ կողմից օգնութիւն չէր սպասւում: Ռուս ժողովրդից կտրւած, իսկ մեր հարևաններից ոչ մէկը տրամադիր չէր թիկունք դառնալու մեզ: Վրացիները ամէն կերպ աշխատում էին բարեկամանալ տաճիկների հետ, իսկ թաթարները թև էին առել, որովհետև իրենց ցեղակից և կրօնակից տաճիկը թիկունք էր դառել: Բոլոր դժւարութիւններին աւելացան սովը և համաճարակ դարձած հիւանդութիւնները, որոնց պատճառով իսպառ քամւեց մեր ժողովուրդը: Եւ այդ պայմաններում մեր կուսակցութիւնը ջանացել է համերաշխ կերպով աշխատել մեր միւս հոսանքների հետ, ընդհանուր ուժերով ջանալու փրկել մեր ժողովրդին ոչնչանալու վտանգից: Դաշնակիցների յաղթութեան չնորհիւ մասամբ թեթևացաւ ժողովրդի վիճակը, երբ տաճիկները քաշւեցին մեր երկրից: Այժմ մեր կառավարութիւնը ճիգ ու ջանք է թափում արիւնաքամ եղած և հիւծւած մեր ժողովրդին սովի ճիրաններից աղատելու: Եւ երբ ժողովուրդը մի քիչ կաղդուրւի, ոտի կանգնի, կը կարողանայ նոր թափով աշխատել իր աղատութիւնը ապահովելու համար: Արդէն ամերիկեան կառավարութիւնը ընդառաջելով մեր կառավարութեան դիմումին, չուտով ալիւր պիտի հասցնէ մեր ժողովրդին, ինչպէս նաև այլ կենսամթերքներ, որից յետոյ, յոյս կայ, որ դրութիւնը դգալիօրէն պիտի լաւանայ:

Մ. Արզումաննեանին կենտրոնական Կոմիտէի նիստում յայտնեցինք, որ Բագուի մեր Կ.Կ.-ն ու աղգային խորհուրդը չարունակ յորդորել են ամուր մնալ մեր դիրքերում, չճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը, պայքարել նրա նշանակած ապօրինի

նահանգապետի ոտնձգութիւնների դէմ, որ Հայաստանի կառավարութիւնը անհրաժեշտ միջոցների կը դիմէ դաշնակից պետութիւնների հրամանատարութեան մօտ, յարգելու իրենց վճռը դաշնակցի, հայ ժողովրդի արդար պահանջը, հեռացնելով Սուլթանովին Ղարաբաղից, և որպէս Հայաստանի անբաժան մասը, նրա բնագաւառներից մէկը, կը կցի մայր երկրին: Արդեօ՞ք Հայաստանի կառավարութիւնը որևէ իրաւական միջոցի դիմել է այդ ուղղութեամբ, և կը կարողանա՞յ արժեցնել իւր խօսքը և նպատակին հասնել:

Մ. Արղումանեանն ասաց. «Այո, Հայաստանի կառավարութիւնը որոշ քայլեր արել է արդէն, բողոքել է Ադրբէջանի կողմից Ղարաբաղի նահանգապետ նշանակելու քայլի դէմ և ինձ էլ ուղարկել է այստեղ՝ ձեզ օգնելու, ապա պատրաստ գտնելու, որևէ անակնկալ դէպք տեղի ունենալուց, ձեզ հետ միասին համապատասխան միջոցի դիմելու»:

Հարց . "Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը կարո՞ղ է, ասելի ճիշտ՝ հնարաւորութիւն ունի՞, վճռական և աղդու միջոցի դիմելու Ղարաբաղը միացնելու Հայաստանին, առանց նկատի ունենալու, թէ դաշնակիցները ինչ դիրք կը բռնեն այս հարցում:

«Ձեղնից թաքցնել չեմ կարող», ասաց Արղումանեանը, ինչպէս ասացի, պատերազմի, սովի և համաճարակ հիւանդութիւնների պատճառով մեր ժողովուրդը արիւնաքամ է եղել ու հիւծել, այդպիսի մի ժողովրդի վրայ յենուած նորակազմ մի կառավարութիւն, ղուրկ նիւթական և այլ անհրաժեշտ միջոցներից, հազիւ թէ կարողանայ ղէնքի ուժով լուծել Ղարաբաղի հարցը, դաշնակիցներից անկախ»:

Արղումանեանի այդ պատասխանը երբ լսեցինք, յայտնեցինք Հր. Բահաթրեանի ունեցած տեսակցութիւնն ու խօսակցութիւնը Յ. Քաջազնունու հետ և վերջինիս տուած խորհուրդը:

Ես հաւատում եմ, որ Քաջազնունին նման խորհուրդ է տուել և չեմ դարմանում: Նա միանգամայն ինքնուրոյն մտածող և ուժեղ տրամաբանող մարդ է. երբ տաճիկները վերջնագիր դրին՝ յանձնելու Ալէքսանդրոպօլը, ազգային Խորհրդում մտքերի փոխանակութիւն տեղի ունեցաւ, բոլորը մերժելու տեսակէտ ունէին, բացի Քաջազնունուց, և երբ քէեարկութեան դրուեց խնդիրը, բոլորը ղէմ արտայայտուեցին և միայն Քաջազնունին ձայն տուաւ Ալէքսանդրոպօլը յանձնելու ՝ առանց ընդդիմութեան, պատճառաբանելով, որ Ալէքսանդրոպօլը չկիտի կարողանանք պաշտպանել: Տաճիկներին մերժման պատասխան տրուեց, սակայն

տաճիկները ոչ մի արժէք չտեսցին մեր մերժմանը և, առանց դժուարութեան, գրաւեցին Ալէքսանդրոպոլը: Ներկայ դէպքում, Ղարաբաղի վերաբերեալ նրա տւած խորհուրդը թերևս ճիշտ է:

Մայիս 3-ին Մ. Արղումանեանը և մայոր Մոնկ Մէսընը գնում են Գօրիս՝ հանդիպելու Շահմազեանի և Զանգեզուրի Ազգային Խորհրդի անդամների հետ:

Մայիս 4-ին վերադառնում են: Մ. Արղումանեանը պատմում է, որ մայոր Մոնկ Մէսընը Շատիլվորդից հեռագրով հրահանգ էր ստացել՝ գնալու Գօրիս և յայտարարելու, որ Զանգեզուրը պէտք է ճանաչի Ադրբէջանի իշխանութիւնը և ենթարկւի նրան: Ազգային Խորհուրդը կտրականօրէն մերժում է ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը: Առիթից օգտւելով, ինքը առանձին հանդիպում է ունենում Արսէն Շահմազեանի և Ազգային Խորհրդի հետ, որոշ տեղեկութիւններ տալիս և նրանց հետաքրքրող հարցերի չուրջ մտքերի փոխանակութիւն ունենում:

Մայիս 6-ին Ազգային Խորհուրդը հինգերորդ համագումարի աշխատանքների և Ղարաբաղում տիրող կացութեան մասին տեղեկագիր է պատրաստում, յանձնում Արղումանեանին, իր ունեցած միջոցներով հասցնելու Հայաստանի կառավարութեանը: Արղումանեանը ևս առանձին իր զրոյթիւնը պատրաստելով, մայոր Մոնկ Մէսընից խնդրում է իրենց մեքենաներից մէկը տրամադրելու, որ կարողանար իր հետ նկած սպաներից մէկին հասցնել Եւլախ, որպէսզի այնտեղից անցնի Երևան, ներկայանալու Հայաստանի կառավարութեանը, որոշ կարգադրութիւններ ստանալու և բերելու: Մայորը սիրով տրամադրում է մեքենան, և Ռուբէն Կասումեանը թղթերն առնելով մեկնում է Եւլախ, այնտեղից Երևան:

Մայիս 6-ին երեկոյեան, Մարդի Դաղեանի հիւրանոցում, Մ. Արղումանեանը ի պատիւ անգլիական միսիայի ընթրիք է տալիս: Ներկայ են միսիայի բոլոր պետական պաշտօնեաները, Ազգային Խորհրդի անդամները և մի չարք քաղաքացիներ: Ընթրիքի ընթացքին ճառեր են փոխանակւում թարգմանի միջոցով Արղումանեանի և մայոր Մոնկ Մէսընի միջև: Արղումանեանն ամփոփ կերպով նչում է հայ ժողովրդի կատարած դերը պատերազմի ընթացքին, որպէս փոքր դաշնակիցը մեծ ազգերի դաշնակցութեան, հայ ժողովրդի ուժից վեր տւած զոհերը, տաճիկ ժողովրդի կատարած պատմութեան մէջ չտեսնւած բարբարոսութիւնը, որի համեմատութեամբ նսեմանում են Ջինգիզխանի և Լէնկթեմուրի գործած անգթութիւնները, թէ ինչպէս քաղաքակիրթ Գերմանիայի համաձայնութեամբ սրածւեց մեր ժողովուրդի կէսը: Արդ դաշնակիցները պարտութեան են մատնել Իւնկերական Գերմանիային ու դաղանաբարոյ Թիւրքիային, եւ հայ ժողովուրդը սպասում է արդար դատաստանի ու հատուցման:

Մայոր Մոնկ Մէսընը հաստատելով Արզումանեանի ընորոչումը գերմանական ու թրքական հակամարդկային վերաբերմունքի մասին, հանդէպ տառապած հայ ժողովրդի, որի հանդէպ ինքը ափիթ է ունեցել արտայայտելու, որ անկեղծ համակրանք ունի, որպէս հին քրիստոնեայ և կուլտուրական ժողովրդի, ասում է, որ յոյս ունի, որ ազգերի վեհաժողովը լուրջ վերաբերմունք ցոյց կը տայ հայկական հարցին և արդար վճիռ կը կայացնէ:

Ընթրիքին Սիւնեաց երկրի երկու նչանաւոր գիւղերի՝ Շիվանաձորի և Ղղղալայի (Հին Աղջկաբերդի) գինիներից էին դրւած: Ղղղալան գտնւում է Մուղանի տափաստանին մօտ գիւղերի չարքում՝ Վարանդայում, իսկ Շիվանաձորը Սիւնեաց Արևիք կամ Գիւնւաղ գաւառում, Մեղրիի մօտ, Արաքսի ափին: Երկուսի գինիները պատրաստւում են մուշկաթի անուշահոտ խաղողից, և գոյներով խիստ տարբերւող են իրարուց: Ղղղալայի գինին չատ մուգ կարմիր գոյն ունի և այնքան մուգ, որ բաժակի մէջ սևագոյն է երևում, և բաժակը դատարկելուց կարմիր գոյնը բաժակին կպած մնում է, չի անցնում մինչև լանալը: Բժիշկների խորհուրդով, արեան պակասութիւն ունեցող մարդիկ Ղղղալայի գինի են գործածում ճաշին: Շիվանաձորի գինին թէյի գոյն ունի և աւելի թունդ է և հոտաւէտ: Անգլիացի սպաներից մէկը ճաշակելով երկու գինիներից, ղւարճախօսութիւն արաւ, թէ՝ "այս անուշահամ գինիների համար էլ է Անգլիան պարտաւոր է և պէտք է Հայաստանի մանդատը վերցնի իր վրայ", թէև մեղնից ոչ մէկը նման յոյս չունէը, բայց սպայի խօսքերը, ինչ խօսք, չոյեցին և հաճոյք պատճառեցին մեզ, ուստի Հր. Բահաթրեանը առաջարկեց էքստրա խմել սպայի կենացը:

Մայիսի 8-ին Թուրքաց Թաղում, մէկի տան երկաթապատ տանիքը նորոգելու է գնում Թիթեղագործ Յակոբ Համբարձումեանը, որը, ուշիմ մարդ լինելով, ականջը սրած լսում է փողոցից անցնող-դարձող Թուրքերի բարձրաձայն զրոյցները՝ Թէ ինչպէս Թուրքերից մէկը ուղում է կնոջը արձակել, ապահարդան տալ իրենց օրէնքով, բայց երեխաները չեն ուղում բաժանւել մօրից, լաց ու չիւանով հարևանների ուշադրութիւնն են գրաւել: Մօտ լինելով, երեխաների ձայնը Յակոբն էլ է լսում և մեղքանում: Հարևանները միտքը ծռած Թուրքին նախատում են, որ անաստւած գործ է անում, կինը երիտասարդ, առողջ, լաւ մայր, և պէտք չէ նման քայլ առնւի նրա դէմ: Նախատողներից մէկը ասում է՝ "այ մարդ Հէնց այս օրերի՞ն էր մնացել, որ այդպիսի քայլ անես: Դու փոխանակ ուրախանալու, քեզի անելու, որ յաջողւել է Էնվէր[18] բէյին աղատւել Էնգլիզի ճանկից,

[18]. Էնվեր փաշա. (1881-1921). Թուրք պետական գործիչ, գեներալ, «Միութիւն և Առաջադիմութիւն» կուսակցութեան պարագլուխներից մէկը. 1914 Թւականից՝

այն էլ ինչպիսի դժւարութեամբ, դու տունդ ազատուն ես դարձրել, ամօթ չէ՞, ինչո՞ւ չես խղճում երեխաներին, քոնոնքը չե՞ն": Էնվէր անունը լսելով, Յակորը աւելի է սրում ականջը: Մէկ ուրիչ Թուրք նախատող Թուրքին ասում է՝ չատ լաւ արիր, որ էն անպիտանին նախատեցիր, Հարամզադա է, երկու չահու տէր է դարձել և խելքը Թռել է. բոլոր Թուրքերը ուրախութիւն են անում, որ Էնվէր բէյն ազատւել է ինգլիզի ձեռքից, իսկ նրա համար դա ոչ մի արժէք չունի":

Յակորին զործի կանչած Թուրքը անգրագէտ ու միամիտ խանութպան լինելով, Յակորը միամիտ ձևանալով, իբր չգիտէ, Թէ ով է Էնվէր բէյը, տանտիրոջը հարցնում է՝ "Էնվէր բէյը Ջիվանչիրի՞ բէկերից է, Թէ՞ Շուչու զաւառի բէկերից:"

Թուրքը միամտօրէն պատասխանում է, "Էնվէր բէյը մեր կողմերի մարդ չէ, Օսմանլու է և չատ մեծ մարդ է: Մի՞Թէ չես լսել նրա մասին, որ ինգլիզի դէմ կռիւ է արել և պատերազմը վերջանալուց յետոյ եկել է էս կողմերը: Աղդամում մի ինգլիզ ափիցեր նրան ճանաչել, բռնել է, բայց Խոսրով բէկ Փոլադովը, Նաջաֆկուլի աղա Վէղիրովը, Ջհանգիր խանը, Ալիչ բէկը և ուրիչ մեծ մարդիկ կարողացել են մի կերպով ազատել, որպէս զաղստանցի վաճառականի, որը երևի ղէմքով նման է Էնվէր բէյին, ինչպէս հասկացրել են ինգլիզի զլխաւոր սպային:

Յակորը աշխատանքը վերջացնելուց յետոյ, վերադարձին, առանց հանդիպելու տուն, չտապ-չտապ զալիս է Աղգային Խորհրդի զրասենեակը և պատմում իր լսածները: Գրասենեակում, բացի Աղգային Խորհրդի անդամներից, կային մի քանի հոգի մեր ընկերներից և միւս հոսանքներից, որոնք զանազան ընթացիկ խնդիրներով եկել էին մեղ մօտ:

Մենք լսել էինք, որ անգլիացիները ձերբակալել են Նուրի փաչային և ուղարկել Մալթա կղզու բանտը. որ դաշնակիցները հետապնդում են բոլոր տաճիկ ոճրագործներին, որոնք իրենց բարբարոսութեամբ աչքի էին ընկել պատերազմի ընթացքին. կը նչանակէ, Էնվէրին յաջողւել է խոյս տալ ու զալ մեր կողմերը: Բոլորի մօտ հետաքրքրութիւն է առաջանում, Թէ Էնվէրը լինելով մեծագոյն ոճրագործներից մէկը, որտե՞ղ պիտի կարողանայ պահւած մնալ աննկատ և երկար ժամանակ: Ոմանք ասում են, Թէ պիտի ապաստանէ զաղստանցիների մօտ, որպէս զաւանակից՝

ռազմական նախարար. Մեծ եղեռնի գլխաւոր յանցագործներից մէկը: Առաջին Համաշխարհային Պատերազմում Թուրքիայի կրած պարտութիւնից յետոյ վախել է Գերմանիա, որպէս պատերազմի յանցագործ, 1919Թ. հետակոչ կարգով դատապարտել է մահւան: 1921Թ. գլխաւորել է Հակախորհրդային բռնամաշիական չարժումը Միջին Ասիայում, որտեղ և սպանւել է: (Խմբ.)

սիւնի, ոմանք Մուղանի ընդարձակ տափաստանը, որը մէկ ծայրից միւսը Թրքական զանգւածով է բռնւած և, ի վերջոյ, հաւանական է համարւում, որպէս ապահով ապաստանի վայր, Հաջի Սամլուն, որ Զանգեզուր-Ղարաբաղի միջնարերդն է համարւում, բռնւած չիա քրդական զանգւածով:

Այդ նոյն օրը Շուչի է ժամանում զննեալ Շատիլվորդը:
Գօրիսից գալիս է Մելիքսէթ Եսայեանը:
Մ. Արզումանեանը Հայաստանի կառավարութեան տւած 400.000 ռուբլուց 290.000 ռուբլի տալիս է Ազգային Խորհրդին:

Մայիս 9-ին Բագւից գալիս է Ասլան Շահնազարեանը, որի վերադարձը ծոյլատրւած էր Շատիլվորդի կողմից:

Մայիս 9-ին Շատիլվորդը Մ. Արզումանեանի և միսիայի սպաներից մէկի հետ գնում է Գօրիս, փորձ անել համոզելու այնտեղի Ազգային Խորհրդին՝ ճանաչելու Ադրբէջանի իշխանութիւնը: Խօսքը քարին է առնում զարձեալ, չի յաջողւում, և յաջորդ օրն իսկ վերադառնում են Շուչի. ապա Մ. Արզումանեանին հրաւիրում է իր մօտ և առաջարկում յարաբերութեան մէջ մտնել Հայաստանի կառավարութեան հետ, որպէսզի վերջինս օրինական համարէ Ղարաբաղի Ադրբէջանի իշխանութեան ենթարկւելը, համաձայն անգլիական հրամանատարութեան կարգադրութեան:

Նոյն օրը, առաւօտեան ժամը 10-ին կենտրոնական Կոմիտէի որոշմամբ Թաթօղլի Արչակ Շահնազարեանը զնդակահարում է Խանքենդ աւանի բնակիչ քեօխվայ Մովսէս Սարգսեանին, որը զարձել էր Սուլթանովի ձեռքին գործիք և վնասարար դեր էր կատարում. ոչ սպառնալիքները և ոչ իսկ իր հարազատների դժգոհութիւնը չէին աղդում վրան, ուստի որոշւեց վերացնել նրան այն ժամանակ, երբ Շատիլվորդը Շուչի էր:

Մայիս 14-ին Մելիքսէթը գնում է Գօրիս՝ տեղեկացնելու Շատիլվորդի վերջին կարգադրութիւնների մասին: Մ. Արզումանեանը հրաժարւել էր Շատիլվորդի առաջարկի համաձայն նամակ գրել, Ղարաբաղի վերաբերեալ, ուստի Շատիլվորդը անցանկալի գտնելով Արզումանեանի ներկայութիւնը Շուչում, հրահանգում է, որ հեռանայ Շուչուց. Արզումանեանը հիւանդ է ձևանում և իր սպաներից մէկի միջոցով տեղեկացնում Շատիլվորդին, որ ապաքինվելուց յետոյ անմիջապէս կը մեկնի Շուչուց:

Մայիս 15-ին Գօրիսից գալիս է Լևոն Մելիք Աղաբեանը, կնոջ՝ Արծւիկի հետ միասին ու յանձնում Արսէն Շահմազեանից ստացած 300.000 ռուբլի, Ազգային Խորհրդի պէտքերի համար:

Այդպիսով Ազգային Խորհուրդը նախորդ, մինչ այդ, ստացած գումարների հետ, ստացած է լինում 1.590.000 ռուբլի:

ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆԸ[19] ՇՈՒՇԻՈՒՄ

Մայիս 15-ին երեկոյեան ղէմ Երևանից, Հայաստանի կառավարութեան կողմից, Շուշի է ժամանում Յովսէփ Արղութեանը:

Մայիս 16-ին Յովսէփ Արղութեանը Ազգային Խորհրդի նիստին զեկուցում է, որ անգլիական հրամանատարութեան կողմից եղած դիմումի համաձայն, Հայաստանի կառավարութիւնն ուղարկել է իրեն Շատիլվորդի հետ միասին գնալու Գօրիս և տեղի վրայ վերահասու լինելու գործին: Անգլիական հրամանատարութիւնը իր կայացրած սխալ որոշումը՝ Զանգեզուր-Ղարաբաղը դարձնելու Ադրբէջանի մաս, չի ուզում փոխել կամ ուզում կատարել, համաձայն Հինգերորդ Համագումարի որոշման, այն է, որ նահանգապետ նշանակուի մի անգլիացի սպայ, որն ունենայ հաւասար թուով օգնականներ երկու ժողովրդի ներկայացուցիչներից: Կառավարութիւնը խստիւ բողոքել է անգլիական գեներալի՝ Տօմսոնի սխալ կարգադրութեան դէմ:

Յ. Արղութեանին յայտնում ենք Ազգային Խորհրդի որոշումը՝ ինքնապաշտպանութիւնը զինուորական գետնի վրայ դնելու, միլիցիօն սիստեմով, և որ սպանների ղեկավարութեամբ խմբապետները պէտք է ենթակայ լինեն իւրաքանչիւր շրջանում իրենց հրամանատարի հրահանգներին: Եւ խմբապետները լռելեայն համաձայնել ու ենթակայութիւն են յայտնել Ազգային Խորհրդի որոշման, միայն ղեռ Սոկրատ Մելիք Շահնազարեանը չի լուծել իւր "չտաբը", որով որոշել է հրահանգել անմիջապէս լուծելու չտաբը և պահանջել նրանից, որ եթէ չպիտի ուղենայ աշխատել սպանների ղեկավարութեամբ, մեկուսանայ և ղբաղուի իր անձնական գործով:

Յ. Արղութեանին բացատրեցինք, և նա համաձայն եղաւ մեզ հետ, որ պիտի ջանայ ամէն կերպ, որ քաղաքը խաղաղ մնայ, միանգամայն հետու ցուցական որևէ քայլից. նոյնիսկ երբ զաւառներից որևէ մէկում կռիւ տեղի ունենայ թուրքերի և հայերի միջև, քաղաքը ոչ մի կերպ ամենաթոյլ կերպով իսկ չցուցադրէ իր վերաբերմունքը:

---

[19] Յովսէփ Արղութեան (1865-1925, Փարիզ). Հայկական կամաւորական 7-րդ գնդի հրամանատար (116-1917): Մեծ դեր է կատարել 1890թ. դաշնակցութիւն կուսակցութեան կազմաւորման գործում: Աւարտել է Թիֆլիսի ներսիսեան դպրոցը, եղել է մանկավարժ Տրապիզոնում, Երեւանում, Թիֆլիսում, 1897թ. Խանասորի արշաւանքի հրամանատար: Եղել է Հայաստանի խորհրդարանի անդամ (1919թ.), Հայաստանի պետական խնհրանում(1919-1920):

3. Արղությանը ցանկությունն յայտնեց հանդիպելու նախկին հրամանատար խմբապետների հետ, ուստի յաջորդ օրը հրաւիրեցին Ազգային Խորհրդի գրասենեակ նախկին խմբապետ հրամանատարները, որոնց առաքելութիւնը վերջացած էր համարում և այլևս չպիտի միջամուխ լինէին զինուորական գործերի, պիտի զաւառական կոմիսարների պարտականութիւնները կատարէին, ինչպէս յայտարարուած էր իրենց: Ինչպէս պիտուեց իր տեղում, բոլոր խմբապետները լռելեայն ընդունել էին, բացի Սոկրատից: Այդ մասին արդէն տեղեակ էր 3. Արղությանը, որ տաճիկների հեռանալուց յետոյ Սոկրատը կարգապահ չէ գտնուել և անհատական ելոյթներով դժգոհութիւն է առաջացրել: Հրամանատարութիւնից բացակայում էր միայն Բազրատ Ղազարեանը, մեսները՝ Ալէքսան դային, Լալայեան Արտեմը, Թաթօղլի Արչակը և Սոկրատը ներկայ էին:

3. Արղությանը դրւատեց խմբապետներին, թէ՝ տաճիկների ներխուժման ժամանակ գտնել էք ձեր կոչման բարձրութեան վրայ և ղգալով ձեղ պատասխանատու ժողովրդի առաջ, գործել էք համազումարի կայացրած որոշման համաձայն: Սակայն տաճիկների հեռանալուց յետոյ, ինչպէս տեղեկացել եմ, գտնել են մարդիկ, որոնք անկարգապահ են եղել ու չեն կատարել Ազգային Խորհրդի հրահանգները. այդպիսիները թող իմանան, որ չեն վրիպի Հայաստանի կառավարութեան աչքից և կառավարութիւնը նրանց ամենախիստ կերպով կը պատժէ:

Արղությանը խօսում էր բարձրաձայն, աղղու տոնով, իսկ վերջին սպառնալից խօսքերը արտայայտեց՝ պոռալով իր բարիտոն ձայնով: Խմբապետները գլուխները կախ լուռ լսում էին: Ալէքսան դային, Արտեմը և Արչակը համոզուած էին, որ Արղությանի սպառնալիքը ուղղուած էր միմիայն Սոկրատին, որ կծկուել, միանգամայն սմքել էր:

Մայիս 18-ին Միչա Արղումանեանը, Ռուբէն Կասումեանի և Գազա Տէր Օհաննեանի հետ միասին, անգլիական միսիայի մեքենայով մեկնեցին Շուշուց: Նոյն օրը գիներալ Շատիլվորդն ու Յովսէփ Արղությանը մեկնեցին Գօրիս: Գիներալ Շատիլվորդին ու 3. Արղությանին Գօրիսի մօտ գտնուող Տեղ գիւղի դիրքերում գտնուող զինուորները կանգնեցնում են, հարց ու փորձի ենթարկում, ովքեր են, ուր են գնում: Շատիլվորդի վրայ վատ է աղղում նման վերաբերմունքը: Նա յայտնում է այնտեղի Ազգային Խորհրդին իր՝ Գօրիս գնալու նպատակը, որը առանց նախապէս աղղարարուած լինելու էլ արդէն յայտնի էր ոչ միայն Ազգային Խորհրդին, այլև ամբողջ ժողովրդին: Շատիլվորդը յայտնում է, որ գիներալ Տօմսոնը մեկնելուց բաւական առաջ կարգադրել էր, որ Զանգեզուր-

Ղարաբաղը պետք է ենթարկվի Ադրբեջանի իշխանությանը և վերջինս, դիմելով Տօմսոնի գիտությամբ ու համաձայնությամբ՝ Սուլթանովին, որպես նահանգապետ Զանգեզուր-Ղարաբաղի, ուղարկել է Շուշի, ուստի, պարզ է, Զանգեզուր-Ղարաբաղը պետք է ենթարկվի արդէն կայացած որոշմանն ու արուած համապատասխան կարգադրութիւնը:

Ազգային Խորհուրդը բացէիբաց, կտրականօրէն մերժում է և բնաւ չի ճանաչում Ադրբեջանի իշխանութիւնը ու չեչտում, որ նրբէք չի ճանաչի նրա նշանակած նահանգապետին, քանի որ Զանգեզուր-Ղարաբաղը մի ամբողջութիւն է և Հայաստանի բնագաւառներից մէկն է, նրա անբաժան մասը, որի համար Հայաստանի կառավարութիւնն արդէն նշանակել է օրինական նահանգապետ, Արսէն Շահմազեանին:

Շատիլվորդը տեսնելով, որ իր բոլոր բացատրութիւնները ոչ մի արժէք ու նշանակութիւն չունեցան, խստիւ պահանջում է, որ Արսէն Շահմազեանը, Արչակ Շիրինեանը և Յովսէփեան Նիկօլայը անմիջապէս թողնեն Զանգեզուրը, հեռանան:

Ի պատասխան Շատիլվորդի պահանջի, բռնակոծի Մուշեղ Զաքարեանի նախաձեռնութեամբ, մի քանի ժամւայ ընթացքում մօտակայ գիւղերից հաւաքւած և պանդուխտ ահագին թւով գիւղացիութիւնը ուժեղ ցոյց է անում Շատիլվորդի իջևանած տան առջև, գոռում գոչիւնով և սպառնալիքներով, թէ ոչ ոք չպիտի հեռանայ Զանգեզուրից, ժողովուրդը թոյլ չի տայ, որ անգլիական հրամանատարութիւնը իրաւունք ունենայ հայկական գիւղերը Ադրբեջանին տալու:

Մայիս 19-ին Շատիլվորդը քիթը կախ վերադառնում է Շուշի և, առանց երկար կանգ առնելու, մեկնում է Բագու:

Մայիս 21-ին Գօրիսից գալիս է Արղութեանը, Ազգային Խորհրդի նիստին մանրամասնօրէն պատմում Գօրիսում Շատիլվորդի վարած անյաջող բանակցութեան մասին և թէ ինչպէս յիշեալ երեք հոգու վերաբերեալ տրւած վերջնագրին ժողովրդուրդը մեծ ցոյցով է պատասխանել:

Շատիլվորդը Արսէն Շահմազեանի մասին գիտէր, որ Հայաստանի կառավարութեան կողմից նշանակւած էր իբրև նահանգապետ Զանգեզուր-Ղարաբաղի, սակայն որտեղի՞ց և ի՞նչ գիտէր Արչակ Շիրինեանի և Նիկոլայ Յովսէփեանի մասին, որոնց ներկայութիւնը Զանգեզուրում անբաղձալի էր համարում: Շատիլվորդն արդէն Մ. Արղումանեանի հետ մի անգամ եղել էր Գօրիսում, ծանօթացել Ազգային Խորհրդի անդամների հետ, սակայն

թէ անդամներից որո՞նք կչիռ ու հեղինակութիւն ունէին ժողովրդի մէջ, յայտնի չէր: Այդ տեղեկութիւնները Շատիլվորդին յայտնում էր Սուլթանովը, որին մանրամասն տեղեկութիւններ էին տալիս տեղական թուրքերը, որոնք չատ լաւ էին ճանաչում Ազգային Խորհրդի բոլոր անդամներին: Պարզ է, ուրեմն, Շատիլվորդը ամբողջովին յենւած էր թուրքերի վրայ և թրքական (աղրբէջանական) քաղաքականութիւն էր վարում:

Մայիսի 22-ին վերջին անգամ Արդութեանը ներկայ գտնելով Ազգային Խորհրդի նիստին, առաջարկեց, որ Ազգային Խորհրդի անդամներից մէկը ընկերանայ իրեն, որպէս տեղեակ Ղարաբաղի մէկ ու կէս, երկու տարւայ անց ու դարձերին, աղգային համադումարների և նրանցից բղխած ազգային մարմինների կատարած աշխատանքներին, ու Հայաստանի կառավարութեանը զեկուցէ:

Ազգային Խորհրդի որոշմամբ Աչոտ Մելիք Յովսէփեանն է ընկերանում Արդութեանին, և մայիս 23-ին միասին մեկնում են Շուշուց:

Ազգային Խորհրդի որոշմամբ, քաղաքի բնակիչներից Լևոն Թադէոսեանը, ազգային բարերար Սահակ Թադէոսեանի որդին, որ Ազգային Խորհրդին ժրաջան աջակցողներից մէկն էր ու չարունակ չփման մէջ Ազգային Խորհրդի հետ, մայիսի 24-ին մեկնեց Բագու, իրազեկ դարձնելու այնտեղի Ազգային Խորհրդին վերջին անցուդարձի մասին:

ՋԻՆԻՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԴՐՆԱՎԱԶՈՒՄ

Մայիս 25-ին, համաձայն կանխաւ մէկ ու կէս-երկու ամիս առաջ կայացւած որոշման ու նրա հիման վրայ կատարւած նախապատրաստական-կազմակերպչական աշխատանք կատարելուց յետոյ, Վարանդայի Դրնավազ գիւղում հրաւիրւած էր զինւորական համագումար: Ազգային Խորհրդի որոշմամբ, մայիսի 25-ին Շուշուց մեկնեցի Դրնավազ՝ մասնակցելու զինւորական համագումարի աշխատանքներին:

Զինւորական Միութեան վարչութեան նախագահը՝ կապիտան Արտաշէս Վարդապետեանը, որ միաժամանակ ընդհանուր հրամանատարի պարտականութիւնն էր կատարում, առաջարկում է ինձ, որպէս Ազգային Խորհրդի անդամ-ներկայացուցիչ, բացել համագումարը:

Համագումարին ներկայ էին Ղարաբաղում գտնուող սպանների մեծ մասը՝ մօտ քսան հոգի, որոնք 1917 թ. աշնան արձակուրդով եկել էին ու ճանապարհների փակման հետևանքով մնացել, չէին կարողացել վերադառնալ իրենց զօրամասերը: Սպանների մի փոքր մասը նախկին Շուշու գնդի սպաներն էին, որ տաճիկների նահանջից յետոյ էին եկել Գօրիսից: Ղարաբաղում, թէ՛ քաղաքում և թէ՛ չրջաններում, ցրուած վիճակում, երևսունից աւելի սպաներ կային, որոնց բոլորին Զինուորական Միութեան վարչութիւնը հրաւէր ուղարկեց մասնակցութիւն բերելու համագումարին, բայց հաղիւ քսան հոգի էին եկել: Համագումարին ներկայ էին խմբապետներից Ալէքսան դային, Աղալար Հայրիկեանը և ուրիչներ:

Երկու խօսքով յայտնում եմ համագումարների որոչումը Ղարաբաղի ինքնապաչտպանութեան վերաբերեալ, որ պէտք է կազմակերպել ժողովրդին բոլոր չրջաններում, միլիցիօն հիմունքներով, կազմ ու պատրաստ լինելու, անակնկալի չգալու որևէ կողմից վտանգ լինելու դէպքում, մանաւանդ նկատի ունենալով այն լարած դրութիւնը, որ ստեղծել է անգլիացիների գործակցութեամբ Աղրբէջանի կողմից ապօրինի կերպով Զանգեզուր-Ղարաբաղի նահանգապետ նչանակելով մի իսկական պանիսլամիստի, որպիսին Սուլթանովն է, որ Շուշի հաստատուելուց յետոյ, նոյն անգլիացիների թոյլտուութեամբ և անգլիական մի զօրամասի ուղեկցութեամբ աղրբէջանական զօրք մտցրեց Ղարաբաղ, զրաւելով Խանքենդին: Թէ ինչեր կարող են լինել, գուշակել չենք կարող: Ապա առաջարկում եմ, որ կապիտան Ա. Վարդապետեանը նախագահութիւնն ստանձնէ և համագումարն անցնէ օրակարգի հարցերի քննութեան:

Օրակարգի խնդիրներն էին՝

ա) Զեկուցում Զինուորական Միութեան Վարչութեան:
բ) Շտաբի կազմած ինքնապաչտպանութեան ծրագիրը:
գ) Գործօն սպանների զոյապրուստի հարցը:

ա) Զինուորական Միութեան վարչութեան կողմից ամփոփ կերպով զեկուցում է տեղակալ Մարտիրոս Այվազեանը Միութեան գործունէութեան մասին սկզբից, երբ կազմուել է Հայ Զինուորական Միութեան Շուշու ճիւղը, յետոյ, ամռան ամիսներին, երբ ստեղծուեց Ղարաբաղի Միջկուսակցական Բիւրօն, Միութիւնը միչտ ձայնակցել է Բիւրոյին և նրա հրահանգների համաձայն ակտիւ աչխատանք կատարել: Բիւրոյի հրահանգով, Միութիւնը զինուորական խիստ միջոցների դիմելով կարողացել է այս կամ այն չրջանում տեղի ունեցած անկարգութիւնները վերացնել: Թիֆլիսի զինուորական չտաբի կարգադրութեամբ Միութիւնը Խանքենդիի զօրանոցների պաչտպանութիւնն էր ստանձնել: Երբ տաճիկները մուտք գործեցին,

միութեան անդամներից մի քանիսը բանտարկուեցին, միւսները պահուեցին կամ անցան զաւառները: Երբ տաճիկները հեռացան, Միութեան անդամները հաւաքուեցին և գործի անցան: Ձինուորական Միութեան վարչութիւնը յաճախ է ղբաղուել ինքնապաշտպանութեան կազմակերպման խնդրով: Հարկաւ, եթէ Միջկուսակցական Բիւրօն նիւթական լայն միջոցներ ունենար, լաւագոյն ձևը կազմ ու պատրաստ, ղօրանոցային կեանք վարող ղօրամասեր ունենալը կը լինէր. սակայն այդպիսի հնարաւորութիւն չենք ունեցած, չունենք և ներկայիս, Միութեան անդամները ծանրացած չեն նղել ժողովրդի վրայ, ամէնքը, ինչպէս կասեն, մի կերպով կարողացել են հոգալ իրենց զոյապրուստը: Միութիւնը, Միջկուսակցական Բիւրոյի և նրան յաջորդած մարմինների հայթայթած միջոցներով, թէև չատ դժուարութեամբ և ընդհատումներով, կարողացել է կամաւորներից բաղկացած մէկ վաչտ ունենալ քաղաքում, պատրաստ ամէն վայրկեան նախ քաղաքում օգտակար դեր կատարելու և ի պահանջել հարկին, որևէ տեղ կռիւ լինելուց, օգնութեան հասնելու մեր մարտիկներին, ինչպէս տեղի ունեցաւ 1918-ի ամառը, երբ արևմտահայ 3500 զաղթականներ Գօրիսից զալուց Զարըսլուի ձորում չրջապատուել էին Թուրքերի կողմից ու կռւի բռնուել, խիստ սահմանափակ դինւած մարտիկներով:

բ) Շտաբի պետի տեղակալ Արտաշէս Առստամեանը ներկայացրեց չտաբում կազմուած ինքնապաշտպանական ծրագիրը, ըստ որի Ղարաբաղը բաժանւում էր հինգ ինքնապաշտպանական չրջանների,

1) Դիլդակի չրջան՝ տեղակալ Նիկ. Փիրումեանի հրամանատարութեամբ,
2) Վարանդայի ա. մաս՝ փոխ-զլխապետ Յով. Ստեփաննանի հրամանատարութեամբ,
3) Վարանդայի բ. մաս՝ տեղակալ Ս. Զալեանի հրամանատարութեամբ,
4) Խաչէնի չրջան՝տեղակալ Արչաւիր Պետրոսեանի հրամանատարութեամբ,
5) Ջրաբերդ-Գիւլիստան՝ զլխապետ Արչակ Զախարրեկեանի հրամանատարութեամբ:

Բոլոր հրամանատարներն ունեն իրենց օգնականները իրենց կենտրոնատեղիում և չրջանի զանազան մասերում:

Եւ քանի որ ինքնապաշտպանութեան գործը պիտի կազմակերպւի միլիցիոն սիստէմով, ուստի անհրաժեշտ է, որ ինքնապաշտպանութեան գործում ծրծւած խմբապետները, որոնց Ազգային Խորհուրդը դուտ վարչական գործերն է վերապահել, սերտօրէն կապւած լինեն չտաբին ու ենթակայ նրա հրահանգին:

Ինքնապաշտպանութեան իւրաքանչիւր չրջանի կազմակերպման գործը թողնում է հրամանատարներին, տեղի վրայ կարգադրելու անհրաժեշտը:

գ) Գործօն սպանների գոյապրուստի վերաբերեալ համագումարը, մտքերի փոխանակութիւն ունենալով, գտաւ, որ հրամանատարներն ու օգնականները և չտաբի մէկ-երկու ծառայողները պէտք է, իրենց նւաղագոյն կարիքները հոգալու համար, անհրաժեշտ չափով դրամական միջոցներ ստանան Ազգային Խորհրդից:

Այդ հարցը որոշած էր համագումարից բաւական առաջ, երբ Ազգային Խորհուրդը արդէն բաւական դրամ ստացել էր Բագվից և Շահմազեանից ու որոշել դրամը յատկացնել գլխաւորապէս ինքնապաշտպանութեան գործին, և, որպէսզի գործօն դեր կատարող սպանները տնտեսապէս քայքայւած ժողովրդի վրայ չծանրանան, գոյապրուստի միջոց ստանան Ազգային Խորհրդից, ուստի այդ որոչումը յայտնեցի համագումարին, որը խնդրի տեխնիկական մասի վերաբերեալ որոշից թողնել չտաբին բիւրջէ կազմելու և այն Ազգային Խորհրդին ներկայացնելու գործը:

Համագումարը աշխատանքը դիւրացնելու և արագ կատարելու համար, որոշեց, որ ինքնապաշտպանական ծրագիրը ընդհանուր գծերով կազմէ չտաբը, հրամանատարների հետ միասին, ներկայացնելու յաջորդ օրւայ նիստին, վաւերացնելու համար:

Յաջորդ նիստը կայանում է մայիսի 27-ի առաւօտեան. չտաբի կողմից տեղակալ Ա. Առաստամեանը ներկայացնում է կազմւած ծրագիրը, որը ընթերցւում է մի քանի ուղղումներ կատարելով, հաստատւում է, որից յետոյ համագումարը յայտարարւում է փակւած:

Նոյն օրը վերադառնալով քաղաք, Ազգային Խորհրդին զեկուցում եմ համագումարի կատարած աշխատանքի մասին:

ԹՈՒՐՔԵՐԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԽԾԱԲԵՐԴԻ ՎՐԱՅ

Մայիս 28-ին, երեկոյեան, բաւական ուշ տեղեկութիւն ենք ստանում Դիլդակից, գաւառական կոմիսար Արտեմ Լալայեանից, որ թուրքերը յարձակում են գործել Խծաբերդի վրայ մեծ ուժերով, ուստի նա իր տրամադրութեան տակ եղած մարտիկներով, Արշակ Շահնազարեանի հետ միասին, չտապում են կուի վայրը:

Խծաբերդի պաշարման լուրը կայծակի արագութեամբ տարածւում է քաղաքում, մեծապէս յուզում առաջ բերելով

ժողովրդի չարքերում: Մթնոլորտը էլեկտրականանում է ճիչտ այնպէս, ինչպէս տաճիկները Ղարաբաղ մուտք գործելու օրերին էր: Այն օրերին ժողովուրդը միայնակ էր ղղում իրեն, կորստեան մատնելու վտանգի առջև կանգնած, իսկ հիմա մեր մեծ դաշնակիցների աչքի առջև, Օսմանեան պետութեան ֆիլիալ բաժանմունքը՝ Ադրբէջանը ուղում է տիրանալ դարաւոր Հայաստանի անբաժան մասը կազմող հողերին և այնքան է լպիրշացել, որ օր-ցերեկով յարձակում է գործում խաղաղ աշխատանքի նուիրուած հայ գիւղացիութեան վրայ: Եւ այժմ էլեքտրականացած մթնոլորտում ոչ մէկ վախն էր խօսում ժողովրդի մէջ, այլ արդար զայրոյթը, որ դաշնակիցներից պարտուած տաճիկը հեռանալով Անդրկովկասից, իր հակահայ քաղաքականութիւնը չարունակելու համար թողել է իր արժանաւոր յաջորդին, իր ստեղծած Ադրբէջանը: Եւ մեր դաշնակից համարուած ուժերը վոխանակ անկողմնակալ լինելու, պարզապէս թրքական ձգտումներին էին ընթացք տալիս: Իզուր չէ ռուս ժողովուրդը "կավարնիյ Ալբիօն" (խարդախ Ալբիօն) անունը տւել Բրիտանական պետութեան: Ով գիտէ, գիւային ինչ կանխատեսութիւններ ունի, յանուն իր չահերի, որ պնդում է՝ անպայման ենթարկւել, ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը:

Մայիսի 29-ին Դիղակի Տումի և Տող գիւղերից քաղաք եկած գիւղացիները ասում են, որ Խծաբերդի վրայ յարձակուող թուրքերի թիւը մի քանի հազար է, ընդհանուր զեկավար-հրամանատարը Աղդամի նախկին տաճկական կոմենդանտ Քեազըմ բէյն է, որին հաւանօրէն տաճիկները թողել էին համիդեամական իրենց գործունէութիւնը չարունակելու համար: Թուրքերը մի անյաջող փորձ էին կատարել Բարդայի (Հին Պարտաւ է) և Աղդամի միջի անգլիական սիպայիների հետոտան մի վաչտ զինաթափ անելու, սակայն սիպայիները անակնկալի չգալով, անմիջապէս չդիմայ են կազմել և համաղարկի կապել աւազակախմբերին, որոնք խայտառակօրէն փախուստի ճամբան էին բռնել: Այդ դէպքից յետոյ էլ Շաահլովորդը մնում է անփոփոխ իր դիրքում, հանդիպ թուրքերի: Գիւղացիների բերած լուրը, որ թրքական հազարաւոր ամբոխի գլուխ է անցած տաճիկ սպայ Քեազըմ բէյը, էլ աւելի ոյժ է տալիս հայերի արդար զայրոյթին: Ազգային Խորհուրդը **սպասում** է Ա. Լալայեանի պաշտօնական հաղորդագրութեանը: Ենթադրւում էր, որ սիպայիների վաչտի զինաթափման փորձը հէնց նոյն Քեազըմ բէյի խորհրդով է եղած, փորձելու համար, թէ անգլիացիները ինչպէս կը վերաբերուեն իրենց հանդիպ այդ փորձից յետոյ:

Մայիս 31-ին Լալայեան Արտեմի և Արչակ Շահնազարեանի **առորագրութեամբ** ստանում ենք ամփոփ տեղեկագրութիւն Խծաբերդի կուի մասին:

Խծաբերդը 120–130 տնից բաղկացած լեռնային գեղեցիկ դիրք ունեցող գիւղ է, որ գտնւում է Դիղափայտ լերան հարաւային կողմի լանջի վրայ, որտեղից լայն հովիտ է բացւում դէպի Հաքարա գետը, երկու կողմից երկարող բարձր ժայռերով, գիւղից երկու կիլոմետր հեռաւորութեան վրայ, հովիտի մէջտեղից բաւական բարձր քարարկղ է ցցւած, որը գիւղի առաջաւոր դիրքն է հանդիսանում: Հայ Մրքական ընդհարումներին, Թուրքերը քանիցս փորձել են խուժել՝ գրաւելու Խծաբերդը, սակայն ամէն անգամ էլ բլրի վրայ դիրք մտած գիւղացիները ուժեղ դիմադրութեամբ թոյլ չեն տւել Թուրքերին առաջ շարժւելու, և Թուրքերը բաւական զոհեր տալով, նահանջել են: Գիւղը բարեկեցիկ է, գրեթէ բոլոր բնակիչները երկյարկանի, քարակերտ տներ ունեն, վերնայարկը բնակութեան համար է, ցածի յարկը անասունների տեղն է: Թուրքերը քաջալերւած Քեաղրմ բէյի խրախուսանքներից, կրկնում են 13–14 տարի առաջւայ փորձը, տիրելու Խծաբերդին, որից յետոյ Հին Թաղ, Դոլանլար, Մամձոր, կարճ ասած՝ Դիղակի արևմտեան մասի գիւղերը մէկը միւսի ետևից կը գրաւեն ու տիրական դիրք կունենան արևելակողմի գիւղերի վրայ, որոնք արևմտեան գիւղերի համեմատութեամբ աւելի ցածր են:

Պատմութիւնը կրկնւում է նոյնութեամբ: Արտեմ Լալայեանն ու Արչակ Շահնազարեանը ամփով կերպով գրում են տեղի ունեցած կռւի մանրամասնութիւնների մասին: Մայիս 28-ի վաղ առաւօտեան, լուսաբացին, քարաբլրի վրայ գտնւող դիրքապահ տղաները նկատում են գիւղին մօտեցող Թրքական ամբոխին, որ հետից սևին է տալիս: Ամբոխը բաժանւած է լինում երկու մասի, բլրի երկու կողմերից ներս թափանցելու համար: Դիրքապահ տղաները վտանգի աղղանչան են տալիս, և գիւղացիները վեր թռնելով, դինւած չտապում են կանխորոշւած իրենց դիրքերը: Մեր գիւղացի ընկեր Ուլունց Ներսէսը, իւր հօրեղբօր՝ Միրզայի և գիւղի քաջարի կռւողներից մէկի՝ Մուսիի[20] և մի տասնեակ ուրիշ երիտասարդների հետ չտապ հասնում, բարձրանում են բլուրը, դիրք բռնում: Բոլոր մարտիկները՝ անվրէպ հրացանաձիգներ, համազարկեր տեղալով կասեցնում են Թուրքերի առաջխաղացը: Մերոնց տեղը բարձր է և տիրապետում է Թրքական դիրքերին: Այնուամենայնիւ, ամբոխը չարունակ փորձեր է անում ներս խուժելու: Գիւղի մարտիկները յամառօրէն դիմադրում են. Միկունքի գիւղերից ամէնից չուտ և առաջինը օգնութեան են հասնում Հին Թաղ գիւղի մարտիկները, որից յետոյ մինչև երեկոյ հասնում են Միկունքի ոչ միայն մօտակայ, այլ և հեռու գտնւող գիւղերի մարտիկները հարիւրներով: Երբ Հին Թաղ գիւղի մարտիկները հասնում են և դիրք բռնում, Խծաբերդցի մարտիկներից երկու տասնեակ բարձրանում են բլուրը, աւելի դժւարացնելով Թուրքերի

[20] Մուսին, Պետական Դումայի պատգամաւոր Զաւարիեի Միկնապահն էր: (Հեղ.)

առաջանալը: Արտեմ Լալայեանը և Արշակ Շահնազարեանը տեղ հասնելով, բնականաբար ստանձնում են կռւի ղեկավարութիւնը: Մայիս 29-ի առաւօտեան մեր ուժերը արդէն աւելի ստուարացած, երկու մասի բաժանւելով, մէկի գլուխ է կանգնում Արտեմ Լալայեանը և միւսինը Արշակ Շահնազարեանը և կազմ ու պատրաստ սպասում թշնամու յարձակմանը: Թրքական ուժերը երկու հաղարից աւելի էր հաչւում և 29-ի առաւօտեան գոռում-գոչիւնով ուժեղ յարձակում են սկսում: Մերոնց առաջին խակ համազարկերից թուրքերը հասկանում են, որ զիւղի կռւողների թիւը չատացել է, սակայն, այնուամենայնիւ, Քեաղրմ բէյի խրոխտ հրամաններով քանիցս թուրք ամբոխը մոլեգնած, կատաղի յարձակումներ է գործում, բայց յետ մղւում: Այդպէս կռիւը չարունակւում է մինչև երեկոյ: Արտեմն ու Արշակը, փորձառու մարտիկների հետ խորհրդակցելով, որոչում են միւս օրը, լոյսը չբացւած, յարձակման անցնել, դուրս գալով պաչտպանողական դրութիւնից: Արտեմը, որ լաւ ճանաչում է մեր մարտիկներին, Արշակի հետ միասին զասաւորում են երկու թևերի ուժերին, բացատրում, թէ ինչպէս պիտի յարձակումը գործել, որքան կարելի է արագ և համարձակ: Եւ լոյսը չբացւած, մեր մարտիկները միահամուռ ուռա գոռալով համազարկ տալով դուրս են նետւում դիրքերից ու առաջ վազում: Թուրքերը, պիտի ասել, որ կատաղի դիմադրութիւն են ցոյց տալիս մի քանի ժամ, սակայն յետոյ նահանջելու նչան է նկատւում, և դա մերոնց աւելի է ոգևորում և ոյժ տալիս: Կռւի բորբոքւած ժամին նոր ուժեր են հասնում մերոնց օգնութեան, և կռիւը կատաղի բնոյթ է ստանում: Մեր մարտիկներն այլևս դուրս նետւելով դիրքերից, խիզախօրէն խոյանում են առաջ ուռա գոռալով և հայհոյանքների տարափ տեղալով թուրքերի հասցէին: Թուրքերը տեսնելով հայերի կատաղի խոյանքը, որ քանի գնում աւելի է սաստկանում, արագ նահանջի ճամբան են բռնում, որ աւելի փախուստի է նմանւում: Թուրքերը 200-ից աւելի սպանւածներ են տալիս, 10–12 հոգի ծանր վիրաւորներ, որոնք յետ մնալով սրախողխող են լինում: Եւ, որ չատ կարևոր է, երբ սկսւում է նահանջը, Քեաղրմ բէյը մի խումբ ձիաւորների գլուխն անցած սրարշաւ փախչում է կռւի դաչտից:

Խծաբերդի կռւին Քեաղրմ բէյի մասնակցութիւնն ու ղեկավարութիւնը ապացուցւած փաստ լինելով, մայոր Մօնկ Մէյսընի ուշադրութեանը յանձնեցինք, բողոքելով նրա զրգռիչ գործունէութեան դէմ: Ապա պարզ ու որոշ ասացինք մայորին, որ Այրարէջանի կառավարութիւնը չպիտի կարողանայ մարսել Խծաբերդի պարտութիւնը, պիտի ջանայ այլ միջոցների դիմել, մի բան, որ նախագդում էինք և ինչպէս չուտով պարզւեց, սխալւած չէինք:

ՄՈՆԿ ՄԷՍԸՆ ԵՒ ՍԱՆԴԵՐՍ

Մայիս 31-ին Միսիային ապաստաւորող դինուորը եկաւ, յայտնեց, որ մայոր Մօնկ Մէսընը հրաւիրում է ինձ իր մօտ: Կէսօրից առաջ էր, Հրանդն էլ ընկերացաւ, ու միասին գնացինք Միսիայի բնակութիւն հաստատած չէնքը՝ պրօսայդու մօտ գտնուող Զառավնան եղբայրների տունը, որ քաղաքի լաւագոյն տներից մէկն էր: Մայորը առաջարկեց մեզ ոչ իր գրասենեակը, այլ ուրիչ սենեակ, որտեղ մեզ դիմաւորեց միջահասակ, վայելուչ արտաքինով մի դինուորական, որին ձեռք տալով ասացի աղգանունս և նա էլ իրենը՝ գնդապետ Սանդերս: Երբ Հրանդն էլ ձեռք տուաւ, առաջարկեց մեզ նստել: Հրանդը Թիֆլիս եղած ժամանակ լսել էր և մեզ էլ պատմել գնդապետ Սանդերսի մասին, որ մի ժամանակ եղել է Պետրոգրադում, որպէս անգլիական դեսպանատան դինուորական կցորդ, իսկ ներկայիս Մերձաւոր Արևելքի հետախուզութեան պէտն է և նա է Նուրի փաշային ձերբակալել:

Խօսակցութեան լեզուն ռուսերէն էր, և գնդապետը աղատ, լաւ խօսում էր: Կարծես ճչտելու համար, ուղիղ նայելով ինձ, հարցրեց.

– Դուք էք Իշխանեանը:

– Այո, ես եմ, պատասխանեցի:

– Դուք անշուշտ գիտէք կամ լսել էք, որ դաշնակիցները հետապնդում են թուրք ոճրագործներին, որոնք մասսայօրէն քրիստոնեաներ են կոտորել իրենց երկրում՝ Թիւրքիայում:

– Այո, լսել ենք, գիտենք:

–Մեր ունեցած տեղեկութեան համաձայն, թուրք ամէնամեծ ոճրագործներից մէկը՝ Էնվէր բէյը, ապաստանել է այս կողմերի լեռներում: Թիֆլիսում մենք դիմեցինք հայկական կենտրոնին և խնդրեցինք օգնել մեզ այս կողմերում, բռնելու Էնվէրին, և այնտեղ խորհուրդ տուին ձեզ հետ խօսելու այդ մասին վստահ, որ դուք հնարաւոր աջակցութիւնը ցոյց կը տաք, ուստի կուզենայի իմանալ՝ կարո՞ղ էք օգնել մեզ և ինչ՞ կերպ:

– Այո, ճիշտ է, ասացի, Էնվէրը գտնւում է այս կողմերում և մեր ունեցած տեղեկութեան համաձայն նա ապաստան է գտել Հաջի Սամլու կոչուած լեռնային չրջանում, որն այստեղից ուղիղ գծով հաղիւ 40–45 կիլոմետր լինի: Մենք լսել ենք, որ Աղդամում ձեր սպաներից մէկը ճանաչել է նրան և ուղել է ձերբակալել, բայց տեղացի իր հաւատակիցները միջամտել, համոզել են սպային, թէ նա դաղստանցի վաճառական է և, հաւանօրէն, նման Էնվէրին իւր դէմքով:

– Այո, նման բան տեղի է ունեցել, տեղացի բռնմաթիւ մարդկանց մէջ անմտութեան հետևանքով խանգարել է Էնվէրի

ձերրակալութիւնը, մանաւանդ որ այդ ժամանակ բաւարար քանակութեամբ զինուորական ոյժ չենք ունեցել այնտեղ: Հիմա մեղ հետաքրքրում է մի բան, եթէ կարող էք օգնել, ինչո՞վ կամ ինչպիսի՞ օգնութիւն կարող էք ցոյց տալ:

– Պարոն գնդապետ, մենք կարող ենք, և մեր սեպուհ պարտականութիւնն է օգնել ձեղ այդ գործում, որովհետև մեր ժողովրդի մեծագոյն գահիճներից մէկն է Էնվէրը. ձեղ քաջ յայտնի է մեր ժողովրդի ունեցած ահռելի կորուստը, որը պատճառել են մեղ Էնվէրն ու իր ընկերները: Այս համաշխարհային պատերազմի ընթացքին, բացի ռազմաճակատներում տուած մեր հազարաւոր զոհերից, մեր ժողովուրդի մէկ երրորդը զոհ է դարձել արիւնռուչտ Էնվէրների կազմակերպած տեղահանութեանը հարաւի կիզիչ անապատներում և ճամբին, տաճիկ ասկեարների նաեմաղանին: Հէնց այդ պատճառով ձեր ձեռնարկը միանգամայն մօտ է մեր սրտին, և մենք ամէն կերպ կաջակցենք ձեղ:

– Սակայն ինչպէ՞ս, զործնական ի՞նչ միջոցով կարող էք օգնել:

– Պարոն գնդապետ, ձեր ձեռնարկը, չատ լուրջ լինելով, պահանջում է խիստ ուշադիր և զգոյշ վերաբերմունք: Պէտք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք, եթէ Էնվէրը հոտն առնէ, որ ապաստանը յայտնի է դարձել, անմիջապէս պիտի հետանայ ուրիչ տեղ ապաստանելու, հետապնդումից ազատ լինելու համար, ուստի ինչ որ անհրաժեշտ համարւի անել, պիտի անել չատ արագ: Հալէպի Սամլուն փոխուստի լաւ ճամբաներ ունի, պէտք է անգլիական զօրամասերով չղթայ կապած, արագօրէն բռնել ճամբաները և յանկարծակիի բերել թէ տեղացիներին և թէ ապաստան զտածին:

– Շատ լաւ, մենք պահանջւած անհրաժեշտ թիւով զինուոր կարող ենք արագօրէն հասցնել, իսկ դուք և ուրիշները կարո՞ղ էք առաջնորդի (ուղեցոյցի) դեր կատարել մեր զօրքին:

– Ամենայն սիրով, որքան պահանջւի, առաջնորդներ կը տանք, և ես էլ կընկերանամ նրանց, սակայն, ըստ իս, լաւ կը լինի, եթէ անգլիական զինուորական զգեստ տրւի առաջնորդներին, որպէսզի աննկատ մնան: Բացի այդ, անգլիական զօրքի թիկունքում մի որոչ հետաւորութեան վրայ, չղթայ կապած կը լինեն մեր մարտական ոժերը, աւելի խստացնելու հակողութիւնը:

– Առաջնորդներին զգեստաւորելը դիւրին է, անմիջապէս կը կարգադրւի այդ մասին անհրաժեշտը. ես վաղը պիտի վերադառնամ. և կը գայ այստեղ իմ օգնական աշխատակիցներից մէկը, որի հետ պիտի աշխատէք միասնաբար և ձեր ունեցած հնարաւորութեան սահմաններում, խիստ գաղտնի հետևելու Էնվէրի չարժումներին, եթէ վերջինս ապաստանելու լինի ուրիչ վայր, յայտնէք օգնականիս, որ անմիջապէս ծածկագիր հեռագրով յայտնի ինձ, անհրաժեշտը կարգադրելու:

–Այժմ ես կարող եմ երկու հարիւր հազար ոուբլի տալ ձեղ, ցարական կառավարութեան դրամներով, ընթացիկ ծախսերի

համար, և եթէ աւելի պէտք ունենաք, կը ստանաք իմ օգնականից: Հասկանալի է, ի հարկէ, ինչ որ խօսուեց այստեղ, կը մնայ խիստ գաղտնի:

–Պարոն զնդապետ, մենք դրամի պէտք չունենք, մեր ունեցած հնարաւորութեան սահմաններում կը հետևենք էնվէրի չարժումներին և ձեռք բերուած տեղեկութիւնները կը հաղորդենք ձեր օգնականին, միայն թէ ինչ որ պիտի արւի, պէտք է աչխատել չուտ և արագ կատարել:

Հրաժեչտ տալուց զնդապետը իր դոհունակութիւնը յայտնեց և ասաց, որ պիտի ջանայ չուտով անգլիական զօրքի հետ Շուչի գալ և անմիջապէս գործի անցնել:

Ճիչտն ասած, ես մեծ բաւականութեամբ դուրս եկայ զնդապետ Սանդերսի մօտից, յուսալով, որ պիտի յաջողւի բռնել մեր ժողովրդի մեծագոյն դահիճներից մէկին:

Հրանդը, որ ամբողջ ժամանակը ուչադիր, լուռ լսողի գերում էր, երբ դուրս եկանք միսիայի չէնքից, ճամբին խիստ գժգոհութիւն յայտնեց, որ մերժեցի զնդապետ Սանդերսի առաջարկը, չընդունեցի առաջարկւած դրամը:

– Ինչո՞ւ մերժեցիր, չընդունեցիր, ցարական 200,000 ռուբլին զգալի գումար է մեզ համար, մանաւանդ այժմ, երբ մեր սնդուկը դատարկ է: Ցարական դրամը բարձր է Կովկասեան կոմիսարիատի և մանաւանդ Ադրբէջանի բոնաններից: Մեր ստացած դրամները Կովկասեան կոմիսարիատի և մեծ մասամբ Ադրբէջանի բոնաներ են:

– Գիտես ինչ, Հրանդ, գուցէ ճիչտ է դիտողութիւնդ, մանաւանդ որ միջոցները սպառւելու վրայ են, սակայն երբ զնդապետն առաջարկեց ընդունել 200,000 ռուբլի, ես վայրկենապէս ցնցւեցի, մտածելով, թէ կաչառք է տալիս, վատ զգացի և մերժեցի:

Գնդապետ Սանդերսի հետ ունեցած զրոյցը նոյնութեամբ յայտնեցի Ազգային Խորհրդին, որպէս գաղտնիք, սեպհականութիւն Խորհրդի, կողմնակի մարդիկ չպիտի իմանան առ այժմ, սակայն, իհարկէ, պարտաւոր էի, և նոյնը յայտնեցի Կենտրոնական Կոմիտէին, որը պէտք է ակտիւ դեր կատարէր:

ՇԱՏԻԼՎՈՐԴԻ ՆՈՐ ՀՐԱՀԱՆԳԸ

Յունիս 1–ին Շատիլվորդից ստացւած հրամանի համաձայն, անգլիական միսիան յայտնեց, որ երկու կողմերը չպէտք է դիրքապահութիւն ունենան Հայ–Թրքական Թաղերի սահմանի վրայ, պէտք է անմիջապէս վերացւի, Թիւրիմացութեանց տեղիք չտալու համար:

Ազգային Խորհրդի կողմից գնացել էինք միսիային ներկայանալու Ասլան Շահնազարեանը, Հրանդ Բահաթրեանն ու ես: Մայոր Մօնկ Մէսընին ասացինք, որ մենք ղզուչութեան համար ենք դիրքապահութիւն ունենում գիշերները, որովհետև ամէն վայրկեան կարող է չնչին մի առիթով պրովակասիօն տեղի ունենալ և անակնկալի բերել մեզ, մանաւանդ որ մենք ոչ մէկ վստահութիւն չունենք Սուլթանովի հանդէպ, որին մենք չատ լաւ ենք ճանաչում, որպէս խիստ վտանգաւոր և նենգ մարդու:

Մայորը վստահացրեց, որ գիշերները երկու թաղերի սահմանի երկայնքին պէտք է սիպայիները խումբ-խումբ անց ու դարձ անեն, այնպէս որ թուրքերը չեն համարձակւի յարձակում գործել:

Գնդապետ Սանդերսի սենեակի դուռը բաց էր, և ինքը սենեակում անց ու դարձ էր անում. ընկերների համաձայնութեամբ ուղեցի հանդիպել գնդապետին, մօտեցայ սենեակի դռանը, թոյլտուութիւն խնդրեցի ներս գնալու, գնդապետը ժպտադէմ հրաւիրեց ներս ու փակեց դուռը:

– Նոր բան կամ տեղեկութիւն ունէ՞ք էնվէր բէյի մասին յայտնելու:

– Ոչ, պարոն գնդապետ, արդէն երեկ սպառիչ կերպով խօսեցինք մենք. ես ուղում եմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել մէկ հանգամանքի վրայ: Ձեզ անչուշտ յայտնի է, որ գեներալ Տօմսոնը կարգադրել է, որ Զանգեզուր-Ղարաբաղը ենթարկւի Ադրբէջանի իշխանութեանը և Ադրբէջանի կառավարութիւնը, գեներալի համաձայնութեամբ, Զանգեզուր-Ղարաբաղի նահանգապետ է նչանակել Խոսրով բէկ Սուլթանովին: Մենք ընդդիմացել ենք, չենք ճանաչել ու չենք ենթարկւել մինչև այժմ Ադրբէջանի իշխանութեանը, ուստի չենք ենթարկւում և նրա նչանակած նահանգապետին: Ադրբէջանի կառավարութեան բոլոր անդամները, ինչպէս և Սուլթանովը, մոլեռանդ պանիսլամիստներ են, պատկանում են "Մուսաֆաթ" կոչւած խիստ ռէակցիօն կուսակցութեանը, որի գեներալը օսմանեան կառավարութիւնն է: Ձեր մասին, ի հարկէ, գիտէ Ադրբէջանի կառավարութիւնը, որն անչուշտ տեղեկացրել է Սուլթանովին: Ես կարծում եմ, որ ադրբէջանցիները հետևած են ձեր չարժումներին և ձեր Շուշի գալու վերաբերեալ որոչ ճիչտ կռահումներ անում են, թէ ինչ նպատակով էք եկել այստեղ: Նրանք անչուշտ գիտեն, որ ձեր կարգադրութեամբ են ձերբակալւած Նուրի փաչան և ուրիչ տաճիկ ոճրագործներ: Այս վերջիններից մէկն էլ էնվէրն է, և նրանք անպայման կը մտածեն, որ դուք էնվէրին հետապնդում էք: Նկատի ունեցե՞լ էք, որ Սուլթանովը Հաջի Սամլուի քուրդ բէկերից է և նա հաւանօրէն

տեղեկացրած կը լինի էնվէրին ձեր մասին, ուստի, ըստ հնարաւորին, պէտք է չատ արագ չարժւենք:

– Ի հարկէ, նրանք կարող են ճիչտ կռահումներ անել, սակայն դա չի կարող մեղ չեղել նպատակից. մենք աւելի առանդով կաչխատենք, և ուր էլ գնալու լինի էնվէրը, մեր ձեռքից աղատւել չի կարող, դրա մէջ համոզւած եղէք: Ինչպէս երեկ ասացի, դուք հետևէք ստոյգ տեղեկութիւններ ձեռք բերել, իսկ ես ամէն միջոց պիտի զործ դնեմ, որ չուտով մեր զօրամասերի հետ միասին գա տեղս: Մինչ այն, ինչպէս ասացի, ձեր տեղեկութիւնները կը հաղորդէք այստեղ եկող իմ աչխատակցին, որին հետազրել եմ հանդիպել ինձ Ելազ կայարանում այսօր:

Այնուհետև զնդապետին յայտնեցի չատ ամփոփ կերպով, որ մեր ժողովուրդը արդէն իր ներկայացուցիչների միջոցով, երկու համագումարներում, որոչում է կայացրել երբէք չենթարկւել Ադրբէջանի իչխանութեանը, որը ոտնձգութիւններ է անում և ուղում է տիրանալ մեր հազարաւոր տարիների սեպհականութեանը: Յայտնեցի, որ երկու համագումարներում ժողովուրդը իւր ցանկութիւնն է յայտնել, որ անգլիական հրամանատարութիւնը իր ղինուորականներից մէկին նչանակի նահանգապետ Ղարաբաղի, որը կունենայ երկու աղգութիւններից հաւասար թիւով օգնականներ, մինչև Զանգեղուր-Ղարաբաղի հարցի լուծումը դաչնակիցների վեհաժողովում: Ապա խնդրեցի, որ զնդապետը աջակցէ մեղ այդ հարցում, որ անգլիական հրամանատարութիւնը ընդառաջէ մեր ժողովրդի ցանկութեանը:

– Իմ միտքն տարբեր է, իհարկէ, սակայն մեր զործի յաջողութեան համար, հնարաւորն ու կարելին պիտի անեմ, որպէսզի Սուլթանովը չկարողանայ խանգարել մեղ:

Գնդապետին հրաժեչտ տւի, դուրս եկայ միսիայի չէնքից, տեսայ Ասլան Շահնազարեանն ու Հրանդ Բահալերեանը մօտակայ դրօսայգում, ծառի տակ նստած զրուցում են: Շտապեցի ընկերների մօտ, պատմեցի զնդապետի հետ ունեցածս զրոյցը, ապա միասին վերադարձանք Ազգային Խորհրդի գրասենեակը: Ճամբին ասացի, թէ որոչել եմ անցնել գաւառ, աջակցել չտաբին ինքնապաչտպանութեան զործում ինչով կարող եմ, չեչտեցի, թէ հէնց միւս օրն էլ կարող եմ մեկնել քաղաքից:

– Դու լաւ կանես, որ չչտապես, ասաց Ասլան Շահնազարեանը, այսօր կամ վաղը Ազգային Խորհրդի նիստում քննութեան կառնենք, թէ մեղնից որ մէկը կամ որոնք առաջին հերթին մեկնեն գաւառ:

Գիչերապահութեան արգելքը չատ է մտահոգում Ազգային Խորհրդին, որը Սուլթանովի ինտրիգի արդիւնք է համարում դա: Այն օրւանից, երբ փակւեց Շուչի-Ելազ լեճուղին, և մեր կապը կտրւեց

դրսի աշխարհի հետ, Միջկուսակցական Բիւրօն որոշեց, միանգամայն խուսափելով ցուցական քայլերից, դիւերապահութիւնը պարտադիր դարձնել հայ-թրքական սահմանի երկայնքին: Եւ, ինչպէս հայ-թրքական ընդհարումների ժամանակ էր, Զինուորական Միութեան վարչութեան հետ խորհրդակցաբար, քաղաքը բաժանւում է նախկին վեց ինքնապաշտպանական չրջանների, իրենց նշանակովի չրջանապետերով և ընտրովի թաղային խորհուրդներով: Քաղաքից դուրս, դէպի Գօրիս տանող խճուղու վրայ իչխող, մէկուկէս կիլոմետր հեռու գտնուող "Պիւլլուր թումբը" (կլոր բլուր) առանձին դիրք էր, իր մարտիկներով, որոնք լուսաբացին բլուրից իջնում, վերադառնում էին քաղաք: Մարտական ուժերի ընդհանուր հրամանատարն էր Զինուորական Միութեան վարչութեան անդամ կապիտան Արտաչէս Վարդապետեանը: Իւրաքանչիւր թաղային խորհուրդ ցուցակագրել էր իւր չրջանի բոլոր տղամարդկանց, 20-50 տարեկանները, թէ՛ զէնք ունեցող և թէ՛ չունեցող: Զինւած մարտիկների թիւը 550-ի էր հասնում, որոնք ունէին ռուսական մօսին և ֆրանսական Լէբել հրացաններ. իւրաքանչիւր հրացանակիր ունէր 150-ից մինչև 250, առ առաւելը 300 փամփուչտ: Հրացան չունեցող քաղաքացիները ունէին զանազան սիստէմի ատրճանակներ՝ Սմիթ, Վիլսըն, Մաուզէր, Նագան, Կոլտ:

Գիւղերները դիրքապահութիւնը չարունակեց մինչև տաճիկների մուտքը Ղարաբաղ, և երբ գրաւեցին քաղաքը, դինուորական դրութիւն յայտարարեցին, դիրքապահութիւնը վերացաւ: Տաճիկները հեռանալուց յետոյ, երբ անգլիական միսիան մի ղօրամասով հաստատւեց քաղաքում, դիրքապահութիւնը չվերսկսւեց մինչև Սուլթանովի նահանգապետ նչանակւելը, որ չատ ծանր ազդեց Ղարաբաղի հայութեան վրայ: Նուչեցի տարիքաւոր հայերը չատ լաւ էին ճանաչում Խոսրով բէկ Սուլթանովին, որը Հաչի Սամլուի Փղանիս գիւղացի էր, նախնական կրթութիւնն ստացել էր Շուչու ռէալական դպրոցում, ապա բարձրագոյն կրթութիւն ստացել Ռուսաստան, վկայւելով համալսարանից որպէս բժիչկ: Ինչպէս պատմում էին տարիքաւոր մարդիկ, Սուլթանովի մայրը հայուհի է եղել, որին Խոսրովի հայրը իր ծառայի օգնութեամբ առևանգել էր:

Գիւղերում սովորութիւն է աչնան, երբ անտառում վայրի պտուղները հասունանում են, գիւղի կանայք և աղջիկները խումբ կազմած կերթան պտղաքաղի, եթէ անտառը հեռու է, նոյնիսկ տղամարդիկ էլ ընկերակցում են, որպէս պահապաններ վայրի գաղաններից կամ աւազակներից պաչտպանելու նրանց: Խմբով գնալուց միասին վայրի խնձոր, տանձ, ընկոյզ, հոն քաղելով, իրենց հետ տարած էչերին ու ջորիներին բարձած բերում են գիւղ, հաւասար բաժանում բոլորի միջև: Պտուղները կտրտւում, կտուրներին չիչխմներ ու մէղարներ փռում և փռւածքի վրայ

չորացնում, դարձնում են չիր: Անտառը նրանից գիւղին չատ մօտ է, գրեթէ կպած գիւղին, կանայք և աղջիկները մէն-մենակ էլ են գնում պտղաքաղի: Միայնակ անտառ գնացած է լինում և Խոսրովի մայրը: Նոյն օրը աղջկայ գիւղի դարբնի մօտ գործով եկած է լինում Խոսրովի հայրը, որը վերադարձին պէտք է նոյն անտառի միջով անցնէր: Աղջիկը բաւական խորացած է լինում անտառի մէջ, եռանդով պտուղ քաղելով: Աղջկայ չար բախտից, երբ պտուղ քաղելիս է լինում անտառի միջով երկարող կածանին չատ մօտ, րէկը անցնելիս նկատում է աղջկան, չլանում նրա գեղեցկութեամբ և, ծառայի հետ միասին, արագօրէն յարձակւում են աղջկայ վրայ, բերանը պինդ փակում թաչկինակով և նստացնելով ծառայի ձիու վրայ, տանում Փղանիս գիւղը: Երբ աղջիկը անտառից չի գալիս, ծնողները կասկածում են, թէ երևի նա գաղտնի սիրահարւած է եղել մօտակայ գիւղերից մի երիտասարդի վրայ և սիրահարի հետ փախել է: Բոլոր փնտրտուքները այդ ուղղութեամբ ապարդիւն են անցնում: Ոմանք կասկած են յայտնում, թէ գուցէ սուած գայլի բաժին է դարձել, ուստի երկար փնտրտուք են կատարում անտառում, դարձեալ ապարդիւն: Տարիներ անցնելուց յետոյ գաղտնիքը բացւում է, և աղջկայ աղգականներից մէկը, արհեստով հիւսն, գործիքները խուրջինի մէջ գցում ուսին, ուղղւում է դէպի Փղանիս, իբրև չրջագայող արհեստաւոր, որպիսիք յաճախ են երևում հայ-թրքական գիւղերում, նորոգութիւններ կատարում կամ պատւէրներ ստանում նոր բաներ չինելու: Բէկը կանչում է իր մօտ հիւսնին և գործ յանձնարարում: Բէկը ոչինչ չի կասկածում, որովհետև նման ուրիշ արհեստաւորներ էլ եղել են Փղանիսում: Հիւսնը րէկի տան պատուհանի փեղկերը և դռները նորոգելիս, տեսնում է աղջկան, ճանաչում, նա էլ իրեն է ճանաչում: Բէկը իր գործով գիւղամէջ գնացած ժամանակը, հիւսնին յաջողւում է խօսել աղջկայ հետ, որ ծնողները կարող են դիմել իշխանութիւններին և աղատել իրեն, սակայն աղջիկը ասում է՝ "եթէ երեխաները չլինէին, անպայման կը համաձայնուէի, իսկ այժմ չատ դժւար է. արդէն մայր եմ երեխաների, որոնցից մէկը ծծկեր և բոլորը կապած են ինձ հետ, ինչպէ՞ս թողնեմ, հեռանամ, մանաւանդ ծծկերին, որ վեց-եօթ ամսական է: Ես հիմա մի չատ դժբախտ կին եմ, զրկւած հարազատներից ու բարեկամներից, սա էլ իմ ճակատագիրն է, երևի Աստւած ուղեցել է պատժել ինձ, և ես պիտի կրեմ պատիժս": Հիւսնը վերադառնում, տեսածն ու լսածը պատմում է աղջկայ ծնողներին, որոնք ուրախանում են, որ աղջիկը ողջ է, և տխրում, որ մահմեդական քրդի կին է դարձել: Ինչպէս պատմում էին, երբ երեխաները մի քիչ մեծացած են լինում, րէկը թոյլատրում է կնոջը՝ ծառայի ուղեկցութեամբ, այցի գնալ ծնողներին:

Ժամանակին ասում էին, որ Աբդուլ Համիդի մայրը հայուհի է եղել, սուլթանի հարեմի հարսներից մէկը, և երակներում հայկական արիւն ունեցող Աբդուլ Համիդը եղաւ հայութեան դահիճը, Խոսրով

բէկ Սուլթանովի մայրն էլ հայուհի է եղել, և Խոսրովն էլ հայկական արիւն ունենալով երակներում, համոզւած պանիսլամիստ էր և խիստ հակառակ հայութեան, ուստի լաւ բան չէինք սպասում Սուլթանովից, ընդհակառակը՝ կասկածում էինք միշտ, թէ մի օր պիտի մի դժբախտութիւն բերի մեր գլխին:

Յունիս 2-ի առաւօտեան հրաւիրեցին մեխա Ասլան Շահնազարեանին, Յարութիւն Թումեանին, Աստուր Աւետիսեանին, Արտեմ Լալայեանին, որը նախորդ օրն էր հասել Շուշի, Խծաբերդի կռւից յետոյ, ինձ, մեր ռազմական ուժերի հրամանատար կապիտան Արտաշէս Վարդապետեանին ու տեղակալ Նիկողայոս Տէր Գաբրիէլեանին. վերջին երկուսը բացակայ էին քաղաքից, գտնւում էին գաւառում: Որոշեալ ժամին ներկայացանք մայոր Մօնկ Մէսընին, որը մեզ ներկայացրեց Բաղւից նոր եկած կապիտան Տաունզենդին, որը զիտէր ռուսերէն և ասաց.

-Գեներալ Շատիլվորդի հրահանգով եկել եմ յատկապէս ձեզ հետ խօսելու, որ դուք առաջիկային չղրաղւէք քաղաքականութեամբ, Զանգեզուր-Ղարաբաղի նահանգապետութեան չուրջ առաջացած վէճով, և ստորագրութիւն տաք, որ պահանջած դէպքում կը ներկայանաք անգլիական զինւորական իշխանութիւններին:

- Պարոն կապիտան, մեզ խիստ զարմանք է պատճառում, ասաց Ա. Շահնազարեանը, որ աշխարհի ամենայն աղատութիւն ունեցող երկրի՝ Անգլիայի ներկայացուցիչները բռնանում են մեզ վրայ՝ Ադրբէջանի պահանջները բաւարարած լինելու համար: Եւ, վերջապէս, մենք քնիկ ղարաբաղցիներ ենք, իսկ Ղարաբաղը հայ ժողովրդի սեպհականութիւնն է, որտեղից մենք փախչելու միտք չունենք բնաւ, ուստի ղարմանում ենք, որ դուք ստորագրութիւն էք պահանջում: Մենք բողոքում ենք, որովհետև պարոն գեներալի կարգադրութիւնը արդար, իրաւացի չէ և չի համապատասխանում ստեղծւած իրական պայմաններին:

- Պարոն գեներալը երկու անգամ եղել է Շուշի, մասնակցել է ձեր աղգային ժողովին, ծանօթացել տեղի պայմանների հետ, խօսել ձեր գործիչների հետ ու որոշ եղրակացութեան հասնելուց յետոյ, համապատասխան կարգադրութիւն արել, ասաց Տաունզենդը:

Երբ խօսքը վերջացրեց, ես մէջ ընկայ:

- Պարոն կապիտան, ճիշտ է, որ պարոն Շատիլվորդը եկել է երկու անգամ Շուշի, ներկայ է գտնւել մեր վերջին համագումարին, որը Ղարաբաղի հայութեան իսկական ներկայացուցչութիւնն է և լիազօր օրգանը, որի կայացրած որոշումները պարտադիր են թէ Ազգային Խորհրդի անդամներին և թէ պաշտօնէութեանը: Գեներալ Շատիլվորդը ժողովրդի իսկական ներկայացուցիչներից լսել է Ղարաբաղի ընդհանուր հայութեան դժգոհութիւնը Ադրբէջանի ոտնձգութիւնների դէմ, որ միանգամայն ապօրինի կերպով ուզում է իրացնել հայ ժողովրդի դարաւոր սեպհականութիւն կազմող

Ղարաբաղը, որը, ինչպէս քանիցս թէ բանաւոր և թէ գրաւոր կերպով բացատրած է, Հայաստանի բնագաւառներից մէկն է: Գեներալ Շատիլվորդը արդիլել էր իմ մասնակցութիւնը համագումարին, սակայն ինչպէս մի չարք գործիչների, ինձ էլ առանձին ունկնդրութեան է հրաւիրել, լսել իմ մանրամասն բացատրութիւնները Ղարաբաղի վերաբերեալ: Գեներալ Շատիլվորդի ուշադրութիւնը հրաւիրեցինք բոլորս առանձին-առանձին մեր երկու համագումարների կայացրած մէկ չատ կարևոր որոշման վրայ, որպէս լաւագոյն միջոցը Ղարաբաղի հարցի առժամեայ կարգաւորման, այն է՝ Զանգեզուր-Ղարաբաղի գեներալ-նահանգապետ նշանակւի անգլիական զինուորականներից մէկը, որը կունենայ հաւասար թւով օգնականներ թէ հայերից և թէ թուրքերից, կառավարելու երկիրը, մինչև հարցի վերջնական լուծումը Վերսայլի վեհաժողովում: Այս ձևով երկու հարևան ժողովուրդները միանգամայն խաղաղ վիճակ կունենային և զինուորական իշխանութիւններն էլ աղատ կը լինէին զլխացաւանքից:

– Յամենայնդէպս, գեներալ Շատիլվորդը այդ բոլորը լսելուց յետոյ, կարգադրում է, որ դուք յառաջիկային քաղաքականութեամբ չզբաղւէք, Ղարաբաղի հարցով չզբաղւէք և ստորագրութիւն տաք՝ պահանջած դէպքում, ներկայանալու անգլիական զինուորական իշխանութիւններին, ուստի հաւանական թիւրիմացութիւններից խուսափելու համար, դուք պէտք է ստորագրէք այս թուղթը, ասաց կապիտան Տաունղենդը, ցոյց տւաւ սեղանի վրայ իւր առաջ զրած թուղթը, գրած ռուսերէն:

Ասլան Շահնազարեանը աւելի մօտ էր նստած զրասեղանին, Տաունղենդը թուղթը ղրեց Շահնազարեանի առջև: Ասլան Շահնազարեանը հայերէն, քթի տակ խօսք ուղղեց մեղ, թէ՝ "Միջազգային կնքւած դաշնագիրները ի՞նչ արժէք ունեն, որ սա ունենայ", ապա զրիչը վերցրեց և ստորագրեց: Պարզ էր, արժէք չունէը այլևս մեր բողոքն ու դժգոհութիւնը: Շատիլվորդը որոշել է չարունակել Տօմսոնի կիսատ թողած գործը, ամէն կերպ ջանալ Աղրբէջանի ցանկութիւնները բաւարարել՝ նրան իր ձեռքում ունենալու համար:

Դուրս եկանք մխիթի չէնքից անդօր բարկութեամբ լեցւած, թէ ինչպէս օրը ցերեկով, բացայայտ կերպով քաղաքակիրթ մի պետութեան ներկայացուցիչները բռնաբարում են մեր անկապտելի իրաւունքը և հարկադրում, որ մենք ձեռք քաշենք մեր պապենական հողերից, ի նպաստ թուրանական տափաստաններից մեր երկիրը խուժած Չինգիզ խանի թոռների:

Նոյն օրը ճաշից յետոյ, ժամը 4-ին, թուրքերը գրաւում են քաղաքից դուրս, արևմտեան կողմում գտնւող "Պիւլլուր Թումբ"

կոչած բարձր բլուրը, որը մեր դիրքերից մեկն էր, և ցերեկով էլ պահակներ ունեինք այնտեղ, կարդ պահպանելու համար: Բլրի մօտ մեկ կէտում միանում էին Խաղուղուն Աւետարանոց, Սղնախ և Քարինտակ գիւղերից և Խալֆալու Թրքական գիւղից երկարող լռնային համբանները: Մի քանի անգամ համբանների միացող կէտում Թիւրիմացութիւններ էին տեղի ունեցել, ուստի որոշել էր այնտեղ մշտական պահակներ ունենալ իրրև միլիցիօներներ ցերեկով, իսկ գիշերները ինքնապաշտպանութեան վեցերորդ չրջանի մարտիկներ: Միսիայի նախորդ օրւայ կարգադրութեամբ "Պիւլլուր Թումբի" դիրքապահպանութիւնը դադարեցրել էինք:

"Պիւլլուր Թումբի" գրաւումը Թուրքերի կողմից, բոլորի՝ թէ Ազգային Խորհրդի և թէ քաղաքացիների կարծիքով, տեղի էր ունեցել Սուլթանովի կարգադրութեամբ և, ամենայն հաւանականութեամբ, Շատիլվորդից կանխաւ ունեցած համաձայնութեամբ: Մեկ օր առաջ Շատիլվորդի կարգադրութեամբ դիրքապահութեան վերացնելը, այսօր առաւօտեան մեղնից ստորագրութիւն առնելը և "Պիւլլուր Թումբ"ի գրաւումը, կանխաւ Սուլթանովի կողմից ծրագրւած, ապա Շատիլվորդի համաձայնութեամբ իրագործւած էինք համարում բոլորս:

Դիրքապահութեան վերացումը և մեղնից ստորագրութիւն առնելը մեծ զրգռում էր առաջ բերել քաղաքի հայերի մէջ, տներում, խանութներում, փողոցում բոլորի խօսակցութեան նիւթը Շատիլվորդի վերջին երկու օրւայ կարգադրութիւնն էր, իսկ երբ տեղի ունեցաւ "Պիւլլուր Թումբ"-ի գրաւումը Թուրքերի կողմից, ժողովուրդը չատ աւելի վրդովւեց. մարդիկ սկսեցին բարձրաձայն իրենց վրդովմունքը յայտնել, հայհոյել Սուլթանովին էլ, Շատիլվորդին էլ: Մեր մարդիկ ու պառաւ կանայք անիծում էին անդլիացիներին, որ Աստուծոյ պատուհասին արժանանայ: "Տայ Աստուած, որ նրանք էլ մեր օրին ընկնեն, նաղու (թշնամու) բաժին դառնան":

Ազգային Խորհրդի որոշմամբ, թեմի առաջնորդ Վահան Եպիսկոպոս Տէր Գէորգեանը, Հրանդ Բահաթրեանն ու ես ներկայացանք մայոր Մօնկ Մէսընին, բողոքեցինք Սուլթանովի պրովակացիօն արարքի դէմ, չեչտելով, որ նա ուղում է անպայման ընդհարում առաջ բերել երկու հարևան ժողովուրդների միջև, որպէսզի, յենւած Անգլենդիի զօրքի վրայ, բռնի կերպով տիրէ թէ քաղաքին և թէ գաւառին: Յայտնեցինք, որ ժողովուրդը խիստ վրդովւած է և սպասում է, որ միսիայի կողմից անհրաժեշտը կարգադրւի և առաջին հերթին "Պիւլլուր Թումբ"-ից հեռացւեն Թուրքերը: Մօնկ Մէսընն ասում է՝ "ես հիմա ոչինչ անել չեմ կարող, արդէն ես հեռագրել եմ գեներալ Շատիլվորդին և սպասում եմ

կարգադրութեան: Դուք գիտէք, որ ես այդ մարդու, Սուլթանովի մասին լաւ կարծիք չունեմ, սպասէք մինչև վաղը՝ կարգադրութեան":

Երեկոյեան ժամը 6-ն էր, որ Թողնցինք միսիայի չէնքը, Եպիսկոպոսին ուղեկցեցինք մինչև առաջնորդարան, ապա Հրանդն ու ես գնացինք Ազգային Խորհրդի գրասենեակ, որտեղ սովորաբար աշխատանքները տևում էին մինչև ժամը 9-ը, իսկ յաճախ մինչև 10-11-ը: Եւ մէկ-մէկ էլ եղել է, որ ամբողջ գիշերը Մելիքսէթ Եսայեանը, որ մեր քարտուղարն էր, իր օգնական գրագիր Գերասիմ Աղասեանը (Գէորգեան Ճեմարանի ուսանող), գրասենեակի հսկիչ Արել Համբարձումեանը և ես մինչև ժամը 2-ը մնում էինք գրասենեակում: Ղարաբաղի հինգ շրջանների հետ ունեցած նամակագրութիւնը բաւական մեծ չափերի էր հասել: Մեր դիմացը Մարդի Դաղեանի հիւրանոցն էր. Արևին կուղարկէինք ընթրիք կը պատուիրէր: Կը բերէին գրասենեակ, բոլորս միասին կընթրէինք ու կը չարունակէինք թղթեր մրոտել:

Արդէն գրասենեակում զրուցում էինք, երբ միսիայի մարդը եկաւ, յայտնեց ինձ, թէ մայորը խնդրում է անցնել իրա մօտ: Գնացի մայորի մօտ, և նա ներկայացրեց ինձ մէկ ուրիշ սպայի, կապիտան Բոնիֆէյսին, որ հէնց նոր էր եկել Թիֆլիսից և խնդրել էր՝ հէնց նոյն երեկոյեան հանդիպել ինձ հետ և որոշ հարցերի չուրջ խօսել: Երեկոյեան ժամը 7-ից անց էր, որ գնացի մայորի մօտ:

Սպան ռուսերէն գիտէր, թարգմանի միջոցով խօսելու ձանձրոյթից ազատ էինք: Ի դէպ, մայոր Մօնկ Մէսընը արդէն ամիսներից ի վեր, ռուսերէնի դասեր էր առնում օր. Մ. Տէր Աստուածանից, որը ուսանում էր Ջուիցերիայում, գիտէր Ֆրանսերէն և Գերմաներէն: Մայորը սկսել էր քիչ-քիչ հասկանալ ռուսերէն և մեր զրոյցին ներկայ էր:

Սպան չատ երիտասարդ և հաճելի արտաքինով մարդ էր. յայտնեց, որ գնդապետ Սանդերսի կարգադրութեամբ է եկել, միասին նախապատրաստական աշխատանք կատարելու մինչև նրա գալը, որպէսզի նրա տեղ հասնելուն պէս անմիջապէս գործի անցնենք: Պատմեց, որ մեծ թւով տաճկական զինուորականներ ու պաշտօնեաներ են ձերբակալուած, որպէս քրիստոնեաների կոտորած սարքողներ, և կենտրոնացած Մալթա կղզում, որտեղ նրանք պահւում են խիստ հսկողութեան ներքոյ: Ապա ծոցի գրպանից հանեց տասի չափ փոստ քարտի մեծութեամբ տաճկական զինուորականների նկարներ ու փռելով սեղանին, հարցրեց.

- Սրանցից որո՞նց էք ճանաչում:

- Այս մէկին, մատս գնելով նկարի վրայ, ասացի՝ Էնվէր բէյն է:

- Դուք նրան տեսե՞լ էք:

– Այո, պատերազմից առաջ, Պոլսում: (Ես Պոլիս չեմ եղած, բայց ղիտմամբ ասացի, որ տեսել եմ, գործին աւելի ոյժ տւած լինելու համար, ինչպէս մտածում էի այդ վայրկեանին):

– Դուք ի հարկէ, պիտի ձեր մարդկանց միջոցով ղգուշացնեմամբ հետևէք էնվէրի չարժումներին, որպէսզի տեղը փոխելուց տեղեակ լինենք և անմիջապէս համապատասխան քայլն առնենք:

– Հէնց այսօր պէտք է գաւառում գտնուղ մի քանի չատ կարևոր մարդկանց նամակները ուղղէինք, բայց որոչ անակնկալ դէպքեր, ինչպէս կը վկայէ պարոն մայորը, տեղի ունեցան, և մենք հնարաւորութիւն չունեցանք նամակները ղրկելու, բայց վաղը կուզարկենք, եթէ զարձեալ խանգարիչ հանգամանքներ տեղի չունենան: Այս բոլորը գեներալ Տօմոնի մէկ սխալի, այն է Աղրբէջանի ապօրինի պահանջի՝ հայկական Ղարաբաղը իւրացնելու և այդ նպատակով պանիսլամիստ տաճկական կառավարութեան երկրպագու Սուլթանովին Ղարաբաղի նահանգապետ նչանակելու պատճառով՝ իսկ հայ ժողովուրդը ոչ Աղրբէջանի և ոչ էլ Սուլթանովի անունը լսել չի ցանկանում:

Մօտ երեք քառորդ ժամ տևեց մեր ղրոյցը, հրաժեչտ տալով մայորին ու սպային, ղուրս եկայ միսիայի չէնքից և արագ ուղղուեցի դէպի Աղգային Խորհրդի զրասենեակը, վստահ, որ ընկերները դեռ այնտեղ կը լինեն: Եւ իրօք, ընկերները սպասում էին, ևնթադրելով, թէ երևի Շատիլվորդից մայորը ստացել է իւր հեռագրի պատասխանը, որը յայտնելու համար է կանչել ինձ: Ընկերներս, սակայն, զարմացան, երբ յայտնեցի երեկոյեան դէմ քաղաք հասած նոր սպայի մասին, որին Թիֆլիսից չտապ կերպով ուղարկել է գնդապետ Սանդէրսը: Ապա պատմեցի մեր ունեցած ղրոյցի մասին:

– Զարմանալի է, ասաց Տիգրան Տէր Գրիգորեանը, մարդս չի հասկանում էս անգլիացիների արարմունքը, նրանց հակասական քայլերը: Առաւօտեան ստորագրութիւն են առնում Աղգային Խորհրդի անդամներից և հասարակական գործիչներից, որ քաղաքականութեամբ չզբաղուեն, Ղարաբաղի հարցով չհետաքրքրուեն և պահանջած դէպքում ներկայանան իրենց, իսկ երեկոյեան կանչում, քաղաքական պատասխանատու գործ են յանձնարարում, միասնաբար իրենց հետ աշխատելու, միջոցներ ձեռք առնելու տաճիկ մեծագոյն ոճրագործներից մէկին՝ էնվէրին ձեռք բերելու և ուղարկելու իր ընկերների մօտ, Մալթա:

– Սատանայի ծնունդ են անգլիացիները, վրայ բերեց Մելիքսէթ Եսայեանը, աչխարհը խաղացնում են իրենց մատների ծայրերին, զիչեր-ցերեկ սատանայի վտվուտներ են կարում, իրենց հակառակորդներին հագցնելու համար: Ո՞վ գիտէ, թէ ինչ սատանայական ծրագիր են որոճում:

Ազգային Խորհուրդը մտքերի փոխանակութիւն ունենալով, որոշեց, որ Մելիքսէթը կրկին գնայ Գօրիս, առանձին ղեկուցէ Արսէն Շահմազեանին, վերջին օրերի ընթացքին տեղի ունեցած դէպքերի, Շատիլվորդի անարդար ու յանիրաւի կատարած կարգադրութիւնների մասին, նաև, մանաւանդ, գնդապետ Սանդէրսի առաջարկութեան ու մեր տուած համաձայնութեան վերաբերեալ՝ միասնաբար աշխատել ձեռք զցել Էնվէրին, որ ապաստանել է Հաջի Սամլուի բէկերի մօտ: Արսէն Շահմազեանը պէտք է կանխաւ տեղեակ լինի խնդրին, որովհետև աշխատանքի մեկ մասը պիտի կենտրոնանայ իր վրայ, Սիսիանի և Քեալբաջարի կողմից փախուստի ճամբաները փակելու համար:

Գնում ենք մեր տները, մի քիչ հանգստացած գնդապետ Սանդէրսի աշխատակից սպայի այնքան արագ ու չուտ Շուշի գալը նկատի ունենալով, սակայն յիշելով Սուլթանովի սկսած գրգռիչ գործողութիւնը, զարձեալ կասկածը կրծում է մեր ներսը, վաղը մեկ ուրիշ նման քայլ չպիտի՞ անէ:

Յունիսի 3-ին առաւօտեան զրասենեակային աշխատանքը նոր էինք սկսել, նամակներ էի սկսադրում տալու քարտուղարի օգնական Աղասեանին արտագրելու, Ալէքսան դայուն, Դալի Մահրասային, Աղասի Վերդևանին, Զարչոնց Երեմեային (Պտրեցիք գիւղից), Աթանաս Ղահրամանեանին (Գանձասարի Վանք գիւղից), Արտեմ Լալայեանին և Արչակ Շահնազարեանին ուղարկելու համար, որ չուտափոյթ կերպով գան Շուշի՝ "մի կարևոր հարցի չուրջ խորհրդակցելու", մեկ էլ տեսանք միսիայի մարգը եկաւ, Ասլան Շահնազարեանին ու ինձ հրաւիրեց մայոր Մօնկ Մէսընի մօտ:
- Եա՞, նահլաթ չէյթանա (անէծք սատանային), ասաց Մելիքսէթը, տեսնես էլի ի՞նչ փորձանք պիտի բերեն մեր գլխին:

Ասլան Շահնազարեանն ու ես գնացինք, ներկայացանք մայորին, որը յայտնեց, թէ գիչերը հեռագիր է ստացել Շատիլվորդից. վերջինս կարգադրում է, որ պետական գանձարանի ունեցածքը փոխադրւի հայկական թաղից թրքական թաղը և յանձնւի Սուլթանովին:

Պետական գանձարանը, որ տասնեակ տարիներից ի վեր գտնւում էր մեծահարուստ բազւաբնակ Ամիրջանեանների տանը, 1917 թ. աշնանից ի վեր դատարկ էր բոլորովին և, ինչպէս իր տեղում յիշատակւեց, 1918 թ. յունւար ամսին, իրաւաբան պանիսլամիստ Զիաթխանով Իսմայիլ խանը Գանձակի պետական գանձարանից 2-1/5 միլիոն ռուբլի ղրամ էր ստացել՝ բերելու և յանձնելու Շուշու գանձարանին, բայց չէր բերել և, Աղդամ հասնելով, իր գործը այնտեղ վերջացնելուց յետոյ, վերադարձել էր Գանձակ և ղրամը յետ տարել: Իսմայիլ խանը, ինչպէս ասւեց, գործով

(մասնաւոր) էր եկել Աղդամ, Գանձակի զանձարանի պետը առիթից օգտուել էր և ղրամը տուել էր Իսմայիլ խանին, որպէս վստահելի մարդու, իսկ վերջինս գիտակցաբար ղրամը չէր հասցրել Շուշի, յետին նպատակներով:

Մայորին յայտնեցինք, որ զանձարանը ղատարկ է. ճիշտ է, մենք չենք օգտւում նրանից, բայց, այնուամենայնիւ, զանձարանի իրեղէնները Ադրբէջանին չեն պատկանում, և որ իրաւունք չունի նման պահանջ կատարելու: Մենք զանձարանի ունեցւածքի համար կուիւ չէինք անելու, ուղում են՝ թող խօսեն զանձարանի ռուս պետի հետ և նրանից ստանան:

Շուշու զանձարանի կառավարիչը վաթսունն անց մի բարի ռուս մարդ էր,[21] չատ յարգւած հասարակութեան կողմից, չնորհիւ իր պարզ ու ղիւրահաղորդ բնաւորութեան: Նա Ադրբէջանի կառավարութեան անունը լսել չէր ուղում և Սուլթանովին չէր նկատում: Երբ Սուլթանովի մարդիկ պահանջեցին կառավարչից յանձնելու զանձարանի իրեղէնները, անգլիական սպաներից մէկի միջոցով, նա ասաց. "Ես Ադրբէջանի կառավարութեանը նկատակայ պաշտօնեայ չեմ, այլ ռուսական կառավարութեան զանձարանի. ես իրեղէնները չեմ յանձնում ձեղ, որովհետև իմ կառավարութիւնից համապատասխան կարգադրութիւն չեմ ստացել, սակայն դուք կարող էք վերցնել իրեղէնները և ինձ համապատասխան մի փաստաթուղթ տալ, որում կը գրէք, որ զանձարանի իրեղէնները դուք վերցրել էք և փոխադրել Թրքական Թաղը": Փոխադրութիւնը կատարելուց յետոյ նման Թուղթ տալով կառավարչին, վերջինիս ու միւս ռուս պաշտօնեաներին առաջարկում են փոխադրել Թրքական Թաղը և զանձարանը կարգաւորել ու չարունակել աշխատել իրրև Ադրբէջանի պաշտօնեաներ, կանոնաւոր կերպով վերականգնելով զանձարանի հաշիւները, բայց նրանք չեն համաձայնում, պատճառաբանելով, որ չպիտի մնան Շուշում, ղիմել են Շատիլովորդին և աջակցութիւն խնդրել՝ ընտանիքներով փոխադրւելու Բագու և այնտեղից Ռուսաստան: Գանձարանի հայ պաշտօնեաները՝ Անդրէաս Տէր Յարութիւնեան, Կարապետ Յակոբեան և Անտոնեան, կտրականօրէն հրաժարւում են ծառայել զանձարանում:

---

[21] Դեպքերի ժամանակագրութիւնը հաստատ մտաիտով պրւած լինելով, ծոցիս պրպտում Թրքերն իրար քաւելուց չատ րառերի և անունների հետ անընթեռնելի են պարձած թէ՛ կառավարչի և թէ՛ զանձարանի ռուս միւս պաշտօնեայի անունները: Գանձարանի կառավարչի մասին լաւ յիշում եմ, որ, իր խոհ առնով, փոխադրքայի պրպտականներից մէկին՝ Զունկովսկու ապրպականներից էր: (Հեղ.)

Գանձարանի իրեղէնների փոխադրութիւնը Թրքական Թագը, մի նոր յուզում էր առաջացրել հայերի մէջ, Շատիլվորդին անիծում էին և նրան համարում էին Թուրք մօրից ծնուած:

Երեկոյեան Ազգային Խորհրդի նիստից բացակայ են Աչոտ Մ. Յովսէփեանը և Արտ. Տ. Միքայէլեանը, առաջինը Թիֆլիսում էր, երկրորդը զաւառում: Ներկայ էին Ազգային Խորհրդի հրաւէրով Գրիգոր Մինասբէկեանն ու Միսակ Տէր Դանիէլեանը (Արամայիս): Քննութեան են առնում Շատիլվորդի վերջին կարգադրութիւնները, ի նպաստ Ադրբէջանի ապօրինի պահանջների բաւարարման: Դրւած հարցի չուրջը հանգամանօրէն մտքերի փոխանակութիւն տեղի ունեցաւ. բոլորի կարծիքը մէկ էր, որ Շատիլվորդը կանգ չպիտի առնէ, նորանոր միջոցներով հարկադրելու մեզ, որ ճանաչենք Ադրբէջանի իշխանութիւնը և ենթարկւենք նրան: Խորհուրդը որոշեց, որ անդամների մի մասը հասնուի Դրնավաղում, զինուորական չտարին աջակցելու ինքնապաշտպանութեան գործը կազմակերպելու մէջ և միաժամանակ վերահասու լինելու չրջանների վարչական գործերին: Որոշւում է, որ միւս օրը Ասլան Շահնազարեանն ու ես մեկնենք: Զինուորական վաչտը առայժմ մնում է քաղաքում, ցնոր կարգադրութիւն, չտարի հետ խորհրդակցելուց յետոյ:

ԱԴՐԲԷՋԱՆՑԻՆԵՐԻ ՈՏՆԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յունիսի 4-ին, առաւօտեան ժամը 6-ին, երբ լոյսը բացւում է, հայ-թրքական սահմանի երկայնքին չրջագայող սիպայիները գնում են իրենց ղօրանոցը: Երբ սիպայիները հեռանում են, թուրքերը կազմ ու պատրաստ, օգտւելով մոմենտից, արագօրէն քաղաքի հարաւային կողմից, առանց ձայն հանելու, յառաջանում են դէպի Բաղունց Հորերի Թաղը: Թուրքերի մի մասը թափանցում է Թաղից ներս, բռնում երեք նեղ փողոցների մուտքը, իսկ մեծ մասը քաղաքի եզրի քարափը, որ միաձոյլ երկար, ուղղահայեաց, բարձր ժայռ է, կախւած Քարինտակ գիւղի վրայ: Թուրքերը այդ կողմից հասնում են մինչև ժամհարեանների տան դիմացի կէտը, որ իշխում է Բաղունց Հորերի վրայ: Եւ դա կատարւում է այնքան արագ, որ Բաղունց Հորերի Թաղը յանկարծակիի է գալիս:

Մի պահ իրարանցում է ընկնում, երբ Գեաւուր Ղալայի մարտիկները ահազանգ են հնչեցնում, սակայն արագօրէն կարգը չուտ վերականգնւում է, որովհետև չրջանապետները կարողանում են իրենց մարտիկներով անցնել արագօրէն իրենց դիրքերը: Երբ Շատիլվորդի հրամանով լքեցինք սահմանի երկայնքին հայ-թրքական ընդհարումներից մնացած մեր դիրքերը, որոշւեց առ. ի ղգուշութիւն դիչերապահութիւնը չարունակել մօտակայ տներում:

Մարտիկները հերթով հսկողութիւն էին անում և լոյսը բացւելուն ղէնքերը թողնում նոյն տներում, աննկատ ցրւում էին: Երբ հնչում է ահազանգը, մարտիկները չուտ հասնում են իրենց տեղերը, ղէնքերն առնում և չտապում իրենց դիրքերը:

Վաչտապետի փոխ-տեղակալ Գէորգ Նազարեանը գործով Դրնավաղ գնացած լինելով, վաչտի հետ մնացել էին իր օգնականը՝ Յակոբ Արղումանեանը և վերակացու Արտեմ Բազդասարեանը. ահազանգը լսելով, դուրս եկայ տնից Աղգային Խորհրդի զրասենեակ գնալու, ղէմս ելաւ սպայ Յակոբ Արղումանեանը և արագ վաղելուց չնչակտուր ասաց՝ "Պարոն Եղիշէ, թուրքերը Բազունց Հորերի քերծը բռնել են, առաջանում են դէպի այս կողմը, վաչտը դուրս բերե՞նք և յարձակւե՞նք թուրքերի վրայ, թէ՞ ոչ":

-Յակոբ, չպէտք է ժամանակ կորցնէիր, զայիր հարցնելու, անմիջապէս պիտի գործի անցնէիր:

Յակոբը արագօրէն վերադառնում է զօրանոց, վերցնում պատրաստ սպասող վաչտը (120 հոգի), անցնում Գեաւուր Ղալայի թաղը, որը իչխում է քաղաքի հարաւային մասի վրայ և որի ստորոտին գտնւում էր անգլիական միսիան, որն արդէն տեղեակ էր թուրքերի կատարած « հերոսութեան » մասին: Յակոբը համաձարկի հրահանգ տալով և ուռնա զոչելով զրոհում է թուրքերի վրայ: Թուրքերը պաշտպանողական դիրք են ընդունում, և սկսւում է կռիւը, որից մենք մինչև այդ օրը ամէն կերպ աշխատում էինք խուսափել: Այդ միջոցին ես քայլերս ուղղում եմ դէպի Աղգային Խորհրդի զրասենեակը և հաղիւ երկու հարիւր քայլ արած, չհասած Ադամեանների տանը, մէկ էլ տեսնեմ՝ Տիգրան Տէր Գրիգորեանը, Միսակ Տէր Դանիէլեանը, Մելիքսէթ Եսայեանը և մի ստւար խումբ ծանօթ քաղաքացիներ դէմս ելան: Հարցրի, թէ ուր են գնում, Տիգրանն ասաց, որ ինձ մօտ են գալիս: Հէնց այնտեղ, փողոցում որոշեցինք՝ մօտակայ Կուսանաց Վանքի բակում, որտեղ նստարաններ կային, նստել և հանգիստ խորհրդակցութիւն ունենալ:

Կռիւը ծաւալւեց երկու թաղերի երկայնքին. մեր մարտիկներին հրահանգւած էր խնայողաբար գործածել փամփուչտը, ուշադրութիւն չդարձնել և նոյն իսկ արհամարհանքով վերաբերւել թուրքերի անդադար հրացանաձգութեանը: Մենք ռազմամթերքից զուրկ էինք, մինչդեռ տաճիկները հեռանալուց ռազմամթերքի մեծ պաչար էին թողել, և թուրքերը անխնայ կրակում էին, մանաւանդ դում-դում գնդակ ունեցող փամփուչտները: Վանքի բակում խորհրդակցութիւնը կարճ տեւեց և որոչւեց, որ թեմի Առաջնորդ Վահան Եպիսկոպոս Տէր Գէորգեանի գլխաւորութեամբ, Աղգային Խորհրդի անդամներն ու քաղաքացիների մի ստւար խումբ ներկայանան անգլիական միսիային և խստիւ բողոքեն Սուլթանովի յղացած կռւի դէմ:

Վանքի բակը փաստօրէն դարձաւ Ազգային Խորհրդի կենտրոնատեղին, որտեղից անհրաժեշտ հրահանգները էր տրւում թէ չրջանապետներին և թէ թիկունքում աշխատող մեր գործիչներին:

Քաղաքում մնացած միակ սպան՝ Յակորը, վաչտի գլուխն անցած զրոհել էր թուրքերի վրայ. փաստօրէն քաղաքի մարտիկների ընդհանուր "հրամանատարի" պարտականութիւնը վիճակւել էր ինձ: Թուրքերը ոչ միայն մեր դիրքերի ուղղութեամբ էին կրակում, այլ և հայկական թաղի բոլոր տների վրայ: Եւ դում-դում գնդակների տարափը սկզբում ընկճող տպաւորութիւն թողնց, բայց չատ չուտ ընտելացան մարդիկ. այլևս արժէք չէին տալիս, և փողոցներում աղատ երթևեկում էին ամէն հասակի մարդիկ, տղամարդիկ, կանայք, օրիորդներ, երեխաները, սովորական օրերի պէս, կարծես չէին ղգում, որ քաղաքում կռիւ է տեղի ունենում:

Մեր ունեցած փամփուչտը ընդամէնը 2700 հատ էր, որ պահւած էր մեր Ազգային Խորհրդի արխիւում, որը գտնւում էր Ղողունց տանը, այնտեղ տարիներ չարունակ պահւել էր մեր կուսակցական արխիւը: Տանտիրոջ տղան՝ Վաղարշակը, մեր ընկերներից էր, թեմական դպրոցի սաներից, սակայն դպրոցը չէր աւարտել, հօր մահւան պատճառով հարկադրւած էր եղել թողնել դպրոցը և ծառայութեան մտնել իբրև գործակատար: Մեր ամբողջ պաշարը մէկ քսակի մէջ, բերել էի տւել, դրել մօտս, որ տայի կարիք ունեցողներին:

Կռւի տաք ժամանակը, ժամը 9-ի մօտերը, մեր ընկերներից Երեմեայ Յարութիւնեանը եկաւ, յայտնեց իր պատրաստակամութիւնը՝ ստանձնելու որևէ աշխատանք, ինչպիսին էլ լինի, թէկուզ ծանր և պատասխանատու:

– Երեմ, հարցրի, կարո՞ղ ես ստանձնել մարտիկներին հաց և կերակուր մատակարարելու գործը:

– Ամենայն սիրով և ուրախութեամբ:

– Այժմ կարող ես քաղաքային վարչութեան պահեստից անհրաժեշտ չափով ալիւր ստանալ և տալ հացթուխներին, իսկ մսավաճառ Աւետիսից էլ, որքան պէտք է, միս վերցնել և թաղային խորհուրդների միջև բաժանել, որ իւրաքանչիւրը իւր չրջանի մարտիկների համար կերակուր պատրաստէ:

Երեմը անցաւ գործի և ամենայն արագութեամբ կազմակերպեց մարտիկներին հաց ու կերակուր մատակարարելու գործը: Գործի էին լծւել երիտասարդներն ու օրիորդները և եռանդով իւրաքանչիւրը կատարում էր իր պարտականութիւնը: Ոչ մէկ չփոթութիւն կամ վախ ընաւ չկար:

Բերդաձորցի (ղարաղչլաղցի) Ասատուրը, որ "Պիւլլիւր Թումը"-ի պահակապետն էր եղել, մինչև Շատիլվորդի հրամանով դիրքապահութեան վերացւելը, ղարաղչլաղցի և Գեաւուր ղալացի ստւար մի խմբի գլուխ անցած, կայծակի արագութեամբ յարձակւում է "Պիւլլիւր Թումը"-ը գնդացիրներով պաշտպանող թրքական յիսնեակի վրայ: Ասատուրի խիղաճ զրոհը անակնկալի է մատնում Թուրքերին, որոնք չիոթեւում, չեն կարողանում իրենց երկու մաքսիմ գնդացիրները գործի դնել, և երբ Ասատուրը խմբով ուռռա կանչելով արագ սկսում է բլուրի մէկ կողմից բարձրանալը, ուչաղրութիւն չդարձնելով Թուրքերի անկանոն ու չիոթ հրացանաձգութեանը, Թուրքերը նահանջի ճամբան են բռնում արագօրէն, այնքան, որ հաղիւ կարողանում են, գնդացիրները քարչ տալով, բլրի միւս կողմից իջնել ցած, տեղ-տեղ գլորւելով, և բլրի վրայ Թողնում են 30 ցինկի արկղ փամփուշտ, 18000 հատ: "Պիւլլիւր Թումը"-ի գրաւումը մեծ որգևորութիւն է առաջացնում քաղաքի հայերի մօտ, մանաւանդ որ Ասատուրի խմբից ոչ մէկը լուրջ վէրք էլ չի ստանում, միայն մարտիկներից մէկի թևը չատ թեթև վէրք էր ստացել, գնդակը կուռը չէր ծակել, այլ կաշին էր քերծել:

Շուտով երիտասարդներից մէկը հևիհև վազելով, չնչակտուր, գալիս, յայտնում է, որ Յակորը Թուրքերից մաքրել է Բաղունց հորերը, Թուրքերը 37 սպանւած են տւել, և մեղնից մի հոգի է սպանւել և մի հոգի էլ թեթև վիրաւորւել: Յակորը կանգ չի առնում, նոյն Թափով առաջ է գնում. Թուրքերը չարունակ
հրացան արձակելով նահանջում են, ամրանում Գեովհար աղայի կիսաւեր տանը, որը գտնւում է համանուն Գեովհար աղայի դաշտի եղրին: Յակորը բուռն յարձակմամբ գրաւում է Գեովհար աղայի տունը, որը Թուրքերի ամուր դիրքերից մէկն էր, և ամրանում է այնտեղ: Երբ Գեովհար աղայի տան գրաւումը տեղի է ունենում, հայերի ոգևորութիւնը հասնում է իր գագաթնակէտին: Յակորի վաչտից սպանւում է մէկ հոգի և թեթև կերպով վիրաւորւում են երկու հոգի: Մի ժամ անցած, մէկը գալիս, գուժում է Յակորի ղարնւելը պատահական գնդակից, որը դիպել էր կրծքին: Յակորի մահը մեծ ցաւ պատճառեց բոլորին: Դին ամփոփւեց եղբայրական գերեզմանատանը, քաղաքային հիւանդանոցից վերև, որտեղ ամփոփւած են հայ-Թրքական ընդհարումներին զոհւած մարտիկները:

Յակորը վաղաժամ զրկւել էր հօրից, որը վախճանւել էր Թոքերի բորբոքումից. ինքը և փոքր եղբայրը, Թեմական դպրոցի նախակրթարանի աշակերտներ, մնում են մօր՝ Մարիամի խնամքին: Յակորի հայրը արհեստաւոր է եղել և Գեաւուր Ղալայի Թաղում կարողացել է փոքրիկ, համեստ արտադրնով տուն չինել: Ամուսնու մահւան հետևանքով Մարիամը չի ընկճւում և որոչում է մասնաւոր տներում աշխատել, իբրև լւացարար կամ տան մաքրութիւն անող:

Մարիամը մանուկ տներում աշխատելով, շատ դժուարութեամբ էր կարողանում հոգալ տան կարիքները և չէր կարողանում կանոնաւոր կերպով երեխաների ուսման նւաղագոյն ծոչակը վճարել. դպրոցի հոգաբարձութիւնը ընդառաջելով Մարիամի աղերսագրին, երեխաներին անց է կացնում ձրիավարժ աշակերտների շարքը: Յակորը հասնելով չորրորդ դասարան, այլևս չի սովորում, գնում է Բագու ծառայութեան, որպէսզի կարողանայ օգտակար լինել ընտանիքին, մանաւանդ որ մայրը ուժասպառ էր եղել: Պատերազմից մէկ տարի առաջ ննջարկւում է զօրակոչի, և երբ պատերազմը սկսւում է, Արևմտեան ճակատ ուղարկւած իրենց զօրամասում հասարակ զինուոր էր: Ռաղմաճակատում, Բրուսիլովի բանակում աչքի է ընկնում քաջութեամբ և աստիճանի բարձրացում ստանալով դառնում է պրապորչիկ:

Երբ բորբոքւում է կռիւը, Հրանդ Բահաթրեանը ներկայանում է թեմի առաջնորդ Վահան Սրբազանին, որ միասին գնան անգլիական միսիան և բողոքեն Սուլթանովի արարքի՝ կռիւ սկսելու դէմ: Վահան Եպիսկոպոսը անմիջապէս առնելով հետը նաև առաջնորդարանում գտնւող երկու քահանաներին՝ Տէր Գարեգին Յովհաննիսեանին ու Տէր Յակոբ Այվազեանին, ուղղւում են դէպի անգլիական միսիա: Ճամբին եպիսկոպոսին միանում են մօտ տասը հոգի աչքի ընկած քաղաքացիներ: Վահան Եպիսկոպոսը բողոքում է Սուլթանովի արարքի դէմ,չնչտելով, որ հայերը ճչտիւ կատարել են Գեներալ Շատիլվորդի հրամանը, լքել դիրքերը, իսկ Սուլթանովը ղրան էր սպասում, որպէսզի կռիւը սկսէր:

Մայոր Մօնկ Մէսընը յայտնում է, որ Սուլթանովի չար նպատակը շատ լաւ է հասկացել և անմիջապէս հեռագրել է գեներալ Շատիլվորդին ու պարզել իրողութիւնը, սպասում է հրահանգի՝ անհրաժեշտը կարգադրելու: Եպիսկոպոսը իր չքեամբով հրաժեշտ է տալիս, և դուրս գալուց մայորը Հրանդին հարցնում է իմ մասին, քաղաքու՞մ եմ գտնւում, թէ՞ ոչ: Հրանդը միամտաբար յայտնում է, որ գտնւում եմ քաղաքում:

Թուրքերը չարունակում են գնդակների տարափը, մանաւանդ պայթուցիկ գնդակների տարափը, որով ուղում էին ընկճւողական տրամադրութիւն առաջ բերել մեր մէջ, սակայն այլևս ոչ ոք, նոյնիսկ մանկահաս երեխաները արժէք չէին տալիս տեղացող տարափին: Ինչպէս յիշւեց իր տեղում, մեր մարտիկները խիստ խնայողութեամբ էին գնդակ արձակում: Զինւորական ծառայութեան մէջ եղած մարտիկներ կային, վարժ նշանառուներ, որոնց արձակած գնդակները չէին վրիպում: Կէսօրից անց էր, Տէր Գարեգին Յովհաննիսեանը հինգերորդ չրջանի թաղի չրջանապետ Թովմաս Թարվերդեանի ու նրա մարտիկներից մէկի հետ նկաւ մեր "չտաբ"-ը, վանքի բակը: Թովմասի հետի մարտիկը նիհարակազմ,

միջահասակ երիտասարդ էր, չորս հատ փամփուշտակալ լիքը, մօսին երկար հրացանը ձեռքին: Թովմասը ներկայացնում է մարտիկին, որ չրջանի լաւագոյն նչանառուներից մէկն է և թուրքերից եօթ հոգու խփել էր: "Շտար"-ում ներկայ էին մի չարք ընկերներ և քաղաքացիներ, որոնք միաբերան "կեցցէ» գոչեցին: Ասացի՝ "Թովմաս, դժրախտաբար չքանչաններ չունենք անվրէպ գնդակ արձակողների կրծքին խփելու ու մեր երիտասարդին, որպէս տրուած հրահանգը ճչտիւ կատարողի՝ աննպատակ գնդակ չարձակողի և նպատակին անհրաժեչտաբար կրակած եօթ փամփուչտի կրկնակին կը տամ:"

"Արժէ, արժէ". ասացին ներկայ գտնուողները և 14 հատ մօսինի փամփուչտ տուեցի երիտասարդին, որը ընդունեց ժպտալով և դնաց իր դիրքը:

Երեկոյեան ժամը 2-ին մայոր Մօնկ Մէսընի հրամանով, սիպայիները բռնում են հայ-թրքական գիծը և երկու կողմերին յայտարարում են դադարեցնել հրացանաձգութիւնը, թողնել դիրքերը, հեռանալ: Հրացանաձգութիւնը դադարում է, մեր մարտիկները քաչւում են պաչտպանողական երկրորդ գիծը: Սիպայիների մի դասակ գրաւում է "Պիւլիւր Թումբ"-ը: Ժամը 4-ին մայորը Վահան Եպիսկոպոսին և Հրանդ Բահաթրեանին հրաւիրում է իրա մօտ, յայտնելու Շատիլվորդից ստացած հեռագրի պատասխանը: Եպիսկոպոսին ու Բահաթրեանին, մեծ չուկայով անցնելիս,միանում են ուրիչ մի քանի հոգի և ներկայանում միսիային: Այդ ժամին, "չտար"-ում էր Կենտրոնական Կոմիտէի ամբողջ կազմը, որը Հինգերորդ Համագումարի ընթացքին լրացել էր, ընդունելով իր մէջ Արամայիսին և Յարութիւն Թումեանին, Ա. Տ. Միքայէլեանին և Գ. Ղարագեօզեանին:

ՇԱՏԻԼՎՈՐԴԻ ՆՈՐ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԴԷՄ

Եպիսկոպոսի և Բահաթրեանի հրաւիրման առթիւ մտքերի փոխանակութիւն տեղի ունեցաւ, աւելի ճիչտ կարծիքներ լսեցին, թէ ոչ ոք Շատիլվորդից լաւ բան չէր սպասում: Մէկ ժամ չէր լրացել, մէկ էլ տեսանք, եկան Եպիսկոպոսն ու Բահաթրեանը, ահագին մի բազմութիւն էլ իրենց ետևից: Վանքի ընդարձակ բակը բռնեց բազմութեամբ, որը րոպէներով աճում էր: Եպիսկոպոսը տխուր և ընկճած ձայնով յայտնեց Շատիլվորդից ստացած հեռագրի բովանդակութիւնը, ըստ որում պահանջւում էր՝ "դադարեցնել կռիւը, ձերբակալել այն անձանց, որոնցից ստորագրութիւն է առնւած, և ուղարկել Բագու:": Ստորագրութիւն տւածներից միայն երեք հոգի էինք գտնւում քաղաքում՝ Ասատուր Աւետիսեան, Յարութիւն Թումեան և ես: Եպիսկոպոսն ասաց, որ

մայորը յայտարարել և աղնիւ խօսք է տուել, որ մեղ չպիտի ձերբակալի, միայն թէ ներկայանանք, և ղէմառղէմ Հնարաւորութիւն ունենայ խօսելու մեղ հետ:

Վանքի բակում բաղմութիւնը անընդհատ աւելանում էր. գալիս էին ամէն տարիքի տղամարդիկ, կանայք, երեխաներ 1000–1500 հոգի. բոլորը հետաքրքրւում են, թէ ինչու միսիան կանչել է Եպիսկոպոսին: Բոլորը ասում էին, թէ՝ "Շատիլվորդը ինչ իրաւունք ունի մեր երկրի մարդուն իր հողից հեռացնելու", ոմանք էլ ասում էին՝ "էդ էլ հա՞րց է, որ տալիս էք, երկրի տէրերը հիմա անգլիացիներն են, զօրք ունեն, ոյժ ունեն, ի՞նչ կարող ենք անել":

Բաղմութեան մէջ էին բոլոր հոսանքների աչքի ընկած ղէմքերը: Վահան Եպիսկոպոսը բնաւորութեամբ մեղմ, բարեհամբոյր և բարեպաշտ մարդ էր, այն տեսակէտին էր, որ ոչ մի կերպ չպիտի հակառակ դիրք բռնել անգլիացիների ղէմ, մանաւանդ, որ Բագւում մեր զորձիչները խորհուրդ տուած են եղել ջանալ ամէն կերպ խաղաղ ընդդիմադիրի դիրքում մնալ, իսկ եթէ անցանկալի համարուած անհատների աքսորելու լինեն, չընդդիմանալ, թող աքսորեն, իսկ Հայաստանի կառավարութիւնը միջոցների կը դիմէ դաչնակիցների հրամանատարութեան մօտ, խստիւ կը բողոքէ և Հնարաւորութիւն կունենայ հարկադրելու՝ արդար կերպով լուծելու խնդիրները: Եւ Եպիսկոպոսը առանձնապէս աշխատում էր աղդել իմ վրայ, համոզել ինձ, յուսալով, որ դրանից յետոյ միւս երկու ընկերները չէին ընդդիմանայ, որ անպայման ներկայանանք միսիային: Եպիսկոպոսի խօսքերը աղդում են չատերի վրայ և հաւանութիւն առաջացնում:

Հարկաւ, ամբոխի հետ խորհրդակցել, մտքերի փոխանակութիւն ունենալ անկարելի էր. ուստի մենք առաջարկեցինք, որ բոլոր հոսանքներից ներկայացուցիչներ ընտրուն, և առանձնանաք Եպիսկոպոսի հետ միասին խորհրդակցելու, թէ ինչ պիտի անել:

Անմիջապէս տեղի վրայ գտնուղ կուսակցականները ջոկեցին, և Եպիսկոպոսի հետ անցանք վանքի երկրորդ, միւս կողմի բակը: Մ՛օտ քառասուն հոգի էինք առանձնացողներս և մեծամասնութիւնը դաչնակցականներ՝ 20–22 հոգի: Ստորագրութիւն տուած երեքս՝ Աւետիսեան, Թումեան և ես, ղէմ էինք ներկայանալուն:

Ինչպէս յիշուեց, հրացանաձգութիւնը հրամայուած էր դադարեցնել, և երկու կողմերը դադարեցրին. սակայն երկու ժամ անց թուրքերը խախտեցին լռութիւնը, սկսեցին իրենց անկանոն հրացանաձգութիւնը և առաւօրէն կրակում էին դում-դում

զնդակները, հայերի չարքերում չփոթ առաջացնելու համար. սակայն արժէք տուող չկար, թէև սկզբում չատ քչերը որոչ չափով չփոթ տրամադրութիւն էին ցոյց տուել և ծաղրի ենթարկուել: Շատերը ենթադրում էին, որ Սուլթանովին յայտնի էր Շատիլվորդի հեռադրով արած կարգադրութիւնը , ուստի հրահանգել էր իրենց դինուած ուժերին՝ ուժեղ հրացանաձգութիւն սկսել՝ մեր մէջ ընկճողական տրամադրութիւն առաջ բերելու համար, որպէսզի ենթարկուենք եղած կարգադրութեանը:

Երբ առանձնացանք, Եպիսկոպոսը կրկնեց մայորի տուած խօսքը, որ մեղ չի ձերբակալի, ներկայանանք և լսենք իր խօսքը, որ նա ուզում է մեղ հետ խօսել և մեր պատասխանը լսել:

Երեքիս տեսակէտը մէկ էր, որ չպիտի ներկայանալ, այլ քաղաքից հեռանալ, քանի որ մայորը չի կարող և իրաւունք չունի հակառակ գնալու իր պետի հրամանին:

Եպիսկոպոսը երբ լսեց մեր խօսքը, չատ ղգացուած, արտասուքն աչքերին, սկսեց խնդրել, աղաչել, որ հակառակ ղիրք չբռնենք, նկատի ունենանք Բագւի
Աղգային Խորհրդի և այնտեղի հասարակական գործիչների (իմա՝ դաշնակցականների) կարծիքն ու տուած խորհուրդը, ծայրայեղ պարագային չընդդիմանալ, թողնել խնդրի լուծումը Հայաստանի կառավարութեանը, որը կարող է և հնարաւորութիւն ունի բողոքելու, անհրաժեչտ համապատասխան միջոցների դիմելու, Ադրբէջանի ոտնձգութիւնների առաջն առնելու համար:

Աղգային Խորհրդի և Կենտրոնական Կոմիտէի անդամները չատ լաւ յիչում էին Յովհաննէս Քաջազնունու՝ Հրանդ Բահաթրեանին տուած խորհուրդը՝ համաձայնութեան եղր գտնելու Ադրբէջանի կառավարութեան հետ, որովհետև Հայաստանի կառավարութիւնը ի վիճակի չէ հարկադրական որևէ միջոցի դիմելու, իր ձայնը լսելի դարձնելու և մերժելու Ադրբէջանի ապօրինի պահանջները, մի բան, որ արդէն սեպհականութիւն է դարձած չատ չատերին, մանաւանդ մեր ընկերներին: Ուստի սկսեց թիր ու դէմ կարծիքների փոխանակութիւն, և պարզ երևում էր, որ թէ մեր ընկերների ճնչող մեծամասնութեան և թէ միւս հոսանքների մարդկանց տեսակէտով, պէտք էր ընտրել երկու չարեաց փոքրագոյնը, այն է՝ ներկայանալ միսիային և հարց ղնել ու պահանջել, որ եթէ հարկադրուած պիտի լինենք ենթարկուելու Շատիլվորդի կարգադրութեանը, ապա պահանջենք, որ մեղ փոխանակ Բագու ուղարկելու, Թիֆլիս ուղարկեն:

Ռուսական յեղափոխութեան հետևանքով երբ տակնուվրայ եղաւ երկիրը, ամենուրեք անիչխանութիւն էր ծայր տուել, Սիբիրից աղատուած հաղարաւոր ոճրագործներ, աւազակներ ողողել էին

երկիրը, կեանքի և գոյքի ապահովութիւն չկար: Եւ երբ ռուսական զօրքերը, առաջնորդելով Լենինի "դէպի տուն" նշանաբանով, լքեցին դիրքերը, և Կովկասեան ռազմաճակատի պաշտպանութեան դործը ծանրացաւ բացառապէս հայ ժողովրդի ուսերին, մեր հարեւանները՝ վրացիները և ադրբէջանցիք լքեցին մեզ, բնաւ մտահոգուած չէին ճակատի խնդրով: Մեր այդ դժւարին ու ծանր պայմաններում երկրորդ մեկ ուրիչ վտանգ էլ կախուել էր մեր գլխին, դա մասնաւորապէս ադրբէջանցիների բռնած դիրքն էր: Ադրբէջանցիք ամբողջովին հակուած էին իրենց արիւնակից և հաւատակից ժողովրդի՝ օսմանցիների կողմը, ուստի ամէն հայ մարդ, մանաւանդ ադրբէջանցիների հարեւանութեամբ, դրկից հայերը, կասկած ունէին իրենց սրտում, արդեօ՞ք մի օր ներքին ճակատ չեն ստեղծի օսմանցիների դրդմամբ: Եւ հայ ժողովուրդը պիտի մնայ երկու կրակի միջև: Ի դէպ, յիշելու է, որ Դաւիթ բէկի ստեղծած անկախ իշխանութիւնը վերջացաւ նրա և Մխիթար սպարապետի մահւամբ: Ժամանակի Պարսից նենդ ու խարդախ կառավարութիւնը, Սիւնիքում ճեղքւածք առաջացնելու և երկու մասի բաժանելու համար, ղուտ ռազմագիտական նպատակով, Հազարա և Բարդուչատ գետերի միացման տեղից սկսած, Հազարայի հոսանքն ի վեր տարածութիւնը բնակեցնում է չիա թաթառական քրդերով[22]: Հազարայի վերին հոսանքի երկարութեամբ Սիւնիքի հին Աղահեջք գաւառն է, որի հայ բնակիչների մեծագոյն մասին նեղելով, քշում են դուրս և քրդերին բնակեցնում: Քրդերի ցեղապետի անունը Հաջի Սամի լինելով, ամբողջ շրջանը կոչւում է Հաջի Սամլու, որի արևելեան եւ հիւսիս-արևելեան կողմը Խաչէնի լեռնաշղթան է ընկած, իւր ուղղահայեաց, սեպաձև ժայռերով, և արևմտեան կողմից Մաղկաձորի (Զանգեղուրի) լեռնաշղթան: Հաջի Սամլուն Սիւնիքի (Զանգեղուր-Ղարաբաղի) միջնարերդն է, որտեղ ամուր նստած չիա աւաղակաբարոյ քրդերը միշտ պատուհաս են եղել հայերի համար: Եւ երբ անգլիացիների պատճառով Ղարաբաղի հարցը բարդացաւ, սուր կերպարանք ստացաւ, բոլոր ղարաբաղցիների համար, աչքի առջև ցցւած մեծագոյն արգելքը, դժւարութիւն յարուցողը Հաջի Սամլուն էր: Եթէ Հաջի Սամլուն սեպաձև խրւած չլինէր Սիւնիքի մէջ, երբէք ադրբէջանցիները այնքան ուժեղ կերպով ոտնձգութիւն չէին անի: Այդ աոթիւ յաճախ մտքերի փոխանակութիւն է տեղի ունեցած, թէ կուսակցական-ընկերական և թէ միջկուսակցական ներկայացուցիչների խորհրդակցական ժողովներում բոլորի կարծիքով, Հայաստանի կառավարութիւնը պիտի ջանայ տիրել

---

[22] 1720-ական թուականներին Օսմանեան Թուրքիան ջանում էր Անդրկովկասը զաւթել Թուլացած Պարսկաստանից: Վերջինս խրախուսում է հայերին՝ դիմակայելու Թուրքիային: Ղարաբաղի հայ մելիքները և Սիւնիքում՝ Դաւիթ-բէկը, յետ են մղում Թուրքերին, անկախանում: Սակայն երկու զօրեղ հայկական նահանգների անկախութիւնը անհանդուրժելի է Պարսկաստանին, որը նրանց իրարից անջատելու յիշեալ դաւադիր քայլին է դիմում: (Խմբ.)

Հաջի Սամլուին և զրղներին տեղահանել, ճամբել այնտեղ, որտեղից եկել են:

Մտքերի փոխանակութեան ընթացքին խօսուեց նաև Հաջի Սամլուի նչանակութեան մասին. ընկերների ու միւս հոսանքների մարդկանց կարծիքով, այլևս տեղական միջոցներով հնարաւոր չէր զրական արդիւնքի հասնել, պէտք էր Հայաստանի կառավարութեանը բացատրել իրերի իսկական դրութիւնը, որ կտրուկ միջոցների դիմէ և ջանայ զէթ Հաջի Սամլուն հպատակեցնել իրեն: Սակայն եթէ առարկութիւն լինի, որ Հայաստանի կառավարութիւնը վաղաժամ համարէ կամ ի վիճակի չլինի նման քայլ անելու, Կովկասի դաչնակից զօրքերի հրամանատարութիւնից պահանջել, հեռացնելու Սուլթանովին Ղարաբաղից ու նրա փոխարէն, համաձայն Դ-երորդ և Ե-րդ համագումանների որոչման, նչանակել դաչնակից զինուորականներից Ղարաբաղի նահանգապետ, որը կունենայ հաւասար թուով օգնականներ երկու աղգութիւններից, երկիրը կը կառավարէ, մինչև որ Վերսայլի վեհաժողովում հարցը կը վճռահատուի:

Մէկ, մէկուկէս ժամ մտքերի փոխանակութիւն ունենալուց յետոյ, որոչուեց, որ ներկայանանք, և Եպիսկոպոսի ու մի չարք հասարակական գործիչների հետ միասին գնացինք, ներկայացանք անգլիական միսիային: Մայոր Մոնկ Մէսընը թարգմանի միջոցով յայտնում է՝

ա) որ Սուլթանովը երկար ղեկոյց է ներկայացրել գեներալ Շատիլվորդին, իրերի դրութիւնը նկարագրել միանգամայն սխալ, որը բոլորովին հակասում է միսիայի գրածին.

բ) մեզ երեքիս և միւս գործիչներին, որոնցից ստորագրութիւն է առնուած, ներկայացրել է իբրև իսկական խառնակիչների, ուստի եթէ մենք Ղարաբաղում չլինէինք, Ղարաբաղի հարցը կ՛որոչուէր միանգամայն խաղաղ կերպով.

գ) որ մենք պատկանում ենք Դաչնակցութիւն կուսակցութեանը, իսկ վերջինս բոլշևկեան ուղղութիւն ունի և հակաանգլիական քաղաքականութիւն է վարում.

դ) Շուչու անգլիական միսիային տեղեկութիւններ մատակարարողը հայոց Ազգային Խորհուրդն է, որը փաստերը միշտ խեղաթիւրում ու սուտ տեղեկութիւններ է տալիս, և միսիան հակած է դէպի հայերը և ընդհակառակը, ադրբէջանցիներին չի հանդուրժում, իսկ նման վերաբերմունքը խոր դայրոյթ է առաջացրել ադրբէջանցիների մօտ, ուստի օր առաջ պէտք է հեռացնել Ղարաբաղից խառնակիչներին, յանուն երկու հարևան ժողովուրդների խաղաղ կեցութեան:

Եւ քանի որ նրանք չեն հեռացւած, ինքն անզօր է, չի կարող դադել իւր ժողովրդի արդար դայրոյթը:

"Թէև այդ բոլորը հերքւած է իմ կողմից հեռագրով", ասաց մայորը, "բայց և այնպէս, զեներալ Շատիլվորդը պահանջում ու պնդում է, որ դուք հեռանաք Ղարաբաղից, որովհետև նա համոզւած է, թէ ձեր հեռանալուց յետոյ խաղաղութիւն կը ստեղծւի երկրում: Այժմ իմ ձեռքերը կապւած են, հնարաւորութիւն չունեմ միջնորդելու և փոխել տալու ձեր մասին եղած վճիռը, ըստ իս, յանուն ձեր ժողովրդի շահերի, անհրաժեշտ է, որ դուք հեռանաք Ղարաբաղից. ես Սրբազան Հօրը խօսք տւի, որ հեռագրով զեներալ Շատիլվորդի համաձայնութիւնը կառնեմ, որ ձեզ ուղարկեմ Թիֆլիս, որտեղից կերթաք ձեր կառավարութեան մօտ, կը պարզէք իրերի դրութիւնը, որ դիմեն ուր հարկն է, բողոքեն, ճշմարտութիւնը վերականգնելու համար: Ես զինուորականի պատւոյ խօսք եմ տալիս՝

ա) ձեզ ապահով հասցնենք Թիֆլիս և

բ) ձեր հեռանալուց յետոյ, բոլոր միջոցները պիտի գործի դնեմ, ճշմարտութիւնը վերականգնեմ, հերքեմ Սուլթանովի սուտ, մտացածին տեղեկութիւնները և, որ գլխաւորն է, հեռացնել տամ նրան Ղարաբաղից: Թէև ինձ հրամայւած է ձեզ անմիջապէս ձերբակալել, բայց ես Սրբազան Հօրը պատւոյ խօսք տւի, երբ ներկայանաք, ինքս ձեզ չեմ ձերբակալի: Հէնց այժմ էլ մխիթարի դռները բաց են, և ոչ մէկը չի համարձակւի ձեզ ձեռք տալ. դուք ազատ էք և կարող էք դուրս գալ այստեղից և մեկնել ձեր ցանկացած ուղղութեամբ: Սակայն դուք այդպիսով ինձ կը դրկէք միանգամայն այն հնարաւորութիւնից, որը ես կունենամ Ղարաբաղից ձեր հեռանալուց յետոյ՝ մաքրելու իմ հաշիւը Սուլթանովի հետ: Դուք ազատ էք ձեր որոշման մէջ, թէկուզ և ձեր արած քայլի հետևանքով ես կը տուժեմ":

Մայոր Մօնկ Մէյսընը ազգով իռլանդացի էր և ջերմ հայասէր: Նա իւր հայասէր լինելը չէր թաքցնում, քանիցս առիթ է եղել, և նա արտայայտւել է Աղգային Խորհրդի ու քաղաքացիներից ոմանց ներկայութեամբ: Նրա կարծիքով, հայ ժողովուրդը դաշնակիցների յատուկ ուշադրութեանը պէտք է արժանանայ և արդար հատուցում ստանայ իր տւած միլիոնաւոր զոհերի դիմաց: Աղբրէջանի պահանջը Ղարաբաղի վերաբերեալ համարում էր անիրաւ և անարդար:

Մայոր Մօնկ Մէյսընին պատասխանում ենք, որ զեներալ Շատիլվորդի հրամանը, մեզ ձերբակալելու և Ղարաբաղի սահմաններից հեռացնելու մասին, չատ ծանր տպաւորութիւն է թողել հայ բնակչութեան վրայ և չատ աւելի ծանր պիտի ազդէ դիւղացիութեան վրայ: Ղարաբաղի հայութեան բուռն ձգտումն ու ցանկութիւնն է՝ միանալ իւր մայր երկրին: Մեր ժողովուրդը չատ պարզ ու որոշ կերպով արտայայտել է իւր կամքը չորրորդ և հինգերորդ համագումարներին: Վերջին համագումարին ներկայ է եղել զեներալ Շատիլվորդը, և ժողովրդի ներկացուցիչները միաձայն

յայտարարեցին, որ ոչ մի կերպ չեն ուղում ճանաչել Աղբրէջանի իշխանութիւնը: Ղարաբաղը ի սկզբանէ պատկանել է հայերին, որոնք նրա բնիկներն են, իսկ թուրքերը եկւորներ են ու Ղարաբաղում չնչին փոքրամասնութիւն են կազմում: Մեր ժողովուրդը, յանուն երկու հարևան ժողովուրդների համերաշխութեան և խաղաղ կենակցութեան, մէկ ղիջում արել է, որ առայժմ Հայաստանի կառավարութեան կողմից նահանգապետ չնշանակւի, մինչև Ղարաբաղի կցւելը Հայաստանին, իսկ կցման խնդիրը պիտի լուծւի Փարիզի վեհաժողովում: Մինչ այն, սակայն, որոշել է բնաւ չենթարկւել Աղբրէջանին, որ Ղարաբաղը ժամանակաւորապէս կառավարւի անգլիացի նահանգապետով, որը կունենայ իւր երկու օգնականները՝ հայ և թուրք: Եւ այդ բոլորից յետոյ, երբ անգլիական հրամանատարութիւնը չարունակում է առաջ տանել Ղարաբաղը յանիրաւի Աղբրէջանին կցելու ծրագիրը, դրանով նա բռնաբարում է մեր ժողովրդի անկապտելի իրաւունքը, կամքը, մի բան, որ հակասում է անգլիական մեծ ազգի ստանձնած մեծ առաքելութեանը, հանդէպ մահմեդական լծի տակ հեծող քրիստոնեայ փոքր ժողովուրդների: Պատերազմի սկզբից մինչև վերջ հայ ժողովուրդը ղէնքը ձեռքին դաշնակիցների հետ կռւեց ընդհանուր թշնամու դէմ, և երբ ռուսները լքեցին Կովկասեան ճակատը, հայ ժողովուրդը մնաց մէն-մենակ տաճիկների գերազանց ուժերի դէմ: Մեր այդ ճգնաժամային օրերին աղբրէջանցիները միացան իրենց կրօնակից ու ցեղակից տաճիկներին ու զարկեցին մեղ թիկունքից: Աղբրէջանցիների համակրանքը պատերազմի սկզբից եղել է տաճիկների կողմը: Հայ ժողովուրդը խորապէս համոզւած էր, թէ դաշնակիցները և առաջին հերթին անգլիացիները պիտի արդար հատուցում աննն իրենց փոքր դաշնակցին, որը պատերազմի ընթացքին կորցրել է իրա քառորդից աւելին: Մինչդեռ այսօր հակառակն է տեսնում, դաշնակիցները երես են դարձրել իրենից, և երեկւայ թշնամիները դարձել են բարեկամներ:

Այդ բոլորից յետոյ, մեր ժողովուրդը եկել է այն եղրակացութեան, որ միանգամայն իղուր է անցել իւր թափած արիւնը և, հէնց այդ պատճառով, ամբողջ թափով բողոքում է և պիտի բողոքէ կատարւած բռնաղատութեանց դէմ: Դոկտոր Սուլթանովը, որ Կովկասում յայտնի է որպէս մոլեռանդ պանիսլամիստ և տաճկական գործակալ, պարզապէս լրտեսի դեր է կատարել ռուսական բանակում, յօդուտ տաճիկների և ի վնաս դաշնակիցների: Նրա ձեռքերը ևս թաթախւած են Բագւի տասնեակ հազարաւոր հայերի արիւնով, սակայն այսօր նրա հանդէպ անգլիական հրամանատարութիւնը մեծ հաւատք և վստահութիւն է տածում: Դա աւելի քան անարդարութիւն է, որի դէմ չի կարող մեր ժողովուրդը չբողոքել: Եւ ի լրումն այդ ամէնի, անգլիական հրամանատարութիւնը, յենւած տաճկական գործակալ,

պանիսլամիստ Սուլթանովի սուտ զեկուցումների վրայ, յանիրաւի մեղ քշում է մեր հայրենիքից:

Մօտ երկու ժամ տեւեց մեր փոխատացութիւնը, և վերջում մայոր Մոնկ Մէյսընն ասաց. "Ես միշտ եղել եմ և կը մնամ բազմաչարչար հայ ժողովրդի բարեկամը ու գնահատում եմ նրա թափած ջանքերը, յանուն իր մեծ իդէալի, որի համար մէկ միլիոնից աւելի զոհեր է տուել: Ես յոյս ունեմ և վստահ եմ, որ դաշնակիցները և իմ կառավարութիւնը պիտի բաւարարութիւն տան ձեր ժողովրդի արդար պահանջներին: Ես իմ ունեցած յարգանքը՝ հանդէպ հայ ժողովրդի, չեմ թաքցրել ձեղնից և հնարաւորը չեմ ղլացել անելու, սակայն այսօր իմ ձեռքերը միանգամայն կապւած են, և ես չեմ կարող գէմ գնալ գեներալի հրամանին: Սրբազան Հայրը, նախքան ձեր գալը, ձեր կեանքի ապահովութեան հարցը զրեց և ղէմ արտայայտւեց Բագու ղրկելուն, առարկելով, թէ այնտեղ կարող է ձեր կեանքին վտանգ սպառնալ. ուստի ես, Համաձայն Սրբազան Հօրը տւածս խոստման, Գեներալի համաձայնութիւնն առի հեռագրով, որ ձեղ ուղարկեմ Թիֆլիս, ի հարկէ, եթէ համաձայնէք գնալ: Նորից կրկնում եմ, ես ձեղ չեմ ձերբակալի, զոները բաց են, մեր զինուորներից ոչ մէկը չի փակի ձեր ճամբան, կարող էք դուրս գալ և գնալ ձեր ցանկացած ուղղութեամբ: Սակայն, ինչպէս ասացի սկզբից, դրանով դուք Սուլթանովի լեզուն կերկարացնէք և կը զրկէք ինձ հնարաւորութիւնից՝ նրա հետ փակելու իմ հաչիւը: Այո, իմ ձեռքերը կապւած են, և դուք կարող էք արձակել: Թէկուզ ժամանակաւորապէս, պիտի հեռանաք, որպէսզի հնարաւորութիւն ունենամ Սուլթանովի ծրագիրները խանգարել. յետոյ ձեր կառավարութիւնը միջոցներ ձեռք կառնի դաշնակից հրամանատարութեան առաջ, և դուք կը զաք ձեր հայրենիքը: Եւ այն ժամանակ էլ, ինչով կը կարողանամ և հնարաւորութիւն կունենամ աջակցելու ձեղ, չեմ ղլանայ":

Մի պահ լռութիւն տիրեց, բոլորս նայում էինք իրարու հարցական հայեացքով, թէ ինչ անել: Լռութիւնը խզեց Եպիսկոպոսը, որը յուզմունքից խեղդւած ձայնով զարձաւ մեղ ու ասաց. «Իմ սիրելիներ, ես նոր ասելիք չունեմ. իմ միտքը պարզ ասել եմ արդէն: Դուք ձեր հարազատ ժողովրդի համար էք աշխատելի միշտ և աւելի ծանր պայմաններում, քան այսօր, երբ մենք չորս կողմից չրջապատւած էինք թուով զերազանց թշնամիներով: Այսօր, փա՞ռք Աստծոյ, դաշնակիցները մեղ մօտ են, Կովկասում: Մենք պաշտպանելու, անարդարութեանց դէմ բողոքելու տեղ և հնարաւորութիւն ունենք. թէկուզ որքան էլ ծանր լինի ձեղ համար, պէտք է յանձն առնէք այդ զոհողութիւնը, մանաւանդ մայորը, ինչպէս խոստացել է ինձ, պէտք է սատրպրութիւն տայ, որ ձեղ պիտի ապահով հասցնէ Թիֆլիս: Կերթաք, ին՞չ որ պէտք է անել, կանէք, ուր որ պիտի բողոքել, կը բողոքէք մեր կառավարութեան

միջոցով, մեր ցաւը կը պատմէք և, որ գլխաւորն է, իրական օգնութիւն կը հասցնէք: Եւ դուք խորապէս համոզուած եղէք, այդպիսով աւելի մեծ օգնութիւն արած կը լինէք մեր ժողովրդին: Մենք էլ ամէն կերպ կաչխատենք և ոչ մի միջոց չենք խնայի, կը դիմենք ում և ուր պէտք է, որ ձեղ թոյլտութիւն և հնարաւորութիւն տան վերադարձի»:

"Արդ, վերջին խօսքը ձերն է, և դուք, միայն դուք պիտի կարողանաք որոշել հարցը, այո, այո, միայն դուք կը կարողանաք ձեր կամքով որոշել հարցը:Մենք Սրբազան հօր տեսակէտը բաժանում ենք", ասում է քաղաքացիներից մէկը՝ փաստաբան Գր. Մինասբէկեանը, մեր համակիրներից: Դուք խնդիրը չատ լաւ էք հասկանում, երկար բացատրութեան էլ պէտքը չկայ: Ոչ ոք, ոչ մէկը այստեղ եղածներից, ձեղ չի կարող պարտադրել, պարզ է, որ դուք ինքնուրոյնաբար պիտի որոշէք Ձեր անելիքը":

"Եղիչէ, մասնաւորապէս դիմում եմ քեղ, որ հարցը դու որոշես", ասաց Սրբազանը, խիստ յուզուած ձայնով: Մայոր Մոնկ Մէսրընը, որ ամբողջ ժամանակ լուռ դիտում էր մեղ, երբ Սրբազանը խօսքն ուղղեց ինձ, երևի կռահելով, թէ ինչումն է բանը, տեղից վեր կացաւ և նոյնպէս դառնալով ինձ, բաղուկները խաչփակ արած, ռուսերէն ասաց՝ "Мистер Ишхания, руки..." [23] (Միստըր Իշխանեան, ձեռքդ...)":

Վահան Եպիսկոպոսի ձայնը դողում էր յուղմունքից, և նրա խօսքերից աղղւում էին ներկայ գտնուղ հայերը, մանաւանդ որ իրենք էլ նոյն տեսակէտին էին: Ես կարճ պատասխանեցի Սրբազանին. "Մասնաւորապէս ինձ դիմելու պէտք չկայ, որովհետև Սուլթանովի պահանջը միայն իմ մասին չէ. նա պահանջել է, որ մեղ երեքիս հեռացնեն Ղարաբաղից. բնականաբար, ներկայ դէպքում, երեքիս վիճակը նոյնն է, և մեղնից ոչ մէկը միւսից այս կամ այն կերպ աւելի հնարաւորութիւն չունի մենակ որոշելու հարցը: Ենթադրենք, ես համաձայն եմ, բայց իսօ չպիտի իմ համաձայնութիւնը պարտադրեմ իմ ընկերներին: Եթէ բոլորդ գտնում էք, որ մեր հեռանալը Ղարաբաղից աւելի լաւ է ներկայիս, քան ընդդիմանալը ու եթէ նման զոհողութիւն անելը անհրաժեշտ և խիստ կարևոր է դառնում, մենք չենք դլանայ այդ զոհողութիւնն անելու թէկուզ և կեանքի գնով. դա կարևոր չէ. կարևորն այն է, որ դուք գտնում էք, որ անհրաժեշտ է մեր այստեղից հեռանալը: Արդ, քանի որ այդպէս է, ես պատրաստ եմ ձեր կամքը կատարելու":

---

[23] Մայորը ռուսերէն նոր էր դասեր վերցնում մխսիայում աշխատող օր. Մարիամ Աստուածատրեանից, ինչպէս արդէն ասել է: (Հեղ.)

Նոյն ձևով պատասխանեցին և միւս ընկերները՝ Ասատուր Աւետիսեանն ու Յարութիւն Թումեանը, և Վահան Եպիսկոպոսը սրտի խորքից ելնող ձայնով իւր օրհնութեան խօսքն ասաց՝ "Աստուած օրհնէ ձեզ, սիրելիներս, Աստուած ձեզ երկար կեանք և յաջողութիւն տայ ձեր գործին, որ բոլորիս գործն է":

Վահան Եպիսկոպոսի և ներկայ գտնուող քաղաքացիների ղէմքի գոհունակութեան արտայայտութիւնը արդէն նկատելի կերպով անդրադարձել էր մայորի դէմքին և երբ Թարգմանուեց, թէ համաձայն ենք հեռանալու Ղարաբաղից, մայորը, արագ վեր կենալով, մօտեցաւ ինձ, սեղմեց ձեռքս, ապա հերթով՝ ընկերներիս ձեռքը: Նա Թարգմանի միջոցով ասաց. "Այժմ իմ ձեռքերը արձակեցիք, ես Սրբազան Հօր և ձեր համաքաղաքացիների ներկայութեամբ խօսք եմ տալիս, զինուորականի պատուոյ խօսք, որ ոչ մի միջոց չեմ խնայի յանուն արդարութեան":

Վահան Եպիսկոպոսը տեղն ու տեղը ստորագրութիւն առաւ մայորից, իսկ վերջինս, Թուղթը տալով Սրբազանին, համբուրեց ձեռքը: Երբ սրբազանը քաղաքացիների հետ միասին վեր կացան մեկնելու, մայորը ճանապարհ դրեց մինչև միսիայի դարպասները:

Այնուհետև մայորը արագ Թուղթ գրեց և ուղարկեց Սուլթանովին, որ մենք գտնւում ենք միսիայի չէնքում, վաղն առաւօտեան պիտի մեկնենք, ուստի կրկնում է զգուշացել Շատիլվորդի հրամանը, անմիջապէս դադարեցնելու հրացանաձգութիւնը, որը չարունակւում էր անընդհատ և անխնայ:

Տահիկները հեռանալուց ահագին քանակութեամբ փամփուշտ էին Թողել Թուրքերին և, բացի դրանից, աղրբէջանեան զօրամասը, Շատիլվորդի Թոյլտւութեամբ Խանքենդի մտնելուց, իր հետ բաւականաչափ բերել, կուտակել էր: Մեր փամփուշտի պաչարը իւրաքանչիւր հրացանակիրի փամփուշտակալների մէջ եղածն էր՝ 150-200 հատ: Մեր մարտիկներին խստիւ արգելւած էր աննպատակ հրացան արձակելը, և Թուրքերի կրակած 1500-2000 փամփուշտին պատասխանում էին մէկ ու անվրէպ զնդակով: Մեր զուսպ լինելն աւելի էր գաղազնցնում Թուրքերին, որոնք աւելի և աւելի էին ուժեղացնում կրակը: Մեր մօտաւոր հաշւով այն օրը, յունիսի 4-ին, Թուրքերը երկու հարիւր հազարից աւելի փամփուշտ էին պարպել, չփոթ առաջ բերելու նպատակով, բայց իղուր: Շուչու կուող ուժերի Թիւը հինգ-վեց հարիւրից չէր անցնում, բայց Սուլթանովը Հաջի Սամլուի քրդերից և Թուրք քոչւորներից, որ արդէն սկսել էին բարձրանալ լեռները, մօտ հազար հոգի մացրել էր քաղաք: Երբ Սուլթանովը ստանում է մայորի գրութիւնը, կէս ժամ անց հրացանաձգութիւնը դադարում է:

Ըստ համաձայնութեան, գիշերը պիտի մնայինք միսիայում, որպէսզի առաւօտեան անգլիական ինքնաչարժերով մեկնէինք Եւլախ, ուստի մայորի թոյլտուութեամբ, մէկ ժամով գնացինք մեր տները, հրաժեշտ տալու մեր հարազատներին և անհրաժեշտ պարագաները, սպիտակեղէն ու համրորդական պայուսակները վերցնելու:

Մայրս այդ օրերին մրսածութեան հետևանքով հիւանդ պառկած էր: Երբ մօտեցայ հրաժեշտ տալու, կռացայ համբուրելու, փաթաթուեց վզովս, փղձկաց ու սկսեց հեկեկալ, կարծես նախազգում էր, որ այլևս չպիտի տեսնէինք միմեանց[24]: "Բալես, պիտի արժանանա՞նք արդեօք իրար տեսութեան", հարցնում էր արցունքների միջից: Ես աշխատում էի պահել ինձ, թէև ներսումս տակնուվրայութիւն էր: "Մամա, ինչո՞ւ ես լաց լինում, խօ Սիբիր չե՞ն ուղարկում մեզ, առաջին անգամը չէ, որ պիտի բացակայեմ տնից Թիֆլիս կամ Երևան գնալու համար: Լաց մի լինի, մանաւանդ որ հիւանդ ես, արժէք ու նչանակութիւն չունի, որ մեզ ուղարկում են Թիֆլիս, Երևան, մենք կարող ենք առանց դժուարութեան Գօրիսի վրայով վերադառնալ":

Խօսքերս չէին աղդում, չարունակում էր հեկեկալ, և հայրս, քոյրս ու հօրեղբօրս 12 տարեկան դպրոցական որդին աղդած, նոյնպէս փղձկացին: Եւ ես հաղիւ զսպելով ինձ, համբուրելով բոլորի հետ, ձեռքի ճամբրուկս առայ, դուրս նետուեցի: Հասայ անգլիական միսիա, տեսայ, որ Աստուրն ու Յարութիւնն էլ նոյնանման բաժանում են ունեցել հարազատների հետ: Պէտք է ասել, որ աւելի յուղիչ է եղել Աստուրի բաժանուելը հարազատներից: Նա ամուսնացած էր ռուս աղջկայ հետ, որը քրոջս ընկերուհին էր, ծնուած Նուչում, և ռուսերէնի չափ հայերէն գիտէր: Աստուրի հետ միասին պաչտօնավարելիս են եղել դպրոցում, որպէս դաստուներ, և սիրահարութեամբ ամուսնացած: Աղջկայ հայրը, փոստ-հեռագրատան պաչտօնեայ, մոլեռանդ ուղղափառ էր և դէմ էր աղջկայ՝ հայ տղայի հետ ամուսնանալուն: Աղջիկը տնից փախել, գաղտնի մեր տանն էր ապրում չարաչարներ չարունակ, մինչև որ հայրս, որ պետական բարձր պաչտօնեայ էր Ղարաբաղի մասչտաբով, միջամտում է, մեղմացնում հօր զայրոյթը, և ամուսնութիւնը կատարուում է հայոց եկեղեցում, մանաւանդ որ ռուսական եկեղեցին տարիներից ի վեր փակ էր, քահանայ չունենալու պատճառով: Աստուրը երկու մանկահասակ՝ մէկը չորս, միւսը երկու տարեկան, երեխաներ ունէր, բնականաբար աւելի ծանր էր նրանց բաժանուելը:

---

[24] Եւ մենք այլևս իրար չտեսանք, մեր բաժանուելը եղաւ մշտական, հայրս ու մայրս նահատակուեցին Ղարաբաղի անվախճանակ և անիմաստ ու անտեղի յանպատրաստի ապստամբութեան օրերին: (Հեղ.)

Երեկոյեան 7 և 1/2 -ին երեքս արդէն մխիթարում էինք, մայրի և սպանների հետ միասին ընթրեցինք: Խոհարարը մեր մարդկանցից էր, ռուսական և եւրոպական կերակուրներ եփել գիտէր. մայրը վստահելով, նրան պատուէրներ չէր տալիս, պայմանաւորւել էր, որ ամէն օր նոր և այլ տեսակ կերակուր պատրաստէր: Տնտեսական մասի կառավարիչն էլ հայ էր՝ Խաչունց Սամսոնը: Ընթրիքին մայորը մեր կենացին իւր գոհունակութիւնը յայտնեց կրկին, որ իր բազուկների կապը արձակել ենք, և բարի ճանապարհ մաղթեց մեզ:

Գիշերը պառկեցինք անգլիական սպաների հետ նոյն ընդարձակ սենեակում: Գիշերը ժամը 2-ից անց, Թուրքերը հիւսիս-արևմտեան կողմից ահագին բազմութեամբ յարձակւում են "Պիւլիւր Թումբ"-ը գրաւելու և
հիւսիսային կողմի քաղաք տանող ճամբով յառաջանալու, քաղաք մտնելու նպատակով, սակայն զիշերը սիպայիների պահակը ուժեղացած լինելով կիսաւաչտով, տաններկու ձեռքի գնդացիրները գործի դնելով և համազարկ տալով, Թուրքերը (աւելի ճիշտ՝ Հայի սամլուեցի աւազակաբարոյ քրդերը, անտեղեակ քաղաքի անցուդարձին, ուղել էին հերոսանալ), յետ են չպրտւում մեծ կորուստով, մօտ 200 հոգի սպանուած և մեծ մասամբ վիրաւորներ տալով: Եւ նրանք իրենց վրէժը միւս օրը Հանում են Ղայբալի և Կրկժան հայ գիւղերից, յանկարծակի յարձակումով գիւղերի մի մասը հրդեհում, մի քանի տասնեակ մարդկանց սպանում և վիրաւորում: Դա տեղի է ունենում մեր աքսորւելու յաջորդ օրը՝ յունիս 6-ին: Այդ մասին մենք իմացանք Թիֆլիսում:

Միսիայի խոհարարը, Իսրայէլը, որ մերոնցից էր, ի հարկէ, աղատ ել ու մուտք ունէր: Միսիային մեր ներկայանալու խիստ հակառակ և փոքրամասնութիւն կազմող ընկերները՝ Մ. Տէր Յովհաննիսեան, Խ. Մելիքեան, Գ. Ասրեան և մէկ-երկու ուրիշները գաղտնի որոշում են կայացնում ոչ միայն ընդհանրապէս ընկերներից, այլև Կ. Կ.-ի աղատ մնացած անդամներից, որ լոյսը չրացուած յարձակւեն և միսիայի չէնքից մեզ դուրս բերեն, Թոցնեն գաւառ: Ընկերները իրենց որոշումը յայտնում են մեզ խոհարարի միջոցով, բայց մենք կտրուկ կերպով ղէմ ենք արտայայտւում, որովհետև՝

ա) Թիֆլիսի և Բագւի մեր պատասխանատու ընկերների տւած խորհրդի համաձայն, մենք ոչ մի կերպ միսիայի հետ ընդհարման տեղիք չպիտի տայինք, դուրս չգալով խաղաղ ընդդիմադիրի դիրքից: Նոյն խորհուրդն են տւել Թէ Մ. Արղումանեանը և Թէ Յովսէփ Արղութեանը.

բ) Երբ ներկայացանք մայոր Մոնկ Մէյսընին, վերջինս յայտարարեց մեզ, որ ինքը երբէք չի ձերբակալի մեզ, և ասաց, որ դռները բաց են, ոչ ոք արգելք չի լինի, կարող էինք դուրս գալ և հեռանալ քաղաքից

մեր ցանկացած ուղղութեամբ, բայց մենք լսելով հասարակութեան և մեր ընկերների բացարձակ և ճնշող մեծամասնութեանը, համաձայնեցինք անգլիական պահակների հսկողութեամբ հեռանալ քաղաքից:

Դրսի ընկերներին յայտնում ենք, որ ամէն կերպ պիտի խուսափել քաղաքում որևէ բարդութեան տեղիք տալուց, սակայն եթէ քաղաքից դուրս Մաղէ կամրջի մօտ կամ Ասկերանում մեզ սպանեն պահակներից, դա չի անդրադառնայ քաղաքացիների վրայ, մեղքը կը բարդուի զաւառացիների վրայ:

Այդ մասին Արտեմ Լալայեանը և իր օգնական Արշակ Շահնազարեանը (Թաթօղլին), որոնք իրենց ձիաւոր խմբով Քարին տակ գիւղում էին, կարող են յայտնել Խաչէնի հրամանատար Ալէքսան դայուն, ձիաւորների պետ Աղասուն և օգնական Գրիգորին՝ Ասկերանում կատարելու անհրաժեշտը, իսկ եթէ իրենք յարմար և հնարաւոր գտնեն, Մաղէ կամրջում իրագործել առևանգումը, պայմանաւ, որ միանգամայն խուսափեն զէնքի գործադրութիւնից: Հետագային, երբ Երևանում էինք, և Ներսէս Նասիբեանը Շուշուց եկել էր այնտեղ, պատմեց, որ Արտեմ Լալայեանն ու Արշակ Շահնազարեանը սուրհանդակ ղրկած են եղել Դաչբուլաղ՝ յայտնելու ընկերների ցանկութիւնը Ալէքսան դայուն և Աղասուն, որոնք դեռ իրենց պաշտօնում էին, դեռ նոր հրամանատար Արշաւիր Պետրոսեանն ու իր օգնականը իրենց պաշտօնին չէին անցած, իսկ իրենք էլ մտածում են Մաղէ կամրջում հնարաւորն անել, սակայն երկու տեղում էլ չեն կարողանում չուտ լինել, որովհետև մինչև Արտեմն ու Արշակը իրենց խմբով Մաղէ կամուրջ հասնէին, մեր մեքենաները արդէն Մաղէ կամրջից անցած և շատ առաջ էին գնացել, իսկ Ալէքսան դային ու Աղասին շատ ուշ են հասնում Ասկերան:

ԴԷՊԻ ԱՔՍՈՐ

Առաւօտեան ժամը 6-ից, մխիայի չէնքի առջևի հրապարակը բռնած էր ամէն սեռի և տարիքի ահագին բազմութեամբ: Մեզ համար պատրաստուած նախաճաշը ուտելուց յետոյ, մեզ ուղեկցող սպայի հետ դուրս եկանք մխիայի չէնքից և ուղղուեցինք զէպի ինքնաշարժները, որոնք պատրաստ էին արդէն: Տեսարանը շատ սրտառուչ էր, հազարից աւելի մարդիկ էին եկել մեզ ճամբու դնելու, եկել էր նոյնիսկ ծերունի Վահան Եպիսկոպոսը՝ քահանաներով, մի քանի հոգի, մեզ հետ աշխատած հասարակական գործիչները, առանց կուսակցական խտրութեան: Բազմութեան առաջին շարքում էին կուսակցական մեր այն ընկերները, որոնք համաձայն չէին մեր յանձնելուն մխիային և Ղարաբաղից հեռանալուն: Նրանց

Հետ չարք էին մտած և քաղաքի մեր աչքի ընկած կուսակցական մարտիկները, որոնք նոյնպէս դէմ էին մեր Հեռանալուն: Ընկերները իրենց տեղում Հանգիստ մնալ չէին կարողանում, չարունակ ջղաձիգ չարժումներ էին անում և աչքով-ունքով իրենց միտքը Հասկացնում, որ պատրաստ են անմիջապէս ջոգնել մեզ: Բայց մենք Հանգիստ և պաղ Հայեացքով Հասկացնում էինք, որ դէմ ենք: Պիտի ասեմ, որ ընկերները չատ յամառ կերպով և կչտամբանքով լի իրենց Հայեացքն ինձ ուղղեցին, Հասկացնելով, թէ ինչու չեմ Համաձայնում, որ եթէ ես Համաձայնեմ, ընկերներ Աստուրն ու Յարութիւնն էլ կը Համաձայնեն: Ես էլ Հարկադրուած եղայ խոժոռ Հայեացքով մերժողական պատասխան տալ: Հայեացքների փոխանակութիւնը րոպէներ տևեցին, և մօտենում էր մեկնելու ժամը, ասելի ճիչտ րոպէն:

Մայոր Մօնկ Մէսընի Հարցին, ուղղուած մեքենավար և պահակ զինուորներին, թէ պատրա՞ստ են մեքենաները, զինուորները դրական պատասխան տվին: Ապա մայորը դարձաւ մեզ, որ կարող ենք Հրաժեչտ տալ մեր ընկերներին:

Երբ մենք կանգնած սպասում էինք մեկնումի ժամին, բաղմաթիւ կանայք, օրիորդներ, ծաղկեփնջերի խուրձերով բարձել էին մեզ:

Վերջապէս, մօտեցանք Հրաժեչտ տալու նախ Վահան Եպիսկոպոսին ու քահանաներին, որոնք իրենց օրհնանքի խօսքն ասացին՝ "Աստուած օրհնէ ձեզ, բարի ճանապարհ և յաջողութիւն". ապա Հրաժեչտ տվինք մեր Հարազատներին ողջագուրելով, որից յետոյ ձեռքից-ձեռք անցանք գիրկընդխառն, ընկերներին և ծանօթներին մնաք բարով ասելու Համար: Եւ այդ միջոցին մեր Հեռանալուն դէմ եղած ընկերները դժկամութեամբ Հրաժեչտ տվին, կչտամբելով մեզ, որ դէմ եղանք իրենց յղացած ծրագրին:

Հրաժեչտի տեսարանը այնքան սրտառուչ էր, որ աղդել էր մայորի և միւս սպաների վրայ, դա պարզ նկատելի էր դէմքերից:

Ես հակիրճ մի քանի խօսք ասացի ընդՀանուրին, որ մեր Հեռանալուց յետոյ էլ պայքարը կը չարունակի ապօրինի իչխանութեան դէմ, ժողովուրդը ցոյց կը տայ և կը զգացնի, որ եթէ Հարիւրաւոր մեզ նմաններին էլ Հեռացնելու լինեն, տեղի չպիտի տրւի և պայքարը չարունակւի այնքան ժամանակ, մինչև որ մեր արդար պահանջներին բաւարարութիւն տրւի: "Սիրով, մէջք-մէջքի և սրխ (պինդ) կացէք" ասացի:

"Միանգամայն համոզված ու վստահ եղէք, որ պայքարը նոյնութեամբ կը չարունակուի. ոչ մի կերպ որևէ դիջում", բացականչում են ընկերներն ու քաղաքացիներից շատերը:

Խաչիկը, սակայն, այլևս իրեն զսպել չկարողանալով, ասում է բարձրաձայն՝ "ձեր աչքի առջև ձեր ընտրած մարդկանց քչում են իրենց երկրից, բաժանում հարազատներից ու ժողովրդից, լուռ դիտում է, առանց ձայն հանելու, այդ բոլորից յետոյ պայքարելու մասի՞ն է խօսում":

Մի քանի հոգի քաղաքացիներից մօտենում են Խաչիկին, յորդորում համբերատար լինել ու չյուզուել: Եւ այդ մոմենտին չարժւում են մեքենաները, մենք զլխարկներով հրաժեշտի վերջին նշանն ենք անում, կանանց հեկեկանքը լսելով:

Անցանք Մաղէ կամրջից, ապա Ասկերանից, որից 15 կիլոմետր հեռու, խճուղու վրայ գտնուող Համբ. Ահարոնեանի օղեղտիչ, ալկոհոլի գործարանում կանգ առանք կէս ժամից աւելի, ապա հասանք Աղդամ: Ահարոնի գործարանում մեկ վաչտ սիպայիներ կային, որ հսկում էին քոչւորների երթին:

Աղդամում մօտեցաւ մեզ ծանօթ Խոսրով բէկ Փոլադովը, Աղրբէջանի ոստիկանական տարազով. դաւառապետի պաշտօն էր վարում: Խոսրով բէկ Փոլադովը հայ-թրքական կոմիտէի անդամ էր Շուշում: Յեղափոխութեան հետևանքով դիւղացիութիւնը թշնամական դիրք էր բռնել բէկերի և խաների դէմ, ուստի հաղարաւոր բէկեր ու խաներ, ապահովութեան համար, ընտանիքներով փոխադրուել էին Շուշի, և նրանցից մեկն էլ Խ. Փոլադովն էր: Շուշեցի թուրքերի թիւը ութ հաղարից չէր անցնում, բայց ապաստանեալ բէկերի չնորհիւ թուրքերի թիւը բարձրացել էր տասներկու հաղարի հասել:

Խոսրով բէկը մօտեցաւ ինձ կեղծ ժպիտը դէմքին ու իբրև բարեկամ ցաւ յայտնեց, որ չենք ուղել հանդիպում ունենալ Սուլթանովի հետ: "Քանի, քանի անգամ ուղեց խօսել հէնց քեղ հետ, որպէս Ազգային Խորհրդի անդամի, մանաւանդ որ հօրդ շատ լաւ է ճանաչում, իբրև անկաշառ և արդարամիտ մարդու, որը խտրութիւն չի դնում հայի և թուրքի միջև, կարիքաւոր մարդկանց իր բարոյական աջակցութիւնը միշտ ցոյց է աւել և տալիս է: Դոկտոր Խոսրովը ուղում էր անպայման խօսել քեղ հետ, ջանըմ, ի՞նչ կը լինեը, կը գայիր, միասին կը նստէինք, միլաւ կուտէինք, քաղցր ըրոյց կանէինք և մի որոշ համաձայնութեան կը գայինք":

Խոսրով բէկ, ասացի, մէկուկէս տարի, առանց նահանգապետի, հայ-թրքական կոմիտէն կառավարել է երկու

Հարեան ժողովուրդներին, և ոչ մի թիւրիմացութիւն տեղի չի ունեցել. Աղրբէջանի կառավարութիւնը անհեռատես քայլ է արել, նրան Զանգեզուր-Ղարաբաղի նահանգապետ նչանակելով, քանի որ Զանգեզուր-Ղարաբաղում ժողովրդի ճնչող մեծամասնութիւնը հայերն են կազմում և ուղում են կապւած լինել իրենց կառավարութեանը: Եւ քանի որ վէճ առաջացաւ, մենք մի ղիջում արինք, այն է, որ ոչ Հայաստանի կառավարութիւնը և ոչ էլ Աղրբէջանինը նահանգապետ չնչանակեն. անգլիացիները մէկ ղինւորականի նահանգապետ նչանակեն մէկ հայ և մէկ թուրք օգնականներով, մինչև որ հարցը որոշւի իր տեղում: Դու, ի հարկէ, չես մոռացել, յիշում ես, երբ կազմեցինք հայ-թրքական կոմիտէն, որպէս նախագահի ընտրեցինք չէղոք մարդու՝ հաչտարար դատաւոր վրացի Կորիևին, որից երկու կողմերս զոհ մնացինք: Ներկայիս նպատակայարմար ձևը նոյնի կրկնութիւնն էր՝ մէկ անգլիացի և մէկական հոգի երկու ազգութիւններից, սակայն ձևը կառավարութիւնը չհասկացաւ և չի հասկանալու, թէ որն է լաւագոյն ձևը":

Մինչև Աղդամ իւրաքանչիւրս մէկ մեքենայում էինք նստած երկուական ղինւորի հետ, որոնք ձեռքի գնդացիրներ ունէին: Աղդամում երեքիս մէկ մեքենայ յատկացրին, մէկ մեքենայի վրայ ուղեկցող սպան էր, չորս հոգի ղինւորներով, որ գնում էր առջևից: Մեր մեքենան երկրորդն էր, գտնւելով մէջտեղը և երրորդ մեքենան ղինւորներով մեղնից յետոյ:

Ժամը 2-ին պիտի հասնէինք Եւլախ, սակայն խճուղին երկուսուկէս տարի անխնամ մնալու հետևանքով փչացել էր, ամբողջ երկայնքին դար ու փոսերով բռնւել, ուստի մեքենաները բաւական դանդաղ էին ընթանում, արագ չէին քչում մեքենավար ղինւորները և իրաւացի էին, ղգուչանում էին, և մենք բաւական ուշ հասանք Եւլախ, մանաւանդ որ Աղդամում և Բարդայում գտնւող ղօրամասի պետի հետ մեղ ուղեկցող սպան ինչ-որ իրենց գործով խօսակցութիւն էր ունենում: Երեկոյեան ժամը 5-ին արդէն Եւլախ էինք, մեղ ուղեկցող սպան պէտք է մեղ հասցնէր Թիֆլիս և ներկայացնէր իրենց կենտրոնին:

Գիշերը Բագւից եկած գնացքով մեկնեցինք Թիֆլիս: Մեղ ուղեկցող սպան առանձին կուպէ էր վերցրել և ոչ ոքի թոյլ չէր տալիս մեղ մօտ տեղ գրաւել: Փոյլի կայարանում վրացի ինչ-որ պաշտօնեայ ուղեց մեղ հետ խօսել, սպան նրան հրեց հեռու:

Առաւօտեան, յունիսի 6-ին, հասանք Թիֆլիս: Կայարանում ցանկութիւն ունեցանք նախաճաչելու և լացւելու. սպան համաձայնեց: Լացւեցինք ու սեղան գրաւեցինք. նախաճաչի ժամանակ, նկատելով մեղ անգլիական սպայի հետ, բժ. Մ.

Մուրաղևանը մօտեցաւ մեր սեղանին ու հարցրեց, թէ որտեղից ենք եկել: Բժշկին ճանաչում էի, ասացի՝ "Դոկտոր, Շուշուց ենք եկել, աւելի ճիշտ, բերել են, հակառակ մեր ցանկութեան": Սպան տեսաւ, որ մեզ հետ խօսողը մեզ ծանօթ մարդ է: Դոկտորն ասաց՝ "ձեր մասին արդէն տեղեկութիւն է ստացւած, կուզէի ես հիմա հեռախօսով տեղեկացնել մեր ղեսպանին, թերևս պէտք լինի մեկին յանձնարարեն՝ հանդիպելու ձեզ և օգնելու որևէ բանում":

"Դոկտոր, սպան պիտի մեզ ներկայացնէ իրենց կենտրոնին, ապա աղատ թողնէ մեզ՝ մնալու այստեղ կամ Երևան գնալու: Մենք պիտի ներկայանանք մեր ղեսպանին, բայց լաւ է, կանխաւ տեղեակ լինի":

Դոկտորը գնաց հեռախօսելու, իսկ մենք սպայի հետ միասին անգլիական ինքնաչարժով մեկնեցինք անգլիական միսիան, որ գտնւում էր Սօլօլակում: Սպան ներս տարաւ մեզ, ներկայացրեց մի ղինուորականի, միաժամանակ մի ծրար տալով նրան: Ձինուորականը բաց արաւ ծրարը, կարդաց, ապա ռուս թարգմանի միջոցով յայտնեց մեզ, որ աղատ ենք և պէտք է գնանք Երևան, որտեղ ևս պիտի ներկայանանք անգլիական միսիային: Ձինուորականը մեր մեկնելու համար ժամկէտ չյայտնեց:

Դուրս եկանք ղինուորականի մօտից և նախասենեակում հանդիպեցինք հանգուցեալ Լիւմֆալի բէկ Բէհբուդովի կնոջ՝ Լէյլա խանումին, որը մօտեցաւ մեզ իբրև հին ծանօթների և բարեկամ մարդկանց: Նա արդէն տեղեակ էր Ղարաբաղի անցուդարձին, խիստ բացասական և սուր խօսքերով արտայայտւեց Սուլթանովի մասին: Լէյլա Խանումը, երբ անգլիական միսիան հաստատւեց Շուշում, յաջողացրեց վոկսաղրւել Թիֆլիս, չուղեց Բագու գնալ: Հարցրի՝ որոշել է մնալ Թիֆլիսու՞մ, ասաց՝ "ոչ, չպիտի մնամ, դիմել եմ անգլիական միսիային, հնարաւորութիւն տալ ինձ, իմ ծախսով, Սև ծովով, Ռումանիա և այնտեղից գնալ Լէհաստան, Վարշաւա, ծնողներիս մօտ: Միսիան խոստացել է, հիմա եկել եմ իմանալու, թէ երբ կարելի կը լինի մեկնել այստեղից":

Մեր ղրոյցի միջոցին կողքի մեկ ուրիշ սենեակից դուրս եկաւ զնդապետ Սանդերսը. անմիջապէս մօտեցայ, բարևեցի, մնաց զարմացած, տեսնելով ինձ այնտեղ. ասլա հրաւիրեց մեզ ներս: Պատմեցինք վերջին օրերին տեղի ունեցած անցուդարձը Շուշում և մեր աքսորւելը Շուշուց: "Ես կը հետաքրքրւեմ, թէ ինչու են ձեզ հեռացրել Ղարաբաղից. դա բնաւ լաւ չեղաւ", ասաց Սանդերսը: Ապա դարձաւ ինձ, ասաց, որ երկու օր յետոյ հանդիպեմ իրեն նոյն տեղում: Գնդապետի ղէմքի արտայայտութիւնից պարզ նկատելի էր, որ չատ դժգոհ էր Ղարաբաղից մեզ աքսորելու համար:

Միսիայի չէնքից դուրս եկանք և վողոցում պատահեցինք ծանօթների, որոնցից իմացանք մեր դեսպանատան հասցէն և ուղղեցինք այնտեղ: Գօլովինեան պողոտայի վրայ էր դեսպանատունը, երկյարկանի չէնքի վերնայարկում: Բարձրացանք վեր և հէնց նախասենեակում դէմառդէմ հանդիպեցինք մեր արտաքին գործոց նախարարին՝ Ս. Տիգրանեանին: Ես իրեն չատ լաւ յիշում էի էջմիածնից, ուր խմբով յաճախ էինք լինում Երևանում սովորելու ժամանակ, 1904/5 ուսումնական տարին. ինքը, ի հարկէ, մեզ չէր ճանաչում, ես մօտեցայ և ասացի. "Ընկեր Տիգրանեան, մենք Ղարաբաղի Ազգային Խորհրդի և Ապառաժի Կենտրոնական Կոմիտէի անդամներ ենք, զեներալ Շատիլովորդի հրամանով աքսորուել ենք և այսօր հասել այստեղ":

– Գնանք ներս, այստեղ ոտքի վրայ լաւ չէ:

Ներս գնացինք և հանգամանօրէն պատմեցինք վերջին մէկ չաբաթւայ ընթացքում Շուշում տեղի ունեցած անցուդարձը: Պատմեցի նաև գնդապետ Սանդերսի՝ Շուշում ունեցած տեսակցութեան, էնվէրին բռնելու վերաբերեալ կազմած ծրագրի մասին:

Ս. Տիգրանեանը ուշադրութեամբ լսում էր մեր զեկուցումը, և զեկուցման ընթացքին պարզ նկատելի էր, թէ ինչպէս նրա պատկառելի, խոհուն դէմքը
մթագնում էր, աւելի տպաւորիչ էր դառնում: Երբ վերջացրինք մեր ղրոյցը, դարձաւ ինձ և ասաց, որ ինքը ժամադրութիւն կը վերցնի, որ միասին գնանք Կովկասի դաշնակից զօրքերի ընդհանուր հրամանատար Բիչի մօտ, ներկայացնելու ինձ որպէս ապօրինի կարգադրութեամբ տուժածի, ապա բողոքելու Հայաստանի կառավարութեան անունից զեներալ Շատիլովորդի դէմ, որ հակառակ Զանգեզուր-Ղարաբաղի բնակչութեան բացարձակ մեծամասնութիւն կազմող հայութեան կամքի, բռնի կերպով փորձում են ենթարկել Ադրբէջանի իշխանութեանը:

– Երբ ժամադրութիւն վերցնեմ, ձեղ իմաց կը տամ հեռախօսով, որ դաք այստեղ, միասին գնանք, ասաց Ս. Տիգրանեանը. սակայն դուք որտե՞ղ էք իջևանել:

– Ընկեր Տիգրանեան, այսօր ենք հասել տեղս, հիմա դուրս կը գանք և հիւրանոցներից մէկում կը տեղաւորուենք, ապա մեր հասցէն կը յայտնենք դեսպանատանը:

Դեսպանատնից դուրս եկանք, հանդիպեցինք Միչա Արղումանեանին, որը տարաւ մեզ Երևանեան Հրապարակից ցած գտնուղ մէկ հիւրանոց, որի տնօրէնը հայ էր: Վերջինս Միչա Արղումանեանի լաւ ծանօթներից էր և համակիր դաշնակցութեան. տեղեկանալով մեր մասին, լաւ տեղաւորեց և ծառայողներին պատուիրեց ուշադիր վերաբերուել: Միչա Արղումանեանին ասացի, որ պէտք է հիւրանոցի հեռախօսի համարը յայտնել Ս. Տիգրանեանին,

որակեցվի հնարաւորութիւն ունենայ կանչել մեղ իր մօտ: Միչա Արզումանեանն ասաց, որ ինքն էլ գործ ունի Ս. Տիգրանեանի հետ. այսօր միասին մի տեղ պիտի գնան, ուստի ինքը կը յայտնէ:

Հիւրանոցից դուրս եկանք, հանդիպեցինք զարարաղցի սպաներից Գադա Տ. Օհաննեանին, Օսիկ Փիրումեանին, Ռուբէն Կատումեանին, Սերգէյ Մ. Ադամեանին, որոնք խիստ յուզուած, տագ-տաք խօսում, հայհոյում էին անգլիացիներին: Մեզ տեսնելով, կանգ առան և տխուր լուրեր հաղորդեցին, որ հեռագրով Շուշուց յայտնել են Թեմի առաջնորդը և Ադգային Խորհրդի անդամները, Ղայրալիչէն և Կրկժան գիւղերի վրայ Թուրքերի գործած յարձակման և մասամբ աւերելու մասին:

– Սրիկաները "Պիւլիւր Թումբ"-ի իրենց կրած խայտառակ պարտութեան վրէժը հայ գիւղերից են հանում, ասաց Յարութիւնը:

Մեր աքսորելու և մանաւանդ, Ղայրալիչէնի և Կրկժանի վրայ գործած թրքական յարձակումների մասին լուրը արագօրէն տարածւում է Թիֆլիսի հայութեան մէջ, ընդհանուր վրդովմունք և յուզում առաջացնում: Բնականաբար, չատ աւելի վրդովւում, յուզւում և ջղագրգիռ վիճակ են ապրում Թիֆլիսաբնակ զանգեզուր-ղարաբաղցիները:

Բոլորս միասին ուղղուեցինք Գօլովինեան պողոտայի վրայ "Ունիօն" սրճարանը, որտեղ հանդիպեցինք Վ. Նաւասարդեանին, որը յայտնեց, թէ միւս օրը, յունիսի 7-ին, երեկոյեան հայոց ակումբում զանգեզուր-ղարաբաղցիների հայրենակցական միութեան վարչութեան նիստն է, ներկայ գտնուենք և պատմենք Շուշու դէպքերի մասին:

Յունիսի 7-ին երեկոյեան, որոշեալ ժամին գնացինք հայոց ակումբ. առանձին մի սենեակում հաւաքուած էին արդէն Լէօն՝ վարչութեան նախագահը, Վ. Նաւասարդեանը՝ քարտուղարը, ապա վարչութեան անդամները և հրաւիրեալներ՝ Մկր. Ղարաբէկեան (հայ սոց.դեմ.), Դաւիթ Անանուն (սոց.դեմ.), Նիկոլ Սարգսեան (դաշն.), Եսայի Յարութիւնեան, Լև. Յովհաննիսեան, Կոստ. Մ. Շահնազարեան և Յովսէփ Խանունց՝ էջդոքներ: Ներկայ էին նաև Միչա Արզումանեանը, Աչ. Մ. Յովսէփեանը և խմբապետ Համազասպը:

Մենք արդէն այնքան ենք պատմել Շուշում յունիս 1-4 -ը տեղի ունեցած դէպքերի մասին, որ զեկուցելը անգիր արած ոտանաւորի արտասանութիւն էր թւում մեզ:

Մեր զեկուցումը չատ ծանր ապատութիւն թողեց բոլորի վրայ: Տրուեցին դանազան հարցեր, որոնց մենք պատասխանեցինք ու

բացատրութիւն տվինք, որից յետոյ վարչութիւնը մտքերի փոխանակութիւն ունեցաւ և որոշեց յաջորդ օրը բողոքի միտինգ կայացնել Վանքի բակում: Տեղնուտեղը կարճ թռուցիկ խմբագրուեց տպագրութեան տալու, ժողովրդին միտինգի հրաւիրելու մասին: Վ. Նաւասարդեանը յայտնեց, թէ թռուցիկը պատրաստ և ցրուած կը լինի արշալոյսին:

Յունիս 8-ին չուտ մեր նախաճաշն արինք և ուղղուեցինք Վանքի բակը և տեսանք, որ արդէն մօտ 200-ի չափ մարդիկ կան բակում: Հայրենակցական վարչութեան անդամները վերնայարկում էին. Վ. Նաւասարդեանը հրաւիրեց մեզ իրենց մօտ: Երեքս որոշել էինք, որ մեզնից մէկը՝ Յարութիւնը, խօսէ, եթէ առաջարկ լինի: Բարձրացանք երկրորդ յարկը և պատուհանից դիտում էինք բակը, որտեղ գտնուած փոքրաքանակ բազմութիւնը սկսել էր արագօրէն մեծանալ և մեծանում էր անընդհատ, րոպէներով, և մի ժամ անց Վանքի բակը ծայրէծայր լցուել էր, ասեղ գցելու տեղ չէր մնացել, որից յետոյ եկողները փողոցում էին մնում և չուտով ամբողջ փողոցն էլ բռնուեց բազմութեամբ: Ասում էին, որ բակի և դուրսի մարդկանց թիւը մօտ եօթ հազարի էր հասնում: Միտինգը բաց արեց Լէօն, որը հռետորական ձիրք չունէր, խօսում էր ինչպէս պատմաբան-պրոֆեսոր, քննադատեց Բագւի անգլիական գինուորական հրամանատարների սխալ քաղաքականութիւնը, նրանց կայացրած ապօրինի և անարդար որոշումը՝ պատմական Սիւնիքը, որը պատկանում է Հայաստանին, որպէս նրա անբաժան մասը, կցելու Ադրբէջանին:

Ապա հերթով խօսեցին՝ Վ. Նաւասարդեան, Սաքօ Սահակեան և Յարութիւն Թումեան, և խօսեցին մեծ վրդովմունքով և յուզումով, բուռն դժգոհութիւն ու բողոք յայտնելով անգլիական հրամանատարութեան ապօրինի կարգադրութեանց դէմ: Ճառախօսները պատշգամբից էին խօսում:

Խօսեց Յովսէփ Խունունցը, առաջարկելով, որ միտինգի կողմից խմբագրուած բողոք ուղղուի գաչնակից հրամանատարներին առանձին-առանձին, նոյն բովանդակութեամբ:

Խօսեց Դաւիթ Անանունը[25] իրեն յատուկ լեզուով ու ոճով և հառի ընթացքում, Ա. Խահակեանի նման արտայայտուեց, թէ հազար

---

[25] Դաւիթ Անանուն (Տէր-Դանիելեան). (1879-1943). հրապարակախօս, պատմաբան, հասարակական գործիչ: Մտել է Լեհական Լեգեոնի Մեծ Շէն գնդում, ապրել ու գործել է Գանձակում, Բաքւում, Թիֆլիսում: 1919 թ. հաստատուել է Երեւանում, խորհրդային կարգերի հաստատումից յետոյ աշխատել է որպէս թանգարանի անօրէն, 1926-ից յետոյ ապրել է Հայաստանից դուրս, վախճանուել է Աստրախանում: Բազմաթիւ յօդուածներ ունի՝ նուիրուած հայ կեանքի հրատապ խնդիրներին: Բարձր արժէք է ներկայացնում նրա « Ռուսահայերի Հասարակական Զարգացումը » եռահատոր աշխատութիւնը:

տարի է, որ թաթարը, հաստատուելով մեր երկրում, մնաց անհաղորդ Եւրոպական քաղաքակրթութեան և փաթաթւում է մեր ոտքերին ու խանգարում մեր առաջընթացին:

Դաւիթ Անանունը խօսելիս, Վ. Նաւասարդեանին յանձնարարեց դեկավարել միտինգը և ինքը կարճ ժամանակով դուրս գնաց: Երբ Անանունը ներս եկաւ, Վ. Նաւասարդեանը յանկարծ յայտարարեց՝ "խօսքը պատկանում է Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհրդի նախագահ Եղիշէ Իչխանեանին", և անակնկալի բերեց ինձ: Ես չատ ղժգոհ մնացի, նախ մտքիս մէջ, ապա, միտինգից յետոյ, հէնց դէմառդէմ, իր երեսը պորտի մարգկանց հայհոյեցի, որովհետև ես ճառախօս չեմ և չպիտի խօսէի, արդէն մեր մէջ որոշել էինք, որ Յարութիւնը խօսէր:

Ինչ արած, խայտառակութիւն էր, ուստի, հարկադրուած դուրս եկայ պատչգամբ և մի քանի խօսք էլ ես ասացի՝ որ դուրկ ենք եղել ռազմամթերքից, կտրուած հայկական կենտրոններից, որևէ կողմից օգնութեան յոյս չենք ունեցել, ուստի ամէն կերպ աշխատել ենք, որ Ղարաբաղի ժողովուրդը չմերձնի արիւնոտ կռիւների մէջ, և մեղ յաջողուել է այդ, չնորհիւ այն կուռ համերաշխութեան, որ գոյութիւն ունէր անխտիր բոլոր հոսանքների միջև, և մեր բոլոր մարմինները կազմակերպուած էին կոալիցիոն հիմունքով: Եւ այսօր էլ համերաշխութեան ոգին է տիրում Ղարաբաղի ժողովրդի մէջ, որը չարունակում է պայքարը յանուն իր արդար իրաւունքների:

Միտինգից յետոյ գնացինք *հայկական վեսպանատուն*, այնտեղ էլ Ս. Տիգրանեանը ասաց, որ ժամադրութիւն է վերցրել, երեկոյեան ժամը 5-ին, ուստի ժամանակին չինեմ վեսպանատանը, միասին գնալու գեներալ Կորիի մօտ:

Երեկոյեան ճիչտ ժամի 5-ին Կորիի մօտ էինք: Նիհարակազմ, երկարահասակ, չոր մարդ էր: Ս. Տիգրանեանը խօսեց, ներկայացրեց ինձ: Խօսակցութիւնը կարճ տևեց. Կորին խօսում էր արաղ. պատասխանելով Ս. Տիգրանեանին. ոտքի նյաւ, և Ս. Տիգրանեանն էլ վեր կացաւ, երկուսը միասին խօսելով ես էլ իրենց ետևից, իջանք փողոց, որտեղ ինքնաշարժը սպասում էր *Կորիին, որը ձեռք տալով* Ս. Տիգրանեանին, արագ մօտեցաւ մեքենային, նստեց ու գնաց:

Ս. Տիգրանեանի դէմքից երևում էր, որ խիստ վրդովուած էր. "Անպիտանը ժամադրութիւն է նչանակել և չէր ուզում հանգամանօրէն լսել իմ բացատրութիւնը, պատճառաբանելով, թէ չատ է դրաղուած և չտապում է, կարևոր գործով պիտի մեկնի քաղաքից դուրս: Նա արդար է համարում գեներալ Շատիլվորդի արած կարգադրութիւնը, ասում է, որ նա եղել է Շուշում, տեղի վրայ խօսել է, ամէն բան բացատրել հայ դեկավարներին, բայց նրանք

փոխանակ օգնելու մեզ, դժւարութիւններ են յարուցում: Բացի այդ, որ չատ կարևոր է, գեներալ Շատիլվորդը ստոյգ տեղեկութիւններ ունի, որ Շուչու հայ ղեկավարները խիստ թշնամական դիրք ունեն մեր հանդէպ, նրանք մոլի ռուսօֆիլներ են: Եւ գիտե՞ս ինչ ասաց անգլիտանը. թէ՝ "ամէն հայի ձեռքի մաչկը քերենք, տակից ռուսի արիւն դուրս կը գայ":

Ս. Տիգրաննեանին պատմեցի Շուչու հայ վաճառականների և քաղաքացիների գործած անզգոյշ, անտեղի և անմիտ քայլերի մասին, սակայն մենք կարողացել ենք ցրել գործւած սխալի թողած տպաւորութիւնը և թէ կապիտան Սէրրայդը, թէ մայոր Մոնկ Մէսրնը հաւատացին ու համոզուեցին, որ տեղի ունեցած ռուսասիրական ցուցադրութիւնը քաղաքի հայութեան չնչին փոքրամասնութեան կողմից է եղել, և այդ չնչին փոքրամասնութիւնը ոչ մի ազդեցութիւն չունի ժողովրդի վրայ: Թէ կապիտան Սէրրայդը , թէ մայոր Մոնկ Մէսրնը միչտ բարեացակամ վերաբերմունք են ունեցել մեր հանդէպ և Սուլթանովի մասին չատ բացասական կարծիք են ունեցած ու, պատեհ առիթներով, արտայայտւած թէ մեր և թէ զանազան քաղաքացիների ներկայութեամբ: Նոյն կերպ արտայայտւել են իրենց զրուցիններում՝ ուղղւած գեներալ Տօմսոնին ու գեներալ Շատիլվորդին: Բացւում, սակայն, Թոփչիբաշևը, Խանխոյակին և նման այլ խորամանկ աղւէսներ մեզ ներկայացնում են ոչ միայն իբրև ռուսասէրների, այլև որպէս բոլշևիկներին մօտ կանգնած մարդկանց, եթէ ոչ իբրև բոլշևիկների: Թոփչիբաշիևներին, Խանխոյակիններին և նրանց գործակիցներին օգնութեան են հասնում նրանց հարուստները, որոնք իրենց կառավարութեանը հնարաւորութիւն են տալիս մեծածախս ճոխ խնջոյքներ ու ճաշկերոյթներ տալու ի պատիւ անգլիական պետերի, և թանկագին նւէրներ մատուցանելով իրենց խօսքը արժեցնում, հասնում իրենց նպատակին, ի վնաս մեզ:

Դա թէև չատ հաւանական է և որոչ չափով նշանակութիւն ու արժէք ունի ազդեցութիւն գործելու համար, սակայն նրանք իրական չատ աւելի զօրաւոր փաստեր ունեն մեր ռուսասիրութեան վերաբերեալ: Դու մոռանում ես, որ ռուս-տաճկական բոլոր պատերազմներին հայ ժողովուրդը միչտ գործակցել է ռուսական զօրքին, իր ունեցած միջոցներով օգնել ու նպաստել է ռուսական զէնքի յաջողութեանը: Այդ մասին նրանք չատ լաւ գիտեն անցեալից, իսկ այս վերջին պատերազմին հայ ժողովրդի գործակցութիւնը համահայկական բնոյթ ունէր, չատ աւելի չնչուած ու ցայտուն կերպով, ուստի աւելի ևս նկատելի դարձաւ հայ ժողովրդի ռուսասիրութիւնը, որը չէր կարող վրիպել անգլիացու աչքից:

–Ընկեր Տիգրանեան, չէ՞ որ հայը հարկադրուած է հակուել դէպի ռուսները, որովհետեւ անգլիական ոգեմտաւորը չեն կարող բարձրանալ մեր սարերը: Մեր չահն է պահանջում ռուսի հետ լինել, դուք նոյ ինձնից չատ աւելի լաւ գիտէք:

–Նրանք էլ նկատի ունեն ամէն բանից առաջ իրենց չահը, որը պահանջում է, որ ռուսները Կովկասեան լեռնաշղթայից այս կողմը չանցնեն: Այնուամենայնիւ, կառավարութեան անունից, պրաւոր կերպով, խոստի կը բողոքեմ Շատիլվորդի յանիրաւի արած կարգադրութիւնների դէմ: Ձեր դնկուցումը նկատի ունենալով, նկատադրում եմ, որ Շատիլվորդը ուրիչներին էլ կարող է աքսորել Ղարաբաղից, ուստի պիտի ջանանք արդելք հանդիսանալ: Եթէ այսօր կամ վաղը նոր աքսորականներ լինեն, բերէք դեսպանատուն, ինչպես նոր մանրամասնութիւններ հաղորդեն:

–Շատ լաւ, ասացի, ու բաժանուեցինք: Եկայ ընկերների մօտ, Հիւրանոց, պատմեցի Կորիի հետ ունեցած տեսակցութեան մասին. ընկերները չատ ադդուեցին, մանաւանդ Յարութիւնը, որ չատ տաքարիւն էր, բոնկուեց՝ "Էն սրիկայ Կորիին պիտի ասել, որ եթէ մեր երակների մէջ ռուսի արիւն կայ, քրիստոնեայ ժողովրդի արիւն է, իսկ անգլիացիների երակներում տաճիկի արիւն է հոսում"...

Յունիսի 9-ին, առաւօտեան, Միչա Արդումանեանը հեռաձայնով յայտնեց մեր դեսպանատնից, թէ անգլիական միսիան պահանջում է, որ ժամը 11-ին երեքս էլ ներկայանանք:

– Լաւ բանի համար չեն կանչի անպիտանները, ասաց Ասատուրը:

Որոչած ժամին եղանք միսիայում, ներկայացանք պետին, որը ռուս թարգմանչի միջոցով յայտարարեց, որ 48 ժամւայ ընթացքում պարտաւոր ենք հեռանալ Թիֆլիսից, դնալ Երեան, ներկայանալ այնտեղի անգլիական միսիային և մնալ նրա հսկողութեան ներքոյ:

Հարցրինք, թէ ինչ պիտի հասկանալ «հսկողութեան ներքոյ» ասելով: Թարգմանը հարցրեց ու յայտնեց, որ Երեանից որևէ ուղղութեամբ մեկնելիս, պիտի տեղեկացնել միսիային:

Դուրս եկանք և նախասենեակում որոչեցինք հանդիպել դեղապետ Սանդերսին, մեր դժգոհութիւնը յայտնել: Իր սենեակի դուռը կամացուկ թակեցրինք, ներսից իր ձայնը լսելով, մտանք և մեր գարմանքը յայտնեցինք, որ Բագուում անգլիական դինուորական իչխանութիւնը անվերապահ հաւատք է ընծայում Ադրբէջանի կառավարութեանը, որի անդամները խիստ յայտնի և չեչտուած պանիսլամիստներ են, ամբողջովին ենթակայ տաճիկ

կառավարությանը և ամեն կերպ աշխատում են բարեկամ երևալ Անգլիային, իսկ հայերիս ներկայացնել իբրև թշնամիների: Ապա բողոքեցինք, որ Բազուի զինուորական իշխանությունը չի բաւարարել մեր հեռանալով Ղարաբաղից, ուղում է մեզ ոստիկանական հսկողութեան ենթարկել:

Գնդապետը յայտնեց, թէ ինքը պիտի գործի դնէ իր ունեցած միջոցները, որ թոյլատրի մեր վերադարձը Ղարաբաղ, իսկ առայժմ պէտք է գնալ Երևան:

Երբ դուրս եկանք, Յարութիւնը վրդովւած սկսեց իր "օրհնանքը" անգլիացիների դլխին, մեծից մինչև փոքրը: "Սանդերսը ոչինչ էլ չպիտի կարողանայ անել, պիտի դժգոհութիւն յայտնի՝ թէ խանգարեց իր մի գործը, դրանով լեղուն երկար կը լինի, ուրիշ ոչինչ":

Գնացինք մեր դեսպանատուն, յայտնեցինք Ս. Տիգրանեանին անգլիական միսիայի պահանջը:

Ս. Տիգրանեանն ասաց, որ բողոքի թուղթը պատրաստւում է, այդ մասին ևս կը չեչտի, որ իրաւունք չունեն նման կարգադրութիւններ անելու:

Երեկոյեան ժամը 5-ին ընկերների համաձայնութեամբ, մենակ գնացի անգլիական միսիան և կրկին հանդիպեցի դնդապետ Սանդերսին: Ես յիշեցրի իրեն Շուշում ունեցած մեր զրոյցը և յայտնածս կասկածը, որ Ադրբէջանի կառավարութիւնը կուահել է իրա Շուշի գալու նպատակը և չատ խորամանկօրէն խափանել է Շուշում խաղաղութիւնը, մեղքը բարդել մեր վրին և հեռացնել տալ մեզ մեր երկրից: Դրանով ժամանակ է չահել, էնվէրին աւելի ապահով և կասկած չյարուցող ապաստարան փոխադրելու:

Գնդապետի ղէմքին պարզ նկատելի էր դժգոհութիւնը ստեղծւած դրութիւնից, սակայն պաղարիւնութեամբ յայտնեց, թէ վերջին տասը օրւայ անցուդարձը ինչ-որ թիւրիմացութեան հետևանք է, ինքը պիտի ջանայ պարզել իրողութիւնը, որպէսզի մենք վերադառնանք Ղարաբաղ, չարունակելու մեր պրպտումները:

Գնացի մեր դեսպանատուն, յայտնեցի Ս. Տիգրանեանին Սանդերսի հետ կրկին ունեցած տեսակցութեան և նրա տւած խոստման մասին:

Այնտեղ էր և Միչա Արզումանեանը, որը յայտնեց, թէ ինքն էլ մեզ հետ պիտի Երևան մեկնէ, ուստի երկաթուղու տոմսակները

ինքը կը վերցնի, որ դժւար է մեզ համար, չենք կարող, իսկ ինքը հնարաւորութիւն ունի չուտ ատանալու. եթէ մենք ուղևնայինք տոմսակ գնել, պիտի երկար պոչ կազմած հերթի կանգնածների չարքը մտնէինք: Այն օրերին յաճախ էր տեղի ունենում պոչ կազմելը, երկաթուղու տոմս ծախողի խուցի մօտ:

Յունիս 10-ին երեկոյեան ուշ Թիֆլիսից Միշա Արղումանեանի հետ մեկնեցինք Երևան. կուպէում մեզ ընկերացան Երևանից դեղագործ Իրաւ Շահնազարեանն ու իր կինը: Հասանք Երևան յունիսի 12-ին ժամը 1-ին. գնացքը չատ դանդաղ էր ընթանում և կայարաններում երկար կանգ առնում:

Նոյն օրը երեկոյեան ներկայացանք Բիւրոյի նիստին և ղեկուցեցինք Շուշում յունիս 1-4 -ը տեղի ունեցած անցուդարձի, զնդապետ Սանդերսի հետ ունեցած տեսակցութեանց, Թիֆլիսից անգլիական միսիայի պահանջով Երևան գալու մասին:

Յաջորդ օրը, յունիսի 13-ին Միշա Արղումանեանի առաջնորդութեամբ գնացինք անգլիական միսիան, ներկայացանք պետին, որն արդէն գիտէր մեր մասին, երևի Թիֆլիսից իրեն յայտնել էին: Այդպիսով մեր վերջին պարտականութիւնը կատարեցինք, անգլիական դիւանագիտական իշխանութիւնների ապօրինի պահանջները բաւարարելով: Այնուհետև մեզ միանգամայն ազատ համարեցինք, որոշելով այլևս երբէք ոտք չդնել անգլիական միսիայի շէմքին:

Այսպիսով վերջանում է մեր աքսորման պատմութիւնը և, Երևան հասնելով, կտրում ենք Ղարաբաղից, որտեղ, ի հարկէ, պայքարը չարունակւում է նոյնութեամբ, և մեզ փոխարինում են ուրիշ ընկերներ, միւս հոսանքների ներկայացուցիչների հետ միասին:

ՅՈՒՆԻՍ, 1919: ԵՐԵՒԱՆ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ Հ.Յ.Դ.-Ի ԲԻՒՐՈՅԻ ՀԵՏ

Անգլիական հրամանատարութեան ապօրինի կարգադրութեամբ Ղարաբաղից աքսորուելուց յետոյ մեր կապը Ղարաբաղի ընկերների հետ կտրուեց փոստային հաղորդակցութեան վերացման հետևանքով: Ղարաբաղից տեղեկութիւններ հասնում էին Երևան լեռնային ճանապարհով, Գանձակի վրայով, այնտեղից ևկողների միջոցով: Ղարաբաղում տեղի ունեցած Ադրբեջանական խժդժութիւնների մասին տեղեկութիւններ լոյս տեսան մամուլում: Մեր աքսորուելուց յետոյ Խաչէնի չրջանի և Շուշուց մի քանի կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող հայկական Ղայբալուչէն, Կրկժան, Փահլուլ և Ջամիլլու գիւղերի աւերուելը թուրքերի կողմից

Խոսրով Սուլթանովի ղեկավարութեամբ, ընդհանուր զայրոյթ էր առաջացրել հայութեան մէջ Կովկասի մի ծայրից միւսը:

Յունիս 14-ին երեք աքսորականներս Յարութիւն Թումեանը, Ասատուր Աւետիսեանն ու ես եղանք Աւետիք Սահակեանի և Ալէքսանդր Խատիսեանի մօտ, առանձին-առանձին ամփոփ կերպով ղեկուցելով Ղարաբաղում տեղի ունեցած անցուդարձի մասին:

Յունիս 15 ին Երևան է հասնում Գորիսից Զանգեզուր-Ղարաբաղի կոմիսար Արսէն Շահմազեանի սուրհանդակը, հին նախիջևանցի Բիճ Լևոնը[26], մեր ճարպիկ, խիղախ ու կտրիճ մարտիկներից մէկը , բերելով Շահմազեանի գրութիւնը, ուղղած կառավարութեանը, որով յայտնում է, թէ յունիսի 11-ին Սուլթանովը պահանջել է Շուշու հայերից, առանց այլևայլութեան ընդունել Ադրբէջանի հպատակութիւնն և միաժամանակ պահանջագիր է ուղղել Զանգեզուրի հայութեանը, ճանաչելու և ենթարկելու Ադրբեջանի իշխանութեանը:

Թիֆլիսից գալիս է Երևան Համազասպը, դիմում բիւրոյին ու կառավարութեանը, պատրաստակամութիւն յայտնում, իր ուժերը ի սպաս դնելու Ղարաբաղին, ստանձնելով որոշ պարտականութիւններ, ակտիւ կերպով աշխատելու, համաձայն կառավարութեան և կուսակցութեան հրամանագրերի:

Յունիս 16 ին կառավարութեան չէնքի առջև, Հ. Յ. Դ. Երևանի կոմիտէի նախաձեռնութեամբ, տեղի է ունենում, ժողովրդի հոծ բազմութեամբ, բողոքի միտինգ Ադրբէջանի կառավարութեան ոտնձգութիւնների դէմ, վերջին տասն օրւայ ընթացքում թուրքերի կողմից կատարած սպանութիւնների և հայկական գիւղերի աւերման առիթու:

Միտինգին ելոյթ են ունենում՝ Դաւիթ Անանունը, Վահան Խորէնին, Արչամ Խոնդկարեանը, Գառնիկ Գիւզալեան, Վարդգէս Ահարոնեան և ուրիշներ: Բոլոր խօսողները խորին զայրոյթով բողոքում են, որ դաշնակից պետութիւնների աչքի առջև Ադրբէջանը ապօրինի պահանջներ է անում, տիրանալու հայկական ընագաւառներին՝ Զանգազուր-Ղարաբաղին՝պատմական Սիւնիքին:

---

[26] Փետրուարեան ապստամբութիւնը ճնշելուց յետոյ, ընկաւ նաև Լեռնահայաստանի իշխանութիւնը, և մենք տարագրուեցինք Պարսկաստան, Թաւրիզ: Լևոնը մնացել էր Երևանի շրջանում: Այն ժամանակ, 1921 թ. դեռ ամրապնդուած չէր բոլշևիկեան իշխանութիւնը, պարսկահպատակները հետևութեամբ կարողանում էին խոչընդոտել ստանալ՝ անցնելու Պարսկաստան: Լևոնը յաջողացրել էր իրրև պարսկահպատակ անցնել Թաւրիզ, որտեղ անհրաժեշտ կապակցութիւնների հաստատութեամբ ահաբեկման է ենթարկում, իբր թէ ուղարկած է եղել խափելու Նժդեհին, Կուռոյին, Մշեցի Սմբատին և ուրիշների: (Հեղ.)

Եւ օր-ցերեկով դաշնակից պետութիւնների աչքի առջև Ադրբէջանի կառավարութիւնը սանձարձակ կերպով հայկական խաղաղ գիւղերն է աւերում, ուստի պէտք է բուռն կերպով բողոքել դաշնակից պետութեանց ներկայացուցիչների ընթացքի դէմ, որ միջոցներ չեն ձեռք առնում՝ սանձահարելու Ադրբէջանին և վերջ տալու նրա ոտնձգութիւններին:

Ապա հաղարաւոր ժողովուրդը ցոյց է անում կառավարութեան տան առջև, կարդացւում է բողոքի համապատասխան բանաձև, որը և ժողովրդի կողմից աղաղակներով ընդունւում է, յետոյ ժողովուրդը փողաւոր նւագախմբի ուղեկցութեամբ չարժւում է դէպի անգլիական միսիայի շէնքը, որի առջև ցոյցեր են տեղի ունենում և ուրիչ ճառախօսներ են ելոյթ ունենում ու դրաւոր բողոքը յանձնում անգլիական ներկայացուցչին:

Երեկոյեան Բիւրոյի նիստն էր, Ռուբէնն ասել էր, որ ներկայ դտնւեմ, ներևս լրացուցիչ տեղեկութիւններ տալու պէտք լինի Ղարաբաղի վերաբերեալ: Օրւայ ցոյցերի թարմ տպաւորութեան տակ, տեղի ունեցաւ մտքերի փոխանակութիւն, ապա որոչուեց, որ Ալեքսապոլ Խատիսեանը մեկնէ Թիֆլիս, տեսնւի զեներալ Կորիի հետ, խստիւ բողոքէ Շատիլվորդի բռնած ընթացքի դէմ, որի պատճառով խախտւել է Ղարաբաղի ժողովրդի խաղաղ կեանքը և սրւել երկու հարևան ժողուրդների փոխյարաբերութիւնը:

Յունիս 17-ին Ալ. Խատիսեանը մեկնում է Թիֆլիս՝ տեսնւելու Կորիի հետ:

Յունիս 17-ին լսում ենք, որ Բիւրոյում քննութեան է առնւել Համազասպի դիմումը, սակայն որոշ եղրակացութեան չեն յանգել կարծիքների բաժանման հետևանքով, ընկերների մի մասը թեր է եղել, իսկ միւս մասը դէմ, նկատի ունենալով Բագւայ կոիւների ժամանակ նրա դէմ եղած որոշ զանգատներն ու ղժգոհութիւնները:

Պառլամենտի դիմաց, դրօսայդում երեքով պատահեցինք Համազասպին, որը խիստ ընկճւած դէմքով միացաւ մեզ, և միասին տեղ դրաւեցինք այդում, ուր Կարմիր Խաչի կանանց միութիւնը թէյ, սուրճ, կաթ, մածուն և թեթև նախաճաշ էր վաճառում միութեան օգտին: Համազասպը խիստ յուզւած զանգատւեց մեզ, որ դիմել է մի չարք ընկերների, որ աջակցեն իրեն, միջնորդեն Բիւրոյի և կառավարութեան մօտ, դինւորական պաշտօն ստանձնելու, առաջին հերթին Ղարաբաղին օգտակար լինելու իմաստով կամ, եթէ հնարաւոր չլինի այդ, ծառայելու մեկ ուրիչ շրջանում: Եւ իրը ընկերները լսօք են տւել աջակցելու, սակայն, ըստ իր ունեցած տեղեկութեան, թէ Բ-ի և թէ կառավարութեան անդամներին աննպաստ կարծիք են յայտնել ոմանք, և ոմանք էլ ոչինչ չեն լսօսել:

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Յունիս 19-ին գալիս են Երևան, Ղարաբաղի ազգային խորհրդի կողմից, գիւղատնտես Լևոն Թախմախճեանը և Աթանէս Ղահրամանեանը, զեկուցում բիւրոյին Ղարաբաղում ստեղծւած խիստ ծանր կացութեան մասին

Յունիս 20-ին Աբրահամ Գիւլխանդանեանը, Գէորգ Ղազարեանն ու Սաքօ Արարատեանը միասին հարց են տալիս ինձ Համազասպի մասին, թէ նա ինչ կարող է անել Ղարաբաղում և ինչպէս կարող է օգտակար լինել:

Համազասպը, ասում եմ, Ղարաբաղում ամէնահամանաչւած խմբապետն է և հեղինակութիւն է վայելում զլխաւորապէս Խաչէնի, Ջրաբերդի և Գիւլիստանի գաւառներում: Համազասպին մեծարողը Ղարաբաղն է եղել, նա այնտեղ է խմբապետ Համազասպ դարձել: Նա ներկայումս այնտեղ անելիք չունի և նրա այնտեղ մնալը խիստ ուշադրութեան պիտի արժանանայ Ադրբէջանի կառավարութեան կողմից: Ղարաբաղի թուրքերը խստիւ ակնածում են Համազասպից, և վերջինիս այնտեղ լինելը պիտի աւելի սրէ Ադրբէջանի և մեր կառավարութեան փոխյարաբերութիւնը, որից օգուտ չունենք ներկայիս: Հայաստանը պատերազմի մէջ չէ Ադրբէջանի հետ, և եթէ նման պատերազմ ծագելու լինի, այն ղէպքում Համազասպի Ղարաբաղ անցնելը խիստ օգտակար կը լինի մեզ համար. նա կը կարողանայ մեծ ոգևորութիւն առաջ բերել ժողովրդի մէջ: Արդ, քանի որ պատերազմ չպիտի մղենք մօտ ապագայում, ապա Համազասպը չպիտի անցնէ Ղարաբաղ, նա պէտք է լինի Ղարաբաղի սահմանին մօտ մի տեղում, փոքրաթիւ մէկ ջոկատի հետ, որ պահանջւած մոմենտին կարողանայ անցնել Ղարաբաղ: Եւ ամէնայարմար տեղերը Ղարաբաղ անցնելու համար Զօղն է և Կոռին ձորը[27]. երկու տեղում էլ չատ կարճ է բաժանման տարածութիւնը, հազիւ 20 – 25 վերստ իւրաքանչիւրը, որն աննկատ կարելի է կտրել գիշերը:

Զօղից մինչև Թարթառ գետի ակունքը ընկած տարածքում մօտաւոր հաշւով 3000 – 3500 թուրքեր կան. իսկ Գօրիսի և Շուչու միջև, ուղիղ դծով մօտ 50 վերստ լայնքով մեր հին Աղահէջք գաւառն է, որ ներկայիս կոչւում է Հայջի-Սամլու, մօտ 20–25 հազար չիա քուրդ բնակչութիւն: Հայջի Սամլուն Ղարաբաղի կողմից խիստ անմատչելի է, չնորհիւ Խաչէնի սեպաձև ուղղահայեաց ժայռերով լեռնաշղթայի, մօտ 50 վերստ երկարութեամբ: Այդ կողմից Հայջի

[27] Կոռնիձոր (Խմբ.)

Սամլուի քրդերը իրենց ապահով ղգալով, ամբողջ իրենց ուժերը կենտրոնացնում են Գօրիսի ղէմ, երբ կռիւ է ծագում: Հաջի Սամլուն տեղահան անելու համար, պէտք է լուրջ կերպով ծրագրել և հնմնական միջոցների դիմել: Եթէ Հաջի Սամլուն ընկնի, դուրս քչեն քրդերը, Հայաստանը ոչ միայն տէր կը դառնայ ընդ միշտ Զանգեզուրին ու Ղարաբաղին, որովհետև Հաջի Սամլուն Սիւնիքի միջնաբերդն է, այլև մեծապէս կը նպաղի Նախիջևանի, Շարուրի, Ղազախի և սեպի պէս մէջ մտած միւս թրքական չրջանների վտանգը: Հաջի Սամլուն Զանգեզուր-Ղարաբաղի միջնաբերդն է, որին տիրելուց յետոյ, Աղբրէջանի ոտնձգութիւնները կը վերանան և Հայաստանի կառավարութիւնը ընդմիշտ տէր կը դառնայ Զանգեզուր-Ղարաբաղին: Զանգեզուր-Ղարաբաղի աւանդական պատմութեան համաձայն, Դաւիթ Բէկի և Մխիթար Սպարապետի իշխանութիւնը վերանալուց յետոյ, Պարսից կառավարութիւնը, դուտ ռազմագիտական նպատակով, բոնի կերպով տեղահան է արել Բարգուշատ գետաբերանից սկսած, Օլսչի և Հազարու գետերի երկարութեամբ բնակուած հայերին, որոնց մի մասը անցել է Ղափանի և բուն Զանգեզուրի չրջանները, իսկ մի մասը Դիզակ, Վարանդա և Խաչէն: Պարսկական կառավարութիւնը տեղահանուած հայերի տեղերը բնակեցնում է թուրքերով, որոնք բռնում են Գեղուայ ձորը, սեպի պէս խրւելով Ղափան, և չիա քրդերով, չէյլս Սամի ցեղապետի գլխաւորութեամբ հաստատւում Հազարա գետի միջին և գլխաւորապէս վերին հոսանքի երկարութեամբ, որը և ցեղապետի անունով կոչւում է Հաջի Սամլու, իսկ ստորին հոսանքը բռնում է Ալիանլու կոչուած ցեղը: Եւ Պարսից նենգ կառավարութիւնը հասնում է իւր չար նպատակին, այն է՝ Սիւնիքը բաժանում է երկու մասի, որպէսզի հայ ժողովուրդը կոտորակուած վիճակ ունենալով, մի նոր Դաւիթ Բէկ հրապարակ չնչելուց, չկարողանայ համախմբուել և պատուհաս դառնալ իրեն:"

Բարգուշատ գետի հովտի ժողովուրդը Խաչէն, Ջրաբերդ գաղթելով, բաւականաչափ դիւղացիներ հաստատում են Խանձր փոքր գիւղում, որի բնակիչների թիւը բարձրանում, հասնում է եօթ հարիւրի: Բարգուշատցիների մեծ մասը արհեստաւորներ են եղել, ղարբիններ, պայտառներ, թարտաչ-որմնադիրներ, հիւսներ[28]: Երբ ռուսները տիրում են Ղարաբաղին, Աղուանից կաթողիկոսը[29], որի

[28] Խանձր գիւղում ծեր մարդիկ կային, հարիւրից բարձր տարիք ունեցող, պատմում էին, թէ բարգուշատցի գաղթականների գնդաններն ձայնը լսելի էր լինում գիւղից բաւական հեռու: Աղբրէջանցիների մի խոշոր մասը գաղթիններ են եղել: (Հեղ.)

[29] Աղուանից կաթողիկոսական աթոռ. IV դ. սոսկին կէսին հիմնադրել է սրպէս Եպիսկոպոսութիւն, հիմնադիրը՝ Գրիգոր Լուսաւորչի թոռ Գրիգորիս Աթնպրոնը՝ Ամարաս: Հայոց եկեղեցու Բեմերից մէկը, որը ընդգրկում էր Հայաստանի հիւսիս-արեւելեան նահանգները՝ Արցախը, Ուտիքը, Ընչայք և Բեմի Ջանթերով գաղթի բերուած Աղբիսկովսեան տարածքը: 552թ. կոչւել է կաթողիկոսութիւն, կենդրոնը՝ Պարտաւ, Հետագայում՝ Փարիսոսի Հայկական վոքրիկ

աթոռանիստը Գանձասարի վանքն էր, դառնում է մետրոպոլիտ և կառավարությեան որոշմամբ հաստատւում Շուշում, որից յետոյ Սիւնեաց բոլոր գաւառներից՝ սկսած Վայոց Ձորից, Գողթանից մինչև Գիւլիստան, գիւղացիների
հոսանք է սկսւում դէպի Շուշի, երևանական թեականներից ի վեր: Այն ժամանակ, ինչպէս պատմւում էր Շուշում, քաղաքատեղը մեծաւ մասամբ բռնւած է եղել անտառով, և քաղաքում բնակութիւն հաստատող գիւղացիները, մեծաւ մասամբ արհեստաւորներ, հնչտութեամբ կարողանում են տներ չինել, որովհետև կարողանում էին ձեռք բերել հէնց տեղում գլխաւոր չինանիւթը՝ քարը և փայտը: Փայտը կտրելուց յետոյ, մէկ ու կէս-երկու մետր խորութիւն հողը վերցնում, ժայռ ու քարն էր բացւում, որը հասարակ վառօդով պայթեցնում էին: Վառօդի մասնագէտներն էլ Դիղակի Թաղ գիւղի բնակիչներն էին: Սկզբներում Շուշին նման է եղել գիւղի, չտարբերւելով մօտակայ գիւղերից իւր մի յարկանի, անշուք տնակներով:

Իւրաքանչիւր գաւառից եկած մարդիկ, ջանացել են միատեղ լինել, և այդ պատճառով ստեղծւել են Ագուլիսցի, Ղազանչեցւոց, Մեղրեցւոց թաղերը իրենց համանուն, սրբատաչ քարերով չինւած եկեղեցիներով: Խանձք գիւղի բարգիւշատցիները գրեթէ բոլորը գաղթում են Շուշի և բռնում քաղաքի ամէնաբարձր մասը, որտեղ հետագային չինւում է կայազօրի համար երկյարկանի մեծ չէնքը: Բարգիւշատցիները Գնաւուրղալայ կոչւած թաղի մօտից սկսած քաղաքի ղառիվայրն են բռնում, մինչև Քամու Ջաղաց կոչւած թաղը, բաւական ընդարձակ տարածութիւն, որը կոչւում է Խանձքեցոց թաղ. Քամու Ջաղաց և Ներքին կոչւած թաղի բնակիչների մի մասը վարագացի և միւս մեծ մասը Խաչէնի և Ջրաբերդի գիւղերից վերաբնակւածներ, իրենց չինած Ս. Յովհաննու անւամբ եկեղեցիով, որը միւսներից յետոյ չինւած լինելով, կոչւում է նաև Թաղայ Ժամ (Նոր Եկեղեցի):

Յունիս 21-ին "Հայաստանի Աչխատաւոր" թերթի խմբագրական դաշնակցութեան տան սենեակներից մէկում Հանդիպեցի Ռուբէնին[30], որը տարաւ ինձ ուրիշ սենեակ՝ կուսակցութեան դրասենեակը: Պատի ամբողջ բարձրութեամբ ու լայնքով կախւած էր Կովկասի 5 վերստանոց քարտէղը, որի առջև կանգ առնելով, Ռուբէնը առաջարկեց պատմել Սիւնիքն երկու մասի բաժանող քրդական շերտի մասին: Ես կրկնում եմ նոյնը, ինչ ասել

Թալաւորութեան Միաւոր գաւառն Խամչի վանքը. XIV դարից՝ Գանձասարի վանքը, որի պատճառով կոչւում էր նաև Գանձասարի կաթողիկոսութիւն: 1875թ. ցարական իշխանութիւնների կողմից վերացւեց կաթողիկոսական աթոռը՝ դարձաւ երկու առաջնորդական թեմ՝ Շուշի և Նամախու, իսկ Գանձակը դարձաւ յաջորդական վիճակի կենտրոն:(Խմբ.)

[30] Ռուբէն Տէր Մինասեան. (Խմբ.)

էի ընկ. Գիլխանդաննանին, Ղաղարեանին և Արարատեանին, ապա ասացի՝ « իմ կարծիքով մենք պէտք է բոլոր միջոցները գործ դնենք դրաւելու Սիւնիքի/Զանգեզուր-Ղարաբաղի/ միջնաբերդը՝ Հալջի Սամլուն, որը Աղբրէջանի ամուր և ուժեղ յենարանն է, որտեղից նա ձեռք է մեկնում Քելբաջարի, Քիրսի, Ալիանլուի և Բարգիւշատի թուրքերին ու քրդերին, որով Զանգեզուրի և Ղարաբաղի հայութիւնը երկուսի բաժանող թրքական պատնէշն աւելի ամրացնում, ապա Քոչբէկի, Կարմալինովկայի և Ջուլի վրայով ոյժ տալիս Նախիջևանի թրքութեանը, որը թէև ու թիկունք է հանդիսանում Շարուրի և Արարատեան դաշտի թրքութեանը:

Ռուբէնը մատով քարտէզի վրայ անցնելով Զաբուղի ձորով, ապա Հազարի գետի հոսանքն ի վեր և ի վար ասում է՝ "մեր ղինուորական չտաբը այստեղ մեր բնական սահմանն է համարում, սկսած Մինքէնդի մօտի սարից մինչև Կոռնիձոր, Էյվաղլարի գլուխը: Ըստ մեր ռազմագէտների, այդ սահմաններում հազիւ կը կարողանանք պահել Զանգեզուրը, դէնը գնալու հարկ չկայ: Մեր ձգտումն է դէպի Տաճկահայաստան, որտեղ չատ աւելի արգաւանդ գաւառներ ունենք, քան Ղարաբաղը, եթէ ճիշտը կուզես իմանալ, ցոյց տուած սահմանից այն կողմ գտնուող հայութիւնը վերջի վերջոյ պիտի գաղթէ Տաճկահայաստան:"

Զգիտեմ, մեր ռազմագէտներն ինչ տէսակէտներով են առաջնորդուում և ինչպէս են որոշում Հալջի Սամլուի խնդիրը, սակայն կասկածից դուրս է, որ նրանք Հալջի Սամլուի մասին գաղափար, պատկերացում չունեն և չգիտեն, թէ ինչ է ներկայացնում նա իրենից: Ղարաբաղի կողմից Հալջի Սամլուն անմատչելի է, նրա ամբողջ երկայնքին Խաչէնի սեպաձև ուղղահայեաց ժայռերով լեռնաչղթան է ձգւած, ուր քարայծերը կարողանում են ցատկրտելով բարձրանալ, մարտական ուժեր չարժման մէջ դնելու հնարաւորութիւն չկայ և խիստ վտանգաւոր է նահանջի համար, որևէ անյաջող պարագայի: Համեմատաբար մատչելի է լեռնաչղթան Թթու Ջրի մօտից Սարրարա կոչւած տեղով և Խանքենդիի կողմից Քեօսալար կոչւած բարձունքներով: Հալջի Սամլուն Ղարաբաղի կողմից իրեն միանգամայն ապահով է զգում, ուստի նա իր բոլոր ուժերը կետրոնացնում է դուն Զանգեզուրի և Սիսեանի դէմ, ամբողջ թափով հանդէս գալիս ընդհարումների ժամանակ: Եւ Հալջի Սամլուի և Զանգեզուրի միջև կռիւ ծագելիս, Ղարաբաղը չի կարող իրական օգնութիւն ցոյց տալ Զանգեզուրին. հնարաւոր է խիստ դժւարութեամբ որոշ քանակութեամբ ուժեր բարձրացնել, ցոյցեր անելու նպատակով և կանխաւ նկատի ունենալով, նահանջի դէպքում մեծ կորուստ տալու իրական վտանգը: Հալջի Սամլուն գրաւելու համար բաւական չէ միայն քարտէզի վրայ յենւած որոշում կայացնել, անհրաժեշտ է, որ մէկ երկու վտրձառու դինուորականները լինեն Զանգեզուրում, որտեղից

աւելի դիւրին է Հայջի Սամլուին տիրելը, տեղի վրայ ուսումնասիրութիւն կատարեն և չատ գնահատելի տեղեկութիւններ ստանան տեղացիներից, որոնք ի մօտոյ ծանօթ են Հայջի Սամլուին:

Ինչ վերաբերում է զարթարաղցիների Տաճկահայաստան գաղթելուն, դա նիսիա պատմութիւն է. մենք դեռ չենք տիրել Տաճկահայաստանին, երբ տիրենք, այն ժամանակ կարող ենք մտածել այդ մասին: Եւ այն ժամանակ էլ, իմ կարծիքով, Ղարաբաղի հայութեան չնչին տոկոսը թերևս տեղահան լինի: Ես Տաճկահայաստան չեմ եղել, սակայն այնտեղ եղած բաղմաթիւ ղարաբաղցիներ՝ ղաչնակցականներ ու չէղոքներ, նկարագրելով այնտեղի հայութեան վիճակը, նրա նիստ ու կացը, ապրելակերպը, չատ խղճուկ պատկեր է ներկայացնում, պատճառը հասկանալի է, ի հարկէ: Սակայն պիտի նկատի ունենալ, որ քարակովի, տանիքը թիթեղապատ տան լուսաւոր սենեակում ապրող ղարաբաղցին, լսելով Տաճկահայաստանի գիւղերի խղճուկ վիճակի մասին, չի լքի իրա տունը և գաղթի ճամբան բռնի: Բազուի չնորհիւ Զանգեզուր-Ղարաբաղի գիւղերի մեծագոյն մասը աղատւել է ղարադամ կոչւած տներից, որոնք մի յարկանի, ջուխտ կոճերով կամարակապ էին, առաստաղից բացած մի անցքով, որը լուսամուտ էր և միաժամանակ տան-սենեակի կենտրոնում եղած օջախից բարձրացող ծխի ելքի ճամբայ: Պարսից տիրապետութեան ժամանակ, ինչպէս լսում է Զանգեզուր-Ղարաբաղում, Ղափանի չրջանից Մելիք Նուբար անունով մէկը, իրեն ենթակայ գիւղացիներից մօտ երկու հարիւր հողու գլուխ անցած գաղթել է Փոքր Ասիա . այն ժամանակ դա հնարաւոր էր, բայց հիմա հարկադրական պատճառ չկայ և հրապուրիչ էլ ոչինչ չկայ, որ հրապուրի ղարաբաղցուն: Եւ այդ բոլորից յետոյ, ըստ իս սխալ է, որ մեր ամբողջ ուշադրութիւնը վատնում ենք, ձգտելով դէպի անմարդաբնակ վայրեր՝Տաճկահայաստան, որտեղ մէկ հատիկ հայ չկայ ներկայիս, մինչդեռ 300 հազարից աւելի հայութիւն ունեցող մի ամբողջ նահանգ՝ Զանգեզուր-Ղարաբաղը, հետը հաչւած նաև Գանձակի լեռնային մասն ու Ղազախը, անուշադրութեան ենք մատնում կամ անհրաժեշտ չափով ուշադրութեան չենք արժանացնում: Մենք պէտք է նախ ռուսահայ նահանգներին տիրանանք, ապա միւս մասերին տիրանալու մասին մտածենք:

Երբ լսեցինք հայ-վրացական պատերազմ սկսելու մասին,Ղարաբաղում լաւ տպաւորութիւն չթողեց գործիչների վրայ: Ինչու կոիւ սկսեցինք վրացիների հետ, մի՞թէ վրացին աւելի անհանդուրժելի է, քան Թուրքը, այսպէս էին լսւում այն օրերին, մէկ պէտք էր խնդիրը թողնել խաղաղութեան կոնգերանսին, որտեղ պիտի որոչէին անկախ Հայաստանի սահմանները, մանաւանդ որ վրացիների հետ արեան թշնամութիւն չունենք, ժամանակաւորապէս կարող էինք պահել նրանց իշխանութիւնը, մինչդեռ

աղրբէջանցիների հետ արեան թշնամիներ էինք,չնորհիւ տաճկական դործակալների, որոնք վխտում են Աղրբէջանում, նրա երկայնքին ու լայնքին, և պակաս էլ լրացնում են անգլիացիները, իրենց վարած քաղաքականութեամբ:

Վերջապէս, պիտի նկատի ունենալ, որ հայկական դաւառներից միակը Ղարաբաղն է, որ ոտնակոխ չի եղել, թէև մէկուկէս տարի չրջապատած Թուրքերով, մղել է կռիւներ անդամ տահիկների դէմ, երբ ներս խուժեցին Ասկերանից Շուշի և, բախտի բերմամբ, կարճ մնացին, որովհետև Գերմանիան պարտւեց: Հարկաւ, եթէ Գերմանիան չպարտւէր, ինչպէս Ղարաբաղի, նոյնպէս և միւս դաւառների, կարճ ասած՝ Անդրկովկասի ամբողջ հայութիւնը պիտի ոչնչանար, թէկուզ տեղ-տեղ ուժեղ դիմադրութիւն էլ ցոյց տար: Ղարաբաղում, ներսում, Թրքութիւնը չնչին փոքրամասնութիւն է կազմում:

Ռուբէնը հանդիստ լսում էր ու ծխում, ծխախոտը ծխախոտից վառելով, և երբ վերջացրի խօսքս, որ նման էր անգիր արած դասի, ասաց. "Էհ, լաւ ես ճառում. եթէ մենք վրացիների վրայ չյարձակուէինք, նրանք պիտի յարձակուէին և գրաւէին մինչև Ջաջուռ: Շուշիից Միքայել Ղարաբէկեանին ճանաչու՞մ ես, Թուղթ սոցիալ-դեմոկրատ է:"

– Այո, չատ լաւ եմ ճանաչում, իմ դպրոցական ուսուցիչներից էր, նախկին դաշնակցական և, եկեղեցական կալւածների գրաւման ժամանակ, իրրև այդպիսին Շուշում բանտարկւել էր: Հիմա միջազգայնական սոցիալիստ թևին է հակւած:

– Վրացիների բռնած ապօրինի և անարդար դիրքը, պարզապէս, ոտնձգութիւն էր Հայաստանի դէմ, և նրանց այդ վերաբերմունքը վրդովմունք էր առաջ բերել նոյնիսկ Ղարաբէկեանի և իւր համախոհների մէջ, որոնք համամիտ էին մեղ և Ղարաբէկեանը ասում էր, պէտք է լաւ դաս տալ նրանց: Ղարաբաղի հարցը մոռացութեան չենք տւած, ինչ որ հնարաւոր է, պիտի անենք, այդ մասին զարձեալ կը խորհրդակցենք, մանրերի փոխանակութիւն կունենանք:

Ապա միասին դուրս եկանք և գնացինք կարմիր խաչի կանանց մօտ, քաղաքային այգում թէյ խմելու: Այնտեղ առանձին մի սեղան գրաւեցինք, և Ռուբէնը սկսեց դանազան հարցեր տալ Ղարաբաղում գործող հայկական միւս հոսանքների մասին, թէ ինչ են ներկայացնում, ինչ կշիռ ունեն, պատրաստւած ինչպիսի ուժեր ունեն, որքան օգտակար դեր են կատարում:

Ռուբէնի հարցերին համապատասխան հիւթ պատասխանները տւի, միւս հոսանքները ներկայացնելով այնպէս, ինչպէս կային իրականին մէջ, առանց չափազանցութեան և առանց

յետին մտքերի, որ, պատիւ Ղարաբաղում գործող բոլոր հոսանքներին, մէկ ու կէս տարեայ ընթացքին իրօք ծանր պայմաններում բոլոր հոսանքները միասին, համերաշխ հոգով են աշխատել, մարմինները միշտ կազմուեցին կոալիցիոն հիմունքով և արդարօրէն: Բոլշևիկները, համաձայն Մոսկուայի հրահանգի, չէին մտնում ազգային գոյն ունեցող մարմինների մէջ, մանաւանդ այն մարմիններում, որոնցում տեղ էին գրաւել նաև կադէտները, սակայն այդուհանդերձ, նրանք մեր գործունէութեանը, ոչ մի կերպ չէին խանգարում և նոյնիսկ իրենց ներկայացուցիչներով մասնակցում էին միջկուսակցական խորհրդակցական ժողովներին և համագումարներին:

– Լաւ, դու Բիւրոյում էլ բաւական դրական գնահատանքով խօսեցիր բոլոր հոսանքների մասին, սակայն ձեր ղարաբաղցի դաշնակցականները, որոնք ձեղնից առաջ եկել, ղեկուցումներ են տուել, դժգոհութիւնները են յայտնել, զանգատուել իրենց ընկերներից, ինչպէ՞ս է, որ դու ոչ ոքի մասին զանգատ չես յայտնում:

Ռուբէնի այդ հարցումից, թէև անսպասելի էր այդ միջոցին, բայց անակնկալի չեկայ և պարզ պատասխանեցի. "Ես զանգատ չունեմ և ինչու պիտի զանգատուեմ, երբ պատճառ չկայ:"

Ինչպէս հասկացայ, միմեանցից զանգատուողները, դժգոհութիւն յայտնողները եղել են, և իմ դժգոհութիւն չյայտնելը, հաւանօրէն, տարօրինակ էր թուացել Ռուբէնին, սակայն ընաւ չհետաքրքրուեցի, թէ ովքեր են զանգատուողները և ինչ զանգատներ են յայտնել, մտածելով, որ մի օր յայտնի կը դառնայ, առանց հարցումների:

Ի դէպ, Ղարաբաղի և Գանձակի գաւառի լեռնային մասի վերաբերեալ, տարիներ յետոյ, 1926 թ. "Դրօշակի" թիւ 2-ում, Ռուբէնը մի հետաքրքիր ու փաստական տեղեկներով համեմատ յօդուած լոյս ընծայելով, Զանգեզուր– Ղարաբաղը՝ Սիւնիքը համարեց Հայաստանի "ողնաչարը": Յօդուածի թարմ տպաւորութեան տակ նամակ գրեցի Թաւրիզից Ռուբէնին և, ի միջի այլոց, ասացի՝ "Եթէ մինչև պառլամենտի դիւորական սկզբիայի անդամ-նախագահ և դիւորական նախարար դառնալդ այդ ուսումնասիրութիւնը կատարած լինէիր, թերևս մենք այսօր այստեղ չզտնուէինք, այլ մեր երկրում":

Յունիս 22-ին Ալեքսանդր Խատիսեանը[31] վերադառնում է Թիֆլիսից, ուր գնացել էր տեսնելու գեներալ Կորիի հետ, բողոքել

[31] Խատիսեան Ալեքսանդր (1874, Թիֆլիս – 1945, Փարիզ). Հայ նշանաւոր պետական գործիչ: Սովորել է Մոսկուայի և Խարկովի համալսարաններում, սակայն բժշկի մասնագիտութիւն: 1902թուականից սկսած ակտիւօրէն ներգրաւուել է հասարակական,

Աղբրէջանի ոտնձգութիւնների դէմ, յատկապէս Շատիլվորդի միակողմանի վարած քաղաքականութեան առթիւ, որով թէ ու թիկունք է հանդիսացել Սուլթանովին, որի ղեկավարութեամբ խաղաղ հայկական գիւղեր են աւերւել և ահագին սպանութիւններ կատարւել:

Կորին խոստացել է խաղաղութիւնը վերականգնել Ղարաբաղում և Ղարաբաղի խնդրին խաղաղ լուծում տալ:

Բիւրօն որոշում է, որ Գերասիմ Բալասանը, Ասատուր Աւետիսեանը և ես Նախիջևանի վրայով անցնենք Զանգեզուր-Գորիս՝ աշխատելու, իսկ Յար. Թումանեանը՝ Զօղի չրջանը և այնտեղից կապ ստեղծի Ղարաբաղի հետ:

Համաղասպի խնդիրը, ինչպէս իմացանք, մերժւել էր:

Համաղասպը փողոցում, քաղաքային այգու մուտքի մօտ ապտակում է սոցեալ-դեմոկրատ Թադէոս Աւգալբէկեանին, որը թերթում հեղնօրէն քննադատել էր Համաղասպին, պառլամենտական ընտրութիւնների առթիւ գրած իր յօդուածում:

Յունիս 26-ին Յար. Թումանեանը, Աթանէս Ղահրամանեանն ու ես խօսում ենք Սեպուհի հետ, որպէս դրսից, փորձած դիւանագէտի, որպէս ընդհանուր հրամանատար, անցնելու Ղարաբաղ և այնտեղ զտնուող բաւականաչափ սպանների միջոցով կազմակերպելու ինքնապաշտպանութեան գործը և կռիւ պայթելուց, իր ղերի մէջ մտնելու: Սեպուհը պնտճառաբանում է, որ տեղին ու պայմաններին ծանօթ չէ, ժողովուրդն էլ իրեն չի ճանաչում, ուստի դժւար կը լինի իր համար. "Ձեր երկրին Համաղասպն է ծանօթ և, իմ կարծիքով, ամէնից յարմարը նա է, որ անցնի Ձեղ մօտ":

Սեպուհին բացատրեցինք, որ տեղի վրայ դժւար չէ ծանօթանալը միջավայրի և տիրող պայմանների հետ, որը հնարաւոր կը լինի իր համար կարճ ժամանակում, մանաւանդ որ այդ խնդրում մեծապէս կօգնեն, կաջակցեն իրեն մեր կուսակցական ընկերները, սակայն, որ ժողովուրդը չի ճանաչում իրեն, աւելի լաւ է,

---

քաղաքական կեանքի մէջ. 1909-1917թթ. եղել է Թիֆլիսի քաղաքապետը. 1914-1917թթ. միաժամանակ՝ Կովկասեան քաղաքների միութեան նախագահը: 1917թ. եղել է Ալեքսանդրապոլի քաղաքապետը. 1918 Յունիսին՝ Անդրկովկասեան Սեյմի ֆինանսների նախարարը: Մասնակցել է Թուրքիայի հետ վարւող Տրապիզոնի և Բաթումի հաշտութեան բանակցութիւններին: 1918 Նոյեմբերին՝ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարը. 1919թ. յունիսից մինչև 1920թ. ապրիլը՝ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ: Կարմիր բանակի կողմից Հանրապետութեան կործանումից յետոյ ապաստանել է Հայաստանից: Մեծ արժէք է ներկայացնում նրա՝ «Հայաստանի Հանրապետութեան Մոգուն ու Զարդացումը» աշխատանքը (1920թ): (Խմբ.)

և աչքի չի ընկնի, հարևան Թուրք ժողովուրդն էլ չի իմանայ և դրգռման տեղիք չի տրւի: Մեզ համար անհրաժեշտ է ներկայիս լուռ ու մունջ, առանց ցուցական քայլերի, ինքնապաշտպանութեան գործը ամրացնել:

Սևպուհը չհամաձայնեց և կրկին խորհուրդ տուաւ Համաղասպին ղիմել: Նոյն օրը, Սևպուհի հետ ունեցած մեր զրոյցի մասին, ամփոփ կերպով, մի զրութեամբ յայտնեցի Բիւրոյին: Գրածս Թուղթը յանձնեցի Ռուբէնին, որը կարդաց և յայտնեց, թէ մի օր առաջ Համաղասպը մի զրութեամբ նորից հարց է դրել, քննութեան առնելու իր դիմումը, որով պատրաստակամութիւն է յայտնել, իւր ուժերը ի սպաս դնելու Ղարաբաղի հայութեանը: Ապա Ռուբէնը առաջարկում է առանձին զրել Համաղասպի մասին, թէ ինչպիսի վերաբերմունք ունի գիւղացիութիւնը Համաղասպի հանդէպ, մանաւանդ որ նա ցանկութիւն է յայտնել հարցաքննել ինձ, որպէս Նաչէնցու, քանի որ իր գործունէութիւնը Նաչէնում է սկսելու ծաւալել մինչև Գիւլիստան, ապա որպէս Ազգային Խորհրդի անդամ, յայտնեմ, թէ ընդհանրապէս Ղարաբաղի հայութիւնը ինչ կարծիք ունի իր մասին:

Յարութիւնին և Ասատուրին, որոնց յայտնել էի Բիւրոյին ուղղածս զրութեան բովանդակութիւնը, յայտնեցի նաև Ռուբէնի տուած տեղեկութիւնն ու առաջարկը Համաղասպի վերաբերեալ: Ընկերները գտան, որ լաւ առիթ է, պէտք է զրաւոր կերպով յայտնել իրողութիւնը, որ նա հեղինակութիւն է Ղարաբաղում, մանաւանդ Նաչէնի, Ջրաբերդի և Գիւլիսաանի գիւղացիութեան մէջ, որ փաստ է: Բացւում ինչ արդարացի զժգոհութիւններ են եղել Համազասպի դէմ, Ղարաբաղի ժողովրդին ոչինչ յայտնի չէ և լաւ է, որ յայտնի չէ, ներկայիս կարևոր հանգամանքը նրա ունեցած հեղինակութիւնն է, որը պիտի օգտագործւի:

Արդէն այդ ուղղութեամբ և բովանդակութեամբ զրոյցներ ունեցել էի ընկերներ Ա. Գիւլխանդանեանի, Սաքօ Արարատեանի, Գէորգ Ղազարեանի և Ռուբէնի հետ, վերջինս հետ առանձին, ուստի յունիս 27-ին ունեցածս զրոյցների բովանդակութեամբ զրութիւն պատրաստեցի և տւեցի Ռուբէնին ու յայտնեցի, որ ինձ հետ միասին աքսորւած ընկերները՝ Յարութիւն Թումեանն ու Ասատուր Աւետիսեանը Ղարաբաղի պատասխանատու կուսակցական-հասարակական գործիչներից են, որպէս կենտրոնական կոմիտէում և ազգային մարմիններում ակտիւ աշխատանք կատարած մարդիկ, այնպէս որ Բիւրօն նրանց ևս լսէ:

Համաձայն Բիւրոյի որոշման, նոյն օրերին Գերասիմ Բալայեանը, Ասատուր Աւետիսեանը և ես պատրաստութեան մէջ էինք՝ մեկնելու Զանգեզուր-Գօրիս: Բիւրոյի որոշումը տրւած էր

ամսի 22-ին և միաժամանակ դիմում էր եղած Զինուորական չտարին, սպաներ ուղարկելու Զանգեղուր, որ սպաներն էլ մեղ հետ միասին գնային: Եւ մենք սպասում էինք, թէ ովքեր պիտի մեկնեն մեղ հետ:

Յունիսի 29-ին Անգլիական այգու մուտքի մօտ հանդիպեցինք Համայակ Մանուէլեանին և Համազասպին, վերջինս մեղ տեսնելուն պէս, արագ մօտենալով, սեղմեց մեր ձեռքը, ասելով՝ "Շատ ղգացած եմ, ղուք փրկեցիք իմ պատիւը":

ՀԱՄԱԶԱՍՊԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ի դէպ, պիտի ասեմ, որ երեքս ընաւ չէինք մեղանչել իրականութեան դէմ: Համազասպը իւր միջնակ եղբօր՝ Հրաչի հետ միասին, ընտանիքով, Շուշի էր եկել եկեղեցական կալւածների գրաւումից քիչ անց, 1903 թ. աշնան կէսերին որպէս արհեստաւոր, ոսկերիչ, իւր արհեստով ղբաղւելու և, որպէս դաշնակցական ծանօթանալով տեղի ընկերների հետ, չուտով դառնում է ակտիւ աշխատող գործիչներից մէկը: Մեծ կրթութիւն չունէր թէև, սակայն խօսելու չնորհք և մարդկանց գրաւելու ընդունակութիւն ունենալով, կարողանում է երիտասարդների մէջ հետաքրքրութիւն առաջ բերել հայ աղգային- յեղափոխական չարժման չուրջ, նպաստելով, կուսակցական չարքերի ստւարացմանը, այն ժամանակ տիրող պայմանների ընձեռած հնարաւորութեան սահմաններում: Համազասպը իւր արհեստանոցը հաստատում է թուրքերի չուկայում, քանի որ հայկական չուկայում բաւականաչափ առաջնակարգ ոսկերիչներ կային, որոնց հետ մրցումից աղատ լինելու համար, թուրքական չուկան յարմար էր:

1904 թ. ամռան սկղբին Շուշի է գալիս նաև միւս եղբայրը՝ Հրանդը, Գէորգեան ճեմարանը աւարտելուց յետոյ: Հրանդը կարճ ժամանակում կարողանում է դաշնակցական երիտասարդութեան սիրելին դառնալ, չնորհիւ իւր խիստ ընկերականութեան ու մատչելիութեան, մանաւանդ իւր անսպառ նոանդով, որ կարողանում էր բաւարարել խմբերին իւր դասախօսութիւններով: Նա կուսակցական աշխատանքներից բացի, նոանդում մասնակցութիւն էր ցոյց տալիս տեղի մչակութային ձեռնարկներին, ղեկասան Արովեանի ու Գեղասիմ Բալայեանի նախաձեռնութեամբ կազմակերպւած թատերական սիրողների խմբի գործունէութեանը: Սիրողների խումբը ղեկասան Արովեանի և Բալայեանի գլխաւորութեամբ ապագային ոդով ներկայացումներ էր տալիս՝ "Վարդան Զօրավար", "Սամուէլ" ըստ Բաֆֆիի և "Աղասի" ըստ Նաչատուր Արովեանի երկերի: Գլխաւոր դերերի մէջ ղգևստաւորւած Արովեանի և Բալայեանի նկարները լուսանկարիչ Գ. Շահրազեանի սպասկեծածկ պահարանում ցուցադրւած

հրապարակում, անցուդարձ անողների ուշադրութիւնն էր գրաւում: Պահարանի առջև, չատ յաճախ խմբերով կանգ կառնէին պատանիներ ու ոգեւորուած կը խօսէին դերասանների խաղի մասին:

1905 թ. սկզբներին խմբերից մէկը դասախօսական ժողով է ունենում. Հրանդի ղեկավարութեամբ խմբի անդամներից մէկը, Գրիգոր Բաբայեանը, համաձայն կուսակցութեան կանոնագրի համապատասխան յօդուածի, որ իրաքանչիւր դաչնակցական պիտի ջանայ իր միջոցներով ղէնք ձեռք բերել, գնած է լինում "բրաունինգ" սիստեմի ատրճանակ, որով հետաքրքրւում են ընկերները, ինչպէս նաև Հրանդը: Բաբայեանը ցոյց է տալիս ատրճանակը, որը ձեռքից ձեռք է անցնում և երբ Հրանդի հետաքրքրութիւնը բաւարարութիւն տալու համար Գրիգոր Բաբայեանը ցոյց է տալիս ատրճանակը, անզգուշութեան հետեւանքով , ատրճանակը լեցուն լինելով , փամփուշտներից մէկը պայթում է և գնդակը դիպչում է ուղիղ Հրանդի սրտին , վայրկեանական մահ պատճառելով: Տէսքալի այդ դէպքը տեղի է ունենում փետրուարի վերջերին կամ մարտի սկիզբներին . այդ ժամանակ ես Շուշի չեմ եղել , ուստի ճշտիւ չեմ յիշում: Խումբը անակնկալի է գալիս, ապա սկսում է լաց ու չիւան, ընկերները աղիողորմ հեկեկում են իրենց սիրած ընկերոջից և ղեկավարից զրկուելու պատճառով: Դէպքի մասին արագօրէն տարածւում է քաղաքում, մեծ ցաւ պատճառում ոչ միայն դաչնակցական չարքերին, այլև բոլոր նրանց, որոնք ճանաչում և, ծանօթ էին Հրանդին: Հրանդը չատ մեծ չուքով թաղուեց, հազարից աւելի յուղարկաւորներ դագաղին ուղեկցում են մինչև գերեզմանատուն: Դագաղը ուսամբարձ տանում են ընկերները, լուսանկարիչները նկարում են յուղարկաւորների բազմութիւնը և լուսանկարները մեծ քանակութեամբ սպառում են հասարակութեան մէջ, և չատ յաճախ յիշում էր նրա անունը, չէր մոռացւում:

Եղբօր եղերական մահը, բնականաբար, ծանր հարուած էր Համազասպի համար, որ անակնկալօրէն հասաւ իրեն, մանաւանդ որ նոր էր ազատ արձակուել բանտից: 1904 թ. աշնան կէսերին ոստիկանութեան կողմից նկատւում է որպէս անվստահելի և կասկածելի մէկը, ձերբակալւում, նետւում է բանտ: Ոստիկանութիւնը, Համազասպի բնակարանը խիստ խուզարկութեան ենթարկելով, կասկածելի ոչինչ չի գտնում: Հարցաքննութեան են ենթարկում չատ Հայերի, բայց ոչ մի արդիւնք չեն կարողանում ձեռք բերել: Ոստիկանիներից մէկը հարցաքննութեան ժամանակ ասում է, թէ՝ "նա աչխատում է թրքական չուկայում, նրա երեսը մենք չենք տեսնում, թուրքերն են նրա մուչտարիները և նրանք կարող են ասել, թէ ինչ տեսակ մարդ է": Պարզապէս, դլխից ցանում են ուս ոստիկանին:

Եւ երբ եղեռնագործ, տխրահռչակ Նակաշիձէն իրագործեց ցարական կառավարութեան նենգ ու խարդախ ցանկութիւնը, որպէս նահանգապետ, Բագւում փետրուարի 6-9-ը հայ-թրքական առաջին ընդհարումը կազմակերպելով, մեկէն ցնցուեց Անդրկովկասի հայութիւնը, երկրի մէկ ծայրից միւսը, և այդ ժամանակ ամենուրեք հրապարակ եկաւ հայ մարտական կազմակերպութիւնը, Դաշնակցութիւնը, ամբողջ թափով նա ժողովրդի ինքնապաշտպանութեանն ի սպաս դնելով իր բոլոր կենսունակ ուժերը: Համաղասպը Շուչու ընկերներից առաջիններից մէկը եղաւ, որ արհեստանոցը թողնց եղբօրը՝ Հրաչին և ցանկութիւն յայտնեց անցնելու զաւառ ու կազմակերպելու, դիմելու ժողովրդին, վտանգ լինելուց կարենալ պաշտպանելու համար: Կենտրոնական Կոմիտէի որոշմամբ, որի անդամ էր և ինքը, անցնում է Խաչէն, որտեղից և սկսում, ծաւալւում է նրա գործունէութիւնը Ջրաբերդի և Գիւլիստանի շրջաններում: Պէտք է ասել, որ Զանգեզուր-Ղարաբաղում, կարճ ասած՝ Սիւնիքում, մինչև հայ-թուրքական ընդհարումները, Հ. Յ. Դաշնակցութիւնը ճանաչւած ու տարածւած չի եղել այնպէս, ինչպէս Երևանի և Ալեքսանդրապոլի շրջաններում ու, մանաւանդ, Կարսի ամբողջ նահանգում, որն իրաւամբ կոչւել է հայ յեղափոխութեան օրրան, մի բան, որ փաստ է և անհամբ տեսնելու բախտն ունեցանք 1904 թ. վերջերին և 1905 թ. սկզբներին երեք հոգով, դեռ աշակերտական նստարանի վրայ եղած ժամանակ, Կարսի գիւղերում պտտելիս:

Համաղասպը, ինչպէս վերը յիշեց, խօսելու և մարդկանց դրաւելու չնորհքն ունենալով, մեծ յաջողութիւն է ունենում Խաչէնի, Ջրաբերդի և Գիւլիստանի գիւղացիութեան մէջ, իր հետ ունենալով դաշնակցական հին մարտիկ Ալէքսանդր Բալասանեանին (Ալէքսան զայի անունով ճանաչւած) և Առաջաւոր գիւղացի, Դաշբուլաղ գիւղի քահանայ Տէր Մեսրոպ Շահիջանեանին, որ հայ-թրքական ընդհարումներում իւր զինակից ընկերների կողմից անուանւեց Դալի-Մահրասա, իր քաջութեամբ նմանւելով Բաֆիֆիի պատմական Դալի-Մահրասային ("Գիժ վարդապետին), նոյնպէս Առաջաւոր գիւղացի, կուսակրօն, որ Շուչու Փանահ խանի որդու՝ Իբրահիմ խանի դէմ պարտիզանական կռիւ մղող համագիւղացի հրոսակապետ Թիւլի Արզումանի օգնականն է եղել և թիւրքերն են տւել նրան «գիժ վարդապետ» անունը:

Յիշեալ երեք զաւառների մարտիկներից թոռւիկ մէկ խումբ է կազմակերպում. և իր օգնական Ալէքսան զային, որ զինւորական ծառայութիւն անցած, աւագ ենթասպայի աստիճան ստացած և որպէս զերազանց նշանառու չքանչանի արժանացած մէկն էր, մարզում է խմբի այն անդամներին, որոնք զինւորական ծառայութիւն չէին անցած, պահեստի զինւոր դարձածների հետ վարժութիւններ անում: Խմբի գլուխ անցած, գիւղ-գիւղ անցնելով,

մեծ տպաւորութիւն են թողնում գիւղացիութեան, մանաւանդ երիտասարդութեան վրայ, ապա ամէնքի մէջ բուռն ցանկութիւն առաջ բերում զէնք ձեռք բերելու: Սակայն երիտասարդութեան մեծ մասը աշխատաւոր մարդիկ էին, հաղիւ իրենց գիւղական աշխատանքով ապրող մարդիկ, զուրկ զրամական միջոցներից, ուստի, բնականաբար, զրամական միջոցներ պիտի տրամադրէր գիւղական ունևոր դասը. զրամ ունեցողները, որոնցից չատերը վաչխատուններ էին, բայց ոչ պատրաստակամ, ինքնուրոյնաբար զրամական միջոցներ տրամադրելու, ինքնապաչտպանութեան համար զէնք ու զինամթերք ձեռք բերելու: Ջունևորը պատրաստ էր ամէն վայրկեան, վտանգի ահազանգը լսելուց, զէնքը ձեռքին, բաց աչքերով ընթանալու զէպի մահ, իր աղգը պաչտպանելու, իսկ ունևորը խնայում էր իր զրամը, նիւթը, որը իրենը չէր, աչխատաւոր ժողովրդի քրտնաթոր աչխատանքի վաստակն էր . . . Ի՞նչ պէտք էր անել, երբ կուսակցութեան բաղմիցս արած բանաւոր ու զրաւոր կոչերը, քարոզները, մնացին անարձագանք: Ելքը և միակ միջոցը հազարաւոր տարինների բովից անցած և անհերքելի զարձած ճչմարտութեան թևալղրանքն էր՝ "ով ականջով չը լսի, թիկունքով կը լսի": Եւ սկսեց գործել մարակը, որի հարւածը ճաչակելով նիւթին կառչած ունևորը քսակի բերանը բացում էր: Հակառակորդ հոսանքները լօսքը մէկ արած սկսեցին մեղադրել դաչնակցութեանը բոնութիւն գործ դնելու մէջ. անհիմն մեղադրանքներ, որոնք պարզապէս հակառակութեան արդիւնք էին, ոչ թէ իրական կեանքի արդար պահանջ:

Համազասպը Խաչէնում, Ջրաբերդում և Գիւլիստանում կազմել էր տեղական մարմիններ, մեր ընկերներից, որոնք թև ու թիկունք էին հանդիսանում ամենայն եռանդով, ժողովրդի դինման գործը առաջ տանում: Աղջաղալա[32] գիւղի բնօխատն, որ գիւղի ունևորներից էր, մերժել էր զրամ տալ: Համազասպը զաղափեցի Կարօին, որ խմբի լաւագոյն մարտիկներից մէկն էր, Բազէի դաչնակցութեան չարքերում թրծւած, զրահանաչ, գիտակից երիտասարդներից, ուղարկում է Աղջաղալա երկու ուրիչ ընկերների հետ, բնօխատյից պահանջած զրամը ստանալու, սակայն զարան մտած բնօխատն հրացանազարկ է անում Կարօին, որի մահը խիստ ծանր է աղդում թէ խմբի և թէ ժողովրդի վրայ, ընդհանուր զայրոյթ առաջացնելով: Կարոյին մեծ չուքով հողին են յանձնում, Համազասպը կրակոտ ճառ է ասում և յայտարարում, որ յանցաւորը կը զտնւի և կը պատժւի: Եւ չատ երկար չտևեց, յայտնի զարձաւ ոճրագործը և կրեց իր արժանի պատիժը, օրը ցերեկով գնդակահարւելով ժողովրդի աչքի առջև: Դա լաւ դաս եղաւ բոլոր նրանց համար, ովքեր պինդ կառչել էին զրամին, որը աւելի թանկ էին զնահատում մարմնից արիւնից:

---

[32] Կոչւում էր նաև Վարաչինար: (Խմբ.)

Համազասպը եկաւ Շուշի որպէս ոսկերիչ, և նրան ճանաչում էին որպէս այդպիսին. նա իր մարտական մկրտութիւնը ստացաւ Ղարաբաղում, անուանեց ու դարձաւ խմբապետ: Նա իրրև անուն հանած մէկը չէր, որ երևաց Ղարաբաղի հորիզոնում, բայց անուն հանեց չնորհիւ զիւղացիութեան մարտական ուժերի, որ ընդհարումների ժամանակ ուժեղ դիմադրութիւն ցոյց տուաւ նախայարձակ թուրքերին, որոնց յետ մղեց բոլոր կռիւներում հակայարձակման անցնելով. և մէկ- մէկ յանկարծակի յարձակումներով պատուհասում էր աւազակաբարոյ ցեղերին: Համազասպի անունը ամէնատարածուած անունն էր Ղարաբաղի հայութեան, ի մասնաւորի Խաչէն, Ջրաբերդ և Գիւլիստան գաւառների զիւղացիութեան մէջ և, հայկական սահմաններից եկնելով, տարածւել էր Մուղանի լայնատարած դաշտի հոծ թրքութեան մէջ Համազասպ անունով: Համազասպը իւր թռուցիկ խմբով մասնակցել է նաև Գանձակի կռիւներին:

Համազասպի խումբը առաջին ուժեղ ընդհարումը թրքական ուժերի հետ ունեցաւ 1905 թ. օգոստոսին Շուշու հայ-թրքական ընդհարման ժամանակ, երբ թուրք անւանի բէկերից մէկը՝ Աղրզեօղալրէկ Աղրզեօղալովը երկու հարիւր ձիաւորների գլուխ անցած Աղդամից ուղղւում է դէպի Շուշի, իւրայիններին օգնութեան հասնելու նպատակով, և Ասկերանում հանդիպում զիւղացիների դիմադրութեանը: Ահա այդ միջոցին Համազասպը իր թռուցիկ խմբով հասնում, մեծ ոգևորութիւն է առաջացնում դիմադրող զիւղացիների մէջ, հակայարձակման անցնելով Աղրզեօղալովի ուժերի դէմ, որոնց օգնութեան էին հասել մօտակայ Խրդրլու և Զուխուրմալու զիւղերի բնակիչները: Հարկաւ, մեր ուժերին էլ օգնութեան են հասնում Խաչէնի Վարագայի և Ասկերանի մօտ գտնուող զիւղացիները: Աղրզեօղալովի ձիաւոր խումբը գլխովին ջարդւում է, և ինքը՝ Աղրզեօղալրէկը, մի չատ փոքրաթիւ, 10-15 հոգուց բաղկացած խմբով, հազիւ կարողանում է ճողոպրել ու աղատւել: Այդ կռւին աչքի են ընկնում իրենց խիզախութեամբ Ալէքսան Դային, Մեսրոպ քահանայ Շահիջանեանը, որը և հէնց այդ օրւանից կոչւում է Դալի Մահրաստա, Խաչոյել Ղուլիքեխեանը, Սերգէյ Բարայեանը և ուրիշներ, ինչպէս նաև Քեամուկ (Վարագա) զիւղացի Գիզօ Սաղեանը:

Համազասպը, ինչպէս ասւեց, ժողովրդին զրաւելու չնորհք ունէր: Կռիւները դադարելուց յետոյ, նա իր թռուցիկ խմբով անցնում է Խնձորեստան գիւղը, ուր ժողովի էին հրաւիրւած ներկայացուցիչներ բոլոր գիւղական հասարակութիւնների ինքնապաշտպանական մարմիններից: Գիւղացիները Ասկերանի կռւում տարած յաղթանակի առիթ մատաղ են մորթում և կերուխումի ժամանակ մէկին անպատճոյճ խօսքերով առաջարկում է

խմել պարոն Հրամանատարի՝ Համազասպի կնոջը, և ամէնքը ուռա գոչելով խմում են: Համազասպը ոգևորուած ճառ է ասում և չեչտում՝ "ես ոչինչ չեմ արել, ես միայն հանդիսատես եմ եղել. խմենք Ալէքսան Դայու, Տէր Մեսրոպի, Իսրայելի, Սէրգէյի և բոլոր միւս մարտիկների, մանաւանդ զիւղացիների կնոջը, որոնք իսկական կուռղներն են եղել": Նման արտայայտութիւնները, բնականաբար, լաւ տպաւորութիւն և աղդեցութիւն էին ունենում: Եւ իրականի մէջ, Համազասպը, առաւելապէս մարդկանց գործի մղող էր և ոչ թէ իրրև մարտիկ: Աչուղ Աչխուժին երգեր էր յօրինել՝

"Մագից արև աղատութեան,
Փախէք ամպեր երկնքից,
Համազասպը իւր խմբովը
Կուգայ Խաչէն գաւառից" և այլն:

Այդ երգը տարածւել էր Ղարաբաղում, և յաճախ երգում էին երիտասարդները ու պատանիները, ինչպէս Անդրանիկին նւիրուած "Իրրև արծիւ սաւառնում ես" և այլ աղգային-յեղափոխական երգեր ու, այդպիսով, Համազասպը ճանաչւեց իրրև հերոս և իրրև այդպիսին յայտնի դարձաւ թուրքերի մէջ:

Արդ, նկատի ունենալով անցեալը, որ մոռացած չէ ժողովրդի կողմից և այն հանգամանքը, որ ի չարս արևելեան ժողովուրդների, մեր ժողովրդի աչքում արժէք ունեն առաւելապէս հեղինակութիւն գարձած անունները, ուստի երեքով՝ Յարութիւն Թումեանը, Ասատուր Աւետիսեանը և ես պաշտպանել ենք Համազասպին օգտագործելու հարցը: Թէ Բագում, մեր ներքին կեանքում, ինչ դէպքեր են տեղի ունեցել, և ինչ թերացումներ է ունեցել Համազասպը, ոչ մենք գիտենք և ոչ էլ, մանաւանդ, Ղարաբաղի հայութիւնը: Եւ եթէ գիտենայինք էլ, նշանակութիւն չպիտի ունենար մեզ համար այն ժամանակ:

Յունիս 30-ին Գերասիմ Բալայեանը, Ասատուր Աւետիսեանը, ղինուորականները Գագա Տէր Օհանեանը, Միքայէլ Իշխանեանը, ղարաբաղցիները, ես և ուրիշ մի քանի սպաներ մեկնում ենք Նախիջևան երկաթուղով, այնտեղից Գորիս գնալու համար: Նոյն օրը հասնում ենք Նախիջևան:

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Յուլիս 1-ին, Նախիջևանի ընդհանուր կոմիսար Գէորգ Վարչամեանի մօտ, որին յանձնում ենք ներքին գործոց նախարարութիւնից մի դրութիւն, աջակցելու մեզ, ապահով անցնելու Զանգեզուր: Վարչամեանին Գերասիմն ու ես ծանօթ էինք

Բազից: Գերասիմը երկար ժամանակ Բազում ապրած լինելով, ի հարկէ, շատ մօտ ծանօթ էր նրան. իսկ ես գործով Բազու եղած ժամանակ, պատահաբար կուսակցական մի ժողովում ներկայ լինելով, ծանօթացել էի: Կենսուրախ մարդ էր Վարշամեանը, շատ ուրախ տրամադրութեամբ ընդունեց մեզ և պատմեց, որ թուրքերը լաւ ընդունելութիւն են ցոյց տուել իրեն և յոյս կայ, որ բոլորովին կը խաղաղւի չրջանը: Մենք յայտնեցինք, թէ պէտք է ամսի 3-ին անպայման մեկնենք Նախիջևանից, ուստի Վարշամեանը կանչեց իր մօտ քաղաքի թուրք ոստիկանին, որ հոգ տանի մեզ համար ձիեր վարձելու և ապա ուղեկցելու մեզ մինչև Ղըզլ Բողազ, անցկացնելով այնտեղից, վերադառնայ քաղաք:

Յուլիս 3-ին միացաւ մեզ դարաբաղցի Միքայէլ Քոչարեանը (Դալի Դերվիշ), կամաւորական խմբերից մէկի մարտիկներից, որ իւր տրամադրութեան տակ եղած մի քանի ձիաւորներով հետախոյզի պաշտօն էր վարում ղինուորական իշխանութեան հրահանգով: Թուրք ոստիկանը ուղեկցեց մեզ մինչև Ղըզլբողազից անց առաջին թրքական գիւղը՝ Քեօլանի, այնտեղի կոմիսարին կարգադրելով, որ մեզ ձիեր տրամադրէին՝ չարունակելու մեր ճամբան ու ինքը վերադարձաւ: Քեօլանից նոր ձիեր ստանալով Ղարաբաբայի վրայով, երեկոյեան բաւական ուշ հասնում ենք Գժաձոր հայկական գիւղը: Գիշերը մնում ենք Գժաձորում:

Յուլիս 4-ին Դալի Դերվիշը հրաժեշտ տալով մեզ, իւր ձիաւորներով վերադառնում է Նախիջևան, իսկ մենք չարունակում ենք մեր ճամբան և երեկոյեան հասնում Բռնակոթ գիւղը, որտեղից միւս օրը 5-ին հասնում Գօրիս, ներկայանում Արսէն Շահմազեանին, որի մօտ էին Արչակ Շիրինեանը, Զաքար Եոլեանը և Նիկ. Յովսէփեանը: Գորիսում իջևանելու և մնալու տեղ ունէի, հօրս պաշտօնակից Եփրեմ Պօղոսեանի մօտ, ուստի Արչակը և Նիկոլը միւս ընկերներին տեղաւորելու մասին անհրաժեշտ կարգադրութիւն արին :

Յուլիս 6-ին եկեղեցում հոծ բազմութիւն է. Մայիս 26, 27 և 28 -ին Ղափանի Ադարակ ու Եղվարդ գիւղերի մօտ թուրքերի դէմ գլխապետ Սմբատ Թորոսեանի ղեկավարութեամբ մղուած կռւում ընկած զոհերի համար հոգեհանգիստ է կատարում պատարագից յետոյ:

Յուլիս 7-ին Ազգային Խորհրդի նիստն է. Գերասիմը, Աստուրը և ես ներկայ ենք: Զանգեզուրի Ազգային Խորհուրդը վերանուանել է Զանգեզուր-Ղարաբաղի Ազգային Խորհուրդ, քանի որ Ղարաբաղից արդէն մէկ ներկայացուցիչ, Միքիքեէ Եսայեանը մտած էր կազմի մէջ, և մենք երեքս էլ մտնում էինք կազմի մէջ, իբրև անդամներ: Ազգային Խորհրդի կազմի անդամներն էին Մուշեղ

Զաքարեանը՝ նախագահ, Մելիքսէթ Եսայեան, քարտուղար, անկուսակցական, Արշակ Շիրինեանը, Խաչիկ Դանիէլեանը, Արսէն Բակունցը, Յակոբ Տէրունին, Սահակ Տէր Հայրապետեանը, դաշնակցականներ, վերջինը անաւանած "ձախ", Երեմիա Բակունց, բոլշևիկ, Սմբատ Մելիք Ստեփանեան, անկուսակցական, որոնց աւելացանք երեքս:

Մելիքսէթը ժողովից յետոյ առանձին պատմում է ինձ, թէ՝ "Խորհրդի անդամների միջև գոյութիւն չունի համերաշխութեան այն ոգին, որ տիրում էր Ղարաբաղի միջկուսակցական Բիւրոյում և նրան յաջորդած բոլոր աղգային մարմիններում. որտեղ այնքան համերաշխ էին տարբեր հոսանքների պատկանող գործիչները, իսկ Գորիսում խուլ պայքար կար Մուշեղ Զաքարեանի դէմ: Մուշեղին կողմնակից էր Սամուէլը, և երկուսն էլ ձախ են համարւում, մանաւանդ որ բոլշևիկ Երեմ Բակունցը յաճախ նրանց առաջարկներին ու բանաձևերին է ձայն տալիս: Կարճ ասած, խորհրդի դաշնակցական անդամները դէմ են Մուշեղին և ուղում են պաշտօնանկ անել և ուրիշին նախագահ դարձնել: Համաղումարներին, փաստ է, գիւղացիների մեծամասնութիւնը Մուշեղի կողմն են եղել և նրան են համագումարի նախագահ ընտրել: Պարզապէս առաջնութեան դեր կատարելու և համապատասխան աշխոյժ դրաւելու հարց է: Անհամերաշխ այսպիսի մի մարմին չի կարող արդիւնաւէտ աշխատանք կատարել":

Ինչպէս տեղեկացրեց Մելիքսէթը՝ Շատևվորտի դէմ տեղի ունեցած ցոյցը կազմակերպել է Մուշեղի նախանձեռնութեամբ ու ղեկավարութեամբ, և այն օրւանից աւելի հեղինակաւոր է դարձել գիւղացիների աչքում: Ես, ճիշտն ասած, առանձին համակրանք չունեմ դէպի նա, որովհետև նրա չարժ ու ձևերը, ապլոմբով[33] խօսելը, իր մասին մեծ համարում ունենալը, պարզապէս, անհաճելի են ու տհաճ տպաւորութիւն են թողնում, սակայն իրական փաստն այն է, որ նա ներկայիս կարողացել է դիրք գրաւել գիւղացիութեան մէջ, ուստի պէտք է օգտագործել այդ հանգամանքը:

Յուլիս 10-ին տեղի է ունենում կուսակցական ընկերների խառն ժողով՝ լսելու մեր ղեկուցումը, վերջին մէկ ամսւայ ընթացքին տեղի ունեցած բանակցութիւնների մասին դաշնակիցների ներկայացուցիչների հետ, և մեր կառավարութեան՝ Զանգեզուր-Ղարաբաղի համար աննկիւնների չուրջ:

Մուշեղ Զաքարեանը ներկայ չէր ժողովին, ինչպէս և Սահակ Տէր Հայրապետեանը: Գևրասիմը հարցրեց պատճառը, թէ ինչու ներկայ չեն նրանք, պատասխանեցին, թէ Մուշեղը դաշնակցական

[33] Աւելորդ ինքնավստահութիւն (Ֆրանս.): (Խմբ.)

չէ: Առիթից օգտվելով ասացի, որ Շուշում նա հանդիսացած է եղել որպէս դաշնակցական և իբրև այդպիսին դասախօսութիւն կարդացել "Մարքսիզմի ճգնաժամը" նիւթի շուրջ, ընդդէմ բոլշևիկների և մենշևիկների. ինչպէ՞ս է, որ Գօրիսում, հակադաշնակցական է դարձել:

-Այո, նա այժմ դաշնակցական չէ, դուչեցին իրենց տեղերից Խօսունց Մատուրը, Խուրչուղեան Դաւիթը, Փարսունց Պօղոսը և ուրիշներ:

Սկսեց վէճ տեղական ընկերների ու իմ միջև : Ընկերներին պատմեցի, թէ ինչպէս բոլոր հոսանքները անկեղծ համերաշխութեամբ կարողացել են մէկուկէս տարի, կտրուած հայկական կենտրոններից, չորս կողմից շրջապատուած թուրքերով, ձեռք ձեռքի տուած աշխատել: Թէ որքան համերաշխ են եղել հոսանքներն իրարու հետ, որպէս վկայի մատնացոյց արի Գերասիմին, որը Բագուից Շուշի գալով, առաջին անգամ ներկայ գտնուելով միջկուսակցական խմբակցական ժողովի, մնացել էր զարմացած, թէ որքան համերաշխ են տարբեր հոսանքի մարդիկ, միանգամայն զերծ կուսակցական նեղմտութիւնից և դանադան հարցերի ու խնդիրների շուրջ առաջարկուած բանաձևերը կուսակցական ընոյթ չունենալով, քւէարկելիս մարդիկ աղատ էին: Ենթադրենք բանաձևեր են առաջարկել մի դաշնակցական ու մի մենշևիկ, քւէարկելիս մի քանի դաշնակցականներ ու մենշևիկներ ձայն էին տալիս առաջին բանաձևին և նոյնպիսի խառն մի խումբ երկրորդին, ձայների մեծամասնութեամբ ընդունւում է մէկը: Եթէ հնարաւոր էր տարբեր հոսանքների միջև համերաշխութիւն ստեղծելու, ինչո՞ւ հնարաւոր չէ մեր չարքերում ստեղծելը: Պէտք է վերջ տալ թայֆայարաղութեանը և Ադգային Խորհրդի մէջ տիրող անհամերաշխութեանն առաջին հերթին:

Խօսեցին նաև Գերասիմն ու Ասատուրը: Գերասիմը, իրեն յատուկ ղզայնական ոճով, ընկերների ուշադրութիւնը հրաւիրեց կարևոր այն հանգամանքի վրայ, թէ "անգլիական հրամանատարութիւնը, իր միակողմանի, յօդուտ Ադրբէջանի վարած քաղաքականութեամբ, մեծ հարուած է հասցրել Զանգեզուր-Ղարաբաղին և մեզ համար ստեղծել անհանդուրժելի պայմաններ, որոնցում վիճակւել է մեզ աշխատել: Մենք, որ երեկ, Եռեակ Համաձայնութեան կողքին, համարւում էինք փոքրիկ դաշնակից՝ իրենց, իսկ ադրբէջանցիները սրատարուի սպասում էին իրենց հաւատակից Թիւրքիայի յաղթանակին և, վերջինի գործակալներին ապաստան տալով իրենց ծոցում, քայքայիչ դեր էին կատարում ի վնաս Եռեակ Համաձայնութեան, այսօր դարձել են ուշադրութեան առարկայ, որպէս իրենց օգտակար տարր, իսկ մենք դարձել ենք աչքի փուշ: Ահա այս պայմաններում պիտի մանր-մունր խնդիրները

չղրաղեցնեն մեզ, որպէսզի կարողանանք մէկ սիրտ, մէկ հոգի զարձած աշխատել":

Խօսք առաւ Սաքօն (Եապօն) և ասաց. "Ջանըմ, էդ եւրոպացիները միչտ էլ մեզ խարել են, խաբում են և պիտի խարեն յօդուտ իրենց կապիտալի: Նրանք իրենց չահն են հետապնդում, իրենց ինչ հոգն է, թէ հայ ժողովուրդը արիւն է քամում: Ես դեռ Սիբիր եղած ժամանակ դրել եմ այդ մասին, որ ոչ մի օգուտ չունենք եւրոպացիներից, նրանց խօսքերին չպիտի հաւատ ընծայենք, և այսօր օրը ցերեկով, ափաչկարայ, ոտնակոխ են անում մեզ, Աղրբէջանին թէ ու թիկունք հանդիսանում: Եւ այս պայմաններում, երբ պէտք է մենք միաբան լիննենք, պայքարում ենք միմեանց դէմ:"[34]

Տէրունին ասում է՝ "մենք չէ, որ միմեանց դէմ պայքարում ենք, այլ մէկ հոգի, բաց խօսենք, Մուչեղն է, որ միչտ իւր տեսակէտի վրայ է պնդում, իր ճառերով զբաղեցնում, ժամանակ խլում, դաւդակութիւն անում:"

"Այո, այո, միայն նա է, Մուչեղն է պայքար ստեղծողը, ասում է Խօսունց Մատուրը, նա միչտ իրա էչն է առաջ քչում":

"Ընկերներ, ասում է Ասատուր Աւետիսեանը, մեր կուսակցութեան մէջ, իւրաքանչիւր դաչնակցական, ինչ կրթութիւն և անցեալ էլ ունենայ, մէկ ձայնի իրաւունք ունի, ոչ ոք չի կարող դիկտատորութիւն անել, լռութեան դատապարտել ընդհանուրին: Եթէ Մուչեղը իր տեսակէտն է պաչտպանում, դա նրա իրաւունքն է, չենք կարող մեղադրել նրան և, վերջապէս, չէ՞ որ մեր մէջ ձայների մեծամասնութեամբ ամեն մի խնդիր լուծւում է. նա կառաջարկի իր տեսակէտը, բանաձևը, և ձայների մեծամասնութիւն չչահելու դէպքում, չի կարող դոռ անել և իր տեսակէտը ընդունել տալ. պարզ է միանգամայն":

Խօսեց նաև Զաքար Եօլեանը, որ բնիկ Գօրիսեցի էր, բայց երկար տարիներ աշխատած Բագւում, որպէս ակտիւ գործիչ բանւորական միութեան չարքերում. "Ընկերներ, մենք մի կողմ պիտի նետենք երկրորդական, մանր-մունր խնդիրներն ու հարցերը, և մեր ամբողջ ուչադրութիւնը կենտրոնացնենք մեր գլխաւոր անելիքի վրայ, այն է՝ բոլոր հնարաւոր միջոցներով խափանելու Աղրբէջանի յղացած ծրագիրների դործադրութիւնը: Իհարկէ, մեր կառավարութիւնը իւր անհրաժեչտ քայլերը կանէ դաչնակիցների մօտ, դիմակազերծ անելու Աղրբէջանին, յետ մղելու նրա ապօրինի պահանջները, իսկ մենք էլ այստեղ պիտի ջանանք ձեռք-ձեռքի տւած աշխատել, որպէսզի յաջողութիւն ունենանք":

---

[34]Սաքօն ճիչտ էր ասում. Սիբիրից նամակագրութիւն ունէր Հետո և բանից իր նամակներում արտայայտուել է նրան խօսքերով և նրան տեսակէտն է յայտնել: (Հեղ.)

Արշակ Չերչինեանը,որ մեր հին ընկերներից մէկն էր, ամէնից աչքի ընկածը որպէս բարձրագոյն կրթութիւն ստացած մարդ, վկայեալ դիւզատնուես գնրմանական համալսարանից, նախազգուշում էր ժողովին, ասաց՝ "խնդիրը պէտք է համարել պարզուած, ուստի ժողովն էլ պիտի համարել փակուած":

Արշակի անորոշ և կարճ յայտարարութիւնը տարօրինակ թւաց, բայց յետոյ պարզուեց, որ հակառակութիւնը հէնց Արշակի և Մուշեղի միջև է: Ժողովից յետոյ, յաջորդ օրը Գերասիմը, Աստուրը և ես հանգիպում ենք Սաքոյին, որի հետ դրուցելով իջանք ձորի այգիներում ղրօսնելու: Գերասիմը ղարձաւ Սաքոյին և ասաց. "Սաքօ, դու գիտես երևի, ինչն է պատճառը ընկերների միջև առաջացած տարաձայնութեան. մի՞թէ հնարաւոր չէ վերացնել այն: Կարծում եմ, Արշակը կարող է աղդել և համերաչխութիւն ստեղծել": "Պարզապէս, Մուշեղին չեն հանդուրժում, ասաց Սաքօն, ուղում են նրա փոխարէն ուրիշին նախագահ ղարձնել. Արշակն էլ չի հանդուրժում Մուշեղին և ղրանից միւսները աւելի են թև առնում:"

Սաքօ, ասում եմ, ամրողջ Զանգեղուր-Ղարաբաղում, մեր ընկերների մէջ
ոչ ոք քո արքը[35] չունի, ըստ իս, և դու կարող էիր, դեռ ուշ չէ, էլի կարող ես, պարզապէս, կչտամբել բոլորին, յանդիմանել և կարգի հրաւիրել, վերջապէս նախագահը Խորհրդի նիստերը ղեկավարելու և ընթացիկ գործերի կատարման հետևողն է, համաձայն Խորհրդի որոշման, որից չեղնելու իրաւունք չունի: Ով էլ լինի նախագահը, նոյն ղերը պիտի կատարէ, արժէ ղրա համար պայքարել, փոխել նախագահին և ուրիշին նչանակել:

– Ներկայիս աւելորդ է արքի մասին խօսելը, առաջները նչանակութիւն ունէր, իսկ այս վերջին յեղափոխութեան հետևանքով տեղից վեր կեցողը ճառ է ասում, իր ասածների վրայ պնդում,իրը ինքը ճիշտ է, չի սխալւում, դիմացինն է սխալւողը: Մուշեղին տանել չեն կարողանում, որովհետև երեսներին քննադատում է իրենց: Ի վերջոյ, միևնոյն է, նրանք իրենց որոշումը պիտի իրագործեն, Մուշեղին զցեն, ուրիշին ընտրեն նախագահ:

Եկել ենք իրր թէ ձեռք-ձեռքի տուած աշխատելու, ասում եմ, օգնութիւն հասցնելու Ղարաբաղին, բայց, ինչպէս երևում է, պատակուած ուժերի հետ գործ ունենք, հաղիւ թէ կարողանանք ղրական արդիւնքի հասնել:

---

[35] Բարոյական իրաւունք, յարգ բառից: Խմբ.

–Դու արդէն յոռետես դարձար, ասում է Գերասիմը, մանր, ճղճիմ վէճ է, երկար չի տևի, կը վերջանայ, երբ Մուշեղի փոխարէն ուրիշ մէկը ընտրի նախագահ:

–Ճիշտ է, ասում եմ, նախագահի չուրջը եղած վէճը կը վերջանայ, սակայն, որ կարևորն ու էականն է, ընկերների միջև առաջացած ներհակ վերաբերմունքը հաղիւ թէ վերջանայ:

Յուլիս 15-ին Արչակ Շիրինեանի բնակարանում մասնաւոր խորհրդակցական ժողով է, որի դբաղման նիւթը Ազգային Խորհրդի նախագահի փոփոխման հարցն է: Ժողովին ներկայ են՝ Աստուր Աւետիսեան, Գերասիմ Բալայեան, Յակոբ Տէրունի, Խաչիկ Դանիէլեան և ուրիշներ:

Արչակ Շիրինեանը յայտնում է, որ Ազգային Խորհրդի նախագահից դժգոհ են ոչ միայն դաշնակցական անդամները, այլ և դրսի ընկերները: Մուշեղը իր կեցուածքով անհանդուրժելի է դարձած, երբ նրա փոխարէն ուրիշ մէկը ընտրի նախագահ, կը վերանայ Խորհրդի մէջ առաջացած պառակտումը և ընկերների դժգոհութիւնը: Ապա Արչակը առաջարկում և պնդում է, որ նախագահութիւնը ևս ստանձնեմ : Ես մերժում եմ, պատճառաբանելով, որ իբրև նորեկ անձնաւորութիւն անյարմար է իմ՝ նախագահի պաշտօն ստանձնելը, մանաւանդ որ չրջանում ճանաչուած մէկը չեմ. ինքս էլ ի մօտոյ ծանօթ չեմ չրջանին, սակայն, ըստ իս, ոչ մէկ կարևորութիւն չունի նոր նախագահ ընտրելը, կարևորն ու անհրաժեշտը գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները վերջ դնելն ու ընկերների միջև բնականոն յարաբերութիւններ ստեղծելն է:

Յակոբ Տէրունին առարկում է, թէ չատ կարևոր է նախագահի հարցը, որի չնորհիւ է տարաձայնութիւն առաջացել խորհրդի մէջ և դժգոհութիւն ընկերների մէջ:

Խօսում են և ուրիշները, ժողովը եղրակացութեան չի յանգում և ցրւում է: Նոյն օրը ճաչից յետոյ տեղի է ունենում Զանդեզուրի կոմիտէութեան ներկայացուցչական ժողովը, որին չեն հրաւիրում Մուշեղ Զաքարեանին, չնայած նա Սիսիանում հեղինակութիւն է և մեծ ազդեցութիւն ունի դիւղացիութեան վրայ, որպէս սիսիանցի: Տեղի է ունենում կոմիտէի ընտրութիւն և ընտրում են՝ Դաւիթ Խուրշուդեան, Մատուր Խօսունց, Մեսրոպ Փարսեան, Յակոբ Տէրունի և Խաչիկ Դանիէլեան:

Երեկոյեան հաւաքւում ենք Արսէն Շահմաղեանի մօտ, կրկին դրւում է Ազգային Խորհրդի նախագահ ընտրելու հարցը, ինչպէս նաև խորհրդի անդամների միջև աշխատանքի բաժանում

կատարելու անհրաժեշտութիւնը: Արշակ Շիրինեանը հերթով առաջարկում է կրկին իմ թեկնածութիւնը և մերժւում, ապա առաջարկում է Գերասիմին, որ նա ստանձնի նախագահի պարտականութիւնը, և Գերասիմն էլ կտրուկ կերպով մերժում է, որից յետոյ Արշակը յայտարարում է՝ "քանի որ դուք մերժեցիք առաջարկս, ուստի ես կը ղնեմ իմ թեկնածութիւնը նախագահութեան համար":

Յակոբ Տէրունին առաջարկում է Մուշեղ Զաքարեանին պատասխանատու պաշտօն չտալ աշխատանքի բաժանում կատարելիս: Ներկայ գտնուողների մեծամասնութիւնը ընդունում է Տէրունու առաջարկը: Գերասիմ Բալայեանը, Զաքար Եօլեանը և Աստուր Աւետիսեանը սկզբում հակառակ ձայն են տալիս, ապա ձեռնպահ են մնում, ես հակառակ ձայն եմ տալիս: Որոշւում է Մուշեղ Զաքարեանին տալ խնամատարութեան գործ, որպիսին փաստօրէն գոյութիւն չունէր:

Յուլիս 16-ին Ադգային Խորհրդի նիստն է, մասնակցում է նաև Զաքար Եօլեանը, որպէս ներկայացուցիչ ընդհանուր կոմիսարի: Մուշեղ Զաքարեանի հակառակորդները դնում են նոր նախագահ ընտրելու հարցը: Պարզապէս պիտի որոշէր, նախագահական աթոռին ո՞վ պիտի նստի, Մուշե՞ղը, թէ՞ Արշակը, որոնց միջև տեղի է ունենում պայքարը: Մուշեղի կողմնակիցները՝ Սահակ Տէր Հայրապետեան և Երուանդ Բակունց, իրենց ղարմանքն են յայտնում ու բողոքում, որ կարեւոր գործերը թողած, երկրորդական նշանակութիւն ունեցող խնդիրներով ենք զբաղւում: Մուշեղի հակառակորդները պատճառաբանում են, թէ նախագահութիւնը թոյլ է, ուստի, քանի որ նոր մարդիկ էլ աւելացել են կազմի մէջ, պէտք է ընտրութիւն կատարել: Մուշեղը հարկաւ ղղում էր, որ խնդիրը իր անձի չուրջն է պտտւում, որպէսզի իրեն հակառակորդ կողմի մարդը չընտրւի, առաջարկում է իմ թեկնածութիւնը, ես հրաժարւում եմ, ուստի առաջարկում է Գերասիմի թեկնածութիւնը, բայց նա էլ է հրաժարւում, և ընտրւում է Արշակը, որից յետոյ աշխատանքը բաժանւում է հետևեալ ձևով՝ ներքին գործոց՝ Գ. Բալայեան, բժշկա-սանիտարական՝ Ա.Աւետիսեան, հաղորդակցութեան՝ ինժ. Ա. Բակունց, արտաքին գործերի՝ եր. Բակունց, պարենաւորման՝ Խաչ. Դանիէլեան, ժողով. լուսաւորութեան՝ Յակոբ Տէրունի, խնամատարութեան՝ Մուշեղ Զաքարեան: Ադատ, առանց պորտֆէյլի անդամներ՝ Սմբատ Մելիք Ստեփանեան, Սահակ Տէր Հայրապետեան ու ես: Ամէնից թոյլը Յակոբ Տէրունին էր, որը, բատ ընկերների վկայութեան, լրիւ միջնակարգ կրթութիւն չունէր, ուսուցչութեամբ չէր զբաղւած, բայց զպրոցների վարիչ է նշանակւում: Յամենայն դէպս, մի մեծ գործ կատարւած համարուց: Այսպէս ենք մենք հայերս, որ յաճախ

կարևոր աննկատները մեկդի թողած, երկրորդական, մանր-մունր խնդիրներով ենք զբաղւում:

Յուլիս 17-ին Շուշուց գալիս է Ամերիկեան Նպաստամատոյցի ներկայացուցիչ Դոկտոր Հարմանը, մի քանի ուրիշ պաշտօնակիցների և հայ Թարգմանի հետ, մեր խնամատարական գործով, օգնութիւն ցոյց տալու կռիւների ժամանակ տուժած գիւղերի բնակիչներին: Մուշեղի համար գործ սկսւեց, նա պէտք է ամերիկացիներին առաջնորդէր և ցոյց տար տուժած գիւղերն ու տեղի վրայ նիւթական օժանդակութիւն տրւէր:

Դոկտոր Բրաունը և աշխատակիցները ծանօթ էին մեր այն զրուցնանը, որը Ղարաբաղի Ազգային Խորհուրդը ներկայացրել էր անգլիական միսիային, ապացուցելով Ադրբէջանի ապօրինի պահանջը, թէ իբր Զանգեզուր-Ղարաբաղը Ադրբէջանին է պատկանում:

Յուլիս 18-ին Մուշեղը, որպէս խնամատարութեան վարիչ, մտաւ իր դերի մէջ, Դոկտոր Բրաունի և օգնականների հետ միասին մեկնեցին Տաթև, Ղափանի արևելեան շրջանի տուժած գիւղերն այցելելու և տեղի վրայ ծանօթանալու բնակիչների կարիքների հետ: Մուշեղը Տաթևի վանքի մասին պատմում է դոկտորին և օգնականներին, թէ երբ է կառուցւել և ինչ խոշոր դեր է կատարել անցեալում: Ճամփին տեսնում են նաև սրբատաշ քարից չինւած Իշ Թափալար քարւանսարան, որ հարիւրաւոր տարիներ նոյնութեամբ մնացել է կանգուն:

Յուլիս 19-ին վերադառնում են Գորիս և 20-ին մեկնում Խոզնավարի ճակատը: Մուշեղին և ամերիկացիներին միանում են Մելիքսէթ Եսայեանը և Սահակ Տէր Հայրապետեանը: Նոյն օրը ուշ երեկոյեան վերադառնում են Գորիս:

Յուլիս 21-ին Դոկտորը և աշխատակիցները Արսէն Շահմազեանի մօտ են, հրաժեշտ տալու նպատակով, Շուշի մեկնելու համար: Դոկտոր Բրաունը չնորհակալութիւն է յայտնում իրեն և աշխատակիցներին տրւած դիւրութեան համար, ապա պատմում է, որ առիթ ունեցան տեսնելու հաղար տարուց աւելի հին անցեալ ունեցող Տաթևի վանքը և նրա չարժական սիւնը, որ չատ մեծ տպաւորութիւն են թողել իրենց վրայ : "Անհերքելի, անժխտելի է, ասում է Դոկտոր Բրաունը, որ Զանգեզուր-Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է, ապացոյց նրա հարիւրաւոր տարիների և հաղարամեայ վանքերն ու տաճարները: Ադրբէջանի պահանջները ապօրինի են, պարզ ոտնձգութիւններ":

Արսէն Շահմազեանը իր գոհունակութիւնն է յայտնում, որ Դոկտորն ու իր աշխատակիցները տեսան մեր հազարամեայ պատմական կոթողները, որոնք կենդանի և լուռ վկաներ են, որ անհերքելիօրէն ապացուցում են Ջանգեզուր– Ղարաբաղի Հայաստանին պատկանելը և վստահ է, որ դոկտորն ու իր աշխատակիցները նոյնը կը յայտնեն դաշնակիցների հրամանատարութեանը, վերջ տալու Ադրբէջանի ոտնձգութիւններին:

Յուլիս 21-ին Դոկտ. Բրաունը և իր աշխատակիցները մեկնում են Շուշի:

Երեկոյեան Արսէն Շահմազեանի մօտ ենք հրաւիրուած, խորհրդակցելու, թէ ինչպէս և ինչով կարող ենք օգնել Ղարաբաղի գործիչներին: Ներկայ են՝ Արչ. Շիրինեան, Գերասիմ Բալայեան, Զաքար Եօլեան, Աատուր Աւետիսեան, Կոստիա Աթմայեան, Գագա Տէր Օհանեան ու ես:

Խորհրդակցութիւնը բաղմից ժողովների ընթացքին կամ մասնաւոր զրոյցների ժամանակ ծեծուած, պարզաբանուած խնդիրը նորէն մտքերի փոխանակութեան է ենթարկում և նոյն եղրակացութիւնը հանում՝ Ղարաբաղը պէտք ունի ռազմամթերքի, զրամի և մեկ փորձուած դիւանապետի: Ասենք, խօսենք և յիշենք, սակայն, իրականին մէջ՝ առանց չօչափելի արդիւնքի: Որոշւում է, որ Արսէնը կրկին մի զրութեամբ կառավարութեանը դիմէ և պահանջէ Ղարաբաղին իրական օգնութիւն ցոյց տալու:

Յուլիս 23-ին, Կոռնի Ձորի դիմաց, Հազարուն կտրելով, Ղարաբաղից գալիս է չտարի հրամանատար կապիտան Արտաշէս Վարդապետեանի կողմից ուղարկուած սուրհանդակը, որը բերում է Արսէն Շահմազեանին ուղղուած մի զրութիւն, որում նկարագրուած է Ղարաբաղի հայութեանը վիճակուած ծանր կացութիւնը, ի հետեւանք անգլիական հրամանատարութեան քայլերի՝ ամէն կերպ մեղ ենթարկել Ադրբէջանի իշխանութեանը: Կրկին Արսէնի մօտ էինք, երբ սուրհանդակը ներս մտաւ և թուղթը յանձնեց Արսէնին: Նամակի թարմ տպաւորութեան տակ որոշեց, որ ընկերներից մեկը անցնի Ղարաբաղ, պարզի իրերի զրութիւնը և կապը կենդանի դարձնի, որպէսզի կանոնաւոր կերպով չարունակւի երթեւեկը:

Աատուր Աւետիսեանը առաջինը լինելով, նախքան սուրհանդակի գալը, մօտ տասն օր առաջ հարց էր դրել, որ հնարաւորութիւն տրւի իրենն՝ Ղարաբաղ անցնելու. երբ սուրհանդակը եկաւ, պատեհ առիթից օգտւելով, նորից հարց դրաւ և պնդեց, որ սուրհանդակի վերադարձին ինքն էլ ընկերանայ, անցնի Ղարաբաղ: Հարկաւ, ոչ ոք չառարկեց, քանի որ Աատուրը

Ղարաբաղի ակտիւ և պատասխանատու գործիչներից է եղել, իրազեկ այնտեղի պայմաններին և իրադարձութիւններց. աքսորւելով Երևան, ի մօտոյ ծանօթացել էր Հայաստանի ղրուխեան հետ, կառավարութեան ունեցած հնարաւորութիւնների մասին զաղափար կազմել, ուստի կը կարողանայ այնտեղի գործիչներին ներկայացնել իրերի իսկական վիճակը:

Յուլիս 25-ին Ասատուրը սուրհանդակի հետ գնում է Կոռնիձոր, այնտեղից, Հազարուն կտրելով խծաբերդ գնալու համար: Եւ Ասատուրը գնաց դատարկաձեռն, որովհետև Արսէն Շահմազեանը զուրկ էր միջոցներից և ի վիճակի չէր գէթ զրամական օժանդակութիւն ցոյց տալու Ղարաբաղին:

Յուլիս 26-ին Մուշեղ Զաքարեանը յայտնում է ինձ, թէ որոշել է հրաժարւել Ազգային խորհրդից, քանի որ անդամների մէկ մասը թայֆայարազութիւն է անում և լարւած է իրա դէմ: "Ես պարզապէս, զարձել եմ աչքի փուշ, որովհետև իրենց կատարած սխալները եմ մատնանշել կամ համաձայն չլինելով տեսակէտներին, քննադատել եմ, դէմ արտայայտւել: Մթնոլորտը անտանելի է այլևս":

Ես առարկում եմ և խորհուրդ տալիս, որ հրաժարւելու միտքը զլխից հանի: Թէև ինքս ընդունում և համարում եմ, որ Մուշեղը մեծամիտ է և աթոռից զրկւելու հետևանքով աւելի է դրսեւորում մեծամտութիւնը, սակայն, որ նա եռանդուն աշխատող և գործին հետևող մէկն է, զա էլ կասկածից դուրս է: Եւ եթէ Արշակը քննադատաբար է վերաբերւում Մուշեղին, արդ ունի, տարեց ընկեր է, ստաժով աւելի հին, կրթութեամբ էլ բարձր: Յամենայն դէպս, Մուշեղի հրաժարականը, ըստ իս, անընդունելի է, մանաւանդ, ըստ ձևի, որ նախագահի աթոռից զրկւելու հետևանքով է հրաժարւում: "Հարկաւ, եթէ նախագահը փոխելու հարցը դրւած չլիներ կամ եթէ նախապէս հրաժարւած լիներ, նախքան հարց դրւելը, ծուռ բացատրութիւն չէր տրւի" ասացի: "Հիմա պիտի ասեն, որ աթոռից զրկւելու պատճառով ես հրաժարւել, և նման բացատրութիւնը պէտք է պինդ կպնի քեզ: Այնպէս որ, ըստ իս, լաւագոյնն է պաղարիւն մնաս և զերծ խծբծանքից":

Մուշեղը համաձայնւեց, մնաց կազմի մէջ, սակայն տխուր տպաւորութիւնը, որ ստացել էի թէ կուսակցական ընկերներից և թէ խորհրդից, չանցաւ: Ինչ որ տեղի է ունենում, դժբախտաբար, յատուկ է մեզ, թերևս որևէ ազգի անդամների մէջ անհատականութիւնը այնքան ուժեղ կերպով զարգացած ու չնչտւած չէ ի բնութենէ, որքան հայի մէջ: Մենք ընդունակ ենք խոչոր, կենսական նչանակութիւն և արժէք ունեցող հարցերի ու խնդիրների վրայ չծանրանալ, լրջօրէն քննութեան չառնել և

չխորանալ նրանց մէջ, սակայն մանր-մունր և ճղճիմ հարցերի չուրջ անվերջ կը վիճենք, կը դատափետենք իրարու: Կուսակցութեան որոշմամբ Գօրիս եկանք, իբր թէ գործ անելու, և չարաթներ չարունակ Ազգային Խորհրդի Նախագահը փոխելու խիստ մանր հարցով զբաղուեցինք:

Յուլիս 31-ին խորհրդակցական ժողով է Արսէն Շահմազեանի մօտ. ներկայ ենք՝ Ա. Շիրինեան, Գ. Բալայեան, Զ. Եօլեան, Կ. Աթայեան, Գազա Տէր Օհաննեան և ես: Օրակարգի խնդիրները՝ ա) Զանգեզուր-Ղարաբաղի ինքնապաշտպանութեան հարցը, բ) չրջաններում գործիչներ ունենալու և գ) նահանգապետութեան ու զինուորականների նիւթական միջոցների ապահովման հարցերը:

Մտքերի որոշ փոխանակութիւնից յետոյ ժողովը գտաւ, որ ինքնապաշտպանութեան գործը կազմակերպելու և ամուր հիմքերի վրայ դնելու համար անհրաժեշտ է, որ զինուորական իշխանութիւնը Երևանից 30 սպայ ուղարկի Զանգեզուր, փամփուշտ՝ կէս միլիոն, 4 թնդանօթ և 25 միլիոն ռուբլի միանուագ, առ հաչիւ: Եւ որպէսզի կարելի լինի չուտ բաւարարութիւն ստանալ մեր պահանջների դիմաց, անհրաժեշտ է, որ մէկը գնայ Երևան, այլապէս նամակներ գրելով արդիւնքի չենք հասնի: Եւ որոշուեց, որ ես գնամ:

Օգոստոս 1-ին հրաւիրուեց ինձ իւր մօտ Դոկտոր Միքայէլ Պարոնեանը, որը ոչ միայն Գորիսի և չրջանի, այլև ամբողջ զաւառում հայերի և թուրքերի կողմից ճանաչուած ու մեծապէս յարգուած անձնաւորութիւն էր, թէ իբրև բարեխիղճ բժիշկ և թէ իբրև լաւ մարդ, մեծ հեղինակութիւն էր վայելում: Բժիշկինց տունը յայտնի էր իր հիւրասիրութեամբ, անկախ նրանից, թէ սեղանի չուրջը ինչ ազգութեան մարդ է նստած: Մեծահարուստ չէին, բայց հոգով հարուստ մարդիկ էին տան անդամները: Հայրը վախճանուած էր, սակայն մայրը ամուսնու փոխարէն չարունակում էր պահպանել արմատացած իրենց տան մեծութիւնը, և բոլորը, որոնք մնում էին այդ տան յարկի տակ, մեծ յարգանք էին տածում նրա հանդէպ: Բժիշկը կուսակցական չէր[36], համակիր էր, սակայն առողջ տեսակէտներ ունեցող հայ մարդ, աղատօրէն իր մտքերն արտայայտող, և երբէք չէր վարանում ոչ միայն այս կամ այն անհատ դաչնակցականի, այլև կուսակցութեան ու

[36] Բոլոր եղբայրները և քոյրը համալսարանական կրթութիւն ստացած մարդիկ էին: Եղբայրներից մէկը՝ Արամը (Յարութիւն) համալսարան աւարտելով, որպէս պատմական, ուսուցչական պաշտօն էր ստանձնել Շուշու թեմական դպրոցում. դաշնակցական էր, մասնաւոր յայտ պատրաստութեամբ, Թիֆլիսի բարերաժամով հիմնարկեալ Առաջին Աչխարհամարտին և հակառակ բժիշկների դրած դրած ջանքերին, չիվրևից, մահացաւ, սպի մասնակցելով աշակերտութեանը, որի անդամ էր վայելում: (Հեղ.)

կառավարութեան թերութիւնները մատնանշելու: Յեղափոխական մարդ չլինելով հանդերձ, երբէք չէր խուսափում, համարձակ կերպով, ցարական կառավարութեան պաշտօնեաներին մատնանշելու նրանց թերութիւնները, որպիսիք նկատում էր և ժողովուրդը: Զանգեզուր-Ղարաբաղում, 1906 թ. հայ-թրքական ընդհարումների վերջին տարին, երբ Գանձակի նահանգապետը չըջագայութեամբ եղել էր Զանգեզուրում և Գօրիսում հիւրասիրել բժիշկի տանը, հրաւիրած հայ, թուրք և ռուս (պաշտօնեաներ) հիւրերի ներկայութեամբ, խօսք է բացւում հայ-թրքական դարաւոր հարևան ժողովուրդների միջև տեղի ունեցած ընդհարումների մասին, և նահանգապետն էլ ցաւ է յայտնում այդ առթիւ: Դոկտորը, առանց վարանելու, համարձակ իր խօսքն է ասում, թէ՝ "մեղքը կառավարութեանն է, եթէ թոյլ չտար Բագւում, օր-ցերեկով երկու ժողովուրդները իրար յօշոտէին, ապա իղուր տեղը այնքան անմեղ մարդկանց արիւնը չէր թափւի և նիւթական մեծ վնաս չէին կրի մարդիկ: Ես դինւորական չեմ, սակայն տէչք ինձ 150 կողակները, և ես ամէնակարճ ժամանակում կարգ ու կանոնը կը վերականգնեմ Զանգեզուր-Ղարաբաղում: Կառավարութիւնը եթէ վճռական միջոցներ ձեռք առնէր, անմիջապէս կը գաղարէին ընդհարումները":

Եւ դոկտորի այդ համարձակ ելոյթի մասին տարածւել էր ժամանակին Զանգեզուր-Ղարաբաղում, և բոլորը խօսում, իրենց հիացմունքն էին արտայայտում:

– Լսեցի, որ Երևան ես դնում, ուղեցի ես էլ իմ ապսպրանքն անեմ մեր կառավարութեանը: 120 տարի, է ինչ ռուս պետութեան հպատակ ենք, հիմա անկախ պետութիւն ունենք, բայց պետութիւն կառավարելու համար, տարրական դիտելիքներ ձեռք չենք բերել: Վրացիներն ու թուրքերը աշխատել են թափանցել կառավարութեան նահանգական ու գաւառական բոլոր ասպարէզները, դանազան պաշտօններում տեղաւորւել, իսկ մեր ժողովրդի աչքարաց կոչւած ունևոր մասը զլխովին նետւել է առևտրական և արդիւնաբերական ասպարէզ, խոշոր տեղ գրաւել, միլիոններ դիղելը կէտ նպատակ դարձրել, մինչ ստորին խաւերն էլ մեծ թւով վարժապետներ ու վարդապետներ են տւել: Գիտես, ի հարկէ, ժողովրդի մէջ տարածւած ասացւածքը դպրոցաւարտ կամ չաւարտած մէկի մասին, երբ քահանայ է ձեռնադրւում, կասեն՝ մարդ չդարձաւ, տէրտէր գարձաւ: Եւ, ի հարկէ, մարդ դարձածը հաստատուր վճռառականն է, որ կարողացել է դրամ դիղել: Այսքանը նախաբան, անցննենք բուն հարցին: Կառավարութիւնը Արաքէն Շահմադեանին, չարի կապիտանի աստիճան ունեցող դինւորականի, նահանգական կոմիսարի պաշտօնով ուղարկում է այստեղ, երբ այստեղ կան աւելի բարձր աստիճան ունեցող դինւորականներ՝ դնդապետ Մելիք Հիւսէյնեան, կապիտաններ՝ Սմբատ Թորոսեան, Ռուբէն Նարինեան, որոնք պիտի ենթակայ լինեն

նահանգական կոմիսարին, որ միաժամանակ համարում է Զանգեզուրի մարտական ընդհանուր ուժերի հրամանատար: Որքան գիտեմ, զինուորական իշխանությունը տեղեակ է, թէ Զանգեզուրում ինչ աստիճան ունեցող զինուորականներ ունի, որովհետև իր հրահանգով են նրանք եկել տեղս, ուստի պէտք է Արսէն Շահմազեանի աստիճանը կանխաւ բարձրացնէին և յետոյ ուղարկէին տեղս, որպէսզի անցանկալի թիւրիմացութիւնների տեղիք չտրէր:

Մասնաւորապէս գնդապետ Մելիք-Հիւսէյինեանի և Շահմազեանի միջև տեղի են ունեցած անցանկալի միջադէպեր. վերջին անգամ՝ երեք-չորս օր առաջ: Շահմազեանը, որպէս նահանգապետ և մարտական ուժերի հրամանատար, զրաւոր հրաման է զրում Մելիք-Հիւսէյինեանին, իսկ վերջինս առարկում է, թէ չտաբի կապիտանը իրաւունք չունի հրամայելու գնդապետին, որն աստիճանով իրենից բարձր է": Մեր զիւղացիներն անգամ գիտեն, որ ցածրաստիճան զինուորականը բարձրաստիճան զինուորականին հրամայել չի կարող, իսկ մեր մինիստրները այդ բանը չգիտե՞ն միթէ: Թող այդ մասին կարգադրէին՝ անհրաժեշտը թիւրիմացութիւններից խուսափելու համար":

Բժշկի ասածը առարկութիւն չվերցնող բան է, միանգամայն ճիշտ, ուստի խոստացայ խօսքը տեղ հասցնել:

Օգոստոս 3-ին, մեկ միլիցիօների ուղեկցութեամբ, մեկնեցինք Գօրիսից Իչ-Թափալար, Քարւանսարայի մօտով իջանք Շամբ և այնտեղից երեկոյեան դէմ հասանք Ղարաքիլիսա: Ուղեկցող միլիցիօները միաժամանակ փոստատարի պարտականութիւնն էր կատարում. Սիսիանի զանազան զիւղերի մարդկանց հասցէագրուած նամակները յանձնեց Ղարաքիլիսէի շրջանի կենտրոնական զիւղի պաշտօնեային, ուղարկելու ըստ պատկանելոյն: Մենք գիշերեցինք Ղարաքիլիսէում և օգոստոս 4-ին այնտեղից մեկնեցինք Մխուճուրեան զիւղը, որ Զանգեզուր զաւառի ամէնաբարձր զիւղն է ծովի մակերևոյթից: Մխուճուրեանի բնակիչները Վայոց Ձորի Ղուչչի Բիլաք զիւղից են զաղթել և զիւղը հիմնել Մխուճուրեանի լերան լանջին: Ղարաքիլիսէի կոմիսարը միլիցիօներին ասաց, որ իջևաննենք Խնչոյի մօտ: Առաջին անգամն էր, որ հանդիպեցի Խնչոյին, բարձրահասակ, թիկնեղ, տիպիկ լեռնական զիւղացի: Հետագային, երբ վիճակւեց ինձ բաւական ժամանակ աչխատել Վայոց Ձորում ու կապ պահել Սիսեանի ու Ղափանի հետ, առիթներ ունեցայ կրկին մի քանի անգամ հանդիպելու Խնչոյին, բայց ասկի չատ անգամ լսելու նրա մասին, որպէս քաջ, անչահասէր և աղնիւ մարդու: Եւ այդ կիսագրագէտ մարդը, իւր առողջ դատողութեամբ չատ ասկի լաւ տպաւորութիւն էր թողնում, քաղաքներում բրօշիւրներով զարդացած որոչ ինտելիգենտների համարւածներից:

Օգոստոսի սկզբի օրերն են, սակայն Մնուճուրեանում աշնան առաջին ամպամայ զովն է զգացւում, իսկ գիշերը օդը բաւական ցուրտ է, ուստի գիւղացիք մեծաւ մասամբ ներսն են քնում, դուրսը քնողները լաւագոյնս Թրծւած մարդիկ են, որոնցից մէկն է Խէչօն, որ այդ գիշեր մեր պատճառով ներսը քնեց:

Օգոստոս 6-ին, նախաճաշի և թէյ խմելու արարողութիւնից յետոյ, անկեղծ չնորհակալութիւն յայտնելով Խէչոյին, ճամբայ ելանք Բաղարչայ մալականների գիւղի վրայով դէպի Ղուչչի Բիլաք հայկական գիւղը, որտեղ առաջին անգամ էի լինում: Բաղարչայից հազիւ մի քանի կիլոմետր անցած պատահեցինք երկու ձիաւորների, և մենք ու նրանք կանգ առանք, իրարու սովորական հարցեր տալով իմացանք, թէ ով ինչ է և ուր է գնում: Պարզուեց, որ երկու ձիաւորները Ղուչչի բիլաքցի միլիցիոներներ են, փոստի ծրարները տանում են Ղարաքիլիսէ, կոմիսարին յանձնելու, ուստի առաջարկեցի, որ փոստի կապոցը յանձնեն իմ ուղեկցին, որը նոյն պարտականութիւնն է կատարում ինչ որ իրենք, հէնց այնտեղից նա վերադառնայ, իսկ իրենք ուղեկցեն ինձ մինչև Քէշիշքանդ, Վայոց Ձորի վարչական կենտրոնը: Առաջարկս ուրախութեամբ ընդունեցին, փոստի կապոցը յանձնեցին ինձ ուղեկցող միլիցիոներին և իրենք ընկերացան ինձ, ասելի ճիշտ՝ առան իրենց մէջ, մէկը գնում էր առջևից բաւական տարածութեամբ հետու, իսկ միւսը իմ հետ միասին դրուցելով գնում էինք, հետևելով մեր առաջնորդին: Հասել էինք Զախմախ Թափային բաւական մօտ մի կէտի, իսկ առջևի ձիաւորը արդէն հասել էր Զախմախ Թափային և կանգ առնելով, մի քանի րոպէ անց 3 գնդակ արձակեց: Ես զարձայ ինձ հետ եղող միլիցիոներին ու դժգոհութեամբ ասացի, թէ ինչու է իզուր տեղը փամփուշտներ կրակում: "Պարոն, իզուր տեղը չէ կրակում, երևի վտանգ է սպառնում գիւղին. նչանն է մեր, երեք անգամ կրակելով իմաց տալ գիւղացիներին, պատրաստ լինելու":

Մօտեցանք, հասանք առաջի ձիաւորին, որ կանգնել էր Զախմախ Թափային և սարերն էր դիտում և ցոյց տալով ընկերոջը, ասում՝ "Տես, Իստի Սուն (այժմեան Ջերմուկն է). դէպի աջ սարերի ծայրին մարդիկ են երևում, չարժւում են": Ընկերը տեսաւ և վկայեց նոյնը, ապա զարձաւ ինձ, ասաց. "Պարոն, ինչպէս երևում է, թուրքերն ուղում են վրայ տալ գիւղին, ասելի լաւ է իջնենք ձախ կողմի վրայ, ձորի բերնին դիրք բռնենք. գիւղացիները չուտով կը հասնեն, թուրքերի առաջը կը կտրեն": Ես նայում էի ցոյց տւած ուղղութեամբ սարերին, բայց մարդ չէի տեսնում և ասում էի, թէ մարդ չկայ, ոչինչ չի երևում: "Պարոն, դուք առաջին անգամն է, որ մեր կողմերն էք եկել, վարժ չէք մեր սարերին, այդ պատճառով էլ չէք կարողանում ջոկել մարդը քոլից:

Իջանք ձորը, ձիերի սանձերը պինդ կապեցինք առջևի ոտերից, որ կանգնած տեղում արածեն և հեռու չը գնան, իսկ մենք պառկեցինք ձորի եղրին մօտ, գլուխներս եղրից քիչ բարձրացնելով, աչքներս յառած սարերին, և ես երկար նայելուց յետոյ կարողացայ մարդը ջոկել գոլից: Գիւղի կողմից երեք անգամ հրացանի ձայն լսեց, միլիցիօներն ասացին, որ գիւղացիները հասկացնում են, թէ գալիս են և իրենք սկսեցին նշան բռնել դիրք բռնած թուրքերին, որ բաւական հեռու էին, ըստ միլիցիօներների նշանացոյցի՝ 2000 քայլից աւելի հեռաւորութեան վրայ: Թուրքերն էլ սկսեցին դէպի մեզ կրակել. ես ատրճանակ ունէի, բայց եթէ հրացան էլ ունենայի, հանդիսատեսի դերում պիտի լինէի դարձեալ, որովհետև մարդուած մարտիկ չէի, ինչպէս կասեն՝ իրենց հետ չպիտի կարողանայի ոտ բռնել: Հազիւ երեք քառորդ ժամ էր անցել, առաջ միլիցիոներն ասաց՝ "Շան որդիների ձիաւորները չարժւում են դէպի մեր կողմը, մի մասը դէպի աջ, միւսը՝ ձախ, ինչպէս երևում է, ուղում են մեզ սաղ-սաղ բռնել, մեր գիւղացի ձիաւորներն ուշացան, աւելի լաւ է, մենք ուղղւենք դէպի գիւղ և միանանք մեր փիաղաւորներին[37]": Պարոն Եղիշէ, պիտի նստենք ձիերին ու քշենք, չէ՞ որ կասեն՝ ժամանակ կայ, որ փախչելն էլ քաջութիւն է. չան որդիները մի խումբ են, մենք երեքով (ինձ էլ հաչւում են) ոչինչ չենք կարող անել, միայն թէ իմանանք, ձեր ձին ինչպիսին է, կարո՞ղ է արագ ճամբայ կտրել": Իմ ձին Ղարաբաղի ձի է, իմ բարեկամինն է, և գիտեմ, որ լաւ ցեղից է. ձեր ձիերը ինչպիսի՞ն են": "Լաւ են, փորձած ձիեր են, միամիտ եղէք": Դէ որ էդպէս է, մէկդ առջևից թող քշէ ձին, ասացի, և ես կը հետևեմ նրան, որովհետև ճամբայ չգիտեմ":

Այդպէս էլ եղաւ, կրտսեր միլիցիօները առջևից քշեց, ես էլ հետևեցի նրան: Ձիերը սլանում էին, հասանք մի խանդակի, սևլաւից առաջացած, որի վրայից պիտի թռնէին ձիերը, դժբախտաբար միլիցիօների ձին չկարողացաւ թռնել, ընկաւ փոսի մէջ, իսկ այդ վայրկեանին ես հասայ, ձիուս սանձը քաշեցի, կանգ չառաւ, թռաւ խանդակի մէջ ընկած ձիու վրայից, հէնց առաջին ոտները գետին դնելիս, յանկարծ բարձրանում է խանդակի ձին, որի գլուխը կպչում է իմ ձիուս ետևի ոտքերին, որի հետևանքով ձիս, հաւասարակշռութիւնը կորցնելով, ընկնում է, և ես էլ վրայից չպրտւում եմ մի կողմ, ինչպէս միլիցիօներն էր չպրտել: Երկուսս էլ կոտրւածք չունեցանք, բայց երեսիս կպել էր գետնին և չանդուռել: Նորից հեծանք ձիերին, աւազ միլիցիօները ասաց, որ ոչ սրարչաւ, բայց արագ քշենք, չուտ հասնենք գիւղացիներին. ես ասացի, որ չատ ենք հեռացել թուրքերից, նրանք այսքան հեռաւորութեան վրայ մարդ խփել չեն կարող, լաւ նշան խփողներ չեն, հայ-թրքական ընդհարումներին պարզուց այդ: Եւ ես, իմ ամբարտաւանութեան ու

[37] Հետևակ, հետիոտն, (Պարս.): (Խմբ.)

թչնամուն թերագնահատելու հետևանքով, պատժվեցի . յանկարծ ինչ-որ հարած զգացի աջ ոտքիս, բայց ուշադրութիւն չդարձրի, կարծելով, թէ ձիերից մէկի ոտքի չպրտած քար է դիպել, սակայն ձեռքս, որով յենուած էի աղղրիս, բարձրացրի, որ զրպանիցս ծխախոտ հանեմ ծխելու, ձեռքիս վրայ արիւն նկատեցի և նոր միայն տեսայ, որ գնդակ է դիպել աղղրիս, ոտս չարժեցի, զգացի, որ աղղրոսկրին չի դիպել, և յայտնեցի միլիցիոներներին: Շատ չանցած, գիւղացիները չարք բռնած, մեր դիմաց ելան. աւագ միլիցիոները դարձաւ մէկին, թէ՝ "Մարտիրոս, պարոնը կառավարութեան գործով գնում է Երևան: Ճամբին, քիչ առաջ վիրաւորել է ոտից. հասցրու գիւղ և արի:" Մէկ ուրիշը առաջ անցաւ, ասաց, որ կը տանի և չուտ կը վերադառնայ: Ճամբին առաջնորդս ասաց. "Պարոն, եղբայրս նկել, իմ ձին նստել, գնացել է Հերհեր գիւղը, դեռ չի վերադարձել, ես ձեղ հասցնեմ գիւղը, նստեմ ձեր ձին ու հասնեմ մեր ձիաւորներին. միամիտ եղէք, եթէ ես սպանեմ, ձեր ձին մեր գիւղացիները յետ կը բերեն ձեղ": Ինչ խօսք, համաձայնեցի, և մի՞թէ կարելի է նման մոմենտի մերժել կռւի մղող մարդուն. յետոյ իմացայ, որ գիւղի քաջ կռւողներից մէկն է:

ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

Վայոց Ձորի բնակիչների (Հայերի) մեծամասնութիւնը բնիկ Վայոց ձորեցիներ են, իսկ միւս մասը, համեմատաբար փոքրամասնութիւնը, Սալմաստից գաղթածներ են, 1829/30 թ.[38] Ռուս պարսկական պատերազմից[39] յետոյ և այդ պատճառով բնիկները կոչւում են հին հայեր, իսկ Սալմաստից գաղթածները՝ թազայ (նոր) հայեր: Սալմաստեցիները, մանաւանդ տարեցները, թէև սովորել են Վայոց Ձորի բարբառը, սակայն չեն մոռացել, պահպանել են Սալմաստի բարբառը: Ղուչչի բիլակցիները բնիկներից են: Գիւղը գտնւում է Արփաչայ գետի երկու ճիւղերի միջև եղած տարածութեան վրայ, որը թերակղզու է նմանւում: 15-20 տուն էլ գտնւում է գետի ձախ ափին:

Մարտիկը ինձ իջեցնում է գիւղի ձախ ափի տներից մէկում, ապա նստելով իմ ձին, սրարշաւ ուղղւում է դէպի ճակատ: Հրացանաձգութեան, մանաւանդ համազարկների ձայնը չատ լաւ լսելի էր: Կէս օրւայ մօտ էր, որ կռիւը սկսւեց, և գիւղացիները յարձակման անցան: Կռիւը հաղիւ երկու ժամ տևեց, թուրքերը չը կարողացան պահել իրենց դիրքերը, բռնեցին նահանջի ճանապարհը և յետոյ սարդապէս վախուստի դիմեցին:

---

[38] Ռուս-Պարսկական պատերազմը տեղի է ունեցել 1826-28 թթ., իսկ յաջորդ տարիներին բնակչության ներգաղթն է եղել: (Խմբ.)

[39] Ռուս-Պարսկական պատերազմը տեղի է ունեցել 1826-28 թթ. և Ռուս-Թուրքականը 1828-29 թթ. -ին: (Խմբ.)

ՋՈՐԱՎԱՐ ՇԵԼԿՈՎՆԻԿԵԱՆ

Ոտքս ուռել էր, տանտէրը ասաց, որ գիւղի վիրաբոյժը իրենց տեղական միջոցներով կը բժշկի. կէս ժամ անց եկաւ վիրաբոյժը, տեսաւ և վստահեցրեց, որ անպայման կը բժշկէ: Մի փոքրիկ ուլ մորթեց և մորթին տաք-տաք անց կացրաւ ոտիս, կապեց: Եկաւ մօտս տեղակալ Մովսէս Մովսիսեանը, Գէորգեան ճեմարանի միջնակարգի ընթացաւարտ, Մալիչկա գիւղացի, որը պատմեց կռւի մասին, որ թուրքերին հետապնդել են մօտ 7-8 վերստ, սակայն թէ իր և թէ գիւղի փորձառ մարտիկների կարծիքով, թուրքերը չէին եկել կռւի բռնելու, այլ հետախուզելու և չօչափելու մեր ուժերը, որ յետոյ պատրաստած յարձակում գործեն: Գիւղի մարտիկների ընդհանուր թիւը 110 հոգի է. նոյնքան, թերևս մի քիչ աւելի, Գնդևազ գիւղի մարտիկներն են, որոնք օգնութեան գալ չեն կարող, որովհետև թուրքերը կարող են միաժամանակ Գնդևազի վրայ էլ յարձակվել, ուստի որոշեցի նամակ գրել գեներալ Շելկովնիկեանին, որ գէթ մի վաշտ զօրք ուղարկի այստեղ: "Բայց լաւ կը լինի, ասաց Մովսէսը, որ դուք էլ մի նամակ գրէք Շահմազեանին, որ կարզադրէ որոշ թւով զինուորներ կենտրոնացնել մեր սահմանին մօտ, և ականջը ձէնի պահէ, եթէ թուրքերը յարձակվելու լինեն, Զանգեզուրի ուժերը թիկունքից խփեն, ծուղակի մէջ գցելով թուրքերին: Վատ չի լինի, եթէ դուք էլ գեներալին ձեր կողմից գրէք":

Ես մի նամակ գրեցի Արսէնին ու յայտնեցի նաև, որ ճամբին վիրաւորվել եմ աղդրից և չպիտի կարողանամ չուտ չարունակել ճանապարհս, ուստի լաւագոյնն է, որ իմ փոխարէն մէկ ուրիշ ընկեր գնայ Երևան նոյն յանձնառութեամբ և երկրորդ, հաւանական է, որ թուրքերը յարձակում գործեն մեծ ուժերով Ղուչչի Բիլակի վրայ, ուստի անհրաժեշտ է, որ Սիսիանի ուժերը պատրաստ լինեն թիկունքից խփելու: Անհրաժեշտ համարեցի մի նամակ էլ գրել Սիսիանի ուժերի հրամանատար տեղակալ Պօղոս Տէր Դաւթեանին: Նամակները սուրհանդակների միջոցով ուղարկում են ըստ պատկանելոյն: Սիսիան գնացող սուրհանդակը պիտի նամակները յանձնէր Ղարաքիլիսայի կոմիսարին ու վերադառնար: Մէկ նամակ էլ, թէև անծանօթ, գրեցի գեներալ Շելկովնիկեանին:

Մովսէս Մովսիսեանի և գիւղացիների ներքաղրութիւնը հիւր էր, օգոստոս 11-ին, առաւօտեան ժամի 5-ին թուրքերը մեծ ուժով, մօտ 2000 հոգով, մի մասը ձիաւոր, 3 գնդացիրով յարձակում են Ղուչչի Բիլակի վրայ: Գիւղացիները բռնում են գիւղի առջև, երկու-երեք հարիւր քայլ հեռաւորութեան վրայ փորուած մարդաբոյ խրամատը, որի մէկ մասը գետի աջ ափին է, իսկ միւս մասը ձախ ափին:

Թուրքերը փորձ արին մօտենալ գիւղին, բայց գիւղացիները, որպէս լաւ հրացանաձիգներ, զրեթէ բոլորը զինուորական ծառայութիւնից անցած մարդիկ, չնչտակի համազարկով բաւական զոհեր խլելով, յետ մղեցին նրանց: Թուրքերի գնդացիրները անդադար գործում էին, իսկ մերոնք, իրենց ունեցած ռմբաձիգից մէկ-մէկ ռումբեր էին նետում: Ռմբաձիգը միայն տպաւորութիւն էր թողնում, որովհետև ռումբը չատ հեռուն չէր հասնում, ուստի զոհեր չէր պատճառում թշնամուն: Մեր մարտիկները միանգամայն պաղարիւն էին և անտեղի փամփուչտ չէին կրակում ու, պիտի խոստովանել, որ սպայ Մովսէս Մովսիսեանն էլ իր կոչման բարձրութեան վրայ էր, լաւ ղեկավարում էր մարտիկներին, դիրքից-դիրք անցնելով: Կէսօր էր արդէն, բարձրացել էր արևը և իր ղէնիթին հասել ու խանգարում էր թշնամուն, որովհետև արևի լոյսը ընկնում էր թուրքերի աչքերին, իսկ, ընդհակառակը, մեզ համար լաւ էր, որովհետև մարտիկների հայեացքը ուղղուած էր մեծաւ մասամբ դէպի հիւսիս. արևը խփում էր մերոնց կռնակին: Խրամատը չատ մօտ էր իմ իջևանած տանը, որոշեցի թէկուզ կաղալով, մտնել խրամատ, մանաւանդ որ կարճահասակ լինելով, ապահով էր ինձ համար. մտածում էի, որ երկու խօսք ասելով շերեփ աւելի ոգևորած կը լինեմ մարտիկներին: Երբ մտայ խրամատը, հաղիւ տաս քայլ արած, տեսայ խրամատում նստած ծերունիների, որոնք ծխում և ղրուցում էին: Երբ ինձ տեսան, զրեթէ միաբերան ասացին՝ "Պարոն եղիչէ, իղուր էք եկել, քայլելուց ձեր ոտքը կուռի". ականջ չկախեցի, բաւական տեղ գնացի, խօսեցի մարտիկների հետ և խոստացայ թշնամուն յետ մղելուց յետոյ, մատաղ անել իրենց համար: Տղաներից մէկը վրայ բերեց, ասելով, որ իրենք գիտեն, թէ գիւղացիներից որը լաւ ոչխարներ ունի մատաղացու:

Ամբողջ ժամանակ մերոնք ինքնապաշտպանական կռիւ էին մղում 110 հոգով և բոլորը սպասում էին, թէ որտեղից որ է, չուտով Գեներալ Շելկովնիկեանի ուղարկած զօրամասը կը հասնի, և հակայարձակման կանցնեն ու թշնամուն կը հալածեն մեր սահմաններից: Բոլոր գիւղացիները, մանուկներից սկսած մինչև ծերերը, տղամարդիկ, թէ կանայք, իրենց հայեացքը ուղղել էին Քեչիչքննդի կողմը, սպասելով, թէ սարի յետևից երբ կերևայ զօրամասը: Սակայն իղուր, չնայած որ վեց օր առաջ էի նամակները զրկել գեներալ Շելկովնիկեանին: Գիւղացիները սկսել էին իրենց դառնութիւնը արտայայտել, քննադատելով ու դատապարտելով գեներալին:

Մերունիների դիտողութիւնը ճիշտ էր, երբ վերադարձայ խրամատից տուն,իսկապէս ոտս սկսեց ուռել և երկու-երեք ժամ յետոյ արդէն խիստ նկատելի էր ուռուցքը: Բացի այդ, վէրքն էլ սկսել էր ցաւել:

Արևը մայր էր մտել, որ Քէչիչքեանդի կողմից, սարի ետևին ձիաւորները երևացին, գիւղացիները կարծեցին, թէ Շելկովնիկեանի ուղարկած զօրամասն է, ուրախութեան աղաղակներ թնդացրին օդը, բուռն ոգևորութիւն առաջացաւ խրամատներում, և սպասեցին զօրամասի հասնելուն, որ ուռա գոչելով հակայարձակման անցնեն, սակայն չատ չանցած, երբ ձիաւորները հասան գիւղ, պարզուեց, որ Վայոց Ձորի հետախուզական խումբն է, սպայ կապիտան Խորէն Տէր Աւագեանի ղեկաւորութեամբ, օգնականը՝ Հին մարտիկ Արչակ Սարգսեան, Մայիչկա գիւղացի: Այդուամենայնիւ, խումբը թէև փոքր, 28 հոգանոց, մեծապէս ոգևորեց մարտիկներին:

Գիշերը վրայ հասաւ, արդէն բաւական մութ էր, արեգակը բաւական ժամանակ, էր որ մայր էր մտել: Տանտիրոջ եղբայրը, Լիպարիտը, որ գիւղի մարտիկներից մէկն էր, եկաւ ներս և առաջարկեց, որ հեծնեմ ձիս և իջնեմ ձորը, ապա բարձրանամ աջ ափին գտնուող իսկական գիւղը, որովհետև կարող են թուրքերը դուռ անել ձախ ափին գտնուող 15–20 տան վրայ, և ստիպուած լինեն իրենք էլ անցնել գիւղը: Հետևեցի տուած խորհրդին, հեծայ ձին, և այդ մոմենտին հարևանուհիներից մէկը երեք տարեկան երեխային տուաւ ինձ, խնդրելով, որ տանեմ գիւղը, իսկ ինքը միւս փոքրերին կը բերի: Հարկաւ, մերժել չէի կարող, և ինչպէս կարելի էր մերժել, երեխան ծանօթ էր, և արդէն քանիցս առիթ էի ունեցել զուրզուրալու իրեն, այնպէս որ խելօք նստեց առջևս, ձիու սանձը թոյլ թողնելով, որպէսզի նա ճամբան բռնէ, կամաց-կամաց իջանք: Թուրքերը սկսել էին ուժեղ կերպով համազարկերով և գնդացիրներով օդը թնդացնել, ահաբեկում առաջացնելու նպատակով. սակայն իզուր: Գնդակները մեր գլխի վրայից ու կողքից սուլելով անցնում էին և, բարեբախտաբար, ոչ ձիուն և ոչ էլ մեղ դիպան. իջանք ձորը, որտեղից պատանիներից մէկը ձիու սանձը բռնելով ուղեկցեց գիւղ, որտեղ գիւղացիներից մէկը ընդունեց իր մօտ:

Գիշերւայ կէսից անց էր, պատանիներից մէկը լուր բերաւ, թէ ձորով, գետի հոսանքն ի վար, թուրքերն ուղել են մտնել գիւղը, գիշերւայ մութից օգտուելով, երբ հասել են այնտեղ, որտեղ խրամատների ծայրերը հասնում են իրար, նրանց նկատում են մեր մարտիկները և խաչաձև կրակի տակ առնում, ապա խրամատներից մի խումբ իջնելով ձորը, գետի հոսանքն ի վեր կրակելով գնում են առաջ: Ձորի մէջ ութ-տասը թուրքեր, մէկը ձիաւոր, ընկնում են ապանած կամ վիրաւոր. տղաները սրախողխող անելով գնում են բաւական տեղ առաջ:

Գիշերւայ մութից օգտուելով, մերոնց 15–20 հոգուց բաղկացած մի խումբ Թևթևակի թիկնանց է կատարում և յանկարծ

օղը թնդացնում աղաղակներով ու համաղարկ տալիս, չփոթությունն առաջացնում թչնամու շարքերում. ձորից յետ չալրաւածներն էլ մի կողմից են աղղում, տրամադրութեան բնկում առաջացնում, ապա սկսում է նահանջ, և դա նկատելի է դառնում գնդացիրների ճարճատիւնից, որ բաւական հեռու տեղից էր լսւում, առաջւայ համեմատութեամբ: Այդ ժամանակ, ահա, մերոնք դուրս գալով խրամատներից և կանոնաւոր, զինուորական կարգապահութեամբ և հրամանատարի հրահանգով համաղարկ տալով, բաւական հեռու տեղ գնալուց յետոյ վերադառնում են, երբ արդէն ծագում էր արևը:

Լոյսը բացւելու պէս թէ հետախոյզները և թէ գիւղացի ձիաւորները միանալով Մովսէս Մովսէսեանին, միասին գնում են հետախուզութեան, երկու ժամ անց վերադառնում, որովհետև հեռադիտակով կարողացել էին ճչտել, որ թչնամին նահանջել է, չատ հեռու է, պէտք չկայ աւելի խորը գնալու: Իստի Սու աւերակ թրքական գիւղի մօտ տեսնւում է երկար թարմ հողաթումբ. դա սպանւածների գերեզմանն էր. Թուրքերը զիշերը չտապ կարողացել էին թաղել սպանւածներին նահանջելու ժամանակ: Մովսէսը և Խորէնը պատմում էին, թէ նրանք, գետնի երեսին պարզ նկատելի, զիակները քարչ տալով էին տարել:

Երբ արևը քիչ բարձրացաւ, ես վերադարձայ իմ իջևանած տունը և Լիպարիտի միջոցով կանչեցի գիւղի կոմիսարին, որ մի լաւ մեծ ղոչ գնէ իմ հաշւին, և մատաղ անեն. գիւղացիներից երկու հոգի էլ մեկական ոչխար են նւիրել, նոյնպէս մատաղ անելու: Ոչխարները մորթւում են, քահանան իւր պարտականութիւնն է կատարում, օրհնում, կանայք թևերը վեր քշտած իրենց ղերն են ստանձնում, մատաղը եփում: Գիւղացիներից ոմանք գինի և ոմանք օղի նւիրեցին. տղաները նախապէս տրամադրւել էին ուրախ անցկացնելու ժամանակը, մանաւանդ որ կուռղներից միայն մի քանի հոգի և գիւղում գտնւածներից մեկ թէ երկու հոգի թեթև վէրքեր էին ստացել. սակայն չյաջողւեց այդ, որովհետև պատահական զնդակից սպանւել էր գիւղի ամենաքաջ մարտիկներից մեկը՝ Թէմուրը: Մատաղի արարողութիւնը կատարւում է եկեղեցու բակում, ես չկարողացայ ներկայ գտնւել, ոտքիս ուռուցքի պատճառով:

Օգոստոս 12-ին Երևանից գալիս են մի խումբ զանգեզուրցիներ, Ագարակ գիւղացի Բախչի Սարգսեանի գլխաւորութեամբ, իրենց գիւղերը գնալու համար: Բախչին Բազի նաւթահանքերում ծառայող մեր ընկերներից է, լսում է գիւղացիներից իմ մասին և գալիս է մօտս: Բախչին մօտը եօդ և վիրակապ ունէր, առաջին անգամ եօդոռ բամբակ գնելով վէրքի երկու ծակերին, կապում է վիրակապով: Այդքանը բաւական էր մինչև Ֆէշիչքենդ, որտեղ, ինչպէս ասացին գիւղացիները, թէ հիւանդանոց կայ և թէ լաւ բժիշկ, ուստի խորին չնորհակալութիւն

յայտնեցի Բախչուն, որը մէկ-երկու ժամ հանգստանալուց յետոյ, ընկերներով որոշեցին չարունակել ճամբան մինչև Բազարչայ:

Բախչին և ընկերները մեկնելուց երկու ժամ անց գալիս է տեղակալ Պօղոս Տէր Դաւթեանը՝ Սիսիանի հերոս հրամանատարը, մի տասնեակ ձիաւորներով: Պօղոսը ահս է քաչում և անիծում չար բախտը, որ միանգամայն երես է դարձրել մեղնից: "Այո, չար բախտի պատճառով էր, յարմար առիթ էր լաւ ջարդ տալու թուրքերին, որ խելքը մնան, չեղաւ: Շրջազայութեան մէջ լինելով, սուրհանդակը ուշ էր հասել ինձ, ի հարկէ, սուրհանդակը մեղք չունի, եթէ շրջազայութեան մէջ չլինէի, սուրհանդակը իր պարտականութիւնը չուտ կատարելով, կը վերադառնար: Եւ միայն վերջին ժամին, չտապ կերպով մօտ գտնուող գիւղերից՝ Բունակոթից, Ուղից, Ղարաքիլիսէից, Շաղաթից հարայ տալով մարդիկ հաւաքեցինք, Անդեղակոթի մարտիկների հետ ուղղուեցինք դէպի Զախմախմաւա, սակայն հասնելով այնտեղ, գիւղացիներից մէկից տեղեկացանք, որ կռիւը վերջացել է, ուստի տղաներին վերադարձրի, ինքս եկայ: Այո, չարմար առիթը փախաւ: Եթէ պահանջած մոմէնտին պատրաստ գտնուէինք, փառաւոր գործ կը կատարէինք, ափսոս, չատ ափսոս":

Պօղոսից յետոյ եկաւ Յակոբ Տէրունին, իմ փոխարէն Երևան գնալու համար: Յակոբը Զախմախ Թափայից վերադարձողներից լսել էր տեղի ունեցած կռի մասին, որին չէին հասել, ուստի նա նորոգեց զրոյցը՝ պատհ առիթը ձեռքից փախցրած լինելու մասին: Ասացի, որ աւելորդ է հիմա ախ անելը, անցած բան է, այլևս ոչինչ չենք կարող անել, աշխատենք, որ առաջիկային նման պատհ առիթներ ձեռքից չտանք:

Օգոստոս 12-ին Պօղոսը իր տղաներով վերադարձաւ Սիսիան, իր հետ տանելով Տէրունուն ուղեկցած միլիցիոներներին: Պօղոսը մեկնելիս, Քէչիչքենդի կողմից, սարի վրայ երևացին Շելկովնիկեանի ուղարկած վաչտի ղինուորները: Թրքական առածն ասում է՝ "Թոյդան սոնրա նաղարա" (Հարսանիքից յետոյ նաղարայ), ճիշտ այդպէս: Քէչիչքենդից եկած վաչտին տեղաւորեցին գիւղում, ղինուորներին բաժանելով տների վրայ. ուրիշ կերպ հնարաւոր չէր: Եկած ղինուորներից մի քանիսի և գիւղացիների միջև թիւրիմացութիւններ տեղի ունեցան, բայց Մովսէսի և վաչտի հետ եկած սպայի չնորհիւ արագօրէն կարելի եղաւ վերացնել թիւրիմացութիւնը:

Օգոստոս 13-ին Խորէն Տէր Աւագեանն ու Աբչակ Սարգսեանը իրենց ղինուորներից երեք հոգու, Յակոբին ու ինձ առան՝ միասին մեկնելու Քոթանլու աւերակ թրքական գիւղը, որը հետախուզական խմբի կենտրոնատեղին էր: Խմբի մեծ մասը

Թողնենց Ղուչչի Բիլաքում, մի քանի օր մնալու, և երբ միանգամայն կը պարզուի, որ Թուրքերը կրկին յարձակում գործելու նշանները ցոյց չեն տալիս, վերադառնան Քոթանելու:

Այս կռւում զաւեչտական բաներ էլ էին տեղի ունեցել: Գիչերը, երբ Թուրքերը ձորով գետն ի վար հոսանքով առաջ են չարժւում, նկատւում են մեր մարտիկների կողմից և խաչաձև կրակի տակ առնւելով փախչում: Ապա մեր մարտիկները իջնելով ձորը, հետապնդում են թշնամուն. վիրաւորներին ու մեռածներին անխտիր սրով հարւածներ են հասցնում: Եւ երբ ուզում են դիակները թաղել, արդէն լոյս էր, չատ են փոչմանում, որ ոտի հարւածներ են տեղացել դիակներին, որոնց վրայի հագուստները բոլորովին նոր էին. "Ավ, ինչպէս սխալւեցինք, ասում էին գիւղացիները, հագուստները կը հանէինք ու մենք կը հագնէինք. ափսոս, ափսոս":

– Ախր ինչ իմանաս էն ժամին, ասում է մարտիկներից մէկը, բոլորս տաքացած, պատրաստ էինք պատառ-պատառ անելու մեր ձեռքն ընկածին, և այդպէս էլ եղաւ":

Արևը բաւական բարձրացել էր, երբ Ղուչչի Բիլակից մեկնեցինք և կամաց- կամաց չարժւեցինք գէպի Քոթանելու: Արագ չգնալու պատճառը ոտքիս վէրքը և ուռուցքն էր, որպէսզի աւելի չուռէր ոտքս և վէրքը չբացւէր: Գիչերը մնացինք Քոթանելու, Խորէնը երկու օրով ուղեց հանդիպել տուն, գնա իրենց գիւղը՝ Բաչքենդ: Թէև Յակորը գիտէր Քէչիչքենդ տանող ճամբան,եղել էր այդ կողմերում, բայց Արշակն էլ միացաւ մեզ, և երեքով մեկնեցինք:

Երբ աւելի ծանօթացանք, իմացանք, որ Խորէնը Խանասորայ արշաւանքին մասնակցած երկու քահանաներից մէկի, Տէր Գրիգորի տղան էր, իսկ Արշակը՝ հայ թաթարական ընդհարումների տարին Հաջի Կոտոյի և Առիւծ Աւագի գլխակիցը: Արշակը հետաքրքրւում էր պատմում երկուսի քաջութեանց ու այլ բարեմասնութիւնների մասին և երկուսը պաչտելի անուններ էին դարձած իրա համար: "Դարալագեաղը (Վայոց ձորը) երբէք չի մոռանայ նրանց, որոնք իրենց կատարած սխրագործութիւններով պիտի յիչւեն միչտ", ասում էր Արշակը:

ԱՐՍԷՆ ՇԱՀՄԱԶԵԱՆ

Ճամբին Յակորին հարցրի, թէ Երևան, կառավարական չրջանի մարդկանց հետ ծանօթութիւն ունի՞, թէ՞ ոչ: Պատմեց, որ Բագուից ծանօթ է Ա. Գիւլխանդանեանի հետ և առիթ ունեցել է ծանօթանալու Ռուբէնի և Դրոյի հետ: Յակորն էլ նոյն գիտողութիւնն արաւ, ինչ իմ. Պարոնեանն էր արել, որ

կառավարությունը երբ որոշել էր Արսէն Շահմազեանին ուղարկել Զանգեզուր, պէտք է զինուորական աստիճանը բարձրացնէր և յետոյ ուղարկէր, որպէսզի Թիւրիմացութեան տեղի չտրուէր:

– Արդէն մի քանի անգամ անհամ փոխանակութիւն է տեղի ունեցել զնդապետ Մելիք Հիւսէյինեանի և Շահմազեանի միջև: Մելիք Հիւսէյինեանը Արևմտեան ճակատում է եղել և չքանչանի արժանացած է. պարզ է, իբրև աստիճանով բարձր Շահմազեանից, վերջինիս կողմից տրուած հրամանը իրեն վիրաւորական է համարում: Ճիշտն ասած, Գորիսի և մօտակայ գիւղերի գիտակից մարդկանց մէջ էլ լաւագ ու զրոյցի նիւթ է եղել այդ հարցը, և յարգանք ունենալով Հանդերձ Շահմազեանի հանդէպ, գտնում էին, որ անյարմար էր նրա կողմից Մելիք Հիւսէյինեանին հրամայելը, թէկուզ վերջինս իրենից ոչինչ էլ չներկացնէր:

– Ճիշտ է, որ զինուորական կարգ ու կանոնի տեսակէտով անյարմար է կապիտանին հրամանատար կարգել զնդապետի դլխին, բայց, ի վերջոյ, դա ուրիչ խնդիրների համեմատութեամբ, չատ փոքր խնդիր է: Կառավարութիւնը, պիտի ասել, որ լուրջ, մտածուած ու ծրագրուած վերաբերմունք չունի Զանգեզուր-Ղարաբաղի, մանաւանդ Ղարաբաղի վերաբերեալ: Եթէ Արամը վաղաժամ մեռած չլինէր, վստահ եղիր, այլ վերաբերմունք կը լինէր: Դժբախտաբար մեր զինուորականների իննսուն տոկոսը, ռուսական պետական դպրոցներում սովորած լինելով, ոչ մեր պատմութեանն է ծանօթ և ոչ էլ Հայաստանի աշխարհագրութեանը, ասացի: Պարծենալով, կասեն՝ Я кадровый офицер (ես մնայուն զօրքի սպայ եմ), զանազանելու համար պահեստի սպաներից, կարծես ամէն բան գիտեն և ուսանելու ոչինչ չունեն: Ճիշտն ասած, մեր կուսակցական աւագ թէ կրտսեր գործիչները, թէև քաջ ծանօթ մեր պատմութեանը, բայց մեր աշխարհագրութիւնը լաւ չգիտեն: Մեր դնկավարներից ոչ մէկը Նիկոլ Աղբալեանի պէս չի ուսումնասիրել մեր աշխարհագրութիւնը: Երեք անգամ մեր խորհրդաժողովներում, պայծառատեսութեամբ իր խօսքն է ասել, երկու անգամ 1917 թ. ամռանը տեղի ունեցած և վերջին անգամ՝ նոյն թուականի դեկտեմբեր 6-9-ը: Վերջինին ներկայ էի "Ապառաժի" կողմից, և մարդը պարզ ասաց. "Երրորդ անգամն է, որ ասում եմ, թէ պէտք է մենք ամէն ճիգ ու ջանք գործ դնենք, ռազմամթերք ու պարէն կենտրոնացնենք Փոքր Կովկասեան լեռնաչղթայի վրայ, սկսած Ջալալօղլուց, Լոռուց մինչև Ղարաբաղը եղերող թրքական սահմանը: Փոքր Կովկասեան լեռնաչղթան պիտի լինի մեր ամուր յենարանը տաճկական վտանգ լինելուց": Պարզապէս, Ղարաբաղը անօդնական վիճակում է մնացած:

– Շիրինը, Նիկ. Յովսէփեանը, ես և ուրիշները, ովքեր եղել ենք Երևանում, ընկերների հետ Ղարաբաղի մասին զրուցելիս յաւմ

էինք, թէ չուտով պիտի ստանանք մեր վիլայէթները[40], որոնք հիմա ամայի են, և պիտի դուրսը, օտար երկրներում ցրուած հայերին հաւաքենք, բերենք այնտեղ: Բացի այդ, որովհետև դրսի հայութեամբ հնարաւոր չի լինի բռնել ամբողջ տարածութիւնը, ահագին տեղ բաց կը մնայ, ուստի պէտք է Անդրկովկասից էլ մարդիկ գաղթեցնել, տանել այնտեղ և բռնել բաց մնացող տարածութիւնները: Պիտի գաղթեցնել հէնց Ղարաբաղի հայութիւնը և բնակեցնել Ալաշկերտի հովտում ու Մշոյ դաշտում, որտեղ հողը շատ բերրի է, Ղարաբաղի պէս քարքարոտ չէ: Ես և Նիկ. Յովսէփեանը դանադան ընկերներից ենք լսել այս մասին, սակայն Շիրինը Ռուբէնի հետ տեսակցութեանց ընթացքին նրանից է լսել: Ճիշտն ասած, վատ ծրագիր չէ. Զանգեզուրն էլ հողից զուրկ է, նոյնպէս քարքարոտ երկիր է, ժողովուրդը հողի սակաւութիւնից խիստ նեղւում է: Եթէ յաջողվի այդ ծրագիրը, համոզւած կարելի է ասել, որ Սիսիանից ու բուն Զանգեզուրից շատերը կերթան Տաճկահայաստան. լաւ կը լինի:

Յակոբին չընդհատեցի, թէև ներսս եռում էր և սիրտս տրաքում ջղայնութիւնից. լսեցի մինչև վերջ և վերջին երկու բառը լսելով պոռթկացի:

– Այ մարդ, Երևանի ընկերները, Ռուբէնի դլխաւորութեամբ, ծանօթ չեն մեր երկրին՝ Զանգեզուր-Ղարաբաղին, կարճ ասած, Սիւնիքին, և ես չեմ զարմանում, որ նրանք նման արտառոց մտքեր են արտայայտում, իսկ դու սիւնեցի լինելով, իւրացրել ես նրանց տեսակէտը: Նրանց կարելի է ներել, բայց քեզ և այլ սիւնեցիների, որոնք քեզ պէս չլացել են՝ Ղարաբաղի ժողովուրդը Տաճկահայաստան գաղթեցնելու չնաչխարհիկ ծրագրով, բնաւ չի կարելի ներել: Արդեօք Շիրինն ու Նիկալայն էլ քեզ նման են մտածում, թէ՞ ոչ:

– Ճիշտն ասած, այդ խնդրի չուրջ մտքերի փոխանակութիւն չենք ունեցել, չեմ կարող ասել, թէ ինչ կարծիքի են:

– Ես վստահ եմ, որ Շիրինը երբէք համաձայն չի լինի, իսկ Նիկոլայ Յովսէփեա՞նը, որին Մելիքսէթ Եսայեանը "Զանգեզուրի

[40] Մեր վիլայէթները. խօսքը վերաբերում է Արևմտեան Հայաստանի Կարին, Վան, Բիթլիս, Տրապիզոն, Խարբերդ, Տիգրանակերտ վիլայէթներին, որտեղ հայ բնակչութիւնը շարունակում էր մնալ գերակշռող: Հայերը յոյս էին վայելում, որ մեծ պետութիւնների միջամտութեամբ այդ շրջաններում կը վերահաստատվի հայկական պետականութիւնը կամ գոնէ ներքին ինքնավարութիւն կը սահմանվի, սակայն Թուրքիան վարչական այնպիսի վերաբաժանումներ կատարեց, որպէսզի բոլոր տեղերում հայերը բնակչութեան կազմի մէջ 50 տոկոսից քիչ լինեն: (Խմբ.)

Բիսմարկ[41] անունն է տալ. հետաքրքիր է նրան ևս լսել, երբ յայջողլի վերադառնալ Գորիս:

Լռեց Յակորը, լռեցի և ես, սակայն անդօր բարկութիւնամբ բռնւել է համակ էութիւնս: Ռուբէնը Հագարուն սահման էր համարում և միւս կողմը, Ղարաբաղը թողնում Ադրբէջանին. Ղարաբաղի հայութիւնն էլ տանես Ալաչկերտի հովիտը . . . Լռութիւնը խախտեց Արչակը, դառնալով մեզ:

– Ես ձեզ չափ ուսում չեմ առել, մեր գիւղի ծխական դպրոցն եմ աւարտել. երկուսիդ լաւ լսում էի. ինձ շատ է զարմացնում մի բան, որ դեռ չտիրացած Տաճկահայաստանին, այնտեղ, ուր ներկայիս ամայի է, ժողովուրդ բնակեցնելու ծրագիր ենք կազմում: Ժողովրդական իմաստուն առածն ասում է՝ չհասած գետին, փողքերքը վեր չեն քչտի: Ախպէր, երբ այն կողմի հողերը տան մեզ, այն ժամանակ կը մտածենք անելիքի մասին, իսկ հիմիկւայ աւածները նիսիա բաներ են, իսկ Թուրքը թէև անօրէն է, բայց խօսքը օրինաւոր է. Թրքական առածն ասում է՝ "նիսիա դիրմաղ քիսանա" (ապառիկը զրպան չի մտնի):

– Կեցցէ Արչակը, ճիշտ է ասում, վրայ բերեց Յակորը:

– Քանի որ ընդունեցիր, թէ Արչակը ճիշտ ասաց, մխտղ պահիր, չմոռանաս, երբ Երևան կրկին առիթ ունենաս ընկերների հետ զրուցելու Զանգեզուր-Ղարաբաղի մասին, տեղի չտաս, պինդ մնաս քո դիրքում, ասացի Յակորին, որից յետոյ այլևս չխօսեցինք նոյն նիւթի մասին, և Յակորը բացեց աննկղոտների իր քսակը, մէկը միւսից ծիծաղաշարժ պատմութիւններ, որոնցից ոչ մէկը չեմ յիշում:

Հասանք Մալիչկա և ուղեցինք չարունակել ճամբան դէպի Քէչիչքէնդ, մնացել էր եօթ կիլոմետր, և դեռ լոյս էր, սակայն Արչակն արգելք եղաւ ու վիրաւորւածի տոնով դարձաւ մեզ.

– Դուք ուսում առած մարդիկ էք, ներելի է, որ վիրաւորանք հասցնէք ինձ: Մենք նման ուրիշ բաներ նկատի չունենանք, բայց ճամբի ընկերներ ենք, հասել ենք մեր գիւղը, էլ՞ ուղում մտնել մեր տունը, մեր յարկի տակ մի պատառ հաց ուտենք, և յետոյ գնաք, մեր հայկական սովորութեամբ, տան մօտով անցնել ու պատիւ չհամարել ներս մտնելու մեծ վիրաւորանք է:

– Արչակ, վրայ բերեց Յակորը, դու վարդապետի հետ ասացիր, նիվ ծխական դպրոցում ես սովորել, մենք քո

---

[41] Բիսմարկ Otto Ֆոն Շեռնհաուզեն՝ (1815–1898). Գերմանական կայսրութեան առաջին կանցլերը (վարչապետ) 1871–1890, իրականացրեց Գերմանիայի միաւորումը: (Խմբ.)

հալատակներն ենք, ներս էլ կը մտնենք, կուտենք էլ և ձեր Մալիչկայի գինին լաւն է, տեղեակ եմ, կը խմենք, մենք ի՞նչ իրաւունք ունենք քեզ հակառակելու:

Արչակի ղէմքը պայծառացաւ, կանչեց տղային, որ ձիերը տեղաւորի և մօրը օգնի, չուտ սեղան բացելու և Աստծոյ տւածից բաժին հանելու մեղ:

Ներս մտանք տունը, մի յարկանի, երկու սենեակից, ներսում սպիտակ սփռոցով ծածկւած հասարակ քառակուսի սեղան, մէջտեղում, և մի քանի աթոռներ՝ ծածկւած գիւղում գործւած գորգով: Սենեակի պարզ կահաւորութիւնը և մաքրութիւնը հաճելի էր: Արչակը դուրս եկաւ ու չատ չուտ, ուրախ տրամադրութեամբ, ներս մտաւ ու ասաց.

– Ընկերներ, ինչ լաւ է, խորոված ունենք, երևի մերոնք նախազգացել են, րոլ միս են առել կէս օրւայ ճաշին և մեր բաժինն էլ պահել են, կուտենք և մի լաւ կը խմենք:

– Բայց պայմանաւ, որ չղօռես ու չհարբեցնես մեղ, որ կարողանանք հասնել Քէչիչքենդ, ասաց Յակորը:

– Գինու համը որ առաք, առանց ղօռ աներու ինքներդ կուղենաք խմել, ասաց Արչակը:

Շատ չանցած, սեղանը լիառատ պատրաստ էր, նոր թխած լաւաչ, պանիր, կանաչեղէն, թթու դրած վարունգ, բաղուկ, կարճ ասած, գիւղական ճոխ սեղան:

Ներս մտաւ մէկ ծեր մարդ, որի ղէմքից կարելի էր կռահել, որ Արչակի հայրն էր, և որպէս այդպիսին ներկայացրեց Արչակը. ծանօթացանք, ձեռք տւինք: Արչակը բարձրահասակ էր, հայրը միջահասակ, սակայն ղէմքով միանգամայն նման իրարու, մանաւանդ իրենց հայկական չատ մեծ քթով:

– Իրարու չատ նման էք, Արչակ, ասացի:

– Այո, անհերքելի ապացոյց է, որ հօրս իսկական զաւակն եմ, ղէմքով ու մանաւանդ քթով չատ նման ենք:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԳԱԽԱՌԱՊԵՏ ՆՈՐԱՅՐ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ (ՅԱԿՈԲԵԱՆ) ԵՒ ԳԱՍՊԱՐ ԱՖՐԻԿԵԱՆ

Արչակի պատրաստած խորովածն անուչ արինք, մէկ-երկու բաժակ Մալիչկայի իրօք լաւ գինին խմեցինք, ապա, սրտանց չնորհակալութիւն յայտնելով, մեկնեցինք Քէչիչքենդ: Ես գիտէի, որ

Վայոց Ձորի գաւառապետն էր Նորայր Յակոբեանը (Հետագայում, Իրանում դարձած Օհանջանեան), որը դպրոցական տարիների մօտ ընկերներիցս էր, ուստի Յակոբին ասացի, որ ուղիղ գնանք Նորայրի մօտ: Այդպէս էլ արինք: Վերջին անգամ Նորայրի հետ հանդիպել էի 1914 թ. օգոստոսին, Բագւում, Աստրախանից վերադարձիս, աքսորման ժամանակը լրացնելուց յետոյ, երբ սկսւել էր Առաջին Աշխարհամարտը: Նորայրի հետ ողջագուրւելուց յետոյ, ինձ ծանօթացրին բժ. Արա Տէր Առաքելեանի հետ, որը հետագային դարձաւ իմ անբաժան մտերիմ ընկերը: Բժիշկը Մալիշկայի քահանայ Տէր Խաչատուրի որդին էր, հայրը մեռած էր: Եղբայրը՝ Վահանը, կոմիտասի առաջին մեներգիչն էր Գէորգեան Ճեմարանում: Յակոբը նախապէս ծանօթ էր բժշկի հետ:

Պարզւեց, որ Նորայրը, բժիշկը և գաւառի հարկային տեսուչ Գասպար Եգորիչ Աֆրիկեանը միասին են ապրում: Տունը մէկ յարկանի էր, երկու մեծ սենեակից բաղկացած, ունէին խոհանոց և ծառայ, որը միաժամանակ խոհարար էր: Նորայրը կարգադրեց ծառային, որ հարեւանների տնից երկու ձեռք տեղաչոր բերեն: Յակոբը պիտի յաջորդ օրը վաղ առաւօտեան մեկնէր ու մեկնեց:

Բժիշկը նորից վերքս քննեց, ապա մաքրեց, նօղ քսեց և բինտով կապեց ու ասաց. "Լաւ էք պրծել, գնդակը ոսկորին չի դիպել... Այժմ, գէթ տասն օր պիտի հանգիստ մնաք, երբ ուռուցքը բոլորովին անցնի, նոր կը չարունակէք ձեր ճամբան":

– Աւելի չուտ չի՞ կարելի ճամբայ գնալ, հարցրի:

– Ոչ, չի կարելի, ուռուցքը մեծ է, չուտ չի անցնի, ասաց բժիշկը:

– Ի՞նչ ես չտապւում, օտար մարդու տան չես նմա, վրայ բերեց Նորայրը. ընկերոջդ տանն ես, կեր, խմիր, հանգստացիր. մայրիկն այստեղ Այնաղուր գիւղումն է, ուր հիւր են տարել, երկու չաբաթ յետոյ պիտի վերադառնայ Երևան, միասին կերթաք: Որպէսզի ձանձրոյթ չզգաս, մի քանի հատ հայերէն և ռուսերէն գրքեր ունենք, կարող ես կարդալ և, վերջապէս, Կիկիղնակը քեզ կը զբաղեցնի բժշկի և իմ բացակայութեան ժամանակ:

– Կիկիղնակն ո՞վ է, հարցրի զարմացած:

– Ահա մեր հերոսը, ասաց, ցոյց տալով Աֆրիկեանին, Податной инспектор Даралагезского уезда, его высокоблагородие Гаспар Егорыч Африкян, он-же Кикизняк (Կիկիղնակ), честь имею представить вам[42]:

Ինձ պէս ցածրահասակ մէկն էր Գասպար Եգորիչը, համալսարանաւարտ, հարկային տեսուչ Վայոց Ձորի, սակայն ինչու

[42] Գաղտնագրի գաւառի հարկային տեսուչ, նորին բարձր բարեծնութիւն Գասպար Եգորիչ Աֆրիկեան, նոյն ինքը Կիկիղնակ, պատիւ ունեմ ներկայացնելու Ձեզ (ռուս.):(Խմբ.)

Կիկիղնեակ անունը կպցրել էին պոչին, չուտով հասկանալի եղաւ ինձ համար: Ճիշտ է, համալսարանական էր Ափրիկեանը, եթէ յիշողութիւնս չի դաւաճանում, Մոսկայի առևտրական ճեմարանն էր աւարտել, բայց չատ միամիտ մարդ էր և երբեմն պատանեկան, տհաս մտքեր կարտայայտէր ղրոյցի ընթացքին ու ծիծաղելու տեղիք կը տար: Սակայն որտեղից էին փոխ առել և ինչ էր նշանակում Կիկիղնեակ անունը, հարցրի կչտամբելով Նորայրին, որ նման մականուն են տւել խեղճ մարդուն:

-Դա բժշկական տերմին է, և իմաստը բժշկին է յայտնի, նա է Կիկիղնեակ անունով կոչել, ասաց Նորայրը ժպտալով:

- Նորայր, ինչո՞ւ ես բարդացնում խնդիրը, Գասպար Եզորիչը արագ խօսելու ժամանակ, երբեմն, չտապելու հետևանքով, մէկ կամ երկու բառը աւելորդ, կրկնած վանկով է արտասանում, այդպէս էլ տեղի ունեցաւ Кизяк (աթար) բառը արտասանելիս դարձաւ Кикизяк և այդտեղից անունը մնաց Кикизяк __(Կիկիղնեակ), որ բարեփոխւելով եղաւ Կիկիղնեակ, այսպէս բացատրեց բժիշկը:

Գասպար Եզորիչը չէր վիրաւորւում, անտարբեր ժպտում էր: Արդէն գիտէր ղարաբաղցի լինելս և մի օր թէյի ժամանակ պատմեց, թէ ինչպէս Սէլիմի կեռումեռից ղզուչութեամբ իջնում, հասնում են Քարաթումբ գիւղը, որից յետոյ հարթ ճամբայ է մինչև Քէշիշքենդ, բայց, սայլապանի անղգուշութեան հետևանքով, սայլը չրջւում, ընկնում է մէկ ու կէս մետր ճամբից ցած, և ինքն էլ սայլից գլորւում, ջարդւածքներ է ունենում, բժիշկը զարմանում է, և վէրքերը չուտ անցնում են: Եւ յանկարծ դառնալով ինձ, ասաց՝ "ինձ հետ միասին սայլի մէջ նստած էր մի ղարաբաղցի, լաւ մարդ էր, հեքիաթներ կը պատմէր ճամբին, միրուքաւոր էր, սև միրուք ունէր, ճանաչո՞մ էք նրան":

Ես ծիծաղս հազիւ կարողացայ զսպել և ասացի՝ "այ տնաչէն, Ղարաբաղում հազարաւոր միրուքաւոր մարդիկ կան, կարելի՞ է բոլորին ճանաչել":

Նորայրը իսկոյն մէջ ընկաւ, սլաքն ուղղելով դէպի ինձ՝ "Հը, զժգոհում ես, կչտամբում մեզ, որ անունը Կիկիղնեակ ենք դրել. Հիմա ինքդ տեսար, որ չենք սխալւել և ինքն էլ լռելեայն համաձայնւել է, որ Կիկիղնեակ անունը սաղում է իրեն. էլ չը կչտամրես մեզ": Յետոյ դարձաւ Կիկիղնեակին. . "Տունդ չքանդւի, մարդ, ախր բարձրագոյն կրթութիւն ես ստացել, մեծահարուստ Ափրիկովներից ես, չե՞ս ղգում, որ նրևնսայական բաներ ես ասում. նկատի ունեցիր, որ հարկային տեսուչ ես, նման բաներ չխօսես գիւղացիների հետ, թէ չէ քեզ էնպէս ձեռ կառնեն, որ դու առանց յետ նայելու կը թողնես մէկ անգամից և չունչդ Երևան կառնես":

Բժշկի խորհրդով կանգ առայ Քէշիշքենդում, մինչև որ հնարաւոր լինէր ճամբան չարունակելու. ճիշտ է, արդէն Յակորը փոխարինել էր ինձ, չտապելու պէտք չունէի, սակայն, ի վերջոյ պիտի գնայի Երևան, որովհետև Ղարաբաղի հարցը հրահրելու, հետաքրքրութիւն առաջ բերելու անհրաժեշտութիւնը կար մեր դնակալար չրջանում: Նորայրի մօտ ինձ չատ աղատ էի զգում, քանի որ դպրոցից իրարու հետ մօտ ենք եղած:

Նորայրի հայրը, Ներսէս Վարժապետը, նախկին պարսկահպատակ է եղել, փայտակարանցի (ղարաղաղցի), փոքր հասակում բերել է էջմիածին և ուսման տրել Գէորգեան ճեմարան, որի լարաններն աւարտելուց յետոյ ուսուցչական ասպարէզ է մտել և մինչև մահ ուսուցիչ մնացել: Շատ բարեհամբոյր և հաճելի մարդ էր, Երևանի թեմական դպրոցում միաժամանակ աւագ վերակացու էր, և այն ժամանակ, 1904/05 ուս. տարին, դպրոցի տեսուչն էր ղարաբաղցի Գարեգին Վարդապետ Յովսէփեանը, հետագային կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս: Ներսէս վարժապետը արտաքինով էլ ներկայանալի մարդ էր: Բարձրահասակ, կանոնաւոր դիմագծերով, իր լօսեալակերպով և չարժուձևերով լաւ տպաւորութիւն էր թողնում: Աչակերտները յարգանքով կը վերաբերուէին, որովհետև միչտ կաչխատէր անկարգութեան մէջ նկատած աչակերտին իր դաստիարակչական լօսքն ասել համոզիչ տոնով, մեղմօրէն աղդելով դիտակցութեան վրայ: Ներսէս վարժապետը կուսակցական էր, դաչնակցական, և ամուսնացել էր հին դաչնակցական, Խանասորայ արչաւանքին մասնակցած Աւետիս Օհանջաննեանի (Ֆարհատ) քրոջ՝ օր. Վարսենիկի հետ:

Ներսէս վարժապետի ընտանիքը բաղմանդամ էր, երեք տղայ, որոնցից մեկը՝ աւագը՝ Նորայրը, և երեք չեմ սխալւում, երեք էլ աղջիկ ունէր: Երևանի կուսակցական ընտանիքներից մեկն էր:

Շատ չուտով մօտ զդացի նաև բժիշկ Արային, որին իւր քեռին, Բաչքենդ գիւղացի Ահարոն Բունիաթեանը, որ զրադէտ և զաւառի աչքի ընկած գիտակից մարդկանցից մեկն էր, դաչնակցական, իր հետ տարել էր Մոսկուա, որտեղ լինում էր իր առևտրական զործով, տեղաւորում է Լազարեան ճեմարանում, որն աւարտելուց յետոյ ընդունւում է տեղի համալսարանի բժշկական ֆակուլտետը և աւարտում ուսումը 1913 թ.: Երբ սկսւում է Առաջին Աչխարհամարտը, Արան կանչւում է զինուորական ծառայութեան և ուղարկւում Արևմտեան ճակատ, որտեղ մնում է մինչև բոլչևիկեան յեղափոխութիւնը, որի հետևանքով քայքայւում է ճակատը, սկսւում անիչխանութիւն, և ինքը վերադառնում է Մոսկուա, ընտանիքի մօտ. ունէր կին և մի աղջիկ: Կինը ռուս էր, ուսանողական չրջանի ընկերուհի:

Երկար տարիներ բացակայ լինելով գիւղից, մօր և եղբայրների կարօտը զգալով, որոշում է գալ կարօտն առնելու. հաղորդակցութիւնը խիստ քայքայւած ժամանակ լինելով, մեծ դժւարութեամբ հասնում է Երևան այն օրերին, 1918 թ. մայիսին, երբ լաւած վիճակ էր ստեղծւած, մթնոլորտը էլեկտրականացած, հայ-տաճկական յարաբերութեան սրւած ժամանակ: Մայիսեան կռիւներին աչխատում է Ղարաքիլիսէի ճակատում, երբ զինադադար է կնքւում, Արամի կարգադրութեամբ նչանակւում է Քէշիչքենդի հիւանդանոցի բժիչկ, ունենալով երկու հմուտ բուժակներ՝ անզեղակոթցի Յովսէփին, որ Փետրւարեան ապստամբութեանը անձնական հակառակութեան պատճառով զոհ գնաց բռնակոթցի դաչնակցական Կրիմնանց Նիկոլայի գնդակին: Միւս բուժակը՝ Արամայիս Զաքարեան, Այնաղուր գիւղացի էր: Բժիչկը չատ յարգւած ու սիրւած էր, բարևսիրտ կերպով հիւանդների բժչկութեանը հետևելու և հոգատար վերաբերմունք ունենալու չնորհիւ:

Վայոց Ձորի մարտական ուժերի հրամանատարն էր գորիսեցի Յովհաննէս Պարոնեանը, որը նոյնպէս Եապօն մականունն ունէր, ինչպէս իր համաքաղաքացի Համբարձում Սարգսեանը, "Սաքօ-Եապօնը": Երկուսը խստիւ տարբերւում էին միմեանցից, Սաքօ-Եապօնը չատ բարձր էր Յովհաննէսից, որպէս գաղափարական տիպ, իր ծայրայեղ դեմոկրատիզմով, բարոյական մաքրութեամբ, և, անսահման նւիրածութեամբ գործին, միչտ պատրաստ իր անձը զոհելու իր աղգի համար, որպէս մահն արհամարհող քաջ մարտիկ: Մինչդեռ Յովհաննէս Եապօնը, նոյնպէս քաջ մարդ լինելով, բարոյազուրկ և խիստ ընչասէր մէկն էր: Նորայրն ու բժիչկը սարսափելի բաներ էին պատմում Յովհաննէսի մասին, որ իսկական թալանչի է և կնամոլ: Մէկից աւելի ընտանիքներ է պղծել, իր կրքերին յագուրդ տալով: Նա Վայոց Ձորում լոկ հրամանատար չէ, այլ իրրև իսկական աչիրէթապետ բռնակալ, ուստի ամէնքը վախենում են նրանից և ոչ ոք չի յարգում: Բացի այն, որ կռիւների ժամանակ թալանի ընտիր և մեծ բաժինը ինքն է վերցնում, խաղաղ ժամանակ վայ թէ նկատեց, որ մէկի ձին կամ ջորին իրա ձիուց, ջորիից աւելի լաւն է, եթէ չկարողանայ իւրացնել, կը հարկադրի, որ ննջական իր ձին կամ ջորին չատ էժան գնով ծախէ իրեն: Քինախնդրութեան զոհ չդառնալու համար, ձիու կամ ջորու տէրը հարկադրւած է լինում համաձայնւել, որովհետև Եապօնը քէնով լեցւած, իրեն հակառակ եղողներին և նոյնպէս իրեն դուր չեկած մարդկանց հալածում էր: Եւ Վայոց Ձորի ժողովուրդը համբերութեամբ հանդուրժում էր, մանաւանդ որ չրջանի մի չարք անւանի, ուժեղ զեկավար զէմքերը չկային, վախճանւած էին՝ ինչպէս Տէր Գրիգորը, Ահարոն Բունեաթեանը, Սարքաղ Խչէօն, հին հայդուկներից մէկը, որոնք եթէ կենդանի լինէին, Եապօնի նմանը սանձարձակ բաներ չէր անի: Հայ-թրքական ընդհարումներին,

Ղափանի մարտական ուժերի խմբապետ լինելով, մի կնոջ բռնաբարման համար պիտի գնդակահարած լինեը, բայց հրաչքով ազատել էր, երբ կուսակցութիւնը խիստ կարգ ու կանոն ունէր: Այն ժամանակւանից լաւ համբաւ չունէր և այժմ արդէն իւր գլուխգործոց արարքներով միանգամայն վարկաբեկւած էր: Եւ Արայի ու Նորայրի հետ անցուցած օրերին ընաւ չէի ենթադրում, որ մի օր պիտի վիճակւի ինձ աշխատել Վայոց Ձորում և ընդհարւել Եապօնի հետ:

Օգոստոս 17-ին Երևանից եկաւ Սաքօ Եապօնը, որը Յակորից տեղեկացել էր իմ՝ Քէշիշքենդում գտնւելս. ուղիղ գալիս է մօտս: "Սաքօ, քեզ Աստւած է ուղարկել ինձ մօտ, որ ձիս տանես Գօրիս և յանձնես տիրոջը: Ձին երեք օր լաւ կերել, հանգստացել է, քեզ չուտ տեղ կը հասցնի":

– Ես հիմա դարձել եմ աղգային սուրհանդակ, Արսէնը (Շահմադեան) երբ անհրաժեշտ լինի որևէ գրութիւն չուտ հասցնելու Երևան, կառավարութեանը, իմ օձիքից կը բռնի: Երևան գնացի Նալբիջևանի վրայով և նոյն գծով էլ պիտի վերադառնայի, բայց տեղեկացայ, որ այստեղ ես և ձին մէկի միջոցով ուղում ես վերադարձնել, փոխանցի միտքս, որոշեցի այս գծով վերադառնալ Գօրիս, որ աւելի հաճելի ճամբայ է:

Օգոստոս 18-ին Սաքօն մեկնեց Գորիս:

Օգոստոս 27-ին ոտիս ուռուցքը բոլորովին անցել էր, բժիշկը գտաւ, որ կարող եմ ճամբայ գնալ սայլով և ոչ թէ ձիով, վերքի բացւածքը դեռ չէր գոցւել ու սպիացել, թամբը որքան էլ յարմար լինի, այնուամենայնիւ, ձին քայլելիս պիտի ցնցի ինձ, վերքս չփւելով թամբին, պիտի ցաւէր և ոտս էլ ուռէր: Նորայրի մայրը եկաւ Այնազուրից և պատրաստւեցինք 29-ին մեկնել Քէշիշքենդից:

Օգոստոս 29-ին, երբ սայլի վրայ նստած Նորայրի մայրն ու քոյրը և ես հրաժեշտ տալով բժշկին ու Նորայրին (Կիկիղնակը չկար, չորս օր առաջ մեկնել էր Երևան), մի տեսակ թուլութիւն էի ղգում, ուշաղրութիւն չդարձրի, մտածելով որ կանցնի: Բաւական ճամբայ կտրելուց յետոյ զգացի, որ տաքութիւն ունեմ: Արևը մայր էր մտնում, և սայլապանն ասաց, որ պէտք է չուտով հասնենք Ղարանլուխ և պէտք է գիշերը մնանք այնտեղ, որպէսզի առաւօտեան չատ վաղ ճամբայ ընկնենք, որ կարողանանք արևը մայր մտնելուն հասնենք Ղարանլուխ, այնտեղից միւս օրը Նոր Բայազէտ հասնելու համար: Մենք առաջին անգամն էր, որ այդ ճամբով գնում էինք, անծանօթ տեղին և եթէ ծանօթ էլ լինէինք, պարտաւոր էինք լսել սայլապանին, որը կուզենար չուտ տեղ հասնել, իր պարտականութիւնը կատարելով, չուտ էլ վերադառնար Քէշիշքենդ. գիւղացի մարդ էր և իր աշխատանքն ունէր ընդհատւած:

Օգոստոս 30-ին չատ վաղ տանտէրը, Երևանի թեմական ղպրոցն աւարտած և գիւղի ուսուցիչ Երանդը, որ հայկական սրտբացութեամբ ընդունել էր մեզ, լոյսը չբացուած ելել թէյի, նախաճաշի պատրաստութիւն էր տեսել, որպէսզի, ըստ սայլապանի խորհուրդի, չուշանանք, չուտ ճամբայ ելնենք և ելանք: Բարձրացանք Սէլիմի սարահարթը և աւերուած թրքական երկուերեք գիւղերի միջով դէպի վերին Ղարանլուխ, ապա ներքին Ղարանլուխ, որը չատ հեռու չէր: Ճամբին ուժեղացաւ տաքութիւնս ու թուլացած կողքի էի ընկել: "Մի տեսակ ես երևում, չլինի՞ թէ հիւանդ ես", հարցրեց Նորայրի մայրը: "Մայրիկ, կարծում եմ մալարիայով վարակել եմ Քէշիչքենդում: Բժիչկն ու Նորայրը պատմում էին, որ այնտեղին մօտ գտնուող մի գիւղ կայ, բրնձի արտեր ունի, մոծակներով առատ, և այդ մոծակները հասնելով Քէշիչքենդ, խայթում, վարակում են մալարիայով: Երևի ինձ էլ են վարակել":

"Այնաղուրում էլ մալարիայով հիւանդները կային, ասաց մայրիկը, միակ ճարը խինինն է, հասնենք Բայազէտ, այնտեղ կարելի է բժիչկի դիմել":

Եթէ Քէշիչքենդում ղգացած լինէի, բժիչկը մի հատ ճար կաներ, մտածում էի, բայց ճար չկար, պիտի համբերէի:

Երբ հասանք Սէլիմի սարահարթին և մօտեցանք առաջին աւերակ թրքական գիւղին, առիթ եղաւ կրկին անդրադառնալու պարսիկ կառավարութեան հին քաղաքանութեանը՝ ռազմագիտական նպատակով թուրք տարրը որոշ տեղեր բնակեցնելով հայ ժողովրդին մաս-մաս անել, իրարու միանալու և միահամուռ ուժ կազմելու հնարաւորութիւնից դրկել: Ինչպէս Հաջի Սամլուի և Ալիանլուխի քրդութիւնը Սիւնիքը բաժանել է երկու մեծ հատուածների, Գեղեայ Զորի թուրքերը սեպի պէս խրել են Ղափանի մէջ, նոյն ձևով սեպեր են խրել Նախիջևանի, Արարատեան դաշտի, Բայազէտի չրջանի հայութեան մէջ: Սէլիմի գագաթը 10,000 ոտնաչափ բարձրութիւն ունի ծովի մակերևոյթից, իսկ սարահարթը, որ իջնում է Վայոց Զորի և Նոր Բայազէտի չրջանի վրայ, նւազագոյնը 7000 և թերևս աւելի, անգամ այդ սարահարթի վրայ թուրքեր են հաստատուել նոյն նպատակով:

Եւ ականայից յետ-յետ ես գնում դէպի դարերի խորքը, մեղադրում Բիւզանդիոնին, թէ որչափ նեղմիտ, կարճատես, իր իսկ չահերի տեսակէտից սխալ քաղաքականութիւն է վարել ժամանակին: Փոխանակ հայերին, որպէս հաւատակցի, օգնելու մահմեդական աշխարհակալ արաբների, թուրքերի և պարսիկների դէմ, ինքն էլ մի կողմից է չարիք դարձել հայութեան համար:

Քաղկեդոնի[43] ժողովի որոշումները մերժեց, չընդունեց Հայ Հոգևորականութիւնը, և այդտեղից էլ սկսեց Հակառակութիւնը: Բիւզանդիոնը աշխատում էր ամէն կերպ, որ Հայերը յունադաւան դառնան և այդ դէպքում միայն կօգնէր Հայութեանը, իսկ Հայերը չէին ենթարկւում և մնում էին մենակ այլակրօն աղգերի դէմ-յանդիման: Եթէ Բիւզանդիոնը դաւանաբանական ճղճիմ հաշիւներով չտարուէր, պետական առողջ քաղաքականութիւն վարէր, Հայերին թիկունք դառնար, երկու ժողովուրդները միացեալ ուժերով կը կարողանային բոլոր վտանգների առաջն առնել:

Արևը մայր մտնելուն հասանք Ներքին Ղարանլուխ և իջևանեցինք խնուսցի Արտաշէս Մուրադեանի մօտ: Նորայրի և Արայի մօտ պառկած էի, որ Արտաշէսը ինչ-որ գործով եկել էր Քէշիշքենդ, եապօնին հանդիպելու և այցելելու Նորայրին ու ըժշկին. ես էլ ծանօթացել էի: Արտաշէսը Ներսիսեանի սաներից էր, պատերազմից առաջ, Խնուսում, կուսակցութեան որոշմամբ, մէկին ահաբեկման ենթարկելով, այլևս այնտեղ չպիտի կարողանար մնալ, ուստի գաղտնի անցնում է Կովկաս և ուսումը շարունակում Ներսիսեան դպրոցում: Հայրը ժողովրդական վիրաբոյժ է եղել, տեղական միջոցներով վէրքեր բժշկող (ջառահ) և քրդերի մէջ համբաւաւոր մէկը, մանաւանդ լինելով իրենց չրջանի ցեղապետ Շէյխ Սաիդի տղայի՝ Ալի Ռիզայի քաւորը: Միջոցաւոր մարդ լինելով, Արտաշէսի կրթութեան համար ոչինչ չի խնայում: Արտաշէսը ունէր եղբայր, Լևոն անունով, որ պատերազմի ժամանակ էր ճողոպրել, անցնելով Կովկաս: Արտաշէսը ամուսնացել էր Ներքին Ղարանլուխի քահանայի աղջկայ հետ և տունուտեղ դրել: Խնամատարական. նախարարութեան պաշտօնեաներից էր Ղարանլուխի չրջանում:

Ով կարող էր զուչակել, որ վեց տարի յետոյ պիտի քրդական ապստամբութիւն տեղի ունենար նոյն Շէյխ Սայիդի գլխաւորութեամբ 1925 թ-ին, պարտութիւն կրէր, կախաղան բարձրանար, և իր որդին՝ Ալի Ռիզան, Պարսկաստան անցնէր ու իր քաւորի որդուն՝ Արտաշէսին փնտռէր, և վերջինիս հետ միասին յարաբերութեան մէջ մտնէինք քուրդ ապստամբների հետ, որոնք ծեծում էին իրենց գլուխը, խոստովանում, թէ որքան յիմար են եղել, որ կոյր գործիք են դարձել տաճիկ կառավարութեան ձեռքին ու չարունակ վնասներ պատճառել հայ ժողովրդին, որին տեղահան անելուց և մէկուկէս միլիոն ոչնչացնելուց յետոյ, հերթը հասել էր

---

[43] Քաղաք, Բոսֆորի ասիական ափին, կ. Պոլսի ապարձանը: 451 թ. այստեղ տեղի ունեցաւ 4-րդ Տիեզերական ժողովը,որը ճանաչեց և ընդունեց Բրիատոսի երկու բնոյթի մասին դաւանաբանական ուսմունքը: Իրականում պայքար էր ընթանում եկեղեցու առաջնութեան համար:Հայերը չմասնակցեցին այդ ժողովին, մերժեցին նրա կանոնները. Հաւատարիմ մնացին Եփեսոսի 449թ. ժողովի որոշմանը՝ միաբնակութեան մասին (երկբնակութիւնը մերժեցին նաև Ասորիքն ու Եգիպտոսը): (Խմբ.)

իրենց, որոնք այլևս վստահութիւն չէին վայելում, և պէտք է ոչնչանան, այդ է պահանջում տաճիկի չահը: Քրդական ապստամբութիւնը ճնշելուց յետոյ, քրդերը ձգտում էին դէպի հայ ժողովուրդը, որին համարում էին իրենց միակ բարեկամը: Քուրդը ինչ հայի պատահէր, սիրտը կը բացէր, կը խոստովանէր իրենց աղգովին գործած սխալը, կասէր՝ "եթէ այսօրւայ խելքը ունենայինք, կը միանայինք հայերին և տաճիկի օջախը կը մարէինք և մոխիրը քամուն կը տայինք": Քուրդը հային մօտենում էր այնպէս, ինչպէս ոչխարը կը մօտենայ աղին:

Արտաչէսը զարձաւ քրդերի մարդը և գնաց, միացաւ Արարատ լեռան լանջերին ապաստան գտած քուրդ ապստամբներին, որոնց ընդհանուր պետն էր Իբրահիմ աղա Հսկէ Թէլլօն, օգնականները ունենալով գնդապետ Էհսան Նուրի Բէյին և Ֆարզանդա Բէյին: Արտաչէսը դարձաւ Արարատի ապստամբների ոդին, սակայն խաբուեց բոլշևիկներից, Արաքսն անցաւ, Սաղարակում բանակցութիւն վարելու նրանց հրաւէրով, բայց ձերբակալուեց և քշուեց Հիւսիսային Ռուսաստան:

ՆՈՐ ԲԱՑԱԶԷՏՈՒՄ

Օգոստոս 31-ին, Արտաչէսի կարգադրութեամբ, գիւղացիներից մէկը յանձն առաւ իր սայլով հասցնել մեզ Բայազէտ, և մենք ճամբայ ընկանք վազ առաւօտեան և կէսօրից երկու-երեք ժամ անց հասանք Նոր Բայազէտ: Մայրիկը աղջկայ հետ գնաց իր մէկ բարեկամի տունը, որ միւս օրը չարունակէր ճամբան, իսկ ես խնդրեցի, որ ինձ տաննեն ընկ. Բէնօ Նալչաջեանի մօտ, որը Բայազէտի գաւառապետն էր:

Բէնոյի հետ միասին ապրում էին գաւառական միլիցիապետը, Գանձակի չրջանի Ղարադաղլու գիւղացի Յովհաննէս Սարգսեան, և գանձակեցի Սոկրատը՝ երրորդ գաւառամասի կոմիսարը: Ապրում էին մի տան երկրորդ յարկում, որը բաղկացած էր երեք սենեակից: Տաքութեան մէջ երևրալով, հազիւ կարողացայ բարձրանալ աստիճաններով և բաց դռնից ներս մտայ սենեակ, որի կենտրոնում կանգնած էր Բէնօն, իսկ Յովհաննէսն ու Սոկրատը նստած էին: Ինձ տեսնելով, խիստ զարմացան, թէ որտեղից լոյս ընկայ: Բարև ասելով, ուզեցի առաջ գնալ, մօտենալ, որ ձեռք տամ, քիչ մնաց ընկնէի, ճիգ արի հաւասարակչռութիւնս չկորցնել, և այդ մոմենտին Բէնօն վրայ հասաւ, գրկեց ինձ, որ չընկնէի:

– Եղիչ ջան, ինչ է պատահել, հիւա՞նդ ես, հարցրեց Բէնօն և նստացրեց թախտին. մօտեցան Յովհաննէսն ու Սոկրատը, ձեռք

տին և երեքով սկսեցին հարցեր տեղալ, թէ որտեղից եմ եկել, ուր պիտի գնամ:

Այդ հարցերին բաւարարելուց յետոյ, որովհետև արդէն լսել էին Ղուչչի Բիլակի կուի մասին, խնդրեցին մանրամասն պատմել: Ամփոփ պատմեցի և տեսայ որ Սոկրատը սեղան է պատրաստում, ասացի՝ "ընկերներ, նեղութիւն մի քաշէք, որովհետև բոլորովին ախորժակ չունեմ":

– Ոչ, պիտի զօռով, այսինքն՝ դիտակցաբար ուտես, որովհետև մալարիային սնունդով կարելի է յաղթահարել, ինչպէս բոլոր բժիշկներն են ասում, վերջապէս, ախորժակ բացելու միջոց ունենք, անհոգ եղիր, ասաց Բէնսոն:

– Սակայն կարծում եմ, աւելի լաւ կը լինի, եթէ նախ բժշկի մօտ գնայինք, քննէր և մի կարգադրութիւն անէր, յետոյ ուտելու մասին մտածէինք, ասացի:

– Ոչ, նախ կուտես, որ ուշքի գաս, ապա բժշկին կը ըևրենք այստեղ, պէտք չկայ, որ մօտը գնաս, մեր բժիշկը լաւ երիտասարդ է և ամենայն սիրով պէտք եղածը կանի, ասաց Բէնսոն:

Մինչ մենք խօսում էինք, Սոկրատը երկու չամփուր խորոված էր դրել խոհանոցի օջախին, և խորովածի հոտով բռնել էին սենեակները: Եւ մի քիչ յետոյ, ներս մտաւ Սոկրատը, խորովածի չամփուրները ձեռքին : "Էսպիսի խորովածը չե՞ն ուտի", բացականչում է Սոկրատը: Բէնսոն պահարանից օղիի չիչը հանեց, գինու բաժակը լեցրեց, դրեց առջևս ու ասաց՝ "նախ անուշ արա էս առիւծի կաթը, պանիր հացով և յետոյ կանցնես խորովածին", ասում է Բէնսոն:

– Ջանըմ, ես էդքան միս ուտողը չեմ, դա երեք օր կը բաւէ ինձ:

– Լաւ, մենք թէև հաշել ենք, բայց ոտք կը բռնենք քեզ հետ, որ էշխի գաս, լաւ ուտես, ասում է Սոկրատը:

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Ճաշից յետոյ հանուեցի և պառկեցի. Բէնսոն և Յովհաննէսը զնացին զաւառական կոմիսարիատ, իսկ Սոկրատը մնաց: Պատից կախած թառ ունէր, վերցրեց և սկսեց նուագել արևելեան մոտիւներ: Վարպետ նուագող չէր Սոկրատը, սիրող էր, բայց զգացմունքով էր նուագում, իսկ ես լուռ լսում էի զգացւած, և երբ սկսեց նուագել մի տխուր եղանակ, բարձր տաքութեան մէջ անչափ կարօտով յիշեցի Ղարաբաղը և մտքով թռայ այնտեղ: Յիշեցի մեր գիւղը, Շուշին, իմ մանկութիւնը, զպրոցական չրջանը, ապա յեղափոխական ասպարէզ մտնելս, բանտն ու աքսորւելը, կրկին բանտարկւելը, պատերազմի առաջին տարին, ամիսներ յետոյ թէև աղատ էի արձակւել, բայց

Հարկադրուած Անդրկովկասի սահմանից դուրս գալով, Պետրոգրադի գիւղատնտեսական ճեմարանի ուսանող դառնալը, յեղափոխութեան ականատես լինելը, սակայն ամէնաղտոյգն չափով իսկ չհոգևորւելով յեղափոխութեամբ, որը սկսւեց անարխիայով և վերջացաւ բոլշևիկեան բռնատիրութեամբ, աւելի կատարելագործուած ցարականից: Ամէնից վատը, որ տեղի ունեցաւ մեզ համար, ռուսական բանակը քայքայւեց և զօրքը, Լենինի՝ "Կորչի պատերազմը, դարձ դէպի տուն" նշանաբանով տարւած, լքեց Կովկասեան ճակատը, և հայ ժողովուրդը մնաց մէն-մենակ իւր դարաւոր թշնամուն դէմ-յանդիման: Եւ հայ ժողովուրդը, որ իր կէսը կորցրել էր արդէն, մահ կամ ազատութիւն գոչելով դիմադրեց թշնամուն: Հետևանքը եղաւ ղինադադարը, որը ժամանակաւոր բնոյթ ունէր, որովհետև թշնամին ձգտում էր դէպի Բագու, զերմանական չտարի հրամանով, Ռուսաստանին զրկելու վառելանիւթից և ստրկացնելու: Եթէ փրանսիական բանակը չճեղքէր Բալկանեան ճակատը, տաճիկները, ամրանալով Անդրկովկասում, պիտի ոչնչացնէին հայութեան նաեւ միւս կէսը: Կովկասահայութիւնը հրաչքով փրկւեց, սակայն այսօր չի գնահատւում դաչնակիցներից ըստ արժանւոյն իրենց երեկւայ փոքր դաչնակիցը, որ աղգովին նետւել էր աշխարհամարտի մէջ: Անգլիական ներկայացուցիչները ոտնահարում են հայ ժողովրդի արդար պահանջները յօգուտ Աղրբէջանի, որը ենթակայ էր տաճիկ կառավարութեանը: Մէկիկ-մէկիկ չարժանկարի պէս աչքիս առջև անցնում են անցեալի բոլոր դէպքերը և, մանաւանդ, մեծ ու փոքր դէմքերը, որոնք աչքերը բաց դիմաւորել էին մահը, յանուն իրենց հարազատ ժողովրդի: Նահատակները, անվերջ նահատակները, կենդանի նահատակ է և ինքը՝ հայ ժողովուրդը դարերի, ընթացքում:

Յիշեցի մեր վերջին երկու տարւայ կեանքը Ղարաբաղում:

Յիշեցի հանգուցեալ Հայրապետ Մուսայէլեանին ու Կարապետ Նարինեանին, որ վախճանւեցին զրեթէ միաժամանակ Ռոստոմի հետ, որը Թիֆլիսում վախճանւեց: Ես յիշեցի նաև սրտաճմլիկ տեսարանը Հայրապետի յուղարկաւորութեան, ու կոկորդս սկսեց սեղմւել, վերմակը քաշեցի դէմքիս, լուռ փղձկացի, որ չտեսնէր ու չլսէր Սոկրատը, որը տարւած իր տխուր նւագով, աւելի էր ազդում վրաս: Յիշեցի հարազատներիցս բաժանման մոմենտը, ծանր հիւանդ մօրս լացը, հօրս և քրոջս դառնօրէն վչտոտ դէմքերը: Յիշեցի և Արամայիսին (Միսակ Տէր Դանիէլեան), որը վերջին հրաժեշտի ժամին ասաց ողջագուրւելով՝ " յուսանք, որ նորից իրար հետ կը լինենք ու կաշխատենք միասին":

Տաքութիւնից այրւում էի, ենթադրում էի, որ ջերմաստիճանս 40-ից բարձր էր: Բէնօն եկաւ, նայեց դէմքիս, ձեռքը դրաւ ճակատիս, ասաց՝ "տաքութիւնդ չատ է, ուղեցի բժշկին ըևրել,

բացակայ է, գնացել է մօտակայ գիւղերից մէկում հիւանդների նայելու, երևի գիչերը կը վերադառնայ, վաղը կը գայ, քեզ կը նայի. պիտի համբերել, ուրիչ ճար չկայ":

Սեպտեմբեր 1-ի առաւօտեան բժիշկը՝ Միչա Մովսիսեանը (Բայազէդի բրիգադի բժիշկն էր), գինուորական հագուստով, միջահասակ և համակրելի երիտասարդ, եկաւ. նայեց աչքերիս կոպերը լայն բացելով, ջերմաչափը դրաւ թևիս տակ, լսեց թոքերս ու սիրտս: "Ի հարկէ, կասկած չկայ, որ մալարիա է, ասաց, սիրտդ, թոքերդ լաւ են, պէտք է ուժեղ սնունդ և խինին ընդունես. ուրիչ ոչինչ":

–Դոկտոր, ասաց Բէնօն, անունդի համար միամիտ եղէք, մեր ձեռքին է, ինչ որ պէտք է, կանենք. հիմա ձեզ հետ կը գամ, որ խինին տաք:

– Պէտք չկայ, որ գաք. ես անմիջապէս մեր գինուորներից մէկի միջոցով կուղարկեմ:

Դոկտորը գնաց, և Բէնօն դարձաւ ինձ. "Մեր տղայ, գիտե՞ս, ժողովրդական մասալն[44] ասում է, թէ հիւրը տանտիրոջ ղուշն է (ստրուկ). դոկտորը իր պարտականութիւնը կատարեց, գնաց, հիմա էլ մենք պիտի մեր պարտականութիւնը կատարենք, և դու ևնթակայ ես մեզ, ինչ որ հրամայենք, պիտի անխօս կատարես: Խօսքս անունդի մասին է, ծառան կը պատրաստէ ինչ որ պէտք է, և դու չեմուչեմ չես անի. պիտի լաւ սնուես, որ ոտի կանգնես, չարունակես ճամբադ":

– Մոռացայ հարցնել, թէ քանի աստիճան է տաքութիւնս:

– Ես տեսայ, 40-ից մի քանի գիծ էլ աւել. մալարիայով հիւանդները մինչև 41° էլ տաքութիւն են ունենում. կարևորն այն է, որ բժշկի ասածը ճչտութեամբ կատարւի, ուրիչ ոչինչ:

Սեպտեմբեր 2-ին Դիլիջանից գալիս են ներքին գործոց նախարարի օգնական Սարգիս Մանասեանը և խմբապետ Վարդանը (Սերգէյ Միհրանեան)՝ Խանասօրայ արշաւանքի հրամանատարը, ինչպէս պատմեց Բէնօն, չորս-հինգ օր պիտի չրջագայեն մօտակայ գիւղերում, ապա վերադառնան Երևան: "Եթէ մինչև նրանց մեկնելը կազդուրւես, օթօ ունեն, իրենց հետ կը կարողանաս գնալ":

Սարգիս Մանասեանը իմ դպրոցական ուսուցիչներից էր. ռուսաց լեզու էր աւանդում ստորին դասարաններում, ռուսաց պատմութիւն և աշխարհագրութիւն բարձր դասարաններում: Խմբապետ Վարդանը համաքաղաքացի էր և հօրս դպրոցական աշակերտներից: Բէնօն յայտնում է իմ մասին, և նրանք Բէնօյի հետ գալիս են՝ տեսնելու ինձ: Երբ եկան, ես ինձ բաւական անյարմար վիճակում զգացի, որ երկու մեծ մարդիկ եկել էին այցելութեան

[44] Առած (Խմբ.)

իրենցից կրտսեր մէկին: Երկուսով զանազան հարցեր տուին Զանգեզուր-Ղարաբաղի վերաբերեալ: Ամփոփ կերպով պատմեցի Արսէն Շահմազեանից վերջին անգամ սուրհանդակի միջոցով Ղարաբաղից ստացած նամակի բովանդակութիւնը, թէ ինչպիսի կացութիւն է ստեղծւած այնտեղ: Ապա հարցրին Ղուչչի-Բիլակի վրայ տեղի ունեցած յարձակման մասին: Յայտնեցի, որ գիւղի մօտ, ձորում, որտեղով Արփաչայն է հոսում, սպանւածներից մէկը, լաւ հագնւած, Մուղանի տափաստանի բէկերից մէկն է եղել, ինչպէս պարզւել է նրա գրպանում գտնւած թղթերից:

– Մուղանի դաշտից թուրքերն ինչպէ՞ս են հասել Ղուչչի Բիլակ և որտեղո՞վ, հարցնում է Մանասեանը:

– Ալիանլուի և Հաջի Սամլուի վրայով, ասացի, Բարզիւչատ գետի ընթացից սկսած դէպի վեր և նրա վտակի՝ Հազարուի հոսանքով դէպի վեր, մինչև ակունքը, ամբողջ տարածութիւնը բռնւած է մասամբ թուրքերով և մնծաւ մասամբ չիա քրդերով, որոնք տեղաւորւած են բարձր մասում: Բարզիւչատից դէպի արևելք տարածւում է Կարնագինի գաւառը, որի դաշտային մասում, Արաքսի երկարութեամբ, թուրքերն են, որ առանց դժւարութեան հասնում են Հաջի Սամլու և այնտեղից անմարդաբնակ լեռներով կապւում Դարալագեազի թուրքերի հետ:

– Այո, դաշտի ժողովրդի համար դժւար չէ Հաջի Սամլու գնալը, և այդ Հաջի Սամլուն Հայ-Թրքական ընդհարումների ժամանակ մեզ մեծ վնասներ պատճառեց: Հաջի Սամլուի քրդերը լեռ. բարձրացած քոչւորների հետ միացած Մինքենդի հայերի մեծ մասը կոտորեցին և քանիցս յարձակումներ գործեցին Ղարաղչլաղ և այլ գիւղերի վրայ, թէև միշտ էլ յետ չպրտւեցին, սակայն ամէն անգամ էլ վնասներ էին պատճառում, մեզ համար իսկական չարիք էին:

– Մենք ղեռ չորս-հինգ օր այստեղ ենք, աշխատիր կաղդուրւել, ոտքի կանգնել, որ մեզ հետ միասին Երևան գնաս, ասաց Մանասեանը:

Սեպտեմբեր 3-ին Մանասեանը, Վարդանը, Բէնօն ու Յովհաննէսը ձիերով գնում են մօտակայ գիւղերը չրջագայելու, ներքին գործոց նախարարութեան հետաքրքրող զանազան տեղեկութիւններ իմանալու:

Սեպտեմբեր 4-ին Բայազէդի քաղաքագլուխ Վահան Ամբրիկեանն ի պատիւ Ս. Մանասեանի և Վարդանի ցերեկը խնճոյք է տալիս, հրաւիրելով քաղաքի աչքի ընկած տղամարդկանց ու տիկիններին, իսկ երեկոյեան՝ Բայազէդի առաջնորդ Եղնիկ Վարդապետին:

Սեպտեմբեր 5-ին Բէնօն տարաւ ինձ Վահան Ամբրիկեանի տունը, ուր իջևանել էին Մանասեանն ու Վարդանը և հրաժեշտ տալով Ամբրիկեաններին և ներկայ գտւող մի քանի քաղաքացիների,

օթօմօբիլով մեկնեցինք և երբ հասանք քաղաքի ծայրը, ձիաւոր միլիցիայի տան մօտ ձիերի վրայ նստած, կազմ ու պատրաստ չարք բռնած կանդնած էին միլիցիօներները, որոնք պատւի առան և, հակառակ Մանասեանի ցանկութեան, Բէյնոյի ու Յովհաննէսի պվսաւորութեամբ, ուղեկցեցին բաւական տեղ ու վերադարձան:

ՎԵՐԱԴԱՐՁ ԵՐԵՒԱՆ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴՐՈՑԻ ՀԵՏ

Երեկոյեան ուշ հասանք Երևան, Հիւրանոցում (Օրիանտ) տեղ չկար, մեկը խորհուրդ տւեց գնալ Հանրակացարան. գնացի, զիշերեցի այնտեղ և պատահեցի Շուշու մեր դպրոցի երաժշտութեան ուսուցիչ Յարութիւն Պապովեանին, իւր կնոջ հետ միասին, որ եկել էին Հիւսիսային Կովկասից. Նոր Նախիջևանցի էր, երկուսն էլ բոլորովին ծերացած: Երկրորդ օրւանից Շուշեցի հանգուցեալ Համբ. Տէր Յովհաննէսեանի քրոջ՝ Շուշանիկի բակում էի քնում:

Սեպտեմբեր 10-ին Թիֆլիսից եկան Միշա Արղումանեանը, Աչոտ Մ. Յովսէփեանն ու Յարութիւն Թումեանը, որոնք մեկ զիշեր Հանրակացարանում էին մնացել. յաջորդ օրը Միշան մօտ ծանօթ լինելով "Օրիանտ" հիւրանոցի տիրոջ՝ Գէորգի հետ, կարողանում է մեկ սենեակ վերցնել չորսիս համար: Անպիտան մալարիան կրկնել էր աւելի ուժեղ կերպով: Իմ քաղաքացի երկու բժիշկներ Արտաշէս Բարայեանը և Հայկ Միրզաբէկեանը չատ հոգատար վերաբերմունք ցոյց տւին ու կանգնեցրին ոտքի և խորհուրդ տւին անպայման հեռանալ Երևանից, օդի փոփոխութեամբ հնարաւոր կը լինի ձերբազատւել անպիտան հիւանդութիւնից, որով դաչտի զիւղերից չատ մարդիկ են տառապում:

Սեպտեմբեր 16-ին Դաւիթ Անանունի հետ միասին դրօսայդում քայլելով դրուցում էինք, քննադատում կառավարութեանը, որ Զանգեզուր-Ղարաբաղի վրայ մատերի արանքով է նայում, յանկարծ մեր դէմ ելաւ Լևոն Սարգսեանը՝ ("Մուրճ" ամսագրի խմբագիրը, "Այց Թուրքաց Հայաստանին" գրքի հեղինակ, Քրիատափորի, Ռոստոմի և Զաւարեանի ընկերներից մեկը, նախկին դաշնակցական, 1906 թ. "Անկախ" ստորագրութեամբ հեռացած կուսակցութիւնից, որպէս մարքսիստ):

Դաւիթը, որպէս վաղեմի ծանօթի և գաղափարակցի, "Բարև, ընկեր Լևոն" ասելով կանգ առաւ, իրարու ձեռք սեղմեցին, և ինձ էլ ներկայացրեց որպէս հայրենակցի, ծանօթացանք և միասին ոտտնդոյում[45] տեղ գրաւեցինք մեկ խմբում: Լ. Սարգսեանը սկսեց

[45] Ձիչալ՝ ասուածա, բառացի՝ կրկ (խաչ.) կրկ չվաճառել, տալավար, սրամ, ամերտաար՝ գնդեվոել: (Խմբ.)

զանգատվել, թէ Հայաստանի կառավարութիւնը լուրջ չի վերաբերւում Գողթանի ինքնապաշտպանութեան գործին. քսան օր զանազան դռներ մաշկուց յետոյ, հաղիւ յաջողւել է մէկ ղինւորական գտնել, Գողթան գնալու համար և նա 300-ի չափ գողթանցիներ հաւաքելով, արդէն մեկնել է Գողթան: (Նախիջևանցի Նժդեհն էր ղինւորականը):

-Գնացել էի Դրօի մօտ, բացակայ էր: Ընդունեց իր չտարի պետը՝ գնդապետ Պրիտամանով աղզանունով մէկը, որը Գողթանի մասին չգիտէ, թէ ինչ է, գաւառ է, թէ, քաղաք. հարցնում է՝ А где находится этот Гохтан?

Ինչո՞ւ պիտի չտարի պետը լինի մի ոմն Պրիտամանով, որ չիմանայ Գողթանի ինչ լինելը և որտեղ գտնւելը: Համապատասխան մի հայ չկա՞յ մէթէ:

Հիմա էլ քաչքչւում եմ, որովհետև Ազուլիսից նամակներ են ստացւել, գանգատւում են, թէ միանգամայն զուրկ են ղեղորայքից, նոյնիսկ ամենաչատ գործածական հասարակ ղեղերից, ուստի դիմել եմ կառավարութեանը, ինչ որ կը ճարւի տեղում, որոշ քանակութեամբ ուղարկւի. բայց այսօրւայ, վաղւայ են գցում:

- Ընկեր Լևոն, ղեմլեակս (հայրենակիցս) դաշնակցական է, ասում է Դաւիթը. նա էլ Ղարաբաղի խնդրով է չէմքեր մաշում. խորհուրդ եմ տալիս՝ միասին աշխատէք, չէ՞ որ Ղարաբաղն ու Գողթանն էլ Սիւնիքի բաղկացուցիչ մասերն են, մէկը արևելեան ծայրամասն է հանդիսանում, միւսը արևմտեան:

- Շատ լաւ, ասաց Լ. Սարգսեանը, հէնց վաղը գնանք Դրօյի մօտ. երեկ բացակայ էր քաղաքից, ասացին, թէ այսօր պիտի վերադառնայ: Վաղը առաւօտեան ժամը 9-ին այստեղ հանդիպենք:

Դաւիթը, կարծես, մոռանում է, որ քանիցս իրա հետ միասին եղել ենք նախարարների մօտ, հանդամանօրէն խօսել և դեռ սպասում ենք արդիւնքի: Քիչ առաջ ինքներս էինք քննադատում կառավարութեանը և երբ առանձին յիշեցրի իրեն այդ մասին, ասաց. "Տնաչէն, դժգոհ լինելով հանդերձ, պէտք է միշտ դռները ծեծել, յիշեցնել մեր պայմանների մասին, որպէսզի մի օր ցանկալի արդիւնքի հասննենք:

Միւս օրը որոշւած ժամին հանդիպեցինք նոյն տեղում Լ. Սարգսեանին և միասին գնացինք Դրօի չտարը, որ մօտ էր: Ներս մտանք, բարևեցինք, Դրօն առաջարկեց նստել: Լ. Սարգսեանը դեռ բերան չբացած, ասաց. "Պարոն Լևոն, ինչպէս խոստացայ ձեզ, խօսեցի ում հետ պէտք էր, արդէն որոշւած է, և վաղը կամ միւս օրը անպայման ղեղորայքը կուղարկւի Ազուլիս. միանգամայն վստահ եղէք":

– Շատ չնորհակալ եմ, ասաց Սարգսեանը, որքան չուտ, այնքան լաւ։

– Իսկ մեր Զանգեղուր-Ղարաբաղի պահանջների մասին ի՞նչ կարգադրեց, հարցրի։

– Այդ մասին էլ անհրաժեշտը կը կարգադրի, ասաց Դրօն։

– Բայց որոշակի չես ասում, թէ երբ. ասում ես՝ կը կարգադրի, իսկ "կը"-ն ցանկալուց երբեմն ցրտահար, կարկտահար է լինում կամ երաշտից չորանում և կամ չի բուանում, ասացի։

– Այ ղարաբաղցի, Զանգեղուր-Ղարաբաղի անունով չարունակ շնդացնում էք օդը, բայց չկարողացաք մի Աղբրէջանի հախիցը գալ, վախեցաք, տեսնո՞ւմ ես՝ Սուրմալուն քրդերի հախիցը ոնց է գալիս։

Տեսնում եմ, որ Դրօն իր հիւմորով ինձ ձեռք է առնում, ասացի՝ "Դրօ, խօսքը մէջերնիս, էն ղէյրաթը, որ քո մէջ կայ, չնորհիւ քո սիւնեցի մօր արեան է, որ անցել է քեզ։ Քո քեռիներին, Աբրահամին, Կարապետին (Շուչում վաճառականներ էին, 1906 թ. փոխադրուեցին Բագու), երկար տարիներ հարևաններ ենք եղել, մօտ ծանօթ իրարու։ Այո, ղէյրաթով պարտական ես Սիւնիքին։

Դրօն չկարողացաւ դադել ծիծաղը, և մենք էլ ծիծաղեցինք։

– Լաւ, հանաքը թողնենք. խնդիրը լուրջ քննութեան է առնուած, ասաց Դրօն, և պիտի կարգադրուի անպայման։

Հրաժեշտ տալով Դրոյին, Սարգսեանի հետ միասին դուրս եկանք։

– Որքան գիտեմ, Դրօն իգդիրցի է, ասաց Լ. Սարգսեանը։ Կարծես ուղում էր ասած լինել, թէ ոչ մէկ կապ գոյութիւն ունի Սիւնիքի և նրա մէջև։

– Ճիշտ է, ասացի, իսկ մայրը Սիւնիքի Սիսիան գաւառի Մաղրա գիւղացու աղջիկ է։ Դրոյի հայրը գործով եղել է այն գիւղում և հիւրընկալ գիւղացու աղջկան հաւանել, առել է։

Բաժանուելով Լ. Սարգսեանից, գնացի այգի. դեռ Դաւիթը չկար, սպասեցի, եկաւ՝ գլխարկը բուգովի դրած[46]։ Հը, գնացի՞ք Դրոյի մօտ, հարցրեց։

– Այո, իզուր մինիաթի տակ էիր գցում Լ. Սարգսեանին, արդէն կարգադրուած է գործը, ինձ էլ զարմրիր եղան պոչին նստած, վար արած ճանճ։

– Ոչինչ, վնաս չունի, կը մնծանաս, կը մոռանաս, ինչպէս մեղանում են ասում։

[46] Ղարաբաղում յայտնի արտահայտութիւն է, որ նշանակում է հպարտ։ (Խմբ.)

Սեպտեմբեր 24-ին Միչա Արղումաննանը և ես եղանք Նիկոլ Աղբալեանի մօտ, որ կուլտուր- կրթական գործի վարիչն էր: Ներկայացրինք Աչոտ Մելիք-Յովսէփեանին, որ Ղարաբաղ վերադառնալ չէր կարող, ուստի ուղում էր համապատասխան որևէ աշխատանք ստանձնել: Պետրոգրադի համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտն էր աւարտել: Մագիստրոսի տիտղոսի էր արժանացել: *Համաձայն էր ուսուցչական պաշտօն ստանձնելու* դպրոցներից մէկում: Երբ Նիկոլին յայտնեցինք այդ մասին, ուրախութեամբ ընդառաջեց ու ասեց:

– Ես հիմա հրազով մարդիկ եմ փնտռում դպրոցների համար. մեր երկիրը տակն ու վրայ լինելու պատճառով դպրոցական կեանքը կանգ է առել, բոլորովին քայքայել է. համաճարակ հիւանդութիւններին զոհ են գնացել շատ ուսուցիչներ, նոր սկսել ենք կամաց-կամաց վերականգնել դպրոցական կեանքը: Պարոն Մելիք-Յովսէփեանին ոչ թէ դասատուի, այլ Ղարաքիլիսէի նոր բացուող երկսեռ գիմնազիայի դիրեկտորի պաշտօնն եմ առաջարկում. կարծում եմ, կը կարողանաք վարել գործը և զոհ կը մնաք: Եւ լաւ կը լինի, որ մի օգնական էլ ունենաք:

– Ընկեր Նիկոլ, ասացի, Շուշում օրիորդաց Մարիամեան *դպրոցի տնօրէն էր Յարութիւն Թումեանը*, խմբագիր Թորգոմի եղբայրը. նա և ես միասին ենք աքսորուել Ղարաբաղից. նա էլ մեզ հետ պիտի գար, բայց Ռուբէնի մօտ պիտի գնար, չկարողացաւ գալ: Նա չի մերժի և ուրախութեամբ կաշխատի Աչոտի հետ:

– Քանի որ այդպէս է, պարոն Մելիք-Յովսէփեան, երեկոյեան ժամը 5-ին պարոն Թումեանի հետ միասին եկէք պաշտօնական ձեր թղթերն ու ճամբու և այլ անհրաժեշտ ծախսերի համար աւանսով դրամ ստացէք, որ վաղը մեկնէք:

Աչոտը և Յարութիւնը որոշեալ ժամին ներկայացան. ստանում են իրենց թղթերը՝ առաջինը իբրև դիրեկտոր, երկրորդը իբրև տնօրէն: Միւս օրը Աչոտն ու ես մեկնում ենք Ղարաքիլիսա, իսկ Յարութիւնը Զօղի չրջանը գնացած լինելով, գրաւոր զեկուցում պիտի ներկայացնէր Ռուբէնին, ուստի երկու-երեք օր յետոյ միայն կարող էր մեկնել Ղարաքիլիսա:

Սեպտեմբեր 26-ին Աչոտն ու ես միասին մեկնեցինք Ղարաքիլիսա, որտեղ մեր կուսակցական ընկերները յաջողեցրին ժամանակաւոր մէկ բնակարան վարձել երկու սենեականոց, մինչև որ գիմնազիայի համար վարձած չէնքի նորոգութիւնը վերջանար և Աչոտը երկու սենեակ ստանար մշտական բնակութեան համար դպրոցի չէնքում:

Սեպտեմբեր 28-ին գալիս է Յարութիւն Թումեանը, որը տեղաւորուում է գաւառական կոմիսարի օգնական Գաբրիէլ Կիրակոսեանի մօտ: Գաբրիէլը իմ դասընկերներից է, նախկին

ուսուցիչ, պատերազմի առաջին տարին կանչվել է դինուորական ծառայութեան, սպայական դպրոց էր ընդունվել որպէս միջնակարգ կրթութիւն ստացած և դպրոցն աւարտել էր իբրև սպայ:

Գաւառական կոմիսարն էր Պարոյր Ղարիբեանը, իգդիրցի, մեր ընկերներից, որ փոխարինել էր նախկին կոմիսար Սերգէյ Տէր Սարգսեանին: Վերջինս Արամի (Վանի) քրոջ տղան էր, որ գժտվելով տեղի դաշնակցականների հետ, հեռացել, թողել էր պաշտօնը:

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Հրանդ Բահաթրեանից նամակ ստացած լինելով, 10-ին Թիֆլիս եմ գնում Ղարաբաղի վերաբերեալ կատարած քայլերի առնչութեամբ: Զանգեզուր-Ղարաբաղի հայրենակցական միութեան վարչութիւնը նիստ է դումարում. ներկայ են Լէօն, որ վարչութեան նախագահն է, Յովսէփ Խունկնցը, Եսայի Յարութիւնեանը և Միքայել Ղարաբէգեանը: Որոշւում է որպէս Զանգեզուր-Ղարաբաղցիները մի բողոքագիր ներկայացնել Դաշնակից պետութիւնների ներկայացուցիչներին, Զանգեզուր-Ղարաբաղը ապօրինի կերպով Ադրբէջանին միացնելու դէմ:

Հոկտեմբեր 12-ին վարչութիւնը որոշում է մի թղթածրար հրատարակել մեր վարած բանակցութիւնների և ապօրինի կերպով Զանգեզուր-Ղարաբաղը Ադրբէջանին կցելու չուրջ: Այդ աշխատանքը յանձնարարւում է Լէոյին, Միքայել Ղարաբէգեանին ու ինձ: Միքայել Ղարաբէգեանն ու ես պիտի օգնէինք Լէոյին՝ նիւթ մատակարարելով:

Միքայել Ղարաբէգեանը իմ դպրոցական ուսուցիչներից էր, սոցիալ-դեմոկրատ, բայց ազգային հոգով հայ մարդ: Ռուբէնը պատմել էր Ղարաբէգեանի մասին, թէ ինչ կեցուածք էր ունեցել հայ-վրացական պատերազմի օրերին: Առիթ եղաւ խօսելու մեր հարևանների մասին, և Ղարաբէգեանը չատ խիստ լեզուով քննադատեց վրաց ու թուրքերի վերաբերմունքը հայերի նկատմամբ:

-Վրացիները ընդհանրապէս թշնու չովինիստներ են և որպէս այդպիսիք չեն մնում թուրքերի մուսաւաթականներից: Վրաց սոց-դեմոկրատ կուսակցութիւնը, որ իբրև սոցիալիստական գաղափարաբանութեան հետևող, պէտք է լայնախոհութիւն ունենար, չովինիզմից վերծ լինելու, ճիշտ հակառակը, Նոյ Ժորդանիայից սկսած մինչև վերջին չարքայինը մոլի չովինիստներ են: Նրանք, պարզապէս, տահիկների հետ սիլիրիլի էին անում պատերազմի սկզբից, որ հետագային աւելի ցայտուն կերպով դրսևորուեց, երբ նրանք Ղարսն ու Արդահանը զրաւեցին: Եւ հայ-վրացական պատերազմի օրերին հայերի դէմ այնպիսի խժդժութիւններ արին, որ

չի պատշաճում որևէ կուլտուրական ժողովրդի կառավարութիւնեան: Արչակ Զոհրաբեանը, որ երկար տարիներ աշխատած է Ժորդանիայի, Գեղեչկորիի և Զևեիձէի հետ, բաց նամակով բողոքել էր նրանց հակամարդկային արարքների դէմ: Հայ-տաճկական պատերազմին, որպէս դարաւոր, հաղարամեայ հարևաննները, չուզեցին որևէ ձևով օգնել մեղ, որպէսզի չկորցնեն այն համակրական վերաբերմունքը, որպիսին տաճիկներն ունէին իրենց հանդէպ: Սակայն եթէ իրենք պատերազմի մէջ լինէին տաճիկների դէմ, խորապէս համոզուած եմ, որ հայ ժողովուրդը անտարբեր չէր մնայ, ամէն կերպ աջակցութիւն ցոյց կը տար":

Քանի որ հայրենակցական միութեան վարչութիւնը յանձնարարել է մեղ նիւթ հաւաքել հրապարակելիք թղթածրարի համար, մտքերի փոխանակութիւն ունեցանք, թէ ինչ կարող ենք անել: Պէտք է զրել Շուչի, Աղգային խորհրդին, որ ուղարկեն ուղղակի Լէոյի հասցով Ղարաբաղի հայութեան ունեցած հինգ համագումարների որոշումների, տաճկական հրամանատարութեան՝ մեղ ուղղած պահանջագրերի, անգլիական հրամանատարութեան և միսիայի հետ փոխանակուած կարևոր գրութեանց պատճէնները, իսկ Երևանում արտաքին գործոց նախարարութեանը դիմեմ, որ թոյլ տրւի Զանգեղուր-Ղարաբաղի հարցի չուրջ դաչնակիցների ներկայացուցիչներին ուղղած թղթերի պատճէններն արտագրելու և ուղարկելու Լէոյին:

Խօսեցի Բիւրոյի հետ, որ քանի կանգուն է Հաջի Սամլուն, Զանգեղուր-Ղարաբաղը մչտական կուի առարկայ է լինելու Հայաստանի և Ադրբէջանի միջև: Անգլիական կառավարութիւնը գիտակցաբար Ադրբէջանին թիկունք է դարձել, իր չահերից ելնելով, մանաւանդ, որ Ադրբէջանի պետական մարդիկ ամէն կերպ ջանացել են հայերին ներկայացնելու իբրեւ անվստահելի տարրի և պարզապէս պրովոկացիայի ենթարկելու Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը և միւս յեղափոխական հոսանքներին որպէս բոլշևիկների: Պէտք է լուրջ միջոցների դիմել, Զանգեղուր-Ղարաբաղի միջնաբերդը՝ քրդական Հաջի Սամլուն հայկականացնել, զրաւելով այն և տեղահան անելով քրդերին, որովհետև Հաջի Սամլուն ամուր յենարան է Ադրբէջանի համար, որտեղից նա իւր ձեռքն է մեկնում Դարալագեազի և Նախիջևանի թուրքերին ու այնտեղից էլ Արարատեան դաշտի թուրքերին:

Միքայել Ղարաբէկեանի հետ միասին եղանք Լէոյի մօտ և յայտնեցինք մեր անելիքների մասին. իր հաւանութիւնը տալով ասաց, որ զրենք Շուչի, ըստ հնարաւորին չուտ ղրկեն թղթերը, նոյնպէս ես էլ, իմ հերթին չուտ հասցնեմ թղթերը:

Նամակ զրեցինք Շուչի, և. որովհետև փոստով հնարաւոր չէր ուղարկել, դիմեցինք չուչեցի Ղևոնդ Այդինեանին, որը չուչեցի

Սաֆարեան եղբայրների ծխախոտի գործարանն էր գնել. նա առևտրական կապը Շուշու հետ պահում էր իր մի պաշտօնեայի միջոցով, որը Ելախ-Շուշի խճուղին վտանգելուց, Գանձակի վրայով էր երթևեկում Շուշի: Ղևոնդին յանձնեցինք մեր գրութիւնը, որ ուղարկէր ապահով կերպով:

Յովհաննէս Թումանեանը բուռն կերպով հետաքրքրւում էր Ղարաբաղի խնդրով, որը խիստ կենսական էր համարում: Միքայէլ Ղարաբէգեանի հետ եղանք Թումանեանի մօտ, պատմեցինք հայրենակցական միութեան որոշման մասին՝ մի թղթածրար հրատարակելու Զանգեզուր-Ղարաբաղի հարցի շուրջ, ասաց, որ չատ լաւ կը լինի, որ երբ գօսիէն տպագրւի հայերէն, թարգմանուելիւնը լոյս տեսնի նաև ֆրանսերէն ու անգլերէն, մանաւանդ որ պատճառաբանած պիտի լինի պատմականօրէն և փաստացիօրէն Զանգեզուր-Ղարաբաղը Հայաստանի բնական մաս լինելը:

Հոկտեմբեր 17-ին, Գանձակի վրայով, լեռնային ճանապարհով, Ղարաբաղից գալիս են այնտեղի մարտական ուժերի հրամանատար կապիտան Արտաշէս Վարդապետեանը, ձիաւոր ուժերի պետ Սէրգէյ Մելիք Աղամեանը և երկու սպաներ՝ Աբ. Իսազուլեանը, Արտեմ Մելքումեանը և դինւոր Վաղարշակ Նարինեանը, որոնք պատմում են Սուլթանովի՝ կեղծ ու պատիր միջոցներով մարդիկ սիրաշահելու մասին: Անգլիական միսիան Շուշուց հեռանալուց յետոյ, նա այժմ իրեն տէրն ու տիրականն է համարում Ղարաբաղի և արևելեան խորամանկութեամբ ջանում է հայութեան համակրութիւնը ձեռք բերել: Ժողովուրդը, ի հարկէ, լաւ է հասկանում, գիտէ, թէ ինչ տիպ է Սուլթանովը, սակայն միևնոյն ժամանակ վատատես է, նախ, որ անգլիական հրամանատարութիւնը խիստ աչառու գտնւեց, թուրքերի օգտին աչխատեց և երկրորդ, որ մեր կառավարութիւնը հետատես չգտնւեց, որպէսզի կանխէր Արսէն Շահմազեանին փոխանակ Գորիս ուղարկելու Զանգեզուր-Ղարաբաղի Սիւնիքի զիներալ-կոմիսարի պաշտօնով, ուղարկէր ուղիղ Շուշի, Գօրիսի կամ Գանձակի վրայով և երբ յայտարարւէր այդ մասին, Ադրբէջանցիները չէին կարող անգլիացիներին հարկադրել կատարած փաստի վրայից անցնելու: Թուրքերը, պարզ է, մեզ կանխեցին, չուտ իրենց մարդուն նստեցրին Զանգեզուր-Ղարաբաղի մայրաքաղաքում և մեզ կատարած փաստի առջև կանգնեցրին:

ՆՈՐԻՑ ԵՐԵՒԱՆ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌՈՒԲԷՆԻ ՀԵՏ

Հոկտեմբեր 21-ին Հրանդ Բահաթրեանն ու ես Շուչուց եկած դինուորականների հետ մեկնում ենք Թիֆլիսից. Ղարաքիլիսայում իջայ Աչոտ Մելիք Յովսէփեանին ու Յարութիւն Թումանեանին հանդիպելու, լսածս վերջին տեղեկութիւնները և հայրենակցական միութեան վարչութեան որոշումը յայտնելու հրատարակելիք Ժղովածրարի մասին: Ընկերներին խոստացայ հինգ-վեց օր յետոյ լինել Երևանում:

Հոկտեմբեր 27-ին Ղարաքիլիսայից մեկնեցի Երևան. 28-ին Արտաշէս Վարդապետեանին տարայ Ռուբէնի մօտ. նա ղեկուցեց մանրամասնօրէն վերջին չորս ամիսների ընթացքում Ղարաբաղում անցած-դարձածի մասին: Ռուբէնը մի չարք հարցեր տուեց յաջորդաբար, և Արտաշէսը բացատրութիւնները տուեց, և երբ վերջացաւ հարցուպատասխանը, յայտնեցի, որ Արտաշէսի հետ միասին եկել են ուրիշ երեք սպաներ, որոնք ուղում են ծառայել բանակում: Ռուբէնը յանձնարարեց, որ բոլորին ներկայացնեմ դինուորական նախարար Ֆ. Արարատեանին, և ինքն էլ կը խօսի հետը, որ բոլորին ընդունեն բանակի մէջ ծառայութեան:

Արտաշէս Վարդապետեանը Ռուբէնի ուշադրութեանը յանձնեց խիստ կարևոր տեղեկութիւն Աղբրէջանի դինուորական չարժումների մասին, որ պատրաստւում են չատ մօտ ապագային յարձակում գործել Զանգեզուրի վրայ: Այդ մասին լուր է տուած Արսէն Շահմազեանին, որ կանխաւ միջոցների դիմէ, անակնկալի չգալու համար:

Հոկտեմբեր 29-ի առաւօտեան Արտաշէս Վարդապետեանը նոյն ղեկուցումը տալիս է Դրոյին: Նոյն օրը տեղի է ունենում Զանգեզուր-Ղարաբաղցիների ժողով. ներկայ են՝ Միչա Արղումանեան, բժ. Արտաշէս Բաբալեան, Գերասիմ Բալայեան, Դաւիթ Անանուն, Հր. Բահաթրեան, Ա. Վարդապետեան, Ա. Շիրինեան, Բ. Իշխանեան, Վահան Նաւասարդեան, Ներ. Բաբայեան, Զ. Եօլեան և ես: Ա. Վարդապետեանը կրկնում է իր ղեկոյցը, որից յետոյ որոշում է, որ Հր. Բահաթրեանը, Գ. Բալայեանն ու ես ներկայանանք Ալեքսանդր Խատիսեանին ու հետաքրքրւենք, թէ կառավարութիւնը նոր ինչ քայլերի է դիմել Աղբրէջանի ոտնձգութիւնների դէմ:

Հոկտեմբեր 30-ին, համաձայն որոշման, երեքով ներկայացանք Ա. Խատիսեանին, որը մեր հարցումին ի պատասխան յայտնեց, թէ կառավարութիւնը խիստ բողոք է ներկայացրել

դաշնակից պետությունների Կովկասի բարձր հրամանատարությանը, որ յետ կանչի Սուլթանովը և նրա փոխարէն դաշնակից զինուորականներից մէկը նշանակի Ղարաբաղի կոմիսար, մինչև որ հարցը լուծւի Վերսայլի վեհաժողովում:

Նոյն օրը Ղարաբաղից եկած սպաներին առաջնորդում եմ զինուորական նախարարութիւն և ներկայացնում նախարար Ք. Աբաբատեանին: Յայտնում եմ, որ Ղարաբաղից եկած սպաները բոլորը եղել են Արևմտեան ճակատում, կրակ ու բոցի միջից անցած, թրծւած մարդիկ և ամէնքն ուղում են ծառայել հայկական բանակում և միաժամանակ խնդրում են, ըստ ընդունւած զինուորական օրէնքի, աստիճանների համապատասխան բարձրացում կատարւի, նկատի ունենալով իրենց ծառայութեան ժամանակամիջոցը:

Զինուորական նախարարը յայտնեց, որ բաւական բռնւած են բոլոր տեղերը, այնպէս որ, նոր մարդիկ ընդունել չեն կարող: Յայտնեցի, որ Ռուբէն Տէր Մինասեանը գիտէ Ղարաբաղից եկած սպաների մասին և պիտի տեսնւի իր հետ: Յայտնեցի նաև, որ Զանգեզուր-Ղարաբաղի ընդհանուր կոմիսար Ա. Շահմազեանը պահանջ է ղրել կառավարութեան, 30 սպայ ուղարկելու Զանգեզուր, և Շահմազեանն այդ մասին կառավարութեան հետ խօսելու համար օգոստոսի կէսերին յատուկ ներկայացուցիչ է ուղարկել Երևան:

Նախարարն ասաց, որ այդ մասին իրեն ոչինչ յայտնի չէ:

Հոկտեմբեր 31-ին Ռուբէնը յայտնում է, թէ Բիւրօն որոշել է, որ ևս վերադառնամ Ղարաբաղ, ուստի առաջարկում է պատրաստւել՝ զաղտնի կերպով անցնելու այնտեղ:

Ես յայտնում եմ իմ համաձայնութիւնը հետևեալ պայմաններով՝

ա) Ղարաբաղ մարդ ուղարկելը պիտի լինի խիստ զաղտնի, բացի Բիւրոյից ուրիշ ոչ ոք չպիտի իմանայ մինչև մարդու տեղ հասնելը,

բ) Ղարաբաղի համար բաց թողնել 50 միլիոն կովկասեան կամ 60 միլիոն Բազւի քաղաքային վարչութեան կամ Ադրբէջանի դրամ,

գ) Նչանակել մէկին որպէս պետական վերահսկիչ ծախսումների վրայ, հսկելու և հաշիւ պահանջելու,

դ) Խիստ զաղտնի նշանակել մէկ հմուտ զինուորականի, որպէս Ղարաբաղի մարտական ուժերի հրամանատարի, որը պէտք է լինի առնւազն 35 տարեկան և Ղարաբաղում պիտի ապրի իբրև մասնաւոր մարդ,

մինչև ռազմական գործողությունները սկսելը: Ռազմական գործողություն սկսելուց նա պիտի Երևան դայ, և

ե) Հարկադրել Ղարաբաղ վերադառնալու այնտեղից դուրս եկած գործիչներին, որոնք գտնւում են Երևանում:

Խնդրում եմ, որ Բիւրօն, համաձայն Ղարաբաղի Ազգային Խորհրդի մայիսի 15 թւակիր գրութեան և ըստ դինւորական համապատասխան օրէնքի, կարգադրի, որ Արտաչէս Վարդապետեանին տրւի զնդապետութեան աստիճան, և նա կը լինի նոր նշանակւած հրամանատարի օգնականը. բացի դրանից, Արտ. Վարդապետեանի ներկայացրած ցուցակով, Ղարաբաղում գտնւած սպաներին հաչւել հայկական բանակի սպաներ, համապատասխան կերպով նրանց աստիճանները բարձրացնելով:

ԴՐՈՅԻ ՄՕՏ

Նոյեմբեր 1-ին Դրոյի մօտ եմ. խնդրում եմ միջնորդել դինւորական նախարարի մօտ՝ Ղարաբաղի սպաներին հաչւելու իրրև հայկական բանակի սպաների, որոնց ցուցակը ներկայացրել է Ա. Վարդապետեանը. ապա իմ կարծիքն եմ յայտնում, որպէս առաջարկ, որ ինքն անցնի Զանգեզուր, որպէս Զանգեզուր-Ղարաբաղի ռազմական ուժերի ընդհանուր հրամանատար, օգնականներ ունենալով Ա. Շահմազեանին, որը կը վարէ միաժամանակ քաղաքացիական-վարչական գործերը, և Գ. Նժդեհին, որը կը մնայ Ղափանում և Գողթանում՝ այնտեղի ինքնապաշտպանութեան գործը վարելու: Ապա լուրջ կերպով պիտի մտածել Հայի Սամլուն գրաւելու մասին:

Դրօն պատասխանում է, որ ինքը որպէս դինւորական նախարարի օգնական, հեչտութեամբ չի կարող հեռանալ Երևանից, անկախ իր կամքից, սակայն խոստանում է լրջօրէն զրաղւել այդ խնդրով:

Դրոյին յիշեցնում եմ, ապա նոյնը կրկնում Ռուբէնին, Արսէն Շահմազեանի պահանջների մասին՝

1) Ուղարկելու Զանգեզուր 30 սպայ,

2) Միանւագ բաց թողնել 25 միլիոն ռուբլի,

3) Երկու միլիոն մոսինի փամփուշտ,

4) 50 մահճակալանոց հիւանդանոցի լրիւր պարագաները, բուժակուհիներով հանդերձ,

5) Անպայման Արսէն Շահմազեանին տալ գնդապետի աստիճան, թէև նա այդ մասին ինձ ակնարկ իսկ չի արել, սակայն անյարմար է նրա համար, որպէս կապիտանի, հրամայել աստիճանով իրենից բարձր դինուորականի, գնդապետի, որպիսին այնտեղ ճակատներից մէկի հրամանատարն է, և թիւրիմացութիւններ են տեղի ունենում,

6) Որ չատ կարևոր է, Զանգեզուր ուղարկել մի մարտկոց ևս, որ աւելի կը բարձրացնէ ժողովրդի ռազմական ոգին և աւելի կաղդէ թշնամու հոգեկանի վրայ: Այս մասին նոյնութեամբ ասել եմ նաև Ա. Գիւլխանդանեանին և Սարգիս Մանասեանին:

Նոյեմբեր 2-ին Ռուբէնը յայտնում է, թէ Արսէն Շահմազեանից գրութիւն է ստացած, որով հրաժարական է ներկայացրել, որ իր փոխարէն ուղարկեն մէկ ուրիչին: Ես ասում եմ, թէ պէտք է բաւարարել նրա պահանջները, նա չի կարող առանց սպանների, դրամի և ռազմամթերքի երկիր պահել: Ուրիչ մէկը չպիտի կարողանայ այնտեղ գործ անել, եթէ գնացողը ժողովրդին ու երկրի պայմաններին անծանօթ լինի: Շահմազեանին ճանաչում է ոչ միայն Զանգեզուրը, այլև ամբողջ Ղարաբաղը գիտէ նրան, որին փոխարինող մարդը հազիւ թէ կարողանայ ունենալ նրա հեղինակութիւնը և այն յարգանքը, որ նա վայելում է Զանգեզուր-Ղարաբաղի ժողովրդի մօտ:

Նոյեմբեր 3-ին Հրանդ Բահաթրեանը երկար զրոյց ունեցաւ ինձ հետ և իր դժգոհութիւնը յայտնեց, թէ այլևս Երևանում երկար սպասել Ղարաբաղի խնդրով չի կարող: "Նախ համոզուած եմ, որ Հայաստանի կառավարութիւնը իրական ոչինչ չպիտի անի Ղարաբաղի համար. Փաջաղնունին չատ ճիչտ էր ասել, որ կառավարութեան վրայ յոյս չդնէինք, համաձայնութեան գայինք Ադրբէջանի կառավարութեան հետ, մի կերպ եօլա գնալու մինչև Վերսայլի Վեհաժողովի վճիռ կայացնելը: Այո, կառավարութիւնը ոչինչ չպիտի կարողանայ անել: Երկրորդ, այստեղ մնալով զործին օգտակար չպիտի լինեմ և չեմ էլ կարող լինել, անկախ իմ կամքից, ուստի պէտք է վերադառնամ Թիֆլիս, մանաւանդ որ ապրուստի միջոց էլ չունեմ:

Հրանդի հետ մեկնում է նաև Սերգէյ Ադամեանը, յոյս չունենալով, որ կը յաջողի ծառայութեան մտնել հայկական բանակում, մանաւանդ որ դինուորական նախարարն ասել էր, որ աղատ տեղ չունեն:

Նոյն օրը երևկոյեան Ղարաբաղից զալիս է Ներսէս Նասիրեանը, կենսորոնական Կոմիտէի և Ազգային Խորհրդի կողմից տրուած լիազօրութիւնով:

Ներսէսը ըներել էր Ասատուր Աւետիսեանի տեղեկագիրը՝ ուղղած Բիւրոյին: Տեղեկագիրը, պարզապէս, կարելի է անուանել ղրպարտագիր:

Ինչպէս տեղեկացայ, ըստ տեղեկագրի ա) Ղարաբաղի ղինուորական չտաբը կազմած է աւազակներից, ինչպիսիք են՝ Արտաշէս Վարդապետեան, Մարտիրոս Այվազեան, Մարտիրոս Արդումանեան, բոլորը դաշնակցականներ, վերջինը, ինչպէս և "տեղեկագիրը" պատրաստողը՝ կենտրոնական կոմիտէի անդամներ, բ) Նախկին Ազգային Խորհրդի անդամներ Աչոտ Մելիք Յովսէփեանը և Հրանդ Բահաթրեանը, որոնց պաշտպանում է եղիչէ Իշխանեանը, բայց չպիտի հաւատալ նրանց, որովհետև երկուսն էլ իւրացրել են Ազգային Խորհրդի ղրամները: Պարզ ղրպարտութիւններ, իրականին մէջ ոչ Աչոտ Մ.Յովսէփեանը և ոչ էլ Հրանդ Բահաթրեանը, Ազգային Խորհրդի ղրամների հետ առնչութիւն չէին ունեցել բնաւ: Ազգային Խորհուրդն ունեցել է իր գանձապահը, որը միաժամանակ եղել է նաև հաշւապահը, որը առանց Ազգային Խորհրդի որոշման կամ հրահանգի ղրամարկղից մէկ սանտիմ իսկ դուրս չէր հանի:

"Տեղեկագրի" մէջ չի խնայւած և ոչ մի սպայ, թէ չտաբի կազմից և թէ չրջանների ինքնապաշտպանութեան գործը վարողներից, բոլորը, բոլորը աւազակներ են և բոլորի մեղքը պարզապէս բարդւում է իմ վրայ:

Այդ մասին յայտնում եմ Արտեմին, որ մի քանի օրով Ղարաքիլիսէից եկել էր Երևան, զինամթերքի համար զանազան պիտոյքներ ձեռք ըերելու: Արտեմին զարմանք չի պատճառում, որովհետև գիտէր, որ Կենտրոնական Կոմիտէի նոր կազմի մէջ էր մեղապարտ մէկը, որի գործած յանցանքը յայտնի չէ եղած մեր չարքերին, և նա, օգտւելով առիթից, ինտրիգ է արել, կենտրոնական Կոմիտէի կազմին լարել նախկին Ազգային Խորհրդի և նրան ենթակայ ղինուորական չտաբի դէմ: Այդ ճարպիկ ինտրիգանը[47] բժիշկ Արտաշէս Գանջեցեանն էր, դաշնակցութեան առաջին չրջանի չարքայիններից մէկը: Շուշու Գանջեցեան մեծատան զաւակ, որի հայրը՝ կարապետ Գանջեցեանը, մետաքսի թելի մանարաններ է ունեցել ժամանակին թէ Գանձակի և թէ Շուշու գաւառում, բացի այդ, ամէն տարի Գանձակի և Շուշու գաւառում մետաքսի բոժոժը գնում, տանում էր Մարսէլ ծախելու:

Արտաշէս Գանջեցեանը, միջնակարգ կրթութիւնը Կովկասում աւարտելուց յետոյ, գնացել էր Ժընև ուսանելու և, ինչպէս յատուկ է մեծատան լաճերին, ուշիմ ուսանող չէր եղել, չէր

[47] «Ինտրիգան». մարդը, որը որոշակի նպատակների հասնելու համար խամաչուիկ է սուեղծում, փոլարկած, խարդախ միջոցներով գործում, սուտ, վիչացնում յարաբերութիւնները: (Խմբ.)

չտապել չուտ աւարտելու, որովհետև, ապահոված միջոցների տէր լինելով, ուսանողութեան տարինները սովորական ժամանակաշրջանից շատ երկար, ութ-տաս, տարի է տևում և յայտնի է դառնում յափտենական ուսանող անունով: Երկար տարիների բացակայութիւնից յետոյ, 1917 թ. ամռանը երևաց Շուշում, իր ղւիցերիացի կնոջ հետ, որպէս ղինուորական բժիշկ, համապատասխան տարազով: Պատերազմի ժամանակ, ինչպէս շատ բժիշկները, նա էլ կանչւել էր բանակ:

Տաճիկները մուտք գործելով Ղարաբաղ, իրենց հետ բերին "իսպանկա" կոչւած և բծաւոր տիպ հիւանդութիւնները, որոնք աւէր էին գործում թէ թուրքերի և թէ հայերի մէջ: Երկու հիւանդութիւնները շատ զոհեր խլեցին հայերից և շատ աւելի մեծ թիւով թուրքերից: Հիւանդութիւնները տարածւել էին և մեր գիւղերում, մասնաւորապէս շատ էր տուժում Ջրաբերդի չրջանի գիւղացիութիւնը, որը քաղաքից հեռու գտնւելով, բոլորովին անօգնական վիճակում էր: Ազգային Խորհուրդը որոշեց քաղաքում գտնւած բժիշկներին ղիմել և համողել՝ գաւառ գնալու: Համաձայնութիւն տւող բժիշկներից մէկը եղել էր բժ. Արտաչէս Գանջեցեանը, որը, 8000 ռուբլի կանխավճար ստանալով, պիտի գնար Ջրաբերդի չրջանը, հաստատուէր կենտրոնական Կուսապատ կամ Մարդակերտ գիւղում, որ մէկում որ յարմար նկատէր: Որոչած ժամանակին չմեկնեց իր պաշտօնավայրը, ուստի մի քանի անգամ անձամբ ինքս եղայ իր տանը, շատ քաղաքավարի կերպով, մանաւանդ որ աւագ ընկեր էր համարւում, յիշեցրի, որ գաւառում սրտատրոփ սպասում են իրեն, իսկ չրջանի հրամանատար Բագրատ Ղազանչեանը իւր նամակներով գիւղացիների և իր վրդովմունքն է յայտնում, որ չենք արձագանքում իրենց կոչերին: Եւ չարունակ կը խնդրէր, որ Թոյլատրւի մէկ չաբաթ յետոյ մեկնել, և երբ ձգձգեց բաւական, Ասլան Շահնազարեանն ու Տիգրան Տէր Գրիգորեանը կասկած յայտնեցին, թէ գուցէ չի ուղում կնոջից բաժանւել և կուզենար միասին գնալ: Նկատի ունենալով այդ պարագան, պարզ ասացի իրեն այդ մասին, որ կնոջն էլ կարող է հետը տանել, քանի որ գաւակ չունեն, ինչու մենակ մնար. սակայն պատասխանեց, թէ կինը մենակ չի լինի, իւրայինների հետ և իր սնպհական տանն է գտնւում, պէտք չկայ գաւառ տանելու, ինքը մենակ կերթայ: Եւ երբ վերջին անգամ որոչած օրը չմեկնեց, Ազգային Խորհրդի որոչմամբ, մի չաբաթ մեր աքսորւելուց առաջ, տասն օր ժամանակ էին տւել, որ մեկնէր գաւառ, սպառնալով, որ եթէ չմեկնէր, պիտի ղիմէինք խիստ միջոցների: Ուրբաթը չաբաթից չուտ եկաւ, մեզ աքսորեցին, և պատասխանատուութիւնից ազատւեց:

Արտաչէս Գանջեցեանը Շուշեցի Վարդան Վարդապետեանի հասցէով Բիւրոյին ուղղած նամակում անւանել էր ինձ լակոտ, սրիկայ, լիրբ և հարց էր ղրել վռնդելու դաչնակցութիւնից: Նրա

ունեցած հակառակութիւնը այն օրւանից էր սկսել, երբ չատ խստիւ յայտարարեցինք Ազգային Խորհրդի անունից, որ որոշուած օրը չմեկնելու համար նոյն իսկ կը բանտարկւի և յետ կը պահանջւի դրամը: Հարկաւ, Գանջեցեան մեծատան զաւակի համար չատ մեծ նայտառակութիւն կը լինէր իր բանտարկւելը: Մեր աքսորւելուց յետոյ Ազգային Խորհուրդը քայքայւում է, ութ հոգուց մէկը՝ Ի. Միրզաբէկեան, վախճանւել, չորս հոգին Ղարաբաղի սահմաններից դուրս՝ Հր. Բահաթրեան, Ա.Մ.Յովսէփեան, Ե. Իշխանեան և Մ. Եսայեան. մնացորդ երկք անդամներից Ա. Շահնազարեանը և Ա. Մ. Միքայէլեանը գաւառում, քաղաքում մնացած է լինում միայն Տ. Տէր Գրիգորեանը: "Ապառաժի" կենտրոնական կոմիտէի եռանդամ կազմից Աատուր Աւետիսեանը և Եղ. Իշխանեանը աքսորւած, երրորդ անդամը՝ Գր. Աբեան, բնականաբար չէր կարող կենտրոնական Կոմիտէն ներկայացնել, ուստի թէ Ազգային Խորհրդին և թէ կենտրոնական Կոմիտէին նոր մարմիններ պէտք է փոխարինէին և նոր կենտրոնական Կոմիտէ կազմելիս բժ. Ա. Գանջեցեանն էլ հրաւիրւում է մարմնի մէջ: Եւ Ա. Գանջեցեանը, որպէս հին ընկեր, աւագութեան հանգամանքով որոշ ազդեցութիւն ունենալով, թելադրութիւններ էր անում: Մեր սխալի արդիւնքն էր, չատ փափկանկատ եղանք, նրա արարքը չուզեցինք ղրանորւի, յուսալով, որ կանցնէր իր ստանձնած պարտականութեան կատարմանը՝ դաւառ գնալով, չգնաց և իր մեղքը փորձեց ուրիշների վրին փաթաթել: Հրանդ Բահաթրեանին ու Աչոտ Մ. Յովսէփեանին յաչս Բիւրոյի ներկայացնելով իբրև Ազգային Խորհրդի ղրամները իւրացնողների: Կ.Կ.-ի նոր կազմի անդամները, անտեղեակ Ա. Գանջեցեանի փորացաւին, լրւելայն ենթարկւում են նրա թելադրանքներին:

Արտանի հետ միասին ղրուցում ենք սրճարանում. եկաւ, միացաւ մեզ Անուշաւան Տէր Միքայելեանը, աչտարակցի, Գէորգեան հնմարանաւարտ, երկար տարիներ, 1907 թ. ի վեր, Շուշու թեմական դպրոցի ուսուցիչ և կուսակցական ընկեր, որը նոյնպէս նոր էր եկել Երևան, ընտանեօք: Անուշաւանը պատմեց, թէ Վարդան Վարդապետեանը ղեկուցելով Բիւրոյին Ազգային Խորհրդի գործունէութեան մասին, Խորհրդի անդամներին որակել է խարդախներ: Պապաչան, բժ. Յով. Տէր Դաւթեանը, Աբր. Գիլլանդանեանը, Սաքօ Արարատեանը և Սարգիս Մանասեանը խիստ նկատողութիւն են անում: Բժ. Տէր Դաւթեանը յարձակւում է Վարդանի վրայ, հարց տալով՝ "մի՞թէ եղիչէն խարդախ է". Վարդանը կարկամում, լեզուն ծամծմում է:

Վարդանը չափազանց միամիտ մարդ էր և երբեմն տակից-գլխից խօսող: Վարդանից յետոյ Անուշաւանն է ղեկուցում տալիս նախկին Ազգային Խորհրդի գործունէութեան մասին. ճիշտ հակառակ Վարդանի տւած ղեկուցման, դրական կարծիք յայտնում

և բացատրում է, թէ ինչու դժգոհ են Վարդանն ու նմանները: Պարզում է մէկ հանգամանք, որ Ազգային Խորհրդի չաքսուած անդամները չեն կարողացել տոն տալ ոչ միայն ընդհանուր գործին, այլև պահել իրենց ձեռքում գինուորական չտաքը: Չի եղել մէկը, որ կարողանար իւր հեղինակութեամբ հաւասարակշռութիւն պահպանել գործօն ուժերի մէջ, և դորանով զարկ են տուել պառակտուածութեան: Եւ բժ. Գանջեցեանը, իւր համախոհներով միասին, ուղում են մեղքը բարդել իմ վրայ:

Նոյեմբեր 3-ին Սիմոն Վրացեանի բնակարանում, Բիւրոյի նիստին, Ներսէս Նասիբեանը, որ նոր էր եկել և պիտի զեկուցում տար, չգիտէը ժողովի տեղը, ուստի ուղեկցեցի իրեն մինչև ժողովատեղին. Ներսէսն առաջարկեց, որ միասին ներս գնանք, հրաժարուեցի, պատճառաբանելով, որ անյարմար է առանց հրաւէրի իմ ներկայ գտնուելը՝ Незваный гость хуже татарина,[48] մոռացել ես ռուսական առածը:

Նոյեմբեր 4-ին հանդիպեցի բժ. Բաբալեանին, և դրոյցով բռնեցինք, նիւթը Արսէն Շահմազեանին մէկ ուրիշով փոխարինելն էր: Բաբալեանը յայտնում է, որ զեկավար շրջանում հակուած են Արսէն Շահմազեանի փոխարէն մէկ ուրիշին ուղարկելու, և խօսւում է Սերգէյ Մելիք-Եօլչեանի թեկնածութեան մասին: Ես դէմ եմ արտայայտւում ոչ միայն Ս. Մելիք-Եօլչեանին, այլ և բոլոր այն թեկնածուներին, որոնց ժողովուրդը չի ճանաչում:

Նոյեմբեր 6-ին Արտեմը եկաւ մօտս՝ հրաժեշտ տալու. նոյն օրը պիտի մեկնէր Ղարաքիլիսա: Ռուսական "У кого что болит, о том и говорит"[49] առածի համեմատ, մենք էլ հանդիպելիս մեր ցաւից, Զանգեզուր-Ղարաբաղի հարցի չուրջ կը խօսէինք: Արտեմը ասաց, որ Անուշաւանին լսելուց յետոյ, պատմել է Վարդան Վարդապետեանին ու վէճի բռնւել հետը և կշտամբել:

Ասացի՝ իղուր ես վէճի բռնել, կշտամբել, չպէտք է ուշադրութեան առնել, լաւ գիտես, որ Վարդանը առանց խորանալու, միամտաբար կը խօսի, բաներ կասի և յետոյ էլ կը փոչմանի:

– Ոչ, նմաններին պէտք է զգաստացնել և այդ նպատակով խստիւ կշտամբել, Վարդանին ղէմ եմ արել պատին և, ինչպէս պէտք էր, լաւ չչպոկել , որ զործիք է դարձել Գանջեցեանին: Ձես կարող պատկերացնել, չչպոկելու հետևանքով, դարձել էր Թրջած հաւ: Ձիշտն ասած, չեմ Թաքցնում, ես եկել եմ այն եզրակացութեան, որ Հայաստանի կառավարութիւնը ոչինչ չպիտի կարողանայ անել յօդուտ Ղարաբաղի. Սուլթանովը չատ պինդ է նստած իր տեղում, Թիկունք տւած խարդախ Ալիխանին: Եւ իղուր ժամանակին

[48] Անվէր հիւրը Թաթարից վատ է: (Խմբ.)
[49] Ում ինչը ցաւում է, այդ մասին էլ խօսում է (ռուս.): (Խմբ.)

չհետևեցինք Քաջաղնունու տաճ խորհրդին, համաձայնութեան գը գտնելու Ադրբէջանի կառավարութեան հետ, սպասելով Վէրսալի վեհաժողովի որոշման: Դու ինքդ էն օրը քո դիտողութիւններն էիր անում, որ կառավարութեան իշխանութիւնը ներսում թոյլ է, որ մեղ մօտ, Ղարաբաղում, Ազգային Խորհրդի իշխանութիւնը չատ աւելի էր զգացւում, քան այստեղի իշխանութիւնը: Արովեան փողոցի վրայ նկատել էիր, թէ ինչպէս մայթով անցնող Աբրահամ Գիւլխանդանեանի պէս մարդուն, որ երկրի նախարարներից մէկն է, մայթի վրայ եղած մարդիկ փոխանակ ճամբայ տալու, իրարու հրելով, հրել էին և Աբրահամին այնպէս, որ քիչ էր մնացել, ընկնէր, իսկ հինգ քայլի վրայ փողոցում կանգնած միլիցիոները լուռ ու մունջ նայում էր: Միլիցիոներն էլ արտաքինով չորանի էր նմանում իր հագուստ-կապուստով, մանաւանդ ուսից կախած հրացանով, որ կաչէ փոկի փոխարէն թոկ էր կապած վրան: Եւ որովհետև ոչ Բիւրօն և ոչ էլ կառավարութիւնը լուրջ կերպով էին մօտենում խնդրին, պէտք էր թողնել, որ իրենք իրենց ուղած ձևով վարեն զործը: Արտեմը վերադառնում է իր պաշտօնավայրը՝ Ղարաքիլիսէ:

ԴԱՐՁԵԱԼ ՌՈՒԲԷՆԻ ՄՕՏ

Նոյեմբեր 6-ի առաւօտեան զնացի Ռուբէնի մօտ, իր բնակարանը. նոր էր վեր կացել. հրաւիրեց մի բաժակ թէյի և խօսեց Ղարաբաղի մասին, որ Ներսէս Նասիբեանի զեկուցումը լսելուց յետոյ կրկին զրաւել են Ղարաբաղի խնդրով ու որոշ նդրակացութիւնների յանգել: Ղարաբաղի պահանջներին բաւարարելը յանձնարարւած է իրեն ու Արչակ Ջամալեանին: Ինքը և Արչակը

ա) նկատի ունեն Ղարաբաղի համար, որպէս զինուորական զեկավարի, Գրիգոր Մարջանեանին, որ դաղտնի պիտի անցնի Ղարաբաղ և զաղտնի մնայ այնտեղ, հրահանգ տալով իւր օդնականի միջոցով և հրապարակ զայ պահանջած մոմենտին, որ նա էլ պատրաստւում նրա հետ կամ առանձին վերադառնալու Ղարաբաղ: Ռուբէնը Մարջանեանի մասին պատմում է, որպէս փորձառու և բանիմաց մարդու:

բ) Բաց թողնելիք դրամի խնդիրը կրկին քննութեան առնել Բիւրոյի նիստին և որոշում կայացնել:

գ) Բաց թողնելիք դրամների համար, իբրև վերահսկիչ կառավարութեան, նշանակել Արսէն Միքայէլեանին, որ նոր է եկել Ամերիկայից:

Ռուբէնին յայտնում եմ համաձայնութիւնս, որ նա էլ նոյն կարծիքին եմ, Ղարաբաղ անցնող զինուորականը դաղտնի մնայ, խորհրդաւորութեան մէջ, մեր ժողովուրդն էլ, արևելեան միւս ժողովուրդների պէս, խորհրդաւորութիւնից ազդւող է: Զինուորական

ընդհանուր ղեկավարը իւր օղնականի և չտաբի պետի հետ միասին տեղում կը մշակեն ինքնապաշտպանութեան ծրագիրը, որ առաջին հերթին կատարելիք աշխատանք է: Գործը պիտի ինքնապաշտպանութիւն անուն ու նպատակն ունենայ, երբէք ապստամբութեան մասին խօսք չպիտի լինի, որովհետև աւելի քան պարզ ու հասկանալի է, առանց բաւարար քանակութեամբ ռազմամթերք ունենալու, Ղարաբաղը չի կարող և չպիտի ապստամբի, այլապէս ծանր կորուստ կունենայ և յաջողութիւն չի արձանագրի: Բացի այդ,որ չատ կարևոր է և էական, Ղարաբաղը կարող է ապստամբել այն ժամանակ, երբ կառավարութիւնը որոշի, ինչ գնով լինի, Սիւնիքի սրտում սեպի պէս խրուած քրդական Հաջի Սամլուն տեղահան անել: Եթէ Հաջի Սամլուն գրաւելու և տեղահան անելու նպատակ չունենանք, Ղարաբաղում սկսուած ապստամբութիւնը անկասկած կը վիժի:

Որպէս ղրամների վերահսկիչ Արսէն Միքայէլեանը չատ յարմար է. Ամերիկայից նոր եկած մարդ է, մխանգամայն ղերծ վարկաբեկիչ որևէ արարք գործած լինելու ամբաստանութիւնից, ինչպէս չատերը, որոնց մասին խօսում են, մեղադրելով իրրև ընչասէրների:

Ինչպէս առաջին անգամ ասել եմ, իր հետ ունեցած ղրոյցի ընթացքին կրկնեցի, որ բաւարար չափով ղրամ բաց թողնի Ղարաբաղի համար, քանի որ պետական վերահսկիչ պիտի լինի, որը պիտի գիտենայ, թէ գանձարկղից դուրս տրուող ղրամը ինչ նպատակով պիտի ծախսուի, և ղրամը պիտի բաց թողնէ պաշտօնական "օրդըրով", ստացողի ստորագրութեամբ:

Ապա Ռուբէնը յայտնեց, որ առաջարկ կայ Արսէն Շահմազեանի փոխարէն Զանգեզուր ուղարկել Սերգէյ Մելիք Եօլչեանին, և առաջարկ անողներն են ընկերներ Աբրահամ Գիւլխանդանեանը, Գերասիմ Բալայեանը և Զաքար Եօլեանը: Ս. Մ. Եօլչեանը, որպէս նահանգական կոմիսար, կը վարէ քաղաքացիական բաժնի գործը, իսկ իբրև ռազմական ուժերի հրամանատարի, նոյն ընկերները առաջարկում են ուղարկել այնտեղ զնդապետ Ղազարովին: Ընկերները վկայում են, որ Ս. Մ. Եօլչեանն ու զնդ. Ղազարովը Բագուում միասին են աշխատել բնակարանային կոմիտէի մէջ և միչտ եղել են համերաչխ ու սերտ կապուած իրարու հետ:

Ռուբէնին ասացի. "Ընդունելով միանգամայն ճիչտ ընկ. Աբրահամի, Գերասիմի և Զաքարի վկայութիւնը, որպէս Բագուում աչխատած իրաղեկ գործիչների, և լաւատեղեակ Ս. Մ. Եօլչեանի ու զնդ. Ղազարովի համերաչխ ու գնահատելի գործունէութեանը, սակայն գտնում եմ միանգամայն անչարմար նրանց Զանգեզուր

ուղարկելը Արսէն Շահմազեանի փոխարէն: Զանգեզուրը Բազու չէ և ոչ էլ Զանգեզուրի կոմիսարիատը ընակարանային կոմիտէ: Նրանք չեն կարող փոխարինել Ա. Շահմազեանին, որն արդէն հեղինակութիւն է դարձած Զանգեզուր-Ղարաբաղում, որպէս Անդրանիկի փոխանորդը: Անդրանիկը ամբողջ հայ ժողովրդի կողմից ճանաչւած էր իբրև ազգային հերոսի, ինչպէս հայկական զաւառներում, նոյնպէս և Զանգեզուր-Ղարաբաղում, Անդրանիկի համբաւը վաղուց տարածւած էր և նրան նւիրւած աշուղական երգերն էին երգւում ամենուր: Անդրանիկը, Զանգեզուրից հեռանալիս, երկու գրութիւն էր ուղղել Ղարաբաղի հայութեանը և Ազգային Խորհրդին, որ ինքը հարկադրւած է հեռանալ Սիւնեաց աշխարհից: Սակայն իրեն փոխարինելու է Արսէն Շահմազեանը և կոչ էր արել բոլոր հոսանքներին դարձեալ նոյն համերաշխութեամբ աշխատել ու չնեղաշարկւել Ադրբէջանի իշխանութեանը: Ժողովուրդը անվերապահօրէն ընդունում է Անդրանիկի պատգամը և աւելի յարգանք տածում Ա. Շահմազեանին, որպէս Անդրանիկի փոխանորդի: Ժողովուրդը պարզ արտայայտւում է, թէ Ա. Շահմազեանը արժանաւոր մէկն է: Այս պարագան շատ և շատ կարևոր է, և բնաւ չպէտք է մոռացութեան տալ: Եւ եթէ ես համաձայնում եմ գնալ Ղարաբաղ, դա պարզ այն յոյսով, որ Շահմազեանը պիտի մնայ Զանգեզուրում, ուշի-ուշով հետևելու մեր գործունէութեան ընթացքին և աջակցելու մեզ, իր ունեցած հնարաւորութեան սահմաններում:

Գօրիս նղածս ժամանակ յաճախ մտքերի փոխանակութիւն ենք ունեցած Շահմազեանի հետ և մեր տեսակէտները, Զանգեզուր-Ղարաբաղի վերաբերեալ, նոյնն են եղել, առանց ամենադոյզն տարբերութեան: Համոզւած եմ, որ նա մնացած է իր նոյն տեսակէտին:

Արդ, պարզ է, որ Արսէն Շահմազեանը պէտք է մնայ իր տեղում, և Ս. Մ. Եօլչեանին և Ղազարովին չպիտի ուղարկել: Ի ղէպ, Ս. Մ. Եօլչեանը Սիսիանի Մաղրա գիւղացի է և նա իրենց գիւղից դուրս չի ճանաչւած Զանգեզուրում:

Նոյեմբեր 7-ին հասնում է Ա. Շահմազեանի սուրհանդակ Բիճ Լևոնը, բերելով Շահմազեանի գեկուցագիրը՝ ուղղւած կառավարութեանը, որով յայտնում է, թէ նոյեմբեր 4-ին, առաւօտեան 5-ին, արևելեան ճակատից՝ Հաջի Սամլուից Ադրբէջանեան վեց հազարանոց բանակը յարձակում է սկսել, և կռիւները չարունակւում են:

Արչակ Շիրինեանը խիստ յուղւած յայտնեց, որ արդէն որոշւած է՝ Ս. Մ. Եօլչեանին ուղարկել Զանգեզուր, որպէս նահանգային կոմիսարի, իսկ զնդապետ Ղազարովին, զօրավարի

աստիճան տալով, որպէս ռազմական ուժերի հրամանատարի: Արշակի հետ միասին գնում ենք Սարգիս Մանասեանի մօտ և այդ առթիւ մեր դժգոհութիւնը յայտնում: Արշակն ասաց՝ Ս. Մ. Եօլչեանին և գնդ. Ղազարովին Զանգեզուր ուղարկելով, պարզապէս, "արջի ծառայութիւն է" մատուցում զործին:

Նոյեմբեր 8-ին Գ. Մարջանովը չի համաձայնւում Ղարաբաղ գնալ. ուստի 9-ին Ղազարովը իր զօրամասի սպաներից մէկի՝ չաբի կապիտան Մեսեանի թեկնածութիւնն է առաջարկում, որին փոխ-զնդապետի աստիճան տրւի և ուղարկւի Ղարաբաղ: Գեներալի առաջարկը ընդունւում է:

Պառլամէնտի չէնքում յանկարծ զօրավար Արարատեանին պատահեցի ներքին յարկում, ուղում էր ելնել դուրս, բարևելով մօտեցայ իրեն, ասացի մի բան եմ ուղում յայտնել, զօրավարը կանգ առաւ: Ասացի. "Պարոն Զօրավար, յիշում էք երեի, որ Ղարաբաղի զինուորական նախկին հրամանատար կապիտան Ա. Վարդապետեանի համար Ղարաբաղի Ազգային Խորհրդի կողմից խնդրեցի, նկատի ունենալով նրա երկու տարւայ ինքնազոհ աշխատանքը, զնդապետութեան աստիճան տալ, մերժւեց, իսկ հիմա Ղարաբաղին անծանօթ մէկին չտաբի-կապիտանի աստիճանից բարձրացրել, փոխ-զնդապետ էք դարձրել և ուղարկում էք Ղարաբաղ:

– Դա իմ կամքից դուրս կատարւած զործ է, եղաւ պատասխանը:

Նոյեմբեր 9-ին պաչտօնապէս յայտնի է դառնում Ս. Մ. Եօլչեանի և գնդ. Ղազարովի նշանակւելը, առաջինը իբրև նահանգական կոմիսար և երկրորդը՝ իբրև հրամանատար Զանգեզուրի: Արշակ Շիրինեանը բողոքում և ասում է, թէ հրաժարւում է Զանգեզուր գնալուց:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱՅԻ ՍԵՆԵԱԿՈՒՄ

Նոյեմբեր 10-ին խորհրդարանի չէնքում, դաշնակցական ֆրակցիայի սենեակում խառն ժողով է տեղի ունենում. Բիւրոյի անդամներից ներկայ են՝ Ռուբէն, Վրացեան, Ջամալեան, Գէորգ Ղազարեան, Աբ. Գիւլխանդանեան և Զանգեզուր-Ղարաբաղցիներ՝ բժ. Ա. Բարալեան, Գ. Բալայեան, Ն.Նասիբեան, Ա. Միքայէլեան, Զաք. Եօլչեան, Ս. Մ. Եօլչեան, գնդ. Ղազարով, փոխ-գնդ. Մեսեան և ես: Արշակ Շիրինեանը հրաժարւեց ժողովին մասնակցելուց: Ժողովը "ինֆորմացիոն" բնոյթ ունէր, Ռուբէնը յայտնում է, որ Բիւրօն Հանգամանօրէն զրաղւելով Զանգեզուր-Ղարաբաղի

խնդրով, իւր որոշումներն է կայացրել, որ ներկայացւած է կառավարութեանը, որը պաշտօնապէս պիտի ընթացք տայ: Զեկուցում է, թէ ովքեր և ինչ պաշտօններով պիտի գնան Զանգեզուր-Ղարաբաղ աշխատելու, և Բիւրոյի յանձնարարութեամբ Զամալեանն ու ինքը պիտի միշտ հետևեն գործերի ընթացքին, չարունակ կապ ունենալով կառավարութեան հետ, յիշեցումներ անելով, Զանգեզուր-Ղարաբաղի դիմումներին ընթացք տալու և կարիքները բաւարարելու համար:

Ժողովը վերջանալուց յետոյ, Արչակը Ս. Մ. Եօլչեանին, Ն. Նասիբեանին, Արսէն Միքայէլեանին ու ինձ յայտնեց, որ մենք, Ռուբէնի հետ միասին խորհրդակցենք առաջին հերթին կարգադրելիք գործերի չուրջ: Դեռ խորհրդակցութիւնը չսկսած, մէկը եկաւ, Ռուբէնին խնդրեց դուրս, գնաց ու չեկաւ, հաւանօրէն չտապ կարգադրելիք գործ կար:

Առիթից օգտւելով ես կրկնում եմ հոկտեմբեր 31-ին Ռուբէնի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ առաջարկածս պայմանները և ասում՝ եթէ մերժւեն, ես Ղարաբաղ չեմ գնայ:

Արչակ Զամալեանը բարկանալով ասում է. "Հասկանալի և ընդունելի են քո պահանջները, երբ ուղում ես, որ նչանակւի մի ընկեր դրամների օգտագործման վրայ հսկելու և մէկ փորձւած դինւորական, ռազմական ուժերը ղեկավարելու համար. սակայն ղարմանում եմ, որ առանց խորը մտածելու, միանւագ 50-60 միլիոն ռուբլու պահանջ ես դնում. գիտե՞ս դա ինչքան փող է, մէկ վագոն, ինչպէ՞ս պիտի փոխադրէք: Նասիբեանի ներկայացրած պահանջը համեստ է և ընդունելի: Կառավարութիւնը հաղիւ կարող է 4-5 միլիոն ռուբլի բաց թողնել":

– Ինձ լաւ յայտնի է, թէ 50-60 միլիոն ռուբլին ինչ ծաւալ ունի և քաշը ինչքան է: Դուք ուղում էք, որ Ղարաբաղից, քրդական ու թրքական հորդաների միջով, խմբերով մարդիկ անցնեն Զանգեզուր, չալակներով ռազմամթերք փոխադրեն Ղարաբաղ, մտածե՞լ էք, թէ որքանով է դա հնարաւոր, մանաւանդ ներկայիս, երբ յարաբերութիւնները սրւած են մեր և Ադրբէջանի միջև: Հարկաւ, ղինւատար խմբերը ղինւած պիտի անցնեն թուրքերի միջով, որը աննկատ չի մնայ, բախումն անխուսափելի կը լինի և, ամէն անգամ, ընդհարւելուց պիտի փամփուչտ կրակի և մթերքի պաշարը պիտի պակսի յաջող դէպքում. իսկ անյաջողութեան դէպքում կարող է ոչ միայն մարդկային ղգալի կորուստ ունենանք, այլև մթերքի, որը թշնամու ձեռքը կընկնի: Պարզ է, մենք հին անյարմար ձևով փոխադրութիւն կատարել չենք կարող: Եւ քանի որ հնարաւորութիւն չկայ անհրաժեշտ քանակութեամբ ռազմամթերք փոխադրել Զանգեզուրից Ղարաբաղ, մենք, ինքնապաշտպանութեան նպատակ ունենալով, տեղում կը

կարողանանք Թուրքերից փամփուշտ գնել: Եթէ տարւայ սկզբներին, համաձայն մեր զրաւոր դիմումների, Բագւի մեր Կենտրոնական Կոմիտէն զրամ հասցրած լինէր մեզ երեք միլիոնի սահմաններում, մենք կը կարողանայինք, առանց չափազանցութեան, Խանքենդում հաստատւած Ադրբէջանական դասալքութեամբ բռնւած զօրամասի զինապահեստը զատարկել հէնց Թուրք զինւորների ձեռքով: Խանքենդցի մեր սպաներից մէկին յաջողւել էր կապւել զինւորների հետ, որոնք հարիւրներով փամփուշտ էին ծախում, հատը 40-50 կոպէկով: Ադրբէջանի զօրամասի զինւորները Մուղանի տափաստանի զիւղացիներ էին, բռնի հաւաքւած, անսովոր զինւորական ծառայութեան, չէին ուղում ծառայել, այն էլ զամւած զօրանոցում: Տասնեակներով փախչում էին, և Ադրբէջանի իշխանութիւնը առաջն առնել չէր կարողանում: Մեր զինւորական չտարին յաջողւում է թէ Խանքենդում և թէ այլուր Թուրք կոնտրաբանդիստներից գնել իննսուն հաղար փամփուշտ, հատը 60-70 կոպէկով և գնած այդ պաշարի չնորհիւ է, որ Դիլակի Դոլանլար զիւղը յարձակման է ենթարկւում ու պաշարւում, մերոնք ոչ միայն կարողանում են պաշտպանւել, այլև, հակայարձակման անցնելով, թշնամուն մեծ կորուստ պատճառելով, յետ են չպրտում զիւղի սահմաններից: Հիմա փամփուշտի արժէքը բարձրացել է, հատը մէկ ռուբլիով է գնւում և եթէ բարձրանայ մինչ 2-3 ռուբլի, դարձեալ պիտի գնենք, չպիտի խնայենք զրամը: Ասում էր, թէ Նասիբեանը համեստ պահանջ է ներկայացրել, հասկանալի է, որովհետև Ազգային Խորհուրդը, մեր աչքսրւելուց յետոյ, հարկադրւած է եղել պարտքերի տակ մտնել երևք, թէ չորս հազար ռուբլի միայն զիւղացիներին վճարելիք ունի և պաշտօնեութեանը՝ չորս-հինգ ամիսների ռոճիկը: Ընկեր Նասիբեանը համեստ պահանջ է անում այնքան, որ կարողանայ զիւրութեամբ ստանալ, տանել Ազգային Խորհրդի պարտքերը վճարելու և Խորհրդի անդամների օձիքն ազատելու պարտաւորի ձեռքից:

Հայաստանը տաս զաւառ ունի և կառավարութիւնը ամսական ծախսում է 200 միլիոն ռուբլի. իրաքանչիւր զաւառի վրայ 20 միլիոն, ուստի Ղարաբաղին պիտի բաց թողնել երեք ամսւանը միանգամ, որպէսզի նա կարողանայ ազատ, համարձակ աշխատել և երեք ամիս յետոյ զրամ ստանալ: Մինչև մեր աքսորւելը, Ազգային Խորհուրդը զրամ է ստացել Բագւից երկու նւագով՝ 900.000 ռուբլի, Հայաստանի կառավարութիւնից միանգամ՝ Ա. Արզումանեանի միջոցով՝ 290,000 ռուբլի, Արսէն Շահմազեանի՝ երկու նւագով՝ 400.000 ռուբլի ընդամէնը, հինգ ամսւայ ընթացքում, 1.590.000 ռուբլի, որ մի կաթիլ էր ծով կարիքների դիմաց:

Երբ Ադրբէջանի կառավարութիւնը, կանխելով Հայաստանի կառավարութեանը, Խոսրով Սուլթանովին նշանակեց Զանգեզուր-Ղարաբաղի նահանգապետ և ուղարկեց Շուշի, 25 միլիոն ռուբլի

աւանս տալին նրան և միաժամանակ պետական բանկում վարկ բաց արաւ նահանգապետարանի համար, մինչդեռ մեր կառավարութիւնը, բաւական ուշացած, մարտ ամսին Արսէն Շահմազեանին նշանակելով Ջանգեղուր-Ղարաբաղի կոմիսար, կանխիկ 400.000 ռուբլի է տալիս ձեռքը: Ի՞նչ համեմատութիւն:

Ես մնում եմ իմ տեսակէտին, Ղարաբաղի խնդիրը պէտք է լուծւի զէնքի ուժով, ոչ թէ դաշնակիցների "բարեացակամութեամբ": Աղրբէջանը տիրել է Ղարաբաղին և կատարած փաստի առջև կանգնեցրել դաշնակիցներին, այդպէս էլ մենք պիտի վարւենք, պէտք է հանել Ջանգեղուր-Ղարաբաղի սիրտը խրած սեպը: Հաջի Սամլուն պէտք է գրաւել, և ինչ գնով էլ լինի՝ կատարած փաստի առջև կանգնեցնել դաշնակիցներին, վստահ, որ ոչ ոք մեր ձեռքը չի բռնի: Առանց Հաջի Սամլուն գրաւելու, Ղարաբաղի հարցը չի լուծւի և այնտեղ ապստամբական փորձ էլ չպէտք է կատարել:

Ջեմ թաքցնում, եթէ իմ առաջարկած պայմանները մերժւեն, ես Ղարաբաղ չեմ գնայ:

Արչակ Ջամալեանը դառնալով ինձ, ասում է՝ դու հապճեպ որոշում մի կայացրու, թէ չես ուզում գնալ Ղարաբաղ. խնդիրը լուրջ է և պէտք է լրջօրէն մտածել ու մօտենալ խնդրին և խորանալով նրա մէջ որոշում կայացնել: Դու խնդրին լուրջ չես վերաբերւում, որոշ պայմաններ ես առաջարկել ու չարունակ պնդում ես նրանց վրայ:

Ս. Մելիք Եօլչեանն ասում է՝ իղուր ես հրաժարականի հարց յարուցում. այն, ինչ հնարաւոր է, կառավարութիւնն անում է հիմա, առաջիկային, ի հարկէ, աւելին պիտի անի և կանի, ուստի պէտք է գնալ Ղարաբաղ, գործի լծւել և այնտեղից տեղեկացնել կառավարութեանը չրջանի իրական կարիքների մասին, որպէսզի կառավարութիւնը բաւարարի: Ես գնում եմ Ջանգեղուր վստահ, որ դու էլ Ղարաբաղ կերթաս, ու մենք միասին կաշխատենք և լաւ կաշխատենք:

Արսէն Միքայէլեանն էլ նոյնն է ասում. "Ընկ. Ռուբէնն ինձ ասաց, թէ որոշած է քո Ղարաբաղ անցնելը, և ես համաձայնեցի գնալ Ղարաբաղ, որ միասին կը լիննենք, կաշխատենք միասին. ես երկար ժամանակ է, որ հեռացել եմ Ղարաբաղից, այնտեղ տիրող ներքին պայմաններին ու գործիչներին անծանօթ, չատ դժւար կը լինի ինձ համար. ուստի դու չպիտի հրաժարւես, քանի որ Ռուբէնին արդէն համաձայնութիւն տւել ես":

– Ճիշտ է, ես Ռուբէնին համաձայնութիւն տւել եմ, սակայն հանգամանօրէն բացատրութիւններ տալով ու որոշ պայմաններ առաջարկելով: Ես տեսնում եմ, որ անհրաժեշտ չափով

ուշադրութեան չի առնուում Ղարաբաղը, մատների արանքով են նայում գործի վրայ, ուստի ես էլ հրաժարւում եմ:

– Դու Ղարաբաղի մասին այնպէս ես խօսում, ասաց Ա. Ջամալեանը, կարծես միայն դու ես մտահոգւած նրանով. քո մէջ պարզապէս տեղայնական հայրենասիրութիւնն է խօսում, և այդ պատճառով ուշադրութիւն չես դարձնում ոչ պաշտօնատար մարդկանց և ոչ էլ հայրենակիցներիդ տւած բացատրութիւններին և խորհուրդներին. մի գլուխ պնդում ես քո պայմանների վրայ:

– Իմ մէջ տեղայնական հայրենասիրութիւնը չէ խօսում, այլ մեր չրջանի իրական վիճակը և նրանից բխող պահանջները: Այո, ես պնդել եմ և պնդում եմ իմ առաջարկած պայմանների և միջոցների վրայ, դրանք համարում էք անընդունելի, ձեր գիտենալիքն է. այսօրւանից ղարաբաղցի չեմ, ինչպէս կուզէք, անպէս արէք, երբ ձեր ուղած ձևով Ղարաբաղի խնդիրը լուծւի, միանայ մայր երկրին, ես ծնկաչոք ներողամտութիւն կը խնդրեմ բոլորիցդ:

Այնուհետև ես չմնացի խորհրդակցութեանը, ղուրս եկայ սենեակից:

Նոյեմբեր 11-ին Արչակ Չիրինեանն ասում է՝ ինձ համար կասկածից դուրս է, որ Ղարաբաղի և Զանգեղուրի վրայ մատների արանքով են նայում թէ կռավարութիւնը և թէ Բիւրօն, հետագային կը փոչմանեն, բայց արդէն բանը բանից անցած կը լինի:

Արչակ Չիրինեանը և Արսէն Շահմազեանը նոյն տեսակէտն ունեն, ինչ որ ես և այդ մասին մի՛չտ չիչել եմ իմ խօսքի մէջ: Չիրինեանը, որպէս տեղացի և երկար տարիների գործիչ, քաջ տեղեակ էր չրջանի աչխարհագրական դիրքին, գիտէր նրա ամէն մի քարն ու քոլը իր հինգ մատի պէս. իսկ Շահմազեանը, որպէս դինւորական, Զանգեղուր հասնելուց ի վեր զբաղւել է զաւառի ուսումնասիրութեամբ, դուտ ինքնապաչտպանական-ռազմական տեսակէտով, և նա էլ եկել էր այն եզրակացութեան, թէ մինչև որ Հաչի Սամլուն չգրաււի, Հնարաւոր չի լինի Ղարաբաղի կցումը Հայաստանին և Զանգեղուրը միչտ վտանգի ենթակայ կը լինի:

Ս. Մ. Եօլչեանը, Գևորսիմ Բալայեանը և Զաքար Եօլեանը առանձին- առանձին դրոյցի ընթացքին ձգնում էին համոզել ինձ Ղարաբաղ անցնելու, սակայն չէի համոզւում և կրկնում էի Արչակ Զամալեանին ասածս խօսքերը՝ եթէ այդ ձևով Ղարաբաղին տիրանաք և մեր ժողովրդին աղատէք Աղրբէջանի ճանկերից, ծնկաչոք ձեղնից ներում կը խնդրեմ:

Նոյեմբեր 12-ին Զանգեղուր են մեկնում Ս. Մ. Եօլչեանը, Զ. Եօլեանը և դեն. Ղաղարովն իրենց սպաներով, որոնք, ինչպէս խօսւում էր, պիտի ստանային կրկնակի ռոճիկ: Ցարական կառավարութեան ժամանակ Սիբիր ուղարկւող չինովնիկները,

ինչպէս կասէին, կրկնակի ռոճիկ էին ստանում, կը նչանակէ Հայաստանի համար Զանգեզուր-Ղարաբաղը հանդիսանում էր մեր Սիբիրը:

Այդ օրը հանդիպեցի Ն. Նասիբեանին, որը իւր դժգոհութիւնը յայտնեց իմ բռնած դիրքի առթիւ, մեր փոխատացութիւնը սուր կերպարանք ստացաւ, ես մեղադրում էի իրեն ու մեր միւս հայրենակիցներին, որ փչացնում են գործը իրենց անլուրջ վերաբերմունքով և դատարկ առաջարկներով:

Նոյեմբեր 12-ին երևկոյեան ղէմ արագօրէն տարածւում է քաղաքում Արսէն Շահմազեանի վերջին հաղորդագրութիւնը Հաջի Սամլուի ճակատի կռիւների մասին: Շահմազեանը հաղորդում է, որ հինգ օրւայ յամառ կռիւներից յետոյ, թշնամին ջախջախւել, փախուստի է դիմել, ռազմի դաշտում թողնելով 500 -ի չափ դիակներ, հարիւրաւոր վրաններ, հրացաններ, 18 գնդացիր և 200 - 300 հազար փամփուշտ: Կռիւը դադարել էր ամսի 9-ին:

Երևանում ընդհանուր ուրախութիւն էր տիրում. Բէյլէր Վէդու մեր պարտութիւնից յետոյ,բնականաբար, նման մի յաղթանակը պիտի բարձրացնէր ժողովրդի տրամադրութիւնը: Եւ այդ յաղթանակի համար ճիշտ ժամանակին ։ կառավարութիւնը լաւագոյնս գնահատում, մեծարում է Արսէն Շահմազեանին, ուղարկելով Զանգեզուր Ս. Մ. Եօլչեանին և նորակնունք գեներալ Ղազարովին, փոխարինելու նրան . . . Ահա թէ ինչպէս է վերաբերւում կառավարութիւնը դէպի Զանգեզուր-Ղարաբաղը: Արսէն Շահմազեանին փոխարինելը նոր մարդկանցով, ներկայ դէպքում յատկապէս, ծանր վիրաւորանք է, որ հասցնում է ոչ միայն Շահմազեանին, այլև նրա հոգատարութեան ենթակայ ժողովրդին, որը կուզենայ իրօք մեծարած տեսնել իր զեկավարին:

Երևկոյեան Աբովեան փողոցում յանկարծ հանդիպեցի Ռուբէնին, որը դժգոհ սկսեց յանդիմանել ինձ, որ հրաժարւում եմ Ղարաբաղ գնալուց. "Ինչ թարս մարդ ես, դու խօսք ես տալիս և յետոյ հրաժարւում, եղա՞ւ. դու, պարզապէս, յամառում ես, ղարաբաղցուն յատուկ կողավէրութեամբ: Շատ լաւ, որոշ պայմաններ ու պահանջներ ես անում, կառավարութիւնն էլ հնարաւորն ու կարելին չի խնայում: Եւ, վերջապէս, այն բոլոր բանները, ինչ պահանջում ես, մէկ նւազում գլուխ բերել հնարաւոր չէ. բաւարարութիւն կը ստանաս պահանջների մէկ մասին, իսկ մնացած մասը կը լրացւի հետագային":

-Ես, ճիշտ է, ղարաբաղցի եմ, բայց կողավէրութիւն չէ իմ արածը. հէնց առաջին անգամ երբ խօսակցութիւն եմ ունեցել քեզ և միւս ընկերների հետ, իմ տեսակէտը Ղարաբաղի վերաբերեալ, չատ

պարզ յայտնել եմ և այժմ էլ նոյն տեսակէտին եմ: Ես ինչպէս քեզ, այնպէս էլ մեւս ընկերներին ասել եմ, որ յայտնածս տեսակէտը Զանգեղուր-Ղարաբաղի բոլոր գիտակից մարդկանց և մասնաւորապէս գործին մօտ մարդկանց տեսակէտն է: Բիւրօն կամ կառավարութիւնը կարող են սատւգել, թէ ճիշտ են ասածներս կամ ոչ: Կառավարութեան արածը, ինչպէս կասեն՝ "նա բախտինա"[50] արած գործ է, և այդ գործնականերպին ղէմ եմ ես: Ես հանդամանօրէն բացատրեցի, որ Արսէն Շահմազեանին չպէտք է յետ կանչել և նրա փոխարէն նոր մարդիկ ղրկել: Ասացի, դուք նրա պահանջներին էլ բաւարարէք, կը մնայ, չի հրաժարւի. սակայն արժէք չտրեց իմ բացատրութիւններին, որոշեց նոր մարդ ուղարկել: Այժմ, երբ նա յաղթական է, որքա՞ն պատչաճ է կառավարութեանը, որ փոխանակ գնահատելու նրա կատարած գործը, յետ է կանչում: Երբ կառավարութիւնը լսեց, որ Աղբրէջանի գօրքերը յարձակում են գործել արեւելեան ճակատում, պիտի սպասէր կուի վախճանին և նոր միայն Զանգեղուր մարդ ուղարկելու հարցով դրաղւեր:

– Դու, այո, կողավէրութիւն ես անում, թող հակառակութիւնդ, լրջօրէն մտածիր և կը տեսնես, որ չարաչար սխալ է բռնածդ դիրքը. ապա պատրաստւիր և անձնական ինչ պահանջ ունես, յայտնիր, որ բաւարարեն, և համբայ կլլես:

– Ես և գործին մօտ կանգնած բոլոր ընկերները տարիներ չարունակ որոճացել ենք Ղարաբաղի հարցը և որոշ եղրակացութեան չանգել, որը սկզբից յայտնել եմ: Արսէն Շահմազեանը տեղում ուսումնասիրելով հարցը, ճիշտ նոյն տեսակէտի վրայ է կանգնել: Այնպէս որ, մտածելու պէտքը չկայ և "նա բախտինա" գործ աննելու պարտականութիւն չեմ ստանձնի: Ինչպէս յայտնել եմ Աբչակին, ես հրաժարւում եմ Ղարաբաղ դնալուց. նոյնը կրկնում եմ հիմա:

Նոյեմբեր 13-ին յայտնի է դառնում, որ Բիւրօն որոշել է իմ փոխարէն Արսէն Միքայէլեանին ուղարկել Ղարաբաղ, բայց նա էլ չի ուղում գնալ, պատճառաբանելով, որ երկար տարիներ է, ինչ հեռացել է Ղարաբաղից, իրենից յետոյ շատ բաներ են փոխւել, պայմաններին անծանօթ է և իրեն ծանօթ գործիչները հեռացել են այնտեղից ու ցրւել դանադան կողմեր. ուստի դիմել է Սարգիս Մանասեանին և Աբրահամ Գիւլխանդանեանին, որ միջամտեն, համոզեն Բիւրոյին, որպէսզի իրեն ազատ թողնեն: Այդ մասին յայտնեցին ինձ Ս. Մանասեանը և Աբրահամ Գիւլխանդանեանը, որոնց կանչել էին իրենց մօտ ներքին գործոց նախարարութիւն, կրկին խօսելու Ղարաբաղի հարցի չուրջ: Երկու պատկառելի աւագ ընկերները պարզ ասացին, որ Արսէնը չի ուղում գնալ յիշեալ պատճառաբանութեամբ: Մեր դրոյցը տեղի ունեցաւ ամսի 14-ին:

[50] Ճակատագրի բմահաճոյքին կողնւած: (Խմբ.)

– Արսէնը իրաւացի է, ասացի։

– Սակայն դու ինչո՞ւ ես հրաժարուել, չես գնում։ Չէ՞ որ դու այնտեղ գործել ես, ծանօթ ես տեղական պայմաններին, մարդկանց, քեզ համար աւելի դիւրին է աշխատել, քան Արսէնի համար։

– Ես ձեզ էլ, ինչպէս Ռուբէնին, հանգամանօրէն բացատրել եմ, թէ Ղարաբաղի զրաւման գլխաւոր դժուարութիւնը ինչի մէջ է։ Եւ գլխաւոր արգելքը, ինչպէս ասել եմ, սնալի պէս Սիւնիքի սիրտը խրուած քրդական Հաջի Սամլուն է, որ երկիրը երկու մասի է բաժանել և երկու մասերը իրարից կտրած կանք են վարում։ Հաջի Սամլուն մշտական սպառնալիք է, կախուած Սիւնիքի գլխին, ինչպէս պարզ ղգալի դարձաւ այս վերջին օրերին կատարուած յարձակումով։ Այս անգամ ադրբէջանական ուժերը պարտուեցին, բայց եթէ վաղը մենք պարտուելու լինենք, Ջանգեղուրը մեծապէս կը տուժի, մարդկային ու նիւթական կորուստ կրելով. կապրիզի և ոչ էլ կողաւորութեան պիտի վերագրել իմ հրաժարականը, ինչպէս Ռուբէնն է բացատրում, ես երկրի իսկական դրութիւնը ներկայացնելով, կառավարութեան ու Բիւրօյի ձեռք առած միջոցները համարել եմ միանգամայն անբաւարար և այդ պատճառով հրաժարուել եմ։

Նոյն օրը, նոյեմբեր 14-ին, Ղարաքիլիսէից եկաւ Աչոտ Մելիք-Յովսէփեանը, Բիւրոյի պահանջմամբ Ազգային Խորհրդի համար բաց թողնուած մէկ միլիոն ռուբլու հաչիւը փակելու։ Հաչիւն ընդունողը Արչակ Ջամալեանն էր, որ չատ կոպիտ վերաբերմունք է ցոյց տալիս Աչոտին, որը Ազգային Խորհրդի դրամների հետ գործ չէր ունեցել։

– Հասարակական դրամների հետ ըստ կամս վարուելու իրաւունք չունէիք. դրամը բաց էր թողնուած չրջանի կարիքների համար և ոչ թէ անձնական պէտքերը հոգալու։

– Պարոն Ջամալեան, ձեր խօսքերը սխալ հասցէի են ուղղուած. դրամները Միքայէլ Արղումանեանն է ստացել. նրան էր ուղարկուած. ես միայն ներկայի դերում եմ եղել։

– Ղարաբաղից բողոք է ստացուած ձեր և ուրիշների մասին, ասում է Արչակը. դժգոհ են նաև Եղիշէից, որ աչք է փակել կատարուած վատնումների վրայ։

– Սակայն դուք գիտէք, ճանաչում էք, թէ մեղանից յետոյ ովքեր են մտել Ազգային Խորհրդի մէջ։ Ազգային Խորհրդի կամ Կենտրոնական Կոմիտէի մէջ մուտք է գործել մէկը, դաշնակցական անունը կրող բժիշկ Արտաչէս Գանջեցեանը, որը Ազգային Խորհրդից 8000 ռուբլի աւանս էր ստացել, մեկնելու Ջրաբերդի չրջանը, այնտեղ գործելու որպէս բժիշկ, սակայն չէր գնացել. վերջին անգամ Ազգային Խորհրդի որոչմամբ սպառնացել էի, եթէ չմեկնի իր պաշտօնավայրը, պիտի խիստ պատժի ենթարկուի։ Ուրբաթը չաբաթից չուտ եկաւ, մեղ աքսորեցին անգլիացիները, Ազգային Խորհուրդը քայքայուեց, նոր

մարդիկ եկան հրապարակ, նոյն բժշկի գլխաւորութեամբ, և նա, ազատ ղղալով իրեն, ինտրիգներով է դրաղւած: Աչոտը ոչ մէկ առնչութիւն չի ունեցել դրամական գործունէութեան հետ, իղուր մեղադրական էք բարդում Աչոտի վրայ:

– Ես ոչինչ չեմ հասկանում ու չգիտեմ , այնտեղից մի բան են դրում և դուք այստեղ ուրիչ բան էք ասում, տրամադծօրէն հակառակ միւսին: Դու, որպէս նախկին Ադդային Խորհրդի նախագահ, պարտաւոր ես գնալ Թիֆլիս և մաքրել ու փակել հաշիւը, քանի որ խնդիրը վերաբերում է նախկին Ադդային Խորհրդին:

– Ինչու չէ, կերթամ և կը պարզեմ, թէ ինչումն է բանը և հաշուփակ կը կատարեմ, ասացի:

– Աչոտի վրայ չատ ծանր էր ազդել Արշակի վերաբերմունքը, ուստի ասացի, որ չար սիրտ չունի Արշակը. այդպէս խօսելուն մի նայիր, յետոյ բոլորովին այլ կերպ կը տեսնես: Բոլոր ընկերները նրան այդպէս դիտեն:

Աչոտը վերադարձաւ Ղարաքիլիսա:

Դարձեալ նոյն օրը, 14-ին, Զանգեղուրից եկաւ Աչոտ Մելիք Մուսեանը, Արսէն Շահմազեանի կողմից խօսելու կառավարութեան հետ, կամ բաւարարելու իր պահանջները, և կամ, հակառակ դէպքում, ընդունեն իր հրաժարականը: Աչոտը պատմում էր այդ մասին պառլամենտի սենեակներից մէկում Դրոյին, բժ. Ռուբէն Տէր Ստեփանեանին ու ինձ: Մեր հանդիպումը պառլամենտի չէնքում միանգամայն պատահական էր: Աչոտը Դրոյի քաւորն էր, և Դրօն քաւոր աղայ կասէր նրան: Բժ. Ռուբէնը Անդրանիկի բանակի բժիշկն է եղել և միշտ Անդրանիկի հետ ամէն տեղ, ինչպէս նաև Զանգեղուրում, տեղի պայմաններին լաւ ծանօթ մէկը: Ռուբէնը ևս եղել էր Ղարաղաղում ու ծանօթացել այնտեղի դրութեանը:

Աչոտը բարձր տրամադրութեամբ պատմում է Զանգեղուրի կռիւների մասին մանրամասնօրէն: Դրօն, լսելով Աչոտի տուած տեղեկութիւնները, ոգևորւած ասում է, որ պէտք է առանձնած որոշ պարտականութիւնները փոխանցի ուրիչ մէկին և անցնի Զանգեղուր:

Աչոտը Դրոյի Զանգեղուր գնալը դտնում է անհրաժեշտ, աշխատելու այնտեղ Արսէն Շահմազեանի և Նժդեհի օգնութեամբ, սակայն նպատակայարմար չի դտնում Ս. Մ. Եօլչեանին ու զեներալ Ղազարովին Զանգեղուր ուղարկելը, որովհետև ոչ նրանք գիտեն ժողովրդին և ոչ էլ ժողովուրդն է նրանց ճանաչում:

Ես էլ Դրոյին ասում եմ՝ եթէ ուղում ես գնալ Զանգեղուր նախ՝ պէտք է զեներալ Ղազարովին և Ս. Մ. Եօլչեանին յետ կանչել տաս, որովհետև կարող է երկիչքսանութիւն առաջանալ այնտեղ, և գործը կը տուժի և երկրորդ, այժմ որ Արսէն Շահմազեանը

յաղթանակ է տարել, Ս. Մ. Եօլչեանին և զեներալ Ղաղարովին այնտեղ ուղարկելով ծանր վիրաւորանք է հասցուում թէ՛ նրան և թէ՛ ժողովրդին: Արսէն Շահմազեանը հէնց սրանից յետոյ պիտի մնայ այնտեղ, որպէս նահանգական կոմիսար Զանգեզուր-Ղարաբաղի, վայելելու իր յաղթանակի պտուղները: Եւ եթէ յետ կանչուեն Մ. Եօլչեանն ու Ղաղարովը, ապա դու գնաս Զանգեզուր: Ես էլ խոստանում եմ գնալ Ղարաբաղ:

ՀՐԱԺԱՐՈՒՄ ՂԱՐԱԲԱՂ ԳՆԱԼՈՒՑ

Նոյեմբեր 16-ին մի զրուցեամբ յայտնում եմ Բիւրոյին թէ՛ ինչու եմ հրաժարւում Ղարաբաղ գնալուց: Ամփոփ կերպով կրկնելով Ռուբէնի և միւս ընկերների հետ Ղարաբաղի վերաբերեալ մտքերի փոխանակութեան ընթացքին յայտնածս տեսակէտը, որը սոսկ իմ անհատական տեսակէտը չէ, այլ այնտեղի գործին մօտ կանգնած, առանց կուսակցական խտրութեան՝ բոլոր գործիչների, որոնք գտնում են, թէ՛ պէտք է լուրջ կերպով ծրագրել Ղարաբաղի կցումը մայր երկրին ու համապատասխան միջոցների դիմել: Ղարաբաղի մեր բոլոր գործիչները ի սկզբանէ դէմ են եղել և այսօր էլ կտրականօրէն դէմ են, յանպատրաստից որևէ քայլ անել Ադրբէջանի իշխանութեան լուծը թօթափելու նպատակով, որովհետև յանպատրաստից ապստամբական որևէ փորձ, կասկածից դուրս է, պիտի մատնի կատարեալ անյաջողութեան, խիստ ծանր, անդարմանելի կորուստներ պատճառելով ժողովրդին: Եւ քանի որ թէ՛ Բիւրօն և թէ՛ կառավարութիւնը լուրջ մօտեցում չունեն խնդրին, նկատի չեն առնում Ղարաբաղի խնդիրն ու այնտեղի իրական պայմանները ու պահանջները, հրաժարւում եմ Ղարաբաղ գնալուց համոզուած, որ վաղը, անյաջողութեան համար, մեղաւորի աթոռին պիտի բազմեցնեն թէ՛ Բիւրոյին և թէ՛ նրա գործակիցներին: Գրածս թուղթը կարդում եմ Արչակ Շիրինեանին, որը իր հաւանութիւնն է տալիս:

Նոյեմբեր 17-ին Սարգիս Մանասեանը, որ ներքին գործոց նախարարի օգնականն էր, տեղեկացել էր իմ հրաժարականի մասին, առաջարկում է գնալ Ղարաքիլիսա, կազմակերպելու զեմստուոյական ընտրութիւնները: Ես հրաժարւում եմ, պատճառաբանելով, թէ՛ պիտի գնամ Թիֆլիս Բիւրոյի որոշմամբ ու պահանջով, Ղարաբաղի Աղգային Խորհրդի դրամական հաշիւները փակեմ ու մնամ այնտեղ, մտնեմ մասնաւոր ծառայութեան, մանաւանդ որ պայմանները միանգամայն նպաստաւոր են, գուցէ և ծառայութեան գործով մեկնելու լինեմ արտասահման:

Ս. Մանասեանն ասում է՝ "ինչպէս երևում է, դու որոշել ես սաբոտաժ անել: Ճիշտ է, արդարացի են պահանջները, սակայն

չպիտի կարողանաս համոզել ոչ Արշակին և ոչ էլ միւս ընկերներին: Դա նիսիա բան է, աւելի լաւ է, գնաս Ղարաքիլիսա և հանգստանաս այնտեղ: Ես կուսակցականօրէն պարտաւորում եմ քեզ չհրաժարեցնել, որովհետև այնտեղ, Սեգոյի (Արամ փաչայի քրոջ տղայի) և ընկերների միջև տեղի ունեցած զժտութեան հետևանքով, մեր կազմակերպութիւնը քայքայւել է, ուստի այնտեղ կաշխատես կուսակցական գործը կարգի բերելու: Ես քո դպրոցական ուսուցիչն եմ, և դու չպիտի ինձ հակառակես":

Ի՞նչ կարող էի ասել. համաձայնեցի և նոյն օրն էլ ստացայ պաշտօնական գրութիւն, որ նշանակւած եմ Ղարաքիլիսայի գաւառական վեմստուղի ընտրական յանձնախմբերի նախագահ, գաւառի վեմստուղական ընտրութիւնները կազմակերպելու, պատգամաւորական ժողով գումարելու, վեմստուղի վարչութեան ընտրութիւն կատարելու:

Այո, ոչինչ չէի կարող ասել, Սարգիս Մանասեանը, որ ընկերների կողմից կոչւում էր Մանաս, իմ թէ՛ կուսակցական և թէ՛ դպրոցական ուսուցիչներից մէկն է եղել: Ինչպէս աշակերտական շրջանում, այնպէս էլ հետագային, կուսակցական շարքերում, իր աշակերտները նրա և միւս կուսակցական ուսուցիչների հետ խօսելիս, կոչական "վարժապետ" բառը արտասանելով մեր խօսքը կուղղէինք նրան: Սարգիս Մանասեանը և Գարեգին Խաժակը միասին են ընդունել Նուշու թեմական դպրոցը, առաջինը դասաւանդում էր ռուսաց պատմութիւն և Ռուսաստանի աշխարհագրութիւն, իսկ երկրորդը՝ դերմաներէն, հայոց և ընդհանուր պատմութիւն, երկուսն էլ բարձր դասարաններում: Երկու ուսուցիչները անչափ սիրւած էին աշակերտութեան կողմից և երկուսի դասերին աշակերտները հետևում էին մեծ հետաքրքրութեամբ: Մասնաւորապէս Խաժակի դասաւանդութիւնը դասախօսութեան ձև և բնոյթ ունէր. նա դասագրքով չէր սահմանափակւում, դասագրքից դուրս իր ունեցած մեծ պաշարից մշտ բաժին էր հանում աշակերտներին, որպէսզի աւելի լայն դարդացում ստանան: Անչափ հետաքրքիր էին անցնում Խաժակի դասերը:

Նոյեմբեր 17-ին Արշակ Ջամալեանը, Ա. Միքայէլեանը և փոխ գնդապետ Մնսեանը մեկնում են Թիֆլիս:

Նոյեմբեր 19-ին իմ դասընկերներից Վաղարշակ Նարինեանը, որ Կովկասեան հակատում ռուսական բանակի զինուորներից էր պատերազմի սկզբից ի վեր, ուղարկւում է Զանգեզուր, որպէս տրանսպորտի պետ:

Նոյեմբեր 22-ին Ղարաբաղի մեր երիտասարդներից մեկը՝ Արտաշէս Ղահրամանեանը, որ առևտրով էր զբաղւում, Հայաստանից կոնեակ տանելով Թիֆլիս, թէև վրացական իշխանութիւնները խիստ մերժում էին, այնուամենայնիւ կարողանում էր ներմուծել ու Թիֆլիսում վաճառել: Վրաստանում էլ կոնեակի գործարաններ կային, ի հարկէ, սակայն հոնի կոնեակը ոչ միայն Շուստովի, այլև ուրիշ գործարաններից աւելի յարգի էր վրացականի համեմատութեամբ: Շուստովի գործարանը արդէն պետականացւած էր, և առանց պաշտօնական թոյլտւութեան արտադրանքը դուրս չէր տրւում: Արտաշէսը և նմանները մասնաւոր գործարանների կոնեակն էին արտահանում:

ԹԻՖԼԻՍ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՍԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՀԵՏ

Արտաշէս Ղահրամանեանից տասը հազար ռուբլի վերցնելով, վճարում եմ հիւրանոցի և իմ ու Արտաշէս Վարդապետեանի ունեցած պարտքը, և 22-ին գնացքով մեկնում ենք Թիֆլիս:

Հայաստանի կառավարութիւնը Միչա Արզումանեանին Ղարաբաղ ճամբելիս տւած է եղել 400,000 ռուբլի, որից Միչան Ազգային Խորհրդին պէտք է փոխանցէր 290,000 րուբլի: Այնուհետև կառավարութիւնը երկու անգամ 300,000-ական ռուբլի ուղարկած է եղել Թիֆլիսի մեր դեսպանատունը, որպէսզի վերջինս փոխադրէր Թիֆլիսի Զանգեզուր-Ղարաբաղի հայրենակցական միութեան վարչութեան միջոցով Շուշիի Ազգային Խորհրդին: Հայրենակցական միութեան վարչութիւնը Հրանդ Բահաթրեանին և Աչոտ Մելիք Յովսէփեանին յանձնարարում է գտնել մէկ վստահելի մարդ, որի միջոցով կարելի լինէր ղրամն ուղարկել Շուշի Գանձակի վրայով, լեռնային ճամբով, որ աւելի ապահով էր: Հրանդն ու Աչոտը բաւական հետաքրքրւում, փնտրտուք են կատարում և մարդ չեն գտնում, ուստի խորհուրդ են տալիս ղրամը տալ ծխախոտի գործարանատէր չուչեցի Ղևոնդ Այդինեանին, որը Շուշում իր սեպհական տունն ու ներկայացուցիչն ունէր, և նա կը կարողանար փոխադրել իր մարդուն և վերջինս կը յանձնէր Ազգային Խորհրդին: Ահա այս չափով Հրանդ Բահաթրեանն ու Աչոտ Մելիք-Յովսէփեանը առնչութիւն են ունեցել Ազգային Խորհրդին հասանելիք ղրամների հետ, սակայն մեծ պատմութիւն է յերիւրւել նրանց անւան չուրջ, հաղորդւել թէ կառավարութեանը և թէ Բիւրոյին, և Արշակ Ջամալեանը, հասած տեղեկութիւնը հիմք ունենալով, կոպիտ կերպով հաշիւ էր պահանջել Աչոտից: Վերջապէս, խնդիրը պարզւում է Թիֆլիսում, նախ Միչա Արզումանեանը յայտնում է Արշակ Ջամալեանին, որ իր Շուշում եղած ժամանակ 290.000 ռուբլի

տվել է Աղգային Խորհրդին, իսկ 600.000 ռուբլին Ղևոնդ Այդինեանը բաւական ուշ փոխադրել է Շուշի իւր ներկայացուցչին. վերջինս ղրամը յանձնելով Աղգային Խորհրդին, համապատասխան ընկալագիր է ստացել, ինչպէս յայտնել է փոստով ղրկած նամակում, և որ ընկալագիրը պիտի ղրկէ ապահով միջոցով: Այդինեանը հնարաւորութիւն չի ունեցել աւելի շուտ ուղարկելու ղրամը և մասամբ այդ պատճառով էլ ասէկոսէ ծայր տուել:

Նոյեմբեր 24-ին Արչակ Ջամալեանը Գանձակի չրջանի Ղարադաղլու գիւղացի Առաքելի միջոցով ինձ հրաւիրում է իր մօտ: Առաքելը մեր լաւագոյն մարտիկներից մէկն էր, Նոր Բայազէդի զաւառական միլիցապետի պաշտօնն էր վարում. պաշտօնը թողել էր, վերադառնալու իրենց չրջանը, որտեղ իր ներկայութիւնը անհրաժեշտ էր, ինքնապաշտպանութեան գործը կազմակերպելու համար: Յովհաննէսի հետ միասին գնացինք Արչակի բնակարանը, այնտեղ էին Արսէն Միքայէլեանը, Գանձակից ու չրջանից եկած երեք հոգի ներկայացուցիչներ, որոնք չրջանի գիւղացիութեան կողմից եկել էին՝ գնալու Երևան, կառավարութեան հետ բանակցելու, որ հնարաւորութիւն տրւի ժողովրդին պատրաստւելու, Աղբրէջանի լուծը թօթափելու համար՝ և Թիֆլիսում տեղեկանալով Արչակ Ջամալեանի այնտեղ գտնւելուն, որոշում են ներկայանալ նրան որպէս գանձակեցի և չրջանին իրազեկ մարդու, խօսելու իրենց կարիքների չուրջ և խորհուրդ հարցնելու: Արչակ Ջամալեանը Բիւրոյի կողմից լիազօրւած էր ղրաղւելու թէ Ղարաբաղի և թէ Գանձակի գործով ու անհրաժեշտ կարգադրութիւններ անելու, համաձայն Բիւրոյի որոշումների:

Արչակը յայտնում է, որ կառավարութիւնը, դաշնակից պետութիւնների ներկայացուցիչների հետ յարաբերւելիս Գանձակի չրջանը և Ղարաբաղը միացեալ ձևով է ներկայացրել միշտ, որպէս Հայաստանի անբաժան մասը կազմող մի նահանգ, և այդ ձևով էլ պիտի առաջիկային երկու չրջանները սերտ կապ ունենան իրար հետ, սակայն, ունենալով երկու զնկավար կենտրոններ: Գանձակի չրջանին յատկացւում է ամսական 120 հազար ռուբլի, իսկ Ղարաբաղին՝ 400 հազար ռուբլի: Ես կրկնելով Ռուբէնին և իրեն Արչակին տւածս բացատրութիւնները, և Ղարաբաղի գործիչների տեսակէտը, թէ ինչպիսի գործունէութիւն պիտի ունենալ Ղարաբաղում, ամսական 400 հազար ռուբլին համարում եմ խիստ անբաւարար:

Արչակը հարցնում է ինձ՝ վերաբննե՞լ եմ որոշումս, թէ՞ ոչ: Արդեօ՞ք չեմ զտնում, որ առաջարկս, պայմաններն ու պահանջները անընդունելի են:

Պատասխանում եմ, որ մեկից ավելի անգամ անդրադարձել եմ և մնացել նույն որոշմանը:

– Եղիշէ, ինչպէս ասել եմ, կրկնում եմ, քո մեջ դարաբաղցուն յատուկ յամառութիւնն է խօսում պարզապէս և ոչ թէ սառն բանականութիւնը: Մենք չէինք սպասում, որ Ղարաբաղի հարցը այնքան հրահրելուց յետոյ, երբ կառավարութիւնն ու կուսակցութիւնը զործնական միջոցների են դիմում, դու կը լքէիր զործը, դու սարսռաժ ես անում, մի բան, որ չի պատշաճում դաշնակցական մարդուն:

– Արշակ, սխալւում ես՝ յամառութեան վերագրելով հրաժարականս:

–Միանգամայն անհիմն է քո մեղադրանքը կառավարութեան և կուսակցութեան հասցէին: Քո մեջ, պարզապէս, զրգռած ջղերն են խօսում, եթէ ոչ կիրքը: Կառավարութիւնը և կուսակցութիւնը միշտ էլ ուշադիր վերաբերմունք են ունեցել Ջանգեղուր-Ղարաբաղի վերաբերեալ ու հնարաւոր բոլոր միջոցներով ջանացել են Ադրբէջանի ոտնձգութիւնների առաջն առնել, բողոքելով, թէ զրաւոր և թէ բանաւոր կերպով դաշնակից պետութիւնների ներկայացուցիչներին և պահանջել, որ հետացնեն Ղարաբաղից թէ Սուլթանովին և թէ Ադրբէջանի օրէնսդիրները: Եւ կառավարութիւնը չարունակում է իր դիրքում մնալ, որպէս պահանջատէր:

–Խօսքը կառավարութեան դիւանագիտական զործունէութեանը չի վերաբերում. գիտենք, որ արտաքին զործոց նախարարութեան միջոցով ինչ որ կարելի է, արւում է, և եթէ ցանկալի արդիւնքի չի հասնում, դա պարզապէս անգլիական ներկայացուցիչների խիստ աչքի ղարնող աչառու վերաբերմունքի պատճառով է, յօդուտ Ադրբէջանի ոտնձգութիւնների: Ասում ես անհիմն կերպով եմ մեղադրում կառավարութեանն ու կուսակցութեանը. վերցնենք պարզ, աչք ծակող հէնց այն փաստը, որ Արսէն Շահմազեանը յետ է կանչւում իր տարած փառաւոր յաղթանակից յետոյ և նրա փոխարէն ուղարկւում են նոր, ժողովրդին անծանօթ մարդիկ:

– Յամենայն դէպս, ես դարձեալ խորհուրդ եմ տալիս քեզ, ջղերով չմտածել և չխօսել. լուրջ մօտեցիր խնդրին, սառն դատողութեամբ և դու ինքդ կը զգաս քո սխալը:

– Ես համոզւած եմ, որ դարձեալ պիտի տեղի ունենայ նոյն փոխասացութիւնը, ուրիշ ոչինչ:

Այնուհետև ես դուրս եկայ, ենթադրելով, որ Արսէն Միքայէլեանն է դրդել Արշակին նորից խօսելու ինձ հետ, թերևս յաջողւէր համոզել, փոխելու որոշումս: Եւ դա պարզւեց յաջորդ երկրորդ ու երրորդ օրերին, որ հիշատ էր ենթադրութիւնս: Արսէնն ու ես Երևանեան հրապարակից դէպի ցած երկարած փողոցի վրայ գտնւող մի հիւրանոցում էինք իջևանել, առանձին սենեակներ ունենալով, այնպէս որ մինչև Թիֆլիսից մեկնելս ամէն օր

Հանդիպում էինք իրար, և Արսէնը տեղեկութիւններ էր հարցնում, թէ մեր ընկերներից ովքեր են Շուշում և գաւառում մնացել, որոնք ակտիւ աշխատանքներ են կատարել, նմանապէս միւս հոսանքի աչքի ընկած ուժերի մասին և ամէն անգամ որևէ ձևով զարձնել նոյն հարցուղղոյցը նորոգում Ղարաբաղի չուրջ, աշխատում էր ամէն կերպ համոզել, որ միասին գնանք Ղարաբաղ, միասին աշխատելու, և մեր դրոյցներից մէկի ընթացքին, ի միջի այլոց ասաց, որ Արչակը մեր վերջին փոխասացութիւնից յետոյ, ցանկութիւն չէր ունեցել կրկին խօսելու հետս, ինքն էր ցանկացել և ասել, որ խօսի ինձ հետ: Պատմում է, որ դիմել է աւագ ընկերներից Աբրահամ Գիւլխանդանեանին, Ս. Մանասեանին և Սարգիս Արարատեանին՝ միջամտելու, որ Բիւրօն ազատ թողնէ իրեն, սակայն չէր յաջողել փոխել Բիւրոյի որոշումը:

Արսէնը մեր դրոյցների ընթացքին պարզ յայտնում է. "Ես համաձայնել եմ գնալ Ղարաբաղ աշխատելու, վստահ, որ դու էլ պիտի անցնես այնտեղ, որպէսզի միասին, ձեռք-ձեռքի տւած գործենք:

– Դու եթէ զգում ես, որ չատ դժւար պիտի լինի քեզ համար Ղարաբաղում աշխատելը, քանի որ քեզ ծանօթ ընկերները բացակայ են, աւելի լաւ կանես, որ հրաժարւես Ղարաբաղ գնալուց: Ինչպէս տեսար, քո ներկայութեամբ ասացի Արչակին, որ Բիւրօն ու կառավարութիւնը մատների արանքով են նայում գործին: Արչակ Ջամալեանը և ուրիշներ, որոնք բոլորովին անծանօթ ու անտեղեակ են Ղարաբաղի պայմաններին, նկատի չունեն այնտեղի գործիչների տեսակէտը, և ասել են, թէ իրը անիրականանալի պայմաններ ու պահանջներ եմ դրել, որ չընդունւի, և ես հրաժարւում Ղարաբաղ գնալուց, իրը թէ վախենում եմ վերադառնալ այնտեղ: Նախ և առաջ՝ ինչո՞ւ պիտի վախենալ. երբ դաշնակից ուժերը չկային Կովկասում, չրջապատւած էինք չորս կողմից թուրքերով, վերջում էլ, հարկադրւած, ենթարկւեցինք տաճկական իշխանութեան, չէինք վախեցել, իսկ այժմ, երբ դաշնակիցները մեր կողքին են, և մեր կառավարութիւնը ամէն ժամ կարող է նրանց ուշադրութիւնը հրաւիրել, կանխել որևէ վտանգ, վախենալը բնաւ խնդիր չի կարող լինել: Իմ առաջարկած պայմանները և պահանջները անհատական բնոյթ չունեն. ես Ղարաբաղի ակտիւ գործիչների և համագումարների կարծիքն ու տեսակէտն եմ յայտնել: Դու ճնչւում ես կտրականօրէն հրաժարւել, ինչպէս բացատրում ես, թէ՝ կարող են ասել, որ վախեցար Ղարաբաղ գնալ, թող ասեն, սակայն խիղճդ հանգիստ կը լինի: Այնպէս, ինչպէս Ղարաբաղի մասին է կարգադրութիւններ արւում, այժմւանից կարելի է ասել, որ տանուլ տւած պիտի համարել գործը: Ես առիթ ունեցայ յայտնելու կառավարութեան ու Բիւրոյի արած կարգադրութեամբ դոհացած ղարաբաղցի ընկերներին և Արչակ Ջամալեանին, որ երբ ձեռք առնւած միջոցներով յաջողւի Ղարաբաղը միացնել Հայաստանին, ես

ծնկաչոք պիտի ներողութիւն խնդրեմ բոլորից: Ներկայիս, քո վզին է ընկել, չես կարողանում կտրուկ հրաժարւել, և ես կրկնում եմ. լաւ կանես որ հրաժարւես, որպէսզի կառավարութիւնն ու Բիւրօն հարկադրուեն և լուրջ կերպով մօտենան խնդրին ու պատշաճ կարգադրութիւն անեն: Մէկ ու կէս ժամւայ ընթացքում, չտարի կապիտան Մեսեանին մէկ աստիճան ցատկումով զնդապետ դարձնելով և մի քանի հարիւր հազար ռուբլի տրամադրելով զործին, Ղարաբաղը Հայաստանին հնարաւոր չի լինի կցել և առանց լուրջ պատրաստութեան որևէ ապստամբութեան փորձ պիտի համարել արկածախնդրութիւն, որը ծանր հետևանքներ կունենայ:

Նոյեմբեր 28-ին Արսէնի խնդրանօք միասին դնում ենք չուշեցի Ղևոնդ Այղիննանի մօտ, ծանօթացնելու Արսէնին Ղևոնդի հետ և խնդրելու վերջինիս՝ յանձն առնել հետագային ևս ղրամ փոխադրելու Շուշի, Աղդային Խորհրդին: Համաձայն մեր կառավարութեան կարգադրութեան, Թիֆլիսի մեր դեսպանը, պահանջած դէպքում, որոշած գումարը պիտի վճարէ Ղևոնդին, որ նա փոխադրէ: Ղևոնդը սիրով յանձն է առնում այդ պարտականութիւնը: Մեզ հետ միասին էր և Հրանդ Բահաթրեանը:

Ղևոնդի զրասենեակում հանդիպեցինք Հրանդին ու ինձ ծանօթ Շուշեցի թուրք վաճառականին, ցարական կառավարութեան օրօք յայտնի կօնտրաբանդիստ Մաչաղի Ջալիլին: Սրան մի անգամ պատահականօրէն աղատել էի հայ թալանչիներից և մի անգամ էլ թուրք աւազակ խղճուցի Հիւսէյնի ձեռքից: Հիւսէյնը փախստական էր տաճիկներից և ապաստանել էր իր ծանօթ հայերի մօտ պայմանաւ, որ պիտի խաղաղ ապրէր, բարդութիւն չառաջացնէր, որպէսզի Աղդամի տաճկական պարէտը առիթ չունենար պահանջ դնելու, որ նրան յանձնենք տաճիկներին: Մաչաղի Ջալիլի հետ ծանօթ էի Պարսից սահմաղրական կռիւների ժամանակից: Մաչաղի Ջալիլը, պէտք եղած դէպքում, մեր կողմից նամակ էր տանում Թաւրիզ, յանձնելու մեր ընկերներին:

Շուշու թուրք վաճառականները ընդհանրապէս խաղաղասէր մարդիկ էին, բնաւ կողմնակից չէին տաճկական զործակալներին ևնթակայ մոլեռանդ թուրքերին: Պիտի ասել, որ թուրք վաճառականների խաղաղասիրութիւնը իւր օրինական պատճառն ունէր: Ջրաբերդի, Խաչէնի, Վարանդայի և Դիզակի գիւղացիներից չատ չատերը պարտական էին թուրք վաճառականներին, որոնք վստահօրէն ապառիկ ապրանք էին բաց թողնում ու կամաց-կամաց զանձում իրենց ղրամը: Եւ պիտի ասել, որ գիւղացիները իրենց ճշտապահութեամբ մեծապէս զնահատած ու վստահելի էին զարձած:

Մաշաղի Ջալիլը չեչուած խաղաղասէր թուրքերից մէկն էր, դարձաւ Հրանդին ու ինձ և ասաց՝ երեկ ղեսպանատանն էի, այնտեղ ինձ ասացին, որ ձեր կառավարութիւնը մարդիկ է ուղարկում Ղարաբաղ: Եթէ դուք էք գալու, լաւ կը լինի, ձեր չնորհիւ Շուչին խաղաղ մնաց, եթէ ուրիշ մարդիկ են գալու, ապա որպէսզի խաղաղութիւնը չվրդովւի, լաւ կը լինի, հասկացնէք ձեր կառավարութեանը, որ խաղաղասէր մարդիկ ղրկէ:

Պատասխանելով Մաշաղի Ջալիլին, յայտարարում ենք, որ ոչ մի մարդ չի ուղարկւում, որ ղեսպանատան (կամ հիւպատոսարանի) տուած տեղեկութիւնը ոչ միայն սխալ է, այլ պարզ պրովակացիա, որը չար մարդկանց կողմից յերիւրուած և յայտնուած է ղեսպանին կամ հիւպատոսին:

Մեր հերքումով որքան էլ Մաշաղի Ջալիլը, որպէս խաղաղասէր մարդ, բաւարարուած զգայ իրեն, սակայն, այնուամենայնիւ, որպէս թուրք, պիտի ինքն իրեն մտածէր, թէ՝ ով գիտէ, գուցէ ձևական բան է մեր հերքումը. որպէս հայեր, պարտաւոր էինք գաղտնապահ լինելու: Եւ կարևորը, ներկայ դէպքում, դա չէ, այլ այն, որ մեր կառավարութեան ու կուսակցութեան կայացրած որոշումը, որը պիտի գաղտնի մնար, սեպհականութիւն էր դարձած մեր թշնամուն: Կասկածից դուրս է, որ Ադրբէջանի ղեսպանատանը կամ հիւպատոսարանում Մաշաղի Ջալիլին ասել են, որ Հայաստանի կառավարութեան կողմից ուղարկւող մարդիկ խաղաղ աշխատանք կատարելու համար չեն ուղարկւում. պէտք է զգաստ լինել և հետևել ուղարկւած մարդկանց չարժուձևերին, անակնկալի չգալու համար:

Այո, կարևորը այն է, որ մեր գաղտնիքը սեպհականութիւն է դառնում մեր թշնամուն, մի բան, որ խոր ցաւ է պատճառում և բարկութեամբ համակում մարդուս: Դաշնակցութիւնը, որ մի ժամանակ հաղարաւոր ոստիկանների, ժանդարմների, սահմանապահ ղինւորների, զափթիների[51] սրատես աչքերից գաղտնի, լուռ ու մունջ, ղէնք ու ռազմամթերք էր հասցնում Վան ու Սասնոյ լեռները, այսօր անընդունակ է դարձել մէկ հոգու գաղտնի Ղարաբաղ կամ մի այլ տեղ ուղարկելու: Դա, ի հարկէ, ռուսական վերջին յեղափոխութեան արդասիքն է: Մարդիկ տառապում են լեզուագրութեամբ, բերնում, ինչպէս կասեն, մէկ կաթիլ տաք ջուր պահել չեն կարողանում:

Մաշաղի Ջալիլի հետ ունեցած մեր ղրոյցի ընթացքին, Արաէնին Ղևոնդ Այդինեանի հետ մեր ծանօթացնելուց յետոյ, առանձին ղրուցում էր, և պատասխանում էր Ղևոնդին հետաքրքրող

[51] Ոսկիկան, ասկիկանատուն (Խմբ.): (Խմբ.)

հարցերին Ամերիկայի վերաբերեալ: Երբ վերջացրեց պրոյեկտը, մօտեցաւ մեզ և այդ մոմենտին Մաչառի Ջալիլը մեզ ցանուցիրուն ասելով դուրս գնաց:

– Արսէն, ասացի, տեսա՞ր այն կապոյտ չուխայով և գլխին փափախ ունեցող մարդուն. չուչեցի թուրք վաճառական է, որը պատմեց, որ Ադրբէջանի վերապահատանը և հիւպատոսարանում արդէն գիտեն, որ մեր կառավարութիւնը մարդ է ուղարկում Ղարաբաղ . . .

– Ինչպէ՞ս այդքան չուտ կարողացել են տեղեկանալ. չատ ցաւալի է, ասաց Արսէնը և պարզ նկատելի էր դէմքի արտայայտութիւնից, որ վատ ազդեց վրան մեր յայտնած տեղեկութիւնը:

Նոյեմբեր 29-ին վերջին անգամ տեղի ունեցաւ փոխանակութիւն մեր միջև: Արսէնն աշխատում էր համոզել ինձ, չյամառեմ, համաձայնեմ միասին գնալու Ղարաբաղ. իսկ ես էլ աշխատում էի համոզել նրան, որ յաջողութեամբ չպիտի պսակւի գործը, յետ կանգնի Ղարաբաղ գնալուց, և միացնալ ուժերով պահանջ դնենք Բիւրոյին, վերաքննել Ղարաբաղի մասին կայացրած որոշումը և լուրջ միջոցներ խորհել՝ Ղարաբաղը ղրաւելու և կցելու Հայաստանին: Դա մեր վերջին զրոյցը եղաւ, որից յետոյ այլևս այդ առթիւ զրոյց չունեցանք:

Նոյեմբեր 30-ին Հրանդ Բահաթրեանը, Լևոն Թաղէոսեանը (չուչեցի բարեգործ Սահակ Թադոսեանի որդին, պահեստի սպայ և համակիր ղաչնակցական), Արտաշէս Վարդանեանը և Ներսէս Նասիբեանը հաւաքւած ինձ մօտ, Հիւրանոցում, միասին ժամանակ ենք անցկացնում: Ներսէսը ցաւ յայտնեց, որ անտեղի է եղել Ղարաբաղի Ազգային Խորհրդի դէմ եղած ղժգոհութիւնը, թէ իբր վատնումներ են տեղի ունեցած, քանի որ Այդինեանի տւած բացատրութիւնից երևաց, որ նրա միջոցով ղրամները ժամանակին փոխադրւած են Շուշի և չատ չնչին ծախս է կատարւած Միքայել Արղումանեանի գիտութեամբ:

– Ես էլ ցաւ եմ յայտնում, ասաց Հրանդը, որ դու կեանքի փորձառութիւն ունեցող մէկը, հաւատ ես ընծայել որոշ ինտրիգանների և նրանց ղրպարտութիւնները հասցրել մեր կառավարութեանը, որը հալած իւղի տեղ ընդունելով, պատասխանատու էր համարել Աչոտ Մ. Յովսէփեանին ու ինձ, չնայած որ մենք ղրամների հետ գործ չէինք ունեցել: Լևոնը և Եղիշէն կը վկայեն, որ ես երբէք աղգային ղրամներից չեմ օգտւել, քանի որ ինքս միջոցներ ունեմ. Աչոտը եկել էր Թիֆլիս Իշխան Արղութեանի ցանկութեամբ և նրա ծախսը հոգալու համար կարգադրւել էր Միք. Արղումանեանին, որը կառավարութեան մարդկանցից մէկն էր տեղում:

– Ձկայ չարիք առանց բարեաց, ասում է Ներսէսը, դրամների վատնումն վերաբերեալ տարածւած է Շուշում, բոլորը խօսում էին և պահանջում պարզել իրողութիւնը, յանցաւորներին պատժել: Խնդիրը պարզելու համար անհրաժեշտ էր, որ մէկը յանձն առնէր գնալ Երևան և կառավարութեանը դիմէր: Ոչ ոք յանձն չէր ուզում առնել գնալու, դրամական միջոցները պակասում էին երթուղարձի ծախսը հոգալու համար, ես, որ նոյնպէս իմ միջոցներով ապրող մէկն եմ, պատրաստակամութիւն յայտնեցի իմ ծախսով գնալու և վերադառնալու: Փառք Աստծոյ, որ թիւրիմացութիւնը պարզուեց, զրպարտիչները սևերես կը մնան: Արսէնը կերթայ և կը գեկուցէ ինձնից առաջ, որովհետև ես պէտք է նախ գնամ Բագու, հանդիպեմ մերոնց, յետոյ գնամ Շուշի:

Եւ իրօք, նոյն օրը երեկոյեան գնացքով, Ներսէսը մեկնեց Բագու:

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ ՂԱՐԱՔԻԼԻՍԷՈՒՄ

Դեկտեմբեր 3-ին Թիֆլիսից մեկնում եմ Ղարաքիլիսէ երեկոյեան գնացքով և առաւօտեան հասնում տեղ, Աչոտի մոտ: Հանդուցեալ Արամի (Վանի) քրոջ տղա Սիզօ (Սերգէյ) Տէր Սարգսեանը Փամբակի գաւառական կոմիսարն էր, ժամանակաւոր կերպով իր ընակարանը տրամադրել էր Աչոտին, մինչև զինադադարի չէնքի նորոգութիւնը վերջանար, որպէսզի Աչոտը փոխադրուէր այնտեղ իրեն յատկացուած երկու սենեակը: Եւ ինչպէս պարզուեց, Սիզօն չպիտի մնար իր պաշտօնում, պիտի գնար Թիֆլիս, ուստի դիմել էր կառավարութեանը, որ իր փոխարէն ուրիշ մէկին նշանակեն գաւառական կոմիսարի պաշտօնին:

Ղարաքիլիսէում մեր կազմակերպութիւնը պառակտուած էր երեք մասի՝ ա) Սիզոյի կողմնակիցների, բ) հակասիզոյականների և գ) արևմտահայերի:

Սիզօն հայկական բանակի սպայ էր, տեղական աստիճանով, մասնակցել էր Սարդարապատի հակատամարտին և աչքի ընկել իր խիզախութեամբ: Մեծ ոգևորութեամբ պատմում էր հակատամարտի հրամանատար զօրավար Սիլիկեանի դեկավարութեամբ մղած կռիւներից չատ զրւազների մասին: Պատմում էր, թէ ինչպիսի խիզախութեամբ ու քաջութեամբ էին կռւում դինւորները: Մեր զօրքը ամբողջովին էլեկտրականացած է եղել, և ամէնքը, արհամարհելով մահը, ուռա գոչելով նետւում էին առաջ: Աչքի ընկած չատ դինւորների և սպաների հերոսութիւնները էր նկարագրում: "Շատ յուղիչ էր Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեանի ատանձնած դերը: Նա, երբ Արարատեան դաշտի դինւորութիւնը, արձագանքելով զօր. Սիլիկեանի կոչին, հաւաքւել էր

Սարղարապատում, դեղեցիկ ճառով էլեկտրականացրել էր ամէնքին. սակայն անչափ յուղիչ էր, թէ ինչպէս նա, առանց վախ ղգալու, արհամարհելով մահը, երևում էր առաջաւոր դիրքերում, ոգևորում զինուորներին: Եւ չատ աւելի յուղիչ էր, երբ ջրով լիքը փոքրիկ տակառը մէջքին, ջուր էր հասցնում ծարաւ մարտիկներին, յագնցնում նրանց":

Այդպիսով, Սիզօն որպէս Սարղարապատի ճակատամարտին մասնակցած մէկը, ինչպէս կասեն, արքով էր խօսում, և նրա այդ կեցուածքը դուր չէր գալիս ընկերների մէկ մասին, որոնք լաւել էին նրա դէմ և պիտի ասել, որ տարաձայնութեան բուն պատճառը սկզբունքային որևէ հարց կամ խնդիր չէր, այլ առաջնութեան դեր ունենալու պարագան, պարզապէս աթոռի կռիւ, ռուսական վերջին յեղափոխութեան արգասիքներից մէկը, որը բաժին էր ղարձել բոլոր յեղափոխական կուսակցութիւններին: Յեղափոխութիւնից առաջ, պարզ ու հասկանալի է, յեղափոխական կուսակցութեան անդամագրուողը կանխաւ նկատի ունէր այն բոլոր վտանգները, որոնց կարող էր ենթակայ դառնալ, իսկ յեղափոխութիւնից յետոյ ոչ մէկ դժւարութիւն չկար և որևէ վտանգ էլ չկար անդամագրուելու այս կամ այն կուսակցութեանը: Բոլոր յեղափոխական կուսակցութիւնները օրինականացած էին, աղատ հրապարակային գործունէութիւն ունէին, և տեղի էր ունենում մրցում, բուռն պայքար միմեանց միջև, իրենց ազդեցութեան, ղեկավարութեան տակ առնելու հասարակութիւններին, մի բան, որ չատ բնական ու հասկանալի էր: Եւ կուսակցութիւնների մէջ նոյնպէս մրցում էր առաջանում դաղափարակիցների միջև դեր խաղալու, աչքի ընկնելու և այստեղից էլ յաճախ սկսւում էր աթոռամարտ, անցանկալի հետևանքներով:

Այո, Ղարաքիլիսէի ընկերների միջև սկսած տարաձայնութիւնը, պարզապէս աթոռամարտի հետևանք էր: Եւ պիտի ասել որ լաւած կողմերը՝ սիգոյականները ու հակասիգոյականներ՝ ռուսահայեր էին, թէև Ղարաքիլիսէում բաւականաչափ արևմտահայ դաչնակցականներ կային, բայց երկուերևք հոգի կիսաինտելիգենտ ընկերներ, որոնք ակտիւ դեր չէին խաղում տեղի ունեցող պայքարում: Պայքարը չուտով վերջացաւ, երբ Սիզօն պաչտօնաթող եղաւ ու հեռացաւ Ղարաքիլիսէից, անցաւ Վրաստան ու մնաց այնտեղ:

Հանգուցեալ Արամի դին դագաղի մէջ պատկերող լուսանկարը չրջանակւած կախւած էր Սիգոյի բնակարանում, հիւրասենեակի պատից: Սիզօն պատմում էր, որ երբ դին դրւում է դագաղի մէջ, Ռուբէնը իր թևից բռնում, կանգնեցնում է դագաղի մօտ և երդւեցնում՝ հաւատարիմ մնալու իր քեռու դաւանած գաղափարներին ու սկզբունքներին: Հետագային, սակայն, երբ

յաջորդաբար խորհրդայնանում են կովկասեան հանրապետութիւնները՝ Ադրբէջան, Հայաստան ու Վրաստան, Սիզօն, ինչպէս լսում ենք, յարում է համայնավարութեան:

Ներքին գործոց նախարարութիւնը հրահանգել էր Փամբակի գաւառի ոստիկանութեանը, ամէն կերպ աջակցելու ինձ, ըստ հնարաւորին չուտ յաջողեցնելու գաւառական զեմստուոյի (ինքնավարութեան) պատգամաւորական ժողովի գումարումն ու համապատասխան վարչութեան ընտրութիւնը: Ներքին գործոց նախարարութեան կողմից ես նշանակուած էի պատգամաւորների ընտրական յանձնաժողովի նախագահ և որպէս անդամներ՝ հաշտարար դատաւոր Ստ. Գր. Ենիկոլոպեան, հարկային տեսուչ Ներսէս Գր. Սարգսեան, գաւառական բժ. Դրաստ. Տէր Մկրտչեան և գիմնազիոնի տեսուչ Աշոտ Մելիք Յովսէփեան:

Դեկտեմբեր 7-ին ընտրական յանձնաժողովի անդամներին հրաւիրում եմ աշխատանքի. տեղի է ունենում առաջին նիստը և մարքերի փոխանակութիւնից յետոյ, որոշւում է չփման մէջ մտնել դաշնակցութեան և միւս հոսանքների կազմակերպութեանց հետ, եթէ այդպիսիք կան Ղարաքիլիսէում, հետաքրքրութիւն առաջ բերելու գաւառական ինքնավարութեան շուրջ: Ղարաքիլիսէի (Փամբակի) գաւառը վարչական հետևեալ կազմն ունէր՝ գաւառապետ՝ Պարոյր Ղարիբեան, օգնական՝ Գաբրիէլ Կիրակոսեան գաւառի միլիցիապետ՝ Յովսէփ Մամիկոնեան, Ղարաքիլիսէի կոմիսար՝ Միքայել Սէյրանեան, բոլորը հայկական բանակի սպաներ և դաշնակցականներ, որոնք, համաձայն Ներքին գործոց նախարարութեան հրահանգի, պատրաստւում էին աջակցելու մեզ ամէն կերպ իրենց ունեցած հնարաւորութեան սահմաններում, սակայն անհրաժեշտ էր կուսակցութեան աջակցութիւնը: Պարզ է, ի հարկէ, գաւառապետը և միւս պաշտօնեաները տեխնիկական որոշ աջակցութիւն կարող էին ցոյց տալ ընտրական յանձնախմբի դիմումների համաձայն, գաւառային իշխանութիւններին կարգադրել աջակցելու յանձնախմբի կողմից տեղերում նշանակուած ենթայանձնախմբերին, բայց հասարակական ժողովներ գումարել, պատգամաւորների ընտրութիւն կատարել, չրջանի գիւղացիութեան մէջ հետաքրքրութիւն առաջացնել, նրանց չէր վերաբերում: Կարճ ասած, աւելի քան դժգացում էր դաշնակցութեան աջակցութիւնը: Եւ դա հնարաւոր էր, երբ վերնաւոր պատակտումը ընկերների մէջ և վերացաւ, երբ Ղարաքիլիսէից 10-ին հեռացաւ Սիզօն, որի դէմ խիստ լարուած էին բոլորից աւելի Գրիգոր Ղամարեանը, և տիկին Նատալիա Մուրադխանեանը: Վերջինս, պիտի խոստովանեմ, որ անսպառ եռանդի տէր ու նուիրուած աշխատող էր: Մեր հին, նախայեղափոխական չրջանի կին գործիչներից էր, դեռ օրիորդ եղած ժամանակ անդամագրուած դաշնակցութեանը: Եւ կային

ընկերներ, որ հեգնանքով էին խօսում այդ նիւրւած կնոջ մասին, թէ անհատական փառասիրութիւնից զրդւած է հրապարակ իջել, իւր չարժ ու ձևերով ուշագրաւում է մարդկանց: Մէկից աւելի անգամ առիթներ ունեցայ խստիւ առարկելու նման կարծիք յայտնող ընկերներին, ասելով, որ փառասիրութիւնը դատապարտելի չէ և որպէս թերութիւն չպիտի համարել նիւրւած գործչի համար. դատապարտելի է փառամոլութիւնը, որը յայտնել է մեծաւ մասամբ չատ քիչ գործ կատարող կամ բոլորովին գործ չկատարող մարդկանց մէջ: Ես կուզենայի, որ տիկ. Նատալիայի քննադատները նրա պէս նիւրւածութիւն ցուցաբերէին և փառաւորւէին:

Վերջապէս, ընտրական յանձնաժողովի նախագահի հանգամանքով նախաձեռնութիւն ստանձնեցի, մանաւանդ, որ Սարգիս Մանասեանը համապատասխան խորհուրդ էր տւել՝ ջանալ ընկերներին ի մի բերելու: Որպէսզի միւս հոսանքների պատկանող անհատների կողմից ծուռ բացատրութիւններ տեղի չունենան, անկեղծօրէն անձամբ առիթ ունեցայ խօսելու Էֆէնտի Մարկոսեանի, ռամկավար (կադետ) Տիգրան Հալսումեանի հետ, որ նրանք կազմակերպեն իրենց մարդկանց և մասնակցեն ինքնավարութեան պատգամաւորական ընտրութիւններին:

Դեկտեմբեր 14-ին Սարգիս Մանասեանը, Արշակ Ղազարեանը և Վարոս Բաբայեանը, կառավարական գործով Իջևան գնացած լինելով, այնտեղից գալիս են Ղարաքիլիսէ: Աչոտը ճաշին հրաւիրում է երեքին էլ: Ճաշից յետոյ խօսք է բացւում Ղարաբաղի չուրջ. հանգամանօրէն արտայայտւում է Աչոտը և ցաւ յայտնում, որ կառավարութիւնը պահանջած չափով լուրջ չի վերաբերւել հարցին ու համապատասխան միջոցների չի դիմել, որ արդէն եղած կարգադրութիւնները սխալ են և չեն համապատասխանում Ղարաբաղի իրական պահանջներին: Եւ մարդարէ չպէտք է լինել՝ զուշակելու համար և պէտք է ասել, որ գործը դատապարտւած է անյաջողութեան:

Ես էլ որոշ բացատրութիւններ և մանրամասնութիւններ եմ յայտնում, որոնց տեղեակ էր Մանասեանը, սակայն Արշակն ու Վարոսը անտեղեակ էին և զարմացան, որ ցանկալի ձևով չի կարգադրւել գործը: Վերջում արտայայտւեց Վարոսը և մեղադրեց Բիւրոյին:

Մեծ զայրոյթով արտայայտւեց Յարութիւնը (Թումանեանը), օգտւելով Մանասեանի ներկայութիւնից. Մանասեանը նոյնպէս Յարութիւնի ուսուցիչն էր եղել և Յարութիւնի դասարանի (Բ) դասախարակը: Յարութիւնը երկու դասարան ցածր էր ինձնից և Մանասեանի կողմից գնահատւած աշակերտ էր եղել, որպէս ընդունակ, լաւ սովորող: Եւ պիտի ասել, որ Բ դասարանի

աշակերտները արտակարգ սէր էին տածում իրենց դաստիարակի հանդէպ։

1902/03 ուսումնական տարին, մայիսի սկզբներին, ըստ աւանդական սովորութեան, դպրոցի ամբողջ աշակերտութիւնը կանխաւ մի օր, տեղի ունեցած յայտարարութեան համաձայն, ուսուցչական կազմի և տեսչի՝ տէրտէր Բէնիկ Վրդ. Եղիազարեանի հետ միասին դնացել էինք նշանաւոր Պեկսի աղբիւրի բացատը դրօսանքի։ Պեկսի աղբիւրը պատմական վայր էր դարձել Նուչեցիների, առաւելապէս հայերի համար, որտեղ պիկնիկներ էին ունենում։ Շատ սիրուն, դեղատեսիլ վայր է։ Կարկար գետի ձախ վտակն է հոսում մօտից։ Բացատի չուրջը թխկիների և նման մանրածառների սիրուն անտառ է, որով պատած են դէպի վեր երկարող լեռները, վտակի երկու կողմով։ Յարութիւնը փոքրիկ ատրճանակ ունէր, նչան բռնելով կրակում է ատրճանակից. տեսուչը անմիջապէս կանչում է Յարութիւնին, նրան յայտարարում դպրոցից արձակուած և հրամայում անմիջապէս հեռանալ այնտեղից։ Յարութիւնը իրենց դասարանի խմբապետն էր. նրա դպրոցից արձակուելը շատ ծանր էր աղդել ոչ միայն դասընկերների, այլ և իրենց դաստիարակի՝ Մանասեանի վրայ։ Յարութիւնի արածը պատանիներին յատուկ ոգևորութեան արդիւնք էր։ Երկրորդ դասարանը աշակերտական գաղտնի (դաչնակցական) կազմակերպութեան խմբերից մէկն էր։ Բէնիկ վարդապետը ոգի ի բուին պայքարում էր աշակերտական միութեան դէմ իր քարոզներով ու լրտեսներով. կասկածելով, թէ Յարութիւնը գաղտնի միութեան անդամ է, խիստ պատժի ենթարկեց։ Աշակերտների դէմ Բէնիկ Վարդապետի տարիներ չարունակ կատարած հալածանքի մասին Լէօն գրել է Նուչու թեմական դպրոցի 75 ամեակի պատմութեան մէջ։

Յարութիւնի դասընկերները չրջապատել էին իրենց դաստիարակին և արտասուքոր աչքերով խնդրում էին, որ տեսչին բարկասցի՝ փոխելու իր որոչումը, ներում չնորհի։ Մանասեանի դէմքից պարզ նկատելի էր, որ չափազանց աղդած էր Յարութիւնի արձակման հետևանքով և կրկնակի մտահոգած էր, նախ՝ որպէս դաստիարակ, և երկրորդ՝ որ Յարութիւնը հրապարակով պատժելով, դրկում է ուսումից։ Մանասեանին վիճակուեց բաւական տատապել Յարութիւնի խնդրով, համոզելու համար Բէնիկ Վարդապետին, յետս կոչելու իր արձակած վճիռը։ Հարցը տարուեց մանկավարժական ժողով, որտեղ երկար ու բարակ մտքերի փոխանակութիւն կատարուեց և չնորհիւ ուսուցիչների հնչող մեծամասնութեան կարծիքի, որոչուեց ներել Յարութիւնին։

-Այ տղայ, ժամանակը չի ադդել վրադ, գու էլի մնացել ես նոյն տաքարիւնը և չուտ բռնկուողը, ասում է Մանասեանը Յարութիւնին։ Տեսնո՞ւմ ես, ինչպէս Աչոտը պադարիանութեամբ

բացատրութիւններ է տալիս և կարծիքներ յայտնում. դու մէկ անգամից պտոյտ ես անում, այդպէս չի լինի, լաւ չէ:

– Վարժապետ, ասում է Յարութիւնը, Աչոտը Պետրոզրադի համալսարանից վկայուած իրաւաբան է, իսկ ես մի սովորական ուսուցիչ. Յարութիւնի պատասխանից բոլորս ծիծաղեցինք:

– Քո ասածից պէտք է եզրակացնել, որ եթէ իրաւաբանութիւն սովորած լինէիր, պաղարիւն կը դառնայիր, ասում է Մանասեանը ժպտալով:

– Էդպէս չեմ ասում, ասր կառավարութեան կողմից երկու հոգի եկան Ղարաբաղ՝ Միքայել Արղումանեանն ու Իշխան Արղութեանը, ծանօթացան տեղի վրայ երկրի իսկական դրութեան հետ, վերադարձան, զեկուցեցին կառավարութեանը, բացի այդ, Ազգային Խորհուրդը հանգամանօրէն զեկուցումներ է դրել Արսէն Շահմազեանին, և վերջինս ուղարկել է կառավարութեանը, և այդ բոլորից յետոյ, կառավարութիւնը ականջ է կախում հարցին մակերևոյթօրէն ծանօթ մարդկանց, հաւատ ընծայելով նրանց՝ սխալ որոշումներ կայացնում, ինչ որ մարդուս մէջ զայրոյթ է առաջացնում և բռնկեցնում, ասում է Յարութիւնը: Մանասեանը, Ա. Ղազարեանն ու Վարոսը յաջորդ օրը գնացքով մեկնեցին Երևան:

Դեկտեմբերի 17-ին տեղի ունեցաւ ընկերական խառն ժողով Գէորգ Մելիքը Գէորգեանի տանը. ներկայ էին տեղի աչքի ընկած ընկերները՝ Գր. Ղամարեան, տիկ. Նատալիա Մուրադխանեան, Մամիկոն Մխիթարեան, Միսակ Խաչատրեան, Անուշաւան Ղազարեան, Արտաւազդ Գրիգորեան, Պարոյր Ղարիբեան, Գուրգէն Կիրակոսեան և Սանդրօ Բարլանեան: Մտքերի փոխանակութիւն ունենալով, որոշեց, որ տեղացի ընկերները կազմեն ցուցակ բոլոր ընկերների, որոնք եղել են չարքերում և մի ցուցակ էլ այն մարդկանց, որոնք համակրանք են տածում դաշնակցութեանը և որոնց կարելի է ընդունել մեր չարքերում: Ցուցակները կազմելու աշխատանքը յանձնարարուեց Ղամարեանին, Ղազարեանին, Միսակ Խաչատրեանին և Տիկ. Նատալիա Մուրադխանեանին. վերջինս պիտի աշխատէր կանանց շրջանակում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՐԱՍԻՄ ԲԱԼԱՅԵԱՆԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 19-ին Երևանից Գեր. Բալայեանը հեռագրում է հանդիպել իրեն կայարանում:

Դեկտեմբերի 20-ին տեղի է ունենում մեր հանդիպումը: Նա յայտնում է, որ Բիւրոյի կարգադրութեամբ գնում է Թիֆլիս կամաւորներ արձանագրելու և ուղարկելու Բայազէդ՝ այնտեղ մի զումարտակ կազմակերպելու համար: Ապա ասաց, որ մի չարաթից պիտի վերադառնայ Երևան և հարց բարձրացնէ Բիւրոյում՝ ինձ

Ղարաբաղ ուղարկելու։ Ես կտրականօրէն դէմ արտայայտուեցի, խնդրելով, որ նման հարց չյարուցանի, ես չեմ գնայ Ղարաբաղ. կտրուկ կերպով հրաժարուել եմ թէ բանաւոր և թէ գրաւոր կերպով։ "Թող ուղարկեն այնպիսի մարդկանց, որոնք կարող են էժան նստել կառավարութեան վրայ։ Ազգային Խորհրդի անդամների վրայ կատարած մի քանի հաղար ռուբլիի ծախսը վատնում է համարւում, իբր թէ Ազգային Խորհրդի անդամների մէջ պատասխանատուութեան գիտակցութիւնն է պակաս։ Թող ուղարկեն Ղարաբաղ այնպիսի մարդկանց, որոնց վստահում են։ Բացի այդ, որ գլխաւորն է և էականը, ես դէմ եմ Ղարաբաղում ապստամբութիւն բարձրացնելուն, որովհետև համապատասխան պատրաստութիւն չունենք ու չպիտի ունենանք, մանաւանդ զօրին տրամադրող այն չնչին միջոցներով, որ բաց է թողնւում։ Եւ միանգամայն պէտք է հրաժարել «նա բախտինա» ասած զօրծունէութիւնից ու լինել աւելի քան համոզուած, որ առանց Հայի Սամսոն գրաւելու, Ղարաբաղը անհնարին կը լինի միացնել մայր երկրին. այլապէս, ապստամբութեան ամէն փորձ կը լինի իսկական արկածախնդրութիւն, դատապարտուած անյաջողութեան՝ մեծ կորուստներով։ Ի սէր Աստծոյ, թող, Գերասիմ, վազ անցիր այդ խնդրից։

Դեկտեմբեր 23-ին Յարութիւնը հեռագիր է ստանում Թիֆլիսից իւր մեծ քրոջից՝ Աննայից և եղբօրից՝ Քրիստափորից, աճապարելու այնտեղ, մօրը տանելու Շուշի, որտեղից ամիսներ առաջ եկել էր Թիֆլիս, հիւանդացել, ըչմկւել և բժշկի խորհրդով պիտի վերադառնար Շուշի, կաղդուրւելու։ 24-ին Յարութիւնը թողնում է դպրոցը, անցնում Թիֆլիս, մօրը հասցնելու Շուշի և վերադառնալու իր պաշտօնին, եթէ արգելարգիլ որևէ հանգամանք չլինի։ Յարութիւնից տասն օր անց նամակ ենք ստանում Աչոտն ու ես, գրում է, որ հնարաւորութիւն չունի վերադառնալու, մնում է այնտեղ։ Լսում ենք, որ Դալի Ղաղարը տասներկու հոգով Ղազախի վրայով անցել է Ղարաբաղ։

1920 ԹԻՒ

Յունուարի 6-ին Թիֆլիսից գալիս է Թադէոս Տէր Ղազարեանը, Բազի ընկերներից, և իջևանում է մեզ մօտ։ Պիտի գնայ Երևան, սակայն Կորիւնի առարկութեամբ իջել է գնացքից, յայտնելու ինձ, որ Թիֆլիսի ընկերները ինձ Ղարաբաղ ուղարկելու հարցն են բարձրացրել Երևանից Թիֆլիս գնացած մեր դեկավար ընկերների մօտ։ Յայտնում եմ, որ ընկերները իղուր են այդ հարցը հրահրում, որովհետև սպառուած, վերջացած է։ Թադէոսը ծանօթ էր խնդրին և տարօրինակ էր համարում իմ մերժումը։ Հարկադրուած

եղանք Աչոտն ու ես, ամփոփ պատմելու անցած-դարձածը, և ես խնդրեցի, որ ինքն այդ հարցը սպառած համարի և Երևանում հրահրելու փորձ չանի:

Թաղէոսը յաջորդ օրը մեկնեց Երևան:

Յունուարի 8-ին Գերասիմ Բալայեանը հեռագրում է Երևանից՝ հանդիպել իրեն կայարանում:

Յունուարի 9-ին Գերասիմի հետ ենք կայարանում. յայտնում է, որ Բիւրոյի կողմից լիազօրած են խօսելու ինձ հետ, որ չուտով վերջացնեմ գործս, Ղարաբաղ անցնելու համար:

-Գերասիմ, ասացի, կարծում եմ, պէտք չունես, որ կրկննենք փոխասացութիւնը: Աւելորդ է այդ մասին խօսելը: Երկու-երեք օր առաջ էլ Թաղէոսն էր Թիֆլիսի ընկերների կողմից նոյն հարցի չուրջ խօսել ինձ հետ և բացասական պատասխան ստացել: Անգամ եթէ համաձայնեմ անցնել Ղարաբաղ, ոչնչով նպաստած չեմ լինի գործին. ընդհակառակը՝ կարող է երկիչչանութիւն ստեղծել և գործը կը տուժի: Վերջապէս, արդէն ընդունած գործելակերպին համամիտ չեմ և, կարճն ասած՝ չանը ղոռով որսի չեն տանում:

Այնուհետև Գերասիմը յայտնեց, որ գնում է Թիֆլիս: Բասարգեչարում Համազասպի հրամանատարութեան տակ Ղարաբաղի համար կազմակերպւող ջոկատին կամաւորներ արձանագրելու և ճամբելու Ղարաքիլիսէ, ուստի խնդրում է աջակցել այդ կամաւորներին, որպէսզի չուտ մեկնեն Բայազէդ:

Յունուարի 13-ին Վահան Նաւասարդեանի ձեռքով զրուած, պաշտօնական զրութիւն եմ ստանում Բիւրոյից, ամէնակարճ ժամանակում վերջացնելու գործերս, մեկնելու Երևան, Ղարաբաղ անցնելու համար:

Ամփոփ մի նամակով պատասխանում եմ Բիւրոյին, կրկնելով քանիցս արտայայտած իմ կարծիքը Ղարաբաղի վերաբերեալ և յայտնում, որ ես չեմ կարող Ղարաբաղ գնալ, գտնելով, որ ձեռք առնւած միջոցներով հնարաւոր չէ նպատակի հասնել:

Յունուարի 15-ին Գէորգ Ղաղարեանը հեռագրում է Երևանից, կայարանում հանդիպել Ռուբէնին և Վրացեանին, որոնք պիտի վերադառնան Թիֆլիսից: Գնում եմ կայարան, բայց նոյն օրւայ գնացքով չեն գալիս:

Յունուարի 21-ին Գերասիմը հեռագրում է Թիֆլիսից հանդիպել իրեն կայարանում: 22-ին հանդիպում եմ. Գերասիմն ասում է՝ թէ Ռուբէնն ու Վրացեանը պարտադրել են, որ

վերաղարձիս չտապացնեմ, չուտ գնաս Երևան: Նրանք երևի արդէն խօսել են քեզ հետ":

Ասացի, որ նրանց չեմ հանդիպել: Գերասիմը չատ է ափսոսում և նորից սկսում է գլխիս ամառարան կարդալ. սակայն խնդրում եմ Գերասիմին, որ վաղ անցնի այդ խնդրից:

Գերասիմը յայտնեց, որ Ղարաբաղի նախկին հրամանատար կապիտան Արտաշէս Վարդապետեանը Թիֆլիսում ծանր հիւանդ, պառկած է հիւանդանոցում: Այդ տխուր լուրը չատ ծանր աղդեց վրաս. վերաղարձայ տուն, պատմեցի Աչոտին, որը նոյնպէս խիստ աղդուեց: Հեռագրեցի Հրանդ Բահալճրեանին՝ հեռագրով տեղեկացնելու Արտաշէսի առողջական վիճակի մասին:

Նոյն օրը, Յունուարի 23-ին, վախճանւում է Արտաշէսը, և Հրանդը հեռագրով մահուան մասին յայտնում է յաջորդ օրը: Արտաշէսը եղել է Արևմտեան ճակատում զօր. Բուդկու[52] բանակում, աչքի ընկել իր քաջութեամբ, արժանացել Գէորգեան խաչի: Ջնայած իր երիտասարդ հասակին, պատերազմական գործողութիւնների ընթացքին Թրծւելով ու կոփւելով մարտականօրէն, առնականացել էր: Շատ համեստ մարդ էր. պատերազմը բնաւորութեան վրայ աղդել, պաղարիւն էր դարձրել: Ինքը և իրենից մեծ և փոքր երկու եղբայրները վաղաժամ որը էին մնացել, ծնողները, Վարանդայի ձարտար զինուագիներ, բնական մահով վախճանւել էին, և որբերի խնամքը ստանձնել էր իրենց հօրեղբայրը, Շուչու Ամենափրկչեան (Ղազանչեցոց) եկեղեցու քահանայ Տէր Յարութիւնը: Արտաշէսը միչտ կասէր, թէ զինուորականի համար մեծ ղժբախտութիւն է երիտասարդ հասակում փափուկ մահճում մեռնելը: Կեանքի մի ծաղրն է, Արևմտեան ճակատում տասնեակ անգամներ բաց աչքերով մահուան ընդառաջել ու անվնաս անցնել գովից, ապա, խաղաղ պայմաններում, զոհ դառնալ մահուան:

Եւ ցաւալիօրէն անհանդուրժելի է այն վերաբերմունքը, որ մեր զինուորական իշխանութիւնը ոչ մէկ արժէք տուաւ թէ Արտաշէսին և թէ միւս սպաներին, որոնք, զեներալ Շատիլովրդի գործ դրած ճնշումների հետևանքով, հարկադրւած եղան հեռանալ Ղարաբաղից, մեր աքսորւելուց յետոյ: 1917 թ. աշնանից ի վեր մինչև 1919 թ. կէսերը, մեր բոլոր սպաները առանց ոռճիկի, ինչպէս կասեն՝ մի փոր հացով են ծառայել ժողովրդին, միչտ ննջակայ ղրկանքների: Սակայն անտրտունջ տարել են իրենց վրայ դրւած ծանր պարտականութիւնը և կռիւների ժամանակ արժանավայել

---

[52] Նիկոլայ Ռուզսկի (1854-1918). Ռուս գեներալ. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գլխաւորել է տարբեր բանակներ, եղել է Հիւսիս-Արևմտեան, Հիւսիսային ճակատների գլխաւոր հրամանատար: (Խմբ.)

կերպով ղեկավարել մարտական ուժերին ու քաջութեամբ դիմագրել տաճկական ու թաթարական հորդաներին: Մեր զինուորական նախարարութիւնը մերժեց ծառայութեան ընդունել Արտաշէսին և ուրիշ վեց հոգու բանակի մէջ: Քանիցս զօրավար Արարատեանի հետ առիթ ունեցայ խօսելու, Ռուբէնին խնդրեցի, միջամտեց, բայց չյաջողուեց ծառայութեան ընդունել տալ սպաներին, ուստի Արտաշէսը անցաւ Թիֆլիս, իսկ միւսները՝ Բագու, որպէս սովորական քաղաքացիներ, աշխատանք որոնելու: Արտաշէսը միջոցներ չունէր, Թիֆլիսում հայրենակիցներից մէկի օգնութեամբ քարշ էր տալիս կեանքը, տաք հագուստ չունենալով, մրսում, հիւանդանում է ծորերի բորբոքումով և վախճանւում:

Աչոտի հետ միասին, ինչպէս կասեն, դարդ-դարդի ենք տալիս, անդօր բարկութեամբ համակուած: Բարեկիրթ, համեստ, անձնազոհ, քաջ զինուորական, կռիւներում ծրծուած ու կռուած, պատրաստակամ ծառայելու հայրենի բանակում և՝ մերժում: Էլ ինչպէ՞ս չհամակուես անդօր բարկութեամբ: Ի դէպ, քանի-քանի զինուորականների հեգնանքն եմ լսել զօրավար Արարատեանի մասին, որ ցարական բանակի սպայ է եղել, հասած զնդապետութեան, Հայաստանի կառավարութիւնը զօրավարի աստիճան էր տուել: Ըստ հեգնանքով խօսողների, զօր. Արարատեանը առաւելապէս փօրմալիստ էր և դիտող աչք ունէր, հետևում էր զինուորներին՝ արդեօք պատւի առնում են սպաներին, թէ՞ ոչ: Նոյն ձևով հետևում էր նաև սպաների հանդէպ իրենցից բարձր զինուորականների ունեցած վերաբերմունքին:

Փարիզից մեր պատւիրակութիւնից հեռագիր է ստացւում, որ Վերսայլի Վեհաժողովը de facto ճանաչել, ընդունել է Հայաստանի անկախութիւնը:

Յունուարի 31-ին պաշտօնական հանդիսակատարումով բացւում է Հայաստանի անդրանիկ համալսարանը: Աչոտը հրաւէր ստացած լինելով կրթական նախարարութիւնից, մեկնում է Ալէքսանդրոպոլ, ներկայ գտնւելու համալսարանի բացման հանդիսակատարման:

Ինչպէս յիշւեց իր տեղում, Յարութիւն Թումանեանը Շուշուց հեռագրով յայտնել էր, որ Հնարաւորութիւն չունի վերադառնալու իր պաշտօնին, ուստի Աչոտը, տեղեկագրելով այդ մասին կրթական նախարարութեան, խնդրում է ուրիշ մէկ ուսուցիչ ուղարկել, ստանձնելու Յարութիւնի դասերը: Կրթական նախարար Նիկոլ Աղբալեանը, անձամբ գրած նամակով, յայտնում է, թէ աղատ ուսուցիչ չունի և խնդրում է, որ Աչոտն ու մանկավարժական կազմը խելք-խելքի տան և մի ելք գտնեն: Յարութիւնը երրորդ, չորրորդ և

հինգերորդ դասարաններում աւանդում էր հայոց լեզու և հայոց պատմութիւն:

Գիմնազիայի (երկսեռ) ուսուցչական կազմի անդամներն էին՝ Աչոտ Մելիք Յովսէփեան՝ տեսուչ, դասատուներ՝ Աչոտի կին Սիրանուշը, դոկտոր Դրաստամատ Տէր Մկրտչեան՝ բնախօսութիւն և մարդակազմութիւն, ինժ. Աղաբաբեան՝ մաթեմատիկա, Սուրէն Մարկոսեան՝ ռուսաց լեզու, Աչխէն Քոչարեան՝ ռուսաց լեզու, Տիկին Մարկոսեան՝ հայոց լեզու, Ռուբէն Աթայեան՝ նկարչութիւն, Սամուէլ Մելիք Գէորգեան՝ մարզանք, Սամուէլեան Սարգիս՝ մարմնամարզութիւն:

Աչոտը և ուսուցչական կազմը հետաքրքրւում են, թէ կա՞յ տեղում հայկական դպրոցասէր մէկը, որ կարողանար փոխարինել Յարութիւնին, բայց այդպիսի մէկը չի գտնւում: Տեսուչը և ուսուցչական կազմը բաւական խելք-խելքի տալուց յետոյ կանգ են առնում Ղարաքիլիսէում հայկական կրթութեամբ մի ակ ազատ մարդուն՝ նաստիս վրայ: Կասկածից դուրս էր, որ իմ մասին տեղեկութիւն տուողը ուսուցիչներին եղել է Աչոտը, և երբ այդ մասին յայտնեց ինձ, ծիծաղեցի:

– Այ մարդ, ես ի՞նչ վարժապետ եմ, արտաքինով իսկ նչոյլի չափ վարժապետի տեսք չունեմ, ասացի, էլ աւելի պինդ ծիծաղելով:

Եւ իրօք, լեզդու չալից կարած ֆրենչ բաճկոն, գալիճէ չալվար, մինչև ծնկներս փաթաթանոցներ, ղինւորական պլաչէ ուսերիս և հասարակ ջարդմրճած մի գլխարկ գլխիս, իսկական վարժապետ: Կարելի՞ էր չծիծաղել:

– Աչոտ, ձեռք քաշիր ինձնից, ես վարժապետ լինել չեմ կարող: Ճիշտ է, ես ռէպետիտոր եղել եմ և աղքատ երեխաների զրագիտութիւն (այբուբէն) սովորեցրել եմ, բայց դա չի նշանակում, թէ կարող եմ վարժապետ լինել և դասարան կառավարել, դա իմ գործը չէ: Ուսուցիչ լինելու համար պէտք է բնականից ձիրք, հակում ունենալ, որից միանգամայն զուրկ եմ ես:

– Փորձիր, գուցէ կամաց-կամաց կը կարողանաս հունի մէջ մտնել, մի կերպ հոլա տանես, ուսումնական տարին աւարտենք, յաջորդ ուսումնական տարւայ համար, կարծում եմ, կը կարողանանք կրթական նախարարից ուսուցիչ ընդունել:

– Ես փորձի պէտք չունեմ, ասացի, վաղ անցիր ինձնից:

Աչոտը գիմնազիայի շէնքում երկու սենեակ էր ստացել, մէկը ննջարան, որում ինքն ու կինը՝ Սիրանուշը, միւսը՝ հիւրասենեակ, ճաշարան, որտեղ ես էի զիչերում և ինքնավարութեան ընտրական նախնական աշխատանքի զրագրութիւն անում:

Աչոտը, հարկաւ, ուսուցիչներին յայտնում է իմ մերժման մասին, ուսուցիչներից Ռ. Աթայեանն ու Ս. Մելիք-Գէորգեանը հարցնում են, թէ ինչու չեմ համաձայնում և խորհուրդ են տալիս չմերժել, որովհետև առանձին մի դժուարութիւն չկայ, գործի անցնեմ, որ դպրոցի պարապմունքները կանոնաւորւեն: Սակայն ամէնքից աւելի իմ օձիքից պինդ էր բռնել դոկտոր Դրաստամատ Տէր Մկրտչեանը: Մարդը երկու համալսարան էր աւարտել, Մոսկւայում բնագիտական ֆակուլտէը , իսկ Ժընևում՝ բժշկական: Լաւ բժիշկ էր, ուշադիր հիւանդներին և, իբրև բժիշկ, բնաւ կարիք չունէր ուսուցչութիւն անելու, բայց մարդը սիրում էր դպրոցը, մատաղ սերնդի կրթութեան գործը: Կարճ ասած, ի բնութենէ հակում ու ձիրք ունէր ուսուցչութեան: Շատ պարզ և ընկերական մարդ էր, ուստի չատ էր ուղում համոզել ինձ, որ ընդունեմ առաջարկւած ուսուցչական պաշտօնը և, ի վերջոյ, չնորհիւ իւր բարեհամբոյր, անկեղծ վերաբերմունքի, կարողացաւ համոզել ինձ, ստանձնելու ուսուցչական պաշտօն Ղարաքիլիսէի երկսեռ գիմնազիայում, ժամանակաւորապէս, մինչև կարողանան մէկին գտնել:

– Եզիչէ, ասում է Դոկտորը, եթէ երկու չաբաթ համբերութեամբ պաշտօնավարես, երրորդ չաբաթը պիտի զգաս, որ արդէն ուսուցիչ ես և պիտի սիրես գործը:

– Դոկտոր, ես գիտեմ ու համոզւած եմ, որ ուսուցչութիւնն իմ բանը չէ: Դուք բժիշկ էք և որովհետև ուսուցչական ձիրք ունէք, ձեր բժշկական գործի ժամերից կտրում, նւիրում էք մեր մատաղ սերնդի կրթութեան գործին, որը ձեր սրտին չատ մօտ է և սիրում էք այն: Ես չորան մարդ եմ, ինձ համար դիւրին է հազար գիւղացիների կամ բանւորների հետ գործ ունենալ, քան թէ քսան – երեսուն հոգուց մի դասարան կառավարել:

– Եղիչէ, ինչպէս տեսնում ես, ասաց Դոկտորը, դպրոցը առանձին վերակացու չունի, բոլորը բռնւած են դասերով. տեսուչն անգամ աղատ ժամ չունի և, մէկ ուսուցչի պակաս ունենալու պատճառով, պարապմունքները խանգարւում են: Այն դասարանը, որը հայոց լեզւի և պատմութեան դաս ունի, ուսուցիչ չունենալով, աղմկում է և խանգարում միւս դասարաններին: Այնպէս որ, կարականօրէն մի մերժիր, գոնէ ժամանակաւոր կերպով ստանձնիր ուսուցչի պաշտօն, հէնց չորանաւարի պարապիր աշակերտների հետ ժամանակաւորապէս, մինչև կարողանանք մէկին գտնել. դասարանում քո ներկայութեամբ աշակերտները հանգիստ, լուռ կը մնան և հարևան դասարաններին չեն խանգարի:

– Հէնց այդքանն էլ բաւական է, մինչև մի ճար անենք, ասաց Աչոտը, որ մինչ այդ լուռ էր:

Երկար փոխադարձութիւնից յետոյ, ներքին ճնշում գործ դնելով, ես համաձայնեցի. սակայն միաժամանակ որոշեցի ինքս փնտռտուք կատարեմ տեղում կամ նամակներ գրեմ Երևան ու

Թիֆլիս՝ ծանօթ ընկերների, որ մէկին գտնեն, և ես կարողանամ օձիքս ազատել, որովհետև աւելի քան համոզուած եմ, գիտեմ, որ ուսուցչութիւնն իմ բանը չէ:

Յաջորդ օրը Աչոտը ինձ տարաւ Գ դասարան, ներկայացրեց որպէս հայոց լեզուի և պատմութեան վարժապետ, ապա, յաջորդ օրերին՝ Դ և Ե դասարանները:

Գ դասարանում թողնելով ինձ, դուրս գնաց Աչոտը. մնացի մէն-մենակ 36 աշակերտուհիների դիմաց: Անմեղունակ երեխաները, երեք չարաթ հայերէնի դասին առանց ուսուցչի մնալով, բնականաբար իրենց հունից դուրս էին եկել, իրարու կամացուկ բթում էին, ուստի վարժապետական խստութեամբ ասացի, որ հանգիստ նստեն: Դասարանի աշակերտուհիների ունեցած տարիքի համեմատութեամբ մեծ տարիքով և մեծի դէմքով մի աղջիկ նստել էր առաջին նստարանին և տեղում չարժուն վիճակում էր, ուստի ասացի նրան, որ փոխադրւի վերջին նստարան և այնտեղ նստած ցածրահասակ աշակերտուհին դրաւի իրա տեղը: Երբ կտրուկ կարգադրութիւն էի անում, առաջին և երկրորդ չարքի տղաները իրարու ասում են՝ "չատ խիստ է երևում", և ես լսում եմ նրանց խօսքերը և մտքումս յայտնում իրենց, թէ՝ "երեխէք, ունեցածս վարժապետական չնորհքը հէնց այդ խստութիւնն է":

Ասացի, որ հայոց լեզուի դասագրքերը դենն գրասեղանին. առաջին չարքում նստած մէկին առաջարկեցի կարդալ ուսուցչի տւած վերջին դասը, բաւական վարժ կարդաց: Ընտրելով մէկ նախադասութիւն, առաջարկեցի վերլուծել, յայտնել, որն է ենթական, ճիշտ պատասխանեց՝ ստորոգեալը, մի պահ կանգ առաւ. այդ միջոցին տասնեակ մատներ բարձրացան, գոչելով՝ "պարոն, ես ասեմ, պարոն, ես ասեմ": Մատները ցած կարգադրեցի, յայտարարելով, թէ՝ երբ հարց կը տամ, ով կարող է ասել, այն ժամանակ մատ կը բարձրացնէք": Տղան ճիշտ յայտնեց նաև, թէ որն է ստորոգեալը: Այդպէս մի չարք աշակերտուհիների քննելով դասաւանդութեան առաջին ժամն անցկացրի:

Երկրորդ օրը հայոց պատմութեան դաս ունէի Դ և Ե դասարանում: Դասագիրքը Ստ. Պալասանեանի "Հայոց Պատմութեան" հատորն էր, որով և ինքս եմ անցել Նուչու Թեմական դպրոցում:

Ուսուցչի տւած վերջին դասը Վարդանանց պատերազմն էր: Հինգ հոգի դասը պատմեցին, երկուսը լաւ, երեքը թոյլ: Երեք օր չարունակ մի միտք տանջում էր ինձ, այն, որ համաձայնեցի ժամանակաւորապէս ուսուցչութիւն անել, բայց պարզւում է, որ երեք օրից աւելի ի վիճակի չեմ մնալու ստանձնածս պաշտօնում և

պէտք էր հրաժարուէի, առանց մաղաչափ օգուտ տուած լինելու: Եւ միևնոյն ժամանակ աչք էի ածում, արդեօ՞ք որևէ մէկը չի, գտնուի, որ փոխարինէր ինձ: Երկար մտածելուց յետոյ կանգ առայ ընկ. Անուշաւան Ղազարեանի վրայ, որը որբանոցի դպրոցում ուսուցիչ էր, որոշեցի անձամբ խօսել հետը, ընկերաբար համոզել՝ ինձ փոխարինելու:

Մի քանի անգամ կուսակցական խորհրդակցական ժողովներում մտքերի փոխանակութիւն ունանալուց յետոյ Ղարաքիլիսէում եղած ինտելիգենտ ընկերներ գործի էին անցել և կարճ ժամանակում 10-ից աւելի խմբեր կազմակերպել: Քաղաքում եղած կարող ուժերի, գլխաւորապէս ուսուցիչների միջև բաժանել խմբերը, նրանց հետ դրոյցներ ու դասախօսութիւններ ունենալու համար: Այդ ուսուցիչներից մէկն էր Անուշաւան Ղազարեանը, Ներսիսեան դպրոցը աւարտած և եռանդ ու աւիւն ունեցող կուսակցական: Նա ամուսնացած չէր, կը նշանակէ՝ ընտանեկան հոգսերով ծանրաբեռնուած չէր, ինչպէս միւս կուսակցական ուսուցիչները, որոնք արդէն ընտանիք կազմած, չոջուխ-մոջուխներ ունէին. ուստի որոշեցի կանխաւ Անուշաւանի համաձայնութիւնն առնել, որ փոխարինի ինձ, ապա վստահօրէն հանգստեան կոչեմ ինքզինքս, որպէս բազմավաստակ ուսուցչի . . .

– Անուշաւան, ինչպէս գիտես, Յարութիւն Թումանեանը արձակուրդով դնաց Թիֆլիս՝ մօրը փոխադրելու Շուշի և վերադառնալու. գնաց ու չկարողացաւ վերադառնալ, կրթական նախարարը պահեստի ուսուցիչ չունէր ուղարկելու տեղը, ուստի Աչոտն ու Դոկտոր Դրաստամատը վզիս դրին, որ փոխարինեմ Յարութիւնին, մի կերպ եօթ տանեմ մինչև տարեայ վերջը: Յանձն առայ ակամայից, որպէսզի դպրոցական պարապմունքները չխանգարուեն, թէև խորապէս ղգում և ասում էի, որ ես ուսուցչական չնորհք չունեմ: Վերջապէս, երեք օր հայոց լեզուի և պատմութեան դաս աւանդելով, փորձով աւելի քան համոզուեցի, որ ուսուցչութիւնը իմ բանը չէ, ուստի որոշեցի և եկայ ընկերաբար խնդրելու, որ դու փոխարինես ինձ:

– Ընկեր Եղիչէ, ինձ համար չատ ծանր կը լինի, ես որբանոցի դպրոցում արդէն 24 դաս ունեմ չաբաթական, եթէ 24 դաս էլ վրան դայ, 48 դաս, որ միանգամայն վեր է իմ ֆիզիկական ուժերից: Ես միաժամանակ դպրոցի տեսչի պաշտօն եմ վարում, ալիտի տասներկու դասից աւելի չունենայի չաբաթական, բայց հարկադրուած եղայ ընդունել, որովհետև բոլոր միւս ուսուցիչների չաբաթական դասերի քանակը նորմալից աւելի է, ուսուցչի պակասի հետևանքով: Բացի այդ, կուսակցական երեք խմբի հետ դրազումը պարտադրաբար դրել են վզիս, այնպէս որ, հնարաւորութիւն չունեմ փոխարինելու քեզ:

– Գիտե՞ս ինչ, Անուշաւան, հէնց այս վայրկեանից քեզ միանգամայն ազատ համարիր կուսակցական որևէ աշխատանք

կամ պարտականութիւն կատարելուց, քեզ բաժին ընկած խմբերի հետ ունենալիք դրադումները և աշխատանքները եթէ նկատի առնեն քեզ համար, կը ստանձնեմ ինքս, քո փոխարէն աշխատելու, միայն թէ մի լաւ մտածիր վեր ու վար, արդեօք հնարաւոր չէ՞, քո դասերի կէսը բաժանես ձեր դպրոցի այն ուսուցիչների միջև, որոնք համեմատաբար չատ չեն ծանրաբեռնուած, և դու ստանձնես գիմնազիայի դասերը:

– Քանի որ ինձ ազատ ես կացուցանում կուսակցական աշխատանքներից, ես կը փորձեմ, եթէ յաջողւի, դասերիս կէսը բաշխելու ուսուցիչների միջև, կը փոխարինեմ քեզ: Մենք այսօր երեկոյեան մանկավարժական ժողով ունենք. կը խօսեմ ընկերների հետ և վաղն արդիւնքի մասին կը յայտնեմ քեզ:

–Անուշաւան, խնդրում եմ պատասխանդ վաղւան չձգես. ձեր մանկավարժական ժողովը որքան էլ երկար տևէ, մինչև ուշ գիչեր, հոգ չէ, կը սպասեմ քեզ, որ ժողովից յետոյ անմիջապէս անցնես մեզ մօտ և արդիւնքի մասին յայտնես:

– Շատ լաւ, ասաց Անուշաւանը:

Աչոտին յայտնեցի Անուշաւանի հետ ունեցածս դրոյցի մասին: Հարկաւ, Աչոտն էլ գոհ մնաց, որովհետև Անուշաւանին ճանաչում էր, ծանօթ էր ու գիտէր, որ որակեալ լաւ ուսուցիչ էր, ինձ պէս չորան չէր:

– Լաւ, ասաց Աչոտը, բայց ինչպէ՞ս պիտի պատճառաբանել այսքան արագ փոփոխութիւնը երեք օրւայ մէջ, եթէ Անուշաւանը փոխարինէ քեզ:

– Այդ մասին ես մտածել եմ. յայտարարելու ձևն ու պատճառաբանութիւնը թող ինձ:

Երեկոյեան բաւական ուշ Անուշաւանը եկաւ մեզ մօտ, յայտնելու, որ յաջողել է 12 դաս տալ երկու հոգու և վաղը չէ միւս օրը կը գայ դպրոց ինձ փոխարինելու:

–Կեցցես, Անուշաւան, խորապէս զգացած եմ քո ընկերական վերաբերմունքից, ասացի՝ սեղմելով ձեռքը:

Առաւօտեան հայոց լեզւի և պատմութեան դասագրքերն առնելով, գնացի ուսուցչանոց. արդէն ուսուցիչները եկել էին. դարձայ Դոկտորին ու ասացի. "Դոկտոր, լսելով ձեր խորհուրդը, յանձն առայ ժամանակաւոր կերպով ուսուցչութիւն անել, թերևս կարողանայի չարունակել պաշտօնս մինչև ուսումնատարւայ վերջը, սակայն երեք օրւայ իմ ուսուցչական փորձը աւելի քան պարզ դոյց տուաւ, որ ուսուցչութիւնն իմ բանը չէ, ուստի, ինչպէս թուրքերն են ասում կանաց ապահարդան տալիս, " ջան ազիզ, քեաբին հալալ"[53], նոյնպիսի յայտարարութիւն ես եմ անում և, որպէսզի դպրոցի

[53] Մաթմինը (թերևս՝ կեանքը) թանկ, ամուսնութիւնը՝ լուծուած: (Խմբ.)

պարապմունքները չխանգարուն, բարոյական պարտք համարեցի, խղճի հանգստութեան համար, իսկական ուսուցիչ գտնել և գտայ, որ փոխարինէ ինձ":

Սակայն ով է փոխարինողը, նա էլ յանկարծ քեղ պէս մէկը չլինի, ասաց Դոկտորը ժպտալով և ծիծաղելով, իր ծիծաղով վարակելով նաև ուսուցիչներին:

Ոչ, Դոկտոր, վրայ բերեց Աչոտը, կանխելով ինձ, փոխարինողն իրօք տարիների ուսուցիչ է, դուք էլ ճանաչում էք Թերևս, Անուշաւան Ղազարեանն է:

- Ճիշտ է, ճիշտ է, ձայնակցեցին ուսուցիչներից մի քանիսը:
- Կը նչանակէ, ասաց Դոկտորը, մեղքդ լիովին քաւել ես:

Աչակերտները տեղեկանալով, որ ես այլևս չպիտի պարապեմ իրենց հետ, դասամիջոցին մի խումբ փոքրեր շրջապատելով ինձ, հարցեր տեղացրին՝ "պարոն Իշխանեան, ինչո՞ւ չէք ուզում մեզ դաս տալ: Գուցէ դժգո՞հ էք մեզնից, խոստանում ենք հանգիստ լինել, լաւ սովորել": Երեխաներին հանգստացրի, ասելով, որ ես ժամանակաւոր կերպով եմ յանձն առել պարապելու իրենց հետ, մինչև որ իրենց ուսուցիչը դար և արդէն եկել է, վաղը պիտի գայ դպրոց: Երեխաները զոհ հեռացան:

Այդպիսով վերջացաւ իմ եռօրեայ մանկավարժական արդիւնաւոր գործունէութիւնը, և միւս օրւանից Անուշաւանն անցաւ իւր պաշտօնին ու, չատ չանցած, դարձաւ աչակերտութեան սիրելին, չնորհիւ ի բնութիւնէ ունեցած իւր ձիրքի: Անուշաւանը կոչումով ուսուցիչ էր:

Փետրուարի 2-ին մի կարճ նամակ ստացայ Վահան Նաւասարդեանից. իւր դժգոհութիւնն է յայտնում, որ Հայաստանում չեմ հանդիպել Թիֆլիս գնացող կամ այնտեղից Երևան եկող ընկերներին, լսելու Բիւրոյի որոշումը. նա վերջացնում է նամակը հետևեալ տողերով՝ "հասակիդ անհամապատասխան դիրքի մէջ մի մտիր, վերջացրու գործդ, եկ Երևան, որպէսզի պատրաստես ու գնաս Ղարաբաղ":

Վահանին պատասխանեցի, որ գլխիս աւետարան չկարդայ. "ես իմ ասելիքն ասել եմ Բիւրոյին էլ, ընկերներին էլ անհատաբար, և քանիցս միասին ղրուցել ենք. կրկնութիւն անելու պէտքը չկայ. իմ Ղարաբաղ գնալու հարցը փակուած պիտի համարել, ուրիչ ոչինչ":

Ղարաքիլիսէի կուսակցական բոլոր ուսուցիչները, ակտիւ գործի անցած լինելով, արդէն վերակազմել էին չարքերը և ընտրել քաղաքային կոմիտէ. ապա ընկերները յարաբերութեան մէջ մտան

չրջաններում գտնւած կարող ընկերների հետ, որպէսզի վերջիններս ջանան վերակազմել չրջանների մարմինները: Եւ կամաց-կամաց չրջանային մարմինները կազմուեցին ու հնարաւոր եղաւ գաւառային ժողով գումարել և համապատասխան մարմին ընտրել յառաջիկային:

Ձեմստուոյի ընտրութեան նախապատրաստական աշխատանքները դանդաղօրէն էին առաջ գնում, բայց երբ կապ հաստատուեց չրջանների հետ, աշխատանքը մի քիչ թափ առաւ և աւելի դիւրին դարձաւ:

Փետրուարի 6-ին Արտեմ (Յարութիւն) Թումեանից նամակ ստացանք Աչոտն ու ես Շուշուց, փոստով: Արտեմը նամակը հասկանալի պատճառով փոխարերական իմաստով էր գրել, որ վերաբերում էր Արսէն Միքայէլեանի, գնդապետ Մեսեանի և ուրիշների գործունէութեան: Յարութիւնը գրում է հետևեալը: "Տեղս եկած տարաիոլսիկ թռչունների ճուռղիւնը երկինք բարձրացած ականջ է խլացնում: Նրանք օրը ցերեկով կտցահարում են կալւածատէրերի անցեալ տարում ցանած արտերի ցորենները: Միջոցներ են ձեռք առնում իսպառ քշելու թռչուններին այս չրջաններից: Նրանց օր-ցերեկով երևան գալը կալւածատէրերի յատուկ ուշադրութիւնն է հրաւիրել: Ապագան յոյս է անակնկալներով. միջոցներ ձեռք առէք դուք ևս, այս թռչուններից ազատուելու":

ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Միանգամայն պարզ ու հասկանալի է Յարութիւնի դրածը: Անցեալ տարի, մեր աքսորւելուց յետոյ, Շատիլվորտի ճնշման տակ այնպիսի պայմաններ էին ստեղծւել, որ Ղարաբաղի հայութիւնը ունենում է վեցերորդ համագումարը, որը որոշ համաձայնութեան է գալիս Ադրբէջանի կառավարութեան հետ, որոշ պայմաններով: Հարկաւ, կայացած համաձայնութիւնը ժամանակաւոր էր, մինչև Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը Վերսայլի վեհաժողովում: Արդ, գրածից պիտի հասկանալ, որ տարաիոլսիկ թռչունները՝ Արսէն Միքայէլեան, գնդ. Մեսեան, Դալի Ղազար և ուրիշները, ցուցական, աչքի ղարնող գործունէութիւն են սկսել՝ Ադրբէջանի ուշադրութիւնը գրաւելով: Հաւանօրէն, այնքան ցուցական ընոյթ ունեն Երևանից ուղարկւած գործիչների կատարած աշխատանքները, որ ժողովրդի բանիմաց մարդկանց մէջ դժգոհութիւն է առաջացրել:

Ես մի նամակ եմ գրում Վահանին, կցելով նաև Յարութիւնի նամակը, որ ամէնաչտապ կերպով միջոցներ ձեռք առնեն, Արսէն Միքայէլեանին յետ պահեն ապաշկարա գործունէութիւնից,

այլապէս, եթէ չարունակի, նաև Ղարաբաղը կարող է մեծապէս տուժել, կործանուել:

Փետրուարի 24-ին տեղի է ունենում Ղարաքիլիսէի գաւառական ներկայացուցչական ժողով, զիւղական չրջանների և Ղարաքիլիսէի ներկայացուցիչների մասնակցութեամբ: Ժողովի նախագահ է ընտրուում նաստոս և քարտուղար՝ Գր. Ղամարեանը: Օրակարգը՝

ա) Զեմստուոյական ընտրութեան նախնական աչխատանք:
բ) Շրջանների բնակիչների բժչկական օգնութեան հարց:
գ) Ընտրութիւն գաւառական կոմիտէի:

Ներկայացուցչական ժողովը որոչում է՝

ա) ի նկատի ունենալով որ զեմստուոյի պատգամաւորական ընտրութիւնները պիտի տեղի ունենան ամէնաուչը Ապրիլի 10-ին, ուստի ջանալու է, որ ճիչտ ժամանակին պատրաստ լինի մեր ցուցակը, ուստի ընկերները չրջաններից պիտի ժամանակին ուղարկեն իրենց թեկնածուների ցանկը, ընդհանուր ցուցակը կազմելու համար:

բ) Շրջանների բնակչութեանը բժչկական օգնութիւն ցոյց տալու հարցը, հարկաւ, պիտի քննութեան առնէ զեմստուոյի պատգամաւորական ժողովը և համապատասխան որոչում կայացնէ, յանձնարարէ ընտրուած վարչութեանը՝ ի կատար ածելու:

գ) Տեղի է ունենում գաւառական կոմիտէի ընտրութիւն, ընտրուում են Գէորգ Մելիք Գէորգեան, Միսակ Խաչատրեան, Մամիկոն Մխիթարեան, Գրիգոր Ղամարեան և Եղիչէ Իչխանեան, գաւառական կոմիտէի նիստերին մասնակցում են գաւառապետ Պարոյր Ղարիբեանը և օգնականը՝ Գաբրիել Կիրակոսեան:

Գաւառական կոմիտէն գործի անցնելով, որոչում է՝

ա)չրջաբերական զրութիւն ուղղել չրջանի մարմիններին, զեմստուոյի պատգամաւորական ժողովի համար չրջանից ընտրելի թիկնածուների ցանկը կազմել և ժամանակին ուղարկել գաւառական կոմիտէին:

բ) Լիազօրել Տիկ. Նատալիա Մուրադխանեանին՝ տեղի զիտակից տիկինների և օրիորդների ժողով գումարել և Հինգ Հոգուց Կարմիր Խաչի վարչութիւն ընտրել իւր ղեկավարութեամբ աչխատելու: 28-ին Զեմստուոյի ընտրական յանձնախումբը յայտարարում է, որ ընտրութիւնները տեղի կունենան Ապրիլի 4-ին:

ՂԱՐԱԲԱՂԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Մարտ 20-ին Թերթերից տեղեկանում ենք, որ սալիտակ ռուսները պարտութիւն են կրել և լքելով իրենց երկիրը, դնում են արտասահման՝ Բալկանեան երկրները:

Մարտ 22-ին սկսում է Ղարաբաղի ապստամբութիւնը, բայց մենք տեղեկանում ենք այդ մասին Երևանի "Յառաջ" Թերթից, մարտ 27-ին լոյս տեսած հեռագրից, տրւած Գորիսից, թէ Ղարաբաղում կռիւներ են տեղի ունենում:

Մարտ 23-ին չէղոք գօտիում "աւազակները" կանգնեցնում են գնացքը և կողոպտում ճամբորդներին, որոնց թւում նաև նոր նշանակւած Երևանի Աղրբէջանական դեսպանին (այս մասին առանձին):

Ջալալօղլիում և Դսեղում պատահւում են ընկերները, երկու մասի բաժանւում, և երկու տեղում երկուական ցուցակով են ուղում հրապարակ գալ դնմատուի ընտրութիւններին: Երբ այդ մասին տեղեկութիւն ստացաւ զաւառական կոմիտէն, անմիջապէս յատուկ սուրհանդակի միջոցով նամակներ ճամբեցինք Ջալալօղլի, Պարոյր Աւետիսեանին, Յարութիւնեանին և Դսեղ՝ Վահան Թումանեանին, բանաստեղծի եղբօրը, որ չտապով, առանց ժամանակ կորցնելու գալ Ղարաքիլիսէ. Յուվհաննէս Թումանեանի եղբօր՝ Վահանի հետ ծանօթացել էի զաւառական ներկայացուցչական ժողովում, իսկ Պարոյրի հետ 1904/05-ին, Երևանի թեմական դպրոցում ուսանելու ժամանակ: Պարոյրի հետ բաւական մօտիկացել էի և յարգում էի նրան՝ իբրև Սուրմալուի զաւառապետ Բօղոսլաւսկուն ահաբեկողի: Զգիտեմ, չեմ յիշում մեր Թերթերից որ մէկում կարդացել եմ, որ Բօղոսլաւսկու ահաբեկումը իբր կատարել է Վանի Սարգիսը (Օղաբաչեան): Դա սխալ է: Մրգաստանի (Երևանի) Կենտրոնական Կոմիտէի որոշմամբ Բօղոսլաւսկուն պիտի ահաբեկման ենթարկէր Պարոյրի եղբայր Արամը. այդ մասին Պարոյրը տեղեակ էր եղել և մի երեկոյ, երբ եղբայրը բացակայ է լինում քաղաքից, Բօղոսլաւսկին կառքի մէջ նստած իր տունը վերադառնալիս անցնում է Պարոյրենց տան մօտով, դարան մտած Պարոյրը զնդակահարում է ցարական սատրապին և ղէնքը թաքցնելով հաւար գցում, թէ՝ "Նաչալնիկին սպանեցին, հասէք":

Երկուսն էլ ղնկուցում են, որ թնդնաձուների չուրջ տարաձայնութիւն է առաջացել ընկերների մէջ: Որոշ թնդնաձուներ երկու ցուցակներում նոյնութեամբ յիշատակւած են և տարաձայնութիւնը միւս թնդնաձուների չուրջն է: Պարոյրը և Վահանը անհրաժեշտ տեղեկութիւններ տւին այն թնդնաձուների

մասին, որոնք վէճի նիւթ էին դարձել: Գաւառական կոմիտէի ընկերների հետ խորհրդակցաբար թեկնածուների ցանկը ճշտելուց յետոյ, նրանց լիազօրելով պաշտօնական գրութիւններով, յանձնարարուեց վերջ տալ տարաձայնութիւններին: Ընկերները վերադաձան և մի քանի օր յետոյ տեղեկացրին, որ տարաձայնութիւնը վերացած է: Հարկաւ, եթէ գաւառական կոմիտէն ժամանակին վերահասու չլինէր, պիտի խայտառակէր գաւառի կուսակցական կազմակերպութիւնը:

Ապրիլ 4-ին, համաձայն ընտրական յանձնախմբի կողմից կանխաւ եղած յայտարարութեան, նշանակուած էր գաւառական ղեմստուոյի (ինքնավարութեան) պատգամաւորների ընտրութիւնը: Ժամկէտին ստացել էին ընտրութեան մասնակցող հոսանքների ներկայացուցիչը թեկնածուների ցուցակները: Համաձայն կանոնադրութեան, պիտի ընտրէին երեսունինն պատգամաւորներ: Ցուցակները ընտրական կենտրոնական յանձնախմբի կողմից վաւերացուելուց յետոյ, ուղարկուել էին չրջանային ընտրական յանձնախմբերին՝ քւէարկութեան դնելու: Մէկական թեկնածուների ցուցակներով ընտրութեանը մասնակցում են դաշնակցութիւնը, էսէռները և անկուսակցականները: Քւէների ստուգումից պարզուեց, որ ընտրուած են դաշնակցականներ 37 հոգի, էսէռ 1 հոգի և անկուսակցական 1 հոգի:

Ապրիլ 12 -ին Թիֆլիսի "Слово" ռուսերէն թերթի ապրիլ 11-ի համարից տեղեկանում ենք, որ թուրքերը գրաւել են Ակներանի կիրճը:

Ապրիլի 15-ին հասնում է մեզ Շուշում տեղի ունեցած հայկական կոտորածի լուրը:

Ապրիլի 19-ին Աչոտը հեռագիր է ստանում իւր քենակալ փաստաբան Գրիգոր բէկ Մինասբէկեանից Հադրութից, հետևեալ բովանդակութեամբ՝ "Զրկուելով ամէն ինչից, ապրում ենք Հադրութում. ընդունէք երեխաների հոգատարութիւնը Թիֆլիսում: Գրիգոր:"

Փաստաբան Գրիգոր Մինասբէկեանը Շուշու գիտակից, բարեկեցիկ մարդկանցից մէկն էր: Զրկուել է ամէն ինչից, ազատուել և կնոջ հետ միասին ապաստան գտել Հադրութ աւանում: Այդ հեռագիրը չատ բան է ասում, և մենք լիովին պատկերացնում ենք, թէ ինչ է կատարուել Շուշում:

Կոտորածի լուրն առնելուց Աչոտն ու ես չչմած վիճակում էինք: Մի՞թէ քաղաքի հինգ հարիւրի չափ զինուած մարտական ուժերը ոչ մի կերպ դիմադրութիւն ցոյց չեն տուել և թուրքերը խուժել

են Հայկական թաղը, կոտորել խաղաղ ընակիչներին և ով կարողացել է, փախել, ազատուել է: Անդօր բարկութեամբ համակուած, մեղադրում, խստիւ դատապարտում ենք թէ Բիւրոյին և թէ կառավարութեանը, որ յօնքը չտկելու փոխարէն աչքը դուրս հանեցին: Աւելի քան դատապարտելի է Բիւրոյի և կառավարութեան կատարած դործը, որ իսկական արկածախնդրութիւն եղաւ:

Ամէն օր լինում էի կայարանում, Թիֆլիսից Հայաստան եկող ընկերների կամ ծանօթների հանդիպելու ցանկութեամբ. թերևս եկողներից մանրամասնութիւններ կարելի լիներ տեղեկանալ Ղարաբաղում տեղի ունեցած անցուդարձի մասին:

Ապրիլ 20-ին կայարանում հանդիպեցի Զաւէն Եպիսկոպոս Մահտեսի Բաբայեանին և Գերասիմ Բալայեանին: Երկուսն էլ անչափ տխուր և ընկճուած դէմք ունէին: Մօտեցայ, բարևեցի և հարցրի՝ ինչ տեղեկութիւն ունեն Շուշուց և չրջաններից:

– Շատ վատ լուրեր են հասել Թիֆլիս, ասաց Զաւէն Եպիսկոպոսը. ըստ հասած լուրերի՝ Շուշու Հայկական թաղը ամբողջովին այրուած է, հայերի մի մասը կոտորել, մի մասը փախել է Քարինտակ գիւղը և այնտեղից ցրել Վարանդայի գիւղերը, իսկ մի մասն էլ գերուած է թուրքերի կողմից:

– Անպիտան անգլիացիները այնպիսի քաղաքականութիւն վարեցին, ասաց Գերասիմը, որ աղրբէջանցիները թև առան, աւելի համարձակ դարձան իրենց ոտնձգութիւններով այնքան, որ օր-ցերեկով մեր քաղաքը կրակի են մատնում, խաղաղ ժողովրդին կոտորում:

– Գերասիմ, չափազանց սխալւում ես, ասացի. ոչ անգլիացիները են մեղաւոր և ոչ էլ աղրբէջանցիները: Մեղաւոր են Բիւրօն և կառավարութիւնը, որ յանպատրաստից ապստամբութիւն են սարքել, որի հետևանքով աւերել է քաղաքի Հայկական թաղը, և ժողովրդի մի մասը կոտորել: Իսկական աւանտիւրա է կատարել, ուրիշ ոչինչ: Անցեալ տարի, մեր աքսորուելուց ամիսներ առաջ, Յովհաննէս Քաջազնունին Ղարաբաղի Ազգային Խորհրդի անդամ Հրանդ Բահաթրեանին չատ պարզ կերպով ասել էր, որ Հայաստանի կառավարութիւնը ի վիճակի չէ, չի կարող Աղրբէջանի ոտնձգութիւնների առաջն առնել, ուստի յոյս չդնէք Հայաստանի կառավարութեան վրայ, բանակցութեան մէջ մտնենք Աղրբէջանի կառավարութեան հետ, ընդունենք նրա իշխանութիւնը, համաձայնութիւն կնքենք որոշ պայմաններով, սպասենք մինչև Վերսայլի վեհաժողովի վերջնական որոշումը: Պայծառատես մարդ է Քաջազնունին, իր կառավարութեան վիճակը քաջ գիտէր, որ նման խորհուրդ էր տուել, և այսօր տխուր և վրդովեցուցիչ իրական փաստերը եկան հաստատելու Քաջազնունու ասածները և ապացուցին, թէ որքան ճիշտ ձև էր առաջարկել Ղարաբաղի վիճը

վերացնելու համար: Աղգային Խորհուրդը սկսելուց, չհետևեցինք Քաջաղնունու խորհրդին , բոլորս, առանց բացառութեան, լսում էինք Բազէի մեր կենտրոնական կոմիտէի չարունակարար տուող խորհրդին՝ ամուր մնալ ընդդիմադրական դիրքում, դիջման չդնալ երբէք, եթէ անգլիական իշխանութիւնները նոյնիսկ բռնանան, որոշ մարդկանց ձերբակալեն կամ աքսորեն, թէ Հայաստանի կառավարութիւնը և թէ Բազէի մեր աղգային մարմինները հարկ եղած միջոցներին կը դիմեն՝ մեր անկապտելի իրաւունքները պաշտպանելու: Եւ մենք հաւատում, վստահ էինք, որ մեր կառավարութիւնը և Բազէի մեր Աղգային Խորհուրդը որոշ արժէք ու նշանակութիւն ունէին դաշնակից պետութիւնների կովկասեան ներկայացուցիչների մօտ: Անմտութիւն չէ՞ առանց լուրջ պատրաստութեան, առանց բաւարար քանակութեան ռազմամթերք ունենալու, ապստամբութիւն բարձրացնել, ինչպէս ժողովուրդը կասէ՝ "նա բախտինա" կամ, ինչպէս ռուսը կասէ "на авось"[54] վորձ անել: Օտարներին չմեղադրենք, մանաւանդ այսօր, մեղաւորը մենք ենք, նախ Բիւրօն ու կառավարութիւնը, որ ինչպէս կասեն, առանց եօթն անգամ չափելու և յետոյ կտրելու, գործի են ձեռնարկել յանպատրաստից: Երկրորդ, մեղաւոր ենք Զանգեզուր-Ղարաբաղցիներս թերևս աւելի, որ, ըստ հայկական սովորութեան, միակամ ու միակարծիք չեղանք:

Ջղագրգիռ վիճակում էի, խօսում էի առանց կանգ առնելու. Գերասիմը, չատ լաւ տեղեակ Ղարաբաղի չուրջ մեր միջև տեղի ունեցած վէճերին, լուռ էր. ի՞նչ ասէր. սակայն Զաւէն Եպիսկոպոսը ընդհատեց ինձ և ասաց. "Եղիչէ, ինչպիսի սխալ էլ գործել է, հիմա ինչքան ղայրանանք, դատապարտենք, դրանից ոչ մի օգուտ չենք ստանայ. պէտք է առաջիկային աննկիքի մասին խորհել և ջանալ նոր սխալներ չգործել: Աղբրէչանի կառավարութիւնը Շուշին առնելով չի կարող տիրել Ղարաբաղին. ես էլ ղարաբաղցի եմ և վստահ եմ, որ դիւղացիութիւնը տեղի չի տայ: Մեր ժողովուրդը, դարերի ընթացքում, չատ անգամներ է հարուածներ կրել, բայց և երկաթի պէս ժամանակի քուրայում թրծել, հարուածներից աւելի կարծրացել է: Այժմ ամէնքս մէկ ուղղութեամբ պիտի մտածենք ու աշխատենք դօրավիգ լինել կառավարութեանը, որ գերագոյն ճիգ ու ջանք գործ դնէ՝ օգնելու Ղարաբաղին ամէն կերպ, որ կուլ չգնայ Աղբրէչանի երախին":

– Սրբազան հայր, ճիչտ էք ասում, սակայն որպէսզի Ղարաբաղը կուլ չգնայ Աղբրէչանի երախին, արմատական մէկ միջոց կայ միայն, զէնքի ուժով տիրել Զանգեզուր-Ղարաբաղին, ասել է՝ Սիւնիքի սիրտը սեպի պէս խրած Հայի Սամլու կոչած քրդական չերտին. վտարել քրդերին ու ճամբել այնտեղ, որտեղից բերել են մեր երկիրը:

[54] Գուցէ թէ, բախտի բերմամբ: (Խմբ.)

Գնացքի առաջին դանդը հնչեց, երկար խօսելու տեղը և ժամանակը չէր, պիտի բաժանուէինք մի քանի րոպէից, ուստի ասացի. "Սրբազան Հայր, չարունակութիւնը թողնում եմ Գերասիմին, որ Ձեզ ծանօթացնէ Հաջի Սամլուի հարցին, որի մասին թէև ժամանակին յայտնած ու բացատրած է մեր ղեկավարներին, բայց ուշադրութեան չի առնուած, արժէք չի տրուած:"

Ապրիլի 28-ին Ադրբէջանում տեղի է ունենում բոլշևիկեան յեղաշրջում՝ Համիդ և Զինդիլ Սուլթանովների ղեկավարութեամբ:

Ապրիլի 28-ին Աչոտը նամակ ստացաւ Գրիգոր Մինասբէկեանից փոստով, ծրարի վրայ Գանձակի փոստի կնիքն էր, կը նչանակէ՝ նամակը մարդու միջոցով ուղարկուած է Գանձակ և յանձնուած այնտեղի փոստին: Գրիգոր Մինասբէկեանը խիստ տխուր ու մռայլ գոյներով նկարագրում է Շուչու հայութեան գլխին պայմած աղէտը մարտ 22-ին՝ թուրքերի Նոր տարւայ առաջին օրը: Գրում է, որ թուրքերը աչքի ընկած քաղաքացիներից չորս հարիւր հոգու, որոնց թւում և Հօրս, Իվան Բէկ Իշխանեանին, ձերբակալում, նետում են բանտը, որը գտնւում է Թրքաց մասում: Գրում է՝ "Խեղճ Իվան Բէկը բանտում լինում է առաջին զոհը, որովհետև պահանջած է լինում, որ իրեն տանեն Խոսրով Բէկ Սուլթանովի մօտ՝ իմանալու, թէ ինչու են ձերբակալել մարդկանց, որոնք ոչ մի բանից տեղեկութիւն չունեն և անմասն են: Տեղնուտեղը սպանւում է Իվան Բէկը, ապա սրածւում են բոլոր բանտարկեալները: Անկարելի է գրչով նկարագրել թուրքերի գործած խժդժութիւններն ու գազանութիւնները:
Ինչու՞, ինչու՞ այսպէս եղաւ . . . ":

– Այո, ինչու՞, ինչու՞ այսպէս եղաւ, ամենայն իրաւունքով ու վրդովմունքով հարցնում է Գր. Մինասբէկեանը:

Ապրիլի 30-ին Բիւրոյից և ներքին գործոց նախարարութիւնից հեռագիր է ստացւում՝ մայիս 1-ի տօնակատարութեանը միջազգային ձև և բնոյթ տալու:

ԱԴՐԲԷՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋԸ

Մայիս 1-ին Ադրբէջանի խորհրդային կառավարութիւնը պահանջ է դնում Հայաստանի կառավարութեան՝ դատարկելու Ջանգեզուր-Ղարաբաղը հայկական զօրքերից: Հայաստանի կառավարութիւնը մայիս 1-ի տօնակատարմանը միջազգային բնոյթ ու կերպարանք է տալիս, որովհետև մայիս 1-ը համայն աշխարհի, առանց ազգային խտրութեան, աշխատաւորութեան տօնն է, իսկ Ադրբէջանի "սոցիալիստական" կառավարութիւնը հէնց այդ օրը

բՀկական ու խանական կուսակցութեան մուսաւաթական նախորդ կառավարութեան սկսած ոտնձգութիւնն Է անում, անարդար պահանջ անում, Հաղարամեակների Հայկական սեպհականութիւնը՝ պատմական Սիւնիքը իւրացնելու նպատակով: Աղրբէջանի նորաստեղծ խորհրդային կառավարութիւնը այնքան սոցիալիստական Է, որքան մուսաւաթական կառավարութիւնը, ոսկորը և արիւնը նոյն ոսկորից և արիւնից, ուստի զարմանալու չէ:

Քանի որ Բիւրօն ու կառավարութիւնը արդէն կարգադրել էին մայիս 1-ի տօնակատարութեանը միջազգային բնոյթ ու կերպարանք տալ և աշխատել մեծ չուքով կատարել, ինչպէս մայրաքաղաքում և միւս քաղաքներում, այնպէս էլ Ղարաքիլիսէում, մայիս 1-ի տօնը կատարուեց մեծ չռինդով, չնորհիւ Հայ Համայնավարների, որոնք կարծես օրւայ տէրերն էին: Տօնակատարութիւնը սկսում են կայարանի բանւորները, ուր չտապել էին քաղաքի արհեստաւորներն ու երիտասարդութիւնը: Կայարանից ստւար բաղմութիւնը ուղղւում Է դէպի քաղաքի կենտրոնական մասի փոքր Հրապարակը, զրադարան-ընթերցարանի չէնքի առաջ, ճամբին կանգ են առնում գիմնազիայի առջև՝ կեցցէ աշխատաւորութիւնը, կեցցէ միջազգային պրոլետարիատը, կեցցէ ինտերնացիոնալիզմը բացականչութիւններով: Թիֆլիսից Երևան գնալիս մէկ-երկու օրով կանգ էր առել Ղարաքիլիսէում մեր ընկերներից Դաւիթ Դաւթեանը, որը իբրև դաչնակցական, մի ճառով գիմնազիայի մուտքի աստիճանին կանգնած ողջոյնի խօսք ասաց ու չնորհաւորեց աշխատաւորութեան տօնը: Գիմնազիային կից տանը ապրում էր վրացական կոնսուլը, մենչևիկ, որը վրացերէն ողջոյնի խօսք ասաց, և Դաւիթը թարգմանեց, որից յետոյ բաղմութիւնը չարժւեց առաջ:

Գրադարանի առջևի Հրապարակում կանգ առաւ բաղմութիւնը, որը րոպէներով արագ ստւարացաւ: Համայնավար Երևանդ Հայրապետեանը և ուրիշներ ելոյթ ունեցան, ճառեր ասեցին ոգևորւած և յայտնեցին, թէ միջազգային պրոլետարիատի չահերի իսկական պաչտպան սովետական բանակը Բագու է Հասել և պէտք է Կովկասի պրոլետարիատը դրակաբաց ընդունէը նրան: Շնորհիւ սովետական կարգերի կը վերանան աղգային ներկայ յարաբերութիւնները, և բոլոր աղգերը եղբայրական սիրով կը լծւեն խաղաղ ու չինարար աչխատանքի: Կեցցէ սովետական բանակը, կեցցէ միջազգային կոմունիստական կուսակցութիւնը:

Դաչնակցութեան տեղական կազմակերպութեան անունից ելոյթ ունեցաւ Գրիգոր Ղամարեանը, որը իւր ճառը սկսեց անտեղի մի արտայայտութեամբ թէ՝ "իմ ընկերները ինձ ձախ են համարում, բայց այնուամենայնիւ, պիտի ասեմ, եթէ սովետական բանակը գալիս է իրօք խաղաղ վիճակ ստեղծելու աղգերի համար, որ մարդիկ

նւիրւեն չինարար, ստեղծագործ աշխատանքի, ես էլ չնորհաւորում եմ նրա մուտքը Անդրկովկաս", ապա յայտարարում է, որ դաշնակցութիւնը, որպէս միջազգային սոցիալիստական ընտանիքի մէկ անդամը, բնականաբար աշխատաւորութեան չահերի պաչտպան ամէնից ուժեղ կուսակցութիւնն է հայկական:

Ղամարեանի արտասանած առաջին նախադասութիւնը, թէ՝ "իմ ընկերները ինձ ձախ են համարում", առիթ եղաւ, ընկերական չարքերում ղժգոհութեան: Առաւելապէս ղժգոհ էին արևմտահայ ընկերները՝ Միսակ Խաչատրեանը, Մարզարը և ուրիչներ, թէ ինչու նման արտայայտութիւններ պիտի լինեն, դաշնակցութիւնը աջուձախ չունի և մէկը չի կարող ձախ համարուել, միւսը աջ:

Գր. Ղամարեանից յետոյ ելոյթ ունեցան Աչոտ Մ. Յովսէփեանը և Յովհաննէս Առաքելեանը, որպէս մենչևիկները, բացատրելով օրւայ նչանակութիւնն ու արժէքը, որպէս աշխատաւորութեան տօն, ցանկանալով, որ մեր երկիրը աղատ մնայ տանուվրայութիւնից և ժողովուրդը բարգաւաճի և աշխատաւորութիւնը հնարաւորութիւն ստանայ բարելաւ պայմաններում ապրելու, չինարար աշխատանքի լծելու և ամէն տարի միջազգային աշխատաւորութեան հետ միասին իւր տօնը կատարելու:

Դաշնակցութեան անունից երկրորդ խօսողը եղաւ Անուչաւան Ղազարեանը, որ ամփոփ կերպով վերյիչելով համաչխարհային պատերազմի ընթացքին մեր ժողովրդի տւած հսկայական զոհերը, երկրի քարուքանդ լինելը, ասաց, որ հայ աշխատաւոր ժողովրդի վրայ է ծանրացած երկրի վերաչինութեան վիթխարի աշխատանքը և յոյս յայտնեց, թէ ինչպէս դարեր չարունակ հայ ժողովուրդը, նենթակայ հազարումի դրկանքների, աւերների ու կոտորածների, բայց պինդ կառչած իւր հողին ու քարին, միչտ էլ յաղթահարելով ամէն արգելքներ, կարողացել է յամառութեամբ ու կորովով վերաչինել աւերւածը, ստեղծագործել նորը և բարգաւաճել, նոյն ձևով ներկայիս աւերւածը կը վերաչինի ու կը բարգաւաճի:

Անկուսակցականների կողմից խօսեց հարկային տեսուչ Ներսէս Սարգսեանը, ցանկալով հայ աշխատաւոր ժողովրդին յաջողութիւն հայրենիքի վերաչինման գործում և բարգաւաճ ու չատ աւելի լաւ պայմաններում կատարելու իւր աշխատանքի տօնը:

Էսէռների կողմից ոչ ոք ելոյթ չունեցաւ. նրանց դիրքը պարզ չէր. հանդիսատեսներ էին:

Վերջում, ըստ հաւուր պատշաճի, մի քանի խօսք էլ ես ասացի: Աչք ծակող փաստ էր սակայն, որ օրւայ տօնակատարման տոն տւողը բոլշևիկներն էին: Նրանք օրեր, շաբաթներ առաջ աշխատանքի էին անցել, որոշ ծրագիր մշակել, դիրքերը բաժանել, և կառավարութեան հրահանգը, միջազգային ընոյթ տալու տօնակատարութեանը, աւելի համարձակ էր դարձրել նրանց: Ինչպէս յետոյ իմացանք, թէ մայրաքաղաքում և թէ գաւառներում, ամէն տեղ մայիս 1-ի տօնակատարութեան տոն տւողը, ի հեճուկս մեղ, եղել են բոլշևիկները: Դաշնակցութեան դերը չատ թոյլ է եղել:

Մայիս 3-ին, ճաշից յետոյ, դասախօսութիւն էր յայտարարւած ակումբում: Փոքրիկ սրահը, ուր հազիւ երկու հարիւր մարդ կարող էր տեղաւորւել կիսով չափ կանդնած, լիքն էր զրեթէ, և ճնշող մեծամասնութիւնը մեր ընկերներն էին: Եկել էին և աչքի ընկել բոլշևիկները, որոնք յաճախ էին յոխորտում՝ Երւանդ Հայրապետեան, Մատթէոս Բաղդասարեան, Օր. Վերդինէ Մխիթարեան, Մացակ, իրենց մի խումբ համախոհներով, և տեղ զրաւել վերջին չարքերում:

Երւանդ Հայրապետեանը Շուշու ռէալական դպրոցն աւարտած երիտասարդ էր, հազիւ 20-21 տարեկան: Իրենից մեծ եղբայրը՝ Գրիգորը (համողմունքներով մենշևիկ), երկաթուղու ինժեներն էր: Երւանդն ապրում էր եղբօր մօտ կայարանում, վերջինիս յատկացւած չէնքերից մէկում: Գրիգորը զրեթէ ամէն օր վէճի մէջ էր Երւանդի հետ, որին չարունակ դատափետում էր, բայց նա չարունակում էր իւր էչը քչել:

Մատթէոս Բաղդասարեանը հասակակից էր Երւանդին: Նա տարիներով ապրել, մնւել և տարրական ուսում էր առել որբանոցում և ծոնդ բոլշևիկ էր:

Վերդինէ Մխիթարեանը մէկն է եղել Ղարաքիլիսէի այն աղջիկներից, որոնց 1918 թ. բռնաբարել էին տաճիկները, սակայն այդ հանգամանքը չէր խանգարում նրան՝ տաճիկներին եղբայրական ձեռք մեկնելու մտքեր արտայայտելու:

Մացակը կիսագրագէտ գիւղացի էր:

Երկու հոգի պիտի դասախօսէին, Աչոտն ու ես: Ժողովի նախագահ ընտրւեց Անուշաւան Ղազարեանը, որը զրաւելով իւր տեղը, հրաւիրեց Աչոտին խօսելու:

Աչոտը մենշևիկ էր, անդամ հայ սոցիալ-դեմոկրատ կազմակերպութեան. խնամւած դասախօսութիւն տւեց բոլշևիզմի էութեան մասին, ապացուցելով, որ բոլշևիկները մարքսիստ

համարելով, հակառակ մարքսիստական սկզբունքների են գործում, սոցիալիզմը իրականացնելու մի յետամնաց երկրում, որպիսին Ռուսաստանն է, որտեղ աղգաբնակչութեան ճնշող մեծամասնութիւնը անգրագէտ գիւղացիներ են: Պրոլետարիատը հազիւ 3% է կազմում, ճարտարարուեստը չատ յետ է արեմտեան Եւրոպայի ճարտարարուեստից: Ըստ Մարքսի, նման յետամնաց մի երկրում հնարաւոր չէ իրականացնել սոցիալիզմը, որը կարող է իրականանալ միայն կապիտալիստական մի երկրում, որտեղ ճարտարարուեստը հասած կը լինի իւր զարգացման զագաթնակէտին:

Աչոտից յետոյ ես եմ խօսում, նիւթ ունենալով ազգային հարցը, որի մասին ամփոփ կերպով յայտնելով մեր տեսակէտը, որ միանգամայն հակառակ է բոլշևիկեան տեսակէտին, առաւելապէս կանգ եմ առնում մեր ժողովրդի այն օրւայ վիճակի վրայ: Դարերի ընթացքում, չնորհիւ մեր երկրի աշխարհագրական դիրքի, ժողովուրդը յաճախ է տուժել աշխարհակալ պետութիւնների միջև տեղի ունեցած բախումների ժամանակ, սակայն ոչ մի ժամանակ այնքան կորուստ չէ ունեցել, ինչպէս համաշխարհային պատերազմին, կորցնելով իր քանակի կէսը: Մեր տնաբուս բոլշևիկները, ոգևորուած ռուս բոլշևիկների կողմից Ադրբէջանի գրաւումով, կոչ են անում ընդառաջել նրանց, եղբայրական ձեռք մեկնել Ադրբէջանին: Երեկ մուսաւաթական Ադրբէջանը, յենուած մեր մեծ դաշնակից անգլիական կառավարութեան վրայ, ոտնձգութիւններ սկսեց Հայաստանի կառավարութեան դէմ՝ ապօրինի կերպով իւրացնելու Զանգեզուր-Ղարաբաղը: Այսօր էլ սովետական Ադրբէջանը, ինչպէս դիտէք, մայիս 1-ին պահանջ է ղրել Հայաստանի կառավարութեան, դատարկելու Զանգեզուր-Ղարաբաղը հայկական զօրքերից: Ի՞նչ տարբերութիւն մուսաւաթական և սովետական Ադրբէջանի միջև, մի դէպքում յենուած անգլիական կառավարութեան և միւս դէպքում՝ սովետական Ռուսաստանի վրայ, նոյն ոտնձգութիւնն է անում: Ահա թէ ինչպիսին է եղբայրական Ադրբէջանը, որի իսկական դեկավարը իւր արիւնակից Թիւրքիան է, հայ ժողովրդի ղարաւոր ոսոխը, որը եղել է վիճակի լինէր, կոչնչացնէր և կովկասահայութեանը: Դեռ թարմ են մեր յիշողութեան մէջ 1918 թ. Բազուի սեպտեմբեր ամսւայ հայկական սարսափները, Նուրի փաշայի դեկավարութեամբ: Հայ ժողովուրդը խաղաղութիւն է սիրում, որպէս չինարար և ստեղծագործող ձեռք ուղում է խաղաղ ապրել հարևանների հետ, և ցանկալի է, որ հարևանները ոտնձգութիւններ չանեն և փաստօրէն ապացուցեն իրենց խաղաղասէր լինելը:

Երբ խօսքս վերջացրի, արևմտահայ մարտիկ ընկերներից մէկը՝ Մարզարը, որի ամբողջ ընտանիքը սրախողխող է եղել պատերազմին համագիւղացիներից չատերի հետ, առանց ձայն

խնդրելու, վեր կացաւ և դառնալով դէպի յետևի չարքերից մէկում նստած օր. Մխիթարեանը, ասաց՝ " Օրիորդ Վերջինէ, ինչպէս կերևի, Էնվէրին կարօտցեր էք". . .

– Դուք ձայն չէք խնդրել, իրաւունք չունէք խօսելու, ասաց նախագահը, սակայն նախագահի ձայնը ղրեթէ անլսելի էր ժողովականների մեծամասնութեան ծիծաղի հետևանքով:

–Պարոն նախագահ, ախր չէք պիտեր, թէ ինչ եղաւ, փորձեց խօսել Մարզարը:

– Ոչինչ չեմ ուզում իմանալ, դուք իրաւունք չունէք առանց ձայնի խօսելու և խանգարելու ժողովը. նստէք ձեր տեղը և ձայն խնդրէք, ապա դարձաւ ժողովականներին, ասաց՝ ովքեր հարցեր ունեն տալու կամ առարկութիւններ անելու, ձայն խնդրեն:

Առաջին ձայն խնդրողը Մատթէոսն էր, որը Աչոտին և ինձ դեղին սոցիալիստներ անուանեց, թէ մենք դէմ լինելով բոլշևիզմին, դէմ ենք աղգերի միջև ատելութեան, թէ ատելութիւն ենք սերմանում բանւոր դասակարդի և գիւղացիութեան մէջ ընդդէմ հարևան ժողովուրդների:

Երևանդ Հայրապետեանը աքլորացած ցասումով խօսում էր դաշնակների և մենշևիկների մասին, անուանելով նրանց Եւրոպական իմպերիալիստ պետութիւնների ծառաները և հակասոցիալիստական կազմակերպութիւն: Կարճ ասած, կրկնում են բոլշևիկեան թերթերում հակաբոլշևիկ սոցիալիստական կուսակցութիւնների մասին գրածքները, որպիսիք լաւ սերտել էին :

Ժողովականների մեծամասնութեան համար անհետաքրքիր էին Երևանի և Մատթէոսի անգիր արած ճառերը, սկսեցին դժգոհութեան նշաններ ու բացականչութիւններ անել: Նախագահը հարկադրւած փակած յայտարարեց ժողովը:

Ժողովականների մեծ մասը և բոլշևիկները դուրս էին գնացել, որ Մարգարը առանց ձայն խնդրելու և օր. Մխիթարեանին վիրաւորական խօսքեր ուղղելու պատճառը յայտնի եղաւ: Օրիորդը իմ խօսելու ժամանակ, խիստ դժկամակութեամբ արտայայտւելով իմ մասին, կողքի նստած ընկերոջն ասում է՝ դաշնակների չովինիստական ճառերն ուղղակի ղղւանք ու զարչանք են պատճառում. ինչպէ՞ս կարելի է նման մարդկանց հանդուրժել, երբ չեն ուզում խաղաղ մնալ, հարևան թուրք ժողովրդի հետ եղբայրաբար վարուել, այլ ընդհակառակը, ատելութիւն են ցանում մեր ժողովրդի մէջ դէպի թուրքերը: Օրիորդի առաջ չարքում նստած մեր ընկերներից երկու հոգի լսում են օրիորդի խօսքերը, իրենց հերթին քրթմնջալով իրենց դայրոյթը յայտնում բոլշևիկների հասցէին, ապա իրարու ականջի փսփսալով օրիորդի արտայայտութիւնները հասնում են Մարգարին և վերջինս յիշեալ ելոյթին է ունենում, ակնարկելով նրա հետ պատահած զժբախտութիւնը:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼՈՒՄ "ՎԱՐԴԱՆ ՁՕՐԱՎԱՐ" ԶՐԱՀԱՊԱՏԸ

Երեկոյեան լսեցինք, որ Ալէքսանդրոպոլում "Վարդան Զօրավար" զրահապատ գնացքը բոլշևիկեան ապստամբական դրօչակ է պարզել զեկավարութեամբ սպայ Մուսայէլեանի, որն իրեն յայտարարել է Հայաստանի զերագոյն կոմիսար: Մուսայէլեանի հետ են նախկին դաշնակցականներ՝ Աւիս Նուրիջանեան, Արտաշէս Մելքոնեան և գնդապետ Մելիք Շահնազարեան:

Պարոյր Ղարիբեանը և իր օգնական Գար. Կիրակոսեանը հաղորդելով լուրը ապստամբութեան մասին, առաջարկում են գաւառական կոմիտէի նիստ գումարել, թէ ինչ դիրք պիտի բռնել կամ ինչ պիտի լինի մեր անելիքը:

– Մեր դիրքն էլ, մեր անելիքն էլ որպէս դաշնակցականների, չատ պարզ ու հասկանալի է, անմիջապէս պէտք է կարգադրել միլիցիապետին և քաղաքի կոմիսարին՝ ձերբակալելու բոլոր բոլշևիկներին, որոնք յայտնի են, և երբ բոլոր բոլշևիկները բանտարկուած կը լինեն, գաւառական կոմիտէն կը հրաւիրուի նիստի՝ զեկուցելու կատարուածի մասին, ուրիշ ոչինչ:

– Յետոյ ընկերները չառարկեն, որ առանց իրենց կանխաւ յայտնելու և կարծիք լսելու է գործ կատարել, ասում է Պարոյրը:

– Եթէ նման առարկութիւն լինի մեր ընկերների կողմից, պատշաճ պատասխան կը տրուի, իսկ մինչ այն պիտի անմիջապէս գործի անցնել, ասում եմ:

Մայիսի լոյս 4-ի գիշերը, գաւառապետ Պարոյրի կարգադրութեամբ ձերբակալւում են ճանաչուած բոլոր բոլշևիկները:

Մայիս 4-ին գաւառական կոմիտէն նիստ ունենալով որոշում է կայացնում, բոլոր ուժերը տրամադրել գաւառապետին և անհրաժեշտ միջոցների դիմել ու պատրաստել անակնկալի չգալու, որևէ հակապետական միջադէպ տեղի ունենալու դէպքում:

Լսեցինք, որ զօրքի մէջ բոլշևիկ զինուորներ կան, որոնք քարոզում են զինուորներին միանալ Ադրբէջանի ապստամբներին: Գաւառական կոմիտէն որոշեց պրոպագանդիստներ ուղարկել զօրանոցները՝ քարոզելու և մտքեր պարզելու: Զօրքի մէջ էր ծառայում Գալի Դաբվիշը, աւազ ննջասպայի աստիճանով, որը Նախիջևանի կայազօրից փոխադրուել էր Ղարաքիլիսէ, Լոռու սահմանապահ գունդը, որի հրամանատարն էր ռուս (կազակ) գնդապետ Ալէքսանդր Կարալկովը:

Դալի Դարիւշի հետ միասին Աչոտն ու ես գնացինք զօրանոց՝ դրուցելու զինուորների հետ: Դարիւշը զինուորներին հրաւիրեց ժողովի, հէնց այդ միջոցին եկաւ գնդապետ Կարապետովը, ծանօթացանք և յայտնեցինք զօրանոց գալու մեր նպատակը: Գնդապետը չատ ուրախացաւ, ապա դարձաւ զինուորներին և ասաց՝ տղաներ, ես ձեզ չատ անդամ եմ տարել կուի դաշտը հայրենիքի թշնամիների դէմ, և միչտ փառքով է պսակւել մեր դէնքը: Ես պատրաստ եմ դարձեալ ձեզ հետ, յանուն հայրենիքի, բաց աչքերով դիմաւորել ամէն տեսակի վտանգ: Հայաստանը իմ երկրորդ հայրենիքն է, որին ես սիրով եմ ծառայել և պիտի չարունակեմ ծառայութիւնս նոյն սիրով, ճանաչելով և ենթարկւելով ժողովրդի կողմից ընտրւած օրինական կառավարութեանը: Այսօր հրապարակ է եկել ինքնակոչ ոմն Մուսայէլեան և իրեն յայտարարել Հայաստանի գերագոյն կոմիսար: Ես ինքնակոչ մարդկանց իշխանութիւնը չեմ ճանաչում և երբէք չեմ ենթարկի նման իշխանութեան: Ես վստահ եմ, որ դուք ևս չէք ճանաչի և չէք ենթարկի ինքնակոչ ոմն Մուսայէլեանի իշխանութեանը, հաւատարիմ մնալով հայրենիքի օրինական իշխանութեանը:

Աչոտը խօսքն ուղղելով զինուորներին, ասաց. Հայրենակիցներ, խորապէս համոզւած եղէք, եթէ սովետական ուժերը զրաւած չլինէին Ադրբէջանը, մօտենալով մեր սահմաններին, ինչպէս գնդապետն անւանեց, մի ոմն սպայ Մուսայէլեան չէր համարձակւի հրապարակ նետւել ու իրեն յայտարարել Հայաստանի գերագոյն կոմիսար: Նման ակտ կատարելով, Մուսայէլեանը և իր նմանները ուղում են քաղաքացիական կռիւների ասպարէզ դարձնել Հայաստանը, և դա նչանակում է երկիրը հրել դէպի անդունդը: Հայաստանը Ռուսաստան չէ: Մեր երկիրը պատերազմի ընթացքին ոտնակոխ է եղել, ժողովուրդի կէսը զոհ գնացել տահկական բարբարոսութեան և բաղմահազար զոհեր է տւել համաճարակ հիւանդութիւնների, իսկ այդ բոլորից յետոյ երկիրը մղել դէպի քաղաքացիական կռիւներ, աններելի յանցանք է, ուստի ընաւ չպիտի ճանաչել ինքնակոչ մարդկանց իշխանութիւնը, այլ պէտք է ենթարկւենք զառնալ մեր օրինական կառավարութեանը, որն ընտրւած է ժողովրդի կողմից:

Ապա մի քանի խօսք էլ ես ասացի. "Հայրենակիցներ, դուք լսեցիք, որ գնդապետը լինելով ոուս մարդ, Հայաստանը համարում է իր երկրորդ հայրենիքը, որին նա ծառայում է սիրով ու նւիրւածութեամբ: Եթէ ոուս մարդը Հայաստանին նւիրւածութեամբ է չարունակում իր ծառայութիւնը և պատրաստ է յանուն իր երկրորդ հայրենիքի բաց աչքերով գնալ դէպի վտանգը, առաւել ևս հայ մարդը պէտք է պատրաստ լինի, երբ պահանջ լինի, իր անձը զոհելու հայրենիքի համար: Սպայ Մուսայէլեանի և նրա համախոհների ըմբոստանալն ու ապստամբելը հարաղատ երկրի

կառավարութեան դէմ, երբ մեր դարաւոր թշնամին դէմ-դիմաց կանգնած է մեր չեմին, ժանիքները սրած՝ յարմար մոմէնտին մեղ յոչոնչելու համար, պարզապէս դաւաճանութիւն է: Հինգ հարիւր տարուայ ստրկական վիճակ ապրելուց յետոյ հայը այսօր աղատ, անկախ է երկրում, որը քարուքանդ է եղել մեր դարաւոր թշնամու, Թուրքի կողմից, պէտք է ձիգ Թափել, վերաչինել և ոչ Թէ ըմբոստանալ ու ժողովրդին մատնել նոր թշուառութիւնների:

Վերջին խօսքերը արտասանելիս առաջին չարքում կանգնած մի յաղԹանդամ դինուոր, արհամարհական հայեացքը դարձնելով չուրջը, ասաց՝ "եղբայրներ, ի՞նչ են եկել մեր գլխին աւետարան կարդում, Թուրքերի մասին խօսում, Թէ մեր թշնամիներն են, ինչ է, ուղում են դարձեա՞լ կրկ լինի և մեղ տանեն կուացնե՞ն. բաւական է, ինչքան կուել ենք, մենք խաղաղութիւն ենք ուղում":

Դարուիչը պոռԹկաց՝ "լռիր, յիմար, տակից-գլխից դուրս մի տա. ինչու սուտ բաներ ես ասում". ապա սպառնական կեցուածքով ուղղուեց դէպի խօսողը, բայց Կարալկովի հարցին, Թէ ինչ է պատահել, Դարուիչը յետ դարձաւ, զեկուցեց տեղի ունեցածի մասին:

– Լաւ, ասաց Կարալկովը, այժմ բաւ համարենք տեղի ունեցած զրոյցը. մի քիչ անցնելուց յետոյ այդ դինուորին ըեր զրասենեակ, անհրաժեշտը կարգադրելու:

Մենք Թողինք, հեռացանք և յետոյ իմացանք, որ Կարալկովը, դինուորին պատժած լինելու համար, կարգադրել է բանտարկել նրան ժամանակաւոր կերպով:

Մայիս 5-ին հեռագիր ստացուեց, որ պաղլամենտը արձակուած է մեկ ամսով, կառավարութիւնը Ալէքսանդր Խատիսեանի գլխաւորութեամբ հրաժարական է տուել, կառավարութեան Ֆունկցիաները ստանձնել է Հ. Յ. Դ. Բիւրօն, հաստատել դաշնակցութեան դիկտատուրան, մինչև երկրի բնականոն վիճակի վերականգնուելը:

Հրապարակում երևում են Հայաստանի սոցիալ դեմոկրատների և Հայ Ժողովրդական Կուսակցութեան Թռուցիկները, որոնցով երկու յիշեալ կազմակերպութիւնները իրենց կողմնակցութիւնն են յայտարարում Հայաստանի օրինական կառավարութեան, որին ամէն կերպ աջակցելու և Թիկունք հանդիսանալու համար կոչ են անում ժողովրդին:

Մայիսի 6-ին Դիլիջանի վրայով գալիս են Ղարաքիլիսէ ընկերները Նիկոլ Աղբալեանը, Յովհաննէս Բուդաղեանը, Արչ. Յովհաննիսեանը և Վահան Խորէնին: Գաւառական կոմիտէն

յայտարարում է, որ միւս օրը ակումբում պիտի ղասախօսեն ընկերները։

Մայիսի 7-ին, առաւօտեան ժամը 9-ին, ակումբի սրահը լեփ-լեցուն էր հասարակութեամբ, չատերը դուրսն էին մնացել և խմբուել էին պատուհանների մօտ՝ լսելու ընկերների խօսքը։ Հերթով խօսեցին՝

ա) Նիկոլ Աղբալեանը բոլշևիկների բարձրացրած ապստամբութեան մասին, թէ մահացու ծանր հարուած է այն, տրուած Հայաստանի կառավարութեանը, որը հաղիւ ձերբազատուած սովի և համաճարակ հիւանդութիւնների

ճիրաններից, նուիրուածութեամբ սկսել էր երկիրը վերաչինել։

բ) Արչակ Յովհաննիսեանը՝ Հայաստանի կառավարութեան ամէնաազատ ու ղեմոկրատիկ կազմակերպուածութեան մասին, որը ապաստան էր տուել հարեան երկրներում հալածուած բոլշևիկներին, որոնք ապերախտ գտնուեցին և ապստամբութիւն բարձրացրին,

գ) Վահան Խորէնին՝ սոցիալիզմի էութեան մասին, ապացուցելով, որ բոլշևիկները սոցիալիստ լինելով, ներկայիս իրենց գործելակերպով ցոյց տուին, թէ որքան հեռացել են սոցիալիզմի հիմնական սկզբունքներից։ Դասախօսութիւնները միջնարարներով չարունակուեցին մինչև 12-1/2-ը անց և հասարակութիւնը ուշադրութեամբ ու հետաքրքրութեամբ լսեց ընկերներին ամբողջ ժամանակ, իւրաքանչիւր դասախօսութեան աւարտին որոտընդոստ ծափահարելով ընկերներին։ Երեք ընկերների չահեկան դասախօսութիւններից յետոյ հասարակութիւնը ցրուեց չատ լաւ տպաւորութեամբ։

Ընկերները երեկոյեան ի պատիւ հիւր ընկերների, խնճոյք էին կազմակերպել. ներկայ էին թէ կուսակցական ընկերներ և թէ համակիրներ. ուրախ ժամանց եղաւ. ընկերների տրամադրութիւնը չատ բարձրացրեց ընկ. Յովակիմ Բուղաղեանը իր սրախօսութիւններով։

Մայիսի 8-ի առաւօտեան ընկերները երկաթուղով մեկնեցին Ալէքսանդրոպոլ։ Դիլիջանից բերւում են մեզ մօտ ձերբակալուած մի քանի բոլշևիկներ, որոնց միացնում ենք մեզ մօտ բանտարկուածներին։

Արչակ Ջամալեանը, որպէս հաղորդակցութեան ճանապարհների նախարար, հեռագրով յայտնում է գաւառական կոմիսարին, որ ինձ նշանակել է Ղարաքիլիսայի կայարանի կոմիսար, և հրահանգում է, որ անցնեմ գործի։ Ես հրաժարւում եմ և գաւառական կոմիսար Պարոյր Ղարիբեանին խորհուրդ եմ տալիս

այդ պաշտօնը յանձնարարել սպայ Գրիչա (Գրիգոր) Մամիկոնեանին, որի եղբայրը՝ սպայ Յովսէփը, գաւառի միլիցիապետն էր և չատ եռանդուն աշխատող:

Պարոյրը և իր օգնական Գաբրիէլ Կիրակոսեանը, որ իմ դասընկերներից էր, անյարմար են գտնում իմ հրաժարականը, այսինքն՝ նախարարի առաջարկը չընդունելը, մանաւանդ ներկայ պայմաններում:

– Բանիդ կաց, ասում եմ, այստեղ գործի ծանրութիւնը մեղ վրայ է ընկած, մենք գիտենք, թէ ում ինչ պաշտօն պիտի տալ:

Պարոյրը հեռագրով յայտնում է Ջամալեանին իմ հրաժարականի մասին և խնդրում Գ. Մամիկոնեանին նշանակել կայարանի կոմիսար: Ջամալեանը համաձայնում է և հեռագրով կարգադրութիւն անում, սակայն, վիրաւորւած իմ հրաժարականից, բացատրութիւն է պահանջում ու սպառնում դատի տալ: Ես ոչ մի բացատրութիւն չեմ տալիս, թողնելով, որ բացատրութիւնը գաւառական կոմիտէն և կոմիսարը տան: Եւ ես որևէ թելադրանք անել Գաւառական Կոմիտէի անդամներին և Պարոյրին չէի կարող, համեստութեան սահմաններից դուրս չգալու համար: Իրենք տեսնում են, գիտեն, որ ղէպքերի բերումով խցկւել եմ Գաւառական կոմիտէի կազմի մէջ, հակառակ իմ կամքի ու ցանկութեան, ենթարկւելով ընկերների հարկադրանքին: Գաւառական կոմիտէի նախագահի և միաժամանակ ներկայացուցիչների դեր ստանձնած լինելով, ի վիճակի չէի կայարանի կոմիսարի կամ նման մի այլ պաշտօն ստանձնելու, դամւած մի տեղի չարունակ, միչդեռ ներկայացուցչի դերում անհրաժեշտաբար չարունակ չարժման մէջ էի:

Մայիսի 9-ին նշանակւած էին քաղաքային ինքնավարութեան ընտրութիւնները: Ընտրական յանձնախմբի նախագահ էր նշանակւած Ստ. Ենիկոլոպեանը (դաշնակ), գաւառի հաշտարար դատաւորը, անդամներ Ներսէս Սարգսեան՝ անկուսակցական, Հարկային տեսուչ և ես:

Ղարաքիլիսէի բոլշևիկներից մէկը՝ երկաթուղու պաշտօնեայ Ոսկաննանը, այդ օրերին, արձակուրդով Թիֆլիս էր, ուր դնացել էր ձերբակալութիւններից մի օր առաջ. կինը նոյնպէս բոլշևիկ էր, աշխատում էր կայարանի գրասենեակում գրամեքենայի վրայ և յղի լինելով, աղատ էր մնացել, չէր ձերբակալւել:

ՍՊԱՑ ՄՈՒՍԱՅԵԼԵԱՆԻ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ ՄԱՅԻՍԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

Մուսայելեանը հեռախօսագրով վերջնագիր է տալիս գաւառական կոմիսարին՝ 24 ժամւայ ընթացքում արձակելու բոլոր ձերբակալւածներին բանտից, հակառակ դէպքում ղրահապատ դնացքը յարձակում կը գործի Ղարաքիլիսէի վրայ: Սկսւում է պանիկա և իրարանցում քաղաքի հակաբոլշևիկ ինտելիգենտ մարդկանց շարքերում: Բացի էսէռներից, միւս հոսանքների մարդիկ, 25 – 30 հոգի, հաւաքւում են գաւառական կոմիսարիատի չէնքը, խորհրդակցելու, թէ ինչ պիտի անել: Հաւաքոյթին նախագահում է Պարոյրը, որպէս գաւառական կոմիսար, որը պանիկայի ենթարկւած ինտելիգենտների այդ ժխորում չչկւել-չչմել էր: Տակից-գլխից չատ խօսելով, դանադան առաջարկներ են արւում.

ա) բաց թողնել ձերբակալւած բոլշևիկներին, հեռանալ Ղարաքիլիսէից չորս վերստի վրայ գտնւող Վարդանլու գիւղը, որտեղ սասունցիներ էին ապրում, կազմակերպել նրանց, յարձակւել, գրաւել Ղարաքիլիսէն և նորից ձերբակալել բոլշևիկներին:

բ) Մէկ օր էլ սպասենք, եթէ ղրահապատը յարձակւելու լինի, բանտարկեալներին արձակենք և մենք հեռանանք քաղաքից.

գ)Բանակցութեան մէջ մտնել Մուսայելեանի հետ, յայտնել, որ մենք կառավարութեան հրամանով ենք բանտարկել բոլշևիկներին, երբ ինքը համաձայնութեան գայ կառավարութեան հետ, մենք էլ իր հետ կը համաձայնւենք:

դ) Գր. Մամիկոնեանը էսէռ լինելով, էսէռներից անկախ, իր ինքնուրոյն տեսակէտով էր զեկավարում և առաջարկում է զնդակահարել բոլոր բանտարկեալ բոլշևիկներին, որպէս դաւաճանների, իսկ եթէ դա անկարելի է, նրանց արձակելու մասին խօսք լինել չի կարող, պէտք է ղրահապատի ճամբան փակել և պաշտպանւել բոլոր միջոցներով:

Հաւաքոյթը որոշ եղրակացութեան յանգել չի կարողանում. եղած արտառոց առաջարկներից ոչ մէկը չի ընդունւում, մտքերի չփոթ էր տիրում: Եւ այդ ժխորի մէջ Պարոյրն էլ չի կարողանում որոշել, թէ ինչ պիտի անել: Աչոտը Պարոյրին ասում է՝ "կանչենք եղիչէին, խորհրդակցենք միասին և որոշենք մեր անելիքը":

Ինչպէս յիշուեց վերը, այդ օրը քաղաքային ինքնավարութեան ընտրութիւնները էին տեղի ունենում, ես էլ ընտրական յանձնախմբի անդամ լինելով, քւէատուփի մօտ էի, միւս անդամների հետ միասին: Միլիցիոներներից մէկը ներս մտնելով, ներողութիւն է խնդրում և դառնալով ինձ ասում, թէ դաւառապետը խնդրում է, որ գնամ կոմիսարիատ: Ընկերների ներողամտութիւնը խնդրելով, դուրս եկայ և ուղղուեցի ղէպի կոմիսարիատ:

Երբ մտայ կոմիսարիատի բակը, դէմս ելաւ Գր. Մամիկոնեանը. հարցրի՝ ի՞նչ կայ, և նա ամփոփ պատմեց հաւաքոյթում տեղի ունեցած մտքերի փոխանակութեան և առաջարկների մասին:

–Պիտի ամէն կերպ աշխատենք պինդ մնալ մեր դիրքերում և չթողնել, որ պանիկայի ենթարկուած մարդկանց առաջարկներից որևէ մէկն ընդունուի, ասում է Գրիչան:

– Ինքդ յայտնեցիր, որ առաջարկներից ոչ մէկը չի ընդունուել, ուրեմն կարելի է հանդիստ մնալ և չեմ կարծում, թէ մերժուած առաջարկների հեղինակները կը կրկնեն նոյնը:

Մտայ կոմիսարիատի մեծ սենեակը, ուր հաւաքուած էին մարդիկ, որոնց դէմքի արտայայտութիւնից արդէն նկատելի էր ընկճուած ու պանիկայի ենթարկուած լինելը: Մի քանի հոգի այնպէս կուչ էին եկած ու կծկուած, կարծես րոպէառրոպէ սպասում էին, թէ իրենց պիտի տանէին Մուսայէլեանի մօտ՝ դատելու: Էսէռներից ոչ ոք չկար. կային կադետներ և հայ սոց-դեմոկրատ կազմակերպութեան անդամներ և չէղոքներ, և բոլորի ընդհանուր թուից քիչ աւելի՝ դաշնակցականները: Գաւառական կոմիտէի անդամներն էլ այնտեղ էին: Դարձայ ժողովականներին, յայտարարեցի փակուած համարել ժողովը և առաջարկեցի թողնել ժողովասրահը, բացի դաւառական կոմիտէի անդամներից: Պարոյրին խնդրեցի անցնել իր գրասենեակը, որ ժողովարանին կից սենեակն էր, որտեղ հարցրի իրեն՝ "ինչու համար ես հաւաքել այդ պանիկայի ենթարկուած մարդկանց, որոնք ի վիճակի չեն ոչ միայն խորհուրդ տալու, այլև մտածելու: Աւելի լաւ է՝ դիմես Գաւառական Կոմիտէին, որ օգնէ քեզ խորհուրդներով կամ նչանակէ մէկին իր կողմից՝ քեզ օգնելու":

– Ես չեմ հրաւիրել այդ մարդկանց, այլ լսած լինելով Մուսայէլեանի դրած վերջնագրի մասին, ինքնաբերաբար, իրարու իմաց տալով, իրենք են եկել, և ես հարկադրուած եղայ նրանց լսել: Հիմա որ եկել ես, իբրև Գաւկոմի նախագահ կօգնես ինձ, միասին կաչխատենք:

– Աւելի լաւ է, հէնց հիմա ընկերներին հրաւիրենք այստեղ, դու պաշտօնապէս դնես հարցը և ընկերներն իրենք կորոշեն, թէ ով

պիտի օգնէ քեզ, թերևս աւելի համապատասխան ուրիշ մէկին կը նչանակեն և ոչ թէ ինձ:

Ընկերներին Պարոյրը հրաւիրում է ներս և գաւառականի վճռահատութեանը դնում հարցը: Կոմիտէն մտքերի կարճ փոխանակութիւն ունենալով, որոչում է՝ քանի որ կառավարութիւնը հրաժարական է տւել և նրա ֆունկցիաները կենտրոնացւել են Բիւրոյում, կը նչանակէ գաւառի գործերն էլ պիտի կենտրոնանան գաւառական կոմիտէում, բայց որովհետև Գաւկոմիտէն ի վիճակի չէ յաճախ հանդիպումներ ունենալ և գործնական աչխատանքները կատարել, ուստի իւր կողմից նչանակում է ինձ, որպէս լիազօրի, աչխատելու գաւառական կոմիսարի և օգնականի հետ, ընթացք տալու գործնական հարցերին ու աչխատանքներին: Անհրաժեչտ համարւած պարագային չսպասել կոմիտէի հերթական նիստին, արտակարգ նիստի հրաւիրել կոմիտէին, որին կը մասնակցեն կոմիսարն ու իր օգնականը, քննութեան առնելու չահագրգռող հրատապ հարցը և միասնաբար որոչում կայացնելու: Կոմիտէն, միաժամանակ, որոչում է կայացնում, թէ բոլոր ընկերները անխտիր պիտի ենթակայ լինեն երեքիս հրահանգներին: Գաւառական կոմիտէն, միաժամանակ, որոչում է, ի պատասխան Մուսայէլեանի վերջնագրի, կազմակերպել կուսակցական ընկերներից մարտական խմբեր, ղօրքի հետ միասին պատրաստ լինել, վտանգի պահուն ի ղերև հանելու բոլչևիկների որևէ փորձ՝ ընկճելու մեզ:

Գաւկոմի անդամները խորհրդակցութիւնը վերջանալուց յետոյ ցրւում են. մնում ենք երեքս՝ Պարոյրը, Գաբրիէլը և ես: Մտքերի փոխանակութիւն ունենալով Մուսայէլեանի վերջնագրի չուրջ, որոչում ենք կանչել Մամիկոնեան եղբայրներին՝ Գրիչային և Յովսէփին. առաջինին, որպէս կայարանի կոմիսարի, յայտնել, որ Մուսայէլեանին լուր տւողը անչուչտ կայարանի պաչտօնեաներից մէկն է, յանձնարարել, որ՝

1) Գտնեն այն անձնաւորութիւնը, որը կայարանից հեռախօսով յայտնել է Մուսայէլեանին Ղարաքիլիսէում տեղի ունեցած ձերբակալութեանց մասին և արագօրէն ջնջել Մուսայէլեանի կապը Ղարաքիլիսէի հետ կտրել:

2) Համամլուի մօտ պատրաստ վիճակում պահել մի չոգեկառք, հէնց որ ղրահապատը մօտենայ, մի որոչ հեռաւորութեան վրայ լինելուց, անմիջապէս չոգեկառքը բաց թողնել վրան, թէկուզ ղրահապատը փչանայ, անգործածելի դառնայ մինչև նորոգւելը:

Գալիս են Գրիչա և Յովսէփ Մամիկոնեանները, որոնց արւում է անհրաժեչտ կարգադրութիւնը:

Գրիչան, որպէս կայարանի կոմիսար, գաղտնի հսկողութիւն է նշանակում հեռախօսի վրայ և չուտով պարզւում է, թէ ով է Մուսայէլեանի հետ կապ պահողը, որը բռնւում է հէնց յանցանքը զործելիս, Մուսայէլեանի հետ խօսելիս: Յանցաւորը երկաթուղու պաչտօնեաներից մէկի՝ Ոսկանեանի կինն էր, որն աչխատում էր կայարանի զրասենեակում, որպէս զրամնքենայի վրայ աչխատող: Ամուսինն այդ օրերին արձակուրդով Թիֆլիսում էր գտնւում: Յանցաւոր կինը յղի վիճակում էր, ձերբակալւում, տարւում է բանտ, կանանց բաժանմունքը:

Մայիսի 10-ին Մուսայէլեանը հեռախօսով պահանջում է զաւառական կոմիսարից՝ մօտենալ հեռախօսին Գրիչան յայտնում է, որ ինքը կայարանի կոմիսարն է, ինչ է ուզում ասել զաւառական կոմիսարին: Մուսայէլեանը, խիստ սպառնալիք կարդալով, պահանջում է անմիջապէս արձակել բոլոր բանտարկեալներին, այլապէս ղրահապատը կը գայ և կը ռմբակոծէ Ղարաքիլիսան: Գրիչան էլ իր հերթին է սպառնում ռուսական երեք յարկանի հայհոյանքներով ու ասպարէզ կանչում: Անչուչտ Ոսկանեանի կինը յայտնած էր եղել, որ Գր. Մամիկոնեանը չոզևկառք է պահում Համամլուի մօտ պատրաստ վիճակում:

Յովսէփ Մամիկոնեանը նախորդ օրւանից սկսած, քաղաքի կոմիսար **Միք. Սէյրանեանի և Դալի Դաւիթի օգնութեամբ** արդէն ձերբակալել էր բաւական թւով մարդկանց, մի քանի հոգի էլ նախապէս էին ձերբակալել, բոլորը միասին մօտ 40 հոգի: 10-ին, առաւօտեան ժամը 9-ից հարցաքննութեան են ենթարկւում նոր ձերբակալւածները: Հետաքրքրւելով նոր ձերբակալւածների մասին, եկել էին մեծ թւով քաղաքացիներ ու բռնել կոմիսարիատի բակը: Պարոյրը մէկ - մէկ բերել է տալիս ձերբակալւածներին, արագ հարցուփորձով պարզում ինքնութիւնը և կասկածելի չլինողին յայտարարում աղատ: Բակում գտնւած քաղաքացիներից չատերը գրեթէ բոլոր ձերբակալւածներին ճանաչում էին և նրանց ինքնութիւնը պարզելու մէջ չատ էին օգնում: Բացի երեք - չորս հոգուց, որ տեղացիները չէին, ղանաղան չրջաններից էին, և պահեցին մինչև նրանց մասին անհրաժեչտ տեղեկութիւն ստացւէր, մնացած բոլորը աղատ արձակւեցին:

Կասկածելի համարւածների ձերբակալութիւնների հետևանքով, զաւեչտական բաներ էլ տեղի ունեցան: Հարցաքննութեան ժամանակ ներս մտաւ չատ համեստ հագուստով, համակրելի դէմքով ու միջին տարիքի մի կին, ուսանողական զլխարկով ու համեստ արտաքինով մի երիտասարդի հետ, և դառնալով մեզ, ասաց՝ "ինչո՞ւ համար էք ձերբակալել իմ ամուսնուն, որ հին դաչնակցական է և որևէ բանի մէջ չի թերացած, ոչ մի յանցանք չունի":

– Ո՞վ է ձեր ամուսինը, զրեթէ միասին հարցրինք:

–Գրիգոր Ապրէսեանը, որը մասնակցել է Խանի խմբի արշաւանքին, պատասխանեց կինը:

Պարոյրը կարգաղրեց, որ ներս բերեն Գրիգոր Ապրէսեանին, որին ձերբակալել էին առաւօտեան բանջարանոցում աշխատելու ժամանակ: Ապրէսեանը միջահասակ, ալեխառն, ցաքուցրիւ, մի քիչ երկարած մաղերով, չածիլուած դէմքով, գլխին զոյնը թռած ղեղնաւուն չլիապա և հագին բանւորական համեստ հագուստով մէկն էր: Ապրէսեանին հետևելով, ներս մտան երեք-չորս զարաքիլիսեցիներ և ասացին. "պարոններ, մենք ճանաչում ենք, մեր բիձա Գրիգորն է, լաւ մարդ է ու դաշնակցական էլ է":

– Ինչո՞ւ են ձերբակալել ձեզ, հարցնում է Պարոյրը:

– Զգիտեմ, բոստանում աշխատում էի, մէկ էլ տեսայ, եկան, ասացին, թէ գնանք կոմիսարիատ, և բերին այստեղ, ապա տեսայ մենակ չեմ, ուրիշներն էլ կան, ասաց Ապրէսեանը ժպտալով:

– Յովսէփ, կանչելով Պարոյրին, հարցրեցի ես, որևէ մէկը մի բան յայտնե՞լ է ձեզ, որ ձերբակալել էք Ապրէսեանին:

– Ոչ ոք ոչինչ չի ասել, բոստանի մօտով անցնելիս տեսանք, և արտաքինով չատ կասկածելի թւաց, որովհետև չատ նման է ռուս բոսեակի, մանաւանդ իր ղեղնած գլխարկով, որի կողքերից մաղերն էլ դուրս են պրծած, ասաց Յովսէփը:

Երբ Յովսէփը նկարագրեց՝ "գլխարկը, տակից դուրս ցցւած մաղերով", Ապրէսեանը ծիծաղեց և իր ծիծաղով վարակեց բոլորիս, և սենեակը բռնեց ղնգուն ծիծաղով:

Հարկաւ, Ապրէսեանը աղատ արձակուեց, և Պարոյրը դարձաւ նրան ու ասաց՝ "ընկեր Ապրէսեան, ներողամիտ եղէք, որ թիւրիմացաբար ձեզ նեղութիւն ենք պատճառել":

– Դարդ մի արէք, նման բաներ կը պատահեն, կը լինեն, ասաց Ապրէսեանը ժպտալով ու դուրս գնաց կնոջ հետ միասին:

Երբ Ապրէսեանը դուրս գնաց, Պարոյրը ասաց. Ես գիտում էի կնոջը, երբ Յովսէփը նկարագրեց Ապրէսեանին, նմանեցնելով ռուս բոսեակի, կնոջ դէմքը կծկուեց դժկամակութիւնից. չատ հաւանական է, որ կինը դէմ լինելով թափթփուածութեան, տանը դժգոհութիւն յայտնած կը լինի ամուսնուն և հիմա լաւ առիթ եղաւ. կինը պինդ կը բռնի մարդու օձիքից: Ընտանեկան սովորական խօսք ու վէճ ամուսինների միջև. այս պարագան անծանօթ է Ձեղ, որովհետև ամուսնացած չէք, խօսքն ուղղում է Գաբրիէլին և ինձ:

Ապրէսեանից յետոյ ներս են բերում մէկին, որին ձերբակալել են նոյնպէս արտաքինից դատելով. սակայն պարզուում է, որ գիւղական ուսուցիչ է և համակիր դաշնակցութեանը: Նա ևս ազատ

է արձակուում: Նչանակուում են յատուկ հսկիչներ՝ փոստում և հեռախօսի վրայ:

Բանտարկուած բոլշևիկները բողոքում և դժգոհութիւն են արտայայտում պահապան հսկիչներին, որոնք ղեկուցում են այդ մասին Պարոյրին: Քաղաքի կոմիսար Միքայէլեանի հետ միասին Պարոյրը գնում է բանտ, անձամբ լսելու բանտարկեալներին, թէ ինչ դանգատներ ունեն: Երբ ներս են մտնում բանտարկեալների մօտ, Պարոյրը քրիստոնէական պարզամտութեամբ ասում է՝ "բարև ընկերներ, ի՞նչ գանգատ կամ դժգոհութիւն ունէք": "Մենք ժանդարմների բարևը չենք ընդունում," վրայ է բերում Երանդ Հայրապետեանը, որ ամէնից յախուռնն էր և կաչաղակի պէս անվերջ յոխորտում և կչկչում էր: Սէյրանեանը բարկանալով, ապտակում է Երանդին: Պարոյրը թևից քաշում է և թոյլ չէ տալիս, որ Սէյրանեանը աւելի առաջ գնայ ու ծեծէ նրան:

Պարոյրը, այնուամենայնիւ, արժէք չտալով Երանդի պատանեկան րոնկումին, հարցնում է կրկին, թէ ինչ գանգատներ ունեն: Մատթէոս Բաղդասարեանը և ուրիշներ բողոքում են, թէ ինչու են իրենց ձերբակալել:

– Դուք հասարակական կարգը խանգարում էիք, ասում է Պարոյրը, աղմկում էիք յաճախ ձեր ելոյթներով, կոչ էիք անում կառավարութեան դէմ ելնել, սովետական կարգեր հաստատելու: Մոռացա՞ք այդքան չուտ ձեր ասած ճառերը և կոչերը: Անչուշտ կառավարութեան կողմից յատուկ քննիչներ կը քննեն իւրաքանչիւրիդ մասին եղած ամբաստանութիւնները և ըստ քննութեան արդիւնքի կը վարուեն ձեղ հետ:

Բանտարկեալները պահանջում են չուտ քննութիւն նչանակել և որոշել իրենց վիճակը: Պարոյրը յայտարարում է, որ քննիչներ պիտի ուղարկէ կառավարութիւնը, տեղի վրայ անհրաժեշտ քննութիւն կատարելու, և խորհուրդ է տալիս հանգիստ մնալ, չաղմկել, լաւ պահել իրենց և այնպիսի ընթացք չընդունեն, որ հսկիչները հարկազրուած լինեն կոպիտ ուժի դիմելու: Այդ յայտարարութիւնը անելով, Պարոյրը և Միքայէլը դուրս են գալիս:

Ժամը 3-ին Դիլիջանով Երևանից գալիս են Սարգիս Մանասեանն ու Արտաշէս Բաբալեանը: Վերջինիս մասին Պարոյրը տեղեկութիւն ունէր Երևանից, որ նչանակուած է Արտակարգ Լիազօր Կոմիսար Փամբակ-Լօռիի չրջանում:

Սարգիս Մանասեանը յայտնեց, որ կառավարութիւնը առաջարկել է իրեն՝ բոլշևիկեան ապստամբութիւնը ճնշելուց յետոյ ստանձնել Ջանգեղուր-Ղարաբաղի ընդհանուր կոմիսարի պաչտօնը և անցնել Գօրիս, ուր ինձ նկատի ունի որպէս օգնականի. եկել է

Ղարաքիլիսա՝ կանխաւ խօսելու և հարցնելու, արդեօք՞ համաձայն կը լինեմ իր հետ աշխատելու և գնալու Գօրիս. ես առանց վարանման իմ համաձայնութիւնն եմ յայտնում, ասելով՝ ձեզ հետ միասին ղժոխք էլ կարող եմ գնալ, ապա որոշ առաջարկներ անում.

ա)Ունենալ երկու օգնական, որոնցից մէկը նոյն ես եմ լինելու, պէտք է անցնի Ղարաբաղ, այնտեղ աշխատելու, իսկ միւս օգնականը պէտք է լինի Գօրիսում. և յարմարագոյն նկատմամբ Արշակ Շիրինեանն է, որպէս ուժեղ կամքի տէր, տոկուն ու վճռական մարդ, որին ճանաչում է ամբողջ Զանգեզուրը:

բ)Պիտի յետ կանչել Զանգեզուր-Ղարաբաղից այն գործիչներին, որոնք Ղարաբաղի անտեղի ապստամբութիւնն են հրահրել, Շուշին աւերակների վերածել և պատճառ դարձել հազարաւոր մարդկային կորուստների և հսկայական նիւթական վնասների, տասնեակ միլիոններից աւելի արժէքով:

գ)Կուսակցական կազմակերպութիւնը աննախանձելի վիճակում է, պէտք է գաւառական կեանքին մօտ ծանօթ ու փորձառ ընկերներից մէկին նշանակել իբրև լիազօր ներկայացուցչի, կուսակցական կեանք ստեղծելու և աշխատանքները կանոնաւորելու համար: Լիազօր ընկերը պիտի վերակազմութեան ենթարկէ շրջանները, ներկայացուցչական ժողովներ հրաւիրէ և մարմինների կանոնաւոր ընտրութիւն կատարէ: Պիտի լուծուն Ղափանի, բուն Զանգեզուրի և Սիսեանի մարմինները, որոնց կազմի մէջ են մտել անցանկալի տարրեր, որոնց պատճառով վարկաբեկուել է կուսակցութիւնը յիշեալ շրջաններում: Սա շատ կարևոր հանգամանք է, որի վրայից հնարաւոր չէ անցնել, անուշադիր թողնել:

Գէթ Ղարաբաղի չարաղէտ, անտեղի և անպատրաստ ապստամբութիւնից յետոյ, Բիւրօն և կառավարութիւնը պիտի հասկանան, որ առանց Հաջի Սամլուի Զանգեզուր-Ղարաբաղի սիրտը խրած քրդական չերտին տիրելու, հնարաւոր չէ Ղարաբաղը կցել մայր երկրին: Քանի դեռ բոլորովին ուշ չէ, մեր զինուորական չտաբը պէտք է լրջօրէն ձեռնարկէ, թէկուզ զոհերի գնով, տիրելու Հաջի Սամլուին և դուրս վտարելու քրդերին: Առանց Հաջի Սամլուն գրաւելու ոչ մի յաջողութիւն չենք ունենայ: Ղարաբաղի ապստամբութիւնը հրահրող մեր քաղաքագէտները այդ հանգամանքը բնաւ նկատի չէին ունեցել, և հրահրուած անիմաստունակ ապստամբութիւնը իսկական արկածախնդրութիւն եղաւ:

Մանաան ասաց՝ լաւ, այդ բոլորի մասին դնալուց առաջ կը խօսենք, կը խորհենք և կորոշենք մեր անելիքները: Ես պիտի վերադառնամ Դիլիջան, որտեղի ժամանակաւոր արտակարգ կոմիսար եմ նշանակուած. պատրաստ եղիր, երբ հեռագրեմ, իսկոյն մեկնես ինձ մօտ:

Երեկոյեան ժամը 7-ին Մանասը վերադարձաւ Դիլիջան:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Լսեցինք, որ Ամերիկեան նպաստաբաշխ կոմիտէի անդամները Ալէքսանդրապոլից փախել են՝ ապստամբների հետ գործ չունենալու համար:

Մայիսի 11-ին Երևանից հեռագրում են, որ Սեպուհը ցօրքերի դլուխն անցած պէտք է յարձակուի Ալէքսանդրապոլի վրայ, հրամայում են, որ Ղարաքիլիսայի չրջանի զօրամասերը պատրաստ լինեն և ղէնքի ընդունակ տղամարդիկ կազմակերպւած միանան զօրամասերին, միասին չարժուեն Ալէքսանդրապոլի ուղղութեամբ:

Գնդապետ Ալէքսանդր Կարալկովը[55] նշանակւում է Ղարաքիլիսայի բոլոր զինուորական ուժերի հրամանատար:

Գրիգոր Մամիկոնեանը մի չարք վագոններում հողով լցւած քսակներ դարսելով իրար վրայ իբրև դրահ, յարմարեցնում է դրահապատի դէմ գործածելու մաքսիմ պիտակի գնդացիրներ: Ջալալօղլիում և Դսեղում գտնւած վաչտերը կանչւում են Ղարաքիլիսա:

Ալէքսանդրապոլից փախչում, գալիս են Արսէն Շահմազեանը, Պահլաւունի Եղիշէն իր 10 հոգի միլիցիոներներով և ուրիշները:

Մայիսի 12-ին Գաւառական կոմիտէն միտինգի է հրաւիրում ժողովրդին. ընթերցարանի առաջ առաւօտեան ժամը 9-ին ահագին բազմութիւն է հաւաքւում: Խօսում են յաջորդաբար Արսէն Շահմազեանը, Գաբրիել Կիրակոսեանը, մէկ ղինւոր, ես և Արտաշէս Բաբալեանը. ապա բազմութիւնը չարժւում է ղէպի կայարան, որտեղ միանում են երկաթուղու պաչտօնեաները ու բանւորները և յաջորդաբար խօսում են Գաբրիել Կիրակոսեանը (երկրորդ անգամ), Ներսէս Տէր Ներսիսեանը, Ա. Մելիք-Յովսէփեանը, Յովհաննէս

[55] 1918 թ. մայիսեան հերոսամարտի ակտիւ մասնակից, պաշտպանական հեծեալ գնդի հրամանատար: (Խմբ.)

Առաքելեանը, Դաւիթ Դաւիթեանեանը, վրացական կոնսուլը, որի ճառը թարգմանում է Դաւիթը:

Երեկոյեան ղէմ կազմ ու պատրաստ վիճակում են թէ զօրամասերը և թէ Գաւառական Կոմիտէի հրահանգով կազմակերպւած մարտական խմբերը, որոնցից խոչորագոյնը Վարդանլու ղիւղում ապրող սասունցիներն են:"

Կայարանում, նոր Թիֆլիսից եկած ու կանգ առած գնացքից դուրս գալով, մի քանի հոգի, անտեղեակ իրերի դրութիւնից, սկսում են բոլշևիկեան ճառեր խօսել. ամենայն հաւանականութեամբ համոզւած, թէ հաւաքւած բազմութիւնը ապստամբների համակիրներն են: Խօսողները՝ երեք-չորս հոգի, ձերբակալւում են, որոնցից մէկը՝ լինում է Հանդուցեալ Սիմոն Զաւարեանի քոյրը՝ Նուշիկը, որը ռազմաչունչ խօսքերով արտայայտւում, սպառնալիքներ է կարդում. ուստի նրան ճանաչողներից մէկը ասում է. "Օրիորդ, դուք ի յարգանս ձեր եղբօր յիշատակի չպէտք է նման ելոյթի ունենայիք, ձեզ չի պատչաճում":

– Եղբայրս իր տեղը, ես էլ իմ տեղը, ասում է Նուշիկը:

Մայիսի 13-ին առաւօտեան Ղարաքիլիսայի զաւառի միատեղւած զօրամասերը և նրանց միացած մարտական կամաւորական վաչտը, գնդապետ Ա. Կարալկովի հրամանատարութեամբ, չարժւում են դէպի Ալէքսանդրապօլ: Գրիգոր Ղամարեանը նչանակւում է զօրքի զինւորական կոմիսար: Զօրամասին հետևում է Պահլաւունին իր միլիցիոներներով:

Ջաջուռի մօտ Ղարաքիլիսայի ուժերը ընդհարւում են Ալէքսանդրապոլից յարձակում գործող զինւորական ծառայութեան յարմարեցած գնացքի հետ: Ապստամբները ուժեղ դիմադրութեան հանդիպելով, արագօրէն նահանջում են. Ղարաքիլիսայի ուժերը զոհեր չեն ունենում, բայց մարտիկներից մէկը, արևմտահայերից, գերի է ընկնում, որովհետև չատ առաջ է գնացած լինում:

Երևանից հեռագրում են, որ ղրահապատը յարձակում է կատարել Աղին կայարանի մօտ կառավարական զօրքի վրայ, բայց վնասւելով, արագ յետ է նահանջել:

Մայիսի 14-ին, առաւօտեան ժամը 5-ին ապստանբները պարտւում են, և Մուսայէլեանն ու ընկերները, թողնելով ղրահապատը, փախչում են: Առաջինը Ալէքսանդրապոլ են մտնում Ղարաքիլիսայի ուժերը: Ալէքսանդրապոլի անկման լուրը կայծակի արագութեամբ տարածւում է Ղարաքիլիսեում, և մարդիկ դուրս թափւելով տներից, չտապում են կայարան, որտեղ ահազին բազմութիւն է խմբւում և միտինգ է սկսւում: Յաջորդաբար խօսում

են Արտ. Բաբալեանը, Անուչ. Ղազարեանը, Աչոտ Մ. Յովսէփեանը և վերջում ես։ Գ. Կիրակոսեանը ոգևորելով արտակարգ զնացքով, չոգնկառքից ու մէկ վագոնից բաղկացած, մի քանի զինուորներով և մի խումբ երիտասարդներով, գնում է Ալէքսանդրապոլ։ Նա, նախքան Ղարաքիլիսէ գործուղելը, եղել է Ալէքսանդրապոլի միլիցապետը, ծանօթ տեղին ու ժողովրդին։

Կէսօր չկար դեռ, Թիֆլիսի զնացքն է գալիս. Սաքօ Արարատեանը, որ կառավարական գործով զնացել էր Թիֆլիս, վերադառնում էր Երևան և նկատելով հաւաքւած բազմութիւնը, իջաւ զնացքից, տեղեկացաւ Ալէքսանդրապոլի անկման մասին և զգեցիկ ճառով դրւատեց կառավարական ուժերի տարած յաղթանակը։ Գնացքը մեկնելուց յետոյ, կրկին ելոյթ ունեցան Ա. Բաբալեանը և Ա. Ղազարեանը։

Մայիսի 16-ին Գ. Կիրակոսեանը վերադարձաւ Ալէքսանդրապոլից և ոգևորւած պատմում էր տեղի ունեցած կռիւների մասին, թէ ինչպէս ապստամբները զլուխները կորցրած տեղի են տւել ու փախել, սակայն խոր ցաւով յայտնում է զիւղատնտես Հիպերիկ Զոլախեանի պատահական զնդակից զոհւելը, որը չատ մեծ ցաւ է պատճառել ժողովրդին։

Հիպերիկ Զոլախեանին ու տիկնոջը՝ Աչխէնին ճանաչում էի Պետրոգրադի գիւղատնտեսական ճեմարանից, ուր ես ընդունւել էի 1915/16 ուսումնական տարին, իսկ նա վերջին կուրսի ուսանող էր, աւարտական քննութիւնները էր տալիս։ Հիպերիկը և Աչխէնը ալէքսանդրապոլցիները էին, երկուսն էլ դաշնակցական գործիչներ, ճանաչւած իրենց ծննդավայրում։ Պիտի ասել, որ Հիպերիկը հէնց ճեմարանում արդէն աչքի էր ընկել ուսանողութեան մէջ իւր մտաւոր պատրաստութեամբ ու կեցւածքով։ Բարեհամբոյր, հաճելի և կուլտուրական մարդ էր։ Ուսանողական ժողովներին յաճախ նրան էին ընտրում նախագահ, և նա չատ հմտօրէն ու տակտով ղեկավարում էր ժողովները։ Ինձ վիճակւել էր աշխատել նրա հետ դաշնակցական ուսանողական միութեան մէջ և ի մօտոյ ճանաչել նրան։ Եւ իրօք, խիստ ցաւալի է, որ ժողովուրդը զրկւեց մի նւիրեալ և աղնիւ գործչից։

Տարիները յետոյ միայն, տարագրութեան մէջ տեղեկացայ, որ մի ընկերոջ կեանքը փրկելու համար է զոհ զնացել, այն էլ մէկ ուրիշ ընկերոջ արձակած զնդակից։ Երբ ապստամբները տեղի են տալիս, փախչում, կառավարական ուժերը մտնում են քաղաք, ղօրքին ընդառաջելու է դուրս գալիս ժողովուրդը. ընդառաջողների հետ են լինում Հիպերիկ Զոլախեանը և սպայ Մկրտիչ Տէր Սահակեանը, նոյնպէս դաշնակցական։ Երկուսն էլ մնացած են լինում քաղաքում, չեն փախչում, պահւում են։ Եղիչէ Պահլաւունին ատրճանակով

խոյանում է սպայ Տէր Սահակեանի դէմ. Հիպերիկը նկատելով Պահլաւունու խոյանալը, վազելվազ երկուսի մէջտեղն է ընկնում և ճչում. "Եղիչէ, չկրակես, մեր ընկերներից է", Եղիչէն չի լսում, կրակում է, ականջ չի կախում Հիպերիկին, արդիւնքը լինում է այն, որ մի դնդակով ընկնում է Հիպերիկը և միւս դնդակով սպան:

Ալէքսանդրապոլը ընկնելուց յետոյ այնտեղ է գալիս Ռուբէնը, տեղի վրայ ծանօթանում կատարւած դէպքերի հետ: Նա Պահլաւունուն պաշտօնանկ է անում իրրև դասալիքի և այդ պատճառով Պահլաւունին դարձաւ հակառակորդ Ռուբէնին, որին ներքուստ ատելութիւն էր տածում: Նա Ռուբէնին անարդար էր համարում, իրեն պաշտօնանկ անելու համար: Ասում էր, թէ իբր Ռուբէնը անարդարօրէն իրեն մեղադրել է կաշառակերութեան մէջ և Աբրահամ Գիւլխանդանեանը իբր դիտողութիւն է արել Ռուբէնին, ասելով՝ "ինչի մէջ կուզես մեղադրիր, բայց կաշառակերութեան մէջ՝ երբէք": Պահլաւունու պատճառաբանութիւնը ճիշտ չէ, ի հարկէ, որ իրա պաշտօնանկ եղած օրերին տարածւած էր արդէն և մենք էլ Ղարաքիլիսէում լսել էինք, որ պաշտօնանկ է եղել որպէս դասալիք: Պահլաւունին երբէք չէր հաշտւում այդ մտքի հետ և ամէն պատեհ առթիւ իւր դժգոհութիւնն ու վրդովմունքն էր յայտնում:

Ի դէպ, հետաքրքրական է, թէ ինչպէս աւարտական վկայական ստացաւ Հիպերիկը: Նա մենակ չէր, իր հետ միասին աւարտական քննութիւններ տալու համար պատրաստւում էր և Իսահակ (Զարմայր) Տէր Իսրայէլեանը, նախկին դաշնակցական, անջատականների հետ միասին, հանգուցեալ Լեւոն Աթաբէկեանի գլխաւորութեամբ յարած էսէռական կուսակցութեանը: Հիպերիկն ու Իսահակը (զանձակեցի) ուսանողական տարիներին խիստ մտերիմ ընկերներ էին դարձած: Երկուսն էլ քաղաքային դպրոցի շրջանաւարտներ էին: Մոսկւայի Պետրովօռազումովսկի գիւղատնտեսական ճեմարանը կոնկուրսով էր ուսանողներ ընդունում և այդ պատճառով շատերը ձախողում, չէին ընդունւում: Պետրոզրադի ճեմարանը հիմնւել է չնորհիւ երեք պրոֆեսորի, որոնցից մէկը ղրիմցի հայ էր, յայտնի երկրաբան Գարագաշը: Պետրոզրադի ճեմարանում ընդունելութիւնը ազատ էր, առանց կոնկուրսի, ուսանողները ընդունւում էին դպրոցական աւարտական վկայական ներկայացնելով:

Ճեմարանում քննութիւնները տեղի էին ունենում առարկայական սիստէմով, այսինքն՝ թողնւած էր ուսանողի ցանկութեանը՝ ո՞ր առարկայից երբ ուզենար քննութիւն տար, սակայն ուսանողը ուսումնական տարւայ ընթացքում նւազագոյն չափով քննութիւն պիտի տար որոշեալ թւով առարկաներից, որպէսզի փոխադրւէր յաջորդ կուրսը:

Ուսանողներից շատերը նախ համեմատաբար հեշտ առարկաներից էին պատրաստւում և քննութիւն տալիս, իսկ

դժւարները թողնում հետագային: Հիպերիկն ու Իսահակն էլ նոյնն էին արել, դժւար առարկանները թողնելով երկրորդ հերթի: Բոլոր առարկաններից լաւ կամ բաւարար քննութիւն տւել էին, մնացել էր միայն մէկ առարկայի՝ Փիղիկայի քննութիւնը, որը վերջինն էր, և պատրաստւած միասին ներկայանում են պրոմ. Տօմիլինին, քննութիւն տալիս ու կարւում: Պրոմեսորը հին յեղափոխական էր, էսէռ, բանտ նստած Պետրօպալովսկ ըերդում, չատ դեմոկրատ, մատչելի և հաճելի մարդ: Խորհուրդ է տալիս կրկին պատրաստւել, թերևս բաւարար քննութիւն տւած ուսանողներից մէկն էլ օդնի իրենց: Ես էլ հէնց նոյն օրերին յաջող քննութիւն էի տւել փիղիկայից, և Հիպերիկն ասում էր՝ "երանի քեղ, որ աղատւել ես այդ առարկայից": Ճիչտն ասած, ես այն ուսանողներից էի, որոնք որոչում են նաև դժւար առարկաններից քննութիւն տալ, ապա հեչտ առարկաններից: Մէկ օր Հիպերիկն ու Իսահակը եկան մօտս, խնդրեցին, որ իրենց հետ փիղիկա պարապեմ: Ճիչտն ասած, մի տեսակ անյարմար վիճակում զդացի ինձ, որովհետև երկուսն էլ մեծ էին ինձնից, և ես յարդում էի իրենց: Յամենայնդէպս, երկու չարաչից աւելի պարապեցի, սակայն ամենահասարակ փօրմուլներ ըմբռնել չէին կարողանում, որովհետև քաղաքային չորս դասեան դպրոցներում հանրահաշիւ չէին անցնում: Եւ երկուսով որոչում են պրոֆէսորին խոստովանել իրողութիւնը: Ասում են. "Պարոն պրոֆեսոր, փիղիկական օրէնքների և երևոյթների ինչ լինելը հասկանում ենք, սակայն նրանց փօրմուլները չենք կարողանում ըմբռնել, որովհետև դպրոցում հանրահաշիւ չենք անցել: Եւ քանի որ բոլոր առարկաններից յաջող քննութիւն էին տւած, պրոֆեսորը բաւարար է նչանակում և երկուսի օձիքն աղատում փիղիկայից:

Բոլշևիկների մայիսեան ապստամբութիւնը ճնշելու մէջ, պէտք է ասել, որ Ղարաքիլիսէն խիստ կարևոր և աղդու դեր կատարեց, չնորհիւ այնտեղի մեր ընկերների, որ հեռատես գտնւեցին ու կանխաւ միջոցներ ձեռք առին, որպէսզի Ղարաքիլիսէն չընկնէր ապստամբների աղդեցութեան տակ և հնարաւոր դարձնէր Ալէքսանդրապոլի ապստամբների համար միանալ Աղստաֆայի մօտ կենտրոնացած ռուս-թաթարական կարմիր ուժերին: Եթէ այդ միացումը տեղի ունենար, կարելի է պատկերացնել, թէ ինչպիսի մեծ դժւարութեան, այլև աննկի կը մատնւէր հանրապետական կառավարութիւնը:

Մայիս 21-ին ռուս-թաթարական կարմիր ուժերը մտնում են Իջևան, ձերբակալում և Բակու ուղարկում Սարգիս Մանասեանին, զօրավար Նիկ. Բադդասարեանին, Մեսրոպ ըհկ Սարատնիկեանին, Իսրայէլ ըհկ Տէր Իսրայէլեանին և Ղուկասեանին: Նոյն օրը կարմիր ուժերը մտնում են Ջալալու:

Մայիս 22-ին առաւօտեան լոյսը բացւելուն Դիլիջանից գալիս է Վահան Մարտիրոսեանը ու հեռագրում կառավարութեանը Դիլիջանի դէպքերի մասին: Ղարաքիլիսէի ուժերը, Ալէքսանդրապոլից վերադարձած լինելով, զինւորական չտարից կարգադրութիւն են ստանում չարժւելու Դիլիջանի ուղղութեամբ: Մինչև ցօրքի ճամբայ ելնելը, Կորոլկովի թոյլտւութեամբ, Դալի Դաւիթը մի խումբ կամաւորների գլուխն անցած, Վահան Մարտիրոսեանի հետ միասին, մեկնում են Դիլիջան: Մեկնում է երկու-երեք ժամ յետոյ նաև ցօրքը Կորոլկովի հրամանատարութեամբ: Կորոլկովի ենթակայ ուժերը համարւում են կառավարական ուժերի աւանգարդը:

Մայիս 23-ին առաւօտեան ժամը 5-ին ղրահապատ գնացքով ու մի վաչտ ցօրքով, գալիս է Սեպուհը: Գիշերը ժամը 11-ին Ղարաքիլիսա է հասնում Ռուբէնը, որը կայարանում, հէնց վագոնում ընդունում է վրացական զինւորական ներկայացուցչին, որը ելնելուց յետոյ ես եմ ներս գնում: Ռուբէնը խիստ յոգնած էր:

– Շատ ես ամբարտաւանացել, մեր նամակներին ու հեռագիրներին չես պատասխանում, հեռագրում ենք կայարանում հանդիպել այս կամ այն ընկերոջ, լայեղ չես անում հանդիպել, ասում է Ռուբէնը:

– Բոլորովին սխալւում ես, ես ստացածս բոլոր նամակներին ու հեռագրերին պատասխանել եմ. ինչ կը վերաբերի ընկերների հետ կայարանում չհանդիպելուս, մեղքը իմը չէ, կարգադրւած ժամին եղել եմ կայարանում, բայց ընկերները չէին եկել, օրեր յետոյ ուրիշ գնացքով են եկել, անցել, առանց իմաց տալու:

– Լաւ, այժմ կերթա՞ս Ղարաբաղ, հարց է տալիս:

– Ինչու՞ գնամ, Շուշու աւերակների վրայ բուելու համա՞ր, թող գնան նրանք, ովքեր քանդել են, որպէսզի հիմա էլ չինեն, ասացի:

– Լաւ, թողնենք, այդպէս եթէ փոխասացութիւն սկսենք, վերջ չի ունենայ. գործերը վերջացրու և անցիր Երևան. այնտեղ կը խօսենք, թէ ինչ պիտի անել:

Մայիս 24-ին Ալեքսանդրապոլից հասնում են կամաւորական խմբեր ու մի ղօրամաս և Սեպուհի հրամանատարութեամբ անցնում Դիլիջան:

Մի խումբ կամաւորների գլուխ անցած գնում է Պարոյր Ղարիբեանը, զաւկոմիսարիատի գործը թողնելով իր օգնական՝ կիրակոսեանին: Ղարաքիլիսէի ղօրամասն ու կամաւորական խումբը ղէպի Ալէքսանդրապոլ չարժւելու օրը Պարոյրն էլ ուղում էր գնալ, բայց չկարողինք. նա կարծես փչերի վրայ նստած էր ղգում իրեն քաղաքում, ապստամբութիւնը պայթելու օրւանից ի վեր, հանգիստ չունէր, ուղում էր օր առաջ հեռանալ քաղաքից, մեկնել այնտեղ,

որտեղ վտանգ կար: Պարոյրը անցնելում մասնակցել էր զանազան կռիւների և, ինչպէս իրաւեկ ընկերներն էին պատմում, նա անվախ ու խիղախ մարտիկ էր նկատւել: Պարզ ու հասկանալի էր, թէ ինչու Պարոյրը ամբողջ ժամանակ հանդիստ չէր ղգում իրեն, մղւում էր քաղաքից դուրս, դէպի վտանգը:

Մայիս 25-ին Ռուբէնը մեկնում է Դիլիջան՝ Սեպուհի հետ ճակատի գործը կարգադրելու և նոյն օրը վերադառնալով, գնում է Երևան:

Ճակատում կռիւները սկսւել էին օրերից ի վեր. մեր զօրքի տրամադրութիւնը բարձր էր, կարմիրների բոլոր զրոհները, առաջ անցնելու համար, ապարդիւն էին անցնում, կատաղի դիմադրութեան հանդիպելու հետևանքով:

Մայիս 26-ին լսում ենք, որ մեր զօրքերը հակայարձակման անցնելով, դուրս են չպրտել կարմիրներին իրենց գրաւած վայրերից:

Ներքին գործոց նախարարութիւնից հեռագիր ենք ստանում, անկախութեան տօնը կատարել չքեղ կերպով, որքան հնարաւոր է:

Գաւառական կոմիտէն գործի է անցնում, տօնակատարման պատրաստութիւն տեսնելու: Կարմիր Խաչի կանանց միութեանը յանձնարարւում է իրենց օժանդակութիւնը բերել, դրօշակներ ու պլակատներ պատրաստել օրւան պատշաճ գրութիւններով:

Զեռագիր յայտարարութիւններ են փակցւում պատերին, թէ Մայիս 28-ի տօնի առթիւ միտինգ պիտի կայանայ կայարանի հրապարակում:

Մայիսի 28-ին, առաւօտեան 7-ից սկսած, մարդիկ խմբերով ուղղւում են կայարան. այնտեղ են չտապում արտակարգ կոմիսար դոկ. Արտաչէս Բաբալեանը, Գաւկոմիտէն, տարբեր հոսանքների աչքի ընկած գործիչներ, գաւառական և քաղաքային կոմիսարիատի պաշտօնեաներ, դպրոցների ուսուցիչներ և այլ խաւերի մարդիկ: Ժամը 8-ին արդէն ահագին բազմութեամբ բռնւել էր հրապարակը: Տասնեակներով, կանանց միութեան պատրաստած դրօշակներն ու պլակատները պատանիների և երիտասարդների ձեռքին, փողփողում էին պատշաճ վերտառութիւններով՝ "Կեցցէ հայ ժողովուրդը", "Կեցցէ աղատ, անկախ և միացեալ Հայաստանը", "Փառք Մայիս 28-ին": Ալէքսանդրապոլի անկումից յետոյ ժողովրդի տրամադրութիւնը բարձրացել էր և Մայիս 28-ին կայարան հաւաքւած ժողովուրդը տօնական տեսք ունէր, բոլորը ուրախ-ուրախ և աշխոյժ խօսում էին իրար հետ:

Միտինգը բացած յայտարարեց արտակարգ կոմիսար Արտ. Բաբալեանը, ապա խօսեց օրւայ նշանակութեան և արժէքի մասին, տալով միաժամանակ Մայիս 28-ի պատմականը: Բաբալեանին յաջորդեց Գ. Կիրակոսեանը, որ աշակերտական տարիներից ի վեր յայտնի էր իբրև լաւ արտասանող, իրեն յատուկ ոգևորութեամբ գեղեցիկ ճառ ասաց և յետոյ երկու խօսք էլ ես ասացի: Այնուհետև բաղմութիւնը ուրախ բացականչութիւններով ուղղւեց դէպի քաղաքի կեդրոնը: Ընթերցարանի առջև կանգ առնում և հերթով ելոյթ են ունենում Աչոտ Մ. Յովսէփեանը, Յովհաննէս Առաքելեանը, որպէս մեզնէևիկները, Անուշաւան Ղազարեանը, ուսանողներ Մատոյեանը, Շէկոյեանն ու Դրամբեանը:

Ապա բաղմութիւնը ուղղւում է դէպի Ամերիկեան նպաստամատոյց կոմիտէի ղրաղեցրած շէնքը, որտեղ յաջորդաբար ելոյթ են ունենում Գր. Ղազարեանը, Գ. Կիրակոսեանը, երկրորդ անգամ, և Ամերիկեան կոմիտէի պաշտօնեայ Թարգման Դաբրինեանը:

Եւ ի լրումն այդ ամէնի, կայարանի բանուորները չոգեկառքին երկու վագոն-հարթակներ կցելով, կանաչ ճիւղերով, ղրօչակներով ու պլակատներով ղարդարում, չքերթ են կատարում, նախ դէպի Համամլու, ապա դէպի Շահալի, և երկաթուղագծի երկայնքին մօտ գտնւած գիւղերի երկսեռ բնակիչները ամէն տեղ ուրախ բացականչութիւններով դիմաւորում են բանուորներին կանաչ ճիւղերով:

Ալէքսանդրապոլի անկումից յետոյ մինչև Մայիսի 28-ի տօնակատարութիւնը ղրեթէ ամէն օր տեղի էին ունենում կուսակցական և հասարակական հաւաքոյթներ, որոնցում չատ յաճախ Բաբալեանը, Անուշաւան Ղազարեանն ու ես զարձել էինք ղրամմոֆօն: Ամէնից չատ կանանց հաւաքոյթներ էր կազմակերպում Տիկ. Նատալիա Մուրադխանեանը, որը կազմակերպւած երեկոյթներին, մխրճեան օգտին իւր պատրաստած խմորեղէնով բուֆէտն էր ճոխացնում: Երիտասարդները մի քանի անգամ ուրախ երեկոներ կազմակերպեցին Ալէքսանդրապոլի ապստամբութիւնը ճնչելու առթիւ, իսկ Մայիս 28-ի երեկոյեան խրախճանք կատարւեց ղրօսայղում մեծ բաղմութեամբ: Նոյն երեկոյեան գնացքով Արտաշէս Բաբալեանը վերադարձաւ Երեան:

Մայիս 29-ի առաւօտեան Աչոտի կնոջ հետ միասին մեկնում ենք Դիլիջան, ղօրավար Նիկ. Բաղդասարեանի կնոջ, վրացուհի Ելենա Ջալալովնայի խնդրանօք: Նիկ. Բաղդասարեանը 1905 թ. հայ-թրքական ընդհարմանը եղել էր փաստօրէն մեր կռւող ուժերի

ղեկավարներից, ևնթակայ լինելով Արմէն Գարօյին[56]: Նախապէս Ղարաքիլիսէում էր ընտանիքով (մի փոքրիկ աղջիկ ունէր միայն, Թամարա անունով), և որպէս հայրենակից, յաճախ հանդիպումներ էինք ունենում: Բոլշևիկները զօրավարին տանելուց յետոյ կինը մատնում է հոգեկան ծանր վիճակի, և երբ բոլշևիկները չպրտում են յետ, որոշում է Աչոտին ու ինձ հրաւիրել իրա մօտ խորհրդակցելու, թէ ինչ կարելի է անել ամուսնու աղատութեան համար: Աչոտի դպրոցական պարապմունքների վերջին չարաթն էր, խիստ ղրաղած լինելով, չէր կարող բացակայել, ուստի կինը՝ Սիրանոյշը փոխարինեց նրան: Պարզ էր, ի հարկէ, որ մեր խորհրդակցութիւնը ոչ մի արդիւնք չէր կարող տալ, միայն որպէս ղժբախտութիւն ունեցած մարդու, մերժել չէինք կարող, ընդունեցինք Դիլիջան, տեսնուեցինք տիկնոջ հետ, բացատրեցինք, որ անհատական միջոցներով ոչինչ չի յաջողւի անել, որ հնարաւորն ու կարելին կառավարութիւնը պիտի անի՝ աղատելու ձերբակալուած ու Դիլիջանից տարուած մարդկանց:

Առիթից օգտուելով, հանդիպումներ ունեցայ Դիլիջանի ընկերների հետ, քանիցս եղայ Սեպուհի մօտ դինուորական չտարում: Սեպուհի չտաբի պետն էր Ալէքսանդր Վէքիլեանը, իսկ համհարզը՝ Մուշեղ Թամրազեանը:

Այդ օրը կուում սպանուում են մշեցի Մուրադը և Երևանցի ուսանող Յակոբ Զարիփեանը: Մշեցի Մուրադը կուսակցական հին մարտիկներից էր, պարթև հասակով, թիկնեղ, ծաղկահար խոժոռ դէմքով:

Մայիս 30-ին Մուրադի և Յակոբ Զարիփեանի դիակները բերում են Դիլիջան, որտեղից, Ղարաքիլիսէի վրայով, Երևան ուղարկուում: Երևանից յատուկ յանձնարարութեամբ գալիս է Սեպուհի մօտ սպայ Գագա Տէր Օհանեանը: Գագան պատմում է, որ Դրօն, համաձայն Գօրիսից ստացած հեռագրի, մայիս 25-ին նահանջել է Ղարաբաղից, հասել Գօրիս և օգտուելով առիթից, բաւական թուով չուչեցիներ են անցել Զանգեզուր, Երևան գալու համար, որ եկողների մէջ են նաև Ղարաբաղի գործիչները: Յայտնուում է, որ Դրոյի նահանջից առաջ Շուշու կոտորածից աղատուած մի քանի քաղաքացիներ արդէն հասել են Երևան և չատ

---

[56] Արմէն Գարօ՝ Փաստրմաճեան Գարեգին Յարութիւնի (1873, Կարին–1923, Ժընեւ), հասարակական-քաղաքական դործիչ, բարձրադոյն կրթութիւն է ստացել Փրաւոյում: 1895 թ. օժանդակել է Զէյթունի ապստամբներին, 1896 թ. մասնակցել է Բանկ Օսմանի գրաւմանը: 1908 թ. ընտրել է Թուրքիայի պատդամաւոր անդամ: 1914 թ. անցել է Կովկաս, մասնակցել է հայ կամաւորական չարժմանը, 1917 թ. որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ մեկնել է ԱՄՆ, կազմակերպել օդնութիւն պատերազմից տուժած հայերին: 1920 թ. ապրիլին նչանակուել է Հայաստանի Հանրապետութեան Դեսպան Վաչինգտոնում:

մռայլ գոյներով են պատմում տեղի ունեցած ապստամբութեան մասին:

Յունիսի 1-ին հրաժեշտ տալով Սեպուհին ու Դիլիջանի ընկերներին, բեռնատար մեքենայով վերադառնում ենք Ղարաքիլիսէ: Սիրանուշին տեղաւորելով մեքենավարի կողքին, ես բարձրանում եմ մեքենայի բեռան բաժինը, որտեղ տեսնում եմ Թոռոսիկ Գէորգին պինուած, մօսին հրացանը ձեռքին, յենուել էր մեքենայի կողերին ամրացած տախտակէ պատին ու նայում էր հեռուն, մտքերի մէջ խորասուզուած:

Դեռ դպրոցական աշակերտ, հայ-թրքական ընդհարումների օրերին, առաջին անգամ տեսնելով Գէորգին, չատ լաւ տպաւորութիւն էի ստացել և առաջին վայրկեանից համակրանք տածել: Եւ, իրականի մէջ, պիտի ասել, որ անուշ մարդ էր: Մօտեցայ, բարեւեցի, և ղրոյցով բռնուեցինք: Տեղեակ էր Ղարաբաղի անփառունակ ապստամբութեան մասին և չատ էր ցաւում ու ափսոսում Շուշու աւերման համար: Հայ-թրքական ընդհարումներին Խաչէնի չրջանի հրամանատարն էր, գործով մէկ-մէկ լինում էր Շուշում, որի բնական գեղեցիկ դիրքով հիացած էր:

Յունիսի 2-ին կանանց միութեան վարչութիւնը Ղարաքիլիսայի կանանց ընդհանուր ժողովի է հրաւիրում, ապա դիմում է գաւառական կոմիտէին՝ ուղարկել ընկերներից մէկին՝ դասախօսելու: Նոյն օրը հաւաքուել էին նաև երկաթուղու բանուորները, իրենց միութիւնը կազմակերպելու, նրանք ևս խնդրել էին մէկին ուղարկել՝ ժողովը ղեկավարելու: Անուշաւան Ղազարեանը գնաց կանանց ժողովին, իսկ ես՝ երկաթուղու բանուորների մօտ:

Պէտք է խոստովանել, որ գաւառական կոմիտէն կազմակերպած խմբերի ու միութիւնների հաւաքոյթը ղեկավարող ուժեր չունէր: Զեմստուոյի պատգամաւորական ընտրութիւնները որոշ աշխուժութիւն էին առաջացրել Ղարաքիլիսէի ընկերների մէջ. բոլշևիկեան ապստամբութիւնը ճնշելու հետևանքով աւելի աշխուժութեամբ և եռանդով խմբեր էին կազմակերպում արհեստաւորներից և երիտասարդներից, ապա երկաթուղու բանուորների չարքերը մտան, հետաքրքրութիւն առաջ բերին: Կանանց միութեանը կից համախմբել, խմբեր էին կազմակերպել նաև օրիորդներից: Աւելի յարմար կը լինէր դասախօսութիւններ տալու համար մշտական տեղ ունենալ, բայց չունէինք: Հասարակական ակումբում հնարաւոր չէր յաճախակի ժողովներ անել, ակումբը տեղացիների ժամանցի, հանգիստների վայրն էր, և երբ ղրսից աչքի ընկած, ճանաչուած մարդիկ էին գալիս դասախօսութիւն տալու, միակ տեղը հասարակական ակումբն էր,

որը կուսակցական խմբական ժողովների համար յարմար տեղ չէր: Ժողովները մեծ մասամբ տեղի էին ունենում դպրոցներում, երբ պարապմունքներ չէին լինում:

ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևանից, դաւառական կոմիտէին օգնելու համար, եկել էին Աւետիք Նալսաթունու քոյրը՝ Արշալոյսը և Վահագն Կանայեանը, երկուսն էլ օգտակար եղան, առաջինը յատկապէս կանանց և օրիորդների շրջանում, իսկ Վահագնը՝ արհեստակցական-բանւորական խմբերում: Ընկերներից մի քանի հոգու՝ Միսակ Խաչատրեանի, Գ. Կիրակոսեանի և Պ. Ղարիբեանի հետ մտմտում էինք զնմստուոյի պատգամաւորական ժողովին Վահագն Քրմոյեանին ընտրել վարչութեան անդամ, նախագահ, սակայն չուտով նա հեռագիր ստացաւ՝ մեկնելու Երևան, ներքին գործոց նախարարի օգնական նշանակուած լինելու պատճառով: Դպրոցներն, ամառւայ արձակուրդին փակուեցին, և կուսակցական ուսուցիչները, ազատ լինելով, գործի անցան՝ ղեկաւարելու խմբերի հետ:

Յունիս 3-ին Երևանից գալիս են փաստաբանները Վարչամեանը և Մելիք-Միրզախանեանը, որպէս արտակարգ դատարանի քննիչներ, Ղարաքիլիսէում բանտարկուած բոլշևիկների մասին քննութիւն կատարելու: Նրանք բանտարկեալների մասին արձանագրութիւն են պահանջում, թէ փաստական ինչ տուեալների հիման վրայ են ձերբակալուած: Քննիչների այդ պահանջին Պարոյրը պատասխանում է, թէ բոլոր ձերբակալութիւնները կատարուած են դաւառական կոմիտէի որոշմամբ, ուստի քննիչներն իրենց պահանջն ուղղում են ինձ, որպէս դաւկոմի նախագահի:

–Դուք մարդկանց բանտարկել էք իբրև յանցագործների, սակայն համապատասխան արձանագրութիւն չէք կազմել և ուղարկել ներքին գործոց նախարարութեանը, թէ բանտարկեալներից որը ինչպիսի հակապետական ակտ է կատարել, երբ և որտեղ, որպէսզի քննիչներս կարողանանք արձանագրութեան հիման վրայ քննութիւն կատարել և արդիւնքը ներկայացնել դատարաններին, ասում է Գէորգ Վարչամեանը:

–Բոլշևիկներին ձերբակալելու համար չենք առաջնորդել ռուսական պետական օրէնքներով, այլ ժամանակի, տեղի և պայմանների թելադրութեամբ: Ալէքսանդրապոլում բոլշևիկները ապստամբական դրօշ են պարզել, բնականաբար, Ղարաքիլիսէի իրենց համախոհները պիտի ակտիւ դեր ստանձնէին, ուժ տալու համար սկսած հակապետական շարժմանը, ուստի կանխելու նպատակով նրանց որևէ վտանգաւոր քայլը, բանտարկեցինք բոլոր ճանաչուած բոլշևիկներին, որոնք Մայիս 1-ի տօնակատարութեան միջոցին գոչում էին՝ "Կեցցէ սովետական բանակը", "Կեցցեն սովետները", և կոչ էին անում միանալու միջազգային պրոլետարիատի չահերի պաչտպան բոլշևիկեան կուսակցութեանը:

Արձանագրութիւն չենք կազմել, կարիք չէր զգացուում, մեր ճանաչած բոլշևիկներին որպէս այդպիսիների ձերբակալել ենք, առ ի զգուշութիւն, որ չկարողանան միանալ իրենց Ալէքսանդրապոլի ընկերներին: Եւ ըստ իս, երկար ու բարակ քննութիւնների պէտքը չկայ, գլխաւոր յանցագործները Ալէքսանդրապոլի ապստամբութեան դրօչակ պարզած մի քանի հոգիներն են, որոնց պէտք է խստիւ պատժել, իսկ բոլոր մնացած բոլշևիկներից ոչ մէկը չպիտի մնայ Հայաստանում, թէկուզ բանտարկեալ վիճակում, ուստի պէտք է համաձայնութեան գալ Վրաստանի կառավարութեան հետ և մնացած բոլոր բոլշևիկներին Վրաստանի վրայով ուղարկել Հիւսիսային Կովկաս, ուր բոլշևիկների իշխանութիւն էր հաստատուած:

– Ձեր տուած բացատրութիւնը մեզ չի բաւարարում, անհրաժեշտ է, որ մենք ձեռքի տակ ունենանք բանտարկեալներից իւրաքանչիւրի մասին կանոնաւոր կազմուած արձանագրութիւն, որի վրայ յենուած քննութիւն կատարենք: Սա պետական գործ է, պէտք է պահանջուած լրջութեամբ վերաբերուել, մեր իշխանութիւններին չի վայելում վայրիվերոյ գործ կատարել, պէտք է օրինականութիւնը պահպանել: Վաղը կարող է մամուլի նիւթ դառնալ, թէ մարդկանց ձերբակալել են առանց տեւալների, առանց նախնական քննութեան և առանց արձանագրութեան, մի բան, որ ընաւ չի պատշաճում մեր կառավարութեանը, ասում է Մելիք Միրզախանեանը:

–Դուք գոհ չէք, որ ձերբակալել ենք բոլշևիկներին, որպէսզի չկարողանային միանալ իրենց ապստամբ ընկերներին, աւելի վտանգաւոր, ճգնաժամային վիճակ ստեղծէին մեզ համար: Մենք կանխել ենք այդ վտանգը, թէկուզ առանց արձանագրութիւնները կազմելու, որ ձևական բան է ներկայ դէպքում և ոչ մի նշանակութիւն չունի, ասում եմ:

– Դուք իղուր էք կարծում, որ արձանագրութիւնները ձևական բաներ են և նշանակութիւն չունեն, ասում է Մելիք Միրզախանեանը:

– Ախպէր, ասում եմ, եթէ գտնում էք, որ օրինաղանցութիւն ենք արել, համաձայն օրէնքի վարւեցէք, եթէ պիտի պատասխանատուութեան ենթարկուեմ, ես պատրաստ եմ:

– Լաւ, թողնենք, ասում է Գ. Վարչամեանը, ինչ արած, պարտաւորուած երկուսս մէկիկ-մէկիկ պիտի հարցաքննենք և համապատասխան արձանագրութիւն կազմենք իւրաքանչիւրի համար:

Յունիս 6-ին նամակ ստացայ Արչակ Շիրինեանից և Վահան Խորէնուց, թէ ինքն ու ես, կուսակցութեան կողմից որպէս կազմակերպիչ յանձնախումբ, նշանակուած ենք Զանգեզուր անցնելու, կազմակերպելու շրջանի գիւղացիութիւնը, քայքայուած վիճակում գտնուող կուսակցական չարքերը վերակազմելու, համապատասխան ժողովներ հրաւիրելու և օրինական մարմինների

ընտրութիւն կատարելու, ուստի խնդրում են, որ Դիլիջանի վրայով ես անցնեմ Նոր Բայազէտ և այնտեղ սպասեմ իրենց:

Ես հեռագրում եմ, որ պարտաւոր եմ Ղարաքլիսէի զաւառական ղեմստուոյի պատգամաւորական ժողով հրաւիրել, որ վարչութեան ընտրութիւն կատարի, որից յետոյ միայն կը կարողանամ մեկնել Ղարաքլիսէից:

Յունիս 7-ին հեռագիր եմ ստանում Ռուբէնից, հրահանգում է չուտ վերջացնել գործերը, Ղարաբաղ մեկնելու համար: Ռուբէնին էլ հեռագրով նոյն պատասխանը տւի, ինչ՝ Շիրինեանին և Խորէնուն:

Յունիս 9-ին Դաւիթ Անանունը և Բախչի Իշխանեանը Ալէքսանդրապոլից գալիս են Ղարաքլիսէ և իջևանում մեզ մօտ: Նրանք պատում էին քաղաքից-քաղաք և դասախօսութիւններ տալիս:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՅԵՂԱՇՐՋՄԱՆ ԵՒ ԱՅԼ ՆԻՒԹԵՐԻ ՇՈՒՐՋ

Յունիսի 10-ին դասախօսեց Բախչին բոլշևիկեան յեղաշրջման ու համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան չուրջ: Բոլշևիզմը սոցիալիստական տեսակէտից ռէակցիա է, ասիական սոցիալիզմ, ձգտում է Փետրուարեան բուրժուական յեղափոխութիւնը դարձնել սոցիալական, արմատական յեղափոխութիւն, պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով սոցիալիզմն իրականացնել նախ յետամնաց, ճարտարարուեստը չզարգացած, կիսաֆէոդալական մի երկրում, ինչպիսին Ռուսաստանն է, որ տրամագծօրէն հակասում է մարքսիստական տեսակէտին, ըստ որում, սոցիալիզմը կարող է իրականանալ կապիտալիստական ամենաբարձր զարգացման հասած երկրում: Ըստ մարքսիզմի, չատ պարզ ու հասկանալի է, որ բոլշևիկները չեն կարող սոցիալիստական կարգեր ստեղծել Ռուսաստանում, առաւել ևս չեն կարող համաշխարհային յեղափոխութիւն առաջ բերել , վաղ թէ ուշ բոլշևիզմը պիտի փիասկո կրի:

Ակումբի սրահը լեփ-լեցուն էր հասարակութեամբ, որը բուռն կերպով ծափահարեց դասախօսին, ապա եղան հարց տուողներ, որոնց բաւարարեց պատչաճ պատասխան-բացատրութիւններով:

Յունիսի 11-ին նոյն տեղում Դաւիթ Անանունը դասախօսեց հայրենիքի ամբողջացման ու հայ ժողովրդի հաւաքման մասին: Դարեր չարունակ ղրկւած լինելով անկախութիւնից, հայ

ժողովուրդը, զուրկ ազգային պետական կեանքից, ենթակայի հոգեբանութիւնից ու մտայնութիւնից դեռ չէ ազատագրուել, երբ իր երկիրը անկախ է դարձած, մէկի մէջ ներքին ռուսն է խօսում, միւսի մէջ ներքին թուրքը. հայը պէտք է թօթափի, ներքին օտարից ձերբազատուի, կենտրոնանայ ինքը իր մէջ և ինքնուրոյնաբար դարբնի իւր կեանքը և ջանայ ամրողջացնել իւր հայրենիքը:

Յունիսի 12-ին Բախչին դասախօսում է "Հայրենիքի գաղափար"ը նիւթի չուրջ, վերյիշում է Ժան Ժոռէսի[57] և Գուստաւ Հերվէի հրապարակային վէճը, առաջինը որպէս պաշտպանի, ղրական վերաբերմունք ունեցողի, իսկ երկրորդը որպէս բացասական վերաբերմունք ունեցողի, ժխտողի: Սակայն երբ պայթեց համաշխարհային պատերազմը, գերմանական սոց-դեմոկրատ կուսակցութիւնը ղրականապէս քէչարկեց Բայխստագում պատերազմական բիւջէն, և գերմանական բանակները չարժուեցին դէպի արևմուտք, ոտնակոխ արին միջազգայնօրէն հաստատուած Բելգիայի չէզոքութիւնը, Հերվէն ու հետևորդները փոխեցին իրենց վերաբերմունքը, վերագնահատման ենթարկեցին, իսկ երբ տեղի ունեցաւ Փետրուարեան յեղափոխութիւնը, Հերվէն ափսոսանքով նշեց Նիկոլայ Երկրորդի անկումը:

Բախչիից յետոյ դասախօսեց Դաւիթը, առաջիկայ մեր անելիքների չուրջ և մեր օրիենտացիայի մասին: Մենք պիտի ջանանք միջազգային դաշնագրով և օրէնքով ապահովել մեր անկախութիւնը, որի համար կառավարութիւնը հարկ եղած միջոցների պիտի դիմէ Վեհաժողովում, և առաւելապէս Եռնակ Համաձայնութեան կառավարութիւնները պարտաւոր են բաւարարել իրենց փոքր դաշնակցի արդար պահանջները, մի դաշնակցի, որ իր քանակի 30% -ից աւելին կորցրեց պատերազմի հետևանքով, մի կորուստ, որ համեմատաբար շատ աւելի մեծ է պատերազմի մէջ մտած պետութիւններից իւրաքանչիւրի ունեցած կորուստից: Դա արտաքին աշխարհում, իսկ ներսում իւրաքանչիւր հայ իւր ուժերը պէտք է ի սպաս դնի հայրենիքի բարգաւաճման գործին, ամէն կերպ ջանալով դօրավիգ լինել հարազատ կառավարութեանը:

Դասախօսութիւնից յետոյ մի քանի ընկերներ՝ Անուշաւան Ղազարեան, Սանդրօ Թարանեան և Գրիգոր Ղամարեան, լաւ տրամադրութեամբ նկան մեզ մօտ, թէկուզ կէս ժամ էլ զրուցելու դասախօսների հետ:

---

[57] Ժան Ժորէս (1859-1914). Ֆրանսիայի Սոցիալիստական Կուսակցութեան ղեկավարը, պայքարում էր, դաշնութեանների ու պատերազմների դէմ, ապրանեց Առաջին Աշխարհամարտի նախօրեակին՝ չվճնխանների կողմից: (Խմբ.)

Յունիս 13-ին Բախչին ու Դաւիթը պէտք է մեկնէին Դիլիջան, և երբ յիշեալ ընկերները գնացին, Բախչին Աչոտին ու ինձ հարց տուեց, թէ ինչով պիտի գնան: Ղարաքիլիսէից Դիլիջան օթօմօբիլները չէին աշխատում. եթէ պատահականօրէն ըևնատար օթօմօբիլ չէր լինում, մարդիկ կառքով էին գնում Դիլիջան: Երբ այդ մասին յայտնեցինք իրողութիւնը, Դաւիթն ասաց, որ ի վիճակի չէ կառքով ճամբայ կտրելու մինչև Դիլիջան:

Ինչպէս սովորական էր նոյնիսկ հայկական դպրոցասարտ ղարաբաղցիների մօտ, մեր ղրուցակիցները միմեանց հանդիպելուց մէկ էլ տեսար զրական լեզուն թողնելով, սկսեցին իրար հետ իրենց բարբառով խօսել: Կարգը Բախչին խախտեց ու ղարաբաղցիերէն սկսեց:

– Մեռնես դու, Դաւիթ, էնքան տեղ միասին ենք եղել, մնացել է Դիլիջանը, որտեղ խօսելուց յետոյ էլ ուրիչ տեղ չունենք գնալու, պիտի վերադառնանք Երևան, ինչո՞ւ ես հրաժարւում. ինչպէս կասեն մեզանում, Ղարաբաղ, էշը կերել ես պոչին դէմ ընկել:

Ես հալ չունեմ ճամբայ կտրելու էս սարերում, վրաս երկու դրւանքայ միս չկայ, չոր ոսկորներ են, ես չեմ կարող կառք նստել, լախկ-լըխկ լինելով ճամբայ գնալ. գնում ես, գնա, ձեռք քաշիր ինձնից:

–Դաւիթ, մի հակառակվիր, ինչպէս մեզանում կասեն՝ դոզիդ քարերը թափիր ցած, կոխ մի արա, չէ՞ որ Երևանում միասին ենք կազմել մեր երթուղին , վերջին կէտը համարել Դիլիջանը, որտեղ խօսելուց յետոյ պիտի վերադառնանք Երևան:

– Ջաքարա Բէդի[58] տղայ, ես քո փառասիրութեան ղոհն եմ դարձել. մնենակ գնա, չեմ գալիս, գնա և ինչքան կուզես, խօսիր, փառաւորիր, այլևս չեմ ուզում փառասիրութեանդ ղոհ դառնալ:

Աչոտն ու ես, որ լուռ լսում էինք, Դաւիթի վերջին, հիւմորով ասած խօսքերի վրայ չկարողացանք զսպել մեր ծիծաղը, պոռթկացինք:

Իրօք, Դաւիթը կազմւածքով նիհար ու թոյլ մարդ էր, չէր ուզում կառքով ճամբայ գնալ ու տառապել, ուստի ասացի. "Դաւիթ, մենք վաղը կը դիմենք Ամերիկեան Նպաստամատոյցի նախագահին, Դոկտոր Բրաունին, որի հետ ծանօթ ենք Ղարաբաղից, կը խնդրենք, որ իրենց օթօմօբիլը տրամադրի մեզ. վստահ ենք, Դոկտորը չի մերժի, ամերիկեան օթոյով կերթաք Դիլիջան, այնտեղից Երևան էլ օթոյով կերթաք, որովհետև Երևան – Դիլիջան գծի վրայ մարդատար ու բեռնատար օթօներ աշխատում են:

---

[58] Բախչու հօր անունն է: (Հեղ.)

–Հա, ինչ եմ ասում, եթէ օթօմօբիլ լինի, կերթամ Դիլիջան, ասաց Դաւիթը: Միւս օրը դիմեցինք դոկտոր Բրաունին, չմերժեց, սիրով տրամադրեց իրենց օթօմօբիլը, Բախչուն ու Դաւիթին ճամբու դրինք և չոփերի միջոցով նամակ ուղարկեցինք ընկ. Աւօ Մելիք-Ալլահվերդեանին և միւս ընկերներին, որ անհրաժեշտ աջակցութիւնը ցոյց տան:

Յունիսի 14-ին Երևանից գալիս են մեզ մօտ Յարութիւն Թումեանը և Մարտիրոս Արղումանեանը, որոնք պատմում էին Արսէն Միքայէլեանի «սխրագործութեան», Ղարաբաղի ապստամբութեան մասին: Խօսում է Յարութիւնը իրեն յատուկ տաքարիւնութեամբ, և Մարտիրոսը մէկ-մէկ "ճիշտ է" ասելով հաստատում է Յարութիւնի ասածները:

"Մեր Ղարաքլիսէ գալու նպատակն է՝ խորհրդակցել և միջոցների դիմել կուսակցական ճամբով, պատասխանատուութեան ենթարկելու Արսէնին, որովհետև նա միշտ արհամարհել է տեղական ընկերների կարծիքը և վարուել իր հասկացածի պէս, որի հետևանքը եղաւ Շուշու աւերակը և ժողովրդի կոտորածը: Առանց սեռի և հասակի խտրութեան, երկու հաղարից աւելի մարդիկ են սպանուել: Քաղաքի ժողովուրդը միանգամայն անտեղեակ է եղել լինելիքի մասին: Երեսուն և հինգ հոգի Բագրատ Միքայէլեանի ղեկավարութեամբ վերին դարպասից[59] ներս են մտել, դիրք բռնել ղօրանոցի դիմաց և համազարկի կապել ղօրանոցը, որտեղ ադրբէջանեան կայազօրն էր գտնուում, հինգ – վեց հարիւր հոգի զինուորներ: Պահանջում են, որ կայազօրը անձնատուր լինի. կայազօրը ղէնքի է դիմում և համազարկով ու գնդացիրների կրակով պատասխանում: Կայազօրի սպանները ապրում էին հայոց թաղում, ղօրանոցին մօտ լինելու համար: Սպաններից իւրաքանչիւրը վառում է իր ապրած տունը և մի քանի տեղից սկսած հրդեհը արագօրէն տարածւում է քամու չնորհիւ, և հայկական թաղը բռնւում է կրակով ու ծխով: Մարդիկ դուրս են նետւում տներից, խելագարի պէս աջ ու ձախ վազում, և սկսւում է կոտորածը: Այդ միջոցին ժողովրդի մէկ մասը ընազդաբար ուղղւում է դէպի Քերծի գլուխը, այնտեղից իջնում Քարին Տակ գիւղը, ապա ցրւում մօտակայ այլ գիւղեր ու փրկւում:

Ղօրանոցի վրայ յարձակում գործած "հերոսները", իրենց հերոսապետով միասին, երբ կայազօրը յարձակման է անցնում, կծիկը գնում, փախչում են:

Քաղաքացիների մէկ մասը, երեք հաղար հինգ հարիւր հոգի, ապշահար եղած, փախչել չեն կարողանում: Տեղի են ունենում

[59] Կոչւում է Երևանեան դռներ: (Հեղ.)

կանանց և աղջկերանց ընտարարութիւնները. գաղաղած թուրքերը իրենց վայել և յատուկ ղերի մէջ էին: Տեղի են ունեցել կանանց և աղջիկների ինքնասպանութիւնները, իրենց պատիւը փրկելով: Սպաններից երկու հոգու միջև վէճ է առաջանում "Մարիամ Ղուկասեան" օրիորդաց միջնակարգ դպրոցի ուսուցչուհի օրիորդ Էլէօնորա Տէր Դաւթեանի վերաբերեալ. վէճը սուր կերպարանք է ստանում այն աստիճան, որ երկու սպանները միմեանց սպառնալիք կարդալով, երկուսն էլ միաժամանակ ատրճանակ են կրակում միմեանց վրայ և երկուսով մահամերձ փռւում գետնին, և, մոմենտից օգտւելով, Էլէօնորան սպաններից մէկի ձեռքից ընկած ատրճանակը վերցնում, վերջ է տալիս իւր կեանքին:

Ըստ երևոյթին, տխրահռչակ Սուլթանովի կողմից հրաման է տրւած լինում, հրացանաձգութիւնը դադարեցնելուց յետոյ կենդանի մնացածներին, որպէս զերիների, հաւաքեն թրքական թաղը:

Քաղաքի աչքի ընկած պատւաւոր հայերից և երիտասարդներից չորս հարիւր հոգու նետում են բանտը և այնտեղ սրածում բոլորին, սակայն մէկը, մի ղարաբաղցի[60] հրաչքով աղատւում է և փախչում մօտակայ Հիւնոտ կամ Ներքին Քարին Տակ գիւղը:

Ինչպէս գիտէք, թուրքերի մէջ ամենախաղաղասէրը մարդիկ վաճառականներն են եղել միշտ և սրտանց ղէմ են եղել հայ-թրքական խաղաղ յարաբերութիւնների խախտմանը: Նրանք էլ զաղաղել, անիծում էին քաղաքի կեանքը տակնուվրայ անողներին, մեղադրում հայերին, որ իրենց աղիղ օրը՝ Նոր Տարւայ առաջին օրը՝ Նովրուզը, իրենց գլխին հարամ են արել:

Եւ բացի հաղարաւոր մարդկային կեանքի կորստից, նիւթական հսկայական կորուստ ունեցանք, որ հարիւրաւոր միլիոն ռուբլու է հասնում: Ամէնքը անիծում են իրենց դժբախտութեան պատճառ եղած յանցագործներին և ասում, թէ պէտք է նրանք իրենց արժանի պատիժը կրեն: Հարկաւ, եթէ քաղաքի մարդիկ տեղեակ լինէին կատարւելիք ակտին, կը կարողանային հնարաւորութեան սահմաններում խուսափել մեծ կորուստ ունենալուց և պաշտպանել: Մէկ տարի առաջ, երբ թուրքերը, Սուլթանովի գիտութեամբ, գաղտագողի մտան հայոց թաղը, հայերը անակնկալի չեկան, անմիջապէս գործի անցան, թուրքերին մի քանի տասնեակ կորուստ պատճառելով դուրս չպրտեցին: Եւ թուրքերին դուրս չպրտող մեր մարտիկները բոլորը կենդանի էին, իրենց

[60] Այդ դարպասապետ քաջ տղային, որ վախճած, աղաւաւածներից է, տասնեակ տարիներ յետոյ, պատահականօրէն Թէհրանում հանդիպեցի և մանրամասնութիւններ իմացայ, դրի տուի: (Հեղ.)

չրջանապետերով հանդերձ, եթէ տեղեակ լինէին քեալլազնօղների քաղաք մտնելու որոշմանը, ի հարկէ զղոյչ կը լինէին և կանխաւ ինքնապաշտպանութեան միջոց ու ձև կը մտածէին և կազմ ու պատրաստ կը դիմազրաւէին վտանգը:

Խանքենդում էլ գրեթէ նոյնն է տեղի ունեցել, ինչ որ Շուշում: Խաչէնի մարտական ուժերը Ալէքսան Դայու հրամանատարութեամբ չրջապատում են Խանքենդու զօրանոցը, որում ազգրէչջանական մի գունդ կար տեղաւորուած: Ալէքսան Դային պահանջում է զէնքերը ցած դնել և անձնատուր լինել: Ապստամբութիւնից առաջ, երբ գեռ խաղաղ էր կեանքը, բաւական թիւով ազգրէչջանցի զինուորներ դասալիք էին եղել՝ չկարողանալով զօրանոցային կեանք վարել: Դասալքութիւնը վարակել էր զօրանոցում մնացածներին: Նրանք առաջարկում են ճամբայ տալ իրենց, որպէսզի հեռանան Խանքենդուց: Զինուորների առաջարկը մերժւում է և կտրականօրէն պահանջւում, որ զէնքերը վար դնեն և անձնատուր լինեն, սակայն զինուորները անձնատուր չեն լինում, ի հարկէ, պատասխանում են համազարկով ու գնդացիրի կրակով. կռւի ընթացքին սպանւում է Ալէքսան Դային, չփոթ է առաջանում հայ մարտիկների մէջ և առիթից օգտւելով, զինուորները զօրանոցից դուրս են նետւում, խանութներ ու տներ կողոպտում և մարդիկ սպանում: Մինչդեռ, եթէ ճամբայ տւած լինէին, նմոյչի համար մէկ զինուոր էլ չէր մնայ, բոլորը կը փախչէին: Ամբարտաւան գտնւեցին, և իրենց ամբարտաւանութեան հետևանքով ժողովուրդը տուժեց:

ԱՐՍԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ապստամբութիւնից առաջ մի անգամ Դալի Ղազարի առաջարկութեամբ Ղարաբաղի ձիաւոր մարտիկ ուժերի ընդհանուր ցուցադրում է կատարւում. բոլոր չրջաններից ձիաւոր մարտիկները կենտրոնանում են որոշեալ վայրում, հազարից աւելի հեծեալներ: Դալի Ղազարը չափազանց ոգևորւում է ձիաւորներով ու բացականչում. "Այսքան ձիաւոր ուժ միատեղ հաւաքւած մեր կառավարութիւնը չունի. այս ձիաւորներով կարելի է ամբողջ Մուղանի դաշտը գրաւել": Դալի Ղազարի յոխորտանքից էլ ոգևորւում է Արսէն Միքայէլեանը, համակւում նրա մտայնութեամբ ու հոգեբանութեամբ: Նա յինեւլ էր միայն Դալի Ղազարի և Մեսեանի վրայ, տեղական ընկերների վրայ վերից նայելով, գործում էր ինչնուրոյնաբար և գործունէութիւնը ցուցական բնոյթ ունէր. մարտական ուժերի ցուցադրումներ և զինուորական վարժութիւններ կատարելով օր-ցերեկով, պրաւելով միաժամանակ թուրքերի ուշադրութիւնը:

Արսէն Միքայէլեանը, Դալի Ղաղարը և Մեսեանը թերագնահատել էին Աղրբէջանի դինուորական ուժը և ունեցած նիւթական կարողութիւնը: Եւ Ղարաբաղի հայութեան հասած ղժբախտութիւնը ամբողջովին այդ թերագնահատման արդիւնքն է:

Արսէն Միքայէլեանի գործունէութիւնը ափաչկարա էր և ցուցական: Եւ պէտք է խոստովանել, որ Սաքօ Համբարձումեանն ու Ա. Ծատուրեանը զգուշացրել էին, թէ չպէտք է սրել հայ-թրքական յարաբերութիւնները, որովհետև ըստ իրենց ունեցած ստոյգ տեղեկութեան, ապիտակ ռուսները պարտել էին և խորհրդային յաղթական զօրքերը պիտի ուղղէին դէպի Անդրկովկաս, որ տեղի ունեցաւ, ինչպէս տեսանք:

Հարցը պարզ է, նախ՝ որ պէտք է միջոցների դիմել պատասխանատուութեան ենթարկելու, կուսակցական ճամբով, Ղարաբաղի անփառունակ ապատամբութեան ղեկավարներին, որոնց արած գործը չէ թէ արկածախնդրութիւն, այլ, պարզապէս, ոճիր էր: Եւ երբ Դրօն իր զօրամասով անցաւ Ղարաբաղ, գերութիւնից ազատած ծերունազարդ քահանայ Տէր Գարեգին Յովհաննիսեանը[61] ներկայանալով Դրոյին, ասում է՝ դուք պէտք է պատժէք այն անպատասխանատու մարդկանց, որ այս ղժբախտութեան ենթարկեցին ժողովրդին: Պէտք է պատժէք և Թուրքերին՝ անմեղ մարդկանց կոտորելու համար: Եթէ չպատժէք, ետեւիցս պիտի անիծեմ ձեզ:

Երբ Դրօն հասնում է Դրնավաղ, անմիջապէս վերջնագիր է ուղղում Շուշու Թուրքերին, որ բաց Թողնեն գերիներին և դինուորականի պատուոյ խօսք է տալիս, իրենց ձեռք չտալ, չանհանգստացնել: Թուրքերը Համեստին[62] ուղարկում են Դրոյի մօտ՝ յայտնելու, որ համաձայն են և բաց են Թողնում բոլոր գերիներին:

Ի դէպ, Նժդեհը Դրոյին առաջարկում է, վաղ անցնել դինուորականի պատուոյ խօսքից, քանի որ Թուրքերը, դարերի ընթացքում, միշտ ուխտադրուժ են գտնուել, պահանջել նրանցից, որ Թողնեն քաղաքը, հեռանան, եթէ չհամաձայնեն՝ Թնդանօթի կապել, աւերել Թրքական մասը, քանի որ հայկական մասը նրանք էին աւերել և այդպիսով ոչնչացնել Փանահ Խանի բոյնը: Դրօն, ի հարկէ, չի համաձայնւում:

---

[61] Ակաղմիկոս Աչոտ Յովհաննիսեանի հայրը: (Հեղ.)

[62] Ցոյլա է, որ վիրաւոր մօրս և հօրեղբօրս տալի զոլոցական աչակերտ Սմբատի հետ պերի էր ընկած: Հայրս, ինչպէս պրել էր Աչոտի քեռական Գրիգոր Մինասբէկեանը, բանտում առաջին ապահուն է եղել: Դրօն մերոնց, վիրաւորների ուղեկցութեամբ, ճամբում է մեր գիւղը՝ Խանձի, որտեղ վիրաճանւում է մայրս: (Հեղ.)

Յունիսի 21-ին վերջանում են Ջանգիբասարի կռիւները, թուրքերը պարտւում, տեղի են տալիս, հեռանում, դաղթում:

Ջեմստուոյի պատգամաւորական ժողովը նշանակւում է ամսու 29-ին և հրաւիրագրեր ուղարկւում բոլոր պատգամաւորներին, 28-ին լինելու Ղարաքիլիսէում, ճիշտ որոշւած օրը ժողովը սկսելու համար:

ՆՈՐԻՑ ԵՐԵԽԱՆՈՒՄ

Յունիս 28-ին Անուշաւան Ղազարեանի հետ միասին մեկնում ենք Երևան: Ալէքսանդրապոլի կայարանում հանդիպում եմ Արշակ Ջամալեանին, որը Երևանից մեկնած գնացքով չտապում էր Ղարաքիլիսէ, որովհետև ընտրւած պատգամաւորներից մէկն էր: Արշակը իւր դժգոհութիւնն է յայտնում արդարացիօրէն, որ իբրև ընտրական յանձնաժողովի նախագահ, պատգամաւորական ժողովի է հրաւիրել մարդկանց և ինքը չի մնացել, զէթ ժողովը բաց աններուց յետոյ մեկնելու: Յայտնում եմ, որ ըստ կանոնագրութեան (ղեմստուոյի) ժողովը պիտի բաց անէ գաւառապետը և առաջարկէ դիւան ընտրելու, աշխատանքի անցնելու համար. ես աներևոյթ չունէի, իմ ներկայութիւնը լոկ բարոյական նշանակութիւն ունի: Եւ որովհետև Ռուբէնը պահանջել էր ընտրական գործը վերջանալուց անմիջապէս մեկնէի, այդ պատճառով էլ գնում եմ Երևան: "Եւ վերջապէս, Արշակ, ասում եմ, կասկածից դուրս է, որ ժողովը միաձայնութեամբ քեզ է նախագահ ընտրելու ժողովը ղեկավարելու, իմ կարիքն էլ չունես, ի հարկէ":

Յունիսի 29-ին Ջանգեղուր-Ղարաբաղի հայրենակցական միութեան ժողովում, մտքերի փոխանակութիւն ունենալով, որոշւում է դիմել կառավարութեանը, որ լուրջ միջոցների դիմէ, Ղարաբաղը վերագրաւելու և բացի այդ, զրամական միջոցներ տրամադրելու միութեան վարչութեանը, պրոպագանդայի գործը կազմակերպելու, զրականութիւն տարածելու: Միութեան կողմից լիազօրւում են Դաւիթ Անանունին և ինձ՝ ներկայանալու վարչապետ Համօ Օհանջանեանին:

Յունիսի 30-ին Դաւիթի հետ միասին գնացինք կառավարական չէնքը, ներկայանալու Վարչապետին, և նախասենեակում երկու երիտասարդներ՝ Համլիկ Թումանեանը (Բանաստեղծի որդին) և Սէրօժա Թորոսեանը, իբրև ղեկուցանողներ վարչապետի, ընդունեցին մեզ, ասելով, թէ մօտը մարդ կայ, պիտի սպասենք, նա դուրս գայ, և կը ղեկուցեն վարչապետին մեր մասին: Նստեցինք բաղկաթոռներին ու սպասում էինք հերթի, երբ ներս մտաւ միջահասակ, չատ վայելչակազմ մէկը,

մաղերը գլխին խռիւ-խռիւ, արագ չարժումներով, ղիմեց Համլիկին ու Սէրօժին, հարց տալով՝ "Համօն այստեղ է՞": Երիտասարդին պատասխանեցին, որ պիտի սպասէ, իսկ այդ միջոցին Դաւիթը քթի տակ ասաց ինձ. "Հիմա էդ չան լակոտին ցոյց կը տամ, թէ ինչ ասել է՝ "Համօն այստեղ է՞": Շատ լաւ ճանաչելով Դաւիթին և կռահելով միտքը, արագ մօտեցայ երիտասարդին ու ասացի՝ "երիտասարդ, եթէ դուք ուղում էք Համոյի հետ տեսնուել, պէտք է գնաք իր տունը, ձեղնից առաջ ենք եկել և եկել ենք Վարչապետ Համօ Օհանջանեանի մօտ. այնպէս, որ պէտք է հերթի սպասէք": "Պարոն, ես հակառակ չեմ լսօ, ի՞նչ ասացի, կը սպասեմ":

Ներկայացանք Վարչապետին, յայտնեցինք հայրենակցական միութեան ցանկութեան և առաջարկի մասին: Վարչապետը հարցը լսոստացաւ ղնել նախարարական խորհրդի նիստին, վստահեցնելով, որ կառավարութիւնը հնարաւորն ու կարելին չի խնայի, կը կարգադրի Զանգեղուր-Ղարաբաղի համար: Մեր տեսակցութիւնը տևեց հաղիւ կէս ժամ, մեր գոհունակութիւնը յայտնելով, դուրս եկանք: Կառավարական չէնքից դուրս գնալով, պիտի ուղղուէինք դէպի դբօսայգի, այնտեղ հայրենակիցների հանդիպելու, բայց կառավարական չէնքի անկիւնում Դաւիթը կանգ առաւ և ասաց. "Սպասիր":

– Ի՞նչ կայ, Դաւիթ, գնանք այգի, հանդիպելու մերոնց:

– Ձէ, սպասիր, ես էն չան լակոտի հետ գործ ունեմ:

– Դաւիթ, արդէն ինչ որ պէտք էր, ասացի տղային, և նա, ըստ իս, աղդեց բաւական:

– Էնպէս չեն ասի, ինչպէս դու ասացիր, տես թէ ես ինչպէս կասեմ և համեմատիր քո ասածի հետ:

– Ես գիտեմ, թէ դու ինչպէս կասես և կռահելով ասելիքդ, քեզ կանչեցի. արի, վազ անցիր:

– Ոչ, չեմ կարող, ես իմ խօսքը պիտի ասեմ:

Մեր, փոխասացութիւնը չվերջացած, երիտասարդը դուրս եկաւ և արագ ուղում էր անցնել մեր մօտից, Դաւիթը կանգնեցրեց, ձայն տալով:

– Ա. լսօխա, կանգնիր: Երիտասարդը կանգ առաւ.

– Ի՞նչ էք ուղում, պարոն Դաւիթ: Տղան ճանաչում էր Դաւիթին. Երևանում ո՞վ չէր ճանաչում նրան: Ծառայում էր կոօպերատիւի վարչութեան զրասենեակում Երևան հաստատուելուց ի վեր, ուր, թէ տասն ամիս էր:

– Քեզ հետ գործ ունեմ, ասաց Դաւիթը և չարունակեց: Ես հինգ հարիւր տարի աչքս տնկել, սպասել եմ այս օրւան, որ անկախութիւն ունենամ, երկիրս Վարչապետ ունենայ և դու տրտնգի տալով մտնես Պարոն Վարչապետի մօտ ու մարդկանց ներկայութեամբ հարց տաս, թէ՝ "Համօն այստեղ է՞", փոխանակ պատշաճ ձևով հարցնելու՝ "պարոն Վարչապետը այստե՞ղ է: Դու

իմ Վարչապետին զարձնես մի ինչ-որ Համո՞, չուն չան որդի, եթէ միւս անգամ էլ Համարձակւես նման ք... ուտել, մէջիցդ չալկայ կանեմ, ինչպէս ոչխարին են անում, դէ, գնա":

Երիտասարդը մինչև ականջների ծայրը կարմրած, գնաց: Ինձ թւում էր, որ երիտասարդը ամօթխած մէկն էր և ճանաչելով Դաւիթին, ձայն չհանեց յարգանքից ղրղուած:

-Խօսքն էսպէս կասեն, որ լաւ հասկանայ, ասաց Դաւիթը, երբ երիտասարդը հեռացաւ:

– Դաւիթ, երիտասարդ տղայ է, երևի ուսանող, ուրևմն ինտելիգենտ, բայց դեռ անփորձ. ըստ իս, լաւ չարեցիր, չատ խիստ վարուեցիր, ասացի:

– Դու էլ ամօղլուդ[63] պէս գլխիս աւետարան մի կարդա, ես քո ինտելիգենտ, չփացած երիտասարդների մէրը ... ասաց ու հայհոյանքների տարափ տեղաց երիտասարդների հասցէին: Նա չէ թէ մեր՝ դաչնակցական, այլ և իրենց՝ հայ բանւորական կազմակերպութեան (մենշևիկ) անդամ եղած, ապա բոլշևիկներին յարած երիտասարդների հանդէպ չատ խիստ վերաբերմունք ունէր: Եւ այդ անջատւածներից մէկի նկատմամբ, պարզապէս, ինչպէս կասեն՝ արեան թշնամի էր դարձած: Գօրիսեցի Երեմիա Բակունցն էր այն մէկը, Պետրոգրադի պսիխօ-նեւրօ-պաթօլօգիական ինստիտուտի իրաւաբանական ֆակուլտէտի ուսանող, նախապէս վկայւած լինելով Գէորգեան ճեմարանից (լաբարանական բաժնով միասին): Պատրաստւած և հմտորական ձիրք ունեցող երիտասարդ էր, ամառւայ արձակուրդը Բագւում ամուսնացած քրոջ մօտ էր անցկացնում և դասախօսում հայ բանւորական կազմակերպութեան բանւորական շրջանում ու պատանիների մէջ: Յեղափոխութիւնից յետոյ, հէնց առաջին ամիսներին, յարել էր բոլշևիկներին և 1917 թ. ամառը կարճ ժամանակ մնալով Բագու, ելոյթներ էր ունենում բանւորների առջև, որպէս համոզւած բոլշևիկ, ապա մեկնեց Գօրիս: Բանւորների մէջ լինում են զրաճանաչ և ինքնակրթութեամբ բաւական զարգացած մարդիկ, որոնք դժգոհ են մնում Երեմիա Բակունցի ելոյթներից և գանգատւում Բախչուն ու Դաւիթին: Այն ժամանակւանից ի վեր, Դաւիթը դարձած էր Բակունցի ոխերիմ հակառակորդը:

Դաւիթը գիտէր, որ մի խումբ ընկերների հետ ես էլ պիտի գնայի Զանգեզուր, ուստի ասաց.

– Դու չատ լաւ գիտես, որ էն չան որդի Երեմիա Բակունցը եթէ ընկնի ձեռքս, վիրը ես իմ ձեռքով կը կտրեմ մի բութ դանակով. եթէ յաջողւի, բռնէք նրան, և դու նրա մի ականջը չկտրես, ուղարկես ինձ, էլ աչքիս չերևաս, ոչ ես, ոչ դու ...

Զկարողացայ ծիծաղս պահել, փոթկացի:

---

[63] Ակնարկում է Բ. Իշխանեանին: (Հեղ.) Ամօղլի (Թրք.)՝ հօրեղբօր որդի: (Խմբ.)

– Հէչ մի ծիծաղիր. ես քեղ հետ լուրջ եմ խօսում, եթէ ասածս չը կատարես, աչքիս չերևաս, ես նրա մէրը . . .

Դաւիթը նոյն պատւերը տւել էր և մեր Հանդուցեալ Մուշեղ Թամրազեանին (զրական "Թանատոս" անունով), երբ, իբրև Սեպուհի համհարզը, մեկնելիս է եղել Իջևանի ճակատը, թէ գուցէ այնտեղ Բակունցը զերի կընկնի: Եւ Մուշեղին աւելի խիստ տոնով էր պատւէրը տւել:

Դաւիթը չատ աւելի խիստ էր իրենցից անջատւած տարեցների Հանդէպ, և ղրանցից մէկն էր մենչևիկ Դուրզևրեանը: Նախորդ տարւայ աշնանն էր, մի օր Դաւիթը, Միչա Արղումանեանն ու ես ղբօսայղում ծառի տակ մեկուսի նստած ղրուցում էինք Ղարաբաղի մասին: Դաւիթը, ի հարկէ, իրեն յատուկ սուր ղարձւածքներով էր համեմում իւր խօսքերը: Դաւիթն ասում էր. "Երբ տաճիկները Թողին Անդրկովկասը և դաչնակիցները փոխարինեցին նրանց, մեր կառավարութիւնը պէտք է յայողեցնէր, ուղարկէր մեկին Շուշի, որպէս Սիւնիքի՝ Զանգեղուր-Ղարաբաղի (Հետը հաչւած լեռնային Գանձակը և Ղազախը) նահանգապետի և կատարւած փաստի առջև կանգնեցնէր Ադրբէջանին. այդպիսով, վերջինս կանխւած կը լինէր և Ադրբէջանը եթէ ոտնձգութիւն անէր ու կաշառելով անգլիացի չուն չանորդիներին, հետացնել տային նչանակւած նահանգապետին, Ադրբէջանն ինքն էլ չէր կարողանայ մեկին նչանակել. ուստի դաչնակիցների կողմից մի զինւորական կը նչանակւէր՝ կառավարելու չրջանը, մինչև Վերսայլի վեհաժողովի վճիռ կայացնելը: Ադրբէջանը կանխեց մեղ, Սուլթանովին նահանգապետի պաշտօնով Շուշի ուղարկելով, ապա, մեկ ու կէս ամիս անց, Արչակ Շիրինեանը Երևան է գալիս, զրղում մեր կառավարութեանը, որը քնից արթնացածի պէս սթափւում, գլխի է ընկնում, թէ ինչումն է բանը և մարտ ամսին Արսէն Շահմազեանին զրկում Գօրիս. ուստի տեղն է ասել, թէ "после обеда горчицы не подают" (ճաչից յետոյ մանանեխ չեն հրամցնի) եղաւ: Մեր պարոնները ուղտի ականջում քնած են եղել. մեկ հատիկ չրջահայեաց, խորը թափանցող մարդ չունենք, վարժապետ մարդիք են, ուրիչ ոչինչ: Մինչև ե՞րբ պիտի տևէ մեր այս բոպիկութիւնը. 99% -ով անգրագէտ, նոմադ, թարաքնամա թուրք ժողովուրդը, հազարամեայ մչակոյթ ունեցող հայ ժողովրդից չատ աւելի զգաստ ու կանխատես ղեկավարութիւն ունի"[64]: Այսպէս խօսում էր Դաւիթը, խստօրէն քննադատում ոչ թէ չարամտօրէն, այլ իսկական հայի սրտացաւութեամբ, երբ տեսանք, ղէպի մեր կողմն են գալիս Էսէդ Սաքօ Սահակեանը և Դուրզևրեանը: Վերջինս տաք-տաք էր

[64] Լինելով պայրացած վիճակում, մոռացութեան է տրւում, որ "հազարամեայ մչակոյթ ունեցող", բայց 600 տարի պետականութիւնից զրկած հայութեան դէմ գործում էր ոչ թէ "անգրագէտ թուրք ժողովուրդը", այլ չուրջ վեց հարիւր տարւայ պատմութիւն ունեցող մի պաշտն ու աչխարհակալ տէրութիւն՝ Օսմանեան Թուրքիան: (Խմբ.)

խօսում ուժեղ ժեստիկուլացիայով, երբ մօտեցան, արդէն մի քանի մետրից պարզ լսւում էին Դուրգերեանի խօսքերը. "Պէտք է, պէտք է քանդել, խորտակել, անպէտք են" և յանկարծ դառնալով Դաւիթին, ասում է՝ "Ձիչտ չե՞մ ասում, ընկեր Դաւիթ":

– Ինչ՞ ես ասում, չդիտեմ, պատասխանեց Դաւիթը:

– Ես ասում եմ, որ պէտք է խորտակել, ոչնչացնել դաչնակների ապիկար կառավարութիւնը:

Խայթւածի պէս ցնցւեց Դաւիթը, կարծես մէկը մախաթ կամ խթան խրեց մարմնի մէջ, վայրկենապէս վեր թռաւ, կանգնեց տեղում, սպառնալից, խոժոռ հայեացք ուղղելով Դուրգերեանին, ասաց.

– Դուրգերեան, հինգ հարիւր տարւայ ստրկական կեանք ապրելուց յետոյ, մեր ժողովուրդը անկախութիւն ձեռք բերի և դու ուզենաս մեր կառավարութիւնը խորտակել՞:

–Այս կառավարութիւնը դաչնակների կառավարութիւնն է, մեր կառավարութիւնը չէ, պէտք է խորտակել:

–Դուրգերեան, այսօր Խատիսեանն է Վարչապետ, վաղը ես կը լինեմ կամ մէկ ուրիշը. դու ուզում ես խորտակել՞ մեր կառավարութիւնը. եթէ կարող ես՝ խորտակիր, տեսնեմ, ինչպէս ես խորտակում, և եթէ չկարողանաս խորտակել, ես քո մերը . . . դէհ, խորտակիր, տեսնեմ, ես քո մերը . . .

– Ի՞նչ լեզւով ես խօսում, Դաւիթ, դիմացդ ինտելիգենտ մարդ է կանգնած և ոչ թէ գռեհիկ մէկը:

– So, ես քո ինտելիգենտ մերը. . .

– Այ մարդ, դու մարքսիստ չե՞ս:

– So, քո մարքսիստ մերն էլ . . . քո մերն էլ . . .

Դաւիթի բարկութիւնը իր ղէնիթին էր հասել, և Սաքօն էլ լաւ ճանաչելով Դաւիթին, Դուրգերեանի թևից քաշելով, հեռացրեց, և միասին դուրս գնացին այգուց:

– Չ՞ը, լաւ չարեցի՞, չուն չան որդուն տես, կառավարութիւնն է ուզում խորտակել, ես քո մերը . . .

– Դաւիթ, ես քեղ չեմ կարող մեղադրել, ասաց Միչան, վրդովմունքդ արդար է, ես էլ ճանաչում եմ Դուրգերեանին, միչտ տեղի-անտեղի երդւեալ քննադատողի դերում է, առանց սրտցաւութեան, սակայն այն տոնով ու լեզւով, որ խօսեցիր, անյարմար ու անպատչաճ էր, ինտելիգենտ մարդ է, վերջապէս:

– So, ինչ՞ ես ասում, ես նրա ինտելիգենտ մերը . . . Նա ի՞նչ է արել հայ ժողովրդի համար և ի՞նչ է ներկայացնում իրենից, որ արք է համարում կառավարութիւնը չէ թէ փոխելու, այլ խորտակելու միտք արտայայտել: Նա եթէ մեր ներկայութեամբ այդպէս է արտայայտւում, ուրիշ տեղեր գլխին ղոռ կը տայ և աղատ ղգալով իրեն, աւելի մեծ յիմարութիւններ դուրս կը տայ և միամիտ մարդկանց մտքերը կը պղտորի:

Դաւիթը ինքը դժգոհ լինելով կառավարութիւնից, վերջինիս խստիւ քննադատում էր և սրտանց ցաւում, իսկ դուրգերեաններին չէր հանդուրժում, որովհետև նրանք քննադատութիւնը արհեստ էին դարձրել, առանց սրտացաւութեան:

Տաքարիւն մարդ էր Դաւիթը և, այդ պատճառով, բռնկւում էր հակառակորդի դէմ, երբ վերջինս անարդար էր գտնում իր հանդէպ կամ անտեղի վիրաւորանք էր հասցնում իրեն: Երբ Բախչին ու ինքը, Մայիսեան ապստամբութեան առթիւ չրջագայութեան էին ելել ու քաղաքից-քաղաք անցնելով, դասախօսութիւններ էին տալիս, Հայ Կաղետական Կուսակցութեան անդամներից մէկը՝ փաստաբան Երանդ Յարութիւնեանը (Թաւրիզեցի) իրենց թերթում մի յօդուած էր զետեղել և այն միտքն արտայայտել, թէ նրանք կառավարութիւնից դրամ են ստացել և չրջագայելով քաղաքներում պրոպագանդ են մղում յօդուտ կառավարութեան: Յօդուածից պիտի եղրակացնել, որ Բախչին ու Դաւիթը ոչ թէ սկզբունքային, գաղափարական հակառակորդ լինելու հետևանքով են պայքարում բոլշևիկների դէմ, այլ կառավարութիւնից դրամ ստացած լինելով, իբրև վարձկաններ, յօդուտ կառավարութեան պրօպագանդ են մղում:

Յօդուածից խորապէս խոցւել էր Դաւիթը, իսկ Բախչին արհամարհանքով էր վերաբերւում, թէ յօդուածը վայրահաչութիւն է, պէտք է անուշադրութեան մատնել: Դաւիթը համաձայն չէր և ասում էր՝ "թէ կը հանդիպեմ, ցոյց կը տամ էն չան որդուն, թէ ինչ է նշանակում վրաս հաչել":

Եւ մի օր հանդիպումը տեղի է ունենում: Բախչին, Դաւիթը և երիտասարդ գրող Ստ. Զօրեանը միասին մտնում են Պառլամենտի չէնքի ներքնայարկի ընդարձակ ճաշարանը, մի բան ուտելու կամ խմելու: Հէնց ներս են մտնում, երեք-չորս մետր հեռաւորութիւնից դէպի իրենց է գալիս՝ ճաշարանից դուրս ելնելու համար, Եր. Յարութիւնեանը: Վերջինիս նկատելուն պէս, Դաւիթը հայհոյելով խոյանում է վրան:

– Ես քո մէրը . . . դու դեռ լօլակում էիր. . . որ ես աղգային-հասարակական-քաղաքական հարցերի չուրջ խօսում-գրում էի, հրապարակաւ արտայայտում իմ մտքերը, իսկ հիմա կառավարութիւնը պէտք է ինձ փող տա՞յ, որ ես կարծիք յայտնեմ, ես քո մէրը . . .

– Դաւիթ Անանուն, ինտելիգենտ մարդ էք, ինտելիգենտի հետ էք խօսում, կարգին, մարդավարի խօսէք, ասաց Ե. Յարութիւնեանը:

– Ես քո ինտելիգենտի մէր . . .

– Ես ձեր դէմ դատ կը բանամ, պատիւ կը պահանջեմ:

– Թէ չբանաս, քո մէջը . . . դատ բաց արա. 100 ռուբլի տուգանք պիտի տամ, կը տամ և 100 անգամ քո մէջը . . .

Բախչին և Զօրեանը թևանցուկ անելով Դաւիթին քաշում են մի կողմ, նստում սեղաններից մէկի չուրջը: Հարկաւ, Դաւիթի բռնկելն ու արտայայտելը տեսնում և լսում են ճաչարանում գտնուող մարդիկ:

–Տափը մտնես, Դաւիթ, օր ցերեկով, մարդկանց ներկայութեամբ խայտառակեցիր մեզ, ասում է Բախչին:

–Դու մտնես տափը, ոչ թէ ես, Զաքար Բէգի տղայ, էլ մի խօսիր, ես քո փառասիրութեան զոհն եմ:

Այդ միջադէպից որոշ ժամանակ անցած էր, մի օր Վահան Նաւասարդեանն ու ես Արովեան փողոցով բարձրանում էինք դէպի վեր, զրուցելով, յանկարծ կողքի մի փողոցից մեր դէմ ելաւ Դաւիթը և տեսնելով մեզ, ասաց ժպտալով.

– Էհ, լսօ՞խք, ասածս կատարեցի, էն չան որդի Երւանդ Յարութիւնեանը դատ էր սկսել իմ դէմ, այսօր կանչել էին դատարան. գնացի, նա իրա վկաներով այնտեղ էր. դատաւորը յայտնեց, թէ՝ "պ. Յարութիւնեանը զանգատ է ներկայացրել ձեր դէմ, որ դուք".... Էլ չը թողեցի, որ չարունակի, ասացի՝ ինչ որ պարոնը գրել է իմ դէմ, ճիշտ է, առարկութիւն չունեմ, ուստի, համաձայն օրէնքի, վճարում եմ ինձնից պահանջած տուգանքը, 100 ռուբլի և թաչախուստով, հարիւր ռուբլիանոցը գնում եմ դատաւորի առջև, ուրախ նայելով էն չան որդու աչքերի մէջ, այսինքն՝ տես հա....

Մենք, իհարկէ, տեղեակ էինք նրա և ե. Յարութիւնեանի միջև տեղի ունեցած միջադէպին, իր արած վերջին ակնարկը հասկացանք, թէ ինչ հայհոյանք է յիշեցրել: Վահանը հաղիւ զսպելով ծիծաղը, հարցնում է՝ "նա քո լուռ ակնարկը հասկացա՞ւ":

– Ի հարկէ, հասկացաւ, մեզանում կասեն՝ "Ծամամ (լրիւ) խօսքը էշին կասեն," նա չատ լաւ հասկացաւ:

– Եւ ոչ մի ձայն չհանե՞ց, հարցնում է Վահանը:

– Էլ ի՞նչ ձայն հանէր կամ ձայն հանելուց օգուտ կունենա՞ր. ես նրա . . . Ծող ձայն հանէր և խէրը տեսնէր:

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Յունիսի 30-ին տեղի ունեցաւ հայրենակցական ժողովը. ներկայ էին՝ Դոկտոր Ա. Բաբալեան, Դոկտոր Ռ. Իւզբաշեան, Բ. Իշխանեան, Վահան Նաւասարդեան, Ներսէս Բաբայեան, Յար. Թումեան, Մարտիրոս Արղումանեան, Խաչ. Մելքոնեան (Մելքումեան), Ներսէս Նասիբեան, Ասլան Շահնազարեան, Դաւիթ Անանուն, Եղ. Իշխանեան, Մելքիսէթ Եսայեան և Սերգէյ Մելիք-Եօլչեան:

Նախ Դաւիթն ու ես յայտնում ենք Վարչապետի հետ ունեցած մեր տեսակցութեան և արդիւնքի մասին, որից յետոյ ժողովը լսում է Դոկտոր Ռուբէն Իւղբաշեանի զեկուցումը, իբր Շուշի գնացած լինելու և այնտեղ ունեցած տեսակցութիւնների, հետաքրքրական տեղեկութիւններ հաւաքելու և, ի լրումն բոլորի, մարդկանց արդար դժգոհութիւնները ու բողոքները լսելու մասին:

Դոկտոր Ռ. Իւղբաշեանը պատմեց, որ Թիֆլիսում, Զանգեզուր-Ղարաբաղի հայրենակցական միութեան ցանկութեամբ ու որոշմամբ, յաջողւում է իրեն անգլիացի երկու սպաների հետ գնալ Շուշի, տեղի վրայ ծանօթանալու իրերի դրութեան հետ և թէ ինչ չափով է աւերել քաղաքի հայկական մասը: Լինելով չուշեցի, լաւ ծանօթ տեղին, ծայրէ-ծայր պտտել, տեսել է բոլոր թաղամասերը, ամենուրեք աւերակների կոյտ է և չափազանց ծանր տպաւորութիւն է թողնում մարդուս վրայ հէնց առաջին վայրկեանից: Մատների վրայ համարուող մի քանի չէնքեր են կանգուն մնացել՝ զօրանոցը, ռէալական դպրոցի չէնքը, եկեղեցիները և կիսաւեր վիճակում՝ զանազան թաղամասերում մի չարք չէնքեր: Աւերակ թաղամասերում հանդիպել է մարդկանց, հայերի ի հարկէ, որոնք իրենց աւերակ կամ կիսաւեր տներում փնտռտուքներ էին կատարում, տեսնելով իրեն, մօտենում են և մէկը ճանաչելով սկսում է դանգատուել, խոր դժգոհութիւն յայտնում և անիծում էն մարդկանց, որոնք թշուառութեան են մատնել ժողովրդին: Նրան հետևեցին միւսները և պատմեցին, թէ ինչպէս իրենք անտեղեակ են եղել քեալլազօղների նպատակին, հանգիստ քնած իրենց տեղում, յանկարծ տակն ու վրայ է լինում ամէն ինչ, տները վառում են իրար ետևից, մարդիկ լեղապատառ, զլուխները կորցրած աջուձախ վազում, չատերը սպանում և ով կարողանում է, իրեն զցում է Քարին Տակ գիւղը, չատերն էլ գերի են ընկնում: Քեալլազօղների արածը նամարդութիւն էր, ասում էին: Պատմում էին, որ աննկարագրելի է այն ընտանիքների վիճակը, որոնք գիւղերում աղգականներ և բարեկամ մարդիկ չունէին, որ նրանց օգնութեամբ կարողանային ապրել: Նրանք, որոնք Թիֆլիս կամ Բագու աշխատող ձեռքեր ունեն, օգնութիւն ստանում են կամ փոխադրւում են իւրայինների մօտ: Ընդհանուր առմամբ պատկերը աւելի քան տխուր է և ընկճող. հնարաւոր չէ նկարագրել խօսքով կամ գրչով: Որովհետև քեալլազօղները թուրքերի նոր տարւայ առաջին օրը կռիւ սկսելով, վչացրել են նրանց ապիղ օրը, ուստի թուրքերը զաղաղել, անգթութիւններ են գործել. կանանց, աղջկերանց բռնաբարել: Թուրքերից մի քանի հոգի, արտաքինով ներկայանալի մի քանի տարիքի մարդիկ, մօտեցան և նոյնպէս դժգոհութիւն յայտնեցին, թէ հայերն են կռիւը սկսել, յարձակում գործել, և մէկը հեգնանքով ասում է. "Պարոն, ձեր կառավարութիւնն ինչո՞ւ Դալի Ղազարին ուղարկեց Ղարաբաղ, մի՞թէ Հայաստանում խելօք

Ղաղար չկար. պարզ է, ի հարկէ, Դալին կը կատարի այնպիսի գործ, որը տեսնում էք": Թուրքը իրաւամբ ծաղրում էր մեզ ու մեր կառավարութիւնը:

Եւ այդ բոլորը չմտածած, պատասխանատուութեան դիտակցութիւնից զուրկ մարդկանց մտքի արդիւնքն է, քաղաքում մարդիկ բոլորովին անտեղեակ, զիշերանց, երբ բոլորը խաղաղ քնած էին, մի խումբ քեալլազնօղներ մտնում են քաղաք, համաղարկ տալով կայազօրին, պահանջում են անձնատուր լինել: Կայազօրը ղէնքի է դիմում և համաղարկով պատասխանում: Քաղաքը տակնուվրայ է լինում, հրդեհի մատնւում, և քաղաք մտած "հերոսները," ժողովրդին թողնելով բախտի կամքին, առանց խղճի խայթ ղգալու, փախչում են: Եւ դա չէ թէ արկածախնդրութիւն, այլ իսկական ոճիր է, որ կատարել են, կործանել քաղաքը, որի համար պէտք է դատի տալ յանցաւորներին, և դա Թիֆլիսի մեր հայրենակցական միութեան նպատակն է, որի համար էլ եկել եմ այստեղ:

Ռ. Իւզբաչեանից յետոյ խօսեց Սերգէյ Մելիք-Եօլչեանը, որը մեղադրում էր Ա. Միքայէլեանին, թէ կանոնաւոր կապ չի պահել իր հետ, իր զրած նամակներին չէր պատասխանում և որ ինքը միշտ ղգուշացրել էր, որ յանպատրաստից որևէ քայլ չանի: Նրա վերաբերմունքից հասկանալի էր, որ միանգամայն վստահ էր իր ուժերի և կարողութիւնների վրայ, ուստի կողմնակի մարդկանց խորհուրդների և ցուցմունքների կարիքը չէր ղգում: Նրան զրել է ժամանակին՝ ոչինչ չձեռնարկել մինչև Դրոյի՝ Ղարաբաղ անցնելը, սակայն մարդը չի ուղեցել սպասել, ինքնավստահութեամբ գործի է ձեռնարկել և չարաչար փիասկո կրել: Այո, պէտք է կուսակցական դատի ենթարկել, քանի որ տեղի ունեցած ղէպքերին ու երևոյթներին ականատես մարդկանցից չատերը եկել են տեղս և քանի դեռ չեն ցրւել նրանք, պէտք է բոլորի վկայութիւնները լսել և արձանագրել:

Յուլիսի 1-ին Ռուբէն Իւզբաչեանի մօտ ենք Յարութիւն Թումանեանը, Մարտիրոս Արղումանեանն ու ես, խորհրդակցում ենք Արսէն Միքայէլեանի ղէմ դատ սկսել կուսակցութեան Գերագոյն Դատական Ատեանում: Ռ. Իւզբաչեանը ռուսերէն զրում է մեր բողոք-զանգատը, Յարութիւնն ու ես թարգմանում ենք հայերէնի: Յարութիւնը վերցնում է մաքուր արտագրելու և մի քանի հոգու ստորագրութեամբ Գեր. Դատ. Ատեանին ներկայացնելու:

Յուլիսի 2-ից մինչև 9-ը մի քանի անգամ Ռուբէնի մօտ խորհրդակցական ժողով է տեղի ունենում, թէ ինչպէս անել, վերականգնելու մեր նախկին դրութիւնը Զանգեզուրում, ապա Ղարաբաղում: Դրօն ամսի 5-ին հարկադրւած է եղել թողնել

Զանգեզուրը և անցնել Դարալագեաղ: Խորհրդակցութեանը մասնակցում էին՝ Յար. Թումեան, Մարտ. Արղումանեան, Վահան Նաւասարդեան, Ներսէս Նասիբեան և Ե. Իշխանեան: Խորհրդակցութիւնը յանգում է հետևեալ եզրակացութեան .

ա) Կազմել մի պատասխանատու մարմին Զանգեզուր-Ղարաբաղի ղինուորական ու քաղաքացիական գործերը վարելու, որը բաղկացած լինի հինգ հոգուց:

բ) Զանգեզուր-Ղարաբաղի մարտական ուժերի հրամանատարը մտնում է մարմնի մէջ, իբրև հաւասար անդամ. նա է վարում ղինուորական գործերը, իսկ մարմնի միւս անդամները աջակցում են:

գ) Կազմած մարմինը պիտի հանդիսանայ որպէս փոխանորդ Հայաստանի կառավարութեան:

դ) Մարմնի կազմի մէջ են մտնում Դրօն, որի բացակայութեան՝ Նժդեհը, որպէս նրա օգնականը, Արչակ Չիլինգիրեանը, Վահան Խորէնին և Եղիչէ Իշխանեանը: Հինգերորդ անդամի ընտրութեան համար ես առաջարկում եմ երկու թեկնածու՝ Յովակ Ստեփանեան և Յարութիւն Թումեան:

ե) Մարմինը պէտք է տոն տայ չրջանի կուսակցական աշխատանքներին, ուստի պէտք է ջանայ վերակազմել չրջանը, համապատասխան ժողովներ և օրինական մարմիններ ստեղծել՝ համաձայն կուսակցութեան կանոնադրութեան:

Յուլիսի 6-ին Արսէն Միքայէլեանի ղէմ գրւած բողոքագիրը ստորագրում են՝ Ռ. Իւղրաչեան, Յարութիւն Թումեան, Սերգէյ Մելիք-Եօլչեան, Ասլան Շահնազարեան, Մարտիրոս Արղումանեան և Ե. Իշխանեան ու ներկայացնում Կուսակցական Գերագոյն Դատական Ատեանին:

Յուլիս 7-ին Դատական Ատեանը Ռ. Իւղրաչեանին, Յ. Թումեանին, Մ. Արղումանեանին ու ինձ կանչում է Արսէն Միքայէլեանի ղէմ տրւած բողոքագրում յիչւած մեղադրականների չուրջ որոչ ճչտումներ ու լուսաբանութիւններ անելու:

Սերգէյ Մելիք-Եօլչեանը հայրենակցական ժողովում մանրամասնօրէն ղեկուցեց Զանգեզուրում ունեցած գործունէութեան և Ա. Միքայէլեանի հետ ունեցած յարաբերութիւնների մասին: Եւ չնայած, որ կապը Զանգեզուրի և Ղարաբաղի միջև ապահով էր, և ինքը միչտ տեղեակ է պահել արտաքին աչխարհի անցուդարձի մասին, սակայն Ղարաբաղում տարւող աչխատանքների մասին մանրամասն տեղեկութիւն չէր ստացւում. ինքը գործուղել էր Գօրիս, որպէս Զանգեզուր-Ղարաբաղի նահանգապետ, ուրեմն, պարզ է, պէտք է տեղեակ լինէր, թէ իր ղեկավարութեան ենթակայ չրջանում ինչ է

կատարում, իսկ Ա. Միքայելեանը այդ հանդամանքը ընաւ նկատի չունէր: "Այնուամենայնիւ, ես նամակներով դգուշացումներ եմ արել միշտ, չմտածած և վաղաժամ որևէ քայլ չանելու": Տեղի ունեցած դէպքերը չմտածած ու վաղաժամ կատարուած անզգոյշ ու սխալ քայլի արդիւնքն էին և իր հետ աշխատած ընկերները վկայում են նոյնը: Նա տեղական ընկերներին հաշւի չէ առել, գործել է ինքնագլուխ:

Մելիք Եօլչեանի ղեկուցումը մի քանի օր առաջ իր իսկ ղեկուցման համապատասխան բովանդակութիւնն ունէր, աւելի մանրամասն և տասնեակ մարդկանց անունների յիշատակումով, որոնք տեղեակ էին այս կամ այն դէպքին, աշխատանքին ու տեղի ունեցած խորհրդակցութիւններին Ղարաբաղի վերաբերեալ:

Ժողովից յետոյ Ա. Բաբալեանը, Վ. Նաւասարդեանը, Ս. Մելիք-Եօլչեանը միասին գնացինք ղբօսայգի՝ թէյ խմելու: Ս. Մ. Եօլչեանը յայտնեց, որ ընդհարւել է Դրոյի հետ, Ղարաբաղը թողնելու առթիւ, ուստի վրդովւելով չի ուղեցել այլևս մնալ Զանգեզուրում: "Դուք մօրաքրոջ զաւակներ էք, ասաց Ա. Բաբալեանը, ինչո՞ւ իրար հետ եօլա չէք գնացել": "Եթէ դու էլ լինէիր, ասաց Մ. Եօլչեանը, նոյն կերպ կը վարուէիր":

ԳԱԽԱՌԱԿԱՆ ԶԵՄՍՏԻՈՅԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Յուլիսի 10-ին յունիսի 29-ին հրաւիրած գաւառական ղեմստուոյի պատգամաւորական ժողովը բացւում է և աշխատանքի անցնում Արչակ Ջամալեանի նախագահութեամբ:

Պատգամաւորական ժողովը ընտրում է գաւառական ղեմստուոյի վարչութիւն և որպէս նախագահի՝ ինձ: Ժողովի կատարած ընտրութեան ընթացքի մասին յայտնում են Ռուբէնին՝ հաստատելու, որպէս ներքին գործոց նախարարի: Ռուբէնը վաւերացնելով ընտրութիւնը, հեռագրում է իմ մասին, որ գործով պիտի մեկնեմ Զանգեզուր, ուստի առաջարկում է, որ իմ փոխարէն ուրիշին ընտրեն, բայց վարչութիւնը չի համաձայնւում, պնդում է, թէ հնարաւոր չէ փոխարինելը և պէտք է, որ վերադառնամ Ղարաքիլիսէ, ստանձնելու իմ պարտականութիւնը: Զեմստուոյի վարչութիւնը նոյն առթիւ հեռագրում է Շիրակի նահանգապետ Կ. Սասունուն, որն ընդառաջում է վարչութեան ցանկութեան, և հեռագրով փոխանացութիւն է տեղի ունենում Ղարաքիլիսէի, Երևանի և Ալէքսանդրապոլի միջև:

Անկախ ընտրութիւններից, ես պիտի վերադառնայի Ղարաքիլիսէ մէկ չարաթով կամ տասն օրով, մալարիայից բժշկուելու համար: Առանց օդի փոփոխութեան, ասում էին բժիշկները, Երևանում դեղորայքը չէին օգնում: Ռուբէնին ասացի, որ կերթամ Ղարաքիլիսէ, կանցնեմ իմ պարտականութեան կատարման, ապա մէկուկէս ամսով արձակուրդ կը վերցնեմ, որոշ մի գործ կատարելու նպատակով, Զանգեղուր գնալու և յետոյ վերադառնալու պաշտօնատեղիս. ընկերները չեն մերժի, արձակուրդ կը տան, կը դամ Երևան, կերթամ Զանգեղուր, կը մնամ այնտեղ: Ռուբէնը համաձայնեց, և միւս օրը մեկնեցի:

Յուլիս 12-ին Նիստ ունեցաւ վարչութիւնը, աշխատանքի բաժանում կատարեց անդամների միջև և հետագայ նիստերին ղրաղուեց պատգամաւորական ժողովի կայացրած որոշումներով, գաւառի վերաբերեալ:

Յուլիսի 16-ի նիստին երկար ու բարակ վիճաբանութեան նիւթ դարձաւ իմ արձակուրդի խնդիրը. ընկերները դժգոհ էին կառավարութիւնից, որ դժւարութիւն է ստեղծում իրենց համար, փոխանակ կենտրոնից պատրաստուած մարդ ուղարկելու գաւառի կազմը ուժեղացնելու, ընդհակառակը, գաւառի սակաւ ուժերից մարդ է պոկում իւր այլ գործերի համար, և այդպիսով գաւառի գործն է տուժում. ի վերջոյ, ընկերները համաձայնւում են մէկուկէս ամսով արձակուրդ տալ ինձ:

Յուլիսի 18-ին Ղարաքիլիսէից մեկնում եմ Երևան, և Ալէքսանդրապոլի կայարանում մեր վագոնն են մտնում ընկերներ Նիկոլ Աղբալեանը, Բագրատ Թոփչեանը, Դոկտոր Հայկ Մելքոնեանը և Պարոյր Լևոնեանը: Դոկտորը դարձաւ ինձ ու զարմացած հարց տւեց. « Այ մարդ, էդ ի՞նչ օյին (խաղ) էր, որ խաղացին Շուշու գլխին և կործանեցին էն չէն ու զեղեցիկ քաղաքը: Ընկեր Նիկոլ, չէք կարող երևակայել, թէ որքան լաւ ղիրք, առողջարար օդ ու ջուր ունէր և պիտի ասել, թէև գաւառական քաղաք էր, բայց աւելի լաւ տներ ունէր, քան Երևանն ու Գանձակը:

-Տնաչէն, ասաց Նիկոլը, մէկ ուսումնական տարի (1908/1909) Շուշու թեմական դպրոցում ուսուցիչ եմ եղել, պատկերացնելու պէտք չկայ, բայց ցաւալի է, որ լաւ չծրագրուած գործ է կատարուել, և քաղաքն աւերուել է: Ասածդ ճիշտ է, Հայկ, զեղեցիկ և բարեկեցիկ քաղաք էր, ափսոս, որ աւերուել է:

– Հայրս եղել է Շուշում, ասում է Պարոյրը, և միշտ մեծ զովեստով կը խօսէր քաղաքի մասին:

Մեզ հետ օտար որևէ մէկը չկար, և ազատ խօսում էինք: Հայկը կրկին դարձաւ ինձ, նոյն հարցը տալով. ինչպէ՞ս է տեղի

ունեցել քաղաքի աւերումը: Ես էլ պատմեցի, ինչ որ լսել էի Յարութիւն Թումանեանից, Մարտիրոս Արղումանեանից, Ասլան Շահնազարեանից և ուրիշներից, որոնք բոլորը նոյնն են վկայել, առանց տարբերութեան:

– Ինչո՞ւ խամ, անփորձ մարդկանց են ուղարկել, ասում է Հայկ Մելքոնեանը, հա, Դալի Ղազարը, որ մեր քաղաքացի է, զանձակեցի, չատ քաջ, խիղախ մարդ է, բայց դա չի նշանակում, որ նա կարող է լաւ զեկավար լինել. իր մականունից ինքնին հասկանալի է, թէ ինչ մարդ է Դալի Ղազարը: Մեղքը ղարաբաղցիներինն է, որ չեն կարողացել լաւ ընտրութիւն կատարել:

Հայկը, իր մեղադրականով, առիթ տուաւ պատմելու սկզբից, թէ ինչպէս եղաւ, որ կառավարութիւնը, աւելի ճիշտ՝ Բիւրօն Արսէն Միքայէլեանին ուղարկեց Ղարաբաղ, իբրև չրջանը կազմակերպողի, տեղական ուժերի գործակցութեամբ և գնդապետ Մեսեանին էլ, իբրև զինուորական ուժերի զեկավարի: Պատմեցի ամենայն մանրամասնութեամբ և այն մասին, որ Ա. Միքայէլեանը ջանացել է ընկերների միջոցով համոզելու Բիւրոյին, որ իրեն չուղարկեն Ղարաբաղ, բայց չի յաջողուել:

Երբ վերջացրի խօսքս, Նիկոլն ասաց. "Մեր այս անյաջողութեան պատճառն այն է, որ մենք հեռատես չգտնուեցինք և ժամանակին անհրաժեշտ որոշ նախապատրաստական քայլեր չառինք: Յեղափոխութիւնից յետոյ ճակատը բաւական թուլացել էր, չնորհիւ այն հանգամանքին, որ զօրքը սկսել էր զբաղուել քաղաքականութեամբ և քայքայուելու ախտանիշեր երևում էին, ուստի երեք անգամ մեր կուսակցական խորհրդաժողովներին ես հարց դրի, որ թիկունքի չնարանը հանդիսանում է Փոքր Կովկասեան լեռնաչղթան, սկսած Ախալքալաքից, Ջալալօղլիից մինչև Մուղանի տափաստանը եղերող Ղարաբաղի լեռները, ուստի պէտք է մեր ամբողջ պաշարը, թէ ռազմամթերքի և թէ պարէնի, կենտրոնացնենք այդ լեռնաչղթայի վրայ: Եւ, իրականին մէջ, կեանքը ցոյց տուաւ, որ մենք, կարևորութիւն չտալով Փոքր Կովկասեան լեռնաչղթային, մեծապէս սխալւել ենք":

Հայկն ու Պարոյրը վկայեցին, որ իրենք մասնակցել են 1917 թ. ամռանը և սեպտեմբերին տեղի ունեցած կուսակցական խորհրդակցական ժողովներին և լաւ յիշում են Նիկոլի ասածներն այդ մասին: Ես էլ վկայեցի, որ ներկայ եմ եղել երրորդ մեր խորհրդաժողովին, Թիֆլիսում, 1917 թ. նոյեմբեր 28-ից մինչև դեկտեմբեր 7-ը և յիշում եմ չատ լաւ Նիկոլի խօսքերը նոյնութեամբ, Փոքր Կովկասեան լեռնաչղթայի մասին, որպէս "մեր չնարանի:" Ապա պատմեցի, որ Ջանգեղուր-Ղարաբաղի (Ապառաժի) Կենտրոնական Կոմիտէն, 1917 թ. ամառը, մեկից աւելի անգամ,

Ղարաբաղ ռազմամթերք կենտրոնացնելու համար, հանգամանօրէն, զրուխիւնները է ուղղել, բայց առանց արդիւնքի: Ղարաբաղը նոյնիսկ ինքնապաշտպանութեան համար բաւարար քանակութեամբ ռազմամթերք չունէր. Զանգեզուրի վրայով Երեւանից կամ Ալէքսանդրապոլից ռազմամթերք փոխադրել Ղարաբաղ 1917 թ. վերջից՝ այլեւս հնարաւոր չէր, Ալիանելու-Հաջի Սամլու քրգական չետի պատճառով, որ բաժանում էր Ղարաբաղը Զանգեզուրից, այն ժամանակ, մանաւանդ, երբ անիշխանութիւն էր տիրում Անդրկովկասում, և հայ-թուրքական յարաբերութիւնները խախուտ էին:

Յուլիսի 19-ին Վ. Քրմոյեանի, ներքին նործոց նախարարի օգնականի մօտ եմ: Յայտնեցի Ղարաքիլիսէի զեմստուոյ վարչութեան յարուցած մէկ-երկու խնդիրների մասին, թէ ինչ որոչում է տուած, պատասխանեց, որ քննութեան առնուած է, վերջնական որոչում կը տրուի երեկոյեան նիստին: Վահագնի հետ Ղարաքիլիսէում բաւական մօտեցած էինք և պարզ ու բաց ղրուցում էինք, երբ ներս մտաւ մի երիտասարդ, ինչ-որ մի խնդրով: Վահագնը առաջարկեց երիտասարդին նստել սեղանի առջև դտնուղ աթոռին, ճիչտ իմ դիմաց: Վահագնը երիտասարդին լսելուց յետոյ ասաց, որ հէնց նոյն րոպէին ստուգում կը կատարի քարտուղարից և կը յայտնի, ապա վեր կացաւ, անցնելու միջանգքով բաժանուած գրասենեակը, ես էլ վեր կացայ, երիտասարդը անորոշ հայեացքով նայում էր ինձ, ղէմքի թեթև նչանով հասկացրի, որ վեր կենայ, իսկ Վահագնը վրայ տւեց, թէ՝ "վեր մի կենաք, նստեցէք, ես հիմա կը դամ. ասաց, դուրս եկաւ և չուտով վերադարձաւ. երբ ներս մտաւ, կրկին վեր կացանք, այս անգամին երիտասարդը՝ առանց նչանի սպասելու, նորից վեր կացաւ, և Վահագնը գարձեալ՝ "նստեցէք, նստեցէք, ինչո՞ւ էք վեր կենում": Վահագնի տւած պատասխանից երիտասարդի ղէմքը պայծառացաւ, դոհ էր մնացել , չնորհակալութիւն յայտնելով դուրս գնաց: Վահագնը դիտողութիւն արաւ, թէ ինչու վեր կացայ իր դուրս գնալուց և ներս գալուց: Ասացի՝ "ես քեզ համար չեմ վեր կենում, այ էդ աթոռի համար, որի վրայ նստած ես դու": "Դու էլ բան ասացիր, էլի", ասաց Վահագնը: Այն ժամանակ պատմեցի իրեն Դաւիթ Անանունի և միւս երիտասարդի միջադէպի մասին, Վահագնը լիաթոք ծիծաղեց պատմածս լսելով:

ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Ռուբէնի մօտ եմ. յայտնում է, թէ որոչուած է նչանակել Զանգեզուր-Ղարաբաղի խորհուրդը, հինգ հոգուց կազմուած. Դրօն, Շիրինը. Խորէնին, Յովակը և ես: Խորէնին կը ղեկավարէ պրոպագանդի գործը, որպէս նախագահ պրոպագանդիստների

վարչութեան, որի կազմի մէջ են մտնում Ներսէս Բարայեան, բարձրագոյն կրթութեամբ, վկայած զվիցերական համալսարանից, Յար. Թումեան, Եղիչէ Իշխանեան և Աչոտ Մելիք-Յովսէփեան:

Որպէս պրոպագանդիստներ, որոնք ցանկութիւն են յայտնել աշխատելու՝ Ասլան Շահնազարեան, Ներսէս Նասիբեան, Մարտիրոս Արղումանեան, Բախչի Հասան-Ջալալեան, Թէոդորոս Տէր Դանիէլեան, Մելիքսէթ Եսայեան, Վահագն Կանայեան, Յարութիւն Ղարիբեան, Հրանդ Հասրաթեան և Վազգէն Միրզաբէկեան:

Պրոպագանդիստների մեծ մասը մեկնում է Բայազէտ՝ Սէլիմի սարահարթով Դարալագեազ անցնելու, իսկ մի քանի հոգի՝ Մելիքսէթ Եսայեան, Վազգէն Միրզաբէկեան, Վալօղիա Տէր Վարդանեան ու ես, մեր կամքից անկախ ուշացած լինելով, չկարողացանք Նոր Բայազէտ մեկնողների հետ գնալ, ուստի կարգադրեց սպասել, Բէյուք Վէղին ընկնի, և ղրահապատ գնացքով մեկնենք Բաշնորաշէն:

Բէյուք Վէղիի վրայ են յարձակւել մեր զօրքերը զօրավար Շելկովնիկեանի հրամանատարութեամբ, և ժամառժամ սպասւում էր նրա անկումը: Բէյուք Վէղին չատ թանկ է նստել մեզ վրայ, մի տարի առաջ էր, որ մեր զօրքերը պարտութիւն կրեցին. բաւական թւով սպաներ ու զինուորներ զոհ տւինք, ուստի զինուորները վրէժով լցւած էին մեկնել ճակատ:

Յուլիսի 20-ին Մելիքսէթի հետ միասին եղանք Իւղբաշեանի մօտ, յայտնեցինք, որ մենք պիտի մեկնենք Զանգեզուր, ուստի Ա. Միքայէլեանի դէմ ունեցած մեր զանգատին պէտք է հետևէ ինքը, անհրաժեշտ նիւթեր ու փաստեր հաւաքէ և ներկայացնէ Գերագոյն Ատեանին:

Կէսօր չէր եղել, երբ տեղեկութիւն ստացւեց, թէ Բէյուք Վէղին զրաււել է, և մեր զօրքերը, առաջ անցնելով, հասել են Գայլի Դրունքին, իսկ Դարալագեազի մեր զօրամասը, զօրավար Միքայէլ Մելիք-Մուրադեանի հրամանատարութեամբ, զրաւելով Զիվան, Վերին ու Ներքին Տանձիկներն ու Եալջին, յարձակւում է Բաշնորաշէնի վրայ, մաքրում Շարուրի դաշտը, որից յետոյ Վէղին և Շարուրը զրաւող զօրարաժինները կապում են իրարու հետ: Բէյուք Վէղիի ու Շարուրի զրաւումը մեծ ուրախութիւն է պատճառում բոլորին: Բէյուք Վէղին ամրոց էր դարձած և ամուր յենարան տամկական զործակալների համար:

Ռուբէնը կարդաղրեց, որ պատրաստուենք առաւօտեան ղրահապատ գնացքով մեկնելու Բաչնորաչէն և այնտեղից Դարալագեազ, Դրոյի մօտ:
Ռուբէնը ղրահապատ գնացքով մեկնում է Երևանից դէպի Ջուղա, հետախուղական նպատակով:

Յուլիսի 21-ին պատրաստ վիճակում ենք յետ մնացածներս և սպասում ենք ղրահապատին, որ մեկնենք: Կէսօրից բաւական անցել էր, յայտնեցին մեզ, որ ղրահապատը վերադարձել է, գնանք կայարան, որովհետև մէկ ժամ յետոյ պիտի մեզ տանէ Բաչնորաչէն: Այդ միջոցին գօրիսցիները Նիկալայ Յովսէփեանը, Մեսրոպ Փարսեանը, Ասատուր Խօսունցը և անգնդակոթցի Մերուն Փիլիպոսեանը, որոնք նոյնպէս ուղում էին գնալ Զանգեղուր, միացան մեզ, և մենք հաղիւ կարողացանք ժամը երեքի մօտերը մեկնել Երևանից:

Կայարանում ղրահապատի զինուորներից իմացանք, որ Ռուբէնը ղրահապատի վրայ գնացել է մինչև Բաչնորաչէն և Նախիջևան, ամբողջ տարածութեան վրայ ոչ մի տեղ թուրք չի եղել, բոլորը փախել և Ջուղայի (Ջուլֆայի) կամուրջով անցել են Պարսկաստան: Հետաղային, չնորհիւ մեղրեցիների, պարզուել էր, որ Օրդուբաղը նոյնպէս զատարկուած է եղել և ժողովուրդը անցած Պարսկաստան:

Արաղդայանի կայարան հասանք, երբ մութը պատել էր երկինքը: Զրահապատը կանգ առաւ Արաղդայանում, որովհետև երկաթուղագծին մօտ գտնուող զինուացիները զինուած թուրքեր էին նկատել և յայտնել ղրահապատի հրամանատար սպային. վերջինս առ ի զգուշութիւն, ուժեղ լուսարձակների միջոցով, երկաթուղագծի երկու կողմերի երկայնքով, հետախուղութիւն կատարեց ու վտանգաւոր ոչինչ չգտնելով, հրամայեց առաջ շարժուել: Մինչև ղրահապատի շարժուելը բաւական տառապեցինք՝ Արաղդայանի հռչակաւոր խոչոր մոծակների խայթոցներին ենթարկուելով: Արաղդայանի մոծակների մասին լսել էինք, բայց չէինք տեսել ու տեսանք: Եւ որքան շատ էին անպիտան արարածները, իւրաքանչիւրիս վրայ հարիւրներով թառել էին, մենք թաչկինակներով ծածկել էինք երեսնիս, բայց և այնպէս կարողանում էին ներս անցնել ու խայթել: Ես զինուորական պլաչէ ունէի վզարով, որի չնորհիւ կարողանում էի պաչտպանուել, մինչդեռ ուղեկիցներից մի քանիսին այնպէս էին խայթել, որ երեսնին ուռել էր տեղ-տեղ:

Յուլիսի 22-ի առաւօտեան ժամը 6-ին հասանք Բաչնորաչէն կայարանն ու իջանք այնտեղ համանուն թրքական գիւղը, որը աւերուած էր արդէն. անցանք այնտեղից Ուլիան Նորաչէն հայկական

գիւղը, որը երկու տարի առաջ արդէն աւերուել էր տեղական թուրքերի և տաճիկների կողմից: Բաչնորաչէն անցնելիս, տեսանք փողոցներում թափթփուած տնային զանազան իրեղէններ, որ թալանի ժամանակ մնացել էր: Թուրքերը հայկական գիւղերի վրայ յարձակւում, աւերում էին, թալանելու նպատակով, և հայերն էլ նրանց օրինակին էին հետևում: Փողոցներից մէկում տեսայ ընկած մեծաղիր, երկուսանկեաւ-երեք մատի հաստութեան, սրճագոյն կաչուով կազմուած մի գիրք, վերցրի, արաբական տառերով գրուած գիրք էր, աղերսէջեաններէն գիտնալով, ստուգեցի, տեսայ, որ անծանօթ լեզու է, հաւանականօրէն պարսկերէն կամ արաբերէն: Իմ կատարած այդ թալանը ուղարկեցի Վաղարշապատ, Գէորգեան ճեմարանի գրադարանին յանձնելու:

Նոյն օրը Երևանից եկան Ռուբէնը, զօր. Սիլիկեանը և Ս. Մելիք-Եօլչեանը, զօրավար Մելիք-Մուրադեանի հետ երկու ժամ խորհրդակցելուց յետոյ գնացին Քէչիչքէնդ:

Փոխադրական մէջոցներ չունենալով, հարկադրուած էինք ոտքով կտրել ճամբան, եթէ չկարողանայինք գրաստներ վարձել: Նախապէս ծանօթ լինելով զօրավար Մ. Մելիք-Մուրադեանի հետ, որոշեցի դիմել նրա օգնութեանը: Զօրավարը չատ պարզ, մատչելի և դեմոկրատ մարդ էր, մեծապէս յարգուած զինուորներից: Տեսնելու էր Բաչնորաչէնի աւերակներում կիսով չափ փլած մի տան չոր գետնին ծալապատիկ նստած սպաների և զինուորների հետ միասին ճաշելիս, նրանց հետ խօսելիս: Նոյն պարզ ու դեմոկրատիկ կեցուածքն ունէր:[65]

---

[65] Ի դէպ, մեկուկէս ամիս յետոյ Երևանից Վայոց Ձոր (Դարալագեաղ) ևաւ գնդապետ Եղոր Տէր- Աւետիքեանը, զինուորական չտաբի կողմից նչանակուած, որպէս օգնական զօրավար Մ. Մելիք-Մուրադեանի: Երկուսն էլ մտանալուել էին թէ ռուս-ճապոնական և թէ համաչխարհային "Ա" պատերազմներին: Զարմանալիօրէն երկուսի վարուելակերպն ու կեցուածքը մարդկանց հետ նոյնն էր, և իրենց վարքով՝ բիւրեղ մաքրութեան տէր: Պատերազմի տարիներին և յետոյ, զինուորականներից ու խմբապետներից չատերի մասին խօսում էին որպէս թալանչիների՝ պետական գրամ վատնողների և իւրացնողների: Զօրավարն ու գնդապետը միանգամայն զերծ էին նման վարկաբեկիչ արարքներից, քրեատնեայ մարդիկ էին: Ցիչում եմ, Երևանի ակումբում Թուրք խաղացողներից մէկը, դիմացի խաղակից կոչին արձագանքելով, ինքնավստահ բացականչել էր՝ "Заплобасар отвечает" (Զանգիլբասարն է պատասխանատու): Այդ բացականչութիւնը ծանոն էր դարձել ոչ միայն Թուրք խաղացողների, այլ և ուրիչ շրջաններում: (Հնդ.)

*Եղոր Տէր-Աւետիքեան. Լեռնային Գանձակի ինքնապաշտպանութեան տագանդաւոր կազմակերպիչ, որի չնորհիւ Գանձակի լեռնային շրջանները, Զարդախլուից ու շրջականերից սկսած մինչեւ Գելիքասան, հակառակորդի համար ըստ էութեան մնային անմատչելի՝ մինչեւ 1920թ. ամառը, որից յետոյ նա տեղափոխուեց ռազմաճակատի ամենածանր տեղամասը՝ Զանգեզուր-Նախիջեւան, որտեղ հայկական բանակը անհաւասար կռիւներ էր մղում Թուրք-ադրբէջանական և բոլշեւիկեան ուժերի դէմ: Առաջին Հանրապետութեան կործանումից յետոյ տարագրուեց Պարսկաստան, որտեղ վախճանուեց խոր ծերութեան հասակում: (Խմբ.)

Վայոց Ձորի ցուրտ ձմռանը ղօրավարն ու զնդապետը միասին էին ապրում Քեչիչքենդում մէկ տան մէջ, որի մէկ մասում ղինուորական զրասենեակն էր: Ունէին տան ծառայութիւններ կատարող և սպասարկող մի ղինուոր: Ըստ գիւղացիների, այդ տարւայ ձմեռը սովորականից չատ խիստ էր և պատուհանների ու դռների ճեղքերից ներս թափանցելով, ղգացնում էր իր սաստկութիւնը: Ձօրավարը, զնդապետն ու իրենց սպասարկող ղինուորը կուչ էին եկել ու կծկուել ձմեռային վերարկուների մէջ:

Յանկարծ բարձրացած քամին աւելի էր ծանրացնում վիճակնին. վառելափայտը վերջացել էր, և ցերեկով ծախու փայտ գտնել չէր յաջողւել: Տան կողքին փլած մի տուն կար, որի սիւներն ու կոճղերը հողով կիսածածկ ընկած էին: Ձօրավարն ու զնդապետը որոշում են սպասաւոր ղինուորին պատւիրել, որ փլած տան փայտերից մէկը բերի, վառեն: Շատ ուրախացած զնում է փայտը բերելու: Երբ նա դուրս է զնում, մի քանի րոպէ անց, ղօրավարը խիստ ցնցումով վեր է թռնում, արագ դուրը բացում և ղինուորին հրամայում, որ փայտը չբերի:

– Պարոն ղօրավար, անտէր, աւերակ տուն է, բերենք, վառենք, ի՞նչ կը լինի. էս գիչեր անցկացնենք, վաղը մի ճար կանենք:

– Ոչ, ձեռք չտաս, թէ չէ կը խփեմ, սպառնում է ղօրավարը, մենք ի՞նչ իրաւունք ունենք ուրիչի փայտը վառելու:

Ձինուորն աչքաթաց, հնարամիտ մէկն էր, անմիջապէս վրայ է բերում.

– Պարոն ղօրավար, հիմա փայտը վառենք, վաղը կիմանանք, թէ ով է տէրը, արժէքը կը վճարէք:

– Ճիչտ է ասում տղան, վրայ է բերում զնդապետը, վաղը կը վճարէք արժէքը:

– Այո, այդպէս ես էլ համաձայն եմ, ասում է ղօրավարը:

Երեքն էլ արդէն բոլորովին կծկուել էին ցրտից, դողդողում, ատամները իրար էին դարնում: Ձինուորը ղօրավարի համաձայնութիւնը լսելուն պէս, կայծակի արագութեամբ փլած տան փայտերից մէկը բերում, կացինով ջարդում, վառարանները վառում, տաքացնում է բոլոր սննեակները, և ցրտահարութիւնից աղատւում են:

Գրասենեակում զրագրի պաչտօն էր վարում Քեչիչքենդի միջնակարգ կրթութեամբ, ղինուորակոչւած Վասիլ անունով համակրելի և համեստ մէկ երիտասարդ, որը առաւօտեան գալիս է զրասենեակ իւր աչխատանքին, ներս մտնելուն պէս, ղեռ բարև չտւած, ղօրավարը յայտնում է, որ փլած տան փայտերից մէկը

գիշերը վառել են, ուստի կարգադրում է իմանալ, թէ ով է տէրը, որին վճարի փայտի արժէքը:

– Պարոն Զօրավար, տունը մերն է, երբ փլելու նշաններ երևացին, նոր տուն չինեցինք, փոխադրուեցինք այնտեղ, այս տունն էլ պէտք է քանդէինք, տեղը մաքրէինք և փայտերը դուրս նետէինք: Անհոգ գտնուեցինք, երկրորդ տարին է, դեռ չենք կարողանում մաքրել, այնպէս որ, ոչինչ պէտք չէ վճարել, դինուորը թող բոլոր փայտերը բերի և վառի:

– Պարոն Զօրավար, ասացի, մենք պէտք է գնանք Զանգեզուր՝ պրոպագանդ մղելու բոլշևիկների դէմ և կազմակերպելու գիւղացիութեանը. չէի՞ք կարող կարգադրել, որ մեզ գրաստներ տան՝ Քէշիշքենդ գնալու. այս չոդին շատ դժուար է ոտով ճամբայ կտրելը:

– Սիրելիս, ինչպէս տեսնում ես, ասաց զորավարը, փօչու մէջ կորած եմ. Քէշիշքենդից մինչև այստեղ ոտքով եմ եկել զօրքի հետ միասին. չեմ կարծում, որ կարելի լինի հեռախօսով կարգադրել այդ մասին, սակայն բաւականին մարդիկ են եկել գրաստներով, աւերակներում փնտրտուքներ են անում, պէտքական դանադան իրեր գտնում, տանում. գիւղերը աւերելուց ու թալանելուց յետոյ, էլի բան-ման գտնում են: Ես կարծում եմ, աւելի լաւ է, անմիջականօրէն խօսել եկողների հետ, որ որոշ վարձ ստանան և իրենց գրաստները տրամադրեն մեզ:

Այդպէս էլ արինք. փնտռտուք կատարողները խոստացան մեզ տանել միայն մինչև Արփա գիւղը: Համաձայնեցինք, յուսալով, որ Արփայում կը յաջողուի ուրիշ գրաստներ վարձել մինչև Քէշիշքենդ:

Զօրավարի հետ խօսելուց պարզուեց, որ թէ ինքը և թէ ոչ տեղացի սպաները, ձիեր չունէին. միայն երկու, թէ երեք Վայոց ձորցի սպաներ սեպհական ձի ունէին:

Առանց յետաձգելու, անմիջապէս ճամբայ ելանք ու մուտք կոխած Հասանք Ներքին, ապա Վերին Տանձիկ գիւղը, ուր գիշերեցինք և 23-ի առաւօտեան ճամբայ ընկանք դէպի Արփա, որտեղ Հասնելուն պէս գրաստի տէրերը թողին մեզ և մեկնեցին իրենց գիւղերը, որոնք բաւական հեռու էին Արփայից: Մէկ-երկու ժամ հանգստանալուց յետոյ, կարողացանք ձիեր վարձել և գնալ Քէշիշքենդ, ուր արդէն Հասել էին Բայազէտի վրայով մեր պրոպագանդիստ ընկերները, որոնց վերաբերեալ Վայոց Ձորի արտակարգ կոմիսար ընկ. Գևորգեան Բալայեանը որոշ կարգադրութիւն արել էր գիշերելու և ուտելիքի համար:

Յուլիսի 23-ի ամբողջ օրը և 24-ին մինչև կէսօր զինուորական խորհրդակցութիւն է տեղի ունենում զօր. Սիլիկեանի, Դրոյի, Ռուբէնի և Գևորգիսի մասնակցութեամբ: Ս. Մելիք-Եօլչեանը ընդհարած լինելով Դրոյի հետ, խորհրդակցութեանը չի մասնակցում:

Ռուբէնը զրահապատ գնացքով մինչև Նախիջևան հետախուզել և ստուգել էր, որ թուրքերը տեղահան են եղել, փախել Պարսկաստան, ուստի անհրաժեշտ էր դրաւել դատարկւած տեղերը. Բաշնորաշէնում զօրավար Մ. Մելիք-Մուրադեանի մասնակցութեամբ տեղի ունեցած խորհրդակցութիւնը յանգել էր միաձայն եզրակացութեան, որ անպայման և անյապաղ պիտի դրաւել լքւած չրջանները: Նոյն եզրակացութեանն է յանգում նաև Քէշիշքէնդի խորհրդակցութիւնը, Դրոյի մասնակցութեամբ. ուստի որոշում է կայացւում, որ Դրոյի զօրամասը և Վայոց Զորի Զօր. Մելիք-Մուրադեանին ենթակայ ուժերը չարունակեն յառաջխաղացումը, գրաւեն Նախիջևանն ու չրջանը և չարժւեն առաջ, ամբողջացնելով Նախիջևանի գաւառի լրիւ գրաւումը: Որոշում կայացնելուց յետոյ, հէնց նոյն օրը, զօրավար Սիլիկեանը, Ռուբէնը և Ս. Մելիք-Եօլչեանը մեկնում են Երևան:

ԴԷՊՔԵՐ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴՐՈՅԻ ՀԵՏ

Ռուբէնը մեր մասին յայտնել էր Դրոյին, որ Խորհնու ղեկավարութեամբ պիտի պրոպագանդի գործը վարէինք, ուստի կանչեց ինձ իր մօտ՝ խօսելու մեր անելիքների մասին: Բաւական դրուցեցինք զանազան հարցերի չուրջ, բայց աւելի երկար՝ Ղարաբաղի մասին: Դրօն դժգոհ էր թէ Ս. Մելիք-Եօլչեանից և թէ զօրավար Ղազարեանից, որոնք խանգարել են իրեն և ոչ թէ աջակցել: Զօրավար Ղազարեանին անպէտքութիւն է համարում, որովհետև աւելի ֆօրմալիստ էր, քան կենդանի գործ անող: Դժգոհ էր, որ Զանգեզուրի տեղական գործիչների մեկ մասը Զանգեզուրում անձնիւրութիւն չունէր, իսկ Ղարաբաղի գործիչներին համարում էր թոյլ, որպէս նախաձեռնողների ու ղեկավարողների, սակայն գտնում էր, որ զոհաբերող, լաւ տղաներ են և լաւ ղեկավարութեան ներքոյ կարող են լաւ աշխատել:

Ապա Դրօն մեղադրում է ինձ, որ հրաժարւել եմ Ղարաբաղ գնալուց. "Դու փոխանակ Ղարաբաղ գնալու, գնացել ես Ղարաքիլիսէ. քո տեղը Ղարաբաղն է, այնտեղ պիտի գնայիր, ոչ թէ Ղարաքիլիսէ: Ղարաբաղի ընկերներն էլ զժգոհ են, նոյնպէս մեղադրում են քեզ, որ հրաժարւել ես Ղարաբաղ գնալուց":

Դրոյին յիշեցնում եմ, թէ ինչու չհամաձայնեցի գնալ Ղարաբաղ այն օրերին. "Եթէ յիշում ես, քեղ յայտնել եմ, թէ ինչու եմ հրաժարուել Ղարաբաղ գնալուց: Ես գտնում էի, որ թէ Բիւրօն և թէ կառավարութիւնը լուրջ չեն մօտենում Ղարաբաղի խնդրին: Ոչ միայն բանաւոր, այլ և անցեալ տարւայ նոյեմբերի 16-ին գրաւոր կերպով յայտնել եմ Բիւրոյին իմ հրաժարման պատճառը: Պարզ գրել եմ, որ սխալ է թէ Բիւրոյի և թէ կառավարութեան գործելակերպը: Ես կտրականօրէն դէմ եմ եղել Ղարաբաղի ապստամբութեանը: Այն միջոցները, որ կառավարութիւնն էր տրամադրում Ղարաբաղի ապստամբութեանը, ես համարում էի խիստ անբաւարար և գործը մատնուած անյաջողութեան: Սակայն, և որն ամէնից կարևորն է և էականը, միշտ ասել եմ և նոյն տեսակէտին եմ մնացել մինչև այսօր, թէ առանց Հայկի Սամլուն գրաւելու անկարելի է պահել Ղարաբաղը մեր ձեռքում, եթէ անզամ ապստամբութիւնը յաջող կերպով վերջանայ:

Ամբողջ մէկուկէս տարի կտրուած մեր կենտրոնից, չորս կողմից չրջապատուած թուրքերով, տաճիկներն էլ հաստատուած արևելեան Կովկասում, մենք չարունակ ենթակայ էինք վտանգի, մեծ ճիգ ու ջանք գործ դնելով, աշխատել ենք հարևան թուրքերի հետ խաղաղ ապրել, պրովոկացիայի ղոհ չդառնալ, և յաջողուեց. ժողովուրդը տակնուվրայ չեղաւ: Եւ երբ առաջարկւում է գնալ Ղարաբաղ, խիստ անբաւարար, կարելի է ասել՝ չնչին միջոցներով ժողովրդական ապստամբութիւն բարձրացնել, գտայ, որ ժողովուրդը մեծապէս պէտք է տուժէ, մեծ կորուստ ունենայ, հրաժարուեցի, չգնացի: Ես պատասխանատու եմ նաև իմ խղճի, ապա դաշնակցութեան առաջ, ուստի որոշեցի չմասնակցել Ղարաբաղի անժամանակ և անտեղի ապստամբութեան:

Յիշու՞մ ես, անցեալ տարի, երբ Աչոտը (Մելիք Մուսեան), Զանգեզուրի նոյեմբերեան կռիւներից յետոյ, Գօրիսից եկաւ Երևան, պառլամենտի սենեակներից մէկում, երեք հոգով՝ դու, բժիշկ Ռուբէն Տէր Ստեփաննեանն ու ես լսեցինք Աչոտի տուած մանրամասն տեղեկութիւնը՝ տեղի ունեցած կռիւների մասին, դու ասացիր, թէ պէտք է գնալ Զանգեզուր և այնտեղից օգնութեան հասնել Ղարաբաղին, ես էլ ասացի, քանի դեռ ուշ չէ, եթէ կարող ես, յետ կանչել տուր Ս. Մելիք-Եօլչեանին և ղօր. Ղազարեանին ու յետոյ գնա: Ասել եմ հէնց այն ժամանակ, որ առանց Հայկի Սամլուն գրաւելու հնարաւոր չի լինի Ղարաբաղ գրաւելը և Զանգեզուր պահելը: Աչոտն ու բժիշկ Ռուբէնը նոյնը պնդեցին: Այժմ կարծեմ փաստել է մեր ասածների վաւերականութիւնը:

Հիմա, երբ ձեր խորհրդակցական ժողովը որոշել է, որ դու և զօրավար Մելիք-Մուրադեանը գրաւէք Նախիջևանի և Օղուզբաղի չրջանը, եթէ յաջողի, դա մեծապէս կը նպաստի մեր գործին, նախ՝

կը վերանայ Զանգեզուրին ու Վայոց Ձորին սպառնացող վտանգը, երկրորդ՝ Նախիջևանի գաղթականութիւնը կը վերադառնայ իր տեղը և երրորդ, երբ մեր յաղթական զօրքը Նախիջևանի կողմից մուտք գործի Զանգեզուր, չատ մեծ տպաւորութիւն կը թողնի ժողովրդի վրայ և նշանակութիւն կունենայ Ղարաբաղը գրաւելու համար էլ, մինչդեռ, եթէ Ղուչչի Բելակից և Գնդեւազից յարձակում գործենք և Նախիջևանը մնայ չգրաւուած, նոյն տպաւորութիւնը չի թողնի:

Յուլիսի 25-ին Դրօն և Կուռոն յառաջապահ ջոկատի գլուխն անցած մի կողմից, և միւս կողմից՝ Վայոց Ձորի ուժերի գլուխն անցած զօրավար Մելիք-Մուրադեանը ուղղւում են դէպի Նախիջևան:

Յուլիսի 26-ին պրոպագանդիստների մեծ մասը՝ Ասլան Շահնազարեան, Ներսէս Նասիբեան, Մարտ. Արղումանեան, Բախչի Հասան-Ջալալեան, Վահագն Կանայեան, Յար. Ղարիբեան, Հր. Հասրաթեան, Յով. Ստեփաննեան, Աստուր Աւետիսեան և զօրիսնցիները մեկնում են Ղուչչի և Գնդեւազ:

Յուլիսի 27-ին Յար. Թումանեանը, Ներսէս Բաբայեանն ու ես մեկնում ենք Ղուչչի. գիշերը մնում ենք Հերհերում, միւս օրը հասնում Ղուչչի: Թէ Գնդեւազում և թէ Ղուչչիում, պիտի սպասէինք, մինչև որ Դրօն և Մ. Մուրադեանը գրաւեն Նախիջևանը, ապա երբ Դրօն կարմալինովկայի վրայով յարձակում գործէր և գրաւէր Սիսեանը, մենք էլ Ղուչչիից և Գնդեւազից պիտի չարժւէինք, անցնէինք Սիսեան Բաղարչայի վրայով:

Ղուչչիում լսեցինք, որ զիւղացիներից մէկը մանաւոր գործով Բաղարչայ գնացած լինելով, երեկոյեան ղէմ գիւղ վերադառնալով ասել է, որ Բաղարչայի իր բարեկամ մօլօկանը պատմել է իրեն, որ իրենց գիւղում 400 հոգի ձիաւոր կարմիր զինուորներ են եղել, հրաման են ստացել գնալ Նախիջևան և գնացել են ղեռ կէսօր չեղած:

Այդ տխուր լուրը չատ ծանր աղդեց մեղ վրայ. մենք ուրախ տրամադրութեամբ սպասում էինք Դրոյի և Մելիք-Մուրադեանի կատարած յաջող արչաւանքի մասին տեղեկութիւն հասնելուն, այնինչ կարմիր զօրքն է գնացել մեր զօրքերի յանդիման և եթէ ընդհարում տեղի ունենայ, մեր յոյսերն ի դերև կելնեն ու զարձեալ կոտրած տաչտակը կը մնայ մեր առջև:

– Ախպեր, բախտ չունենք, էլի, ասում է Արտեմը, ո՞րտեղից դուրս ելաւ կարմիր հեծելազօրը:

– Ինչու՞ ես զարմանում, պատասխանում է Աստուրը, Զանգեզուր-Ղարաբաղը գրաւելուց յետոյ ոչ մի դժւարութիւն չկար

հեծելազօրը հասցնել Բաղարչայ և այնտեղից Նախիջևան: Հաւանօրէն Նախիջևանի թուրքերը հեռագրով օգնութիւն են խնդրել Բազից և այնտեղից կարգադրել է զօրքին անցնելու Նախիջևան:

Յուլիս 29-ի առաւօտեան Դրօն և Կուռօն յառաջապահ ջոկատի գլուխն անցած նկան Ղուչչի-Բելակ: Երբ դեռ հեռից տեսանք, որ գալիս են, Ասլան Շահնազարեանը, Պօղոս Տէր Դաւթեանը, Յարութիւն Թումեանը, Աստուր Աւետիսեանն ու ես զարմացած իրարու երես էինք նայում: Երբ մտան գիւղ, գիւղի երիտասարդները, Խաչոյի գլխաւորութեամբ, արագ գործի անցան, մարդկանց տեղաւորելու և ձիերին կեր մատակարարելու: Մենք խմբովին գնացինք դէպի Դրօն, որի մօտ վազեց Խաչօն և տարաւ մեկի տունը, ուր ուղղեցինք և մենք: Դրօն պատմեց, որ հասել են մինչև Ջահրի և Ղարաբաղլար, բայց առաջ չեն գնացել, որովհետև Երևանից չտաբը կասեցրել է յառաջխաղացումը և կարգադրել Զանգեղուրի վրայ յարձակելու Ղուչչի Բելակից և Գնդևազից:

Հարցնում ենք, թէ ինչու՞ Նախիջևանի գործողութիւնը կասեցւեց. Դրօն պատասխանում է, որ դեռ իրեն յայտնի չէ կասեցման պատճառը, ապա առաջարկում է, որ Զանգեղուր մտնելու առաջին չաբաթը բոլոր պրոպագանդիստներն աշխատեն դինուորականների հետ միասին, աջակցեն նրանց տեղական մարտական ուժերի համախմբման ու կազմակերպման գործում:

Նոյն օրը երեկոյեան գնացի Դրոյի մօտ, իմանալու՝ Երևանից նոր ի՞նչ կարգադրութիւն է ստացել: Դրօն պատմեց, թէ ինքը չտաբին յայտնել է , որ եղած ուժերով հնարաւոր է, կարող ենք գրաւել Զանգեղուրը, բայց պահել չենք կարող, անհրաժեշտ է, որ օգնական ուժ ուղարկւի, և չտաբը խոստացել է 1500 հոգուց բաղկացած մի գունդ ուղարկել:

Մխութարեանցի[66] Խաչօն, որը սուրհանդակի դեր է կատարում, մանաւանդ պատասխանատու վայրկեաններին մեծապէս օգտակար լինում, ուղարկւել էր Զանգեղուր, որի ամէն մի քարնուքրը յայտնի էր իրեն. նա վստահ էր այնտեղ եղած գիւղացի ընկերների վրայ: Վստահ գնացել էր Շիրինից և Խորէնուց տեղեկութիւն բերելու: Խաչօն յաջողութեամբ հանդիպում է Շիրինին ու Խորէնուն Շնհէր (Շինուհայր) գիւղում, որը Շիրինենց գիւղն է: Խաչօն գնացած է եղել Սիսեան Հրամանատար Պօղոս Տէր Դաւթեանի կարգադրութեամբ:

Շիրինն ու Խորէնը նամակ էին գրել՝ ուղղւած ընկերներին, թէ իրենք ապրում են գաղտնի և օրէցօր սպասում են մեր ուժերի

[66] Մխութարեանը Սեպհան ամենասլարթ գիրք ունեցող գիւղն է: (Հեղ.)

յարձակմանը Զանգեղուրի վրայ՝ որպէսզի իրենք զաղտնի կարողանան Թաքստոցից դուրս գալ և գործի անցնել, չտապեցնում են օր առաջ սկսել յարձակումը:

1920թ.
Յուլիսի 30-ին յայտնեցին, որ Գ-րդ գնդից երեք վաչտ եկել են Գնդևազ, որոնց կազմը, ասում են, չատ խախուտ է, դիմացկունութիւն չունի, արտաքինով էլ Թափթփուած են:

Դրօն յայտնում է, որ բացի երեք վաչտից, ուրիչ զօրամաս չպիտի գայ և, պարզապէս, վարանում է՝ ինչպէ՞ս անել, արչաւել՞ եղած ուժերով Զանգեղուր, թէ՞ ոչ:

Ես էլ ասացի. "Քանի որ համոզուած ես, որ առանց անհրաժեշտ թիւով զինուորներ ունենալու չպիտի կարողանանք Զանգեղուրը պահել, չպիտի սկսել արչաւանքը, և բոլորս բաժանում ենք քո տեսակէտը, որ ճիշտ է, առանց բաւականաչափ ուժեր ունենալու, չպիտի արչաւել, գրաւել և փախչել յետ, որից յետոյ ժողովրդի տրամադրութիւնն աւելի պիտի ընկնի և նոյն իսկ հակակրանք կառաջանայ մեր դէմ":

Դրօն հեռագրով պահանջում է զօրամաս ուղարկել և օպերացիան յետաձգել մինչև զօրամասի հասնելը: Երեկոյեան ժամը 10-ին Դրօն մերժողական պատասխան է ստանում: Ժամը 11-ին Դրօն մեղ կանչում է իր մօտ, ներկայ էին Կուռօն, խմբապետ Մարտիրոսը և Պօղոս Տէր Դաւթեանը.

Դրօն հարց է դնում, ինչպէս վարուել: Ես կրկնեցի առաւօտեան ասածս, որի վրայ պնդեց Պօղոսը, թէ չպիտի կարողանանք պահել Զանգեղուրը, ուստի պէտք չէ յարձակում դործենք:

– Սակայն արժանապատուութեան խնդիր է դարձած այժմ ինձ համար, ասում է Դրօն: Կենտրոնում, թիւրիմացաբար, պիտի կարծեն, թէ վախեցայ և այդ պատճառով յարձակում չդործեցի:

Ձի՞ լինի, ասացի, որ կենտրոնը մօտիկից ծանօթանայ իրերի իրական դրութեան հետ և ապա եղրակացութեան յանգի: Դու գիտես, թէ Դարալագեազի ժողովուրդը և ինչպէս Խաչօն ասաց, Սիսեանը, Ղափանը և Գողթանը սրտատրոփ սպասում էին, թէ Նախիջևանը պիտի գրաւուի, և Նախիջևանի գրաւումը չատ մեծ տպաւորութիւն կը թողնէր և կը բարձրացնէր ժողովրդի տրամադրութիւնը: Անհասկանալի է, ի՞նչ մտածեց կենտրոնը, որ կասեցրեց Նախիջևանի գրաւումը և ռուսական կարմիր զինուորները գրաւեցին, օգնութեան հասնելով Թուրքերին, որոնք, կասկածից դուրս է, կը վերադառնան ու կը բռնեն իրենց լքած տեղերը:

– Կենտրոնն այն կարծիքի է, որ եթէ գրաւէինք Նախիջևանն ու Օրդուբադը, չպիտի կարողանայինք պահել մեր ձեռքում, ասում է

Դրօն, թէև ամբողջ Թրքութիւնը փախել էր Պարակաստան և ամսոյս 21-ից մինչև 26-ը բոլորովին լքւած է եղել Նախիջևանի ամբողջ շրջանը: Ռուբէնը ամսոյս 25-ին զրահապատով գնացել է Նախիջևան, որը լքւած, ամայի էր գտել: Կենտրոնի կարծիքով, եթէ Նախիջևանն ու Օրդուբադը զբաւէինք, սահմանագիծը շատ կերկարէր և չէինք կարողանայ պահել:

Դրօն շատ մտածկոտ, ծանրակշիռ խնդիրը լուծող կենտրոնացած մարդու դէմք ունէր: Երկընտրանքի մէջ էր. իր կարծիքը պարզ ու որոշ յայտնել էր, և իր հետ համաձայն էին սպաները, որոնք շատ լաւ էին հասկանում խնդիրը. նոյն իսկ ոչ-զինուորականներս համամիտ էինք Դրոյին, որ առանց բաւարար ուժ ունենալու հնարաւոր չէ Զանգեզուրը պահել մեր ձեռքում, գտնելով Թշնամու երկու բանակների՝ Հաջի Սամլուի և Նախիջևանի խաչաձև կրակի տակ: Բոլորիս մէջ նոյն դժգոհութիւնն էր բորբոքւում, թէ ինչու զինուորական չտաքը կասեցրեց Նախիջևանի գործողութիւնը և չարունակ այդ մասին էինք խօսում, քննադատում կառավարութեանը:

– Պարզապէս, չտարում նստածներից ոչ մէկը գաղափար չունի Զանգեզուր-Ղարաբաղի մասին, ասում է յաճախ Պօղոսը, և ոչ մէկը չի կարողանում պատկերացնել մեր շրջանի իրական կացութիւնը: Եթէ Նախիջևանը զբաւած լինէր, կարելի կը լինէր վստահ առաջ չարժւել, իսկ այժմ, երբ առաջ գնանք, թիկունքից Թշնամին միշտ կարող է զարկել մեզ:

– Ճիշտ է, ասում է Դրօն և կրկին խորանում մտքերի մէջ:

– Զարմանալի է կենտրոնի տրամաբանութիւնն ու վերաբերմունքը: Մի՞թէ նախ քան Նախիջևանի գործողութիւնը սկսելը և մինչև Ղարաբաղլար զօրք ուղարկելը նա չէ՞ր քննել ու կշռադատել իր անելիքը: Հէնց գործի կէսին այլ եղրակացութեան յանգաց: Ռուբէնն ասում էր, որ Երևանում, մեր չարքերի մէջ կային մարդիկ, որոնք չատ դէմ էին Շարուրի դաշտը մաքրելուն: Նրանք գտնում էին, որ պէտք է Շարուրը զբաւել առանց տեղահան անելու Թրքութեանը. մի՞թէ կարելի է որևէ տարածութիւն զբաւել առանց բնակչութեան. մեր ինչի՞ն է պէտք Շարուրը անապատի վերածւած վիճակում: Եւ Ռուբէնը պատմում է, որ երբ ամսու 20-ին Նախիջևանի Թրքութեան ներկայացուցիչները գալիս են Երևան՝ կառավարութեան հետ բանակցելու, կառավարութիւնը այնպիսի խիստ պայմաններ է դնում՝ զինաթափ լինել, յանձնել կառավարութեանը 15000 հրացան, մի քանի միլիոն փամփուշտ, երկու-երեք հարիւր հազար փութ հացահատիկ, մի քանի հարիւր ձիեր, եղներ և այլն, որ չկարողանային կատարել, մերժէին, որպէսզի հիմք ունենային մինչև Օրդուբադ մաքրելու շրջանը: Թուրքերը չբաւարարեցին մեր պահանջները, և մեր որոշումը կատարուեց կիսով չափ: Այդպէս չպիտի վարուէինք, գործը կիսատ ձգելով, պիտի զբաւէինք Նախիջևանի ամբողջ գաւառը, մինչև Օրդուբադ, որպէսզի

Թրքութիւնը այդ վայրերում վերաբնակւելուց յետոյ ի վիճակի չլինէր մեր դէմ ծառանալու, պարտութիւն կրածի մտայնութեամբ ու հոգեբանութեամբ, խաղաղ կը մնար: Մի՞թէ այժմեան մեր սահմանագիծը աւելի կարճ է, քան Շահթախտից մինչև Մեղրի. եթէ զրաւէինք, սահման ունենալով Արաքս գետը կամ եթէ հիմա զրաւինք Զանգեզուրը մինչև Զաբուղ սահմանագիծը, սկսած Մուրադ Թափա սարի հիւսիսի կողմից՝ Որոտան գետի ակունքի մօտից սկսած Մխութուրեան լեռան հիւսիսային կողմի ստորոտով, Ուչ Քիլիսէի, Քեռսա Մեչիդի, Մինքէնդի լերան, Խողնաւարից արևելք գտնուող լեռների, Քարաչէն, Տեղ-Խնձորեսկ, Կոռնիձոր, Էյվաղլու, Շուռնուխ, Եղվարդ, Ազարակ գիւղերի արևելեան ու հարաւարևելեան կողմում երկարած լեռնաշղթաների վրայով անցած գիծը առնւազն 250 վերստ երկարութիւն ունի, մինչդեռ Շահրազից մինչև Մեղրի 120 վերստ է: Գործը չպիտի կիսատ թողնէր, պէտք է զրաւէինք ամբողջ չրջանը, որով կը բարձրանար ժողովրդի տրամադրութիւնը, մի բան, որ շատ կարևոր է մեզ համար, մանաւանդ ներկայիս:

Ինչպէս կասեն, խօսելու պահանջ էի զգում, ինքզինքս հանգստացնելու համար, խօսում էի, բայց Դրօն, տարւած լինելով իւր մտքերով, կարծես չէր լսում ինձ, ուստի դարձայ իրեն:

– Ինքդ համոզւած ես, որ Զանգեզուրը զրաւելուց յետոյ մեր ձեռքում պահելու համար, անհրաժեշտ է, որ տրամադրութեանդ տակ ունենաս 1500 դինւոր, մինչև որ կարողանանք տեղական ուժերը համախմբել և պաշտպանել սահմանը, դու պէտք է կրկին օղնական զօրք պահանջես, այլապէս յաջողութիւն չենք ունենայ:

– Լաւ ես ճառում, մեր տղայ, այդ բոլորը ճիշտ է, սակայն ես կարգապահութեան մարդ եմ, օգնական ուժ պահանջել և մերժում եմ ստացել, արշաւանքը կը սկսեմ և, ինչպէս յայտնել եմ Կենտրոնին, չտարբին, վերջինիս վրայ կընկնի հետևանքի պատասխանատուութիւնը: Ոչ մի դժւարութիւն չկայ Զանգեզուրը զրաւելու, բայց եթէ չկարողանանք պահել, դրա մեղքը կընկնի Կետրոնի վրայ: Այլևս երկար ու բարակ մտածելու պէտք չկայ. Պօղոս, անմիջապէս կարգադրիր տղաներիդ, պատրաստ լինել մինչև մի ժամ, բռնելու արդէն որոշւած ելակէտերը:

Բաղարչայում պիտի ձիեր գտնել ու դնել պրոպագանդիստների տրամադրութեան տակ, որպէսզի պրոպագանդի գործը արագութեամբ կատարեն և չուտ գլուխ բերեն մարտական ուժերի համախմբումը:

Գիչերը զօրքերը չարժւում են առաջ, մեկնում է և Դրօն, ժամը 12-ին զրաւում են Բաղարչայը:

Յուլիսի 31-ին գալիս է Ենովք Միրաքեանը և մեկնում Դրոյի մօտ, Երևանից իր հետ բերած թղթածրարը յանձնելու:

Ղուչչիցիները դիմում են հողային յանձնաժողովին, որ լքած թրքական Ղուչչ գիւղի բերքը տան իրենց՝ հաւաքելու այն վնասի դիմաց, որ հասցրել են իրենց թուրքերը և մեր գինուորները: Հողային յանձնաժողովը մերժում է, ուստի գիւղացիները դիմում են Դարալագեազի արտակարգ կոմիսար Գեր. Բալայեանին, որին ես էլ երկտողով խնդրում եմ չմերժել ղուչչիցիներին: Գերասիմը համաձայնում է, պայմանաւ, որ ղուչչիցիները հացահատիկները կալսելուց 800 փութ տան կառավարութեանը, ղօրքի համար. բաւական սակարկելուց յետոյ, Գերասիմը համաձայնում է 500 փութ ստանալ. ղուչչիցիներին խորհուրդ եմ տալիս համաձայնելու. թերևս կարելի լինի հետագային համոզել Գերասիմին՝ ամբողջը ղիջել և ոչինչ չպահանջել:

Օգոստոսի 1-ին բերում են Ղուչչի երկու ռուս կարմիր բանակայինների, որոնք գերի էին ընկել: **Օգոստոսի 2-ին** բերում են ևս 9 գերիների: Ասլան Շահնազարեանը, Ներսէս Բաբայեանը, Յարութիւն Թումեանը, Վաղգէն Միրզաբէկեանը և ես նոյն արաբաններով մեկնում ենք Բազարչայ, որտեղ տեղեկանում ենք, որ մեր ղօրքը գրաւել է Գօրիսը և առաջ անցել:

Օգոստոս 4-ին գալիս է Դրոյի սուրհանդակը. Դրօն երկտողով կարգազրում է, ըստ հնարաւորին, չուտ հաւաքել Սիսեանի մարտիկ ուժերը Ղարաքիլիսէում և սպասել կարգադրութեան: Համաձայն Դրոյի կարգադրութեան, պրոպագանդիստների մեկ մասը պէտք է ցրւէր գիւղերը, կոչ անէր մարտական ուժերին կենտրոնանալու Ղարաքիլիսէ գիւղում, իսկ մեկ մասը անցնէր բուն Զանգեղուրի շրջանը: Որոշեցինք, որ պրոպագանդիստներից մեկ մասը մնայ Սիսիանում, իսկ Ասլան Շահնազարեանը, Յարութիւն Թումեանը, Վաղարշակ Նարինեանը, Վաղգէն Միրզաբէկեանը և Եղիշէ Իշխաննեանն անցնեն Զանգեղուր:

Դրոյի սուրհանդակը պատմեց, որ երկու ակտիւ գեր կատաղող բոլշևիկները՝ չնհերցի Արամ Մուսայէլեանն ու գօրիսցի Մկրտիչ Մաչուրեանը, 10 հայ ձիաւորներով գնացել են Շնհեր, որտեղ թաքնւած էին Շերինն ու Խորէնին. չնհերցի բոլշևիկների մատնութեամբ երկուսին էլ ձերբակալում, տանում են Գորիս, բանտարկում, և օգոստոսի 2-ին, առաւօտեան ժամը 5-ին, մինչև Դրոյի Գօրիս մտնելը, Զաքար Տէր Ղազարեանի և բոնակոծցի Միքայէլի հետ միասին հրացանաղարկ անում. Դրոյի ուժերը Գօրիսին մօտենալու ժամանակ, դահիճները փախչում են:

Բաղարչայից բոլորս արաբաներով մեկնում ենք Անզեղակոթ, որտեղ Դրոյի արած կարգադրութեան համաձայն մէկ ձի եմ ստանում, որ չարունակ իմ տրամադրութեան տակ լինի, զործի արագութեան համար, որ կարողանայի պրոպագանդիստ ընկերների հետ յաճախ տեսակցութիւնները ունենալ: Քանի որ հնգով պիտի մեկնէինք Գօրիս, որոչեցի ձին թողնել Սիսիան մնացող ընկերներին՝ օգտագործելու, մինչև իմ վերադարձը, ապա յիշեալ հինգ հոգու համար գիւղացիներից ջորիները վերցրինք և միւս օրը առաւօտեան ճամբայ ընկանք դէպի Գօրիս, ուր հասնում ենք դեռ երեկոյեան մութը չկոխած, ժամը 5-ին:

Երեկոյեան ժամը ինն անց էր, լսեցինք, որ Դրօն եկել է ճակատից և Դոկտոր Միչա Պարոնեանի մօտ իջևանել: Յարութիւն Թումեանը, Ասլան Շահնազարեանն ու ես անմիջապէս չտապեցինք այնտեղ: Դոկտորի հետ կանխաւ մօտ ծանօթ լինելով, առաջ անցայ և աստիճաններով բարձրացայ երկրորդ յարկը, Ասլանն ու Յարութիւնը հետևեցին ինձ: Մտանք նախասենեակը, Դոկտորը ղիմաւորեց մեզ, յայտնեցինք, որ ուղում ենք տեսնել Դրոյի հետ: Դոկտորն ասաց՝ "Ճակատից եկել է, սոսկալի յոգնած վիճակում, երկու օր քնելու հնարաւորութիւն չի ունեցել, պէտք է, որ երկու ժամ հանգստանայ, մի քիչ թարմանայ, որպէսզի մի քիչ կաղդուրւած վերադառնայ ճակատ, ուստի պատւիրել է, որ մարդ չթողնեմ մօտը և որպէս բժիշկ չեմ ուղում, որ անհանգստացնէք":

– Դոկտոր, Ծոյլ տուր, զէթ հինգ րոպէով աչքին երևանք և խօսենք մեր անմիջական անելիքների մասին. հարց ու պատասխանը հաղիւ թէ հինգ րոպէից աւելի երկար տևէ, ասացի: Դոկտորն ու ես մտանք այն սենեակը, որտեղ պառկած էր Դրօն. նա դռան ձայնից զլուխը բարձրացրեց, տեսաւ մեզ, և դարձաւ նախ Դոկտորին:

– Դոկտոր, չատ ջարդւածութիւնից ու յոգնութիւնից, որ պիտի անմիջապէս քնէի, չեմ կարողանում քնել, ուշքս յետ է, ճակատում: Մի բան տուր ընդունեմ, քնեմ: Ապա խօսքն ուղղեց ինձ՝ "Եղիչ ջան, երկար խօսելու ժամանակ և հնարաւորութիւն չկայ. չան տղերքը դոռ ևն անում, զրութիւնը չատ լուրջ է, որովհետև Հաջի Սամլուի զրդերն էլ միացել ևն բոլշևիկներին. անմիջապէս, ովքեր եկել էք Գօրիս, վերադարձէք Սիսիան, մարդիկ հաւաքէք, ուղարկէք Պօղոսին, որ կարողանայ հակայարձակման անցնել, որքան կարելի է չուտ, նրա ուժերը միայն ինքնապաշտպանուել կարող են, որովհետև քիչ են:

– Շատ լաւ, անմիջապէս կ'օգնենք, ասացի ես ու դուրս եկայ, Դոկտորի հետ միասին:

Ասլան Շահնազարեանին ու Յարութիւն Թումեանին յայտնեցի Դրոյի կարգադրութիւնը, և մնաք բարով ասելով, ուղեցինք դուրս գնալ, Դոկտորը չթողնց:

– Տնաչէնները, ասաց, օտարազգիի տուն չէք մտել լսօ, հայի տուն է, մի կտոր հաց ծամէք, յետոյ գնացէք, երկար ճամբայ պիտի կորէք, դատարկ ստամոքսով տեղ չէք հասնի:

Դոկտորենց ընտանիքը Գօրիսի բարեկեցիկ և շատ պատուական ընտանիքներից մէկն էր: Վերին աստիճանի բարեկիրթ և հիւրասէր մարդիկ էին: Հայրը, որ Գօրիսում մեծ յարգանք վայելող մէկն է եղել, արդէն վախճանւած էր և ունևոր լինելով, բոլոր դաւակներին բարձր կրթութիւն էր տւել: Տան դուռը բաց էր միշտ ոչ միայն հայերի, այլև չրջանի հարևան թուրքերի և քաղաքում ապրող ռուսների (պետական պաշտօնեաները) համար, որոնք որևէ խնդրով իր խորհուրդին կամ բարոյական աջակցութիւնն պէտք ունէին: Դոկտորը կուսակցական մարդ չէր, սակայն աղգային առողջ տեսակէտներ ունեցող մէկն էր՝ անկեղծ հայրենասէր և, որպէս այդպիսին, պատրաստ ամէն կերպ օգտակար լինելու աղգին: Շատ ուղղամիտ մարդ էր և բացորոշ կարտայայտէր իր մտքերը, եթէ չբաժանէր մէկի տեսակէտը, կառարկէր դէմ առ դէմ, առանց ճնչելու:

Բարեխիղճ բժիշկ էր, բոլոր հիւանդերին, ունևոր կամ չունևոր, համահաւասար հասնող: Զքաւորներից դրամ չէր վերցնում, ինչպէս և ուսանողներից, ուսուցիչներից, աշակերտներից:

Դոկտորին մերժելու միտք չունէինք, ճիշտ էր ասում, դատարկ ստամոքսով ճամբայ կարել չէինք կարող. անցանք հիւրասենեակը. Դոկտորի կարգադրութեամբ ծառան անմիջապէս սեղան սարքեց և պատրաստ ինչ որ կար, խաչած հաւի ու ոչխարի միս, պանիր, կանաչեղէն, լի ու լի լցրին սեղանը. ինչպէս կասեն՝ ոտի վրայ չտապ-չտապ կերանք ու, չնորհակալութիւն յայտնելով Դոկտորին, դուրս եկանք: Վ. Նարինեանը և Վաղդէն Միրզաբէկեանը Գօրիս հասնելուն պէս, գնացել էին իրենց բարեկամների տները. գտանք երկուսին էլ, յայտնեցինք Դրոյի կարգադրութիւնը, անմիջապէս միացան մեզ, մեկնելու Գօրիսից Սիսիան: Ուղեցինք պայմանաւորւել մեր ջորեպանների հետ, որ մեզ յետ տանէին Սիսիան. տեղեկացրին, որ նրանք արդէն մեկնել են Գօրիսից, ուստի հարկադրւած էինք ոտով ճամբայ ընկնել, որովհետև վարձու ձի կամ ջորի գտնել հնարաւոր չէր:

ԳՕՐԻՍԻՑ ՍԻՍԻԱՆ

Արդէն կէս զիչեր էր, որ Գօրիսից դուրս եկանք, բռնելով Սիսիանի ճամբան. քաղաքի ծայրից սկսւում է դէպի վեր ձգւած բարձրութիւնը դիզդզդով ու վերջանում լեռան ամենաբարձր կէտում, որը իչխում էր Գօրիսի վրայ և որտեղից ճամբան երկարում

է սարահարթով դէպի Սիսիան: Ճանապարհին դէմառդէմ եկանք Մշեցի Շաւարչին[67], որը մի հարիւրեակ դինուորներով սարահարթի վրայ հսկողութիւն էր կատարում Դրոյի կարգադրութեամբ: Շաւարչի հետ ծանօթ էի Շուչու թեմական դպրոցի նախակրթարանից:

Շաւարչին վերջին անգամ հանդիպել էի 1904 թ. աշնանը Կարսում, ուր երկու ընկերներիս՝ Վաղ. Նարինեանի և Լևոն Մելիք-Մանուչարեանի հետ գնացել էինք անցնելու գիւղերը, մեր ընկեր ուսուցիչներին օգնելու, երեկոյթներ և ներկայացումներ տալու:

Օգոստոսի 6-ին Շաւարչից բաժանուելով, չարունակեցինք մեր ճամբան, որքան հնարաւոր էր, արագ էինք քայլում, որպէսզի ժամ առաջ հասնենք Ղարաքիլիսէ: Ճամբին, մինչև Եանթափէ հասնելը, Գեօրէչքդաչ տեղում թուրքերը դարան մտած հեռուից սպառնում են մեզ կանգնել, անչուշտ զերելու նպատակով, լաւագոյն դէպքում սպանելու, մի քանի անգամ էլ կրակեցին, մենք մեղ նետեցինք դաշտում սելաւից առաջացած մի լայն փոսի մէջ, որ զնդակ չը դիպչէր մեղ և այնտեղից ծռելով մեր ճամբան, արագ վաղեցինք մօտակայ ձորը, աւելի ապահով տեղ. հէնց այդ մոմենտին լսեցինք համազարկի ձայներ և յետոյ տեսանք ձիաւորների մի խումբ, Դրոյի սուրհանդակի առաջնորդութեամբ սրարշաւ գալիս էին մեր կողմը և մէկ-մէկ համազարկ տալիս դէպի դարան մտած թրքական հրոսակախումբը: Ձիաւորներից յետոյ երեացին հարիւրի չափ ամէն հասակի դինուած մարտիկներ, որոնք չտապում էին հասնել ձիաւորներին: Պարզուեց. որ մեղնից առաջ, դարան մտած հրոսակախումբը փորձ է արել բռնելու սուրհանդակին, բայց վերջինը լաւ նչանառու լինելով, թուրքերից երկու հոգու վիրաւորելով, սրարշաւ հասնում է Ղարաքիլիսէ և հաւար կանչում: Անմիջապէս Ղարաքիլիսէում գտնուած մարտիկները, ձիաւորներ թէ հետևակ, չտապում են դէպքի վայրը և առաջ անցնում, նպատակ ունենալով կռւելու հրոսակախմբի հետ, իսկ հրոսակախումբը, նկատած լինելով ձիաւորներին, փախուստի ճամբան է բռնում: Թուրքերը դիրք էին բռնել ժայռերի մէջ, որտեղից նրանց փախուստի ճամբան ձգւում էր խիստ զառիվեր դէպի բարձր սարերը, ուր ձիաւորների համար գժւար էր առաջ գնալը, ուստի հետևակները դէպի վեր մագլցելով արագ գնում են

[67] Շաւարչը և իւր հօրեղբօր տղա Վահանը, որ երկու տարով փոքր էր երկուսից, 1896 թ. կոտրածից հրաչքով ազատուած ուրիչ որբերի հետ ազատուանել էին Կալիֆոռնիա: Շաւարչ և Վահան Գրիգորեանները համառում են Ղարս ուրիչ որբերի հետ, որոնց ուղարկում են զանազան տեղեր, իսկ Շաւարչին ու Վահանին Շուչի, որպէս առաջնորդարանի տաներին, սովորելու Շուչու Թեմական դպրոցում: Եւ երկուսով ընդունել էին երկրորդ նախապատրաստական դասարան: Երկուսն էլ մեր բոլոր դասարանցիներից բարձրահասակ լինելով, նստում էին վերջին նստարանին: Շաւարչը հօր-ութ տարով մեծ էր ինձնից: Երկու տարի յետոյ Շաւարչն ու Վահանը վոխադրուեցին Վաղարշապատ, Գէորգեան ճեմարանում սովորելու: (Հեղ.)

առաջ, ուղեցոյց ունենալով աեղ-տեղ քարերին կաթած արեան կաթիլները, որոնք ապացոյց էին, որ սուրհանդակի արձակած գնդակները աննպատակ չէին անցել:

Մենք չենք սպասում հրոսակախմբին հետամտող մարտիկների վերադարձին, չտապ հասնում ենք Ղարաքիլիսէ, որտեղ հանդիպում ենք չրջանի կոմիսար Նիկալայ Կրմինանցին (դաչնակցական), որի հետ միասին պրոպագանդիստներին մօտակայ գիւղերը ուղևկցելու մարդիկ նչանակելով, ճամբում ենք աչխատանքի: Կոմիսարի նչանակած մարդիկ պէտք է բանաւոր կերպով յայտնեն հրամանատար Դրոյի հրահանգը, որ բոլոր դէնքի ընդունակ մարդիկ անմիջապէս չտապեն, զան Ղարաքիլիսէ, իսկ պրոպագանդիստները, ստեղծած դրութեան լուրջ լինելը պիտի բացատրեն և խրախուսեն, ոգևորեն մարդկանց, կենտրոնանան Ղարաքիլիսէում, հետագայ աննկիքների մասին խորհելու:

Օգոստոսի 7-ին, կէսօրւայ մօտ գիւղերից խումբ-խումբ գալիս են մարտական ուժերը, որ ժամը 3-ին մեկնեն Պօղոսի մօտ: Արդէն վեց հարիւրից աւելի մարդ էր հաւաքւել և Կրմինանցը պէտք է նչանակէր մէկին կամ ինքը պարտականութիւն ստանձներ մարտիկներին առաջնորդելու Պօղոսի մօտ: Արդէն ժամը 3-ն էր. այդ մտմտուքի մէջ էինք, որ հեռից թնդանօթի ձայն լսեցինք: Բոլորս զարմացած իրարու երես էինք նայում հարցական հայեացքով և անհանգիստ հոգով: Եւ հաղիւ տասը րոպէ անցած Դրոյի նոյն սուրհանդակը սրարչաւ դպրոցի բակը մտաւ, որտեղ կենտրոնացած էին գիւղերից եկած մարտիկները: Մենք ևս, բոլոր պրոպագանդիստներս գտնւում էինք այնտեղ: Սուրհանդակը հևիհև, կարճ յայտարարեց Դրոյի հրամանը, թէ թշնամու գերազանց ուժի ճնչման տակ զօրքը նահանջում է, ուստի մենք էլ չուտ նահանջենք Գնդևազ կամ Ղուչչի-Բիլակ: Նահանջի մասին լսելուն պէս, կենտրոնացած մարտիկ ուժերը ամենայն արագութեամբ դուրս եկան բակից և ցրւեցին իրենց գիւղերը: Բնական ու հասկանալի էր՝ մնային, ի՞նչ անէին: Եւ մենք էլ բռնեցինք նահանջի ճամբան: Սուրհանդակը պատմեց, որ Նժդեհը թեթև վիրաւորւել է, Դրօն հրահանգել է Նժդեհին՝ զափանցի մարտիկներին աղատ արձակել, որպէսզի գնան իրենց գիւղերը, իսկ ինքը և իր սպաները նահանջող զօրքի հետ անցնեն Դարալագեազ ու միասին գնան Երևան, սակայն Նժդեհը չի համաձայնել և զափանցիների հետ անցել է Ղափան:

Մութը կոխած էր, որ հասանք Անգեղակոթ և քիչ հանգիստ առնելով, չարունակեցինք մեր ճամբան: Կէս գիշերից անց էր, որ մտանք Բօրիսովկա մալականների գիւղը և համաձայն Դրոյի, լուռումունջ անցնում էինք գիւղից: Մութ, խաւար էր գիշերը, իրարու չէինք տեսնում, ճամբան լաւ ճանաչող սիսիանցի կուսակցական գիւղացի ընկերներ կային մեզ հետ նահանջող, և

մենք առաջ էինք գնում նրանց յետևից: Ես յոգնացաւ ունէի, բայց աւելի նեղւում էի խիստ յոգնածութիւնից և անքնութիւնից. երբ Բօրիսովկայից դուրս եկանք, մինչև մալականների յաջորդ գիւղը՝ Բաղարչայ, ճամբան երկու վերստ էր, ուղիղ և ծանօթ ինձ: Բօրիսովկայից Բաղարչայ երկարող ճամբի սկզբին ցանկապատուած մի բանջարանոց կար, որի դռնակը սպիտակ գոյն ունենալով, նկատելի էր մութի մէջ: Ես ընկերներից յետ էի մնացել և անյագ ցանկութիւն ունէի հանգստանալու, ուստի դռնակի առջև նստեցի, որ մի քիչ հանգստանամ, ապա գնամ Բաղարչայ, որտեղ պիտի կենտրոնանայինք բոլորս և ապա չարունակէինք մեր ճամբան: Երբ նստեցի, աչքերս փակւում էին, մտածեցի՝ մի քիչ քնեմ, աչքիս որդը կոտրւի[68], վեր կենամ, գնամ: Զգիտեմ, որքան ժամանակ քնեցի, քսան րոպէ, թէ աւելի, թերևս կէս ժամ, մէկ էլ Վաղգէն Միրզաբէկեանի ձայնը լսեցի, որ ոչ չատ բարձր իմ անունն էր տալիս, կանչում հէնց այն վայրկեանին, երբ առջևիցս պիտի անցնէր. արթնացրեց:

– Վաղգէն, ի՞նչ կայ, ի՞նչ ես ուզում, հարցրի:

– Վայ, քո տունը չինւի, քեզ էինք սպասում, փնտռում էինք գաղթողների մէջ: Սիսիանից բաւական ընտանիքներ են գաղթել ուրիչ ճամբով. մենք կարծեցինք, թէ ճամբան կորցրել ես և պիտի գերի ընկնես:

Վեր կացայ, արդէն բաւական հանգիստ ու թարմացած էի, Վաղգէնի հետ միասին գնացինք Բաղարչայ: Այնտեղ պարէտ էր նչանակւած խնձորեսկցի տեղակալ Բազրատ Բաղդասարեանը, որը խնդրեց առանձնանալ, խորհրդակցելու. առանձնացանք, և ասաց.

– Սիսիանից մի քանի հոգու ձերբակալել և ուղարկել են ինձ, որպէս կասկածելիների, նրանցից կարևոր դէմքը Մաղրա գիւղացի Վարդանն է, որին Ռասպուտին անունն են տւել գիւղացիները. ինչպէ՞ս վարւել ղրանց հետ: Էս նահանջողների մէջ մի քանի հոգի ատամ են կրճտացնում, թէ պէտք է բոլորին զնդակահարել, և ուզում էին ղօռ անել, մտնել բանտը, զնդակահարել բոլորին, մանաւանդ Վարդանին:

– Շատ պարզ է, առանց դատի չի կարելի պատժել որևէ մէկին, ներկայ դէպքում առանց Հրամանատարի Հրամանի ոչինչ չպիտի անել, ուստի դու բոլոր բանտարկեալներին, որոնք իբրև բոլշևիկներ կասկածի տակ են, մօտդ գտնուող դինւորների ուղեկցութեամբ ճամբիր Քէչիչքէնդ: Դրօն անձամբ կը կարգադրէ գործը, իսկ միւսներին, որոնք մանր-մունր բանի համար են բանտարկւել, կարելի է աղատ արձակել:

Բաղդասարեանը այդպէս էլ արաւ:

---

[68] Աչքի որդը կոտրել, նչանակում է՝ մի քիչ քնել: (Խմբ.)

Լեռներում սաստիկ անձրև եկած լինելու հետևանքով Բաղարչայ (Որոտան) գետը բաւական յորդել էր, և ոտքով գետից անցնել հնարաւոր չէր: Նահանջողների կէսից աւելին ձիեր չունէին: Նահանջողների մէջ կային նաև կանայք ու երեխաներ: Զինուորներից ոմանք ուղել էին առանց յետ նայելու անցնել միւս ափը, բայց պրոպագանդիստները արգելել էին, սպառնալով, որ չանցնեն և օգնեն հետիոտներին, անցնելու գետից: Այդ առթիւ վէճ է առաջանում, ուստի Վաղգէնը չտապ գալիս է, յայտնում մեզ: Բազրատին ասացի. "Դու որպէս պարէտ ամենայն իրաւունքով կարող ես պարտադրել ձիաւորներին, որ ոչ-ձիաւորներին անցկացնեն միւս ափը": Երեքով աճապարեցինք գինուորների մօտ: Բազրատը տեղ հասնելուն պէս կտրուկ հրամայեց բոլոր ձիաւորներին, որ հետիոտներին անց կացնեն միւս ափը: Վէճը վերջացաւ և մարդիկ կամաց-կամաց անցան գետից:

Երբ Բազրատը կարգադրութիւն էր անում, որտեղից, չիմացանք, լոյս ընկաւ զնդապետ Միրիմանովը, մեծ որսորդական շունն էլ ետևից և իշխանաւորի տոնով գարձաւ մեզ ռուսերէն, թէ՝ ինչո՞ւ էք պանիկա գցում այստեղ, չէ՞ որ հրամայւած է լուռ նահանջել: Ես էլ ասացի. "Պանիկա գցող չկայ, միանգամայն անտեղի է ձեր նկատողութիւնը:"

Միրիմանովը չտաբի պետն էր: Բազրատը, հարցրեց, թէ, որտե՞ղ է Դրօն. պատասխանեց, թէ գալիս են: Բանից դուրս եկաւ, որ մեր չտաբի պետը աճապարել, առաջ է ընկել բանակից և ճամբին մոլորւել է. հետից երևացող գիւղի տների լոյսը նկատելով, եկել, միացել էր մեզ: Երբ բոլորս անցանք միւս ափը, կամաց-կամաց սկսեցինք առաջ ընթանալ: Ճամբին Գնդապետ Միրիմանովը չատ յաճախ իւր շանն էր կանչում: Վահագն Կանայեանը համերաշխութիւնից դուրս գալով, դառնում է գնդապետին՝ պարոն գնդապետ դուք յիշեցնում էիք մեզ, թէ պէտք է լուռ ճամբայ գնալ. դուք ինչու՞ էք խախտում լռութիւնը. չէ՞ք ղգում, որ ձեր շան պատճառով թշնամու ձեռքը կընկնենք :

Հետիոտներից մէկը սկսեց հեգնել. "Մարդը թաչախուստով է կռւի դուրս եկել թշնամու դէմ, որսի չունն էլ հետը, որ թշնամու թաքստոցը գտնի":

Դրոյի տւած ձին թողել էի պրոպագանդիստներին, որ հերթով նստեն բոլորը: Հազիւ հինգ կիլոմետր ճամբայ էինք կտրել, որ վէճի ձայն դիպաւ նահանջողների պոչին գտնւողների ականջին. մէկ էլ դէմս նլաւ Վաղ. Նարինեանը, դպրոցական դասընկերս, դժգոհ տոնով ասաց. "Քո ձին կարող է լուրջ ընդհարման պատճառ դառնալ, չուտ հասիր, վերջ տուր վէճին": Շտապ-շտապ հասանք վիճողներին՝ Վահագն Կանայեանին և Յարութ. Թումանեանին: Ձիուց

իջնել էր Ներսէս Բաբայեանը. երկուսը վիճում էին, թէ առաջ որը նստի: Որպէսզի այլևս վէճ չառաջանայ ընկերների մէջ, ձին տուեցի մեր հին մարտիկներից մէկին, Կոռնիձոր գիւղացի Նիկոլին, որը նահանջում էր իր կնոջ հետ միասին: Ասացի՝ Թող հարսը նստի. ղուք մեղնից առաջ կը հասնէք Քէշիշքէնդ և այնտեղ կը սպասէք ինձ":

"ԵՂԻՇԷԻ ՀՈԳԷՈՐԴԻՆ"՝ ԿՈՌՆԻՁՈՐՑԻ ՆԻԿՈԼԸ

Կոռնիձորցի Նիկոլին Վաղարշակ Նարինեանը մի մակդիր էր աւելացրել՝ "Եղիշէի Հոգէորդին": Պարսկական սահմանադրական կռիւների ժամանակ 1908/09 թ. Ակնցի հին ընկեր Վահան Արամեանի (Սուրէն)[69] հետ միասին կամաւորներ և ռազմամթերք էինք ուղարկում Թաւրիզ: Նիկոլը հազիւ քսանևհինգ տարեկան էր, նոր ամուսնացած, հազիւ մէկ տարի առաջ, որ բուռն ցանկութիւն յայտնեց գնալու Պարսկաստան, միանալու Եփրեմի կամ Քեռու մարտիկներին, և ճամբեցինք, գնաց, տեղ հասաւ, միացաւ Քեռու մարտիկներին, մասնակցեց բոլոր կռիւներին, և երբ ցարական ղօրքը, գնդապետ Սնարսկու հրամանատարութեամբ, անցնում է սահմանը՝ զրաւելու Ատրպատականը, կուսակցութեան որոշմամբ մարտական ուժերի մէկ մասը նահանջում է Հարաւ, իսկ միւսները, վերադարձւում են գաղտնի ճանապարհով իրենց տեղը՝ փոքրիկ խմբերով: Փոքրիկ խմբերից մէկի մէջն է լինում և Նիկոլայի խումբը ձիերով, կտրում-անցնում է Արաքսը, բայց նկատւում է սահմանապահ զինուորներից և կռւի բռնւում. խումբը կարողանում է պաշտպանելով ճողոպրել, իսկ Նիկոլի ձին վիրաւորւած լինելով, նա յետ է ընկնում և ձերբակալւում, տարւում է բանտ: Հրացանաձգութեան ժամանակ մի զինուոր է սպանւում և մի քանի հոգի էլ վիրաւորւում են. ամբողջ մեղքը բարդւում է Նիկոլի վրայ և դատարանի վճռով դատապարտւում է տասը տարւայ տաժանակրութեան ու քշւում Սիբիրի խորքերը:

Փետրուարեան յեղափոխութեան հետևանքով տաժանակրութիւնից աղատւում է չատերի հետ ու վերադառնում է

---

[69] Ձանգեզուր - Ղարաբաղում Սուրէն անուանւել էր յայտնի, գլուխում ունենալով պարսկական անցագիրը, դարաբաղցի Մատթէոս Լոպանեան անուն աղգանունով:
Թէ Նիկոլի և թէ կնոջ ծնողները չունէին մարդիկ էին, Նիկոլի դաստակերտելու հետևանքով չատ ծանր վիճակ է սաեղծւում ծնողների համար: Մէկ-երկու տարի անց, երիտասարդներից մէկը մտադրւում է ամուսնանալ Նիկոլի կնոջ հետ. համաձայն առւական օրէնքի, տաժանակրութեան ենթարկւածի կինը կարող էր ամուսնանալ: Երկու կողմերն էլ համաձայնում են, և Նիկոլի կինը ամուսնանում է երիտասարդի հետ: Նիկոլը տաժանակրութեան մէջ լսում է այդ մասին և ցաւելով հաչտւում կատարւած վաստի հետ, որովհետև իրեն էր համարում պատճառը, որ կինը հարկադրւած է եղել ամուսնանալ մէկ ուրիշի հետ: (Հեղ.)

Հայրենիք, Շուչի, աշխատանքի անցնում և, որոշ ժամանակ անցնելուց յետոյ, ուզում է ամուսնանալ մեկ աղջկայ հետ, որի ծնողները վախճանած լինելով, Հօրեղբօր խնամքին և Հոգատարութեան էր յանձնուած: Տղան և աղջիկը իրարու սիրում են, աղջկայ Հօրեղբայրը դէմ ոչինչ չունի, ուրախ է, որ եղբօր զաւակը կեանքի ընկեր կունենայ, սակայն երբ դիմում են Առաջնորդարան, պսակի համար իրաւունք ստանալու, պարզւում է, որ Նիկոլի կինը առանց ամուսնալուծման է ամուսնացել մեկի հետ, Նիկոլը աղատ չի համարւում կապանքից, պէտք էր դիմել էջմիածին, որ օրինական լուծում տրւի խնդրին: Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան Եպիսկ. Տէր Գէորգեանը, նախկին քահանայ, այրիացած և կուսակրօն զարձած, ասել էր, որ պէտք է սպասել էջմիածնի պատասխանին, որը, ըստ ընկալեալ սովորութեան, ուշանում էր, ամիսներ էր անցել, չէր ստացւում, աղջկայ Հօրեղբայրը դիմեց ինձ, որ աջակցեմ նրանց՝ "խեղճ են, մեկը վաղաժամ ծնողներից զրկւեց, իսկ միւսը տաժանակրութեան մէջ երկար տարիներ կեանք մաշեց, տառապեց, գոնէ այժմ տուն-տեղ լինեն, կեանքը վայելեն", ասում է Հօրեղբայրը, սակայն Առաջնորդը, թէև չատ բարեպաշտ ու բարի մարդ , բայց չի ուզում կանոնի դէմ գնալ:

Աղջկայ Հօրեղբօրն ասացի՝ Հոգ մի արա, Տէր Արիստակէսին կասենք, Կուսանաց վանքում, որտեղ քահանայ է, պսակէ, և ամբողջ պատասխանատուութիւնը կը մնայ կուսակցութեան վրայ:

Տէր Արիստակէսը պսակը կատարում է համաձայն եկեղեցական կանոնադրութեան, ինչպէս պէտք է: "Գաղտնի" այս գործողութիւնը Հէնց յաջորդ օրը յայտնի է դառնում Առաջնորդին, որը թէև Հօրս հետ չատ մօտ բարեկամ էր և Հանդէպ ինձ լաւ վերաբերմունք ունէր, մեծապէս վչտանում և իրեն անյարմար վիճակում է զգում Հոգևոր բարձր իշխանութեան առջև: Երրորդ օրը առաւօտեան առաջնորդարանի ծառան եկաւ, յայտնեց, թէ Սրբազանը ասել է, որ գնամ իր մօտ: Աւելի քան պարզ էր, թէ ինչու էր կանչում Սրբազանը, մանաւանդ որ սա երկրորդ "Հակաօրինական" քայլն էր, որ արել էի:

Գնացի, ներկայացայ Սրբազանին, որը չատ ընկճած ու տառապած դէմք ունէր:

– Եղիչէ, մի՞թէ քեղ վայել է, որ խախտում ես մեր եկեղեցական օրէնքը և ֆրանսիական կարգուկանոն մտցնում մեր մէջ. սա արդէն երկրորդ դէպքն է, որ դու Հակաօրինական և Հակաեկեղեցական գործ ես անել տալիս մեր քահանաներին. կրկնում եմ, մի՞թէ վայելում է քեղ, որպէս աղգային Հասարակական գործչի: Ասա, Հիմա ես ի՞նչ պատասխան տամ էջմիածնին:

– Սրբազան Հայր, դուք ոչ մի մեղք չունէք ո՛չ նախորդ ոչ էլ ներկայի արարքիս Համար, ամբողջ պատասխանատուութիւնը

ընկնում է ինձ վրայ, և ես պատրաստ եմ դատելու որևէ դատապարտում ու կրելու ինձ սահմանած պատիժը, եթէ դատարանը խղճով դատէ և մեղադրէ ինձ:

– Ես զարմանում եմ, թէ ինչպէս դուք, առանց ճնշելու, միջամուխ էք լինում մեր հոգևոր ներքին գործերին և հակականոնադրական քայլեր առնում. դուք ժողովրդին լաւ բան չէք սովորեցնում:

– Սրբազան Հայր, նախորդ տարւայ ամուսնալուծման խնդիրը, ինչպէս գիտէք, երկու տարուց աւելի ձգձգուեց և սկսուել էր նախ քան ձեր այս թեմի առաջնորդի պաշտօնին անցնելը, իսկ այս երկրորդ խնդրի լուծման համար, չորս ամսից աւելի էր, որ մայրիկ սպասում էին պատասխանի, որը չէր ստացւում էջմիածնից, թէև քանի զրուխիններ էի ճամբել այս առթիւ, ուստի ես փաստօրէն ձեզ անել վիճակից ազատել եմ:

– Վերջապէս, սիրելիս, ես ձեր կուսակցական ներքին գործերին միջամուխ լինում ե՞մ, որ դուք մեր գործերին միջամուխ էք լինում:

– Սրբազան Հայր, դէ, դիտէք, որ յեղափոխութիւն է, ամէն բան տակնուվրայ է եղել, մեր հոգևոր բարձր իշխանութիւնն էլ չատ դանդաղ էր չարժւում մինչև այդ, իսկ այժմ առաւել ևս. դանգատւողները մեզ են դիմում, աջակցութիւն խնդրում, և մենք էլ ստիպւած ենք լինում յեղափոխութեան թելադրած ձևով վարուել: Այսուհետև կաշխատենք միջամուխ չլինել և անհանգստութիւն չպատճառել ձեզ:

– Էհ, ի՞նչ ասեմ, գլուխն օրօրելով ասաց վերջին խօսքերը:

Եւ այս միջադէպը առիթ եղաւ Վ. Նարինեանի համար, որ Նիկոլին համարէ իմ որդեգիրը:

1916 թ. ամառը Պետրոգրադից եկայ Շուչի արձակուրդի, Հանգստանալու: Մի օր դնացի օրիորդաց Մարիամեան տարրական դպրոցը. թեմական դպրոցի հին չէնքը առաջնորդարանի երեք յարկանի չէնքի չարունակութիւնն էր, որտեղ էր նաև դպրոցի հոգաբարձութեան գրասենեակը, որում աշխատող քարտուղարի կուսակցական ընկերներից մէկն էր Մարտիրոս Արղումանեանը, որի հետ պիտի միասին մի գործ կարգադրէինք: Երբ ներս մտայ դպրոցի մեծ դարպասից, դէմս ելան հինգ հոգի Խաչէնի Նորագիւղ անւամբ գիւղի բնակիչներից՝ չորս տղամարդ և մի կին:

– Եղիչէ, հէնց ուղում էինք գալ ձեզ մօտ, ասաց Հայրապետ անունով մէկը, որ միւսներից տարէց էր:

– Գործ ունէ՞ք ինձ հետ, հարցրի:

– Այո, այո, պատասխանեցին բոլորը միասին:

–Այդ դէպքում բարձրանանք վերև, ձեր գիւղացի Մարտիրոսի մօտ, գրասենեակում խօսենք: Եւ բարձրացանք երկրորդ յարկը, մտանք գրասենեակ: Մարտիրոսը տեսնելով իր

Համագիւղացիներին, դարձաւ ինձ ժպտալով ու ասաց. "Ուրեմն, գործը հասել է քեզ, հիմա էլ քո օձիքից են բռնել": Ասացի, որ ոչինչ չգիտեմ գործի մասին: Մարտիրոսը պատմեց եղելութիւնը: Հայրապետը և կինը, Այնան, որը ներկայ էր իւր եղբօր հետ միասին, հինգ տարի խաղաղ ու համերաշխ կեանք են ապրել և զաւակ չունենալով միշտ ցաւելով ա՞լս քաշել: Պոկի Ս. Գէորգի[70] համար էլ մատաղ են արել, բաժանել աղքատներին, բայց ցանկութիւնը չի կատարւել, ուստի սկսում են միմեանց մեղադրել. Հայրապետը չըեր է համարում կնոջը, իսկ վերջինս մարդուն՝ անպտուղ: Հայրապետը, որ բուռն ցանկութիւն է ունենում տան ծուխը չմարւելու և սերնդի շարունակութեան համար, առաջարկ է անում կնոջը և վերջինս էլ համաձայնում է, որ մի աղջիկ գտնի, բերի, միասին ապրեն, և եթէ աղջիկը յղիանայ, Այնան վերադառնայ իր հէրանց տունը, իր հետ տանելով իւր բաժինը:

Հայրապետին յաջողւում է վաղաժամ այրիացած մի երիտասարդ կնոջ համոզել ու բերել իր տունը: Իր կնոջ հետ, ըստ պայմանի, քոյր ու եղբայր են: Երկու-երեք ամիս անցած, պարզւում է, որ երկրորդ կինը յղի է արդէն, ուստի համաձայն գրաւոր պայմանի, Այնան պիտի գնա իր հէրանց տուն, եղբօր մօտ, և գնում է:

Թուղթը գրել է կիսագրագէտ Հայրապետը, գիւղական բարբառով և տալիս է ինձ կարդալու. բովանդակութիւնը գրում եմ յիշողութեամբ, որքան հնարաւոր է. "Մենք Հայրապետ Գրիգորեանս և Այնա Գրիգորեանս մեր յօժար կամքով համաձայնւեցինք, որ Հայրապետը մի կնիկ կամ աղջիկ բերի, պահենք, եթէ կնիկը կամ աղջիկը երեխայ ունենայ, կը մնայ տանը, իբրև Հայրապետի կնիկը, իսկ ես կը գնամ հէրանցս տունը և կը տանեմ ինձ հետ բերած բոլոր փալասեղէնը և պղնձեղէնը":

Երկրորդ կինը տղա զաւակ է ունենում, և Հայրապետը ուրախութիւնից ետ-ետ ընկնում էր զգում իրեն, իսկ Այնան պահանջում է, որ Հայրապետը ապահարղան տայ իրեն, համաձայն մեր եկեղեցական օրէնքի: Եւ մարդուկին 30 վերստ հեռու, Նորագիւղից սկսում են յաճախ խմբովին զալ քաղաք, առաջնորդարանի չէնքը մաչելու: Գիւղի քահանան, Տէր Միքայէլ Զաքարեանը, 1900/01 ուսումնական տարւայ թեմական ղպրոցն չրջանաւարտներից էր: Թորգոմի (Թուման Թումեանի) և Մենակի (Առատամեան Գէորգի) յեղափոխական չունչը վայելած մէկը,

[70] Նաչէնի արբանեակներից մէկն է Ս. Գէորգի հինաւուրց վանքը, կառուցած արքաւոյ քարով, Ուլուաթաբ գիւղի անմատոյց վեղարաձիլ լեռան գագաթին, որ համար էլ կոչւում է Պոկի Ս. Գէորգի վանք, որտեղ վարդավառի տօնին ուխտաւորների ահագին բազմութիւն է հաւաքւում գիւղերից: (Հեղ.)

մերժել էր Հայրապետին պսակ կատարել և պաչտօնապէս տեղեկացրել առաջնորդարանին՝ խնդիրը լուծել համաձայն օրէնքի: Բնականաբար, խնդիրը ուղղուել էր էջմիածին, Հոգևոր Խորհրդին, որ լուծում տար, սակայն էջմիածնից պատասխան չէր ստացուում: Ըստ Հայրապետի և միւսների վկայութեան, Տէր Միքայէլն ասել էր, որ եթէ Հոգևոր իշխանութիւնը թոյլատրի, պսակ կը կատարէ, մանաւանդ որ Այնային էլ ուղղող կայ, զաւակներ ունեցող, այրի մէկ մարդ:

Վերջին տարում մի քանի անգամ Վահան Եպիսկոպոսի մօտ են գալիս, խնդրում- դանդաւտում, բայց Եպիսկոպոսը յանդիմանում էր, թէ՝ "Չէ՞ք ամաչում, գետինը չէ՞ք մտնում, որ Աստծոյ հակառակ նման յիմար քայլ էք արել. դուք մեղանչել էք Աստծոյ դէմ ու հակառակ մեր եկեղեցական օրէնքի գործ էք կատարել, անպսակ կեանք վարել. ամօթ չէ՞ք ղգում և համարձակւում էք դանդաւտե՞լ":

Հայրապետը ամէն անգամ ուղել էր առարկել Եպիսկոպոսին և չէր համարձակւել, բայց այս վերջին անգամ, երբ Եպիսկոպոսը գարձեալ և աւելի խիստ յանդիմանում է Հայրապետին, վերջինս, ինչպէս կասեն՝ իրեն հաւաքելով, սրտապնդւելով ասում է՝

– Սրբազան Հայր, ռազի չե՞ս, որ աղզին էլ մի տղայ եմ տւել:

– Դէ, ձայնդ կարիր, անպատկառ, դուրս կորէք այստեղից, բարկացած ասում է Սրբազանը:

Դուրս են գալիս և պատահաբար դէմս ելնում:

– Լաւ, հիմա ի՞նչ պիտի անել. Առաջնորդի հետ առիթ եղել է խօսելու, յայտնեց Մարտիրոսը. նա ոչինչ չի կարող անել, ինչպէս բացատրեց, էջմիածինը պէտք է լուծէ խնդիրը, բայց ձգձգել է, չի լուծում:

Մարտիրոսի քեռին, Ջհանգիրը, մեր համակիրներից, միաժամանակ գիւղի քեոխւան, պատրաստ էր միչտ կուսակցութեան հրահանգները կատարելու: Նորագիւղցի էր նաև Պտկի Ս. Գէորգ Վանքի և Ուլուբաբ գիւղի քահանան, Տէր Դաւիթը, որը չատ համարձակ մարդ էր: Լիժինեան հալածանքների ժամանակ վանքը կասկածանքի ենթարկւած լինելով, խուզարկւում է ոստիկանութեան կողմից, և Տէր Դաւիթը խստիւ բողոքում է:

– Ասում են, որ դուք զէնք էք պահում վանքում, ասում է Թուրք ոստիկանը:

– Այո, վրայ է տալիս քահանան, ոչ միայն զէնքեր, բոմբեր էլ ենք պահում, սա Աստծոյ տունն է, որը կարելի է խուզարկել միայն Թագաւորի գրաւոր հրամանով. Թուղթ ունե՞ք, որ խուզարկում էք:

– Մեզ զաւառապետն է հրամայել, և խուզարկում ենք, ասում է ոստիկանը:

-Դա ընդունելի չէ, Աստծոյ տունը խուզարկելու համար պէտք է թագաւորից գրաւոր հրաման լինի, ասում է Տէր Դաւիթը. ես պիտի զանգատւեմ փոխարքային:

-Գնա, զանգատւիր, մենք մեր պարտականութիւնը կատարեցինք, ասում է ոստիկանը և իւրայինների հետ հեռանում:

Ճամբին պատահելով ծանօթ գիւղացու, պրիստաւը հարց է տալիս քահանայի մասին, թէ ինչ տեսակ մարդ է. գիւղացին պատասխանում է, որ չատ լաւ մարդ է:

- Գժի մէկն է, ասում է ոստիկանը և չարունակում ճամբան:

Մարտիրոսի հարցին, թէ ի՞նչ պիտի անել, հոգևոր բարձր իշխանութիւնը պատասխան չի տալիս. Այնայի եղբայրն էլ պահանջում է Հայրապետից, որ քրոջ ապրուստի մասին հոգայ, քանի որ իր ընտանիքը բազմանդամ է, միջոցները սահմանափակ: Քոյրը պաչտօնապէս հաչււում է Հայրապետի կինը, ապահարզան չի ստացել, կը նչանակէ, Հայրապետը պարտաւոր է իր պաչտօնական կնոջ մասին էլ մտածել:

Այնայի եղբայրը Հայրապետից պահանջում էր, որ նա վճարէր մինչև այն իր արած ծախսի կէսը, հաչւած այն օրից, որ քոյրը եկել է իր մօտ:

Այնայի եղբօրը հարց տւի, եթէ մենք գործին վերահասու լինենք և այնպէս կարգադրենք, որ քրոջը կարողանայ ամուսնացնել էն այրի մարդու հետ և Հայրապետն էլ պսակի ծախսը հոգայ, կը բաւարարւի՞, այլևս ուրիչ պահանջ չի՞ անի: Պատասխանեց, որ դրանով կը գոհանայ, քոյրը մտատանջութիւնից կազատւի:

Մարտիրոսն ու ես որոչեցինք, որ ինքը նամակ գրի իւր քեռուն՝ Ջհանգիրին, որը գործին չատ լաւ տեղեակ է, որպէսզի վերահասու լինի, և ես էլ գրեմ Տէր Դաւթին, որի հետ տարիների մօտ ծանօթ էի Լիժինեան հալածանքների սկսւելուց ի վեր: Քանի որ եկեղեցում հնարաւոր չէր առանց Հոգևոր իշխանութեան թոյլտւութեան պսակ կատարել, Տէր Մինքայէլը, թէկուզ մի քիչ աղատամիտ, ինքը պսակ չէր կատարի և թոյլ չէր տայ ուրիչ քահանայի՝ իր աչքի առջև հակականոնադրական գործ կատարել եկեղեցում. ուստի, ըստ ընդունւած հին սովորութեան, որ թոնրի վրայ կարելի է պսակ կատարել, այդ իմաստով նամակ ենք գրում Տէր Դաւթին և Ջհանգիրին, որ երկու պսակներն էլ կատարեն, և յայտնում ենք, որ ամբողջ պատասխանատւութիւնը վերցնում ենք մեզ վրայ:

Երբ մեր որոչումը յայտնեցինք Հայրապետին ու միւսներին, բոլորը գոհ մնացին, չնորհակալութիւն յայտնեցին և ուրախ-ուրախ

դուրս գնացին՝ իրենց հետ տանելով Տէր Դաւթին ու Ջհանգիրին ուղղուած նամակները:

Գիւղացիների դուրս գնալուց յետոյ Մարտիրոսն ասաց. " Էս բանը պարզ է, զաղտնի չի մնալու, վաղը-միւս օրը եպիսկոպոսին տեղեկութիւն կը հասնի, գործը կը բացւի, ի հարկէ. ի՞նչ պատասխան պիտի տանք: Հաւանօրէն եպիսկոպոսը կը դանգատւի կուսակցութեանը:

- Էս գլխից դու տէր չես կանգնի գործին, որովհետև ընտանիքի գլուխ ես, երեխայ ունես, իսկ ես ազատ քաղաքացի եմ. դու պաշտօնեայ ես, ի հարկէ անյարմար է, որ քեզ խօսեցնեն կամ խօսեն քո հասցէին. թող որ պատասխանատուութիւնը ընկնի իմ ուսերին, ոչ կուսակցութիւնն է ինձ կախելու և ոչ էլ Առաջնորդը: Հէնց այսօր ընկերներին կը յայտնենք մեր կատարած գործի մասին. դու միայն վկայ ես եղել, ուրիշ ոչինչ:

- Բայց տափը մտածները, մարդ ու կնիկ, մաղալու պայմանաթուղթ էին կազմել, ասաց Մարտիրոսը և անգիր արտասանեց Հայրապետի և Այնայի պայմանագրի բովանդակութիւնը, քահ-քահ ծիծաղելով: Մարտիրոսը պայմանագրի բովանդակութիւնը պատմում է ընկերներին, և բերնէբերան տարածւում է աւելի լայն շրջանակում:

Օգոստոսի կէսերն էր, Վահան Եպիսկոպոսը արդէն տեղեկութիւն էր ստացել կատարւած գործի մասին և կանչում է ինձ բացատրութեան: Հէնց ներս մտայ՝ "Աստուած պահապան, Սրբազան Հայր" ասացի և նստեցի:

- Աստուած օգնական, ասաց ու չարունակեց, Եղիշէ, ես քեզնից խորապէս վչտացած եմ, դու մեր եկեղեցու դարաւոր կանոնն ես խախտում և փրանսիական կարգեր մտցնում, տգէտ գիւղացիներին օրինակ տալիս, որ անիրաւ գործեր կատարեն: Նորագիւղացիների կատարած գործի համար ես պատասխանատուութեան կենթարկէի քահանային և պիտի հրաւիրեմ Հայրապետ Մուսայէլեանին ու բողոքեմ կուսակցութեանը, որ միջամուխ էք լինում մեր գործերին, որպիսի իրաւունք չունէք դուք: Ես դժգոհ եմ քեզնից և խորապէս վչտացած: Հայրդ՝ Իվանբէկը, իմ տասնեակ տարիների լաւ բարեկամն է, և ինձ ցաւ է պատճառում, որ ինձ վչտացնողը իմ լաւ բարեկամի որդին է:

- Սրբազան Հայր, դուք ի զուր էք վչտանում. ձեզ թերևս մտահոգութիւն է պատճառում այն, որ ձեր իշխանութեան ենթակայ չրջանում ձեղնից անկախ, ասենք, հակաօրինական մի գործ է կատարւել, սակայն դուք նչանակեցի չափ պատասխանատու չէք:

- Այո, ճիչտ է, ինձնից միանգամայն անկախ կատարւած գործ է, որի համար ես պատասխանատու չեմ քնաւ, սակայն, ինչպէս ասացի, խորապէս վչտացած եմ. դու ազգային հոգևոր

դպրոցում կրթուած և աղգային հասարակական գործիչ լինելով, փոխանակ աշխատելու, որ ամուր ու հաստատ մնան մեր դարաւոր կարգ ու կանոնները, խախտել ես, օրինակ տալով ուրիշներին:

– Սրբազան Հայր, ընդունենք, որ ես մեղաւոր եմ, սակայն ինչո՞վ բացատրել հոգևոր բարձր իշխանութեան այն անտարբեր վերաբերմունքը, որ ունի հանդէպ զանգատաւորների և խնդրարկուների, որոնց տարիներով սպասեցնել է տալիս: Մարդը, իր օրինական կնոջ համաձայնութեամբ, ուրիշ մէկ կին է բերել, նրանից զաւակ ունեցել և՝ ըստ պայմանագրի, ճամբել հէրանց տուն օրինական կնոջը, որը ապահարդան է պահանջում, արդէն երրորդ տարին է, հոգևոր իշխանութիւնը չի լուծում խնդիրը, թերևս դժւարանում է, ուստի ներկայիս խնդրի լուծումը հնչտացել է, կիսով չափ կատարւած լինելով, մնում է, որ հոգևոր բարձր իշխանութիւնը օրինական համարէ երկու պսակը և միաժամանակ ապահարդանի վճիռ արձակէ, օրինական կնոջը բաւարարած լինելու համար:

– Պրծաւ, գնաց, ասաց Սրբազանը, օրօրելով գլուխը, վաղը մէկ ուրիշն էլ քեզ նման հակաօրինական քայլ կանի ու կ՛ասի, թէ հոգևոր իշխանութեան գործն է հնչտացրել, եղա՞ւ:

Սրբազանը, ի հարկէ, չի բաւարարւում իմ տւած բացատրութեամբ, հրաւիրում է իր մօտ Հայրապետ Մուսայէլեանին, դաշնակցութեան Ղարաբաղի կազմակերպութեան արժանաւոր պարագլխին և բողոքում իմ արարքի առթիւ: Հայրապետին արդէն ծանօթ էր խնդիրը, գիտէր կատարւած գործի մասին, իւր անուշ բնաւորութեամբ մեծ յարգանք էր վայելում քաղաքում, ինչպէս կասեն՝ գործը անուշի է կապում և յայտնում, որ առաջիկային նման բան տեղի չի ունենայ: Սրբազանը, սակայն, չի մոռանում, երբ Հայրս այցելութեամբ լինում է մօտը, հօրս էլ է գանգատւում: Հայրս տուն գալով, աւետարան կարդաց գլխիս, թէ ինչու վչտացրել եմ ծերունուն, որը բարի, անբասիր վարքի տէր և նկեղեցուն նւիրւած մարդ է:

– Խեղճերը, երրորդ տարին է, առաջնորդարանի չեմքն էին մաշում և պատասխան չէին ստանում, ճարահատւել մեզ են գիմում, օգնութիւն խնդրում, և մենք էլ օգնեցինք. . . .

Շուտով սկսւեց 1916/17 ուսումնական տարին. գնացի Պետրոգրադ, տեղի ունեցաւ Փետրւարեան յեղափոխութիւնը և, տարին չլրացած, Նիկոլի ամուսնութեան խնդիրը կարգադրւեց, դժգոհութիւն պատճառելով Սրբազանին, բայց, այնուամենայնիւ, նա իւր բարի բնաւորութեամբ, վերաբերմունքը չփոխեց մեր հանդէպ միչտ, երբ անհրաժեչտ էր լինում, մեր ցանկութեամբ, որպէս ժողովրդի ներկայացուցիչ, օտարների մօտ իր որոչ պարտականութիւնը կատարելու, երբէք չէր մերժում, սիրով կատարում էր:

ՆԱՀԱՆՋ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Նահանջի ճամբին կրկին ու կրկին յիշեցի Ղարաբաղի անփառունակ ապստամբութիւնը, որի հետևանքը եղաւ Շուշու հայկական մասի ծայրէծայր հրդեհի ճարակ դառնալը ու հիմնայատակ կործանուելը և կրկին պատկերացրի, թէ ինչպէս է նահատակուել այն բարի ծերունին, այրուելով հրդեհուած հինաւուրց առաջնորդարանի չէնքում, որտեղ իր կացարանն էր:

Եւ մի՞թէ կարելի է մոռանալ, չյիշել: Յարգանք իր և իրեն հետ միաժամանակ նահատակուած հաղարաւոր անմեղ զոհերի յիշատակին:

Նահանջողներիս երթը դէպի վեր էր և թէև զառիվերը դիք չէր, բայց սնունդի պակասութեան պատճառով, պրոպագանդիստներս մի որոշ տարածութիւն կտրելուց յետոյ, դժուարութեամբ էինք քայլում: Վերջապէս, երբ հասանք ամենաբարձր տեղը, որտեղից պիտի իջնէինք ձորը, որով հոսում է արևելեան Արփա (Արփի) գետը և հոսանքն ի վար չարունակէինք մեր ճամբան, բոլորս խիստ յոգնած լինելով, գետնին փուելն ու քուն մտնելը մէկ եղաւ: Ամբողջ ճամբան,տեղի ունեցած փոքր միջադէպից յետոյ, լուռումունջ կտրեցինք, կտրած բանակից, ու չզիտէինք, թէ որ ճամբով է նահանջում զօրքը: Ինչպէս կասեն՝ մեռելի պէս քնեցինք և լոյսը բացուելուն, մեր աչքերն էլ բացուեցին: Նայեցինք մեր չուրջը և ի՞նչ տեսնենք, մեր մէկ կողմին, մօտ երեք հարիւր քայլ մեզնից հեռու, Դրօն և Կուռօն են իրենց ձիաւորներով միասին, միւս կողմում զնդապետ Թարվերգեանը իր թնդանօթներով և հետևակ զինուորներով ու մի քիչ աւելի բարձր տեղ՝ Պօղոսը իր սիսիանցի ձիաւորներով:

Դրօն հեռուից ձեռքով նչան անելով, կանչեց, գնացի մօտը: Հարցրեց, թէ ի՞նչ վիճակում են տղաները: Ասացի, որ քաղցից են նեղուում: "Մենք էլ նոյն վիճակում ենք ասաց: Ոչինչ, մի քիչ յետոյ կը հասնենք Գնդեվաղ գիւղը, և կը կարգադրւի այդ մասին: Եւ իրօք, հաղիւ հինգ կիլոմետր էր մնացել, որ հասնէինք Գնդեվաղ, որ յայտնի է իր Նորավանքով:

Օգոստոսի 8-ին դէպի Գնդեվաղ ճամբան, որը զառիվայր էր, հեչտութեամբ կտրեցինք: Դրօն արդէն կանխաւ կարգադրել էր, գիւղացիներից հաց ստացանք պրոպագանդիստներս, մի մասը կերանք, մի մասը վերցրինք մեզ հետ՝ ճամբին ուտելու, մինչև հասնենք Մալիչկա, որտեղից սկսած այլևս կը հեչտանար սնունդ ստանալը, մեր կարծիքով:

Գնդևվաղից Պօղոսն իւր 240 ձիաւոր սիսիանցիներով գնաց Թրքական աւերակ Ջուլ գիւղը, որտեղ պիտի ապրէին որպէս Դարալագեազի զօրարաժնի մէկ մասը և հսկէին այն գիծը, որտեղով Նախիջևանի Թուրքերը կարող էին կապւել Հաջի Սամլուի քրդերի հետ:

Պրոպագանդիստներս էլ կամաց-կամաց, ղրուցելով իջանք ձորը, Արփա գետն անցնելով, ուղղւեցինք դէպի Մալիչկա գիւղը: Երբ հասանք գետին, արևն արդէն բաւական բարձրացած էր, կէսօրւայ մօտ լինելով. ճամբին չոգից այնքան էինք նեղւել, որ առանց կօշիկներ հանելու մտանք գետը, որը յորդ չէր, որով կարելի էր անցնել: Գետի ևրկայնքին վերուվար քայլելով, բաւական զովուԹիւն զգալով, դուրս եկանք ջրից և ուղղւեցինք դէպի Մալիչկա: Արևն այնքան տաքացել էր, որ ջրից դուրս գալով, չատ չանցած, նորից քրտինքի մէջ կորանք, և երբ հասանք ևրկրաչարժից հիմնայատակ եղած Մոզ քաղաքին, ուր Դելիկ Թափայից[71] ժայռքած լաւայից բաւական տարածուԹեան վրայ կուտակներ էին կազմւած, որոնց չւաքում պատսպարւեցինք, հանգստացանք, ապա ևրեկոյեան ղէմ հասանք Մալիչկա:

Մալիչկայում ծանօԹ էի նախորդ տարւանից տեղացի ընկեր Դոկտոր Արա Տէր Առաքելեանի հօրաքրոջ տղայի՝ Արշակ Սարգսեանի հետ, որին դիմեցի, որ բարի գտնւի, հոգայ մեր մասին: Արշակը գիւղական դպրոցում գրագէտ դարձած և գիւղի գիտակից, աղդեցիկ մարդկանցից մէկն էր, դաշնակցական: 1905-06 Թ.Թ. Հայ-Թրքական ընդհարումների օրերին, Հաջի Կոտոյի և Առիւծ Աւազի հետ միասին մասնակցած է բոլոր ինքնապաշտպանական կռիւներին և յաճախ կը խօսէր ու կը պատմէր նրանց մասին, ըստ արժանւոյն գնահատելով նրանց, որպէս քաջ մարդկանց: Արշակը գինւորական ծառայուԹիւն էր անցած և ենԹասպայի աստիճան ստացած:

Արշակը, որ պարէտի ղեր էր կատարում, անմիջապէս կանչեց գղիրին և բոլոր ընկերներին բաժանեց տների վրայ, իսկ ինձ էլ առաւ իրենց մօտ: Արշակը հետաքրքրւում էր Զանգեզուրում տեղի ունեցած կռիւներով, և ես էլ պատմում էի գիտեցածս:

– Գիտէ՞ք, երբ դուք պիտի անցնէիք Զանգեզուր, ռուսները ձեղնից չուտ արդէն հասել էին Նախիջևան: Արդեօ՞ք Դրօն տեղեկուԹիւն ունէր, որ Թիկունքի կողմից վտանգ էր սպասում, հարցնում է Արշակը:

– Ի հարկէ, տեղեկուԹիւն ունէր և հակառակ էր սահմանափակ ուժերով բոլշևիկների ղէմ գնալուն, չտարը իր

---

[71] Դելիկ Թափա, ՀուրքերէՀն նշանակում է դիժ լեռ, որը կազմւել էր դուրս ժայռքած լաւայից՝ լեռան Հաւելի ճիչտ՝ բլուրի) լայնանիստ դագաԹին վրայ լիճ գոյացնելով: (Հեղ.)

խոստացած օգնական զօրամասը չուղարկեց և Զանգեզուրը զրաւելու հրամանը տուաւ. Դրօն արչաւանքի պատասխանատուութիւնը չտարբի վրայ թողնելով, յարձակում գործեց:

– Ինչու՞ չթողին զրաւէր Նախիջևանը և Օրդուբադը, իրենց չրջաններով հանդերձ, որոնք բոլորովին լքած էին թուրքերի կողմից, ապա յարձակում գործէր Զանգեզուրի վրայ և, ամենայն հաւանականութեամբ, Նախիջևան անցած ռուսները զէրի կընկնէին, չէին դիմադրի, ահագին տարածութեամբ կտրած լինելով իրենց զլխաւոր ուժերից: Մախլաս, Աստաձ վերջը բարին կատարէ:

Օգոստոսի 9-ին Մալիչկայից գնացինք Քէչիչքէնդ, Դարալագեազի կենտրոնական գիւղը, որտեղ կենտրոնացել էին Զանգեզուրից զաղթած բաւական թւով ընտանիքներ: Պրոպագանդիստներիս տեղաւորեցին փոստ-հեռագրատան սենեակներում: Գերասիմը հրաւիրեց ինձ իր մօտ, մինչև Երևան վերադառնալս միասին աշխատելու: Համաձայնեցի, և ապրում էինք միասին:

Օգոստոսի 12-ին Վարչապետ Համօ Օհանջանեանից հեռագիր ստացանք, որ Ղարաբաղի համար ուղարկուած կտորեղէնը վաճառենք Դարալագեազի գիւղացիներին ու լուծարենք պահեստը: Գերասիմը խնդրեց, որ գործը ես ստանձնեմ. ինքը չարունակ զաւառապետի, եպօն Յովհաննէսի հետ զրաղուած է վարչական զործերով, ի վիճակի չէ զրաղելու պահեստի լուծարքով: Ես համաձայնեցի պայմանաւ, որ նախ ունենամ մի զործակատար, որը աշխատի պահեստում ռոճիկով, կտորները արշինով չափի, կտրի ըստ գնորդի պատուէրի, որովհետև արշին բանեցնել չգիտեմ և երկրորդ, առանձին տետրակում յիշատակի ամէն օր, թէ ում քանի արշին չիթի, քանի տուփ խոտացած կաթի ու քանի կտոր սապոն է ծախուած և նշանակել գումարները և երրորդ՝ ամէն օր Գերասիմը ծախուած ապրանքի գումարը ստանայ և տետրակում ստորագրէ:

Գերասիմը համաձայնեց, և երբ զործի անցայ, ուզեցի իմանալ պահեստում եղած ապրանքի քանակական հաչիւը, պարզուեց, որ Երևանից հաչիւ չի ուղարկուած ապրանքի հետ: Երբ ստացել է ապրանքը, տեղաւորել է զիւղի կենտրոնական մասի քարակուփ տներից մէկում, ամուր փակել և կնքել:

Վաղարչակ Նարինեանի մեծ եղբայր Գրիչան կնոջ հետ Գորիսից զաղթել էր նահանջող զօրքի հետ ու հասել Քէչիչքէնդ: Նա Բաքւում և Խարկովում ծառայած լինելով առևտրական հաստատութիւններում, որպէս զործակատար, որոշեցինք նրան պաչտօնի հրաւիրել:

Օգոստոս, 15-ին ընդունեցի Ղարաբաղի կաթողիկէի պահեստը: Գերասիմն ու Եապօնը երբ պահեստի բանալիները յանձնեցին ինձ, հարցրի. "Հիմա գիտե՞ք, հասկանու՞մ էք, թէ ինչ ենք անում":

-Առանձին բան չկայ հասկանալու, վրայ բերեց Գերասիմը, կառավարութիւնը կաթողիկէն ուղարկել էր որոշ նպատակով, չի յաջողւել ծառայեցնել իր նպատակին, ուստի կարգադրում է ապրանքը ծախել, պահեստը լուծարքի ենթարկել:

– Դա գործի տեխնիկական կողմն է, ասացի, երեք լիկվիդատորներս՝ Զանգեզուր-ղարաբաղցիներ, Ղարաբաղի պահեստը լիկվիդացիա անելով, կարծես Զանգեզուր-Ղարաբաղի հարցն էլ ենք լիկվիդացիա անում. սա գործի միւս կողմն է:

– Ֆո մէջ արդէն յուսահատութիւնն է խօսում, ասաց Գերասիմը:

– Յուսահատութեան բան չկայ, ասացի, իմ տեսածիցս եմ խօսում. Զանգեզուր-Ղարաբաղի հարցի առնչութեամբ վերյիշիր տեղի ունեցած բոլոր դէպքերն ու երևոյթները, մանաւանդ քո և Լևոն Զաւարեանի՝ Ղարաբաղից աքսորւելուց ի վեր, մինչև այսօր:

Օգոստոսի 16-ին պրոպագանդիստները պատրաստութեան մէջ էին՝ վերադառնալու Երևան: Գերասիմը մէկ-երկուսի հետ խօսել էր, որ մնային Դարալագեաղում աշխատելու, չէին համաձայնւել. բոլորին հրաւիրում է ժողովի, թերևս յաջողւէր ոմանց պահել: Բոլոր ընկերները ներկայ էին, Գերասիմը պատմում է, որ Փետրուարեան ապստամբութիւնից յետոյ կարճ ժամանակով մի քանի անգամ պրոպագանդիստներ եղել են Դարալագեաղում, չրջել գիւղերում ու վերադարձել, և տևական կազմակերպութիւն չի ստեղծւել, ուստի առաջարկում է ընկերներին մնալ, ըստ գիւղախմբերի կազմակերպել գիւղացիներին, չրջանային ենթակոմիտէներ ստեղծել և վերջում ներկայացուցչական ժողով հրաւիրել՝ գաւառական կոմիտէ ստեղծելու: Ուսանող ընկերները պատճառաբանում են, որ ուսումնական տարին չուտով կը սկսւի, չեն կարող մնալ. իսկ մի մասն էլ, մասամբ անյաջող արչաւանքի տպաւորութեան տակ և մասամբ ուտեստ ձեռք բերելու դժւարութիւնը նկատի ունենալով, չեն ուզում մնալ, ժողովուրդը ցամաք հաց անգամ չի տալիս. սոված փորով չեն կարող աշխատել:

Ես էլ Գերասիմի առաջարկը պաշտպանելով, ջանացի համոզել ընկերներին, որ մնան. արդիւնք չունեցաւ: Ընկերներից միայն Բախչի Հասան-Ջալալեանը մնաց աշխատելու: Մնացել էր նաև Ներսէս Բաբայեանը. հիւանդութեան, մալարիայով վարակւած լինելու պատճառով, պառկած էր հիւանդանոցում: Կասկածից դուրս էր, ի հարկէ, որ արչաւանքի անյաջողութիւնը մեծապէս աղդել էր ընկերների վրայ, և նրանք ընկճւած տրամադրութեամբ

ճամբայ ընկան ոտով Արփա գիւղը, որ այնտեղից Հասնեն Բաչնորաչէն՝ երկաթուղով գնալու Երևան:

Օգոստոսի 17-ին ապրում էինք Գերասիմն ու ես տէրտէրենց տանը. երեք եղբայրները, հին նահապետական կեանքով ապրող մարդիկ էին. երեքն էլ ամուսնացած, երեքն էլ գինւորական ծառայութիւն արած մարդիկ: Մեծը Հայկն էր, բնաւորութեամբ խաղաղ. եկեղեցում տիրացուութիւն կանէր: Բաւական յարգւած էր գիւղացիների կողմից. եղբայրներն էլ, որպէս իրենցից մեծի, պատիւը կը պահէին վայել ձևով, տան հարսներն էլ չատ սիրով էին: Փոքր եղբայրները յաճախ Հայկին չէին թողնի դաչտը գնալ աչխատանքի, թէև աչխատասիրութեամբ իրենցից յետ չէր մնում: Ծառայ չունէին, իրենք էին ամէն աչխատանք կատարում: Իսկական աչխատաւորական ընտանիք էր, և Հայկը տանը պարապ չէր մնում, չատ գործեր կան անելու, երկրագործական գործիքները նորոգելու, գոմը մաքրելու, տան քանւած մասերը նորոգելու, փայտ ջարդելու, թոնիր վառելու համար:

Մեր սենեակը թէև տանը, կպած, բայց առանձին էր չինւած, զանազան գործիքների պահեստանոցի վրայ, առանձին մուտքով: Բակից բարձրացող 5-6 ոտք քարակոփ աստիճաններով: Ճաչից յետոյ էր, Հայկը բակում ինչ-որ բան էր նորոգում, ես աստիճանների վերևը, հարթակին, աթոռին նստած Երևանի "Յառաջ" թերթն էի կարդում: Մէկ էլ տեսայ, մի երիտասարդ գիւղացու հետ ներս մտաւ Յակոբ Տէրունին ու բարկացած խոյացաւ Հայկի վրայ:

– Ինչու՞ մինչև այժմ ձիերը չէք բերում նչանակւած տեղը:

– Ի՞նչ ձիերի մասին էք ասում, պարոն, հարցնում է Հայկը:

– Դուք ձեր երկու ձին պիտի բերէիք Վասիլենց մօտ, որտեղ մենք իջևանել ենք, պէտք է գնանք Բայազէտ, և արդէն երեք ժամ է սպասում ենք. դուք ասել էք ձիերը Հանդումն են, մարդ էք ուղարկել, որ բերեն, արդէն մթնելու վրայ է. ե՞րբ պիտի բերեն ձիերը:

– Պարոն, դուք երևի սխալւում էք, կամ ձեզ սխալ են ասել:

– Սա տէրտէրենց տունը չէ՞, դուք տէրտէրենցից չէ՞ք:

– Այո, սա տէրտէրենց տունն է, բայց տէրտէրենցից միայն ես չեմ, ուրիչներն էլ կան, իմացէք, տեսէք տէրտէրենցից որին են ասել, որ ձի տայ ձեղ:

– Տօ, ի՞նչ տեսակ ժողովուրդ էք, խոստացել էք վարձով ձի տալ մինչև Ներքին Ղարաննուխ, հիմա էլ ուղում էք փախուստ տալ, այս երիտասարդին քեօխա Ստեփանն ասաց, որ ինձ բերի ձեր տուն, այսինքն՝ տէրտէրենց տուն:

– Պարոն, ես ասում եմ, տէրտէրենք չատուր են, հարցրէք, ո՞ր մէկն է խոստացել ձի տալ վարձու. ինձ ոչինչ չի ասւած և վարձու տալու էլ ձի չունեմ:

– Մարդ ուղղակի չչմում է. տարօրինակ մարդիկ են այստեղի մարդիկ. երկու օր սրան-նրան խնդրելով՝ աղաչելով վարձու ձի ենք ուզում, և երկու օր խաղացնելուց յետոյ այսպէս են վարւում մարդկանց հետ. սա խայտառակութիւն է և ղլւանք է պատճառում. այնպէս են անում, որ մարդ ուզում է գնալ Աղրբէջանի հպատակ դառնալ, հեռանալ այսպիսի ժողովրդից:

Ես չէի միջամտում Հայկի և Տէրունու փոխատացութեան. թերթը կարդում էի մեքենայաբար, առանց հասկանալու կարդացածս. Տէրունու վերջին խօսքերը թէև արդիւնք էին ջղագրգռութեան, այնուամենայնիւ, վատ տպաւորութիւն թողին վրաս. ցնցւեցի, ուստի չրջւեցի դէպի Յակորը և բարկացած ասացի՝ "ի՞նչ ես այդ մարդու օձիքից բռնել, բաց չես թողնում և տակից-գլխից դուրս ես տալիս". այս խօսքերն ասելով, անսպասելիօրէն աթոռը ծռւեց, հարթակը խորթ ու բորթ լինելու պատճառով, և ես գլորւեցի ցած, գլուխս կպաւ քարի, ճնշւեց, և արիւնը սկսեց առատօրէն հոսել: Հայկը անմիջապէս վազեց հիւանդանոց, բժիշկ Արային յայտնելու, բայց բժիշկը գնացել էր Գնիչիկ գիւղը, հիւանդ տեսնելու, ուստի ֆելդշէր Արամայիսը վազելվազ գալիս է անհրաժեշտ պարագաներով, վէրքը կապելու, իսկ մինչև Արամայիսի գալը Տէրունին խպաո մոռանալով ձիու պատմութիւնը, ղբաղւում է գլխիս վէրքով, բամբակ դնելով ու փոխելով:

– Այ տնաչէն, լուռ քեզ համար թերթ էիր կարդում, ի՞նչ պէտք ունէիր միջամտելու մեր ղաւղակարանութեանը. եթէ միջամտած չլինէիր, ի հարկէ չէիր ընկնի:

– Եթէ յիմար բան չասէիր, երբէք չպիտի միջամտէի: Գաւառական կուսակցական գործիչ ես և վարձու ձի չգտնելու հետևանքով ուղում ես Աղրբէջանի հպատակ դառնալ:

– Խօսք ա էլի, ասացի, ես իսօ Աղրբէջանի հպատակ դարձողը չեմ:

– Նման խօսք, թէկուզ հանաքով, քեզ պէս մարդու չի պատչաճում ասել:

Արամայիսը եկաւ, մեր փոխատացութիւնը ընդմիջւեց և ինչ որ պէտք էր, արւեց, բինտով վէրքը կապեց, ինձ էլ պառկեցրեց մահճակալի վրայ, ապա Հայկի ու Յակորի հետ միասին դուրս գնացին:

Գերասիմը տանը չէր, գաւառական կոմիսարիատում առանձին սննեակում լսում էր զանազան գիւղերից եկած մարդկանց զանգատներն ու խնդիրները: Առաւօտեան ութից մինչև 1-ը և 3-ից մինչև 6-ը լինում էր կոմիսարիատում: Երբ երեկոյեան եկաւ, ներս մտաւ ու տեսաւ ինձ գլուխս կապած ու պառկած, զարմացած ու անակնկալի եկած հարցրեց. "Այ մարդ, ի՞նչ է պատահել:"

– Ոչինչ, ասացի, աղզի համար արիւն ենք թափել:

– Դէ լաւ, հանաքը մի կողմ, պատմիր, չուտ արա:

Գևրասիմին պատմեցի եղելութիւնը, երբ վերջացրի, պոռթկաց. "Անիծւի Յակոբ Տէրունին: Երեկ չէ, անցեալ օրը եկել էր կոմիսարիատ և մարդկանց մօտ խնդրում էր, որ իրա համար երկու ձի վարձեմ. կարճ կտրեցի, ասացի՝ դիմիր գիւղի քեօխւային, ես քեօխւա չեմ. գլուխը կախեց, դուրս եկաւ:

– Զարմանալի մտայնութիւն և հոգեբանութիւն ունեն մեր գաւառական որոշ տիպի գործիչները: Ով որ աղդի համար մի մսխալի ծանրութեամբ գործ է արել, փիթերով գործ արածի արքով է խօսում, դժգոհում ժողովրդից: Յակոբ Տէրունու կեցւածքը Հայկի հետ խօսելիս ընաւ հաճելի չէր: Հայկից վարձու ձի տալու խոստում չէր առնւած, միանգամայն անտեղեակ է խնդրին, և նման մի չնչին բանի համար մեղադրել ժողովրդին, մանաւանդ Դարալագեազի ժողովրդին, որ Զանգեղուրի ինքնապաշտպանութեան համար չատ յաճախ զրաստի դեր է կատարել: Ղարաննուվախց Սէլիմի սարահարթով, նոյնիսկ ձմռան ցուրտ օրերին, չալակով ռազմամթերք է փոխադրել: Զափաղանց բարձր պիտի գնահատել Դարալագեազի ժողովրդին և մեծապէս չնորհակալ լինել, ոչ թէ դժգոհութիւն յայտնել:

– Հա, չմոռանամ ասել, որ Յովհաննէսը պահեստի լիկվիդացիայի մասին անհրաժեշտ յայտարարութիւնը ճամբել է բոլոր գիւղերին, երեք մինչև վաղը ամենահեռաւոր գիւղերը կը հասնեն յայտարարութիւնները:

– Գևրասիմ, մի բան չորոշեցինք, թէ իւրաքանչիւր գիւղացու քանի արչին կտոր կարող ենք բաց թողնել. պէտք է որոշենք առաւելագոյնը,. այլապէս մէկը կուզենայ 100 արչին, որ տանի, չարաշահութիւն անի:

– Կարծում եմ, իւրաքանչիւրին առաւելագոյնը քսան արչին պիտի բաց թողնել:

– Ես էլ նոյն կարծիքի եմ, և ինչպէս որոշւած է, ամսի 28-ից գործի կանցնենք:

Օգոստոսի 18-ին Գևրասիմը գնացել էր կոմիսարիատ, մենակ նստած բակում, պատի չւաքում, աչքերս յառած Հորիզոնի եղրի լեռներին, խորասուզւել էի տխուր մտքերի մէջ:

ՄԵՐ ՍԽԱԼՆԵՐԸ

Ապա մե՞ր գործած սխալները: Մենք մեր յոյսը դրել ենք մեր մեծ դաչնակիցների վրայ, որ արդարօրէն պիտի լուծեն մեր դատը, տաճկահայոց հողերը պիտի տան մեզ և Զանգեղուր-Ղարաբաղից պիտի ժողովուրդ տեղահան աննենք , տաննենք ամայացած մեր հողերը չէնացնելու, ինչպէս Ռուբէնն էր ասում ինձ նախորդ տարին: Եւ միայն Ռուբէնը չէր այդպէս մտածողը, ուրիշներն էլ կային

այդպէս մտածողներ՝ սիւնեցիներ: Մենք այնքան էինք համոզուած, որ արդար լուծում պիտի տրւի մեր դատին, որ անպայման տաճկահայերի հողերը պիտի կցւեն Հայաստանին, որ այժմեանից տաճկահայոց ընդունակ ընկերների, նահանգապետի, գաւառապետի, միլիցիապետի պաշտօններ էին տալիս, որ սովորեն և երկիր մտնելուց պատրաստի վարչական կադր ունենանք:

Ապա պատկերանում է աչքիս Շուչին երեսունևհինգ հոգով զրաւելու տղայական անմիտ փորձը և արդիւնքը . . .

Յիշում եմ, նախ՝ Նիկոլ Աղբալեանի պայծառատեսութիւնը երեք անգամ կրկնած նախազգացումի և ղգաստացման խօսքը մեր կուսակցական խորհրդաժողովներին, Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ: Նոյն իմաստուն խօսքը 1917 թ. դեկտեմբերին տեղի ունեցած խորհրդաժողովին: Արդի՞նքը, ոչինչ:

Յիշում եմ նաև Յովհաննէս Քաջազնունու նոյնպիսի պայծառատեսութիւնը:

Հաղարաւոր ամէն հասակի և սեռի մարդիկ ջարդուեցին ու կոտորուեցին անմիտ քեալլագեօղների նամարդութեան հետևանքով:

Այդ սպանդին հաղարաւորների հետ զոհ գնացին և իմ ծնողները, որոնց, որպէս զաւակ, մեկ կոպեկի չափ օգտակար չեմ եղած, ընդհակառակը, միշտ տուժել են իմ պատճառով: Դուրսը, աղատ եղած ժամանակ, զաւազրական աչխատանքների և Լիժինեան հալածանքների ընթացքին, ոստիկանական հսկողութեան ենթակայ լինելով, յաճախ անակնկալօրէն խուզարկութեան կենթարկւէր մեր տունը, որի հետևանքով անհանգիստ վիճակ կապրէին ծնողներս, իսկ երբ բանտ նետուեցի, խեղճ հայրս, պետական պաշտօնեայ լինելով, առանց կողմնակի ամենաղօյդն բարոյական աջակցութեան, դէսուդէն կը նետէր իրեն, և չնորհիւ բարձր պաշտօնեաների սիրալիր ու բարի վերաբերմունքին, կը կարողանար ինձ աղատել բանտից ու սպառնացող խիստ ծանր պատիժը փոխարինել տալ թեթև պատիժով, աղատ աքսորով, կովկասեան սահմաններից դուրս և բանտում եղածս ժամանակ էլ՝ չարունակ այցելութեամբ ծխախոտի և այլ կարիքներս հոգալով: Եւ որպիսի՛ տարբերութիւն ցարական և բոլշևիկեան բռնատիրութեանց միջև: Ցարական կառավարութեան օրօք զաւակի գործած յանցանքի համար ծնողները պատասխանատու չէին, ինչպէս և հօր գործած յանցանքի համար պատասխանատու չէր ընտանիքի որևէ անդամ: Մինչդեռ բոլշևիկեան օրէնքով ընտանիքի մեկ անդամի գործած չակերտաւոր յանցանքի համար անգամ ամբողջ ընտանիքը եթէ չի պատժւում, խիստ հսկողութեան տակ է առնւում:

Այո, անհերքելի և անժխտելի փաստ է, որ ծնողներիս մէկ կոպէկի չափ օգտակար չեմ եղել, ընդհակառակը, եղել եմ չարունակ վնաս պատճառողի դերում: Երկրում, որպէս կուսակցական գործիչ, ինչպէս չատերը, ես էլ կուսակցութիւնից գոյապրուստ երբեք չեմ ստացել. հայրս էր իմ բոլոր ծախսերը հոգացողը:

Հայրս կասէր՝ "հակառակ քո ցանկութեան, քեզ մտցրի աղգային դպրոց և անդիտակցաբար պատրաստեցի քեզ գնալու այն համբով, որ ընտրել ես, սակայն մի առ ժամանակ թող այդ գործը, որը վերջանալիք չէ, ուսումդ չարունակիր, մի մասնագիտութիւն սովորիր և յետոյ, եթէ կը ցանկանաս, էլի բռնիր էդ ճամբան ու գնա: Կեանքի մէջ անհրաժեշտ է մասնագիտութիւն ունենալը":

Ես հօրս տւած բարի խորհուրդը լսում էի մի ականջով և միւսով բաց թողնում: Ես պատկանում եմ աղգին, մտահոգւած չեմ մասնագիտութիւն սովորելու հարցով, պատասխանում էի յոխորտալով, այսինքն՝ մեծախօսութեամբ: Եւ ես տարէց-տարի աւելի և աւելի տարւելով ազգի գործով, երբեք յետ չնայեցի, իրականի մէջ՝ մոռացութեան տւի ծնողներիս, քոյրերիս ու եղբօրս:

Հայրս ու մայրս չատ բարի մարդիկ էին, միչտ պատրաստակամ՝ օգնելու իրենց ունեցած հնարաւորութեան սահմաններում բոլոր նրանց, որոնք կը դիմէին իրենց և օգնութիւն կը խնդրէին:

Հայրս ու մայրս նահատակւելուց յետոյ, որպէս տան մեծը, ես էի մնացել, բայց ես չկարողացայ մեծութիւն անել, այլ և քոյրերիս և եղբօրս ղժբախտութեան պատճառ եղայ տարագրւելուց յետոյ, Իրանում Բիւրոյի ներկայացուցիչ լինելու հետևանքով: Նրանք Բագու էին և հալածւած վիճակում:

Անիծում էի ապուշ Նիկոլայ Երկրորդին, որ իրեն ամենազիտուն և ամենակարող մէկը, ինչպէս նաև Աստուծոյ ընտրեալը համարելով, չուզեց ժողովրդի կողմից ընտրւած և ժողովրդի առջև պատասխանատու նախարարների հետ աշխատել, օգնական ունենալով Պրատապոպովի[72] պէս անկարող մէկին, ապաւինած Ռասպուտինի[73] խորհուրդներին ու ներշնչումներին,

---

[72] Պրոտոպոպով Ալէքսանդր. (1866–1917). Ռուս խոշոր կալւածատէր ու արդիւնաբերող, պետական գործիչ: 1916 թ. սեպտեմբերին Գրիգորի Ռասպուտինի օրնութեամբ դաւնում է ներքին գործերի նախարար: Նիկոլայ Երկրորդի համար ամենավստահելի մարդկանցից մէկն էր, որը 1917թ. փետրւարին վոլգից վերադառնալ թոյլ չտւաւ: Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ գնդակահարւեց բոլշեվիկների կողմից: (Խմբ.)

[73] Գրիգորի Ռասպուտին (1872–1916) Ռուսաստանի Նիկոլայ Երկրորդ թագաւորի, նրա կնոջ եւ նրանց չորս զաւակների մերձաւորը, Տոբոլի նահանգի գեղացիներից էր. որպէս գուշակ եւ բժիշկ անսահման ազդեցութիւն էր ձեռք բերել թագաւորի, նրա կնոջ եւ

երկիրը հասցրեց անդունդի ծայրը, տակն ու վրայ եղաւ ամէն ինչ և ամենամեծ չափով տուժողը եղաւ հայ ժողովուրդը:

Այսպէս խորասուզուած տխուր մտքերի մէջ, մէկ էլ տեսայ՝ Դրօն ձիու վրայ դարպասից ներս մտաւ բակը. սթափւելով, ելայ, ուղղւեցի դէպի Դրօն:

–Գերասիմը մօտս էր, պատմեց քեզ պատահած փորձանքի մասին, քեզ ո՞վ ասաց, որ միջամտես ուրիշների վէճին ու գլուխս պատռես գլուխդ, ասաց Դրօն, ծիծաղելով: Դէհ, մենք հիմա մեկնում ենք Շարուր և այնտեղից Երևան: Գերասիմին ասացի, որ Դարալագեազը պահ ենք տալիս երկսիդ, լաւ պահպանէք:

– Երանի քեզ, լաւ պահպանողներ ես գտել, ասացի ժպտալով:

– Էհ, մնաս բարով, ասաց, իրարու ձեռք սեղմեցինք, և գնաց:

Օգոստոսի 19-ին Պօղոս Տէր Դաւթեանը (Ղափանի Խողանան գիւղացի), Սիսիանի հերոս ղեկավարը և ժողովրդի անվերապահ յարգանքն ու սէրը վայելող անձնւէրը մարդը Ջուլից եկել էր Դրոյից հրահանգներ ստանալու, բայց Դրօն արդէն մեկնել էր:

– Եթէ երեկ եկած լինէիր, ի հարկէ կը հանդիպէիր:

–Դրոյի մեկնելը յանկարծակի եղաւ, ասաց Գերասիմը, գիտէինք, որ պիտի մեկնէր, բայց մեկնելու օրը որոշ չէր. նախանցեալ օրը երեկոյեան հրամայում է Ջոկատին՝ պատրաստուել մեկնելու, և երեկ առաւօտեան ղօրամասը կազմ ու պատրաստ էր չարժւելու: Ոչ մէկս չգիտէինք, որ երեկ պիտի մեկնէր, առաւօտեան անցայ մօտը՝ մի հարցի չուրջ խօսելու, տեսայ, որ ուղում է մեկնել:

– Հիմա ծուռ նստենք և ուղիղ խօսենք, ասում է Պօղոսը, ի՞նչ եղաւ, գնացինք, գրաւեցինք Զանգեզուրը, փախանք և ժողովրդին աւելի սառեցրինք մեր հանդէպ: Աւելի լաւ չէ՞ր լինի, եթէ չարչաւէինք Զանգեզուրի վրայ: Խեղճ Նժդեհը դարձեալ մնաց մենակ. նրա գլուխն էլ էնտեղ կուտեն, և այլևս հնարաւոր չի լինի Զանգեզուրի գրաւումը:

Պօղոսը մինչև Ջուլ վերադառնալը ամէն օր մեղ հետ միասին էր, և խօսակցութեան նիւթը Զանգեզուր-Ղարաբաղի հարցն էր:

Օգոստոսի 21-ին Պօղոսը իր հետ Քէշիշքենդ եկած սիսիանցի մարտիկներից մէկին, որպէս սուրհանդակի, ուղարկում է Նժդեհի մօտ, նամակ է գրում և տեղեկացնում իրերի դրութեան մասին: Սուրհանդակը, ի հարկէ, քաջ ծանօթ էր բոլոր ճամբաներին և պիտի գնար գաղտնի:

– Դուք երկուսդ և ես պիտի միասին աշխատենք, ասում է Պօղոսը, գոնէ կարողանանք սուրհանդակների միջոցով կապ

նրանց չըջապատի նկատմամբ, խառնւում էր նաեւ պետութեան գործերին. այստեղից «ռասպուտինչչինա» արտայայտութիւնը, որով բնութագրւում էր Ռուսաստանի իշխող վերնախաւի ծայրաստիճան քայքայումը: Սպանւել է միապետականների կողմից: (Խմբ.)

պահևնք Նժդեհի հետ. եթէ ղօրք չեն ուղարկում, դրամ չեն ուղարկում, տեղեկացնենք իրեն, որ տեղեակ լինի անցուդարձին:

– Գերասիմն ու ես, ասացի, Հնարաւորն ու կարելին երբէք չենք խնայի, կօղնենք քեզ, վստահ եղիր:

Օգոստոսի 22-ին Պօղոսը հրաժեշտ տալով մեզ, մեկնում է Ջուլ, իւր սիսիանցի մարտիկների հետ, որոնք, 240 հոգի, հաչււում են Դարալագեազի ջոկատի մաս:

Գերասիմը վերջին չարաթի երեկոները ուշ կը գար տուն, և ես ննջադրում էի, թէ Եապոնի կամ Յովհաննէս Յովհաննէսեանի մօտ է լինում, ղրոյցի բռնւելով ուշանում. այս երեկոյեան սովորականից աւելի ուշ եկաւ, և կարծես մէկը բթեց՝ հարցնելու, թէ ինչու է ուշ գալիս տուն:

– Ինչպէս մեղանում կասեն, Գերասիմ, ամօթ չըլի հարցնելը, վերջերս ինչու՞ երեկոները ուշ ես գալիս տուն, և ես մենակ եմ թէյ խմում:

Հարցս տալուն պէս Գերասիմը կարմրեց, ապա ժպտալով ասաց.

– Որ Աստծուց թաքուն չի, ինչու՞ թաքցնեմ քեղնից. Խաչիկ Դանիէլեանի քրոջ՝ Կարինէին առաջարկութիւն եմ արել, ընդունել է. նրա մօտ եմ ուշանում երեկոները: Ժողովրդական առածը գիտես, անչուշտ, ասում է՝ ուղտի պարը կամուրջին կը բռնէ, այդպէս էլ իմ առաջարկութիւնը այս օրերին. . .

– Տնաչէն, չուտ ասէիր. ղէհ, սրտանց չնորհաւորում եմ:

Օրիորդ Կարինէն մեղրեցի փէլտչէր Յովհաննէս Դանիէլեանի աղջիկն է, որի մայրը Խաչատուր Մալումեանի հարաղատ քոյրն է: Խաչիկի հետ Գերասիմն ու ես ծանօթացանք անցեալ տարի Գօրիսում. նա ևս Ազգային Խորհրդի անդամ էր: Հօրը չատ աւելի առաջ ճանաչում էի, հօրս բարեկամ ծանօթներից էր: Խաչիկը խնդրել էր՝ Թիֆլիս լինելուց Հանդիպէի քրոջը, իրենց ազգական Գ. Գալստեանի՝ "Գուտենբերգ" գրախանութի տիրոջ մօտ: Խաչիկի ցանկութիւնը կատարեցի, երբ գնացի Թիֆլիս, Ղարաբաղի հաչիւը փակելու: «Գուտենբերգ» խանութում հանդիպեցինք, և խնդրեց, եթէ վերադառնալու եմ Զանգեզուր, ընկերանալ մինչև Ղարաքիլիսէ գիւղը, որտեղից իրենց մօտ բարեկամի օգնութեամբ կը հասնէր իր ծնողներին, Մեղրի: Ես Զանգեզուր վերադառնալու չէի և յայտնեցի օրիորդին այդ մասին: Դա անցեալ տարւայ նոյեմբերին էր: Թիֆլիսում տեղեկանում է, որ չուտով Զանգեզուրը պիտի գրաււի, ուստի չտապում է Երևան և Բաչնորաչէնի վրայով հասնում Քէչիչքէնդ այն ժամանակ, երբ մենք Զանգեզուրից նահանջել էինք, նոյնպէս հասել Քէչիչքէնդ: Օրիորդը ի վիճակի չէր վերադառնալու Թիֆլիս, իր ազգական Գալստեանի մօտ, ուստի Գերասիմի և իմ

խնդրանքով, բժիշկ Արա Տէր Առաքելեանը օրիորդին ընդունեց հիւանդանոցի դեղատանն աշխատելու, ներկա հետազային յաջողէր համբերելու իր ծնողների մօտ:

– Լաւ, ե՞րբ ես ուզում պաշտօնապէս նշանադրութեան արարողութիւն կատարել, ըստ մեր պապենական սովորութեան:

– Ձիչտն ասած, որոշել ենք, որ նշանադրութիւնն ու պսակը միաժամանակ կատարուի, ամսոյս 28-ին:

– Ո՞վ պիտի լինի քաւորդ:

– Բժիշկ Արան կամ դու, երկուսիցդ մէկը:

– Թող Արան լինի, նա չատ աւելի յարմար է:

– Միասին խօսենք Արայի հետ կամ կուզես՝ դու ինքդ խօսիր:

– Տարբերութիւն չունի, հէնց վաղը միասին կը խօսենք:

Միւս օրը խօսեցինք Արայի հետ, և նա սիրով յանձն առաւ:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Օգոստոսի 23-ի երեկոյեան ժամը 10-ին Նժդեհի անունով հեռագիր է ստացւում Ռուբէնից, որը հրահանգում է՝ թողնել Ղափանը և անցնել Վայոց Ձոր (Դարալագեաղ): Հեռագիրն ուղարկւում է Պօղոսին, որ սուրհանդակի միջոցով ուղարկէ Նժդեհին: Սակայն Նժդեհը, ինչպէս սպասում էինք, որ պատասխան հեռագիր ուղարկէր, չի ուղարկում և չի հեռանում Ղափանից:

Օգոստոսի 28-ին տեղի ունեցաւ Գերասիմի և Կարինէի պսակը Քէշիշքենդի եկեղեցում, Բժիշկ Արայի խաչեղբայրութեամբ: Պսակը կատարելուց յետոյ, գաւառապետի՝ Յովհաննէս Յովհաննէսեանի և իր տիկնոջ՝ Սառայի միջոցով Գերասիմը ճաշ էր պատրաստել տալ հրաւիրեալների համար: Ներկայ էին ղօր. Միք. Մելիք-Մուրադեանը, դնդ. Եղոր Տէր Աւետիսեանը, եապօնը և կինը, Յովհաննէսն ու կինը, Բժիշկ Արան, իր օգնական Փէլդչէր Յովսէփն ու կինը, տեղակալ Գէորգ Յակոբեանը: Գերասիմի պատուէրով մի ոչխար էր մորթուել, սակայն հիւրերին զարմանք էր պատճառել մի բան, որ կերակուրները եւրոպական (ռուսական) տեսակի էին, և գաղտնիքը պարզւում է. քէշիշքենդցիներից մէկը եղել էր ծովակալ Գրիգորովեցի[74] խոհարարը Բալթիկ ծովում. Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ, երբ սկսւում է կատարեալ անիշխանութիւն, գիւղացի խոհարարը մի կերպով կարողանում է զալ Անդրկովկաս, որովհետև այլևս չէր կարող անտէր, անտէրունչ մնալ Ռուսաստանում: Ճաշից յետոյ թէյ տրւեց հիւրերին, որոնք աւելի զարմացան, երբ Գրիգորովեցի խոհարարը թէյի հետ միաժամանակ մատուցեց իր պատրաստած "նապօլէօն" կոչւած

---

[74] Իւան Գրիգորովիչ (1853–1930), Ռուս ծովակալ, 1911–13թթ.՝ ծովային նախարար: 1923թ. տարագրւել է Ռուսաստանից: (Խմբ.)

թխուածքը, ճիշտ որպիսին պատրաստում է խմորեղէնի արհեստանոցում: Թամադայի պաշտօնը կատարեց Եապօնը: Ճաշկերոյթ-ընթրիքից յետոյ, երեկոյեան մութի դէմ, Գերասիմը տիկնոջ հետ գնացին իրենց նոր վարձած բնակարանը: Գերասիմն այդ օրւանից տեղաշորում քնելու հնարաւորութիւն ունեցաւ, չնորհիւ տանտիրոջ սիրալիր վերաբերմունքի: Մինչ այդ, նա, ինչպէս և ես, թաղիքի վրայ էինք քնում, բարձի տեղ սպիտակեղէնով խուրջինը դնում գլխի տակ:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Սեպտեմբերի 1-ին կայացած որոշման համաձայն, պահեստը օգոստոս 20-ից բացւած է, և ամէն օր գիւղացիները չարան-չարան գալիս են, չիթ առնում: Պահեստում երկու տեսակ կտորեղէն կար՝ չիթ և միթկալ ու մի քանի արկղ խտացած կաթ:

Չիթ կամ միթկալ գնողների անուն-ազգանունները հարցնում ենք, որ տետրակում յիշատակւի, և անւան դիմաց նչւի ծախւած ապրանքն ու արժէքը:

– Անունդ և ազգանունդ ինչպէս՞ է, հարցնում ենք ես կամ Գրիչան:

– Սարգիս Ակոպով, պատասխանում է գնողը:

– Ապրանքը միայն Դարալագեազի հայ գիւղացիներին ենք ծախում, ռուսի չենք ծախում:

–Պարոն, ես հայ եմ, Աստւած վկայ, սուտ չեմ ասում, պատասխանում է գիւղացին և քէչիչքէնդցի վկաներ է ցոյց տալիս՝ Տէրտէրենց Հայկոյին, Վասիլ Աւագեանին և ուրիշների, որոնք կարող են հաստատել իր հայ լինելը:

– Եթէ հայ ես, ինչու՞ Յակոբեանց չէ ազգանունդ, այլ Ակոպով է:

– Պարոն, Նիկալայի ժամանակ զինւոր եմ եղել, և նաչալնիկը Ակոպով է գրել ու բոլոր թղթերումս էլ այդպէս է գրւած:

–Նիկալայը և իր նաչալնիկը չկան, հիմա Հայաստանն ազատ, կառավարութիւնը հայկական, ինչու՞ Յակոբեանց չես դարձնում ազգանունդ:

– Պարոն, Էնքան Ակոպով ենք ասել, որ էղպէս ենք վարժւել. սրանից յետոյ Յակոբեանց կասեմ:

– Դու ուրիշներին էլ սովորեցրու, որ "ով" չասեն, "եանց" ասեն:

– Աչքիս վրայ, բոլորին կասեմ:

Եւ գիւղացին ճիշտ է ասում, զինւորակոչութեան ժամանակ, երբ գաւառապետի անունից զրագէտը, նոյնիսկ հայ, ցուցակով կանչում էր զինւորացուի ազգանունը, "ով" վերջաւորութեամբ էր

կանչում, այղպէս էլ արձանագրւում բոլոր թղթերում, և գիւղացիները մեքենայաբար "ով" մասնիկով էին արտասանում իրենց աղգանունները: Մի քանի անգամ այս փոխասացութիւնը կրկնւելով, որոշ չափով աղդեցութիւն ունեցաւ, տարածւելով գիւղացիների մէջ, և միմեանց ասում էին, մանաւանդ պահեստը եկողին, թէ՝ "փամիլդ հայերէն՝ ...նանց ասա:

Սեպտեմբերի 2-ին Պօղոսը գալիս է Ջուլից, հրամանատարութիւնը թողնելով ղափանցի գլխաւոր Սմբատ Թորոսեանին, կարճ ժամանակով Երևան գնալու, տեսնելու իր նչանածին ու եղբօրը՝ Յարութիւնին: Սմբատ Թորոսեանը մեր լաւագոյն սպաներից մէկն էր:

– Ախպեր, չափազանց անյարմար վիճակում եմ ղգում ինձ, ես պարուչչիկ[75] եմ (տեղակալ), իսկ Սմբատը կապիտան (գլխաւոր), ես զօրամասի հրամանատարն եմ, իսկ կապիտան Թորոսեանը ինձ ենթակայ իմ զօրամասում: Սմբատը մեր արժանաւոր, խիզախ և թասիբով զինուորականներից մէկը՝ կապիտան, պարուչչիկի հրամանատարութեան ներքո՞յ. եղա՞ւ: Հրահանգ տալուց ճնչւում եմ, ուստի հետը այնպիսի տօնով եմ խօսում, որ չվիրաւորւի: Սմբատը մի քանի տարով փոքր է ինձնից և իրրև տարիքով մեծի է վերաբերւում ինձ հետ: Էհ, ինչևէ, մի կերպ կանենք, եօլա կերթանք:

– Ջե՞ս յիշում, Արսէն Շահմազեանին կապիտանի աստիճանով ուղարկել էին Զանգեզուր, որպէս նահանգապետի և զինուորական ուժերի հրամանատարի, որին ենթակայ պիտի լինէր պատերազմում աչքի ընկած գնդապետ Մելիք Հիւսէյինեանը, որը չէր հանդուրժում այդ պարագան և քանի անգամ թիւրիմացութիւններ տեղի ունեցան, ու չնորհիւ Դոկտոր Միք. Պարոնեանի, ամէն անգամ անուշի կապւեց: Դժգոհ էին ոչ միայն գնդապետ Մելիք Հիւսէյինեանը, այլև Արսէնը: Երբ արտայայտւում ես այդ առթիւ, ասում են՝ "ձևական բաների հետևից էք ընկել. կարևորը կատարւելիք գործն է, որի կատարման հրահանգը տւողը կապիտան է, թէ պալկովնիկ, ի՞նչ կարևորութիւն ունի": Ի՞նչ ես պահանջում վեց հարիւր տարւայ ստրկական կեանք վարած մի ժողովրդի մարդկանցից, որոնք անակնկալ կերպով և հարկադրւած անկախ են դարձել և երկիր են կառավարում, առանց ամենաղոյղն փորձառութեան: Եթէ հետևես հէնց Երևանում մեր պաչտօնատար

---

[75]Ի դէպ, չէ թէ միայն Սլմանում, այլև Զանգեզուրի ամբողջ պատառում Պօղոսը ճանաչւած էր Պարոն Պարուչիկ անունով, մանաւորապէս Սիսիանում անգամ երեխաները այդ անունով էին ճանաչում: Պարոն Պարուչիկ կասէին գիւղացիները հետը խօսելիս, և իր մասին միմեանց հետ խօսելիս՝ դարձեալ Պարոն Պարուչիկ, որի խօսքը օրէնք է իրենց համար: (Հեղ.)

մարդկանց և նրանց հետ գործ ունեցողների ընթացքին, կեցուածքը երկուստեք այնպէս չէ, ինչպէս պէտք է: Հարկաւ, բոլշևիկեան յեղաշրջման հետևանքով, տակնուվրայ եղաւ ամէն բան, կարգ, կանոն, պատչամ կեցուածք, սակայն տարրական գէթ որոշ բաներ պիտի գիտնալ, ղգալ: Ինքդ, որ մասնակցել ես անցեալ տարւայ նոյեմբերեան կռիւներին Աղրբէջանի ղօրքերի ղէմ, որոնք պարտւելով նահանջեցին Հայի Սամլուից, Արսէնը, որպէս Զանգեղուրի մարտական ուժերի հրամանատար, հոչակւեց հերոս, որին գէթ այդ ժամանակ, նոյնիսկ մէկ աստիճանի վրայից էլ անցնելով, պէտք է ղօրավարի աստիճան տային, որով ոչ միայն գնահատւած կը լինէր Արսէնը, այլև Զանգեղուրի ժողովուրդը և ի մասնաւորի մարտական ուժը: Մինչդեռ նոյեմբերեան յաղթանակի օրերին իսկ յետ են կանչում Արսէնին և նրա փոխարէն ուղարկում Սերգէյ Մելիք Եօլչիանին ու նորակնունք, զինուորականների չրջանում անգամ անյայտ մնացած՝ Զօրավար Ղազարեանին:

– Դրօն ու Նժդեհը չէին հանդուրժում էդ զօրավար Ղազարեանին. Դրօն չատ էր առնւած նրանից, ասում է Պօղոսը, և անւանում էր նրան անտաղանդ արարած: Դրօն իրաւունք ունէր այդպէս որակելու. նա ոչնչով օգտակար չեղաւ Զանգեղուրում, իրա բոյով, բուսաքինով էր յայտնի միայն, նրա արած մի գործը չտեսանք:

Սեպտեմբերի 3-ին մի նամակ եմ գրում Ռուբէնին, որ Հայաստանում չատ երիտասարդ սպաներ, իրենց ունեցած հովանաւորների չնորհիւ, աստիճանի բարձրացում են ստացել, մինչև իսկ մէկ աստիճանի վրայից թռնելով, սակայն Զանգեղուր-Ղարաբաղի զինուորականները, որոնք աւելի ժողովրդական են և աւելի հասարակական, մնացել են աննկատ: Նժդեհը Ղափան-Գնդեվազ-Գողթանում, իսկ Պօղոսը Սիսիանում ահագին գործ են կատարել, և առաջինը մինչև այժմ մնում է գլխապետի, իսկ երկրորդը տեղակալի աստիճանում: Դա լսխատ աչքի է զարնում, պէտք է ուղղել սխալը, որը ժողովրդի վրայ էլ լաւ կազդէ, երբ կը տեսնէ, որ իրա ղեկավարները գնահատւում են: Նա չատ մեծ ժողովրդականութիւն ունի այնտեղ, և ժողովուրդը նրա հետ է, թէև դէպքերի բերումով այսօր նա երկրից դուրս է գտնւում: Պէտք է անպայման Պօղոսին գլխապետի աստիճան նկատի ունենալ և մօտ ապագային փոխ-գնդապետութեան բարձրացնել:

Նամակը տանում է Պօղոսը, որը չգիտէ նամակի բովանդակութիւնը. լոյս 4-ին, մի քանի մարտիկներով, Ջիմանքէնդի վրայով գնում է Երևան:

Սեպտեմբերի 11-ին գալիս են Նժդեհի երկու սուրհանդակները, որոնք բերում են մի քանի գրութիւններ,

ուղղած պառլամենտի նախագահին, սպարապետին, բիւրոյին և վարչապետին, որոնցից օգնութիւն է խնդրում:

Սեպտեմբերի 17-ին Երևանից գալիս է Գուրգէն Յակոբեանը, Ղափանի շրջանի դիւղական երիտասարդներից, որը յայտնի էր Բանւոր Ռաչիդ անունով: Կառավարութիւնից դրութիւնները էր բերել Գերասիմին և Եապօնին ուղղած:

Սեպտեմբերի 20-ին Գերասիմն ու ես որոշում ենք պահեստի ծախսած կտորեղէնից գոյացած դրամից երկու միլիոն ռուբլի ուղարկել Նժդեհին՝ մեր պատասխանատուութեամբ, և վստահ ենք, որ կառավարութիւնը դէմ չի լինի: Ուղարկում ենք նաև մեղ մօտ եղած Երևանի և Թիֆլիսի թերթերն ու միաժամանակ նամակ ենք գրում, հաղորդում մեր գիւտացած տեղեկութիւնները երկրի ներքին կացութեան և արտաքին աշխարհի մասին: Սուրհանդակները մեկնում են Ղուչչի Բիլաք, այնտեղից Սիսիան անցնելու և ապա Ղափան: Սուրհանդակների հետ միասին գնում է նաև բանւոր Ռաչիդը:

Սեպտեմբերի 23-ին Երևանից գալիս է Ենովք Միրաքեանը և ութ միլիոն ռուբլի է բերում Նժդեհին ուղարկելու համար:

– Ափսոս, ասում է Գերասիմը, երեք օր առաջ եկած լինէիր, բերածդ դրամն էլ Նժդեհի սուրհանդակները կը տանէին: Ամբողջ ինն օր սպասեցին, գու էլ ուշացար, Պօղոսն էլ, ուստի որոշեցինք երկու միլիոն ռուբլի ուղարկել Նժդեհին:

– Ոչինչ, ասում է Ենովքը, սիսիանցիների միջոցով կուղարկենք:

Սեպտեմբերի 25-ին Պօղոսն է գալիս, և դէմքի արտայայտութիւնից պարզ երևում էր, որ լաւ տրամադրութեան մէջ չէ. խիստ դժգոհ էր: Պատմում է, որ չատ ընկերների հետ հանդիպումներ և մտքերի փոխանակութիւն է ունեցել թէ Նախիջևանի և թէ Զանգեզուր-Ղարաբաղի հարցերի շուրջ:

–Ցիչու՞մ ես,ասում է նա, երբ հրատարակւում էր "Որոտան" թերթը, որը տպագրւում էր Խօսունց Մատուրի "Սասուն" տպարանում, մինչև տպագրութեան ծախսը կանխիկ չէր ստանում կոմիտէից, թերթը չէր տպագրում: Բացի այդ, ամէն մի համարի համար նոր և աւելի բարձր գին էր պահանջում: Ինքդ էլ այն ժամանակ արտայայտւեցիր, թէ դա վաչխատութիւն է, և կարծեմ դա էր առիթը, որ Զանգեզուրի շրջանի ներկայացուցչական ժողովին չմասնակցեցիր, պատճառաբանելով, որ այնտեղ վաչխատուներ են նստած և ոչ թէ դաշնակցականներ: Ինչու՞ քո այդ խօսքերի և հետագային քո հակառակ դիրք բռնելու համար քեղ

չդատապարտեցինք, իսկ երբ նոյնը Մուշեղն էր ասում, վայնասուն էինք բարձրացնում:

Հա, Երևանում իմացայ, որ իմ մասին Ռուբէնին գրել ես ու խնդրել ինձ գլխապետութեան աստիճան տալու: Դու չատ իղուր ես գրել, ինձ նման չորանները, որոնք միչտ խուժանի հետ գործ ունեն, իսկական ղինուորական չեն նրանց հաչուով: Ես 1909 թ. պահեստի սպայ եմ, պատերազմի ընթացքին դարձել եմ պարուչչիկ, մասնակցել եմ Բազէի բոլոր կռիւներին, դաչնակիցները Կովկաս գալուց յետոյ եկել եմ Զանգեղուր և, ինչպէս գիտես, մինչև այժմ սիսիանցիների հետ եմ եղել: Անհամեստութիւն չի լինի ասելը, որ մասնակցել եմ Զանգեղուրի բոլոր նչանաւոր կռիւներին, օգնական ունենալով հանգուցեալ Զաքար Տէր Ղազարեանին, Սիսիանի մարտական ուժերով, որոնցից 300-ը ձիաւոր, և ինքդ էլ գիտես, որ իմ մասնակցութիւնը յաճախ վճռական նչանակութիւն է ունեցել մեր գաւառի ինքնապաչտպանութեան գործում. գրեթէ միչտ գործ եմ ունեցել թչնամու թիկունքում, բայց ինչ արած, որ իմ զօրամասը բաղկացած է գիւղացիներից, թէև բոլորը ցարական նախկին ղինուորներ են, մարդուած, բայց հաչւում են խուժան, ուստի պարզ է, խուժանի պետը, մարզկանց աչքում իրենց պաչտպանողների չնորհիւ բարձր աստիճան ստացած և Երևանի բուլվարում օրիորդների հետ թևանցուկ զբօսնող սպաների նչանակութիւնն ու արժէքը չպիտի ունենայ: Այո, իղուր ես գրել, կը կարծեն, թէ ես եմ խնդրել քեզ՝ նման բան գրելու:

Ինչևիցէ, ես խղճի կատարեալ հանգստութիւն եմ ղգում և չեմ մեղանչել գործ կատարելիս: Ես կատարել եմ իմ պարտականութիւնը, նախ՝ որպէս հայ և երկրորդ՝ որպէս դաչնակցական: Տէրն իրենց հետ, ինչպէս կուղեն, այնպէս էլ վարուեն. ես կերթամ իմ տղաների մօտ Ջուլ և նրանց հետ միասին քամուն կը տամ դարդերս: Այժմ, սակայն, դու խօսք տուր, որ միասին կը չարունակենք աչխատել և, ինչպէս խոստացել ես, չպիտի գնաս Երևան, պիտի մնաս, որ պատրաստենք Սիսիանի ապստամբութիւնը և օգնութեան հասնենք Նժդեհին:

-Ինձ քաջ յայտնի է, թէ սիսիանցիները որչափ և ինչպէս կապւած են քեզ հետ: Նրանք սրտատրոփ քո գալուն էին սպասում. քո բացակայութեան ժամանակ, վերջին տասն օրը յաճախ, գրեթէ երկու օրը մի անգամ մարդ էին ուղարկում ինձ մօտ, հարցնում, թէ երբ ես գալու Երևանից, չատ էին անհանգստանում: Ենովքի բերած դրամը փոխադրիր, յետոյ մտածենք Սիսիան մտնելու մասին:

Գործը գլուխ բերելու համար անհրաժեչտ է, որ մեր աննկիքը գաղտնի մնայ, առ այժմ միայն երկու հոգիս ենք իմանում: Պէտք է տղաներից մէկին ուղարկես Սիսիան, մերոնցից, որոնք մնացել են

այնտեղ, տեղեկութիւնները ընդելու: Մի նամակ պիտի գրել Նժդեհին և մէկն էլ՝ Սաքօ Եապօնին: Ինչպէս գիտես, Սաքօն 200 հոգի ունի, պիտի իմաց տայ նրանց, որ պատրաստ լինեն: Այնպէս պիտի անել, ինչպէս նախ քան Երևան գնալդ ասում էիր, որ Նժդեհն ու դու միաժամանակ սկսէք գործողութիւնները, նա իջնի Խուստուփից, իսկ դու էլ այս կողմից մտնես Սիսիան: Որպէսզի զօր. Մելիք Մուրադեանին և օգնական գնդապետ Եզոր Տէր Աւետիքեանին համոզենք, որ ժամանակը հասել է Սիսիանի վրայ յարձակելու, պիտի նախ պատրաստես Սիսիանի մարդկանց և վերջիններիս անունից պահանջի ձևով զրուցիւն պատրաստել տաս կառավարութեանն ուղղած: Գերասիմը դէմ չի լինի այս խնդրում, ես գիտեմ նրա կարծիքը: Կարճ ասած, պիտի գործը սկսել, հասունացնել և վերջին ժամին, այսինքն՝ մի քանի օր առաջ գաս այստեղ, չտաբում հարցը դնես:

Սեպտեմբերի 27-ին Պօղոսը մեկնում է Ջուլ: Պօղոսին միանում է և Ենովքը: Նրանք դեռ լոյսը չբացուած մեկնել էին:

Քէչիչքէնդի ծխական դպրոցի ուսուցիչն էր Նախիջևանի չրջանի Շխմահմուդ գիւղացի Գեղամ Աւետեանը, Երևանի Թեմական դպրոցի չրջանաւարտ, չատ համակրելի երիտասարդ: Հայրը քահանայ էր, Տէր Թադէոսը, Ներսիսեանաւարտ, Նախիջևանի չրջանի կոտորածից աղատուածների հետ գաղթել էին ընտանիքով Դաւրալագեաղ և վերաբնակուել Արփագիւղում: Գեղամը չաճախ կը լինէր Գերասիմի և ինձ մօտ, իրեն հետաքրքրող զանազան հարցերի չուրջ դրուցելու և բացատրութիւններ լսելու ցանկութեամբ: Մի քանի անգամ առիթ ունեցաւ խօսելու Ամաղուի պատմական վանքի մասին, որտեղ և Սիւնեաց իշխանների դամբարանն է: Գեղամը վերջին անգամ ասել էր, որ նիթէ ուղենանք, մեղ Արփայի վրայով կառաչնորդէ այնտեղ. ինքը հօր հետ եղել է և ճամբան լաւ գիտէ: Երբ Պօղոսն ու Ենովքը մեկնեցին Ջուլ, մենք էլ, առանց նախապատրաստութեան, որոչեցինք և ձիով ճամբայ ընկանք դէպի Արփա, որտեղ իջևանեցինք մեր ընկերներից Էլիզում (Էլօ) Սիմոնեանի մօտ: Գեղամը, ի հարկէ, զնաց ծնողների մօտ և մեկ ժամ յետոյ Տէր Թադէոսի հետ եկաւ մեղ մօտ: Տէր Թադէոսն արդէն իմացել էր մեր նպատակը, ուստի ցանկութիւն յայտնեց ընկերանալու մեղ և բացատրութիւններ տալու տեղի վրայ երկյարկ տաճարների ու յարակից չէնքերի մասին, որ լսել է իր ուսուցիչ Հնաևոյզ և աղգագրագէտ Երևանդ Լալայեանից: Ինչ խօսք, որ մեղ համար չատ հաճելի ու ցանկալի էր Տէր Հօր առաջարկը: Էլօն էլ միացաւ, և որոչուեց վաղը, դեռ լոյսը չբացուած, ղովին, մեկնել, մանաւանդ որ ճամբան զառիվեր է մինչև վանքը:

Հենց այդ միջոցին ներս մտաւ գիւղացիներից մէկը, Ալէքսան Ղարախանեանը և խնդրեց Գերասիմին ու ինձ, որ չմերժենք, իրենց մօտ ճաշենք:

– Էդ դու քանի՞ գլխանի ես, որ ուզում ես իմ հիւրերին տանես քո տունը, կերակրես. ի՞նչ է, մեր տանը մի կտոր հաց չկա՞յ, որ տամ իմ հիւրերին: Ճիշտ է, քեզ պէս հարուստ չեմ, բայց քեզ պէս էլ ժլատ չեմ և իմ հիւրերին կարող եմ կերակրել քեզնից աւելի լաւ:

– Ես գիտեմ, որ պարոնները քեզ մօտ նախաճաշ արել են, ուզում եմ, որ հիւրերը չնորհ անեն, մեր հացից էլ ճաշակեն, ամէնքիդ հետ միասին, որ Տէր Հայրն էլ հացը օրհնի:

– Ալէքսան, քանի որ էդպէս սիրտ ես արել մեզ բոլորիս հիւրասիրելու, ամէնքս կը գանք, որ դու մի ոչխար մորթես և մեկ չիչ կոնեակ բացես, ես որ չեմ խմում, բժիշկն արգիլել է, բայց էս օր քո ջիգրու պիտի խմեմ, քեզ վնաս տամ:

– Ջանըմ, մեկի փոխարէն երկու չիչ կը բանամ, ասաց Ալէքսանը:

– Լաւ, գնա, մենք էլ կը գանք, ասաց Էլօն:

Պարզուեց, որ Ալէքսանը Էլօնից փեսան է, որի տղան Երևանում ծառայում է կոնեակի "Արարատ" գործարանում, իբրև արհեստաւոր և արձակուրդով գիւղը գնալուց հօր համար կոնեակ էր բերում, և ըստ Էլոյի տւած տեղեկութեան, Ալէքսանն էլ խմող չէ և կոնեակի չիչերը մառանում չարում էր իրար կողքի և մեկ-մեկ փոչինները սրբում չիչերի վրայից և թամաչա անում, փոխանակ հիւրասիրելու մարդկանց, որ գան իրա տուն, ուտեն, խմեն և ուրախութեամբ լցնեն տունը:

Ճաշի ժամանակ էր, Էլօն չէր դադարում սլաքները ուղղելուց Ալէքսանին:

– Կերէք, խմէք, ասում է Էլօն, պիտի լաւ վնաս տանք Ալէքսանին, որ այսուհետև միշտ այսպէս սեղան սարքի և մեզ էլ կանչի:

Ալէքսանը Էլոյի արձակած սլաքներից չէր վիրաւորւում, միշտ ժպտում էր: Ջնայեած չատ սլաքները էր արձակում Էլօն, բայց խմող չէր, մեկ ըմպանակից աւելի չխմեց, մենք էլ խմող չէինք, չիչի մեկ երրորդի չափ մնացել էր կոնեակը, և հիմա էլ Ալէքսանն սկսել էր ձեռ առնել Էլոյին: Ճաչը ղւարճախօսութեամբ սկսւեց և նոյն ձևով վերջացաւ:

Համաձայն Տէր Թադէոսի տւած խորհրդի, առաւօտեան չատ կանուխ արդէն ոտքի վրայ էինք, իսկ Էլօն մեզնից աւելի առաջ էր վեր կացել ինքնաեռը պատրաստել, ուստի երեևներս լւացինք, թէյ խմեցինք, նախաճաչը արինք, ապա Էլօն խաչած հաւ, եփած հաւկիթ, պանիր ու հաց խուրջինի մէջ տեղաւորելով ասաց, որ

հեծնենք ձիերը և գնանք Տէր Թադէոսին ու Գեղամին էլ առնենք և ճամբայ ընկնենք: Էլօնից տնից դուրս եկանք և տեսանք, որ Տէր Հայրն ու Գեղամը կանխել, արդէն պատրաստ մեզ են դալիս:

Կէսօր չեղած, մենք հասանք Ամաղուի վանքը: Տէր Թադէոսը ճամբին պատմում էր, որ պատերազմից երկու տարի առաջ Երևանդ Լալայեանի հետ միասին, երեք ամսից աւելի, չրջել են Դարալագեազի և Նախիջևանի չատ հայկական գիւղերում և տեսել բոլոր պատմական վայրերը՝ վանքերը, սրբատեղիներն ու այլ հնութիւններ: Վանքերը և հին աւերակ բերդերը լուսանկարել են: Շէնքերի պատերի, գերեզմանաքարերի վրայի արձանագրութիւնները ընդօրինակել է, իսկ գիւղերում բնակիչների հետ զրուցելով ալղազրական չատ նիւթերի մասին նօթագրումներ արել: Եւ ինչպէս Երևանդ Լալայեանը պատմել էր իրեն, ինքն էլ մեղ էր պատմում: Տէր Հայրը ցոյց տուաւ նախ գոյգ տաճարը, որոնք կապած են իրարու մի քնապատով, որի մէջտեղից բացուած դուռը մուտքն էր միւսի: Գլխաւոր մուտքը մէկ տեղից էր, Հարաւակողմի վրայ: Այս գոյգ տաճարներից մէկը, արևելեան բաժինը, միւսից մի քանի աստիճան բարձր էր: Եւ երկու տաճարը միասին մէկ տաճարի տպաւորութիւն են թողնում:

Տէր Հայրը ցոյց տուեց վարդապետների կիսաւեր խուցերը, ապա մետաղաձուլարանը, նոյնպէս կիսաւեր: Պատմում է, որ մետաղաձուլարանում վարդապետները ոսկու և արծաթի հանածոներ են ձուլել, որովհետև վանքում միաժամանակ զարգացած է եղել ոսկերչութիւնը, և չատ յարգի են եղել Ամաղուի ոսկու, ինչպէս և արծաթի գործերը, որոնք վաճառել են վանքի օգտին:

Ապա ցոյց տուաւ Սիւնեաց իշխանների դամբարանը և Բարղեղ Իշխանի կառուցած երկյարկանի փոքրիկ և գողտրիկ տաճարը, սրբատաչ քարից, որ կանգուն է մնացել դարերի ընթացքում: Վանքի տեղը չատ բարձր է և իշխում է չրջակայքի գիւղերի վրայ: Նայում ես չուրջդ և հիանում բնութեան գեղեցկութեամբ: Վանքը իւր աղբիւրն ունէր, որի սառը ջուրը մեծ բաւականութիւն էր պատճառում:

Տէր Հայրը ձեռքի նչանով ցոյց է տալիս արևելեան կողմում մի լեռնաչղթայ, թէ այնտեղ են գտնւում Հրաչաբերդի[76] աւերակները, ուր գնալու համար, անհրաժեչտ է ուրիչ օր պատրաստուել և ուղղակի գնալ այնտեղ:

---

[76] Հրաչակաբերդ, Հարաչակաբերդ, Հրաւակաբերդ. Հայաստանի Հնագոյն բերդերից, Սիւնիքի Վայոց Ձոր գաւառում, Գնիշիկ գիւղից հարաւ, Հարանաքար լեռան գագաթին: (Խմբ.)

Երբ Տէր Հայրը վերջացրեց իւր ծանօթութիւնները վանքի և յարակից չէնքերի մասին, չէնքերից մէկի չաքում ծաւրւեցինք էլօյի բացած սփռոցի չուրջը, խուրջինից հանեց ուտելիքները, Տէր Հայրն էլ իւր խուրջինը չրջեց սփռոցի վրայ, նոյնանման բարիք թափելով: Երկար պտոյտից յոգնած ու քաղցած, զայլի ախորժակով, Ամաղուի սառը ջուրը խմելով, ճաշեցինք, հանգստացանք և ճամբայ ընկանք դէպի Արփա, ուր հասանք երեկոյեան դէմ:

Սեպտեմբերի 29-ին որոշեցինք վերադառնալ ոչ թէ Արփայից Քէշիչքէնդ երկարող ճամբով, այլ չեղում կատարելով Թրքական լքւած Զիվա, Հայկական Ռինդ, Այնաղուր գիւղերի վրայով: Զիվայի Թուրքերի արտերը Գերասիմը տւել էր բռնակոթցի գաչնակցական Կրմենանց Նիկալային, բերքի որոշ մասը կառավարութեան տալու պայմանով: Եղանք Զիվայում Կրմենանցի մօտ, որը յայտնեց, թէ բոլոր հացահատիկները կալսել և լցրել է ամբարները, որ չուտով կառավարութեան բաժինը կուղարկի Քէշիչքէնդ: Մէկ-երկու ժամ Կրմենանցի մօտ հանգստանալով, չարունակեցինք մեր ճամբան դէպի Այնաղուր, ընկ. Լիպարիտ Զաքարեանի մօտ, որտեղ և գիչերեցինք: Գաւառապետ Յովհ. Յովհաննիսեանին ասել էինք, որ Ռինդի և Այնաղուրի վրայով պիտի վերադառնայինք: Յովհաննիսը երեանից ծածկագիր հեռագիր է ստանում, որ տաճիկները յարձակում են սկսել մեր դէմ Սարիղամիչի ուղղութեամբ, և տեղի են ունենում պատերազմական գործողութիւններ: Յովհաննիսը նկատի առնելով, որ մենք Այնաղուրում կը լինենք, հեռագիրը բաց է անում և սուրհանդակի միջոցով ուղարկում Գերասիմին, որը դեռ չարունակում էր Գարալազեաղի արտակարգ կոմիսարի իւր պաշտօնը: Գիչերւայ կէսից անց էր, երբ սուրհանդակը Լիպարիտի հետ միասին կամացուկ արթնացրին Գերասիմին ու ինձ, որ կողք-կողքի պառկած, քնած էինք: Կարդացինք հեռագիրն ու չարունակեցինք քնել:

Գեղամը մուչ-մուչ քնած էր և չիմացաւ սուրհանդակի գալու մասին և երբ առաւօտեան արթնացաւ, չատ ընկճւած էր և պատմեց, թէ չատ վատ ու սարսափելի երազ է տեսել, որ թշնամիները ժողովրդին չրջապատել, սրածում էին բոլորին, առանց սեռի և տարիքի խտրութեան, որ ինքը չատ լաց է եղել: Եւ երազից այնքան էր աղղւել, որ տրամադրութիւնը բոլորովին ընկել էր, իսկ երբ իմացաւ տաճիկների յարձակման մասին, հարցասէր Գեղամը խիստ դժւարութեամբ էր լսօսում և մինչև Քէշիչքէնդ խորասուզւած էր իր մտքերի մէջ: Շատ զգայուն երիտասարդ էր, Նախիջևանի չրջանի կոտորածից հրաչքով աղատւած զաղթականի դառն օրեր ապրած և, բնականաբար, պատերազմի մասին լսելով, պատկերացնում էր անցեալը, որ կարող էր կրկնւել, և մեր ժողովուրդը դարձեալ պիտի տուժէր: Գերասիմն ու ես էլ, թէև նոյն տխուր, ծանր ճնշման տակ

էինք, Գեղամին սրտապնդիչ խօսքեր էինք ասում, սակայն նա յաճախ նոյն բանը կասէր. "Բախտ չունենք, դժբախտ ազգ ենք, մեր ժողովրդի ճակատին գրուած է տառապել ու տառապել":

Ձմռրին Գեղամը մի տեղ իջաւ ձիու փորքաչները ամրացնելու, թամբի տակի տեղահան եղած բարակ թաղիքը չտկելու. մենք քիչ հեռացել էինք, և Գերասիմն ասաց՝ խոստովանանք լինի, մենք սիրտ ենք տալիս Գեղամին, բայց ներքուստ մի ծանր նախազգացում սեղմում է սիրտս, թէ մենք չպիտի կարողանանք ղիմադրել, պարտելու ենք և կրկնելու են 1918 թ. դէպքերը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Հոկտեմբերի 2-ին Ջուլից գալիս է Պօղոսի սուրհանդակը: Պօղոսը գրում է. «Սիրելի Եղիչէ, տղաներից վեց հոգու ուղարկեցի Սիսիան, զանազան գիւղեր՝ Ղալազէղ, Անգեղակոթ, Ղարաքիլիսէ և Բռնակոթ: Նրանք մեկնել են երկու օր առաջ, գիշերս կամ վաղը պիտի լինեն տեղս: Տղաները պիտի մերոնցից տեղեկանան ժողովրդի տրամադրութեան մասին: Գեօմուր գիւղացի մի զաղթական նախանցեալ օրը Սիսիանից անցել է մեղ մօտ. ըստ նրա վկայութեան, ժողովուրդը խիստ ղգւած է բոլշևիկներից և օրէցօր սպասում է, թէ երբ այս կողմից մենք կը յարձակւենք, որպէսզի միանայ մեղ: Վերոյիշեալ գեօմուրեցի զաղթականի ասելով, մի չարք գիւղերից փախածներ կան. փախստական է ղարձել նաև Անգեղակոթի քահանան: Աւելի լաւ է սպասենք մեր տղաների վերադարձին, նրանք ճիշտ տեղեկութիւններ կը բերեն: Հաւանական է, երբ տղաները վերադառնան, ինքս գամ տեղդ: Բարևներով, քո Պօղոս, 1-ին Հոկտեմբերի»:

Եբեկոյեան գալիս է երկրորդ սուրհանդակը. Պօղոսը գրում է. «Սիրելի Եղիչէ, այսօր զաղթականներ էլ եկան Սիսիանից: Առինջ գիւղացիներ են, սրանք էլ գեօմուրցու ասածն են հաստատում և չգիտեն, որ գեօմուրցիներ են անցել այս կողմը: Սրանք պատմում են, որ Սիսիանից մօտ 700 հրացան են գրաւել. Խեղճ գիւղացիութիւնը զինաթափ է եղած: Այդ բանը ինձ չատ է անհանգստացնում: Սիսիանից 25 հազար փութ ցորեն են պահանջել, որի 2/3-ը հաւաքել են: Խեղճ գիւղացիները չգիտեն ինչ անել:

Տղաներից մեկին պատրաստել եմ Գօրիս ուղարկելու, Սաքոյի մօտ: Տղան չատ ճարպիկ է և համարձակ: Աւելի լաւ կը լինի, որ Սաքոյին դու նամակ գրես, նա քեղ չատ մօտ է և կը հաւատայ գրածիդ: Գօրիսեցի մի քանի ինտրիգանների և

կլեաուղնիկների[77] պատճառով նա թիւրիմացութեան մէջ է ընկած իմ հանդէպ: Վերոյիշեալ տիպերի հետ ունեցած իմ ծանօթութիւնից կարծել է, թէ ես նրանց կողմնակիցներից եմ: Առինջեցիների ասելով, Մուշեղ Զաքարեանը եղել է Բոնակոթում: Բոլշևիկները նրան չեն հաւատում, և իբրև հասարակ ծառայող, նրանց մօտ աշխատում է, իբրև թէ նա էլ է դժգոհ բոլշևիկներից: Առինջեցիք պատմում են, որ մի անգամ եղել են Գօրիսում, տեսել են Սաքոյին. նա ամբողջ օրերով լսում է, հարցրուց և երբեմն բոլշևիկների հետ վիճաբանութեան բռնուում, հայհոյում: Իմ կարծիքով, լաւ կը լինի, որ Մուշեղին էլ մի նամակ գրես, նա քեզ հետ լաւ է եղել: Ինչպէս կուզես, բայց Սաքոյին մի լաւ նամակ գրիր: Բարևներով, քո Պօղոս: 1 Հոկտեմբեր, Ջուլ»:

Հոկտեմբերի 3-ին երկրորդ սուրհանդակի (ղարաքիլիսեցի Համբարձումի) միջոցով ուղարկում եմ Սաքոյին գրածս նամակը: Սաքոյին նկարագրում եմ մեր վիճակը և յայտնում դժգոհութիւնս նրա՝ Գօրիսում մնալու առթիւ, որ նա օգոստոսի 2-ին, երբ մերոնք մտել են Գօրիս, իզուր է թաքնւել: Եթէ ինքը դժգոհ էր Դրոյից ու միւսներից, կարող էր կենտրոնին յայտնել իւր դժգոհութիւնը: «Դու տասը տարի տաժանակիր աշխատանքներում մաշել ես քո կեանքի լաւագոյն տարիները յանուն Քրիստափորի, Զաւարեանի և Ռոստոմի՝ մեղ աւանդ թողած գաղափարի, որին դաւաճանել չես կարող և, կարծում եմ, անընդունակ ես դաւաճանելու այն դրօչին, որին երկար տարիներ ծառայել ես և զոհաբերել ամէն ինչ: Պատմական այս ծանր օրերին եթէ դու մեր աղգային ինքնապաշտպանական կռւին անմասն մնաս, չաջակցես կամ անտարբեր գտնւես, մեր նահատակ ընկերների ոսկորները գերեզմաններից կը բողոքեն ու կը դատապարտեն քեզ: Մենք պատրաստւում ենք անցնել Սիսիան, դու էլ պատրաստ եղիր և սպասիր մեր երկրորդ սուրհանդակին: Բանաւոր կերպով կը պատմէ քեզ սուրհանդակը: Ընդունիր Պօղոսի և իմ ջերմ բարևները»:

Սաքօ Եապօնը, բուն անունով Համբարձում Սարգսեան, մեր լաւագոյն ահաբեկիչներից մէկը, որը աչքի էր ընկած ոչ միայն իր քաջութեամբ հայ-թրքական ընդհարումների ժամանակ, այլև իւր պաղարիւնութեամբ ահաբեկում կատարելիս, իր ըմբռոստ բնաւորութեամբ ու համարձակ կերպով մարդկանց թերութիւնները քննադատելով որպէս դաշնակցական, չէր հանդուրժում մեր մէջ խցկւած անհարազատ տարրերին, որոնք կարողացել էին որոշ պաշտօններում տեղաւորւելով դեր խաղալ: Եւ այդ տիպերը, իրենց դիրքը չկորցնելու նպատակով, ինչպէս կասեն՝ աշխատում են մեծերի աչքը մտնել, լաւ երևալ, ուստի տեղեկատուի պարտականութիւն ստանձնելով, կառավարութեան կամ ղեկավար

[77] Կլեաուղնիկ՝ բանսարկու, սուտ պանդաստուր (Ռուս.): (Խմբ.)

մէկ պատասխանատու անձի մասին լսած որևէ քննադատութիւն անմիջապէս տեղ էին հասցնում՝ իրենց "բացատրութիւններով ու լրացումներով": Եւ նման հաղորդումների հետևանքով Անդրանիկը ապտակել էր Սաքոյին, որը Շուչի գալով բողոքել էր այդ առթիւ: Գօրիսում Անդրանիկի զօրամասին միացած զաղթականներից ոմանք ծուլանալով ծառ բարձրանալ, պտուղ ուտելու, ծառը ընից կտրելով, դժում էին գետնին, և Սաքօն իրաւացիօրէն նկատողութիւն էր արել, որ պտուղ ուտելու համար բարձրանան ծառը և ոչ թէ կտրեն այն, չէ՞ որ գիւղացին ծառը տնկել, մեծացրել է, որ միշտ կարելի լինի օգտւել նրանից, վայելել պտուղը: Նկատողութեան ենթարկւած զաղթականները զանգատւում են Անդրանիկին, թէ իբր Սաքօն դժգոհել, բարկացել է, որ այդիների պտուղից օգտւում են: Անդրանիկը բարկանում է, թէ ամբողջ երկիր ենք ձեռքից տւել, ժողովուրդ զոհաբերել, և թշնամու եաթաղանից հրաչքով աղատւած ընկերներին արգելք են լինում՝ ծառի պտղից օգտւելու, որպէսզի ծառի տէրը վնաս չկրի: Մի քանի զինւորների կեցւածքն է քննադատել Սաքօն, դտնելով ոչ պատչաճ: Այս մասին հետագային պատմել էին նաև Դոկտոր Միք. Պարոնեանը, Տ. Սաղանդարեանը և ուրիշները Գօրիսում եղածս ժամանակ:

Պօղոսը պատմել էր ինձ Սաքոյի դժգոհութեան մասին, Դրոյի զօրամասի սպաների, ինչպէս նաև զինւորների հանդէպ Զանգեզուրի զինւած խմբերի անհարկի վիրաւորական արտայայտութիւններից: Բարգուշատի հովտի Թրքական գիւղերի վրայ յարձակւելիս զաւթանցիների և զանգեզուրցիների մարտական ուժերն էլ, բնականաբար, իրենց բուռն մասնակցութիւնն են բերում: Երևանեան զօրամասի սպաներն ու զինւորները հեգնանքով են վերաբերւում տրեխաւոր ու պէս-պէս տարազով զաւթանցիներին ու զանգեզուրցիներին, թէ՝ "էս աբօղի մարդիկ որտեղի՞ց ղուրս եկան, սրա՞նք պիտի կուեն Թուրքերի դէմ, սրանք լաւ կաչխատեն աբօղում": Այդ արտայայտութիւններից վիրաւորւած զաւթանցիներն ու զանգեզուրցիները հայհոյում, վէճի են բռնւում և քիչ է մնում զէնքի դիմեն, բայց մի քանի տարիքաւոր մարդկանց և կուսակցական մէկ-երկու ընկերների միջամտութեամբ վերջ է տրւում վէճին: Սաքօն խստիւ քննադատում է զօրամասի սպաներին և զինւորներին, թէ՝ այդ նոյն աբօղի մարդիկ, առանց զինւորական տարազի և կօշիկների, նոյնիսկ բոպիկ ոտներով կուել են աղբրէջանական ու տաճկական հորդաների դէմ, որ սպաները փոխանակ յարգանքով վերաբերւելու և զինւորներին էլ ներշնչելու, հեգնում են. դա չի պատչաճում պետական կանոնաւոր զօրքի սպաներին և դա դաստիարակութեան պակաս է, բացի այդ, սպաների մի խոչոր մասը, և գրեթէ բոլոր զինւորները նոյնանման տրեխաւոր զիւղացիների զաւակներ են, զինւորական ծառայութիւնը վերջացնելուց յետոյ պիտի նոյն գիւղացիների կեանքը վարեն և այլն:

Տղեկատուի պարտականութիւն ստանձնած մարդիկ, Հարկաւ, պարտք են համարում տեղի ունեցածի մասին հաղորդելու Դրոյին, որը բարկանում է և սպառնալիք կարդում Սաքոյի հասցէին, թէ՝ "Թող չերևայ աչքիս:"

Հարկաւ, ինչ խօսք, որ Դրոյի սպառնալիքն էլ հաղորդել է Սաքոյին: Պիտի ասել, որ Դրօն ու Սաքօն հաւասարապէս յայտնի նչանաւորներ էին և երկուսն էլ դաչնակցութեան ամենաաչքի ընկած ահաբեկիչները. մէկ վայրկեան պատկերացնելու է, երկուսը յանկարծակի հանդիպէին իրարու և, մոմենտի աղդեցութեան տակ, խոյանային իրարու դէմ. աղգային խայտառակութիւն կը լինէր: Թէև գրել էի նամակում, թէ իղուր է թաքնւել, սակայն հետագային որոչ մանրամասնութիւնները լսելով, գտել էի ճիչտ Սաքոյի վարմունքը:

Ինչպէս պատմում էին ընկ. ընկ. Յարութիւն Թումեանը, Աատուր Աւետիսեանը, Ներսէս Նասիբեանը, Մարտիրոս Արղումանեանը և Ասլան Շահնազարեանը (չէզոք, նախկին դաչնակցական), Դրօն և Նժդեհը Ղարաբաղում ընդհարւել են իրարու հետ խստիւ, բայց չնորհիւ ընկերների միջամտութեան վերջ է տրւել վէճին:

Նոյնը երկու անգամ կրկնւել է Զանգեղուրում, որտեղ Դրօն Նժդեհին[78] մենամարտութեան է կանչում առաջին անգամին, սակայն ինչպէս պատմում էր Մելիք Հասան-Ջալալեանը, որը ներկայ է եղել, Նժդեհը ասում է՝ "մեր կեանքը մեզ չի պատկանում, այլ հայ ժողովրդին, իսկ եթէ ուզում ես խփել ինձ, առ քեզ", ատրճանակը չպրտում է Դրօին: Դրօն փոթիկացնում է, ծիծաղելով ասում "զերասան չան որդի":

Երկրորդ անգամ, ինչ-որ հրաման է արձակած լինում Դրօն, Ղարաբաղից նահանջելուց յետոյ, Նժդեհին յայտնում են, թէ՝ "Հրամանատարը հրամայել է և այլն", Նժդեհը ասում է՝ "այստեղի հրամանատարը ես եմ, նման հրաման չեմ արձակի": Ի հարկէ, Դրոյին յայտնում են Նժդեհի ասածները և, ինչպէս պատմում է զօրամասի բժիչկ Բենեամին Տէր Ղազարեանը, Դրօն չատ խիստ վիրաւորւում է, ջղայնանում:

---

[78] Նժդեհ Գարեգին (1888, Գ. Կղնուք, Նախիջեւանի գաւառ - 1955). Հայ ականաւոր պետական-ռազմական գործիչ, մեծ վաստակ ունի Զանգեզուրի վերկութեան գործում: Առաջին Հանրապետութեան կործանումից յետոյ փորձել վերկել անկախ հայ պետականութիւնը, 1921թ. վերադարձին ստեղծել Լեռնահայաստանի հանրապետութիւն, որը կործանուեց 1921ի ամռանը՝ ռուսական կարմիր բանակի եւ հայ-ադրբեջանական բոլշեվիկեան ուժերի յարձակման հետեւանքով: Խորհրդային վարչակարգի կողմից ձերբակալւել է արտասահմանում 1944թ, բանտարկւել ԽՍՀՄ-ում, որտեղ եւ վախճանւել է: (Խմբ.)

Խմբապետ Համաղասպը պատմել էր Բերկրիի մօտ խմբապետ Վարդանի և Դրոյի ընդհարման մասին, թէ Դրօն վիրաւորել էր Վարդանին ծանր խօսքերով, ինչպէս կասեն՝ վարանում էի հաւատալ Համաղասպին, որ լաւ չէր տրամադրւած ղէպի Դրօն, սակայն երբ այդ մասին պատմեց Դրօին նախրւած մարտիկներից բաչգառնցի Մարտիրոս Աբրահամեանը, ամենայն մանրամասնութեամբ, որ Դրօն կառապանի հայհոյանքից աւելի խիստ հայհոյանք է տւել Վարդանին, չատ ծանր տպաւորութիւն էր թողել վրաս: Եւ, ըստ Մարտիրոսի, քիչ էր մնացել, որ երկու կողմի զինւորները բախէին:

Խմբապետների միջև տեղի ունեցած չատ միջադէպեր եղել էին չնչին բաների համար, ինչպէս պատմում էին ընկերները, որ խմբապետները իրարու չեն հաւանում, ամէն մէկը իրեն գերադաս է համարում, իսկ միւսներին միջակութիւններ, անընդունակներ: Այո, չատ մանր, բայց տխուր և սրտմաչուկ, անցանկալի բաներ են:

Դալի Ղաղարը Դրոյի գնդի վաչտապետներից մէկն է եղել և անձնապէս չատ մօտ, ինչպէս պատմում էին ընկերները, սակայն ինչ-որ պատճառով սև կատու է անցնում երկուսի արանքով, Դալի Ղաղարը խիստ լարւում է Դրոյի դէմ, վերջինիս ամենուրեք "քննադատում, հայհոյում, վատաբանում է և թէև բոլոր ընկերները խստիւ նկատողութիւն են անում Ղաղարին, յանդիմանում իր անպատչաճ ու անվայել վերաբերմունքի համար, բայց նա էլի չարունակում էր իւր էշը քշել[79]: Եւ մի անգամ, 1919 թ. աշնանը, Երևանում, բժիշկ Արտաչէս Բաբալեանն ու ես ականատես եղանք Ղաղարի ցոյց տւած տգեղ վերաբերմունքին հանդէպ Դրոյի: Մենք Աբովեան փողոցով գնում էինք դէպի վեր, ղրոյց անելով, հասանք տղայոց դիմնազիայի դիմացի անկիւնին, կանգ առանք՝ տեսնելով Ղաղարին. եափունջին ուսերին, կազաչի փափախը գլխին թէք ղրած, կանգնել էր դիմնազիայի անկիւնում, անչարժ, հայեացքը ուղղած դիմացի կողմը:

– Տափը մտածը սպասողական դիրքում է, մի խաթա չանի՞, ասաց Բաբալեանը, չտեսնելու գիր, սպասենք մի քիչ, եթէ գնայ, կը նչանակէ՝ ոչինչ չպիտի լինի:

Քառորդ ժամ հաղիւ էր անցել, մէկ էլ տեսանք՝ դիմացի փողոցից Դրօն դուրս եկաւ և նկատելով մեզ, ուղղւեց մեր կողմը, ժպտալով, և հէնց այդ մոմենտին Ղաղարը բերանը բացեց ու Դրոյին լսելի ձայնով սկսեց իւր "շռայլանքը", ուղղւած Դրոյին:

Գալիս է ծնողդ . . . նը. մերա . . . նը ու նման արտայայտութիւններ:

---

[79] Իւր էշը քշել, նչանակում է յամառօրէն չարունակել իր գործը, տեսակէտը և այլն: (Խմբ.)

Հարկաւ, Դրօն լսում էր Ղազարի ափեղցփեղ խոսքերը, բայց ըոլորովին անտարբեր կերպով, կարծես Ղազարի լուտանքները ուրիչ մարդու էին ուղղւած: Դրօն մօտեցաւ մեղ, սիրալիր բարևեց, ձեռք տւաւ, մեր որպիսութիւնը հարցրեց ու մեկնեց դինւորական նախարարութիւն: Եւ երբ Դրօն խօսում էր մեղ հետ, Ղազարը չարունակում էր իւր ափեղցփեղութիւնը:

Դրօն մեղնից բաժանւելուց յետոյ, մօտեցանք Ղազարին և մեր դժգոհութիւնը յայտնեցինք:

– Այ մարդ, չե՞ս ամաչում, ասաց Բարալեանը, դա ի՞նչ վերաբերմունք է, որ ցոյց ես տալիս քո հրամանատարին, քո կուսակցական, զինակից ընկերոջը, որի հետ քանիցս բաց աչքերով մահն էք գնացել թչնամու դէմ: Եւ, որ չատ կարևոր է, ինչպէ՞ս թոյլ ես տալիս քեզ, որպէս կուսակցականի, հայհոյել կուսակցական ընկերոջդ, որը տարիքով էլ մեծ է քեզնից:

– Դուք որ իմանաք, թէ ինչպիսի մովնաննաթ մարդ է նա. ես նրա հօր՝ Կակօյի հոգին . . .

– Ղազար, ամօթ է, դու տեսար, նա ուշադրութիւն չդարձրեց քո լուտանքներին, ներողամտաբար վերաբերուեց, որպէս քեզնից տարիքով մեծ ընկեր:

– Թող փորձէր, ձայն ծպուտ հանէր և տեսնէր խէրը . . .

Այդ միջոցին ես մէջ ընկայ, ասացի՝ Ղազար, դու մոռանում ես, որ անցնող- դարձող մարդիկ նկատում են քո ընթացքը, որը ոչ ոքի վրայ լաւ տպաւորութիւն չի թողնի, և նման ելոյթներով ինքդ քեզ ես վարկաբեկում:

– Պէտք է, որ ժողովուրդը լաւ ճանաչի Կակոյի տղային, թէ ինչպիսի մարդ է, ասաց:

– Ինչպէս երևում է, ասաց Բարալեանը, խելքդ թոցրել ես, պլուպդ չի գործում, լաւ մտածիր , ամօթ է:

Ապա Բարալեանը դարձաւ ինձ, թէ՝ "Միևնոյն է, ինչ էլ ասենք, չի մտնի պլուվը, գնանք":

Թողինք Ղազարին, չարունակեցինք մեր ճամբան: Հարցնում եմ՝ "Արտաչէս, ի՞նչ է պատճառը, որ այսպէս լարւել է Դրոյի դէմ:

– Զգիտեմ, երկար ժամանակ բացակայ էր Հայաստանից. նոր է եկել. Երևի պատճառը մի չնչին բան է. չէ՞ որ հայը հայի հետ հակառակորդ կը դառնայ մի չատ չնչին բանի համար կամ, ո՞վ գիտէ, թերևս անպիտանի մեկը ինտրիգ է արել, ինչ-որ բան փսփսացել ականջին և սա էլ, զիւրահաւատ խենթի մեկը, հաւատ է ընծայել և բռնւել քէնով:

ՅՈՒՇԵՐ ԱՆԴՐԱՆԻԿԻՑ

Այդ րոպէին յիչեցի նոյն առթիւ Անդրանիկի ասած խօսքերը: Ես նրա հետ ծանօթացել եմ չատ ուչ, Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ: 1917 թ. Ապրիլին Թիֆլիսում գումարել էր դաչնակցութեան առաջին Ռայոնական ժողովը, որին որպէս պատգամաւոր Դաչնակցական Ուսանողական Միութեան Կենտրոնական Կոմիտէի կողմից, Պետրոգրադից եկել էի Թիֆլիս մասնակցելու ժողովին: Այն օրերին այնտեղ էին Անդրանիկը, Մուրադը և ուրիչներ: Թիֆլիսում էր նաև չուչեցի ընկ. Կոստի Աթայեանը, թեմականաւարտ, կամաւոր ղինուորական ծառայութիւն կատարած, նոյնպէս խմբապետ էր. մասնակցել էր պարսկական սահմանադրական կռիւներին և աչքի ընկել Զունուզում միապետական ուժերի դէմ մղած կռւում որպէս խմբի հրամանատար: Կոստին մօտ ծանօթ էր Անդրանիկի հետ, և մի օր առիթ ունեցանք խօսելու խմբապետի մասին, իմացաւ, որ Անդրանիկի հետ ծանօթ չեմ, ասաց. "Ես սիրում եմ նրան, յաճախ լինում եմ մօտը, զրուցում դէսից-դէնից. երկու օր առաջ առիթ եղաւ զրուցելու Զանգեզուր-Ղարաբաղի մասին, Րաֆֆու «Դաւիթ Բէկը» և «Խամսայի Մելիքութիւնները» կարդացել է և նրանց տպաւորութեան տակ հետաքրքրութիւն է առաջացել մէջը: Մեր զրոյցը կիսատ է մնացել, ասաց՝ յաջորդ հանդիպմանը պիտի չարունակենք, այնպէս որ, վաղը քեզ կը տանեմ, կը ծանօթացնեմ հետը, և մեր զրոյցի ընթացքին կօգնես ինձ՝ բացատրութիւններ տալու: Պիտի հանդիպենք Յենտրալ սրճարանում, կանխաւ զգուչացնում եմ, որ կերած-խմածի համար ձեռքդ չտանես զրպանդ, Փաչան կը վիրաւորւի, իր հիւրերի ծախսը վճարում է իր քրոջ տղան, որը իր գանձապահ-ծախսարարն է:

Կոստիայի հետ գնացինք Կաֆէ Յենտրալ. արդէն փաչան հկել, մէկ-երկու հոգու հետ զրաւել էր իր անկիւնը, որը իրենն էր դառել, ամէն օր նոյն տեղումն էր նստում, հիւրեր ընդունում, և ոչ ոք այն անկիւնը չէր զրաւում, Փաչայինն էր: Կոստին ներկայացրեց ինձ Փաչային, որի ձեռքը սեղմելով, ծանօթացայ: Նկատելով ուսանողական գլխարկս, հարցրեց, թէ ինչ մասնագիտութեան եմ հետևում, և չատ գոհ մնաց, երբ իմացաւ, որ նպատակս է գիւղատնտես դառնալ: Ապա զրոյց սկսւեց Զանգեզուր-Ղարաբաղի չուրջ: Անդրանիկի տւած հարցերին, թէ որքան է հայութիւնը, ժողովուրդը գլխաւորապէս ինչով է զբաղւում, երկիրը լեռնոտ, է թէ դաչտավայրեր էլ ունի, բաւարար պատասխաններ տւինք: Ապա մի կտոր թուղթ ուղեց, բերին, և ասաց, որ գծենք թղթի վրայ, թէ գաւառները ինչպէս են ընկած իրարու քով:

Կոստին թղթի վրայ նախ գծեց Արաքս գետը, ռուս-պարսկական սահմանի երկայնքին, որին կից, դէպի արևելք չարք են

բռնում, սկսած Նախիջևանից՝ յաջորդաբար, Գողթանը, Գենուաղը (Արևիք), Կապանը (Ղափան), Դիղակը, աւելի հիւսիս, երկրորդ չարք՝ Վայոց Ձորը (Դարալագեաղ), Սիսիանը, Զանգեզուրը, Վարանդան, Խաչէնը, ապա դէպի հիւսիս-արևելք՝ Ջրաբերդը, Գիւլիստանը և վերջինիս կից՝ Գանձակի լեռնային մասը՝ Գարղմանը: Պատմեցինք, որ այդ ամբողջ տարածութեան վրայ միատարր հոծ հայութիւն չէ, այլ տեղ-տեղ կան թրքական ու քրդական չերտեր, որոնց Պարսից նենգ կառավարութիւնը Դաւիթ Բէկի մահուանից յետոյ, սեպի պէս խրել է մեր ժողովրդի մէջ, բաժան-բաժան արել, որ չկարողանայ նորից միացեալ ուժերով ապստամբել:

Անդրանիկի հետ հանդիպումները տեղի ունեցան մի քանի անգամ. ամէն անգամ մի նոր հարց դրոյցի նիւթ կը դառնար, ինչպէս օրինակ՝ պատմական հնութիւնների՝ բերդերի, վանքերի, եկեղեցիների չուրջ, ապա՝ թէ նրանցից որը անցնելում ինչ դեր է կատարել, ներկայիս բոլոր գիւղերում տարրական դպրոցներ կա՞ն թէ ոչ. լսել էի, որ Անդրանիկը ծխական դպրոցում է սովորել, ուստի նման հարցերով հետաքրքրելը չատ լաւ տպաւորութիւն էր թողնում:

Ահա այդ հանդիպումներից մէկին առիթ եղաւ, և ասացի, թէ ժողովրդի մէջ տարածւած է և ցաւ է պատճառում բոլորին, որ խմբապետերն իրարու հանդէպ լաւ վերաբերմունք չունին: Ես նստած էի Փաչայի ձախ կողմը, և նա ձախ ձեռքով խփելով աջ ծնկանս, ասաց : «Մենք, խմբապետներս, զիրար չենք սիրեր. կար մէկը, որ կրնար զմեզ պահել իր բուռին մէջ, ան Դումանն էր. ան չկայ, և մենք զիրար չենք ճանչնար: Դումանը կրնար իշխել ամէնուն վրայ ու հրամայել, և ամէն ոք կը գիտնար իր տեղն ու ընելիքը»:

Շատ ճիշտ էր Անդրանիկի պատասխանը: Դումանը դէմ է եղել կամաւորական չարժմանը, մանաւանդ որ պատերազմի նախօրեակին զումարւած դաշնակցութեան "է" Ընդհանուր ժողովը համապատասխան որոշում չէր հանած: Ընդհանուր ժողովը պարզ որոշում էր կայացրել, թէ ամէն հայ պարտաւոր է կատարել իր քաղաքացիական պարտականութիւնը, և երբ Թիւրքիայում զօրակոչ է յայտարարւել, Վանում, Մուշում և այլուր մերոնք նւագով ու երգով են դիմաւորներին ճամբել իրենց նշանակւած վայրերը: Կամաւորական չարժումը սկսել են մանաւոր մարդիկ, և պատրաստի հող է գտել ժողովրդի մէջ, տարերային բնոյթ ստացել ու ծաւալւել երկրի մի ծայրից մինչև միւսը, ուստի կուսակցութիւնը հարկադրւած է լինում հրապարակ գալու, սկսած չարժմանը կազմակերպւած ձև ու կերպարանք տալու: Հարկաւ, երբ կուսակցութիւնը գլուխ է անցնում կամաւորական չարժման, եթէ Դումանը առողջ լինէր, լուռ հանդիսատեսի դերում չէր մնալու,

պիտի անցնէր գործի և լինէր կամաւորական գնդերի ընդհանուր հրամանատար և, ինչպէս ճիշտ ասում էր Անդրանիկը, Դումանը կը կարողանար բոլորին ներթարկել խիստ կարգապահութեան և, այո, ամէն ոք կը գիտնար իւր տեղն ու անելիքը:

Եւ եթէ Դումանը կենդանի մնար մինչև Հայաստանի անկախ դառնալը, Հանրապետութեան տարիներին տեղի չէին ունենայ չատ անցանկալի դէպքեր ու երևոյթներ: Հանրապետութեան ժամանակ միշտ զգացել է ուժեղ , ղսպող ձեռքի պակասը: Դումանը վաղաժամ մեռաւ, և հայ ժողովուրդն ունեցաւ իր անչափ մեծ կորուստը տեղի ունեցող պատմական զէպքերի հէնց սկզբին: Եւ չատ աւելի մեծ կորուստ ունեցաւ մեր ժողովուրդը Ռոստոմի մահուամբ: Բաղում անգամներ խօսք եղել է այդ մասին, բոլորը, բոլորը ասում էին՝ եթէ Ռոստոմը կենդանի լինէր, այլ կերպ կը կարգադրէր այսինչ, այնինչ գործը կամ տեղի չէին ունենայ որոշ անցանկալի դէպքեր ու երևոյթներ:

Հոկտեմբերի 4-ին ստանում եմ Պօղոսի նամակը հետախուզութեան գնացած տղաների մասին: Տղաները հաստատում են մեր կողմը փախած գաղթականների ասածները: Ամսոյս 5-ին կամ 6-ին կը լինեմ այդտեղ գրում է նա, այժմ պիտի իմաց տանք Նժդեհին, որ մենք պատրաստ ենք և պիտի յարձակուենք Սիսիանի վրայ, որ միաժամանակ ինքն էլ Խուստուփից իջնի Ղափան: Տղաների սիրտը զնդզնդում է, րոպէառ րոպէ սպասում են հրամանի. նրանց ղօտով եմ պահում:

Հոկտեմբերի 6-ին գալիս է Պօղոսը, չատ ոգևորուած և տրամադրութիւնը բարձր, "Դու չուտ արա, պահեստի հաշիւները յանձնիր Գերասիմին և պատրաստ եղիր, հէնց որ Սիսիան մտնենք, դու էլ գաս այնտեղ: Աչխատանքը կը բաժանենք մեր մէջ, ես իմ գործը կը կատարեմ, դու էլ քաղաքացիական գործերը. ես չորան մարդ եմ, գլուխս չունեմ կոմիսար, դատաւոր նչանակելու, դա քո բանն է, կը գաս, որ էդ գործերը կատարես:

Այժմ պէտք է Գեներալի (Մելիք-Մուրադեան), պալկովնիկի (Եգոր Տէր Աւետիքեան) և Գերասիմի հետ խօսենք, որպէսզի Դարալագեազի ուժերի աջակցութիւնը ապահովենք":

Նոյն օրը հաւաքւում ենք Դարալագեազի չտարը, ներկայ են ղօրավար Միքայէլ Մելիք-Մուրադեանը, գնդ. Եգոր Տէր Աւետիքեան, Գերասիմ Բալայեանը, Ենովք Միրաքեանը, դլխապետ Վահան Գալստեանը և ես: Պօղոսը զեկուցում է իրերի դրութեան մասին, որ ամբողջ Սիսիանը, բացի մի քանի տականքներից, որոնք կոմունիստներ են, արտատրոփ սպասում է մեր ղօրամասի առաջխաղացմանը, որ միանայ մեզ:

– Ես երրորդ անգամ մարդիկ ուղարկեցի՝ հետախուզութիւն կատարելու, ասում է Պօղոսը, բերելու մանրամասն տեղեկութիւններ ուրիշ դիւղերից: Նրանց պատուիրել եմ՝ երեք օր մնալ այնտեղ և հաստատ տեղեկութիւններ բերել: Մենք պէտք է երկար չսպասենք, պիտի իմաց տանք Նժդեհին, որ մեզ հետ միաժամանակ նա էլ այնտեղից սկսէ յարձակումը:

– Այո, պիտի սկսել առանց ուշացնելու, պնդում է Գերասիմը:

– Պէտք է սպասել վերջին տուրհանդակներին, տեսնենք, նրանք ի՞նչ են պատմում, ասում է Միրաքեանը:

– Պէտք է ունենալ կենտրոնի համաձայնութիւնը, ասում է Զօրավարը:

Գերասիմն ու ես պնդում ենք, որ կենտրոնին պէտք է կատարուած փաստի առջև կանդնեցնել. կենտրոնը պայմանների ճնշման տակ ուղում է Զանգեղուրը դիջել, բայց մենք հակառակը պիտի անենք, քանի որ հնարաւորութիւն ունենք: Մտքերի փոխանակութիւն ունենալուց յետոյ որոշւում է, որ Պօղոսը, Գնդապետ Եզոր Տէր Աւետիքեանը, գլխ. Գալստեանը և Ենովքը գնան Ջուլ, լսեն Սիսիան ուղարկուած վերջին տուրհանդակներին, եթէ նրանք էլ նոյնը հաստատեն, ինչ առաջիններն են վկայել, յարձակումը սկսել, նախապէս իմաց տալով Նժդեհին:

Ես եթէ կենտրոնի համաձայնութիւնն ունենալը չեչտեցի, ասում է Զօրավարը, չկարծէք, թէ ես դէմ եմ Սիսիանի վրայ գնալուն. ես միայն ուղում եմ, որ հետագային մի փոքրիկ անյաջողութեան համար մեզ չդատապարտեն: Ես մի քանի անգամ դրել եմ Սպարապետին ու զօր. Սիլիկեանին, որ թոյլ տան Վայոց Ձորի ուժերով Նախիջեանը զրաւենք, որը դժւար չէ. այժմ էլ ուշ չէ, պէտք է այդ մասին միատեղ դիմում աննենք:

Հոկտեմբերի 7-ին Պօղոսը, գնդ. Տէր Աւետիքեանը և գլխ. Գալստեանը մեկնում են Ջուլ:

Հոկտեմբերի 8-ին մեկնում է այնտեղ նաև Միրաքեանը: Ջուլում կրկին խորհրդակցում են, յարձակե՞լ, թէ՞ ոչ. Միրաքեանը վաղաժամ է համարում յարձակումը, իսկ միւսները պնդում են:

Հոկտեմբերի 9-ին Պօղոսից կարճ նամակ եմ ստանում, կարճ, յայտնում է խորհրդակցութեան մասին և կրկին յիշեցնում, որ պատրաստ լինեմ, սպասեմ. Սիսիանից երկու ձիաւոր դինւոր կուղարկի՝ ինձ տանելու այնտեղ: Գրում է, որ տուրհանդակ են ճամբել Նժդեհին, նամակ դրել, որ ամսի 11-ին կը յարձակուեն Սիսիանի վրայ, ինքն էլ Խուստուփից սկսէ իր յարձակումը: Գնդ. Տէր Աւետիքեանը և գլխ. Գալստեանը վերադառնում են Քեչիչքենդ:

Հոկտեմբերի 11-ին Պօղոսը Սիսիանի ուժերի գլուխն անցած մտնում է Սիսիան, առանց դիմադրութեան հանդիպելու գրաւում Ղալաջէղ, Բլաք, Շաղաթ, Անգեղակոթ, Բռնակոթ և Ղարաքիլիսա գիւղերը, կտրելով կարմիրների՝ Բաղարչայից դէպի Նախիջևան երկարող վիսուստի ճանապարհը: Բոլոր գիւղերի ժողովուրդը ցնծութեամբ է ընդունում իր հրամանատարին: Պօղոսի հետ Սիսիան է անցնում և Միրաքեանը:

Հոկտեմբերի 12-ին Սիսիանի բոլոր գիւղերը միանում են *աղատագրած* գիւղերին:

Հոկտեմբերի 13-ին Պօղոսը գրաւում է Բարխովկա և Բաղարչայ մալականների գիւղերը առանց դիմադրութեան և գերում 25 հոգի կարմիր բանակայիններ:

Հոկտեմբերի 15-ին գալիս են երկու ձիաւոր մարտիկներ և տալիս Պօղոսի նամակը. "Սիրելի Եղիչ, արդէն ամբողջ Սիսիանը գրաւել ենք, առանց սպասելու և ուշանալու՝ տղաների հետ կը գաս ուղիղ Ղարաքիլիսա կամ Բռնակոթ. կատարելապէս մենակ եմ. ջոկատի հետ Սիսիան մտած մի քանի զանգեզուրցիների ուշքումիտքը իրենց տների վրայ է կենտրոնացած. օր առաջ ուղում են գնալ Գօրիս, ոչ ոք չի ուղում կարճ ժամանակով մնալ տեղումս, աշխատել: Եթէ Իւչ Թափալարից այն կողմը բոլշևիկներ չլինէին, մի րոպէ անգամ չէին սպասի. վաչտապետներից մէկին 100 հոգով ուղարկեցի Դարաբաղի Ձորը, որտեղ նոյնպէս չարժման մէջ են մերոնք: Վաղուանից կանոնաւոր կապ կունենանք Նժդեհի հետ: Երկու անգամ ուղարկուած սուրհանդակները յաջող գնացել-եկել են: Նժդեհը գրաւել է ամբողջ Ղափանը, այժմ ծրագրում ենք Գօրիսի վրայ գնալ: Պէտք է դրսից մի քանի խելքը գլխին մարդիկ էլ գան տեղս՝ քաղաքացիական գործերը վարելու: Բոլշևիկներից գրաւել ենք 40 հրացան և բաւականաչափ հեռագրաթել: Վաղը չէ միւս օրը մէկ ձի կուղարկեմ քեզ, որպէսզի չուտ գաս: Համբոյրներով՝ Պօղոս. Հոկտեմբեր 14, Ղարաքիլիսա:"

Պօղոսը մոռացել էր, որ Դրօն մի ձի էր տուել ինձ, ձիու պէտք չունէի. զրեցի իրեն, որ ձի չուղարկի:

Երկտող էլ Միրաքեանն էր գրել առանձին. "Սիրելի Եղիչ, հեռագրէք Երևան, որ մի քանի հոգի պրոպագանդիստներ և քաղաքացիական մասի յարմար պաշտօնեաներ նշանակեն և ուղարկեն: Պօղոսի հետ մտածեցինք, որ վարչական պաշտօնները զրսից նշանակեն: Բարևներով՝ քո Ենովք. 14 Հոկտեմբեր, Ղարաքիլիսա:"

Հոկտեմբերի 16-ին Ղարաբաղի պահեստի հաշիւները փակելով, խնդրում եմ Գերասիմին՝ ընդունել, որ ես գնամ Սիսիան: Գերասիմը համաձայնւում է և, ընդունելով հաշիւները, իւր կողմից չտապեցնում է Սիսիան անցնել, խոստանալով, որ ինքն էլ կը գայ այնտեղ:

Հոկտեմբերի 17-ին գալիս է Միրաքեանը և յայտնում, թէ Պօղոսը Նժդեհի հետ նամակագրութեամբ յանգել են այն եզրակացութեան, որ պէտք է անպայման գրաւել Նախիջեանը, ուստի Պօղոսի հետ մտածել են, որ ինքը գայ այստեղ, և հեռագիր ուղարկենք: Ինչպէս գեներալն էր ասում, պահանջենք կառավարութիւնից՝ թոյլ տալ մեր ուժերով գրաւել այն:

Գերասիմի մօտ հաւաքւում ենք խորհրդակցութեան՝ դօր. Մելիք Մուրադեանը, զնդ. Տէր Աւետիքեանը, գլխ. Գալստեանը, Գ. Բալայեանը, Յով. Յովհաննէսեանը, Միրաքեանը և ես: Բոլորը միաբերան պնդում են, որ հեռագիր տալով արդիւնքի չենք հասնի, աւելի լաւ է՝ Միրաքեանն ու ես մի չարաթով գնանք Երևան, հարցը դնենք կառավարութեան առջև քննութեան և մեր տեսակէտները պարզաբանենք ու պաշտպանենք:

Ես առաջարկում եմ և պնդում, որ մենակ Միրաքեանը գնայ, իսկ ես անցնեմ Սիսիան, համաձայն Պօղոսի նամակի: Գերասիմը հակառակ է արտայայտւում և միւսներն էլ պնդում են, որ երկու հոգով գնանք ու չուտ վերադառնանք:

– Մենք Պօղոսին կը դրենք այդ մասին, ասում է Գերասիմը, նա էլ դէմ չի լինի երկուսիդ գնալուն, որովհետև Նախիջեանը մինչև այժմ չգրաւելը յանցանք էր համարում:

Հոկտեմբերի 19-ին Միրաքեանն ու ես ճանապարհւում ենք Երևան, նոյն օրը հասնում Արփա, իջևանում ընկ. Էլօ Սիմոնեանի մօտ և յաջորդ օրը հասնում Բաչնորաչէն: Այնտեղ իմացանք, որ Նիկ. Աղբալեանը կառավարութեան կողմից նշանակւած է որպէս լիազօր՝ հսկելու լքւած թրքական գիւղերի բնակիչների թողած արտերը հնձելուն, ապա, հացահատիկները կալսելուց յետոյ, ուղարկելու Երևան:

Ճիշտն ասած, չատ ծանր տպաւորութիւն թողեց վրաս լսածս այդ տեղեկութիւնը: Հայ ազգը երկրորդ Աղբալեան չունէր, զիտական հսկայ պաշար ունեցող մարդ, յայտնի քննադատ, գրականագէտ, համարւել էր հայոց Բելինսկին, հիմա դարձած Բաչնորաչէնի և մօտակայ գիւղերի արտերի պահապան՝ ժամանակին հնձել տալու, կալսելու և հացահատիկները ճամբելու կառավարութեան: Է, եղա՞ւ: Հարցրի, թէ որտեղ է նրա բնակարանը, ասացին, որ ապրում է բեռնատար վագոններից

մեկում, կայարանի մոտ: Անմիջապես ուղղւեցի դէպի կայարան. հետից տեսայ Նիկոլին, կէսին գլխին, բարձրանում էր վագոն: Հասկացայ, որ իր բնակարանն է, գնացի, մուտքի մոտ կանգնեցի. նախ կարդացի վագոնի վրայ գրւածը ռուսերէն՝ 8 ձիու և 40 մարդու (եթէ չեմ սխալւում) համար, ապա ձայն տւի, հարցրի, կարելի՞ է ներս գալ:

– Արի, արի, եղիչ ջան, ասաց:

Արագ բարձրացայ վագոն, ողջագուրւելուց յետոյ հարցրի.

– Նիկոլ, ի՞նչ ես չինում այստեղ (իբր տեղեակ չեմ):

– Կառավարութեան համար հաց եմ պատրաստում. արտերը հնձել եմ տւել, հիմա էլ կալսում են, պահանջել եմ քսակները ուղարկեն, որ հացահատիկներով լեցնել տամ, ուղարկեմ Երւան: Ազատ ժամերիս էլ երեխաների համար չիր եմ պատրաստում տանձից, խնձորից ու ծիրանից: Ծիրանի չիրը պատրաստ է արդէն, հիմա տանձի և խնձորի չիր եմ պատրաստում. նայիր յետ և տես չարանը:

Նայեցի յետ, իրօք, հինգ – վեց երկար թելի վրայ վագոնի լայնքին, պատից-պատ կախւած չորանում են:

– Ախր, Նիկոլ, սա քո տեղն է՞, քո ի՞նչ գործն է արտ հնձել տալ, կալսել տալ. դա ինձ պէս մի չորանի գործ է. ինչու՞ պիտի քո թանկագին ժամանակդ վատնես չորան մարդու աշխատանք կատարելով: Մի՞թէ կառավարութիւնը ուրիշ մարդու չէր կարող տալ, ինչու՞ է նման աշխատանքի լծել քեզ, որ բնաւ չի պատշաճում քեզ: Ախր, մարդիկ ի՞նչ կասեն, երբ լսեն, որ դու քո իսկական գործը թողած, եկել ես չորան մարդու գործ կատարելու:

– Կառավարութիւնը քո ասած չորան մարդկանց հանդէպ վստահութիւն չունի, հէնց այդ պատճառով էլ, որպէս վստահելի մարդու, ինձ յանձնարարեց այս գործը, և ես սիրով ստանձնեցի. աշխատանքը չի նւաստացնում մարդուս, մարդուն նւաստացնում է ծուլութիւնը, աշխատանքից խուսափելը:

– Շատ ճիշտ է, առարկութիւն չունեմ ասածիդ, որ աշխատանքը չի նւաստացնում մարդուն, սակայն ես չեմ ասում, թէ ստանձնածդ աշխատանքը նւաստացուցիչ է, բնաւ: Ես ասում եմ՝ այն աշխատանքը, որ ստանձնել և կատարում ես հիմա, ինձ պէս մի չորան մարդ կարող է կատարել, սակայն իսկապէս գրական քո աշխատանքը ինձ պէս չորանը բնաւ չի կարող կատարել: Ահա, այս է իմ ասածը և, որ շատ կարևոր է, ժամանակդ վատնւում է իղուր տեղը, մինչդեռ կարող էիր քո նախասիրած աշխատանքով զբաղւել, որով շատ աւելի մեծ ու գնահատելի գործ կը կատարէիր մի հանգստաւէտ բնակարանում: Եւ, վերջապէս, ինչու՞ ես վագոնում ապրում, գիւղում, կայարանին շատ մօտ բնակելի տներ կան, ինչու՞ այնտեղից մեկում չես սենեակ վերցրել:

– Այստեղ աւելի յարմար է, աչքիս առջև են աշխատողները, տեսնում եմ, թէ ինչպէս են աշխատում: Դու երևի նկատի ունես, որ այս վագոնը յատկացած է նաև ձիերի փոխադրութեան համար: Նշանակութիւն չունի:

– Ես համաձայն չեմ քեզ հետ. անցեալ տարի էլ նոյն բանն ասացիր, երբ եկել էի մօտդ, քո բնակարանը, տեսայ, որ մահճակալ չունես, գետնին ես քնում, անկողինդ խսիրի վրայ փռած. խիստ ցաւ ղգացի, արտայայտեցի, և դու նոյնն ասացիր, թէ նշանակութիւն չունի: Շատ մեծ նշանակութիւն ունէր, անկախ Հայաստանի կրթական նախարարը, թէկուզ հասարակ փայտից չինած մահճակալ չունենա՞յ: Էդ "նշանակութիւն չունի"-ն իմ գլուխս չի մտնում:

– Լաւ, թողնենք այդ լսեցի, որ մերոնք գրաւել են Զանգեզուրը, պատմիր, ինչպէ՞ս է տեղի ունեցել. դա չատ հետաքրքրական է: Եւ ինչո՞ւ ես գնում Երևան, ես կարծում եմ, որ մնայիր այնտեղ, աւելի օգտակար կը լինէիր:

Նիկոլին պատմեցի՝ ինչ որ գիտէի, և յայտնեցի իմ Երևան գնալու նպատակը:

– Շատ մեծ սխալ է, որ ամռան, երբ ամբողջ Նախիջևանի և գաւառի թուրքերը լքած են եղել քաղաքն ու գիւղերը և փախած Պարսկաստան, մերոնք չեն գրաւել մինչև Օրդուբադ և այդպիսով ոչնչացրել Զանգեզուրի ու Երևանի միջև ցցած խոչընդոտը: Թուրքերը տեսնելով, որ մենք նպատակ չունենք իրենց լքած բնակավայրերը գրաւելու, թէկուզ վախվխելով, վերադառնում են իրենց տեղերը, և երբ մի քանի հարիւր ձիաւոր ռուսներ հասնում են Նախիջևան, այլևս իրենց ապահով են ղգում: Հիմա եթէ միտք կայ, թէկուզ կռւով գրաւելու մինչև Օրդուբադ, և հնարաւոր է այդ, ի հարկէ, ողջունելի է:

Հոկտեմբերի 21-ին Բաչնորաչէնից մեկնում ենք Ղամարլու, որտեղ, հէնց կայարանում, հանդիպում ենք բժ. Սարգիս Յովհաննէսեանին և Տիգրան Սահակեանին, երկուսն էլ դաշնակցական: Սարգիսը Արամի չրջանի ընկերներից է, որ Արամի և միւս ընկերների հետ Բէնիկ Վարդապետի, թեմական դպրոցի տեսչի գէմ ցոյց անելու հետևանքով արձակւել էր դպրոցից: Բոլոր արտաքսւած ընկերները գնում են Երևան, ընդունւում այնտեղի թեմական դպրոցի համապատասխան դասարանները: Սարգիսը դպրոցն աւարտելուց յետոյ գնում է Գերմանիա, բժշկութիւն սովորում: Դեռ աշակերտական նստարանի վրայ, բանաստեղծութիւններ էր գրում, յետոյ մամուլում երևաց Սար-Յով ստորագրութեամբ: Ամուսնացել էր Յովնանեան դպրոցաւարտ բանաստեղծուհի Վ. Աղասեանի հետ: Սարգսին տեսայ պայուսակը ձեռքին, նոր էր եկել Երևանից բեռնաւորւած դեղորայքով, չրջանի

գիւղերը պտտելու, յատկապէս մալարեա կոչուած անպիտան հիւանդութեան դէմ պայքարելու համար:

Տիգրանը զանձակեցի մեր լաւագոյն ընկերներից մէկն էր, ժամանակին կուսակցութեան որոշմամբ ահաբեկումներ կատարած և շատ համեստ մարդ: Վահան Մինախորեանի քրոջ ամուսինն էր և Վահաննից տան պահապան հրեշտակը: Վահանը, որպէս յեղափոխական, աստանդական կեանք ունէր, տան ցաւերով ու հոգսերով զբաղուելու և օգտակար լինելու հնարաւորութիւն չունէր, իսկ տարագրուելուց յետոյ էլ առաւել ևս: Տիգրանը անչափ սիրով էր կապուած Վահանի հետ, և վերջինս գուրգուրանք էր տածում նրան իր հոգու խորքում: Եւ հետագային, Հայաստանը խորհրդայնանալուց յետոյ, երբ մի չարագործ խուլիգանի արձակած զնդակով սպանուեց Տիգրանը, Վահանի վրայ անչափ ծանր էր ազդել և իր զրած նամակներից մէկում զառնօրէն արտայայտել էր այդ առթիւ:

Թէ Սարգիսը և թէ Տիգրանը, իմանալով մեր՝ որտեղից գալը, բուռն հետաքրքրութեամբ հարցրին տեղի ունեցած վերջին դէպքերի, ժողովրդի վիճակի և տրամադրութեան մասին, մենք էլ ինչ որ գիտէինք, պատմեցինք, և նրանք ուշադրութեամբ լսում էին, իրենց ուրախութիւնը յայտնում:

Գիշերեցինք Ղամարլույում և միւս օրը հասանք Երևան:

ԵՐԵՒԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 24-ին եղայ Ռուբէնի մօտ, յայտնեցի Միրաքեանի հետ Երևան գալու մասին և թէ ինչ նպատակով ենք եկել: Ռուբէնը պատուիրեց վաղը լինել կառավարութեան չէնքում, զեկուցել ընկերներին:

Հոկտեմբերի 25-ին Միրաքեանի հետ միասին գնացինք կառավարութեան չէնքը՝ զեկուցելու մեր ստանձնած յանձնառութեան մասին: Նախարարներից ներկայ էին Ռուբէնը, Աբրահամ Գիւլխանդանեանը, Արշակ Ջամալեանը և Սաքօ Արարատեանը: Ընկերներին զեկուցում ենք Սիսիանի, Ղափանի գրաւման մասին ինչպէս տեղի են ունեցել դէպքերը յաջորդաբար, ապա Նախիջևանի շրջանը գրաւելու հարցը. ինչպէս անհրաժեշտ են համարում թէ Նժդեհն ու Պօղոսը և թէ Վայոց Ձորի հրամանատար զօր. Մ. Մուրադեանն ու այնտեղի գործիչները:

Ընկերները մեր զեկուցումն ու բացատրութիւնները լսելուց յետոյ պատասխանեցին, որ Նախիջևանի հարցը առանձին քննութեան կառնէ կառավարութիւնը և արդիւնքի մասին կը

յայտարարէ, իսկ մեր միւս պահանջներին՝ ռազմամթերքի, զեղորայքի, զինուորների համար հագուստի, սպիտակեղէնի և այլ պարագաների, բաւարարութիւն կը տրւի պետական պահեստներից, համապատասխան նախարարութեանց կարգադրութեամբ:

Ռուբէնը մեր զեկուցումից յետոյ ասաց, որ երեկոյեան կառավարութիւնը նիստ կունենայ, որ միւս օրը ներկայանամ, թերևս լրացուցիչ բացատրութիւններ տալու կարիք լինի:

Հոկտեմբերի 26-ին գնացի Ռուբէնի մօտ, զինուորական նախարարութիւն. այնտեղ էր և Սաքօ Արարատեանը: Ընկերները յայտնեցին, թէ Բիւրոյի որոշմամբ, որպէս Բիւրօ-կառավարութեան ներկայացուցիչ, պիտի մնամ Քէշիշքէնդում,
ա) կապ պահելու Նժդեհի և Բիւրօ-կառավարութեան միջև, բ) Նժդեհը իւր յարաբերութիւնը կառավարութեան հետ պիտի պահէ և պահանջներ ունենալուց յայտնէ միայն իմ միջոցով, գ) պարբերաբար պէտք է տեսնւեմ Նժդեհի կամ նրա ներկայացուցչի հետ, դ) իմ և Նժդեհի կապը մնում է գաղտնի՝ Բիւրոյի, Նժդեհի և իմ մէջ: Քէշիշքէնդում որպէսզի Բիւրօ-կառավարութեան գաղտնի գործունէութեան իմ ներկայացուցիչ լինելու պարագան աննկատ մնայ, ես պիտի համարւեմ ներքին գործոց նախարարութեան ներկայացուցիչ Վայոց Ձորում, իսկ արտակարգ կոմիսար Գ. Բալայեանը վերադառնայ Երևան, որպէս պառլամենտի անդամ, որովհետև չուտով սկսւելու էր պառլամենտի նստաշրջանը: Մթերքները ստանալու համար անհրաժեշտ ցուցմունքներ պիտի անէր Սաքօ Արարատեանը, որն այդ ժամանակ վարում էր ներքին գործոց նախարարութեան գործերը:

Սաքօ Արարատեանը Աչոտ Մելիք Յովսէփեանին հրաւիրել էր պաշտօնի, որպէս միլիցիայի դիրեկտորի և ընակարան էր յատկացրել նրան հենց ներքին գործոց նախարարութեան շէնքում, և ես էլ իջևանած լինելով Աչոտի մօտ, հնարաւորութիւն ունէի յաճախ տեսնւելու Սաքոյի հետ:

Հոկտեմբերի 27-ին ներկայացայ Սաքոյին՝ հրահանգներ ստանալու. նա տւաւ պետական պահեստի կառավարիչ Գէորգ Ստեփանեանին ուղղւած մի գրութիւն՝ պահեստից բաց թողնելու կցւած ցուցակի երեսով՝ զինուորական զգեստներ, սպիտակեղէն, ունկակապերով գլխարկներ և մի գրութիւն էլ՝ ուղղւած զեղորայքի պահեստի կառավարիչ Մ. Էնէղեանին՝ արկղների մէջ ամրացրած զեղորայք յանձնելու գրութիւնը ներկայացնողին՝ ինձ, իսկ ռազմամթերքը ստանալ Քանաքեռի պահեստից, ուր կը կարգադրւի, որ ըստ պահանջագրի պատրաստեն, և մենք յետ գնալուց ստանանք ու չարունակենք մեր ճամբան:

Փողոցում յանկարծ դէմս ելաւ ընկ. Բախչի Հասան-Ջալալեանը. ասացի՝ "Բախչի, Աստւած քեզ ուղարկել է ինձ համար":

– Խէր լինի, ի՞նչ կայ:

– Ձեմ երկարում, հայկական սովորութեան հակառակ, առանց յառաջաբանի ասում եմ. կը գա՞ս միասին գնանք Դարալագեաղ:

– Ես էլ չեմ հարցնում ստանձնելիք դերս. հենց այս ժամին պատրաստ եմ մեկնելու, քանի որ ազատ եմ, ընտանիքս անհետ կորած Բագւայ կռիւների վախճանին, մնացել եմ բուի պէս մենակ:

– Քանի որ այդպէս է, գնանք պետական պահեստ, ասացի և ճամբին պատմեցի, որ պէտք է ռազմամթերք, հագուստեղէն և դեղորայք ստանանք՝ Նժդեհին ուղարկելու, Զանգեզուրի զօրամասի պէտքերը հոգալու համար: Բախչին տարիքով ինձնից մեծ և ստաժով Բագւում աշխատած հին ընկերներից էր. չատ ոգևորութեամբ գործի կպաւ և մինչև ամսի 31-ը ապրանքներ էինք ընդունում միասին, արկղների մէջ տեղաւորում: Փոխադրութիւնը մինչև Բայաղէտ պիտի կատարւէր մալականների փուրգոններով, իսկ Բայաղէտից մինչև Ներքին Ղարաննուխ գիւղը՝ հայ սայլապանների միջոցով:

Երկու օր առաջ փողոցում յանկարծ դէմս էր ելել Պետրոգրադի գիւղատնտեսական ճեմարանի ուսանող ընկերս՝ Ռաֆայէլ Խոյլեանը, երկուսս էլ նոյն կուրսի ուսանողներ: Ռաֆայէլը ցանկութիւն յայտնեց Զանգեզուր գնալու և այնտեղ աշխատելու: Սաքօ Արարատեանին յայտնեցի Ռ. Խոյլեանի և Բ. Հասան- Ջալալեանի մասին. հենց նոյն օրը երեկոյեան Սաքօն հաւանութիւն տւեց, որ երկուսն էլ ընդունւեն աշխատանքի: Բախչիին արդէն գիտէր, ճանաչում էր Բագւից , որտեղ եղել է ակտիւ աշխատանք կատարողներից մէկը, որպէս չրջանային պետական կոմիտէի անդամ նաւթահանքերում:

Ռաֆայէլի մասին ես պատմեցի, որ մեր լաւ ընկերներից է, եղել է կամաւոր Անդրանիկի գնդում, առաջին աղէտաբեր նահանջից յետոյ վերադարձել է Պետրոգրադ՝ չարունակելու ուսումը, և այնտեղ դաշնակցական ուսանողական խմբի մէջ եղել է ակտիւ աշխատողներից մէկը:

Մելիքսէթ Եսայեանն ու ես ղրոյց անելով բարձրանում էինք Աբովեան փողոցով, հանդիպեցինք Դաւիթ Անանունին և Աչոտ Յովհաննէսեանին (բոլշևիկ), որոնք տաք-տաք խօսելով իջնում էին ցած, և երբ հասանք իրարու, կանգ առանք: Աչոտը քննադատում էր մեր կառավարութեանը և ասաց՝ "երբ տեսնում էք, որ չէք կարողանում կառավարել երկիրը, հեռու կացէք, թողէք ուրիշները կառավարեն: Դուք մի կարծէք, թէ Մայիսեան ռէպրեսիաներով բոլշևիկներին արմատախիլ էք արել այս երկրում:

Կաղմակերպութիւնները չարունակում են դեռ ևս և կարճ ժամանակից յետոյ պիտի ինքներդ աղաչէք մեզ":

– Մենք ձեր երեսից ենք փախած, ասում է Դաւիթը, ուր մնաց, որ կամովին երկրի ղեկը ձեզ յանձնենք: Դուք (իմա՝ հայ կոմունիստները) երկիրը չէք կարող պաշտպանել, պիտի կցէք Ռուսաստանին և ոչնչացնէք մեր անկախութիւնը: Ինչու՞ չէք բարեհաճում "ընկեր" Բէմալի վրայ աղղել, աւելի ճիշտ՝չէք հարկադրում նրան՝ յետ քաշելու իր զօրքերը, չէ՞ որ ձեր դաշնակիցն է:

– Ես ևթէ հնարաւորութիւն ունենայի, ասում է Մելիքսէթը, ձեզ բոլորիդ մի օրւայ ընթացքում կը թունաւորէի, ուր մնաց դեռ ձեզ հրաւիրենք, որ մեր գլխին նստէք և հոգի հանէք: Մեր երկրին հասած դժբախտութեան պատճառը դուք էք. ձեր հրաւէրով է Բէմալը չարժւել ղէպի Հայաստան, եթէ ձեր համաձայնութիւնը չը լինէր, տաճիկները մեզ հետ չէին կռւի:

– Դուք մի կարծէք, թէ Բէմալը մեր անկեղծ բարեկամն է, ասում է Աչոտը, մենք նրան չենք հրաւիրել և ցուցմունք չենք տւել, նա մեր ձեռքին զործիք է միայն Եւրոպական իմպերիալիզմի ղէմ, ուրիչ ոչինչ:

– Ոչ, ոչ. ձեր համաձայնութեամբ է Բէմալը չարժւել, մեզ համոզել չես կարող, ասում են Դաւիթն ու Մելիքսէթը:

– Այդ ինչպիսի՞ զործիք է ձեր ձեռքին Բէմալը, հարցնում եմ ես, որ նրան ձեր ցանկացած ձևով չէք զործածում: Ինչպէ՞ս է, որ նա Եւրոպական իմպերիալիզմի ղէմ ձեր հրահանգով ու կամքով կռւել կարող է, որ աւելի դժւարին է, իսկ Զանգեզուրից չի հեռացնի իւր զօրքերը ձեր առաջարկութեամբ, որ աւելի զիւրին է:

– Կան խնդիրներ, որոնց մասին դեռ վաղաժամ է խօսել, ասաց Աչոտը:

Նոյն օրը Լևոն Զառաֆի մօտ էի, և նա պատմում է Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչների հետ տարւող բանակցութիւնների մասին:

Բոլշևիկները պահանջում են մեզնից՝

- Իրենց զիջել Ղարաբաղը, Ղազախի մի մասը, Գանձակի լեռնային մասը, Զանգեզուրն ու Նախիջևանի չրջանը:
- Ճանապարհ տալ իրենց ռազմամթերք և մթերքներ փոխադրելու Տաճկաստան:
- Նժդեհին յետ կանչել Զանգեզուրից:
- Ընդունել սովետական Ռուսաստանի օրիենտացիան և երես չրջել դաշնակից պետութիւններից:
- Արձակել բանտերից Մայիսեան չարժումների օրերին ձերբակալւած բոլշևիկներին:

Մենք առ այժմ հաշտւում ենք կատարւած փաստի հետ, որ Ղափանի մի մասը, Գանձակի լեռնային մասը, Ղարաբաղը նրանց

Կարևորը, ի հարկէ, եապօնին սանձահարելն է. թէ որքան կը յաջողի այդ, կերևայ մօտ ապագային:

Անցեալները "Յառաջ" թերթում լոյս էր տեսել հետևեալ տեղեկութիւնը "Էրզրումի չրջանում պատերազմի ժամանակ կոտորածներից ազատւած մօտ տասը հազար հայեր են կենտրոնացած. ժողովրդի ապրուստը հոգում է Ամերիկեան նպաստաբաչխ մարմինը: Տաճիկները լաւ են վերաբերւում հայերի հետ": Հայկական տեղեկատու բիւրօ:

Մի չարք ընկերներ, որոնց հետ և ես, հետաքրքրւում էինք վերոյիչեալ տեղեկութեամբ, թէ Պետական Տեղեկատու Բիւրօն ինչ աղբիւրներից է ստացել: Ըստ Միքայէլեանի տւած բացատրութեան, տեղեկութիւնը հաղորդել է էրզրումի չրջանից մեր կողմն անցած մի կին: Տեղեկատու Բիւրօն այնպէս է հրատարակել տեղեկութիւնը, որի ճիչտ լինելու մասին չպիտի կասկածել: Երբ յայտնի դարձաւ տեղեկութեան աղբիւրը, ընկերների մէջ խիստ դայրոյթ առաջացրեց, և բոլորը խստիւ քննադատում էին Տեղեկատու Բիւրոյին: Եթէ վերջինս հաղորդած լինէր թէ՝ "Էրզրումի չրջանից մեր կողմն անցած մի կնոջ պատմելով, իբր Էրզրումի չրջանում ապաստանած այսքան հայութիւն կայ և այլն", յիչեալ լուրը այնքան էլ դայրոյթի տեղիք չէր տայ, սակայն առանց վերապահութեան նման տեղեկութիւններ հաղորդելը և խմբագրութեան կողմից առանց ծանօթութեան տպագրութեան յանձնելը միանդամայն անհանդուրժելի էր համարւում: Մեր պատւիրակներն ու դիպլոմատները Եւրոպայում ի լուր աչխարհի ամէն օր խօսել և խօսում են տաճկական խժդժութիւնների, դաղանութիւնների և հայակերութեան մասին, իսկ կառավարական պաչտօնական օրգան "Յառաջ" թերթը, վերոյիչեալ տեղեկութեամբ տաճիկների մարդասիրութեան մասին է վկայութիւն տալիս, այն էլ մեր և նրանց միջև տեղի ունեցող պատերազմի, մանաւորապէս մեզ համար ամենաանհնպաստ ժամանակ: Եւ չատ ընկերներ իրաւացիօրէն քննադատում, դատափետում էին Տեղեկատու Բիւրոյին յիչեալ տեղեկատւութեան համար: Եւ այդ առիթ անկարող եղայ իմ դայրոյթը չյայտնել ներքին գործոց նախարարութեան ներկայացուցիչ Վայոց Ձորում, այնտեղ էր միլիցիայի պետ Աչոտ Մելիք Յովսէփեանը. Տեղեկատու Բիւրոյի մասին ինձ լսելուց յետոյ, վերջինիս հրահանգեց մի խիստ դրութիւն ուղղել Տեղեկատու Բիւրոյի կառավարչին և պահանջել, որ տեղեկութիւնները նախքան հաղորդելը ի գիտութիւն

հասարակութեանը, նախասէնց ներկայացնի Ներքին Գործոց նախարարութեանը, դրաքննութեան ենթարկելու, և որ առանց դրաքննութեան ենթարկած որևէ լուր հաղորդելու համար խիստ պատասխանատուութեան կենթարկի:

ՏԱՃԻԿՆԵՐԸ ՂԱՐՍԻ ԴԱՐՊԱՍՆԵՐԻ ՇԵՄԻՆ

Հոկտեմբերի 30-ին Ղարսից գալիս է մեր սաւառնակը, որ չափազանց ծանր ու տխուր լուրեր է բերում. տաճիկները քայլադայլ մօտենում են Ղարսին և մեր զօրքերը չեն դիմադրում: Մեր քաջարի զնդապետներից Մաղմանեանը հրաման է տալիս իր զօրամասին՝ խոյանալու թշնամու դէմ և ինքը ծուրը հանած առաջ է անցնում, սակայն զօրամասը տեղիցը չի շարժւում և նա ատրճանակը ուղղում է իր ճակատին, ինքնասպան լինում, չցանկանալով տեսնել հայ զինուորի անպատիւ կեցուածքը: *Ամենուրեք, տներում թէ դուրսը՝ կամիէներում, ճաշարաններում և փողոցում բոլորի խօսքն ու զրոյցը հայկական զօրքի չուրջն է:* Բուռն կերպով քննադատում են, թէ 12,000- նոց տաճկական բանակի առջև տեղի է տալիս երեք ու կէս անգամ աւելի, 30,000-նոց հայկական բանակը՝ "սա աղգային խայտառակութիւն է, ուրիչ ոչինչ":

Շատերը մեղադրում են զինուորական նախարարութեանը, որ վերջին չտապ զօրահաւաքով խուժան է հաւաքել և ուղարկել պատերազմի դաշտ և խառնել զօրքին. խուժանը խանգարում է կանոնաւոր զօրքին, վերջինիս չարքերում առաջ բերում անկարգապահութիւն և նոյն իսկ չփոթ: Մեղադրում են զինուորական հրամանատարութեանը, որը ռազմագիտական մի շարք անհանդուրժելի սխալներ է գործել: Ոմանք մեղադրում են նախարարական ամբողջ կազմին, որ հնարաւոր միջոցներ չի գործադրել երկիրը կազմակերպելու ըստ ամենայնի, և պաշտօնեաների կաշառակերութիւնը, կեանքի թանկութիւնը, սոսկալի չափերի հասած չարաշահութիւնները, աւազակութիւնը, ալան-թալանը հիասթափեցրել են մեր ժողովրդին և վերջինիս մօտ առաջ բերել խոր անտարբերութիւն դէպի վերահաս վտանգը, և ժողովուրդը իրեն յանձնել է բախտի կամքին:

Շատերն էլ մեղադրում են կառավարութեանը, որ վերջինս ինքը ղարկ է տալիս դասալքութեանը: Կառավարական բոլոր հիմնարկութիւնները դարձրել է դասալիքների ապաստան: Ինտելիգենցիան գլխովին դասալիք է. այդ բանը տեսնում է ժողովուրդն ու հետևում նոյն օրինակին:

Ոմանք էլ ասում են, թէ կուսակցութիւնը ամբողջ կազմով կառավարութեան գլուխ անցնելով, պատճառ է դարձել կուսակցութեան ծայր աստիճան թուլանալուն, որ երկրի կեանքին կուսակցութիւնը տոն չի տալիս, այլ հանդիսատեսի դերում է դնում:

Ոմանք միատարր կառավարութիւն ունենալը չարիք համարելով, մեր անկման պատճառը նրա մէջ են տեսնում, որ երկրի գործերին մասնակից չեն միւս հոսանքները, և նրա ուժերը չլատուում են:

Մի շարք ընկերներ գտնում էին, թէ պէտք էր նախապէս բանակցութեան մէջ մանէինք և համաձայնութեան գայինք Մուստաֆա Քէմալի հետ, որով խուսափած կը լինէինք աղէտից:

Շատ-շատերն էլ մեղադրում էին կառավարութեանը, որ Լեգրանի հետ չուտ համաձայնութիւն չի կայացրել, բանակցութիւնները ձգձգել է, և իղուր մենք խուսափում ենք ռուսների կողմից ցոյց տրուելիք աջակցութիւնից, քանի որ եւրոպացիները մեզ միշտ խաբել են, դարձեալ պիտի խաբեն. նրանցից օգուտ չկայ:

Բաղմաթան տեսակէտներ ու կարծիքներ. սակայն ուշի-ուշով դէպքերին հետևելով և երկրի իսկական դրութեանն ի մօտոյ ծանօթանալով, մարդ պիտի յանգի այն եղրակացութեան, թէ՝

ա) Մեր նորածին պետութիւնը իր մի բուռն ժողովրդով չպիտի կարողանար դիմագրաւել իր դարաւոր թշնամուն, որը դարերի կազմակերպած պետութիւն է, ժողովրդի քանակով խիստ գերազանց, հինգ-վեց անգամ աւելի մեղնից և ունի պետական միջոցներ, որից մենք զուրկ ենք:

բ) Շուրջ երեք տարուայ իր անկախութեան ժամանակ իսկ համաշխարհային պատերազմի չնորհիւ կոխկրտուած մեր ժողովուրդը հարկադրուած էր չարունակ արտաքին պատերազմներ մղել իր հարևան պետութիւնների և ներքին թշնամիների դէմ: Կասկածից զուրս է, որ մեր ժողովուրդը չունէ քաշելու հնարաւորութիւն չունեցաւ, խպատ հիւծուեց, ուստի և թուով իրեն գերազանցող մի ժողովրդի հետ չպիտի կարողանար չափուել:

գ) Դարերի ընթացքում հայ ժողովուրդը եղել է ստրուկ տաճիկների տիրապետութեան ներքոյ, միշտ հալածուել, կողոպտուել և կոտորուել է տաճիկների ձեռքով, կոխկրտուելով նրանց ոտքի տակ, երկու-երեք տարի ազատ ապրելով, դեռ չէր ազատագրուել հզօրին նեմական լինողի հոգեբանութիւնից և այդ պատճառով նա

ակնածանք ունէր տաճկական ուժի նկատմամբ և ինքնավստահութիւն չունէր:

դ) Հայութեան մէջ, ոչ միայն ստորին, այլ և բարձր խաւերում, ինչպէս նաև մտաւորականութեան չարքերում արմատացած չէր անկախութեան գաղափարը: Դարերի ստրկական վիճակից եկնելով և անսպասելիօրէն անօրինակ, աչխարհում ոչ մի տեղ գոյութիւն չունեցող աղատութեան գերին ընկնելով, չէր հաւատում անկախութեան և աղատութեան պահպանմանն ու տևականութեանը: Դարեր չարունակ ենթակայ լինելով օտար բռնակալ ուժերի, կրաւորական վիճակում, չէր կարող երկու-երեք տարուայ ընթացքում ինքնավստահութիւն ձեռք բերել աղատ ու անկախ ապրելու: Հայ ժողովուրդը միշտ այն համոզումն է ունեցել, որ մեն-մենակ ծով մահմեդականութեան մէջ գլուխ պահել չի կարող, առանց կողմնակի մի քրիստոնեայ պետութեան օգնութեան: Հայ ժողովորդը միշտ աչքը յառած է եղել քրիստոնեայ պետութիւններին, որոնցից զերազասել է Ռուսաստանին ու փաբել վերջինիս, համարելով նրան իր աղատարարը: Հարիւր տարուց աւելի է, որ հայ ժողովուրդը թէ Ռուսաստանում, թէ Տաճկաստանում և թէ Պարսկաստանում ունի ռուսական օրիենտացիա: Ռուսասիրութիւնը մեղանում միշտ էլ զարդացած ու խորացած է եղել: Այժմ, երբ տաճկական բանակը չարժւել է Հայաստանի վրայ, և մեր հիւսիս-արևելեան սահմաններում կենտրոնացել են ռուսական զօրքերը, մեր ժողովուրդը վերջիններիս է յառել իր հայեացքը: Ժողովուրդը յոգնած է, ինտելիգենցիան անկար և, առանց կողմնակի ուժի միջամտութեան, անհնարին է համարում երկրի պաչտպանութիւնը: Եկել են ռուսները, որոնց միշտ սպասել է մեր ժողովուրդը, իր բոլոր խաւերով, և այժմ զրկաբաց պիտի ընդունէ:

Մտաւորականութեան չարքերում մատերի վրայ կարելի է հաչւել այն մարդկանց, որոնք տարուած են անկախութեան գաղափարով: Ակներև է, պիտի ասել, որ դաչնակցական ինտելիգենցիայի 95%-ից աւելին անկախութեան է ձգտում մակերեսայնօրէն: Հայաստանի սոց-դեմոկրատ կազմակերպութեան պատկանող ինտելիգենտներն աւելի չեչտած անկախականներ են, քան մեր չարքային ինտելիգենտների 95%-ը:

ե) Զարմանալի չէ, որ այժմ, երբ տաճիկները սպառնում են ոչնչացնել մեր մանուկ հանրապետութիւնը, և ռուսները կանգնել են մեր սահմանապլխին, առաջին հերթին ինտելիգենցիան աչքը յառել է ռուսներին և վերջիններից է սպասում հայ ժողովրդի ֆիզիկական գոյութեան փրկութիւնը: Ամէն օր տեղի են ունենում դանազան ժողովներ, ուր քննութեան են առնւում ռուսների հետ համաձայնութեան գալու խնդիրը և դրական եղրակացութեան

յանգում. այդ ժողովների մասին տեղեակ են նաև մեր պատասխանատու ընկերներից շատերը, որոնք նոյնպէս ինքնավստահութիւնից դուրկ լինելով, մատների արանքով են նայում այդ բոլորի վրայ: Դժւար չէ կռահել, որ մեր ինտելիգենցիան նախօրօք հող է պատրաստում, որ ռուսները Հայաստան գալուց պատշաճ ղիրք բռնէ: Այլևս կասկածից դուրս է համարւում, որ մենք պիտի չարաչար պարտութիւն կրենք և տեղի տանք, ռուսները պիտի գան, տիրեն Հայաստանին և վերջ տան մեր անկախութեանը: Թէ ինտելիգենցիան և թէ ժողովուրդը ուրախ են ռուսների գալով. պարզ էր աւելի քան, որ մեր կողմից ռուսները ընդունւում են ոչ որպէս բոլշևիկներ, այլ որպէս ռուսներ, ինչպէս Նիկոլայի ժամանակ: Մեր ժողովուրդի մէջ կոմունիզմը հող չունի ներկայիս, բայց ռուսների տիրապետութիւնը ընդունելու համար գլխովին պատրաստ է:

Ամէն օր տեղի են ունենում հաւաքներ ու ժողովներ , ճոռոման ճառեր աստւում, բայց անօգուտ: Մեր կուսակցական չարքերն էլ նուռւեռի մէջ են, կուսակցական ուժերի հաւաքագրում է կատարւում, քաղաքի ինքնապաշտպանութեան համար կազմակերպւում են խմբեր, որոնց մէջ պարտադրաբար մտնում են ամէնքը, անգամ պրոֆեսորներ, կառավարական պատասխանատու պաշտօնեաներ, ուսուցիչներ, ուսանողներ, արհեստաւորներ և աշակերտներ. սակայն այդ բոլորը այն տպաւորութիւնն է թողնում, թէ իրականին մէջ ոչինչ չի կատարւում, այլ դիտապաստառի վրայ ցուցադրուող պատկերներ են իրարու յաջորդող:

Ինքնապաշտպանութեան նպատակով կազմակերպւած խմբերի վրայ պարտականութիւն է ընկած հսկողութիւն կատարել, մանաւանդ զինւորները, որ քաղաքի մէջ խաղաղութիւնը չխախտի և ժողովուրդը չվոխի չհնթարկւի: Եւ մի օր առաւօտեան, Բախչի Հասան-Ջալալեանի հետ միասին, գնում էինք պետական պահեստ՝ զանազան մթերք ընդունելու Լեռնահայաստանի համար, պատահմանով չէնքի առջև հանդիպեցինք Սիրական Տիգրանեանին, յոգնած դէմքով, հրացանն ուսին, ապա Արսէն Տէրտէրեանին[80], երրորդը ուսուցիչ Արսէն Բէջանեանին, և այդպէս իրար ետևից 10–12 հոգի գնում էին դէպի վեր: Բարեւեցի Ս. Տիգրանեանին, որը ժպտալով առաւ բարեւս, չարունակեց ճամբան, երկու հայրենակիցներս՝ Տէրտէրեանը, դպրոցական իմ ուսուցիչներից, և Բէջանեանը, կանգ առան, ճամբան կտրւած լինելով մեր կողմից:

[80] Արսէն Տէրտէրեան (1882–1953). պրականագէտ, քննադատ, պատմեան գիտութ, պրոֆէսոր: Աւարտել է Շուշիի հոգեւոր սեմինարիան, սովորել է Պետերբուրգի նկարագիտութեան ինստիտուտում: *1909–1920ԹԹ.* աշխատել է Երեւանի *Թեմական* դպրոցում, 1921–1953ԹԹ.՝ Երեւանի պետական համալսարանում, որպէս պրականութեան ամբիոնի վարիչ: Հեղինակ է տասնեակ պետական աշխատասիրութիւնների՝ նւիրւած հայ պրականութեան բազմաթիւ հարցերին: (*Խմբ.*)

Երկու Արսէնների հետ մօտ եմ եղած՝ դպրոցն աւարտելուց յետոյ կուսակցական գետնի վրայ. երկուսն էլ դաշնակցականներ են եղել:

– Ի՞նչ խաբար է, որտեղի՞ց, հարցրի:

– Այս գիշեր մեր խմբի հերթին էր գիշերապահումեան. ցերեկւայ հերթապահ խումբը նոր եկաւ մեղ փոխարինեց, և գնում ենք տուն, թէյ խմենք, յետոյ գնանք մեր գործին, ասացին:

– Ձեր խմբապետն ո՞վ է, հարցրի, թէև կռահել էի, որ Ս. Տիգրանեանն էր:

– Մեր խմբապետը մեր պատկառելի Սիրական Ֆաղէևիչն է, տեսա՞ք ինչպէս իրեն վայել խրոխտ կեցուածքով մեր առջևից գնում էր, ասաց Բէջանեանը:

– Ասիր, ձեր ի՞նչ գործն է գիշերապահումիւնը, ասաց Բախչին. դա պատչաճում է մեղ պէս չորան մարդկանց, ոչ թէ ձեղ ու ձեր նմաններին:

– Եւ դուք ինչու էք կարծում, թէ միայն չորան մարդիկ կարող են դիրքապահ լինել, իսկ մենք չենք կարող, ասաց Տէրտէրեանը. մեր խմբապետը, որպէս այդպիսին, ուրիչների համեմատումեամբ ի՞նչ պակասումիւն ունի:

– Պարոն Տէրտէրեան, ձեր ասածը չեմ հասկանում, չի մտնում գլուխս, ոչ դուք և ոչ պարոն Տիգրանեանը էդ գործի մարդը չէք, ձեղ չպիտի նման գործի դնէին:

– Ձեր մօտեցումը հարցին սխալ է. օրէնքի առջև բոլոր քաղաքացիները հաւասար են, առանց խտրումեան, և ամէնքը նոյնումեամբ պիտի կատարեն իրենց քաղաքացիական պարտականումիւնը, ասաց Տէրտէրեանը և Բէջանեանի հետ ժպտալով ցտեսումիւն ասին ու չարունակեցին իրենց ճամբան:

Բախչին չէր բաժանում Տէրտէրեանի տեսակէտը և երկու Արսէններից բաժանելուց յետոյ էլ չարունակում էր քննադատել իշխանումիւնները, որ մարդկանց ըստ իրենց ընդունակումիւնների չեն գործի գնում, չեն խնայում, բարձրորակ մտաւորականներին էլ լծում են չորանների սայլին:

– Ինչպէս կարելի է Սիրական Տիգրանեանի պէս մէկ պրոֆեսոր մարդու կամ հէնց նոյն երկու ուսուցիչներ Տէրտէրեանին ու Բէջանեանին ուղարկել դիրքապահումեան . այդ բանը չի մտնում գլուխս. ինձ նման չորանները կոտորե՞լ են բոլորը, թէ՞ համաճարակի զոհ են դարձել, և մարդու սով է առաջացել, ուստի հարկաղրւած են նման մարդկանց ուղարկել դիրքերը և վաղն էլ կուղարկեն տաճիկների դէմ. . . աչքներս լոյս:

ԾԱՆՐ ՄԹՆՈԼՈՐՏ ԵՐԵՒԱՆՈՒՄ. ՂԱՐսԻ ԱՆԿՈՒՄԸ

Մայրաքաղաքի մթնոլորտը օր-աւուր աւելի և աւելի ծանրանալով, անչնչելի է դարձել: Ջղագրգիռ վիճակ է տիրում, ամէն ժամ, ամէն րոպէ սպասում են տեղեկութեան Ղարսի ճակատից. ոմանք կարծում են, որ մեր զօրքը կը պաշտպանէ բերդը, կը կասեցնէ տաճիկների առաջխաղացումը, իսկ ոմանք էլ յուսահատ էին և նկատի ունենալով մեր զօրքի բարոյական վիճակը, ղեմաղրական ոգուց զրկւած լինելը, Ղարսի անկումը անխուսափելի էին համարում:

Շատերն էլ ասում էին, թէ պէտք է համբերատար լինել, թէկուզ երկար տարիներ սպասելով, բայց վստահ և համոզւած, որ մենք պիտի հասնենք մեր նպատակին:

Գաւառում, հեռու մայրաքաղաքից, վերջինիս չափ ճնշւած, խտացած չէ մթնոլորտը: Բախչիի հետ աշխատում ենք պետական պահեստից ստանալ Լեռնահայաստանի համար ինչ որ հնարաւոր է և ապա փոխադրել Նոր Բայազէդի չոջանի Ներքին Ղարաննուխ գիւղը, որտեղից փոխադրութիւնը պիտի կատարեն ղարալագեաղցիները:

Հոկտեմբերի 31-ին առաւօտ չատ վաղ տարածւեց քաղաքում Ղարսի անկման լուրը: Բոլորի դէմքին տիրում է ահ ու սարսափ: Ամէնքը տխուր են, ընկճւած: Մթնոլորտն այնքան ծանր է և ճնշող, որ մարդ չնչահեղձ է լինում: Նրանք, որոնք կարծում էին, թէ մեր ուժերը կենտրոնանալով Ղարսում, ուժեղ դիմադրութիւն ցոյց կը տան թշնամուն և կը պաշտպանեն բերդը, վերջինիս անկման տպաւորութեան տակ չէին: Քաղաքի մարդիկ իրարու են անցել, արագ-արագ, աչ ու ձախ գործի են գնում, սակայն բոլորի դէմքին նկատելի է խիստ ընկճւածութիւն, իսկ ոմանց յուսահատութիւն: Ծանօթներ կամ ընկերներ իրարու հանդիպելուց ասում էին՝ "տեսա՞ր ինչ եղաւ, ի՞նչ կը լինի մեր վերջը":

****

Պիտի խոստովանեմ, որքան միտքս արագ է գործում, ճիշտ հակառակը, գրիչս՝ խիստ դանդաղ և ընդհատումներով. հազիւ կարողացայ երկար ամիսների ընթացքում այսքանը գրի առնել, թէկուզ պակասներով ու թերութիւններով, որոնք կարող են չտկւել և լրացւել, եթէ ամբողջը մաքրագրւի և մշակւի:

1966 թ. դեկտեմբեր

ՎԵՐՋ

ՑԱՆԿԵՐ
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբդուլ Համիդ 428
Աբովեան դերասան 477
Աբրախանով Ահմադ աղա 36, 80
Աբրահամ տե՛ս *Գիւլխանդարեան Աբրահամ*
Աբրահամ 129
Աբրահամ քեոխվա 122-124
Աբրահամ 232, 391
Աբրահամ 523
Աբրահամ-բեկ 65,143
Աբրահամեան Եղիշէ 198, 200, 233
Աբրահամեան Կարապետ (Բուսակենց) 243
Աբրահամեան Մարտիրոս 683
Ադամեաններ 437
Ադամեան Սերգէյ 531
Ադըգեոզալով Ադըգեոզալբէկ 481
Ազնաւուրեան Արամայիս 218
Աթաբէկեան Լեոն 31, 35, 62, 63, 600
Աթաբէկեան Սերգէյ 311
Աթաբէկեաններ 294, 354
Աթայեան Կոստիա 491, 493, 684
Աթայեան Ռուբէն 567, 568
Աթարբէկեան Մովսէս. բժիշկ 33
Ալբիօն 535
Ալէքսան 231, 232
Ալէքսանդր 268
Ալէքսանեան Համբարձում 196
Ալիբէկով Ալիբէկ 150, 227, 251
Ալիբէկով Սալման բէկ 162, 244-247, 249, 251, 259, 261, 262, 300, 312, 313, 333-335, 343, 344, 375
Ալէքսան Դայի տե՛ս *Բալասեան Ալէքսան*
Ալիխանով - Ավարսկի գեներալ 35
Ալիշ Բէկ 72, 73, 410
Ալի Ռիզա 515
Ալլահվերդեան Միքայէլ 330, 338
Ալոյեան Գալուստ 218, 219
Ակոպով Սարգիս (Յակոբեանց) 669
Ահարոնեան Աւետիս 282
Ահարոնեան Արմենակ 220
Ահարոնեան Համբարձում 455
Ահարոնեան Վարդգէս 466
Ահմէդ բէյ 259
Աղաբաբեան 567
Աղալար 207
Աղախանեան Պետրոս 8
Աղամալեան Սուրէն 131, 132
Աղամալեան Տ. 384, 385
Աղասեան Գերասիմ 432, 434
Աղասեան Վ. 691
Աղասի տե՛ս *Վէրդեան Աղասի*
Աղբալեան Նիկոլ 22, 31, 47, 52, 53, 56, 159, 293, 505, 524, 566, 587, 588, 627, 628, 664, 689-691
Աղասեան Յովհաննէս 133, 282
Աղասեան Մկրտիչ 133
Ամատունի Յով. 52
Ամիրեան Թադէոս 343
Ամիրջանեաններ 434
Ամֆտիատրով Ալ. 13
Այդինեան Աբրահամ 372
Այդինեան Ղևոնդ 335
Այթաղլըղ 79
Այնա (Գրիգորեան) 652, 654, 655
Այվազեան տէր Յակոբ 440
Այվազեան Մարտիրոս 116, 153, 174, 177, 184, 187, 188, 243, 263, 325, 329, 364, 416, 532
Անդրանիկ 170, 209, 241, 281, 284-291, 293, 295 - 299, 301, 304, 305, 310, 326, 337 - 339, 366, 482, 538, 547, 680, 684-686, 694
Անդրէասեան Գրիգոր 242
Անդրոսըն 22
Անդրի ամի 161
Աննա բժ. 33
Աննա 563
Անտոնեան 435
Անուշավան 535
Աշխուժ աշուղ 482
Աշոտ տե՛ս *Մելիք-Յովսէփեան Աշոտ*
Աշոտ (Մելիք Մուսեան) 637
Աշխեն 599
Աշխարհբէկ տե՛ս *Քալանթարեան Աշխ.*
Ապրէսեան Գրիգոր 376-378, 453, 594
Առաքել 551
Առաքելեան Գաբրիէլ 205
Առաքելեան Դանիէլ 206, 211
Առաքելեան Զաքար 401
Առաքելեան Յովհաննէս 394, 581, 597, 598, 604
Առիւծ Աւագ 658
Առուստամեան Գէորգ (Եգոր) 7, 255
Առստամեան Արտաշէս 107, 211, 243, 417, 418
Առստամեան Արշակ 271, 340, 394
Ասատուրեան Արշակ 39, 200
Ասատուր տե՛ս *Աւետիսեան Ասատուր*
Ասատուր (բերդաձորցի) 439

Ասլան 128
Ասլան33
Ասլանեան Անդրէաս 119
Ասլանիկ 267, 365
Աստուածատրեան Արշալոյս 47
Աստուածատրեան Մարիամ 449
Աստուածատրեան Հայկ 334
Աստուածատրեան Աւետիս 265
Ասրեան Առաքել 372
Ասրեան Գրիգոր 180, 201, 271, 272, 452, 534
Ասրեան Կարապետ քեօխվա 241, 242
Աւագեան Վասիլ 669
Աւագեան Սերգէյ 39, 300
Աւանէս 300
Աւանէսեան Աւանէս 322
Աւդալբէկեան Թադէոս 475
Աւետիս 438
Աւետիսեան Պարոյր 575
Աւետիսեան Աստուածատուր (Աստուր) 18, 21, 22, 39, 52, 82, 83, 175, 200, 211, 232, 270-272, 329, 374, 389, 429, 441, 442, 449-451, 454, 463, 466, 475, 476, 482, 483, 485-489, 491, 492, 532, 534, 637, 638, 681
Աւետիսեան Արշօ 150
Աւետիսեան Արամ 575
Աւետիսեան Տիգրան 3, 8
Արա բժշ. 511, 513, 515, 662
Արամ 6, 7, 52, 169, 512, 691
Արամ փաշա 549
Արամ (Վանի) 505, 525, 557, 558
Արամայիս տե՛ս *Տէր-Դաւիթեան Միսակ*
Արամեան Վահան 649
Արարատեան Ս. 17, 52, 56 - 58, 62, 468, 471, 476, 534, 539, 553, 566, 598, 692, 693, 694
Արարատեան Ք. 528, 529
Արզումանեան Յակոբ 437-440
Արզումանեան Մարտիրոս 39, 82, 145, 154, 157, 165, 170, 233, 532, 612, 622, 624, 625, 628, 630, 637, 639, 651-655, 681
Արզումանեան Մինաս 159
Արզումանեան Միքայէլ (Միշա) 52, 54-56, 164, 404 - 409, 411, 413, 414, 458, 459, 463-465, 521, 524, 528, 546, 550, 556, 562, 619, 620
Արզումանեան Ա. 541
Արծւիկ 411
Արղութեան Յովսէփ 412, 415
Արղութեան Իշխան 105
Արղութեան Սաթ. 52
Արմենակ 157
Արշակ տե՛ս *Սարգսեան Արշակ*
Արշակ տե՛ս *Շիրինեան Արշակ*
Արշավիր 230
Արշալոյս 607
Արտաշէս տե՛ս *Գանջէցեան Արտաշես*
Արտեմ 366, 532, 534-536
Արտիւշ (Յարութիւն) 493
Աֆրիկեան Գասպար (Կիկիզենակ) 508-510, 513
Աֆրիկեան Վահան 520
Աֆրիկովներ 510

Բաբալեան Արտաշէս բժ. 39, 275, 383, 385, 521, 528, 535, 539, 593, 597, 599, 603, 604, 622, 626, 688, 683
Բաբայեան Մովսես Մահտեսի գնդապետ 4, 5
Բաբայեան Զաքար 5
Բաբայեան Զաւէն եպ. Մահտեսի 577, 578
Բաբայեան Ներսէս 528, 622, 630, 642, 649, 660
Բաբայեան Վարոս 560, 562
Բաբայեան Գրիգոր 478, 481
Բաբայեան Սերգէյ 481, 482
Բաբաջանեան Սիմոն 243, 248
Բաբլանեան Սանդրօ 562
Բագրատ 268, 366
Բագրատ տե՛ս *Դաւթեան Բագրատ*
Բագրատունի 329, 330
Բադամեան Արտաշես 39, 27
Բալայեան Գերասիմ 39, 338, 339, 345, 349, 351, 353, 354, 357, 359, 362, 374, 402, 475-477, 482-485, 487 - 489, 491, 493, 528, 537, 539, 543, 562 - 565, 577 - 579, 634, 635, 642, 659 - 663, 666-669, 672, 674, 675, 678, 686, 687, 689
Բալասանեան Յակոբ 82, 90, 95, 110,185, 186
Բալասեան Ալէքսան(դր) 104-106, 109, 141, 183, 188-192, 202, 211, 212, 216 - 219, 221, 222, 225, 227, 229, 294, 295, 297 - 299, 303, 348, 366, 413, 416, 434, 453, 479, 481, 482, 614
Բալատուր Անուշ. 12, 14
Բալմաչով Ստեփան 144
Բախշի 46-48, 51, 74, 75, 78
Բախշի տե՛ս *Իշխանեան Բախշի*

Բախշի բէկ 118
Բակունց Արսէն 83, 155, 484, 489
Բակունց Երեմիա 484,489, 618, 619
Բահաթրեան բժ. (Քրիստափոր) 139
Բահաթրեան Խաչատուր 135, 337
Բահաթրեան Հրանդ(տ) 112, 139, 205, 311, 353, 356, 374, 380 - 387, 395, 402, 407, 409, 422, 424-426, 431, 432, 440, 441, 443, 525, 528, 531, 532, 534, 550, 554-556, 565, 577
Բահար (Թումեան Յարութիւնի մայրը) 243
Բահաթրեան Լևոն 359
Բաղդաթեան Գրիգոր 392
Բաղդասարեան Արամ 18, 19, 39, 144, 145, 176, 177, 322
Բաղդասար 35
Բաղդասար ապօ 207
Բաղդասարեան Արտեմ (Յարութիւն) 126, 437
Բաղդասարեան Արսօ 126, 144, 172, 174
Բաղդագիւլեան Արտեմ 107, 179
Բաղդասարեան Մատթէոս 582, 584, 595
Բաղդասարեան Նիկ. 601, 604
Բաղդասարեան Գերասիմ 153, 243, 248, 374
Բաղդասարեան Բագրատ 647, 648
Բաղիկեան Սերգէյ 241
Բաղիրեան Սերգէյ 390
Բաղտաթեան Արամայիս 360
Բաղրամեան Յակոբ 8, 237
Բայկով 132, 133
Բարաղամեան Բագրատ 20
Բարաղամեան Սիմ. 249
Բարդեղ իշխան 676
Բեգլարեան Արմենակ 165, 244, 245
Բելինսկի 689
Բելուք խան 169
Բէբէլ Աւգուստ 41
Բելիաև 71, 72, 80
Բէկզատեան Տիգրան 382
Բենօ տես Նալչաջեան Բենօ
Բէհբուդով Լիւբֆալի Բէկ 37, 84, 88, 112, 113, 125, 130, 131, 149, 150, 204, 205, 227, 242, 243, 457
Բէջանեան Արսէն 702, 703
Բէնիկ Վարդապետ 691
Բիճ Լևոն 466
Բիչ 458
Բիսմարկ 507
Բիչերախով 323
Բորեան Արմենակ 60
Բոգուսլաւսկի 575
Բոնիֆէյս 338, 432
Բրաուն դոկ. 490, 491, 611, 612
Բրեշկօ-Բրեշկովսկայա (Տատիկ) 14
Բրուսիլով Ալ. 4, 179, 440
Բուդաղեան Յովհաննէս 587, 588
Բունեաթեան Սիարոն 511, 512

Գալստեան Վահան 686, 687, 689
Գալստեան Գ. 667
Գասպարեան Աբգար 46, 47
Գասպարեան Աւետիս 39
Գասպարեան Գէորգ 159, 160, 163
Գասպարեան Շահնազար 196, 233, 396
Գանջէցեան Արտաշէս 298, 299, 304, 360, 532-535, 546
Գանջէցեան Կարապէտ 532, 534
Գարագաշ 600
Գարեգին Խաժակ 549
Գաբրիէլ տե՛ս *Կիրակոսեան*
Գաբրիէլ
Գեգեչկորի Եւգէնի 146, 596
Գեղամ 677-679
Գերասիմ տե՛ս *Բալայեան Գերասիմ*
Գերասիմ 282
Գէորգի (Սուրբ) 4
Գէորգ Դ. կաթողիկոս 218
Գէորգի 606
Գէորգի 521
Գեովիար աղա 439
Գիբբօն, Գիբսոն 301-306, 338, 347, 369
Գիւլխանդանեան Աբրահամ 15-17, 63, 292, 293, 468, 471, 476, 504, 531, 534, 536, 537, 539, 545, 553, 692
Գիւլխանդանեան Մ. 62
Գիւզալեան Գառնիկ 466
Գոլդսմիտ 298, 301, 302
Գրիգոր 13-րդ Պապ 1
Գրիգոր 111
Գրիգոր 115
Գրիգոր 134, 135
Գրիգոր 270
Գրիգոր տե՛ս *Ապրեսեան Գրիգոր*
Գրիգոր ապեր (Թումեան Յարութիւնի հայրը) 243
Գրիգոր Լուսաւորիչ 33, 469
Գրիգորիս 469
Գրիգորեան Արտաւազդ 562
Գրիգորեան Վահան 645

Գրիգորեան Շաւարշ 645
Գրիգորովեց (Իւան Գրիգորովիչ) 668
Գրիշա 659
Գուստաւ Հերվէ 610

Դադաշ (Արտաշես) 134, 135
Դադեան Մարդի 349, 350, 357, 404, 432
Դադունց Յովհաննէս 272
Դալի Մահիասա (Յարութիւն, Թէշիշ օղլի Արտեմ) 78-80, 92, 104, 105, 150, 170, 174, 175, 178, 179, 183, 188-191, 193, 195, 196, 217, 229, 270, 295-300, 302, 348, 434
Դալի Դա(ե)րուիշ (Քոչարեան Սիքայէլ) 483, 585-587, 593, 602
Դալի Ղազար 563, 573, 614, 615, 623, 624, 628, 682, 683
Դանիէլբէկեան Աղապարոն 163
Դանիէլ 101, 169
Դանիէլեան Խաչիկ 484, 488, 489, 667
Դանիէլեան Յովհաննէս 667
Դաւթեան Յովնան
Դաւիթեան Դաւիթ 29, 233, 580
Դաւիթ-Բէկ 444, 469, 685
Դաւիթ Անանուն (Տէր-Դանիէլեան) 459 - 461, 466, 521-523, 528, 609-612, 616-623, 629, 694, 695
Դաւիթխանեան Դաւիթ 598
Դարբինեան Ռ. 62
Դարբինեան 604
Դէնիկին 325, 347
Դրամբեան 604
Դրօ(ո) (Դրաստամատ Կանայեան) 34, 35, 56, 58, 504, 521-523, 528, 530, 547, 604, 615, 624-626, 629, 631, 635-648, 657-659, 666, 671, 680-683, 688
Դուման Նիկոլ 22, 41, 51, 102, 216, 230, 292, 686, 687
Դուրգա(ե)րեան Սարգիս 119, 128, 619, 620

Եապոն Սաքո (Համբարձում Սարգսեան) 15, 16, 132, 133, 197, 282, 486, 487, 512, 678, 679, 681, 678
Եապոն Սաքո, Եապօնացի Յովհաննէս (Յովհաննէս Պարոնեան) 197, 512, 513, 515, 659, 660, 667, 669, 672, 674, 697,-698
Եապօն Ալէքսան (Միրզա) 197-199, 204, 226, 227
Եղեան Սեդրակ 271
Եղե(ի)ազարեան Խաչատուր 82, 105, 271, 363
Եղիշէ տե՛ս *Իշխանեան Եղիշէ*
Եղիշէ 234, 391
Եղիազարեան Բենիկ վարդ. 561
Եղջսաբեթ (Լիզա) 318
Եննիկոլոպեան Ստ. 559, 589
Եռնվք տե՛ս *Միրաքեան Եռնվք*
Եսայեան Մելիքսէթ 41, 82, 93, 102, 103, 172, 174, 177, 203, 230, 243, 247, 274, 353, 354, 362, 372, 376, 385, 386, 402, 411, 432-434, 437, 483, 484, 490, 506, 534, 622, 630, 694, 695
Եսայեան Յակոբ 340, 347
Եսայի քահանա 79, 104
Եսայի տե՛ս *Քամալեան Եսայի*
Եո(օ)լեան Զաքար 483, 486, 489, 491, 493, 528, 537, 539, 543
Երամիշեան Նիկ. 321, 327, 328, 360
Երուանդ 514
Եփեսոս 515
Եփրեմ խան 74, 76, 140, 169, 170

Զամոյեան 52
Զախարբէկեան Նիկ. 163
Զախարբէկեան Արշակ 417
Զառաֆեան եղբայրներ 422
Զառաֆեան Աբրահամ 397
Զառաֆեան Լևոն 338, 339, 345, 349, 351, 353, 357-359, 362, 374, 402, 660, 695, 696
Զառաֆեան Կարապետ 397
Զաւարեան Յակոբ (Զաւրիկ) բժ. 2, 3, 5, 6, 8
Զաւարեան Սիմօն 6, 521, 598, 679
Զաւարեան Նուշիկ 598
Զաւէն եպիսկոպոս տե՛ս *Բաբայեան*
Զաւեն եպ.Մահտեսի
Զաւրեան Յ. գնդապետ 3
Զարիֆեան Յակոբ 605
Զաքար ամի 216
Զաքար Բեգ 611, 622
Զաքարեան Տէր Միքայէլ 652, 653
Զաքարեան Արամայիս 512
Զաքարեան Լիպարիտ 677
Զաքի բէյ 250-252, 254, 256, 257
Զաքարեան Բախշի (Մուշեղ) 34, 131, 154, 180, 203, 207, 211, 232, 241, 274, 414, 483, 484, 486-490, 492, 679, 686

Զիաբխանով Իսմայիլ Խան 88, 89, 113, 260, 263, 264, 314, 434
Զո(ու)հրաբեան Իսահակ 233, 321, 327
Զուրաբեան Նիկոլայ 28, 98, 390
Զունկովսկի 435
Զօրեան Ստեփան (Ռոստոմ) 6, 9-12, 30, 53, 237, 297, 318, 343, 518, 521, 679, 686
Զօրեան Ստեփան գրող 621, 622
Զոհրաբեան Արշակ 526

էլօ տե՛ս *Միմոնեան էլիգում*
էհսան Նուրի Բէյ 516
էնէգեան Մ. 693
էնվեր Բէյ 361, 409, 410, 422-426, 432-434, 458, 464, 584
Թադէոսեան Լևոն 8, 15-17, 61, 62, 234 - 237, 248, 262, 292, 338, 415, 534, 556
Թադէոսեան Սահակ 234, 415, 556
Թաթօղլի Արշակ տե՛ս *Շահնազարեան Արշակ*
Թախթաճեան Լևոն 468
Թաղիև Զէյնալ 88
Թամարա 605
Թամիրեան Մարգար 38, 208, 262, 271, 300
Թամիրեան Մարդի 390
Թամրազեան Մուշեղ (Թանատոս) 605, 619
Թայրի բեյ 250, 253, 254, 255, 257, 260
Թարանեան Սանդրո(ո) 611
Թարխանեան Եղիշէ 228
Թարխանեան Նիկ. 36, 37
Թարվերդեան Թոմաս 391, 440, 441
Թեմուր 154, 160, 170
Թեմուր 502
Թիւլի Արզուման 479
Թորգոմ (Թուման Թումեան) 652
Թորգոմ (Յարութիւն Թումեանի եղբայրը) 524
Թորոսեան Սահակ 9
Թորոսեան Հայկ 292
Թորոսեան Սէրո(ո)ժա 616, 617
Թորոսեան Սմբատ 483, 494, 670
Թուխչեան Բագրատ 627
Թուխչեան Ե. 136
Թուխչիբաշև 462
Թումանեան Համլիկ 616, 617
Թումանեան Յովհաննէս 334, 575
Թումանեան Վահան 575
Թումեան Յարութիւն (Թումունց Արտեմ կամ Թումի) 18, 39, 40, 52, 82, 83, 91, 95, 109, 110, 114, 129, 155, 163, 174, 177, 185, 186, 203, 205, 207, 212, 216, 232, 237, 238, 243, 274, 341, 374, 429, 441, 442, 450, 451, 454, 459, 460, 461, 463, 464, 466, 475, 476, 482, 521, 524, 527, 528, 560 - 563, 566, 570, 573, 612, 622, 624, 625, 628, 630, 638, 642, 643, 648, 681
Թևան 267, 365

Ժամհարեաններ 436
Ժամհարօղլի Ասատուր 99
Ժան Ժոռէս 610

Իբիչ 80
Իբրահիմբէկ Հիւսէյինբէկով 252, 253
Իբրահիմ 479
Իբրահիմ աղա հսկէ Թէլլօ 516
Իլիկօ 288, 388
Իշլեմէճեան Միք. 204, 227
Իշխան տե՛ս *Պողոսեան Նիկոլ*
Իշխանեան Աբրահամ 74, 242, 265
Իշխանեան Բախշի 215, 216, 232, 233, 289, 528, 609 - 612, 618, 621, 622
Իշխանեան Եղիշէ 5, 46, 49, 82, 83, 88, 104, 110, 145, 146, 148, 174, 175, 177, 203, 215, 230, 231, 236, 237, 239, 243, 248, 251, 252, 256, 258, 260, 271, 272, 274, 279, 303, 309, 310, 311, 318, 319, 341, 353, 354, 367, 368, 374, 375, 386, 389, 422, 437, 449, 461, 497, 500, 516, 532, 534, 546, 552, 556, 568, 570, 572, 574, 578, 590, 622, 625, 630, 642, 643, 649 - 651, 655, 678, 688, 690
Իշխանեան Իւան (Յովհաննէս) 95, 115, 125, 252, 393, 579, 655
Իշխանեան Միքայէլ 482
Իսախանեան Նիկողայոս 81, 82, 93, 95, 110, 136, 137, 144, 157, 158, 163, 232, 243, 263, 311, 372
Իսահակեան Ա. 460
Իսաղուլեան Աբ. 527
Իսմայիլ բէկ 159
Իսմայիլ Հակկի բէյ գնդապետ 194, 195, 200, 205, 239, 242, 265, 266, 268, 270

Իսմայիլ խան 435
Իսրայէլ 452
Իվան 117
Իվանբէկ տե՛ս *Իշխանեան Իւան*
Իվանով 362
Իւզբաշեան 104,108
Իւզբաշեան Առան 182, 183
Իւզբաշեան Ռուբէն դոկ. 624-625, 630
Իւզբաշեան Տիգրան 228

Լալայեան Արտեմ 119-121, 127,128, 163, 169, 184, 273, 302, 303, 348, 413, 418 - 421, 429, 434, 453
Լալայեան Արսէն 163
Լալայեանց Երուանդ 674, 676
Լեգրան 700
Լենին Վ.Ի. 2, 6, 25, 45, 106, 347, 444, 518
Լէյլա խանում 88, 457
Լէօ(ո) 459, 460, 525, 526, 561
Լիպարիտ 501, 502
Լոպասեան Մատթէոս (Արամեան Վահան նաև Սուրեն) *տես Նիկոլ*
Լևոն վարսավիր 48
Լևոն վարդապետ 230, 231
Լևոն տե՛ս *Վարդապետեան Լևոն*
Լևոն (Մուրազեան) 515
Լևոնեան Պարոյր 3, 7, 627, 628
Խաժակ 11, 136
Խալաֆեան Մելիք 367
Խանդամիրեան Միքայէլ 233
Խանունց Հովսէփ 459, 460, 525
Խան 42, 594
Խանխոյսկի 462
Խաչատրեան Գերասիմ 196
Խաչատրեան Բէգլար 282, 283
Խաչատրեան Մելիք 367
Խաչատրեան Մելքում 28, 82, 233, 366, 368, 371, 374
Խաչատրեան Միսակ 562, 574, 581, 607
Խաչատրեան Մուսա 104, 105, 143, 153, 155, 170, 172, 183, 188, 229
Խաչատուր 48
Խաչեան Գրիշա (Գրիգոր) 243, 311, 323, 324
Խաչիկ 455
Խաչին 323
Խաչունց Սամսոն 235-238, 452
Խաչօ(ո) 638, 639
Խատիսեան Ալ. 52, 381-383, 466, 467, 474, 528, 587, 620
Խէչօ 495, 496
Խոյլեան Ռաֆայէլ 12, 694
Խոնդկարեան Արշամ 466
Խոջայ Ներսես 135, 138, 139
Խորեն տե՛ս *Տեր-Ավագեան Խորեն*
Խորենի Վահան 52, 587, 588, 608, 609, 625, 629, 635, 638, 642
Խրիմեան Հայրիկ 327
Խուբլարեան եղբայրներ 65
Խուրշուդեան Դաւիթ 485,488
Խօսունց Ասատուր 631
Խօսունց Ծատուր 485, 486, 488, 672

Ծատուրեան Ալէքսանդր (Ալ.Ռուբեն) 82, 101, 102, 169,172, 214-216, 367, 467, 615

Կալիան Իւան 144
Կակօ 683
Կանայեան Վահագն 607, 630, 637, 648
Կանայեան Ստեփան 55
Կասումեան Ռուբէն 404, 408, 413, 459
Կասֆելդ 298, 301, 302
Կատին 16, 282
Կարապետ 390, 523
Կարապետեան Գարեգին 51
Կարապետեան Գրիգոր 117, 210
Կարապետեան Մովսէս Մահտեսի 242
Կա(ո)րա(ո)լտով Ալէքսանդր 585 - 587, 597, 598, 602
Կարինէ 667, 668
Կարօ(ո) 237, 480
Կերենսկի Ալ. 1, 60, 146, 335
Կիկիզճեակ տե՛ս *Աֆրիկեան Գասպար*
Կիրակոսեան Գաբրիէլ 224, 524, 559, 574, 589, 592, 594, 597, 599, 602, 604, 607
Կիրակոսեան Գար. 585
Կիրակոսեան Գուրգէն 562
Կիրակոսեան Սերգէյ (Սարգիս) 214, 223, 224
Կնունեանց Բոգդան 44
Կոբին Իոսիֆ Իլլարիոնովիչ 84, 456
Կոմս 52
Կորիւն 563
Կոռնիլով Լավր 44
Կրապոտկին Պետր 6
Կրմենանց (Կրիմճանց) Նիկոլայ

512, 646, 677
Կօլեա տե՛ս *Ստեփանեան Նիկոլ*
Կուզմին 90, 92
Կուռօ(ո) 37, 466, 637-639, 657

Հազրատ Աբբաս 166
Հաթամ բէկ 268
Հախեան Նինա 63, 64
Հախումեան Տիգրան 560
Համասփիւռ Խորէն 164
Համազասպ 62, 79, 104, 143, 183, 204, 459, 466-468, 475-477, 479-482, 564, 682
Համբարձումեան Աբէլ 197, 207, 231, 432
Համբարձումեան Աւագ 47
Համբարձումեան Գէորգ 271
Համբարձումեան Կոստի 47, 132, 215
Համբարձումեան Յակոբ 39, 409, 410
Համբարձումեան Նիկ. 163, 182, 206, 213, 219, 224-226, 233
Համբարձումեան Սաքօ դոք. 214, 215, 222, 232, 321, 327, 374, 615
Համեստ 16, 252, 257
Հայկ 669
Հայկանուշ 63
Հայկո 661-663
Հայրապետ (Գրիգորեան) 651-655
Հայրապետ տե՛ս *Մուսայէլեան Հայրապետ*
Հայրիկեան Աղալար 283, 416
Հայրապետեան Աղալար 163, 230
Հայրապետեան Գրիգոր 582
Հայրապետեան Երուանդ 580, 582, 584, 595
Հայրապետեան Վալօդիա 234, 235
Հանսըն 361
Հաջար Խանում 42, 240, 247, 265
Հաջի Կոտո 504, 658
Հաջի Սամի 444
Հասան Բասրի Բէյ 156, 232, 243, 256, 263, 278, 279
Հասանբէկով Աբուլֆազ բէկ 84, 85, 95, 156, 251, 298, 305
Հասան-Ջալալեան Բախշի 336, 630, 637, 660, 681, 694, 702-704
Հասրաթեան Յովհ. (Իւան) 27, 116
Հասրաթեան Հրանդ 630, 637
Հարման դոկ. 490
Հէյբարեան Ներսէս 267
Հէյրաթեան Ներսէս 379
Հիւսէյին 154, 160, 192
Հիւսէյն 554
Հիւսէյինով Հէյդար Բէկ 88
Հերվէ տե՛ս *Գուստաւ Հերվէ*
Հրանդ 477, 478

Ղազանջեան Բագրատ 205, 228, 265, 270, 273, 294-297, 299, 302, 303, 314-317, 320, 333, 533
Ղազարեան 635, 636, 671
Ղազարեան Արշակ 560, 562
Ղազարեան Անուշաւան 562, 570-572, 581, 582, 599, 604, 606, 610, 616
Ղազարեան Բագրատ 204, 413
Ղազարեան Գէորգ 468, 471, 476, 539, 564
Ղազարեան Թևան 196, 233
Ղազարեան Գր. 604
Ղազարեան Մ. 12
Ղազարով գնդապետ 537, 538, 543, 544, 547, 548
Ղազարբէկեան Հ. 359
Ղազի 42
Ղահրամանեան Աբանէս 191, 348, 352, 434, 468, 475
Ղահրամանեան Արտաշէս 550
Ղահրիմանեան Գարեգին 27
Ղամարեան Գրիգոր 559, 562, 574, 580, 581, 598, 610
Ղարագեօզեան Արմ. 41, 49, 50, 82, 102, 241, 367
Ղարագեօզեան Արտ. 374
Ղարագեօզեան Գրիգոր 18, 39, 52, 82, 153, 200, 211, 229, 239, 441
Ղարաբէկ(գ)եան Միքայէլ 24, 25, 459, 473, 525-527
Ղարախանեան Ալէքսան 675
Ղարիբեան Յարութիւն 630, 637
Ղարիբեան Պարոյր 525, 559, 562, 585, 588-595, 602, 603, 607
Ղուկասեան 601
Ղուկասեաններ 327
Ղոդունց 438
Ղուլիքէխեան Իսրայել 481,482

Մազմանեան 699
Մալումեան Խաչատուր 667
Մածոն Խէչօ (Միրզաբէկեան Խաչատուր) 10, 17, 22, 46, 60-62, 133, 292-294, 401
Մակար կաթողիկոս 218
Մակինեան Ստեփան 116
Մահմուդ 161, 162, 192

Մամէդով Խասայ 80, 84, 86, 156, 278, 379
Մամէդ-Հիւսէյն 42
Մամիկոնեան Գրիշա (Գրիգոր) 589-593, 597
Մամիկոնեան Յովսէփ 559, 589, 592-594
Մամիկոնեան Ռուբէն 6
Մանաֆ 170
Մանգասարեան Ար. 366, 367
Մանդ(տ)իևեան Ստեփան 19, 82, 153, 243, 248, 253, 311, 374
Մանասեան Սարգիս 519-521, 531, 534, 539, 545, 548, 549, 553, 560-562, 595, 596, 601
Մանթաշեան 79, 104
Մանուէլեան Հմայակ 477
Մաշադի Ջալիլ 554-556
Մաշոտեան Սկրտիչ 642
Մառ 14
Մասլիննիկով 350, 355, 359, 361
Մատինեան Նիկոլ 11
Մատոյեան 604
Մարգար 312, 581, 583, 584
Մարիամ 327, 439, 440
Մարկոսեան 560
Մարկոսեան Սուրեն 567
Մարկոսեան տիկին 567
Մարկոսբէկ 324
Մարջանեան(ով) Գրիգոր 536, 539
Մարտիրոս 498
Մարտիրոս խմբապետ տե՛ս *Արզումանեան Մարտիրոս*
Մարտիրոսեան Վահան 602
Մարտիրոսեան Ներսէս 233, 235 - 238, 367
Մարքս 25
Մացակ 582
Մելիք-Ազատեան Լևոն 411
Մելիք-Ալլահվերդեան Ասօ(ո) 612
Մելիք-Ալլահվերդեան Տիգրան 186
Մելիք-Ադամեան Սերգէյ 459, 527
Մելիք-Ասլանովներ 117, 118
Մելիք-Գասպարեան Տիգրան 124
Մելիք-Գասպարեան Իւան 124, 125, 130
Մելիք-Գասպարեան Ներսէս 39, 233, 320
Մելիք-Գէորգեան Գէորգ 562, 574
Մելիք-Գէորգեան Սամուել 567, 568
Մելիքեան Խ. 452
Մելիք-Եգանեան 117, 118, 400
Մելիք-Եոլչեան Սերգէյ 535, 537-540, 542-544, 547, 548, 622, 624-626, 632, 635, 636, 671
Մելիք-Հիւսէյնեան գնդ. 494, 495, 505, 670
Մելիք-Մանուչարեան Լևոն 145, 645
Մելիք-Միրզախանեան 607, 608
Մելիք-Մուրադեան Միքայէլ գեներալ 630, 632, 635-637, 668, 692, 674, 686, 689
Մելիք –Յովսէփեան Աշոտ 82-84, 88, 90, 93, 95, 99, 100, 104, 110, 129, 145, 148, 155, 157, 158, 173, 180, 198, 204-206, 214, 232, 243, 248, 263, 264, 276, 278, 279, 286, 300, 306, 311, 328, 353, 354, 362, 374, 376, 386, 388, 390-396, 415, 436, 459, 521, 524, 528, 532, 534, 546, 547, 550, 556, 557, 559, 561-573, 576, 579, 581-584, 590, 597, 599, 604, 605, 611, 630, 693, 698
Մելիք Միքայէլեան Ա. 534
Մելիք- Մուսեան Աշոտ 547
Մելիք-Նուբար 472
Մելիք-Շահնազար 266, 309
Մելիք Շահնազարեան Գերասիմ 164, 206, 229, 233, 239, 274-276, 278, 302, 306, 308, 314, 316-321, 367-370, 375, 380, 383, 385, 388, 412, 413
Մելիք-Շահնազարեան Գէորգ 164, 206, 239
Մելիք-Շահնազարեան Իլիա 243
Մելիք-Շահնազարեան Կոստ. 459
Մելիք-Շահնազարեան Միքայէլ 12, 180, 181, 184, 191, 201, 341
Մելիք-Շահնազարեան Սամսոն 181
Մելիք-Շահնազարեան Սոկրատ 242, 270, 273, 280, 281, 283-287, 289-292, 294, 295 -298, 302-305, 310, 330, 332, 338, 363-366
Մելիք- Շահնազարեան Նիկ.(Ասլան) 133, 292, 295
Մելիք-Ստեփանեան Սմբատ 484, 489
Մելիքսեթ տե՛ս *Եսայեան Մելիքսեթ*
Մելիքոնեան Արտաշես 47
Մելքոնեան բժ. 52
Մելքոնեան Հայկ 627, 628
Մելքումեան 38
Մելքումեան Ալէքսանդր 82, 165
Մելքում (քոն)եան Խաչիկ 136, 137, 145, 186, 232, 271, 363, 622

Մելքումեան Արտաշես 231, 232, 235, 236, 236, 238, 239, 278
Մելքումեան Արտեմ 527
Մելքում(ոն)եան Համբարձում 206, 219, 226, 352, 396
Մեխմանդարով սպա 111, 112
Մեխմանդարով Քեարիմբէկ 156, 251, 278, 279
Մեսեան գնդապետ 539, 549, 554, 573, 614, 615, 628
Մենակ (Առուստամեան Գէորգ) 652
Միլիւկով Պավ. 60
Միխայլովա Մարիա 362, 405
Միհրանեան Սերգեյ 105, 519, 520
Մինախորեան Վահան 692
Մինասբէկեան Գրիգոր 82, 233, 311, 367, 371, 374-376, 380, 436, 449, 576, 579, 615
Մինասբէկեան Լևոն 95, 243
Մինասբէկեան Հայկ 521
Մինոր Օսիպ 9
Միրաքեան Եղովք 642, 672, 674, 686, 689, 692
Միրզա 121, 420
Միրզաբէկեան Խաչատուր (Գրիգոր) տե՛ս *Մածոն Խեչո*
Միրզաբէկեան Իշխան 17, 292, 342, 353, 362, 401, 534
Միրզա Շահին (Շաֆիև,Շաֆի) 251, 252, 278
Միրզաբեկեան Վազգեն 243, 259, 262, 277, 630, 642, 644, 647, 648
Միրզայեան Ասլան 87, 119, 120
Միրիմանով գնդ. 648
Միքայէլ 49, 50
Միքայէլ 157
Միքայէլ 642
Միքայէլեան Արամ 82-83, 93, 104, 155, 367, 374
Միքայէլ տե՛ս *Տեր Յովհաննիսյան Միքայէլ*
Միքայէլեան Արտաշես 303, 310, 324
Միքայէլեան Արսեն 536, 537, 539, 540, 542, 545, 546, 546-554, 556, 557, 573, 612, 614, 615, 624-626, 628, 630
Միքայէլեան 595, 698
Միքայէլեան Բագրատ 138, 139, 163, 612
Միշկին 128, 129
Միքայէլեան Քրիստափոր 6, 13, 14, 521
Մխիթարեան Մամիկոն 562, 574
Մխիթարեան Վերգինէ 582, 584
Մխիթար Սպարապետ 444, 469
Մշեցի Սմբատ 466
Մովսիսեան Միշա բժշ. 519
Մովսիսեան Մովսէս 148, 149, 195, 196, 242, 499, 500, 502, 503,
Մովսիսեան սպա 20
Մոնկ Մէսըն մայոր 338, 339, 349, 350, 355, 361, 392, 395, 405, 408, 409, 421, 422, 425, 429, 431, 432, 434, 440, 441, 445, 446, 448, 449, 454, 462
Մուխի 27, 28, 122, 420
Մուշեղ տե՛ս *Զաքարեան Մուշեղ*
Մուսա տե՛ս *Խաչատրեան Մուսա*
Մուսայէլեան Հայրապետ 18, 24, 31, 34-39, 44, 48-50, 52, 82, 83, 84, 86, 87, 96, 97, 100, 104, 110, 112 - 114, 125, 129, 130, 136, 137, 141, 142, 155, 159, 160, 173 - 177, 198, 199, 202, 203, 205 - 208, 211, 212, 214, 232, 243, 263, 270 - 272, 274, 276, 278, 279, 285 - 291, 293 - 310, 318, 326 - 329, 366, 369, 376, 389, 518, 655, 656
Մուսայէլեան սպա 585, 586, 590, 593, 598
Մուխտար 188
Մուստաֆա 134
Մուրադ 605
Մուրադեան Մ.բժշ. 456, 457
Մուրադեան Բախշի 207, 219, 226, 228, 233, 242, 352, 396
Մուրադխանեան Նատալիա 559, 560, 562, 574, 604
Մուրազեան Արտաշես 515, 516
Մօրուք Խէչո 121

Յակոբեան Ս. 62
Յակոբեան Կար. 39, 99,100, 314, 435
Յակոբեաններ Մահդէս 117
Յակոբ (քարտաշ) 153
Յակոբ 273, 312
Յակոբ տե՛ս *Արգումանեան Յակոբ*
Յակոբ տե՛ս *Տերունի Յակոբ*
Յակոբեան Նորայր տե՛ս *Օհանջանյան Նորայր*
Յակոբան Գէորգ 668
Յակոբեան Գուրգէն 672
Յարութիւն 115
Յարութիւն տե՛ս *Թումեան Յարութիւն*

Յարութիւնեան Մարտ. 52, 159
Յարութիւնեան Կոստանդին 99, 100, 314
Յարութիւնեան Երեմեայ 438
Յարութիւն (Քեշիշօղլի Արտեմ) 104
Յարութիւնեան Մարկոս 281, 283
Յարութիւնեան Եսայի 384, 385, 459, 525
Յարութիւնեան Երվանդ 621, 622
Յիսուս Քրիստոս 33, 71, 166, 388, 515
Յովհաննէս վարժ. 273, 277, 557, 663, 668
Յովհաննէ(ի)սեան Աշոտ 34, 44, 616, 621, 694
Յովակ տե՛ս *Ստեփանեան Յովակ*
Յովհաննէս քահանա 179
Յովհաննէս եապոն տե՛ս *Պարոնեան Յովհաննէս*
Յովհաննէս տե՛ս *Սարգսեան Յովհաննէս*
Յովհաննէս Արա 201, 203, 305
Յովհաննէսեան Արսօ 203, 208, 212, 242, 243, 263, 264, 273, 274, 341, 346, 347
Յովհաննիսեան Գարեգին քահանա 228, 440, 615
Յովհաննիսեան Համ. 144
Յովհաննէսեան Սամսոն 145
Յովհաննէսեան Սարգիս բժ. 691
Յովհաննէսեան Հայկ 150-152, 244
Յովհաննիսեան Արշ. 587, 588
Յովհաննէսեան Յովհաննէս 668, 677, 689
Յովհաննիսեան Լև. 459
Յովսէփ 512, 668
Յովսէփեան Նիկօլայ 414, 483, 505, 506, 631
Յովսէփեան Միքայէլ 312
Յովսէփեան Գարեգին վարդ. 511, 557
Յովսէփ Շէկ 12

Նազարեան Լ. 3, 6, 12
Նազարեան Գէորգ 107, 179, 437
Նազարեան Տիգրան 5, 372
Նազըմ 156
Նալչաջեան Բենօ 60, 516-521
Նակաշիձէ 35
Նաւասարդեան Վ. 13, 52, 459-461, 527, 528, 549, 564, 572, 573, 622, 625, 626, 642 - 645, 648, 649, 651, 659
Նարիման 161, 162, 192
Նարինեան Կարապետ 39, 326-329, 518
Նարինեան Վաղ. 645
Նարինեան Ռուբէն 494
Նարինեան Վանիա 391
Նասիբեան Ներսէս 342, 357, 358, 453, 531, 532, 535, 536, 539-541, 544, 556, 557, 622, 630, 637, 681
Ներսէս տե՛ս *Ուլունց Ներսէս*
Ներսէս վարժապետ 511
Ներսէսեան Միքայէլ 40
Նիկոլայ Բ. 7, 69, 97, 168, 219, 283, 610, 665, 669, 702
Նիկոլայ տե՛ս *Ստեփանիան Նիկոլայ*
Նիկոլայ 117
Նիկոլ (Մատթէոս Լոպասեան, Սուրեն) 649-651, 656
Նժդեհ Գարեգին 466, 522, 530, 615, 646, 666, 668, 671 - 674, 681, 686-689, 692-696
Նիկիտա 393
Նիկողայոս (Ասլան) տե՛ս *Մելիք-Շահնազարեան Նիկ.*
Նորայր (Օհանջանեան) 512, 513
Նուռվոցկի Գերման Եփրեմովիչ 252
Նուրիջանեան Աւիս (Աւետիս) 17, 61, 62, 585
Նուրի փաշա 147, 164, 199, 210, 227, 230, 262, 275, 387, 410, 422, 425, 583

Շադունց Աշոտ 163
Շահբազեան Գ. 477
Շահինեան Գառնիկ 9
Շահիջանեան Արշակ 163
Շահմազեան Արսէն 372, 376, 401, 402, 408, 411, 414, 418, 434, 466, 483, 488, 490 - 495, 499, 504, 505, 513, 520, 527 - 531, 535, 537, 538, 541 - 545, 547, 552, 555, 562, 597, 619, 670, 671
Շահիջանեան Մեսրոպ քահան (Դալի Մահրասա) 479, 481, 482
Շահնազարեան Ասլան 303, 308, 310-112, 314, 316-321, 323-325, 331 - 333, 340, 353, 354, 359-362, 371, 374 - 376, 380, 410, 425, 426, 429, 430, 434, 436, 533, 534, 622, 625, 628, 630, 637, 638, 642, 643, 681
Շահնազարեան Գերասիմ 205
Շահնազարեան Ռ. 38, 116, 180,

203, 232, 233, 235, 236, 254, 274, 363, 366, 367
Շահնազարեան Արսեն 385, 386
Շահնազարեան Արշակ Թաթօղլի 411, 413, 418-421, 434, 453
Շահնազարեան Իրաւ 465
Շահրիմանեան Գարեգին 116, 130
Շահումեան Ստեփան 56-58, 60,343
Շախաթունի Աւետիք 9, 607
Շամիլ բէկ 365
Շամիր բէկ տե՛ս *Փիրումեան Շամիր բէկ*
Շաւարշ տե՛ս *Գրիգորեան Շաւարշ*
Շատիլվորդ 375, 378, 380, 381, 384, 386, 390, 393-397, 399, 400, 403, 404, 408, 411-415, 419, 424, 429-431, 433-436, 439-443, 445, 446, 450, 458, 461-463, 467, 475, 484, 565, 573
Շարաֆ բէկ 105
Շաքարի 139, 140
Շաֆիրբէկով Իսմայիլբէկ 154, 155, 165
Շաֆէրեան Արշ. 28, 98, 99
Շեկոյեան 604
Շելկովնիկով գեն. 499-501, 503, 630
Շէյխ Սաիդ 515
Շիրին տե՛ս *Շիրինեան Արշակ*
Շիրինբէկով Իլդրըմ 72, 74, 75, 86
Շիրինեան Արշակ 301, 414, 483, 484, 487 - 489, 491-493, 505, 506, 528, 538 - 540, 543, 548, 549, 596, 608, 609, 619, 625, 629, 637, 642
Շմիդ 89, 90, 92-94
Շուշանիկ 521
Շուստով 550

Ոսկանեան 589, 593

Չալեան Խոսրով 255, 337
Չալեան Ս. 417
Չալեանց Առաքել 38
Չախուրբէկեան Նիկ. 182
Չարչոնց Երեմե(ի)ա 79, 434
Չերնազուբով զորավար 105
Չերնով Վ. 6, 14
Չերքէզեան Իշխան 26
Չթչեան Ասատուր 109, 218
Չիժիկ տե՛ս *Ստեփանեան Ստեփան*
Չինգիզիան 398, 430
Չխենկելի Ակակի 146
Չխէիձե 27, 526
Չոլախեան Հիպերիկ 3, 599-601
Չոլախեան Աշխեն 599
Չոփուռ Իսահակ 391
Չոփուռ Ջաւադ 168
Չվանիձէ 20, 22, 41

Պալասանեան Ստ. 569
Պահլավունի Եղիշէ 597-600
Պապաշայ տե՛ս *Թադէոսեան Լևոն* 15, 16, 17
Պապովեան Յարութիւն 521
Պարոնեան Միքայէլ 493, 504, 643, 670, 680
Պարոնեան Յովհաննէս տե՛ս *Եպիսկ Սաքօ*
Պարոնեան Սամսոն 39
Պաւլի Բէկ տե՛ս *Տեր-Յովհաննիսեան Պօղոս*
Պետրոս 111
Պետրոս Գ 336
Պետրոս Մեծ 344
Պետրոսեան Յակոբ 38, 208, 262, 272, 300
Պետրոսեան Արտաշէս 155
Պետրոսեան Արշաւիր 179, 229, 365, 417, 453
Պետրոսեան Յարութիւն (Արտեմ) 267, 289, 330
Պետրոսեան Արտեմ (Արօ) 303, 304, 338, 365
Պետրոսեան Աւանես 360, 361
Պետրոսեան Յովհաննէս 360
Պետրով Ն. 362, 405
Պլեխանով Գ. 6
Պլեւէ Վեաչեսլաւ 144
Պօղոսեան Արշակ 366, 367
Պօղոսեան Նիկոլ (Իշխան) 253-256
Պօղոսեան Եփրեմ 483
Պօղոսեան Սիմոն 64-72, 76-78
Պօղոս տես Տեր-Դաւթեան Պօղոս
Պօղոս Նուբ(պ)ար 138, 150, 155, 160, 188, 372
Պրիտամանով գնդապետ 522
Պրա(ո)տա(ո)պոպով Ալէքսանդր 665

Ջալալովնա Ելենա 604
Ջահանգիր 653-655
Ջամալեան Արշակ 536, 539, 540, 542, 543, 546, 547, 550 -553, 588, 589, 616, 626, 692
Ջամալով Միրզա 84, 156, 278
Ջամիլ Ջահիդ բէյ 205, 207, 211, 239-241, 243, 247, 259, 263, 266, 278

Ջաւադ 132, 133
Ջափարիձէ Ալեօշա 62, 420
Ջհանգիր խան 410

Ռահիմ խան 140, 169, 170
Ռաշիդ 672
Ռամիշևսկի Ցահլ Մէյերովիչ 87
Ռաշկովսկի Նիկ. 150-152, 243
Ռաֆֆի 477, 479
Ռենինկամփ (Ռեննենկամֆ Պ.Կ.) զորավար 93
Ռոստոմ տե՛ս *Զօրեան Ստեփան*
Ռուբեն Ալ. տե՛ս *Ծատուրեան Ալէքսանդր*
Ռուբեն տե՛ս *Տեր-Միհաեան Ռուբէն*

Սաբունչի Մամեդ 84, 156
Սադղ 167
Սազանդարեան Տ. 680
Սազօնով Եգ.144
Սաքենիկ 282, 283
Սաքտար խան 72
Սախատով 132
Սակալով 376, 377
Սահակ 115, 200
Սահակ (Մաշտի)135
Սահակեան Աւետիք 466
Սահակեան Սաքօ 460, 619, 620
Սահակեան Տիգրան 691
Սաղեան Անդրէաս 149, 150
Սաղեան Հայրապետ 268
Սաղեան Գիգօ 481
Սամի շեյխ 469
Սամուէլ 484
Սամուէլեան Սարգիս 567
Սայեադեանց Աւագ 247
Սանդերս 422, 424, 425, 432-434, 457, 458, 463-465
Սառա 669
Սասունի Կարո 626
Սարատնիկեան Մեսրոպ-բէկ 601
Սարբազ Խեչօ 512
Սարգսեան Մովսէս 411
Սարգսեան Նիկոլ 459
Սարգսեան Արշակ 501, 503, 504, 507, 508, 658
Սարգսեան Բախշի 502, 503
Սարգսեան Համբարձում տե՛ս *Եապոն Սաքօ*
Սարգսեան Յովհաննէս 516, 517
Սարգսեան Լևոն 521-523
Սարգսեան Ներսէս Գր. 559, 581, 589
Սարրայլ զօրավար 262
Սարուխանեան Բախշի 45
Սաքօ տե՛ս *Եապոն (Սարգսեան Համբարձում)*
Սաֆարեան եղբայրներ 527
Սեպուհ 475, 476, 597, 602, 603, 605, 606, 619
Սերրայդ կապիտան 304, 305, 311-313, 325, 326, 330-333, 335-339, 347, 350, 380, 462
Սերգէյ 282
Սէյիդբեկով Հէյդարբէկ 84, 278
Սիմոնեան էլիգում (էլօ) 674, 677, 689
Սէյրանեան Միքայէլ 559, 593, 595
Սիրանու(յ)շ 567, 605, 606
Սիպիագինին Դիմիտրի 144
Սմբատ 150-152, 615
Սոկրատ տե՛ս *Մելիք-Շահնազարեան Սոկրատ*
Սոկրատ 516-518
Սերգո 549
Սիլիկեան զորավար 557, 632, 635, 687
Սիգօ տե՛ս *Տեր-Սարգսեան Սերգէյ*
Ստամբոլցեան Պարոյր 10
Ստեփանեան Նիկոլ 40, 41
Ստեփան տե՛ս *Տեր Աւետիքեան Ստեփան*
Ստեփանեան Աստվածատուր (Աստատուր) 82, 83, 95, 104, 155, 362, 367, 374
Ստեփանեան Աբգար 119, 125
Ստեփանեան Յովակ 180, 363, 372, 386, 417, 625, 629, 637
Ստեփանեան Ստեփան 87, 119, 120, 125, 399, 400
Ստեփանեան Գէորգ 693
Ստոլիպին 60
Սումանց Միրզա 156-158
Սուրեն 133
Սուրեն տե՛ս *Սիկոլ*
Սուլթանով Խոսրով բեկ 330, 331, 333 - 336, 339, 346, 348, 355, 358, 362, 366, 374 - 376, 378, 379, 382, 405 - 407, 411, 414-416, 425 - 429, 431 - 435, 437, 440, 443, 445 - 450, 455, 457, 462, 466, 475, 527, 529, 535, 541, 552, 579, 613, 619
Սուլթանով Համիդ 579
Սուլթանով Չինգիզխան 579

Վազգէն տե՛ս *Միրզաբէկեան Վազգէն*

Վահան եպիսկոպոս տե՛ս *Տեր-Գէորգեան Վահան*
Վահան Խորենի 466
Վահան 509
Վահան տե՛ս *Գրիգորեան Վահան*
Վահիդ բէյ 316
Վալոդիա ներկարար 64
Վալօդիա (Վարդան) 117
Վասիլ 633, 661
Վանցեան Ա. 9, 10
Վարդան խմբապետ տե՛ս *Սերգէյ Միհրանեան*
Վարդան 216, 682
Վարդան (Ռասպուտին) 647
Վարդանեան Մ. 136, 219
Վարդանեան Արտաշես 179, 386, 556
Վարդանեան Գրիգոր 179
Վարդանեան Հմայակ 179
Վարդապետեան Արտաշես 107, 163, 178, 242, 243, 325, 329, 330, 364, 390, 415, 416, 427, 491, 527, 528, 530, 532, 539, 550, 565, 566,
Վարդապետեան Եզնիկ 520
Վարդապետեան Լև. 44, 48, 82, 83, 85, 86, 88, 90, 203, 207, 208, 232, 233, 243, 247, 248, 274, 278, 279, 311, 367, 371, 3 74
Վարդապետեան Հայկազ 39, 197, 271
Վարդապետեան Վարդան 31, 145, 271, 533-535
Վարդապետեան Կարապետ քհն. 228
Վարդապետեան Ս. 200
Վարժապետեան Լևոն 153
Վարժապետեան Վար. 39
Վարշաւսկիյ Համբարձում 98
Վարշամեան 607, 608
Վարսենիկ 511
Վարլամեան Գէորգ 62, 482, 483
Վէզիրով Հիւսէյինբէկ 131
Վէզիրով Նաջաֆկուլի աղա 155, 410
Վէզիրովներ 95, 96
Վէզիրով Ֆարուխ բէկ 23
Վերդ(տ)եան Աղասի 143, 153, 170, 172, 183, 188 - 191, 195, 229, 270, 173, 194 - 296, 299, 303, 434, 453
Վէքիլեան Ալէքսանդր 605
Վռամեան 6, 7
Վրացեան Սիմոն 218, 535, 539, 564

Տաունզենդի 429, 430
Տէր-Աւագեան Խորեն 501-504
Տէր-Աստվածատրեան Մարկոս 163, 174, 177, 303, 310
Տէր-Աստվածատրեան Ռուբեն 337, 400
Տէր-Առաքէլեան Արա բժ. 509, 658, 668
Տէր-Աւետիսեան Յովսեփ 95
Տէր-Աւետիքեան Գրիգորիս 38, 276, 277, 280
Տէր-Աւետիք(ս)եան Եգոր գնդապետ 632, 668, 674, 686, 687, 689
Տէր-Աւետիքեան Ստեփան 13, 14
Տէր-Ասատրեան Մ. 432
Տէր-Արիստակէս 650
Տէր-Բաղդասարեան Արմենակ 196
Տէր-Գաբրիէլեան Գէորգ 252
Տէր-Գաբրիէլեան Սարգիս 252
Տէր-Գաբրիէլեան Արշավիր դոք. 223
Տէր-Գաբրիէլեան Նիկ. 386, 429
Տէր-Գասպարեան Ռուբէն 41, 44, 48, 82, 155, 243, 367
Տէր-Գասպարեան Ռոստ. 374
Տէր-Գրիգորեան Գրիգոր քահ. 27, 28
Տէր-Գրիգորեան Պետրոս 353
Տէր-Գրիգորեան Տիգրան 357, 367, 386, 433, 437, 533
Տէր-Գրիգոր 504, 512
Տէր-Գրիգորեան Լիւդվիգ 322, 360
Տէր-Գէորգեան Վահան Եպ. 140, 228, 302, 306, 307, 356, 374, 380, 395, 431, 437, 440 - 442, 449, 450, 453, 454, 650, 653, 655
Տէր-Գէորգեան Տիգրան 362, 386, 534
Տէր-Դանիէլեան Միսակ (Արամայիս) 17, 22, 29, 62, 292, 401, 436, 437, 441, 518
Տէր-Դանիէլեան Թէոդորոս 630
Տէր-Դավիթ 653-655
Տէր-Դաւթեան էլէօնորա 613
Տէր-Դաւթեան Յովսէփ 10, 534
Տէր-Դաւթեան Պօղոս 499, 503, 638-641, 643, 646, 658, 666, 667, 670-672, 674, 678-680, 686-689, 692
Տէր-Թադէոս 674-676
Տէր-Իսրայէլեան Իսահակ (Ջարմայր) 600, 601
Տէր-Իսրայէլեան Իսրայէլ 159, 163, 601
Տէր-Իսրայէլեան Սերգէյ 219
Տէր-Խաչատուր 509
Տէր-Կարապետեան Խաչատուր (Ուսուլ Խէչօ)218, 219

Տէր-Կարապետեան Պօղոս 219
Տէր-Հայրապետեան Սահակ 484, 489, 490
Տէր-Ղազարեան Բէնեամին 681
Տէր-Ղազարեան Զաքար 642, 673
Տէր-Ղազարեան Իսահակ 293
Տէր-Ղազարեան Թադեոս 563, 564
Տէր-Միհաս 68
Տէր-Միքայէլ 654
Տէր-Միքայէլեան Անուշաւան 18, 39, 82, 90, 155, 180, 203, 271, 274, 328, 367, 374, 375, 380, 402, 441, 534
Տէր-Միքայէլեան Հռիփսիմէ 82
Տէր- Միքայէլեան Արտաշես 351, 353, 354, 362, 368, 436
Տէր-Մեսրոպ տե՛ս *Շահիքանեան Մեսրոպ քահ.*
Տէր-Միհասեան Ռուբէն 52, 56, 67, 80, 255, 470, 471, 473, 474, 476, 504, 506, 507, 524, 525, 528-531, 536, 537, 539, 540, 542, 544, 546, 548, 551, 558, 564, 566, 600, 602, 603, 609, 616, 624, 626, 627, 629, 631, 632, 635, 640, 663, 668, 671, 692, 693
Տէր-Մկրտչեան Դրաստամատ 567, 568, 570
Տէր-Յարութիւն 565
Տէր-Յարութիւնեան Անդրէաս 435
Տէր-Յովհաննէսեան Համբ. 521
Տէր-Յովհաննէսեան Միքայէլ 300, 452
Տէր-Յովհաննէսեան Նիկոլ 39
Տէր-Յովհաննէսեան Թեոդորոս 200, 211, 330, 394
Տէր-Յովհաննիսեան Միքայէլ 175, 243, 259, 261, 262, 300, 367
Տէր-Յովհաննիսեան Պօղոս 51
Տէր-Յովսէփեան Թեոդորոս 145
Տէր-Ներսիսեան Ներսէս 597
Տէր-Սահակեան Մկրտիչ 599, 600
Տէր-Սարգսեան Ստեփան 55
Տէր-Սարգսեան Վալօդիա 630
Տէր-Ստեփանեան Արտեմ 119
Տէր- Ստեփանեան Ռուբեն բժշ. 305, 310, 338, 339, 402, 547, 637
Տէրտէրեան Արսեն 702, 703
Տէրտէրեան Յովհաննէս քահ. 243, 248, 249, 250
Տէր-Օհանեան Գագա 404, 413, 459, 482, 491, 493, 605
Տէրունի Հակոբ 484, 486, 488, 489, 503, 504, 506- 509, 511, 513, 563, 661-663
Տիգրան 692
Տիգրանեան Սիրական 13, 458, 459, 461-464, 702, 703
Տոմսոն 283, 285, 287, 298, 299, 301, 302, 304, 311, 313, 326, 331, 332, 335, 337-339, 354-358, 366, 374, 376, 378, 381, 412-414, 425, 430, 433, 462
Տօմիլին 601

Րազդորսկի Իվ. 405
Րամիշևսկի 120, 121, 126, 128
Րաշկովսկի 90
Րասպուտին Գրիգորի 665
Րուզսկի 565

Ուլուճց Ներսէս 27, 121, 420
Ուղտ Մանասար 300
Ուղուրլուբեկով Ուղուրլուբէկ 67-69, 73
Ուղուրլուբէկով Ֆրէյդունբէկ 250, 251
Ուսուբ Ֆէլդշեր 68, 69, 72
Ուսուլ Խեչօ տե՛ս *Տէր-Կարապետեան Խաչատուր*

Փանահ խան 479, 615
Փառանձեմ 44
Փաստրմաճեան Գարեգին (Արմեն Գարօ) 605
Փարսեան Մեսրոպ 488, 631
Փարսումց Պօղոս 485
Փափազեան Հմայակ
Փիլիպոսեան Օերուն 631
Փիրումեան Նիկ. 417
Փիրումեան Օսիկ 449
Փիրումեան Շամիր բեկ 194, 195, 268-270
Փիրումեան Ալէքօ բեկ 47, 108, 163, 390
Փոլադով Խոսրով բէկ 83-86, 88, 243, 278, 279, 303, 410, 455
Փսերեան Լևոն վրդ. 227

Քալանթարեան Գրիգոր (Գիգի) 131-136, 233
Քալանթարեան Քր. բժ. 95
Քալանթար Աշխարհբէկ 3, 11, 12, 14
Քալաշեան Գառնիկ 11
Քալոյեան Գառնիկ 9
Քամալեան Արշ. 95, 109, 116, 117, 127, 163, 172, 174, 176, 177, 180, 203, 205, 206, 243, 258, 274, 276, 353

Քամալեան Եսայի 285, 288 -290, 295, 366
Քաջազնունի Յ. 62, 381-383, 395, 407, 443, 531, 536, 577, 578, 663, 664
Քաջբերունի Ռուբէն 47
Քարամեան Աղամիր 24
Քեազիմ բէյ 154, 162, 188, 189, 192, 419-421
Քեամրան 25
Քեմալ 695
Քեոի 46, 47, 51, 72, 74, 76, 649
Քեշիչ օղլի Արտեմ տե՛ս *Դալի Մահրասա*
Քոչարեան Սիքայէլ տե՛ս *Դալի Դե(ա)րվիշ*
Քոչարեան Աշխեն 567
Քոչարեան Յակոբ 191, 400
Քրիստափոր տե՛ս *Միքայէլեան Ք.*
13, 14, 521
Քրիստափոր 563, 679
Քրիստոս տե՛ս *Յիսուս*
Քրմոյեան Վահագն 607, 629

Օդաբաշեան Սարգիս 575
Օհանեան Գուրգեն 186, 243, 263
Օհանեան Սուրեն 237, 238, 243, 263
Օհանեան Քրիստափոր 237
Օհանջանեան Աւետիս (Ֆարհատ) 334, 511
Օհանջանեան (Յակոբեան) Նորայր 508-515
Օհանջանեան Համօ 616-618, 659

Ֆարզանդա բէյ 516

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբդալ գիւղ 26,162
Աբլահ 204
Աբասթուման 30
Աբովեան փողոց 536, 544, 622, 682, 694
Ագուլիս 522
Ագարակ 483, 502, 641
Աղրբէջան 19, 41, 146, 147, 162, 164, 194, 200, 205, 207, 209, 211, 221, 225, 226, 239, 241, 303, 312, 313, 325, 326, 330, 332, 336-338, 342, 347, 348, 354-359, 366, 368, 372-374, 376-382, 386, 393-407, 411-413, 416, 419, 420, 424 - 426, 429, 430, 433, 435, 436, 443, 446, 447, 455, 456, 458, 460, 463, 464, 466 - 469, 471, 473, 475, 485, 486, 490, 491, 507, 518, 523, 525, 526, 528, 529, 536, 538, 540 - 543, 545, 548, 551, 552, 555, 556, 559, 573, 577 - 580, 583, 585, 586, 615, 619, 662, 671
Ալաման(գ) շրջան 108
Ալաշկերտ 506, 507
Ալբալ դաշտ 153,158
Ալեքսանդրապոլ 20, 30-32, 407, 475, 479, 566, 585, 588, 597 - 604, 607-609, 616, 626, 627, 633
Ալիաք երկաք գիծ 82
Ալխանլու գիւղ 629
Ալիանլու 471, 514, 526, 557
Ախալքալակ 628
Աղահեջք գաւառ 444,468
Աղդամ 26, 52, 64, 65, 71, 72, 74-76, 78, 80,85-89, 95, 131, 153, 154, 156, 158, 160, 161, 166, 170, 171, 188, 189, 192, 195, 205, 206, 227, 229, 239, 245, 264, 266, 268, 285, 287, 291, 314, 325, 410, 419, 422, 434, 435, 455, 456, 481, 554
Աղիճ կայարան 598
Աղստաֆա 601
Աղջաղալա գիւղ 480
Աղօղլան վանք 33
Աղուդ գիւղ 299
Ամաղու գիւղ 674, 676, 677
Ամարասա Ս. Գրիգորիս (Լուսաւորչի թոռան անվան) եկեղեցի 33, 280, 469
Ամենափրկչեա (Ս.Ղազանչեցոց) եկեղեցի 565
Ամերիկա տե՛ս *ԱՄՆ*
ԱՄՆ – 35, 301, 536, 537, 556, 597, 605
Այնազուր գիւղ 509, 512, 514, 677
Անգեղակոթ 503, 643, 646, 678, 688
Անգլիա 18, 325, 359, 397, 409, 429, 464
Անդրկովկաս 17, 19, 21-23, 25, 45, 53, 132, 146, 147, 251, 304, 317, 325, 331, 377, 406, 419, 469, 473, 479, 506, 518, 581, 615, 619, 629, 668
Անդրֆեդերցիա 41

Անթիլիաս 511
Աշան գիւղ 108, 125
Ապառաժ շր. 13, 16, 18, 60, 302, 318, 323, 338, 365, 389, 458
Աջափեա Խաչեն 163, 233
Առաջածոր գիւղ 79, 190, 228, 479
Առաքել գիւղ 89, 120, 126, 184
Ասկերան 7, 76-80, 92, 112, 129, 131, 134-136, 138-140, 142, 143, 145, 148, 150, 153, 154, 156-159, 165-171, 188-191, 194, 195, 205, 206, 208, 211, 219, 228-230, 238, 239, 242, 244, 256, 257, 261, 265, 266, 268, 287, 297, 316, 378, 453, 455, 473, 481, 576
Ասկերան գիւղ 79
Ասորիք 515
Աստրախան 220, 343, 460, 509
Աւան գիւղ 108
Աւդալ-Գիւլափլու 188
Աւետարանոց գիւղ 47, 108, 114, 137, 163, 187, 211, 247, 431
Աւստրո-Հունգարիա 18
Ատրպատական 649
Արարատեան դաշտ 471, 514, 526, 557
Արարատ լեռ 516
Արարատեան Հանրապետութիւն 173, 174
Արարատեան նահանգ 698
Արաքս գետ 169, 409, 516, 641, 649, 684
Արդահան 525
Արխաչանի լեռնանցք 697
Արեւմտեան Հայաստան 105, 199, 281, 471, 472, 506, 507, 695, 701
Արեւմտեան ճակատ 4, 5, 157, 179, 440, 505, 511, 529, 565
Արեւմտեան (գերմ) ճակատ 289
Արեւելեան ճակատ 281
Արցախ տե՛ս *Ղարաբաղ*
Արփագիաղուկ գիւղ 121
Արփա գետ 657, 658
Արփա գիւղ 634, 661, 674, 677, 689
Արփաչայ գետ 498, 520

Բագու 8-10, 15-17, 22, 23, 31, 34, 35, 44, 46, 51, 52, 59-64, 76, 79, 86, 88, 90, 91, 94, 101, 104, 125, 128, 129, 131, 132, 147, 152, 156, 160-162, 182, 192-194, 200, 205, 207, 220, 221, 225, 227, 228, 233, 251, 282, 285, 292-294, 297 - 299, 301, 304, 310, 315, 317, 321-325, 329-334, 337-339, 341 - 345, 348, 349, 351, 352, 356 - 359, 361, 362, 364, 366, 374-376, 380-383, 389, 398, 400-403, 406, 411, 414, 415, 418, 429, 435, 440 - 443, 447, 448, 452, 456, 457, 460, 462 - 464, 467, 472, 479, 480, 482, 483, 485, 486, 494, 502, 504, 509, 518, 523, 529, 537, 538, 541, 557, 563, 566, 578, 580, 583, 601, 618, 623, 638, 659, 673, 674
Բաղարա գիւղ 265
Բաթում 97, 245, 327, 475
Բալախանէ 17, 104
Բազարչայ գիւղ 496, 503, 637, 638, 641-643, 647, 688
Բալաջառ(ր) 46, 160
Բազարչայ (Որոտան) գետ 648
Բալթիկ ծով 93, 668
Բալկանեան ճակատ 193, 518
Բալկաններ 262, 575
Բալլուջա գետ 80
Բալլուջա գիւղ 137, 143, 171, 183, 188, 217, 294, 300
Բայազետ 62, 96, 180, 514, 519, 520, 563, 564, 630, 634, 661, 694, 696
Բաղունց Հորեր թաղ 226, 436, 437, 439
Բանազուր գիւղ 87, 89, 120, 126, 184, 376
Բաշ-Ապարան 147
Բայիլով 46
Բանանց գիւղ 13, 14
Բաշքենդ 504, 511
Բաշնորաշեն 630-632, 635, 661, 667, 689, 690
Բանկ Օտոման 605
Բասարքեչար (Վարդենիս) 345, 564
Բարգիւշատ գետ 121, 444, 469, 520
Բարգիւշատ գիւղ 471, 680
Բարիսովկա գիւղ 688
Բարդա (Հին Պարաւ) 64, 66, 73, 85, 92, 245, 418, 486
Բելգիա 9, 610
Բեսարաբիա 218
Բերդաձոր 45, 48, 109, 198
Բերկրի 682
Բեյուք Վեդի 544, 630
Բիբի-Էյբար 17
Բիթլիս 506
Բիլաք(կ) 646, 672
Բիւզանդիա 195, 514, 515
Բլաք գիւղ 688
Բլբլաք 163

Բլէքա 168
Բլիլաք 281
Բոստոն 35
Բորժոմ 30
Բռնակոթ 34, 483, 503, 678, 679, 688
Բօրիսովկա 646, 647
Բոսֆոր 205, 515
Գանձասարի վանք 470
Գայլի Դրունք 96, 630
Գանձակ 13, 14, 27, 35, 59, 60, 63, 72, 86-91, 95, 107, 108, 111-115, 125, 129, 146, 147, 159, 160, 164, 165, 197, 199, 204, 227, 230, 255, 258, 262, 265, 310, 318, 331, 336, 337, 341, 435, 460, 465, 470, 472, 481, 516, 527, 532, 550, 551, 579, 619, 627, 691, 695
Գանձասար 140, 142, 336, 337, 434, 470
Գարդման շրջան 210, 685
Գեաուր Ղալայ քաղ 391, 436, 437, 439, 470
Գի(ե)նուազ (Արևիք) 51, 125, 685
Գեաուրղալայ քաղ 470
Գեղայ ձոր 469, 514
Գեօմուր գիւղ 678
Գեօրէքդաշ 645
Գերմանիա 18, 44, 93, 326, 361, 410, 472, 507, 691
Գէօրգեան ճեմարան 271, 432, 499, 509, 511, 534, 618, 632, 645
Գժաձոր գիւղ 489
Գիւլափլու 26, 162, 188
Գիւլիստան 110, 138, 145, 163, 164, 170, 183, 197, 204, 233, 417, 468, 470, 476, 479, 480, 481, 632, 685
Գիւնւազ գավառ 409
Գիշ գիւղ 4
Գնդեվազ գիւղ 499, 637-639, 646, 657, 671
Գնիշիկ գիւղ 662, 676
Գոմեր գիւղ 108
Գօլովինեան պողոտա 458, 459
Գօղթան գաւառ 470, 522, 530, 639, 671, 685
Գօրիս 284, 285, 287-291, 293, 295, 298, 305, 310, 401, 411 - 414, 416, 417, 427, 434, 451, 466, 468, 469, 475, 476, 482, 484-486, 490, 493 - 495, 505, 507, 513, 527, 538, 575, 595, 596, 605, 618, 619, 625, 636, 642-644, 659, 667, 678-680, 688
Դալիար գիւղ 146
Դահրազ գիւղ 156, 158
Դահրաւ գիւղ 137, 300
Դամբաւ 105, 143, 171
Դամրազ 229
Դաշբուլաղ 79, 104, 138, 140-143, 164, 171, 183, 188, 265, 294, 296, 298-300, 326, 453, 479
Դաշուշեն 114, 115, 137, 171
Դարաբաս 688
Դարալագեազ (Վայոց Ձոր) 32, 180, 625, 630, 631, 639, 642, 646, 658-660, 663, 666, 667, 669, 674, 676, 677, 686, 694, 696
Դարդանել 205, 361
Դիզակ 27, 40, 47, 89, 110, 116, 117, 119 - 121, 125, 127, 129, 130, 138, 144, 145, 162 - 164, 172, 186, 188, 196, 197, 218, 233, 241, 267, 272, 273, 302, 303, 352, 362, 365, 373, 417 - 420, 469, 470, 541, 554, 684
Դիզափայտ լեռ 420
Դիլուղա գիւղ 378,
Դիլիջան 519, 587, 588, 595, 597, 602-606, 609, 611, 612
Դսեղ 575, 597
Դրնաւ գիւղ 163
Դրնավազ 171, 211, 242, 292, 385, 415, 436, 437, 615

Եալթա 169
Եալջի 630
Եգիպտոս 515
Ելիզավետպոլ 147
Եղվարդ գիւղ 483, 641
Եւլախ 17, 23, 26, 30, 46, 52, 59, 63-65, 72, 80, 87, 94, 134, 245, 294, 337, 338, 375, 426, 451, 456, 527
Եանբախէ 645
Եւրոպա 195, 583, 698
Երևան 11, 30-32, 35, 55, 57, 62, 96, 154, 211, 225, 263, 301, 310, 338, 341, 348, 385, 412, 451, 453, 457, 458, 460, 463-466, 468, 479, 493, 494, 498, 499, 502-504, 506, 507, 509-514, 519, 521, 526, 528-532, 534, 544, 547, 551, 557, 562-565, 568, 572, 573, 575, 580, 595, 597-599, 602 - 605, 607, 611, 612, 616, 617, 619, 626, 627, 629, 631, 632, 635, 636, 638, 640, 642, 646, 659-661, 666,

667, 670-675, 677, 682, 688-693, 702, 704
Երևանեան հրապարակ 458

Զաբուղի ծոր 471, 641
Զագիամ 146
Զանգեզուր 16, 18, 32, 35, 41, 51, 87, 94, 96, 106, 111, 112, 125, 126, 137, 141, 142, 149, 165, 169, 170, 197, 201, 225, 241, 289, 302, 303, 320, 330, 331, 335, 337, 338, 348, 356, 359, 372, 374, 380, 384, 402-405, 411-414, 416, 425, 426, 429, 430, 450, 458, 466, 469-472, 474-477, 479, 482, 484, 485, 487, 488, 490-495, 499, 505-507, 520, 521, 523, 525-531, 535, 537-546, 548-550, 552, 578, 579, 583, 595, 596, 605, 608, 616-619, 623-632, 634-642, 649, 657-660, 663, 666, 667, 670-673, 680, 681, 684, 687, 691, 694-697
Զանգելան 156
Զարիպլու 178
Զանգիբասար 616, 632
Զարգեար գիւղ 378
Զարըսլու 417
Զէյթուն 605
Զուիցերիա 432
Զունուզ 684
Զող 468, 475, 524, 696

էլիզաւետպոլ 331
էյվազլար 471
էյվազլու 641
էրզրում 51, 55, 698
էջմիածին 51, 216, 458, 511, 632, 645, 650, 651, 653

Թազա ժամ (Նոր եկեղեցի) 470
Թախանաբերդ 336
Թաղավարդ 117, 127
Թաղասեր 120, 126
Թաղլար 124
Թաղ գիւղ 470
Թաւրիզ 34, 72, 251, 466, 474, 554, 650
Թարթառ գավառ 26, 67, 86, 245, 246
Թարթառ գետ 67, 468
Թթու ջուր 190, 209, 471
Թէհրան 152, 218, 219, 614
Թիսխարաբ գիւղ 121
Թիֆլիզ(ս) 5, 6, 8-10, 13, 23, 24, 26, 27, 30, 35, 37, 47, 51-53, 55, 56, 58-61, 63, 64, 86, 87, 90, 94, 96, 100, 111, 112, 114, 115, 146, 147, 151, 164, 180, 230, 244, 274, 275, 311, 313, 315-319, 321, 334, 335, 337, 341, 381, 383-386, 389, 412, 416, 422, 432, 433, 436, 443, 446, 448, 451, 452, 456, 457, 459, 460, 463, 465-467, 474, 475, 518, 521, 525, 528, 531, 547-551, 554, 556, 557, 562-566, 569, 570, 572, 576, 577, 580, 589, 593, 598, 599, 623, 624, 628, 667, 672, 684, 696
Թուրքահայաստան 2, 13, 521
Թուրքիա 35, 94, 147, 164, 205, 239, 255, 302, 361, 410, 422, 444, 475, 485, 506, 583, 605, 619, 685
Ժընև 11, 12, 298, 532, 568, 605

Իգդիր ավան 35
Իջևան 560, 601, 619
Իսպանիա 64
Իստի Սու (այժմեան Ջերմուկ) 496, 502
Իչ Թափալար քարւանսարա 490, 495, 688
Իտալիա 18
Իրան տե՛ս *Պարսկաստան*

Լագոդիխ 30, 66
Լազարեան ճեմարան 511
Լայպցիգ 326
Լեհաստան 457
Լենինգրադ տե՛ս *Պետրոգրադ*
Լիժինեա 654, 664
Լեռնահայաստան 681, 702, 704
Լեռնային Ղարաբաղ տե՛ս *Ղարաբաղ*
Լիբաւայի բերդ 93
Լոնդոն 264
Լոռի 35, 54, 505, 585, 595

Խալֆալու գիւղ 396, 431
Խամշի վանք 470
Խանճախ 114, 137, 188, 217, 227, 294, 300
Խանասօր(այ) 60, 105 109, 218, 237, 412, 511, 519
Խանաբադ 125, 136-140, 150, 157, 160, 167
Խանարատ 229
Խանի Բաղ 80, 172
Խանձք 41, 142, 143, 190, 229, 265, 266, 294, 297, 469, 470

Խանծի 615
Խանձքեցոց թաղ 470
Խանքենդ (Ստեփանակերտ) 30, 47, 111, 112, 114, 117, 136, 137, 142, 167, 171, 174, 175, 184, 211, 217, 227, 294, 297, 300, 326, 331, 332, 335, 346, 348, 376, 377, 411, 416, 431, 450, 471, 541, 614
Խաչեն 41, 68, 79, 105, 110, 136, 137, 138, 145, 157, 158, 164, 171, 183, 190, 191, 197, 202, 211, 227, 228, 239, 242, 265, 268, 270, 272, 273, 280, 291, 302, 303, 309, 336, 352, 417, 444, 465, 468-471, 476, 479-482, 554, 606, 614, 651-652, 685
Խաչեն գետ 67, 68
Խաչենի Դամբաւ 190
Խաչենի Վանք 190
Խարբերդ 506
Խարկով 474, 659
Խերկսան գիւղ 163
Խերխան գիւղ 281
Խ(ը) դրլու գիւղ 75, 153, 167, 481
Խծաբերդ 27, 120-122, 124, 373, 374, 418-421, 429, 492
Խնարտ գիւղ 229
Խնուս 515
Խնձորեսկ 49, 320, 641
Խնձորեստան 190, 300, 481
Խոդանան 666
Խոզանաւար 490, 641
Խոխանաբերդ 336
Խոյ գիւղ 121
Խոջալլու 148, 171, 196
Խորհրդային Հայաստան տե՛ս *Հայաստան*
ԽՍՀՄ 41, 681
Խրամորթ 150, 157, 219, 229
Խուդաֆերին գիւղ 89
Խուստուփ 674, 686, 687

Ծաղկածոր (Զանգեզուրի) 444
Ծամձոր 420
Ծմակահող գիւղ 64, 190
Ծովատեղ 163, 281, 283

Կազան 88
Կալադարաս տե՛ս *Բերդաձոր*
Կաղզուան 127
Կաչաղակաբերդ 336
Կասպից ծով 372
Կարամարեան 220
Կարին 506, 605
Կարկառ (գետ) 138, 145, 172, 195, 204, 294, 561
Կարե (ի)ագին 26, 71, 76, 81, 85, 89, 112, 117, 118, 128, 378
Կարմալինովկա գիւղ 96, 471, 637
Կարմրակուճ գիւղ 87, 120, 226, 267, 365
Կարս 30, 31, 479, 645
Կափան (Ղափան) 685
Կզնուբ 681
Կիլիկիա 372
Կին 3, 8, 17, 21
Կոնդստանդնուպոլիս տե՛ս *Պոլիս*
Կոռնիձոր 468, 471, 491, 492, 641, 649
Կովկաս 7-9, 12, 14, 15, 17, 21, 28, 30, 96, 103, 111, 173, 193, 218, 219, 246, 331, 343, 347, 359, 368, 377, 445, 447, 448, 458, 466, 470, 515, 529, 532, 553, 580, 605, 636, 645, 673
Կովկասեան լեռնաշղթա 54, 463, 628
Կովկասեան ճակատ 2, 3, 5, 66, 140, 144, 447, 518, 549
Կրասնովոդսկ 140, 343
Կրկժան 114, 137, 194, 198, 211, 217, 294, 300, 452, 459, 465
Կուսանաց վանք 198, 333, 650
Կուսապատ գիւղ 105, 108, 182, 183

Հագ (ը) արու գետ 184, 187, 189, 284, 420, 444, 469, 471, 489, 491, 492, 507, 520
Հադրութ 26, 87, 112, 116, 119, 121, 125, 126, 128 - 130, 186, 273, 399, 576
Հաթերքի շրջան 163
Հաղորդի գիւղ 281, 365
Համամլու 592, 593, 604
Հայաստանի Հանրապետություն տե՛ս *Հայաստան*
Հայաստան 10, 17, 34, 41, 44, 62, 147, 164, 174, 224, 301, 329, 331-333, 336, 340, 342, 344, 345, 347, 348, 351, 353, 356, 362, 363, 365, 372, 373, 376, 380-382, 385, 386, 395, 396, 398, 403-405, 407, 409, 411-415, 419, 430, 442-445, 447, 456, 458, 460, 468, 469, 472-475, 490, 491, 505, 522, 526, 531, 535, 541, 543, 544, 550, 551, 553-556, 559, 566, 572, 577-579, 583, 586-588, 605, 608, 623,

625, 664, 669, 671, 683, 686, 691, 692, 695, 696, 702
Հայադ գիւղ 190
Հաշտարխան 15, 220
Հաջի Սամլու 190, 191, 202, 211, 216, 284, 289, 295-297, 411, 422, 423, 425, 427, 434, 444, 450, 452, 468, 469, 471, 472, 520, 526, 530, 537, 542-544, 546, 563, 578, 579, 596, 629, 636, 640, 643, 658, 671
Հարաւ գիւղ 157, 211, 229, 231, 378, 380
Հերեր 255, 267, 281, 498, 637
Հինգ Արխ 95, 161
Հինդարեն շրջան 264
Հին Թաղլար 120, 121
Հին Թաղ 420
Հիւնոտ (Ներքին Քարին Տակ) 613
Հիւսիսային Կովկաս 521, 608
Հնկաստան 358
Հրաշաբերդ 676
Յովնանեան դպրոց 11, 691

Ջախափեա Խաչեն 163, 233

Ղազախ 159, 331, 336, 469, 563, 619, 695
Ղազանչեցւոց Ամենափրկչեան եկեղեցի 243
Ղալա Գեօրդուքան 287
Ղայբալիշէ 296, 459, 465
Ղամարլու 691, 692
Ղայբ (լ) ալու 136, 137, 150, 167, 229
Ղայբուլախ (ձոր) 188
Ղալագ (ջ)եղ 678, 688
Ղաջար գիւղ 32, 267, 378
Ղաւախան 211, 281
Ղարաբաղ 7, 14, 16, 18, 24, 27, 30-32, 41, 49, 54, 55, 60, 61, 63, 64, 72, 73, 75, 81, 82, 86, 87, 92, 96, 101-104, 106, 107, 109, 111, 116-118, 122, 130-133, 138, 140, 145, 147, 151, 153, 154, 156, 159, 162-165, 169-171, 173, 174, 180, 190, 192-194, 196, 198, 199, 204, 206, 207, 209-211, 214, 221, 223, 227, 228, 244, 246, 248, 251, 267, 270, 274-276, 289, 292-294, 297, 298, 302-304, 306, 307, 310, 311, 313, 320, 321, 325, 326, 329-332, 335-338, 340-342, 345-348, 354-359, 361, 363-374, 380-384, 387-389, 395, 396, 398-405, 407, 411-417, 419, 425-427, 429, 430, 432, 433, 444-447, 449-451, 453, 456-458, 460, 461, 463-469, 471-476, 479, 481-485, 487, 490-494, 497, 505-507, 510, 511, 517, 518, 520-530, 532-548, 550-556, 560, 562-565, 572-575, 577-579, 583, 595, 596, 602, 605, 606, 609, 611, 612, 614, 616, 617, 619, 623-626, 628, 629, 635-637, 640, 649, 650, 656, 657, 659, 660, 663, 666, 667, 671, 672, 681, 684, 689, 695
Ղարադաղլու գիւղ 551
Ղարաբաղլար 640
Ղարաղաջ 78, 112, 153, 154, 160, 161, 165, 166, 287, 396
Ղարադաղ 169, 516
Ղարաղշլաղ (Բերդաձոր) 190, 191, 193 - 195, 198, 199, 201, 207, 210, 212, 225, 284, 341, 342, 520
Ղարանլուխ 513, 514, 663, 697
Ղարարազլար 638
Ղարաքիլիսէ 147, 224, 344, 496, 495, 499, 503, 512, 524, 528, 532, 535, 536, 546-549, 557-560, 564, 567, 568, 570, 572, 574, 575, 580, 582, 585, 587-590, 592, 593, 596-602, 605, 606, 607, 609, 611, 612, 616, 626, 627, 629, 635, 642, 645, 646, 667, 678, 688
Ղարաչինար տե՛ս *Աղջաղալա*
Ղարաքեօթուք 288
Ղարս 258, 525, 645, 699, 704
Ղափան 7, 16, 51, 125, 469, 472, 473, 490, 495, 513, 514, 530, 596, 639, 646, 666, 668, 671, 672, 686, 688, 692, 695
Ղզղալայ 74, 108, 125, 409
Ղլիջքաղ 136, 137, 150, 157, 167, 229
Ղզ(ըլ)բողազ 483
Ղշլաղ գիւղ 207, 265, 300
Ղրիմ 169
Ղումլուղ թաղ 259
Ղուշչի Բելաք գիւղ 495, 496, 498, 499, 504, 517, 520, 637, 638, 642, 646, 672

Ճարտար 158, 179

Մազէ կամուրջ 294, 453, 455
Մազրա գիւղ 523, 538, 647
Մա(օ)լա(օ)կանսկայա փողոց 61, 293

Մալթա կղզի 410, 432
Մալիբէկլու 26, 172
Մալիշկա գիւղ 499, 501, 507, 508, 509, 657-659
Մաշադիշէն 281
Մարաղա 108, 188
Մարգուշաւան 182
Մարիամ- Ղուկասեան գիմ. 19, 20, 33, 39, 40, 86, 208, 220, 326, 327, 362, 613, 651
Մարտակերտ 108, 183, 188, 265, 267, 268, 294, 316, 533
Մարտաշէն 281
Մարսել 532
Մեծ Թաղլար 120
Մեծ Թոփխանէ 48
Մեծ Շեն 48, 109, 460
Մեծ Քիրս լեռ 109, 366
Մելիքջանլու 127, 128
Մեղրի 409, 641, 667
Մետեխի բանտ 47
Մեյդան սարահարթ 190, 191, 296
Մեհտիշէն 137, 171, 294, 300
Մերվ քաղաք 292
Մերձաւոր Արևելք 422
Միջին Ասիա 410
Մինքէնդ 471, 520, 641
Միջագետք 286
Միափոր գաւառ 470
Միւրիշէն 219
Մորիշէնռու 229
Մխուբուրեան գիւղ 495, 496, 638
Մխուբուրեան լեռ 641
Մշոյ դաշտ 506
Միւրելէլու գիւղ 365
Մոզ քաղաք 658
Մոսկւա 3, 8, 9, 35, 44, 101, 132, 144, 216, 264, 474, 510, 511, 568, 600
Մսմնա 267, 268, 281, 287, 289, 294, 297, 303, 365
Մուշ 151, 685
Մուշկապատ 281
Մուսուլմանլար 288
Մուղան տափ. 23, 24, 96, 244, 409, 411, 481, 520, 541, 615, 629
Մուսուլմանական
Հանրապետութիւն 147
Մուրադ Թափասար 641

Նախիջևան 32, 34, 318, 338, 469, 471, 475, 482, 483, 513, 514, 526, 585, 631, 632, 635-640, 658, 659, 672, 674, 676, 677, 681, 685, 687-689, 691, 692, 695, 696
Նախջևանիկ գիւղ 26, 96, 139, 150, 229, 241, 245, 268
Նարիմանբէկլի 244, 333
Ներսիսեան դպրոց 515, 570
Ներքին Խաճաբաղ 135
Ներքին Ղլիջբաղ 125, 135, 138
Ներքին թաղ 470
Ներքին Ղարաննուխ 515, 661, 694, 704
Ներքին Տաճիկ 630, 634
Ներքին Քարինտակ 613
Նորագիւղ 300, 651, 652
Նորավանք 657
Նորաշէն 120
Նոր-Բայազետ 87, 513, 516, 551, 609, 704
Նոր- Նախիջեւան 218, 521
Նովոչերկասկ 207
Նևսկի(յ) պողոտա 4

Շահալի կայ. 604
Շահբախտ 641
Շահբազ 641
Շամր 495
Շամախի 470
Շաղաթ 503, 688
Շարուր 469, 471, 640, 666
Շամք(խ)որ 93, 111, 146, 318, 338, 376
Շխմահմուդ գիւղ 674
Շիրակ 626
Շիվանաձոր 409
Շնհէր (Շինուհայր) գիւղ 638, 642
Շոշ գիւղ 114, 145, 194, 211, 249, 280, 378
Շուշի 4, 5, 10, 13-17, 20, 22-24, 26, 28, 30, 33-37, 39, 41-44, 47, 51, 52, 55, 59-65, 73, 75, 76, 81, 83, 87-91, 95, 96, 101, 103, 105-109, 112, 113, 117, 119, 125, 127, 129, 130, 132, 134, 137-139, 142-144, 146, 150, 153, 154, 156, 158, 162, 164, 169-171, 175, 179-181, 184, 187, 189, 195, 197, 199, 200, 202, 205-207, 209, 210, 211, 212, 216, 219, 221, 226, 227, 239-241, 243, 245, 252, 255, 262, 264, 266, 267, 269, 270, 275, 280-282, 284, 285, 287, 289, 291, 293-298, 300, 303, 305, 310, 314, 318, 319, 321, 322, 326, 327, 333-335, 339-342, 348, 350, 359, 363, 366, 375, 376, 381, 383, 385, 387, 389-

391, 393, 396, 400-403, 405, 411-416, 424-427, 429, 434, 435, 445, 450, 451, 453, 455, 457-459, 461, 462, 464-466, 468, 470, 473, 477-479, 481, 485, 490, 491, 493, 517, 521, 523, 524, 526-528, 532-534, 549-551, 553-557, 561, 563, 565, 566, 569, 570, 573, 576-579, 582, 596, 602, 605, 606, 612, 614, 615, 619, 622, 623, 627, 645, 650, 651, 657, 664, 680, 702
Շուշի գավառ 81, 410
Շուռնուխ գիւղ 641

Ոսկանապատ տե՛ս *Բագու*
Որոտան գետ տե՛ս *Բազարչայ*

Չախմախ Թափայ 496, 503
Չայլի գիւղ 108, 188
Չանախչի գիւղ 247, 280, 282, 283, 291, 295
Չարդախլու 632
Չիմանքէնդ 671
Չիվա 630, 677
Չուխուր մահլա գիւղ 75, 167, 481

Պարսկաստան 41, 42, 72, 74, 105, 169, 286, 299, 333, 345, 377, 444, 466, 509, 515, 631, 632, 640, 649, 665, 691, 701
Պարտաւ 469
Պեխի աղբյուր 158, 561
Պետրոգրադ (Պետերբուրգ) 1-4, 6, 7, 11, 13-15, 17, 27, 34, 35, 41, 44, 55, 60, 115, 237, 251, 282, 331, 354, 399, 422, 524, 548, 562, 599, 618, 651, 656, 684, 694, 702
Պետրոպաւլովսկ 8, 282, 601
Պետրովզաւոդսկ 220
Պետրովօռազումովսկի գյուղ-ճեմարան 600
Պիւլլու Թումբ 188, 427, 430, 431, 439, 441, 452
Պտկի Ս,Գէորգ 652
Պտրէցիք 190, 191, 265, 300, 434, 459
Պոլիս (Կ.Պոլիս) 97, 159, 164, 201, 205, 207, 209, 211, 226, 231, 245, 433, 515

Ջահր 638
Ջալալօղլի 505, 575, 597, 628
Ջամիլլու գիւղ 217, 465
Ջաջուռ 473, 598
Ջարխեզ 601
Ջիբարաիլ (Ջա(ե)բրայիլ),
Կարեագին գաւառ 26, 87, 323
Ջիվանշիր 125, 244, 246, 410
Ջրաբերդ գաւառ (Ջիվանշիր) 55, 95, 104, 105, 110, 138, 145, 163, 164, 170, 183, 188, 196, 197, 204, 233, 265, 268, 272, 273, 280, 294, 299, 302, 303, 314, 352, 359, 376, 395, 417, 468, 476, 479-481, 533, 546, 554, 685
Ջուլ 471, 658, 666, 667, 670, 673, 674, 678, 687
Ջուղա (Ջուլֆա) 82, 128, 631

Ռաշտ 41
Ռայխստագ 610
Ռեազանի մարզ 17
Ռինդ գիւղ 677
Ռումանիա 457
Ռուսաստան 1-4, 6, 10, 12-14, 17-21, 25, 27, 28, 30, 41, 43-45, 53, 60, 74, 78, 94, 102, 111, 132, 144, 147, 168, 321, 325, 343-346, 359, 369, 406, 427, 435, 516, 518, 549, 583, 586, 609, 665, 666, 668, 695, 701
Ռուսիա տե՛ս *Ռուսաստան*
Ռուսեթ տե՛ս *Ռուսաստան*
Ռև գիւղ 300

Սադարակ 516
Սաբունչի 104
Սալմաստ 498
Սասնոյ լեռ 555
Սասուն 9, 338
Սարբաբա 471
Սարգսաշէն 282
Սարդարապատ 147, 344, 557, 558,
Սարդարաշէն 229
Սարիղամիշ 10, 23, 127, 677
Սարով 108, 162, 183, 201
Սարուշեն 281
Սեյդիշեն գիւղ 142, 190, 228
Սելիմ 510, 514, 630, 663, 697
Սիբիր 14, 15, 60, 269, 283, 343, 377, 443, 451, 486, 543, 544, 649
Սիսե(ի)ան 32, 51, 87, 96, 125, 126, 170, 180, 434, 471, 488, 495, 499, 503, 506, 523, 538, 596, 629, 638, 639, 642-645, 647, 666, 670-674, 676, 678, 679, 686-689, 692
Սիւնեաց Արևիք գաւառ 409

Սիւնիք 7, 25, 49, 106, 165, 320, 331, 336, 338, 342, 348, 372, 380, 396, 409, 444, 460, 466, 469, 471, 474, 479, 506, 514, 522, 523, 527, 537, 546, 578, 580, 619, 697
Սիւնեաց երկիր տե՛ս *Սիւնիք*
Սխտորաշէն 281
Սղնախ 108, 114, 137, 186, 211, 431
Սովետական Ռուսաստան տե՛ս *Ռուսաստան*
Սոֆիա 6
Սպիտակ շէն 121, 230, 281, 283
Ստեփանակերտ տե՛ս *Խանքենդ*
Ստոկհոլմ 12, 53
Սուրբ Գէորգ վանք 652
Սուրբ Կատարիճէ 27
Սուրբ Յովհաննի 470
Սուրբ Մարաս 33
Սուրմալու 523, 575
Սևանայ լիճ 32
Սև քաղաք 17
Սև ծով 457
Սօլօլակ փողոց 58, 457
Սօս գիւղ 68

Վաղարշապատ տե՛ս *Էջմիածին*
Վաղուդ գիւղ 299
Վաղուհաս գիւղ 190
Վայոց Ձոր 87, 96, 126, 470, 495, 496, 498, 501, 504, 508, 509, 512, 513, 520, 526, 630, 632-634, 637, 668, 676, 687, 692, 693, 697, 698
Վան 9, 251, 252, 254-256, 506, 685
Վանք գիւղ 120, 126, 336, 337, 352, 434, 437, 460
Վաչինգտոն 605
Վասուրական 6, 105
Վարազաբուն 229
Վարազար գիւղ 26
Վարագա տե՛ս *Քեաթուկ*
Վարանդա 4, 32, 47, 60, 68, 89, 108, 110, 114-117, 127, 133, 136, 138, 145, 156, 159, 163, 164, 172, 188, 196, 197, 211, 217, 228, 233, 239, 241, 242, 255, 267, 268, 270, 272, 273, 280, 284, 288, 289, 292-295, 297, 302, 303, 332, 352, 362, 365, 366, 409, 415, 417, 469, 554, 565, 577, 685
Վարդանլու գիւղ 590, 598
Վարշավա 457
Վերին Ագուլիս 6
Վերին Ղլիջաբաղ 125, 138
Վերին Տանձիկ 630, 634
Վերսայլ 334, 372, 430, 445, 529, 531, 536, 566, 573, 577
Վեդի 630
Վլադիկավկազ 111
Վրաստան 30, 66, 146, 180, 218, 303, 550, 558, 559, 608
Վրացական Հանրապետութիւն տե՛ս *Վրաստան*
Վրթնաշատ 120

Տաթև 490
Տաճկաստան տե՛ս *Թուրքիա*
Տաճկահայաստան տե՛ս *Արեւմտեան Հայաստան*
Տամբաւ 104
Տարոն 6
Տեաք 120
Տեղ գիւղ 111, 413, 641
Տիգրանակերտ 506
Տոբոլ Նահանգ 666
Տող գիւղ 117, 118, 419
Տրապիզօն 245, 506, 412, 475
Տուլա 238
Տում գիւղ 267, 365, 419

Ցենտրալ սրճարան 685
Ցղնա գիւղ 9
Ցոր գիւղ 87, 126

Ուզ գիւղ 503
Ուլիան Նորաշէն գիւղ 631
Ուլուբաբ գիւղ 652
Ուշաջղ գիւղ 190
Ուչ Քիլիսէ լեռ 641
Ուտիք 331, 469

Փահլուլ գիւղ 211, 217, 465
Փամբակ գաւառ 557, 559, 595
Փարիզ 264, 412, 447, 474, 566
Փարիսոս գիւղ 469
Փարմաքէ գիւղ 378, 380
Փիրջամալ գիւղ 26, 60, 139, 140, 150, 162, 229, 268, 401
Փղանիս գիւղ 427, 428
Փոյլ կայարան 456
Փոքր Ասիա 472
Փոքր Կովկաս 505

Քաղկեդոն 515
Քանաքեռ 693
Քամու ջաղացի թաղ 46, 259, 471
Քառասնի գիւղ 255
Քարագլուխ գիւղ 228, 229
Քարաթումբ գիւղ 510

Քարաչէն գիւղ 641
Քարինճտակ 289, 431, 436, 453, 577, 612, 623
Քարւանսարա 495
Քեաթուկ 79, 125, 139, 149, 150, 167, 168, 229, 268, 365, 481
Քեալբաջար 434, 471
Քեոսա Մեչիդ լեռ 641
Քեօշան գիւղ 483
Քեօչառ(ր)լու 52, 67, 68, 76, 79, 80, 94
Քեօսալար 211, 212, 219, 225, 471
Քեշիշքենդ 496, 500, 501-504, 507, 508, 511-515, 632-635, 647, 649, 659, 666 - 668, 674, 677, 687, 693, 697
Քերծ լեռ 612
Քիրս բարձ. 284, 278, 288, 290, 295, 298, 471
Քիւրդամիր գիւղ 192, 220
Քոթանլու գիւղ 503, 504,
Քոլատակ 190
Քոչբէկ 471
Քուբայիս 54

Օթահլուլ գիւղ 137
Օխչի գետ 469
Օսմանեան Թուրքիա տե՛ս *Թուրքիա*
Օրդուբադ 631, 636, 639, 640, 659, 691

Ֆինլանդիա 8, 9
Ֆրանսիա 18, 605, 610

Արժեքավոր ու երկար սպասված գիրք II
Եղիշէ Իշխանեան VII
Ներածական X
Երկու խօսք XIII

1917

Պետրոգրադ-Ռուսական Յեղափոխութիւն Հարաբերութեանց նախաքայլեր Հ.Յ.Դ-ի եւ Ռուսաստան ժամանակավոր կառավարութեան միջև 1
Թիֆլիս. Ազատ Ռայոնական ժողով 9
Վերադարձ հայրենիք 15
Օգակոմ. պատենաւորում, ինքնապաշտպանութիւն, կուսակցական և *հասարակական* կեանք 21
Անիշխանութիւն, ինքնապաշտպանութեան պատրաստութիւն . . 28
Քաղաքային ինքնավարութիւն, Սահմանադիր ժողովի պատգամաւորների ընտրութիւն, կուսակցութիւններ 37
Հ.Յ.Դ.-ի Խորհրդաժողով. Թիֆլիս 51
Բագուում 59
Դէպի Ղարաբաղ. ճամբորդութիւն, *իրադարձութիւններ* 63
Շուշի. Միջկուսակցական Բիւրօ 81
Հայ-թրքական Կոմիտէ 84

1918

Ռուսական բանակի կազմալուծումը Ղարաբաղում 92
Միջկուսակցական Բիւրոյի աշխատանքները 94
Հայ-թրքական կոմիտէի աշխատանքները 112
Այցելութիւն շրջանները 116
Հայ-թրքական առաջին համագումարը 130
Նորից շրջաններում. գիւղացիական համագումար 136
Անկախութեան հռչակում Անդրկովկասում. երեք հանրապետութիւնների ստեղծում . . . 146
Հայ-թրքական *երրորդ համագումարը* 148
Քստմնելի ոճիր Շուշիում 50
Տաճիկները Ղարաբաղում. Քոչը և բարդութիւններ 153
Շրջանային համագումարներ . . 164
Անդրանիկը Զանգեզուրում 170
Ղարաբաղի Առաջին համագումարը 172
Տաճկահայ գաղթականութիւն . . 178
Կռիւներ Ղարաբաղում 190
Թուրքերի վերջնագիրը 194
Ղարաբաղի Երկրորդ համագումարը 196
Ղարաբաղի Երրորդ համագումարը 211
Նոր կռիւներ Ղարաբաղում 228
Զինաթափում 232

Հոկտեմբեր 1918

Ջամիլ բէյ. թրքական տիրապետութիւն 243
Ազատ արձակում բանտից 263
Շամիր բէկ Փիրումեանը կախաղան է բարձրացվում 268
Խորհրդակցական ժողովի պատրաստութիւն 274
Հայ-թուրք հարաբերութիւններ . . 278
Այցելութիւն գաւառային շրջաններ 280
Նամակ Անդրանիկից 284
Մայոր Գիբբոնի առավելութիւնը 301
Ղարաբաղի Չորրորդ համագումարի պատրաստութիւն . . . 307
Կապիտան Սէրրայդը և գեներալ Տոմսընի հրահանգը 311
Քաղաքագլուխ Մելիք-Շահնազարեանի հակառակութիւնը . . . 314

1919թ. Նոր տոմարով

Ազգային խորհրդի տեղեկագիրը 322
Հ. Մուսայէլեանի և Կ.Նարինեանի մահը 326
Զինադադարական Միութեան Ընդհանուր ժողով 330
Սուլթանովի խեղաթիւրումներին հաւատում են անգլիացիք . . 330
Սուլթանովը նահանգապետ . . . 335
Ջօր. Տօմսոնը հրահանգում է Անդրանիկին հեռանալ Զանգեզուրից 337
Սկսւում է Ղարաբաղի Հայոց Չորրորդ համագումարը . . . 340
Նոր ազգային խորհրդի ընտրութիւնը, մայոր Մոնկ Մեսընի զգուշացումները 349
Ջօր. Տօմսոնի հեռագիրը պահանջում է ճանաչել Ադրբէջանի գերիշխանութիւնը Ղարաբաղում 354

Միջոցներ համաճարակի դեմ . . 359
Տաճիկ ջարդարարների հետապնդումը 361
Ազգային խորհրդի պաշտօնաթերթ «Արցախ» 372
Տօնսոնի նոր պահանջները 374
Շատիլվորդը յաջորդում է Չ օր. Տօնսոնին Բագւում 375
Ներկայացուցիչները վերադառնում են Բագւից և զեկուցում 380
Ազգային խորհուրդն ու քաղաքագլուխը 386
Հրդեհ Շուշիում 390
Հինգերորդ համագումարը և Շատիլվորդը 393
Համագումարի որոշումները . . . 401
Շատիլվորդի հրահանգ-կարգադրութիւնը 403
Մ.Արզումանեանի առաքելութիւնը 406
Յովսէփ Արղութեանը Շուշիում. .412
Զինւորական համագումար Դրնավազում 415
Թուրքերի յարձակումը Խծաբերդի վրայ 418
Մոնկ Մէսըն և Սանդերս 422
Շատիլվորդի նոր հրահանգը . . 424
Ադրբէջանցիների ոտնձգութիւնները 436
Շատիլվորդի նոր քայլերը հայերի դէմ 441
Դէպի աքսոր 453
Յունիս, 1919, Երեւան
Հանդիպումներ Հ.Յ.Դ.-ի Բիւրոյի հետ 465
Համազասպի գործունէութիւնը. .477
Առաքելութիւն Զանգեզուրում . . 482
Վայոց Ձորում 498
Ձորավար Շելկովնիկեան 499
Արսէն Շահմազեան 504
Վայոց Ձորի գաւառապետ Նորայր Օհանջանեան (Յակոբեան) և Գասպար Աֆրիկեան 508
Նոր Բայազետում 516
Հիւանդութիւն 517
Վերադարձ Երեւան, հանդիպում Դրոյի հետ 521
Թիֆլիսում 525
Նորից Երեւան, հանդիպում Ռուբէնի հետ 528
Դրոյի մօտ 530
Դարձեալ Ռուբէնի մոտ 536
Խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի սենեակում 539
Հրաժարում Ղարաբաղ գնալուց 548
Թիֆլիս, հանդիպում Արսէն Միքայէլեանի հետ 550
Գործունէութիւն Ղարաքիլիսէում 557
Հանդիպում Գերասիմ Բալայեանի հետ 562
1920 թիւ 563
Ղարաբաղի Վեցերորդ համագումարը 573
Ղարաբաղի ապստամբութիւնը 575
Ադրբէջանի խորհրդային կառավարութեան պահանջը 579
Ալեքսանդրոպօլում «Վարդան Զօրավար» գրահապատը . . 585
Սպայ Մուսայէլեանի վերջնագիրը. Մայիսեան ապստամբութիւն 590
Ապստամբութիւն Ալէքսանդրապոլում 597
Բանտարկութիւններ 607
Դասախօսութիւններ բոլշեւիկեան յեղաշրջման և այլ նիւթերի շուրջ 60
Արսէն Միքայէլեանի գործունէութիւնը 614
Նորից Երեւանում 616
Կացութիւնը Շուշիում 622
Գաւառական զեմստուոյի պատգամաւորական ժողովը 626
Նոր կարգադրութիւն 629
Դեպքեր Զանգեզուրում. հանդիպում Դրոյի հետ 635
Գորիսից Սիսիան 644
«Եղիշէի Հոգեորդին» կոռնիձորցի Նիկոլը 649
Նահանջ Զանգեզուրում 657
Մեր սխալները 663
Սեպտեմբեր 669
Հոկտեմբեր 678
Հուշեր Անդրանիկից 684
Երևանում 692
Տաճիկները Ղարսի դարպասների շեմին 699
Ծանր մթնոլորտ Երևանում. Ղարսի անկումը 704
Ցանկեր 705-728

Եղիշէ Իշխանեան
Լեռնային Ղարաբաղ
1917-1920

Егише Ишханян
Нагорный Карабах
1917-1920
(На армянском языке)
Ереван "Айастан" 1999г.

Հրատ. խմբագիր-սրբագրիչ՝ Ռ.Բ.Մարգարյան

«Հայաստան» հրատարակչություն, ՓԲԸ
Երևան 9, Ավ.Իսահակյան 28

ԱԿԱԴԵՄ

Պատվեր՝ 222: Տպաքանակ՝ 700:
Գինը՝ պայմանագրային:

«Ամարաս» տպարան, Երևան, Տերյան 44